На этом плачевном фоне еще более усугубляются дестабилизация экономических и общественных отношений, духовный, идейный и моральный кризис, грозящий перерасти во всеобщую катастрофу. Все это происходит на фоне идеологического хаоса, который имеет место сейчас в Армении. Армянское общество расколото, чувство безысходности парализует собирательную волю народа. Власти Армении вместо объединения всех патриотических сил и партий инициируют раздробление и дискредитацию политических партий. В итоге, в условиях отсутствия государственно-национальной идеологии, деятельность политических партий Армении не-

адекватна вызовам XXI века, вызовам эпохи глобализации. Политические партии, быть может за исключением одной-двух, естественно, из лагеря оппозиции, из-за усилий властей так и не стали элементами и носителями армянской государственности. В свою очередь, политические партии, руководство которых поддерживает (да, я не оговорился, руководство) Кочаряна, по сути, придают политическую окраску клановому режиму. Все это создает благодатную почву для установления в Армении тоталитарного режима, где каждодневно грубо попираются права человека и личные свободы.

Граждане Армении лишены возможности обеспечить свое существование честной работой и прибыльным предпринимательством. Раздутый чиновничий аппарат подавляет деловую инициативу, отрывает от законного бизнеса внушительную часть деятельного населения, на всех уровнях государственной власти процветает коррупция, которая разъедает общество, приводит к вытеснению из легального оборота огромных сумм. Коррупция породила глубокую нищету и опасные тенденции в сфере занятости населения. Только за последние пять лет в Республике Армения, где реально проживают около двух миллионов человек, число занятых сократилось более чем на 160 тысяч человек. К предельно опасной отметке приблизился естественный прирост населения, темпы которого за этот период сократились более чем в три раза. Большинство занятых людей бедствует — более 64% занятого в хозяйстве населения имеет ежемесячный доход от 5000 до 20000 драмов (что значительно ниже минимальной потребительской корзины, составляющей 25859 драмов), 57% ежедневного рациона питания населения приходится на хлеб и картофель, крайне низка калорийность питания. В рационе питания граждан Армении на одного человека, при ежедневной минимальной норме калорийности 2412 ккалорий, энергетическая ценность фактически потребленной пищи составляет лишь 1412 ккалорий.

Нарушено единство интересов личности, общества и государства, наблюдается несбалансированность с экономическими, социальными, международными, информационными, военными, природоохранными проблемами. Отсутствие этого единения выхолостило возможность формирования содержательной системы национальных интересов.

Жесточайшей нуждой нация обезволена, свое отношение к властям люди проявляют массовым бегством из Армении. Лишь за последние пять лет Армению покинуло более 600 тысяч человек, а со дня обретения "независимости" — около двух миллионов наших граждан (более половины населения, проживающего в РА в 1991 году) были вынуждены эмигрировать

в Российскую Федерацию и дальнее зарубежье. Таковы печальные итоги президентства Роберта Кочаряна, такова неумолимая характеристика политического фиаско кочаряновского режима.

Анализируя причины трагического положения дел, партия "Национальное Единение" выступила с программой преодоления всеобщего кризиса в Республике Армения. Нами выработана стратегия государственного строительства, основанная на концепции национальной безопасности. Определена четкая схема декриминализации и оздоровления судебно-правовой системы, выработаны механизмы защиты прав и свобод граждан, права собственности. Обозначены конкретные меры по созданию благоприятных правовых, законодательных и экономических условий для формирования среднего класса — основы стабильности общества. Намечены меры по созданию предпосылок, позволяющих государству поддерживать на необходимом уровне возможность реализации своих основополагающих функций — обеспечения воспроизводства населения, боеспособности армии, нормального функционирования научных учреждений, систем образования и здравоохранения, производственных инфраструктур.

Нами даны ответы на главные вопросы, которые волнуют армянское общество: как преодолеть бедность, обеспечить работой высококвалифицированное и работоспособное население, защитить право на труд, обеспечить социальные гарантии населению, защитить детство и старость.

Судьба возрождения Республики Армения в наших руках, она зависит от воли граждан Республики Армения, которые были вынуждены покинуть страну. Все политические силы, реально оценивающие нависшую над отечеством опасность, осознают степень своей ответственности в деле консолидации всего армянского народа, создания необходимых условий, стимулирующих массовую иммиграцию наших сограждан на свою историческую родину, к своим родительским очагам. Только вместе, рука об руку, плечом к плечу мы в состоянии остановить угрозу потери государственности, повернуть страну на рельсы развития и процветания. Вместо нас никто другой сделать это не в состоянии. Ключ к спасению нации и государства — в полноценном участии всех граждан Армении, проживающих как в республике, так и за рубежом, в предстоящих выборах президента и Национального собрания, в деятельном участии по формированию правительства национального спасения.

Наша цель — достижение общенационального согласия и примирения на основе решения таких жизненно важных вопросов, которые волнуют всех армян. Нам нужна жизнеспособная, здоровая и сильная Армения, а не

какой-то хилый и болезненный организм. И мы во всеуслышание заявляем, что во имя прогресса, процветания и консолидации общества готовы сотрудничать со всеми силами, защищающими национальные интересы. Мы уверены, что нынешний исторически судьбоносный этап Республика Армения и армянский народ в состоянии пройти без потерь и обеспечить себе достойное место в ряду цивилизованных стран и народов XXI века.

Справка

Как свидетельствует анализ промежуточных социологических опросов, осуществленных в первую неделю сбора подписей по выдвижению кандидатов в президенты Республики Армения, около 68-70 процентов поставивших свои подписи за других кандидатов в президенты выказывают твердую решимость на предстоящих выборах отдать свои голоса за Арташеса Гегамяна. Около 8 процентов — за бывшего (до 2001 года) гражданина США Раффи Ованнисяна, который в соответствии с действующей Конституцией РА не может быть зарегистрирован кандидатом в президенты, около 4,5 процента заявляют, что будут голосовать за Роберта Кочаряна, около 4 процентов — за Степана Демирчяна, сына бывшего спикера Национального собрания Карена Демирчяна, около 3-х процентов — за экс-премьер-министра Вазгена Манукяна и Арама Карапетяна, гражданина России, по любому случаю заявляющего о своих близких отношениях с высшим руководством РФ, в чем и заключается феномен 3-х процентов. Указанный анализ был составлен на основании опросов 17 тысяч респондентов.

Справка

Арташес Мамиконович Гегамян родился в г. Ереване 2 декабря 1949 г. в семье служащего. В 1971 г. окончил Ереванский политехнический институт. С 1971 по 1978 год работал в комсомольских структурах Армении. С 1978 по 1989 год занимал ответственные должности в партийно-хозяйственных структурах. В 1989-1990 гг. — мэр г. Еревана. 27 мая 1990 года, рискуя своей жизнью, Гегамян А.М. предотвратил крупную антирусскую провокацию и кровопролитие на привокзальной площади г. Еревана и в Нубарашене (Советашен) между армянскими ополченцами и советскими войсковыми подразделениями. В 1991-1995 годах занимался предпринимательской деятельностью. С 1995 года по настоящее время является депутатом Национального собрания, с 1999 года — руководитель фракции "Право и Единение" (по итогам парламентских выборов признанной 3-й политической силой, представленной в Национальном собрании Республики Армения). В апреле 1997 года Гегамян А.М. основал партию "Национальное Единение", с этого же времени является ее бессменным лидером. 5 октября 2002 года на III съезде партии "Национальное Единение" Гегамян А.М. был выдвинут кандидатом в президенты Республики Армения. Гегамян А.М. женат, имеет двоих сыновей и внука.

"Известия", 20.XII.2002.

Ովքեր են, ի վերջո, գաղտնալսում

Օրերս ՀՀ գլխավոր դատախազության՝ մամուլում հրապարակած պարզաբանման մեջ նշվում է, թե իրենց ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ պաշտպանական մարզատեխնիկական ընկերության տարածքում գաղտնալսող սարքերի գոյության մասին մեր պնդումները չեն համապատասխանում իրականությանը:

Դա ստիպում է մեզ ներկայացնել մի քանի հավելյալ փաստեր և դիտարկումներ, որոնք ՀՀ գլխավոր դատախազությանը կօգնեն համոզվել, որ ոմանց կողմից քաղաքական հետախուզություն կազմակերպելու և ղեկավարելու մեր պնդումը միանգամայն համապատասխանում է իրականությանը: Ավելին, հասկանալի լինելու համար փաստերը շարադրենք ըստ հերթականության: Ուզում եմ հիշեցնել, որ հերթական անգամ 2004 թվականի փետրվարի 18-21-ը գտնվում էի Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում, որտեղ մասնակցում էի Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի ձմեռային նստաշրջանի աշխատանքներին: Այդ ընթացքում պարբերաբար, իմ անձնական բջջային հեռախոսով՝ 40-49-60 համարով, հեռախոսազրույցներ եմ ունեցել Երևանում գտնվող բաժանորդների հետ: Ի դեպ, արդեն մեկ տարուց ավելի է, ինչ օգտվում եմ միջազգային հեռախոսային կապ ապահովող «Ռոումինգ» ծառայությունից, որը հնարավորություն է ընձեռում եվրոպական մի շարք երկրներից, այդ թվում՝ Ավստրիայից և Գերմանիայի Դաշնությունից, հավաքելով 003741 կամ 003749, անմիջականորեն կապվել Երևան քաղաքի բաժանորդների հետ (առաջին դեպքում՝ սովորական հեռախոսակապից օգտվող, երկրորդ դեպքում՝ բջջային հեռախոսակապից օգտվող): Փետրվարի 19-20-ին հավաքեցի 003741-53-13-43 հեռախոսահամարը և կապվեցի «ԱՄ» փոխնախագահ Ա.Կարապետյանի հետ: Վերջինս զարմանք հայտնեց՝ ասելով, որ իր քաղաքային հեռախոսի ցուցիչի վրա գրանցվել է 52-76-83 հեռախոսահամարը: Այսինքն, ըստ ցուցիչի, իրեն զանգել են նշված հեռախոսահամարից: Դրանից հետո ընդհատեցի կապը և զանգեցի մեր կուսակցության ընդունարանի հեռախոսահամարով՝ 53-36-32: Այս անգամ արդեն հեռախոսի ցուցիչի վրա, ըստ Ա.Կարապետյանի, գրանցվեցին ևս երկու տարբեր հեռախոսահամարներ՝ 56-32-68 և 56-18-19: Համոզվելով, որ իրականացվում է գաղտնալսում, քանի որ իմ բջջային հեռախոսը աշխատում է «Privat» ռեժիմով, ըստ որի՝ զանգեր ստացողի հեռախոսը չի գրանցում զանգողի հեռախոսահամարը, հուշեցի պրն Կարապետյանին՝ այդ ժամանակ գրասենյակում գտնվող մեր գործընկերների հետ կազմել համապատասխան ակտ: Այնուհետև ես պարբերաբար զանգահարեցի կուսակցության գրասենյակ, իսկ գործըն-

կերներս գրանցեցին Երևանի վեց քաղաքային հեռախոսահամարներ՝ 52-76-83, 56-32-68, 56-40-49, 56-18-19, 56-18-08, 56-31-40, որոնց վերաբերյալ և կազմվեց համապատասխան ակտ: Ավելացնեմ, որ գրանցված երկու հեռախոսահամարները (56-32-68 և 56-18-19) ոչ միայն ակտավորվել են, այլև տեսագրվել կուսակցության օպերատորի կողմից: Տեսագրության վավեր լինելը հաստատվել է այդ գործընթացի ականատեսների՝ ԱԺ պատգամավորներ Ալեքսան Կարապետյանի, Կորյուն Առաքելյանի, Աղասի Արշակյանի և այլոց կողմից:

Փետրվարի 21-24-ը, գտնվելով Գերմանիայի Դաշնությունում, Մյունխեն քաղաքից բազմիցս կապվել եմ կուսակցության գրասենյակի 53-36-32 և 53-13-43 հեռախոսահամարներով, որոնց ցուցիչները ևս գրանցել են հիշատակված վեց հեռախոսահամարները: Վերադառնալով Երևան՝ տեղեկացա, որ պրն Ա.Կարապետյանը կատարել էր հետաքրքիր բացահայտում: Պարզվել է, որ հիշյալ վեց հեռախոսահամարներից 4-ը գրանցված են Արշակունյաց 5 հասցեում գտնվող ՀՀ պաշտպանական մարզատեխնիկական ընկերության (նախկին՝ ԴՕՕՍԱՖ), իսկ երկուսը՝ այդ ընկերության Էրեբունու մասնաճյուղի վրա:

Այս ամենի մասին տեղեկացրինք «Հայկական ժամանակ» թերթի լրագրող Ավետիս Բաբաջանյանին՝ խնդրելով իրականացնել լրագրողական հետաքննություն: Լրագրողը հանդիպել և զրուցել էր ՀՀ պաշտպանական մարզատեխնիկական ընկերության ղեկավար Արկադի Տեր-Թադևոսյանի հետ: Պարզվել էր, որ ՀՀ պաշտպանական մարզատեխնիկական ընկերության շենքում երկու սենյակ հատկացվել է «Ինտերտելեկոմ» կազմակերպությանը, որը ինտերնետային կապի պրովայդեր է և միաժամանակ զբաղվում է ինտերնետ հեռախոսակապով: Ավելին. լրագրողի խնդրանքը, որ այդ սենյակներից մեկի փակ դուռը բացեն, որտեղ գտնվում են ինչ-որ սարքավորումներ, այդպես էլ չի բավարարվել, որովհետև նախ՝ պարզվել է, որ բանալին աշխատակիցներից մեկի մոտ է, որը բացակայում է, իսկ երբ հիշյալ աշխատակիցը եկել է, պարզվել է՝ բանալին նրա մոտ չէ: Զրույցի ընթացքում, ինչպես վկայում է լրագրողը, ՀՀ պաշտպանական մարզատեխնիկական ընկերության ղեկավար Արկադի Տեր-Թադևոսյանն ընդունել է, որ Արտաշես Գեղամյանի և Ալեքսան Կարապետյանի հեռախոսազրույցի ընթացքում վերջինիս հեռախոսի ցուցիչի վրա գրանցված հեռախոսահամարները պատկանում են իրենց ընկերությանը:

Այնուհետև, ինչպես վկայում է «Փակ սենյակի գաղտնիքը» հոդվածի հեղինակը («Հայկական ժամանակ», 27.02.2004 թ.) «Ինտերտելեկոմի» փոխտնօրեն ներկայացած ոմն Արթուր այն հարցին, թե ինչո՞ւ, երբ Ա.Գեղամյանը Վիեննայից զանգահարում է Երևան՝ Ա.Կարապետյանին, վերջինիս հեռախոսի վրա գրանցվում է ոչ թե Ա.Գեղամյանի, այլ «Ինտերտելեկոմի» հեռախոսահամարները, բացատրել է, որ պատճառը կարող է լինել այն, որ Ա.Գեղամյանը Վիեննայից զանգել է ոչ թե իր բջջային հեռախոսահամարով, այլ այնտեղից գնված բջջային հեռախոսաքարտով:

Այս կապակցությամբ ուզում եմ տեղեկացնել, որ երբևէ և ոչ մի անգամ չեմ օգտվել ինտերնետային հեռախոսաքարտերից, քանի որ, ինչպես վերը ասացի, մեկ տարուց ավելի

է, ինչ իմ անձնական բջջային հեռախոսը օգտվում է «Ռոումինգ» հեռախոսակապի ծառայությունից:

Այժմ, այդ հրապարակումից գրեթե 20 օր անց, իմ ձեռքի տակ է «ԱրմենՏելի» կողմից տրամադրված փետրվար ամսին իմ կատարած հեռախոսազանգերի տվյալների ողջ ցանկը, և դատախազության աշխատակիցները ցանկության դեպքում կարող են ծանոթանալ դրանց և գոնե իրենց համար պարզել, որ թե՛ իմ գործընկեր Ալեքսան Կարապետյանին, թե՛ մեր կուսակցության գրասենյակ, թե՛ ԱԺ մեր խմբակցության սենյակ ես զանգահարել եմ ոչ թե ինտերնետ քարտերի միջոցով, այլ բացառապես իմ հեռախոսահամարով: Սակայն մեր կողմից արվել է մի շատ ավելի հետաքրքիր բացահայտում ևս, որը հիմնահատակ քանդում է գաղտնալսում իրականացնելու մեր պնդումը հերքել փորձողների կառուցած տրամաբանական շղթան: Մեր ձեռքի տակ են ՀՀ պաշտպանական մարզատեխնիկական ընկերությանը պատկանող հիշյալ 6 հեռախոսահամարներից մեկի՝ 52-76-83-ի փետրվար ամսվա հեռախոսային խոսակցությունների տվյալները: Այդ տվյալների ցանկում 2004 թվականի փետրվարի 18-ի թվագրությամբ կա նաև ինձ պատկանող 40-49-60 հեռախոսահամարի հիշատակումը: Այդ հիշատակումը իր ժամանակային տվյալներով միանգամայն համապատասխանում է «ԱրմենՏելի» կողմից ինձ տրամադրված տվյալների ցանկին: Այժմ ուզում եմ հարցնել՝ եթե «Ինտերտելեկոմը» զբաղված չէ գաղտնալսմամբ, այլ մատուցում է միայն ինտերնետ կապի ծառայություններ, ինչպե՞ս կարող էր իմ հեռախոսահամարը հայտնվել հիշյալ ընկերության հեռախոսահամարների տվյալների ցուցակում, այն էլ՝ իմ Վիեննայում գտնվելու ընթացքում:

Հիշատակածս փաստերը և այն հանգամանքը, որ «Ինտերտելեկոմի» փաստացի վերահսկողությունը, ըստ էության, իրականացվում է մի անձի՝ Աշոտ Խաչատրյանի կողմից, որը պաշտպանության նախարար Ս.Սարգսյանի մտերիմն է, չեն կարող չհանգեցնել այն համոզման, որ, իրոք, գաղտնալսումներ իրականացվել են, և դա, թերևս, կարող էր արվել պրն Ս.Սարգսյանի հանձնարարությամբ: Ընդ որում, իրենց մտերմությունը պրն Ս.Սարգսյանը հրապարակավ հաստատել է «Արմենիա» հեռուստատեսությունում հանգուցյալ հեռուստալրագրող Ռոբերտ Մավիսակալյանի հետ ունեցած հարցազրույցի ընթացքում: Հայտնի է, որ պրն Աշոտ Խաչատրյանը Ս.Սարգսյանի՝ ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարար աշխատած ժամանակ աշխատանքի է վերցվել նախարարությունում նախարարի կողմից՝ ազատվելով ԼՂՀ-ի անվտանգության ծառայության պետի պարտականություններից: Հետագայում իրանահայ ձեռներեցին կողոպտելու համար դատվել է, սակայն դրանից հետո աշխատանքի է նշանակվել ՀՀ պաշտպանական մարզատեխնիկական ընկերությունում՝ որպես բաժնի վարիչ: Ի դեպ, զարմանալի զուգադիպությամբ, Ա. Խաչատրյանը իրանահայ ձեռներեցին կողոպտելու համար դատվել է Լևոն Աբրահամյանի հետ, ճիշտ այն նույն Լ.Աբրահամյանի, որը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ առաջին ատյանի դատարանում պրն Ս.Սարգսյանի դեմ իբր կատարած մահափորձի դատական նիստի

ժամանակ վերջերս հայտարարել էր, թե իրեն հուշել, հորդորել, համոզել են ցուցմունք տալ, որ «մահափորձի» պատվիրատուն Արտաշես Գեղամյանն է:

Պրն Ս.Սարգսյանի ՀՀ կառավարության նիստի ժամանակ արած հայտարարությունը, որով նա իրավապահներին առաջարկում է ճշտել գաղտնալսումների մասին իմ պնդումների իսկությունը՝ ոչ այլ ինչ է, քան ֆարս, որովհետև եթե իսկապես ցանկություն կար բացահայտելու գաղտնալսման փաստը, ապա «Հայկական ժամանակ» օրաթերթի հրապարակման օրն իսկ անհրաժեշտ էր անհապաղ կնքել հիշատակված այդ փակ սենյակը, նաև «ԱրմենՏելի» բջջային հեռախոսակապ ապահովող ստորաբաժանումից վերցնել իմ բջջային հեռախոսով իրականացված միջազգային բոլոր հեռախոսազանգերի մասին ինֆորմացիան: Բնականաբար, ճիշտ կլիներ այդ գործողություններն այն ժամանակ անհապաղ իրականացվեին իմ կողմից լիազորված գործընկերների՝ ԱԺ պատգամավորների մասնակցությամբ:

Այս ամենի մասին մանրամասնորեն գրում եմ՝ գիտակցելով, թե երկրի համար ինչպիսի վտանգներով հղի գործարքներով են զբաղված Ս.Սարգսյանի մտերիմները: Եվ պատահական չէր իմ հրապարակային հորդորը Ս.Սարգսյանին՝ պարզել, թե այդ որ սրիկան է, որ, խախտելով ՀՀ օրենքները, ըստ որի՝ պաշտպանության նախարարությունն ապաքաղաքական կառույց է, օգտագործում է նախարարության ֆունկցիոնալ ենթակայության տակ գտնվող պաշտպանական մարզատեխնիկական ընկերության տարածքները՝ բջջային հեռախոսների գաղտնալսման նպատակով:

«Հայկական ժամանակ», 17.III.2004:

Հ ա ր ց ա զ ր ո ւ յ ց ն ե ր

И н т е р в ь ю

Դժբախտություն և խիզախություն

Կանցնեն շատ օրեր, շատ ձմեռ ու գարուն, բայց հիշողության մեջ միշտ կվերականգնվի վերապրածը:

Այդպես է եղել քաղաքացիական ու Հայրենական պատերազմների տարիներին, երբ կուսակցական կոմիտեների դռներին կարելի էր կարդալ հապճեպ գրված՝ «Մեկնել են ռազմաճակատ»:

Իրականում այդպես եղավ դեկտեմբերի 7-ին կուսակցության Մաշտոցի շրջկոմում, որի աշխատողները շրջանի բնակիչների հետ սրտի կսկիծով օգնության նետվեցին դեպի տուժած քաղաքները: Վայրկենաբար ազատված շենքում մնաց միայն Էլեոնորա Հրանտի Քոչարյանը: Նրան՝ շրջկոմի երկրորդ քարտուղարին, հրամայեցին կապ պահպանել:

Մի քանի ժամ անց մարդկանցով, լինգերով, քլունգներով, բահերով բեռնված տասնյոթ ավտոբուսից կազմված շարասյունը արդեն Սպիտակում էր: Շուտով մոտեցան քառասունհինգ ամբարձիչներ:

Այո, դա ճակատամարտ էր: Յուրաքանչյուր կյանքի, փլված շենքերի տակ մնացած յուրաքանչյուր մարդու համար:

– Միայն անուն, ազգանուն չհարցնեք,- հուզմունքը դժվարությամբ զսպելով սիգարետը տուփից հանում է հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի գիտաարտադրական միավորման գլխավոր դիրեկտոր Կ. Մելիքյանը: Նա մոտենում է բացված լուսամուտին և այդտեղից կրկնում: – Ազգանուններ պետք չեն: Բոլորն աշխատել են ամենայն եռանդով:

Մենք նստած ենք կուսակցության Մաշտոցի շրջկոմի առաջին քարտուղար Ա. Գեղամյանի աշխատասենյակում:

– Իհարկե, կարելի է հիշատակել բոլոր նրանց անունները, ովքեր մեզ հետ մեկնեցին այդ սարսափելի գիշերը,– ցածր ձայնով ասում է Արտաշես Մամիկոնովիչը:– Բայց մի՞թե բանն այդ է: Գիտե՞ք ինչն անջնջելի մնաց իմ հիշողության մեջ: Փրկարարների դեմքերը: Ջահերի և զրահամեքենաների լուսարձակների լույսի տակ ես նրանցից յուրաքանչյուրի դեմքին տեսա քարի փոշի և արցունքներ:

Հիշում եմ նաև պետավտոտեսչության աշխատակից Լեյտենանտին: Նա օր ու գիշեր չէր հեռանում ճանապարհից, փորձելով թեկուզ մի կերպ կարգավորել դեպի դժբախտության գոտի շարժվող ավտոշարասյուների շարժումը: Ինձ մոտ հաց ու պանիր կար: Մոտեցա, առաջարկեցի: «Խնդրում եմ դնեք իմ մոտոցիկլետի սայլակի վրա», – ասաց նա: Մեկ օր անց շարժվում էի նույն տեղով: Այդ նույն լեյտենանտը ճանապարհի վրա էր,

իսկ իմ դրած հացն ու պանիրը՝ նույն տեղում…

Մաշտոցի շրջանում կան 27 արդյունաբերական ձեռնարկություն, 17 շինարարական կազմակերպություն, խոշոր գիտական ինստիտուտներ: Այդ բոլոր աշխատավորական կոլեկտիվների ներկայացուցիչներն օգնել են դժբախտության մեջ ընկած մարդկանց փրկությանը: Ի՞նչ խոսքեր գտնեմ այդ օրերն ու գիշերները նկարագրելու համար: Ահա ինչ-որ մեկը փլատակներից երեխայի լացի ձայն լսեց: Ականջ դրեցինք: Լացը կրկնվեց: Վախենում էին քլունգով աշխատել: Սկսեցինք ձեռքերով հեռացնել քարերը: Մեկ ժամ անց երեխային փրկողները՝ ըստ էության միմյանց անծանոթ մարդիկ, գրկախառնվեցին և լաց էին լինում ինչպես եղբայրներ:

Ոտքներս ծալվում էին, ձեռքներս քարացել էին, բայց յուրաքանչյուր փրկված կյանք նոր ուժ էր հաղորդում բանվորներին, ինժեներներին, գիտնականներին:

– Գիտե՞ք, – ասում է Գեղամյանը, – ֆիզիկական աշխատանքի բոլորովին չվարժված մարդիկ աշխատում էին եռապատկված ուժով: Մարդը պառկում էր վտանգավոր կախված պանելի տակ, որպեսզի ապահովի մյուս փրկարարների աշխատանքը…

Շրջկոմի քարտուղարի սեղանին է ծոցատետրը: Այն պարունակում է բոլոր օպերատիվ տեղեկությունները, առաջին հերթին լուծվելիք հարցերը: Եվ այդ ամենը տեղավորվել է ոչ մեծ ծոցատետրում: Այժմ խորհրդակցությունների և թղթաբարության ժամանակ չէ: Արտաշես Մամիկոնովիչի թույլտվությամբ կարդում եմ գրառումներից մի քանիսը:

«Գոգարան գյուղում սովխոզի դիրեկտորը թույլ է: Լրիվ գլուխը կորցրել է: Շտապ այստեղ հասցնել տաք հագուստ, 30 վրան»:

– Այստեղի դիրեկտորը, – բացատրում է շրջկոմի քարտուղարը, – սովորական պայմաններում վատը չէր: Բայց այժմ այլ ղեկավար է պահանջվում: Կամային, ուժեղ բնավորությամբ մարդ է պետք: Այդպիսին էր գյուղական ուսուցիչներից մեկը: Գյուղացիների խնդրանքով էլ հենց նա դարձավ ղեկավար:

Եվս մի գրառում. «Ստանձնել Սպիտակի շրջանի տուժած 22 գյուղերի շեֆությունը: Յուրաքանչյուր գյուղ ապահովել վրաններով, շարժական էլեկտրակայաններով, անկողնային պարագաներով, շաքարով, լուցկով, աղով»:

Այժմ պրոբլեմներ շատ պետք է լուծի շրջկոմը: Շրջանում կան երկու հիվանդանոց, ծննդատուն: Այդտեղ արդեն տեղավորվել են ավելի քան 500 վիրավորներ: Մարդկանց ոտքի կկանգնեցնեն, բայց դուրս գրվելու ժամանակ նրանցից յուրաքանչյուրին ապրուստի միջոցներ են պետք: Շրջանի բոլոր դպրոցները կցել են հիվանդանոցի բաժանմունքներին: Դպրոցականներն ու մանկավարժները պարզել են, թե յուրաքանչյուր տուժածի ինչ է պետք, գրել են նրանց հագուստի, կոշիկի չափսերը: Այնուհետև այդ տվյալները հաղորդել են ֆիզիկայի ինստիտուտ: Հաջորդ օրն առավոտյան ինստիտուտի կանանց խորհրդի անդամները եղել են «Հայհագուստառի» հանրապետական մեծածախ բազայում, «Կոշիկառում»: Տուժածների համար անհրաժեշտ իրեր ձեռք բերելու նպատակով միջոցներ են հատկացվել շրջսովետի գործկոմի բյուջեից:

Սպիտակից և Լենինականից 1200 մարդ ապաստան է գտել Մաշտոցի շրջանում:

Շատերը տեղավորվել են «Երևանշինի» «Շինարար», «Անդրկովկասխողովակշինի» «Անահիտ» պանսիոնատներում, պրոֆտեխուսումնարանի հանրակացարաններում: Բայց տուժածները ավելի շատ տեղավորվել են շրջանի բնակիչների տներում:

Առաջին քարտուղարին հարցնում եմ, թե այսօր ինչպես են աշխատում շրջանի ձեռնարկությունները:

– Ձեզ կասեմ միայն «Հաց» և «Կաթ» արտադրական միավորումների մասին: Դեկտեմբերի 7-ից հետո նրանք ամեն օր սովորականից երկու անգամ ավելի արտադրանք են տալիս:

Մեկ րոպե անց պետք է սկսվեր շրջկոմի բյուրոյի նիստը: Արտաշես Մամիկոնովիչին հրաժեշտ տալով՝ մեկնեցի «Անի» գիտաարտադրական միավորման կազմի մեջ մտնող «Գառնի» գործարան: Այս ձեռնարկությունը հանրապետությունում առաջիններից մեկը որոշեց ոչ միայն աշխատել հանգստյան օրերին, այլև փոխադրվել տասժամյա աշխատանքային օրվա:

Ծանոթանում եմ գիտաարտադրական միավորման գլխավոր դիրեկտոր Ս. Թումանյանի, «Գառնի» գործարանի դիրեկտոր Օ. Խաչանովի, արհմիութենական կոմիտեի նախագահ Ռ. Պապոյանի հետ: Դեկտեմբերի 7-ին այստեղից երկրաշարժի շրջան է մեկնել 200 մարդ: Իսկ այնուհետև փրկարարական աշխատանքների են մեկնել և մեկնում են օրական 150-200 մարդ:

Ո՛չ, մարդկային միտքը երբեք չի հաշտվի երկրաշարժի ծանր, դառը հետևանքների հետ, որը հազարավոր մարդկային զոհերի պատճառ դարձավ:

– Բայց այս օրերին որքա՞ն անհրաժեշտ են կայունությունն ու ուժեղ կամքը, – ասում էին միավորման ու գործարանի ղեկավարները: – Երբ մենք որոշում էինք ընդունում տասժամյա աշխատանքային օրվա անցնելու մասին, համոզված էինք, որ մեզ կպաշտպանեն հանրապետության բոլոր ձեռնարկությունները: Միայն կազմակերպվածությունը, լարված աշխատանքը կարող են թեթևացնել մեր ժողովրդին հասած վիշտը:

Դժբախտությունը հաղթահարվում է միայն խիզախությամբ:

Յու. Կոզլովսկի

«Սովետական Հայաստան», 20.XII.1988:

Երևանը պետություն է ներկայացնելու...

(Մեր հատուկ թղթակից Խաչիկ Խաչիկյանը զրուցում է Երևանի քաղաքապետ Արտաշես Գեղամյանի հետ)

– *Պարոն Գեղամյան, եկեք զրուցենք Երևանի՝ որպես պետության մայրաքաղաքի ապագայի մասին:*

– Թեև շատ ծանր սոցիալ-տնտեսական վիճակի մեջ է գտնվում Երևանը, այնուամենայնիվ, հասկանալի է, որ դրանք լուծելու համար պետք է նախ պատկերացնել ապագան, մշակել այնպիսի մեխանիզմներ, որոնք տնտեսությունը ոչ միայն հանեն ճգնաժամային վիճակից, այլև հետագայում բացառեն նման ծայրահեղ լարումները: Դա համալիր մի ծրագիր է, որը ներառում է նաև քաղաքական վերափոխումներ, որովհետև դրանք միմյանցով պայմանավորված հարցեր են: Այսպես, դեռևս մի քանի ամիս առաջ քաղաքապետարանը պաշտոնապես հայտարարեց, որ գործում է բոլոր կուսակցություններից ու հասարակական կազմակերպություններից անկախ: Ապաքաղաքականացվեց նաև գործադիր կոմիտեն, քաղխորհուրդն ունեցավ իր պաշտոնաթերթը՝ «Երեկոյան Երևան», որը, ինչպես հայտնի է, մեր ժողովրդի վերջին երկուսուկես տարվա սիրելի թերթն է, եթե ոչ ամենասիրելին: Գաղտնիք չէ, որ մինչև այժմ ռեալ ուժը եղել է կուսակցության ձեռքին, ու քաղաքային խորհրդի գործկոմը եղել է փաստորեն կուսակցության քաղկոմին ենթակա մի մարմին: Այսօր, չնայած դեռևս չի կազմավորվել նոր քաղխորհուրդը, որտեղ, համոզված եմ, հարաբերակցությունը կլինի ժողովրդական ուժերի կողմը, քաղաքապետարանը փորձում է փոխել նաև տնտեսական կառուցվածքները: Այդ աշխատանքներին այսօր խանգարում են որոշակի դժվարություններ: Եվ ոչ միայն նրանք, որ կապված են մատակարարումների հետ: Կա ևս մի գործոն, որը մարդկայնորեն հասկանալի է: Շրջխորհուրդներում այսօր չափազանց քիչ գործ է կատարվում տնտեսությունների ինքնուրույնության, ազատ շուկայական հարաբերությունների անցնելու առումով: Պարզապես մարդիկ վճռական քայլերի չեն գնում, որովհետև գտնվում են անորոշ վիճակում ոչ միայն այն պատճառով, որ դեռևս հանրապետության վերին իշխանությունները որոշակի օրենսդիր փաստաթղթեր չեն հաստատել, այլև, որ չգիտեն, թե կընտրվե՞ն, արդյոք, նոր խորհուրդներում:

– *Ի դեպ, ինչպիսի՞ հարաբերություններ կունենան քաղխորհուրդը և շրջխորհուրդները իրավասությունների տարանջատման իմաստով:*

– Քաղաքը միասնական օրգանիզմ է: Չի կարելի տարանջատել քաղաքի կենսա-

գործունեությունն ապահովող ոլորտները: Խոսքս էներգամատակարարման, ջրամատակարարման, տրանսպորտի, սոցիալական օբյեկտների համաչափ տեղաբաշխման մասին է: Սրանք համաքաղաքային հնչեղության խնդիրներ են: Այդպիսին են նաև այն նորմատիվային օրենքները, որոնք վերաբերում են, օրինակ, հողօգտագործմանը, քաղաքում գրանցումներին և այլն: Կարծում եմ, որ շրջխորհուրդները հստակորեն կպատկերացնեն այդ հանգամանքը և իրենց տրվող իրավասությունները կօգտագործեն տեղական խնդիրները լուծելու համար: Ասենք, օրինակ, ելնելով քաղաքի զարգացման գլխավոր հատակագծից, շրջանը կարող է ինքնուրույն լուծել բարեկարգման, կանաչապատման, ճարտարապետական ձևավորման, մշակութային և բազմաթիվ այլ հարցեր:

– *Վերադառնանք մեր մտքին. խոսեցիք ստեղծված կառուցվածքները փոխելու մասին:*

– Այո, բանն այն է, որ այսօր, երբ խոսում ենք մատակարարումների հետ կապված դժվարությունների մասին, շատ օրինաչափ հարց է առաջանում. չէ՞ որ եղել են և ժամանակներ, երբ այդ պատճառները չեն եղել, բայց քաղաքային տնտեսության բնագավառին վերաբերող բողոքներն ու դժգոհությունները չեն դադարել, հաճախ չեն կատարվել նաև բնակարանային ու սոցիալական օբյեկտների շինարարության պլանները: Ուրեմն, պատճառներն ավելի խոր արմատներ ունեն: Վերցնենք, օրինակ, քաղաքաշինական կազմակերպությունները: Նրանք մինչև այսօր ենթարկվել են հանրապետության պետշինին, նրանց մատակարարել է հանրապետության պետմատը, ֆինանսներն ստացել են պետպլանից: Մինչդեռ քաղաքացին բնակարան չունենալու համար դիմում է ոչ թե նրանց, այլ քաղաքային խորհրդին, որը գործնականում զուրկ է նյութական լծակներով նրանց վրա ազդելու հնարավորությունից: Նման վիճակ է նաև քաղաքային տնտեսության մյուս բնագավառներում: Ուստի անհրաժեշտ է, որ քաղաքն ունենա տնտեսական ինքնուրույնություն՝ կառավարման հստակ մեխանիզմով:

– *Դուք գտնում եք, որ եթե, օրինակ, Երևանշինը անցնի քաղխորհրդի տրամադրության տակ՝ իր ֆինանսավորումով, մատակարարումով և այլն, կսկսի ավելի լա՞վ աշխատել:*

– Ես այդ կարծիքին չեմ, չնայած մեկ մարմնի ենթարկելը գուցե ինչ-որ դրական փոփոխության բերի, բայց սա էլ հարցի լուծում չի կարող լինել, որովհետև տարբերությունը չնչին կլինի: Խոսքս կառավարման եղանակի մասին է: Այս յոթանասուն տարիները մեզ պետք է վաղուց համոզած լինեն, որ վարչահրամայական եղանակը չի կարող տնտեսության նորմալ զարգացում ապահովել: Եթե դա ինչ-որ ժամանակ այս կամ այն կերպ կարող էր բավարարել, ապա այսօր նույնիսկ այդ անցածը հետ բերել հնարավոր չէ: Ես հույս կապում եմ շուկայական հարաբերություններ ստեղծելու հետ, երբ յուրաքանչյուր նախաձեռնություն հնարավորություն ունի արդյունք դառնալու: Իսկ դրա հիմքը կա՝ Հռչակագիրը: Բայց դա դեռևս զուտ տեսական հիմք է: Մեր վարչապետը հենց առաջին ելույթում ասաց, որ պետք է լայն հնարավորություններ տրվեն գործարար, նախաձեռնող մարդկանց: Օրերս ընդունված սեփականության մասին օրենքը կդառնա ասվածի օրենս-

դրական իրավական հիմքը:

– Կոնկրետ ինչպե՞ս եք պատկերացնում ապապետականացումը:

– Ես գտնում եմ, որ պետական հիմնարկ-ձեռնարկությունները պետք է վաճառել դրանց կոլեկտիվներին: Վերցնենք հենց նույն Երևանշինը: Այն իր ողջ ունեցվածքով, թեկուզ չնչին գներով, պետք է դառնա աշխատողի սեփականությունը: Այդ կոլեկտիվը պետք է տնօրինի իր արտադրանքը, այս դեպքում՝ շինարարության վերջնական արդյունքը: Նա կդառնա իր միջոցների տերը, ինքը կորոշի, թե որ շինանյութը որտեղից ձեռք բերի, բանվորին որքան վճարի, որ աշխատանքն ինչպես կազմակերպի, որպեսզի վերջնարդյունքն արժեքավոր լինի: Եվ, անպայմանորեն, ինքը վաճառի այդ շինությունները: Օրինակ, մինչև այժմ հարյուրավոր հիմնարկներ քաղխորհրդին հսկայական չափերի դրամ են փոխանցել բնակարան ստանալու համար: Բայց բնակարանային շինարարության պլանները չեն կատարվել, և այդ միջոցները փոխանցվել են պետական բյուջե: Այսինքն՝ հիմնարկը զրկվել է իր դրամից, բայց նրա աշխատողն այդպես էլ բնակարան չի ստացել: Իսկ այս դեպքում այդ կազմակերպությունը կարող է ուղղակիորեն բնակարան գնել շինարարից և բավարարել իր աշխատողի կարիքը:

– Բայց չէ՞ որ տվյալ շինարարական միավորը, որը, ինչպես ասում եք, պետք է դառնա իր միջոցների տերը, նույնպես կանգնած կլինի մատակարարման հետ կապված դժվարությունների առաջ:

– Հարցին ուզում եմ մի օրինակով պատասխանել: Մի քանի օր առաջ, երբ շրջում էի Հարավ-Արևմտյան թաղամասի կառուցվող շենքերում, հենց նրանց հարևանությամբ տեսա երկաթե հեծանների մի հսկայական կույտ, որոնց բացակայության պատճառով կանգնած է մեր բնակշինարարությունը: Պարզվեց, որ դա մի կոոպերատիվի սեփականություն է, որը գնել է Կռիվոյ Ռոգից՝ անմիջապես արտադրողից, և կանխիկ վճարով հասցրել Երևան: Եվ պատահական չէ, որ այսօր, երբ գրեթե ամբողջովին կանգ է առել պետական շինարարությունը, լայն թափով առաջ է գնում անհատական տների, ամառանոցների, կոոպերատիվ ավտոտնակների կառուցումը: Դա լիովին օրինաչափ է:

– Առաջներում այդ մարդկանց համար բազմաթիվ արգելքներ կլինեին:

– Եվ դա է եղել մեր սխալը: Հիմա հարկավոր է ոչ թե արգելել նրանց, այլ մյուս շինարարական միավորներին ևս հնարավորություն տալ լինել հավասար պայմաններում, ձեռներեցություն հանդես բերել: Նրանք արդեն կամ իրենք կամ միջնորդների միջոցով ձեռք կբերեն անհրաժեշտ շինանյութերն ու միջոցները:

Վերցնենք առնտուրը: Այսօր արդեն ծայրահեղ լարված վիճակ է ստեղծվել նույնիսկ դպրոցական և նախադպրոցական հիմնարկները սնունդով ապահովելու գործում: Նույնիսկ ստիպված ենք լինում դպրոցներին ոչխարի միս ուղարկել: Էլ չեմ խոսում ամբողջ քաղաքի մասին, որի պատկերը բոլորիս է հայտնի:

– Պատկերն իսկապես որ տխուր է:

– Շատ տխուր, բայց ոչ հուսահատեցնող: Այստեղ ևս բավականին արագ կարելի է արդյունքի հասնել հենց նույն՝ շուկայական հարաբերությունների արմատավորումով:

Ես գտնում եմ, որ քաղաքի խանութների մեծ մասը պետք է վաճառել մասնավորին, մեկ պայմանով. պարենային խանութը պետք է մնա պարենային, արդյունաբերականը՝ արդյունաբերական և այլն: Որպեսզի չստացվի այնպես, որ մարդիկ, խանութների տարածքները գնելով, ընկնեն այդ պահին առավել բարձր պահանջարկ ունեցող ապրանքներ վաճառելու հետևից, և չկարողանանք խուսափել թեկուզ ժամանակավոր անհամաչափություններից:

– *Իսկ գնե՞րը...*

– Գները, ինչ խոսք, բարձր կլինեն: Իսկ հիմա, ի՞նչ է, բարձր չե՞ն: Եվ բարձր են, և ապրանքը չկա: Մինչդեռ այս դեպքում խանութի տերը, հենց իր շահից ելնելով, առատություն կստեղծի, թեկուզ թանկ գներով: Բայց չէ՞ որ առատությունն անխուսափելիորեն նորից կբերի էժանության: Եվ այս ամենը անկախ այն բանից, ով կլինի քաղաքապետը, միևնույն է, փրկությունը շուկան է, ազատ շուկան: Այստեղ հարցն այն է, թե քաղաքապետարանն ինչպես պետք է կազմակերպի, որ անցման շրջանում քաղաքը չհայտնվի շոկի մեջ: Այդ նպատակով դեռևս ամիսներ առաջ ստեղծվել է մի հանձնաժողով (տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Շահսուվարյանի ղեկավարությամբ), որը մշակում է կոնկրետ առաջարկություններ հատկապես վճարովի ծառայությունների համալիրը մի քանի անգամ հզորացնելու համար: Դա հնարավորություն կտա խնայել երևանցիների ժամանակն ու նյարդերը:

– *Դուք գտնում եք, որ տնտեսական ինքնուրույնությունը մայրաքաղաքի դեմքը վերագտնելու միա՞կ ճանապարհն է:*

– Ոչ թե միակ, այլ հիմնական: Բոլոր մյուս հարցերի լուծումը ուղղակիորեն պայմանավորվում է այդ հանգամանքով: Սկսած քաղաքի սանիտարական մաքրությունից, վերջացրած քաղաքական կապերով: Վերջին հաշվով, ինչպես ասացինք, երկիր մտնող ցանկացած մարդ տվյալ պետության մասին առաջին տպավորությունն ստանում է նրա մայրաքաղաքից: Չէ՞ որ եթե այդ մայրաքաղաքը, ասել է թե՝ պետությունը, այցելուի վրա թողնում է իրեն հարգողի տպավորություն, ուրեմն և կթողնի դիմացինին հարգելու ունակ, այսինքն՝ վստահելի քաղաքական գործընկերոջ տպավորություն: Իսկ դա, կարծում եմ, պակաս կարևոր «մանրուք» չէ աշխարհի հետ բազմակողմանի կապերի ձգտող պետության համար:

– *Բացի այդ՝ մայրաքաղաքն էլ որոշակի կապեր կունենա տարբեր երկրների մայրաքաղաքների հետ, որոնք, անկասկած, հանրապետության միջազգային հարաբերությունների կարևոր մասը կկազմեն:*

– Ինչ խոսք, դա այդպես է: Օրինակ, հենց վերջերս քաղաքապետարանի հյուրերն էին Եվրախորհրդարանի ներկայացուցիչները, նրանց հետ նաև արտասահմանյան մի քանի խոշոր լրատվական գործակալությունների թղթակիցներ: Բազմաթիվ հրավերներ ունենք մի շարք երկրների, ինչպես նաև ԱՄՆ-ի նահանգների մայրաքաղաքների քաղաքապետարաններից: Հասկանալի է, որ դա համընկնում է մեր պետության Հռչակագրի սկզբունքային հիմնադրույթներին և ոգևորում է մեզ: Մենք, անկասկած, կձգտենք

օգտագործել բոլոր հնարավորությունները և ուղղակի կապեր կհաստատենք նրանց հետ: Բայց, չմոռանանք, որ դրանք պետք է անպայման ամրապնդվեն տնտեսական, մշակութային, գիտական և այլ կապերով, եթե ուզում ենք, որ վերածվեն նորմալ դիվանագիտական հարաբերությունների: Իսկ դրա համար ելակետայինը համարում եմ տնտեսական ինքնուրույնությունը:

– Ուրիշ ի՞նչ դիմագծեր կավելանան քաղաքի պատկերին:

– Նախ ասեմ, որ այն հիմնավորապես խեղաթյուրված է: Եվ առաջին հերթին, բնակչության թիվն այդքան արագ ու անհամաչափ մեծացնելու պատճառով: Երևի հիշում եք միլիոնանոց քաղաք ունենալու մեր մարմաջը: Դա, բազմաթիվ արհեստական պրոբլեմներ առաջ բերելուց բացի, դիմազրկեց քաղաքը: Ամբողջ հանրապետությունից Երևան եկած ու հիմնադրված մարդիկ, բնականաբար, իրենց հետ բերել են իրենց նիստուկացի առանձնահատկությունները: Այդ պատճառով էլ երևանցուն, ի տարբերություն կումայրեցու, կիրովականցու կամ դիլիջանցու, դժվարանում ես առանձնացնել մյուսներից: Դրան, ինչ խոսք, նպաստել է նաև խորհրդային մարդու հոգեբանությունը՝ «Իմը չէ, ինչ ուզում է թող լինի»:

Ես գտնում եմ, որ մենք պետք է վերագտնենք Երևանի կոլորիտը՝ հիմնվելով սրտացավ երևանցու նկարագրի վրա և վերափոխելով անտարբերությունից ծնունդ առած հոգեբանությունը: Ինչպես գիտեք, քաղաքապետարանը, չնայած ծառացած տնտեսական պրոբլեմների հրատապությանը, աշխատում է վերականգնել հին Երևանի դիմանկարը: Կարծում եմ, կարևոր հանգամանք է նաև փողոցների, հրապարակների, դպրոցների, կինոթատրոնների օտար անունները փոխելը նաև, որին նույնպես ձեռնամուխ ենք եղել:

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է պահանջված չափով ավելացնել նաև հոգևոր հաստատությունների թիվը և նպաստել նրանց նորմալ գործունեությանը:

Ինչպես տեսնում եք, դրանք բոլորը պայմանավորված են մեկը մյուսով, գտնվում են սերտ կապի մեջ և կարող են հիմնական լուծում ստանալ միայն գործուն տնտեսական մեխանիզմների առկայության դեպքում: Ես հույս ունեմ, որ հանրապետության խորհրդարանը կստեղծի օրենսդրական այնպիսի նախադրյալներ, որոնք իրական հիմքեր կդառնան պրոբլեմները հաղթահարելու և իսկապես անկախ պետության դեմքը ներկայացնող մայրաքաղաք ունենալու համար:

«Հայաստանի Հանրապետություն», 2.XI.1990:

Մատնիչ լռություն

Մեծանում է սոցիալական պայթյունի և
ապակայունացման վտանգը

Փորձված հնարք է. գործդ առանց գլխացավանքի առաջ տանելու համար (մանավանդ, եթե համոզված չես, որ անխոցելի է) ճնացրու, թե ընդդիմախոսներդ ու նրանց առարկությունները պարզապես գոյություն չունեն: Մեկ է, քեզ համախոհ մեծամասնության քվեն ապահովված է ու վստահ եղիր, որ եթե հարկ լինի, կարող ես նրա օգնությամբ ապացուցել-վավերացնել, թե, օրինակ, երկրագունդը քառակուսի է կամ արեգակը արևմուտքից է ծագում... Ցավոք, մեր կառավարությունը հենց այս կեցվածքն է ընդունում՝ հաճախ չլսելու տալով իր օրինագծերի վերաբերյալ Ազգային ժողովի ամբիոնից հնչող ծանրակշիռ հակաճառությունները:

Իրավ, մատնի՞չ լռություն: Ինչի՞ նման է այն: Թաքուն համաձայնությա՞ն: Համոզիչ պատասխանի բացակայությա՞ն, թե՞ սոսկ նեղ շրջանակի համար նախատեսված դառն ճշմարտության «փոշին» տնից չհանելու ջայլամային խորամանկության...

Ինչևիցե: Այս դեպքում, հաստատ, լռությունը ոսկի չէ:

Ահա և խմբագրությունը հարցազրույցի է հրավիրել այդպիսի մի քանի՝ համառորեն լռության մատնված ելույթների հեղինակ, ԱԺ պատգամավոր Արտաշես Գեղամյանին, խնդրելով նրան մեկ անգամ ևս անդրադառնալ իրեն և, անշուշտ, շատերին հուզող հարցերին, օրախնդիր մտահոգություններին: Պատգամավորի դիտողություններն ու դատողությունները բխում են բացառապես վարչապետի հայտարարությունների և կառավարական փաստաթղթերի պարունակած տվյալների ու պնդումների վերլուծությունից, տագնապահարույց դիտողություններ ու դատողություններ, որոնք, թվում էր, պետք է որ արժանանային քննարկման հավակնություն ունեցող օրինագծերի հեղինակների գոնե ներողամիտ ուշադրությանը... Ի դեպ, հարցազրույցի հրապարակումն ունի նաև այդ ակնկալությունները: Լավ է ուշ, քան...

– Ձեր առաջին ելույթը խորհրդարանում, եթե չեմ սխալվում, կապված էր հանրապետության 1996 թ. պետբյուջեի նախագծի հետ:

– Այո, չեք սխալվում: Երբ ստացա բյուջեի նախագիծը և այդ առթիվ կառավարության բացատրագիրը, լուրջ հարցեր ծագեցին ու, կարծում եմ, լռելը սխալ կլիներ: Բանն այն է, որ բնավ արդարացված չէր հանրապետության տնտեսական վիճակի վերաբերյալ

բացատրագրի հեղինակների լավատեսությունը: Անցյալ տարվա վերջում հանրապետության արտաքին պարտքերը հիմնավոր որոշ գնահատումներով պետք է կազմեին 212 միլիարդ դրամ: Ցավոք, մեր անհանգստությունը, ինչպես պարզվեց, ավելի քան հիմնավոր էր, քանի որ այսօր արդեն հայտնի է, որ այդ գումարը հասել է շուրջ 300 միլիարդի, որը 5 անգամ գերազանցում է 1995-ի պետբյուջեի սեփական ուժերով ստացված եկամուտները (58 մլրդ դրամ): Ավելացնենք, որ եթե նույն տարում արտահանման ծավալները 1994 թ. համեմատ աճել են 29 տոկոսով, ապա ներմուծմանը՝ 6 անգամ ավելի: Թող չստացվի այնպես, թե ես չարախնդում եմ, բայց որ իրականում վիճակն իրոք շատ ավելի անմխիթարական էր, ամբողջ հստակությամբ պարզվում է այսօր. ինչի՞ց ելնելով էր կառավարությունը ներկայացնում 135 միլիարդ դրամ եկամտային մասով բյուջե 1996-ի համար, եթե 1995-ի պետբյուջեում այդ ցուցանիշն ընդամենը 58 միլիարդ դրամ էր. ի՞նչն էր փոխվել. արդյունաբերության և գյուղատնտեսական արդյունավետության բարձրացմանը նպատակաուղղված ինվեստիցիանե՞րն էին ավելացել, սեփականաշնորհումից ստացված չնչին փաստացի միջոցնե՞րն էին հրաշքներ գործել, մասնավոր դարձած ձեռնարկություննե՞րն էին թափով աշխատում և լիովին արդարացնում իրենց հետ կապված բոլորիս հույսերը... Ավա՜ղ, ոչ: Եվ ահա, բացահայտ տագնապալի մակրոտնտեսական պայմաններում բացատրագրի հեղինակները հայտարարում էին, թե «տնտեսական անկման նախորդ տարիներին բնորոշ միտումները, սկսած 1994-ից, իրենց տեղը զիջեցին մակրոտնտեսական կայունացմանը...», թե «1995 թ. հանրապետությունում շարունակվել է պետական ֆինանսական համակարգի ամրապնդմանը և բյուջեի դեֆիցիտի կրճատմանն ուղղված հակաբյուջետային քաղաքականությունը»:

Կառավարությունը այսպես համոզելով իրեն, թե մեր տնտեսությունը թևակոխել է կայունացման և հետինֆլյացիոն ժամանակաշրջան, իր տնտեսական ողջ քաղաքականությունը կառուցում է՝ ելնելով այդ երևութական թեզից:

– *Ինչի՞ կարող է հանգեցնել նման քաղաքականությունը, որի անդրադարձն է, փաստորեն, 1996-ի պետբյուջեն: Ինչո՞վ է հղի նման մոտեցումը:*

– Նախ, իմ համոզմամբ, տնտեսության վերելքն աներևակայելի է առանց կշռադատված, խելամիտ սեփականաշնորհման: Ահա թե ինչու իմ ելույթներից մեկում ես փորձել էի ապացուցել, որ 1996 թ. բյուջեն կառավարությանը, ինչպես նաև Կենտրոնական բանկին զրկել է սեփականաշնորհման ենթակա ձեռնարկություններում որևէ ինվեստիցիոն ծրագիր իրագործելու հնարավորությունից: Իսկ դա նշանակում է, որ սեփականաշնորհված ձեռնարկությունների տերերից շատերը ի վիճակի չեն լինի կազմակերպելու արտադրությունը՝ ինչպես արդյունաբերական, այնպես էլ գյուղատնտեսական հումք ձեռք բերելու միջոցներ չունենալու պատճառով:

Իսկ նրանք էլ, ովքեր կկազմակերպեն գործը, նույնպես կհայտնվեն դժվարին կացության մեջ: Եվ ահա թե ինչու: Վերջին չորս տարում մեզանում տեղ է գտել մի արատավոր գործելակերպ, երբ մեր ձեռնարկություններում կուտակված արտադրանքն ուղարկվում է Թուրքմենստան՝ ստացվող գազի դիմաց: Թվում է, թե ի՞նչ վատ բան կա

սրանում: Բանն այն է, որ չնայած կառավարության կողմից պարտքերը փակելու վերաբերյալ պարբերաբար ընդունվող «ահեղ» որոշումներին, ռեսուրսների նախարարությունը, արհամարհելով դրանք, ամիսներով, էլ չասենք՝ տարիներով, արտադրողներին չի վճարում պարտքերը՝ զրկելով վերջիններիս շրջանառու միջոցներից, հետևապես մրցունակ արտադրանքի թողարկման հնարավորությունից: Եվ հիմա ձեռնարկությունների մեծ մասը չի կարողանում գտնել սպառման նոր շուկաներ, դեռ մի բան էլ՝ կորցնելով եղածները:

Ստեղծված իրավիճակում հայ ձեռնարկատերերը գիտակցելով, որ ֆինանսապես սնանկ կառավարությունը չի կարող և չի ուզում օգնել իրենց, ճարահատյալ պիտի դիմեն բանվոր-ծառայողների զանգվածային գործազրկման, պիտի ինվեստորներ, իսկ, ավելի ճիշտ, սեփականաշնորհված ձեռնարկությունների գնորդներ փնտրեն, բայց արդեն արտասահմանից: Եվ սրանք դեռ բոլոր բացասական հետևանքները չեն...

– Ձեր կարծիքով, ո՞րն է կառավարության այսօրինակ գործելակերպի բացատրությունը:

– Հնարավոր է չորս բացատրություն. կա՛մ՝ կառավարությունում պրոֆեսիոնալիզմի բացակայության պատճառով չեն գիտակցում, թե տնտեսական և քաղաքական ի՛նչ հետևանքներ կարող է ունենալ նման անմտածված մոտեցումը սեփականաշնորհման գործին, որը փաստորեն իրականացվում է «մեզանից հետո թեկուզ ջրհեղեղ» սկզբունքով. կա՛մ կառավարությունը գիտակցում է, որ ինքը լրիվ սպառել է բյուջեի եկամտային մասի հագեցման բոլոր մյուս հնարները, բացառությամբ օտարերկրյա վարկերի ու սեփականաշնորհումից սպասվող միջոցների. կա՛մ, հախուռն սեփականաշնորհում անցկացնելով, կառավարությունը հող է նախապատրաստում, որպեսզի խուսափի այս տարեվերջին սպասվող խոշորագույն տնտեսական անկման պատասխանատվությունից. կա՛մ էլ, վերջապես, այս ամենի արդյունքում ակնկալվում է հանրապետության քաղաքական կյանքի վրա ներազդելու հզոր լծակների ձեռքբերում (ընդ որում՝ բնավ էլ ոչ բարոյական), որոնք, պետք է բոլորս գիտակցենք, հղի են տևական ծանր հետևանքներով:

– Եթե ամեն ինչ այդքան վատ է, ապա ինչո՞վ եք բացատրում թեկուզ դրամի փոխարկային կուրսի բավական երկար պահպանվող կայունությունը:

– Ձեր հարցը տեղին է: Փորձեմ բացատրել: Մեր հանրապետություն ներմուծվող արտադրանքի տարեկան ծավալն ըստ պաշտոնական տեղեկատվության կազմում է 460 միլիարդ դրամ: Այս ծավալն իրացնելու համար, եթե նկատի ունենանք Կենտրոնական բանկի պնդումը, թե դրամի շրջանառության արագությունը մեկ տարում կազմում է 4,7, առնվազն անհրաժեշտ կլիներ՝ շրջանառության մեջ ունենալ շուրջ 98 միլիարդ դրամական զանգված, մինչդեռ իրականում շրջանառության մեջ գտնվող կանխիկ և ցպահանջ ներդրումների դրամական զանգվածը 2,6 անգամ պակաս է տնտեսական համակարգի նորմալ գործունեության համար հարկավոր քանակից: Եվ, բնականաբար, արժույթային շուկայում աճում է այն գինը, որ մեր համաքաղաքացիները ստիպված են վճարել դրամ ձեռք բերելու համար: Ահա սա է, որ արհեստականորեն կայուն է պահում դրամի

փոխարժեքը, սակայն ամենևին էլ ոչ գնողունակությունը: Կարճ ասած՝ դրամի փոխարժեքի կայունությունը բնավ էլ չի դառնում ժողովրդի բարեկեցության նախադրյալ:

– Դատելով Ձեր ելույթներից, Դուք շուկայական հարաբերությունների, տնտեսության ազատականացման, սեփականաշնորհման կողմնակից եք: Ահա արդեն մի քանի տարի է, հանրապետությունում ներդրվում են այդ հիմունքները: Ի՞նչն է պատճառը, որ արդյունքները, մեղմ ասած, դեռ չափազանց համեստ են:

– Ավելի քան համեստ: Հեռու չգնանք. հենց պարոն վարչապետի խոստովանությամբ, սեփականաշնորհված ձեռնարկությունների միայն 30 տոկոսն է աշխատել լավ, քան անցյալում, մյուս 30-ը աշխատել է ավելի վատ, իսկ 40-ը դարձել է «Անիի ավերակներ»: Ունենալով այս արտառոց տվյալները, կառավարությունը փոխանակ խորությամբ վերլուծելու «վատ աշխատանքի» կամ «ավերակ դառնալու» իրական պատճառները, ըստ էության կործանումից փրկելու սեփականաշնորհման գործընթացը, հերթական անգամ դրսևորեց պարզունակ, մակերեսային մոտեցում, առաջարկելով վերջերս Ազգային ժողովում տարաբախտորեն հավանություն ստացած սեփականաշնորհման ծրագիրը: Ցավոք սրտի, դրա իրականացումը նույն ավերածությունները կարող է գործել նաև սոցիալական ոլորտի օբյեկտներում:

Փորձեմ դա ցույց տալ առողջապահության հիմնարկների օրինակով: Դրա անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկներից և ոչ մեկը , իմ կարծիքով, քննություն չի բռնում: Փոխանակ սեփականաշնորհելու պակաս սարքավորված, ոչ արդյունավետ գործող բուժհիմնարկներն՝ այն հաշվով, որպեսզի այդ կերպ հնարավորին չափ շատ ներդրումներ գրավվեն այստեղ, մի բան, որ կլիներ և հասկանալի, և արդարացված, ծրագրի հեղինակները գնացել են իրենց համար առավել հեշտ, գլխացավանք չպատճառող ուղիով: Մասնավորապես սեփականաշնորհվելու են Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտը, հանրապետական ակնաբուժական, պրոկտոլոգիական, ատամնաբուժական կլինիկաները և այլն, այսինքն՝ օրինակելի բուժական հիմնարկներ, որոնք տեղավորված են իրենց իսկ ղեկավարների ջանքերով համեմատաբար լավ պահպանված շենքերում և որտեղ հիմնականում լուծված են ժամանակակից բուժտեխնիկայով հագեցնելու, բարձրակարգ մասնագետներով համալրելու հիմնորոշ հարցերը: Եվ ի՞նչ... Օր օրի թանկացող էլեկտրամատակարարման, ջրի, շենքի շահագործման և մյուս կոմունալ ծախսերի աճի պայմաններում, երբ, ամեն ինչից զատ, հարկ է լինելու նաև միջոցներ հայթայթել թանկարժեք, հազվագյուտ բուժսարքավորումները սարքին պահելու համար, նշանակալիորեն կմեծանա բուժսպասարկման արժեքը, որն այդ կլինիկաների ծառայություններից օգտվելը փաստորեն անհնար կդարձնի մեր ազգաբնակչության ճնշող մեծամասնության համար: Որպես հետևանք՝ հիվանդանոցների թերի ծանրաբեռնվածություն և բուժանձնակազմի զգալի կրճատում... Այսպիսով, ծրագրի բովանդակած այն պնդումը, թե բուժհիմնարկների սեփականաշնորհման շնորհիվ տեղի կունենա «կադրերի հոսքի և գործազրկության որոշակի նվազում, առողջապահության համակարգի գործունեության արդյունավետության ապահովում», բոլորովին արժանահավատ չէ:

– Իսկ ի՞նչ է, առողջապահության բնագավառում սեփականաշնորհումը բացառվո՞ւմ է:

– Բնավ: Սակայն ինձ թվում է, որ նախքան հիշատակված և նմանատիպ այլ բուժհիմնարկների սեփականաշնորհումը, կառավարության և Ազգային ժողովի առաջնահերթ խնդիրը պետք է դառնար բոլոր անհրաժեշտ տնտեսական պայմանների և օրենսդրական հիմքի ստեղծումը հանրապետությունում ապահովագրական բժշկության կազմակերպման համար: Երբ յուրաքանչյուր քաղաքացի իր եկամուտների համամասնական չափով կմասնակցեր ազգաբնակչության բոլոր շերտերին մատչելի, երաշխավորված ու լիարժեք բուժսպասարկման ձևավորմանը:

– Անկեղծ ասեք, իսկ 1996 թ. սեփականաշնորհման ծրագրի մեջ Դուք որևէ դրական բան չե՞ք տեսնում:

– Արդեն իսկ ծրագրի գոյությունն ու դրա անժխտելի անհրաժեշտության գիտակցումը հասարակության կողմից ինքնին դրական երևույթ է, արժանի ամենայն աջակցության: Սակայն ամեն լավ մտահղացում, եթե իրոք ցանկանում ենք դրա հաջող իրականացումը, պետք է խորը և համակողմանի տնտեսական, սոցիալական և, ինչո՞ւ չէ, քաղաքական հիմնավորումներ ունենա: Սակայն ի՞նչ ասես այսպիսի պերճախոս փաստերի հետ բախվելիս: Ծրագրում ընդգրկված սեփականաշնորհվող ձեռնարկությունների և «փոքր» օբյեկտների արժեքի ընդհանուր գումարը կազմելու է 167 մլրդ դրամ, անավարտ շինարարությանը՝ 118 մլրդ 680 մլն դրամ: Ընդ որում, ծրագրվում է սեփականաշնորհման մի մասը կատարել շուրջ 200 մլրդ կանխիկ դրամով, իսկ մնացած 85 մլրդ 700 մլն-ը՝ սեփականաշնորհման սերտիֆիկատների միջոցով: Հարց է ծագում՝ կառավարությունը պատկերացնո՞ւմ է, թե ինչպես պիտի սեփականաշնորհմանը մասնակցող մեր համաքաղաքացիները վճարեն վերոհիշյալ կանխիկ 200 մլրդ դրամը կամ դրա արտարժույթային համարժեքը: Համեմատության համար հիշենք, որ 1995 թ. բյուջեի եկամտային մասը ստացված հարկերից և տուրքերից կազմել է 58 մլրդ դրամ, իսկ սեփականաշնորհման անցյալ տարվա փորձը ցույց տվեց, որ հեռու և մոտիկ արտերկրի, այդ թվում և մեր հայրենակից ներդնողների վրա հույս դնել այս հարցում չի կարելի: Ուրեմն որտեղի՞ց է ծնվելու, ո՞ր աղբյուրից է բխելու այդ 200 մլրդ կանխիկ դրամը: Թե՞ կառավարությանը հայտնի են հանրապետությունում առկա որոշակի կորպորատիվ խմբավորումներ, որոնք ընդունակ են կլանելու վերոհիշյալ ծավալը: Ի՞նչ խմբավորումներ են դրանք, ովքե՞ր են ընդգրկված այնտեղ: Պատասխանը պարզ է. մեր համաքաղաքացի նույն այն անճինք, որոնց նկատմամբ հանրապետության մաքսային և հարկային ծառայություններն այնքան բարեհաճ են եղել, որ «չեն նկատել», թե ինչպես երկրի բյուջեն չի ստացել առնվազն 150 մլրդ դրամ տուրքերից և հարկերից, դրանով իսկ ոմանց համար հնարավորություն ստեղծելով սեփականացնելու ազգային հարստության մի մասը՝ ոչ ավելի, ոչ պակաս 200 մլրդ դրամի, չհաշված 85 մլրդ դրամի համարժեք սեփականաշնորհման սերտիֆիկատները:

– Ծանր են հնչում ձեր փաստարկները: Իսկ Դուք որևէ ելք տեսնո՞ւմ եք իրադրությունը շտկելու համար:

– Թերթի էջերում ես հնարավորություն չունեմ շատ ծավալվելու: Կասեմ կարճ: Առաջին. անհրաժեշտ է մշակել տնտեսագիտական կոնցեպցիա անցումային շրջանի

համար, սահմանելով էկոնոմիկայի զարգացման առաջնային ուղղությունները, որոնք պետք է հանդիսանան սեփականաշնորհման ծրագրի առանցքը:

Երկրորդ. անհրաժեշտ է, որ կառավարությունը իմաստավորի անցյալում արդեն սեփականաշնորհված ձեռնարկությունների գործունեությունը, բացահայտի բնորոշ օրինաչափություններն ու պրոբլեմները և կատարված վերլուծության հիման վրա ընդունի նվազագույն տնտեսական կորուստներ և սոցիալական վնասներ հարուցող գործունեության ծրագիր:

Երրորդ. հաշվի առնելով սպառման շուկաների զգալի կրճատումը և սեփականաշնորհման ենթակա ձեռնարկությունների փաստացի պոտենցիալ հնարավորությունները, պետք է իրականացվի հարկատուրքային այնպիսի քաղաքականություն, որն առավել բարենպաստ պայմաններ կապահովի հայրենի արտադրողների համար, անտեսելով այն պարզունակ դատողությունները, ըստ որոնց, այս «մոտեցումը 19-րդ դարի կեսերին բնորոշ փիլիսոփայություն է»: Հիշեցնենք մեր որոշ պաշտոնատար այրերին, որ իրենց իսկ թողտվությամբ հանրապետության էկոնոմիկան այսօր իջեցվել է այն մակարդակին, որն իրոք բնութագրական էր 19-րդ դարի կեսերին ազատ շուկայի ուղին բռնած Արևմտյան Եվրոպայի երկրների համար:

Չորրորդ. ելնելով մեր հասարակության էլ ավելի խորը, անխուսափելի ֆինանսական շերտավորման իրողությունից, անհապաղ համապատասխան օրենսդրական հիմքեր ստեղծել՝ նպատակ ունենալով վերաբաշխել եկամուտները հասարակության բոլոր խավերի միջև սոցիալական հնարավոր ցնցումները մեղմելու համար: Կարծում եմ, որ դրանով իսկ մենք կխուսափենք նաև մեր աշխատավորների սննդի օրաբաժնից «պանրի քառակի կրճատման» անհրաժեշտությունից, ինչը խորհուրդ է տալիս անել մեր վարչապետը:

Հինգերորդ. նկատի ունենալով այն համգամանքը, որ տարեվերջին անխուսափելի է գործազուրկների բանակի զգալի աճը, օրենսդրորեն կարգավորել գործատու-վարձու աշխատող հարաբերությունները՝ խնդիր դնելով սոցիալապես պաշտպանել աշխատանքից ազատվող հազարավոր մարդկանց, դրանով իսկ ապահովել այնպիսի հասարակական մթնոլորտ, որը պակաս հիվանդագին կդարձներ շուկայական հարաբերությունների հետագա խորացումը:

Եվ վերջում մի նկատառում ևս. չհավակնելով մեզանում վարվող տնտեսական քաղաքականության և դրա հնարավոր սոցիալական ու քաղաքական հետևանքների հանրամատչելի ու անվիճահարույց վերլուծության, այնուամենայնիվ ինձ համար ակներև է, որ այսպես շարունակելու դեպքում վաղ թե ուշ մեծանալու է սոցիալական պայթյունի և հանրապետության ներքին իրադրության ապակայունացման վտանգը : Իսկ տարածաշրջանում առկա աշխարհաքաղաքական իրավիճակում այդ ապակայունացումը, ումից էլ որ այն բխելու լինի և ինչ մտադրություններով էլ քողարկվի, ոչ այլ ինչ է, քան մի անքավելի մեղք սեփական ժողովրդի առջև: Եվ սա, ցավոք, բնավ էլ չափազանցություն չէ:

«Ազգ», 30.III.1996:

Тенденции спада сменились... руинами Ани

Более того, уже вконец рассеялись иллюзии о принципиальной возможности комплексного решения вопросов становления армянской государственности с использованием применяющихся на Западе моделей либеральной экономики и институциональной демократии. Мы призвали к жизни организацию, которая стремится к преодолению национального кризиса и предотвращению национальной катастрофы. "Национальное Единение" приняло программу, реализация которой позволит сформировать общественно-экономический строй, наиболее полно соответствующий интересам большинства населения. "Национальное Единение" ставит перед собой задачу построения гражданского общества, которое функционирует только при отсутствии коренных противоречий между личными, гражданскими и общественными интересами, которые, в свою очередь, становятся приоритетными по отношению к классовым, клановым и корпоративным интересам.

— *Где, в каком крыле традиционной политической системы координат следует искать вашу организацию? Грубо говоря, кто вы — левые, правые, консерваторы, либералы?..*

— Идеи "национального единения" созвучны идеям консервативных партий, так как и мы считаем себя обязанными содействовать утверждению прочного строя ценностей, присущих нашему народу, важнейшими из которых являются любовь и преданность земле своих предков и их святыням, созидательный индивидуализм, незыблемость семьи и рода. Но в то же время идеи "Национального Единения" созвучны и идеям партий либерального толка, так как мы выступаем за основные права гражданина, его экономическую свободу, основанную на частном предпринимательстве и свободе рынка, за проведение в жизнь демократической воли большинства и защиту прав меньшинств. При этом наши идеи созвучны также идеям социальных партий, так как мы выступаем за понимание того, что жизнь человека, его достоинство и его совесть имеют безусловный приоритет...

Одновременно мы считаем, что заблуждаются те из сторонников либерализма, кто представляет его себе основанным на рыночной стихии при полной самоустраненности государства.

Заблуждаются те из входящих в новые организации промышленников, аграриев и интеллектуалов, которые полагают, что между богатыми и бедными может быть сохранено подлинное равновесие жизненного уклада и цели, что возможно сохранить для всех правовую и политическую свободу, оставляя экономическую, социальную и культурную свободу в качестве исключительной привилегии меньшинства. Заблуждаются сторонники националистических движений, полагая, что солидарное, правовое и демократическое общество можно построить на допускаемой основе принципиального неравенства людей и без обеспечения свободы личности вне "нации-организации". Заблуждаются сторонники социалистических движений, считающие, что централизованно управляемая экономика способствует самостоятельному гармоничному развитию человека...

— И все же, какие ценности для вас приоритетны в том, что касается экономики?

— Воплощение своих идей мы видим в построении экономического строя, основанного на социальном рыночном хозяйстве, духовным фундаментом которого является идея свободы, соединенная с ответственностью. Создание социального рыночного хозяйства — это цель нашей экономической, общественно-политической программы. Социальное рыночное хозяйство противостоит социалистическому сужению свобод и прав в экономике, тотальному обобществлению средств производства. Вместе с тем оно противостоит и установившимся в республике неконтролируемым формам экономики "либерального" толка, отвергает клановые привилегии, монополии и направлено против всякого государственно-экономического диктата.

Мы выступаем за такую форму рыночной экономики, основополагающими элементами которой являются конкуренция и личная социально-обязывающая собственность, децентрализованное регулирование, свобода предпринимательства и профессиональная деятельность, самостоятельность и готовность к риску, наличие альтернатив. Мы выступаем за всемерное содействие становлению, укреплению и росту среднего класса как наиболее действенной гарантии общественной стабильности, прогрессирующей производительности и гибкой приспособляемости экономики. Мы выступаем не за уступки среднему сословию, а подчеркиваем исключительную актуальность создания правовых и общественных условий для

активизации среднего класса, отводим ему решающее место в осуществлении политической стратегии и становления свободного общества.

— *В программе вашей организации особое место уделяется национальной идеологии...*

— В нашем понимании национальная идеология в конечном счете сводится к созданию национальной государственности армянского народа, то есть Нации — Государства в современном понимании развитых стран Запада и Востока. Армянская национальная идеология не направлена против какой-либо другой нации и отвергает расизм. Мы глубоко убеждены, что армянской национальной идеологии совершенно чуждо стремление быть "мировой нацией", "нацией-организацией".

Достижение целей национальной идеологии предполагает ответственность всех армян за свою государственность на части территории своей исторической родины, единение всех национальных сил на основе общей цели при сохранении их политических, философских, социальных и прочих взглядов, при условии подчинения единой и важнейшей задаче — созданию и упрочению Нации — Государства. Решающее значение в реализации национальной идеологии имеют единые целенаправленные действия всех политических сил, имеющихся в республике. Особое место отводим и спюрку.

— *Арташес Мамиконович, вы были далеко не последним человеком в государственном аппарате в Советской Армении, руководство которой имело несколько иные представления о национальной идеологии...*

— Я убежденный противник того, чтобы перечеркивать все, что было в нашей стране при том строе. Нигилизм в общенациональном масштабе губителен. Верно говорится, что "Если мы выстрелим по прошлому из ружья, то будущее ответит нам пушечным залпом". Каждая формация готовит почву для более прогрессивных формаций. Критически осмысливая прежний режим, я остаюсь глубоко убежденным в том, что совершенно недопустимо отрываться искусственно от той действительности, на которой воспитывались поколения. Наше культурное наследие — это однозначно достояние всего армянского народа независимо от времени, религиозных и политических взглядов его создателей. Необходимо признать Республику Армения (1918-1920 гг.) и Армянскую ССР (1920-1991 гг.) формами единой армянской государственности. Сегодняшняя независимая Армения является третьим этажом этого целостного здания. Мы должны по достоинству оценить заслуги Армянской ССР в развитии страны и народа.

— *Последний год-полтора вы активно выступаете с позиций непри-*

ятия курса и деятельности правительства. Надо ли в связи с этим ожидать, что "Национальное Единение" заявит о себе как оппозиционная партия?

— То, о чем вы говорите, намного глубже, чем просто критика экономической политики правительства. Посудите сами: Конституция провозгласила Республику Армения суверенным, социальным, правовым и демократическим государством. Определена политическая надстройка будущего государства без осмысления того, а каков базис, на котором может быть построено провозглашенное Конституцией общество. От этого и все наши беды. Более того, налицо отсутствие общенациональной программы построения нового общества, неспособность властей, проправительственных и большинства оппозиционных партий осмыслить и предложить решение фундаментальных проблем современного развития, пренебрежение необходимостью стратегического планирования и т. д. Как вы думаете, какой может быть вновь созданная политическая организация в этих условиях? Мы видим одну сверхзадачу — обеспечение национальной безопасности на основе упрочения армянской государственности, что возможно только в случае консолидации всех политических сил вокруг самых заветных идей. Во имя этих идей должны сложить оружие перед народом и власти, и оппозиция. И я бы очень сожалел, если б "Национальное Единение" восприняли бы как оппозиционную партию. Это означало бы, что не понята суть ее, выраженная в самом названии. Во главу угла мы ставим проблему выработки идей, способных консолидировать нацию. В этом смысле нас можно назвать партией государственности. У нас нет окраски. Выбор цвета и форм — дело, на наш взгляд, десятое.

"Новое время", 22. III.1997.

Почему Армения хочет в Союз?

Перспектива присоединения Армении к Союзу Беларуси и России начинает принимать зримые очертания. На II сессии Парламентского Собрания Союза Беларуси и России Армения получила статус постоянного наблюдателя. Корреспондент "РФ сегодня" Александр Черняк попросил депутата Национального собрания Республики Армении, руководителя делегации внепартийного общественного объединения Армянская народная инициатива "Россия–Беларусь–Армения" на II сессии Парламентского Собрания Союза Арташеса Гегамяна изложить свою точку зрения на проблему.

Что же побудило около половины наших сограждан, имеющих право голоса на выборах, откликнуться на воззвание о вхождении в Союз, сделанное видными деятелями науки и культуры, представителями общественно-политических организаций? Какие думы, тревоги и чаяния обуревают нас на пороге третьего тысячелетия? Каким нам видится путь, следуя которому суверенная Республика Армения станет сильной как в экономическом, так и в военном отношениях? Какие духовные и нравственные ценности смогут вновь консолидировать нацию? С кем и как можно добиться справедливого решения вопроса Нагорного Карабаха, обеспечить единство Армении и десятимиллионной армянской диаспоры — Спюрка? Насколько соотносится с основами конституционного строя и нормами международного права возможное вступление Армении в Союз Беларуси — России? С какими государствами у Республики Армении совпадают геополитические и экономические интересы?

Вопросы, вопросы... Все они непростые, судьбоносные. Они волнуют нас, проходят через мысли и сердце каждого армянина. За годы независимости экономическая политика властей республики, проводимая под патронажем Международного валютного фонда, фактически сводилась к бесконтрольной приватизации госимущества, огульной либерализации экономики, при кажущейся макроэкономической стабилизации, через жесткое планирование денежной базы в условиях свертывания роли государства. В результате такой политики экономика Армении подвергалась

либерально-монетаристскому "шоку", из которого до сих пор и не вышла. Если в бывшем СССР средняя зарплата была самой высокой в Армении, то сегодня она составляет всего 30 долларов. При этом внешний долг страны составляет 600 млн. долларов. МВФ выделил кредит 60 млн., из которых 45 тут же были потрачены на обслуживание внешней задолженности.

Можно приводить еще и еще примеры кризисного состояния нашей экономики. По сути дела, она стала очередным полигоном практической реализации теории "золотого миллиарда", в соответствии с которой, как известно, обеспеченное существование на планете может быть гарантировано только для миллиарда граждан наиболее преуспевающих стран. Нам же уготована жалкая участь поставщика дешевой рабочей силы и сырьевого придатка, назначение которого — смягчить последствия сырьевого и экономического кризисов, угрожающих благополучию и стабильности развитых государств. В рамках этой стратегии, известной под названием "Вашингтонского консенсуса", разработанной МВФ для слаборазвитых стран третьего мира, происходит фактическая деиндустриализация страны, свертывание наукоемких производств.

Уже становится очевидным, что царящий в республике режим все более отчуждается от отстаивания национальных интересов. Не вызывает сомнений то, что совместная выработка взвешенных и разумных мер по стимулированию инвестиционной и инновационной активности, экономического роста в условиях единого экономического пространства России — Беларуси — Армении мобилизует интеллектуальный, научно-производственный потенциал республики, приведет к сдвигам в экономике. Интеграция Армении в экономическое пространство Союза вовсе не означает переход к политике изоляции от мировой экономики. Это уже и экономически невозможно, и бесперспективно с точки зрения национального развития. Нам представляется, что экономическая интеграция будет способствовать обеспечению национальной конкурентоспособности экономической, научно-технической, образовательной и культурной деятельности в глобальном масштабе. Уверен, что экономическая интеграция Армении с Белоруссией и Россией воздастся сторицей, принеся огромную прибыль членам Союза.

Геополитический смысл Союза совершенно очевиден: недопущение образования при расширении НАТО Балтийско-Черноморской санитарной зоны между Европой и Россией. На гербе России двуглавый орел, смотрящий на Запад и Восток. С образованием Союза западный тыл России

надежно прикрыт Беларусью. Настало время орлу окинуть взором и южные рубежи России, где происходит постоянное вооружение южного форпоста НАТО — Турции, которая небезуспешно пытается дать новый толчок пантюркизму и обнять подбрюшье России "культурным" (пока что) союзом тюркоязычных стран.

Более того, уже есть модель некоего "Кавказа без России", фактически и без Армении. Известно также, как он должен быть устроен, кто какие в нем должен иметь позиции. И позиции эти проглядываются в поведении тех или иных стран СНГ в постсоветский период. В этой связи исключительную актуальность приобретает взвешенное решение проблемы Нагорного Карабаха. Думается, что ни у одного из здравомыслящих политиков не вызывает сомнений, что в деле укрепления своих позиций в Закавказье и на Кавказе в целом Армения для России объективно приоритетна. Сдача геополитических позиций в обмен на геоэкономические, нефтяные приобретения, чего добиваются некоторые политико-финансовые круги, будет в конечном счете означать крах и в геополитике, и в геоэкономике.

Подобная политика, на наш взгляд, способна нанести прямой ущерб стратегическим интересам России в регионе, которые во многом обусловлены обороноспособностью Армении и Нагорного Карабаха. Всемерное укрепление нашей обороноспособности поостудит пыл кое-кого, кто свое будущее связывает исключительно с военным потенциалом натовской Турции. Чем может обернуться насильственное втискивание Нагорного Карабаха в состав Азербайджана? Это чревато еще худшими несчастьями для армян Карабаха, нежели те, которыми они были ой как сыты в советские времена. Но самое главное — это будет началом изгнания армян из Закавказья.

Не греша против истины, следует заметить, что среди некоторых политиканов Армении есть антирусские настроения. Сегодня для многих из властей предержащих республики, которые оказались вовлеченными в политику на волне критики многовековой русской ориентации армянского народа, вступление в Союз весьма нежелательно, если не сказать — невозможно. Наступать на горло собственной песне, признать, что обуревающий их на протяжении нескольких лет пафос разрушения "империи зла" на практике обернулся тем, что вместе с грязной водой выплеснули и ребенка, — привел в упадок экономические, культурные и человеческие связи между республиками.

Переписать собственную политическую биографию никому не дано.

С другой стороны, поставив под сомнение ее осмысленность, политик рискует, утратив "девственность", лишиться былого влияния. Страх перед такой перспективой является серьезным препятствием на пути вхождения Армении в Союз Россия – Беларусь. Однако начавшийся процесс выражает чаяния армянского народа. Этому будет способствовать подписанный в августе 1997 года президентами России и Армении Договор о дружбе, сотрудничестве и взаимной помощи между Российской Федерацией и Республикой Арменией, а также поддержка Парламентским Собранием Союза народной инициативы Армения–Россия–Беларусь. Народная инициатива всецело одобряет Договор о Союзе Беларуси и России, стержневая идея которого емко и рельефно выражена в статье № 1, которая гласит: "...Каждое государство – участник Союза сохраняет государственный суверенитет, независимость и территориальную целостность, Конституцию, Государственный флаг, герб и другие атрибуты государственности".

"Российская Федерация сегодня", 1997, № 2, с. 57-58.

Հայաստանում ձևավորվում է հինգերորդ շարասյուն

«Ազգային Միաբանություն» հասարակական-քաղաքական կազմակերպության նախագահ, ԱԺ պատգամավոր Արտաշես Գեղամյանը վերջին ամիսներին բավականին քիչ է երևում հրապարակային քաղաքական ասպարեզում: Դրա պատճառների մասին հարցով էլ սկսվեց մեր զրույցը:

– Գլխավոր պատճառը, թերևս, այն է, որ ՀՀ նախագահը կազմավորել էր կառավարություն, նշանակել հիմնական պաշտոնյաներին և ձեռնամուխ եղել նախընտրական ծրագրի իրագործմանը: Նման պարագայում մնում էր կա՛մ օգնել, կա՛մ սպասել, երբ քո օգնության կարիքը կլինի: Հրապարակավ հանդես չեմ եկել, որովհետև կարծում եմ, որ Ռ. Քոչարյանը հիմնականում հետևում է իր որդեգրած քաղաքական ուղեգծին, հետևաբար՝ միջամտություններն անիմաստ էին:

– Դեռևս նախընտրական շրջանում խոսակցություններ կային, որ հնարավոր է Ձեր կողմից խոշոր պաշտոնի ստանձնում, սակայն դա տեղի չունեցավ: Ի՞նչն էր պատճառը՝ Դո՞ւք չէիք ցանկանում պաշտոն ստանձնել, թե՞ այլ պատճառներ կային:

– Յուրաքանչյուր քաղաքական գործիչ ունի իր ժամը, երբ նրա ներուժն առավելագույնս կարող է պիտանի լինել պետությանը: Կարծում եմ իմ և մեր կուսակցության մոտեցումները, դիրքորոշումն ու հնարավորությունները դեռևս «պահանջված չէին»: Կարևորն այն չէ՝ դու կառավարության անդամ ես, թե ոչ, կարևորը սեփական սկզբունքներին հավատարիմ մնալն է:

– Երկար ժամանակ, երբ դիմում էինք հարցազրույցի խնդրանքով, Դուք ասում էիք. «Դեռ պահը չէ»: Ի՞նչ փոխվեց հիմա:

– Փոխվել է այն, որ այսօր Հայաստանում ձևավորվում է «հինգերորդ շարասյուն», որը կարող է լրջորեն վտանգել պետականությունն ու ՀՀ նախագահին: Դա ոչ մի լավ բան մեր ժողովրդին չի խոստանում, և երբ տեսնում ես նման վտանգ, ապա լռելու իրավունք այլևս չունես: Լռությունը տվյալ պարագայում հավասարազոր եմ համարում, մեղմ ասած, մորթապաշտության:

– Ինչպե՞ս ձևավորվեց «հինգերորդ շարասյունը» և ումի՞ց է բաղկացած:

– Դեռևս հուլիսին՝ իր հրաժեշտի ասուլիսում, Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Փիթեր Թոմսենը լուրջ մեղադրանքներ ներկայացրեց՝ հանրապետություն ներմուծվող ապրանքների «54%-ի դեպքում ներմուծողները հարկադրված են

կաշառք տալ մաքսային ծառայությանը, իսկ 31%-ի՝ երկաթուղուն»: Շարունակեմ մեջբերումն ասուլիսից. «Փոթիի նավահանգստից մինչև Երևան բեռները հասնում են 4 օրում, այսինքն՝ 6,5 կմ/ժ արագությամբ»: Չմոռանանք, որ պրն Թոմսենը ներկայացնում է մի պետություն, որը 1992-ից ի վեր տրամադրել է Հայաստանին առավել քան 1 մլրդ դոլարի մարդասիրական օգնություն, այսինքն՝ դա մեր բարին կամեցողի ահազանգ էր:

Ճիշտ նույն ժամանակ՝ ԱԺ-ի արձակուրդից առաջ, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանը ԱԺ ներկայացավ քրեական հետաքննության նպատակով պատգամավորներից մեկին անձեռնմխելիությունից զրկելու պահանջով, ինչը ԱԺ-ն մերժեց: Մի քանի օր անց գլխավոր դատախազը հրապարակավ հայտարարեց, որ ԱԺ-ն հովանավորում է քրեական պատասխանատվության ենթակա պատգամավորներին: Դրան հաջորդեց Հենրիկ Խաչատրյանի ողբերգական սպանությունն իր աշխատասենյակում:

Նույն ժամանակ լայնամասշտաբ գրոհ սկսվեց իշխանությունների և հատկապես նախագահի դեմ: Ամենից ավելի ջանասիրաբար էին դա անում Դավիթ Շահնազարյանը, Էդվարդ Եգորյանը և տխրահռչակ Բլեյանը:

Այդ երեք իրադարձությունները կազմում են մի չարագուշակ տրամաբանական շղթա և կարող են հանգեցնել հետևյալին: Փ. Թոմսենի՝ անպատասխան մնացած մեղադրանքներից հետո գործադիր իշխանության ներկայացուցիչների ուզածդ միջազգային հավաքում Աղրբեջանը կարող է հայտարարել, որ ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ անզոր կառավարություն է, և կոռումպացված տարրերն են բարձրացնում Արցախի հարցը: Միջխորհրդարանական ուզածդ հանդիպում ժամանակ ՀՀ պատվիրակության բերանը նույնպես կարող են փակել հայտարարելով, որ առաջարկություններ ներկայացնում է մի խորհրդարան, որը հովանավորում է քրեական հանցագործներին: Իսկ ՀՀ նախագահի լեգիտիմության հարցի չարչրկումը ինքնին կարող է հանգեցնել նրան, որ Ռ. Քոչարյանի կողմից Արցախի խնդրում սկզբունքային հարցեր բարձրացնելիս կհայտարարեն, թե դրանք առաջ է քաշում հայ ժողովրդի կարծիքը չարտահայտող մեկը:

Ո՞ւմ է ձեռնտու թուլացնել հայոց պետականության ձայնը Արցախի հարցի պաշտպանության ոլորտում... Կարծում եմ, որ և՛ քաղաքական գործիչները, և՛ լրատվամիջոցներն անցումային շրջանում գտնվող երկրում գոնե ի շահ Արցախի պետք է սատարեն պետականությունը խորհրդանշող նախագահին: Շարունակենք փաստերի շղթան: Նույն ժամանակ Վազգեն Մանուկյանը հայտարարում է, թե ինքը կսատարի բոլոր այն ուժերին, որոնք Արցախում կողմ են Սամվել Բաբայանին: Ենթատեքստը բավականին վտանգավոր է՝ սեպ խրել Հայաստանի և Արցախի, վերջինիս բարձրաստիճան պետական և ռազմական գործիչների միջև:

Այս ամենին զարմանալիորեն ձայնակցում է Հայաստանի ժողովրդական կուսակցության քաղաքական քարտուղարը, որը «Գոլոս Արմենիի» թերթում ասում է, թե այս հողուրջում ամագ ունեն միայն հայաստանցիները, ուստի Հայաստանի ճակատագիրը պետք է տնօրինեն և որոշեն միմիայն Հայաստանում ծնված պետական գործիչները: Նույն միտքը Կոթիի գյուղացու առոգանությամբ կրկնում է Վանո Սիրադեղյանը՝ գուժելով,

թե Հայաստանին լուրջ վտանգներ են սպառնում, եթե նախագահ շարունակում է մնալ «ստեփանակերտցի Ռ. Քոչարյանը»:

Սա հեռահար քաղաքականություն է: Ծանր սոցիալական պայմաններում տառապող ժողովրդին քաղաքական բեմահարթակում իրենց անջատ ձևացնող ուժերը ձգտում են այն սնանկ միտքը «պատվաստել», թե ժողովրդի ծանր վիճակն ու տառապանքը պայմանավորված են Արցախով ու արցախցիներով:

Եթե վերադառնանք վեց ամիս ետ, ապա կհիշենք, որ մարտի 30-ին Ազգային հեռուստատեսության առաջին ծրագրով մոսկվացի ոչ անհայտ քաղաքագետ Սերգեյ Կուրղինյանը համառորեն փորձում էր մեզ վախեցնել, որ եթե ՀՀ նախագահի ընտրվի Ռոբերտ Քոչարյանը, ապա 6-7 ամիս հետո Հայաստանում կլինեն քաղաքական ընդվզումներ և քաղաքացիական պատերազմ: Այսինքն՝ դեռևս նախընտրական փուլում մշակվում էր Հայաստանի ապակայունացման սցենար: Սցենարը մշակվեց դրսում, իսկ դերակատարներ գտնվեցին ներսում:

– Իսկ ինչո՞ւ հենց այս պահին դերակատարները գլուխ բարձրացրին:

– Ըստ իս, մի քանի հանգամանք կա: Նախագահ Քոչարյանը բազմիցս հայտարարեց, որ ՀՀՇ-ի վարչախմբի օրոք 1990-ականներին կատարված քաղաքական սպանությունները գրեթե բացահայտված են, և մնացածը ժամանակի հարց է: Հենրիկ Խաչատրյանի սպանությունից հետո նույն պնդումն արվեց և՛ նախագահի, և՛ ՆԳ և ԱԱ նախարարի, և՛ նորընծա գլխավոր դատախազի կողմից: Եվ այդ ամենը հուշ է ներշնչում, որ սպանություններն իրոք մինչև վերջ բացահայտվելու են: Դրա հետ մեկտեղ նախագահ Քոչարյանին սատարող քաղաքական ուժերն ավելի ու ավելի հետևողականորեն են բարձրացնում նախկինում տեղ գտած չարաշահումների և հանցագործությունների հեղինակներին և պատվիրատուներին պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այս պարագայում հանցագործներին մնում է պատասխանատվությունից խուսափելու երկու հնարավորություն: Մեկը՝ հեղաշրջում անել և վերադառնալ այն կարգավիճակին, ինչ կար մինչև 1998-ի փետրվարը: Երկրորդ տարբերակը՝ հնարավորին չափ շիկացնել ներքաղաքական իրավիճակը, մեղադրանքներ ներկայացնել գործող նախագահին, որպեսզի քաղաքական ընդդիմության սքեմ հագած՝ հարմար պահին, իբրև հալածական, ճողոպրեն արտասահման՝ անպատիժ վայելելու իրենց թալանածը:

Բնականաբար, նման ձգտումներն ոչ մի առնչություն չունեն հայության նվիրական նպատակների հետ, և այդպիսի գործիչները հորդառատ ջուր են լցնում Ալիևի ջրաղացին:

– Այնուամենայնիվ, տեսնելով այդ իրավիճակը՝ նախագահը չի դիմում համարժեք կտրուկ քայլերի: Ձեր կարծիքով, ի՞նչն է պատճառը:

– Չարիքի արմատը հայտնի հանցագործություններին քաղաքական և իրավական գնահատական չտալու մեջ է: Իսկ ինչո՞ւ չի տրվում: Դժվարանում եմ ասել: Բայց կարող եմ ենթադրել: Երկար ժամանակ Քոչարյանը՝ որպես արցախյան ազատամարտի առաջնորդներից մեկը, սովոր է եղել իր առջև տեսնելու որոշակի թշնամու: Իսկ այստեղ նրա հակառակորդը երեկվա դաշնակիցներն են, որոնք այժմ, պատկերավոր ասած,

հայտնվել են իր թիկունքում և հաճախ գործում են շատ ավելի նենգ ու դավադիր: Հեշտ չէ նրա վիճակը: Համոզված եմ, որ այսօր՝ իշխանափոխությունից հետո, նախագահական ինստիտուտը օժանդակության կարիք է զգում:

– Սակայն ինչո՞ւ նախագահը չի գնում կոնկրետ քայլերի, ասենք, նույն ԱԺ-ի լուծարմանը:

– Բարոյական տեսանկյունից ԱԺ-ն պետք է ժամ առաջ լուծարված լիներ: Սակայն եթե հարցը դիտարկենք նույն Արցախի շահերի տեսանկյունից, ԱԺ-ի լուծարման դեպքում Հայաստանը հնարավորություն չէր ունենա պատվիրակություններ ուղարկել Եվրախորհուրդ: Այսօր, երբ Ալիևի վերընտրությունից հետո սկսվում է Արցախի հարցի շուրջ բանակցությունների կարևոր փուլ, չի կարելի դատարկ թողնել միջխորհրդարանական դաշտը:

– Ոչ հեռու անցյալում Դուք Բագրատյանի կառավարության ամենաանհաշտ քննադատներից էիք: Ի՞նչ կասեիք ներկա կառավարության քաղաքականության մասին, թեկուզև Բաքվի հայտնի համաձայնագրի («Մետաքսի ճանապարհ») տակ վարչապետի դրած ստորագրության կապակցությամբ:

– Չեմ ծանրանա այդ հարցի վրա, մանավանդ որ նախագահի ելույթը ՄԱԿ-ում, ըստ իս, բավարար պատասխան էր այդ հարցին: Ասեմ մեկ այլ խնդրի մասին: Պաշտոնական տվյալներով՝ անցած ինն ամսվա ընթացքում համախառն ներքին արդյունքի աննախադեպ աճ է արձանագրվել երկրում՝ շուրջ 8%: Եթե այդ նույն աճն ապահովվի 10 տարի անընդմեջ, ապա համախառն ներքին արդյունքը կաճի 2,2 անգամ, և... ընդամենը կկրկնենք 1974 թ. մեկ շնչին հասնող ցուցանիշը: Այսինքն՝ կստացվի, որ 34 տարի լավագույն դեպքում դոփել ենք տեղում: Ուստին՝ առաջընթաց ապրելու համար անհրաժեշտ է սկզբունքորեն վերանայել մակրոտնտեսական քաղաքականության հայեցակարգը: Արմատական լիբերալիզմը, որի քարոզիչն էր Հ. Բագրատյանի կառավարությունը, և որի նվիրյալ ժառանգորդն է Ա. Դարբինյանի կառավարությունը, Նոբելյան դափնեկիր, մոնետարիզմի կնքահայր Միլտոն Ֆրիդմանի՝ վերջերս արած խոստովանությամբ, սպառել է իրեն և հենց դրա կույր կիրառման հետևանքն է Հարավարևելյան Ասիան և Ռուսաստանը ծվատող ճգնաժամը: Թերևս միակ բացառությունները պինոչետյան Չիլին և ֆրանկոյական Իսպանիան էին: Բայց փորձը վկայում է, թե ինչ գնով է ապահովվել այդ արդյունքը: Արմատական լիբերալիզմն առանց դիկտատուրայի արդյունք տալ չի կարող: Բայց չէ՞ որ մենք դիկտատուրան թոթափել ենք ոչ նրա համար, որ նորից գանք դիկտատուրայի, ինչը մեզանում ձևավորվող «հինգերորդ շարասյան» երազանքն է: Ջուր հույսեր, սեփական ժողովրդի նկատմամբ 1990-ականներին ծայր առած սպիտակ ջարդի հեղինակները վաղ թե ուշ կանգնելու են պատմության դատաստանի առջև: Եվ հասկանալի է, թե ինչու են այժմ ջղաձգվում այդ հանցագործության հեղինակները:

– Ձեր խոսքում կարմիր թելի պես անցնում է «հինգերորդ շարասյան» կողմից սպառնացող վտանգը: Հավանաբար, նաև հակամիջոցի առաջարկություններ ունեք:

– Հակամիջոցներից մեկն այդ ամենի հրապարակայնացումն է: Որևէ դավադրություն,

որևէ հարց դառնում է վտանգավոր, երբ խուսափում ես դրա բաց քննարկումից: Մենք միահամուռ պետք է պահանջենք մեկ բան՝ որ օրենքը գործի, և յուրաքանչյուր ոք օրենքի առջև պատասխան տա՝ անկախ նախկինում զբաղեցրած պաշտոնից և այժմյան հնարավորություններից:

– «Նախկինների» պատասխանատվությունն, անշուշտ, հրատապ խնդիր է: Սակայն ձևավորվել է այնպիսի համակարգ, որ «կրիմինալի» մեջ են ներքաշվել հազարավոր, եթե ոչ տասնյակ հազարավոր մարդիկ: Արդյոք տեղին չէ՞ նաև օպտիմալ սահմանագծի հարցը, թե ովքեր պետք է պատժվեն, իսկ ովքեր՝ ենթակա լինեն համաներման:

– Ի սկզբանե հարցադրումը սխալ է: Գոյություն ունի քրեական օրենսգիրք, որի հոդվածների շրջանակներում էլ պետք է անցկացվի սահմանագիծը: Իսկ բարոյական և քաղաքական գնահատականի առումով սահմանագիծը պետք է անցկացնեն ոչ թե քաղաքական գործիչները, այլ այն 1 միլիոն մարդիկ, ովքեր ստիպվուսծ դարձել են գաղթական, դեգերում են օտար ափերում, մեզանից յուրաքանչյուր երկրորդը, որը, ոչ իր մեղքով, չքավոր, մուրացկան է դարձել: Մենք բարոյական իրավունք չունենք տուժածի անունից ներողամտություն դրսևորել: Եվ սա վրեժի կոչ չէ: Եթե մենք ուզում ենք միաբանվել, եթե ուզում ենք առաջ գնալ, ապա պետք է ապավինենք սոսկ արդարությանը:

Հարցազրույցը վարեց
Հովհաննես Գալաջյանը

«Իրավունք», 30.X – 5.XI.1998:

"Карфаген" должен быть разрушен!

Особо представлять нашим читателям бывшего председателя Ергорсовета и экс-кандидата в президенты республики Арташеса Гегамяна нет необходимости. Этот достаточно популярный политик возглавляет сегодня общественно-политическую организацию "Национальное Единение". Мы встретились с Гегамяном в его штаб-квартире на ул. Московян. Речь шла о том, как эта организация относится к решениям актуальных задач страны.

— Суть экономической и общественно-политической программы организации "Национальное Единение" — создание социального рыночного хозяйства, в реализации которого смогут найти себе место все слои общества, политические и общественные организации Армении. Оговорюсь сразу: с одной стороны, социальное рыночное хозяйство противостоит социалистическому сужению свобод и прав в экономике, тотальному обобществлению средств производства, а с другой — неконтролируемым формам экономики радикального либерализма, отвергает клановые привилегии и направлено против государственно-экономического диктата.

— *Какова сегодня основополагающая цель вашей организации?*

— Одна из них — последовательное противостояние силам, которым чужды национальные интересы и которые заинтересованы в постоянном нагнетании внутриполитической напряженности и ослаблении нашей государственности. К этим силам в первую очередь мы относим представителей крупных мафиозных кланов, монополистов в сфере криминализированного "бизнеса", а также связанных с ними людей от политики и госаппарата.

Что же касается "философии" нашей программы, то она основывается на приверженности демократии как форме организации государства, на приверженности рынку как форме организации экономики, основополагающими элементами которой являются конкуренция и личная, социально обязывающая собственность, децентрализованное регулирование через рынки и тарифная автономия (свободное ценообразование), социальная ориентированность, имеющая профилактический характер, сочетающая

рентабельность и гуманность, препятствующая возникновению социального зла.

— *Значит вы выступаете принципиальным оппонентом тех, кто проводит в Армении экономическую политику радикального либерализма, исключающую возможность какого-либо государственного вмешательства в сферу бизнеса. А если учесть, что вы при этом за социальное рыночное хозяйство, то вас следует причислить к "левым кейнсианцам". Разве не так?*

— Мы полностью разделяем центральную идею учения Кейнса о том, что стихийное развитие рыночной экономики не является идеальной системой саморегулирования. Вместе с тем, определяя основные черты социального рыночного хозяйства, сторонниками которого мы являемся, хотелось бы сослаться на канцлера Людвига Эрхарда — отца экономического чуда Германии. "Социальное рыночное хозяйство означает, — говорил он, — решительный поворот от старого либерализма, который, как известно, отводил государству в экономической жизни только роль ночного сторожа. Социальное рыночное хозяйство означает то, что перед государством стоит не только задача, но и обязанность придавать экономике политически желаемые основные принципы и иметь в своих руках должный инструментарий экономической политики, чтобы отдельные решения людей... направлять на получение желаемого эффекта". Таким образом, главная особенность свободного социального рыночного хозяйства заключается в подчинении интересов всех групп населения "общему благу", "общей цели".

— *Практика хозяйствования последних 8 лет в Армении, основанная на радикальном либерализме, себя полностью исчерпала. Более того, монетаристская модель воздействия на рынок, проводимая под патронажем МВФ, себя абсолютно не оправдала. Что вы по этому поводу скажете?*

— По признанию лауреата Нобелевской премии, одного из корифеев монетаризма Милтона Фридмана, она имела весьма печальные последствия и была дестабилизирующим фактором в Восточной Азии: не будь МВФ — не было бы и восточноазиатского кризиса. К подобным же выводам пришли и другие апологеты монетаризма — Джефри Сакс и Стэнли Фишер (кстати, первый заместитель исполнительного директора МВФ), уже откровенно признающие, что теория и практика монетаризма не оправдали себя в постсоветских республиках, а сегодняшнее положение России — результат не отдельных ошибок, а принципиально ошибочного курса, ко-

торый проводился там в последние годы.

Не хотелось бы драматизировать ситуацию, но то, что сформировано в нашей экономике за годы пресловутых "барепохумнер", — это не рынок. Власти реализовали всевозможные стандарты и требования создания рыночной инфраструктуры, однако национальный частный капитал не достигает у нас критической массы, не переходит из сферы обращения в сферу производства. Произошел отрыв финансово-кредитной системы от производственной сферы, который превратил кредитные институты Армении в примитивные "ростовщические" конторы, предоставляющие исключительно краткосрочные кредиты под ростовщические проценты, пригодные только для сферы торговли и услуг. Каждому экономисту понятно, что до тех пор, пока ставка процента будет в несколько раз выше рентабельности в производственной сфере, деньги в нее не пойдут. Наоборот, будет продолжаться отток капитала из производственной сферы в финансовые спекуляции, то есть будет происходить то, свидетелями чего мы с вами являемся. Армянские коммерческие банки, по существу, никогда не выполняли той задачи, для реализации которой существуют банки. Они никогда не занимались кредитованием промышленности и сельского хозяйства.

Резюмируя сказанное, можно сделать следующие выводы: *во-первых*, окончательно развеялись иллюзии относительно успешности проводимых в республике либеральных реформ. *Во-вторых*, стало очевидным, что плачевные итоги нельзя объяснить лишь ошибками правительства, поскольку реформы проводились по рекомендациям МВФ и под его жестким контролем. Следовательно, главной причиной провала явилась ошибочность самого либерального курса. *В-третьих*, большинству стало ясно, что выход из кризиса возможен в том случае, если вместо курса на строительство капитализма республика перейдет к другой модели реформ.

— *Действительно, сегодня многие научные авторитеты признают, что в XXI в. будет два направления развития: либо "рыночный социализм" — либо "социальный капитализм", по которому уже идут Швеция, Дания и скоро пойдет Германия...*

— Как заметил один разумный экономист, для построения китайской модели рыночного социализма в Армении слишком мало китайцев, а для построения шведской модели социального капитализма — слишком мало шведов. Здесь считаю важным найти гармоничный баланс между верностью своим интересам и открытостью внешнему миру. При этом нельзя сбрасывать со счетов, что "мировой Госплан" в Давосе в 1994 году обнаро-

довал план глобального разделения труда, который по существу устанавливает новый мировой порядок, в котором ведущую роль будут играть США — Западная Европа — Япония. Идеологическим обеспечением этого нового мирового порядка стала теория "золотого миллиарда", согласно которой обеспеченное существование на планете может быть гарантировано только для миллиарда граждан наиболее преуспевающих стран, в то время как остальным уготована жалкая участь сырьевого придатка и поставщика дешевого человеческого материала для обслуживания интересов транснационального капитала. Поэтому нам следует четко осознать, что экономическая политика радикального либерализма представляет собой разновидность разработанной МВФ для слаборазвитых стран третьего мира концепции так называемого "Вашингтонского консенсуса". Последняя отличается крайней примитивизацией экономической политики и сведением ее к трем постулатам: либерализация, приватизация и стабилизация через жесткое формальное планирование денежного обращения.

— *Эта концепция предусматривает свертывание роста государства как активного субъекта экономического влияния и ограничение его функций контроля за динамикой денежной массы. На практике же этот курс свелся у нас к банальному присвоению государственной собственности и денежных потоков.*

— Либерализация экономики на деле обернулась свободой манипулирования монополией — то есть извлечения сверхдоходов. Сменяющие друг друга правительства так и не предприняли системных мер по защите внутреннего рынка. Примечательно, что этот синдром не имеет чисто армянского характера. Так, главный советник Егора Гайдара — профессор Гарвардского университета Джефри Сакс высказался по поводу "номенклатурной приватизации" в России так: "Главное, что подвело нас, это колоссальный разрыв между риторикой реформаторов и их действиями... И как мне кажется, российское руководство превзошло самые фантастические представления марксистов о капитализме: они сочли, что дело государства — служить узкому кругу капиталистов, перекачивая в их карманы как можно больше денег и поскорее. Это — злостная акция, имеющая своей целью перераспределение богатств в интересах узкого круга людей".

... Хочу выразить надежду, что предстоящее обсуждение в Национальном собрании проекта бюджета на 1999 г. ознаменует собой конец курса радикального либерализма, принесшего так много бед армянскому народу.

— Однако если судить по официальным показателям ВВП, то экономика Армении развивается динамично. Достаточно это или нет?

— Крайне недостаточно. Посудите сами. Если экономика республики будет ежегодно обеспечивать прирост валового внутреннего продукта на 6% (по итогам 10 месяцев текущего г. именно этот показатель и был достигнут), то в течение 10 лет мы будем иметь рост ВВП в 1,7 раза и лишь подойдем к уровню начала 70-х годов. Одним словом, в 2008 г. мы будем иметь то, что имели более 25 лет назад. Это для нас совершенно неприемлемые темпы роста, но это тот максимум, которого можно достичь, следуя нынешнему исчерпавшему себя курсу радикального либерализма, имевшего успех лишь во франкистской Испании и пиночетовском Чили... Ведь надо же нам осмыслить тот факт, что с 1 августа текущего г. указом президента Алиева в Азербайджане установлена минимальная пенсия, эквивалентная 40 долларам США, а среднемесячная заработная плата доведена до 50-60 долларов. Оклады среднего офицерского состава повышены до 150-200 долларов. Время настоятельно требует ставить качественно новые задачи, которые возродят в народе былой энтузиазм. *А для этого надо, чтобы была выработана армянская национальная государствообразующая идея, способная объединить личные интересы с коллективными, материальные ресурсы — с духовными, либералов — с коммунистами, производственные рычаги экономического роста — с финансовыми. Резюмируя, подытожим: либо меняем экономический курс — либо скатываемся к установлению диктатуры. Иначе в перспективе нас ожидает застой, чреватый социальным взрывом, последующей разрухой и угрозой потери независимой армянской государственности. И это не преувеличение. "Радикально-либеральный Карфаген" должен быть разрушен...*

Беседу вел
Борис Мкртчян

"Голос Армении", 10.XI.1998.

Ծարավի եմ ո՛չ վրիժառության, այլ՝ արդարության

Նախկին քաղաքապետ Արտաշես Գեղամյանի հետ ուղիղ կապը տարբերվում էր մինչ այդ եղածներից առաջին հերթին նրանով, որ մարդիկ շատ բարյացակամ էին տրամադրված նրա հանդեպ. հարցերի մեջ չարություն ու հանկարծակիի բերելու դիտավորություն չկային: Հասկացվեց նաև,որ մարդիկ ակտիվացել են, նրանց մոտ հավատ է արթնանում, և մեր բոլորի խնդիրն է չսպանել այդ հավատը:

– Տարիներ, եթե ոչ տասնամյակներ ի վեր ես հիացել եմ հայորդուն վայել Ձեր ասպետական-հերոսական կեցվածքով: Նշեմ երկուսը. Երևանի խուժող տանկերի դեմ (1990 թ. մայիսի 27) Ձեր ծառս լինելը՝ որպես Երևանի քաղաքագլուխ, երիտասարդ հայ մարդ և այս տարվա փետրվարի 17-ին ԱԺ-ում ունեցած Ձեր ելույթը: Ո՞րն էր ավելի հեշտ. օտար տանկերի փողերի դեմ կանգնե՞լը, թե՞ ԱԺ-ի հայրենի՝ կուշտ ու կուռ հայացքների և ոսկե փողերի (Վաչագան Հարոյան և այլք) դեմ կանգնելը (Հրաչյա Մաթևոսյան):

– Հեշտի ու դժվարի հարց չկա, կա սկզբունք. թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքում ես հավատարիմ մնացի իմ սկզբունքին: Ավելի տհաճ էր, իհարկե, ԱԺ-ում:

– Մեծ հարգանք ունեմ Ձեր անձի նկատմամբ: Ձեր վերջին ելույթում ասացիք, որ գնան-աղոթեն Աստծուն, ոչ թե իրենց տերտերին (նկատի ունեիք Տեր-Հուսիկին): Հայոցյանը, Հարոյանը արձագանքեցին, վերջինս Ձեզ անվանեց պնակալեզ... Այդ վեճը շարունակություն ունեցա՞վ (Վարդան Մելքոնյան):

– Ես գտնում եմ, որ Հարոյանը ինքնակենսագրական պոռթկում ունեցավ՝ ասելով պնակալեզ. հիշեց, թե ինքը ՀՀԾ-ի վարչության անդամների պնակն ինչպես էր լիզում, որ ոսկերչական գործարանն իրեն տային: Երկու տարվա ընթացքում այնտեղ 6-7 անգամ աշխատողների թիվը պակասեց, տասնյակ միլիոնների օգուտ բերող ձեռնարկությունն սկսեց վնասով աշխատել, փոխարենը, այո՛, նա կառուցեց ամառանոց՝ զարդաքանդակներով, պարապապատ...

– Քվեարկվելո՞ւ եք: Շատ կուզենայի (ես Մաշտոցի շրջանում եմ ապրում), որ մեր տարածքում քվեարկվեիք...

– Իմ կարծիքով՝ ստեղծված իրավիճակում անտարբեր լինել կամ ձևացնել, որ եթե կեղծիքներ են լինելու, ուրեմն՝ չեմ քվեարկվելու, ճիշտ չէ: Անպայման քվեարկվելու եմ, տարածքը դեռ պետք է որոշեմ, ամենայն հավանականությամբ՝ ըստ բնակության վայրի:

– Ձեր կուսակցությունը որևէ բլոկ կստեղծի՞ այլ կուսակցությունների հետ:

– Բանակցություններ ենք վարում մեզ հոգեհարազատ մարդկանց և կուսակցությունների հետ, մասնավորապես՝ ՍԻՄ-ի և ԳիԱրՔՍի-ի:

– Իսկ եթե այդ բանակցությունները, Աստված չտա, լավ չընթանա՞ն: Միայնակ քվեարկվելու մտադրություն ունե՞ք:

– Աստված կտա: Բայց եթե Աստված չտա, միայնակ կքվեարկվենք:

– Ձեր կարծիքը Ռոբերտ Քոչարյանի մասին 1998-ի սկզբին և այսօր (Լուսինե Թոփուզյան, լրագրող):

– Ես 18-ամյա աղջիկ չեմ, որ շուտ սիրահարվեմ, հետո շուտ հիասթափվեմ: Մարդ, որ իրեն որպես հերոս է դրսևորել Ղարաբաղում, թույլ տանք նմանատիպ դրսևորվի նաև Հայաստանում:

– Ձեր ելույթներում Դուք հաճախ վկայակոչում եք Աստվածաշունչը: Դա Ձեր հավատացյալ լինելո՞ւց է:

– Միայն և միայն: Ավելին ասեմ. խորապե՛ս հավատացյալ լինելուց է:

– Վահագն Խաչատրյանը «Օրագիր» թերթի թղթակցին ասել էր, որ Արտաշես Գեղամյանի քաղաքապետ եղած ժամանակ մոտ 2000 քաղաքացու ապօրինաբար տրվել էին դեռևս չկառուցված շենքերի բնակարանների օրդերներ: ճի՞շտ է (Լ. Մարգսյան):

– Նախկին քաղաքապետի կողմից արված նման հարցադրումը բնավ էլ ինձ անակնկալի չբերեց, որովհետև ի սկզբանե գիտեմ, թե ինչ աստիճանի սիրողական մակարդակով է ղեկավարել քաղաքը: Զարմանք է առաջացնում, որ շուրջ 3 տարի քաղաքապետ աշխատած մարդն անտեղյակ է, թե բնակֆոնդերի բաշխման կարգից և թե ինչպես և ով էր բաժանում օրդերները, խնդիրներ, որոնք կարգավորվում էին օրենքով: Օրդերների բաժանման գործը ամբողջովին դրված էր շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների վրա, որոնք վճիռ էին կայացնում ըստ կոլեկտիվներից ստացված որոշումների: Դա հարցի մի կողմն է: Ավելի լավ կլիներ՝ այդ պարոնը բացատրեր մարդկանց, թե ինչու նաև իր օրոք խայտառակ կերպով ձախողվեց բնակշինարարությունը, մինչդեռ Գեղամյանի պաշտոնավարման մեկ տարուց մի փոքր ավելի ընթացքում 4500 ընտանիք բնակարանամուտ տոնեց, իսկ 1991-97 թվականներին, բոլոր տարիները միասին վերցված՝ հինգ անգամ ավելի պակաս բնակմակերես է շահագործման հանձնվել երևանցիներին: Այդ շրջանի միակ նվաճումը տնաշինարարության մեջ, ինչով այնքան պարծենում էր Վահագն Խաչատրյանի հոգևոր հայրը՝ Լ.Տ.-Պ.-ը, Դալմայի քանդված այգիների և Էրեբունու շրջանի հատված ծառատնկարանի տարածքներում բուսնած դղյակներն էին, որոնց թվում նաև՝ Վ. Խաչատրյանի հարազատներինը...

– Վարկերի օգտագործման հարցը քննարկելիս որոշ անձինք ուզում էին փաստերը հերքել, ընդ որում, նրանք կառավարության ներկայացուցիչներ էին: Դա չի՞ խոսում այն մասին, որ նրանց մատը խառն է այդ գործարքներում: Որոշ իշխանամետ պատգամավորներ ԱԺ-ում այն միտքն են հայտնում, թե վարկառուն, ասենք, ստացել է 150 մլն դոլարի վարկ: Ասում են, նա լավ է աշխատել, ի՞նչ անենք, թե մի 30 միլիոն էլ յուրացրել, հափշտակել է (Տիգրանյան, տնտեսագետ):

– Որպես տնտեսագետ՝ գիտեք, որ էկոնոմիկայում առկա է ներդրումային բազմապատկիչի գործոնը: Դա նշանակում է՝ եթե ճիշտ վարկային քաղաքականություն է վարվում, ապա յուրաքանչյուր մեկ դոլարը, որը ճիշտ ներդրում է ստանում, տալիս է համախառն արտադրանքի առնվազն 3-4 դոլարի հավելաճ: Մեզ մոտ 830 մլն դոլար վարկ է ծախսվել, մինչդեռ հավելաճը կազմել է, լավագույն դեպքում, 12 տոկոս: Եթե այսօր 1 միլիարդ 850 միլիոն դոլարի համախառն ներքին արդյունք ունենք, ապա բազմապատկիչը, եթե լիներ գոնե 3-ի հավասար, իսկ դա շատ համեստ ցուցանիշ է, ապա 2 միլիարդ 490 միլիոն դոլարի հավելաճ պետք է լիներ համախառն ներքին արդյունքում, իսկ դա չի եղել: Կնշանակի, ի սկզբանե, ընտրված վարկային քաղաքականությունը ոչ մի ընդհանուր բան չի ունեցել ժողովրդի արդի շահերի հետ, հանրապետության զարգացման հետ: Դուք ուզում եք, որ ես մեկնաբանեմ ի սկզբանե սխալ քաղաքականությունը, այն, ինչ կա, դա հետևանք է հենց սկզբից սխալ վարած քաղաքականության: Ինվեստիցիոն քաղաքականությունը, որը վարվել է Բագրատյանի կառավարությունից սկսած, սխալ է եղել: Եվ սխալ քաղաքականությունը երբեք ճիշտ արդյունքների չէր կարող հանգեցնել: Ուստի՝ հիմա մեկնաբանել այս կամ այն վարկի մսխումը, արդեն կլինի ոչ ճիշտ, որովհետև ուրիշ կերպ չէր կարող լինել: Եթե նավարկում ենք ժայռի վրա, կուրսն այդպիսին է, ապա բացարձակապես նշանակություն չունի, թե ղեկի մոտ ով է կանգնած, կարևորը կուրսը փոխելն է, որը, ցավոք սրտի, այսօր էլ չի արվել: Քանիցս, դեռ 1995-ից սկսած, Ազգային ժողովի ամբիոնից, մամուլում տագնապ եմ հնչեցրել այս ամենի առթիվ: Սակայն դա մնացել է ձայն բարբառո անապատի: Ավելին, երեկվա ու այսօրվա ՀՀԾ-ական հռետորները սուր էին ճոճում ամեն ելույթիս դեմ: Նման մթնոլորտում, իհարկե, անհնար էր որևէ խելամիտ արդյունքի հասնել:

– Որպես քաղաքական գործիչ, ԱԺ պատգամավոր՝ չե՞ք անհանգստանում, որ Հայաստանում իրականացվում է մի քաղաքականություն, որի արդյունքում երկիրը ժողովրդից, մեղմ ասած, դատարկվում է: Ժողովուրդը հեռանում է այն բնօրրանից, որտեղ ծնվել և մեծացել է: Եթե 88-ին Հայաստանում կար մոտավորապես 3,5 միլիոն հայ, այսօր, իմ կարծիքով, մնացել է 1,5 միլիոն, դա ինչո՞վ է տարբերվում երիտթուրքերի վարած քաղաքականությունից: Նստենք ու լռե՞նք (Անդրանիկ, ազատամարտիկ):

– Շատ ծանր, շատ լուրջ հարց եք տալիս: Անշուշտ, եթե արմատապես չփոխվի տնտեսական քաղաքականությունը, ապա առաջիկայում, իմ խոր համոզմամբ, մեզ սպասում են նոր փորձություններ, ուստիև՝ յուրաքանչյուր մարդ այս հարցը պետք է սրությամբ բարձրացնի և նաև առաջարկի, թե ինքը ինչպիսի ելքեր է տեսնում: Ելքերը տեսնելու համար, ամենայն հավանականությամբ, պետք է ժամանակակից տնտեսական գիտության վերջին խոսքը օգտագործվի և, որ ամենակարևորն է, հարևան երկրների սխալների վրա կարողանանք մենք մեզ համար ճիշտ հետևություններ անել: Ինչ վերաբերում է երիտթուրքերի հետ համեմատությանը, ապա ասեմ հետևյալը. այո, հարազատ աղավնաբներից շուրջ 1,5 միլիոն մարդ է հեռացել: Բայց եթե այնտեղ կանխամտածված ջարդ էր, ապա 90-ական թվականներինը (գոնե մինչև 1997թ.)՝

տնտեսագիտական, քաղաքական տգիտության հետևանքով իրականացված հանցավոր քաղաքականություն:

Եռաբլուրի շիրիմները նրա համար չէին, որ մենք հիմա լռենք, դրա համար պետք է ամեն ինչ անենք, որ փոխվի փակուղի տանող ներկա տնտեսական քաղաքականությունը: Դրա համար մենք պետք է օգտագործենք առաջիկա խորհրդարանական ընտրությունները, մեր քաղաքականության սկզբունքները, հիմունքները, նորմերը ժողովրդին հասցնենք, համոզենք ժողովրդին, որ ա՛յս ճանապարհը պիտի ընտրենք, որ դուրս գանք վտանգավոր փակուղուց:

– 1988 թ. մինչև 1991-ը հայ ժողովուրդը մի բռունցքված ամբողջականություն էր, դրանից հետո, ստանալով օտարերկրյա վարկեր, իրականացվեց դրսից թելադրված քաղաքականություն, դրսից թելադրված ծրագիր. մեզ ճորտերի տեղ դրեցին... Այսօր Հայաստանը գտնվում է Դեր-Զորի վիճակում... Ով ոսկի ուներ՝ թուրքին տալիս, ազատվում էր, ով չուներ՝ մնաց անապատում, դարձավ ոսկոր... Երիտթուրքերը իշխանության գալիս էլ օտարերկրյա վարկեր էին ստանում...

– Դեռ մեր դարի 80-ական թվականներին մշակվել է «Վաշինգտոնյան կոնսենսուս» դոկտրինան, որպես գործնական հանճարարարականների ցանկ՝ թույլ զարգացած երկրներում տնտեսական քաղաքականության իրականացման վերաբերյալ: Դրա տեսական հիմքն էր տնտեսական հավասարակշռության նեոդասական տեսությունը, իսկ քաղաքական պաճուճանքը էր՝ ծայրահեղ ազատականացման գաղափարախոսությունը, որն էլ մինչև օրս կուրորեն կիրառվում է մեզանում: Գործնականում դա ապահովում է «ոսկե միլիարդի» տեսության կենսագործումը. դրա առանցքն այն է, որ երկրագնդում պետք է ապահով կյանքով ապրի մեկ միլիարդ մարդ: Մնացած բոլոր երկրները (իսկ այդ մեկ միլիարդը ներառում է սոսկ Հյուսիսային Ամերիկան, Արևմտյան Եվրոպան և Ճապոնիան) պետք է դասվեն (դուք, ցավոք սրտի, ճիշտ եք, որովհետև մենք էլ ենք այդ մնացածի մեջ) ճորտերի դասին, որոնք պետք է աշխատեն հանուն այդ մեկ միլիարդի բարեկեցիկ կյանքի: Ուստին՝ գերխնդիրն այն է, որ բոլոր առողջ ուժերը, իրոք, գոնե ազգային շահի շուրջ համախմբվեն, ինչպես 88-90-ականներին համախմբվեցին՝ արցախյան հարցի արդարացի լուծման գաղափարի շուրջ:

– Իմ կարծիքով՝ եկեղեցին էլ իր դերը չի կատարում ինչպես հարկն է: Մենք ընդունել ենք քրիստոնեություն, քրիստոնյա ենք: Կուսակցությունները մի կողմից, կրոնական տարբեր ուղղություններն էլ մյուս կողմից՝ քայքայում են ազգի միասնությունը...

– Ես ակնկալում եմ ավելի ակտիվ գործողություններ մեր հոգևոր այրերի կողմից: Միանգամայն ճիշտ եք, որովհետև միակ բանը, որով մենք միասնական ենք, մեր հավատքն է, հավատքը պետք է, իրոք, համազգային խնդիրների լուծմանն ուղղվի...

– Ինձ շատ տարօրինակ է թվում, որ Ձեր նման մարդն այսօր Կարեն Դեմիրճյանի հետ չէ: Գիտեմ, որ նախկինում նրա հետ աշխատակցել եք, ի՞նչն է պատճառը, որ այսօր նրա հետ չեք (Նարինե Գրիգորյան):

– Հավանաբար, Դուք ակնարկում եք վերջերս «Առավոտ» թերթում հրապարակված

ռեպլիկը: Որպեսզի մեկընդմիշտ վերջ դնեմ հետագայում ևս հնարավոր շահարկումներին, կփորձեմ պատասխանել փոքր-ինչ հանգամանալից: Իրոք, ես երկար ժամանակ աշխատել եմ Դեմիրճյանի ղեկավարած ՀԿԿ Կենտրոնական կոմիտեում: Ավելին, վայելել եմ նրա ջերմ վերաբերմունքը և միշտ էլ ջանացել եմ արդարացնել իր վստահությունը: Շրջկոմի առաջին քարտուղար եմ ընտրվել հենց այն ժամանակ, երբ ԽՍԿԿ Կենտկոմի 1987թ. հուլիսյան պլենումում Դորբաչովը հանիրավի խիստ քննադատության ենթարկեց Դեմիրճյանին, որից հետո նրա «զինակիցներից» շատերը փոքրոգաբար երես թեքեցին առաջին քարտուղարից: Այս պայմաններում հետևողականորեն և համոզված հրապարակավ սատարել եմ նրան, քանի որ հակառակ պահվածքը կլիներ անբարոյական: Կարճ ժամանակ անց Դեմիրճյանն ազատվեց աշխատանքից, իսկ իմ մտերմությունը նրա և իր ընտանիքի հետ շարունակվեց: Ի պատիվ Կենտկոմի հաջորդ առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի, պիտի ասեմ, որ, չնայած նրան հայտնի էր այդ մտերմությունը, հաշվի չառավ Կենտկոմի բյուրոյի այն ժամանակվա մի շարք անդամների նախազգուշացումները, պաշտպանեց իմ թեկնածությունը Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ առաջադրվելիս, նշելով, որ Դեղամյանի բարոյական պահվածքը պաշտոնանկ արված Դեմիրճյանի նկատմամբ իրեն ավելի է համոզում, որ ընտրությունը ճիշտ է կատարված...

Հիմա՝ այն մասին, թե ինչու այժմ ես չեմ հարում Դեմիրճյանին: Արդեն մի առիթ ունեցել եմ խոսելու այդ մասին: Կրկնեմ նրանց համար, ում շատ է անհանգստացնում կամ անհանգստացնելու է այդ հարցը: Պատճառը զուտ քաղաքական է: Ես ոչ մի կերպ չէի կարող հասկանալ և հիմա էլ չեմ հասկանում մեծարգո Կարեն Սերոբովիչի դիրքորոշումը Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը 1996 թ. նախագահական ընտրություններում պաշտպանելու հարցում: Կ. Դեմիրճյանը «ՀՀ» պաշտոնաթերթում հայտարարում էր, թե՝ սովորաբար, նախագահական երկրորդ ժամկետն ավելի արգասաբեր է լինում: Ուշադրություն դարձրեք՝ ավելի: Ասվածից, բնականաբար, հետևում է, որ Լ. Տ.-Պ.-ի ընտրվելուց հետո պիտի նոր թափով վերադառնա խավարի, ցրտի, ահաբեկչությունների, ազգային հարստության թալանի ժամանակաշրջանը: Եվ ապա, թող Հայաստանի ժողովրդական կուսակցության անդամ հանդիսացող երբեմնի ծաղկող խոշոր գործարանների տնօրենները համոզիչ կերպով հիմնավորեն, թե այդ ինչպե՞ս են մեր թշվառ ժողովրդին դուրս բերելու ներկայիս ծանրագույն սոցիալական վիճակից, եթե նույնը չեն կարողանում անել նույնիսկ հենց իրենց հոգեվարք ապրող ձեռնարկություններում: Թող ցույց տան թեկուզ մեկ օրինակ, որ ազատ շուկայական տնտեսության պայմաններում հաղթահարել են բոլոր դժվարությունները և բարեկեցիկ կյանք ապահովել իրենց աշխատավորների համար: Ափսոս, չկան այդ օրինակները: Ուրեմն՝ ինչո՞ւ խաբել մարդկանց:

– Դուք ԱԺ պատգամավոր եք, իսկ, բացի այդ, ուրիշ պաշտոն ունե՞ք կամ բիզնեսով զբաղվո՞ւմ եք, որովհետև մեր օրերում դժվար է պատգամավոր լինելով՝ ընտանիք պահել (ԵՊՀ ուսանողուհի):

– Ես դեռ տարիներ առաջ, նախքան պատգամավոր ընտրվելը, Մոսկվայում հիմնել էի «Պրոմեթեևս» ՓԲԸ-ն, որն զբաղվում էր խոշորածավալ արդյունաբերական հումքի ներկրումով ՀՀ, մասնավորապես՝ 5 հազար տոննա մետաղ, շուրջ 1200 տոննա տրանսֆորմատորի յուղ, շուրջ 3 մլն քառակուսի դեցիմետր կաշի: Մեր ներկրած հումքի հիման վրա աշխատեցնում էին այնպիսի գործարաններ, ինչպիսիք են, օրինակ, «Հայէլեկտրո» գործարանը, մեր կոշիկի ֆաբրիկաները, մեր էլեկտրակայանները: Ավելին ասեմ, հանրապետության այն արտադրանքը, որը սպառում չուներ Հայաստանում, մեր կազմակերպությունը շրջափակման տարիներին կարողանում էր արտահանել: Այդ տարիների ընթացքում գումարային առումով թե՛ Ռուսաստանի, թե՛ Հայաստանի բյուջեները ստացել են շուրջ 150 մլն ռուբլու օգուտ: Հիշեցնեմ, որ այն ժամանակ դոլարը 37 ռուբլի արժեր: Եթե պետությանն այդքան հարկ եք մուծում, պարզ է, թե ինչքան եկամուտ է ունենում գլխավորած կազմակերպությունը: Այդ գործարքների արդյունքում ես կարողանում եմ իմ ընտանիքը պահել և ոչ միայն՝ իմ:

– Նախագահական նախավերջին ընտրություններին (1996 թ.) հայտարարվեց, որ եթե Վազգեն Մանուկյանը 100 տոկոս ձայն էլ հավաքեր, մենք նրան իշխանություն չենք տա, և դա ապացուցվեց ժողովրդի դեմ հանած զորքով, տեխնիկայով և այլն... 1995թ. ընտրությունների ժամանակ կրակեցին ժողովրդի վրա Ազատության հրապարակում: Այդ բոլոր ուժերը հիմա կան, ունեն իշխանություն, զենք, և ի՞նչ եք կարծում, հիմա, եթե ժողովուրդը իր կամքն արտահայտի, ինչպես պետք է վերցնի իշխանությունը, եթե նրանք նորից չեն տալիս (Ռուբեն Հակոբյան):

– Շատ հետաքրքիր հարց տվեցիք: Եթե, իրոք, վտանգվեն ժողովրդավարական ընտրությունները, ապա ժողովուրդը կպարտվի բոլոր առումներով: Բայց հաղթանակը սեփական ժողովրդի նկատմամբ պյուրոսյան հաղթանակ է՝ ես այդպիսի մի հաղթանակ, և վաղն արդեն հաղթողները բանակ չեն ունենա... Ավելին չեմ ուզում ասել: Դեռ կռիվը չսկսված՝ պետք չէ, որ մարդ իր ուժեղ կողմերը բացի, դա տակտիկա է, հետևենք դրան:

– Տարիներ շարունակ Ձեր մեջ շիտակություն եմ տեսել և այսօր էլ տեսնում եմ: Ինչպե՞ս կարող ենք Դուք կամ մենք այնպես անել, որ այդ հանցագործների որջի մեծ մասը չառաջադրվի պատգամավորության թեկնածու: Նրանք արդարացնում են մեղավորին, միայն 5 տոկոսն է արժանի ժողովրդի պատգամավոր անունը կրելու, ես ուզում եմ, որ այդ որջը քայքայվի: Իմ կյանքը կարճ է, բայց այնպես արեք, որ այդ անազնիվները բեմից իջնեն (անհատական թոշակառու):

– Ընտրություններին պետք է բոլորս մասնակցենք և միահամուռ կերպով նրանց ջնջենք ցուցակներից՝ ընդմիշտ միշտ հիշելով Աստվածաշնչի հայտնի տողերը. *«Ծարավի եմ ո՛չ վրիժառության, այլ՝ արդարության»:*

«Իրավունք. հարց ու պատասխան», 9–15.III.1999:

Հայոց պետականությանը դարանակալող վտանգը «Երկրապահի» ընտրական օրենսգրքի մեջ չէ

– Պրն Գեղամյան, ԱԺ-ում ժամանակավորապես ավարտվել են ընտրական օրենսգրքի նախագծի շուրջ քննարկումները: Որպես որևէ պատգամավորական միավորման մեջ չընդգրկված խորհրդարանական՝ ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքն այդ քննարկումների վերաբերյալ:

– ՀՀ Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց ընտրական օրենսգրքի նախագիծը, որը մշակել էր «Երկրապահ» խմբակցությունը: Դրանից հետո այլընտրական «միասնական» տարբերակը պաշտպանող կուսակցությունների ներկայացուցիչներն սկսեցին... եռանդագին «քննարկել քաղաքական ուժերի հետագա քայլերը ժողովրդավարության հաստատման ուղղությամբ, ժողովրդավարության համար պայքարում»: Իսկ այդ ո՞վ է ստանձնել ժողովրդավարության և դրա բարոյականության առաքյալների դերը: Ժողովրդավարության համար պայքարի առաջամարտիկների ավանգարդում, ինչպես և պետք էր սպասել, հանդես են գալիս ՀՀՇ-ի և «Հանրապետություն» խմբակցության, նրա արբանյակ- կուսակցությունների գործիչները:

Ովքե՞ր են այն անձինք, որոնք պճնվել են ժողովրդավարության ջատագովների պատմուճանով: Միգուցե նրա՞նք, ովքեր 1990-ի նոյեմբերին պարտադրեցին Գերագույն խորհրդին ընդունել մի հակասահմանադրական օրենք, որն արտոնում էր վարչապետին գրչի մի հարվածով պաշտոնանկ անել ժողովրդական դեպուտատների քաղաքային ու շրջանային խորհուրդների օրինական ընտրված ղեկավարներին և քաղաքներում ու շրջաններում կարգել հիշական կոմիսարների ինստիտուտը: Ժողովրդավարություն շեփորողների մեջ է նա, ով դիտավորյալ մոլորվել էր երեք ծառերի արանքում. «չերյոմուշկինյան» իր ընտրատարածքին ագուցելով Դավիթաշենի զորամասը, որն օբյեկտիվորեն վերաբերում էր կամ Դավիթաշենի միկրոշրջանին, կամ Նաիրիի շրջանին: Ժողովրդավարների շարքում է նաև մեկը, որի «շնորհիվ» վերից ճնշելու պատճառով երկու անգամ չեն ճանաչվել Էրեբունիի համայնքի հարգված ձեռներեցի պատգամավորական լիազորությունները:

Ինչ խոսք, ժողովրդավարների շարքում է նաև մեկ այլ պանծալի գործիչ, որի ընտրական օկրուգում, որպես հիշատակ, գողացել էին քվեատուփը, որպեսզի վերջինս անմատչելի մնար «հակաժողովրդական» մտածելակերպ ունեցող ընտրողներին: Ասենք,

նա հետագայում քավեց իր մեղքը. օգտվելով իր բարձր պաշտոնական դիրքից՝ Կենտրոնական բանկում «հաջողացրեց» 700 մլն դրամի վարկի հատկացումը Հայագրոբանկին՝ տարեկան 22 տոկոսադրույքով, որը հետագայում տրամադրվեց ուրիշներին արդեն 70 տոկոսով: (Ինչո՞վ ժողովրդավար չէ՝ հո իր համա՞ր չէ ջանք թափել, այլ՝ միանգամայն ժողովրդավարական հաստատության՝ Հայագրոբանկի: Իսկ այն, որ ճիշտ նույն ժամանակ ուսուցիչներն ու բժիշկներն ամիսներով աշխատավարձ չէին ստանում, հետո՞ ինչ. չէ՞ որ նրանք ժողովրդավարներ չեն):

Ժողովրդավարների շարքերում կա նաև այլ հերոս. երախտապարտ բանվորները նրան ԱԺ պատգամավոր են ընտրել ի նշան անկեղծ երախտագիտության, որ լրիվ կանգնեցրել է արտադրությունը, որ կողոպտվել է երբեմնի ծաղկող գործարանը. ինչպես նաև, որ նա ընդգրկված էր ՀՀԾ-ի ընտրական ցուցակում: Նույն փաղանգի մեկ այլ գործիչ էլ չնչին գումարով սեփականացրել է քիմիական արդյունաբերության առաջատար ձեռնարկություններից մեկը, իսկ երկու տարի անց իր կուսակցության հետ միաբերան սուգ ու շիվան է անում գիշատչական սեփականաշնորհման առիթով: Եվ, ի վերջո, անշուշտ, ժողովրդավարական արժեքների և դրանց կրողների հաղթարշավի դրսևորումն էր «Հանրապետություն» խմբավորման ցնծալի հաղթանակը 1995 թվականի խորհրդարանական և 1996-ի նախագահական ընտրություններում, որը, բարեբախտաբար, պյուրոսյան հաղթանակ դարձավ դրանց հեղինակների համար:

Պատկերն ամբողջացնելու համար հիշողության մեջ թարմացնենք ժողովրդավարության ևս մի ձեռնածուի ընտրական ոդիսականը. նա կարողացել էր իր վստահված անձանց ջոկատում փաստացի ընդգրկել հանրապետության կառավարության ոչ ավելի, ոչ պակաս կեսը. վստահյալ նախարարները շողացող աչքերով և հուզմունքից ու խանդաղատանքից դողացող ձայներով միաբերան գովերգում էին ժողովրդավարության մեր առաքյալին և մեկ տարի անց նույնքան էլ համերաշխ՝ խմբովի պապանձվեցին՝ նրա հասցեին Բագրատյանի հրապարակավ ծանր մեղադրանքներից հետո:

Վերջիններս, օգտվելով գյուղացիների նեղ վիճակից, որին նրանց մատնողը դարձյալ իրենք էին, մեկ դույլ սոլյարայուղով, կես պարկ սերմացուով, մի թիզ ասֆալտով գնում էին ընտրողների քվեները... Գնում էին ոչ թե «քենակալ-բաջանաղների», այլ մեր իսկ՝ հարկատուներիս միջոցներով: Այս ամենի մասին կարելի էր և չասել, սակայն բանը շատ ավելի լուրջ է, քան կարող է թվալ առաջին հայացքից:

– Այդ ամենի մասին միշտ էլ խոսվել է, բայց որևէ պատասխանատվություն այդպես էլ չի եղել: Մանավանդ, որ այսօր էլ հրապարակի վրա են նախորդ իշխանություններին գնահատական տալուն վերաբերող տեսակետներ:

– Ես ուզում եմ նախ հիշեցնել Իլֆ-Պետրովի «12 աթոռ» ստեղծագործությունից հետևյալ տողերը. «... Եվ այստեղ Իպոլիտ Մատվեևիչը կոռոպով թքեց հայր Ֆյոդորի բարի երեսին: Հայր Ֆյոդորը անհապաղ թքեց ի պատասխան և ինքն էլ դիպավ...»:

Նորահայտ ընդդիմադիր-ժողովրդավարների մոլեգին ինտելեկտուալ մրցությունը՝ թե ով ումից ավելի հեռու և դիպուկ կթքի՝ հաղթելով երեսպաշտության, ստախոսության,

ներգության և հիշողության կատարյալ կորստյան «տոնավաճառում», ծավալվում է խորհրդարանում, մամուլի էջերում ու եթերում և ապա սահուն վերաճում պատվի ու արժանապատվության հայցերի: Այս ամենը ժողովրդին տանում է մի հիասթափությունից մյուսը: Ազգաբնակչության զգալի մասի ծանր նյութական վիճակը հղի է վտանգով՝ ստեղծելու (ասենք՝ արդեն ստեղծել է) հիասթափված, սառն ու անսիրտ մի հասարակություն, որն արդեն կատարելապես նողկում է «բարձր» քաղաքականությունից:

Գործնականորեն իրականացվում է հայոց պետականության խարխլման փորձված հնարքը: Հասարակական կարծիքի վրա ներգործելու նպատակով ամենատարբեր քաղաքական ուժեր արտահայտում են հակասական մտքեր, բերում դրանք հաստատող իրարամերժ փաստարկներ, մինչև որ մոլորված մարդիկ խճճվեն դրանց մեջ և գան այն եզրակացության, որ ավելի լավ է դիրքորոշում չունենան քաղաքականության հարցերում, քանզի դրանցից գլուխ են հանում լոկ նրանք, ովքեր ղեկավարում են հասարակությունը, այսինքն՝ քաղաքական կուսակցությունները: Եվ այն բանից հետո, երբ ՀՀՇ-ն ու նրա կամակատարները դադարեցին իշխանության կուսակցություն լինելուց, պետականության հիմքերը սասանելու գլխավոր ուղղությունը նրանց համար դարձել է այն, որ մարդկանց մեջ միանգամայն մեռցնեն ճգտումը դատապարտելու ոչ հեռավոր անցյալի չարագործությունները, մարդկային մտքի ուժը շեղեն դեպի պարապ ճամարտակությունների փոխհրաձգությունը: Ժողովրդավարական պրոցեսները և մեխանիզմները, իրենց ողջ անվիճելի առաջադիմությամբ հանդերձ, այսուամենայնիվ մեր պայմաններում որոշակի հնարավորություններ են ընձեռում քաղաքական սպեկուլյանտներին՝ ազդելու մարդկանց տրամադրությունների և բնազդների վրա: Ասենք, մարդիկ իրենք էլ՝ աղքատությունից ու անօրինություններից հոգնած, պատրաստ են հավատ ընծայելու ամեն մի սին խոստման...

– *Կարո՞ղ է, արդյոք, ժողովրդավարությունը կայանալ նման պայմաններում:*

– Ես ստիպված եմ վերստին մեջբերում անել. այս անգամ Ուինսթոն Չերչիլից. «Ժողովրդավարությունը վատ ինստիտուտ է, բայց մարդկությունն ավելի լավը դեռ չի հորինել»:

«Դեմոս» ասածը պատմականորեն չէր նշանակում ազգաբնակչություն առհասարակ: Դեմոսը ժողովուրդն էր՝ բաղկացած քաղաքացի-սեփականատերերից: Այդ ժողովուրդը կազմում էին միայն նրանք, ովքեր հարկեր էին վճարում իրենց պետությունը պահելու համար, ովքեր իշխանություններ էին ընտրում, և իրենք ևս կարող էին ընտրվել: Մարդկանց զանգվածի մեջ բաշխված մասնավոր սեփականությունն է ստեղծում դեմոս՝ սեփականատերերի ժողովուրդ: Դեմոսն է ձևավորում ժողովրդավարությունը որպես իրավունքների և պարտականությունների հավասարության կարիքն զգացող քաղաքացի-սեփականատերերի գոյաձև:

Իսկ ի՞նչ ունենք մենք այսօր որպես ժողովրդավարության ջատագովներ ներկայացող նախկին վարչախմբի 7-ամյա իշխանավարության արդյունքում: ՄԱԿ-ի պաշտոնական տվյալներով՝ Հայաստանի բնակչության 55 տոկոսը կարելի է դասել աղքատ և շատ

աղքատ քաղաքացիների շարքը, ընդ որում, հանրապետության բնակիչների 85 տոկոսը լրիվ օտարված է ազգային հարստությանը տիրապետելուց: Իսպառ բացակայում է իրավական հավասարությունը սեփականատիրական և շուկայական հարաբերություններում: Իսկ սա նյութական բարիքների անբավարարության պայմաններում անխուսափելիորեն տանում է դեպի անարդարություն, ուստի և սոցիալական անկայունություն: 1991-1997 թթ. ծայրահեղ ազատական ուղեգիծը նպատակ ուներ ստեղծելու և ամրապնդելու խոշոր սեփականատերերի և պաշտոնացանկի մեջ ընդգրկվածների, ստվերայինների ու խաբեբաների, այլ կերպ ասած՝ հասարակության չնչին մասը կազմողների դասը:

«Հայավարի» ժողովրդավարությունը մեր կենսական իրողության պայմաններում՝ դա հայտնի պաշտոնացանկային-կլանային-մաֆիական-հիշական ծագում ունեցող սեփականատերերի շահերի պաշտպանություն է: Այսինքն. ներկայումս ժողովրդավարությունը Հայաստանում դրսևորում է իրեն որպես ճնշական կատեգորիա, որի էական բովանդակությունը՝ հավասարությունը, չի կարող իրականացվել: Հետևապես, պատասխանատու քաղաքական ուժերը պետք է համատեղ գտնեն այնպիսի կազմակերպա-իրավական լուծումներ, որոնք, չխոչընդոտելով արտադրողական ուժերի զարգացումը, մարդու համար ստեղծեին կյանքի արժանավայել պայմաններ:

Դառն ու ցավալի է գիտակցել, որ հիշական խառնակ ժամանակներում ամեն ինչ արվել է ճիշտ հակառակի պես:

Նորմալ կենսապայմանների ստեղծման ճանապարհը մեկն է՝ զարգացնել մասնավոր սեփականությունը, որի ընթացքը պետք է առնել որոշակի շրջանակների մեջ, որոնք կբացառեն դրա անհետացումը ոմանց համար և նշանակալի կենտրոնացումը մյուսների ձեռքերում: Հետևապես, հանրապետությունում ճշմարիտ ժողովրդավարության հաստատման ստրատեգիական նպատակը պետք է լինի այն, որ թույլ չտրվի դեմոսից ընչազուրկների արտազատումը և դրա հետագա ճնավորումը իբրև դասի, որը կհակադրվեր սեփականատեր-ժողովրդին, դեմոսին: Բուն ժողովրդավարությունը կենսական արմատներ ունի այնտեղ, ուր, համենայն դեպս, ժողովրդի մեծամասնությունը կազմում են սեփականատերերը:

Սեփականատիրության մենաշնորհացումն առանձին կլանների կողմից (ինչպես եղել է մեզանում) բացառում է ժողովրդավարության հաստատումը: Իրադրության ողջ անհեթեթությունն այն է, որ իշխանության ղեկը բռնած հիշական պարագլուխներն ստեղծել էին տնտեսական բոլոր նախադրյալները, որպեսզի ժողովրդավարությունը չկայանա, և այդպիսով իրենք դարձել են իրենց իսկ երկնած համակարգի պատանդը: Ճիշտ և ճիշտ հայտնի առասպելի պես, երբ տիտան Քրոնոսը հոշոտում էր իր իսկ զավակներին:

– Այնուամենայնիվ, վերադառնանք ընտրական օրենսգրքին: Ո՞ր նախագիծն է ապահովելու ժողովրդավարական ընտրություններ:

– Եվ մեկ դառն իրողություն. «միասնական» ընտրական օրենսգրքի նախագծի հեղինակները, որոնք իրենց համարում են ժողովրդավարության ռահվիրաներ, ներկայացնում են լոկ իրենք իրենց և, կամ էլ, լավագույն դեպքում, ընդամենը մի քանի հարյուր

անդամ ունեցող իրենց կուսակցությունները: Եվ բոլոր կոչերը հօգուտ կուսակցական ցուցակների անցկացվելիք ընտրությունների՝ իբրև ժողովրդա-իշխանության դրսևորման առավել ժողովրդավարական ձևի, չար խորամանկություն են: Ժողովրդավարությունը, որպեսզի պատասխանատու լինի, պետք է ունենա իր սոցիալական բազան՝ ընդունակ թե՛ աջակցելու և թե՛ պահանջելու: Սակայն այդօրինակ ժողովրդավարությունը զանգվածային ծավալով կարող է ձևավորել ոչ թե ընչազուրկների վերածված հասարակությունը, այլ սեփականատերերի դասակարգը, առաջին հերթին, միջին խավը:

Շղթան փակված է. չկա այսօր մեզանում այդպիսի դաս՝ ուրեմն, չի կարող լինել և լիարժեք ժողովրդավարություն: Ավելին. լայն զանգվածների լյումպենացումը հղի է «ավերիչ» սուբյեկտների («շարիկովների») ձևավորմամբ, և հայոց պետականությունը դարանակալող վտանգը բնավ էլ, ինչպես փորձում են համոզել հասարակությանը, «Երկրապահ»-ի ընտրական օրենսգրքի մեջ չէ, այլ մեկ այլ տեղ՝ այն պայմաններում, երբ բնակչության ճնշող մեծամասնությունը ժողովուրդ – սեփականատիրոջից դառնում է ժողովուրդ – ընչազուրկ, ինչը բարենպաստ հող է ստեղծում բռնապետության հաստատման համար՝ բռնակալի կամ ամբոխի:

Հարցազրույցը՝
Վարդան Գրիգորյանի

«Հայաստանի Հանրապետություն», 16.XII.1998:

Մրցունակ արտադրությունը խթանելու համար պետք է ոչ թե սառեցնել, այլ իջեցնել էլեկտրաէներգիայի սակագները

«Իրավունք և Միաբանություն» դաշինքի ղեկավարների վերջին հանդիպումը Երևանի Մանկավարժական ինստիտուտի ուսանողության և դասախոսների հետ մեծ հետաքրքրություն էր առաջացրել վերջիններիս մոտ՝ դահլիճում բավականին դժվար էր ազատ նստատեղ գտնելը: Ելույթների արդյունքը բավականին բուռն էր, իսկ գրավոր հարցերից կարելի էր կազմել բավականին պատկառելի ցուցակ: Այնուամենայնիվ մի շարք հարցերի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով դիմեցինք «Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանին:

– «Իրավունք և Միաբանություն» դաշինքի հիմնական կարգախոսն է՝ «Հավատա՛ և կհաղթես»: Ինչի՞ն և ո՞ւմ է առաջարկվում հավատալ:

– Հավատալ սեփական ուժերին, ժողովրդի ողջամտությանը, հավատալ, որ ճշմարտությանը թեև հնարավոր է խոշտանգել, բայց սպանելնահնիար է: Հավատալը կօգնի հաղթել սեփական հոգում բուն դրած ստրուկին, հաղթել թշվառությանը, հաղթել անարգողին ու թալանչուն:

– Այսօր տարածված է այն մտածողությունը, որ բոլորը նույնն են, և պետք է նախապատվություն տալ նրանց, ովքեր արդեն «կերել, կշտացել են» և ունեն փորձառություն: Ի՞նչ կարծիքի եք այդ մտածողության մասին:

– Այդ ի՞նչ փորձառության մասին է խոսքը՝ ազգային արդյունաբերությունը հիմնահատակ քանդելո՞ւ, խոշոր ապրանքային գյուղատնտեսությունն ավերելո՞ւ, թե՞ այն արհեստավարժների մասին, ովքեր ոչ մի ազգանպաստ, համոզիչ ծրագիր չեն կարողացել առաջարկել ժողովրդին:

Այսօր գրեթե ցանկացած հարց, որի լուծումը միգուցե օբյեկտիվորեն հասունացած է, դառնում է շահարկումների և ինտրիգների զոհ:

Մասնավորապես, մի՞թե կարելի էր այդպիսի անգրագետ հիմնավորումներով մտնել ԱԺ, երբ քննարկվում էր էլեկտրաէներգիայի սակագների սառեցման հարցը: Ակնհայտ է, որ հարցը ներկայացնողները պետք է առարկայորեն մատուցեին բազմակողմանի փաստարկներ, մինչդեռ ոչ ոքի չհետաքրքրեց հետևյալ հանգամանքը՝ արդյո՞ք սակագների բարձրացման հետևանքով արդյունահանվող արտադրանքն է՛լ ավելի անմրցունակ չի դառնա: Չէ՞ որ սակագինը մտնում է արտադրանքի ինքնարժեքի մեջ: Ոչ

ոք չբարձրացրեց այդ հարցը՝ եթե բարձրացնելու փոխարեն իջեցնենք սակագները, ապա շնչահեղձ արդյունաբերական ճեռնարկությունից քանի՞սը կվերակենդանանան, քանի որ դրանց արտադրանքը կդառնա մրցունակ: Հետևաբար, այդ պետական այրերը կա՛մ իրազեկ չեն, կա՛մ միտումնավոր անտեսում են կարևոր հարցեր: Երկու պարագայում էլ նրանք պարտավոր են հեռանալ:

Ասում են, որ եթե սակագինը չբարձրացվի, ապա համակարգը կփլուզվի: Ամենայն պատասխանատվությամբ պնդում եմ հակառակը, որ սակագների բարձրացումն անճարակության վկայությունն է: Էներգետիկայի նախարարությանը պարտք են շուրջ 120 մլրդ դրամ, իսկ նախարարությունը պարտք է 75 մլրդ դրամ: Ասում են, թե ո՞րն է էներգետիկայի զարգացման ռեզերվը: Կարող եմ միանշանակ պնդել, որ ռեզերվը հենց այդ 45 մլրդ դրամ տարբերությունն է:

Այդ իրավիճակը պայմանավորված է նրանով, որ անգամ մասնագիտացված նախարարությունները խրված են ինտրիգների մեջ: Ցավոք, նրանք ցանկացած հարցադրման ետևում փորձում են ինչ-որ չար ուժ տեսնել: Թող բարի լինեն ներկայացնել արժանահավատ հաշվարկներ: Եվ ինչո՞ւ պետք է ժողովուրդն արհեստավարժներին հավատա, երբ հանրահայտ է, որ Հրազդանի ՊԾԷԿ-ին տրամադրված տասնյակ միլիոնավոր դոլարների վարկերը մսխվել են, իսկ դրա պատասխանատուները տակավին անպատիժ են:

Ցավոք, հանգել ենք մի վտանգավոր իրողության՝ մարդիկ դադարել են վստահել իշխանություններին: Ժողովուրդն այս 9 տարիների ընթացքում համոզվել է, որ ոչ մի պաշտոնյայի խոսքին հավատալ չի կարելի: Երբ հավատը կորած է, կառավարությունը կորցնում է բարոյական իրավունքը՝ շարունակելու կառավարելը:

Այդ ե՞րբ և որտե՞ղ է ընդունված, որ բարձր պաշտոնին համապատասխանելու չափանիշները որոշում են պաշտոնյաները, այլ ոչ թե ժողովուրդը: Կառավարությանը տրված ամենացայտուն գնահատականը աղբանոցները քջջող մարդիկ են, գյուղերում պարապության մատնված ծերերն ու երիտասարդները, Հաղթանակի կամրջի մոտի՝ ճարահատյալ բնակարան վաճառողների երկար շարանները...

– Ձեր կարծիքով, որո՞նք են կառավարության անփառունակ գործունեության արմատները: Արդյո՞ք դա անպատասխանատու «արհեստավարժության» սկզբունքը չէ:

– Անշուշտ՝ այո՛, սակայն դա խնդրի մի մասն է միայն: Ակնհայտ է, թե այս կառավարությունն ի՞նչ հասարակարգ է մտադիր կառուցել: Որո՞նք են այս կառավարության մակրոտնտեսական քաղաքականության նպատակները: Որո՞նք են արդյունաբերական քաղաքականության, գիտության և կրթության բնագավառի, առողջապահության ոլորտի առաջնայնությունները... Մարդիկ չեն հասկանում, թե որն է այս կառավարության նպատակը, սակայն զգում են, որ օրըստօրե իրենց վիճակը վատթարանում է, սպառողական զամբյուղը լղարում է: Եվ այդ խորապատկերի վրա՝ ինքնագոհ և ինքնահավան արհեստավարժների շքահանդես:

– Ի՞նչ կարծիքի եք այդ ինքնագոհ և ինքնահավան արհեստավարժներ նշանակողի՝ ՀՀ նախագահի գործողությունների մասին:

– Ցանկացած մարդ կարող է սխալվել, բայց եթե այդ սխալի հետևանքով տուժում են հարյուր հազարավոր մարդիկ, սխալը պետք է անհապաղ ուղղվի: Բայց, ցավոք, այս կառավարությունն ապացուցեց իր բացարձակ սնանկությունը: Երբ գործնական առումով որևէ հաջողության չեն հասնում, սկսում են զբաղվել քաղաքական խաղերով: Փոխանակ զբաղվեն կոնկրետ մարզերի կոնկրետ խնդիրներով, ոմանք մարզպետներին, համայնքապետերին, քաղաքապետերին հրավիրում են կառավարություն և սպառնում՝ պիտի ապահովեք Պողոսի կամ Պետրոսի ընտրվելը, թե չէ ընտրություններից հետո հրաժեշտ կտաք ձեր պաշտոններին: Կամ կանչում ու ասում են՝ դուք պետք է անպայման անդամագրվեք «Արժանապատիվ ապագա» կուսակցությանը, որովհետև այդ կուսակցությունը հոգեհարազատ է մեր մեծարգո պրն վարչապետին:

Ինչքա՞ն արագ է փոխվում վարչապետի սերը: Մի քանի շաբաթ առաջ նա նույն ոգևորությամբ արտահայտվում էր ՀՀԿ-ի և երկրապահների մասին, սակայն երբ «սերը» մերժվեց, անմիջապես «սիրահարվածության» նոր օբյեկտ ի հայտ եկավ...

Ինչ վերաբերում է նախագահ Քոչարյանին, ապա վերջնական եզրակացություն ես կանեմ հունիսի 2-ին: Եթե նա արդար ու ազնիվ ընտրություններ կազմակերպի և հանդես գա որպես դրանց երաշխավորը, ուրեմն նա հավատարիմ է մնացել իր կարգախոսներին: Եթե այս անգամ էլ չհաջողվի, ապա դա կնշանակի, որ այդ կարգախոսներն ընդամենը բարի ցանկություններ էին և կորցրած քաղաքական հնարավորություն:

– Դուք խստագույնս քննադատում եք այսօրվա պաշտոնյաներին, սակայն ժամանակին զբաղեցրել եք բավականին բարձր պաշտոններ: Ինչպե՞ս եք գնահատում Ձեր այն ժամանակվա գործունեությունը:

– Գնահատականը թող տան ուրիշները, ես պարզապես կարծանագրեմ փաստերը:

1989-90 թթ., երբ Երևանի քաղաքապետն էի, եթե շինարարական առաջադրանքներն աղետի գոտում 60-65%-ով էին կատարվում, ապա Երևանում գերակատարվում էին:

Գերակատարվում էր նաև Երևանի բյուջեն՝ 1990 թ. առաջին կիսամյակում Երևանի բյուջեն եկամտային մասով գերակատարվել էր 60 մլն ռուբլով (այսինքն՝ շուրջ 20 մլն դոլար): Ճիշտ այն ժամանակ հանրապետության բյուջեն եկամտային մասով 40 մլն ռուբլու ճեղքվածք ուներ, և, ինչպես գրեց մամուլը, Երևան քաղաքը օգնության ձեռք մեկնեց հանրապետության բյուջեին:

Իհարկե, այնքան անհամեստ չեմ, որպեսզի պնդեմ, թե ամեն ինչ իղեալական էր: Հիշենք, թե ինչ էր տեղի ունենում 1989-90 թթ.՝ գործադուլների կոչեր, պարետային ժամ և այլն: Ծանր ժամանակներ էին, բայց ամենակարևորը՝ ինչքան էլ որոշ տաքգլուխ ՀՀՇ-ականներ փորձում էին ապակայունացնել վիճակը Երևանում, դա նրանց չհաջողվեց:

– Այսօր և՛ համայնքային բյուջեները, և՛ ՀՀ բյուջեն խոճուկ վիճակում են: Դա օբյեկտի՞վ պատճառների հետևանքով է, թե՞ կան ռեզերվներ՝ այդ բյուջեները պատշաճ ձևով լցնելու և մարդավայել աշխատավարձերով բյուջետային աշխատողներին ապահովելու:

– Տնտեսությունն այնպես են ավերել, որ հեշտ լուծումներ չկան: Բայց, այնուամենայնիվ, լուծումներ կան: Դրանք խորը կերպով ուսումնասիրված են, և այդ լուծումների

հիմնադրույթները ներկայացված են «Իրավունք և Միաբանություն» դաշինքի ծրագրում:

Ինչ վերաբերում է ռեզերվներին, ապա առևտրային հաշվեկշռի ճեղքվածքը կազմում է շուրջ 700 մլն դոլար: Հաշվի առնելով, որ տարեկան արվում է շուրջ 100 մլն դոլարի ներարկում, ստանում ենք մի քանի հարյուր մլն դոլարի ապրանքներ, որոնց զգալի մասը «անհետանում է»: Հետևաբար՝ առկա է 600 մլն դոլարի ստվերային շրջանառություն: Ինչքան դա ստվերից դուրս բերվի, այնքան լրացուցիչ հնարավորություն կստեղծվի համալրելու բյուջեի եկամտային մասը: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս դուրս բերել:

Նման իրավիճակ էր Իտալիայում մի քանի տասնամյակ առաջ: Այնտեղ արեցին հետևյալը՝ վերացրեցին բոլոր տեսակի հարկերը և սահմանեցին միայն մեկ հարկատեսակ՝ վաճառքից, և դա կազմում էր շուրջ 15%: Ի վերջո այն, ինչ արտադրվում է, արտադրվում է ոչ թե ինքնանպատակ, այլ վաճառքի համար: Իսկ վաճառքն ավելի հեշտ է վերահսկել, քան ամբողջ շղթան: Անշուշտ, դա շեշտակիորեն կբարձրացնի բյուջեի մուտքերը: Սակայն հույսը միայն դրա վրա դնել չի կարելի:

Հաջորդ քայլը պետք է լինի հետևյալը՝ որոշել այն ճյուղերն ու ձեռնարկությունները, որոնք կարող են կատարել «շոգեքարշի» դեր ամբողջական տնտեսական համալիրների համար:

– Այսինքն՝ Ձեր ասածից բխո՞ւմ է, որ բավականին սեղմ ժամկետում հնարավոր է կրկնապատկել բյուջեի մուտքերը:

– Առանց մանրակրկիտ հաշվարկների նման պնդում անելը համարում եմ ոչ կոռեկտ:

– Այնուամենայնիվ, որո՞նք են ներկայիս ծանր վիճակի արմատները: Մի՞թե այսօրվա իշխանավորներն ունակ չեն մանրակրկիտ հաշվարկների:

– Դժբախտությունն այն է, որ ոչ մի բնագավառում չկա համակարգված մոտեցում, ավելին՝ համատարած է այն երևույթը, որ, պատկերավոր ասած, հացթուխը զբաղված է կոշիկ կարելով: Դրա հետևանքով անգամ առանցքային հարցերում գերիշխում է սիրողական մոտեցումը: Դրա վերջին օրինակներից մեկն է թեկուզև նախագահի մասնակցությունը ՆԱՏՕ-ի 50-ամյակին: Դրա շուրջ հնչել են բազում իրարամերժ կարծիքներ, սակայն խառնաշփոթի հեղինակը հենց կառավարությունն է, որը մինչ օրս այդպես էլ հոդաբաշխ լեզվով չի բացատրել, թե որոնք են արտաքին քաղաքականության գերակայությունները:

Այսպիսի օրինակները բազմաթիվ են բոլոր ոլորտներում, և դա օրինաչափ է: Ակնհայտ է, որ «բարեփոխումներ» կոչվածը, որը 9 տարի շարունակ հրամցվում էր բնակչությանը, ապացուցեց իր կատարյալ սնանկությունը, մինչդեռ կառավարությունը չի ուզում դա ընդունել: Չէ՞ որ այսօրվա կառավարության անդամներից շատերն անցյալում եղել են «բարեփոխումների» մոլեռանդ քարոզիչները, և նրանց համար մարդկայնորեն դժվար է արձանագրել սեփական գործունեության կործանարարության փաստը:

Այդ իրավիճակից, թերևս, միակ ընդունելի ելքը համակարգված մոտեցումն է բոլոր բնագավառներում, ինչը և ներկայացված է «Իրավունք և Միաբանություն» դաշինքի նախընտրական ծրագրում:

Հարցազրույցը վարեց
Հովհաննես Գալաջյանը

«Իրավունք», 30.IV. – 6.V.1999:

Մեր խմբակցությունը կլինի երկրորդը

– Պրն Գեղամյան, ձեր դաշինքը կլինի չորրորդ խմբակցությունը ներընտիր խորհրդարանում...

– Առաջիկայում կդառնա երկրորդը:

– Դա նշանակում է, որ ձեզ կմիանան նո՞ր պատգամավորներ:

– Չեմ ուզում մանրամասնել, բայց իր պատգամավորների թվով «Իրավունք և Միաբանությունը» կլինի երկրորդը: Ուղղակի մեկ շաբաթ հետո ավելի կառարկայանա:

– Ձեր դաշինքի հաջողությունը կանխատեսո՞ւմ էիք:

– Ռուսական առածն ասում է. «Մարդը ենթադրում է, Աստված՝ տնօրինում»:

– «Միասնություն» դաշինքը փաստորեն ունի որակյալ մեծամասնություն նոր խորհրդարանում և, ամենայն հավանականությամբ, կձևավորի նոր կառավարությունը: Ինչպիսի՞ն կլինի Ձեր վերաբերմունքը:

– Եթե լրջագույն փոփոխության ենթարկվի նրանց նախընտրական ծրագրի տնտեսական բլոկը...

– Նկատի ունեք, որ ծրագիրը պետք է ավելի՞ ձախացվի:

– Ամենևին, ընդհակառակը:

– Այսինքն՝ պետք է որդեգրվեն ավելի լիբերալ մոտեցումնե՞ր:

– Ոչ թե ավելի լիբերալ, այլ բուն լիբերալ: Հայաստանում երբեք իրական լիբերալիզմ, ազատականություն չի եղել: Այդ մասին հռչակել են, բայց գործնականում արվել է ամեն ինչ այդ գաղափարախոսությունը վարկաբեկելու համար:

– Եթե նրանց հետ համագործակցելու լինեք, ո՞ր բնագավառում կնախընտրեիք գործադիր պաշտոններ ունենալ, տնտեսակա՞ն, թե՞ ուժային:

– Ուժային ոլորտը Հայաստանին ապագա չի խոստանում: Մեր երկրի ապագան զարգացած արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ է: Ինքնահաստատման կարիք չունեմ, այդ պատճառով էլ ուժային ոլորտը չէի նախընտրի:

– Ընտրությունների ընթացքում գրանցված ո՞ր խախտումներն առավել վնասեցին մի շարք կուսակցությունների, այդ թվում նաև ձեր դաշինքի վարկանիշին:

– Մեր դաշինքի վարկանիշը ոչ մի տոկոսով վնաս չի կրել: Ընտրությունների արդյունքներն օրինաչափ են, քանի որ ստեղծված քաղաքական համակարգն է այդպիսին: Այլ արդյունքներ ակնկալելը պարզապես անհեթեթ կլիներ:

Ժողովրդավարություն կարող է լինել այն երկրում, որտեղ կա այդ զարգացումն ապահովող, տնտեսապես կայացած միջին խավ: Մեր երկրում, երբ ազգաբնակչության

3-4 տոկոսը գերմեծահարուստներ են, իսկ մնացած 90 և ավելի տոկոսն աղքատներ, ժողովրդավարական լիարժեք համակարգ գործել չի կարող, որովհետև բացակայում է միջին խավը: Ցանկացած ժողովրդավարական երկրում հենց այդ խավն է կատարում երկու ծայրահեղ բևեռների՝ շատ հարուստների և շատ աղքատների միջև հավասարակշռողների դերը:

– Եթե համեմատենք նախկին Ազգային ժողովի հետ, նոր խորհրդարանն ի՞նչ նոր գործառույթներ պիտի իրականացնի, որ չկարողացավ անել նախկինը: Ձե՞ք կարծում, որ քաղաքական դեմքերի սակավության պատճառով այս Ազգային ժողովն էլ կարող է չկայանալ իբրև քաղաքական մարմին:

– Ես միշտ լավատես եմ, մանավանդ երբ երկիրն այդպիսի վիճակում է, պեսիմիստ լինելու իրավունք պարզապես չունենք: Ներկայիս Ազգային ժողովի մեծամասնությունը հնարավորություն ունի ինքնամաքրվելու: Խոսքն արդարության վերականգնման մասին է: Եթե նախկինում «Երկրապահ» պատգամավորական խումբը թույլ չտվեց արդարադատության իրականացումը, ապա դա կարող են անել «Միասնություն» դաշինքի պատգամավորները: Սա այն փորձաքարն է, որով վերջնականապես պարզ կդառնա թե մենք ազգովի ինքնամաքրվելու և առաջընթացի հնարավորություն ունե՞նք, թե՞ ոչ: Ժողովուրդը 400 հազարից ավելի ձայն է տվել «Միասնություն» դաշինքին, և այս հանգամանքը պարտավորեցնող է: Ինքնամաքրվելու շանսեր կան: Դոնե երկու օրինակով կարող եմ ասել՝ հանցագործության մեջ կասկածվողը պետք է դատվի, սխալ տնտեսական քաղաքականությունը՝ վերանայվի:

– Հանցագործության մեջ կասկածվողներ ասելով նկատի ունեք նախկին վարչախմբի ներկայացուցիչների՞ն:

– Անշուշտ, բոլորին հերթականությամբ: Եվ պետք է հնարավորություն տանք մեր գործընկեր Վանո Սիրադեղյանին ինքնախոստովանության: Ի՞նչ էր նշանակում, երբ նա հայտարարեց, թե չի ցանկանում լինել քավության նոխազ: Ովքե՞ր են այն մարդիկ, որ ձգտում են նրան քավության նոխազ դարձնել: Հնարավորություն տանք, որ նա բացահայտի, թե ովքեր են իրեն դրդել այդպիսի գործողությունների:

– Եթե «Միասնություն» դաշինքի հետ փոխհամաձայնություն չկայանա, կդառնա՞ք արմատական ընդդիմություն խորհրդարանում:

– Այսպիսի իրավիճակում արմատական ընդդիմություն լինելը բարբաջանք է: Երբ երկիրը կործանվում է, արմատական ընդդիմություն լինելու խնդիր առաջ քաշվել չի կարող, կարող է լինել միայն ազգը փրկելու խնդիր: Մենք պարզապես ունենք ծրագիր, որը շատ ավելի արգասաբեր կարող է լինել Հայաստանի համար, քան հրապարակի վրա եղած մյուս ծրագրերը: Անձնավորել պետք չէ: Շատ ավելի կարևոր խնդիրներ կան՝ անձերից բարձր, և այդպիսի դեպքում քաղաքական ուժերը պետք է ձգտեն փոխադարձաբար խոհեմ լինել: Ջայլամի քաղաքականությունը, որ վարել են ինը տարի շարունակ, արդյունքներ չի տվել: Ուստի իրականությունից փախչել պետք չէ: Արձանագրենք ստեղծված իրավիճակը և ելքեր փնտրենք: Քաղաքականության մեջ տգետներն են փորձում ամեն

ինչ անձնավորել: Մենք ասում ենք միայն, որ կան Հայաստանի Հանրապետությունը և Արցախը՝ ձեռք բերված մեծագույն կորուստներով և յուրաքանչյուրս, անկախ կուսակցական գույնից, պարտավոր ենք նրանց սատարել:

Վահան Վարդանյան

«Հայոց Աշխարհ», 9.VI.1999:

Как тогда нас будут называть – не суть важно

Среди 6 политических партий и предвыборных объединений, преодолевших 5-процентный барьер, занял свое место и блок "Право и Единение". Этот союз, объединивший партии "Национальное Единение", "Конституционное право" и общественно-политические организации "Арцах-Айастан" и "Гардманк", ставит своей целью восстановление в нашей стране "справедливости, торжества закона, свободы и братства, могущества и процветания". О том, как будут бороться в парламенте за все это представители союза, мы беседуем с одним из его лидеров – Арташесом Гегамяном.

– Каким вы прогнозируете расклад политических сил в парламенте нового созыва?

– Политические силы в парламенте будут иметь вес, если они будут сплочены единой идеей и целью. У меня на этот счет вызывает серьезную тревогу то, что в платформе главенствующего в новом парламенте блока "Единство" нет четко обозначенной концепции развития Армении, в ней не проглядывает философия действия этого блока – либеральное это течение или социалистическое, а может – центристское?

– Что же тогда, по-вашему, могло сроднить Республиканскую партию с Народной?

– Только политический расчет.

– На что?

– Иметь большинство в парламенте, дабы удержать в руках рычаги власти. Дай Бог, конечно, чтобы эти рычаги сослужили хорошую службу нашему народу. Мне предвыборная программа блока "Единство" большого оптимизма не внушает.

– А вы не разделяете мнение, что одной из главных задач этого блока является сохранение в республике политической стабильности?

– Политическая стабильность может быть сохранена лишь при условии наличия у народа веры в перемену к лучшему. Тот имидж, которым

обладают лидеры блока "Единство", — явление временное. Если ими не будут предприняты конкретные шаги по оздоровлению экономики и улучшению жизни народа, то через определенное время политическая ситуация будет меняться к худшему. Тогда это будет фиаско не только блока, но и всех нас.

— *А как, по-вашему, будет выглядеть оппозиция в парламенте спустя три-четыре месяца, когда начнутся первые серьезные баталии между парламентскими "большевиками" и "меньшевиками" — т. е. большинством и меньшинством? И еще: считаете ли вы свою партию оппозиционной?*

— Моя интерпретация понятия "оппозиция": мы имеем свою четкую программу вывода республики из экономического и политического кризиса. И если эта программа идет вразрез с позицией силы, которая будет формировать руководство НС и правительство, то тогда мы будем отстаивать свою концепцию. Как тогда нас будут называть СМИ и другие политические силы — не суть важно.

— *Говорят, что успех на выборах блока «Единство» и вашего блока «Право и Единение» в немалой степени был предопределен имиджем как Демирчяна, так и вашим.*

— Как говорится в Библии, "это вы сказали".

— *Ценю вашу скромность. А каково будет отношение вашей фракции к другим "малым" фракциям и группам?*

— Доброжелательное и конструктивное, в том числе и к блоку "Единство". Мы за единение всех парламентских сил, которые примут программу спасения Отечества.

— *Я хочу смоделировать такую ситуацию: вы приходите к выводу, что ведущий блок в парламенте по многим позициям не следует тем программным положениям, которые отстаивает ваш союз, — с какими политическими силами вы будете сотрудничать?*

— С теми силами, которые будут давать идентичную нашей оценку господствующему в парламенте политическому блоку. С этими силами мы становимся объективными союзниками.

— *К какому политическому спектру вы относите свою организацию — к правому, левому или к центру?*

— В политической системе демократическое течение относится, как вам известно, к левой политической идеологии. Консервативная идея — это уже правая идеология. В экономической системе либерализм есть правое течение. Плановая экономика — течение левое. Наша идеология правая.

— *Но в своей программе вы выступаете сторонником повышения*

роли государства в экономике. А это уже нечто левое, антилиберальное.

— В моем понимании государственное регулирование экономики — это создание условий для нормального функционирования свободного рынка. Мы сторонники антимонопольной политики, мы за господство свободной конкуренции в частном предпринимательстве. Сегодня эти условия в Армении отсутствуют. У нас даже нет рынка труда. В нашей программе мы прямо пишем, что радикальная либерализация хозяйственной деятельности у нас состоялась при полном отсутствии государственного регулирования экономики. А массовая приватизация госпредприятий произошла при отсутствии рыночной среды для их эффективного функционирования.

— Значит, приватизация у нас была политическим мероприятием, а никак не экономическим?

— Совершенно верно.

— Ну а если завтра у нас будет поднят вопрос о национализации и перепродаже новым собственникам тех неработающих предприятий, владельцы которых оказались бездарными предпринимателями? Как вы отнесетесь к этому?

— Переход к рынку был предопределен необходимостью раскрепостить производительные силы и повысить продуктивность труда, добиться высокого ВВП и достойного уровня жизни народа. Но люди, которые должны были проводить у нас эту политику, были экономически элементарно безграмотны. Они добились того, что сегодня большинство нашего народа ненавидит рынок, которого у нас попросту нет... В этом весь трагизм ситуации. Если приватизированное предприятие на работает, надо объявить его банкротом. Этот институт апробирован во всем мире.

— Но только не у нас. Наш парламент закона о банкротстве не принял и вряд ли примет, поскольку в нем немало лиц, которые на грабительской приватизации изрядно погрели руки.

— Значит, надо добиться принятия закона о банкротстве, о многократном налоговом бремени для неработающих предприятий. Третьим механизмом должно быть создание налоговых льгот для предприятий, наращивающих производство. Кроме того, крайне необходимо, чтобы сырьевая база — богатства наших недр — не стала бы предметом купли-продажи, а была бы собственностью государства. Нужна, одним словом, законодательная база для рынка ресурсов.

— Однако же чуть ли не половина богатств наших недр уже продана. Чего стоит последняя сделка с "Арагац-перлитом"!? А на очереди и зангезурские предприятия. Если дело так пойдет и дальше, то у

государства нашего за душой ничего не останется.

— Я думаю, что даже с тем, что продано и что еще осталось в собственности государства, можно многого достичь при хозяйском, рачительном ведении дел. Надо только, чтобы к рычагам руководства экономикой встали действительно грамотные, опытные люди.

— *На днях президент Кочарян заявил, что, возможно, в состав правительства будут приглашены видные представители парламентских партий и организаций. Как вы относитесь к такой постановке вопроса? Будете участвовать в правительстве?*

— Я отношусь к этому положительно. Но это не значит, что идя в правительство, я или мой коллега по союзу должен разделять программу президента, отказываясь от своей.

— *Надо полагать, что, делая такое заявление, президент на иное и не рассчитывает, хотя и приглашает ведущих парламентариев к "своему столу".*

В своей программе вы пишете о защите трудовых прав работников как бюджетных, так и частных предприятий. Сегодня в этой сфере царит правовой произвол — ни судебная власть, ни профсоюзы или не хотят, или просто не могут защитить работника от вседозволенности работодателя. Как ваша фракция в парламенте претворит в жизнь это важнейшее условие демократического общества?

— Мы являемся сторонниками детальной разработки законодательства для создания нормального рынка труда. И потому будем добиваться принятия необходимого закона о труде, регламентирующего отношения работников с работодателями.

— *Но ведь в нашем прошлом и в нынешнем парламенте немало так называемых работодателей, которым этот закон нужен как телеге пятое колесо. И они, естественно, будут против такого закона.*

— Я не думаю, что в борьбе за принятие такого закона мы в парламенте окажемся в одиночестве. Защита прав работников — важный пункт программы блока "Право и Единение". И в парламенте мы будем бороться за этот закон до конца.

Беседу вел
Борис Мкртчян

"Голос Армении", 12.VI.1999.

Տրոյական ձին մուտք գործեց ԱԺ

Այնքան էլ շատ ժամանակ չէր անցել ԱԺ պատգամավոր, «Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանի հետ նախորդ ուղիղ կապից, բայց հեռախոսազանգերը չէին լռում: Ժողովուրդը շարունակում է իր փրկության հույսը կապել «Իրավունք և Միաբանություն» դաշինքի հետ, որը, հանուն թվացյալ նվաճումների, չհրաժարվեց իր որդեգրած սկզբունքներից, քաղաքականության մեջ բարոյականություն հաստատելու սկզբունքներից:

– Ինչո՞ւ Դուք խուսափեցիք ԱԺ նախագահի պաշտոնում քվեարկվելուց և ինքնաբացարկ տվեցիք:

Վանո Սիրադեղյանը նորից ընտրվեց ԱԺ պատգամավոր: Ի՞նչ պետք է լինի մեր ժողովրդի վիճակը (Սաֆարյան):

– Խնդիր էր դրված, որ նորընտիր ԱԺ առաջին նիստում մեկ անգամ ևս հորդորենք, որ շրջանառության մեջ եղած ծրագրերը ՀՀ տնտեսությունը տանում են փակուղի, և մենք պարտավոր էինք ԱԺ ամբիոնից կրկին հաստատել հանրապետությունն այս վիճակից դուրս բերելու քաղաքական պատասխանատվություն վերցնելու մեր վճռականությունը: Բարեբախտաբար, «Միասնություն» դաշինքի կողմից Կարեն Դեմիրճյանն իր ելույթում անդրադարձավ ուրիշ ծրագրերի՝ ասելով, որ կան շատ հետաքրքիր պահեր, որոնք պետք է ամենայն ուշադրությամբ ու լրջմտությամբ վերլուծվեն, ինչու չէ, նաև օգտագործվեն: Քանի որ ամբողջ ընտրարշավի ընթացքում շրջանառության մեջ կար տպագրված երկու ծրագիր (չհաշված վերջին օրերին տպագրվածները), ենթադրվում էր, որ ի նկատի ունեին մեր ծրագիրը, ինչը նաև չմերժվեց հետագայում՝ ԱԺ նիստում: Եթե մեր ծրագրում ճգնաժամից դուրս գալու ուղղություններ կան, իսկ մեծամասնություն կազմող դաշինքը պատրաստակամ է դա կյանքի կոչել, այդ դեպքում մեզ մնում էր ողջունել և հայտնել սատարելու մեր պատրաստակամությունը:

Ինչ վերաբերում է Վանո Սիրադեղյանի հարցին, ապա «Միասնություն» դաշինքի ղեկավարները քանիցս հայտարարել են, որ իրենք ձեռնամուխ կլինեն պատգամավորական անձեռնմխելիությունը վերանայելու օրենք ընդունելու գործին: Եթե այդ ձևով հարցը չլուծվի, թե՛ Դուք, թե՛ մենք, թե՛ մեր քաղաքացիներն արդեն հնարավորություն կունենանք հետևություն անելու՝ ո՛ր պահից սկսած խոսքը գործից տարբերվեց, և կգնահատեն այդ գործողությունները:

– Շնորհավորում եմ ԱԺ պատգամավոր ընտրվելու առթիվ: Ցանկանում եմ կորով, համբերություն: Ինչո՞ւ Ձեր ելույթի ժամանակ ԱԺՄ-ն թողեց-դուրս եկավ, ո՞րն էր

պատճառը (Լ. Բարսեղյան):

– Ես չեմ ուզում որևէ միտում տեսնել: Յուրաքանչյուր ոք ազատ է իր գործողություններ մեջ: Ես իրենց էլ եմ հասկանում... Գուցե Ռոբերտ Քոչարյանի, Արմեն Դարբինյանի, Վագգեն Սարգսյանի դահլիճից դուրս գալուց հետո նմանատիպ գործողությամբ հայտնեցին իրենց զորակցությունը:

– Ասում են, որ նրանք, ովքեր ձայն են տվել «Իրավունք և Միաբանություն» դաշինքին, շատ են գայրացած, որ համամասնական ցուցակում ընդգրկված է նաև Նապոլեոն Ազիզյանը:

– Զայրացող մարդկանց ասեք, որ Նապոլեոն Ազիզյանը շատ ազնիվ ձեռներեց է, խիղճը չկորցրած անձնավորություն, կաշին չփոխած մարդ: Նա ընտրվել է մեծամասնական ընտրակարգով, և նրան ամեն կերպ փորձել են խանգարել: Նա ունեցավ տղամարդկություն, քաղաքացիական պարտքի մեծագույն զգացում և մինչև վերջ համառորեն ընտրատարածքում ապացուցեց իր ճշմարտությունը: Նա ո՛չ ՀՀԾ-ական է, ո՛չ ՀՀԾ-ականից դավանափոխ եղած երկրապահ, նորմալ, կարգին անձնավորություն է, և կարծում եմ՝ ճիշտ կլիներ, որ մենք շնորհավորեինք նրան: Չմոռանանք ասել, որ նա մեծ սեր ու հարգանք է վայելում (և ոչ միայն որպես մեկենաս) Ռուսաստանի և ԱՊՀ երկրների մշակութային գործիչների շրջանում:

– ԱԺ-ն մեր ազգի և պետականության ամրապնդման մարմին է: Բայց որոշումները պետք է ընդունվեն հիմնականում մեծամասնություն կազմող «Միասնություն» դաշինքի կողմից, դա ինչպիսի՞ բացասական և դրական ազդեցություններ կունենա քաղաքական զարգացումների վրա:

– Եթե լինեն օրենքի նախագծեր, որոնք չեն բխում մեր ժողովրդի շահերից, բայց պարտադրվում են մեծամասնության կողմից, համոզված եմ, այնտեղ կգտնվեն ազնիվ, անաչառ մարդիկ, ովքեր հենց իրենք արգելք կհանդիսանան նմանատիպ օրենքների վավերացման ճանապարհին: Մեծամասնությունը միաբևեռ չէ. տարբեր կրթվածություն, տարբեր գիտելիքների պաշար ունեցող մարդիկ կան այնտեղ:

– Ազատամարտիկ եմ եղել: Հայրենիքին վերադարձրած հողերը, բնակավայրերը, որոնք արյան գնով ենք ձեռք բերել, այսօր դատարկ են: 1988-ին, երբ սկսվեց ղարաբաղյան շարժումը, Ղարաբաղից մեծ արտահոսք եղավ դեպի Հայաստան, բայց երբ 1995-ին զինադադար եղավ, շատ քչերը վերադարձան հայրենի բնակավայրերը: Ի՞նչ է լինելու այդ չբնակեցված հողերի հարցը, ստացվում է, որ իզուր արյուն ենք թափել, և վաղն այնտեղ կրկին ազերիներ կհայտնվեն (Կարեն Մարտիրոսյան):

– Դա շատ լուրջ, շատ խոր հարց է: Հրամանագրով հայրենասեր չեն դառնում, և ես գտնում եմ, որ պետությունը պետք է անի այն ամենը, որ մեր քաղաքացիները, ովքեր արյան գնով վերադարձրեցին հայրենիքը, զգան, որ իրենց արածը գնահատվում է, որ պետությունն իրենց սիրում է այնքան, որքան իրենք են սիրել հայրենիքը, այսինքն՝ նաև պետությունը: Խնդիրն այն է, որ մարդ տեսնի, զգա իր՝ արդարության պայմաններում ապրելը, որ ազատամարտիկը, վերհիշելով իր թափած արյունը, չտեսնի, որ այսօր վայելքների մեջ են ապրում

մարդիկ, ովքեր այն դժնդակ տարիներին Արցախի տեղն անգամ չգիտեին, Արցախ ասելիս իրենց վատ էին գգում, ովքեր Արցախի դրոշի ներքո զավթեցին իշխանությունը և հետո փորձեցին Արցախը դնել զոհասեղանին... Դա շատ խորքային հարց է, և հեռախոսազրույցի ժամանակ դժվար է ամբողջությամբ պատասխանել, բայց, իմ խորին համոզմամբ, ամեն ինչ պետք է սկսվի արդարություն հաստատելուց, և յուրաքանչյուր մարդ իր լավի համար պետք է լավ գնահատականի արժանանա, իսկ վատ գործերի, արարքների, ավերածությունների համար՝ անարգանքի սյունին գամվի, պարսավանքի ենթարկվի, որ դա դաս լինի բոլորի համար:

Եթե տեսնենք, որ արդարություն է հաստատվում Հայաստանում, հավատացնում եմ, կվերաբնակեցվի նաև Արցախը: Այն մեկ միլիոն քաղաքացիները, որոնք ճարահատյալ լքեցին հայրենիքը և դեգերում են օտարության մեջ, կվերադառնան և, որ ամենակարևորն է , ձեռնամուխ կլինեն Հայաստանի փրկության գործին:

– Ձեր ելույթը, Ձեր խոսքը լսելով՝ հասկացա, որ Դուք շատ դրական վերաբերմունք ունեք Կարեն Դեմիրճյանի նկատմամբ, բայց, երբ վերջինիս ընտրվելու կապակցությամբ բոլորը ոտքի կանգնած, ծափահարում էին, Դուք նստած էիք: Դա չի՞ նշանակում, որ չեք ուզում համագործակցել:

– Ամենևին: Երբ հոտնկայս, բուռն ծափահարում են մարդիկ, ովքեր երկու տարի առաջ նույն ոգևորությամբ, փայլող աչքերով, հեզ հնազանդությամբ Լ.Տ-Պ.-ին էին դիմավորում ԱԺ դահլիճում, երբ հոտնկայս ծափահարում էին մարդիկ, ովքեր 96-ի սեպտեմբերի 26-ին ջարդ կազմակերպեցին այդ նույն դահլիճում, ովքեր ճիշտ մեկ տարի առաջ կայացած նախագահական ընտրությունների ժամանակ ամենազանազան, անպատկառ, կիրք մարդուն անվայել խոսքերով էին բնութագրում մեծարգո Կարեն Դեմիրճյանին և համերաշխորեն տապալեցին ընտրությունները, ես չեմ ուզում նմանվել նրանց: Եվ ճիշտ կլիներ, որ Կ. Դեմիրճյանը կանխեր այդ՝ արդեն հնամաշ հավատարմության դրսևորումը, որ 24 ժամում կարող է փոխվել հակառակ դրսևորումների: *O, tempora. O, mores* (*Օ՜, ժամանակներ: Օ՜, բարքեր*): Երիցս ճիշտ էր մեծն Բալզակը «Մարդկային կատակերգությունը» մեզ պարգևելիս, և ՀՀ ազգաբնակչությունն ականատես եղավ փառասիրության մի նոր տոնավաճառի: Գոնե իրենց արհեստավարժ համարող վարչապետը (հիմա արդեն՝ նախկին) և նախարարները քաղաքական հեռատեսություն և զգոնություն, ինչու չէ, նաև մարդկային երախտագիտության զգացում ունենային և նույն ոգևորությամբ (ավա՜ղ, հավանաբար՝ շինծու) հոտնկայս դիմավորեին հանրապետության նախագահին, որն ընդամենը 1,5 տարի առաջ, ժողովրդի առջև ծառայություն չունենալու պարագայում, իրենց քաղաքական անհայտությունից վարչապետ ու նախարարներ էր նշանակել: Խոսքն անհատի մասին չէ, այլ պետականության, զինանշանի, օրհներգի անձեռնմխելիությունը հորջորջողների քաղաքացիական սանձակության մասին է:

Իզուր չէ ասված՝ «*Զգուշացեք նվերներ բերող դանայցիներից*»: Տրոյական ձին արդեն իսկ մուտք գործեց ԱԺ:

Համագործակցություն լինում է գաղափարների շուրջ, իսկ մնացածը համագործակցություն չէ, քաղաքական հաշվարկ է: Երբ վտանգված է հանրապետությունը, քաղաքական հաշվարկներով առաջնորդվելը, իմ կարծիքով, պետական մոտեցման դրսևորում չէ: Եթե գաղափարները հոգեհարազատ և ընդունելի լինեն, ցանկացած մարդու, առավել ևս՝ Կարեն Սերոբիչի հետ մեծագույն պատրաստակամությամբ կհամագործակցեմ: Համերաշխությունը պետք է հիմնվի արդարության վրա, տվյալ դեպքում՝ քաղաքական փոքրամասնության շահերի լիակատար պաշտպանության վրա: Միակողմանի համերաշխություն երբեք չի լինում, մենք մեր կողմից առաջին քայլն արեցինք. դա իմ ինքնաբացարկն էր:

– Շնորհավորում եմ Ձեզ և դաշինքի տղաներին: Ձեր ելույթները բոլոր հարցերի պատասխանները տալիս են: Հարց չեմ տալիս, ուղղակի խնդրում եմ Ձեզ և տղաներին, որ համբերատար լինեք, դիմակայեք սրիկաների խարդավանքներին, միևնույն է, վաղ թե ուշ, մեր գաղափարները հաղթելու են, ինչպես դուք եք ասում՝ «Հավատա՛ և կհաղթես»: Եվ միացեք ձեզ գաղափարակից կուսակցություններին (Վ. Սահակյան):

– Մեզ գաղափարակից կուսակցություններն արդեն սկսում են կամաց-կամաց մեզ հետ միանալ, անշուշտ, բյուրեղացում կգնա, բայց այն մարդիկ և կուսակցությունները, որոնք ոչ թե խոսքով, այլ գործնականում ուզում են, որ Հայաստանի հող ու ջրի վրա արդարություն հաստատվի, արդեն մեր պոտենցիալ դաշնակիցներն են: Եթե գաղափարը նույնն է, միանալու խնդիր այլևս, որպես այդպիսին, չկա: Մենք ունենք գաղափարակից շատ ընկերներ ուրիշ կուսակցությունների մեջ:

– Ինչպե՞ս եք կանխատեսում. ինչպիսի՞ վերադասավորումներ կամ դասավորումներ կլինեն ԱԺ առաջին նիստերին, և որքանո՞վ արդարացան Ձեր սպասելիքներն ու կանխատեսումները: Եթե չարդարացան, ինչո՞ւ («Այգ» հեռուստաընկերություն):

– Այն, ինչ տեղի ունեցավ, համարում եմ շատ բնականոն, և պատահական չէ, որ մինչև ԱԺ ձևավորումը հանդես եկա քաղաքական հայտարարությամբ, ուր մասնավորապես ասացի, որ ներկայիս մեծամասնությունը՝ «Միասնություն» դաշինքը, փաստորեն, ՀՀԾ-ի իրավահաջորդն է հանդիսանալու, նաև ասացի, որ իրենք բոլոր հնարավորություններն ունեն ինքնամաքրվելու: Առայժմ ՀՀԾ-ի իրավահաջորդը լինելու մասով ասածս հաստատվեց, հուսանք, որ առաջիկայում ինքնամաքրմանն էլ ականատես կլինենք:

– ՀՀ նախագահը նշանակեց նոր վարչապետ: Ձեր գնահատականը վարչապետի թեկնածուի և աշխատանքային հեռանկարների մասին: Վազգեն Սարգսյանի և Արմեն Դարբինյանի միջև համեմատության եզրեր Դուք տեսնո՞ւմ եք:

– ՀՀ նախագահն օգտվեց իր սահմանադրական իրավունքից, իսկ այդ նշանակման մասին նա դեռ մինչև այդ էր ասել: Իսկ գնահատականներին մեծ սիրով կանդրադառնամ, երբ ամսի 16-ին լսեմ ծրագրային այն ելույթը, որով հանդես կգա Վազգեն Սարգսյանը:

Իսկ Վազգեն Սարգսյանի և Արմեն Դարբինյանի միջև համեմատության եզրեր տեսնել-չտեսնելը կարող են ասել կառավարության անդամները, ովքեր ուղղակիորեն աշխատել են նրանց հետ: Իսկ ես ո՛չ մեկի, ո՛չ էլ մյուսի հետ չեմ աշխատել:

– Նոր նախարարներ պետք է աշխատեն, նրանց ծրագրերը ԱԺ-ն պետք է քննարկի

և հաստատի: Դուք, որպես ԱԺ պատգամավորական խմբակցության նախագահ, ո՞ր դեպքերում կհամաձայնվեք աջակցել այդ կառավարության ծրագրին:

– Կաջակցեմ բոլոր այն դեպքերում, եթե մեր խմբակցությունը գտնի, որ կառավարության ծրագրում ներկայացված այս կամ այն դրույթն իրենից հետաքրքրություն է ներկայացնում և, որ ամենակարևորն է, կհեշտացնի, կթեթևացնի մեր ժողովրդի վիճակը: Իսկ եթե դա հակասի մեր ծրագրային հիմնադրույթներին, բնականաբար, կփորձենք մեր ճշմարտությունը խորհրդարանում հասցնել ժողովրդին:

– Շատ ուրախ կլինեինք, որ Դուք նորից Ձեր թեկնածությունը դրած լինեիք Դավթաշենում, բայց, ցավոք, չէիք դրել, ինչո՞ւ:

– Քանի որ ընտրապայքարի մեջ դաշինքով ենք հանդես եկել, ուստի խնդիր ունեինք, բացի իմ կողմից սիրված, հարգված դավթաշենցիներից, մեր ճշմարտությունը հասցնել հանրապետության մարզերի բնակչությանը: Իսկ եթե Դավթաշենում կամ Երևան քաղաքի որևէ ընտրատարածքում դնեի իմ թեկնածությունը, հավատացնում եմ, ֆիզիկապես չէի հասցնի մարզերում լինել: Մեր գերխնդիրն էր, որ ողջ հանրապետությունում ասեինք մեր խոսքը:

– Մենք Ձեզ շատ ենք սիրում, հարգում՝ Ձեր բարի, անկեղծ ելույթների համար: Այսօր պարզ է, որ մեր հանրապետությունում արդյունաբերություն, գյուղատնտեսություն չկա, հարց է ծագում՝ ինչո՞վ պետք է ապրի մեր ժողովուրդը, չէ՞ որ մանր առևտրով հնարավոր չէ: Մեր կարծիքով՝ դրանում բավականին կօգնի մեր թալանված ձեռնարկությունների, խանութների, օբյեկտների վերադարձնելը պետությանը: Կամ, եթե դրանց դատի չեն տալիս, գոնե այդ օբյեկտների վերահաշվարկ կատարեն և գումարների մի մասը վերադարձնեն պետական բյուջե: Հնարավո՞ր է: 5 հազար դոլարով մի օբյեկտ են սեփականաշնորհել, այսօր սեփականատիրոջը 2 մլն դոլար են առաջարկում, չի տալիս: Ուզում է ընդարձակել, նոր խանութներ, հեռուստաստուդիա բացել: Այդ 2 միլիոնից գոնե կեսի կեսը բյուջե չեն վերադարձնում:

– Ասեմ՝ իմ մոտեցումներն ինչպիսին են: Հարցը բազմաբնույթ է և բազմաբովանդակ: Եթե օրենքի շրջանակներում են գործել (իսկ օրենքն անկատար էր) և սեփականատեր են դարձել, ապա գերխնդիր պետք է դնենք՝ պարտադիր աշխատեցնել այդ օբյեկտները: Եթե չեն աշխատեցնում, քաղաքակիրթ աշխարհում սնանկ ճանաչելու մասին օրենքներ կան, այսինքն՝ այն ձեռնարկությունները, որոնք աշխատատեղ չեն ստեղծում, պետության վզին բեռ են, դրանք ճանաչում են սնանկ և աճուրդով վերավաճառում են այդ ձեռնարկությունը՝ գործարանը, ֆաբրիկան: Ընդ որում, վերավաճառելիս ինքը՝ պետությունն էլ կարող է գնել, կարող են գնել նաև բաժնետիրական ընկերությունները կամ առանձին անհատները: Ուստի, օրենսդրական այնպիսի փոփոխություններ են պետք, որոնք ստիպեն և պարտադրեն սեփականատիրոջը աշխատեցնել ձեռնարկությունը, նոր աշխատատեղեր ստեղծել, այլապես սեփականատերը պետք է համոզված լինի, որ կամ կճանաչվի սնանկ կամ էլ այնպիսի հարկային բեռի տակ կլինի, որ ստիպված կա՛մ կվերավաճառի, կա՛մ կաշխատեցնի: Դա լուրջ, համակարգված մոտեցումներ պահանջող

խնդիր է, այդ խնդրի լուծումը պետք է, անշուշտ, օրենսդրորեն կարգավորվի, իսկ այն օբյեկտները, գործարանները, որոնք օրենքի խախտմամբ են սեփականաշնորհվել, ճիշտ եք, դատական կարգով պետք է վերանայվեն այդ գործարքները, և օրենքի համաձայն էլ պետք է տերը վերականգնվի, տվյալ դեպքում՝ պետությունը: Պետք է բազմաբնույթ մոտեցում լինի Սահմանադրության, օրենքի շրջանակներում: Գերխնդիրն այն է, որ, կրկնում եմ, այդ գործողությունների արդյունքում ստեղծվեն նոր աշխատատեղեր, փակված գործարաններն սկսեն աշխատել, և ոչ ձեռներեցը, որը ձեռք է գցել ազգային հարստությունը, հրաժարվի դրանից: Բնականաբար, պետությունը պետք է ստեղծի այնպիսի պայմաններ, որ ոչ ձեռներեցն ինքը ստիպված լինի հրաժարվել:

Ձեր երկրորդ հարցը ևս շատ լուրջ հարց է: Դա նույնպես հնարավոր է օրենքով կարգավորել՝ ընդունելով գերշահույթների հարկադրման օրենք: Գերշահույթները, բնականաբար, պետք է հարկադրվեն ոչ այնպես, ինչպես սովորական հարկատուներն են վճարում, լինեն դրանք գործարաններ կամ անհատներ:

Շնորհակալություն եմ հայտնում այս հարցերի համար, որոնք կրկին անգամ ընդգծում են մեր ծրագրային հիմնադրույթների հրատապությունն ու այժմեականությունը:

– *Ընտրությունների նախորդ օրը զրույցներից, հարցումներից բոլորիս մոտ այն տպավորությունն էր ստեղծվել, որ «Իրավունք և Միաբանություն» դաշինքը վայելում է ժողովրդի մեծ մասի սերը: Բայց մեզ խիստ զարմացրեցին այն տոկոսները, որ գրանցվեցին ձեր դաշինքի օգտին: Ի՞նչն էր պատճառը (Հ. Մարտիրոսյան):*

– Պատահական չի ասված՝ «*Ձայն բազմաց, ձայն Աստծո*»: Հուրախություն ինձ, դաշինքում ներգրավված են մարդիկ, որոնց համար կարևոր են ոչ թե պաշտոնապես հայտարարված տոկոսները, այլ ժողովրդի հարգանքը և սերը, որ մենք տեսանք ամենուր, ամբողջ ընտրապայքարի ժամանակ, երբ կիսաքաղց մարդիկ ամենայն անկեղծությամբ և սրտանց մեզ հետ էին կիսում իրենց վերջին լավաշը, որը մեզ համար նշխարի արժեք ունի: Իսկ բուն Ձեր հարցին կպատասխանեմ, որ մարդկայնորեն մեզ հուզեց այն ջանասիրությունը, որով 5 օր անընդհատ մանրակրկիտորեն, ժողովրդի աչքից հեռու հաշվում էին 130 հազար ընտրողների ձայները, մասնավորապես՝ Արագածոտնի մարզում, Երևանի մի քանի համայնքներում: Հիանալ կարելի է այդ մարդկանցով, որոնք, ի տարբերություն իրենց գործընկերների, ովքեր մի քանի ժամվա ընթացքում կարողացան հաշվարկել 1 միլիոնից ավելի ընտրողների ձայները, լի էին ավելի խոր, միգուցե միայն 1-2 դաշինքների համար ըմբռնելի պատասխանատվության զգացումով, և մենք ագգովի խուսափեցինք մի մեծ վտանգից... Մի խոսքով՝ ամեն ինչ ավարտվեց «*Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել*» կարգախոսով, որի հետևանքով «*Եվ գայլերն են կուշտ, և՛ ոչխարները՝ կենդանի*»: Եվ ՀՀ-ում մենք ականատես եղանք ժողովրդավարության մի նոր, փայլուն հաղթանակի...

Վարեց
Ռուսլան Թաթոյանը

«Իրավունք. հարց ու պատասխան», 15–21.VI.1999:

Правительство должно уйти в отставку

– *Как вы оцениваете действия правительства по преодолению бюджетного кризиса?*

– Мы являемся свидетелями явления, когда правительство пытается отчаянно бороться с рецидивами болезни, а не с самой болезнью. Судите сами. Сегодня правительство не имеет ни стратегической линии, ни общенациональной поддержки. Альтернативой массовой безработице, острому социальному положению подавляющего числа граждан республики выставляется требование сокращения ресторанных вакханалий и кутежей новоявленных провинциальных и городских баронов.

Разговор вовсе не идет о создании благоприятных макроэкономических условий для расширения производства, инвестиционной и инновационной активности, проведении мер по оздоровлению финансовой системы и нормализации денежного обращения. (Ведь отдельные бюджетники не получают заработную плату аж с апреля). Страна, находящаяся в состоянии ни мира, ни войны (разумеется, не по Льву Давидовичу Троцкому), не имеет четко выработанной взвешенной программы национальной безопасности, одной из стержневых слагаемых которой должна была быть программа экономической безопасности. Ведь только при наличии таких программ Национальным собранием могло быть выработано соответствующее законодательное поле. В условиях их отсутствия нынешнее правительство сосредоточилось на решении сиюминутных задач, которые загоняют болезнь системы вглубь и которые не приведут к достижению конечной цели – улучшению благосостояния граждан.

Не далее как 4 месяца назад я заявил в телевыступлении, что предвыборная программа блока "Единство" не выдерживает критики с точки зрения ответов на самые животрепещущие вопросы экономики и социальной сферы и в случае ее реализации окончательно парализует экономику. На первой сессии Национального собрания, баллотируясь на пост его председателя, я обратил внимание депкорпуса и руководства страны на необходимость принятия и реализации планов программы, ко-

торая обеспечит преодоление депрессии и переход к устойчивому росту на основе комплекса мер, стимулирующих экономическую активность, рост производства и инвестиции.

В основу могла быть положена программа нашей фракции, которая, наряду с ответами на вышепоставленные вопросы, во многом способствовала бы оздоровлению рыночной среды, обеспечению эффективной работы механизмов рыночной конкуренции и инфраструктуры рынка, прекращению платежнего кризиса.

— *Вы говорите о необходимости радикальных перемен. Насколько радикальных?*

— Я говорю о том,что оказалась несостоятельной вся экономическая система, в ее рамках не удается создать адекватный механизм накопления и развития. Более того, в Армении фактически свернуты экономические реформы. И это не преувеличение. Определение из учебника гласит: "экономические реформы — это действия правительства по обеспечению полного использования и эффективного распределения ресурсов". Теперь, пожалуйста, вы ответьте на мой вопрос: суть документов, представленных на обсуждение внеочередной сессии НС, имеет ли хоть отдаленную связь с реформами?.. Ответ однозначен: как говорится в русской поговорке,- "В огороде бузина, а в Киеве дядька". И это не случайно, без системного анализа сложившегося положения во всех сферах экономики, финансов, налоговой сфере невозможен поиск путей выхода из острого социально-экономического кризиса.

Уж очень актуальна выработка антикризисной программы. Элементарная логика подсказывает: как может Левон Бархударян предложить нечто антикризисное, если в 1995,96,97 гг. он выступал с бюджетными законопроектами, которые загнали экономику в тупик, ввергли страну в кризисное состояние? Как может Армен Дарбинян предложить что-то дельное? Ведь Вазген Саркисян пытается расчистить полученные от ареставаржа авгиевы конюшни. Гагик Шахбазян, который будучи министром сельского хозяйства на корню уничтожил крупнотоварное сельхозпроизводство? Леонард Петросян — автор экономического чуда в НКР, сопровождавшегося оттоком населения? Эти и некоторые другие деятели исчерпали себя. Их пребывание на руководящих постах привело к тяжелым потерям. Не хватит ли и дальше экспериментировать? Считаю, что правительство должно уйти в отставку!

— *Но ведь дело не в них, а в кадровой политике премьера, задействовавшего эти персоны в составе нового кабинета. Кстати, премьер заверил, что полноценная программа правительства будет представлена*

в рамках годового бюджетного законопроекта-2000...

— Эти заверения отнюдь не внушают оптимизма, ибо заведомо известны соавторы этой программы. Как сказал бы писатель — Ба! Знакомые все лица: Левон Бархударян, Армен Дарбинян и К° не в состоянии выйти из заколдованного круга псевдомонетаристской теории, которая повергла бы в ужас ярчайших отцов монетаризма — будь то лауреаты Нобелевской премии Милтон Фридман или Анна Шварц вместе с Джефри Саксом. Наши обанкротившиеся экономисты не в состоянии руководить экономикой, и чем скорее руководство страны это осознает, тем меньше потерь мы будем иметь.

— *А кто в состоянии?*

— Руководить экономикой переходного периода в состоянии люди, которые и теоретически, и на практике одинаково хорошо знают механизмы, задействованные при централизованном социалистическом правительстве, и основополагающие положения либеральной экономики, ее основные направления, на практике в разных странах доказавшие свою благотворную силу. Переходный период тем и сложен, что все позитивное, что было в централизованном планировании, нужно суметь с минимальными потерями перевести на рельсы свободного предпринимательства. Здесь неуместны кавалерийские наскоки — мы не гордиев узел разрубаем. Экономика переходного периода — это еще не до конца проработанная сложная наука, которой, увы, не владеет ни один из членов нового правительства.

— *Включая премьера?*

— В лице Вазгена Саркисяна мы потеряли хорошего министра обороны, а взамен получили не столь хорошего премьер-министра. Если в оркестре музыканты сами не владеют партитурой — симфонии не получится, тем паче, что и дирижер — не Герберт фон Караян.

— *Но в условиях многомиллиардной бюджетной трещины надо предпринимать оперативные меры, а не разрабатывать стратегические планы.*

— А вам кажется, что правительство, созывая внеочередное заседание Национального собрания, предлагает принять оперативные меры? Рискованное предположение, если не сказать, заблуждение. Давайте порассуждаем: энное число млрд. драмов было предусмотрено госбюджетом на капитальное строительство. Около 20% этой суммы составляет фонд заработной платы, весомый процент пошел бы на приобретение строительных материалов местного производства, на строительных работах и в сфере индустрии стройматериалов задействованы десятки тысяч людей, которые фактически лишаются заработка в случае перераспределения ресурсов в расходной части госбюджета.

А дальше по накатанной схеме: снижение потребительского спроса, что неизбежно приведет к сокращению предложения, это в свою очередь — к сокращению промышленно-производственного персонала, росту безработицы, дальнейшему понижению жизненного уровня и без того бедствующих наших сограждан, а в конечном итоге — к экономическому коллапсу и социальному взрыву.

Здесь опасно и другое явление: рядовые налогоплательщики в массовом порядке будут не в состоянии платить налоги государству. Опасные симптомы этого явления уже вполне зримы. Одним росчерком пера уволили руководителей целого ряда общин. А ведь это люди, которых избрал народ, за ними сотни тысяч наших сограждан. Правительство своей непродуманной налоговой политикой сделало граждан незаконопослушными. Налицо армянский вариант практической реализации теории гражданского неповиновения Махатмы Ганди. В Индии перед гражданами стояла вполне конкретная задача — обрести независимость, сбросить колониальное иго. А у нас с точностью до наоборот: правительство само рубит сук, на котором сидит. Ситуация по части предпринимаемых правительством мер напоминает аквариум, где дохнут рыбки, а благочестивые хозяева вместо того, чтобы поменять воду, меняют рыбок.

Мы имеем дело с парализованной экономической системой. В условиях этой системы невозможно быть законопослушными, даже применяя жестокие карательные санкции. Люди обескровлены, под угрозой голода. При этом правительство не хочет признать, что в стране 2 экономики: реальная — на грани коллапса, и виртуальная, где все друг другу уже не один год должны — это 49 млрд. драмов старых задолженностей по бюджету, это 100-миллиардный долг энергетиков, 13-миллиардная задолженность госбюджету столичной мэрии... Все это на фоне отсутствия живых денег, мнимой финансовой стабильности, в недрах которой отсроченная инфляция скоро достигнет своей критической массы, что произошло 17 августа 98 г. в России. Правительство искусственно держит на недопустимо низком порядке уровень монетизации рынка. Ну что теперь поделать: есть в макроэкономике такой показатель, являющий собой отношение денежной массы к ВВП. Так вот для нормального функционирования рынка уровень монетизации должен составлять 70-75% (как во всех развитых странах с либеральной экономикой). Так вот этот показатель в РА составляет 9,5%. В этих условиях говорить об экономическом развитии, мягко выражаясь, нонсенс.

М. Мкртчян

"Голос Армении", 19.VIII.1999.

Համակարգն իրեն սպառել է, նոր «հին» կառավարությունը՝ նույնպես

Շուրջ 1 ամիս առաջ «Իրավունք և Միաբանություն» խմբակցությունը պահանջել էր գումարել ԱԺ արտահերթ նստաշրջան՝ տնտեսական արտակարգ միջոցառումների օրակարգով: Մեկ ամսվա ուշացումով, այն էլ՝ կիսատ-պռատ իրադրային լուծումների օրակարգով, նստաշրջան հրավիրվեց: Ինչպես ասում են, լավ է ուշ, քան երբեք:

Մեր զրույցը «Իրավունք և Միաբանություն» խորհրդարանական խմբակցության նախագահ Արտաշես Գեղամյանի հետ ծավալվեց հիմնականում նախանստաշրջանային իրավիճակի շուրջ:

– Ինչպե՞ս եք գնահատում ներկա տնտեսական (և ոչ միայն տնտեսական) իրավիճակը Հայաստանում:

– Դեռևս չորս ամիս առաջ՝ նախընտրական թոհուբոհին, «Այսօր» հաղորդաշարով հայտարարությամբ հանդես եկա և մասնավորապես ասացի, որ «Միասնություն» դաշինքի նախընտրական ծրագրի տնտեսական մասը էլ ավելի կխորացնի առկա տնտեսական ճգնաժամը և կտանի փակուղի, և ճիշտ կլիներ հրաժարվել այդ ծրագրից: Եվ քանի որ պարզ էր, թե ով է ունենալու խորհրդարանական մեծամասնություն, ես առաջարկեցի, որ ապագա մեծամասնությունը որդեգրի «Իրավունք և Միաբանություն» դաշինքի տնտեսական ծրագիրը, որը գիտականորեն հիմնավորված է: Ավա՜ղ, դա չարվեց:

Ազգային ժողովում հանդես գալով ծրագրային ելույթով՝ վարչապետ Վազգեն Սարգսյանը հայտարարեց, որ իր ներկայացրած փաստաթուղթը ծրագիր չէ, և որ կառավարությունը պարզապես փորձում է արձանագրել տիրող իրավիճակը: Դա ծայրաստիճան մտահոգիչ հայտարարություն էր, որովհետև ստացվում է, որ ժողովրդի ճակատագրի համար պատասխանատվություն ստանձնող քաղաքական ուժը իշխանության գալով պատրաստ չէր անելու հակաճգնաժամային առաջին քայլերը, և ավելին՝ երեք ամիս ժամանակ էր խնդրում՝ ամբողջական ծրագիր ներկայացնելու համար:

Կարևոր է նաև հետևյալը՝ բարձրաստիճան այն պաշտոնյաները, որոնցով ձևավորվել է կառավարության ներկայիս կազմը, ուղղակիորեն մեղավոր են հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր վիճակի համար: Փոխանակ նրանք դատապարտվեն, անարգանքի սյունի գամվեն տարիների իրենց գործունեության հետևանքով ստեղծված ճգնաժամի համար, ընդհակառակն՝ այսօր գլխավորում են այն ոլորտները, որոնք տապալել են: Մենք նախազգուշացնում էինք, որ ներկայիս կառավարությունը

ՀՀԾ-ի իրավահաջորդն է, և ժամանակը ցույց տվեց, որ, ավա՜ղ, իրոք այդպես է:

– Ըստ ձեզ, ինչո՞վ էր պայմանավորված այդպիսի թիմ հավաքելը:

– Այն պարզ պատճառով, որ մինչ օրս չկարողացան վեր կանգնել կուսակցական նեղ շահերից և ավելի բարձր դասել պետականության արժեքները, քան ստորաքարշությունը կենսակերպ դարձրած «գործիչներին»:

Կառավարությունում գրեթե չկա մի նախարար, որն իր բնագավառի մասին ի վիճակի է կոնցեպտուալ, ստրատեգիական ուղիներ նշող ելույթ ունենալ: Հանճնարարություն կատարողներ են նրանք, իսկ այդպիսիք ստեղծված իրավիճակում չեն կարող Հայաստանը ճգնաժամից հանել: Դա այն մարդիկ են, ովքեր ժամանակին ԱԺ-ում հայտարարում էին, թե 1995-ի բյուջեն բեկումնային է, 1996-ի բյուջեն զարգացման երաշխիքներ է պարունակում, 1997-ի բյուջեն անգնահատելի է և անընդունակ: Վիճակը գնալով վատթարացել է, բայց այդ նույն մարդիկ նույն երգերով հիմա էլ են հանդես գալիս: Հիմա էլ ուշադրությունը շեղելու համար արտահերթ նստաշրջան են գումարում, բայց ի՞նչ օգուտ:

Նրանք նման են այն ակվարիումի տիրոջը, ում ձկները պարբերաբար սատկում են, բայց նա նեխած ջուրը չի փոխում:

Գրչի մեկ հարվածով բազմաթիվ գյուղապետեր ազատվել են աշխատանքից: Բայց չէ՞ որ այդ գյուղապետերի թիկունքում կանգնած են հարյուր հազարավոր ընտրողներ: Այսինքն՝ հարյուր հազարավոր մարդիկ են սխալ, այլ ոչ թե իշխանությունները: Դա շատ լուրջ ահազանգ էր: Փոխանակ պարզեն, թե ինչու չի հավաքվում բյուջեի եկամտային մասը, հախուռն պատժվում են տասնյակ ու տասնյակ գյուղապետեր: Կես միլիոն ընտրող չի կարող օրինազանց լինել, պարզապես համակարգը չի աշխատում: Տեղին է հիշել Մահաթմա Գանդիի կոչը հնդիկ ժողովրդին՝ չկատարել օրենքները, չենթարկվել դրանց: Բայց նա անում էր դա ի հեճուկս անգլիական գաղութարարների: Իսկ ինչի՞ է հետամուտ մեր կառավարությունը՝ ակամա օրինազանցության դրդելով չքավոր զանգվածներին իր անմտածված հարկային քաղաքականությամբ:

– Իսկ արդյո՞ք այդպիսի կառավարության կազմը չի նշանակում հենց համակարգի պահպանման երաշխիք:

– Ստեղծված համակարգը, միևնույն է, դատապարտված է: Կարող են ևս 200 գյուղապետի ազատել, կարող են նորից պատերազմ չտեսած «երկրապահներին» դարձնել գյուղապետեր՝ դրանով ոչինչ չի փոխվի:

Մեր ծրագրում ուղղակիորեն գրված է՝ ստեղծված տնտեսական համակարգի շրջանակներում որևէ առաջընթաց և զարգացում անհնարին է: Համակարգն իրեն սպառել է, սակայն նրանք այդ ճշմարտությունը դժվար թե ընդունեն, քանի որ կառավարությունը մեծամասամբ կազմված է այդ համակարգը գովերգողներից: Չէ՞ որ նրանք չեն կարող խոստովանել, որ իրենց կենսագրության վերջին 8-9 տարին ամբողջովին կեղծիք է. նրանք չունեն այդ քաղաքացիական արիությունը: Մենք պետք է նրանց օգնենք, որպեսզի խոստովանեն, մենք պետք է ասենք իրենց. հարգելի՛ կառավարություն, ձեր ինտելեկտուալ ներուժը, մտածողությունը, մոտեցումները հնամաշ են և ամբողջովին սպառված:

Եվ ինչքան շուտ դուք խոստովանեք դա և հրաժարական տաք, այնքան լավ: Չէ՞ որ այս թիմով և այս գործելակերպով ներկա վարչապետը խաչ է քաշում իր նախկին դրական գործերի վրա: Լավ պատերազմողը միշտ չէ, որ կարող է նաև լավ կառավարել:

Անշուշտ, շրջապատը ջանալու է համոզել, որ այդպիսի հզոր վարչապետ նորագույն պատմության ընթացքում դեռ չի եղել, որ երկրում կատարյալ կարգուկանոն է հաստատված և այլն, բայց այդ ամենն ուրիշ նպատակ է հետապնդում: Նրանք ինչ ասես կհնարեն, միայն թե կառչած մնան աթոռներից, որովհետև, հավանաբար, վախենալու բան շատ ունեն իրենց անցյալի ոչ օրինական գործողությունների համար:

– Այսինքն՝ հակված եք կարծելու, որ նախարարներից շատերի տեղը ոչ թե կառավարության շենքն է, այլ բա՞նտը:

– Ծայրահեղությունների մեջ չընկնենք: Խոսքն այն բանի մասին է, որ նրանց հակացուցված է կառավարելը: Գյուղատնտեսության քայքայումը պայմանավորված է ներկայիս գյուղնախարարով, ֆինանսների քայքայումը պայմանավորված է ներկայիս ֆինանսախարարով, տնտեսության խորը ճգնաժամը պայմանավորված է ներկայիս էկոնոմիկայի նախարարով... Նրանք պարտավոր են հեռանալ քաղաքական ասպարեզից:

Բացարձակապես չտիրապետելով ժամանակակից մակրոտնտեսական լծակներին, չիմանալով ազատական տնտեսության հիմնական օրենքները, նրանք ի զորու չեն շտկել իրավիճակը: Եվ չունենալով իրավիճակը շտկելու բանալին՝ նրանք որոնելու են «թշնամու կերպար», ում վրա կարելի է բարդել սեփական բացթողումները: Կսկսվի վհուկների որս, սարսափի տարածում:

– Իսկ արդյո՞ք այդ վհուկառրսը արդեն չի սկսվել՝ ի դեմս «սլաքավար» գյուղապետերի:

– Այո՛, անշուշտ: Գյուղապետերին կհաջորդեն քաղաքապետերը, մեկ-երկու մարզպետներ, այնուհետ կանցնեն Աժ այն պատգամավորներին, որ քննադատում են ձախողված քաղաքականությունը...

– Այսինքն, կանխատեսում եք, որ մոտ ապագայում սկիզբ է առնելու քաղաքական հետապնդումների ալի՞ք:

– Բացառված չէ, եթե ողջախոհությունից ելնելով՝ շուտափույթ կերպով ազգային համաձայնության կառավարություն չկազմավորեն:

– Իսկ արդյո՞ք վարչապետն ի զորու է ձերբազատվել հին թիմակիցներից և կազմել նորմալ թիմ:

– Վարչապետն այլընտրանք չունի՝ այլապես բանակի կայացման, երկրի պաշտպանության համար կատարած իր բոլոր գործերը ջուրը կլցվեն: Դա կլինի այն փորձաքարը, որը ցույց կտա, որ վարչապետն ապրել է պետական հասունացման հերթական պահը:

– Իսկ արդյո՞ք նույն Վանոյի և անգամ Ա. Տեր-Սահակյանի բանդայի դատավարությունների ճգճգումները չեն վկայում, որ ռևանշի միտում կա:

– Այո՛, սակայն տվյալ դեպքում դա կլինի ռևանշ ոչ թե ընդդեմ կոնկրետ քաղաքական

ուժի, այլ ողջ հայ ժողովրդի: Իսկ դա թույլ չի տա մեր ազգը, և թող դա պարզ գիտակցեն, որչափ էլ մեծամասնություն ունենան այս կամ այն պետական մարմնում: Անհնար է սեփական ժողովրդի հետ հաշվեհարդար տեսնել:

– Նստաշրջանում քննարկվելիք փաստաթուղթը պատգամավորներին ներկայացվեց բավականին ուշացումով: Ըստ Ձեզ, դա անփութությո՞ւն էր, թե՞ դիտավորություն:

– Եկեք վեր հանենք բուն պատճառը, մնացածն ածանցյալ է: Բուն պատճառը հետևյալն է՝ Վազգեն Սարգսյանի կառավարությունը չուներ և չունի հակաճգնաժամային ծրագիր: Փաստորեն, այժմ սոսկ իրադրային օրենքներ են ընդունվելու: Այդպես պետություն չեն կառավարի:

Այժմ ինչ-որ վերաբաշխում են անում, ենթադրենք՝ 10 մլրդ դրամ կապիտալ շինարարությունից տեղափոխում են սոցիալական ոլորտ: Բայց չէ՞ որ այդ դեպքում դոմինոյի էֆեկտով՝ շինարարները կզրկվեն աշխատավարձից, շինինդուստրիայի ձեռնարկությունները՝ բյուջեով ամրագրված պատվերներից, այդ բնագավառի աշխատողները կհամալրեն գործազուրկների շարքերը...

Նույնը վերաբերում է բենզինի թանկացմանը: Քանի որ հանրապետությունը հիմնականում ներկրվող ապրանքներով է ապրում, ի վերջո, կթանկանան դրանք, կընկնի բնակչության գնողունակությունը: Դրա հետևանքով կկրճատվի ապրանքների ֆիզիկական ծավալը, և, ի վերջո, կստանանք տնտեսական կոլապսի շղթայական ռեակցիա:

– Ձեր կարծիքով՝ բենզինի և ծխախոտի ակցիզային հարկերի բարձրացումը ինչքա՞ն ժամանակ է ի զորու թեկուզ ժամանակավոր արդյունք տալ:

– Բայց ինչպիսի՞ արդյունք: Պարզապես ևս մի քանի ամիս կշեղեն ժողովրդի ուշադրությունն օրախնդիր հարցերից: Հետո բոլորը կհամոզվեն, որ դա ելք չէ: Անհեթեթություն է արհեստականորեն դրամի կուրսը պահպանել ժողովրդի գնողունակության անկման գնով և դա անվանել մակրոտնտեսական կայունություն:

– Իսկ առաջնահերթ ի՞նչ քայլեր են անհրաժեշտ:

– Կառավարությունը պետք է հրաժարական տա: Ամենակարճ ժամանակում անհրաժեշտ է ներկայացնել ժողովրդի համար հասկանալի հակաճգնաժամային ծրագիր, որպեսզի մարդկանց համար պարզ լինի, թե հանուն ինչի՞ են զրկանքներ կրում:

– Սակայն շարքային քաղաքացու համար ի՞նչ տարբերություն, թե հանուն ինչի է կրում անվերջ զրկանքներ:

– Բայց այսօր մարդիկ դարձյալ զրկվում են ամենակարևորից՝ հույսից և հավատից: Այդ է վկայում, թեկուզ, արտագաղթի նոր հզոր ալիքը: Առանց հույս ու հավատի ոչ մի երկիր ոտքի չի կանգնում...

– Այսինքն՝ առաջնահերթ խնդիրը վստահության վերականգնո՞ւմն է: Ինչպե՞ս:

– Մի պարզ ճանապարհով. եթե ամեն ոք, առավել ևս պետական այրերը, գիտակցեն իրավիճակը և այդ իրավիճակում իրենց տեղը, անելիքն ու քաղաքացիական պարտքը: Մեր քաղաքացիների համար անհասկանալի է այս կառավարության որդեգրած գործելակերպը, որովհետև տարիներ շարունակ նույն Լևոն Բարխուդարյանը, նույն Արմեն

Դարբինյանը, նույն Գագիկ Շահբազյանը, նույն Լեոնարդ Պետրոսյանը մեզ և, ի դեպ, արցախցիներին գրեթե նույն հրաշապատում հեքիաթներն էին ասում, ինչ այսօր, իսկ կենսամակարդակը շագրենակաշվի պես փոքրանում է:

Հայ մարդը վերջապես պետք է հասկանա՝ ի՞նչ հասարակարգում է ապրում, իր զավակներն ի՞նչ են ժառանգելու իրենից: Որ «ֆայլաբազարում» աշխատա՞նք մուրա կամ հողը մշակի ու ոչինչ չստանա՞...

– Ձեր խոսքում շատ են զուգահեռները Վազգեն Սարգսյանի հայտնի հեռուստաելույթի հետ...

– ... Մի մեծ տարբերությամբ. երբ իշխանության ես գալիս, դեռ միևչև ընտրությունները պարտավոր ես արձանագրել իրավիճակը, որպեսզի ընտրություններից անմիջապես հետո ձեռնարկվեն առաջին գործնական քայլերն իրավիճակը շտկելու ուղղությամբ:

– Իսկ ի՞նչն էր պատճառը, որ իշխանության եկող ուժը պատրաստի ծրագիր չուներ:

– Հիմնական պատճառը հետևյալն է. երաժշտությունից լավ հասկացողը ամենևին էլ պարտադիր չէ, որ կարողանա լավ դիրիժոր լինել և ղեկավարել նվագախումբը: Այդտեղ անհրաժեշտ են համապատասխան գիտելիքներ, հմտություն և փորձ: Ցավոք, այսօրվա կառավարիչներն այդպիսին չեն:

– Այսինքն՝ «Միասնություն» դաշինքում առկա էր կադրային սով դեռևս նախընտրակա՞ն շրջանում:

– Այո՛, անշուշտ: Նրանք չկարողացան վեր կանգնել կուսակցական-շահադիտական նեղ մոտեցումներից: Արդյունքում՝ ունեցանք պաշտպանության հաջողված նախարար, բայց ունեցանք ոչ իրազեկ վարչապետ: Այնտեղ կորցրեցինք և այստեղ չգտանք:

Բայց ամենակարևորը. մենք իրավունք չունենք լինել անտարբեր: Չպետք է լինենք ստոր դիտորդի դերում, որը հետևում է, թե ինչպես է ձախողվում այս կամ այն կառավարությունը և հետո չարախնդա: Տվյալ դեպքում ձախողման գինը շատ ծանր է լինելու ոչ թե կառավարության, այլ հայոց պետականության համար:

Իսկ պետական որոշ երևելի այրեր հենց այդ ստոր դիտորդի դերում են՝ փոխանակ տագնապ հնչեցնեն, սպասում են, որ այս կամ այն գործիչը ձախողվի, իսկ հետո տոնեն իրենց պյուրոսյան հաղթանակը: Այդպես շարունակել չի կարելի:

Հարցազրույցը վարեց
Հովհաննես Գալաջյանը

«Իրավունք», 20 – 26.VIII.1999:

Այս ամենի հետևում կանգնած են նախկին հանցավոր ռեժիմի պարագլուխները

Ն. Փաշինյանի դատավարությունից հետո նախկին գլխավոր մաքսապետ Երջանիկ Աբգարյանը «Առավոտի» էջերում մի շարք ՀՀԾ-ականների հետ ստանձնեց փրկության գործը: Ինչ վերաբերում է Ն. Փաշինյանին, ապա նա հայտարարեց, որ ժամանակին իր նյութը հրապարակել է՝ վկայակոչելով Ե. Աբգարյանին: Այդ ամենը մեկնաբանելու խնդրանքով դիմեցինք Արտաշես Գեղամյանին:

– Երիտասարդ զրպարտիչ Նիկոլ Փաշինյանի բարբաջանքին, թերևս, կարելի էր չարձագանքել, սակայն խնդիրն ավելի բարդ է, քան կարող է առաջին հայացքից թվալ:

Պետական մեղադրողի կողմից ներկայացված փաստարկները հաստատվեցին դատաքննության ընթացքում, և դա վկայում է, որ մենք գործ ունենք շարքային զրպարտչի հետ: Այդ հանգամանքը, չգիտես ինչու, դրվում է մի կողմ, և փորձում են հարցն արհեստականորեն տեղափոխել քաղաքական ոլորտ:

Ամեն ինչ շատ հասկանալի է և պարզ՝ սեպտեմբերի 9-ին սպասվում է բազմաթիվ սպանություններ կազմակերպելու մեջ մեղադրվող Վանո Սիրադեղյանի դատավարությունը: Մարդ, ում արյունոտ ձեռքերով ֆինանսավորվել են մասնավորապես «Օրագիր» և «Առավոտ» թերթերը: Եվ այս պարագայում ուզում են լայն հասարակության մոտ կարծիք ստեղծել, որ այժմ էլ կան քաղաքական դատավարություններ: Իրենք իրենց էլ հակասում են:

Այդ ուժերը երկակի խնդիր են լուծում՝ պատրանք ստեղծել, որ Հայաստանում տեղի են ունենում քաղաքական հետապնդումներ, իսկ այնուհետ ցանկացած վճիռ Վանո Սիրադեղյանի վերաբերյալ դիտել ոչ թե քրեական, այլ քաղաքական դաշտում: Այսօր որոշակի տարատեսակի մարդիկ հերթագրվում են ՀՀԾ ընդունվելու, որ հետո «հետապնդվող» ՀՀԾ-ականի ցուցանակի ներքո քաղաքական ապաստան խնդրեն օտար երկրներում:

Այս ամենի հետևում կանգնած են Վանո Սիրադեղյանը, նախկին հանցավոր ռեժիմի պարագլուխները: Ովքե՞ր են շտապում համալրել Փաշինյանի պաշտպանների շարքերը՝ Բաբկեն Արարքցյանը, Արա Սահակյանը, Կարապետ Ռուբինյանը, «Նաիրիտը» հիմնահատակ քայքայած Գագիկ Ներսիսյանը, Լ. Տեր-Պետրոսյանի խնամի Դավիթ Շահնազարյանը, Թ. Տեր-Պետրոսյանի սանիկ Վահագն Խաչատրյանը, Վանոյի քաղաքապետարանում տեղակալ և քենակալների մոտ աշխատավարձ ստացող Վիգեն Խաչատրյանը, Երջանիկ Աբգարյանը, ում պաշտոնավարության տարիների ընթացքում

տարեկան 30 մլրդ դրամի չափով մաքսային մուտքերն ավելի պակաս էին: Մի՞թե պարզ չէ, որ այդպիսի խոշոր չափերի մաքսանենգությունը հնարավոր էր միմիայն ոստիկանության հովանու ներքո, հետևաբար՝ շատ բնական է, որ Երջանիկը պաշտպանում է Վանոյին, իսկ Վանոյի կողմից ֆինանսավորվող թերթերը հենվում են Երջանիկի եզրակացության վրա:

Ազգի առողջ կամքն ուզում են կազմալուծել և քաղաքական զազրախոսությունների միջոցով հասարակության ուշադրությունը շեղել կատարված լրջագույն հանցագործություններից: Վարչապետն ԱԺ վերջին նիստում պատգամավորներին կոչ արեց ներկայացնել թալանի փաստեր և խոստացավ *«թալանչիներին մեկընդմիշտ պատասխանատվության ենթարկել»:*

Երջանիկ Աբգարյանի պաշտոնավարության օրոք յուրաքանչյուր տարի մուտք չի գործել 17-30 մլրդ դրամ: Դրա վառ ապացույցն է այն, որ Երջանիկ Աբգարյանից հետո առևտրի շրջանառությունն էական փոփոխություններ չի կրել, բայց հաջորդ տարի մաքսային մուտքերը 20 մլրդ դրամով ավելացան: Ի՞նչ է, մեր ժողովուրդը Երջանիկից հետո սկսեց ավելի շա՞տ խմիչք օգտագործել, ավելի շա՞տ ծխել... Ահա՛ բացահայտ հանցագործություն, որ կոծկվում է, տարիներ շարունակ «չի բացահայտվում», և բնական է, որ այդ հանցագործության թիկունքում կանգնած ՀՀԾ-ի պարագլուխները փորձում են անվանարկել այն մարդկանց, ովքեր տարիներ շարունակ մատնացույց էին անում այդ հանցագործությունները:

Փաշինյանի գործում քաղաքական պատվեր իրոք կա, սակայն այդ պատվերն իջեցվել է նրա թիկունքում կանգնած ՀՀԾ-ի պարագլուխների կողմից: Պատվերը կատարողը քաջ հայտնի երիտասարդ զրպարտիչն է, որը փոխանակ ներողություն խնդրի իր՝ տղամարդուն անվայել զրպարտության համար, դեռ երես ունի հեռուստաէկրանից խոսելու:

Ժամանակներն են այդպիսին: Գրքի գողը գող չէ, բայց երեխաներից գիրք գողացողը, ինչպիսին էր Աշոտ Բլեյանը, բնականաբար, գող է: Տեսե՛ք, այդ հանցագործությունն էլ են ուզում արհեստականորեն քաղաքականացնել: Բնականաբար, գրչով իրենց պաշտպանած տարրական զրպարտությունը նույնպես փորձելու են տեղափոխել քաղաքական ոլորտ:

Անշուշտ, կփորձեն առանց միջոցների խտրության դիմել շանտաժի և վարկաբեկումների, սակայն արյունարբու պարագլուխների խոսքը չի կարող ներազդել առողջ բանականություն ունեցողների վրա՝ նրանց գործերը բոլորին քաջ հայտնի են:

«Իրավունք», 3 – 9.IX.1999:

Դա ոչ թե անձի, այլ ԱԺ-ի հեղինակության հարց է

Սեպտեմբերի 15-ին «Իրավունք և Միաբանություն» խմբակցությունն ԱԺ ամբիոնից հնչեցրեց հայտարարություն, որտեղ մասնավորապես ասված է. «Ըստ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի կազմավորման պահանջների, ազգային պատվիրակությունը պետք է արտահայտի խորհրդարանի քաղաքական պատկերը: Հայաստանի Հանրապետության ազգային պատվիրակությունը կազմվել է, ըստ մեզ, այդ սկզբունքի խախտումով, քանի որ պատվիրակության մեջ չի ընդգրկված 3-րդ տեղը զբաղեցնող քաղաքական ուժը՝ «Իրավունք և Միաբանություն» դաշինքը, ուստի խախտվում է խորհրդարանի քաղաքական պատկերը ներկայացնելու պահանջը: Հայտնի է, որ վերջերս Հայաստանի պատվիրակության նախորդ կազմի առնչությամբ տեղի են ունեցել ոչ պատվաբեր տարակարծություններ: Կարծում ենք, որ կրկին անգամ խախտելով վեհաժողովի պահանջները՝ հարվածի տակ կարող է դրվել Հայաստանի վարկը և հետագա անդամակցությունը Եվրախորհրդին»:

Հայտարարության դրդապատճառները մեկնաբանելու համար դիմեցինք խմբակցության ղեկավար Արտաշես Գեղամյանին:

– Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի կանոնադրությամբ ուղղակիորեն արձանագրված է, որ հրավիրյալի կարգավիճակ ունեցող ազգային պատվիրակությունները ձևավորվում են՝ ելնելով խորհրդարանում ներկայացված կուսակցությունների տեսակարար կշռից: Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերջնական պաշտոնական տվյալների, «Իրավունք և Միաբանություն» դաշինքն իր քվեներով երրորդն է, հետևաբար՝ երրորդին շրջանցելով և չորրորդին ներգրավելով, ինչպես նաև քաղաքական որևէ ուղղվածություն չունեցող պատգամավորական խմբից ներկայացուցիչ ներգրավելն առնվազն անհասկանալի է: Ավելին՝ համոզված եմ, որ այդ հանգամանքն անհապաղ կօգտագործեին այն ուժերը, որոնք 1 տարի առաջ բողոքի մեծ աղմուկ բարձրացրին դարձյալ նման հարցի հետ կապված, ցավոք սրտի, իրավացի լինելով:

Երկրորդ դրդապատճառը հետևյալն է՝ «Իրավունք և Միաբանություն» դաշինքը բաղկացած է 4 կուսակցություններից՝ «Սահմանադրական իրավունք միություն», «Ազգային Միաբանություն», «Արցախ-Հայաստան» և «Գարդմանք»: Թվում է, թե ԱԺ-ն ինքը պետք է շահագրգռված լիներ, որ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում հնչեղ լիներ «Արցախահայաստանի» խոսքը, լսելի լիներ «Գարդմանքում» ներգրավված

փախստականների խոսքը... Սինչդեռ ԱԺ նախագահին անհասկանալի պատճառներով փաստի առաջ են դնում, որ այդ շեշտակի քաղաքականացված խմբակցությունը դուրս է մնում պատվիրակության կազմից: Այդպես չի կարելի, ի վերջո, դա ոչ թե անձի, այլ ԱԺ-ի հեղինակության հարց է:

Եվ երրորդը՝ չի կարելի անտեսել խմբակցության թիկունքում կանգնած 85 հազար ընտրազանգվածը:

– Իսկ ի՞նչն էր պատճառը, որ Հանթսմանի հետ կապված քվեարկության ժամանակ խմբակցությունը դեմ քվեարկեց:

– Հարցը ոչ պատրաստ վիճակում էր ներկայացված ԱԺ-ին: Հարցն առնչվում էր սեփականաշնորհման ռազմավարության և շինարարական ինդուստրիայի զարգացման հայեցակարգի բացակայության հետ, սակայն և ոչ մի հարցի ոչ մի ստույգ պատասխան չստացանք: Մասնավորապես, վտանգ կա, որ երկաթբետոնե կոնստրուկցիաներ արտադրող բազմաթիվ ձեռնարկություններ, ունենալով մեծ պարտքեր, կարող են սնանկ ճանաչվել և կազմալուծվել, և այդ պայմաններում մի գործարան հանձնվում է օտարերկրացու:

Ճիշտ է, պրն Հանթսմանը դրական մոտեցումներ ունի, բայց կամա թե ակամա դրանով մենք նրան դարձնում ենք մենաշնորհի տեր: Ենթադրենք, հանգամանքների բերումով Հանթսմանը վաճառեց այդ գործարանը: Այդ դեպքում մենաշնորհի նոր տերերը կարող են, ասենք, հրաժարվել Արարատի կամ Հրազդանի ցեմենտից և ցեմենտը բերել Ռուսաստանից, և այդ դեպքում հարվածի տակ կընկնեն նաև այդ գործարանները: Կարող են նաև պատրաստի արտադրանքը՝ երկաթբետոնե կոնստրուկցիաները, վաճառել մենաշնորհային բարձր գներով, և դրանով իսկ թանկացնել շինարարությունը, ինչը կհանգեցնի շինարարության ծավալների կրճատմանը:

Այդ և նման հարցերն ուղղակիորեն անտեսվեցին: Ավելին՝ ոմանք պնդում էին, թե նման հարցեր բարձրացնելով՝ մենք կխրտնեցնենք արտասահմանյան ներդրողներին: Սինչդեռ խրտնեցնողը ոչ թե հարցերի հանգամանալի քննարկումն է, այլ ԱԺ-ում առկա ագրեսիվ-հնազանդ մեծամասնությունը, որն առանց խնդրի մեջ խորանալու պատրաստ է ընդունել ցանկացած կամայական, ծանր հետևանքներով հղի որոշում:

Եթե հարցերը խորությամբ քննարկվեին, պարզություն կմտցվեր ներդրողների համար, և թեկուզ նույն Հանթսմանին պարզ կլիներ, թե ինչպիսի հեռանկար ունի շինինդուստրիան Հայաստանում, և դա կնպաստեր ավելի խոշոր ներդրումներ անելուն:

Մեր խմբակցությունը, վերլուծելով հարցը, եկավ եզրակացության, որ այն հում է, որ օրինագիծը հիմնական հարցադրումների պատասխանը չի տալիս, և այդ պատճառով դեմ քվեարկեցինք:

Հ. Գալաջյան

«Իրավունք», 17 – 23.IX.1999:

Ուս ուսի տված...

«Օրագիր» օրաթերթի խմբագրի դատավարությունն ակնհայտորեն շեղվել է գործի ընդհանուր տրամաբանությունից: Իրականում զրպարտչությունը կատարվել է մաքսային վարչության նախկին պետ Երջանիկ Աբգարյանի կողմից, և հոկտեմբերի 14-ին Վերաքննիչ դատարանը նրան հնարավորություն է ընձեռելու իրական ապացույցներով փաստել, որ ԱԺ պատգամավոր Արտաշես Գեղամյանի կինը 1993 թ. կատարել է մաքսանենգություն: Ինքը՝ Արտաշես Գեղամյանը, «Երկիր»-ին տեղեկացրեց, որ այսօր էլ պատրաստ է դատարանից ետ վերցնել հայցադիմումը...

– Եթե Նիկոլ Փաշինյանը հրապարակավ հայտարարի, որ ինքը զրպարտել է, եթե հրապարակավ ասի, թե ովքեր են հարկադրել իրեն նման զրպարտությամբ հանդես գալ, բնականաբար նրա հետ ոչ մի անձնական խնդիր այլևս չեմ ունենա: Եթե նա ասի, ով է իրեն վարձատրել, ինչ վարձատրություն է ստացել, և այդ քաղաքական պատվերը ում կողմից է իջեցվել, ավելին՝ պատրաստ եմ նույն պատվիրատուների դեմ Նիկոլ Փաշինյանի հետ միասին պայքարել, որովհետև երիտասարդ լրագրողին այսօրվանից զրպարտչի ուղին մատնանշելը, շատ չարամիտ է: Խնդիրը շատ պարզ է: Տարիներ շարունակ Արտաշես Գեղամյանն իր հրապարակային ելույթներում ասել և ասում է. Երջանիկ Աբգարյանի և Լևոն Կիզոկյանի՝ մաքսային վարչությունը տնօրինելու տարիներին Հայաստանի բյուջեն միլիարդավոր դրամ կորուստ է ունեցել: Գործել է մի քողարկված բանդա՝ մաքսային վարչության և ՆԳ նախարարության միջև: Երբ ես հրապարակավ արծարծում եմ այս հարցերը, ապա ի հայտ են գալիս պատահականորեն դատարանից խուսափած զանազան աբգարյաններ, կիզոկյաններ: Սա փորձ է՝ լռեցնելու Արտաշես Գեղամյանին:

– Տպավորությունն այնպիսին է, թե Նիկոլ Փաշինյանը գործի հետ որևէ կապ չունի. լրագրողը հրապարակել է այն, ինչ իրեն հայտնել է Երջանիկ Աբգարյանը:

– Երբ մարդու արժանապատվությունը ոտնահարող լուրեր են լինում, ապա թող լրագրողը բարի լինի գրավոր իրեղեն ապացույցներ պահանջել: Իրենց հաշվարկն ինձ համար հասկանալի է և պարզ. երբ տեսնում են արդարադատությունը կամաց-կամաց ուզում է 1991-1997 թթ. մղձավանջի հետևում կանգնած հանցավոր գործիչներին ջրի երես հանել, ապա այդ հարցերում հետևողական մարդկանց սկսում են նման ձևերով պախարակել: Իմ դեպքում հաշվարկը սխալ է կատարվել, գնալու եմ մինչև վերջ: Արդարությունն իմ կողմն է և հաղթելու եմ:

– Հոկտեմբերի 6-ին Վերաքննիչ դատարանում Լևոն Կիզոկյանը Ձեր կնոջը՝ Անուշ

Պլուզյանին, կրկին փորձեց նմանեցնել այն մարդուն, որից առգրավվել է չհայտարարագրված երկու աղամանդ:

– Տեղյակ եմ: Ամենաանհեթեթությունն հենց դա է. այդ թվականին ո՛չ ես, ո՛չ իմ տիկինն արտասահմանում ընդհանրապես չենք եղել: Հիմա նրանք իրենց գցեցին ծուղակը: Եթե, իրոք, մաքսանենգություն տեղի է ունեցել, և որի համար, ընդունենք, արգելել են արտասահմանի մուտքը, կնշանակի մեծ չափերի մաքսանենգություն է: Եթե մեծ չափերի մաքսանենգություն է եղել, կնշանակի պարտադիր կերպով պետք է գրանցվեր՝ ի՞նչ գումար է եղել: Հետո պետք է այդ գումարը հանձնվեր գանձապետարան: Այդ բոլորը չի արվել, որովհետև փաստը տեղի չի ունեցել: Անգամ եթե փաստը տեղի է ունեցել, կնշանակի նույն Երջանիկ Աբգարյանը և Լևոն Կիզոկյանը քաղաքացուց բան են առգրավել և ապա յուրացրել: Ակամայից իրենք դառնում են հանցագործ: Պատվեր տվողների հաշվարկները սխալ են: 1995-ից ասել եմ և շարունակելու եմ ասել, որ Երջանիկ Աբգարյանը և մաքսային այլ թալանչիներ պետք է դատվեն: Էդ ո՞նց եղավ, որ այդ փաստը 1993 թ. գիտեին, միայն վերջին խորհրդարանական ընտրությունների ժամանակ հիշեցին: Ցավոք, մենք ականատես ենք հետևյալին. երիտասարդ լրագրողն արհեստականորեն դառնում է զենք խոշոր չափերի հանցագործություն կատարած նախկին պետական այրերի ձեռքում: Բնականաբար, Արտաշես Գեղամյանը չի ցանկանա, որ երիտասարդ լրագրողը «նստի»: Բայց չեմ ցանկանում նաև անպատիժ մնան այն մարդիկ, որոնք լրագրողին փորձանքի են բերել:

Զրուցեց
Թաթուլ Հակոբյանը

«Երկիր», 8.X.1999:

Հայաստանը պետական գաղափարախոսության և Վաշինգտոնյան կոնսենսուսի միջև

«Իրավունք և Միաբանություն» դաշինքի և խորհրդարանական խմբակցության նախագահ Արտաշես Գեղամյանի հետ այս հարցազրույցը նպատակ էր հետապնդում պարզաբանել խորհրդարանում արմատական ընդդիմության մոտեցումները Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ: Սակայն զրույցը միայն դրանով չսահմանափակվեց:

– Պարոն Գեղամյան, վերջին շրջանում Հայաստանի իշխանական շրջանակներից հաճախակի են դարձել հայտարարությունները հայ-թուրքական հարաբերությունների բարելավման վերաբերյալ: Ձեր դաշինքը ի՞նչ վերաբերմունք ունի այս հարցի շուրջ:

– Հայաստան-Թուրքիա հարաբերությունները չի կարելի առանձնացնել նոր աշխարհակարգի ձևավորման քաղաքականությունից: Երկու տարի առաջ ԱՄՆ-ում լույս տեսավ Զ. Բժեզինսկու «Շախմատային մեծ տախտակը» աշխատությունը: Այն ուղղակիորեն ուրվագծում է աշխարհի քաղաքական քարտեզը 21-րդ դարում: Նշվում է Ռուսաստանը երեք պետությունների մասնատելու, Կովկասի անջատման մասին և այլն:

Այդ տեսական թեզը գործնական քաղաքականությամբ կյանքի է կոչվում ներկայումս Կովկասում և պատահական չէ, որ Բժեզինսկին Էդ. Շևարդնաձեի խորհրդականներից մեկն է և հաճախակի է լինում Թբիլիսիում: Այս քաղաքականության մասն է կազմում Ադրբեջանի հետ կնքված նավթային գործարքը: Որպես վերջնական նպատակ ԱՄՆ-ը ձգտում է Կովկասն ու Կենտրոնական Ասիան իր և Թուրքիայի ազդեցության ոլորտն ընդգրկել: Դրան է ծառայում Բաքու-Ջեյհան նավթամուղային ծրագիրը. Կենտրոնական Ասիայի և Ադրբեջանի նավթային պաշարները պետք է արտահանվեն Արևմուտք՝ Ռուսաստանը շրջանցող ճանապարհով: 14 պետություններ երեք միլիարդ դոլարի ներդրում են իրականացրել միայն Ադրբեջանում: Սա նշանակում է, որ Ադրբեջանը դառնում է Արևմուտքի քաղաքական և տնտեսական լուրջ շահագրգռությունների գոտի:

Եթե վերն ասվածն ամփոփելու լինենք, այս բոլոր ծրագրերը լիովին տեղավորվում են Բժեզինսկու տեսական թեզերի սահմաններում: Խնդիր կա ձևավորել միաբևեռ աշխարհ՝ ԱՄՆ-ի բացարձակ գերիշխանությամբ: Այս խորապատկերի վրա պատահական չեն ո՛չ հարավսլավական հակամարտությունը, ո՛չ էլ ներկայիս պատերազմը

Հյուսիսային Կովկասում:

– Ի՞նչ դերում է Հայաստանը:

– Եթե աշխարհը պետք է ընթանա ժողովրդավարական ճանապարհով, ապա չափանիշը պետք է լինի այժմ ճգնաժամային վիճակում գտնվող, բայց ինտելեկտուալ ներուժ և պատմություն ունեցող ժողովուրդների զարգացումը: Հայաստանն այս իմաստով լուրջ փորձաքար է այդ ճանապարհին, որովհետև ժողովրդավարություն հանուն ժողովրդավարության չի լինում: Չի կարելի խոսել ժողովրդավարական առաջընթացից, եթե բնակչության 90 տոկոսն աղքատ է: ԱՄՆ-ը և Եվրոպան մինչ օրս չվճարված բարոյական և նյութական պարտք ունեն հայությանը. չի դատապարտվել 1915 թվականի եղեռնագործությունը, մինչ օրս Թուրքիան շարունակում է Հայաստանի շրջափակումը: Այսպիսով, նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում Հայաստանի զարգացման որևէ միտում առ այսօր չի նկատվում: Մենք ինքներս էլ համախմբված չենք և պատրաստ չենք դիմագրավելու արտաքին ճնշումներին, որոնք կարող են լինել այս ռազմավարության կենսագործման դեպքում:

– Ո՞րն է ձեր հետևությունը:

– Երկու-երեք ամիս առաջ Վազգեն Սարգսյանը հայտարարեց, որ մենք ունենք ներքին պաշարներ և կարող ենք առանց արտաքին վարկերի ապրել: Մեկ-երկու ամիս հետո տեղի ունեցավ հակառակը՝ սկսեցինք ՄԱՀ-ից և ՀԲ-ից նորից խնդրել-աղաչել այդ նույն վարկերը:

Հայաստանում այսօր բացակայում է պետական գաղափարախոսությունը: Դա հանգեցնում է նրան, որ երկու ամսում ծայրահեղ իրարամերժ հայտարարություններ են արվում: Մինչդեռ յուրաքանչյուր պետություն նման է ընտանիքի: Հայաստանը հայության ընտանիքն է և, եթե մենք առաջընթաց ենք ուզում ունենալ, ապա պիտի տեսնենք՝ ովքեր են այդ ընտանիքի անդամները, ինչ պատկերացումներ ունեն, ինչպիսին է ընտանիքի ամբարի պարունակությունը և ինչքանով է համապատասխանում ցանկություններին: Դրան համապատասխան աշխարհի զարգացման ուղղությունների մեջ պետք է մեր ճանապարհն ընտրենք:

– Դուք այդ ճանապարհը գիտե՞ք:

– Ես գիտեմ, որ չի կարելի ինը տարի անընդհատ փորձարկումներ անել, մանավանդ, երբ իշխանության գլուխ գտնվող մարդկանց մեծ մասն իրեն սպառել է: Ճգնաժամը չի կարող հաղթահարել այն թիմը, որն ինքն է երկիրը ճգնաժամի մեջ մղել:

– Դե հասկանալի է, ընդդիմադիր եք, բայց քննադատելուց բացի կոնկրետ ելք կարո՞ղ եք ցույց տալ:

– Վարչապետը պետք է քաղաքական վճռականություն ունենա հրաժարվելու իր բոլոր թիմակիցներից, բացառությամբ 1-2 մարդու, որոնք պախարակված չեն թալանի դրոշմով:

– Եվ ո՞ւմ պետք է բերի:

– Հարցն այդքան նեղացնել չի կարելի: Ճիշտ քաղաքականություն պետք է ընտրել:

Եվ այդ քաղաքականության կողմնակիցներն ու հեղինակներն իրենք դա կյանքի կկոչեն:

– Այսինքն՝ դա պետք է լինի ներկայիս ընդդիմությո՞ւնը:

– Այո, մենք գիտակցելով ամբողջ իրականությունը, պատրաստ ենք պատասխանատվություն վերցնել: Պետք է հենվել այլընտրանքային ճանապարհ ցույց տվողների վրա:

– Ամեն դեպքում ձեր առաջարկած ճանապարհն էլ կարծես թե չի երևում: Ինչպե՞ս պետք է երկիրը դուրս բերել տնտեսական ճգնաժամից, որպեսզի արտաքին դիմադրողականությունն էլ ուժեղանա, ինչպես դուք եք ասում:

– Յուրաքանչյուր քաղաքական գործիչ իրական վիճակի մասին պետք է բազային տվյալներ ունենա, որ կարողանա ուղղությունը ցույց տալ: Իսկ այդ տվյալները յոթ փակի տակ են: Հասկանալի է, թե ինչու: Որովհետև ՄԱՀ-ից և ՀԲ-ից վարկեր ստանալու համար հարկադրված են եղել ասել, որ Հայաստանը տարեկան 5-7 տոկոս աճ է ունենում: Փոխանակ ճգնաժամի իրական պատճառները պարզելու և նոր միայն ելք որոնելու, արհեստական աճի հետևից են ընկած: Դրան գումարվում է հավատի ճգնաժամը և որպես հետևանք՝ արտագաղթը: Սինչդեռ հասարակությունը, մարդիկ պատրաստ են բերել իրենց մասնակցությունը երկիրը ճգնաժամից դուրս քաշելու գործում: Բայց նրանց այդ պատրաստակամությունը չի օգտագործվում: Ճանապարհ ցույց չի տրվում, չեն ասում ինչ անեն, ճառ են ասում:

Մենք գիտեինք, որ Կարեն Դեմիրճյանի և Վազգեն Սարգսյանի առաջարկած ծրագիրը բերելու է ճգնաժամի խորացման, թեև տեսնում եմ, որ վարչապետը ձգտում ունի ինչ-որ բան փոխելու: Բայց նա գերի է դարձել իր շրջապատին և դրա արդյունքում ճիշտ ճանապարհը գտնել չի կարողանում: Մի կողմից՝ Լ. Տեր-Պետրոսյանի ընտրանին է, որ երկիրը հասցրել է այս վիճակին, մյուս կողմից՝ Կ. Դեմիրճյանի հետևից գնացած մարդիկ: Սինչդեռ նրանցից շատերն իրենց ղեկավարած ձեռնարկությունները չկարողացան աշխատեցնել, հարմարվել տնտեսական նոր պայմաններին:

– Ձեզ որ լսում եմ, ստացվում է միակ հայրենասերը դուք եք: Մի՞թե ուրիշ ոչ ոք այս երկրի համար չի ցավում, բացի ձեզանից:

– Ես երբեք այնքան հանդուգն ու անարդար չեմ լինի, որ ասեմ, թե Վ. Սարգսյանն ու Կ. Դեմիրճյանը հայրենասեր չեն: Երկուսն էլ ուզում են իրավիճակը փոխել, բայց չեն կարողանում:

– Այսինքն՝ գործող խաղի կանոններին չեն տիրապետո՞ւմ:

– Հարցը խաղի կանոնները չեն: Եթե ուզում ես դիմացինիդ հետ հավասարի իրավունքով խոսել, միայն զինանշանով ու դրոշով չպիտի ներկայացնես քո անկախությունը: Ձեզ տնտեսական քաղաքականություն պարտադրողին պիտի կարողանաս ասել. սիրելիս, ես քո խաղը կարդում եմ: ՄԱՀ-ի կանոնադրության մեջ գրված է, որ կազմակերպությունն աջակցում է շուկայական տնտեսություն ունեցող երկրներին: Պետք է նրանց կարողանանք ցույց տալ, որ տարբեր ճանապարհներ կան՝ որով ուզում եք աջակցեք: Ոչ թե պարզունակականացման հասցված Վաշինգտոնյան կոնսենսուսի գաղա-

փարը դնենք թևներիս տակ, կատարենք:

– Ի՞նչ է այդ Վաշինգտոնյան կոնսենսուսը:

– Դա աշխարհում մեկ միլիարդ մարդու էլիտար ապրուստն ապահովելու բանալին է, որ մնացած հինգ միլիարդն աշխատեն նրանց համար:

– Իսկ ավելի կոնկրե՞տ. թե չէ միլիարդի մասին շատ եք ասել:

– Սկզբունքները հետևյալն են. ազատականություն երկրի ներսում, տնտեսության մեջ, ներքին և արտաքին առևտրում, զանգվածային սեփականաշնորհում, դրամական զանգվածի խստիվ վերահսկում: Սա բերում է նրան, որ պետությունը տնտեսական գործընթացներում վերածվում է գիշերային պահակի: Եվ, օրինակ, հսկայական ֆինանսական ռեզերվներ ունեցող «Ֆիլիպ Մորիս» կոնցեռնն իր սիգարետներն ինքնարժեքից մի քանի անգամ պակաս գնով սկսում է վաճառել Հայաստանում: Երեք տարի այսպես աշխատելով՝ աստիճանաբար դուրս է մղում, ասենք, «Գրանդ Տոբակոն» և «Հայծխախոտը»: Արդյունքում ծխախոտագործությունը դադարում է գոյություն ունենալուց: Կամ մեր էսօրվա պեռոռոիկարացված կոնյակը Ռուսաստանում վաճառում են շատ թանկ գնով: Ժամանակ անց կասեն՝ չի վաճառվում, գործարանը վերապրոֆիլավորում ենք, հյութեր արտադրենք: Սա է Վաշինգտոնյան կոնսենսուսի քաղաքականության կիրառման հայկական տարբերակը: Այս ամենի հետևանքով երկիրը դառնում է ռեսուրսներ մատակարարող և զրկվում արտադրություն ունենալու իրավունքից:

Մենք ոտքի կանգնելու համար ներքին արտադրությունը պիտի խթանենք, դրա արդյունքում կավելանան աշխատատեղերը, կբարելավվի սոցիալական վիճակը, կկանխվի արտագաղթը: Բայց այս հարցերի լուծումն ապահովելը հնարավոր է պետական գաղափարախոսության և թիմի պարագայում, որը ճշտել է իր կողմնորոշման ռազմավարությունը, ունի զարգացման ծրագիր, հայեցակարգ և այլն:

Վահան Վարդանյան

«Հայոց Աշխարհ», 12.X.1999:

Սպաներից ոչ պակաս ողբում է Ռոբերտ Քոչարյանը

«*Իրավունք և Միաբանություն» ԱԺ պատգամավորական խմբակցությունն երեկ տարածել է հայտարարություն, որտեղ մասնավորապես նշվում է. «... Անհրաժեշտ ենք գտնում, որ ԱԺ-ն և կառավարությունը երկրի նախագահի հետ միասին պետք է շարունակեն և բազմապատկեն ահաբեկչության զոհ դարձած պետական գործիչների ջանքերը, որոնք ուղղված էին երկրում կարգ ու կանոն հաստատելուն, կոռուպցիայի դեմ պայքարելուն, նախկինում կատարված հանցագործությունների բացահայտմանը, իրավական, ժողովրդավարական պետության ստեղծմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը... Դատապարտում ենք հասարակության կողմից մերժված և իրենց վարկաբեկած ուժերի վերակենդանացման փորձերը, որոնք իրագործվում են այս ծանր և ողբերգական պահին երկրում ապակայունություն մտցնելու ճանապարհով: Պատահական չէ, որ նրանց հոգևոր առաջնորդները և քիկունքում կանգնած ուժերը մեղադրվում են ծանր քրեական և տնտեսական հանցագործությունների մեջ: Ակնհայտ է, որ այդ ուժերի և նրանց խոսափողը հանդիսացող ՋԼՄ-ների սադրիչ ակնարկները և ուշադրություն շեղելու ճիգերը՝ հայության տարբեր հատվածների միջև ստեղծելու ազգակործան բաժանում, նպատակ ունեն կյանքի կոչելու Արցախի հարցի լուծման՝ ժամանակին մերժված և դատապարտված ապազգային տարբերակը...»:*

Ներքաղաքական առկա իրավիճակը մեկնաբանելու խնդրանքով «Երկիր»-ը դիմեց «Իրավունք և Միաբանություն» ԱԺ պատգամավորական խմբակցության նախագահ Արտաշես Գեղամյանին:

– Պրն Գեղամյան, ողբերգությանը հաջորդել է ներքաղաքական հարաբերական, սպասողական անդորր, որը կարող է վտանգավոր զարգացումներ ունենալ: Ձեր մեկնաբանությունը...

– Առաջիկա 10-15 օրերին քաղաքական բոլոր ուժերից ակնկալում եմ ողջամտություն, նույնը՝ ուժային կառույցներից... Եթե մենք անկեղծ ենք մեր ողբերգության մեջ, պարտավոր ենք նահատակների պատգամները կյանքի կոչել: Ավաղ, գլխատվել են օրենսդիր և գործադիր իշխանությունները, և այս պահին անհապաղ պետք է համալրել այն:

Եթե «Միասնություն» դաշինքն ստանձնել էր քաղաքական ղեկավարությունը, իր ծոցից ընտրել արժանավոր զավակներին, որոնք գլխավորեցին ԱԺ-ն և կառավարությունը, ապա ահաբեկչությունը քաղաքական դաշտում և ոչ մի բան չպետք է փոխի,

այսինքն՝ «Միասնությունը» պետք է երաշխավորի ԱԺ նախագահ, տեղակալներ: Ապա ԱԺ նորընտիր ղեկավարությունը ՀՀ նախագահի հետ պետք է ձևավորի կառավարությունը: Եթե այս ճանապարհով չգնանք, կնշանակի՝ ահաբեկչությունը որոշակիորեն հնարավոր դարձրեց քաղաքական դաշտը ձևափոխել, ինչն անթույլատրելի է:

– Ողբերգությունից հետո քաղաքական դաշտում վակուում է, որը պետք է ինչ-որ ձևով լցվի...

– Ծանրագույն հարված հասցվեց ոչ թե «Միասնություն» դաշինքին, այլ հայոց պետականությանը: Վակուումի մասին խոսելը սխալ է և վտանգավոր: Վազգեն Սարգսյանը և Կարեն Դեմիրճյանն ունեն հետևորդներ, և այդ մարդկանց այսօր մենք պատրաստ ենք սատարել:

– Լուրեր են տարածվում, որ զինվորականությունը կրկին անգամ նախագահից պահանջել է ուժային երկու նախարարների և դատախազի հրաժարականը: Դուք վտանգ զգո՞ւմ եք:

– Սեփական բանակը չի կարող վտանգ ներկայացնել սեփական պետականությանը...

– Նկատի ունեի ՀՀ նախագահին, վտանգ Ռոբերտ Քոչարյանին...

– Խնդիրը երկու մասի բաժանենք: Առաջին՝ բարձր սպայակազմի զգացմունքները մարդկայնորեն հասկանալի են, կորցրել են իրենց ընկերոջը, հրամանատարին: Դրա հետ մեկտեղ նրանք պետք է հասկանան, որ Ռ. Քոչարյանը կորցրել է իր ընկերոջը, զինակցին, արցախյան ազատամարտի ընկերոջը: Սպաները պետք է հասկանան, որ իրենցից ոչ պակաս ողբում է Քոչարյանը, և իրենցից ոչ պակաս իր վրա պատասխանատվություն է կրում ՀՀ նախագահը: Երկրորդ՝ եկեք փորձենք արտասահմանցու աչքերով նայել այդ պահանջին. ինչ հետևանքներ կարող է ունենալ: Եթե ստեղծված վիճակում Քոչարյանը կատարում է սպաների կամքը, ապա հարևան Ադրբեջանում և Թուրքիայում դա կդիտվի զինվորական հեղաշրջում: Միջազգային հանրությունն այս դեպքում կարող է մեծ ճնշում գործադրել ՀՀ նախագահի և Հայաստանի վրա:

– Համազգային ողբի օրերին մամուլը, որոշ մեկնաբանություններ կատարվածի վարկածներ նշեցին: Ձեր ներքին զգացողությունն ի՞նչ է ասում...

– Պետական խնդիրներ քննարկելիս ներքին զգացողությունը պետք է մի կողմ դնել: Վարկածների մասին. դարեր ի վեր ժողովրդավարության կողմից առաջարկված իրավաբանական անսասան սկզբունքն անմեղության կանխավարկածն է: Մինչև մեղքը դատարանում ապացուցված չէ, – խոսքն ահաբեկիչների մասին չէ, խոսքը վարկածների մասին է, – վտանգավոր է, մարդկանց գրգռված վիճակն օգտագործելով, անձնական հաշվեհարդար տեսնել այս կամ այն քաղաքական հակառակորդի հանդեպ: Այստեղ մամուլի դերն անգնահատելի է: Ձեր թերթը՝ «Երկիր»-ը, ողջամիտ գտնվեց:

– Ռուսներն են սիրում կրկնել՝ «Ո՞ւմ էր ձեռնտու»: Այս համատեքստում ինչպիսի՞ ընթացք կունենան այն քրեական գործերը, որոնք անընդհատ ձգձգվում են:

– Միևնույն է, ցանկացած հանցագործություն վաղ թե ուշ պատժվելու է: Եթե որևէ մեկը կարծում է՝ իր կողմից կատարված քրեական կամ տնտեսական հանցագործությունը

խառնաշփոթ վիճակում կկարողանա քողարկել, չարաչար սխալվում է: Մինչև հանրապետության Սահմանադրության հիմնական երաշխավորն իրեն ամուր չզգա, օրենքը չի գերիշխի: Մեր ջանքերը նպատակաուղղված են հենց դրան:

Զրուցեց
Թաթուլ Հակոբյանը

«Երկիր», 2.XI.1999:

Փորձում են մթնոլորտ ստեղծել

– Կեղծ լուրեր են տարածվում, որ «Իրավունք և Միաբանություն» դաշինքի որոշ պատգամավորների ձերբակալել են: Ո՞ւմ է դա ձեռնտու, ովքե՞ր են կանգնած այդ բամբասանքների ետևում (Ս. Սահակյան):

– Թերևս, այդ լուրերը տարածողները հետապնդում են որոշակի նպատակներ, մասնավորապես՝ միտումնավոր փորձում են փսիխոզի մթնոլորտ ստեղծել: Դրանք այն մարդիկ են, ում պարբերաբար, հետևողականորեն մենք քննադատել ենք կատարված հանցագործությունների համար: Նրանք կօգտվեն այդ մթնոլորտից, կփորձեն հաշվեհարդար տեսնել մեզ հետ: Հետո կարդարանան, կասեն. «Չդիմացանք, կրքերը մեզ դավաճանեցին»: Դա արդեն ակնհայտ երևում է, դա ծրագրած քաղաքականություն է, մասնավորապես՝ հենց ահաբեկչության հաջորդ օրը «Ա1+» հեռուստակայանով Վանո Սիրադեղյանի թիմակից Վահագն Խաչատրյանն ուղղակիորեն ասում է, որ, այ, այնքան ասացին, որ վիճակը վատ է, վատ է, և այդ վատից դրդված ահաբեկչություն կատարվեց: Ճիշտ նույն ժամանակ հանրապետության կառավարության մամլո խոսնակ Տիգրան Հակոբյանը (որին ընթերցողը ճանաչում է «Հայք» թերթի խմբագիր լինելու ժամանակից, երբ Վանո Սիրադեղյանը ՀՀԾ-ի առաջնորդն էր և ֆինանսավորում էր թերթը) հեռուստաեթերով քարոզում է նույն միտքը: Եթե մենք փորձում ենք շրջանակն ընդլայնել, տեսնում ենք, որ նույն այն մարդիկ են, որոնք դատարանի կողմից հետապնդվում են քրեական կամ տնտեսական հանցագործությունների համար: Նրանց հաշվարկը դաժան է, բայց՝ հասկանալի ու պարզ: Խնդիրն ամենևին էլ այն չէ, որ նրանց սիրտը ցավում է: Ուղղակի վարձված մարդիկ են, որոնք միտումնավոր այդ քաղաքականությունն են վարում: Զավեշտը հասնում է նրան, որ ԱԺ նիստին մասնակցելիս զանգ են տալիս պետական լրատվամիջոց «Արմենպրեսից», «Սնարքից» և հարցնում՝ ճի՞շտ է, որ պարոն Բաբուխանյանն ու պարոն Գեղամյանը ձերբակալված են... Պարոններ Բաբուխանյանն ու Գեղամյանը դեռ այնքան այդ լուրերը տարածողների դատավարություններին կմասնակցեն, կմասնակցեն մի նկատառումով, որ պարտադիր գերիշխի օրենքը:

Ես ուղղակիորեն ուզում եմ այդ արկածախնդիր մարդկանց, ովքեր անգամ այս ողբի պահին փորձում են ուրիշի ձեռքերով նոր հանցագործություններ կատարել, զգուշացնել, որ սթափվեն: Ո՛չ վախեցնելը և ո՛չ էլ ահաբեկչության փորձերը կանցնեն: Եվ եթե հիմա նրանք այս մթնոլորտում ուզում են լռեցնել *«Իրավունք»* թերթը, *«Իրավունք և Միաբանություն»* խմբակցությունը, որ ԱԺ-ում հետ կանգնեն իրենց սկզբունքային դիրքերից, երբեք դա նրանց չի հաջողվի, ընդհակառակը, կատարվածը մեզ համոզում է, որ

մենք պետք է էլ ավելի հետևողականորեն կենսահույզ հարցերի մասին ԱԺ ամբիոնից հանդես գանք, երբեք ու երբեք չպետք է նահանջենք մեր սկզբունքային դիրքերից, և բոլոր կատարված հանցագործությունների իրական մեղավորները պետք է կանգնեն դատարանի առաջ:

Ի՞նչ գործ ունի Վանո Սիրադեղյանը պաշտպանության նախարարությունում, ի՞նչ գործ ունի Վահագն Խաչատրյանն ԱԺ-ում, փորձում են կրքե՞ր բորբոքել, հրահրե՞լ: Ես այդ ժամանակ սթափեցնող ելույթ ունեցա «Արմենիա» հեռուստակայանով և կոչ արեցի բանակի հրամանատարներին, որ տուրք չտան զգացմունքներին, թիկունքային առնետների կողմից հրահրվող սադրիչ գործողություններին, և, բարեբախտաբար, մենք ազգովին կարողացանք այդ խոչընդոտը հաղթահարել: Այդ կատարված ահաբեկչությունը վճռականություն հաղորդեց մեր դատախազությանը, ՆԳ և ԱԱ մարմիններին, և նրանք օրենքի ամենայն խստությամբ կձգտեն բացահայտել բոլոր՝ դեռևս չբացահայտված հանցագործությունները, պատժել մեղավորներին, այսինքն՝ կարվի այն, ինչի մասին «Իրավունք և Միաբանություն» դաշինքն ի սկզբանե հրապարակավ հայտարարել է: Կրկնում եմ՝ ոմանք կփորձեն ստեղծել փսիխոզի մթնոլորտ, որպեսզի ցասումն ուղղեն ոչ թե դեպի իրական հանցագործները, ոչ թե դեպի իրենց անձերը, այլ դեպի այն մարդիկ, ովքեր պայքարել են, պահանջել են պատասխանատվության ենթարկել հանցագործներին: Շատ ստոր գործելակերպ է, բայց վաղ թե ուշ, այս ամենը կպարզվի: Արդեն իսկ, որքանով ես եմ հասկանում, որոշակի առաջընթաց կա այս գործի քննության մեջ, դրա համար էլ նրանք շտապում են, ոչ մի միջոցից չեն խորշում...

Ռ. Թ.

«Իրավունք. հարց ու պատասխան», 9 – 15.XI.1999:

Нам не нужны великие потрясения, нам нужна великая Армения

Фракция "Право и Единение" до трагических событий конца октября была наиболее радикальной парламентской оппозицией. Голоса восьми депутатов фракции причиняли правительству немало головной боли. Не считаться с политической силой, показавшей на выборах в Национальное собрание третий результат, парламентское большинство не решалось. В то же время лидеры блока "Единство" сделали в свое время все, чтобы "Право и Единение" не получило портфель председателя постоянной комиссии. Стало очевидно, что коммунистов, дашнаков и национал-демократов руководство боится куда меньше, чем Гегамяна и его коллег.

30 октября, сразу после известных событий, лидеры партий, сформировавших блок "Право и Единение", объявили о своеобразном "моратории" на критику в адрес правительства. Члены парламентской фракции альянса решили во имя гражданского согласия на время воздержаться от политической борьбы. И вот наконец Гегамян вновь заговорил. Заговорил, поскольку считает, что условия "моратория" нарушены...

— В представленной премьером в парламенте программе правительства сказано, что 2000 год станет годом "создания базы для развития экономики". Надо понимать, самого развития пока не предвидится.

— Сегодняшнее состояние экономики Армении можно характеризовать как плачевное. Налицо предпосылки еще более серьезных проблем. Собственно, так оно и должно было быть. Еще в июне, баллотируясь на пост председателя Национального собрания, я от имени блока "Право и Единение" был уполномочен заявить, что проводимая экономическая политика ведет в тупик. Я аргументировал свою критику той модели, которой придерживаются сменяющие друг друга правительства на протяжении уже девяти лет. Провалено выполнение бюджета 99 года. Казалось бы, после этого правительство должно было согласиться рассмотреть альтернативные подходы при выработке бюджета на 2000 год. В основе этих

подходов должно было быть, во-первых, кардинальное изменение налоговой политики, в том числе резкое снижение налоговой нагрузки, что позволило бы предпринимателям, которые в тени, высветиться и стать законопослушными гражданами, своевременно уплачивающими налоги. Чрезвычайно важным аспектом должно было стать восстановление доверия инвесторов по отношению к государству. Думается, в сложившейся ситуации, когда из года в год мы наблюдаем дефицит бюджета на уровне 52-56 миллиардов драмов и одновременно дефицит торгового баланса, равный примерно 600 миллионам долларов, правительство должно было пересмотреть идеологию составления бюджета. Мероприятия, направленные на сокращение дефицита, не только защитили бы отечественного товаропроизводителя, но и стимулировали рост объемов производства. К сожалению, ничего подобного не происходит.

Республика, пребывающая в состоянии "ни мира ни войны", до сих пор не выработала концепции национальной безопасности. Это пугает. Россия еще в декабре 97 года утвердила концепцию своей безопасности. В силу быстро меняющихся реалий уже 5 января 2000 года в Москве были вынуждены полностью пересмотреть этот документ. У нас же не выработаны даже основные принципы, на которых должна базироваться концепция. У нашего правительства нет более или менее четких ориентиров, приоритетов. Трудно заметить последовательность производимых шагов, которые могли бы быть понятны народу, в выполнении которых каждый гражданин видел бы свое место, свое предназначение. На сегодняшний день валовой внутренний продукт на душу населения, производимый в республике, составляет немногим более пятиста долларов. Между тем десять лет назад эта цифра была в семь раз выше. Если страна будет развиваться теми темпами, о которых с таким воодушевлением говорят министры кабинета Арама Саркисяна, в лучшем случае через 20 лет мы достигнем уровня 1988 года.

Повторение прошлых ошибок стало нормой для новых правительств. Впрочем, чему удивляться? Те же самые люди докладывали о благополучном состоянии и радужных перспективах родной экономики и в 94-ом, и в 97-ом, и в 2000-ом. Хоть и очень не хочется верить в это, но очевидно, что у руля все та же команда. Как были аодовцы доминирующими в правительстве пять лет назад, так и остаются. Посмотрите, кто у нас занимает важные посты в кабинете министров. Ба, знакомые все лица...

Рассчитывать на благородство и принципиальность деятелей обанкротившегося аодовского режима не приходится. После начала судебного

процесса над Вано Сирадегяном стало очевидно, что это был преступный режим. Но люди, игравшие в той самой команде не последние роли, и сегодня отвечают в стране за пропаганду и идеологию, сидят на заседаниях правительства по правую руку от премьера. Все бразды правления в республике по-прежнему находятся в руках у Шагена Караманукяна — связующего моста между АОД и нынешним правительством. Я думаю, премьер немедленно должен освободиться от балласта, который не дает и не даст ему возможности развернуться. Если Арам Саркисян не избавит правительство от одиозных фигур прежнего режима, можно будет сделать два вывода: либо он совершенно не знает республику, которой руководит, и кадры, которые все еще удалось сохранить, но которые были не востребованы, либо он чем-то связан с АОД. И то и другое не говорит в его пользу.

— В последнее время некоторые средства массовой информации, быть может, с чьей-то подачи взялись за поиск персон, способных справиться с обязанностями президента. Параллельно предпринимаются целенаправленные попытки убедить общественность в том, что политическое поле страны совершенно пусто. По-видимому, задача состоит именно в том, чтобы на блеклом фоне искусственно подчеркнуть роль ничем пока не отличившихся конкретных личностей. Что вы думаете по этому поводу?

— Вызывает глубокую тревогу то легкомыслие, с которым некоторые люди вместо обсуждения насущных проблем социально-экономического развития страны, вместо разрешения актуальных вопросов обеспечения национальной безопасности затевают возню вокруг возможных кандидатур на пост президента. Создается впечатление, что все проблемы давно разрешены и остается только выяснить, готов ли уже Арам Саркисян стать президентом или еще нет. Меня очень разочаровывает то, что инициатива обсуждения подобных вопросов исходит от представителей блока "Единство", а теперь к ним присоединился и Вазген Манукян. Так и хочется задать господам несколько вопросов...

— Надо понимать, им уже представляется совершенно бесспорным то, что действующий президент сложит полномочия раньше намеченного срока.

— Блок "Право и Единение" в отличие от парламентского большинства неоднократно публично выражал президенту свое несогласие с экономической политикой, проводимой исполнительной властью, которую он возглавляет. У нас было много претензий, связанных и с внутриполитической ситуацией. Однако после трагических событий конца октября блок

“Право и Единение” первым выступил с заявлением о недопустимости перекраивания политического поля. Потому мы поддержали тогда и президента, и новое руководство парламента, и нового премьера. Считаем, что это было единственно верным решением. Нашему примеру последовали и другие партии, что по идее должно было предотвратить новую волну дестабилизации. Смехотворно поведение тех, кто искушает еще не состоявшегося премьера включиться в президентскую гонку. Искатели приключений от политики своим быстро меняющимся лжепочитанием ставят в неловкое положение премьера. Это свидетельствует о несерьезности людей, считающих себя политической опорой главы правительства. Подобные действия делают абсурдной всю систему государственной власти. В то время как народ продолжает жить своей жизнью, изнемогая от нищеты и неопределенности, люди, навязывающие подобные дискуссии, вроде как живут в другом мире, где нет никаких проблем. Треть населения страны покинула родину, толпы у посольств продолжают расти, а кто-то в это время увлечен разговором о том, что премьер-министр очень хорошо себя зарекомендовал и вполне справится с обязанностями президента. Это самая настоящая профанация.

— *Позвольте, но никто до сих пор не замечал попыток что-то противопоставить этой профанации. Кто же это должен делать, если не оппозиция, тем более блок “Право и Единение”, являющийся основной оппозиционной парламентской фракцией?*

— Пожалуй, ваш упрек справедлив. Но дело в том, что мы являемся ответственной оппозицией и стремимся придерживаться предложенного нами же шестимесячного “всеобщего моратория” на резкие критические оценки, расшатывающие хрупкую армянскую государственность, особенно уязвимую после 27 октября. Однако наша воздержанность, призванная помочь в деле преодоления кризиса власти, видимо, была неверно расценена. К сожалению, за время, прошедшее со дня формирования нового правительства, положение еще больше усугубилось. Более того, эта излишняя самоуспокоенность и самоуверенность властей предержащих, не подкрепленная положительными переменами в экономике и общественной жизни, очень настораживает. Если в самое кратчайшее время правительство и парламентское большинство не найдут в себе политической воли и не пресекут необдуманные действия оказавшихся в окружении людей с непонятными убеждениями и с сомнительным прошлым политических “сазандаров”, которые ведут их к пропасти, мы будем вынуждены выступить с соответствующим заявлением, где будут даны объективные и трезвые

оценки их деятельности, ввергающей общество в хаос гражданской войны.

— И все же что вы в принципе думаете о навязываемой идее о том, что на политическом поле Армении нет серьезной силы, способной взять на себя ответственность за судьбу страны, и личности, способной ее возглавить?

— Тут несколько аспектов. Те, кто об этом заявляют, действительно очень хотели бы, чтобы так оно и было, потому что люди, которых они хотят подтолкнуть к президентскому креслу, будут в их руках уже полными марионетками. Второй аспект — когда налицо голословные утверждения без глубокого анализа, единственное, о чем можно подумать — это то, что этим людям противопоказано заниматься политикой. Их образовательный уровень, опыт политической и организаторской работы, их социальный статус не вызывают доверия у подавляющей части народа. Это нувориши от политики, которые свои амбиции ставят выше государственности. Это типичный синдром, очень красочно отраженный в "Кадж Назаре". Что же касается силы, способной взять на себя ответственность... В июне 99 года блок "Право и Единение" выступил с конкретной программой вывода страны из кризиса. Мы полностью готовы принять на свои плечи всю политическую ответственность. Я не имею в виду нашу фракцию или нашу партию. Я имею в виду прежде всего тех высочайшего класса профессионалов, которые чудом уцелели в Армении, но которые сегодня не востребованы.

— Пару дней назад из уст главы одной оппозиционной партии прозвучали слова о том, что логическим продолжением конституционных изменений должны стать досрочные президентские выборы. Что вы об этом думаете?

— Надо задаться вопросом: что мы хотим и что нужно сейчас Армении? На мой взгляд, в первую очередь нужно законное завершение всех уголовных дел, которые уже находятся в стадии рассмотрения, плюс расследование по фактам, которыми сейчас занимается "энергетическая" комиссия парламента. До тех пор, пока судебные процессы по всем этим делам не будут завершены, ни о каких выборах не должно идти и речи. За этими делами стоят люди, которые на протяжении девяти лет грабили народ, кланы, сосредоточившие в своих руках гигантские состояния. В случае проведения в подобных условиях выборов нет гарантий того, что они не станут покупать голоса. Все мы знаем, как это делается. Блок "Право и Единение" в мае 99 г. на самом деле набрал не восемь процентов, как было объявлено, а все 22 процента. И сейчас будет то же самое. Те, кто ратует за проведение досрочных выборов, осознанно или невольно

льют воду на мельницу тех самых обанкротившихся в глазах народа кланов.

Конституционные изменения нужны. Но не надо так уж увлекаться этим делом. Конституция СССР 1936 года была самой демократичной по форме изложения, но за ее принятием последовал, как известно, 37-й год. Мне трудно понять, что мешает правительству успешно выполнять свои функции, оговоренные действующей, быть может, действительно несовершенной Конституцией. Какая конституционная норма мешает бороться с коррупцией? Какой пункт Основного закона не позволяет довести до конца расследование громких уголовных процессов? Где та статья, которая не дает возможности провести нормальные выборы органов местного самоуправления? Все это блеф, типичная демагогия, которой очень удобно прикрываться, когда понимают, что не в состоянии справиться с делом, за которое взялись.

Невольно приходит на память изречение великого реформатора России начала XX века Петра Столыпина: "Противникам государственности хотелось бы избрать путь радикализма, путь освобождения от культурных традиций. Им нужны великие потрясения, нам нужна Великая Россия". Актуальность этих строк для Армении 2000 года трудно переоценить.

Беседовал
Артем Ерканян

"Новое время", 20.I.2000.

Կոչնակ հնչեցնելու ժամը

«Ժողովուրդն ապրում է, քանի դեռ պահպանվում են նրա ազգային, մշակութային, կրոնական և բարոյական ավանդույթները, որոնք դրսևորվում են պարզորոշ կամ թաքնված ձևերով՝ ի հեճուկս հասարակական առանձնահատուկ խոշոր ցնցումների»:

Ա. Գեղամյան

Կուսակցական «բաբելոնաքանդություն»

– «Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահին չեմ կարող չհարցնել՝ ո՞ւր է գնում այս ազգը՝ այսպես անմիաբան:

– Չենք գնում, տանում են կործանման: Հիշեք, ինչու կործանվեց Բաբելոնը: Որովհետև մարդիկ դադարեցին միմյանց հասկանալ: Որովհետև չկային այն հոգևոր արժեքները, իդեալները, գաղափարները, որոնց շուրջ ժողովուրդը կհամախմբվեր: Վերջին տասը տարիների ընթացքում մենք կորցրինք ամենամեծ նվաճումը՝ այն վեհ գաղափարը, որ միաձույլ ու միակամ էր դարձրել ժողովրդին: Ինչպե՞ս կարելի էր դա կորցնել, կոտրել ժողովրդի ազգային ոգին, արցախյան ազատամարտի արդարացի լուծման նկատմամբ ունեցած հավատը, որը շահարկելով՝ հայրենասերի քողով պաճուճված մի խումբ բախտախնդիրներ ծառայեցրին իրենց անձնական շահերին, իրենց բարեկեցությանը:

– Կուսակցական «բաբելոնաքանդությունը», ինչի մասին Դուք ակնարկեցիք, ի վերջո, կարող է նաև մեր տունը քանդել: Չե՞ք ընդունում, որ ձեր կուսակցության մատն էլ է խառը այդ խառնաշփոթի մեջ:

– Հարցադրումն, անշուշտ, ընդունելի է, բայց եկեք արմատների մեջ խորանանք: Իսկ ինչ էր ասում մեր կուսակցությունը 7 ամիս առաջ և ինչ է ասում հիմա: «Իրավունք և Միաբանություն» դաշինքի ծրագրում դեռ 7 ամիս առաջ մենք պարզորոշ մատնանշեցինք «Միասնության» անհեռանկար հարցադրումները: Դեռ այն ժամանակ էինք մենք ասում, որ բյուջեն դատապարտված է ձախողման, որ հնարավոր չէ զարգացում ապահովել, երբ առկա է կրկնակի խոշորածավալ դեֆիցիտ, երբ առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը հասնում է 300 մլրդ դրամի, իսկ բյուջետայինինը՝ 52 մլրդ դրամի: Ավելին, այսօր Հայաստանում պարարտ հող է ստեղծված կոռուպցիայի, կաշառակերության և օրինազանցության համար: Հիմնավորեմ ասածս: Եթե երկրի տնտեսության, ներքաղաքական իրավիճակի բախտը տնօրինող բարձրաստիճան պաշտոնյաների, չինովնիկների օրինական եկամուտները սպառողական զամբյուղից ավելի ցածր են, բնականաբար,

այդ բացը պետք է լրացվի: «Լրացնելու» մի ճանապարհ կա. լեգալ ոլորտից բիզնեսը տեղափոխել ստվերային գոտի: Այսինքն, վարվող տնտեսական քաղաքականությունը նպաստում է կոռուպցիայի ծաղկմանը, ինչի մասին մենք միշտ ասել ենք: Եվ ասել ենք ոչ թե կուլիսների ետևում, ասել ենք Ազգային ժողովի ամբիոնից: Հիմա էլ ենք ասում ՝ հնարավորություն ստեղծեք օգնենք ձեզ, սխալներ թույլ չտաք:

– Իշխանության լծակներ ունենալու դեպքում ի՞նչ չէիք անի, որ անում են այսօրվա կառավարողները, և ի՞նչ կանեիք, որ չեն անում նրանք:

– Ժողովրդի հավատը պետության, իշխանավորների հանդեպ պետք է վերականգնել: Մարդիկ պիտի տեսնեն, որ պետությունը կրկնակի ստանդարտներով չի առաջնորդվում, համոզվեն, որ բարձրագույն իշխանությունը ոչ թե այս կամ այն անձի մենաշնորհն է, այլ՝ օրենքի: Իսկ հավատը ե՞րբ է վերականգնվում: Երբ իշխանության ասածն ու արածը հասկանալի են պետության յուրաքանչյուր անդամի: Երբ ասվածի մեջ յուրաքանչյուրն իր անելիք գործն է տեսնում, իր պատասխանատվության չափն է զգում, իր պաշտպանվածությունը: Երբ չկա անջրպետ իշխանության ու ժողովրդի միջև: Երբ Քաջ Նազարի բախտով ձեռք բերած իշխանության պահպանումը չի դառնում խելագարության հասնող մոլուցք, մղձավանջային պայքար: Սա է, որ հիասթափեցնում է մարդկանց, հասցնում հուսահատության, ստիպում, որ տարբեր դեսպանատների առջև երկար հերթեր գոյանան: Փոխանակ մասսայական արտագաղթի այս ազգակործան հարցը դարձնեն ամենօրյա մտահոգության, լուրջ քննարկումների առարկա, փոխանակ համազգային հուսահատությունից, մղձավանջից դուրս գալու ուղիներ որոնեն, նստել, միտք են անում. նորաթուխ վարչապետը կարո՞ղ է նախագահ դառնալ, թե՞ չի կարող: Եվ ասում են՝ այո՛, կարող է, անշո՛ւշտ, ինչո՞ւ չի կարող: Ու չեն ասում՝ ի՞նչ արեց վարչապետն այս ժամանակահատվածում, ի՞նչ հույս ներշնչեց ժողովրդին, ի՞նչ խնդիրներ դրեց ազգի առաջ ու ի՞նչ լուծումներ առաջարկեց: Այսքանից հետո էլ դեռ զարմանում ենք, թե ինչու է ժողովուրդն օտարվել իշխանություններից: Իմ ցավն այն չէ, թե ինչու են մարդիկ հիասթափվել նախագահից, վարչապետից կամ Ազգային ժողովի ղեկավարներից: Իմ ցավն այն է, որ վերջիններս այս պետությունն են խորհրդանշում, հայոց պետականությունը, և ազգն էլ նրանց «շնորհիվ» պետությունից է երես թեքում, խռովում իր պապենական հողից, քքում ու հեռանում: Հիասթափված, խռոված մարդը պետություն կպահի՞: Չի պահի: Սինչդեռ այսօր ավելի, քան երբևէ հայոց պետականությունը պաշտպանության կարիք ունի: Իր ժողովրդի բարոյական աջակցության, հոգևոր սատարման կարիքը:

“У парадного подъезда”

– Այսօր առավոտյան Ազգային ժողովի անձնագրային բաժնում մի պառավ կին մոլորված կանգնել էր հեռախոսի առջև: Երբ մի քանի քայլ ընդառաջ եկավ, մեղքս ի՞նչ թաքցնեմ, մտածեցի ողորմություն է խնդրելու: Իսկ նա՝ «Էս կառավարությունը, ե՞րբ ա հեռանալու...»: Հարց չէր, դատապարտվածի անզորություն էր: «Էս կառավարությունը

Անման Կաշչեյն է», – ասացի: «Չէ՞, – ոլորեց աչքերը, – բերանդ խերով բաց...»: Իսկ Դուք ասում եք՝ բարոյական աջակցություն:

– Ձեր անցումն ինձ ականջից Նեկրասովի "У парадного подъезда" բանաստեղծությունը հիշեցրեց: Սոված ժողովուրդն իշխանավորների դուռն է գնում ու մտածում է, թե նա կլսի իր ձայնը, իր ցավը կհասկանա, կօգնի: Մեր քաղաքական այրերն այդ բանաստեղծության հերոսին են հիշեցնում: Թվում է, թե Ձեր պատմածից ես, որպես ընդդիմադիր խմբակցության ղեկավար, պետք է բավարարվածություն զգայի, բայց ես խորը տագնապ եմ ապրում, որ ժողովուրդը նորընծա կառավարության անկումն է փափագում տեսնել: Ինը տարվա մեջ ութ կառավարություն է փոխվում, և ոչ մեկն այդպես էլ չի արդարացնում ժողովրդի հույսերը: Նախորդ բոլոր կաբինետների արատավոր քաղաքականությունն որդեգրել է նաև այս կաբինետը: Եկեք աչքակապությամբ չզբաղվենք: Այսօր էլ մենք ունենք ՀՀԾ-ական կառավարություն, որովհետև հիմնական, առանցքային նախարարությունները ղեկավարում են ՀՀԾ-ի «պայծառափայլ» այրերը, ովքեր նախորդ տարիներին կործանեցին երկրի ողջ գիտաարդյունաբերական և գյուղատնտեսական համալիրը: Սրանք ամպագոռգոռ բառեր չեն, թվային տվյալներ կան: Եթե 1988-ին մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը կազմում էր շուրջ 4600 դոլար, իսկ միջին աշխատավարձը՝ 347 դոլար, հիմա առաջինը փոքր-ինչ գերազանցում է 500 դոլարը, իսկ երկրորդը չի անցնում 30 դոլարից: Եվ առանց վարանելու ու անհարմար զգալու հայտարարում են, թե այս կառավարության մշակած բյուջետային ծրագիրը կապահովի ՀՆԱ-ի չորս տոկոսի աճ: Ես էլ ասում եմ՝ թող հինգ տոկոսի աճ ապահովի, 20 տարում հազիվ կհասնենք 88-ի մակարդակին, այն էլ մեծ հարցականի տակ է՝ արդյոք կընձեռվե՞ն նման հնարավորություններ: Պարզեցնեմ ասածս: Վարկեր ստանալու ակնկալիքով կառավարությունը բյուջետային ծրագրով որոշակի պայմաններ է ապահովում ու դրանով իր գործը համարում ավարտված: Ո՛չ քաղաքական շրջահայացություն են փորձում դրսևորել, ո՛չ ուզում են ժամանակակից տնտեսագիտական մտքի հետ առնչվել, հասկանալու համար, թե մի հասարակարգից մյուսին անցնելիս որո՞նք են ընդունելի, որո՞նք մերժելի մոտեցումները, դրանց որ բաղկացուցիչները պետք է համադրել և որոնցից ի սկզբանե հրաժարվել: Դա նրանց չի հետաքրքրում: Իրենք ամենագետ են: Ինչո՞ւ են ամենագետ: Որովհետև անցած տասը տարիների ընթացքում նույն «կրապլյոննի» խաղաթղթերի «կալողն է խառնվում»: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ *"круговая кадровая чехарда"*: Այս պայմաններում էր, որ տեղի ունեցավ էներգետիկ տեռորը սեփական ժողովրդի նկատմամբ, որի ուսումնասիրությամբ այսօր զբաղվում է Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովը: 1992-1993-ին 2500 ցիստեռն մազութ հանրապետություն չի մտել, սակայն «երջանկահիշատակ» մաքսավորների հարկահավաքները դա «չեն նկատել»: Հիմա այդ նույն մարդկանց դրածոները նույն իշխանական լծակներն են պտտում: Ժողովուրդն ապուշ հո չի՞, տեսնում է, չէ՞, որ ասածները մի բան է, արածները՝ ուրիշ բան:

Պյուրոսյան ձեռագիր

– Ուզում եք ասել, ինչպես 98-ից առաջ, այնպես էլ 98-ից հետո ունենք հանցավոր իշխանություններ:

– Ո՛չ թե հանցավոր, այլ գիտելիքների գերսակավության պատճառով երկրի զարգացումն արգելակող իշխանություններ: Իշխանություններ, որ ո՛չ քաղաքական քաջություն ունեն, ո՛չ էլ քաղաքացիական պարտքի գիտակցություն, որ թողնեն ինքնակամ հեռանան: Որովհետև նրանց իշխանությունը հիշեցնում է հայտնի Պյուրոսի հաղթանակը, երբ հերթական ճակատամարտից հետո շրջվեց ու տեսավ, որ ճիշտ է՝ հաղթել է, բայց բանակ այլևս չունի: Հիմա այս իշխանությունների որդեգրած քաղաքականությունը երկիրը տանում է էդ ուղղությամբ: Վաղը-մյուս օրը շրջվելու են, տեսնեն ժողովուրդ չի մնացել: Սա է ողբերգությունը: Նրանցից շատերին հակացուցված է կառավարել, բառիս իսկական իմաստով: Եվ այն քաղաքական ուժերը, որոնք սատարում են վերջիններիս, չեն հասկանում, թե ինչ վիթխարի պատասխանատվություն են ստանձնում, ինչ բեռ են վերցնում իրենց ուսերին, ինչ մեղքի տակ են ընկնում:

– Թե՛ «Երկրապահն» իր վերջին համագումարում, թե՛ ՀՀԿ-ն ու ՀԺԿ-ն իրենց ընդլայնված նիստերում հայտարարեցին, որ լիովին գիտակցում են պետության ճակատագրի հանդեպ ունեցած իրենց պատասխանատվությունը:

– Եթե գիտակցում են, պետք է դուրս գան պայմանականությունների շրջանակից և ավելի ճիշտ ճանապարհով շարժվեն: Համոզվեցի՞ն, որ սխալ է իրենց վարած քաղաքականությունը, ալտերնատիվ ծրագիր ենք ներկայացնում՝ որևէ մեկը չի կարողանում ասել՝ սխալ է: Է, զիջե՛ք իշխանությունը, դուք էլ վերահսկեք, պառլամենտական մեծամասնություն ունեք, չէ՞: Եթե ուզում եք խորհրդարանական իշխանությունը հավասարակշռել պրեզիդենտի իշխանության հետ, ես էլ, որպես ընդդիմադիր խորհրդարանական ուժի ղեկավար, ասում եմ. մեր ծրագրերը շատ ավելի կենսունակ են, քան ձերը, տվեք մեզ գործադիր լծակներ, վստահեք և հավասարակշռենք մեր գործունեությունը: Սա՛ է իսկական ժողովրդավարությունը:

Երկու դաշինք

– Ձեր ասածը, պարոն Գեղամյան, քաղաքական ռոմանտիզմի կամ աբսուրդի թատրոնի ոլորտից է: Խորհրդարանական մեծամասնությունը նույնիսկ մի հանճնաժողով չզիջեց «Իրավունք և Միաբանությանը», ուր մնաց՝ գործադիր իշխանության լծակներ: Քաղաքական այս մեկուսացումը իշխանության վերին ոլորտներում ընթացող առճակատման արդյունք չէ՞: Նկատի ունեմ ձեր դաշինքը հովանավորող Սամվել Բաբայանի և իշխող քաղաքական ուժի միջև խորացող հակամարտությունը:

– Ասել եմ, նորից եմ ասում. մեր հովանավորը մեր գիտելիքներն են, մեր անբասիր անցյալն ու յուրաքանչյուրիս անհատականությունը: Այլ հարց է, որ Սամվել Բաբայանն

ապահովեց մեր խմբակցության ֆիզիկական անվտանգությունը: Ազգային ժողովում իմ հայտնի ելույթին (Վանո Սիրադեղյանին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու գլխավոր դատախազի առաջին միջնորդությունից հետո. – *Լ. Մ.*) հաջորդեց հեռախոսազանգերի հեղեղը: Մի մասն իր աջակցությունն էր հայտնում, մի մասն էլ՝ սպառնում...

– *Ի՞նչ կարգի սպառնալիքներ էին:*

– «Գլխիցդ ձեռ ե՞ս քաշել, որ Վանոյի մասին ըտենց բաներ ես ասում... Ընտանիք ունես, էս ունես, էն ունես» և այլն: Միայն թե ճիշտ հաշվարկ չէին արել, մտքներով չէր անցել, որ այդ սպառնալիքները հակառակ էֆեկտն են առաջացնելու, էլ ավելի են ամրապնդելու այն համոզմունքը, որ հանուն իմ և այլոց երեխաների անվտանգության ու ապահովության, հանուն նրանց վաղվա օրվա ես մինչև վերջ պիտի գնամ: Բայց հիմա խոսքը դրա մասին չէ, խոսքն այն մասին է, որ եթե դու ընդխմբակային, կուսակցական շահերը վեր ես դասում պետության շահից, գոնե պիտի կարողանաս սթափ գնահատել քո ունեցած մտավոր ներուժը: Նույն խստագույն քննադատությունն Ազգային ժողովի դահլիճից ես հնչեցրել եմ նաև այն ժամանակ, երբ ողջ էին երջանկահիշատակ Կարեն Սերոբիչն ու Վազգեն Սարգսյանը: Այն ժամանակ արդենիսկ փոխադարձ ըմբռնում կար: Արդենիսկ ստեղծված իրավիճակի լրջագույն լինելը գիտակցված էր: Այդ պարագայում, բնականաբար, ելքը կգտնվեր: Հիմա ելքը հետևյալն է. եթե պառլամենտը տեսնում է, որ իր վստահության քվեն ստացած կառավարությունն երկիրը տանում է փակուղի (իսկ որ տանում է, ցույց է տալիս 2000 թվականի բյուջեի նախագիծը), քաղաքական կամք պիտի դրսևորի և պահանջի գործադիր իշխանության հրաժարականը:

«Երանի խաղաղություն աննողներին... »

– Կարծում եմ, քաղաքական կամք դրսևորելու անհրաժեշտությունը ոչ այնքան խորհրդարանական մեծամասնության, որքան փոքրամասնության, առավել ևս ընդդիմադիր փոքրամասնության խնդիրն է: Ձեր խմբակցությունը նման կամք չցանկացավ դրսևորել, ավելին՝ հանդես եկավ վեց ամսով քաղաքական համերաշխություն հաստատելու առաջարկով: Այսօր հակառակ առաջարկն եք անում: Ինչ-որ բա՞ն է փոխվել:

– Մենք ընդամենը զսպվածություն դրսևորեցինք: Այո, դաշինքն առաջարկեց կես տարով մորատորիում հաստատել, չքննադատել իշխանություններին: Ավելին, հայտարարեցինք, որ կսատարենք նրանց կողմից ձեռնարկվող ցանկացած ողջամիտ քայլ: Բայց արի ու տես, որ դա սխալ ընկալվեց՝ թյուր կարծիք ստեղծելով որոշ ուժերի շրջանում: Մտածեցին, թե ասելիք չունենք, մինչդեռ ասելիք՝ ինչքան ասես: Ու երբ տեսնում-համոզվում ես, որ իրավիճակը շտկելու ուղղությամբ իշխանություններն ոչինչ չեն ձեռնարկում, հայեցակարգային խնդիրներ առաջ չեն քաշում, չեն մատնանշում երկրի զարգացման առաջնահերթությունները և «ամենագլոբալ» հարցը, որ ունակ են բարձրացնելու, Արամ Սարգսյանի նախագահ դառնալու հնարավորությունների բացահայտումն է, լուրջ

մտորումների առիթ են ստեղծում մյուս քաղաքական ուժերի համար: Հասկանում ես, որ գնահատման չափանիշներն են խեղաթյուրված: Եվ դա միտումնավոր է արվում: Ես այստեղ չեմ կարող չտեսնել շատ հեռուն գնացող գործողությունների շղթա: Շղթայի առաջին օղակը փակվեց, երբ քաղաքական մեծամասնությունն օրենսդիր ու գործադիր իշխանության նոր ղեկավարներ նշանակեց: Այդ ճանապարհով աթոռ զբաղեցնող մարդիկ չեն կարող խամաճիկ չդառնալ նշանակողների ձեռքին:

– Բայց իշխանությունը դիլետանտներին վստահելու փոխհամաձայնությունը նաև ձեր դաշինքի օգնությամբ կնքվեց:

– Ո՞րն է մեր բաժին մեղքը:

– Մեղքը բոլորինս է, որ հնարավոր դարձրինք հոկտեմբերի 27-ը, որից հետո ներքաղաքական հիվանդագին մթնոլորտ ստեղծվեց, և քաղաքական շանտաժից զգուշանալով՝ խորհրդարանական խմբակցությունները ստիպված էին հայտարարել, թե դեմ են ուժերի հարաբերակցությունը փոխելուն: Մինչդեռ համոզված եմ, բոլորն էլ հոգու խորքում դեմ չէին լինի թափուր մնացած աթոռներից որևէ մեկն զբաղեցնել:

– Այդպես չէ: Պարզապես հերթական անգամ ցանկացանք Հայաստան աշխարհին ասել, որ, ի դեմս «Իրավունք և Միաբանություն» դաշինքի, մենք ունենք չափազանց լրջախոհ քաղաքական կառույց: Կառույց, որը պետականության գաղափարից վեր ոչինչ չի դասում: Որը պատրաստ է ճշմարտացիորեն գնահատել իրավիճակը և շատ լավ իմանալով, որ այսօր ցանկացած ընդդիմադիր կեցվածք լուրջ դիվիդենտներ կապահովեր հանրության տարբեր խավերի շրջանում, չգնաց այդ հեշտ ճանապարհով:

– Հիմա այդ ճանապարհով չե՞ք գնում:

– Ոչ, ուղղակի մեր զսպվածությունը սխալ գնահատվեց նաև «Միասնություն» դաշինքի կողմից: Իսկ հոկտեմբերի 27-ից հետո, երբ սպանված էին իշխանության երկու թևերի ամենախարիզմատիկ դեմքերը, քաղաքական բարոյականությունը չկորցրած որևէ ուժ (նույնիսկ, եթե մտավոր ու բարոյական ավելի մեծ ներուժ ունի ու լիովին պատրաստ է քաղաքական պատասխանատվություն ստանձնելու) փորձում է իշխանությունը վերցնելու հայտ ներկայացնել, թույլ է տալիս պետության համար կործանարար սխալ: Ջուր է լցնում նրանց ջրաղացին, ովքեր կարծում են, թե տեռորի ճանապարհով կարելի է հասնել իշխանության: Մենք գիտակցաբար չգնացինք այդ քայլին: Գիտակցաբար դրսևորեցինք կրքերը հանդարտեցնելու քաղաքական վարքագիծ, որպեսզի և՛ իշխող ուժերը, և՛ չիշխող ուժերը, բոլորը սթափվեն, եղած բալանսը պահպանելով քաղաքական մեծամասնությունը կարողանա վերագտնել իրեն և եթե վերագտավ, ապա, ինչո՞ւ չէ, համագործակցել: Բայց, երբ տեսնում ես, որ ոչ միայն չեն վերագտնում, այլ ավելի ու ավելի են բորբոքում սեփական ախորժակները, որը, ինչպես հայտնի է, «ուտելիս է բացվում», այստեղ արդեն հասկանում ես, որ մտահոգվելու լուրջ պատճառներ կան:

Ասպարեզ՝ առանց ասպարեզի

– Մտահոգվելու լուրջ պատճառներ են տեսնում նաև այն քաղաքական ուժերը, որոնք հանրապետության նախագահի հրաժարականի հարց են բարձրացնում: Դուք շարունակո՞ւմ եք մնալ այն կարծիքին, որ վաղաժամկետ ընտրությունները քաղաքական մթնոլորտն առողջացնելու ճիշտ ճանապարհ չեն:

– Ես ներքուստ շատ եմ ուզում հավատացած լինել, որ երբ վիճակը, իրոք, կայունանա, երբ նախադրյալներ ստեղծվեն արդար ընտրություններ անցկացնելու համար, թե՛ հանրապետության նախագահը, թե՛ Ազգային ժողովը ինքնալուծարվելու քաղաքացիական հասունություն կդրսևորեն: Հերթականությունը պետք է որոշվի պետականության շահերից ելնելով: Որովհետև այն Ազգային ժողովը, այն նախագահը և այն կառավարությունը, որոնք հնարավոր դարձրին հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը, արդենիսկ դատապարտված են: Արդեն կորցրել են օրենսդիր, գործադիր կամ բարձրագույն իշխանություն կոչվելու բարոյական իրավունքը: Դա իմ խորին համոզմունքն է: Եվ որպեսզի Դուք նորից չասեք, թե իշխանությունների քաղաքացիական հասունության վրա հույս դնելը քաղաքական ռոմանտիզմ է, ասեմ, որ մեր դաշինքը կնպաստի հնարավորինս շուտ հանրապետությունում ստեղծվեն արդար ընտրություններ անցկացնելու լուրջ նախադրյալներ:

– Առաջին պայմանը ո՞րն է:

– Բոլոր այն մարդիկ, ովքեր նախկինում օրինազանցությամբ են զբաղվել, օրենքի ողջ խստությամբ, հրապարակայնորեն պատասխանատվության պիտի կանչվեն, լինի դա քրեական, թե քաղաքացիական օրենսգրքի շրջանակներում:

– Չե՞ք կարծում, որ պերմանենտ դատավարություններն այն աստիճան կգրգռեն ժողովրդին, որ, ի վերջո, հեղափոխական իրավիճակ կստեղծվի երկրում:

– Բայց այդ կրիտիկական իրավիճակին մենք արդեն հասել ենք, ինչպես կասեին հայտնի դասականները՝ երբ վերևինները ի զորու չեն կառավարել, ներքևինները էլ չեն հանդուրժում վերևիններին: «Ազգային Միաբանություն» կուսակցության և մեր խորհրդարանական խմբակցության դերը մենք համարում ենք հենց այն, որ հեղափոխական պոռթկումներ չլինեն, կարողանանք լրջախոհ և համբերատար կեցվածքով իշխանություններին ապացուցել-հասկացնել, որ իրենց վարած մակրոտնտեսական քաղաքականությունը սնանկ է: Քանզի մինչ օրս չեն մշակել ազգի հեռանկարային զարգացման հայեցակարգը՝ ներկա աշխարհաքաղաքական զարգացումներում հանրապետության տեղն ու դերը ճշտելու համար: Որովհետև մտավոր այն ներուժն ու գիտելիքների պաշարը, որոնք անհրաժեշտ են երկիրը ճգնաժամից դուրս բերելու համար, ներկա իշխանավորները չունեն: Ժողովուրդն այլևս չի ուզում հանդուրժել հերթական էքսպերիմենտը, որի իրականացնողները միևնույն դերակատարներն են՝ տարբեր դրոշների ներքո:

«Ազգային Միաբանությունը» հայտ է ներկայացնում

– Ի դեպ, դրոշների մասին: Ձեզ այսօր ճանաչում են ոչ այնքան որպես «Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ, որքան «Իրավունք և Միաբանություն» դաշինքի ղեկավար:

– Միանգամայն ճիշտ է, քանի որ «Ազգային Միաբանություն» կուսակցությունը դեռևս իր ինտելեկտուալ մակարդակին պատշաճ հայտ չի ներկայացրել: Կներկայացնի ապրիլ ամսին, երբ տեղի կունենա մեր հերթական համագումարը:

– Արտահերթ ընտրություննե՞ր եք նախապատրաստվում:

– Նախապատրաստվում ենք քաղաքական լուրջ հայտ ներկայացնել, անկախ այն բանից՝ արտահերթ ընտրություններ կլինե՞ն, թե՞ ոչ:

– Այս պահին քանի՞ անդամ ունի կուսակցությունը:

– Վեց հազար յոթ հարյուր: Համագումարից հետո այդ թիվը կկրկնապատկվի, եթե չասեմ՝ կեռապատկվի:

– Ինչո՞ւ եք այդքան վստահ, այն էլ համընդհանուր անտարբերության այս մթնոլորտում, երբ մարդիկ կորցրել են հավատը բոլոր կուսակցությունների հանդեպ:

– Որովհետև հանրապետության բոլոր մարզերում գործող մեր 47 կառույցներին դեռևս 99-ի սեպտեմբերից դիմում են մեծ թվով մարդիկ՝ «Ազգային Միաբանությանը» անդամագրվելու խնդրանքով:

– Մարզային կառույցնե՞րն են լավ աշխատում, թե՞ կուսակցության ծրագիրն է այդքան գայթակղիչ:

– Կարծում եմ, մարդիկ պարզապես շատ լավ տեսնում-հասկանում են՝ ո՛ր քաղաքական ուժը չի կոտրվում, չի ծռմռվում իշխանությունների առաջ, չի դավաճանում իր սկզբունքներին և, որ ամենակարևորն է, իրապես մտահոգ է պետության ու ժողովրդի ճակատագրով: Ո՛ր քաղաքական ուժն է տեսնում այն ուղիները, որոնք պատնեշ կդնեն ճգնաժամային այս իրավիճակի առաջ, կմատնանշեն առաջ շարժվելու ճանապարհը՝ չթաքցնելով նաև սպասվելիք դժվարությունները:

– «Ազգային Միաբանությունը» «բաժանվո՞ւմ» է ՍԻՄ-ից:

– «Ազգային Միաբանությունն» ու ՍԻՄ-ը քաղաքական ամուսնություն չեն կնքել, որ բաժանվեն, այլ դաշինք՝ առանցքային հարցերի շուրջ նմանատիպ մոտեցումների հիմքի վրա: Նրանք իրենց ներկուսակցական զարգացումներն ունեն, մենք՝ մեր:

Էկլեզիաստ

– Հիմա ո՛ր պաշտոնյային հարցնում ես, ասում է, չեմ զարմանա, եթե Նաիրի Հունանյանն իմ անունն էլ տա: Դուք է՞լ չեք զարմանա, եթե վաղը զինվորական դատախազությունից Ձեզ կանչեն:

– Է, թող կանչեն: Ես իմ կյանքում այնքան բան եմ տեսել, զարմանալու այնքան

առիթներ եմ ունեցել, որ հիմա փիլիսոփայորեն եմ նայում ամեն ինչին: Սողոմոն իմաստունը, ի թիվս այլ հանճարեղ գործերի, գրել է «Էկլեզիաստը», որի ճշմարտություններից մեկը բոլորիս է հայտնի ու երեսուն դար ապացուցում է իր անսխալականությունը: «Սա էլ է ունայն և քամիի աշխատանք»: Կա «քարեր դեն գցելու ժամանակ և քարեր ժողովելու ժամանակ»: Նրանք, ովքեր այսօր աջ ու ձախ քար են շպրտում, թող Սողոմոնին հիշեն:

Զրուցեց
Լիլի Մարտոյանը

«Նորաթերթ», 21.01.2000:

Нельзя двигаться по заведомо тупиковому пути

Дефицит ответственности в стране очевиден. Ответственности как на уровне руководителей государства, лидеров политических сил, так и простых граждан. За констатацией "Армянская государственность под угрозой" должны следовать конкретные шаги, способные нейтрализовать эту угрозу, — такого мнения придерживаются все трезвомыслящие люди. А как относятся к вопросу об ответственности политические силы? "НВ" намерено из номера в номер представлять позицию партийных лидеров. Сегодня на вопрос об ответственности отвечает председатель партии "Национальное Единение", депутат НС Арташес Гегамян.

— Каждая партия, независимо от того, находится она у власти или нет, несет свою долю ответственности за сложившуюся ситуацию. Наша парламентская фракция (блок "Право и Единение". — *ред.*), как известно, оппозиционна. Мы выступаем против проводимой социально-экономической политики, представленной парламентским большинством. Нами апробированы и использованы все возможные средства парламентской борьбы. Увы, все это осталось гласом вопиющего в пустыне. Всякий раз мы стараемся заострить внимание, сказать о том, что нельзя двигаться по заведомо тупиковому пути. А путь, по которому мы движемся сегодня, однозначно тупиковый. Ситуация накалена до предела, и разрядить ее может лишь политическое большинство. В конце концов, надо научиться называть вещи своими именами, давать всему принципиальную оценку. И тем, кто в этой мутной воде пытается рыбу ловить, кто вместо решения актуальных проблем социально-экономического развития затеял возню вокруг внеочередных президентских выборов, конституционных изменений... Это всего-навсего дымовая завеса, которая используется силами, стремящимися уйти от ответственности за развал и разграбление страны. Очень надеюсь, что это им не удастся. Мы имеем в виду следственные и судебные процессы, которые сейчас идут. В целом же складывается

впечатление, что существует два мира: один – вполне реальный, заполненный тревогами и чаяниями народа, ворохом нерешенных проблем, другой – виртуальный, в котором все хорошо, все гладко, где все друг друга хвалят и поддерживают, что, конечно же, ничего общего не имеет с реальной ситуацией и по сути своей безответственно.

Отдел политики

"Новое время", 1.II.2000.

Մենք պարտավոր ենք օր առաջ կանգնեցնել ՀՀԾ-ածին մութ ուժերի երթը

*Ա*Ժ պատգամավոր Արտաշես Գեղամյանի հետ «Ուղիղ կապի» ժամանակ խմբագրության աշխատողները չկարողացան տալ իրենց հետաքրքրող հարցերը, քանի որ պատգամավորը հազիվ հասցնում էր պատասխանել հեռախոսազանգերին: Հարցերը բազմազան էին, բայց հիմնականում հնչում էին բարեմաղթանքներ, աջակցության ցանկություններ՝ անձամբ նրան, ինչպես նաև «Իրավունք և Միաբանություն» դաշինքին ուղղված:

Մենք ձեր ընտրողներն ենք

– «Իրավունք և Միաբանություն» դաշինքի, Ձեր կուսակցության, «Իրավունք» թերթի և անձամբ Ձեր երկրպագուն եմ, և հույսներս հիմնականում ձեզ հետ ենք կապում: Դուք գիտե՞ք, թե ինչ ծանր վիճակում են այսօր գտնվում մտավորականները: Լևոն բեյից հետո, որը մեզ ծանր վիճակի հասցրեց, հիմա զրկվել ենք և՛ օգնություններից, և՛ փոխհատուցումներից, դարձել ծայրահեղ չքավոր: Շատ կուզենայինք, որ եթե նախագահական ընտրություններ լինեն, Ձեր թեկնածությունը դնեք: Թերթի միջոցով մենք գիտենք, թե Դուք որքան շահագրգռված եք ժողովրդին այս ծանր վիճակից դուրս բերելու համար, և վախենում ենք Ձեր, Հրանտ Խաչատրյանի, Հայկ Բաբուխանյանի, Հովհաննես Գալաջյանի անվտանգության համար: Ուզում եմ, որ շատ զգույշ լինեք: Ես կցանկանայի Ձեզ հանդիպել, Դուք քաղաքացիներին ընդունո՞ւմ եք (Անահիտ Քերոբյան, վաստակավոր ուսուցչուհի, կենսաթոշակառու):

– Իհարկե, ես ընդունում եմ քաղաքացիների, իմ հասցեն է՝ Մոսկովյան 33ա, 5-րդ հարկ:

Իսկ ինչ վերաբերում է վախենալուն, ապա թող վախենան այն մարդիկ, ովքեր հանցագործություններ են կատարել, ովքեր թալան, քաղաքական սպանություններ են իրականացրել, մենք վախենալու բան չունենք: Ձեր օգնությամբ, Աստծո կամքով, մինչև վերջ հետամուտ կլինենք, որ արդարությունը հաստատվի:

– Կո՞ղմ եք Քոչարյանի հրաժարականի պահանջին: Եվ եթե այո, Դուք կմասնակցե՞ք արտահերթ նախագահական ընտրություններին: Նախորդ անգամ, եթե հիշողությունս չի դավաճանում, հավաքել էիք մեկ տոկոս ձայն: Ես էլ Ձեզ եմ ձայն տվել: Ինչո՞վ դա կբացատրեք (Անդրեյ Կիրակոսյան):

– Հայաստանում ներկայումս ստեղծված իրավիճակում ես դեմ եմ արտահերթ նախագահական ընտրություններին, բայց եթե լինեն, ես անպայման կմասնակցեմ ընտրություններին:

Անցած նախագահական արտահերթ ընտրություններին իմ մասնակցությունը պայմանավորված էր նրանով, որ կային հարցեր, որոնք, ես համոզված էի՝ ոչ մի թեկնածու, բացառությամբ մեկ-երկուսի, մասնավորապես՝ Հրանտ Խաչատրյանի, չի հնչեցնի հեռուստաեթերից կամ այլ ելույթներով: Խոսքը, օրինակ, դաժան սպանությունների, էներգետիկ տեռորի մասին է, որ մենք երկուսս էլ, իրարից անկախ, 1998 թ. փետրվարին հնչեցրինք: Եվ, թերևս, մեր կողմից բարձրացնելուց հետո՝ այդ հարցերն արդեն ստացան իրենց հետագա զարգացումները:

Ինչ վերաբերում է հավաքած տոկոսին, ապա կասեմ, որ անգամ եթե մեկ մարդ գիտակցաբար ինձ ձայն է տալիս, ես մեծագույնս պարտավորված եմ զգում արդարացնել ինձ հետ կապված հույսերը: Այդ մեկ տոկոսն արդեն ԱԺ ընտրությունների ժամանակ դարձավ 22 տոկոս, որը ժողովուրդը տվել էր «Իրավունք և Միաբանություն» դաշինքին, այսինքն՝ նաև ինձ: Բայց այդ թվերը խեղաթյուրվեցին և ցույց տվեցին, որ իբր մեզ ձայն է տվել 90 հազար մարդ:

Այսօր նախապայմաններ չկան արդար, ազնիվ ընտրություններ անցկացնելու համար, և բացառված չէ, որ զենքի ազդեցության, վախի մթնոլորտում դարձյալ կկեղծվեն ընտրությունների արդյունքները: Ներկայումս ընթանում են հասարակական մեծ հնչեղություն ունեցող մի շարք դատավարություններ: Մինչև դրանք իրենց տրամաբանական ավարտին չհասցվեն, համոզված եմ, որ ընտրություններ անցկացնելը կլինի պարզամտություն և միամտություն, պարզապես՝ ինքնախաբեություն:

– Մի քանի ամիս առաջ Դուք քննադատաբար էիք վերաբերվում Կարեն Դեմիրճյանի և Վազգեն Սարգսյանի գործունեությանը, սակայն հիմա կարծես թե երանի եք տալիս այն ժամանակներին՝ մշտապես հիշատակելով նրանց չիրականացրած ծրագրերը և այլն:

– Հարցը միանգամայն տեղին է, որովհետև այն պարզաբանման կարիք է զգում: Որպես անձ՝ մշտապես չափազանց բարձր եմ գնահատել երջանկահիշատակ Կարեն Սերոբի Դեմիրճյանին և շարունակում եմ այդպես էլ գնահատել: Խոստովանել և խոստովանում եմ նաև նրա՝ Հայաստանի հանդեպ մեծագույն ծառայություն ունենալը: Դրա հետ մեկտեղ, թե՛ այն ժամանակ, թե՛ հիմա ասում եմ, որ «Միասնություն» դաշինքի որդեգրած տնտեսական քաղաքականությունը հիմնովին սխալ է և հանրապետության մակրոտնտեսությունը տանում է փակուղի: Ասում եմ նաև, որ այն քաղաքականությունը, որը որդեգրել է ներկայիս կառավարությունը, նույնպես սխալ է, դրա ապացույցը 1999 թ. բյուջեի կատարման արդյունքներն են, որով էլ թևակոխել ենք 2000 թ.: Այստեղ պետք է անպայման զանազանել մարդ անհատականության նկատմամբ ունեցած վերաբերմունքը նրա վարած քաղաքականությունից: Դրանք երկու տարբեր բաներ են, և պետք չէ դրանք խառնել և արհեստականորեն խառնաշփոթ ստեղծել: Անձի նկատմամբ վերաբերմունքն այլ է, անձի կողմից վարվող քաղաքականության նկատմամբ քաղաքական գնահատականը՝ այլ:

Մնացել ենք՝ ես, քաղցը և մահը

– Մենք Ձեզ շատ-շատ հարգում ենք, դա ես ասում եմ իմ ամբողջ շրջապատի կողմից: Դեկտեմբերից մինչև այսօր նպաստ չենք ստացել, մինչդեռ խնամում եմ երկկողմանի ծնողազուրկ երկու երեխայի (Նինա Սարգսյան, Նորքի V զանգված):

– Անպայման կհետաքրքրվեմ, թե ինչն է նպաստների ուշացման պատճառը և, որոշակի պատասխան կտամ. կզանգահարեք 53-36-32 հեռախոսահամարով:

– 2-րդ կարգի հաշմանդամ եմ, ամուսինս էլ կենսաթոշակառու է, նպաստի ու թոշակի հույսին ենք, այլ եկամտի աղբյուր չունենք, բայց դեկտեմբերի նպաստը դեռ չեն տվել... Արդեն մի ամիս է՝ հիվանդ պառկած եմ, բայց դեղ առնելու հնարավորություն էլ չունենք: Իմ հարևանուհին էլ մեծ կին է, հիվանդ է, երկկողմանի ծնողազուրկ 3 թոռներին է խնամում: Երեխաները սովորում են գիշերօթիկում, տրանսպորտով դասի տանելիս խնդիր է առաջանում վարորդների հետ, գոնե նրան մի մշտական տոմս տրվի (Քնարիկ Արամյան):

– Անպայման կփորձենք նպաստի հարցի վրա սևեռել համապատասխան մարդկանց ուշադրությունը, հարցը սրությամբ կհնչեցնենք:

– Շրջանից եմ: Ձեր լավ ընկերը. մենք հանդիպել ենք նախընտրական մի անձրևոտ օր: Ես 76 տարեկան եմ, որդեգրված երեխա ունեմ, սովորում է Ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղում, չեմ կարողանում ուսման վարձը մուծել: Դիմում եմ գրել ԱԺ կրթության և գիտության հանձնաժողովի նախագահ Շավարշ Քոչարյանին, խնդրում եմ նրա հետ կոնսուլտացիա արեք, մի հնար գտեք, տան եղած-չեղածը ծախել եմ, մնացել ենք երեք հոգի՝ ես, քաղցը և մահը... (Լևոն Ջարայան):

– Խնդիրը հասկանալի է, տեսնենք ինչով կկարողանանք օգտակար լինել:

Դատական: Ո՞ւր եք, ովքե՞ր եք, տղաներ

– Ես Ձեզ շատ եմ հարգում, հիացած եմ Ձեր աշխատանքի ոճով: Բայց զարմանում եմ, որ այդքան հարգելի անձնավորություն լինելով հանդերձ՝ գլուխ եք դնում ինչ-որ Նիկոլ Փաշինյանի հետ: Ես աշխատում էի դպրոցի տնօրեն և, Վանո Սիրադեղյանի քմահաճույքով, որը քանդեց երկիրը, դպրոցները, ազատվեցի աշխատանքից, իսկ դպրոցի տնօրեն դարձավ Բակունցի անվան տեխնիկումն ավարտած իմ ավագ ջոկատավարը: Այդ տնօրենին հեռուստացույցով քննադատում էին: Բայց ինձ էին չարախոսում, բամբասում, իսկ ես արհամարհեցի, բանի տեղ չդրեցի (Ենոքյան):

– Խնդիրն այն է, որ Ձեր նշած հարցում Նիկոլ Փաշինյանը դրածո էր, դա ՀՀԾ-ական և ՀՀԾ-ածին կուսակցություններն էին խոշորացույցով ուշադիր նայում, թե ինչով կարող են Գեղամյանի հեղինակության հետ խաղալ: Մենք հենց միտումնավոր էլ որոշեցինք դատի տալ: Եթե, իրոք, մեղավոր ենք, թող մենք պարսավանքի ենթարկվենք, եթե ոչ, նրանք թող պատասխան տան... Ձեր ցասումը հասկանում եմ, բայց նման վարձված լրագրողներին պետք է պատասխանատվության ենթարկեն օրենքի ամենայն

արդարությամբ և խստությամբ:

– Դե, քող Վանոյին պատասխանատվության ենթարկեն:

– Համոզված եղեք, որ վաղ թե ուշ, համոզված եմ դրանում, նա պատասխանատվության կենթարկվի: Օրը գա, բարին՝ հետը:

– Ողջույն ամենաժողովրդական պատգամավորին: Գեներալ Բուդոյի մասին որևէ նորություն գիտե՞ք, նա փախուստի մե՞ջ է, թե՞... (Հակոբյան):

– Դժվարանում եմ ասել գեներալ Բուդոյի մասին, չգիտեմ՝ որ «ռազմաճակատում» է հիմա նա գտնվում, բայց ուզում եմ համոզված լինել, որ Ձեր այդ նախազգուշացումը տագնապալի շեփորի պես կհնչի այն մարմինների առջև, ովքեր, չգիտես ինչու, շուրջ երկու տարի չէին կարողանում Բուդոյին, այն էլ՝ գեներալի ուսադիրներով, գտնել:

– Մի՞թե հնարավոր չէ, որ բոլոր կուսակցությունները միասին հանդես գան և պահանջեն ՀՀԾ-ն օրենքից դուրս ճանաչել: Հիմա ի՞նչ միտք ունի նախագահի փոխելու հարցը քննարկել, դրա հետևում էլ ՀՀԾ-ն է կանգնած:

– Կուսակցությունների ուղիղ կեսը ՀՀԾ-ածին է: Ես համաձայն եմ Ձեր հարցադրման հետ: Այդ կուսակցության ղեկավարները մեղադրվում են ամենածանր հանցագործությունների մեջ, և դատարանի համապատասխան վճիռ կայացնելուց հետո քաղաքական ուժերը պետք է իրենց վերաբերմունքը դրսևորեն քաղաքականորեն նրա լինել-չլինելու նախապատմության մասին: Իսկ որոշումը տվյալ պարագայում կայացնում է դատարանը, որը՝ մեզ մոտ, գոնե ըստ Սահմանադրության, անկախ է:

Հալալ կաթ և արմատներ

– Ես Ձեզ պարոն չեմ ասի, որովհետև Ձեր հորն էլ դուր չի գա, որի՝ Մամիկոն Արտաշեսովիչի հետ աշխատել եմ գործկոմում, պաշտում եմ նրան: Հաղորդեք իմ լավագույն ցանկությունները նրան: Ես հարց չեմ տալիս: Պարզապես ուզում եմ Ձեզ հետ խոսել որպես լավ մարդու, ես Ձեզ շատ-շատ եմ սիրում: Հայտնի պատմության նման՝ «Ձեր կաթը հալալ է», և ըստ դրա էլ շարունակեք Ձեր գործունեությունը: Ես համբուրում եմ Ձեր մատը, որը կսեղմի Մուղդուսի Վանոյին անձեռնմխելիությունից զրկելու «այո»-ին (Հ. Պ.):

– Շնորհակալություն բարի ցանկությունների համար, ես Ձեր ողջույնը կհաղորդեմ Մամիկոն Արտաշեսովիչին:

Տարրական, ոչ տարրական թվաբանություն և Սահմանադրություն

– Ինձ անհանգստացնում է, որ մեր վերևներում քաղաքական գործիչներ և այլ մարդիկ թվաբանությունից շատ թույլ են և չեն կարողանում մինչև հիմա իմանալ՝ 2000

թվականը ոչ թե դարի վերջն է, այլ սկիզբն է... Բայց տարրական գիտելիքներ են պետք հաշվելու համար, թե որքան փող է հարկավոր Հայաստանի՝ գումարած ԼՂՀ-ի վարչական ապարատը պահելու, կերակրելու համար: Իմ հաշվարկներով՝ յուրաքանչյուրը պետք է 50 հոգու աշխատանքային նորմա կատարի, որ կարողանանք այդքան ապարատը պահել, ինչպես «կատարում էր», ասենք, Ստախանովը: Քաղաքական գործիչները քննարկում են, թե պետք են նոր նախագահական ընտրություններ, վերընտրություններ... Իսկ Դուք չե՞ք գտնում, որ պետք է հենց այդ տարրական թվաբանական հաշվարկով լիկվիդացնել այդ ապարատը. չէ՞ որ դա ավելորդ բեռ է մեր ժողովրդի համար: 300 միլիոնանոց ԱՄՆ-ի Սենատը կազմված է ընդամենը 100 մարդուց, յուրաքանչյուր նահանգից երկու հոգի, իսկ մեզ մոտ մի հսկայական բեռ է նստած ժողովրդի վրա (Գասպոյան, բժիշկ):

– Դուք չափազանց հետաքրքիր հարց տվեցիք: Ձեր հարցադրումը, անշուշտ, ճիշտ է, ասեմ ավելին. ցանկացած նոր բյուրոկրատական կառույց իր ետևից բերում է կոռուպցիա և կաշառակերություն: Բացի այդ, վարչական ապարատը պետք է ծառայեցվի հանրապետության առջև ճշգրիտ ձևակերպված խնդիրների լուծմանը, բայց, քանի որ այդպիսիք դեռ մինչև օրս ձևավորված չեն, ուստի, կարծում եմ՝ վարչական ապարատը մեծացնելով՝ այս կամ այն խնդիրն են լուծում:

Սիանգամայն համաձայն եմ, որ նախագահական ապարատը պետք է շեշտակիորեն կրճատվի:

– Ոչ միայն պետք է ապարատը կրճատվի, այսինքն՝ նրա ներսում կրճատումներ լինեն, այլ պետք է վերանա նախագահական ապարատն ամբողջությամբ: Կամ պետք է վարչապետ լինի, կամ՝ նախագահ:

– Ինչ վերաբերում է գործադիր իշխանություններին, կառավարությանը, համաձայն եմ Ձեզ հետ, դա էլ պետք է շեշտակիորեն կրճատվի: Իսկ այն հարցի շուրջ, թե նախագահակա՞ն հանրապետություն լինի, թե՞ պառլամենտական, մենք կկարողանանք Ձեզ հետ ճշգրիտ դատողություններ անել միայն խորը վերլուծությունից հետո:

Որքա՞ն հայրենիքը կպահանջի

– Մեր շենքը գտնվում է 2 կաթսայատան մոտ, որոնք շարունակվում են թալանվել: Մինչև ե՞րբ չպետք է ջեռուցվեն Արաբկիրի շրջանի, կոնկրետ՝ նախկին Մերգելյանի ինստիտուտի կողմից կառուցված շենքերը: Երկրորդը՝ պատերազմի վետերանների պատվո վճար կոչեցյալը վեր է ածվել անպատվության վճարի, քանի որ այն ստանալու համար պետք է պարբերաբար գնալ սոցապ բաժին և իմանալ հերթական գումարի բացակայության մասին: Արդյոք չի՞ կարելի այդ վճարը փոխանցել համապատասխան խնայդրամարկղ՝ վետերանի հաշվին, ինչպես դա արվում է կենսաթոշակի դեպքում (Սարգսյան, պատերազմի և աշխատանքի վետերան):

– Իմ կարծիքով՝ այդ հարցը վաղուց ի վեր պետք է լուծած լինեին, որովհետև լրացուցիչ ծախս չպահանջող խնդիր է: Այդ հարցը մենք կուղղենք այն մարդկանց, ովքեր պատվո

վճարը անպատվության են ենթարկում իրենց կազմակերպական անբանության հետևանքով:

Ինչ վերաբերում է ջեռուցման խնդրին, ապա այն համալիր լուծում է պահանջում: Թե՛ հանրապետության, թե՛ Երևանի քաղաքապետարանի ֆինանսատնտեսական վիճակը, որքան ես եմ իրազեկ, շատ ծանր է, և անցած տարիներից կուտակված պարտքերը մինչև օրս չեն կարողանում փակել: Եվ պատահական չէ, որ անցյալ տարի դեռ սեպտեմբերին ճարահատյալ հրապարակվեց, որ էներգետիկայի նախարարությունում կրեդիտորական և դեբիտորական պարտքերի տարբերությունը կազմում է 17 միլիարդ դրամ, և ԱԺ-ն հարկադրված եղավ համապատասխան օրենքով ուղղումներ կատարել: Այդ համակարգերը վնասով են աշխատում, բայց դա պատճառը չէ, այլ հետևանքն է: Իսկ պատճառն այն է, որ վարվող տնտեսական քաղաքականությունը չափազանց անհեռանկար և կործանարար է, ինչի դեմ պայքարում է «Իրավունք և Միաբանություն» դաշինքը, մասնավորապես՝ Ձեր խոնարհ ծառան:

– Ես պատերազմի ժամանակ բանակում ծառայել եմ 2 տարի, պատերազմից հետո՝ 5 տարի: Այն տարիները դժվար տարիներ էին, և երբ հարցնում էինք՝ մինչև երբ պետք է ծառայենք, պատասխանում էին ստալինյան, բերիայական ոճով՝ քանի հայրենիքը պահանջում է: Հիմա ես կուզեի իմանալ՝ որքան է հայրենիքը պահանջում դիմանալ առանց ջեռուցման... Իմ ընտանիքը լքել, գնացել է ցրտի պատճառով: Արդյոք ե՞րբ եմ ես նրանց նամակ գրելու և ասելու՝ եկեք, արդեն ջեռուցում կա:

– Դա ամենևին հայրենիքի պահանջ չէ, այլ հայրենիքի բախտը տնօրինողների անճարակության հետևանք է: Երբ մենք Ձեր օգնությամբ, աջակցությամբ կարողանանք հասնել այն բանին, որ գործադիր իշխանության լծակները լինեն բարձր որակավորում ունեցող մասնագետների ձեռքին, որոնք ի զորու կլինեն վիճակը շտկել և, որ ամենակարևորն է, մատչելի, մարդկային լեզվով մեր բնակիչներին ասեն, թե առաջիկայում ինչ դժվարություններով պետք է անցնեն, իրենց անելիքը որն է, և, վերջին հաշվով, երբ այդ մղձավանջը վերանա, նոր մենք կկարողանանք Ձեզ հետ գիտակցված գնալ զրկանքների: Եվ կհիշենք այն ծանր, բայց արդիականությունը չկորցրած ասացվածքը. «Մահ իմացյալ անմահություն է»:

Որն է ելքը

– Ինչպե՞ս կգնահատեք ներքաղաքական իրավիճակը (Գևորգյան):

– Ստիպված ենք փաստել, որ վտանգված է հայոց պետականությունը: Երկիրը կործանման շեմին հասցրած ՀՀԾ-ական ուժերը, պատասխանատվությունից խուսափելու, թալանվածը մարսելու նպատակով, համախմբվել են: Խորացնելով ներքաղաքական ճգնաժամը, վախի սպառնալիքի մթնոլորտում նրանք շարունակում են իրենց ազգադավ գործը:

Մենք պարտավոր ենք օր առաջ կանգնեցնել ՀՀԾ-ածին մութ ուժերի երթը: Պետք է

մանկամիտ կամ ռոմանտիկ լինել՝ չհասկանալու համար, որ դրսից վիթխարի գումարներ են ծախսվում հայերի ձեռքերով ապակայունացնելու իրավիճակը Հարավային Կովկասում: Անհրաժեշտ է թոթափել քաղաքական կարճատեսությունը և կարողանալ գեթ մեկ անգամ տեսնել սպառնացող վտանգը, որի իրագործումն արդեն իսկ ստանձնել է հինգերորդ շարասյունը: Ասվածի մեջ չկան խտացված գույներ: Ասվածն ամենևին էլ կոչ չէ սկսելու վհուկների որս: Սա է իրականությունը:

Տագնապով արձանագրենք, որ ներկայիս Ազգային ժողովում քաղաքական մեծամասնություն կազմող կուսակցությունները, որոնք ձևավորել են նաև կառավարությունը, չեն դրսևորում քաղաքական կամք և վճռականություն՝ անաչառ գնահատելու ստեղծված իրավիճակը, անվանակոչելու այն տարրերին, որոնք, իրենց կուսակցություններ հորջորջելով, էլ ավելի են խորացնում ճգնաժամը: Եվ վերջապես, ժողովրդին ինչպես կարող է ոգևորել 2000 թվականի համար առաջարկվող բյուջեի նախագիծը, որն էլ ավելի կխորացնի ճգնաժամը, կդժվարացնի մեր կյանքը: Զարմանք ու տարակուսանք է առաջացնում այն, որ նախագծի հեղինակները, որպես բյուջեի արժանիք են ներկայացնում նրա խիստ իրատեսական լինելը:

Այսօր, թեկուզ և ուշացած, իշխանության բոլոր թևերը պարտավոր են տալ կենսահույզ հարցերի ճշգրիտ և սկզբունքային պատասխանները: Այլապես, առավել քան դատապարտելի է հայեցողական, օտար դիտորդի կեցվածքով օր օրի ուժ հավաքող ռևանշիստների ոտնձգություններին հետևելը: Այս պարագայում լռելը նույնն է, թե կամովին հրաժարվել քաղաքական ընտրանի-էլիտա կոչվելու, ժողովրդի բախտը տնօրինողի իրավունքից:

Խոստովանենք, որ ներկայիս քաղաքական, բարոյահոգեբանական խոր ճգնաժամը գաղափարախոսության հետ առնչություն չունի:

Բոլոր հայրենասեր ուժերի համար այսօր կա մի գաղափարախոսություն. փրկել ազգային պետականությունը վերահաս վտանգից, ներքին և արտաքին այն ուժերից, ովքեր փորձում են իրականացնել մեր թշնամիների երազանքը, որոնք անթաքույց հեգնանքով բարբաջում էին. «Մենք կշրջապատենք Հայաստանը, իսկ մնացածը հայերն իրենց ձեռքով կավարտեն»:

Ո՞ւմ համար պարզ չէ, որ սահմանադրական փոփոխությունները, կառավարման համակարգի վերաձևումներն ու նախագահական ընտրությունները և ոչ մի առնչություն չունեն ստեղծված վիճակին դիմակայելու հետ: Այդ պահանջները պարզապես ծխածածկույթ են հինգերորդ շարասյան դիվային ծրագրերն իրականացնելու համար:

«Ազգային Միաբանությունը» կոչ է արել, այսօր էլ է կոչ անում լինել զգոն և աչալուրջ՝ գիտակցելով, որ զոհասեղանին է դրված մեր բոլորի հայրենիքի բախտը, մեր բոլորի երեխաների ապագան:

Ում համար, իրոք, թանկ է հայրենիքը, նրանք այսօր պետք է իրենց ջանքերը նպատակամղեն երկու խնդիրների իրագործմանը, նախ վերականգնել ժողովրդի կոտրված կամքն ու սասանված հավատը պետության, արդարության ու ապագայի

նկատմամբ, երկրորդ՝ հանրապետության տնտեսությունը դուրս բերել խոր ճգնաժամից:

Սրանք չպետք է դառնան սոսկ կարգախոսներ, դրանց պետք է հետևեն արգասաբեր կոնկրետ գործեր:

Ցանկանում եմ մեկ անգամ ևս հիշեցնել մեր նշանավոր հայդուկ Հրայր Դժոխքի, նույն ինքը՝ Արմենակ Ղազարյանի կայծակի շանթ հանդիսացող հայտարարությունը, որը 1895 թվին հրապարակեց «Դրոշակը»: Հնչեցնենք հայդուկի խոսքերը. «Ժողովրդի ներկա օրհասի մեջ կուսակցությունների բաժանված լինելը, անձնական կրքերից բխած կուրությունը, եսասիրական փառքը ժողովրդին տանում են հավիտենական կործանման դուռը»: Դա ժողովրդի ուժերի միավորման ճիչ էր, ազգային միասնության կոչ ու մանիֆեստ:

Ուրեմն՝ ճշմարիտ դասեր քաղենք այս մարգարեական նախազգուշացումից, որի արդիականությունը դժվար է գերագնահատել:

Վարեց

Ռուսլան Թաթոյանը

«Իրավունք. հարց ու պատասխան», 1 – 7.II.2000:

Յո՞ երթաս, երկիր Հայաստան...

– *Պրն Գեղամյան, երկրում տիրող իրավիճակը շատերի կողմից այսօր բնութագրվում է որպես քաղաքական ճգնաժամ: Բայց արդյո՞ք այն ստեղծվել է 1999 թվականի հոկտեմբերի 27-ից հետո:*

– Ո՛չ, իհարկե, ո՛չ: Հիմքը դրվեց այն պահից, երբ մի խումբ բախտախնդիրներ, որոնք ազգային- ազատագրական պայքարի, Արցախյան հիմնահարցի դրոշի ներքո զավթեցին իշխանությունը և դրա հաջորդ օրն իսկ մոռացան իրենց խոստումները, հեռացան ժողովրդից: Եվ միակ նպատակը, որը հետապնդում էին, կողոպուտն էր՝ ուղեկցված ցինիկությամբ և հեգնանքով սեփական ազգի նկատմամբ:

Հոկտեմբերի 27-ի արմատները պետք է փնտրել նաև 1995 թվականին Ազգային ժողովի անարդար ընտրությունների և նրա կեղծված արդյունքների մեջ: Ճգնաժամն ավելի խորացավ 1996 թվականին, երբ, փաստորեն, տեղի ունեցավ առաջին հեղաշրջումը՝ զինյալ մարդկանց ներգրավմամբ: Այո, շատ խոր ճգնաժամի մեջ ենք, իսկ դրանից դուրս գալու ճանապարհը միաբանվելն է բոլորիս համար հոգեհարազատ գաղափարների շուրջը: Իմ կարծիքով, այդ գաղափարներն են.

1. Հայոց պետականության ամրապնդումն այն խոր գիտակցումով, որ ուզում ենք ապրել ու զարգանալ ոչ թե որպես անհատ՝ ուր էլ որ լինի, այլ որպես ազգ՝ սեփական հայրենիքում:

2. Ժողովրդի հավատի վերականգնումը պետության, իշխանությունների հանդեպ, համոզված լինելով, որ ոչ մի պաշտոնյա, ոչ մի խմբակցություն իրավունք չպետք է ունենա իր հանցավոր մոլորությամբ արդարացնելու այն սխալները, որոնք վտանգի տակ են դնում մի ողջ ժողովրդի:

3. Եվ վերջապես, արդարության հաստատումն է, ինչի երաշխիքն այսօր տարբեր դատարաններում ընթացող դատավարություններն օրինականության շրջանակում մինչև վերջ հասցնելն է:

Մենք ականատեսն ենք, որ երկրի ներսում արդեն ձևավորվել է, այսպես կոչված, հինգերորդ շարասյունը, որտեղ ընդգրկված են հիշածին զանազան կուսակցություններ, և որոնք ստեղծված իրավիճակը բարենպաստ հող են համարում ռևանշի, իշխանությունը հետ վերցնելու ճանապարհին: Երբ ուշադիր նայում ենք իրենց արդար քաղաքական գործիչ հորջորջողների՝ դեռևս ոչ հեռու անցյալի կենսագրությանը, տեսնում ենք, որ դրանք այն մարդիկ են, ում օրոք և ում ձեռքերով իրականացվել է էներգետիկ տեռորը, ում օրոք Երևան քաղաքը սառել է, տեղի են ունեցել քաղաքական սպանություններ, ովքեր փոշիացրել են շուրջ 650 մլն ԱՄՆ դոլարին համարժեք արտասահմանյան վարկերը,

ովքեր ջրի գնով տիրել են ազգային հարստությանը, և այժմ, երբ տեսնում են, որ հնարավոր է արդարությունը վերականգնվի, ոճիրների կծիկը բացվի, բնականաբար, համախմբվում են: Իսկ մինչ օրս այս ամենին գնահատական չի տրվում. մեկ-երկու կուսակցությունների ներկայացուցիչներ են միայն այդ մասին խոսում, մեկ-երկու թերթեր են հանդգնում պարզորոշ խոսել այդ արատների մասին, որոնք էլ վարձու լրատվամիջոցների կողմից իսկույն մեղադրվում են արնախում լինելու մեջ: Այսպիսով, պարզապես փորձ է արվում, իրոք, արյունալի գործերից հասարակության ուշադրությունը շեղել, բևեռել այն մարդկանց վրա, ովքեր ընդամենն ասում են՝ թող արդարություն հաստատվի:

– 2000 թվականի պետբյուջեի նախագիծը որքանո՞վ է նախապայմաններ ստեղծում սոցիալ-տնտեսական ճգնաժամի հաղթահարման համար:

– Ցավոք, 2000 թվականի բյուջեի նախագիծը ոչ մի լավ բան չի խոստանում: Այս նախագծից չի երևում, թե որոնք են տնտեսության այն առաջնահերթությունները, որոնցով մեր տնտեսական ու ֆինանսական համակարգերը պետք է առաջնորդվեն: Ընդհակառակը՝ քանիցս խոսվում է Ռուսաստանի ճգնաժամի բացասական ազդեցության մասին. ի՞նչ է, դեռ քանի՞ տարի պետք է խոսեք այդ մասին: Ձեռնարկեք միջոցներ, աշխատել է պետք: Նույն Ռուսաստանում արժեզրկումը 2000 թվականին, ըստ ՌԴ բյուջեի, ծրագրված է 18-20 տոկոսի սահմաններում, իսկ մեր բյուջեով նախատեսված է 5 տոկոս: Արդեն իսկ դրանով Ռուսաստանի արտադրողը շատ ավելի բարենպաստ վիճակում է հայտնվում, քան Հայաստանինը: Արհեստականորեն մեր դրամը ռևալվացիայի ենք ենթարկում ռուսական ռուբլու նկատմամբ: Հետևապես մեր արտադրանքի մրցունակությունն ավելի ցածր է լինելու, քան Ռուսաստանինը:

Հաջորդը. այսօրվա դրությամբ բյուջեով նախատեսված թվերը ոչ միայն չեն խրախուսում բանկային համակարգի մասնակցությունը արտադրության ռեալ սեկտորի զարգացմանը, այլև խոչընդոտում են: Ինչո՞ւ առևտրային այս կամ այն բանկը պետք է ներդրում կատարի նյութական արտադրության ոլորտում, երբ լավագույն դեպքում այնտեղ եկամտաբերությունը կազմելու է 10 տոկոս, մինչդեռ իրենք, առանց որևէ ռիսկի, կարող են գնել պետական կարճաժամկետ պարտատոմսեր, և իրենց մաքուր եկամուտը կկազմի 49-50 տոկոս: Արդեն ակնհայտ է, որ 2000 թվականն առավել կխորացնի 1999 թվականի ճգնաժամը. զավեշտն այն է, որ դա կարվի արդեն իսկ այդ օրենքով: Ի՞նչ է, միտումնավո՞ր է այս ամենն արվում: Սի՞թե մեծամասնությանը՝ «Միասնություն» դաշինքին պարզ չէր, որ տնտեսական այն քաղաքականությունը, որը վարվում էր ՀՀԾ-ի օրոք, այսօրվա նույն պաշտոնյաների կողմից շարունակվելու է նաև հիմա: Փաստորեն չի գործում անգամ այն համակարգը, որի անունը դրել են շուկայական, որն էլ, եթե բնութագրենք մեր տնտեսությունը, ոչ մի ընդհանուր բան չունի ազատ ձեռներեցության, ազատ շուկայի հետ:

Մեկ անգամ ևս նշենք, որ առաջացել է համակարգային փոփոխությունների անհրաժեշտություն: Իսկ այն մարդիկ, ովքեր եղել են ներկայիս գործող համակարգի «հիմնադիր հայրերը», չեն կարող իրենց հոգեզավակից հրաժարվել: Երկու ցուցանիշներ են ֆետիշացրել ու ընկել հետևից, և արդեն վեց տարի է՝ նույն քարոզն են անում՝ հասել

ենք մակրոտնտեսական կայունության: Իրականում ի՞նչ են անում՝ արհեստականորեն սեղմում են դրամական զանգվածը, շրջանառության մեջ դրամի պակաս առաջացնում ու այդպիսով պահում վերջինիս «կայուն» փոխարժեքը դոլարի հանդեպ: Մինչդեռ տարեցտարի ընկնում է գնողունակությունը:

Համակարգը նորմալ գործելու համար նախապայմաններ են պետք նաև ֆինանսական համակարգում. շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածի հարաբերությունը համախառն ներքին արդյունքի հանդեպ, որը տնտեսագետների համար հայտնի ցուցանիշ է՝ մոնետիզացիան, մեզ մոտ կազմում է 11 տոկոս, իսկ ցանկացած քիչ թե շատ զարգացած երկրում դա 75 տոկոսից պակաս չէ: Այսինքն՝ նյութական արտադրության, ռեալ տնտեսության ոլորտը փողազրկել են: Չունենալով շրջանառու միջոցներ՝ զարգանալու մասին խոսք լինել չի կարող, ինչպես նաև չի կարելի ապահովել տարրական վերարտադրություն: Ուստի 2000 թվականի բյուջեի առաջարկվող նախագիծն այս տեսքով ընդունվելու դեպքում առավել կխորացնի համակարգային ճգնաժամը, սոցիալական բևեռացումը և կառաջացնի գործազրկության մի նոր ալիք՝ իր ողջ անցանկալի հետևանքներով: Իսկ եթե դրան գումարենք այն, որ 2000-2001 թվականները ամենածանր տարիներն են արտաքին պարտքերը մարելու տեսանկյունից, ապա մեկնաբանություններն ավելորդ են:

– Հոկտեմբերի 27-ի ահաբեկչության հետաքննությունը շարունակվում է, սակայն այսօր դատարաններում քննության առարկա են ոչ պակաս կարևոր քրեական գործեր, ինչպես, օրինակ, «Վանո Սիրադեղյան+11» գործը: Ինչպիսի՞ն է Ձեր գնահատականը դատավարության ընթացքի և Վ. Սիրադեղյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի վերաբերյալ:

– Մեր դաշինքն ունի իր սկզբունքային դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ, և դա հայտնել ենք բազմիցս: Հարկ կլինի՝ ԱԺ-ում նորից կհայտնենք: Ինչո՞ւ մասնավորապես «Հայոց Աշխարհ»-ը հարց չի բարձրացնում իր էջերում, թե ինչպիսի՞ն է «Միասնություն» դաշինքի ղեկավարների կարծիքն այս հարցում: Օրինակ, մեծամասնությունը ներկայացնող ԱԺ նախագահին չհարցնե՞նք՝ հարգելի պրն Արմեն Խաչատրյան, Ձեր գլխավորած ԱԺ պատգամավորին ամեն օր հեռուստատեսությամբ ցույց են տալիս և ասում՝ ամբաստանյալ, սպանությունների հեղինակ, ի՞նչ եք կարծում՝ որպեսզի դատավարությունն անաչառ լինի, պատգամավորը պե՞տք է ազատության մեջ մնա, թե՞ Մուշեղ Մովսիսյանի նման անհապաղ, առանց քննարկումների կալանավորվի և բանտարկվի: «Միասնության» կարծիքը չհարցնե՞նք, թե ժողովուրդն ի վերջո չպե՞տք է իմանա, թե իրենց ղեկավարներն ինչ են մտածում: Նույն հարցերն ուղղենք նաև կառավարությանը, մասնավորապես՝ նույն Շահեն Կարամանուկյանին, որը ՀՀԾ վարչության անդամ է եղել և իրենց վարչության ներկայիս ղեկավարի մասին նման մեղադրանքներ են հնչում, բա վերաբերմունք չհայտնի՞ (անգամ եթե Շ. Կարամանուկյանը կառավարության մի շարք անդամների նման արդեն հրաժարվել է ՀՀԾ-ական լինելուց):

Մեծամասնության լռությունը համարում եմ անուղղակի ճնշում դատարանի և հանրապետության գլխավոր դատախազի վրա՝ ի հեճուկս ճշմարտության: Քաղաքական

պատասխանատվություն ստանձնողներ են իրենց պատկերացնում, բայց այն հարցերի շուրջ, որոնք սկզբունքայնություն են պահանջում, լռում են: Իսկ եթե մի լրագրող իրենց կարծիքին հակառակ արտահայտություն է անում, միանգամից անհանդուրժողականություն են դրսևորում: Մի խումբ մարդկանց նկատմամբ ճշմարտության և բարոյական մի նորմեր են գործում, իսկ մի ուրիշ խմբի նկատմամբ՝ բոլորովին այլ: Մի դեպքում մեկ մարդու ցուցմունքով կասկածյալը կարող է հայտնվել բանտում (ելնելով քննության շահերից, ինչը չենք վիճարկում), իսկ մյուս դեպքում, երբ տասնյակ մարդիկ հրապարակավ հայտարարում են իրենց նկատմամբ գործադրվող սպառնալիքների մասին, դա մնում է «ճայն բարբառո հանապատի»: Ի՞նչ է, հերթական նոր աղմկահարույց մի իրադարձություն՞ են ուզում: Երկակի չափանիշներով են առաջնորդվում, դրա համար էլ ժողովրդի մեջ անվստահությունն ավելի է խորանում:

– Արդյոք նման իրավիճակում սահմանադրական բարեփոխումները կարո՞ղ են դառնալ ճգնաժամի հաղթահարման միջոց:

– Սահմանադրական փոփոխությունները, նախագահական արտահերթ ընտրությունները ծխածածկույթ են, ուշադրությունը շեղելու միջոց: Խնդիրը, որը հետապնդում են մութ ուժերը, մեկն է՝ փորձել հնարավորինս ապակայունացնել իրավիճակը երկրում, որպեսզի առավել ծանր խնդրի՝ լինել-չլինելու առջև կանգնի մեր պետականությունը, որպեսզի կարողանան նախկինում գործած հանցագործությունները, թալանը մարսել. ուրիշ ոչ մի այլ նպատակ չկա: Գուցե նաև կան ուրիշ պատճառներ. դրսից են ֆինանսավորվում՝ դա էլ բացառել պետք չէ: Կարծում եմ՝ շուտով ամեն ինչ պարզ կդառնա, թե ո՞վ և ինչի՞ց դրդված է այդ հարցը բարձրացնում, ո՞ւմ ինչ խոստումներ են տվել, ո՞վ և ի՞նչ հանցանք ու զանցանք է ուզում քողարկել այս ծխածածկույթի տակ: Ի՞նչ սահմանադրական փոփոխությունների մասին է խոսքը. ներկայիս Սահմանադրությունն արդյոք խանգարո՞ւմ է մեծամասնությանը՝ կյանքի կոչելու ընտրարշավի հիմքում դրված իրենց ծրագրերը կատարելուն, Սահմանադրությո՞ւնն է խոչընդոտում, որ Վ. Սիրադեղյանի դատավարությունը մինչև վերջ հասցվի կամ հոկտեմբերի 27-ի դեպքերը մինչև վերջ բացահայտվեն՝ ամենևին ոչ: Ուրեմն ի՞նչ սահմանադրական փոփոխությունների մասին է խոսքը: Բլեֆ է: Չէ՞ որ այս խառնաշփոթը, բացի վիթխարի ծախսերից, ինչի հնարավորությունն այսօր պետությունը չունի, հերթական անգամ սեպ կխրի մարդկանց միջև և կբարձրացնի անբավարարվածության ու դժգոհության նոր ալիք: Այսօր մեզ ոչ թե դա է պետք, այլ, ինչպես քիչ առաջ ասացի, ազգը համախմբելու գաղափարներ:

Սոնա Տրուզյան

«Հայոց Աշխարհ», 2.II.2000:

Այդտեղ գործում են կա՛մ կոռուպցիան, կա՛մ ազդեցության գործակալները, կա՛մ՝ երկուսը միասին

Հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքը 2000 թ. էապես կանխորոշվում է բյուջեով: Թե ինչպիսին կլինի այդ ազդեցությունը, ինչ փոփոխությունների կարիք ունի ԱԺ-ին ներկայացված բյուջեի նախագիծը, այդ հարցերով դիմեցինք «Իրավունք և Միաբանություն» խմբակցության ղեկավար, «Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանին:

– Արդյո՞ք բյուջեի նախագիծը պարունակում է երկրի զարգացման որևէ հայեցակարգ և՝ ինչպիսի՞ն:

– Ցավոք սրտի, նախագիծը հայեցակարգային չէ: Ավելին՝ այն հանրապետության համար խիստ կենսական և ոչ մի հարցի պատասխան չի տալիս: Չեն սահմանված ժամանակի հրամայականը դարձած գերակայությունները՝ լինի դա աղքատության աննախադեպ աճի դեմ պայքարը, օր օրի ավելացող գործազրկությանը դիմակայելը, տագնապալի չափերի հասնող արտագաղթը կասեցնելը, հարյուր հազարավոր թոշակառուների, բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարման ապահովումը: Բյուջեի մակարդակը, նրա ծավալները, երբ եկամտային մասն ավելի քան 2 անգամ փոքր է Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքից, վկայում են այն մասին, որ մենք գործ ունենք ոչ թե բյուջետային խորը ճգնաժամի հետ. դա արդեն իսկ իմաստազրկվել է: Խնդիրը պետության ֆինանսական ողջ համակարգի փլուզման վտանգի մեջ է:

Չեն կատարվել Հայաստանի Հանրապետության 1999-ի պետական, մարզային, քաղաքային, համայնքային բյուջեները: Մենք արդեն ականատես ենք պետական ֆինանսական համակարգի ապակայունացման:

– Ի՞նչն է ապակայունացման արմատը: Արդյո՞ք այն համակարգը, որ տարեցտարի նախատեսում է բյուջետային դեֆիցիտ, որի փակման հույսը դրվում է արտասահմանյան նորանոր վարկերի վրա:

– Արդեն որերորդ տարին է կառավարությունը, առանց անհարմար զգալու, հայտարարում է, որ հասել է մակրոտնտեսական կայունացման: Ցավոք սրտի մոռանում են, որ մակրոտնտեսական կայունությունը պետք է ներառի իր մեջ կառավարության այնպիսի գործողություններ, որոնք վերահսկելի են դարձնում տնտեսական իրավիճակը՝ խնդիր

ունենալով համախառն ներքին արդյունքի ծավալն առավելագույնս մոտեցնել իր պոտենցիալ հնարավորություններին՝ աշխատուժի մաքսիմալ զբաղվածության պայմաններում: Իսկ ի՞նչ ունենք մեզանում: Շարունակաբար աճող գործազրկություն, որն անցյալ տարեվերջին հասավ 175 հազարի, մեծ չափի հարկային ապառքներ, որոնք նոյեմբերի 1-ի դրությամբ կազմել էին 52,174 մլրդ դրամ, ինչը 17 մլրդ դրամով ավելի էր, քան 1999 թ. սկզբին:

Ծայրահեղ վտանգավոր միտումներ կան արտաքին առևտրում: 1999-ին առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը կազմեց շուրջ 295 մլրդ դրամ: Այդ պայմաններում զավեշտ է, երբ ոմանք հրճվանքով փաստում են, թե արտահանումն ավելացել է 5,9 տոկոսով, իսկ ներմուծումը կրճատվել է 11 տոկոսով: Սակայն ինչի՞ հաշվին: Արտահանումն իրականում ավելացել է հանքահումքային ռեսուրսների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, ոչ թանկարժեք մետաղների արտահանման հաշվին: Այդ 3 ճյուղերի տեսակարար կշիռը արտահանման ընդհանուր ծավալի մեջ կազմում է շուրջ 72 տոկոս, իսկ ներմուծումը կրճատվել է ազգաբնակչության անվճարունակության պատճառով:

Երկրի ընդերքի անխնա և անվերահսկելի շահագործման հաշվին արտահանում են հանքային պաշարները՝ անվերջ հորջորջելով հումքի վերջնական մշակման անհրաժեշտության մասին:

Չի կարող չմտահոգել նաև այն, որ գնալով մեծանում է հանրապետության կախվածությունը արտաքին վարկատուներից: Միայն 1999 թվին արտաքին աղբյուրներից ստացվել է 151,4 մլն դոլար վարկ, որից 42,1 հատկացվել է արտաքին պարտքի սպասարկմանը՝ վերջինս ավելացնելով շուրջ 100 մլն դոլարով: Այնինչ, ՀՆԱ-ի աճը կազմել է ընդամենը 3 տոկոս: Ի՞նչ է ստացվում: Տարեցտարի արտաքին պարտքն ավելանում է 100-150 մլն դոլարով, իսկ համախառն ներքին արդյունքի աճը չափազանց համեստ է (եթե այն իրոք կա):

Մինչդեռ, վարկերի նպատակային օգտագործման դեպքում, ճիշտ ներդրումային քաղաքականության պարագայում, ստացված վարկերի դիմաց պետք է ակնկալվեր առնվազն դրանց կրկնակիի-եռակիի չափով համախառն ներքին արդյունքի աճ: Այսինքն, եթե խոսենք թվերի լեզվով, ապա 860 մլն դոլարի չափով ստացված վարկերը, եթե օգտագործվեին նպատակային, ապա ժամանակի ընթացքում կապահովվեր ոչ պակաս, քան 2 մլրդ դոլարին համարժեք համախառն ներքին արդյունքի աճ: Այսինքն, կկրկնապատկվեին վերջինիս ծավալները: Իսկ մեզ մոտ պետական այրերն անհասկանալի հիացմունքով արձանագրում են 3 տոկոսանոց աճ:

– Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք բյուջետային ճգնաժամը նաև հետևանք չի վարվող սխալ հարկաբյուջետային քաղաքականության:

– Ակնհայտ է, որ բյուջետային ճգնաժամը հետևանք է նաև հարկային սխալ քաղաքականության: Ստեղծված համակարգն ակնհայտորեն ներդաշնակ չէ տնտեսությունում առկա պայմաններին: Նա կարող էր լինել կենսունակ, եթե մեզանում, ի սկզբանե, բարձր կատարողական կարգապահություն ավանդույթ լիներ, տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը հարկային մարմինների կողմից լիներ թափանցիկ և

վերահսկելի, վերջապես, դեռ կազմավորման փուլում գտնվող սեփականատերերը ունենային որոշակի քաղաքացիական իրավագիտակցություն: Ցավոք սրտի, այս բոլոր նախադրյալները մեզանում բացակայում են, և գործող հարկային համակարգը վերասերվում է ի հակառակ իրեն, դառնալով օրինավոր հարկատուների համար պատժման գործիք, միաժամանակ խրախուսելով ստվերում գործող օրինազանցներին: Եթե մինչ օրս վերը նշված ավանդույթների բացակայության պայմաններում հարկերն այնուամենայնիվ որոշակի ծավալներով հավաքվել են, ապա՝ միայն վերևից քաղաքական, կամային ճնշման հետևանքով: Եվ ինչքան կառավարության մոտ սակավ են հնարավորությունները ու ուժն այդ ճնշումն իրագործելու համար, այնքան վատ են հարկերի հավաքման արդյունքները: Ցավոք սրտի, ասվածիս ապացույցն է այն իրողությունը, որի ականատեսն ենք հարկերի հավաքման ոլորտում հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձություններից հետո: Փաստենք, որ 2000 թ. հունվարին հարկային մուտքերը կազմել են ընդամենը 7 մլրդ դրամ, նախատեսված 14 մլրդ-ի դիմաց: Հենց հարկային համակարգում է թաքնված բյուջետային մուտքերի նվազեցման բուն պատճառը:

– Ասացիք,որ հարկային քաղաքականությունը չի նպաստում տնտեսության զարգացմանը, միգուցե վարվող դրամավարկային քաղաքականությո՞ւնն է խթանում այն:

– Դարձյալ պատասխանս ժխտողական է: Ավելին՝ վարվող դրամավարկային քաղաքականությունը խոչընդոտում է հանրապետության տնտեսական ռեալ հատվածի զարգացումը: Փաստորեն, վարվող դրամավարկային քաղաքականության արդյունքում տեղի է ունենում ազգային եկամուտների վերաբաշխում՝ հօգուտ ֆինանսական սպեկուլյանտների: Հիմնավորեմ ասածս: Միայն 1997-99 թվականների ընթացքում ՀՀ կառավարությունը և Կենտրոնական բանկն առաջնային շուկայում տեղաբաշխել են առավել քան 110 մլրդ դրամի պետական կարճաժամկետ պարտատոմսեր (ՊԿՊ-ներ): Այդ գործարքների արդյունքում «արտոնյալ» 6-7 առևտրային բանկերի եկամուտները գերազանցել են 28 մլրդ դրամը: Մասնավորապես, 1999 թվականին, առաջին երեք եռամսյակներում ՊԿՊ-ների տոկոսադրույքները տատանվել են 50-70 տոկոսի շրջանակում: Դրա հետ մեկտեղ, աննախադեպ մեծ են եղել Կենտրոնական բանկի կողմից կառավարությանը վերաֆինանսավորման տոկոսադրույքները: Նման «թանկ փողերի» քաղաքականությունը, որը տարիներ շարունակ վարում են Կենտրոնական բանկն ու կառավարությունը «մակրոտնտեսական կայունացում» անվան տակ, անհնար են դարձնում ցանկացած լուրջ ներդրումային գործընթաց: Փաստորեն, կառավարությունն ու Կենտրոնական բանկը, փոխանակ ձեռնարկեն գործուն քայլեր՝ ֆինանսական միջոցները նպատակաուղղելով արտադրության ոլորտ, իրականում խրախուսում են բանկային զանազան ճամարտակությունները: Նման գործողությունները վերջիններս արդարացնում են սղաճը զսպելու պատճառաբանությամբ, որը կարծես թե դարձրել են իրենց աշխատանքի բուն առանցքը:

– Արդյոք դա չի՞ նշանակում, որ ի սկզբանե հաստատագրվում է ամբողջ բյուջեն 6-7 բանկերի միջոցով քամելու սխեմա, և արդյո՞ք դա որոշակի կլանային խմբավորումների լոբբինգի արդյունք չէ՞:

– Այո, դուք իրավացի եք: Ուրիշ բացատրություն ես չեմ տեսնում: Էկոնոմիկայի ռեալ հատվածից դրամական բոլոր հոսքերն ուղղվում են ֆինանսաբանկային համակարգ և այնտեղ պտտվում միևնույն մարդկանց միջոցով: Ավելին, բյուջեում գոյացած ճեղքվածքը լրացնելու անվան տակ ՊԿՊ-ներին են զարկ տալիս՝ դարձնելով մեզ ականատեսն այն իրավիճակի, երբ տնտեսությունն ոչնչացնելու գնով հարստացնում են 6-7 բանկատերերի: Դա երբեք պատահական լինել չի կարող: Տնտեսական համակարգի խորը ճգնաժամի պարագայում աճում է առևտրային բանկերի հիմնական կապիտալը, այն էլ՝ շատ արագ: Օրինակ, 1998 թ. այն ավելացել է 52 տոկոսով: Հարց է առաջանում՝ ո՞ւմ հաշվին է ավելանում բանկերի կապիտալը: Բնականաբար՝ բյուջեի հաշվին: Ներկայացված բյուջեի նախագծում, եթե այն հաստատվի, ցավոք սրտի, այս ամենը կրկնվելու է:

– Նշված բանկերը միայն տեղակա՞ն կապիտալի վրա են հիմնված:

– Քողարկվելով «Բանկային գաղտնիքի մասին» օրենքով, որոշակիորեն չեն ասում, թե այդ մի քանի բանկերի բաժնետոմսերի հսկիչ փաթեթներն ում ձեռքին են: Շուրջ 2 տարի առաջ, որոշ գործիչներ «վրիպեցին» և խոստովանեցին, որ բանկային համակարգի կապիտալի 56 տոկոսը գտնվում է ոչ ռեզիդենտների, այսինքն՝ օտարերկրացիների ձեռքին: Ստացվում է, որ մենք մի կողմից ավելացնում ենք արտաքին պարտքը, մյուս կողմից՝ հարստացնում նրանց, ովքեր դարձել են մեր տնտեսության մակաբույծը:

– Արդյո՞ք դրանից կարելի է եզրակացնել, որ գործ ունենք իշխանության բուրգում գործող կոռուպցիայի համակարգի հետ, որը կանխորոշում է բյուջեի կառուցվածքը:

– Յուրաքանչյուր ողջամիտ մարդ այլ եզրակացության գալ չի կարող:

Բացի բանկերի անօրինական հարստացումից, հարված է հասցվում տեղական արտադրողին: Սղաճի արհեստական զսպման պատճառով տեղական արտադրողը հայտնվում է անհավասար պայմաններում ԱՊՀ երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի շուկաներում: Ռուսաստանի օրինակով պարզեցնեմ միտքս: 1998-ին Ռուսաստանում սղաճը կազմել է 11 տոկոս, Հայաստանում առկա է եղել դեֆլյացիա – 1,3 տոկոս: 1999-ին համապատասխանաբար այն կազմել է 23 տոկոս Ռուսաստանում և 2 տոկոս Հայաստանում: Միայն սրա հետևանքով տեղական արտադրանքը, համեմատած նույն Ռուսաստանի արտադրանքի հետ, կորցնում է իր մրցունակությունը՝ փաստորեն արհեստականորեն բարձր մակարդակի վրա պահվող ինքնարժեքի պատճառով: Ցավոք, այդ միտումը շարունակվելու է և այս տարի, երբ սղաճը նախատեսվում է 5 տոկոսի սահմանում: Մինչդեռ Ռուսաստանում այն կազմելու է 18 տոկոս: Արդյունքում մենք կորցնում ենք շուկաները: Եթե 1995-ին ԱՊՀ երկրներ արտահանումը գերազանցում էր 170 մլն դոլարը, ապա 1999-ին այն 44 մլն դոլարից էլ պակաս էր: Մասնավորապես, եթե Ռուսաստան 91 մլն դոլարին համարժեք էինք արտահանում, ապա հիմա՝ ընդամենը 26 մլն դոլարի չափով:

Համեմատենք դա Թուրքիայի և Հայաստանի առևտրաշրջանառության ծավալների հետ: Եթե 1995 թվականին Հայաստանից Թուրքիա է արտահանվել 2,6 միլիոն դոլարի արտադրանք և ներմուծվել ճիշտ նույն քանակի, ապա 1999-ին Թուրքիա է արտահանվել 920 հազար դոլարի արտադրանք, իսկ ներմուծվել՝ 34 միլիոն դոլարի: Այդ համադրումը

բերում է ազգային անվտանգությանն առնչվող լուրջ հարցադրումների՝ արդյոք ի՞նչ է նշանակում, որ ԱՊՀ երկրների հետ առևտրաշրջանառությունը շեշտակիորեն կրճատվում է, իսկ Թուրքիայի հետ՝ աճում, այն էլ՝ Հայաստանը թուրքական ապրանքների սպառման շուկայի վերածելու գնով: Ակամա գալիս ես եզրակացության, որ այդտեղ գործում են կա՛մ կոռուպցիան, կա՛մ ազդեցության գործակալները, կա՛մ՝ երկուսը միասին: Եթե դրան ավելացնենք, որ տարեկան ամենահամեստ հաշվարկով հանրապետությունից դուրս է գալիս առնվազն 250 մլն դոլարի արտարժույթ, ապա մեկնաբանություններն ավելորդ են:

– Պատկերը բավականին մռայլ է: Սակայն, արդյո՞ք բյուջեի նախագծում չկա որևէ տող, որը կնպաստեր տեղական արտադրության գոնե մեկ ճյուղի աշխուժացմանը:

– Ցավոք ոչ: Մինչդեռ կան ոչ քիչ թվով ռեզերվներ: Մասնավորապես հարց է ծագում. ի՞նչն է խանգարում այսօր մեր բանակի, ներքին զորքերի, սահմանապահների հանդերձանքի, սննդամթերքի անհրաժեշտ քանակն ապահովել տեղական արտադրանքի հաշվին: Ի՞նչն է խանգարում, օրինակ, որ զինվորական համազգեստ, ներքին հագուստ և ճտքավոր կոշիկներ կարելու պատվերներն իջեցվեն տեղական արտադրողին կամ պետպատվերով գյուղացիներից տարբեր տեսակի սննդամթերք ստանան: Ասում են, թե, օրինակ, տեղական արտադրանքն անորակ է կամ՝ թանկ: Սակայն, ով կհավատա, որ ոչ վաղ անցյալում կանացի նրբագեղ կոշիկներ կարող հայ վարպետները չեն կարող «սալդատի սապոգ» կարել, բա եղա՞վ:

Այս ամենի իրական դրդապատճառները պարզ են, իսկ իրավիճակի շտկումը թողնենք կառավարության խղճին: Մեկ այլ օրինակ: Վերջին երեք տարիների ընթացքում ճանապարհաշինարարության համար ծախսվել է շուրջ 25 մլրդ դրամ՝ ներառյալ Համաշխարհային բանկից ստացված վարկերը: 1999 թվականին բյուջեով նախատեսված էր 7 մլրդ դրամ (հետո սեկվեստր արվեց և մնաց 3 մլրդ դրամ), այս տարվա համար նախատեսված է 2,286 մլրդ դրամ: Մի կողմ թողնենք՝ դա շատ է, թե՝ քիչ: Ակնհայտ է այն, որ այս գումարների շուրջ 60 տոկոսը ծախսվել և ծախսվելու է դրսում՝ անորակ բիտում ձեռք բերելու նպատակով, անորակ ասֆալտ անելու, որը մյուս օրը քանդվելու է: Հարց է առաջանում՝ ունենալով ցեմենտի արտադրության հսկայական հզորություններ, խճաքարի մեծաքանակ չշահագործվող հանքեր, ինչո՞ւ չօգտագործել դրանք: Ետպատերազմյան ավերված Գերմանիայում եկել էին այն եզրակացության, որ թանկից էժանը չկա, և ճանապարհները պետք է բետոնածածկ լինեն: Թող հաշվարկեն, միգուցե վերջնական արդյունքում ավելի նպատակահարմար է Հայաստանում դա կիրառել և դրանով իսկ խթանել տեղական շինանյութերի արտադրությունը, ստեղծել հազարավոր նոր աշխատատեղեր: Տնտեսության աճ ապահովող, լրացուցիչ աշխատատեղեր ստեղծող չօգտագործված ռեզերվները մեզանում քիչ չեն: Սակայն դրանք կյանքի չեն կոչվում այն պատճառով, որ մինչև օրս չկա կառավարության կողմից մշակված ներքին պահանջարկի ընդլայնման պետական ծրագիր, այս խնդիրն անտեսվում է նաև տարեկան բյուջեներում: Զարմանք ու տարակուսանք է առաջացնում այն, որ բյուջեի նախագծի քննարկումների ժամանակ և ոչ մի նախարարի այս հարցերը չեն հուզում:

– Իսկ Ձեր կարծիքով, ո՞րն է ելքը հանրապետությունը ներկայիս անելանելի թվացող

վիճակից դուրս բերելու համար:

– Մինչև կառավարությունը հիմնավոր ձևով չվերանայի իր կողմից վարվող և իրեն չարդարացրած դրամավարկային, հարկային, ինվեստիցիոն, սոցիալական քաղաքականությունը, չնպաստի սեփականատիրոջ կայացմանը, մինչև որոշակի չդարձնի արտաքին տնտեսական քաղաքականությունը, չձևակերպի իր մոտեցումները սեփականաշնորհված, սակայն չաշխատող ձեռնարկությունների նկատմամբ, ինչպես նաև՝ չսահմանի սեփականատիրոջ համար սոցիալական պարտավորությունների համակարգը և, վերջապես, մինչև պարզ չդառնա, թե ո՞րն է պետության դերը ներկայիս տնտեսական խորը ճգնաժամը հաղթահարելու գործում, ոչ մի դրական տեղաշարժի մասին խոսք լինել չի կարող: Ցավոք սրտի, 2000 թվականի համար ներկայացված բյուջեի նախագիծը վերջին 9 տարիներին վարվող տնտեսական քաղաքականության ճիշտ կրկնության արտահայտությունն է:

– Իսկ արդյո՞ք «Իրավունք և Միաբանություն» պատգամավորական խմբակցության միայն վերը նշված հարցադրումներն են մատնանշում ելքը:

– Իհարկե, ոչ միայն դրանք: Ավելացնեմ, խիստ անհրաժեշտ է նոր տնտեսական քաղաքականության մշակումն ու նրա իրականացումը: Մասնավորապես, դրամավարկային քաղաքականության բնագավառում անհրաժեշտ ենք համարում անցումը դրամական առաջարկի ճկուն քաղաքականությանը, վարկավորման տոկոսադրույքի իջեցմամբ արդյունաբերության համար ֆինանսական հոսքերի ապահովմանը: Մենք գիտակցում ենք նաև այն հնարավոր վտանգները, որով հղի է նման քաղաքականության իրագործումը, եթե այն հիմնված լինի լայնածավալ էմիսիայի վրա: Չմոռանանք այս առումով մեր հնարավոր քննադատներին հիշեցնել, որ երբ իրականացվող ներդրումների պայմաններում համախառն ներքին արդյունքի աճի տեմպերը գերազանցում են դրամական զանգվածի աճի տեմպերին, ապա սղաճը վտանգավոր չէ:

Դրա հետ մեկտեղ, մենք համոզված կողմնակից ենք այն բանի, որ արտադրության ռեալ հատվածի արտոնյալ վարկավորման արդյունքում, ի հաշիվ վերահսկվող էմիսիայի, հնարավոր է հասնել շոշափելի տնտեսական աճի:

Հարկային քաղաքականության բնագավառում մենք կողմնակից ենք հարկային բեռի վճռական և համապարփակ թեթևացման, դրան զուգահեռ նաև՝ հարկման բազայի ընդլայնմանը: Նոր հարկային քաղաքականության հիմքում պետք է դրվեն հետևյալ չափանիշները՝

ֆիզիկական անձից գանձվող հարկերը չպետք է գերազանցեն 10 տոկոսը.

ձեռնարկությունները գործնականում պետք է ունենան հարկային բեռի այն մակարդակը, որը չի գերազանցի 20 տոկոսը, իսկ գյուղատնտեսական ձեռնարկությունների համար՝ 15 տոկոսը:

Ստվերային տնտեսությունից դուրս եկող ձեռնարկությունների, տնտեսվարող սուբյեկտների մուծման ենթակա ներման հարկերը չպետք է գերազանցեն 12 տոկոսը: Դրա արդյունքում՝ ստվերայինից դուրս գալը, օրինական ճանապարհով բարձր եկամուտներ ստանալն ինքնին կդառնա ավելի շահեկան: Զուգահեռաբար անհրաժեշտ է

վերանայել անուղղակի հարկերի չափը, որոնք պետք է գանձվեն բնական ռեսուրսների, մասնավորապես՝ Հայաստանի ընդերքին հատուկ այնպիսի հանքատեսակների օգտագործման բնագավառում, ինչպիսիք են՝ ոսկու, պղնձամոլիբդենային խտանյութերը, շինաքարերից՝ տուֆը, մարմարը, գրանիտը, տրավերտինը, պերլիտը, ինչպես նաև անխնա օգտագործվող հանքային ջրերը: Ի վերջո, հարկաբյուջետային ողջ քաղաքականությունը նպատակաուղղված պետք է լինի արտադրության աճին, նրա ընդարձակման համար բարենպաստ մակրոտնտեսական պայմանների ստեղծմանը, ներդրումային ակտիվության բարձրացմանը:

Ինվեստիցիոն քաղաքականության և էֆեկտիվ սեփականատիրոջ ստեղծման բնագավառում

Անհրաժեշտ ենք համարում ազնիվ ճանապարհով ձեռք բերված մասնավոր սեփականության և սեփականատիրոջ իրավունքների օրենսդրորեն պաշտպանությունը, արտաքին ներդրողների համար բարենպաստ հարկային պայմանների ստեղծումը, ներդրողների ռիսկայնության նվազեցումը: Դրա հետ մեկտեղ, կարևորում ենք պետության կողմից հատկացվող արտոնյալ վարկերի ծավալների մեծացումը՝ նախապատվությունը տալով Հայաստանի էկոնոմիկայի առավել մրցունակ ներուժ ունեցող ճյուղերին, պետական պատվերի լայնածավալ կիրառմանը, հասարակական հանրօգուտ աշխատանքի կազմակերպմանը:

Սոցիալական քաղաքականության բնագավառում

Այստեղ մենք կողմնակից ենք եվրասոցիալիզմի գաղափարներին, որոնք առավել համահունչ են մեզանում ձևավորվող շուկայական համակարգին, մասնավորապես՝ հասցեագրված սոցիալական նպաստների վճարմանը, առողջապահության բնագավառում ապահովագրական բժշկության զարգացմանը: Միաժամանակ կարևորում ենք առողջապահության և կրթական ոչ պետական հատվածների հետագա ընդլայնման անհրաժեշտությունը:

Արտաքին տնտեսական քաղաքականության բնագավառում ընդունելով արտաքին արտադրողի հետ մրցակցության օգտակարությունը, միաժամանակ ոչ միայն չենք բացառում, այլ նպատակահարմար ենք գտնում պետության կողմից տեղական արտադրողի նկատմամբ հովանավորչությունը և այնպիսի գործնական քայլերի իրագործումը, որը ներմուծվող ապրանքները կփոխարիներ տեղական արտադրանքով: Անհրաժեշտ ենք համարում ձեռնարկել գործուն միջոցներ, որոնք տեղական հումք և կիսաֆաբրիկատ արտադրողների համար ավելի շահավետ կդարձնեին վերջնական արտադրանքի պատրաստումն ու արտահանումը:

Սեփականաշնորհված, բայց չաշխատող ձեռնարկությունների նկատմամբ մեր վերաբերմունքը հետևյալն է՝ դեմ ենք ձեռնարկությունների ազգայնացմանը կամ սեփականատիրոջ կամայական փոփոխմանը: Դա հղի է լուրջ վտանգներով, նոր ավերածություններով: Միաժամանակ, մենք կողմնակից ենք, որ ցանկացած սեփականություն, եթե այն չի ներառում իր մեջ ամբողջ հասարակության համար սոցիալական խնդիրների լուծման որոշակի պարտավորություն, ապա անուղղակի հարկերի միջոցով, կարճ ժամանակաշրջանում պետք է ստեղծվեն պայմաններ ձեռնարկությունների կառուցվածքային

փոփոխությունների և սեփականատիրոջ փոփոխման համար, նպատակ ունենալով կարգավորել այն շեղումներն ու անօրինականությունները, որոնք տեղ են գտել սեփականաշնորհման ժամանակ և որոնց բացասական հետևանքները մինչև օրս չեն հաղթահարվել:

Առաջարկվող այս բոլոր ռեֆորմների երաշխավորողը, անշուշտ, պետք է լինի պետությունը:

Պետական հոգածության արդյունքում պետք է իրականացվեն համալիր միջոցառումներ շուկայական հարաբերությունների միջավայրի առողջացման, շուկայական մրցակցության և շուկայի ողջ ինֆրակառուցվածքի մեխանիզմի արդյունավետ աշխատանքն ապահովելու համար:

Պետությունը պետք է երաշխավոր լինի մրցակցության զարգացմանը ապրանքների ու ծառայությունների, աշխատանքի, կապիտալի ու անշարժ գույքի շուկաներում:

Նրա հոգածության առարկան պետք է դառնա ներքին պահանջարկի աճի ապահովումը: Խոսքը գնում է հասարակական օգտակար այնպիսի աշխատանքների կատարման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը, ինչպիսիք են ճանապարհների շինարարությունը, մատչելի գներով իրականացվող բնակարանաշինարարությունը, աղետի գոտու վերականգնումը, բնապահպանական համալիրը, կապի և հաղորդակցության ամբողջ ինֆրակառուցվածքի զարգացումը:

Մենք կողմնակից ենք պետականորեն ներքին պահանջարկի խթանմանը՝ խնդիր ունենալով աշխատանքով ապահովել և ֆինանսավորել այն հասցեատիրոջը, ով ներգրավված կլինի հասարակական օգտակար աշխատանքներում, վարձատրել հենց նրանց, ովքեր ապահովելով իրենց գոյության մինիմալ պահանջները, իրենց հերթին կխթանեն ներքին պահանջարկի աճը:

– Ի՞նչ եք կարծում, արդյոք հնարավո՞ր է, որ այս սկզբունքներն իրենց արտահայտությունը գտնեն ներկայացված բյուջեի նախագծում:

– «Իրավունք և Միաբանություն» խմբակցությունը, ինչպես այժմ, այնպես էլ 8 ամիս առաջ, առաջարկում է հանրապետությունը տնտեսական խորը ճգնաժամից դուրս բերելու իր մոտեցումները:

Օր առաջ կյանքի կկոչվեն դրանք՝ օր առաջ կստեղծվեն անհրաժեշտ հիմքերը հանրապետությունն օրհասական այս վիճակից դուրս բերելու համար:

Հարցազրույցը վարեց
Հովհաննես Գալաջյանը

«Իրավունք», 11 – 17.II.2000:

Դարձյալ թատերախաղեր են երկրի քաղաքական դաշտում

– Պրն Գեղամյան, «Իրավունք և Միաբանություն» համերաշխության փաստաթղթի ստորագրմամբ մասնակցեց լոկ Հրանտ Խաչատրյանի և Հայկ Բաբուխանյանի ներկայացուցչությամբ: Ո՞րն էր Ձեր մեկուսացման պատճառը:

– Այդ փաստաթղթի ներքո հրաժարվել են ստորագրել «Իրավունք և Միաբանության» մասը կազմող «Ազգային Միաբանություն», «Գարդմանք» և «Արցախ-Հայաստան» կազմակերպությունները: Փաստաթուղթն ինքնին ողջունելի է, քանի որ կառավարությունն այս նախաձեռնությամբ փաստորեն խոստովանում է, որ վերջին 8 ամիսների ընթացքում իրենց վարած տնտեսական քաղաքականությունը լիովին տապալված է: Նման իրատեսական գնահատականը՝ վարչապետի և իր շրջապատի կողմից արտահայտված, անշուշտ, դրական ձեռքբերում է: Դրական փաստ է նաև այն, որ նոր վարչապետի կողմից ԱԺ-ում հնչեցված և մեծամասնություն կազմող «Միասնություն» դաշինքի հաստատած ծրագրերն այսքան արագ ապացուցեցին իրենց սնանկությունը: Այսինքն՝ գործընթացը, բարեբախտաբար, այնքան չխորացավ, որ հետո սթափվեն ու գիտակցեն կորուստների չափը: Հիվանդության սկիզբը հիմքից են փորձում կանխել, ինչը գովելի է: Մտահոգիչ է հետևյալը, որ մեջբերում եմ հենց փաստաթղթից. «...պարբերական խորհրդակցությունների միջոցով մշակել միասնական մոտեցումներ և ծրագրեր հանրապետության առջև ծառացած հիմնախնդիրների լուծման գործում...»: Ինչո՞ւ է մտահոգիչ: Որովհետև «պարզվում» է, ամիսներ շարունակ ունեցել ենք կառավարություն, ունեցել ենք քաղաքական մեծամասնություն կազմող «Միասնություն» դաշինք, բայց վերջիններս մինչ օրս չեն ունեցել մշակված ու մտածված մոտեցումներ և ծրագրեր Հայաստանում առկա ճգնաժամը դադարեցնելու վերաբերյալ:

Այս իրողությունը մեկ անգամ ևս ապացուցում է պարզ մի ճշմարտություն. ներկայումս կառավարության մասը հանդիսացող անձինք ո՛չ ինտելեկտուալ, ո՛չ էլ կազմակերպչական ներուժով ի զորու չեն լուծելու հանրապետության առջև ծառացած և ոչ մի հարց: Ավելին, այս հայտարարությունում դիտարկվում է անսքող մի փորձ՝ սեփական ձախողումների պատասխանատվությունը բարդել խորհրդարանական նաև մյուս ուժերի վրա, քանզի կոալիցիոն կառավարությունը, որպես գաղափար, տեղին է միայն այն դեպքում, եթե կա արդեն մշակված ծրագիր՝ հստակ, մատչելի ու գործուն հիմնադրույթներով, որոնք կհաստատեր ԱԺ-ն: Կոալիցիան գաղափարի շուրջ է կազմվում: Իսկ այն ծրագիրը, որն այսօր փաստացիորեն շրջանառվում է, 2000 թ. բյուջեի նախագիծն է, որից

կառավարությունը մինչ օրս չի հրաժարվել, որն արմատական և ոչ մի փոփոխության չի ենթարկվել:

Այսինքն՝ ի՞նչ է ստացվում. իրենք նախապես ասում են, թե եկեք համախմբվենք, որպեսզի հետո առաջարկեն այս անհեթեթ բյուջեն, որն ավելի է խորացնելու առկա ճգնաժամը, իր բարեհաջող, «հաղթական» ավարտին հասցնել: Հարց է ծագում՝ գիտակցո՞ւմ են արդյոք վարչապետը, նրա հիշական տեղակալները, նախարարները, թե ինչ են անում: Անշուշտ՝ այո: Ուրեմն՝ ո՞րն է նպատակը. ենթադրում եմ, որ հերթական անգամ փորձում են շեղել ժողովրդի ուշադրությունը: Ցուցադրաբար գործում են՝ ասես մատնանշելով, թե՝ տեսեք, հանուն համերաշխության գնացինք քաղաքական համագործակցության ԱԺ բոլոր ուժերի հետ, իսկ եթե ծրագրերն էլ չեն իրականանում, ապա մեր մեղքը չէ, հնարավոր ամենն արեցինք: Իսկ արդյունքում ո՞վ է մեղավոր: Քաղաքական կուսակցություններն իրենց հազիվ թե մեղավոր ճանաչեն, վարչապետը կապացուցի, որ ճիշտ է գործել: Մեղավորությունն, ուրեմն, նախագահինն է: Այստեղ գործի կդրվի ծրագրի երկրորդ փուլը՝ նախագա՞հն է խանգարում, եկեք արտահերթ նախագահական ընտրություններ անցկացնենք:

Այսպիսով, նախագահը, կառավարությունն ու խորհրդարանը, փոխանակ գործնական ձեռնարկումներով թեթևացնելու բնակչության վիճակը, դարձյալ թատերախաղեր են անցկացնում երկրի քաղաքական դաշտում, ինչը ոչ մի լավ նորություն չի խոստանում: Այդ իսկ պատճառով, «Իրավունք և Միաբանությունը», բացառությամբ Հրանտ Խաչատրյանի և Հայկ Բաբուխանյանի, հրաժարվեց ստորագրել այդ փաստաթղթի ներքո: Մենք կողմ ենք կառուցվածքային հիմնարար բարեփոխումներին և ոչ թե դրանց ժամանակավոր ու հերթական երկարաձգմանը:

Անուշ Քաբայան

«Ազգ», 23.II.2000:

Не харизматические лидеры, а харизматические программы

Как раз в день моего приезда в Ереван в газете "Новое время" я прочел глубокую, полную боли и сарказма статью Аркадия Вартаняна "Игра в прятки с ответственностью". И вот я встретился с Арташесом Гегамяном, мы беседуем в нашей обычной откровенной манере, и я не могу избавиться от мысли, что эти два человека говорят об одном, хотя и каждый своими словами.

Они такие разные — общественный деятель, политолог Аркадий Вартанян, доктор наук. И Арташес Гегамян — экономист, видный политик, парламентарий, глава самой серьезной (не по количеству голов, а по качеству) оппозиции в армянском парламенте. Так почему же с такой одинаковой горечью они говорят, так одинаково у них болит сердце за Армению?

В первом своем вопросе к Арташесу Гегамяну я ссылаюсь на трехмесячное отсутствие и спрашиваю, что изменилось в Армении и если изменилось, то к лучшему или к худшему?

— К сожалению, изменилось многое. Но сказать, что к лучшему — значит, потерять ощущение реальности. Экономический кризис еще более усугубился, кризис власти перешел в новую фазу — подковерного противоборства за власть, и это проявляется во всех действиях властных структур — президентской, законодательной и исполнительной. Нет единой слаженной программы по выходу из жесточайшего кризиса, а самое тревожащее — что налицо кризис доверия населения ко всякой власти. Армения напоминает мне виртуальный мир, где многие политики убежденно разглагольствуют о вещах, сути которых они не понимают, где создаются изначально мертворожденные правительства, которые являются идеальным проявлением эклектизма в политике: под одной крышей собираются люди, исповедующие диаметрально противоположные экономические и политические убеждения.

— *Вы имеете в виду так называемое обновленное правительство?*

— Совершенно верно! Посмотрите: в этом правительстве заместитель

премьера — коммунист, вообще говоря, хороший товарищ. Но экономические доктрины, которыми руководствуется коммунистическая партия, они же в корне отличаются от экономических доктрин, которые конституционно заложены у нас от либеральной экономики. Получается, как в басне про лебедя, щуку и рака, который пятится назад.

— *А разве у них может быть единая программа при столь взаимоисключающих взглядах?*

— В том-то и дело. Представители разных партий, вошедшие в это правительство, по существу обманули своих избирателей, которые отдали им свои голоса в расчете, что те будут выполнять декларированные программы. А сейчас их лидеры на деле отказались от своих идей и программных установок под удобным лозунгом: дескать, "мы вошли в правительство национального согласия".

Зададимся вопросом: а в чем раньше было их несогласие? Если перед вами нищета, безработица, массовый отток населения, коррупция. Какое может быть согласие или несогласие перед лицом всего этого? Полуголодное существование влачит значительная часть нашего населения, мизерные деньги как подаяние дают нашим пенсионерам, о зарплате врачам, учителям неудобно даже говорить. Жесточайшие социальные условия привели к массовым заболеваниям, таким опасным, как туберкулез, гепатит. Аркадий Вартанян в своей интересной статье очень правильно об этом пишет.

В этой ситуации каждый политический деятель, каждая ответственная партия обязаны выступить с конструктивной программой по преодолению этого кризиса, обнажить корни всех этих социальных язв, наметить способы их лечения, закрепить свой план законодательно, расставить повсюду людей, которые не участвуют в коррупции, не опорочены во всех этих скандальных судебных разбирательствах, не замешаны в присвоении многомиллионных кредитов зарубежных организаций и так далее...

— *Ну а вы имеете такую программу действий?*

— С такой программой мы выступили. Она была напечатана в газетах, о ней мы говорили по телевидению. С изложением ключевых вопросов этой программы мы знакомили депутатов нашего парламента. Но никому до этого дела нет!

— *Когда люди не реагируют, они это могут делать по двум причинам: либо они считают, что раз предлагает противник, это заведомо плохо. Или они просто не понимают смысла того, что вы предлагаете.*

— Тут налицо обе причины. Но одного веского довода, оспаривающего

ту или иную нашу программную установку, мы не получили ни от одной политической силы, ни от одного эксперта — буть то в области социальной политики, или инвестиционной, или экономической... А что касается властных структур — правительственных, парламентских, то создается такое впечатление, что там нет людей, способных проанализировать и оценить наши конкретные положения. Потому что сегодня у руля нет специалистов, разбирающихся в экономической и социальной политике стран, находящихся в переходном периоде, к которым как раз относится Армения. И нет осознания того, что им нечего делать у этого самого руля, надо уступить место тем, кто знает и может.

— *Проблема власти для тех, кто ею обладает, всегда есть проблема очень болезненная, и отказаться от власти редко кто может. Люди держатся за свои портфели, мандаты, за свое место у пирога. Вы, что же, предлагаете их прогнать силой?*

— Нет, мы против таких методов. После трагических событий 27 октября наша парламентская фракция заняла самую лояльную позицию. Мы во всеуслышание заявили, что в ответ на террор не должно быть изменений на политической авансцене, пусть сохранится тот status quo, который был в республике после парламентских выборов.

Но по прошествии одного-двух месяцев стало очевидно, что те программные установки, которые были выдвинуты политическим блоком "Единство", не выдерживают испытания временем, жизнь показала их полную тупиковость. Об этом мы прямо заявили: откажитесь от тех ваших установок и мер, которые показали свою ущербность, пагубность для судеб республики. Мы говорили: если у вас ничего хорошего не получается, вспомните про самый демократический способ — надо, чтобы сегодняшнее парламентское большинство, осознавая свою беспомощность в преодолении кризиса, создало все условия и предпосылки для проведения новых парламентских выборов, для формирования нового правительства.

Ведь не секрет, что это большинство сформировалось благодаря авторитету лидеров — Карена Демирчяна, в первую очередь, и Вазгена Саркисяна. К сожалению, мы имеем пример, когда именно лидеры определяли большинство, а не большинство выдвинуло лидеров. И положения, которые приобретали серьезное значение, когда они высказывались лидерами, сейчас с уст людей, которые пришли им на смену, серьезно не воспринимаются. Вся трагичность ситуации в этом. А они по инерции думают, что это им избиратели отдали свои голоса, что они говорят от имени народа, который их вовсе и не знает. И они вместо того, чтобы

проявить политическую прозорливость и, осознавая всю серьезность момента, уступить место людям незапятнанным, людям авторитетным в нашем народе, — вместо всего этого упорствуют, цепляются за власть, говорят: берем всю политическую ответственность за реализацию бюджета-2000 на себя. Хочется сказать им: послушайте, какая политическая ответственность? Ведь вы даже не понимаете, что от этого бюджета еще более усугубится кризис!..

Вся находящаяся у власти элита исчерпала себя. Нам нужны сегодня не харизматические лидеры, а харизматические программы, которые бы привлекли к себе народ. И в этой связи, на мой взгляд, у представителей сегодняшней власти осталась только одна возможность. Они должны немедленно выступить с вразумительной программой преодоления кризиса, с указанием конкретных организационных, политических, законодательных мер, с определением конкретных лиц, ответственных за исполнение программы в конкретные сроки. Чтобы это стало близким и понятным любому жителю Армении, более того, каждый усмотрел бы свою роль и свое место в плане спасения страны. Тогда будет подлинная консолидация в обществе, у людей появятся надежда и силы.

— *И вы верите в то, что это возможно?*

— При этой власти — нет! Дело в том, что определенные люди, занимающие посты в правительстве — сейчас это уже всем ясно, — стали заложниками определенных структур и сил.

— *Что вы имеете в виду, скажите яснее.*

— Правительство и премьер-министр сверяют свои действия с "Еркрапа" и не скрывают этого, называя их "своими". Ради Бога! Но при выработке антикризисной программы надо считать своими Академию наук республики, Ереванский государственный университет, Ереванский институт народнохо хозяйства, где собрались специалисты, надо считать своими, например, жителей зоны бедствия с целью им помочь, чтобы они свои дома строили, и так далее. Иными словами, надо опираться на интересы широких слоев народа, на его интеллектуальный потенциал, а не сводить проблему государственного обустройства к интересам и уровню знаний определенных добровольных общественных организаций. Это же нонсенс! Но, к сожалению, это у нас происходит. И никто не наберется гражданского мужества и смелости сказать: остановитесь! Если вы не осознаете, куда вы ведете, то скоро все вместе окажетесь у пропасти. А виноватым будет рулевой и те люди, которые дали ему штурвал.

— *Вы уже много лет критикуете правительство. Ваши противники*

говорят про вас: "ругать он горазд, пусть попробует сам что-нибудь сделать".

— Мы предлагаем программу и готовы взяться за ее осуществление хоть сегодня. Пусть мне и моим единомышленникам доверят сформировать правительство. Ведь парламентское большинство всегда сможет отправить его в отставку, если не будет серьезных сдвигов к лучшему. Но они боятся нас. Они понимают: если Гегамян и его команда придут в правительство, они постараются разрубить гордиевы узлы, которые душат Армению — клановую экономику, монополию на производство ликеро-водочной продукции, монополию на ввоз муки, бензина, создадут равные условия для всех участников рынка, обеспечивающие конкуренцию. Мы это готовы сделать, потому что не связаны с кланами и теневыми структурами, у нас руки не повязаны.

— Вы расписали картину, полную мрака и правды. Ну а что все-таки вы стали бы делать, если бы Господь Бог назначил вас премьером? Я так понимаю, что больше некому...

— Вы хотите, чтобы я сейчас всю антикризисную программу изложил?

— Я знаю, это обширный текст. Но какие-то общедоступные подходы...

— Армения наша — это большая семья. Согласны?.. Каждый глава семьи должен позаботиться о том, чтобы все ее члены были сыты, одеты, обуты, жили в тепле, были здоровы и защищены от внешних опасностей. Вот мы хотим, чтобы наша Армения стала такой семьей. Мы используем для этого и природные ресурсы, и труд крестьян, интеллектуальный потенциал. И все это по-хозяйски. Почему, скажем, производить черновую медь, а не катодную медь, рафинированную — она куда дороже и на нее большой спрос. Это только один пример из области производства. А таких у нас множество. На взгляд хозяина, у нас на поверхности лежит так много того, что можно подобрать и пустить в дело. Надо поощрить отечественного производителя, защитить его от внешних и внутренних душителей, обеспечить работой сельского труженика. Да боже мой, можно сделать столько! И в нашей программе за каждой принципиальной установкой стоит целое созвездие конкретных мероприятий.

Так что, возвращаясь к образу семьи: надо, чтобы глава ее был знающим опытным хозяином. Чтобы он всеми своими корнями врос в нашу землю и не представлял без нее будущее свое и своих детей.

— А что вы скажете о внешней безопасности? Ведь, как я понимаю, Армения является узлом, где сталкиваются интересы великих держав.

— С одной стороны, много говорят о региональном сотрудничестве, но на деле его нет. Блокада со стороны Турции и Азербайджана продолжается, нефте- и газопроводы минуют Армению. Великий Шелковый путь стараются проложить, обойдя ее. С другой стороны, мы имеем стратегического партнера и друга в лице России, что явилось продолжением многовековой традиции отношений. Это наш щит против внешней опасности. И я поддерживаю соответствующую политику теперешнего руководства Армении, которое осознает жизненную важность нашего партнерства.

— *Когда я был в Ереване в прошлый раз, мне довелось работать в публичной библиотеке. Как-то я зашел в отдел каталогов и поразился тем огромным богатствам, которые накоплены там на русском языке. И я испугался: а что если политика отхода от русского языка пойдет и дальше, то все эти богатства станут недоступны для будущих поколений армян? Как вы к этому относитесь?*

— Это один из самых больных вопросов. Принятие антиармянского закона о русском — я не оговорился, именно антиармянского — это попытка искусственно, хирургически отсечь наших детей от русской культуры. Ведь, чтобы перевести все это на армянский язык, потребуются десятилетия и десятки годовых бюджетов. А чтобы заменить русский английским языком, нужны поколения. Да и зачем это надо? Взамен великой культуры ввозить ширпотреб, от которого отказываются на том же Западе? Я не против английского. Чем больше языков знает человек, тем он выше по человеческим меркам — старая истина.

Но политика в отношении русского языка — это пагубная политика. Наша образовательная система должна быть направлена к армянским национальным истокам, но также она должна быть обращена и к той культуре, рядом с которой рос и мужал наш народ.

— *Иногда создается ощущение, что вы одиноки в ваших усилиях. Кто может быть вашим союзником в осуществлении программы обновления Армении?*

— В первую очередь, это люди, чей труд за десятилетия создал ту Армению, которую разрушают в последние годы и все никак не могут разрушить. Это наша техническая, творческая интеллигенция, люди, которые создавали флагманы отечественного производства, крупные агропромышленные комплексы, это фермеры. Очень часто эти люди, которые сплотились вокруг своего лидера — доброй памяти Карена Сероповича Демирчяна. Они объективно наши союзники, потому что мы движимы одними и теми же целями. Потому что будущее Армении им и нам видится

в одинаковом ракурсе. Поддержка этих людей уже чувствуется, она уже вырисовывается в беседах с депутатами Народной партии, которые согласны с необходимостью системных изменений в нашей стране. Об этом же свидетельствуют собрания, которые наша партия проводит по всей территории республики. И мы видим, что рядовые члены Народной партии естественных союзников видят среди нас. Нам с ними делить ответственность, нам с ними преодолевать кризис Армении. В этом мы едины.

Интервью провел
Ким Бакши

"Новое время", 11.III.2000.

Թշնամու կերպար են ստեղծում՝ երկրապահի տեսքով

– Սկսենք ամենասկանդալային պահից: «Հայկական ժամանակին» տված Ձեր հարցազրույցում բավական նոր մտքեր են հայտնվել. խոսքը նախագահի իմպիչմենտի և այդ հարցում աջ ուժերի, մասնավորապես Վիգեն Խաչատրյանի հետ համագոր-ծակցելու մասին է: Ինչո՞վ կբացատրեք այդ կտրուկ շրջադարձը («Իրավունք»):

– Ողջունում եմ Ձեր լավատեսությունը, եթե կարծում եք, թե ամենասկանդալայինը դա է: Փորձեմ պատկերավոր պատասխանել հարցին: Մարշալ Ռոկոսովսկու բանակը, որն արևելյան ճակատում էր և համալրված էր հիմնականում քրեական հանցագործներով, հայրենիքի համար օրհասական պահին առաջին կրակը վերցրեց իր վրա: Մոռացվեց նրանց հանցագործ լինելը, և պատմության մեջ մնացին որպես հայրենիքի պաշտպաններ: Մեկնաբանությունները թողնում եմ ձեր երևակայությանը: Ինչ վերաբերում է Վիգեն Խաչատրյանին, ասեմ հետևյալը. «Ազատություն» ռադիոկայանի թղթակցի հարցին՝ ինչպե՞ս հասկանալ, որ Վիգեն Խաչատրյանն էլ է պահանջում նախագահի հրաժարականը, ես էլ, պատասխանել եմ. ողջամտությունը մնում է ողջամտություն, անկախ այն բանից՝ քաղաքական ինչ հայացքների տեր ես և ինչ կուսակցություն ես ներկայացնում: Տվյալ պարագայում Վիգեն Խաչատրյանի պահանջը համարում եմ ողջամիտ և այն կյանքի կոչելու հարցում պատրաստ եմ համագործակցել նրա հետ: Միայն այդ հարցում: Կարծում եմ՝ ստեղծված սոցիալ-տնտեսական ծայրաստիճան ծանր պայմաններում ցանկացած կուսակցություն, քաղաքական ցանկացած ուժ, որը նախկինում ծանրագույն սխալներ է թույլ տվել, պետք է ընտրի ապաշխարելու ճանապարհը, քավարանով անցնելու ճանապարհը, որից հետո, եթե ժողովուրդը ներեց, բնականաբար, այդ ուժերի հետ ևս պետք է համագործակցենք՝ հակաճգնաժամային ծրագիրը կյանքի կոչելու խնդրում: Խոսքը ժողովրդինն է:*

– Դուք չե՞ք անհանգստանում, որ Ձեր ընդդիմադիր կեցվածքով կարող եք նպաստել Սամվել Բաբայանին առնչվող տարբեր պատմությունների ի հայտ գալուն («Ազգ»):

– Միանգամայն ճիշտ եք: Ասեմ ավելին: Շատ գռեհիկ փորձ արվեց լռեցնելու «Իրավունք և Միաբանություն» խմբակցության անդամներին, որոնք ասել և ասում են. այն, ինչ տեղի ունեցավ մարտի 22-ին Ստեփանակերտում, խորապես մտածված սադրանք էր: Ես լուրջ կասկածներ ունեմ այդ սադրանքին Սամվել Բաբայանի մասնակցության վերաբերյալ: Կփորձեն ինչ-որ գոյություն չունեցող փաստեր բերել: Օգտվելով առիթից, ուզում եմ զգուշացնել թե՛ Արցախի վարչապետին, թե՛ դատախազ Մավրիկ Ղուկասյանին.

ձեր բոլոր գործողություններով մեծագույնս վնասելու եք արցախյան ծագում ունեցող խոշոր բիզնեսմեններին, որոնք գործում են Հայաստանում, վերջիններիս աննկարագրելի վնաս հասցնելով: Եթե հետևություններ չարվեն, մյուս բրիֆինգին կմանրամասնեմ:

– Երկու հարց: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազ Մավրիկ Ղուկասյանը «Իրավունք և Միաբանություն» դաշինքին «Ազգ» օրաթերթի հարցազրույցում առաջարկեց պարզաբանումներ մտցնելու համար չսպասել մինչև իրավիճակը հանդարտվի, և եթե նման խնդիր կա՝ դիմել հենց հիմա: Մտադի՞ր եք օգտվել այդ խորհրդից: Եվ երկրորդ հարցը. եթե բավարարվեին վարչապետ նշանակվելու Ձեր ակնկալիքները, արդյո՞ք նախագահի նկատմամբ տրամադրվածությունը և գործընթացների գնահատականները չէին փոխվի («Առավոտ»):

– Մավրիկ Ղուկասյանի հարցադրմանը համոզված կարող եմ ասել՝ կբավարարենք նրա հետաքրքրասիրությունը: Անպայման: Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, խնդիրը վարչապետ դառնալը չէ, խնդիրն այն է, թե ինչ ծրագրեր են կյանքի կոչվելու: Նոր վարչապետը (ես նրա մարդկային հատկանիշների մասին չէ, որ խոսում եմ) հայտարարեց, որ պետք է շարունակի նախկին կառավարությունների ծրագրերը, որոնք էլ ավելի են խորացրել ճգնաժամը: Խնդիրն այն է, որ կառավարությունը պետք է հիմնվի հակաճգնաժամային նոր ծրագրի վրա, վարի տնտեսական նոր քաղաքականություն, որը հասկանալի, մատչելի կլինի ժողովրդի լայն զանգվածներին: Ինչո՞ւ հասկանալի ու մատչելի՝ որ ժողովուրդը տոգորվի հույսով ու հավատա, որ հնարավոր է երկիրը դուրս բերել այս վիճակից: Իսկ երբ հայտարարվեց, թե նույն ծրագրերը շարունակվելու են, բնականաբար, յուրաքանչյուր մարդ պետք է իրեն հաշիվ տա. մինչև ե՞րբ լռել: Ի՞նչ նպատակների և ի՞նչ խնդիրների է հետամուտ հանրապետության նախագահն այդ նշանակումով: Իմ համոզմամբ (և դրա ականատեսը շատ շուտով կլինենք) Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտում եղած բոլոր ուժերին իրար դեմ հանելն է խնդիրը, քաղաքական դաշտն ամայացնելը: Որովհետև փոխադարձ թշնամանքի մթնոլորտում, երբ վերջնականապես կպառակտվեն ազգը փրկելու գաղափարին լծված ուժերը, ցանկացած ազգադավ գործողություն հնարավոր կլինի իրականացնել: Երբ ժողովուրդը համոզվի, որ քաղաքական կուսակցությունները զբաղված են միայն գզվռտոցով, երես կթեքի բոլորից, և ասպարեզը կմնա միայն նախագահին ու կամակատար կառավարությանը, որը ցանկացած որոշում կփորձի խորհրդարանում անցկացնել: Ցավոք, արդեն իսկ կոտրված է ազգի հավաքական ուժը, կամային հատկություններն են կոտրված, մարդիկ իրենց բողոքը Հայաստանից հեռանալով են արտահայտում... Եվ այս պարագայում խոսվում է քաղաքական կուսակցությունների միջև համերաշխություն հաստատելու անհրաժեշտությունից: Ո՞ւմ են պետք այդ կուսակցությունները, երբ ազգ ենք կորցնում:

– Քաղաքական համերաշխության կոչեր են անում ոչ միայն իշխանությունները: Դուք ևս համերաշխության ու համագործակցության կոչեցիք բոլոր այն քաղաքական ուժերին, որոնք նույնպես համոզված են, թե Ռոբերտ Քոչարյանը Հայաստանում այլևս

անելիք չունի: Հենց նոր ներկայացրիք աղետալի մի իրավիճակ, որն ազգը տանում է կործանման: Ի՞նչ ելք եք տեսնում, եթե իրոք մտահոգ եք հայրենիքի ու ազգի ճակատագրով, և եթե այդ մտահոգությունը նոր կառավարության ձևավորումից հետո չեք «սառեցնելու» («Նորաթերթ»):

– Հրապարակի վրա է հակաճգնաժամային ծրագրի մեր հայեցակարգը: Քննադատական կամ կոնստրուկտիվ որևէ դիտողություն կառավարական շրջանակներից չենք ստացել, ավելին՝ իրենց ծրագրի արատավոր լինելը քանիցս ապացուցել ենք՝ լինի Ազգային ժողովի ամբիոնից, մամուլով, թե հեռուստատեսությամբ: Երկիրն այս վիճակից դուրս բերելու համար առաջարկում ենք այդ հակաճգնաժամային ծրագիրը: Մենք համախմբելու ենք քաղաքական բոլոր ուժերին այս ծրագրի շուրջ: Մայիսի 25-ին «Ազգային Միաբանություն» կուսակցության 2-րդ համագումարի ամբիոնից դիմելու և խնդրելու ենք նրանց՝ իրենց աջակցությամբ է՛լ ավելի բյուրեղացնել այս ծրագիրը, որից հետո դնելու ենք այն նոր կառավարության սեղանին: Բարի եղեք կյանքի կոչել այն, և մենք կօգնենք ու կսատարենք Ձեզ: Սա է մեր առաջարկած ելքը:

...Քաղաքական դաշտում փորձում են լարվածություն ստեղծել, փորձում են թվացյալ թշնամիներ որսալ սեփական սխալներից ժողովրդի ուշադրությունը շեղելու համար: Փորձում են ծուղակի մեջ ներքաշել մեզ:

...Բաներ կան, որ չենք ասում բարձրաձայն, բայց դա չի նշանակում, թե չենք հասկանում՝ ուր են տանում բոլոր այս նշանակումները: Ազգային քաղաքական ուժերի ջլատման են տանում: Ազգային նկարագիր ունեցող գործիչների վարկաբեկման:

Հիմա էլ թշնամու նոր կերպար են ստեղծում՝ երկրապահի տեսքով: Քանի դեռ իրենց խաղաղություն էր պետք՝ գեներալի կոչումներ էին շնորհում, հիմա հավաքական թշնամու կերպար են կերտում: Բայց նրանք բոլորը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են՝ իրենց սխալներով ու ճշմարիտ գործողություններով: Կոնկրետ մեր կուսակցությունը թույլ չի տա, որ հետապնդվեն երկրապահները, որոնք իրենց ազդեցության ոլորտից դուրս եկան թե չէ՝ դարձան ազգի թշնամիներ: Չափազանց վտանգավոր խաղեր են սկսել: Մենք դրա առաջն ենք առնելու: Ինչպես փորձում էին առնել երջանկահիշատակ Կարեն Սերոբիչն ու Վազգեն Սարգսյանը, ովքեր կատեգորիկ դեմ էին տարածքային ցանկացած վերաճնումների:

– Դուք շոշափեցիք Մեղրիի հարցը, խնդրում եմ, այնուամենայնիվ, չակերտները բացել: Հոկտեմբերի 27-ից հետո Մեղրի բառը շշուկով սկսեցին արտասանել: Վերջին օրերին, տարբեր խմբերի հետ հանդիպումների ժամանակ, նախագահը տարբեր բաներ է ասել: Խոսվում է խոշոր գրանտների դիմաց Մեղրին Ղարաբաղի հետ փոխանակելու մասին: Ինչո՞ւ են կուսակցությունները լռում (Ազգային հեռուստատեսություն):

– Բա սա լռե՞լ է, այսքան ժամանակ բա ի՞նչ եմ ասում: Հարցը հետևյալն է: Ցավոք, Հայաստանի Հանրապետությունը հայտնվել է գերտերությունների հետաքրքրությունների կիզակետում: Այս պարագայում մենք պետք է այնքան զգոն լինենք, այնքան աչալուրջ, որ վարենք ոչ թե այս կամ այն երկրի գերշահերին նպաստող, այլ Հայաստանի պետակա-

նությանը նպաստող քաղաքականություն: Ե՞րբ է հեշտ ներազդել պետական ատյանների վրա. երբ ազգային ուժերն ամբողջովին ջլատված են, երբ չկա համազգային կամքի դրսևորման բյուրեղյա միջուկը: Դա՛ է հիմա արվում, ու մենք էլ դրա դեմ ենք ահազանգում: Իսկ ծրագիրը շատ հասկանալի է: Միջանցք են տալիս, որի շնորհիվ մի հինգ-տասը տարի հետո Աղրբեջանը կմիանա Թուրքիային, Հայաստանը կհայտնվի Լեռնոտյի վիճակում՝ անկլավի մեջ, բոլոր կողմերից շրջապատված համապատասխան երկրներով: Սա է խնդիրը, որ վարդագույն խոստումներով են համեմում: Ասում են՝ 3 միլիարդ դոլար կտանք, Հայաստանը կծաղկի... Կծաղկի որպես Թուրքիայի վիլայե՞թ... Եվ սրան նպաստում է տնտեսական քաղաքականությունը: Կիսասոված վիճակում հայտնված ժողովուրդը կամա թե ակամա կորցնում է պետականության բնազդը, որովհետև ընդամենը գոյատևման խնդիր է լուծում: Հանապազօրյա հացի խնդիր է լուծում: Պետություններ քայքայելու դասական եղանակներից մեկն էլ սա է՝ կոտրել ժողովրդի հավաքական կամքը, ջլատել քաղաքական էլիտայի ուժերը, ստեղծել խառնաշփոթ վիճակ, երբ քաղաքական ուժերն իրարամերժ մոտեցումներով են հանդես գալիս, և ժողովուրդը վերջնականապես հուսահատվում է: Համապատասխան արձանագրություններ կան, և համապատասխան երկրներ, ուր փորձարկվել է այս ամենը: Եվ այստեղ է, այո՛, որ Գեղամյանը պատրաստ է քաղաքական ցանկացած ուժի հետ համագործակցել հանուն այն գաղափարի, որ չջլատվի քաղաքական էլիտան և կորուստներ չունենանք: Ինձ հիմա բացարձակապես չի հետաքրքրում, թե քաղաքական ո՛ր ուժն ինչ սխալներ է թույլ տվել ժամանակին: Օրը կգա՝ պատասխանը կտան՝ թե՛ բարոյական, թե՛ իրավական: Հիմա անհրաժեշտ է ազգովի թույլ չտալ, որ պետական դավաճանություն որակվող է՛լ ավելի մեծ սխալներ գործվեն:

Լիլի Մարտոյան

«Նորաթերթ», 19.V.2000:

Ուսանող ժամանակ ցանկանում էի գիտնական դառնալ

– *Պարոն Գեղամյան, Ձեր կարծիքով մեր պետությունն ունի՞ երիտասարդական քաղաքականություն, թե՞ ոչ:*

– Ցավն էլ հենց այն է, որ մեր պետությունը չունի ոչ միայն երիտասարդական քաղաքականություն, այլ՝ քաղաքականություն ընդհանրապես: Չկան մշակված ծրագրեր:

– *Իսկ ի՞նչ տարբերություն եք գտնում մեր սերնդի երիտասարդության և Ձեր ուսանողական տարիների երիտասարդության միջև:*

– Հայրերի և որդիների պատմությանը դասականներն են անգամ անդրադարձել, դա անվերջ շարունակվող խնդիր է: Առաջին տարբերությունը թերևս այն է, որ ներկայիս երիտասարդությունը շատ ավելի լայն հնարավորություններով է օժտված: Դուք այսօր կարող եք ինտերնետի միջոցով հաղորդակից լինել համայն մարդկության ցանկացած բնագավառի նվաճումներին: Դուք կարող եք վայրկյանների ընթացքում տեղեկանալ, թե գիտության, մշակույթի, քաղաքականության մեջ որոնք են վերջին նորությունները, դա, ինչ խոսք, մեծ ազդեցություն է ունենում աշխարհայացքային առումով: Իսկ երկրորդ տարբերությունը, որ խոսում է մեր սերնդի օգտին, դա այն է, որ մենք ավելի շատ էինք կապված գրականության հետ: Յուրաքանչյուրս ունեինք մեր գրական հերոսները, որոնց ձգտում էինք նմանվել:

– *Իսկ ի՞նչ նպատակներ ուներ ուսանող Գեղամյանը:*

– Ես ցանկանում էի գիտնական դառնալ, որքան էլ դա խորթ է հիմա հնչում: Ավարտելիս պետական քննական հանձնաժողովը երաշխավորել էր ասպիրանտուրա ընդունվել: Հետագայում ներգրավվեցի հասարակական աշխատանքներում և, ցավոք, իմ այդ երազանքը չկատարվեց:

– *Պարոն Գեղամյան, Ձեր կուսակցությունը ունի՞ արդյոք երիտասարդության վերաբերյալ ծրագրեր:*

– Կուսակցությունն ունի հանրապետությունն այս վիճակից հանելու ընդհանուր ծրագիր, բնականաբար, այնտեղ նշված են նաև որոշակի հարցադրումներ՝ կապված մեր երիտասարդության խնդիրների հետ: Ցավոք, առանձին ծրագիր դեռևս չունենք, և դա ճիշտ դիտողություն է: Մենք, եթե ուզում ենք ապագա ունենալ, պետք է խորությամբ աշխատենք այս ուղղությամբ և փորձենք մեր գիտելիքների շրջանակներում փարոս վառել երիտասարդության ճանապարհին:

Արմեն Մատինյան

«Նոր սերունդ», թիվ 5. VII.2000:

«Մայորներն» այլևս կարող են հանգստանալ

«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանի հետ զրույցի սկզբում արձանագրեցինք, թե արդեն իրենք են նաև «զանազան մայորների» հաղորդագրությամբ տեղեկացնում ՀԺԿ ղեկավար Ստեփան Դեմիրճյանի հետ հանդիպումներում քննարկվող հարցերի մասին:

– Դուք բանակցությունները վարում եք «Ազգային Միաբանություն» կուսակցությա՞ն անունից, թե՞ «Իրավունք և Միաբանություն» դաշինքի:

– Ես լիազորված եմ մեր կուսակցության քաղաքական խորհրդի կողմից և միայն ու միայն մեր կուսակցության անունից եմ հանդես գալիս: Տրամաբանական հարց է առաջանում՝ իսկ ինչո՞ւ ոչ դաշինքի: Անշուշտ, այն, որ «Ազգային Միաբանությունը» և ՍԻՄ-ը կազմել են դաշինք, հիմնված է մեր նախընտրական ծրագրի վրա: Ե՛վ ՀԺԿ-ի, և՛ ցանկացած կուսակցության հետ բոլոր բանակցությունների ժամանակ և ոչ մի հարցադրում չի արվում մեր դաշինքի ծրագրից դուրս: Երբ մեր համագործակցությունը կխորանա և ավելի մանրակրկիտ կերպով կվերլուծվեն սկզբունքային մոտեցումներն այդ հարցերը կյանքի կոչելու գործում՝ այդ ժամանակ նոր արդեն կկարողանանք քննարկումներ կազմակերպել մեր անմիջական դաշնակցի՝ ՍԻՄ-ի հետ: Սա միջկուսակցական հարաբերությունների շատ սովորական պրակտիկա է և արհեստական լարվածություն մտցնել պետք չէ: ՍԻՄ-ը, իմ կարծիքով, շատ առողջ է վերաբերվում այս ամենին, առավել ևս, որ սա իրենց համար անակնկալ չէ: Բնականաբար, երբ բախտորոշ հարցի քննարկման ժամանակ և քվեարկության արդյունքներով տեսակետները համընկնում են՝ պոտենցիալ դաշնակից եք: Հիմա մենք ցանկանում ենք խորանալ ու տեսնել, թե այդ համագործակցության եզրերը մինչև ուր են հասնում: ՀԺԿ-ի առանցքը, հիմնական կորիզն՝ իր գաղափարախոսությամբ հոգեհարազատ է մեզ:

– Սակայն և՛ 1998-ի նախագահական ընտրություններում էիք Դուք քննադատում Կարեն Դեմիրճյանին, և՛ մինչև վերջերս անխնա քննադատում էիք «Միասնությանը», որի մի մասն էլ ՀԺԿ-ն է: Հինը որևէ մեկն այլևս չի՞ հիշում:

– Դուք վերագրում եք ինձ այն, ինչ չի եղել և հետո ջախջախում: Ես քննադատել եմ «Միասնություն» դաշինքի նախընտրական ծրագիրը և շարունակում եմ լինել դրա հետևողական քննադատը: Այդ ծրագրի փակուղի տանելու ականատեսը եղանք: Եվ որ այդ ծրագրից հրաժարվեց դրա համահեղինակներից մի կուսակցություն՝ դա էլ տեսանք:

Ես անհամաձայնություն եմ հայտնել ծրագրին՝ մեծագույն և անսահման հարգանք տածելով երջանկահիշատակ Կարեն Սերոբիչի նկատմամբ:

– Ձեզ համար այսօր հստա՞կ է, թե ինչպիսի՞ միություն է լինելու ԱՄ-ի և ՀԺԿ-ի միջև: Սա դաշի՞նք է լինելու, թե՞ համագործակցություն ԱԺ շրջանակներում:

– Ձեր հարցը փոքր-ինչ ձևափոխեմ: Խոսքը ոչ թե ինչպիսի՞ միության մասին է, այլ՝ ի՞նչ սկզբունքների հիման վրա պիտի կառուցվի համագործակցությունը: Մենք այդ եզրերը, մեզ համար գոնե, պարզել ու ճշտել ենք: Որո՞նք են: Նախ, հակաճգնաժամային ծրագիրը, որը թույլ կտա (իրագործվելու պարագայում) ժողովրդին կամաց-կամաց դուրս բերել այս խորը սոցիալ-տնտեսական ճգնաժամից: Ի՞նչ եղանակներով, ի՞նչ միջոցներով և ո՞ւմ հետ: Բոլո՛ր այն կուսակցությունների և անհատ մասնագետների հետ, որոնք համաձայն կլինեն այդ հակաճգնաժամային ծրագրի հիմնադրույթներին: Բնականաբար, յուրովի մոտեցումներ կարող են լինել, բայց կարևոր է, որ սկզբունքը չխախտվի: Առանցքն այն է, որ Հայաստանի ապագան մենք ազատական տնտեսության մեջ ենք տեսնում, իսկ այն կյանքի կոչելու զանազան ճանապարհներ կան:

– Ցանկացած միավորում խախուտ է, եթե հիմքը գաղափարական և ծրագրային հիմնադրույթների ընդհանրությունը չէ:

– Միանգամայն ճիշտ եք:

– Միթե՞ ՀԺԿ-ի դեպքում դրանք Ձեզ համար հստակ են: Ասենք, շատ դժվար է ՀԺԿ-ին ազատական տնտեսության ջատագով համարել՝ ԱԺ-ում իր քվեարկությունների արդյունքները նկատի առնելով:

– Խնդիրը ոչ թե ամբողջությամբ իրենց սկզբունքներն ընդունելն է, այլ դրանք ժամանակի ոգուն համահունչ դարձնելը: Եվ, բնականաբար, եթե «Միասնություն» դաշինքի ծրագրային հիմնադրույթներն արդեն իսկ ճաք տվեցին, նշանակում է՝ ինչ-որ բան չգործեց: Ուստի, տրամաբանությունն այն է, որ իրենք պիտի որդեգրեն նոր մոտեցումներ, միգուցե նաև նոր սկզբունքներ: Ինչպիսի՞ն կլինեն դրանք, բնականաբար, ՀԺԿ-ն է որոշելու:

ՀԺԿ-ն մշակել է «Կուսակցությունների մասին» օրենքի հայեցակարգ, որի դրույթներն ամբողջությամբ ընդունելի են մեր կուսակցության համար: Ինչպես նաև ընդունելի են այն հիմնադրույթները, որոնք վերաբերում են տարածքային ինքնակառավարման ամբողջ համակարգի փոփոխությանը, մասնավորապես՝ վարչատարածքային բաժանման վերափոխմանը: Ընդհանուր եզրեր կան նաև «Ընտրական օրենսգրքի» փոփոխման առումով: Մենք էլ ենք կողմնակից, որ զգալիորեն ավելացվեն պատգամավորների համամասնական տեղերը, որ ավելի քաղաքակիրթ դառնա մեր ԱԺ-ն: 3-4 հարցերի շուրջ ընդհանրություններ կան և դրանք կազմում են այն առանցքը, որը հետագայում կարող է լոկոմոտիվի դեր խաղալ:

– Չնայած Դուք միությունը բաց եք հայտարարում բոլո՛րի համար, բայց շրջանառվում են հատկապես երկուսի անունները՝ «Հայաստան» խմբի և Հայկոմկուսի:

– Տվյալ պարագայում համապատասխան լրատվամիջոցները (գիտակցաբար, թե ոչ՝

չգիտեմ) խորամանկում են: Ասեմ՝ ինչու: Մեր համագործակցությունը խորանալու է՝ դա ակնհայտ է: Մեր բնականոն դաշնակիցները ՍԻՄ-ը և մի քանի այլ կուսակցություններ են, որոնց մասին ճիշտ կլինի իրենց առաջնորդները հետագայում ասեն: Այս պարագայում, երբ տեսնում են, որ թափ ենք առնում, բնականաբար, կցանկանան, որ այդ համագործակցության շրջանակներն ընդլայնվեն նաև այն ուժերով, որոնք, ցավոք սրտի, խոցելի տեղեր ունեն: Որ վաղը-մյուս օրը այդ խոցելի տեղերը տարածեն համագործակցող բոլոր կուսակցությունների վրա:

Երբ, մասնավորապես, նույն «Հայաստան» խումբը բախտորոշ հարցերում (խոսքը բաշխիչ ցանցերի մասին է) որպես միատարր քաղաքական ուժ հանդես չի գալիս, բնականաբար, ընդհանրապես վաղաժամ է խոսել հետագա համագործակցության մասին: Ուրեմն, այս հարցն արդեն այս փուլում դուրս եկավ օրակարգից:

Ինչ վերաբերում է Հայաստանի կոմկուսին, այն հետևողականորեն և անդավաճան փորձում է կյանքի կոչել իր սկզբունքները և անձնական շահը չէ, որ առաջնորդում է իրենց: Իսկ դա չգնահատելու, հաշվի չառնելու իրավունքը չունենք: Խնդիրն այլ է, թե դրանք ընդունելի՞ են ստեղծված իրավիճակում, թե՞ ոչ:

Եթե տեսանք, որ համահունչ մտահոգություններ ու մտավախություններ ուներ ՀԿԿ-ն բաշխիչ ցանցերի նման եղանակով վաճառքի վերաբերյալ, ապա ինչպե՞ս կարելի է տվյալ պարագայում Հայաստանի ռազմավարական ապագայի հետ առնչվող հարցերի շուրջ նրանց դաշնակից չտեսնել: Ուստի, անգամ կոմկուսի դեպքում առկա է հարցերի որոշակի շրջանակ, որտեղ ընդհանուր եզրեր կան: Եվ եթե մարդիկ տոգորված են այն գիտակցումով, որ իրենց վրա է դրվելու 21-րդ դարի նախաշեմին Հայաստանը դատարկվելուց փրկելու առաքելությունը, գաղափարական տարաձայնությունները, ինչու չէ՝ խորը հակասություններն առժամանակ պետք է մի կողմ դնել և սկսել փրկության գործընթացը:

– Յանկացած կուսակցության կամ դաշինքի հզորության գրավականը նաև իրեն համակրող ու ֆինանսավորող գործարարների առկայությունն է: Իհարկե, ՀԺԿ-ի շարքերում գործարարանատերեր կան: Իսկ ձեր դեպքում արդյոք միայն Սեդրակ Սեդրակյա՞նն է, թե՞ կան այլք ևս:

– Սեդրակ Սեդրակյանն իմ ուսանողական ընկերն է: Անգամ տանս համար նրանից պարտքով փող չեմ վերցրել:

Մեր ֆինանսական աղբյուրների մասին, ցավոք սրտի, չեմ կարող ասել: Միայն կարող եմ ասել, որ բացարձակ ազնիվ են: Իսկ ինչու չեմ կարող ասել, որովհետև հենց իմացան, թե ովքեր են այդ գործարարները՝ իսկույն նրանց բիզնեսը կփակեն: Բայց այդ մարդկանց թիվը գնալով շատանում է, քանի որ արդեն կա այն գիտակցությունը, որ դեպքերի նման զարգացման պարագայում յուրաքանչյուրի բիզնեսը «կսեղմվի»: Եվ այդ գիտակցմամբ տոգորված են անգամ ներկայիս իշխանական կուսակցություններին ֆինանսապես աջակցողները:

– Մամուլում այս միավորմանը վերաբերող ևս մի կանխատեսում-լուր կա, թե այն

կայանալու պարագայում օրակարգի հարց պիտի դառնա ԱԺ խոսնակի փոփոխման խնդիրը: Ստեփան Դեմիրճյանի հետ Ձեր հանդիպումներում այդ հարցն արծարծվե՞լ է:

– Կոռեկտ չէր լինի, եթե ես պրն Դեմիրճյանի հետ քննարկեի ՀԺԿ-ի քարտուղարի, քաղխորհրդի անդամի հարցը: Այդ հարցը չի քննարկվել:

– Վերլուծվում է նաև, թե դաշինքի կայանալու պարագայում ճեզանից որ մեկը նախագահ կամ առաջին դեմք կդառնա, իսկ ով կմնա ստվերում:

– Սա հիշեցնում է ծանր հիվանդի մահճի մոտ խոսակցությունները, թե ո՞վ է ավելի կարևոր՝ նյարդավիրաբո՞ւյժը, թե՞ սրտավիրաբույժը:

– Հայաստանում կարծես ավանդույթ է, որ դաշինքներ ստեղծվում են ընտրությունների նախօրեին: Քանի որ մոտ ապագայում ընտրություններ կարծես չեն երևում, այսուհանդերձ՝ աղոտ է մնում նպատակը, որ հետապնդում եք այս միավորմամբ: Արդյոք այն հականախագահակա՞ն է, ինչպես արդեն որակվել է:

– Երբ մեր կուսակցությունները մշակված սկզբունքները, ռազմավարական նպատակները կիրապարակեն ու կմատնանշեն դրանց կատարման ուղիները, կատարողներին նույնպես հրապարակ կհանեն՝ և նախագահն ու կառավարությունն ականջալուր չեն լինի այդ ամենն ընդգրկելու սեփական գործունեության մեջ, բնականաբար, յուրաքանչյուր պաշտոնյա, անձ, որը խոչընդոտելու է՝ արժանանալու է մեր խստագույնս քննադատությանը:

– Իսկ ե՞րբ եք հռչակելու այդ սկզբունքային մոտեցումները:

– Բանակցային փուլը հիմնական հարցերի պատասխանը տվել է և հիմա արդեն տաժանակիր աշխատանք է պահանջվում: Շատ չի ուշանա՝ ԱԺ առաջիկա նստաշրջանում պետք է գոնե կարողանանք այդ հարցերի որոշակի մասը հրապարակել և դարձնել ընդհանուր քննարկման առարկա:

Հարցազրույցը վարեց
Աննա Իսրայելյանը

«Առավոտ», 9.VIII.2000:

Հանրապետականները դավաճանել են Կարեն Դեմիրճյանի եվ Վազգեն Սարգսյանի մոտեցումներին

«Ազգային Միաբանություն» կուսակցության ղեկավար Արտաշես Գեղամյանը հայտարարել էր, որ «Միասնություն» դաշինքի «ծրագրային հիմնադրույթներն արդեն իսկ ճաք են տվել»: Արդյո՞ք այդ «ճաքը» վերաբերում է Կարեն Դեմիրճյանի՝ 1998-99 թթ. ներկայացրած դրույթներին հարցով դիմեցինք պրն Գեղամյանին:

– Ճիշտ հակառակը: Անգամ զավեշտ է հիշեցնում այն, որ այսօր, սեփականաշնորհելով բաշխիչ ցանցերը, փորձում են ասել, որ դա եղել է լուսահոգի Կարեն Դեմիրճյանի հիմնադրած կուսակցության ծրագրի պահանջներից մեկը: Եթե երջանկահիշատակ Կարեն Սերոբիչը դա լսեր, ապա կզարմանար, թե ինչպե՞ս է հնարավոր այդ աստիճանի գռեհիկ աղավաղել այն ծրագրի հիմնադրույթները, որին ժողովուրդը քվե է տվել: Որևէ ռազմավարական օբյեկտի սեփականաշնորհման մասին Կ. Դեմիրճյանը լսել անգամ չէր ցանկանում: Բնականաբար, երբ ՀԺԿ-ն համոզվեց, որ ՀՀԿ-ն, դավաճանելով Կարեն Դեմիրճյանի և Վազգեն Սարգսյանի մոտեցումներին, հրաժարվում է այդ կարևորագույն սկզբունքից, ապա վարվեց այնպես, ինչպես անհրաժեշտ էր. դեմ քվեարկեց: Հիմա ոմանք ջանում են «ապացուցել», թե ՀԺԿ-ն հրաժարվել է «Միասնության» ծրագրից: Ո՛չ, այդպես չէ: Պարզապես թե՛ միտումնավոր, թե՛ տարրական գիտելիքների գերսակավ լինելու հետևանքով ՀՀԿ-ն կամա թե ակամա ինքն է դավաճանել «Միասնության» երջանկահիշատակ առաջնորդների որդեգրած սկզբունքներին: Նույնը վերաբերում է նաև իրար հաջորդող կառավարություններին. նրանք շեղվել են իրենց իսկ կողմից որդեգրած հիմնադրույթներից:

– Արդյո՞ք «Ազգային Միաբանության» և ՀԺԿ-ի հարաբերությունների սերտացումը նշանակում է, որ հետագայում կարող է ի հայտ գալ «Ազգային Միաբանության»՝ «Իրավունք և Միաբանություն»-ից դուրս գալու և ՀԺԿ-ի հետ նոր դաշինք կազմելու միտում:

– Իհարկե՝ ո՛չ: Այլ հարց է, որ ոմանք երազում են դա այդպես ներկայացնել: «Իրավունք և Միաբանություն» դաշինքի որդեգրած սկզբունքները մեծ հետաքրքրություն են առաջացնում քաղաքական ամբողջ դաշտում: Մեր որդեգրած ուղեգիծը հասկանալի և մատչելի է ժողովրդին:

Ինչ վերաբերում է համագործակցությանը ՀԺԿ-ի հետ, ապա վաղուց ի վեր ՍԻՄ

ղեկավարության հետ պայմանավորվածություն ունենք, որ դաշինքի կուսակցություններից յուրաքանչյուրն ազատ է դաշինքի նախընտրական ծրագրի շրջանակում բանակցություններ վարել ցանկացած այլ կուսակցության հետ, եթե վերջինս արատավորված չէ նախկինում գործած հանցագործություններով կամ հանցավոր ռեժիմին աջակից լինելով:

Հ. Գ.

«Իրավունք», 11 – 17.VIII.2000:

Душа болит за то, что в целом творится в Республике

Сейран Мосинян, инженер:

— *Лидеры партий обычно предпочитают не называть количество членов своей партии. Может быть, вы назовете эту цифру?*

— У нас 248 территориальных организаций, в которых 35 100 членов партии.

Артур Саакян, строитель:

— *Вы неоднократно заявляли, что "лежащий на полу" 27 октября парламент должен быть расформирован. Интересно, что конкретно вас не устраивает — состав парламента или его вынужденное "падение" на пол?*

— Интеллектуальный уровень нынешнего парламента не адекватен тем задачам, которые стоят перед нашей республикой у порога третьего тысячелетия.

Федор Гепоян, врач:

— *Сейчас обсуждается Избирательный закон. Судя по вносимым поправкам, получается, что таким образом будет нарушено конституционное право гражданина РА избирать и быть избранным. Я, например, не состою ни в одной партии, значит, не имею права выставлять свою кандидатуру и быть избранным в НС? Каково ваше отношение к данному вопросу?*

— Внимательно прочитайте Избирательный закон. Никаких конституционных прав граждан в законе не нарушено.

В любом из 37 мажоритарных округов он может выставить свою кандидатуру и быть избранным.

Альфред Татевосян, инженер:

— *Почему вы как бывший мэр Еревана не реагируете на тот факт, что столица Армении превратилась в провинциальный город бензоколонок и казино. Почему депутат Гегамян, бывший мэр города, не вносит на рассмотрение НС вопрос о специальном статусе Еревана, не требует, чтобы неграмотные люди не распоряжались городом как своей собственностью? Неужели у Гегамяна душа не болит за то, что творится*

в Ереване?

— У меня душа болит за то, что творится в целом в республике, а Ереван является составной частью нашей республики. Естественно, пока данное правительство будет у власти, пока будет функционировать данное Национальное собрание, в Ереване ничего не изменится в лучшую сторону.

Анаид Матевосян, педогог:

— *По сравнению с аодовскими временами сегодня налицо определенные сдвиги, в частности в сфере возобновления деятельности предприятий и создания рабочих мест. Что заставляет вас при этом выступать с точки зрения радикальной оппозиции, тогда как те, кто были радикальны в отношении режима АОД, сегодня заняли конструктивную позицию? В частности, НДС и СКП.*

— Мы достаточно хорошо знаем реальное положение дел в республике и те мизерные шаги, которые предпринимаются с целью выхода из создавшегося положения. Сопоставляя это, нельзя не быть в радикальной оппозиции.

Сусанна Акопян, пенсионерка:

— *Вы пользуетесь большим авторитетом среди социально незащищенных слоев населения. Не считаете ли вы, что это слишком большая ответственность и слишком большой соблазн? Ведь сегодня самое опасное — это дестабилизация ситуации в стране или вы так не думаете?*

— Спасибо за теплые слова. Да, я считаю, что это слишком большая ответственность. Вместо того, чтобы говорить о последствиях возможной дестабилизации, будет правильнее предотвратить это. Насколько это успешно делается — покажет время.

Погос Галстян, лектор:

— *Вам не кажется, что вашу радикальную позицию в отношении нынешней власти могут с пользой для себя использовать реваншисты из числа сателлитов АОД?*

— АОД и сейчас находится у власти. Возьмите список состава правительства РА, сопоставьте нынешних и премьера, и его заместителей, и министров с теми списками, которые были в 98-м году в блоке "Республика", и вы воскликните: "Ба, знакомые все лица!". Как мы были в оппозиции к АОД, так и сейчас находимся в оппозиции. Практически ничего не изменилось.

На "Горячей линии" дежурили
Лана Мшецян и Тигран Мирзоян

"Голос Армении", 7.XII.2000.

Перед лицом грядущего

– Мы на пороге нового века и тысячелетия, но не только поэтому нам нужно найти ответы на ряд судьбоносных, стратегически важных для будущего нации вопросов. После обретения страной независимости прошло целое десятилетие, срок немалый при нынешних темпах жизни. Какими они были, итоги этих десяти лет? Почему не оправдались наши не только смелые, но даже робкие надежды? В конце концов, где они, те ошибки, которые помешали нам достичь своих целей?

– Несомненно, это главные вопросы, которые стоят сегодня перед государством и обществом. На них нелегко ответить хотя бы потому, что сами эти цели не были четко определены. Действительно, куда шла и идет страна? Как узнать это, если не разработана стратегия и идеология нашего развития? Разумеется, мы опоздали, сделать это нужно было раньше, но упущенное так или иначе мы должны наверстать. Есть какие-то обязательные условия, которые нужно выполнить в любом случае.

Для начала, конечно, нужно элементарно учесть все наши природные и людские ресурсы, состояние экономики, макроэкономики, тенденции регионального развития. Хорошо, что этим занимаются партии, общественные организации, отдельные специалисты. Но по большому счету – это задача правительства, если оно способно и готово эффективно выполнять свои функции. Нужен честный и скрупулезный анализ, мы должны буквально разложить по полочкам наши достижения, провалы, возможности на будущее, точно оценить имеющийся потенциал.

– Оценки оценками, но каков фундамент нашей государственности, нашей экономики? Можно ли на нем возводить здание будущего благополучия и процветания?

– Вот почему еще столь важен анализ. Те, кому пришлось первыми начать рыночные реформы, ориентировались на западные образцы, точнее – на кабинетные схемы, выработанные западными идеологами либерализма и рыночных отношений. И совершенно не учли при этом, что страны западного мира извлекли уже урок из собственных ошибок, они отказываются от навязанных нам схем, пытаясь вновь вернуться к ценностям

консервативным. И все же, почему внедренный у нас образец реформ оказался столь нежизнеспособным? На то есть серьезные причины. Да, либерализация, приватизация, жесткая кредитно-денежная политика — шаги логичные и обоснованные. Но они не могут привести к успеху, если не учтено духовное состояние общества, ментальность народа, в конце концов, когда во главу угла всех реформ и нововведений не поставлена личность. Человек, его знания, трудолюбие, культура, талант определяют уровень общества и темпы прогресса, и без развития личности нет развития общества.

— *Как вы считаете, сейчас нужно подправлять былые ошибки или политика реформ требует более глубокого осмысления и обновления?*

— По сути дела речь идет о новой философии развития. Какой мы хотим видеть Армению? Каковы наиболее эффективные для нас модели развития экономики? В чем суть исторических задач, стоящих перед государством и нацией? Способна ли будет наша страна ответить на духовно-культурные, формационные, геополитические, социально-экономические вызовы современности? Именно от ответов на эти вопросы зависит роль и место армянского государства в грядущем третьем тысячелетии.

Армения пребывает на стыке разных цивилизаций. Эклектичное заимствование их достижений — путь непродуктивный. Нам нужно выработать свой, самодостаточный цивилизационный код, иначе рискуем уподобиться строителям Вавилонской башни, которые просто перестали понимать друг друга. Сегодня мы должны отчетливо осознавать, что резервы экстенсивного развития уже исчерпывают себя. Путь, по которому мы шли все эти десять лет, отныне гибелен для нас. Несколько цифр для наглядности. У нас валовой внутренний продукт на душу населения равен 850 долларам, если в стране 2,5 миллиона жителей. Исходя из реальных возможностей, за двадцать лет этот показатель в лучшем случае удвоится. Между тем в США ВВП равен на душу населения 21 тыс. долларов. Вот он, исторический для нас тупик.

— *Страны, о которых вы говорите, в свое время прошли через все необходимые этапы развития. Как мы можем перепрыгнуть через них?*

— А почему мы должны повторять путь, канувший в историю? Зачем изобретать велосипед в век управляемого термоядерного синтеза, информационной революции? Мы же развиваемся не сами по себе, это невозможно, мы — часть окружающего нас мира и просто обязаны жить по его законам. Другой вопрос — что мы на распутье и нам предстоит сделать исторический выбор. Человечество вступает в фазу глобализации.

Происходит возврат к консервативным ценностям и смыслу жизни. А мы продолжаем еще шагать по вчерашнему пути, пытаясь механически перенести на армянскую почву западные ценности и институты, выстроить экономику и рынок по классическим либеральным образцам. Между тем цивилизованный мир осмысливает уже новые задачи, осваивает новые магистральные направления развития. Новое тысячелетие, несомненно, будет охарактеризовано тремя определяющими направлениями — управляемая термоядерная энергия, генная инженерия, информационная революция. В будущем веке даже Япония, сверхмощная промышленная держава, более 56 процентов доходов будет получать от сбыта наукоемкой продукции.

— *Третье тысячелетие унаследует мир, где разница между уровнем жизни в разных регионах и странах драматически огромна. Такой дисбаланс служит постоянным источником напряженности, и именно он заставляет народы с тревогой вглядываться в будущее. Куда мы идем? К мировой гармонии или к новым социальным катаклизмам?*

— Ситуация на самом деле драматическая, словно некто всесильный испытывает человечество на стойкость. Вновь обратимся к цифрам. Сегодня три наиболее богатых человека планеты обладают богатством, которое превосходит внутренний валовой продукт 48 развивающихся стран. Только на косметику американцы расходуют 8 миллиардов долларов, между тем 6 миллиардов было бы достаточно, чтобы обеспечить начальное образование всех детей планеты, 11 миллиардов тратят европейцы только на мороженое, а для того, чтобы обеспечить водой и канализацией все население планеты, нужно лишь 9 миллиардов. Американцы и европейцы ежегодно тратят на корм домашним животным — собакам и кошкам — 17 миллиардов долларов. Если же гуманитарную помощь увеличить на 13 миллиардов, то все нуждающееся население Земли будет обеспечено питанием и лечением.

На этом фоне особенно вопиющими выглядят следующие данные — сегодня 4,4 миллиарда человек являются гражданами отсталых и развивающихся стран. Три пятых всех жителей планеты лишены канализации, одна треть — питьевой воды, одна пятая — медицинского обслуживания. Вот таков он, этот прекрасный, но жестокий мир, в котором мы сегодня живем.

Увы, мы должны с горечью констатировать, что экономическая политика нашего правительства совершенно не адекватна реалиям дня. Когда видишь, чем заняты члены кабинета, депутаты Национального собрания,

какие проблемы считают для себя приоритетными, просто руки опускаются. Там урвать немножко от кредитов и выплатить пенсии, там залатать дыру... Сотни деятелей месяцами заняты "проблемами" кассовых аппаратов. Смешно и печально все это. Вместо того, чтобы лечить болезнь, борются с побочными явлениями.

— *И все же, каковы, на ваш взгляд, главные задачи, стоящие перед страной? То есть, как выглядим мы сегодня на фоне остальной части планеты?*

— Пока не проведена перепись населения, о демографической ситуации мы можем судить лишь по экспертным данным. Так вот, согласно этим показателям, в Армении сегодня живут чуть больше двух миллионов человек. У нас полмиллиона пенсионеров, по официальным данным, 230 тысяч семей находятся за чертой бедности. В стране 559681 школьник, 56418 студентов государственных и частных университетов, 6 тысяч учатся в средних специальных учебных заведениях, 141248 детей дошкольного возраста. 225500 человек заняты в бюджетных учреждениях, сюда же включены военнослужащие армии и представители силовых структур. То есть по сути дела около 1 миллиона 600 тысяч человек не участвуют в сфере материального производства, являясь потребителями. Если прибавить сюда еще и 182621 безработного, то получается, что лишь 250 тысяч жителей страны заняты в сфере материального производства, услуг и торговли.

Согласитесь, демографическая ситуация очень опасная. Эта четверть миллиона способна обеспечить нормальный уровень жизни населения лишь в том случае, если будет занята в сфере высокопроизводительного труда. А такую возможность могут дать лишь наукоемкие производства. Да, давайте повернемся лицом к этому тревожному факту — по грубым расчетам, лишь один из семи занят в сфере производства, торговли, услуг. Помнят у нас об этом? Рассчитали, к чему мы придем через несколько лет? Или занятые бесконечным латанием дыр забыли о будущем, которое настойчиво стучится в дверь?

— *Цифры действительно впечатляют, но не слишком ли мы отрываемся от нашей действительности? Давайте не забывать, что речь идет об Армении, то есть маленькой небогатой стране со скудными природными ресурсами. Можно ли говорить в наших условиях о сколько-нибудь серьезном потенциале развития?*

— Еще одно устоявшееся заблуждение. Армения — прекрасная страна с образованным и трудолюбивым населением. К тому же Армения богата

природными ресурсами. Не буду перечислять все — это предмет целого исследования. Поговорим о перспективах развития, скажем, цветной металлургии в Зангезуре. Три крупнейших предприятия региона — Зангезурский и Агаракский медно-молибденовые комбинаты, а также Капанский горно-обогатительный комбинат создали вокруг себя города, необходимые инфраструктуры, кадровые ресурсы. Сегодня 90 процентов населения региона грамотны, 62 процента имеют среднее, 15 процентов — высшее и среднетехническое образование. Месторождения региона богаты не только молибденом, но и серебром, золотом, медью, цинком и другими металлами, которые высоко ценятся на мировом рынке. Только Зангезурское месторождение содержит металлов на 9 миллиардов долларов. Причем Зангезурский ММК обеспечен запасами руды на 100 лет, Агаракский ММК — на 25, а Капанский ГОК — на 30 лет. А для того, чтобы превратить их в современные предприятия, работающие на полную мощность, требуется всего 5 миллионов долларов капитальных вложений. Вот вам и бедная страна. Не менее перспективна и Араратская золотодобывающая фабрика. Вообще впечатление такое, что нам только еще предстоит открыть нашу страну и вернуть себе веру в ее будущее.

— *Судя по всему, вы настроены оптимистично?*

— Грядущий век вполне может стать нашим веком. У нас есть все, чтобы построить богатую, сильную страну и обеспечить своим гражданам достойную жизнь. Нужно лишь думать и действовать.

Валерий Айдинян

"Новое время", 27.XII.2000.

Երկու դարի սահմանագծին

– *Պարոն Գեղամյան, եթե մի հանրագումարային հայացքով գնահատեիք այս անցումային շրջանը, ի՞նչ ձեռքբերումներ և կորուստներ կարող էիք արձանագրել նոր տարվա, նոր դարի ու հազարամյակի շեմին:*

– Շատ տարողունակ հարց եք տալիս, և իմ պատասխանն էլ կամա-ակամա ընդարձակ կլինի: Ձեռքբերումների մասին, ցավոք, ասելու քիչ բան կա: Դրական եմ համարում այն, որ վերջին 10 տարիներին պաշտոնապես ճանաչվել է տնտեսական գործունեության ազատականությունը, ինչը հնարավոր է դարձրել բազմակացութաձև տնտեսության հիմքերի ձևավորումը, մասամբ ամրապնդել ժողովրդավարության հիմնարար սկզբունքները՝ խոսքի, խղճի, ժողովների, հասարակական կազմակերպությունների ու կուսակցությունների ազատությունը: Նախկինի համեմատ մենք շատ ավելի բաց ենք այլ երկրների ու ժողովուրդների հետ շփումներում: Իսկ ահա կորուստնե՛րը:

Երկրում անցկացվող «բարեփոխումների» հետևանքները ողբալի են: Հանրապետությունն ապրում է իր բնական, արտադրական, մտավոր պաշարների արտահանման, օտարերկրյա վարկերի, արտագաղթի դառը ճամփան բռնած մեր հարյուր-հազարավոր քաղաքացիների կողմից հարազատներին ուղարկված դրամական օգնությունների հաշվին: Թմրանյութերի պես դրանք խլացնում են ցավը, սակայն չեն ապաքինում հիվանդությունը: Սովորաբար մատնանշվում է արդյունաբերության ոլորտը, որի սեփականաշնորհման անվան տակ թալանված հազարավոր ձեռնարկությունների դատարկ շենքերի փշրված լուսամուտները կույր աչքի պես հետապնդում են մեզ:

Բայց մի՞թե ահռելի, անհատուցելի վնաս չի կրել նաև գյուղատնտեսական ոլորտը: Կառավարության տնտեսական քաղաքականությունը գյուղին դրել է ստրկական, կախյալ վիճակի մեջ: Թալանչիական գնային, ֆինանսավարկային, հարկային քաղաքականությունը ոչ շահութաբեր և անիմաստ է դարձրել գյուղատնտեսական մթերքների շատ տեսակների արտադրությունը: Ագրարային ոլորտում ստեղծված ազգային եկամուտն անցնում է վերավաճառողների ու միջնորդների ձեռքը: Պարենի շուկան, ի վնաս տեղական արտադրողի, հեղեղված է արտասահմանից ներկրվող անորակ արտադրանքով: Գյուղի նկատմամբ կառավարության խտրական քաղաքականության հետևանքով գյուղացիությունն անկարող է ձեռք բերել նյութական միջոցներ և նորացնել ֆոնդերը: Մի՞թե նույնը չէ նյութական արտադրության, հոգևոր, մշակութային, գիտական գործունեության մյուս ոլորտներում:

Այս համապարփակ ճգնաժամն իր պատճառներն ունի: Թվեմ մի քանիսը: Պետական

շինարարության ռազմավարության և դրա անկյունաքարը հանդիսացող ազգային անվտանգության հայեցակարգի, տնտեսական կյանքում պետության կարգավորիչ դերի իսպառ բացակայություն, համաժողովրդական ունեցվածքի գողական սեփականաշնորհում, որը ոչինչ ընդհանուր չուներ քաղաքակիրթ աշխարհում ընդունված մասնավորեցման ու ապապետականացման հետ, բյուջետային դեֆիցիտի ծածկման նպատակով պետական պարտքի անշեղ ավելացում, սղաճի դեմ պայքարելու նպատակով ազգային դրամի իրական փոխանակային կուրսի արհեստական բարձրացում, կառավարության և Ազգային ժողովի անգործունեություն, ներդրումային ակտիվությունը խրախուսելու անճեռնհասություն… Հետևանքները հայտնի են: Դրանցից մի քանիսն էլ թվարկեմ. անիրազեկ իշխանությունների որդեգրած և հասարակությանը պարտադրված արմատական-ազատական «բարեփոխումներ», որոնք ըստ էության ոչ այլ ինչ էին, քան ազատական տնտեսության հիմնարար սկզբունքների ձևախեղում, կլանային տնտեսության ձևավորում և որպես դրա հետևանք՝ խոշոր սեփականատերերի խավի անչափ հարստացում, ինչին շարունակ նպաստում էին մեր բոլոր իրարահաջորդ կառավարությունները:

– Նաև Անդրանիկ Մարգարյանի՞ կառավարությունը:

– Այո, նաև Անդրանիկ Մարգարյանի կառավարությունը: Դուք ասացեք՝ ինչո՞վ է այս վերջին կառավարության, այսպես ասենք՝ «փիլիսոփայությունը» տարբերվում նախկինների «փիլիսոփայությունից»: Ոչնչո՛վ: Սա էլ մեծահարուստների շահերը պաշտպանող, միջին խավի ձևավորմանը չնպաստող կառավարություն է, ինչպես մյուսները: Եվ այս կառավարության տնտեսական քաղաքականությունն էլ նույնքան կարճատես է, որքան նախորդներինը: Այդ քաղաքականությունն է, որ ժառանգաբար անցնելով մի կառավարությունից մյուսին՝ հանգեցրել է բնակչության բացարձակ մեծամասնության սրընթաց աղքատացմանը, ունեցվածքային հրեշավոր շերտավորմանը: Տեսեք, այսօր Հայաստանում 10 տոկոս կազմող առավել ապահով խավերի ամսական եկամուտները 32,2 անգամ գերազանցում են շուրջ 60 տոկոս կազմող ամենաաղքատ խավերի եկամուտները:

– Դա ցանկացած հասարակության ներքին կայունության կարևորագույն ցուցիչներից մեկն է: Միջազգային փորձը վկայում է, որ երբ այդ հարաբերակցությունն անցնում է 30-ի սահմանը, հասարակությունը համարվում է սոցիալապես պայթյունավտանգ:

– Միանգամայն ճիշտ է: Բայց մի՞թե մեր երկրի ներքին պայթյունավտանգության այդպիսի ցուցիչներից չեն ազգային մշակույթի, գիտության ու կրթության անկումը, մեր ավանդական արժեքների արժեզրկումը, բնակչության լայն շերտերին անմատչելի առողջապահությունը, կենցաղում արմատավորվող խորթ բարքերը, երիտասարդության որոշակի մասի այլասերումը՝ թմրամոլության տարածումը, մարմնավաճառության աճը, փողի վերածումը պաշտամունքի: Եթե այս ամենին ավելացնենք պետական օրգանիզմի բոլոր հանգույցներն ախտահարած կոռուպցիան, կաշառակերությունը, քաղաքացիների

վստահության կորուստը պետական իշխանության մարմինների և դրանց լիդերների նկատմամբ, ապա կարող ենք ասել, որ Հայաստանը մոտենում է իր պետականությանը սպառնացող վտանգավոր սահմանագծին:

Պետությունն աստիճանաբար հասել է կամ հասնում է այն վիճակին, երբ այլևս անընդունակ է պատշաճ մակարդակով կատարելու իր գլխավոր գործառույթները՝ բնակչության վերարտադրությունը, երկրի պաշտպանությունը, արտադրական ենթակառուցվածքների կենսագործունեությունը: Դժբախտաբար, մեր օրենսդիր և գործադիր իշխանությունները չկարողացան հասարակության մեջ այնպիսի պայմաններ ստեղծել, որպեսզի առանձին շարժումների և կուսակցությունների, դասերի և աշխարհայացքների տեր մարդկանց շահերը, լիդերների խառնվածքներն ու մղումները ենթարկվեին մեկ միասնական նպատակի՝ քայքայված տնտեսության վերականգնման համար բոլոր քաղաքացիների, քաղաքական բոլոր ուժերի ռազմավարական դաշինքի ձևավորմանը: Այժմ ունենք այն, ինչ ունենք՝ ազգի մասնատվածություն, պառակտվածություն, անելանելիության զգացում, որը կաթվածահար է անում ժողովրդի հավաքական կամքը: Ա՛յս է ձեր ասած դարի ու հազարամյակի վերջը, նոր տարվա, նոր դարի ու նոր հազարամյակի շեմի Հայաստանը:

– *Շատ տխուր պատկեր գծեցիք:*

– Ես չգծեցի, այդ պատկերը կա՝ անկախ իմ «գծելուց»:

– *Իսկ մի՞թե թունելի վերջում դուք լույս չեք տեսնում: Նախագահն իր վերջին հեռուստաելույթում բավականին լավատես էր, կառավարությունը հավաստում է, թե 2001 թ. պետական բյուջեն հնարավորություն կտա մարել հին պարտքերը և տնտեսական հետագա աճի նախադրյալներ ստեղծել:*

– Թունելի վերջում, իհարկե, լույս տեսնում եմ: Բայց դրանից առաջ անդրադառնամ բյուջեին: Այն կազմելուց առաջ կառավարությունը գոնե ինքն իր համար պետք է պարզեր առնվազն երեք հարց՝ որո՞նք էին 2000 թ. բյուջեի տապալման պատճառները, որո՞նք են առաջնահերթ լուծումներ պահանջող գերակայությունները, ի՞նչ սոցիալական խնդիրներ կլուծի 2001 թ. պետական բյուջեն՝ կատարման պարագայում: Այս պարզագույն հարցերի պատասխանները չկան:

Ինչ վերաբերում է թունելի վերջում լույս նշմարելուն, ապա մինչև մեր կառավարական այրերը չհասկանան, որ մեր հասարակությանը ճարակած հիվանդությունների արդյունավետ բուժումն անհնար է արդեն իսկ տասը տարի կիրառվող մոնետարիզմի կողմից առաջարկվող ստանդարտ դեղատոմսերով, այդ լույսը չի երևալու: Վերջին հաշվով՝ եթե զուտ մասնագիտական վերլուծություն կատարելու լինենք, ապա պիտի ընդգծենք, որ հասարակության համախառն եկամուտները 3 հիմնական գործոնների՝ վարձու աշխատանքի, կապիտալի և ռենտայի (հողօգտագործման, բնական պաշարների, կապի և տրանսպորտի միջոցների, պետական մենաշնորհ հանդիսացող այլ գործունեության) ֆունկցիա են: Կառավարությունը պետք է հստակորեն հաշվարկեր, թե որ գործոնի տեսակարար կշիռն ինչպիսին է ընդհանուր եկամուտների կազմավորման գործում, ո՞րն

է այն օպտիմալ հարաբերակցությունը, ինչին պիտի ձգտենք: Այսօր ո՛չ այդպիսի հաշվարկներ կան, ո՛չ վերլուծություններ: Սակայն դա միանգամայն իրագործելի խնդիր է, թեև ինչ խոսք՝ բարդ է:

Անցումային շրջան ապրած բոլոր երկրների փորձով ապացուցված է, որ տնտեսական կայուն աճ ապահովելու համար նախևառաջ պիտի ստեղծել անհրաժեշտ նախապայմաններ:

Օրենսդրությունը պետք է նպաստի փոքր և միջին բիզնեսի ձևավորմանը: Պետք է ձեռնարկվեն շատ այլ քայլեր: Այստեղ համակարգված մոտեցում է պետք:

– Դուք մատնանշում եք ճգնաժամը հաղթահարելու զուտ ներքին ուղիներ: Մինչդեռ արտաքին հանգամանքներն էլ քիչ չեն:

– Աշխարհը երբեք այնքան միասնական ու հակասական չի եղել, ինչպես հիմա: Անցնող դարի գաղափարաքաղաքական դասերը կարելի է դասակարգել հետևյալ կերպ. մարդու իրավունքներն ունեն հիմնարար նշանակություն, ժողովրդավարությունն ավելի ուժեղ է, քան բռնապետությունը, շուկայական տնտեսությունն ավելի արդյունավետ է, քան ինքնամեկուսացումը: Արժեքների այս համակարգը լայն տարածում ու ճանաչում է գտել ժամանակակից աշխարհում: Պատմության մեջ առաջին անգամ երկրագնդի մարդկանց մեծ մասը մշակում է համընդհանուր կեցության հիմնարար սկզբունքներ: Սա է գլոբալիզացիայի կամ համաշխարհայնացման գաղափարական հիմքը: Ինչպես 100 տարի առաջ, մեր դարավերջն էլ բնութագրվում է գիտատեխնիկական հեղաշրջմամբ: Ինտելեկտը, գիտելիքները, տեխնոլոգիաները դառնում են տնտեսական զարգացման կռվաններ: Զարգացած երկրներում՝ օրինակ Ճապոնիայում, համախառն ներքին արդյունքի կեսից ավելին բաժին է ընկնում գիտատարողունակ ճյուղերին: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, ինտերնետ ցանցը ստեղծել են միանգամայն նոր աշխարհ՝ «սեղմել» են ժամանակն ու տարածությունը, բացել միջպետական սահմանները, մարդուն դարձրել երկրագնդի քաղաքացի:

Գլոբալիզացիան կամ համաշխարհայնացումը և՛ լավ, և՛ վտանգավոր կողմեր ունի, դրա վերլուծությունը մեզ շատ հեռուն կտաներ: Բայց դա արդեն կայացած իրողություն է, մեզանից դուրս է և մեզանից անկախ: Մենք պետք է գտնենք մեր երկրի տեղն այս իրողություններում: Պետք է հասկանանք, որ ազգային հզորության ավանդական չափանիշների հետ մեկտեղ, որի մեջ մտնում են երկրի զբաղեցրած տարածքի մեծությունը, ազգային բնակչության թիվը, տնտեսական զարգացման մակարդակը, բանակի թվակազմն ու զինվածությունը, գիտատեխնիկական բազան, դաշնակիցների համակարգը և այլն, գլոբալիզացիան առաջին շարք է մղում այլ գործոններ: Դրանցից են՝ ինֆորմացիոն-կոմունիկացիաների ներուժը, համաշխարհային շուկայի իրավիճակը, ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետելը, միջազգային կազմակերպությունների շնորհիվ ազդելու հնարավորությունները և այլն:

Ներկայումս ազգային օրգանիզմների ներթափանցելիությունն ուժեղներին դարձնում է ավելի ուժեղ, թույլերին՝ ավելի թույլ: Բնորոշ մի թիվ բերեմ. Արևմուտքը, ուր

բնակվում է երկրագնդի բնակչության 15 տոկոսը, այսօր վերահսկում է համաշխարհային ռեսուրսների՝ արտադրության, առևտրի և սպառման ավելի քան 70 տոկոսը: Եթե առաջներում համաշխարհային տնտեսությունը մի յուրատեսակ բեմահարթակ էր, որի վրա գործում էին ինքնիշխան պետությունները, ապա հիմա դա բավականաչափ ինքնուրույն գործոն է, որը ծավալվում է ազգային պետությունների հողի վրա: Գլոբալ տնտեսությունը դրսևորվում է արդեն ոչ միայն որպես տնտեսավարման գործոն, այլև որպես հասարակարգի կառավարման համակարգ, որպես քաղաքականություն, անգամ՝ որպես գալիք ժամանակների գաղափարախոսություն: Արդյունքում աշխարհաքաղաքական գերակայություններն սկսում են զիջել աշխարհատնտեսական իրողություններին:

Այս նոր աշխարհում մեր տեղն ու դերը չկորցնելու համար մենք պետք է գտնենք այն հիմնական պոստուլատը, որի շուրջ պետք է համախմբվեն և՛ աջերը, և՛ ձախերը, և՛ սոցիալիստները, և՛ շուկայականները: Այդ պոստուլատը կարելի է ձևակերպել այսպես. ներքաղաքական ոչ մի տարաձայնություն չպետք է հանգեցնի հայկական պետականության ապակայունացմանը, չպետք է սպառնա մեր պետության անվտանգությանը, թուլացնի մեր ռազմավարական ու քաղաքակրթական անկախությունը, խախտի սոցիալական կայունությունը հասարակության մեջ: Եթե մենք սա գիտակցենք, եթե կարողանանք անձնական, կուսակցական ու կլանային հետաքրքրությունները զոհաբերել Հայաստանի հիմնական արժեքներին, ապա Հայաստանը գալիք դարում և հազարամյակում նույնպես կմնա որպես պատմության ինքնուրույն սուբյեկտ: Կուզենայի հույս հայտնել, որ այդպես կլինի:

«Հայացք Երևանից», 2000, թիվ 12, էջ 22-23:

Պահանջվում է միասնություն և միաբանություն

– Պարոն Գեղամյան, Հայաստանի քաղաքական համակարգում ինչպիսի՞ տեղ են գրավում հասարակական-քաղաքական կազմակերպությունները:

– Նախքան Ձեր հարցին պատասխանելը, խոստովանենք, որ հանրապետությունում չկա քաղաքական նորմալ համակարգ: Պետականություն ասածը սա՛ չէ: Պետականության համար հարկավոր է ունենալ. առաջին՝ իշխանության լեգիտիմություն, երկրորդ՝ իշխանության անկախություն և երրորդ՝ իշխանությունը պետք է գտնվի կառավարման ղեկին:

Օբյեկտիվ իրողություն է այն, որ պետական իշխանությունն իրականացվում է պետական կառավարման միջոցով, այսինքն՝ նա պետք է կառավարի: Պետական կառավարումն իրականացվում է կազմակերպման սկզբունքների վերահսկողության միջոցով: Եվ հենց այստեղ է օբյեկտիվորեն ծագում կուսակցությունների ստեղծման անհրաժեշտությունը: Կուսակցությունները հետագայում պիտի դառնան նորմալ պետականության բաղադրիչները: Սա առանձնապես դժվար է մերօրյա մասնատված գաղափարախոսական և մտավոր իրականության պայմաններում: Բնականաբար, այստեղ հրատապություն է ստանում հետևյալ հարցը՝ նոր պետության գաղափարաբանության մեջ ինչպես համատեղել Հայկական ԽՍՀ նախկին քաղաքական համակարգի հայացքները նոր զարգացումների, Արևմուտքում ձևավորված նոր քաղաքակրթական կուլտուրայի գաղափարաբանության հետ, որը թույլ է տալիս ստեղծելու այդ մեխանիզմները, կառուցելու պատմության այդ նավերը: Ազգաբնակչության գաղափարական կազմակերպման խնդիրն էլ հենց հասարակության մեջ քաղաքական կուսակցությունների գործունեության անկյունաքարն է:

Իսկ ի՞նչ ունենք մենք այսօր: Հարկ է հաշվի նստել այն իրական փաստի հետ, որ ներկայիս Հայաստանում գոյություն ունի գաղափարական քաոս: Հասարակությունը տրոհված է: Պահանջվում է միասնություն և միաբանություն: Խոսքը վերաբերում է սեփական պետական գաղափարախոսության զարգացմանը, որի կարևորության մասին առաջին տարին չէ, որ խոսում է մեր կուսակցությունը: Ի՞նչ է դա նշանակում. առանց գաղափարաբանական միաբանության ապահովման՝ Հայաստանի Հանրապետությունը կդատապարտվի կործանման: Եվ սա, ցավոք, զուտ ճշմարտություն է:

Եվ այսպես, ուրեմն, եթե այս դիրքերից գնահատելու լինենք հասարակական-քաղաքական կազմակերպությունների դերը Հայաստանի Հանրապետության քաղաքա-

կան համակարգում, ապա հետևությունը հետևյալն է. պետական գաղափարախոսության բացակայության պայմաններում՝ քաղաքական կուսակցությունների գործունեությունը Հայաստանում չի համապատասխանում XXI դարի, գլոբալացման ժամանակաշրջանի մարտահրավերներին: Քաղաքական կուսակցությունները, բացառությամբ թերևս մեկ-երկուսի (բնականաբար, ընդդիմադիր ճամբարից), այդպես էլ չեն դարձել հայկական պետականության բաղկացուցիչ մաս ու կրողներ:

– Պարոն Գեղամյան, Հայաստանում քաղաքական դաշինքները, որպես կանոն, չեն ունենում նախանշված երկարակեցություն: Պատճառները բազմաբնույթ ու բազմանշանակ են: Ձեզ չի՞ թվում, արդյոք, որ մեզանում քաղաքական համագործակցության այս ձևն ավելի շատ կոնյուկտուրային է, քան իրական արժեքների և գաղափարների վրա հիմնված:

– «Ազգային Միաբանություն» կուսակցությունը մշակել է XXI դար թևակոխելու իր ծրագիրը: Ահա դրա մի շարք էական կողմերը: Գլխավորն այն է, որ քաղաքականությանը, տնտեսությանը, ժողովրդի անվտանգությանը, երկրի կյանքի բոլոր մյուս ոլորտներին մենք նայում ենք այն «հասարակ մարդու» տեսանկյունից, որի հետ արդեն տասը տարի է որևէ գործ չունեն իշխանություններն ու քաղաքական «խոշոր» գործիչները:

Մենք կողմ ենք հասարակության կյանքի բոլոր կողմերի նորացմանը, ստեղծարար ներուժի, ձևավորված ավանդույթների և կուտակված պատմական փորձի վերածնմանը:

Իսկ իրականում ի՞նչն է դրված խորհրդարանական այլևայլ քաղաքական դաշինքների ստեղծման հիմքում՝ քաղաքական կոնյուկտուրա՞ն, թե՞ քաղաքական հաշվարկը… Թող ընթերցողն ինքը դատի: Ինչ վերաբերում է մեզ, ապա մեր գործողություններում մենք ղեկավարվել ենք այն ըմբռնմամբ, որ «իշխանության տերերի» վարած ուղուն հակառակ նոր աշխարհայացքային այլընտրանքի մշակման հնարավորությունը կամ անհնարավորությունն ունի ճակատագրական նշանակություն: Ես կասեի ավելին՝ դա՛ է չափորոշիչն այն բանի, թե Հայաստանի Հանրապետությունը, հայ ժողովուրդը գոյություն կունենան պատմության մեջ որպես հիմնական, թե՞ երկրորդական սուբյեկտ: Մեր պատկերացմամբ՝ հիմնական սուբյեկտը նրանք են, որոնցով կազմվում է աշխարհը և որոնց ջանքերի շնորհիվ է այն զարգանում, ստանում հիմնական մշակութային ազդակները, ձևավորում արժեքների համակարգը, առաջատար գաղափարները: Հիմնական սուբյեկտներն են ստեղծում ազգային մշակույթի, հասարակական կառուցվածքի ամբողջական պատկերը: Իսկ երկրորդական սուբյեկտները գոյանում են հիմնական սուբյեկտների ազդեցության ոլորտում, նրանց ստեղծած կոորդինատային համակարգում… Այս կերպ Հայաստանն ապրել է մի շարք հարյուրամյակներ: Ահա և այդօրինակ հասարակական և սոցիալական ակնկալիքների, ժամանակի մարտահրավերների բարձունքից կուզենայինք վերաբերվել քաղաքական միավորումների և դաշինքների տեղին, նշանակությանը և դերին՝ մերօրյա Հայաստանի բովանդակ քաղաքական ներկապնակում:

– Որքա՞ն և ինչպե՞ս է արտահայտված «Ազգային Միաբանություն» կուսակցության

գաղափարական մաքսիման «Իրավունք և Միաբանություն» դաշինքի ծրագրում:

– Սա, թերևս, Ձեր տված հարցերից ամենադյուրինն է: Կասեմ կարճ՝ թե՛ «Իրավունք և Միաբանություն» դաշինքի, թե՛ «Ազգային Միաբանություն» կուսակցության ծրագրերի հիմնական հեղինակը Ձեր խոնարհ ծառա Արտաշես Գեղամյանն է: Սա անհամեստության դրսևորում չհամարեք, պարզապես այդ է իրականությունը:

– Ինչո՞վ բացատրել Արտաշես Գեղամյանի բարձր և, ընդհակառակը, «Ազգային Միաբանություն» կուսակցության ցածր վարկանիշը:

- Նախ փորձենք իրերը կոչել իրենց անուններով, պարզել՝ իրո՞ք դա այդպես է, թե ոչ: Եթե ոչ, ապա որտեղի՞ց է գալիս կուսակցության ցածր վարկանիշի մասին մտացածին գնահատականը, և ի՞նչ նպատակ է դա հետապնդում: Երբ ասում եք՝ ժողովրդի մեջ բարձր է Գեղամյանի վարկանիշը, ապա հարցրե՞լ եք, թե ինչու:

Ժողովրդի ծանր վիճակը բոլորիս է հայտնի: Մարդիկ ստիպված են և՛ լուծելու իրենց հանապազօրյա հացի խնդիրը, և՛ ուղիներ որոնելու՝ ստեղծված ճահճից դուրս գալու համար: Նման մի ծրագիր ժողովրդին ներկայացրեց «Ազգային Միաբանություն» կուսակցությունը, որը ոչ թե մեկ անհատի ֆանտազիան է կամ «ուղեղի մորմոքը», այլ կոլեկտիվ, հավաքական մտքի արդյունք:

Մեր կուսակցությունը պարտադրված կամ այլ նկրտումներով ստեղծված կուսակցություն չէ, այն գաղափարակիրների ու գաղափարակիցների միություն է: Ես այդ գաղափարներն արտահայտողն եմ և դրանց կյանքի կոչման կազմակերպիչը:

Ձեզ եմ հարցնում՝ ինչպե՞ս կարող է գաղափարակիրների այդ բազմահազարանոց բանակն ունենալ ցածր վարկանիշ, իսկ ես՝ բարձր վարկանիշ: Այդպես չի լինում: Հակառակը պնդողները եթե մասնակցեին մեր համագումարներին, կոնֆերանսներին, ժողովներին, հանդիպումներին, ապա կուսակցության ցածր վարկանիշի մասին չէին խոսի: Իսկ ինչո՞ւ է այդպես ասվում: Մի պարզ պատճառով՝ ուզում են հավատացնել, թե Գեղամյանի վարկանիշը բարձր է, սակայն նրա կողքին անհրաժեշտ մարդիկ չկան, ասել կուզի՝ Գեղամյանը մենակ է: Սա է նպատակը:

Բայց մեր ընդդիմախոսների քարոզչության տարբերակն էլ էական արդյունք տալ չի կարող: «Ազգային Միաբանություն» կուսակցությունն ամուր է ոչ միայն իր գաղափարներով, այլև կազմակերպչորեն, որովհետև նա չունի այլ խնդիր, քան ժողովրդին ծառայելն է: Մենք այսպես ենք վերծանում մեր վարկանիշը…

Աննա Վարդանյան

«Վարկանիշ», 2001, № 2, էջ 6:

На подходе реализация крупных региональных проектов

– *В одном из своих телеинтервью вы увязали исходные нынешнего этапа урегулирования Карабахской проблемы с членством Армении и Азербайджана в Совете Европы. Почему?*

– Одновременное принятие Армении и Азербайджана в Совет Европы по сути означает, что европейское сообщество зафиксировало статус-кво, сложившийся на протяжении 5 последних лет в ситуации вокруг проблемы Карабаха, предав тем самым забвению 4 отнюдь не проармянские резолюции Совета безопасности ООН и известную лиссабонскую резолюцию.

– *А что изменилось в политике стран-членов Минской группы?*

– В настоящее время уже на подходе реализация крупных региональных экономических проектов, как то: нефтепровод Баку-Тбилиси-Джейхан, минимальная стоимость которого 2,4 млрд. долларов, прокладка газопровода Азербайджан-Грузия-Турция стоимостью в 2 млрд. долларов, известный Шелковый путь (ТРАСЕКА), который будет иметь огромное стратегическое значение для западной Европы и США. При этом не секрет, что ни одно из влиятельных государств не будет рисковать своими капиталами, вкладывая таковые в регион без твердых гарантий их безопасности.

– *Какую роль в свете сложившихся реалий вы отводите российскому фактору в регионе?*

– 10 января 2000 г. президент Путин подписал Указ о концепции национальной безопасности России (уже 3-я за последние 10 лет), согласно которой имело место более четкое обозначение внешнеполитических приоритетов. А именно: если раньше Армении отводилась роль единственного стратегического партнера на Южном Кавказе, то новая концепция, не умаляя важности Армении, подразумевает в интересах укрепления национальной безопасности РФ курс на установление дружественных отношений со всеми южнокавказскими республиками.

Наглядным свидетельством претворения новой концепции в жизнь стал январский визит президента Путина в Баку. Тут весьма кстати будет

упомянуть и об иранском факторе особенно в свете недавнего посещения Мохаммадом Хатами Москвы в рамках официального визита. Хатами имел ряд встреч с высшими должностными лицами РФ, был принят президентом, а итогом визита стало подписание важнейших документов о военном и экономическом сотрудничестве. Россия взяла на себя обязательства по продаже Ирану обычных вооружений на несколько миллиардов долларов, а также по завершению строительства атомной станции в Бушире.

— *Реакция США в данном случае была весьма предсказуемой.*

— Видите ли, в преддверии президентских выборов в США Россия в одностороннем порядке заявила о прекращении своей деятельности в рамках известного договора "Гор-Черномырдин", налагающего на Россию запрет на продажу оружия странам-изгоям, к числу которых США причисляют и Иран. Кстати, во время пребывания Хатами в Москве в США находился Секретарь Совета безопасности РФ Сергей Иванов (ныне министр обороны РФ) и, судя по отзывам в российских СМИ и содержанию интернет-страницы Госдепа США, имел там весьма непростые беседы, в частности, и на эту тему тоже. Словом, намерение России продать оружие Ирану стало своеобразным пробным камнем в отношениях США и России.

— *А каким образом переговорный процесс по карабахскому урегулированию связан с договоренностью о поставках оружия Ирану?*

— Если исходить из того, что переговорный процесс тяготеет к развязке, то очевидно, что на этом фоне приоритетными в региональном масштабе становятся проблемы коммуникаций. Представим себе картину, при которой Лачинский коридор находится под контролем миротворческих сил ОБСЕ, Арцах по всему периметру объявляется зоной демилитаризации при присутствии тех же миротворческих сил. Последние будут держать под своим контролем дорогу Азербайджан-Мегри-Нахичеван. При этом, напомню, Иран имеет лишь 2 сухопутные границы с Россией: через Армению и Туркмению. Последняя заявила о своем государственном нейтралитете, который зафиксирован в ее Конституции. Армения же является стратегическим партнером России, что делает возможным использование ее территории для транзитных перевозок, в том числе и поставок оружия Ирану в рамках упомянутого договора. Как сие стратегическое партнерство будет совмещаться с обязанностью Армении уважать миротворческие силы ОБСЕ, которые контролируют коммуникации, затрудняюсь сказать.

На фоне недавнего визита Гейдара Алиева в Турцию и заявления о

том, что он приветствовал бы присутствие в Азербайджане турецких военных баз, нам небходимо самым тщательным образом проанализировать последствия развития всех возможных сценариев в рамках региона. А исходить, на мой взгляд, следует из интересов национальной безопасности Армении и Арцаха с учетом также экономических интересов России, Ирана, Турции, США и Евросоюза. Нелишне будет уточнить также, в какой степени полномочия миротворческого контингента будут регламентированы с учетом Конституции РА и государственно-правовыми полномочиями официального Еревана.

— *Переместимся в плоскость внутриполитических проблем. Чем вы объясните очередной всплеск слухов о том, что в обозримом будущем вы займете пост премьер-министра?*

— Перефразируя Марка Твена, скажу, что слухи об этом сильно преувеличены, но периодическое их муссирование наводит на мысль, что запускаются они в обращение не иначе как для устрашения контингента властей предержащих. Как только ситуация в определенных кругах накаляется до взрывоопасной отметки, чреватой политическим разводом, на помощь приходит устрашающий маневр в виде угрозы: если не найдете между собой общий язык и произойдет раскол в правящем блоке "Единство", то президент расформирует правительство, возможно, назначит Гегамяна, и тогда вы вовсе лишитесь рычагов власти и своего куска хлеба с маслом. Очевидно, страшилка срабатывает, потому и перманентно прибегают к ней, чтобы разрядить ситуацию там, где грызня за самый жирный кусок время от времени переходит все границы. Но дело-то упирается не в лица, в вопрос: до каких пор будет проводиться сия пагубная экономическая политика?

Недавно в России в Международном общественном фонде социально-экономических и политологических исследований состоялось обсуждение возможных альтернативных стратегий развития российской экономики. Имела место интересная дискуссия между представителем либерального направления в экономической науке Владимиром Мау и сторонником государственного регулирования экономики Александром Некипеловым. Когда с опорой на две доминирующие концепции пытаешься уяснить себе, по какому из этих путей развивается Армения, то приходишь к заключению об абсолютной абсурдности происходящего. На протяжении 10 лет независимости в РА так и не создали концепцию национальной безопасности, включающую продовольственную, экономическую, военную, энергетическую, демографическую, экологическую безопасность и

проч. Важнейшие для судеб страны вопросы решаются на любительском уровне. Общество посредством митингов пытается решать судьбоносные вопросы экономики, социальной сферы, да и всей нашей жизнедеятельности. Взять, к примеру, приватизацию элсетей на фоне передачи в чужие руки (так до сего дня не оправдавшей себя) системы связи и столичного водоснабжения.

— *Вы принадлежите к противникам приватизации элсетей — почему?*

— Во-первых, электроэнергетика — это не просто бизнес, как сейчас стараются представить. Нам всем надо понимать, что деньги на модернизацию и новое строительство в энергетике могут появиться только из тарифов на электроэнергию. Другого источника просто нет, если, конечно, не считать бюджет. Тарифы на энергию — единственный источник инвестиций. Все остальные разговоры — "от лукавого". Более того, одним из самых серьезных недостатков правительственного варианта приватизации распределительных сетей является слабый учет мирового опыта. Поспешность в принятии решений может привести к экономическому коллапсу. До сих пор нет четкого определения стартовых условий реформирования электроэнергетики Армении.

Нет ответов на ряд существенных вопросов, как то: насколько взаимоувязаны цены на различные виды топлива для электростанций (мазут, природный газ, ядерное топливо)? Находятся ли они на уровне цен мирового рынка? Соответствует ли имеющаяся законодательная и нормативная база по электроэнергетике общепринятым мировым стандартам? Каковы гарантии реализации всех суммарных резервов мощностей энергосистемы? Какова опасность отключения и остановка имеющихся мощностей, в частности, Армянской атомной электростанции из-за низкого платежеспособного спроса? Как возможная остановка ААЭС скажется на тарифах? Какие это может иметь внешнеполитические последствия, в частности, в сфере обеспечения нужд энергетики энергоносителями? И наконец, не открою Америки, сказав, что энергетика — системообразующая отрасль, и любые перемены в ней мгновенно отражаются на всей экономике в целом.

Подняли тарифы — сразу возрастает себестоимость и падает конкурентоспособность. Теряем с трудом завоеванные рынки сбыта отечественных товаров. И наоборот: снижаются тарифы — падает себестоимость, возрастает конкурентоспособность. И если вдуматься, какими аргументами правительство обосновывает необходимость отчуждения предприятий распределительной элсети от государства, то видно, что в итоге власть по

сути расписывается либо в собственной беспомощности, либо в своей коррумпированности. То есть либо она не в состоянии добиться успеха в борьбе с коррупцией в системе, либо не стремится к этому, ибо сама питается ею — и то и другое в одинаковой степени преступно и характеризует власть отнюдь не с лучшей стороны.

Повторюсь, отчуждение от государства распределительных элсетей может в ближайшей перспективе привести к остановке тех немногочисленных предприятий, которые и так уже едва дышат.

Беседу вела
Марина Мкртчян

"Голос Армении", 31.III.2001.

Կառավարությունը օպերատիվ կառավարման շտաբ չէ

– *Պարոն Գեղամյան, կառավարության գործունեության մեկ տարին շուտով կլրանա: Ձեր գնահատմամբ, ի՞նչ արդյունքների հաջողվեց հասնել և ի՞նչ թերություններ եղան:*

– Ընդհանրապես գնահատում և վերլուծում են կատարված աշխատանքը, որը հետևանք է որոշակի ծրագրի: Գոյություն չունեցող երևույթի մասին երկար վերլուծություններ անելը լուրջ չէ: Ճիշտ 11 ամիս առաջ վարչապետը ելույթ ունեցավ ԱԺ ամբիոնից: Ի՞նչ թվեր հրապարակվեցին և գործնականում ի՞նչ խնդիրներ լուծվեցին:

Չասվեց, թե որքա՞ն նոր աշխատատեղեր են ստեղծվելու տնտեսության տարբեր ճյուղերում, չհիշատակվեց, թե ներդրումային ի՞նչ քաղաքականություն է իրականացվելու տարբեր ոլորտներում՝ սկսած լեռնահանքահումքային արդյունաբերությունից, վերջացրած գյուղատնտեսության և սպասարկման ճյուղերով: Չասվեց՝ որո՞նք են մեր տնտեսական անվտանգության երաշխիքներ հանդիսացող նյութական արդյունաբերության ճյուղերը, չհրապարակվեց պարենային անվտանգության ծրագիրն ու կառավարության կողմից վարվող քաղաքականությունն այդ ուղղությամբ:

Չափազանց սուր է այսօր դրված ժողովրդագրական անվտանգության խնդիրը, քանի որ նյութական ոլորտի մի աշխատողը Հայաստանում պահում է ոչ նյութական ոլորտի յոթ աշխատողի՝ բյուջետային հիմնարկներից սկսած մինչև թոշակառուներ, աշակերտներ և ուսանողներ: Սինչդեռ այս առումով որևէ մոտեցում կառավարությունն առ այսօր չի արձանագրել: Չնշվեց, թե որոնք են մեր էկոլոգիական խնդիրների լուծման ուղիները՝ ցամաքող առուների և անվերահսկելի ծառահատումների խորապատկերի վրա: Սինչդեռ առաջիկա տասը տարիներին մենք խմելու ջրի խնդիր կունենանք և թթվածնային անբավարարություն:

Կառավարության ներկայացրած փաստաթուղթը ծրագիր չէր, այլ բարի ցանկությունների շարադրանք:

– *Բայց այս կառավարությունը ծանր ժառանգություն էր ստացել և ավելի շատ զբաղված է եղել օպերատիվ խնդիրների լուծմամբ:*

– Կառավարությունն օպերատիվ կառավարման շտաբ չէ: Նա պետք է ունենա բոլոր ոլորտներին վերաբերող առնվազն մի քանի տարվա համապարփակ ծրագիր, և օպերատիվ կառավարումը պետք է իրականացվի այդ ծրագրի կետերին համապատասխան:

Եթե մենք վերլուծում ենք ՄԱԿ-ի փորձագետների մշակած Մարդկային զարգացման տարեկան զեկույցը, ապա Հայաստանը 4 ցուցանիշներով իր դիրքերը զիջել է: Ազգաբնակչության 56 տոկոսը միջազգային չափանիշներով ճանաչվում է աղքատ կամ շատ աղքատ: Բազմանդամ ընտանիքներում և աղետի գոտում այդ թվերն ավելի բարձր են: Սա է իրական պատկերը: Եվ իրավիճակի սթափ վերլուծություն անելու փոխարեն, ասում են, թե՝ այս ամիս էլ այսքան միլիարդ դրամ հավաքագրեցին: Բայց մոռանում են ասել, թե այդ հավաքած միլիարդները ՀՆԱ-ի ո՞ր տոկոսն են կազմում: Անցած տարվա ցուցանիշներով հարկային մուտքերը կազմում են ՀՆԱ-ի 14 տոկոսը, մինչդեռ այդ թիվը զարգացած երկրներում գերազանցում է 40 տոկոսը, անգամ հարևան Թուրքիայում մոտենում է 30-ի: Շատ լավ է, որ ասվում է՝ ՀՆԱ աճ է արձանագրվել, բայց նույն համաչափությամբ հարկային եկամուտների աճ էլ պիտի արձանագրվեր: Այլապես հարկային համապատասխան ծառայությունները խորամանկում են թվերի առումով:

Էներգետիկ համակարգում իրավիճակը ևս ցույց է տալիս, որ ներկայիս կառավարությունն անզոր է որևէ բան փոխել: Վարչապետը ԱԺ ամբիոնից հայտարարում է, թե առաջիկա մեկ շաբաթում կհրապարակի այն կուսակցությունների անունները, որոնց հովանավորությամբ մարդիկ էլցանցերում ղեկավար պաշտոններ են ստացել և գերկորուստներ են տվել: Գերկորուստն այն է, երբ ժողովրդից գանձված գումարը պետբյուջե մուտք չի գործում: Հայաստանի նման պարզունակ տնտեսական համակարգ ունեցող երկրում սա ուղղակի թալան է: Բայց ինչպես տեսնում ենք՝ ո՛չ անուններ հրապարակվեցին, ո՛չ էլ էլցանցերի որևէ տնօրեն պատասխան տվեց: Իսկ դա նշանակում է, որ կառավարությունը կամ անզոր է հաստատել համակարգում կարգուկանոն, կամ իրենք են կանգնած այդ ստվերային տարրերի թիկունքում:

– Դուք չեք գտնում, որ իշխանությունների կեցվածքը պայմանավորված է ներքաղաքական կայունություն պահպանելու անհրաժեշտությամբ:

– Ներքաղաքական կայունությունը, ըստ իս, ոչ մի առնչություն չունի քաղաքական կուսակցությունների գզվռտոցի հետ, այլ ազգաբնակչության վստահությամբ պիտի լինի պայմանավորված: Մնացյալը պատրանք է և ինքնախաբեություն, եթե մտածենք, որ կայունության երաշխիքը ՀՀԿ-ի և ՀԺԿ-ի կամ «Միաբանության» և ՀՅԴ-ի հարաբերություններն են: Ցավոք, այդ պատրանքն իշխում է արդեն երկրորդ տարին:

– Դուք ի՞նչ լուծում եք առաջարկում:

– Ստեղծել ազգային համաձայնության կառավարություն, որը կհամախմբի Հայաստանի քաղաքական, գիտական, մասնագիտական ընտրանին՝ հակաճգնաժամային ծրագրի շուրջ: Այդ ծրագրերը կարելի է վերջնական տեսքի բերել և ժողովրդի հավանությանն արժանացնել՝ լայն քննարկումների արդյունքում: Նորաստեղծ կառավարության խնդիրը պիտի լինի՝ ԱԺ լուծարումից հետո ստեղծել պայմաններ, որ այս երկրում վերջապես գեթ մեկ անգամ անցկացվեն ազնիվ և արդար խորհրդարանական ընտրություններ: Չեմ կասկածում, որ այդ դեպքում նորաստեղծ ԱԺ-ն ինքը վստահության քվե կտա հենց այդ նույն ազգային համաձայնության կառավարությանը: Որովհետև այդ

կառավարության կազմում ի սկզբանե պետք է ընդգրկվեն անշահախնդիր մարդիկ, որոնք նախկին հանցավոր ռեժիմի հետ որևէ առնչություն չեն ունեցել և մի գիշերվա մեջ ՀՀԾ-ից չեն դարձել այլ կուսակցության անդամ: Սա միակ ելքն է: Նոր պատգամավորական խմբեր ստեղծելով՝ որևէ որակական փոփոխություն տեղի չի ունենալու: Դա միայն ապացուցում է, թե որքան անսկզբունքային և ապաքաղաքական մարմին է ներկա խորհրդարանը:

– *Բայց եթե խորհրդարանն այսօր լուծարվի և ընտրվի նույն՝ 75 մեծամասնական և 56 համամասնական հարաբերությամբ, հավանական է, որ նույն մարդիկ կգան խորհրդարան:*

– Դրա համար էլ հանրապետության նախագահն անձնապես պետք է վերահսկի նոր ընտրությունները, որ օրենքի տառը կիրառվի և 5 հազար դրամով ու մի պարկ ալյուրով ձայներ չգնվեն: Երկրում վաղուց արդեն հասունացել է լուրջ համակարգային փոփոխությունների անհրաժեշտությունը: Պետք է գիտակցել, որ, ի վերջո, ժողովուրդը վաղ թե ուշ գնահատական է տալու այս ամենին:

Վահան Վարդանյան

«Հայոց Աշխարհ», 27.IV.2001:

Американский кнут и французская булка

– *Наметившаяся пауза в урегулировании Карабахского конфликта дает возможность обратиться к скрытым его аспектам и деталям, которые дополняют сложившуюся на сегодняшний день картину. Какую панораму в плане непопулярных, точнее, замалчиваемых фактов нарисовали бы вы?*

– Вначале сделаем небольшой исторический экскурс. Итак, 3 апреля 2001 года в маленькую самопровозглашенную республику Конч, расположенную на землях Ки в южной части американского штата Флорида, направились госсекретарь США Колин Пауэлл, президенты Армении и Азербайджана Роберт Кочарян и Гейдар Алиев. Символично, что девиз независимой республики Конч, провозглашенный главой республики почетным сэром Питером Андерсоном, гласит: "Мы отделились, а другие – нет" (не правда ли, напоминает соответствующее решение областного Совета народных депутатов Нагорно-Карабахской автономной области?). В чем же интрига? Оказывается, и впрямь в Америке (за исключением, разумеется, армянской диаспоры) мало кто представляет, что означает название "Нагорный Карабах". Это, наверное, какой-нибудь "коктейль", высказал свое предположение газете "Miami Herald" один из жителей Ки Уэста.

В преддверии Киуэстских переговоров – 30 марта было распространено сообщение Госдепартамента США о предыстории армяно-азербайджанского конфликта. Там, в частности, были даны оценки этим событиям, согласно которым Армения признана стороной, оккупировавшей азербайджанские земли, а Азербайджан – жертвой территориальных притязаний соседнего государства (администрация Клинтона не позволяла себе столь жестких формулировок). В сообщении также приводится историческая справка, где говорится, что армяне, якобы, стали интенсивно переселяться в Карабах после 1813 года (после Гюлистанского мирного договора). В Баку сообщение Госдепа было воспринято с явным удовлетворением, так как подобная констатация "фактов" была сделана официальным Вашингтоном впервые. Таким образом, министр иностранных дел РА Вардан Осканян в своем нашумевшем телеинтервью просто повторил те определения, которые

фигурируют в разъяснениях Госдепа.

В Ки Уэсте всю ту же, мягко выражаясь, некорректную информацию в течение 40 минут излагал Гейдар Алиев. Со стороны армянского президента, к сожалению, не последовало никаких разъяснений и контраргументов ни к госдеповскому сообщению, ни в противовес алиевским фальсификациям сути и истории Карабахского вопроса. А посему вполне естественно, что у присутствующих сложилось впечатление: армянской стороне нечего противопоставить, и она согласна с указанными формулировками.

— А как вы охарактеризуете позицию остальных стран — сопредседателей Минской группы?

— В своем ответе на первый ваш вопрос я вовсе не охарактеризовал позицию США, а сделал обзор имеющейся информации. Что касается информации, относящейся к позициям других сопредседателей Минской группы ОБСЕ по данному вопросу, скажу следующее.

Вспомним, что еще в январе 1998 г., до отставки Левона Тер-Петросяна, президент Франции Жак Ширак принял прибывшего в Париж с визитом в то время еще премьер-министра Роберта Кочаряна с почестями и церемониалом, предусмотренными государственным протоколом для приема первого лица иностранного государства. Такие реверансы не делаются просто так, по простоте душевной. Дальше — больше. В 2001 г. Кочарян удостоился наивысшей государственной награды демократической Франции — ордена Почетного легиона. Примечательно, что за месяц до этого в своем ежегодном послании Конгрессу США Госдепартамент счел нужным упомянуть, что во время внеочередных президентских выборов в 1998 г. в пользу Кочаряна было сфальсифицировано 100 тысяч избирательных бюллетеней.

Естественно, напрашивается вопрос: случайны ли эти совпадения? Конечно же, нет. Классическая модель поведения сопредседателей в отношении руководства Армении — тут вам и американский кнут и, как видите, французская булка.

Здесь уместно обратить внимание еще на одну особенность. В ходе Киуэстской встречи, впервые с начала переговорного процесса в рамках Минской группы, был публично поднят вопрос о роли Ирана и его влиянии на ситуацию в регионе карабахского противостояния. Характерным в этом плане является оглашенное в ходе встречи решение официального Парижа о назначении посла Франции в Иране Филиппа де Сьюрмена на пост нового французского сопредседателя в Минской группе ОБСЕ по Нагорному Карабаху вместо Жан-Жака Гаярда. По мнению аналитиков, французы вряд ли пошли бы на подобный шаг, не получив на то соответ-

ствующего согласия со стороны американцев. Не исключено, что в конечном счете американцы воспользуются "французско-иранским" политическим флиртом для возможного усиления и расширения сферы влияния своего ближайшего союзника в регионе – Турции на Южном Кавказе. Здесь нельзя сбрасывать со счетов также возрастающий интерес Франции к нефтегазовым кладовым Ирана и транспортно-энергетическим и инвестиционным проектам, реализуемым в Кавказском регионе.

В этом контексте уместно упомянуть высказывания российского сопредседателя Минской группы Николая Грибкова: "Без учета интересов Ирана вряд ли можно достичь настоящего разрешения проблемы Нагорного Карабаха".

– А бизнес-форум в Нью-Йорке? Это скорее из области пряника, нежели кнута?

– Прежде чем проанализировать итоги бизнес-форума, недавно завершившегося в Нью-Йорке, отметим очень существенную деталь. В настоящее время Республика Армения отстранена от всех крупных межрегиональных проектов, осуществляемых в государствах Южного Кавказа и Центральной Азии: будь то строительство вышеупомянутого нефтепровода Баку-Тбилиси-Джейхан или участие в реализации проекта транскаспийского газопровода.

Отметим, что трубопровод должен пройти по дну Каспийского моря через Азербайджан и Грузию (минуя Армению, хотя это самый экономичный маршрут) в Турцию. Стоимость магистрали протяженностью 2000 км может составить 2-3 млрд. долларов.

С вводом в эксплуатацию газопровода общий объем поставок составит 30 млрд. куб. м газа в год. Очевидно, что если энергоносители из Каспийского региона пойдут по этому маршруту, то Азербайджан и Грузия только за транзит газа будут получать вместе 1,2 млрд. долларов в год (из расчета 40 долларов за каждую тысячу куб. м газа). А Армения и здесь получит с гулькин нос.

Аналогично обстоят дела и с участием Армении в строительстве Великого шелкового пути (проект ТРАСЕКА), соединяющего Европу с Кавказом и Азией. Как видим, будучи отстраненной от многомиллиардных проектов, осуществляемых в регионе, вдруг, надо же, для Армении организуется крупный бизнес-форум под патронажем Всемирного банка, и не где-нибудь там в Урюпинске, а в столице мира, Нью-Йорке.

Наша республика с трибуны форума во всю преподносится как инвестиционный рай, некий ИнвестЭльдорадо. Этот спектакль разыгрывается перед нашими соотечественниками из Спюрка, которые ой как здорово проинформированы о сложившейся коррупционной атмосфере в сфере госаппарата и бизнеса, о засилии кланов в ключевых отраслях жизнеобеспечения респуб-

лики. Здесь все как положено в подобных случаях: и выступления наших друзей-конгрессменов, и Оуэйса Саадата — представителя Всемирного банка по Армении, который представляет нашу вконец обнищавшую республику чуть ли не как флагман экономических реформ на всем пространстве СНГ и всего Южнокавказского региона.

Да, уважаемый читатель, того самого Оуэйса Саадата, который за 10 дней до своего выступления в Нью-Йорке дал интервью агентству СНАРК о состоянии дел в энергетике республики, по праву считающейся ключевой отраслью в проведении любых экономических реформ. О чем же нас извещал уважаемый г-н Саадат? А о том, что в сфере энергетики РА ежегодные потери и хищения составляют 50 млн. долларов — и это при суммарном производстве в 180 млн. долларов.

Для любого бизнесмена, я уже не говорю об экспертах международного уровня, эти цифры красноречиво свидетельствуют об уровне коррумпированности государства и степени его инвестиционной привлекательности. Когда Армению хвалят, то создается впечатление, что нас держат за идиотов.

Судите сами, в годовом отчете ООН о человеческом развитии за 2000 год Армения по принятым международным стандартам с 79-го места сместилась на 83-е. Валовой внутренний продукт на душу населения составляет немногим более 500 долларов в год. Для сравнения скажем, что по этому показателю мы в 13 раз уступаем Турции, которая вот уже 2 года переживает острейший финансовый кризис.

Возвращаясь к бизнес-форуму, а тем более к проектам межрегионального развития в увязке с мирным урегулированием проблемы Нагорного Карабаха, хотелось бы сказать следующее. Население Армении проникнется доверием к обещаниям крупных инвестиций в экономику республики лишь тогда, когда ей будет отведено подобающее место в уже осуществляемых крупных межрегиональных программах. Иначе каждый уважающий себя бизнесмен, слушая разного рода спичи об инвестиционной привлекательности, естественно, задается вопросом: а почему Армения отстранена от участия в строительстве нефтепровода или газопровода, или должным образом не представлена в проекте ТРАСЕКА, почему ни Всемирный банк, ни Европейский банк реконструкции и развития, ни США и ни Франция (которые неоднократно подчеркивали, что экономическое возрождение Армении зависит от установления мира в регионе) не смогли добиться вовлечения РА в реализацию указанных программ? Ведь не секрет, что Армения, Азербайджан, Грузия, имея общие крупные совместные экономические интересы, куда быстрее смогли бы договориться об установлении прочного мира в регионе.

— Самое время упомянуть и о России — третьем сопредседателе Минской группы ОБСЕ, о стратегическом партнере нашей страны.

— При внимательном сопоставлении фактов и событий, происходящих в регионе Южного Кавказа, на первый взгляд, может сложиться ложное впечатление, что Россия самоустраняется и вытесняется с Южного Кавказа. И на эту ложную гипотезу клюнули многие из региональных лидеров. Соблазнов для того, чтобы быть обманутыми, было немало.

Вначале, на ноябрьском (1999 г.) Стамбульском саммите ОБСЕ, президент Ельцин подписывает документ, в соответствии с которым Россия обязуется передислоцировать свои военные базы с территории Грузии (Вазиани, Гудаута, Ахалкалаки и Батуми). Военный аэродром в Вазиани уже де-факто перешел под контроль Грузии. Более того, в середине мая текущего года в ходе российско-грузинских переговоров вице-премьер РФ Илья Клебанов делает сенсационное заявление, предлагая осуществить вывод баз из Ахалкалаки и Батуми в течение 14 лет. Он не исключает, что если зарубежные государства выделят средства для вывода российских войск из Грузии, "сроки ликвидации и вывода баз можно будет корректировать".

Заметим, что первоначально российская сторона настаивала на сохранении своего военного присутствия в Грузии в течение 25 лет. Это с одной стороны. С другой, мы с вами стали свидетелями беспрецедентного "дипломатического парада" признания и осуждения европейскими странами Геноцида армян 1915 года, осуществленного в Османской империи. Думается, что это преследует далеко идущие цели. Заставить Турцию установить дипломатические отношения с Арменией, всемерно развивать торгово-экономические связи.

Параллельно с этим армянской общественности под разным соусом навязывается мысль о неизбежности открытия коммуникаций (понимай — автомобильной дороги), соединяющих так называемый материковый Азербайджан (Зангеланский район) через территорию Мегринского района с Нахичеваном и Турцией. Не надо быть семи пядей во лбу, чтобы предвидеть, что это приведет к существенному возрастанию роли Турции во всем регионе Южного Кавказа.

Дальше — больше. Установив дипломатические отношения с Арменией, развивая с ней торговлю, Турция и заинтересованные ее союзники, конечно, поставят вопрос о нецелесообразности в условиях установившихся новых отношений с Турцией передоверять охрану государственной границы РА пограничным войскам третьей страны, то есть России. Уход же России из РА — конечная стадия сценария перехода Южнокавказского региона под патронаж Турции. Отдельные умники тешат себя мыслью, что Россия всего

этого не понимает...

Хочу особо отметить, что я — убежденный сторонник исключительно мирного разрешения Карабахского конфликта, установления нормальных добрососедских отношений со всеми сопредельными странами, всемерного развития коммуникационных связей между государствами региона, но не в ущерб другим. Взять, к примеру, предлагаемую автодорогу, соединяющую Азербайджан через Мегри с Нахичеваном. Ведь не секрет, что установление границы Турции с материковым Азербайджаном неизбежно подхлестнет извне рост сепаратистских, центробежных настроений в Северном Иране, так называемом Иранском Азербайджане (исторический Атрпатакан, населенный этническими азербайджанцами), что, естественно, чревато возникновением серьезного очага напряженности на южных границах Армении.

Иран прекрасно осознает, какие возможные опасности таятся при подобном стечении обстоятельств. И можно не сомневаться, что предпримет адекватные меры. А есть ли выход? Конечно. Что мешает разработать и силами всех заинтересованных государств осуществить строительство эстакады по всей длине реки Аракс (не через реку, а по реке) вдоль армяно-иранской государственной границы. Правую сторону дороги будут охранять иранские пограничники, а левую — армянская сторона. Ведь будь Аракс полноводной судоходной рекой — именно так бы и поступили.

Реальный проект? Безусловно, да! А самое главное — реализация строительства авто- и железнодорожной магистрали вдоль реки Аракс еще теснее сынтегрирует экономику государств Южного Кавказа, а авто- и железнодорожные магистрали станут дорогами доверия, мира и процветания.

Возвращаясь к роли России во всех этих проектах, отметим следующее. 10 января 2000 г. Указом президента Российской Федерации за №24 была утверждена новая редакция Концепции национальной безопасности Российской Федерации. В Концепции указывается: "угрозы национальной безопасности РФ в международной сфере проявляются в попытках других государств противодействовать укреплению России..., помешать реализации национальных интересов и ослабить ее позиции в Европе, на Ближнем Востоке, в Закавказье и Центральной Азии..." Развитие отношений с государствами — участниками Содружества независимых государств, согласно принципам международного права, развитие отвечающих интересам России интеграционных процессов в рамках СНГ признано в числе внешнеполитических приоритетов Российской Федерации. Именно этот основополагающий подход России к региону Южного Кавказа, последовательные действия президента Владимира Путина в этом направлении требуют взвешенного подхода армянских властей к взаимоотношениям со своим стратегическим партнером.

Подхода, неподвластного эмоциональным воздействиям, рассчитанного на ранимость исторической памяти нашего народа или на искушение быть высоко оцененным, но не в своем Отечестве, тем более не будучи пророком.

— *О перспективах в отношении второго полугодия: как, по-вашему, будут развиваться события во второй половине года?*

— Я исхожу в своих прогнозах из следующей предпосылки. Как Армения, так и Азербайджан в лице своих народов уже давно устали от состояния "ни мира, ни войны". С учетом крупных экономических программ, реализуемых в перспективе в регионе Южного Кавказа и Центральной Азии, в установлении мира заинтересованы как США, так и Западная Европа с Россией и, конечно же, Исламская Республика Иран. Каждое из указанных государств имеет весьма и весьма существенные интересы в регионе. Очевидно, что развитие транспортно-трубопроводной сети региона приведет к притоку сюда ощутимых западных инвестиций и соответственно к усилению американского влияния, что в значительной мере способно нейтрализовать военно-политическое влияние России, которая вряд ли способна осуществить также и адекватную финансово-экономическую экспансию.

И то, что Женевская встреча президентов Алиева и Кочаряна откладывается, — вовсе не есть результат неготовности народов Армении и Азербайджана принять предложения сопредседателей Минской группы ОБСЕ, как хотят представить. На самом деле предложения, которые могли бы послужить для президентов базой для заключения мира в Нагорном Карабахе, на мой взгляд, до конца не согласованы самими сопредседателями Минской группы. Ссылки на неготовность народов — от лукавого. Народы, увы, всегда мудрее своих руководителей, думается, и данный случай — не исключение. А "тайм-аут" в переговорном процессе, судя по многим намекам, возник в результате прямой договоренности между президентами России и США.

Нагорно-Карабахская Республика уже не первый год состоялась, и исходить надо именно из данного исторического факта.

Беседу вела
Марина Мкртчян

.

"Голос Армении", 7.VI.2001

Ժողովուրդը իշխանության ընդդիմություն է

«Առավոտը» դիմեց «Ազգային Միաբանություն» կուսակցության ղեկավար Արտաշես Գեղամյանին՝ հարցազրույցի խնդրանքով. վերջինս մեր հարցերին պատասխանելուց առաջ հարկ համարեց իր գնահատականները տալ ընդդիմադիր և իշխանամետ մամուլին.

«Ի սկզբանե, ինքս եմ ուզում Ձեզ հարցով դիմել, որ օգնեք լուծել քաղաքական մեկ խնդիր, ավելի ճիշտ՝ պարադոքս: Երբ կարդում ես իշխանամետ մամուլը, որն արդեն շուրջ մեկ տարի կատաղի գովերգում է իրենց հոգևոր հայրիկ, հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին, գովերգում է, ոչ թե ասելով, թե քանի լրացուցիչ տասնյակ հազարավոր աշխատատեղեր են ստեղծվել, թե քանի սպանություններ են բացահայտվել և սպանությունների կազմակերպիչներ, ոչ թե նրանով, թե քանի հազար ընտանիք են կարողացել համոզել, որ գլխակորույս չլքեն Հայաստանը և չհեռանան հայրենիքից, այլ, գովերգման նոր ճանապարհ են գտել: Այն է՝ քննադատել, զրպարտել քաղաքական այն գործիչներին, որոնք, ավա՜ղ, հանդգնում են ասել՝ պրն Քոչարյան, Ձեր աչքի վերևը հոնք էլ կա: Իրենց երևակայության մեջ հասել են այնտեղ, որ արդեն այդ քաղաքական ընդդիմադիրներին համեմատում են Նաիրի-Հերոստրատի հետ: Արդեն ասես Կասանդրայի նման գուշակում են, որ ոչ մի բան չի ստացվի, որ Քոչարյանը հավերժ է, ինչպես հավերժ են համապատասխան մասնագիտությունները»:

Պրն Գեղամյանի խոսքի այս մասը վերաբերում էր իր ասելով՝ «իշխանամետ մամուլին»: Ընդդիմադիր մամուլի մասին Արտաշես Գեղամյանի կարծիքը կրկին ինքնատիպ էր: Նրա խոսքերով՝ «ընդդիմադիր մամուլը կարդալով, նոր հայտնագործություն ես կատարում: Բանից պարզվում է, որ ես ոչ այլ ոք եմ, քան՝ Քոչարյանի արհեստածին ընդդիմադիր ուժը: Չգիտես՝ խնդաս, թե լաս: Հաշվի առնելով, որ ձեր թերթն անաչառ է, տեղ թողնենք որոշակի հարցերի լուսաբանման համար: Որ վաղը, մյուս օրը, երբ, ձեր «խասյաթի» համաձայն, Գեղամյանի վրայով գնաք ու գաք, ես ասեմ, որ ամեն ինչ որոշակի եմ ասել: Քաղաքական ներկա պատկերում Գեղամյանը ոչ այլ ոք է, քան՝ ուժ, որն ընդդիմադիր է թե՛ Քոչարյանի վարչակարգին, թե՛ այն ուժերին, ովքեր այդպես էլ չեն ուզում հանգել մի պարզ ճշմարտության: Իսկ այդ ճշմարտությունն այն է, որ, բացի իրենցից և Քոչարյանի վարչակարգից, ծնունդ է առել երրորդ ուժը, որը, անշուշտ, պատրաստ է համագործակցել ընդդիմադիր դաշտի բոլոր ուժերի հետ, բնականաբար,

փոքր վերապահումներով: Ահա, այս է ճշմարտությունը, և ընդդիմադիր մամուլն ու հեռուստատեսությունը պետք է պարզ գիտակցեն մի ճշմարտություն, որ Քոչարյանի վարչակարգի ջրաղացին ջուր կլցնեն, եթե անհիմն կասկածամտությունից դրդված Գեղամյանին և իր դաշնակիցներին կապեն Քոչարյանի հետ»:

Արտաշես Գեղամյանը ընդդիմադիր և իշխանամետ մամուլին և հեռուստատեսությանն այսպես խրատելուց հետո ահազանգեց, որ պետական քարոզչամեքենան, փոխանակ խոստովանի, որ ծախողել է բոլոր հարցերը, արհեստականորեն ուզում է պատրանք ստեղծել, որ իրենց գործը չի հաջողվում, քանզի երկրի վիճակն ապակայունացնող ուժեր կան: Արտաշես Գեղամյանի պնդմամբ, ոմանց «ձեռնտու է իշխանամետ քաղաքական ուժերի գերեզմանոցային կայունությունը, որն այդ ուժերի ընտանիքների համար գուցե անվրդով կյանքի աղբյուր է, բայց՝ ոչ համայն հայության, ոչ Հայոց պետականության»:

Ջրույցի ընթացքում Արտաշես Գեղամյանն ասաց, որ նոր ծնունդ առնող երրորդ ուժը պատրաստ է համագործակցել ընդդիմադիր դաշտի բոլոր ուժերի հետ, բացառությամբ մի քանիսի: «Առավոտը» հետաքրքրվեց, թե որոնք են այդ բացառությունները. «Բացառությունն այն ուժերն են, ովքեր իրենց գործունեության ընթացքում թույլ են տվել արարքներ և գործողություններ, որոնք հետապնդելի են ներկայիս օրենքներով»: *Արտաշես Գեղամյանը պատրաստ է համագործակցել նաև ՀՀԾ-ի՞ հետ.* «Դո՛ւք ասացիք»: *Աշոտ Մանուչարյանի կազմակերպած հանրահավաքների, հանրահավաք-ասուլիսների ժամանակ արդեն երկրորդ անգամ ինչ-որ մարդիկ հարցնում են՝ իսկ որտե՞ղ է Արտաշես Գեղամյանը, որտե՞ղ են Ստեփան Դեմիրճյանը, Արամ Սարգսյանը: Որտե՞ղ եք, պրն Գեղամյան: «Առավոտի» այս հարցին պատասխանելիս, Գեղամյանն ասաց.* «Արտաշես Գեղամյանը, երբ հնարավորություն ունի ԱԺ ամբիոնից լսելի լինել իմ կողմից հարգված Արշակ Սադոյանի սիրելի ռադիոլսողների համար, որ, անգամ այս վատ կապի պայմաններում կազմում է հանրապետության 80 տոկոսը, ապա համաձայնեք, ավելի ճիշտ է համարում օգտագործել այդ մեծ լսարանը, քանի դեռ այս հնարավորությունը կա, քան՝ հանրահավաքը: Եթե դուք ուշադրություն եք դարձրել, հանրահավաքի կազմակերպիչներ են այն ուժերը, որոնք ներկայացված չեն խորհրդարանում: Ես չեմ ասում, որ իրենք արժանի չեն, շատ ավելի արժանի են, քան խորհրդարանում ներգրավված ուժերը, բայց այդպես է ստացվել»:

– Արշակ Սադոյանն իր վերջին ասուլիսում հայտարարեց, որ որոշակի ընդդիմադիր ուժն արդեն ձևավորված է, շուտով հայտարարություն կարվի այդ մասին: Դա նույն ո՞ւժն է, որի հիմքում նաև դուք եք:

– Ես կասեմ հետևյալը՝ արդեն Հայաստանում պատասխանատու քաղաքական բոլոր կուսակցությունների համար ակնհայտ է, որ ներկայիս վարչակարգով, ներկայիս նախագահով և ներկայիս կառավարությամբ Հայաստանն անհնարին է հանել այն համակողմանի ճգնաժամից, որի մեջ հայտնվել ենք վերջիններիս մեղքով: Երբ բացահայտորեն մարդկանց մեղադրում ես օրինազանցության մեջ, անգամ թվեր և փաստեր ես

ասում, փոխանակ դա հուզի իշխանություններին, նախարարական մեկ պորտֆելը փոխարինում են նախարարական մյուս պորտֆելով: Սեփական անձերի մեջ թող իշխանությունները փնտրեն իրենց ձախողումների պատճառը, սեփական անտեղյակության և մեր ժողովրդի համար օտար դարձած լինելու մեջ:

- Դուք կարծում եք, մեր հասարակությունը ուզո՞ւմ է կամ պատրա՞ստ է հեղաշրջման ճանապարհով հարցեր լուծել:

– Այնքան են սարսափած ընդդիմությունից, որ ժամերով հեռուստաեթեր են տրամադրում բոլոր ժամանակների իշխանամետ մտավորական հորջորջվող քաղաքական սազանդարներին, որոնք, կարծես իրենք իրենց են ուզում համոզել, որ ընդդիմություն չկա, փափուկ բարձ դնել իրենց տերերի գլխի տակ: Ընդդիմություն կա, բացեք ձեր աչքերը, պարոնայք: Ամբողջ հայ ժողովուրդն է ընդդիմություն ներկայիս իշխանություններին:

Հարցազրույցը վարեց
Մարգարիտ Եսայանը

«Առավոտ», 10.VII.2001:

Կարթագենը պետք է կործանվի

«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանը վերստին հայտնվել է քաղաքական իրադաձությունների կենտրոնում: Վերջին շրջանի նորությունն այն է, որ նա բացահայտ սկսել է անհրաժեշտ համարել Ռոբերտ Քոչարյանի վարչակարգի հեռացումը: Որոշ քաղաքական գործիչներ կրկին հարց են տալիս՝ որքանո՞վ է անկեղծ Գեղամյանի այս մղումը: Այս և մի քանի այլ հարցերի շուրջ է մեր զրույցը «Ազգային Միաբանության» նախագահի հետ:

– Քաղաքական մի շարք գործիչների կարծիքով, ձեր ընդդիմադիր գործունեությունը կառավարվում է իշխանությունների կողմից: Նման կարծիքի համար հիմք է տալիս այն տեղեկությունը, թե դուք պարբերարար հանդիպում եք ՊՆ նախարար Սերժ Սարգսյանի հետ, որը, համենայնդեպս, մինչև վերջերս համարվում է Ռոբերտ Քոչարյանի կարևորագույն հենարանը:

– Ձեր վերջին պնդման հետ լիովին համաձայն եմ: Այո, Ս. Սարգսյանը Քոչարյանի հիմնական հենարանն է: Եվ այս եզրահանգումից էլ բխում է ձեր հարցի պատասխանը: Եթե մի քաղաքական գործիչ իր հրապարակային ելույթներում ամենահիմնավոր քննադատության է ենթարկում Ռ. Քոչարյանի վարած քաղաքականությունը՝ բոլոր բնագավառներում, և փաստերով ասում է, որ այս վարչակարգը սպառել է իրեն ու պետք է հեռանա, ի՞նչ եք կարծում, անվտանգության խորհրդի քարտուղարը ի պաշտոնե պե՞տք է հանդիպի այդ քաղաքական գործչի հետ: Կարծում եմ՝ անպայման: Այն պարզ պատճառով, որ Գեղամյանն անհատ անձ չէ, այլ Ազգային ժողովի երրորդ քաղաքական ուժի ղեկավար: Ուժ, որն օրըստօրե հզորանում է և, որ կարևոր է, ունի հստակ հակաճգնաժամային ծրագիր: Բնականաբար, այդ քննարկումներն են իմ և Սերժ Սարգսյանի հանդիպումների առիթը: Ինչ վերաբերում է դրանց հաճախականությանը, այստեղ չափազանցություն կա: Վերջին մեկ տարվա ընթացքում եղել է նման երկու հանդիպում, դրանք ունեցել են զուտ գործնական բնույթ, պարոն Սարգսյանը մնացել է իր տեսակետներին, ես՝ իմ: Ես այդ հանդիպումները կարևորում եմ այնքանով, որ յուրաքանչյուրը պետք է իմանա քաղաքական ուժերի իրական գնահատականը հանրապետությունում ստեղծված վիճակին: Ես բացահայտ ասել եմ, որ իմ քննադատությունը ոչ թե քաղաքական կոնյուկտուրայից է բխում, այլ համոզմունքների արդյունք է:

– Դուք ասում եք, որ ունեք հակաճգնաժամային ծրագիր: Ինչպիսի՞ն կլինի ձեր արձագանքը, եթե Քոչարյանն ու Ս. Սարգսյանը առաջարկեն ստանձնել կառավարության ղեկը և իրականացնել այդ ծրագիրը միասին:

– Ի՞նչ եք կարծում, Ռոբերտ Քոչարյանը միամի՞տ մարդ է: Ես կարծում եմ, որ նա չի կարող սղոցել այն ճյուղը, որին նստած է: Հայաստանի էկոնոմիկայի վատթարագույն վիճակը պայմանավորված է հիմնականում երկու-երեք գործոնով. կլանային համակարգ, որը մրցակցության հնարավորությունից զրկել է բոլոր տնտեսվարող սուբյեկտներին: Երկրորդը՝ կոռումպացված իշխանություններ, որոնք շարքային գործարարին հնարավորություն չեն տալիս իրացնել իր հնարավորությունները: Այդ բոլորը հավաքված են Քոչարյանի տակ:

– *Լավ, ասենք՝ Քոչարյանը միամտանա...*

– Որեմն պիտի աչքի առաջ ունենա, որ վարչապետը կառավարության գործունեության ծրագիրն ԱԺ ամբիոնից ներկայացնելիս կհնչեցնի այն արատները, որոնք կան տնտեսությունում, կհիշատակվեն այդ արատները ծնող պաշտոնյաները, այդ պաշտոնյաներին հովանավորողները: Իսկ քանի որ մեզ մոտ փաստացի բացարձակ նախագահական համակարգ է, այս բոլորը դարձյալ ֆոկուսացված է Ռոբերտ Քոչարյանի տակ: Եթե նա, իրոք, ուզում է վարչակարգի ախտորոշումը լսել անաչառ մարդու կողմից, որը Հայաստանի տնտեսությունն առողջացնելուց բացի ոչ մի հավակնություն չունի, ապա, այո, նա պետք է գնա այդ քայլին: Ըստ որում, այդ քայլը չափազանց բարերար կազդի իր գործունեության վերջնական, համաժողովրդական գնահատականի վրա:

– *Տեղեկություններ կան, որ խումբ-խմբակցությունների ղեկավարների և Քոչարյանի միջև տեղի ունեցած հանդիպման ժամանակ ձեր և Քոչարյանի միջև բանավեճ է տեղի ունեցել: Ինչի՞ շուրջ է եղել այն:*

– Խոսքը վերաբերում էր «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի ընդունմանը: Ասենք, որ մենք էլ կարևորում ենք նման օրենքի գոյությունը Հայաստանում, բայց մենք ուզում ենք, որ հակասահմանադրական օրենք չընդունվի: Ինձ, սակայն, զարմացնում է այն շտապողականությունը, որով ուզում են այս օրենքն անցկացնել: Այդ շտապողականությունը հուշում է, որ Քոչարյանն իր ամբողջ քաղաքական ռեսուրսը սպառել է: Նա հարկադրված է այս օրենքն ընդունել: Նրա նախընտրական կարգախոսն էր՝ իմ կուսակցությունն իմ ժողովուրդն է: Նա չունի կուսակցություն՝ ի դեմս ժողովրդի: Բայց նա ինչ-որ հենարան պիտի՞ ունենա: Եվ ահա նա ուզում է իր հենարանը դարձնել շուրջ 160 հազար քաղաքացիական ծառայողներին, որոնց նշանակման գործը «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի այս նախագծով, վերապահվում է իրեն՝ նախագահին: Հանդիպման ժամանակ ես ասացի՝ տառապանքներս փորձ ունեն, պարոն Քոչարյան: Չէ՞ որ դուք եք նշանակել Հանրային հեռուստատեսության աշխատանքները կանոնակարգող հանձնաժողովը: Եթե դուք վերջին մեկ տարվա ընթացքում գոնե մեկ դեպք հիշեք, որ այս կամ այն ընդդիմադիր գործիչն ուղիղ եթերով ելույթ է ունեցել Հանրային հեռուստատեսությամբ, ես ներողություն կխնդրեմ: Չկա նման բան: Դեմքդ ցույց են տալիս Հանրային հեռուստատեսությամբ, իրենք իրենց ասածն են ասում, իրենց ասածը վերագրում քեզ ու ջախջախում այն: Եվ, ի զարմանս ինձ, նախագահն ասաց՝ դե, այդքան ուրիշ հեռուստակայաններ կան... Քոչարյանի կողմից այլ հարցադրում եղավ,

թե՝ որոշ նախարարություններում հայտնվել են փոխնախարարներ, որոնք հրապարակային քննադատում են նախարարներին: Եվ ասաց, որ այդ մարդիկ պետք է հեռացվեն և հեռացվելուց հետո ինչքան ուզում են՝ թող քննադատեն: Բնականաբար, հարց է առաջանում. եթե փոխնախարարը թվեր ու փաստեր է հրապարակում, և դրանք համապատասխանում են իրականությանը, ի՞նչ պատժի կամ պաշտոնանկության մասին կարող է լինել խոսքը:

– Լավ, անդրադառնանք ՀԺԿ-«Հանրապետություն»-«Սպայի պատիվ»-ԱՀՇ-«Ազգային Միաբանություն» դաշինքին, որը, կարծես թե, կայանում է: Արդյո՞ք այդ դաշինքը նախագահական ընտրություններում միասնական թեկնածու առաջադրելու խնդիր է դրել: Կա փորձ, որ քաղաքական միավորումները, շատ ընդհանրություններ ունենալով, լիդերության հարցում պառակտվում են: Կարծիք էլ կա, թե Ստեփան Դեմիրճյանը, Արամ Սարգսյանը և Արտաշես Գեղամյանը չեն կարողանա կիսել դաշինքի լիդերությունը:

– Խնդիրը ես այլ կերպ կձևակերպեի. մենք ոչ թե լիդերությունը պետք է կիսենք, այլ պատասխանատվությունը: Պետք է ելնել այն բանից, թե որ մեկս որտեղ կարող ենք ավելի օգտակար լինել, թե որ մեկս որ հարցում կարող ենք դրական ամենամեծ նպաստն ունենալ մեր երկրի, մեր ժողովրդի համար: Իսկ դա բացահայտ նշմարելի է դառնում: Կարևորը, որ մենք մարդկանց կարողանանք համախմբել ոչ թե մեր անձերի, այլ մեր ծրագրերի շուրջ:

– ԱԺ նախագահ Ա. Խաչատրյանը դուրս եկավ ՀԺԿ-ից: Ի՞նչ եք կարծում, այս իրադարձության արդյունքում պե՞տք է ԱԺ նախագահի փոփոխություն տեղի ունենա:

– Հոկտեմբերի 27-ից հետո ԱԺ-ն պետք է ինքնալուծարվեր: Կարեն Դեմիրճյանը և Վազգեն Սարգսյանը, լինելով վառ անհատականություններ, իրենց ետևից, պատկերավոր ասած, շարան-շարան դատարկ վագոններ բերեցին Ազգային ժողով: Իրենց ողբերգական մահից հետո ավելի ընդգծվեց նրանց դատարկությունն ու փուչ լինելը: Ու հիմա առանց անհարմար զգալու կանգնում ասում են, որ «մենք Կ. Դեմիրճյանի աշակերտներն ենք, ու նրանց գիծն ենք շարունակում»: Ի՞նչ, Կարեն Սերոբիչն ասում էր Հայաստանը դարձնենք միապետությո՞ւն, հանցագործներին, մարդասպաններին հովանավորե՞նք, սի՞րտ տանք, որ նրանք, վերջիվերջո, չեն կրի արժանի պատիժ, Կարեն Սերոբիչն ասում էր՝ բաշխիչ ցանցերն ու ստրատեգիական մյուս օբյեկտները տանք օտարների՞ն ու նրանցից լրիվ կախված մնա՞նք:

– Ամեն դեպքում, քաղաքական նոր իրավիճակի ի՞նչ լուծում եք տեսնում:

– Արմեն Խաչատրյանը և Գագիկ Ասլանյանը ձեռք ձեռքի տված պետք է հրաժեշտ տան իրենց աթոռներին: Ես հասկանում եմ՝ ինչ ծանր ապրումների մեջ կընկնեն, հասկանում եմ, թե ինչ ծանր կորուստ կկրի հայոց պետականությունը, բայց իրականությունը սա է: Բարոյականությունը թելադրում է, որ այս ամենից հետո նրանք վայր դնեն իրենց պատգամավորական մանդատները: Այս իրադարձությունները ևս մեկ անգամ ապացուցում են, որ Ազգային ժողովը պետք է լուծարվի, որովհետև չկա մեծամասնություն,

որն ի վիճակի լինի քաղաքական լիարժեք պատասխանատվությունն ստանձնելու: Ընդամենը կապահովեն 66-70 հոգիանոց կոճակ սեղմողների մեծամասնություն: Բայց Քոչարյանը չի գնա ԱԺ-ի լուծարման, որովհետև իր համար ավելի հարմար խամաճիկային մեծամասնություն ունեցող Ազգային ժողով այլևս չի ձևավորվի, ինչը նա շատ լավ է գիտակցում:

– Իսկ ձեր պատկերացմամբ, ԱԺ խոսնակի և փոխխոսնակի պաշտոնը դարձյա՞լ պետք է վերապահվի ՀԺԿ-ին, թե՞, այնուամենայնիվ, ստատուս քվոն չպետք է պահպանվի, և խորհրդարանը պետք է վերաճևվի:

– Ցանկացած լուծում այս ԱԺ-ի շրջանակներում անբարոյական է:

Հ. Գ. Արտաշես Գեղամյանը քաղաքական իր ելույթների համար նոր վերջաբան է մշակել: Հին հռոմեական սենատոր Կատոն Ավագի նման նա ցանկացած ելույթի վերջում հիշեցնում է. «Կարթագենը պետք է կործանվի», այսինքն, իշխանափոխությունը Հայաստանում անխուսափելի է:

«Հայկական ժամանակ», 21.VII.2001:

Քաղաքականությունը ոչինչ չի բացառում

– *Առաջիկա ընտրություններին ձեր կուսակցությունը միայնա՞կ է մասնակցելու, թե՞ որևէ նախընտրական դաշինքի կազմում:*

– Արդեն պատրաստ է մեր կուսակցության հակաճգնաժամային ծրագրի հայեցակարգը, և ընտրությունների նախաշեմին կհրապարակենք այն՝ կոչ անելով քաղաքական բոլոր ուժերին՝ ծանոթանալ այդ հայեցակարգին և հայտնել իրենց գնահատականներն ու վերաբերմունքը: Եթե գտնվեն քաղաքական ուժեր, որոնք հավանության կարժանացնեն այդ հայեցակարգը, և որոնց առաջարկներն ու դիտողությունները ընդունելի կլինեն մեր կուսակցության համար, ապա համագումարում կքարձրացնենք հնարավոր միավորումների ստեղծման հարցը: Չեմ բացառում դաշինքների ստեղծումը հատկապես նախագահական ընտրությունների ժամանակ: Ավելին, համոզված եմ, որ հասարակության պահանջն է, որպեսզի հանրապետության քաղաքական բոլոր ուժերը համախմբվեն նոր թեկնածուի շուրջ, որովհետև Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարության անցած 4 տարիները, ցավոք, ապացուցեցին, որ լավ պատերազմելը դեռ չի նշանակում լավ կառավարել նաև խաղաղ պայմաններում. կան թվեր, որոնք լուրջ մտահոգության տեղիք են տալիս: Մասնավորապես, անցած 5 տարիների ընթացքում ավելի քան 160 հազարով կրճատվել են աշխատատեղերը, միայն անցյալ տարվա ընթացքում 57 տոկոսով աճել են մինչև 14 տարեկան երեխաների՝ թոքախտով հիվանդացության դեպքերը...

– *Կներեք, բայց ժամանակին քննադատում էիք նաև Արամ Սարգսյանի գլխավորած կառավարության գործունեությունը, որի հետ այսօր դաշնակցում եք...*

– Արդեն 8 տարի է, ինչ ապացուցում եմ, որ Հայաստանում վարվող տնտեսական քաղաքականությունը տանում է դեպի փակուղի, դա մի քաղաքականություն է, որից հրաժարվել են դրա հիմնադիր հայրերը՝ Արժույթի միջազգային հիմնադրամը և Համաշխարհային բանկը: Այո, քննադատել եմ վարվող տնտեսական քաղաքականությունը, բայց դրա հետ մեկտեղ այլընտրանքային ծրագրեր առաջարկել, սոսկ քննադատություն չի եղել: Մի բան է՝ քննադատել այս կամ այն քաղավառում այս կամ այն գործչի կողմից առաջարկված քաղաքականությունը, մեկ ուրիշ բան՝ օրենքի գերիշխանություն հաստատելու հիմնահարցերում լինես համախոհ: «Հանրապետություն» և Հայաստանի ժողովրդական կուսակցությունների հետ համատեղ ժամանակին ստորագրել ենք կոչի ներքո, ուր տրված են կոնկրետ խնդիրների վերաբերյալ մեր գնահատականները, և մինչև օրս էլ հավատարիմ եմ մնում կոչի բովանդակությանը: Ինչ

վերաբերում է հնարավոր դաշինքներին, ապա այո, հնարավոր եմ համարում թե՛ «Հանրապետություն» կուսակցության, թե՛ ՀԺԿ-ի, թե՛ «Սոցիալիստական Հայաստան» միավորման հետ ամուր, կուռ դաշինքի ստեղծումը, որը կձևավորվի ոչ թե ընդդեմ, այլ հանուն ՀՀ դինամիկ զարգացման և կառաջնորդվի հակաճգնաժամային ծրագրով: Ինչու չէ, եթե գործնական առաջարկներ լինեն, իսկ ես համոզված եմ, որ այդպիսիք կլինեն թվարկածս կուսակցությունների և միավորման կողմից, ապա կարող ենք նաև ընդհանուր ծրագրով հանդես գալ: Ավելին, չեմ բացառում, որ ընդհանուր ծրագրին մասնակից դառնան նաև այն կուսակցությունները, որոնք դեռ երկմտանքի մեջ են, բայց, ի դեմս իրենց շարքերի, գտնում են, որ ՀՀ նախագահ Քոչարյանի կողմից իրականացվող քաղաքականությունը կործանարար է:

– Բայց այնպիսի մի կարևորագույն հարցի առթիվ, ինչպիսին պետության կառավարման ձևն է, դուք և «Հանրապետություն» կուսակցությունը ունեք խիստ հակադիր մոտեցումներ: Սա չի՞ նշանակում, որ այդ դաշինքը, այնուամենայնիվ, ձևավորվել է ոչ թե հանուն ինչ-ինչ գաղափարների, այլ ընդդեմ նախագահի:

– Սահմանադրության հնարավոր տարբերակների վերաբերյալ իմ մոտեցումը, ցավոք, միակողմանի է մեկնաբանվում: Ընդունման գրեթե առաջին իսկ օրվանից գործող Սահմանադրությունը չի կիրառվել, կոպտորեն ոտնահարվել են սահմանադրական հիմնադրույթները, ուստի, նախևառաջ, անհրաժեշտ է եղած Սահմանադրությունն իր բոլոր արարիչ հնարավորություններով լիարժեք գործի դնել, տեսնել՝ սահմանադրական ո՛ր դրույթն է խոչընդոտում երկրի զարգացմանը, ապա նոր անդրադառնալ այդ դրույթի բարեփոխմանը: Մինչդեռ, դա չենք արել: Սահմանադրության ո՞ր դրույթն է խանգարում կլանների դեմ անողոք պայքար մղելու, ընտրական կեղծիք կատարողների ձեռքը ժամանակին բռնելու և անարգանքի սյունին գամելու համար: Չկա այդպիսի դրույթ: Իսկ ԱՄՆ պետդեպարտամենտն այս էլ երկրորդ տարվա իր զեկույցում գրում է, որ 98 թ. նախագահական ընտրություններում 100 հազար քվեաթերթիկ է կեղծվել... Այսինքն՝ արդի խնդիրների լուծմանը հետամուտ լինելու փոխարեն, միտումնավոր հրապարակ են նետել սահմանադրական բարեփոխումների հարցը՝ քաղաքական ուժերին հերթական անգամ միմյանց դեմ հանելու, գզվռտոց ստեղծելու համար, որպեսզի հանրությանն ասեն, թե տեսեք՝ կուսակցություններն իրար միս են ուտում, արդյո՞ք կարող են արարիչ գործունեությամբ զբաղվել:

– Ներեցեք, բայց իմ հարցը բոլորովին այլ էր. հայտարարել եք, որ կողմնակից եք նախագահական կառավարման ձևին, մինչդեռ «Հանրապետություն» կուսակցությունը նախընտրում է խորհրդարանականը: Այսինքն՝ սկզբունքային հարցերում ունեք տարաձայնություններ...

– Ձեր ասածի մեջ կա տրամաբանություն, բայց պատահական չէ, որ զրույցի սկզբում կարևորեցի հակաճգնաժամային ծրագրի ծնունդը: Թվարկված կուսակցությունների կողմից դրա վերամշակվելուց հետո կխորհրդակցենք, թե գործող Սահմանադրության պայմաններում հնարավո՞ր է իրագործել այդ ծրագիրը: Եվ եթե իմ գործընկերները

հիմնավորեն, որ այն ավելի դյուրին կյանքի կկոչվի խորհրդարանական հանրապետության պայմաններում, ապա, ինչու չէ, կարելի է նաև վերանայել:

– Այսինքն՝ բացառված չէ, որ կո՞ղմ արտահայտվեք խորհրդարանական կառավարման ձևին:

– Իհարկե չեմ բացառում. քաղաքականության մեջ նպատակահարմարությունից պետք է ելնել (պետական շահերի առումով):

– Նախագահական ընտրություններին առաջադրելո՞ւ եք Ձեր թեկնածությունը:

– Դա ես չեմ որոշելու, այլ, նախևառաջ, մեր կուսակցության համագումարը: Եվ հետո, դա չենք համարում թիվ մեկ խնդիրը, այլ քաղաքական ուժերի համախմբումը հակաճգնաժամային ծրագրի շուրջ, որից հետո արդեն նրանք, բնականաբար, հանդես կգան իրենց առաջարկություններով:

– Ալբերտ Բազեյանն արդեն հայտարարել է, որ եռյակը թեկնածու չունի: Ասել է թե՝ ի դեմս Ձեզ, չեն տեսնում նախագահի այն թեկնածուին, որին կպաշտպանեն նախագահական ընտրություններում: Ձեր մեկնաբանությունը:

– Այդ հարցը նրան պետք է ուղղեք: Ես տողատակեր չեմ տեսնում այստեղ: Համոզված եմ, որ «Հանրապետություն» կուսակցությունը լրջագույնս է մոտենում այս հարցին և կկայացնի իր որոշումը, որն արժանի կլինի ամենալուրջ քննարկման:

– Հրապարակավ կարևորում եք արդար ընտրությունների անցկացումը: Ավելին, դեռևս 2000 թվականին հայտարարել եք. «Հոկտեմբերի 27-ի արմատները պետք է փնտրել նաև 1995 թ. ԱԺ անարդար ընտրությունների և նրա կեղծված արդյունքների մեջ: Ճգնաժամը խորացավ 1996 թ., երբ, փաստորեն, տեղի ունեցավ առաջին հեղաշրջումը՝ զինյալ մարդկանց ներգրավմամբ», բայց այսօր պատրաստվում եք ընտրությունների մասնակցել նշյալ կեղծիքներին մասնակցած երկրապահից ձևավորված կուսակցության հետ: Այդպիսով չե՞ք դավաճանում Ձեր սկզբունքներին:

– 1995 թվականից անցել է արդեն 7 տարի: Քաղաքական զարգացումներն այնպիսին են, որ այս ժամանակահատվածում քաղաքական ուժերը, կուսակցությունները կարող են հիմնովին վերանայել նախկինում որդեգրած իրենց իսկ քաղաքականությունը: Մասնավորապես, նույն երկրապահական թևը, ի պատիվ իրենց, հրապարակավ ապաշխարանք խնդրեց ժողովրդից՝ խոստովանելով, որ, այո՛, կեղծել են նախագահական ընտրությունները, այո՛, տասնյակ հազարավոր քվեաթերթիկներ են գցել քվեատուփի մեջ: Նրանք մեղանչել են ժողովրդի առաջ, ընդունել սեփական սխալները և, համոզված եմ, որ դա արել են խղճի մտոք: Բոլոր հիմքերն ունեմ հավատալու և հավատում եմ, որ նրանք հնարավոր ամեն ինչ կանեն, որպեսզի առաջիկա ընտրություններն անցնեն ազնիվ, արդար, ազատ ու թափանցիկ:

– Ժամանակին ասել եք, որ «...երկրի ներսում արդեն ձևավորվել է, այսպես կոչված, հինգերորդ շարասյունը, որտեղ ընդգրկված են հիշածին զանազան կուսակցություններ, և որոնք ստեղծված իրավիճակը բարենպաստ հող են համարում ռևանշի, իշխանություն հետ վերցնելու ճանապարհին»: Այսօր այդ հիշածին կուսակցությունները սկսել են

միավորվել: Ձեր գնահատականը:

– Եթե համեմատելու լինենք ներկայիս իշխանությունների հետ՝ ՀՀԾ-ն և հիշածին կուսակցությունները հրեշտակի կերպարանք են ստանում: Անգամ ՀՀԾ-ի իշխանության տարիներին չկային օրը ցերեկով սպանություններ և հետո՝ արդարացումներ, չկային այնպիսի մաֆիոզ կլաններ, որոնք տնտեսության ամբողջ լծակներն իրենց ձեռքն էին վերցրել, և տնտեսությունը շնչահեղձ էր լինում: Ինչ վերաբերում է աջ ուժերի համախմբմանը, ապա դա նրանց կամքն ու իրավունքն է:

– Նույն ՀՀԾ-ի իշխանության օրոք օրը ցերեկով տեղի են ունեցել շատ ավելի զարհուրելի և աղմկահարույց սպանություններ, որոնք կազմակերպելու մեջ մեղադրվող ՀՀԾ-ի նախկին նախագահը գտնվում է փախուստի մեջ, ու անգամ փորձում առաջադրվել որպես պատգամավորության թեկնածու:

– Քանիցս ասել եմ և հիմա էլ կրկնում եմ՝ Վանո Սիրադեղյանը փախուստի մեջ չէ, Վանո Սիրադեղյանին ներկայիս իշխանությունները, մասնավորապես՝ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, առոք-փառոք ճանապարհ են գցել (հիշեցման կարգով նշենք, որ դա Արամ Սարգսյանի վարչապետության օրոք էր. – *U. S.*): Ի՞նչ փախուստի մասին կարող է խոսք լինել, երբ փախուստը կանխելուն կոչված մարմինների ղեկավարներն երկրորդ գեներալական ուսադիրներն ստացան:

– Հնարավոր է, որ նաև այդ աջ ուժերի դաշինքի հե՞տ համագործակցեք:

– Եթե աջ ուժերի դաշինքն այսօր հետամուտ է եղել, որ Պողոս Պողոսյանի սպանությունը, կազմակերպիչներն ու իրագործողներն ի հայտ գան և օրենքի խստագույն տառին համապատասխան պատժվեն, ապա, այո՛, կհամագործակցենք նրանց հետ: Եթե նրանք այսօր ուղղակիորեն մատնանշում են այն հանցավոր քաղաքականությունը, որը վարում է նախագահական կլանը, բնականաբար, այդ կլանին մերկացնելու գործում կհամագործակցենք:

– Եվ նրանց այլևս ռևանշիստական չե՞ք համարում:

– Եթե չարիքի դեմ պայքարում են, դա արդեն արդարություն հաստատելու համար է: Ինչ վերաբերում է նրանց իշխանության գալուն, ապա, իհարկե, կխոչընդոտենք: Թվարկածս հարցերում կհամագործակցենք, բայց նրանց իշխանության գալուն հնարավորինս քաղաքակիրթ ճանապարհով կխոչընդոտենք:

Հարցազրույցը՝
Սոնա Տրուզյանի

«Երկիր», 22 – 28.III.2002:

Армении уготовлена роль объединяющего государства

Россия сосредотачивается

– *В регионе происходят глубокие трансформационные процессы, которые кое-кто уже поспешил охарактеризовать не иначе, как "Россия покидает регион, но пытается при этом сохранить свое лицо". Так ли это, на ваш взгляд?*

– Процессы развиваются, а посему любой из вариантов развития ситуации вправе претендовать на серьезное к себе отношение. Есть предпосылки для любого из сценариев, но я бы охарактеризовал положение дел так, как его представил канцлер Горчаков после известного поражения в ходе русско-турецкой войны: "Россия закрывается, Россия сосредотачивается". Я считаю, что Россия в данный момент сосредотачивается, и у меня на то есть серьезные основания.

Да, мир после 11 сентября изменился. Россия мгновенно отреагировала на теракты в Нью-Йорке демонстрацией солидарности с США в борьбе с мировым терроризмом. Страны антитеррористической коалиции нанесли сокрушительный удар по талибам. Россия в лице стран-союзниц центральноазиатского региона (Киргизии, Узбекистана, Таджикистана) предоставила соответствующие аэродромы для реализации антиталибской операции. Одновременно руководители РФ неоднократно высказывали уверенность в наличии связи между чеченскими боевиками и организацией "Аль-Каида". Шеварднадзе, упорно заявлявший, что присутствие российской миротворческой миссии в Абхазии препятствует установлению прочного мира в регионе, воспользовавшись сложившимся положением, пригласил американских инструкторов для помощи в осуществлении антитеррористической операции в Панкисском ущелье, засим последовало оснащение парка вооружений Грузии вертолетами США и т. д. Разорвавшаяся было по этому поводу в отдельных политических кругах РФ бомба натолкнулась на взвешенную хладнокровную оценку президента Путина. Суть ее, как вы помните, сводилась к тому, что американцы могут проводить антитерро-

ристическую операцию на территории Грузии, равно как и на территории других стран. Грузинское руководство, по свидетельству ряда наблюдателей, постарается перебросить очаг напряжения из Панкисского в Кодорское ущелье на территории Абхазии. Преследуя террористов, военные подразделения НАТО последуют в Кодорское ущелье. А в Гудаутах расквартирован, как известно, российский миротворческий контингент. В итоге может возникнуть ситуация, отдаленно напоминающая ту, что сложилась в Косово, когда натовские части находились там, а русские, осуществив блестящую операцию, заблокировали приштинский аэропорт. Ситуация эта с небольшими вариациями может повториться в Абхазии, что чревато существенными последствиями регионального масштаба.

В анклаве

— *Чреваты ли эти процессы большой войной, ведь большинство людей интересует именно этот вопрос?*

— В июне начнется строительство нефтепровода Баку-Тбилиси-Джейхан. Неделю назад Шеварднадзе подписал соглашение о прокладке газопровода Баку-Тбилиси-Эрзерум. Суммарная стоимость обоих проектов от 5 до 5,5 млрд. долларов. Подобные крупные инвестиции, в которых задействованы солидные американо-британские транснациональные компании (к проекту подключился и российский "ЛУКойл"), не делаются без обеспечения безопасности прокладки и дальнейшей эксплуатации газо- и нефтепроводов. Мы столкнемся с ситуацией, когда те же США и Англия будут вправе вплотную заняться обеспечением этой безопасности.

— *Каким образом?*

— Разумеется, контингенты НАТО из американских и британских солдат не будут расквартированы в Азербайджане и Грузии. Эта миссия в силу географического расположения будет возложена на Турцию. Именно турецкие подразделения с согласия Азербайджана и Грузии будут контролировать безопасность прокладки газо- и нефтекоммуникаций. Специфика вооруженного контингента, с точки зрения международных правовых норм, оспорена быть не может. Армения окажется в положении, когда ее северная, восточная и отчасти южная границы будут фактически окружены турецкими военными подразделениями. Останется 48-километровый участок границы с Ираном, добрососедские отношения с которым призваны скрепить газопровод Иран-Армения. В связи с этим негативная реакция США, к сожалению, налицо.

— *Каков же выход из ситуации?*

— Открытость политики. Если страны, заинтересованные в безопасности нефтяных и газовых маршрутов, на самом деле увязывают эту безопасность со стабильностью всего региона, то первым шагом на этом пути должно стать создание крупных межрегиональных экономических проектов, в успешном завершении которых будут одинаково заинтересованы как Грузия и Азербайджан, так и Армения. Только в этом случае можно будет говорить о том, что посредством экономики создается основа для углубленного политического и военного сотрудничества государств региона.

Положение Армении сегодня крайне невыгодное — ни один из вышеуказанных проектов к ней прямого касательства не имеет. Предварительные договоренности о строительстве автомагистрали в рамках Великого шелкового пути тоже обходят нас стороной. При неблагоприятном развитии ситуации и прочие коммуникационные автомагистрали Север-Юг ее обогнут. В итоге страна окажется в положении анклава. И в этом положении особую актуальность приобретает строительство авто- и железнодорожной магистрали, которая соединит так называемый материковый Азербайджан с Ордубадским районом Нахичевана через Мегри. Тут впору вспомнить об отношении к этому проекту иранской стороны, которую никак не устроит присутствие у ее границ военных сил НАТО, охраняющих эту дорогу посредством турецких военных подразделений. Ни для кого уже не секрет крепнущее турецко-израильское военно-стратегическое сотрудничество и чреватые конфликтом отношения Ирана и Израиля. С подачи последнего, напомню, Иран признается страной, финансирующей исламские террористические организации.

Каким мы видим регион в 2015-м?

— *Таким образом, налицо тупиковая ситуация без проблеска надежды. Что же делать?*

— Вырабатывать новую концепцию межрегионального сотрудничества. Нужно сформировать общие конечные цели, одинаково понятные гражданам Азербайджана, Грузии, Армении, России, Ирана и Турции. Нужен ответ на вопрос: каким мы видим регион в 2015 году в контексте меняющегося мира? Нужны конкретные цели, созвучные контексту мирового развития. В основе концепции должен присутствовать тезис о том, что не может в регионе существовать отдельно взятого процветающего Азербайд-

жана при, к примеру, отсталой Армении или Грузии.

— *Хотелось бы все же вернуться к роли России в этой непростой для региона ситуации.*

— В свое время руководитель Северной Осетии Дзасохов озвучил формулу "4,2 и 2". В ее основе следующая идея: Россия, Грузия, Азербайджан и Армения, совместно и на основе договоренностей, должны решать вопросы мира и развития региона. Два других сопредельных государства — Турция и Иран — могут принять участие в межрегиональном сотрудничестве как приграничные, и вторая пара — это США и Евросоюз. На мой взгляд, самая реальная на сегодня именно эта схема. Осознание экономической цели позволит преодолеть, к примеру, сепаратистские настроения в Грузии, да и в Азербайджане тоже. Если в регионе удастся установить и упрочить связи наподобие тех, что существуют между странами Евросоюза, то это позволит Грузии надолго забыть, что такое абхазский или аджарский сепаратизм, Азербайджан забудет проблему лезгин и лаков. Эта схема жизнеспособна.

Я надеюсь, что Армении уготовлена особая роль — роль объединяющего государства в регионе. Вообще, в ресурсном регионе не может быть разъединительных линий. Мир изменился, РФ и США неверно рассматривать как противоборствующие лагеря, на качественно новый уровень возводятся отношения НАТО-Россия, в зоне жизненно важных интересов РФ, коим является наш регион, эти страны не пойдут на открытое противостояние, а напротив, попытаются именно здесь создать плацдарм для дальнейшего сотрудничества и сближения. Я не случайно упомянул об участии российского "ЛУКойл" в проекте нефтепровода Баку-Тбилиси-Джейхан и необходимости объединяющего начала в контексте развития крупных региональных проектов. Надеюсь, что в итоге развития нынешних реалий это начало возобладает.

Беседу вела
Марина Мкртчян

"Голос Армении", 2.IV.2002.

Քաղաքական պրիզմա

Հայաստանի մակրոտնտեսական սպեկտրը և 2001-ի ՀՆԱ-ի 9,6% աճի պղպջակները կամ պաթոլոգիան: Բանկային գործառույթների դիստրոֆիա, տնտեսության 15% մոնետիզացիա և կառավարվող էմիսիա (դրամի թողարկում): Ո՞րն է ելքը: Տնտեսությունում և տնտեսավարման համակարգում առկա բարդույթների, դրանց հաղթահարման, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումների դինամիկայի ռազմավարական խնդրի շուրջ ներկայացնենք քաղաքական հարթակի գործիչներից՝ «ԱՄ» նախագահ Արտաշես Գեղամյանի տեսակետը:

– Ձեր հրավիրած վերջին ասուլիսներում, հրապարակային ելույթներում, համոզիչ նկարագրում եք առկա սոցիալ-տնտեսական ողորտի անմխիթար վիճակը: Առևտրային բացասական հաշվեկշիռն ավելի քան 500 մլն դոլար է. կարծես հստակ է նաև փրկարար թելի ծայրը՝ ներքին սպառողական ողորտը: Ինչպե՞ս եք տեսնում իրավիճակի հարթման օպերատիվ ընթացքը:

– Հայաստանի էկոնոմիկան հիվանդ է: Հիվանդին բուժելու համար նախ պետք է ախտորոշել, վերհանել ախտահարման պատճառները, հետո նոր՝ բուժիչ բալասան առաջարկել:

2001 թ. համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) հավելաճը, իբրև թե, կազմել է 9,6%: Դումարային կտրվածքով դա անում է մոտ 144,6 մլրդ դրամ, որից, մասնավորապես, 69,73 մլրդ բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: Հարց է առաջանում, այդ ի՞նչ նոր տեխնոլոգիաներ կիրառվեցին, արդյո՞ք պարարտացվեցի՞ն, թե՞ մելիորացվեցին հողերը: Գյուղոլորտում արձանագրված հավելաճը պարզագույն ֆիկցիա է, քանզի 2000 թվականը գյուղատնտեսության համար համարվեց աղետալի, երաշտի տարի: Բնագավառում լուրջ անկում ունեցանք: Բնական է, անկման ֆոնի վրա 2001-ին արձանագրվեց 11% աճ: 2001-ի ընթացքում ՀՀ պետական պարտքն աճել է մոտ 41 մլրդ դրամով: Այսպիսի ցուցանիշային հարթակի պարագայում խոսել տնտեսության դինամիկ զարգացման առկայության մասին, պարզապես անհեթեթ է, ՀՆԱ-ի 9,6% աճը՝ սովորական փուչիկ:

Մակրոտնտեսական սպեկտրը յուրաքանչյուր տնտեսության հայելին է. իմ ձեռքին է Ազգային վիճակագրական ծառայության՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին» պաշտոնական տեղեկատուն: Մեջբերենք մի քանի բազային նիշեր. ընդհանուր եկամուտների գծով 2001-ին նախատեսված ցուցանիշը կատարվել է 93,9%-ով: Ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) գծով կատարողականը 96,37% է, շահութահարկի ցուցանիշը՝ 73,3%, ակցիզայինը՝ 89,9%: Նույն ժամանակահատվածում

պաշտոնական տրանսֆերտները կազմել են նախատեսվածի 91,4%-ը: Հարկային պարտքերը բյուջեին, տույժերն ու տուգանքները կազմում են մոտ 130 մլրդ դրամ: Միայն ապառքները գերազանցում են 40 մլրդ դրամը: Այս ամենն ընդամենը 200 մլրդ դրամ բյուջետային մուտքի պայմաններում. սա ծայրաստիճան անառողջ իրավիճակ է:

Վերոնշյալ «մուտքայինի» պարագայում, բնական է, լրջագույն խնդիրներ ունեցանք բյուջեի կատարողականում: Կրթության և գիտության, սոցիալական ապահովման, մշակույթի և առողջապահության ոլորտներից յուրաքանչյուրում բյուջեով նախատեսված ծախսերի թերակատարումը հասնում է մինչև 10%-ի: Բնակարանային, կոմունալ տնտեսության բնագավառում կատարողականը 82,3% է, իսկ վառելիքաէներգետիկ համակարգում բոլորովին անմխիթար՝ 51,1%: Ի դեպ, ամեն ինչ արվում է ռազմավարական նշանակության սույն ոլորտը սնանկ ներկայացնելու, այնուհետև աճուրդի հանելու ու շան մսի գնով օտարելու համար:

Պետավարման մեր գիտակները, առնվազն, չեն տիրապետում մակրոտնտեսության ցուցանիշների գնահատման տարրական հիմունքներին: Հայաստանի տնտեսությունը լուրջ հիվանդ է և այդ հիվանդությունը, բնականաբար, պետք է բուժել:

– Ինչպե՞ս...

– Փորձենք պարզել, առարկայացած սոցիալ-տնտեսական ճահճից ելքային ուղիները: 2001 թ. առևտրային շրջանառության հաշվեկշռային դեֆիցիտը կազմում է 531,5 մլն դոլար: Այն գրեթե 50%-ով գերազանցում է բյուջեի եկամտային մասը՝ չափազանց վտանգավոր փաստարկ: Այն դեպքում, երբ ներկրվող ապրանքատեսակների գերակշիռ հատվածի արտադրությունը կարելի էր կազմակերպել Հայաստանում: Այս պայմաններում շատ կարևոր է պետության կարգավորիչ դերի բարձրացումը: Այն արտադրական ոլորտները, որոնք ի զորու են ներկայանալ, ադապտացվել մրցակցային դաշտին, սկզբնապես պետության աջակցությունը պետք է ստանան: Աջակցությունը համալիր միջոցառում է, մասնակի թվարկումը՝ անիմաստ: Անշուշտ, դետալներից են՝ մաքսային նպատակաուղղված քաղաքականությունը, որը տարբերակված հարկադրույքաչափերի սահմանումով պետք է պաշտպանի տեղական արտադրողին ու արտադրությանը նույնանուն ապրանքների անվերահսկելի արտաքին հոսքից: Կարևոր է իրականացնել մտածված ինդեքսացիոն քաղաքականություն՝ նպատակ ունենալով հստակեցնել մրցունակ ապրանքների ցանկը, որոնք ժամանակի ընթացքում որակական հատկանիշներով կգերազանցեն ներկրվողներին և ունակ կլինեն գոյակցել առանց մաքսային պաշտպանական պատնեշի: Իսկ խելամիտ հարկային քաղաքականության անհրաժեշտության մասին արդեն խոսում են ամենքը և ամեն քայլափոխի: Կուզեի ընդգծել ֆինանսավարկային համակարգի առաջնային ֆունկցիայի՝ ներդրումային բացը և սույնում բանկային բլոկի աղճատ ներկայացումը: Փոխանակ աջակցելու, նպաստելու ներդրումային մթնոլորտի բարելավմանը, հատկապես նյութական արտադրության բնագավառում, բանկային ակտիվներն առավելապես շրջանառում են ֆինանսական շուկայի սպեկուլյատիվ ոլորտում: Առևտրային բանկերը, աշխատելով բացառապես 20-22% եկամտաբերությամբ ՊԿՊ-ի սահմանափակ շուկայում, տարեկան կտրվածքով

ստանում են միջինը 8 մլրդ դրամ մաքուր եկամուտ: Մինչդեռ ցանկացած տնտեսությունում ներդրումներ իրականացնելիս, որպես կանոն, կարելի է ընկալել շուրջ 10%-ի չափով հաշվարկելի շահույթ: Այստեղ չկշռադատված, անհեռատես դրամավարկային քաղաքականություն է վարվում (գուցե, կշռադատված՝ հանցավոր դիտավորություն. – *Վ.Վ.*): Ֆինանսական հատվածի կայունությունը մեծապես պայմանավորվում է տնտեսության դինամիկ զարգացմամբ, նույնը թե՝ միավոր դրամի գնողունակությամբ: Դա այն է, երբ ֆինանսներն ունեն ապրանքային ծածկույթ: Ներդրումային հոսքը պետք է ուղղվի արտադրական ոլորտ, նոր արտադրությունների և աշխատատեղերի բացմանը: Ներդրումային ճիշտ քաղաքականության դեպքում ինտեգրալ՝ գումարային կտրվածքում (արտադրությունների հիմնում, ընդլայնում, աշխատավարձի ֆոնդի մեծացում...) կունենանք համախառն ներքին պահանջարկի աճ, որն էլ, բնականաբար, կբերի համախառն ներքին առաջարկի աճին: Կգործի բազմապատկչի գործոնը, որի արդյունքում կապահովվի սոցիալ-տնտեսական զարգացման դինամիկ գործընթաց:

Հարկ է համակարգված մակրոտնտեսական քաղաքականություն իրականացնել: Բացակայում է խելամիտ ռազմավարությունը, չկա առանց այն էլ սահմանափակ՝ մարդկային, հումքային և հողային ռեսուրսների օգտագործման գիտական, թե տրամաբանական հիմնավորում: Մինչ օրս որոշված չեն, թե որոնք են արդյունաբերության զարգացման գերակայությունները, ինչպիսի ճյուղերում ներդրումային գրագետ քաղաքականությունը կարճ ժամկետում կապահովի առավելագույն արդյունք: Եվ սա այն պարագայում, երբ որոշ արտադրատեսակների գծով հնարավոր կլիներ ոչ միայն ապահովել համապատասխան ձեռնարկությունների գործարկումը, այլև Հայաստանն աշխատանքի համաշխարհային բաժանման շուկայում կունենար իր որոշակի քվոտան:

– Ստացվում է, մեզանում սոցիալ-տնտեսական խեղումների պատճառը ոչ այնքան օբյեկտիվ է (շրջափակում, ղարաբաղյան խնդիր, ներքաղաքական «փուխր» ու անկայուն իրավիճակ), որքան սուբյեկտիվ՝ տնտեսավարման ռազմավարության բացակայություն, գերակայող, մրցունակ տնտեսական ոլորտների՝ դիլետանտային անտեղյակություն, կազմակերպչական անկարողություն և այլն: Առաջնային բարեփոխումների փաթեթում գերակա դիտեցիք ներդրումային գործոնը. արդյո՞ք բանկային հավաքական ակտիվները բավարար են համախառն վերարտադրության տնտեսական բացը լրացնելու համար:

– Ցավոք, համախառն բանկային ներուժը լավագույն դեպքում համազոր է եվրոպական փոքր բանկի հզորությանը: Բնական է, խոսել շոշափելի ներքին ֆինանսական ռեսուրսների առկայության մասին, չի կարելի, բայց արդարացնել իրականացվող ոչ հեռանկարային դրամավարկային քաղաքականությունը՝ նույնպես սխալ է: Իրավական առումով Հայաստանի բանկային համակարգը կարելի է համարել ամենաազատականը ԱՊՀ երկրների շարքում, իսկ համակարգում գործառութային բլոկի հիմնախնդիրների մասին արդեն նշեցինք (վերևում): Այսօրվա դրությամբ Հայաստանի տնտեսության մոնետիզացիայի ցուցանիշն ընդամենը 15% է: Մոնետիզացիան՝ դրամական զանգվածի և ՀՆԱ-ի մեծության հարաբերակցությունն է: Արևելյան Եվրոպայի երկրներում այդ ցուցանիշը գերազանցում է 50%-ը, զարգացած կապիտալիստական

երկրներում՝ 70%-ը: Ունենալով 15% մոնետիզացիայի մակարդակ, շնչահեղձ ենք անում տնտեսությունը, զրկվում ենք ներդրումային ակտիվ քաղաքականություն իրականացնելու, ընդլայնված վերարտադրություն ապահովելու հնարավորությունից: Այս պայմաններում կարևոր է նաև պետության կողմից մտածված էմիսիոն քաղաքականության իրականացումը: Նման հայեցակերպի հակառակորդները կարող են պնդել և պնդում են, թե դրամական ծավալի մեծացումը կբերի սղաճի: Այո, անմտածված դրամական էմիսիան կբերի սղաճի՝ իր անցանկալի հետևանքներով: Բայց խոսքը ոչ թե պերմանենտ (բարձիթողի), այլ ծրագրված էմիսիայի մասին է, երբ ֆինանսական հոսքն ուղղվում է որևէ փակ ցիկլում հասցեագրային ներդրմանը: Եթե արդյունքում ՀՆԱ-ի հավելյալ աճի տեմպերը գերազանցում են էմիսիայի աճի տեմպերին, ապա սղաճի գործոնը վտանգավոր չէ:

– Պրն Գեղամյան, հատկապես վերջին ժամանակներս Հայաստանի քաղաքացին առօրեական դարձած սոցիալականի «արհեստավարժ» քննարկումներից զատ, ակամա, փորձում է «մասնագիտանալ» նաև տարածաշրջանային անվտանգության գնահատման խնդիրներում: Հարցս համեմեմ ենթատեքստով. ժամանակին կամ, որ ավելի ճիշտ է՝ մերթընդմերթ, Հայաստանի կողմից նպաստավոր էին դիտվում «Հայաստան-Իրան-Արաբական երկրներ», «Ռուսաստան-Հունաստան-Հայաստան-Իրան», «3+2+3» (Վրաստան, Հայաստան, Ադրբեջան+Թուրքիա, Իրան+Ռուսաստան, ԱՄՆ, Եվրամիություն) ռազմաքաղաքական սխեմաները, իսկ 2000 թ. Վրաստանի խորհրդարանում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ծրագրային ելույթի առանցքում հնչեցվեց, թերևս, միակ իրատեսականը՝ անվտանգության խնդիրների դիտարկումը՝ տարածաշրջանային երկրների տնտեսական սերտ համագործակցության շրջանակում: Բայց այս ամենին այդպես էլ շարժաբեր չգտնվեց, իսկ այսօր առավել քան իրական են «Վրաստան-Թուրքիա-Ադրբեջան» ռազմաքաղաքական դաշինքի ճնավորման եզրերը, ականատեսն ենք նաև Պանկիսիում ընթացող իրադարձություններին: Ռազմավարական դիտանկյունից մեկնաբանեք, խնդրեմ, ստեղծված բավական խրթին իրավիճակը:

– Դեռ ամիսներ առաջ, Հյուսիսային Օսեթիայի նախագահ Ալեքսանդր Ջասոխովը՝ գնահատելով ընթացումների դինամիկան, առաջարկեց տեսակետ, ըստ որի՝ տարածաշրջանի զարգացման հեռանկարները նախ և առաջ պետք է որոշարկեն հենց տվյալ համակարգի (տարածքի) անդամ 4 երկրները՝ Ռուսաստանը, Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը: Գործընթացին դիֆերենցիալ կարգում կարող են մասնակից լինել Թուրքիան և Իրանը, ինչպես նաև Եվրամիությունն ու ԱՄՆ-ը: Սխեման, ըստ էության, արտահայտում է տարածաշրջանում Ռուսաստանի ռազմավարական դոկտրինը: Հայեցակերպի իրագործումը կխթաներ ընդհանուր և փոխադարձ հետաքրքրության տնտեսական ծրագրերի իրականացմանը, այդպիսով, նպաստելով նաև տարածաշրջանային հակամարտ կնճիռների մեղմմանն ու հարթմանը: Ցավոք, գործընթացները շատ դանդաղ են ընթանում, թեպետ, առկա են համագործակցության որոշ շարժեր: Նշենք «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթամուղի և «Բաքու-Թբիլիսի-Էրզրում» գազամուղի ծրագրված շինարարությանը Ռուսաստանի և Վրաստանի անմիջական մասնակցությունը, հայ և ռուս-իրանական համապարփակ համագործակցության ընդլայնման միտումը: Նկատենք,

Ռուսաստանը ֆինանսական զգալի ներարկումից զատ, նաև ակտիվորեն մասնակցում է Բուշերի (Իրան) ատոմակայանի կառուցմանը: Այլ կերպ՝ առկա են համագործակցության ծիլերը: Մտածված քաղաքականություն իրականացնելու դեպքում այդ զարգացումները կարող են որակական նոր մակարդակի բարձրացնել տարածաշրջանի երկրների տնտեսական ինտեգրումը, ինչը կապահովի վստահության և խաղաղության մթնոլորտի բարելավումը:

Անդրադառնալով Պանկիսի կիրճում ծավալվող իրադարձություններին, նշեմ, որ այն մտահոգիչ է և վտանգում է տարածաշրջանի բնականոն զարգացումները: Մտահոգիչ է, քանզի ահաբեկիչներին հետապնդելիս հավաքական (կոալիցիոն) զինուժերը կարող են մտնել Կոդորի կիրճ, ի դեպ, Աբխազիայի հայաշատ բնակավայրերից մեկը, ուր տեղակայված են Ռուսաստանի խաղաղարար ուժերը: Պատկերավոր՝ մեկ կիրճի համար երկու խաղաղարար զորքերի առկայությունը մեծ շռայլություն է, և հուսով եմ, որ գերտերական զարգացումները միտում ունեն համախմբման և հնարավորություն կլինի խուսափել տարածաշրջանային լարվածության մի նոր սրումից ու այլևայլ բաժանարար գոտիների նորանոր ձևումներից:

– Փորձենք բանավիճել. վերջին տարիներին և ամիսներին ականատեսն ենք Բալկաններում գերխմբավորումների միջև բաժանարար գոտիների ստեղծմանը, Կովկասում և Կենտրոնական Ասիայում բոլորովին այլ՝ ապակոնսոլիդացիոն բնույթի փաստումների: Բացառո՞ւմ եք, որ Վրաստանում Նահանգների կողմից կոնկրետ ծրագիր է իրականացվում, որը որոշակի՝ Եվրասիական ռազմավարության մաս է կազմում: Շղթայի օղակներից էր Բալկանները, Պանկիսին նույնպես գլոբալ ծրագրի իրականացման միջոց է:

– Այստեղ չափազանց գայթակղիչ է, պատկերավոր՝ լինել ավելի կաթոլիկ, քան Հռոմի պապն է: Մի կողմից՝ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը բավական սթափ արձագանքեց աբխազական զարգացումներին և Վրաստանին հորդորեց միայն ԱՊՀ և ռազմավարական գործընկերներին ժամանակին չիրազեկելու համար: Ամենաբարձր մակարդակով Միացյալ Նահանգները նույնպես հայտարարում են, թե միայն Վրաստանին՝ ահաբեկչության դեմ պայքարում աջակցելու խնդիր ունեն: Մոտավորապես նույնն է ասում նաև Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեն: Մյուս կողմից՝ առկա է փաստը, որ օրեցօր ավելի է ընդայնվում Ռուսաստան-ՆԱՏՕ համագործակցությունը: Սեպտեմբերի 11-ից հետո աշխարհում շատ բան է փոխվել, և Ռուսաստանի պոզիտիվ կշիռը հակաահաբեկչական կոալիցիայում պարզորոշ է: Անգամ ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերտսոնն է հրապարակավ նշում, որ թեև Դաշինքին Ռուսաստանի լիարժեք անդամության հնարավորության մասին դեռևս վաղ է խոսել, բայց փոխադարձ համագործակցության եզրերը շատ են ընդլայնվել և խորացել: Այն ավելին է, քան «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրի կոնստրուկտիվ շրջանակը: Կարելի է այլևայլ եզրահանգումներ անել, բայց չեմ կարծում, թե Վրաստանի պարագայում Միացյալ Նահանգները ռազմավարական դաշնակցի (Ռուսաստանի) հետ հարաբերություններում կգնան բեկումնային տարածայնությունների: Չնայած, համոզված եմ, որ այլ զարգացումների հնարավորությունները ևս հաշվի են առնվում թե՛ կոնֆլիկտին

մասնակից, թե՛ մյուս՝ շահագրգիռ պետությունների կողմից:

– Այդուհանդերձ, վերջին շրջանում փաստերը բոլորովին այլ դասավորություն ունեն. ԱՊՀ մի հատվածը գործում է Շանհայի վեցյակի՝ շատ ավելի գործուն կառույցում, Վրաստանն ու Ադրբեջանը դուրս են եկել Համագործակցության կոլեկտիվ անվտանգության բլոկից: Դարձյալ նշենք բալկանյան զարգացումների ծրագրային բնույթն ու ԱՄՆ հակահարթիռային պաշտպանության ազգային համակարգի ձևավորման պրովոկացիոն ձեռնարկը, որը, բնականաբար, չի կարող շրջանցվել Ռուսաստանի կողմից, որին, ըստ էության, և սպառազինության մրցավազքի մեջ ներքաշելու նպատակ է հետապնդվում...

– Ի տարբերություն Հայաստանի, Ռուսաստանն առաջնորդվում է ազգային անվտանգության հայեցակարգով: Վերջին տարբերակը հաստատվել է 2000 թ. հունվարին: Ռուսաստանն ունի ռազմաքաղաքական և արտաքին քաղաքականության դոկտրին: Հայեցակերպի առանցքում դրված է Ռուսաստանի անվտանգ և կայուն զարգացման հեռանկարը: Արտաքին քաղաքականության բոլոր դրսևորումները բխում են տվյալ դոկտրինի տիրույթից: Կարող ենք դատողություն անել կոնկրետ դրսևորման շուրջ, բայց չենք կարող փաստել, թե այն (դատողությունը) որքանով է համահունչ ծրագրված դոկտրինին: Եզրահանգումը կարող է և մակերեսային լինել, քանզի լիարժեք չենք տիրապետում ինֆորմացիոն բազային, ըստ որի Ռուսաստանի քաղաքական ղեկավարությունը որոշում և արձագանքում է այս կամ այն զարգացումին: Մի բանում կարելի է կանխավ վստահ լինել. Ռուսաստանը հստակ գիտակցում է հզոր, բնական ռեսուրսների հարուստ և անսպառ ներուժի տեր Եվրասիական տերության իր առաքելությունը:

– Եվ վերջինը. կարո՞ղ է արդյոք, աբխազական տարբերակով, ճեղքվածք պարունակել նաև աշխարհաքաղաքական չափումներների առավել կենսական դարաբաղյան հատվածը:

– Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումն այն շրջանակներում է, որում հակաահաբեկչական բլոկի գերտերությունները տեսնում են տարածաշրջանի կայունությունը: Միջազգային նորմերի և Խորհրդային Միությունում գործող օրենքների շրջանակում Լեռնային Ղարաբաղը դարձել է անկախ: Ինքնորոշման իրավունքի արտահայտումը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի տասը հիմնարար օրենքներից է, և վերջին տարիների գործառույթներն ակնառու փաստում են, որ ինչպես գործնական (դե ֆակտո), այնպես էլ իրավական (դե յուրե) պլանում Ղարաբաղը ներկայանում է միջազգային իրավունքի, թեև դեռևս չճանաչված, բայց լիարժեք սուբյեկտ: Ղարաբաղի համար այլ՝ իմպերատիվ կարգավիճակ չի կարող լինել, և այս փաստարկը միանշանակ համապատասխանում է հակաահաբեկչական պայքարի տրամաբանությանը, տարածաշրջանի ու գլոբալ զարգացումների դինամիկային:

Հարցազրույցը՝
Վարդան Վարդանյանի

«Ժամանակի ուղեկից», 13.IV.2002:

Նման լուրեր տարածողները, ամենայն հավանականությամբ, Սերժ Սարգսյանին հոգեկան հիվանդի տեղ են դնում

– *Կարծում եմ, չեք ժխտի, որ տևական ժամանակահատված է, ինչ ապրում ենք խորհրդային դասագրքերից դեռևս ծանոթ հեղափոխական իրավիճակում. «վերևները» չեն կարողանում ղեկավարել, «ներքևներն» էլ չեն ուզում այդ ձևով ղեկավարվել: Փորձենք ճշտել, թե որոնք են պայթյունավտանգ այս իրադրությունը ծնող օբյեկտիվ պատճառները:*

– Համամիտ եմ, բնակչության գերակշիռ մասի և ներկա վարչակազմի հարաբերությունները լարվում, շիկանում են ժամ առ ժամ: Օբյեկտիվ պատճառներն ակնհայտ են. օրըստօրե վատթարանում է սոցիալ-տնտեսականը, դրան գումարվում է և այն գիտակցումը, որ ներկա վարչակարգի հետ այլևս հույս կապել չի կարելի, որովհետև չենք ստանում արդիական և ոչ մի հարցի համոզիչ պատասխանը: Իսկ իշխանամետ հեռուստաալիքներն ու մամուլը միալար թմբկահարում են թվացյալ հաջողությունների մասին:

– *Տեղին է հիշել, որ Դուք օրեր առաջ «Ա1+»-ի եթերից այդ թմբկահարումներին հակադրեցիք որոշակի թվեր ու փաստեր, որոնք արտացոլում էին բոլորիս այնքան ծանոթ երկրի իրական դիմագիծը:*

– Նման թմբկահարումները կարելի էր հանդուրժել, եթե մարդկանց սոցիալականը գոնե տանելի լիներ, ավա՜ղ... Խոսեմ փաստերով. մեզ մոտ մշտական գրանցման է հավակնում այնպիսի վտանգավոր դրսևորում, ինչպիսին է շնչառական օրգանների տուբերկուլյոզի շեշտակի աճը: 2000-ի համեմատությամբ 2001-ին 14 տարեկան երեխաների շրջանում այդ թիվն աճել է 46,2%-ով: Սա թերսնման հետևանք է: Ասեմ ավելին՝ հացն ու կարտոֆիլը կազմում են սննդակարգի 53,7%-ը: Սրանք զարհուրելի թվեր են: Մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը, եթե հավասարաչափ բաժանվի բնակչության մեջ, ապա մեկ մարդու բաժինը կկազմի 23 հազար դրամ: Սինչդեռ սպառողական նվազագույն զամբյուղը (որն իր մեջ ներառում է ֆիզիոլոգիական մինիմումը) կազմում է 29.600 դրամ: Բնակչության մեջ, սակայն, դրան զուգահեռ առկա է խոր շերտավորում: Ցոփ կյանքով ապրող 7-10% հարուստների ամսական եկամուտները 32 անգամ գերազանցում են 90%-ի եկամուտներին:

Եթե Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարության առաջին տարում մարդիկ դեռևս հույսեր ունեին, այսօր, ավա՜ղ, հիասթափությունը հիասթափության է հետևում:

– Սոցիալականին զուգահեռ անդրադառնանք և երկրում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտին:

– Վատթար է: Մտաբերենք Պողոս Պողոսյանի սպանությունը: Մարդիկ դարձել են անտարբեր: Իրողություն, որ անկման սկիզբ է ցանկացած հասարակությունում: Որպես սովորական պատահար է ընկալվում սահմռկեցուցիչ սպանությունը, որն իրականացնում են հանրապետության նախագահի յուրայինները: ՀՀԾ-ականները երբեք իմ աչքի լույսը չեն եղել ու չեն էլ լինի, բայց երբ տեսնում եմ, թե ինչ ոտնձգություններ, ինչ բռնություններ են իրականացվում Ալեքսանդր Արզումանյանի հանդեպ, զարհուրում եմ: Ստորացուցիչ է յուրաքանչյուր հայ մարդու, յուրաքանչյուր քաղաքացու համար, երբ նման եղանակով են փորձում հաշվեհարդար տեսնել:

ՍԻՄ-ի նախագահ Հրանտ Խաչատրյանը դեռևս 4 տարի առաջ համառորեն պնդում էր, թե տվեք նախորդ ռեժիմի քաղաքական գնահատականը: Եթե ժամանակին կատարվեր այդ, ապա այսօր նման ռեցեդիվ չէինք ունենա:

– Ի դեպ, բոլորն են շեշտում նախկին վարչակարգին տրվելիք քաղաքական գնահատականի կարևորությունը, որը, այնուամենայնիվ, իրողություն չդարձավ:

– Այն պարզ պատճառով միայն, որ ներկայիս վարչակազմը պայմանավորվածություն ուներ նախկինի հետ:

– Պետք է վկայակոչեմ հայտնի ՀՀԾ-ական Արա Սահակյանի այն արտահայտությունը, թե՝ «Քոչարյանը 1988-ից մինչև 1997-ի վերջերը եղել է քաղաքական մեր թիմում, ընդգծում եմ, 1998-ից նա հակադրվել է մեզ և, օգտագործելով քաղաքական այդ թիմի մանդատով ստացած վարչապետի պաշտոնը, կատարել է հեղաշրջում» («Իրավունք», թիվ 27, ապրիլ, 2002):

– Իշխանափոխություն, որպես այդպիսին, չի եղել: Նախնական պայմանավորվածության համաձայն իշխանությունը հանձնվել է ՀՀԾ-ից սերված Քոչարյանին ու նրա մերձակա շրջապատին: Նրանք բոլորն ունեն նույն ակունքները, նույն գաղափարախոսության կրողներն են: Նրանց բոլորի եթե ոչ անմիջական մասնակցությամբ, ապա լռակյաց համաձայնությամբ են իրականացվել այն բոլոր անօրինականությունները, որոնք եղել են նախորդ վարչակազմի իշխանության տարիներին, իսկ այսօր է՛լ ավելի են խորացել: Հետևապես, քանի դեռ այս իշխանությունները կան, անիմաստ է խոսել անաչառ գնահատականի, առավել ևս, քաղաքական գնահատականի մասին: Մարդն ինքն իրեն գնահատական տալ չի կարող, որի առհավատչյան է և այն, որ Ռ. Քոչարյանն այդպես էլ քաղաքական գնահատական չտվեց իրեն իսկ ծնող վարչակազմին ու Լևոն Տեր-Պետրոսյանին:

– Ձեր խիստ բնութագրումները ստիպում են զուգահեռ անցկացնել քաղաքական որոշ ուժերի ու գործիչների այն պնդումների հետ, թե բոլոր նրանք, ովքեր քննադատում են Քոչարյանին, ջուր են լցնում ՀՀԾ-ի ջրաղացին, քանի որ «երկիրը, ժողովրդին այս ծանր վիճակից հանողները Քոչարյանն ու Սերժ Սարգսյանն են լինելու»:

– Ներկաներն ամեն ինչ ՀՀԾ-ի վրա բարդելու փոխարեն, գործով թող ապացուցեն,

որ տարբերվում են նախորդ իշխանություններից: Պարոններ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանն այս քաղաքականությամբ երկիրը փոսից չեն հանի, հակառակը, ավելի կխորացնեն ճգնաժամը: Ո՞վ կամ ի՞նչն է խանգարում, որ նրանք կտրեն կլանային համակարգի գորդյան հանգույցը: Չէ՞ որ բոլորս էլ գիտենք ամեն ինչ: Գիտենք, թե ով է նավթ ու նավթամթերքներ ներկրում Հայաստան, ով՝ ցորեն և հացամթերք, ով՝ մետաղ ու մետաղական իրեր, գիտենք, թե Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարանի արտադրանքը մենաշնորհային կարգավիճակով ով և ուր է առաքում, ամեն ինչ էլ գիտենք... Գիտենք նաև, որ վիժեցնում են ազատ մրցակցությունը, որը շուկայական տնտեսության շարժիչ ուժն է:

– Ե՞ք կարծում, որ Ձեր բառերն ընթերցելիս պարոն Քոչարյանի դեմքին բոլորիս այնքան ծանոթ հեգնախառն ժպիտը կխաղա...

– Ավելի վատ իր համար: Պարոն Քոչարյան, մենք նաև գիտենք, որ Դուք իրազեկ եք ամեն ինչից, տեղյակ ենք, որ Ձեր գիտությամբ և անմիջական հովանավորությամբ են կատարվում բոլոր ավերածություններն ու ապօրինությունները: Մարդիկ երբեք այդքան անպատիժ ու կոպտորեն չէին ոտնահարի հակամենաշնորհայնության մասին օրենքը, եթե չունենային Ձեր հովանավորությունը: Ձեր արատավոր գործելաոճով Հայաստանում վիժեցրել եք կարևոր մի հանգամանք՝ միջին խավի ծնվելու և հիմնավորվելու գործընթացը:

Արմատական այս հարցերը վերլուծելու և, ամենակարևորը, շտկումներ անելու փոխարեն, ասում եք, թե Հայաստանում կան ուժեր, որոնք ապակայունացնում են իրավիճակը: Հայաստանում իրավիճակն ապակայունացնողը Դուք եք (Ձեր վարչակազմի հետ), պարոն Քոչարյան, Ձեր իսկ վարած քաղաքականությամբ: Ճգնաժամի իրական պատճառներն ու մեղքերը Ձեր իսկ շրջապատում, Ձեր իսկ վարած քաղաքականության մեջ փնտրեք ու շանտաժի մի ենթարկեք քաղաքական կուսակցություններին, որոնք տեր են մեր ժողովրդին, որոնք տեր են մեր հողին: Հնարավոր չէ, որ բոլորը սխալ լինեն, միայն Դուք՝ պարոն Քոչարյան, ճիշտ՝ Ձեր շրջապատով հանդերձ:

– Ի դեպ, այդ շրջապատի ազդեցիկ դեմքերից մեկին կապում են «Ազգային Միաբանության» հետ և պնդում, թե հենց նա է հովանավորում ու ֆինանսավորում Արտաշես Գեղամյանին:

– Հիմա՞ ում են մատնանշում:

– Նույն Սերժ Սարգսյանին:

– Նման լուրեր տարածողները, ամենայն հավանականությամբ, Սերժ Սարգսյանին հոգեկան հիվանդի տեղ են դնում: Չեմ պատկերացնում մեկին, որը հովանավորի քաղաքական այն ուժին, որն առիթը չի կորցնում հերթական անգամ շեշտելու և հայտարարելու. ներկայիս վարչակազմը՝ Ռոբերտ Քոչարյանը, Անդրանիկ Մարգարյանը, Սերժ Սարգսյանը և մյուսները սպառել են իրենց ու պետք է հեռանան:

Շատ լավ գիտեմ, թե ովքեր և ինչու են հնչեցնում այդ տեսակետը: Փորձում են մարդկանց ուշադրությունը շեղել իրենց դրածոյից: Բնակչության 80-85%-ը հիասթափ-

ված է թե՛ նախորդ, թե՛ ներկա իշխանություններից: Իսկ քաղաքական այն ուժը, որը տարիների ընթացքում սկզբունքային քննադատության է ենթարկել թե՛ մեկին, թե՛ մյուսին, հավասարաչափ անհարմար է դառնում թե՛ նախորդների, թե՛ ներկաների համար: Ինչ անել... ցեխ շպրտել... Եթե բիզնես ունի՝ բիզնեսին, վարքից թույլ է՝ վարքին: Պիտի փորձեն պախարակել ընտանիքի անդամներին (ինչի անհաջող փորձերը եղան) կամ էլ պիտի կապեն այս կամ այն ռեժիմի հետ: Ինչ էլ անեն՝ ՀՀԾ-ի հետ կապել չեն կարող: Ուրեմն, պետք է կապեն Քոչարյանի վարչակարգի հետ: Երկու տարի առաջ դեռևս ասպարեզ նետեցին շշուկներ, թե Քոչարյանի հնարավոր վարչապետության թեկնածուներից մեկը Արտաշես Գեղամյանն է: Կառչեցին դրանից ու շարունակում են մինչ օրս: Ջուր ջանքեր: Ինձ թող չկապեն Ռոբերտ Քոչարյանի կամ Սերժ Սարգսյանի հետ: Ես շատ ամուր կապված եմ մեր հող ու ջրին, հովանավորների կարիք, առավել ևս, ներկա իշխանություններից, չեմ զգում:

– Ինչպե՞ս կպատասխանեք այն պնդումներին, թե առանց հզոր հովանավորի, այնուամենայնիվ, հնարավոր չէր լինի «Ա1+»-ի վճարովի եթերից խոսել մի քանի օր շարունակ:

– Մեր կուսակցության շարքերում կան 46 հազար անդամներ, նրանցից զատ բավական հաջող բիզնեսմեններ, որոնց անուններն երբեք չենք հրապարակի: Այդ մարդիկ շահագրգռված են, որ Հայաստանում ձևավորվի օրինական իշխանություն, որ հավասար պայմաններ ստեղծվեն ձեռներեցների համար, որպեսզի ռուսաստանյան իրենց կապիտալը բերեն ու ինվեստիցիաներ անեն Հայաստանում: Ահա նման մարդիկ են հովանավորում մեզ, նրանք շատ-շատ են: Որքան էլ Արտաշես Գեղամյանին ջերմ բարև տվող ձեռներեցին փորձեն վախեցնել, պարապ գործ է: Ճիշտ է, այդ մարդիկ երևանցի են, բայց այստեղ չէ նրանց բիզնեսը, և իշխանությունների ձեռքերը շատ կարճ են, որպեսզի դրսում կարողանան վնասել նրանց:

– Անդրադառնանք բնակչության այն 80-85%-ին, որի հիասթափությունը փաստեցիք քիչ առաջ, «թե՛ նախորդ, թե՛ ներկա իշխանություններից»: Հիշյալ 80-85%-ը 2003-ի նախագահական մեկնարկում, եթե ստիպված լինի ընտրություն կատարել «նախկինների» ու «ներկաների» միջև, ի՞նչ վարքագիծ է դրսևորելու:

– Ամեն ինչ պետք է անենք, որպեսզի բացառվի նման վիճակը:

– Բայց չէ՞ որ այսօրվա զարգացումները հենց դրան են տանում:

– Փորձում են, բայց պարոններ Լևոն Տեր-Պետրոսյանին և Ռոբերտ Քոչարյանին չի հաջողվի այդ: Քաղաքական ասպարեզում երկուսն էլ այլևս անելիք չունեն: Որքան խոհեմ լինեն այսօր, ապագայում ժողովուրդն այնքան ներողամիտ կդատի նրանց անցյալի քաղաքականությունը:

– Լևոն Տեր-Պետրոսյանն այնքան կարողություն ունի, որ ճիշտ գնահատի քաղաքական իրավիճակն ու եզրակացնի՝ գա՞լ, թե՞ ոչ: Բայց կա հարցի մյուս կողմը ևս. իսկ գուցե հենց Ռոբերտ Քոչարյանի թեթև ձեռքո՞վ է հրապարակ նետվել դեզինֆորմացիան «նախկինների» վերադարձի առնչությամբ, որպեսզի իր վերընտրվելու շանսերը մեծացնի:

– Նախ՝ ինչ վերաբերում է Լևոն Տեր-Պետրոսյանի կարողություններին, ապա դրա անկողմնակալ գնահատականը պետք է տանք՝ ելնելով իր ղեկավարած տարիների արդյունքներից: Իսկ ինչ վերաբերում է նրա քաղաքական հեռատեսությանը, համաձայն չեմ Ձեզ հետ: Քաղաքական հեռատեսություն ունեցող այրը երբեք ու երբեք Ռոբերտ Քոչարյանի նման «ևվեր» չէր մատուցի հայ ժողովրդին:

– Կոնկրետ ՀՀԾ-ն ժխտում է «մատուցման» պարագան:

– Ռոբերտ Քոչարյանին վարչապետ նշանակելու հրամանագիրն Արտաշես Գեղամյանը չի ստորագրել...

– Ըստ Ձեզ, ինչո՞ւ են հրաժարվում իրողությունից:

– Որովհետև իրենց համար էլ անակնկալ էր, թե ինչպես կարելի է այդ աստիճան անիրազեկ ղեկավարել երկիրը:

– Հետևապես, այդ «անակնկալը» կարո՞ղ է դառնալ «նախկինների» վերադարձի հիմնական պատճառը:

– Լուսավոր մի անձնավորություն՝ Հովհաննես Քաջազնունին, դեռևս 20-ականներին գրեց իր հայտնի «Նամակը», թե՝ ՀՅԴ-ն այլևս անելիք չունի: Դա այն տարիներին և ոչ հիմա: Վերափոխելով ասվածը՝ եզրակացնենք՝ ո՛չ ՀՀԾ-ն, ո՛չ Լևոն Տեր-Պետրոսյանը, ո՛չ էլ իրենց կողմից ընդդիմադիր դաշտում գուրգուրված խամաճիկ դրածոները, ինչպես նաև Ռոբերտ Քոչարյանն իր կլանով հանդերձ, այլևս անելիք չունեն Հայաստանում: Քոչարյանականները, իսկ որ առավել կարևոր է՝ հայրենասեր բոլոր քաղաքական ուժերը պետք է համախմբվեն և հասկանան այս և օր առաջ ստեղծեն պայմաններ ազատ, արդար, ազնիվ ընտրությունների անցկացման համար:

– Պետք է վկայակոչեմ՝ «Ո՞վ է լինելու ընդդիմության հավանական թեկնածուն» հարցին, Արա Սահակյանի տված պատասխանը. «Ե՛վ Ստեփան Դեմիրճյանը, և՛ Արամ Սարգսյանը, և՛ Արտաշես Գեղամյանն ընդունելի և ընդունակ գործիչներ են»:

– Արա Սահակյանը, թերևս, սթափ է մոտեցել հարցին: Հիշյալ 3 ազգանուններին ես կավելացնեի ևս 10-15 արժանի մարդկանց ազգանուններ, ովքեր շատ ավելի արգասաբեր կաշխատեն ՀՀ նախագահի պաշտոնում, քան Ռոբերտ Քոչարյանն իր շրջապատով:

– Ուզում եք ասել՝ չի չորացել հայ ժողովրդի արգանդը, ամեն ինչ Ռոբերտ Քոչարյանով չի սկսվում ու ավարտվում:

– Ճիշտ է, ԱԺ պատգամավոր Մանուկ Գասպարյանը հայ մտքի դասականներից չէ, բայց չափազանց սուր և ճիշտ արտահայտվեց, երբ ասաց. «Հայաստանում Ռոբերտ Քոչարյանի նման նախագահի 10 հազարից ավելի թեկնածու եմ տեսնում»:

– 2003-ի նախագահական ընտրություններում հնարավոր համարո՞ւմ եք Ձեր հաղթանակը:

– Եթե մեր «պարտնյոր» կուսակցությունները սատարեն, ապա անխուսափելի է այդ հաղթանակը:

– Ասել է՝ ժխտում եք Քոչարյանի հնարավոր հաղթանակը:

– Անիրագործելի է: Ինչ տեղի ունեցավ 1998-ին, երբ ԱՄՆ-ի պետական դեպարտա-

մենտի պաշտոնական տեղեկատվությամբ 100 հազար քվեաթերթիկներ կեղծվեցին հօգուտ Քոչարյանի, այլևս չի կրկնվի: Թույլ չենք տա, որովհետև մենք շատ ավելի ուժեղ ենք: Որովհետև քաղաքական ուժերն այսօր դատապարտված են համագործակցելու հիմնական հարցերի շուրջ: Ասեմ, որ արդեն ուրվագծվում և ձևավորվում է ազգային փրկության կոմիտեի նախատիպը, որի նպատակն է լինելու Հայաստանը փրկել այն ծանր կացությունից, ուր նա հայտնվել է Ռոբերտ Քոչարյանի վարչակազմի ապաշնորհ քաղաքականության արդյունքում: Հակառակ դեպքում նա ստիպված է լինելու դիմել հանցագործ քայլի՝ պատերազմ հայտարարել սեփական ժողովրդին, հենվելով ժողովրդի կողմից ատելի, իր իսկ կեղեքիչ 5% էլ չկազմող կլանի վրա: Պարոն Քոչարյան, մի՞թե չեք գիտակցում, որ Դուք դատապարտված եք: Ձեզ չպատկանող աթոռը պահելու անհագուրդ ցանկությանը մի՛ գերվեք, քանի դեռ չեն ջնջվել Ձեր արցախյան կենսագրության դեռ չխամրած կետերը: Ի սեր Աստծո, հեռացե՛ք:

Ջրույցը՝
Փիրուզա Մելիքսեթյանի

«Իրավունք. հարց ու պատասխան», 16 – 23.IV.2002:

ՍԴ նախագահը ոգևորեց ընդդիմությանը

Չնայած պաշտոնական ընտրարշավին դեռ մեկ տարի ժամանակ կա, սակայն թե՛ իշխանությունները և թե՛ ընդդիմությունը, ըստ էության, արդեն սկսել են նախընտրական քարոզչությունը: Բնականաբար, իշխանության նախընտրական տեխնոլոգիաներից է ընդդիմության շարքերում պառակտում մտցնելը, որը և նրանք անում են բավականին հմտորեն: Պետք է նկատել նաև, որ շատ հաճախ հենց ընդդիմությունն է իշխանություններին նման հնարավորություն տալիս: Այդուհանդերձ, որո՞նք պիտի լինեն ընդդիմության առաջնային քայլերը. մեր այս և մի քանի այլ հարցերի պատասխանում է «Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանը:

– Պարոն Գեղամյան, միասնական ի՞նչ քայլեր պիտի ձեռնարկի ընդդիմությունը՝ իր հաղթանակն ապահովելու համար:

– Ընդդիմության միասնական քայլ կատարելու խնդիր չկա, և խոսքը ոչ թե ընդդիմության, այլ ժողովրդի հաղթանակի մասին է: Կա գերխնդիր՝ ծառացած ողջ ժողովրդի առաջ. դա օր առաջ այս վարչակազմից ազատվելն է: Ցավոք, վերջիններիս հաջողվել է այնպիսի խարդավանքներ հյուսել, ուր ներքաշվում են անգամ իսկ ընդդիմադիր լրատվամիջոցները՝ հարվածներ հասցնելով ընդդիմադիր որոշ գործիչների: Դա ինքնին նվեր է հանրապետության նախագահի աթոռին հայտնված Ռոբերտ Քոչարյանին ու նրան սպասարկող յուրայիններին: Այսպես. ընդդիմադիր թերթերը գրում են, որ նախագահական ընտրությունների 2-րդ փուլ են դուրս գալու Քոչարյանն ու Գեղամյանը, և Գեղամյանն անճնատուր է լինելու Քոչարյանին՝ ստանձնելով վարչապետի պաշտոնը: Ընդդիմադիր մամուլի հարգելի ներկայացուցիչներ. ես համոզված եմ՝ ձեր մոլորությունն անկեղծ է: Ես համոզված մ, որ դուք ևս գիտեք, որ Քոչարյանի վարկանիշը չի գերազանցում 2-3 տոկոսը: Ինչո՞ւ եք դուք ընտրողին և միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցիչներին այսօրվանից ապակողմնորոշում, որ Քոչարյանը շանս ունի երկրորդ փուլ անցնելու: Ինչո՞ւ եք դուք հաշտվել այն մտքի հետ, որ Քոչարյանը կկարողանա առաջին փուլում մասսայական ընտրակեղծիքներ իրականացնել. չէ՞ որ մենք ձեզ հետ ի զորու ենք թույլ չտալու ընտրակեղծիքներ, չէ՞ որ մեր ընդհանուր պայքարը պետք է լինի մեկը՝ ազնիվ ու արդար ընտրությունների ապահովում ու անցկացում: Իսկ այդ դեպքում Քոչարյանը կլինի նախավերջինը, եթե անգամ նախագահի 20 թեկնածու լինի: Ինչ վերաբերում է Արտաշես Գեղամյանի

անձնատուր լինելուն, ապա այս հարցում ոչ դուք, հարգելի իշխանամետ և ընդդիմադիր լրագրողներ, ոչ էլ ձեր սիրելի կամ չսիրված պարոն Քոչարյանը թող սին հույսեր չփայփայեն: Նախ ես հավատում եմ իմ հաղթանակին, կարծում եմ, դրանում չի կասկածում և Քոչարյանը... Դիմում եմ ընդդիմադիր դաշտի բոլոր կուսակցություններին և իրենց լրատվամիջոցներին՝ խոհեմաբար մոտենանք իրար, մեր ընդհանուր գործին օգնող անաչառ քննադատությունը պետք չէ ընդունել սվիններով ու տեղափոխել անձնական հարաբերությունների ոլորտ: Դրան է հենց սպասում Քոչարյանը, քանի որ իրենք են համառորեն ուզում այն մտայնությունը ստեղծել, թե ընդդիմադիր դաշտը երբեք համաձայնության չի գա: Մինչդեռ պայմանավորվածություն արդեն կա. յուրաքանչյուր կուսակցություն իր առանցքային խնդիրը և առանցքային գործողությունը ճիշտ է ձևակերպել. ազատել երկիրն այս ապաշնորհ իշխանություններից: Այլ բան է, որ այդ գործողությունները կյանքի կոչելու ուղիները կարող են տարբեր լինել: Եվ բնավ էլ պետք չէ ժողովրդավարության ճգտող ամեն ինչ ենթարկել զինվորական մեկ մոտեցման:

– Որոշ դիտորդներ կանխատեսում են, որ հաստանում են նախագահական արտահերթ ընտրությունները: Դուք արտահերթ ընտրությունը ռեա՞լ եք համարում:

– Քոչարյանը և իր շրջապատն արդեն չեն կարող չգիտակցել, որ սվիններով տիրած գահը սվիններով ի զորու չեն պահել, ինչպես նաև հասկանում են, որ դա թույլ չենք տա, ուստի՝ նահանջի ճանապարհներ պիտի որոնեն: Իսկ այդ ճանապարհը մեկն է՝ ստեղծել Հայաստանում այնպիսի մթնոլորտ, որի պայմաններում հնարավոր լինի անցկացնել ազատ և արդար արտահերթ նախագահական ընտրություններ: Պարոն Քոչարյանը թող չկարծի, թե ինքը Բորիս Ելցինից ավելի կայացած քաղաքական-պետական այր է, թող չկարծի, թե ինքը Ելցինից ավելի հեռատես ու խորաթափանց գործիչ է. չէ՞ որ Ելցինը, երբ գիտակցեց, որ երկրի, պետության համար զարգացումները դառնում են վտանգավոր, իր մեջ տղամարդկություն և պետական մտածողություն գտավ վայր դնելու Ռուսաստանի նախագահի լիազորությունները: Եվ հիմա պատահական չէ, որ նա հանգիստ ապրում է իր երկրում, և ժողովուրդը թշնամանքով չի տրամադրված նրա նկատմամբ: Քոչարյանն այդ օրինակն ունի, և ես համոզված եմ, որ եթե նա դիմի նման քայլի, ապա ժողովրդի վերաբերմունքը նրա նկատմամբ, թերևս, կմեղմանա, իսկ ընդդիմադիր կուսակցությունները կստեղծեն հետնահանջի այնպիսի պայմաններ, որոնց արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կսկսի նմանվել քաղաքակիրթ երկրների, ու չի ստացվի այնպես, որ եկող նախագահն ամբողջությամբ ջնջում է իր նախորդի արածը: Ես, իհարկե, հնարավոր եմ համարում արտահերթ նախագահական ընտրությունները, և ազատ, արդար ընտրությունների դեպքում բացառում եմ երկրորդ փուլը, հատկապես՝ երկրորդ փուլ բացառում եմ Ռոբերտ Քոչարյանի մասնակցությամբ: Համոզմունքս այն է, որ օրինազանցություններն ընտրությունների ժամանակ անխուսափելիորեն ուղեկցվելու են արյունահեղությամբ, որի ամբողջ պատասխանատվությունը կընկնի անձամբ Ռոբերտ Քոչարյանի վրա: Ավելին, հերթական անգամ նման իրավիճակ ստեղծելով՝ նա մեծ մեղք կվերցնի իր վրա՝ կապված նաև արցախյան պատերազմի հետ: Պատկերացնո՞ւմ եք ինչ

ևվեր կլինի դա Ադրբեջանի համար, եթե հանկարծ ընտրությունների ժամանակ բռնություններ լինեն. համոզված եղեք, որ մեր հակառակորդներն ազատագրական ողջ պայքարն անմիջապես կիջեցնեն բռնություններ իրականացնողների մակարդակին, և արցախյան հերոսամարտը կներկայացվի որպես տեռորիստների գործողությունների արդյունք:

– Այդուհանդերձ, հնչում են կարծիքներ, որ իշխանությունը պահելու համար Քոչարյանը կգնա ցանկացած առճակատման: Չնայած, վերջերս ՊՆ նախկին նախարարն ասաց, որ արյուն թափելու համար Հայաստանում նրանք այլևս չեն կարողանա գտնել այդ ձեռքերը:

– Շատ խորաթափանց եզրակացություն է արել իմ կողմից հարգված ՊՆ նախկին նախարար Վաղարշակ Հարությունյանը: Քոչարյանը կարող է առճակատման գնալ Գեղամյանի, Արամ Սարգսյանի, Բազեյանի հետ, բայց նա ինչպե՞ս կարող է առճակատման գնալ ողջ ժողովրդի հետ: Եվ հետո՝ հասարակ մի ճշմարտություն կա՝ հայ ժողովուրդը Սասունցի Դավթի պես քնած է, և թող պարոն Քոչարյանն աչքի առաջ ունենա, որ արդեն ճամփա է ընկել Չենով Օհանն, ու հայ ժողովուրդն արթնանում է՝ զգուշացեք համաժողովրդական սելավից, որը կսրբի կտանի ամեն ինչ... Սակայն դա չէ մեր ճանապարհը, մենք իրավունք չունենք նման ևվեր մատուցել մեր թշնամիներին, հաստատելու նրանց բարբաջանքը, թե հայերին թողեք հանգիստ, նրանք իրար կոչնչացնեն: Քոչարյանն ուզում է դրան հասցնել գործը, նա կարծում է, թե ինքն օտար երկրում է հայտնվել, որովհետև նրա գործելակերպը նման չէ ազգի տիրոջ գործողությունների, դա նման է դրսից բռնի ուժով բերված մարդու վարքագծի, որը փոխանակ իր հպատակների մեջ գտներ իր հենարանը, նսեմացնում է ժողովրդին, նրան զրկում հույսից: Ի՞նչ է՝ ուզում է, որ հեղափոխությո՞ւն լինի, որ հետո հայտարարի, թե ընդդիմությունը խանգարեց իր շինարար ծրագրերի իրագործմա՞նը: Մենք հեղափոխություն չենք ուզում, ինչպես և չենք հանդուրժի ձեր ապաշնորհ իշխանավարությունը:

– Պարոն Գեղամյան, այդուհանդերձ, որքան էլ խուսանավենք ընդդիմության միասնական թեկնածուի մասին խոսելուց, այդ հարցը մի օր առաջ է գալու: Եթե դուք չլինեք այդ թեկնածուն, այլ թեկնածուի տարբերակը ձեզ համար կլինի՞ ընդունելի:

– Ընդդիմություն ասելով ես պատկերացնում եմ ողջ հայ ժողովրդին, իսկ ընդդիմադիր քաղաքական կուսակցություններն այս պահին մեկ խնդիր ունեն՝ ապահովել ազատ, արդար ընտրություններ, որի դեպքում Քոչարյանը ոչ մի շանս չի ունենա 2-3 տոկոսից ավել ձայն ստանալու: Իսկ արդար ընտրությունների արդյունքում ես սրբորեն կընդունեմ ժողովրդի կամքը: Պետք չէ գնալ Քոչարյանի կողմից կանխամտածված սցենարով: Իշխանությունները և իրենց լրատվամիջոցները հիմա կնպաստեն, որ ընդդիմադիր ուժերը փաստաթղթային ձևակերպումով համախմբվեն, կրկնում եմ, փաստաթղթային ձևակերպումով, հետո հայտարարեն միասնական թեկնածուի մասին, և այդպես մինչև դեկտեմբեր: Իսկ արդեն դեկտեմբերին, իրենց իսկ կողմից փայփայված ընդդիմադիր դաշտում հայտնված դրածո կուսակցությունները հայտարարությամբ հանդես կգան

միասնական թեկնածուի դեմ և կհայտարարեն ընդդիմադիր դաշինքից դուրս գալու մասին: Արդյունքում՝ իշխանությունները շանս կստանան ժողովրդին ապացուցելու, որ՝ տեսա՞ք, ասում էինք, չէ՞, իրենք իրար միս են ուտելու: Իսկ դրանից հետո արդեն կփորձեն արմատավորել երկրորդ միտքը, որ Քոչարյանը, վերստին ընտրվելու դեպքում, չի կրկնի իր գործած սխալները: Ահա սա է Քոչարյանի կողմից գաղտնի թելադրվող ճանապարհը: Մեր խնդիրը պետք է լինի ոչ թե կուլ տալ այս փուլում միասնական թեկնածուի անհրաժեշտության խայծը (օրը կգա, դա անպայման տեղի կունենա, թող պարոն Քոչարյանը հանգիստ լինի այս հարցում), այլ համախմբվելու մեկ նպատակի շուրջ՝ ապահովել ազատ, արդար ընտրություններ:

– Օրերս, Կարեն Դեմիրճյանի 70-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ բավականին ուշագրավ ելույթ է ունեցել ՍԴ նախագահը ու ոմանց համար այդ ելույթը նախագահական ընտրություններին մասնակցելու հայտ էր: Դուք ինչպե՞ս եք գնահատում Գագիկ Հարությունյանի թեկնածության տարբերակը:

– Ես շատ բարձր եմ գնահատում Գագիկ Հարությունյանի խոսքը՝ ուղղված լուսահոգի Կարեն Դեմիրճյանի հիշատակին: Այստեղ ես Քոչարյանին դեմ կամ ընդդիմությանը կողմ որևէ ենթատեքստ չեմ նկատել: Այդ ելույթն ավելի շատ միտված էր ապագային: Եվ իմ խոր համոզմամբ, Գագիկ Հարությունյանը, անելով նման լուրջ վերլուծություն, հրապարակայնորեն բարոյական երդում ընդունեց համայն հայության առաջ, որ 2003-ին, որպես ՍԴ նախագահ, ամեն ինչ կանի, որպեսզի առաջիկա ընտրություններում չկրկնվեն նախորդներում տեղ գտած՝ մեր ժողովրդի համար ճակատագրական խախտումները, որ գերիշխի օրենքը: Այդ առումով նա ոգևորեց ընդդիմությանը: Ես նման եզրակացության եկա: Համոզված եմ, որ ներկայիս իրավիճակում հարգարժան Գագիկ Հարությունյանի այդ առաքելությունը շատ ավելի ազգանվեր և շնորհակալ կլինի, քան որպես թեկնածու՝ նախագահական ընտրություններին իր մասնակցությունը: Այս հարցում ազգի ճակատագրով մտահոգված բոլոր կուսակցությունները, կարծում եմ, կսատարեն պարոն Հարությունյանին:

Նաիրա Զոհրաբյան

«Հայկական ժամանակ», 20.IV.2002:

Գալով իշխանության՝ նախկին և ներկա նախագահներին կտանք ժողովրդին ծառայելու հնարավորություն

Այս օրերին, երբ նորից առաջ է քաշվել հանրապետության նախագահի հրաժարականի պահանջը, թե՛ քաղաքական գործիչները, և թե՛ հասարակությունը ավելի ինտենսիվորեն են սկսել քննարկել հնարավոր թեկնածուի հարցը: Առավել հաճախ է հնչում «Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանի անունը, որն այսօր իմ զրուցակիցն է, և որին, ըստ որոշ կանխատեսումների, նախագահական առաջիկա ընտրություններում բավական որոշիչ դերակատարություն է բաժին ընկնելու:

– Հանրապետությունում սոցիալական վիճակը հասել է այն աստիճանի, որ ավելի վատթարը կանխելու նպատակով պնդում են, թե իրավիճակն այլևս չի կարելի թողնել միայն ցանկությունների ու անարդյունք խոստումների մակարդակին, թե որպեսզի դրական տեղաշարժեր կատարվեն, անհրաժեշտ են լուրջ միջոցառումներ, որոնցից գլխավորը, ըստ ընդդիմության, նախագահական արտահերթ ընտրություններն են: Ինչպե՞ս կկարևորեք այդ պահանջը:

– Ցավոք, ներկայիս վարչակարգը չի տեսնում Հայաստանի զարգացման հեռանկարները, մինչ օրս չի պարզել, թե այդ ի՞նչ խութեր են, որոնք խանգարում են այդ զարգացմանը, չի հստակեցրել, թե ովքեր են հիմնական մեր այն դաշնակիցները, ում հետ համագործակցելով որոշակի արդյունքներ կունենանք: Մինչ օրս լուրջ վերլուծություն չի արվել աշխարհում ու տարածաշրջանում Հայաստանի ունեցած դերի ու դիրքի վերաբերյալ, ինչի արդյունքում էլ ստեղծվել է պայթյունավտանգ այս իրավիճակը: Ասեմ ավելին՝ 12 տարիների անկախության ընթացքում այդպես էլ չկարողացանք ձևավորել միջին խավ: Մինչդեռ ցանկացած հասարակարգ այնքանով է ամուր, որքանով կայացած է այդ խավը, որն էլ հենց հավասարակշռություն է ստեղծում գերհարուստների ու չքավորների միջև: Այնքան անհրաժեշտ միջին խավն առաջիկայում էլ չի ձևավորվի այն պարզ պատճառով, որ Հայաստանի տնտեսությունում իշխողը կլանային համակարգն է, որը վիժեցնում է ազատ մրցակցությունը, ազատ ձեռներեցությունը, որոնք էլ գլխավոր պայման են միջին խավի ձևավորման: Այս իմաստով չի կարելի որևէ հույս կապել ներկայիս իշխանությունների հետ, քանի որ իրենք են այդ կլաններն ստեղծողներն ու հովանավորողները:

Այսօր հանրապետությունում ձևավորված չեն ժողովրդավարական ինստիտուտ-

ները: Դատական համակարգն ամբողջովին կախվածության մեջ է հանրապետության նախագահից, գործադիր իշխանությունը նրա կամակատարն է, իսկ որ ավելի ցավալի է՝ Ազգային ժողովը դարձել է հանրապետության նախագահի և կառավարության կցորդը: «Ա1+» և «Նոյյան տապան» հեռուստաընկերությունները փակելուց հետո լուրջ հարված է հասցվել խոսքի ազատությանը, չորրորդ իշխանությանը: Այս ամենի արդյունքում Հայաստանում այդպես էլ չի կայանում քաղաքացիական հասարակարգ, իսկ այդ պայմաններում երկրի զարգացման մասին խոսք անգամ լինել չի կարող: Երբ փորձում ենք անկողմնակալ վերլուծել, թե ում մեղքով է այս ամենը կատարվել, հետևությունը մեկն է՝ ՀՀ նախագահի և իր կողմից ձևավորված վարչակազմի:

– *Քաղաքական որոշ ուժերի մոտ, սակայն, առկա է այն մտավախությունը, թե 5 տարվա ընթացքում նախագահական 2 արտահերթ ընտրությունները թույլ չեն տա, որ աշխարհում մեզ լուրջ վերաբերվեն:*

– Մեզ պետք է, որ ժողովուրդը լուրջ ընդունի իշխանություններին: Որ ժողովրդի ընտրած իշխանություն ունենանք: Այդ դեպքում, հավատացնում եմ, ցանկացած երկիր շատ լուրջ կմոտենա այն իշխանություններին, որոնք լեգիտիմ են, արժանացել են ժողովրդի քվեին:

Վերջերս ամերիկյան Կոնգրեսի՝ արտասահմանին ցուցաբերվող տնտեսական օժանդակության ենթահանձնաժողովում ելույթ ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը: Երբ նա անդրադարձավ Հայաստանի և Ադրբեջանի փոխհարաբերություններին՝ պայմանավորված ԼՂՀ հարցով, ասաց բառացիորեն հետևյալը, որ Քի Վեստում արձանագրվել էր լրջագույն առաջընթաց, որը ոգևորություն էր առաջացրել ոչ միայն ԱՄՆ-ի, այլ նաև Մինսկի խմբի եռանախագահող երկրների ղեկավարների, այն է՝ Վլադիմիր Պուտինի և Ժակ Շիրակի մոտ: Սակայն այդ ոգևորությունը շատ շուտ ի չիք դարձավ այն պարզ պատճառով, որ երբ նախագահները՝ Ալիևը և Քոչարյանը, վերադարձան իրենց երկրներ, չկարողացան և համարձակություն չունեցան պայմանավորվածությունների մասին (որոնք, բնականաբար, փոխզիջումային էին) խոսել ու կիսվել իրենց սեփական ժողովուրդների հետ: Փաուելն այսպիսի հետևություն արեց. նախագահներն աչքի առաջ ունեին նախադեպը, թե ինչ ճակատագրի արժանացավ Լևոն Տեր-Պետրոսյանը, երբ փորձեց խոսել այդ մասին, ուստիև, շարունակում է Փաուելը, խնդիր պետք է դրվի, որպեսզի 2 հանրապետություններում էլ անցկացվեն նախագահական ընտրություններ, որոնք պետք է լինեն ժողովրդավարական, թափանցիկ, և, որ ամենակարևորն է, դրանց արդյունքում պետք է ընտրվի լեգիտիմ նախագահ: Նախագահ, որը կկարողանա ժողովրդի հետ պարզ խոսել, որն իր դիրքորոշումները պարզորոշ արտահայտել է նաև ղարաբաղյան հարցում և ստացել ժողովրդի սատարումը: Երբ Փաուելն ասում է լեգիտիմ նախագահ, բնականաբար, նա մեզ հուշում և ակնարկում է, որ ՀՀ այսօրվա նախագահը ոչ լեգիտիմ է: Ի դեպ, ամերիկացիներն այդ չեն էլ թաքցնում: Արդեն 2-րդ տարին անընդմեջ պետդեպարտամենտի՝ Կոնգրեսին ուղղված տարեկան ուղերձում հիշատակվում է, որ 100000 քվեաթերթիկները կեղծվել են հօգուտ Քոչարյանի:

Հետևապես, եթե մենք հասնենք այն բանին, որ Քոչարյանի հրաժարականից հետո ազատ, անկախ, թափանցիկ ընտրություններ անցկացվեն, այդ երկրները կողջունեն մեզ, իսկ այդ ընտրությունները կլինեն գլխավոր նախապայմանը Արցախի հիմնահարցի արդարացի լուծման ճանապարհին:

– Համաձայն բավական լուրջ կանխատեսումների՝ Քոչարյանը հրաժարական չի տա, ամեն ինչ կընթանա իր հունով, և ընտրապայքարի 2-րդ փուլ դուրս կգան գործող նախագահն ու Արտաշես Գեղամյանը, որն իր ձայները կզիջի Ռոբերտ Քոչարյանին՝ փոխարենը ստանալով ՀՀ վարչապետի պաշտոնը:

– Եթե Դուք ուշադիր ընթերցեք երեկվա (13 մայիսի – *Փ. Մ.*) մամուլը, ապա հետաքրքիր եզրակացության կհանգեք: «Հայոց Աշխարհին» Արտաշես Գեղամյանին հասցեագրել է, մեղմ ասած, ստոր ու անպարկեշտ մեղադրանքներ ու լուտանքներ: Ակնհայտ է, որ այդ թերթը, ֆինանսավորվելով հանրապետության նախագահի և իր շրջապատի կողմից, պատվեր է կատարել: Թերթի նույն համարում Քոչարյանի մոլեռանդ պաշտպանի կողմից գայթակղիչ գովերգվում է ընդդիմության հնարավոր թեկնածուներից մեկը՝ չմոռանալով նշել, թե՝ Գեղամյանի ժողովրդականության մասին լեգենդներ են պատմում, բայց նա շանս չունի (ասես թե, խնդիր են դրել ժողովրդին հուսահատեցնել): Կարդում ես «Իրավունքում» տպագրված հարցազրույցը Լևոն Զուրաբյանի հետ, նա ասում է, թե Քոչարյանը «...կհոգա, որ իր հետ 2-րդ փուլ անցնի մի թեկնածու, որն ի վիճակի է բավականաչափ ձայն հավաքել, բայց մյուս կողմից, վերահսկելի կլինի, օրինակ, Արտաշես Գեղամյանը»: Կարդում ես Լևոն Զուրաբյանի կնոջ խմբագրած «Չորրորդ իշխանությունը», թե Արտաշես Գեղամյանի ճակատին կա Սերժ Սարգսյանի հետ մտերիմ լինելու խարանը, և դրանից նա չի կարող խուսափել, և փաստում, որ Գեղամյանի հարցում ժողովրդին թյուրիմացության մեջ գցելու համար կարծես ձեն-ձենի են տվել Լևոն Տեր-Պետրոսյանին և Քոչարյանին հպատակ թերթերը: Քոչարյանական թևը մի կողմից է ուժգին քննադատության ենթարկում Գեղամյանին, Տեր-Պետրոսյանական թևը՝ մյուս կողմից. երկուսն էլ նենգ ու սատանայական: «Գոլոս Արմենիին» էլ տալիս է հնարավոր թեկնածուների ցանկը և գովաբանում ընդդիմադիր դաշտի մեկ այլ գործչի, ասելով, որ եթե նա իր թեկնածությունը չդնի նախագահական առաջիկա ընտրություններում, ապա իրենց կուսակցությանը սպասվում է հիասթափություն և շարքերի հետագա նոսրացում՝ հօգուտ Գեղամյանի: Ուրախությամբ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Քոչարյանին՝ ընդդիմադիր կուսակցությունների լիդերների նկատմամբ իր թերթերի միջոցով սրտացավ ու հոգատար վերաբերմունքի համար: Երբ համադրում ենք այս ամենը, հանգում ենք մի պարզ եզրակացության. Արտաշես Գեղամյանը հավասարաչափ վտանգավոր և անցանկալի գործիչ է թե՛ ներկայիս իշխանությունների, թե՛ Լևոն Տեր-Պետրոսյանի ու նրանց ջատագովների համար: Հետևապես 2 կողմերի համար էլ Գեղամյանը թիրախ է դառնում, որն էլ վերջին հաշվով խոսում է իմ օգտին: Դրան զուգահեռ 2 կողմերն էլ անց են կացնում մանրակրկիտ մշակած քաղաքականություն: Քոչարյանն ամեն գնով փորձում է պառակտել ընդհանուր, ընդդիմադիր դաշտը և այդ

նպատակով ընտրել է գավառական ամենապարզունակ տարբերակը, ընդդիմության առանձին լիդերների հրահրել ինքնուրույն, անջատ գործողությունների, որի արդյունքում Քոչարյանի հրաժարականը պահանջող ստվար ճակատը, բնականաբար, կմասնատվի: Ինչն էլ ներկա վարչախմբին թույլ կտա ընտրությունները հասցնել 2-րդ փուլ: Եթե արդար, թափանցիկ ընտրություններ լինեն, հավատացնում եմ՝ բանը 2-րդ փուլին չի հասնի: Քոչարյանն էլ է սա գիտակցում:

Լևոն Տեր-Պետրոսյանի թևն էլ փորձում է ընդդիմադիր դաշտի ձեռքերով ծայրաստիճան շիկացնել իրավիճակը ՀՀ-ում, որպեսզի լինեն մեծագույն բախումներ, ինչի արդյունքում ասպարեզ կգա Քոչարյանի և Տեր-Պետրոսյանի վարչախմբերի օրինազանցությունները քողարկել խոստացող, անվրդով կյանքով ապրող մեկ այլ թեկնածու: Այն կապահովի ՀՀԾ-ի փաստացի վերադարձի հնարավորությունը: Իսկ դրա համար թիրախ պիտի դառնա այն մարդը, որն այս ամենը կարողացել է ոչ միայն կարդալ ու հաշվարկել, այլև հրապարակավ պնդել ի սկզբանե այդ ծրագրի իրականացման անհնարին լինելը: Առանց կեղծ համեստության՝ դա Արտաշես Գեղամյանն է:

– Ինչո՞ւ են, սակայն, Ձեր անունը համառորեն կապում ներկայիս իշխանությունների հետ:

– Լավ գիտակցելով, որ բնակչության ստվար զանգվածը չի ընդունում ներկա վարչախմբին, ամեն գնով Արտաշես Գեղամյանին պիտի կապեն գործող վարչակարգի հետ ու հրապարակ նետեն այն միֆը, թե 2-րդ փուլում կառավարելի կամ հնազանդ Գեղամյանը համաձայնության կգա:

– Շատերը, սակայն, Ձեզ կարող են պատասխանել ժողովրդական ասացվածքով, թե՝ «Անկրակ ծուխ չի լինում»...

– Բնականաբար, հենց այդ էլ պարտադրում է ունենալ հստակ դիրքորոշում և հստակ գնահատականներ տալ: Ու ամենևին էլ պատահական չէ, որ այդ գնահատականներն ուզում եմ հնչեցնել «Իրավունքի» էջերից, որը ո՛չ քոչարյանական է և ո՛չ էլ տերպետրոսյանական: Ես հավասարաչափ չեմ ընդունում նախկինիներին, թե ներկաներին: Նախկին իշխանությունների օրոք ՀՀ-ում կատարվել են չարագործություններ: Նրանց ռեժիմի օրոք ժողովուրդն ենթարկվել է էներգետիկ տեռորի, թոշակառուները ցրտից սառել, մահացել են իրենց բնակարաններում: Աներևակայելի դաժան դեպքեր են արձանագրվել Հայաստանում, մասնավորապես Երևանում, երբ տեղի են ունեցել գիշերային թաղումներ, որպեսզի դագաղ չունենալու պատճառով հարևանների մոտ հանգուցյալի հարազատներն անհարմար չզգան: Դատապարտում եմ ներկայիս վարչակարգին, որը ոչ միայն խաբելով ժողովրդին անհրաժեշտ պատասխանատվության չենթարկեց իր նախորդներին, այլև ինքն էլ բազմաթիվ այլ չարագործություններով դրոշմեց իր իշխանավարության տարիները. բերեմ մեկ օրինակ միայն. նախագահի յուրայինները մարդ են սպանում, արդյունքում դատարանի դահլիճից ազատ են արձակվում:

– Ուզում եմ հիշատակել Լևոն Զուրաբյանի՝ «Իրավունքին» տված հարցազրույցից մի արտահայտություն ևս, այն է՝ Դուք 98-ի ընտրությունների 2-րդ փուլում սատարել եք

Քոչարյանին:

– Ցավոք, ավելի եմ համոզվում, որ այդ մարդիկ ցանկացած գնով ուզում են, որ ես կրկնեմ 2-րդ փուլի ընթացքում հնչեցրած խոսքերս, այն է. «Արտաշես Գեղամյանը կողմ կլինի նախագահի այն թեկնածուին, որը կասի, որ հակաժողովրդական է եղել Լևոնի ռեժիմը, կասի, որ Վանոյի դղյակը կառուցված է ժողովրդի արյան գնով, որ անաստված փողերով է կառուցված տեր Հուսիկ Լազարյանի բազմահարկ տունը...»: Եթե լևոն-զուրաբյաններ խնդիր են դրել հերթական անգամ Արտաշես Գեղամյանի շուրթերով հիշեցնել այդ չարագործությունները, ապա ես հիշողության կորուստ չունեմ, պատրաստ եմ և կրկնել ասածս: Ավելին, ցանկացողներին կարող եմ տրամադրել իմ ելույթի տեսագրությունը՝ ոմանց հիշողությունը թարմացնելու նպատակով:

– Ի դեպ, առաջիկա ընտրություններում տրվում են հնարավոր թեկնածուների և այլ անուններ ևս (ընդդիմադիր դաշտից), բայց նրանցից և ոչ մեկին չեն փորձում կապել ներկայիս վարչակարգի հետ:

– Դա շատ բնական է. այն պարզ պատճառով, որ ես խիստ անցանկալի եմ թե՛ ՀՀԾ-ի, թե՛ ներկայիս իշխանությունների համար, որն ինձ, անշուշտ, ոգևորում է: Բնականաբար, միասնական ճակատ պետք է ստեղծվի Արտաշես Գեղամյանի դեմ, այն խոսքերից հետո, որոնք ասել եմ «Իրավունքում» և այսօր կրկնում եմ. Ռոբերտ Քոչարյանի վարչակազմը Լևոն Տեր-Պետրոսյանի վարչակազմի տրամաբանական շարունակությունն է: Սա ՀՀԾ-ի թևերից մեկն է: Չգիտակցել այս փաստը, մոլորություն է: Ժողովրդի մեջ հենց այս մոլորությունը տարածելն էլ նրանց նպատակն է, որպեսզի մարդիկ չհասկանան, թե ում հավատան, իսկ ում՝ ոչ:

– Այս զրույցի ընթացքում Ձեր բառերի ենթատեքստում, կարծեք, այն միտքը կար, որ հենց Դուք եք ընդդիմության թեկնածուն:

– Երբեք հավակնություններ չունեմ ինքս իմ դերակատարումն առաջ կամ հետ մղելու: Ես գիտեմ, թե իմ գլխավորած կուսակցության ճանապարհը որն է:

– Եվ ո՞րն է այն:

– Ազգային համերաշխության ու միաբանության ճանապարհը: Նշածս ուղին հնարավոր չէ, որ պայմանավորված լինի միայն անձով, այն պետք է պայմանավորված լինի բնակչության գերակշռող մասի համար հոգեհարազատ գաղափարներով: Որ հասարակության յուրաքանչյուր անդամ, կարդալով դրանք, ասի՝ վերջապես հասկացա՝ ուր ենք հայտնվել, այստեղից ուր ենք գնալու, և ամենակարևորը, ինձնից ինչ է պահանջվելու, և ես ինչ ակնկալիքներ պիտի ունենամ, եթե այս մարդիկ գան իշխանության:

– Եթե գաք իշխանության, ինչպիսի՞ն կլինի Ձեր վերաբերմունքը Ռոբերտ Քոչարյանի և Լևոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ:

– Ուզում եմ հավատալ, որ և՛ Ռոբերտ Քոչարյանը, և՛ Լևոն Տեր-Պետրոսյանն այնքան ողջամիտ կլինեն, որ կգիտակցեն՝ այս փուլում իրենք Հայաստանի քաղաքական դաշտում այլևս անելիք չունեն: Ինչքան համառեն ու փորձեն շիկացնել վիճակը, ավելի կհաստատեն այն իրողությունը, որ երկուսն էլ սպառված են: Այս պարագայում, ըստ իս, անձնական

ամբիցիաները պիտի դնեն մի կողմ և, ինչու չէ, նաև իրենց խոհեմությամբ չխանգարեն նոր իշխանություններին: Եվ ոչ թե այս կամ այն քաղաքական գործչի վրա ցեխ շպրտեն:

Ասեմ նաև, որ հաշվի առնելով թե՛ նախկին, թե՛ ներկայիս նախագահների անցած ուղին, կուտակած փորձը (նաև բացասական), ապագա Հայաստանում կարելի կլինի ստեղծել այնպիսի իրավիճակ, որ ներվեն նրանց սխալները, եթե, իհարկե, նրանք անկեղծորեն դրանք ընդունեն: Իսկ դրանց ուղղման ճանապարհը մեկն է. ծառայիր նրան, ում հանդեպ սխալ ես եղել: Նրանք սխալ են եղել ժողովրդի հանդեպ: Գալով իշխանության՝ ժողովրդին ծառայելու հնարավորություն, մենք նրանց կտանք:

Զրույցը՝
Փիրուզա Մելիքսեթյանի

«Իրավունք», 17 – 23.V.2002:

Ընտրվեց Կարեն Դեմիրճյանը, իսկ իշխանության եկավ մեկ ուրիշը

*Ա*ժ *«Իրավունք և Միաբանություն» խմբակցության ղեկավար Արտաշես Դեղամյանի հետ «Ուղիղ կապի» ժամանակ հեռախոսազանգերը մեկ վայրկյան անգամ չդադարեցին, որը պատգամավորի մեծ ժողովրդականության վկայությունն է:*

Հաճախորդներից շատ հարկային տեսուչ ու օպեր են գալիս

– Ես մի փոքր խանութ ունեմ: Հաճախորդներից շատ հարկային տեսուչ ու օպեր են գալիս: Ի՞նչ անեմ, արդեն զզվել եմ (Հակոբ Հակոբյան):

– Շատ ցավոտ հարց եք բարձրացնում: Դա գալիս է մեր հարկային օրենսդրության անկատար լինելուց, դա գալիս է նրանից, որ շատ հաճախ հարկային մարմիններում աշխատում են մարդիկ, ովքեր առաջնորդվում են ոչ թե պետական շահով, այլ անձնական գրպանը լցնելով: Նրանք, համաձայն գործող օրենքի, միայն և միայն տարեկան մեկ անգամ են իրավասու գալ և տեղում ստուգումներ կատարել: Այդ ցավը բոլորինն է, բոլոր փոքր և միջին ձեռներեցներինն է, ուստի համոզված կարող եմ ասել. գալով իշխանության՝ ընդդիմադիր կուսակցությունները և ուժերը կընդունեն հարկային բեռի շեշտակի թեթևացման, իսկ որ ամենակարևորն է, բոլոր տեսակի ստուգող մարմինների աշխատանքների կանոնակարգման մասին օրենք: Հարկային օրենսդրության փիլիսոփայությունն է սխալ. փոխանակ ամեն կերպ օժանդակեն և խթանեն մանր և միջին ձեռներեցությունը, ամեն ինչ անում են, որպեսզի արգելակեն նրանց զարգացումը: Այդ խնդիրը բոլորս շատ լավ գիտակցում ենք, և առաջիկայում ինքներդ կհամոզվեք, որ լուծումներ կտանք: Ձեզ համբերություն և հաճախորդների շեշտակի աճ եմ ցանկանում:

Ե՞րբ եք ընտրվելու նախագահ

– Ե՞րբ եք ընտրվելու նախագահ, որ գաք, այս բոլոր թալանչիներին բռնեք ու դատի տաք: Թող ժողովուրդն իմանա, որ անտեր չէ, մեր հույսը կապում ենք Ձեզ հետ (Քյավառցի Սարատ):

– Մեր ժողովուրդը երբեք անտեր չի եղել և չի էլ լինի, պարզապես այս վերջին

տարիներին, երբ տեսնում ենք՝ ղեկավարությունն ինչ ոճ է որդեգրել իր ամենօրյա աշխատանքում, գալիս ենք այդ տխուր եզրակացությանը: Համբերեք, շատը գնացել է, քիչն է մնում:

– *Ամբողջ Էրեբունու համայնքը Ձեզ հետ է, Գեղամյան ջան:*

– Համոզված եղեք՝ մենք և՛ ծրագիր ունենք, և՛ գիտենք՝ ինչ անենք, և՛ գիտենք՝ ում հետ ենք ճանապարհ գնալու: Իսկ որ ամենակարևորն է, մեր, մեր երեխաների, թոռների ապագան կապում ենք Հայաստան աշխարհի հետ: Մեր գործն արդար է, ճշմարիտ է, և հաղթանակը մերն է լինելու:

– *Գնալով երկիրը դատարկվում է: Շուտ արեք, եկեք իշխանության, երկիրը կործանվում է (Աշոտ Ստեփանյան):*

– Այն, որ վիճակը ողբալի է, որ արտագաղթն արդեն ահագնացող չափերի է հասել, դա բոլորս գիտենք: Իսկ ինչ կապված է իշխանության գալու հետ, դա միայն մեր կուսակցության խնդիրը չէ, դա համաժողովրդական խնդիր է: Ես պարզապես ուզում եմ, որ Դուք՝ որպես մարդ, քաղաքացի գիտակցեք հետևյալը. եթե մենք ինքներս միահամուռ, մեկ մարդու նման չգնանք ընտրությունների, ապա դրանով մեծագույն ևվեր կմատուցենք Քոչարյանի վարչակազմին՝ մեծաքանակ ընտրակեղծիքներ անել: Ձեր մտահոգությունը յուրաքանչյուրիս մտահոգությունն է, ասեմ ավելին. լրջագույնս պատրաստվում ենք առաջիկա ընտրություններին, ըստ որում, ոչ միայն նախագահական և խորհրդարանական, այլ նաև տեղական ինքնակառավարման մարմինների: Դուք համոզված եղեք, կան առողջ ուժեր, որոնք արդեն իսկ համախմբման ուղին են ընտրել: Համախմբման դեպքում հավատացած եղեք, որ այս վարչակազմն անզոր կլինի որևէ կեղծիք կատարել:

– *Հանրապետությունում, Երևան քաղաքում մարդ չի մնացել. բոլորը դուրս են գնում:*

– Դուք էլ համոզեք այդ մարդկանց, որ այդքան տառապել են, դիմացել են, բան չի մնացել, քիչ է մնացել, մի քանի ամիսների հարց է, և Դուք ականատեսը կլինեք, որ Հայաստանի ներկա իշխանություններն այլևս մեր երկրում անելիք չեն ունենա և շատ շուտով կավարտվի նրանց անփառունակ իշխանությունը:

– *Ես Գորիսից եմ եկել: Մեզ հատկապես հետաքրքրում է, թե ինչ է լինելու Տաթևի ենթաշրջանի գյուղերի վիճակը: Գյուղերում՝ Շինուհայրում, Տաթևում, Հալիձորում, ժողովրդի վիճակն անտանելի է: Ե՞րբ եք գալու իշխանության, որ ժողովրդին այդ վիճակից փրկեք: Մարդիկ հավատը կորցրել են այս իշխանությունների նկատմամբ:*

– Ցավոք, այդպես էլ պետք է լիներ, քանի իշխանությունները նման անգլուխ քաղաքականություն են վարում: Չմտածված սեփականաշնորհում արեցին, ստեղծվեց (եթե հիշողությունս չի դավաճանում) շուրջ 360 հազար ֆերմերային տնտեսություն, ամեն մեկին բաժին հասավ 1,3 հա վարելահող՝ տեխնիկա չլինելու պայմաններում: Դրա համար վարելահողերի 40 տոկոսն այսօր բացարձակապես չի օգտագործվում, իսկ չօգտագործվող հողն էրոզիայի է ենթարկվում, որի արդյունքում հողատարածքներն անապատի են վերածվում: Ոչ թե հողը տվեցին գյուղացուն, այլ գյուղացուն հանձնեցին հողին: Այստեղ միայն Շինուհայրի, Տաթևի ենթաշրջանի, Հալիձորի, հարևան Մեղրիի, Սիսիանի, Կապանի

հարցը չէ: Միայն Ձեր ասած գյուղերին օգնություն ցուցաբերելով՝ վիճակը չի շտկվի: Ընականաբար, այս ամենը հաղթահարելու համար պետք է համակարգված լրջագույն ծրագիր ունենալ, ծրագրի հիմքում պետք է լինի օժանդակությունը և աջակցությունը գյուղացուն: Մենք ունենք այդ ծրագրերն ու համապատասխան հաշվարկները:

– Առաջիկայում ի՞նչ է հնարավոր անել:

– Նախ՝ տագնապի շեփոր կհնչեցնենք Ձեր ասածների մասին, երկրորդ՝ պատրաստվեք առաջիկա ընտրություններին, աշխատեք, որ գյուղապետեր ընտրվեն ոչ թե իրենց քաղաքացիության մասին միայն ընտրություններից ընտրություն հիշողները, այլև այն մարդիկ, ովքեր տապակվում են ժողովրդի ցավով ու դարդով: Իսկ առաջիկա նախագահական և խորհրդարանական ընտրություններին համոզված եղեք, որ անպայման հայրենասիրական ուժերը կգան իշխանության և ձեր ցավը կդարձնեն սեփական ցավ: Իսկ երբ մարդու սեփական օրգանիզմում ցավ կա, նա բուժման ճանապարհներն ավելի արագ է գտնում:

Դատարանում իրականացվում է ֆարս

– Քանի որ ԱՄՆ-ը պայքարում է ահաբեկչության դեմ ամբողջ աշխարհի մասշտաբով, ապա կարելի է՞ դիմել ԱՄՆ-ի կառավարությանը, որպեսզի նա բացահայտի հոկտեմբերի 27-ի կազմակերպիչներին և ձերբակալի, քանի որ մեր երկրում նրանք իշխանությունը զավթել են: Դրանով նախ՝ կվնասազերծի ահաբեկիչների խումբը, և Հայաստանում կհաստատի ժողովրդավարական իշխանություն, որը նույնպես ԱՄՆ-ի շահերից է բխում (Վարդան Ահարոնյան):

– Ես հասկացա հեգնանքը Ձեր հարցում, որը շատ տեղին է այն պարզ պատճառով, որ ժողովրդի, ազգաբնակչության գերակշռող մասը բացահայտ գիտի, թե «Հոկտեմբերի 27»-ի հետևում ովքեր են եղել, ինչ ուժեր են եղել, մինչդեռ դատարանում իրականացվում է ֆարս: Շատ տեղին եք ասում, որ եթե այս մարդիկ, այս իշխանություններն ի զորու չեն բացահայտելու այդ հանցագործության հետևում կանգնած մարդկանց, միգուցե իրո՞ք դրսից հրավիրենք: Կարծում եմ՝ դրսից հրավիրելու անհրաժեշտություն չի լինի, այդ դեպքերի հետևում կանգնած իրական կազմակերպիչներն ի հայտ կգան ճիշտ այն օրվանից, երբ կարողանանք ներկայիս ապազգային իշխանության բեռը թոթափել: Իսկ դա, որ լինելու է, համոզված եղեք, որովհետև սվիններով կարելի է գալ իշխանության, բայց սվինների վրա նստած երկար իշխանություն պահել անհնար է, ասեմ ավելին՝ թույլ չենք տա:

«Ամպոտ առաքյալներ»

– Ձեր ելույթները, որպես կանոն, սկսում եք Սուրբ գրքից մեջբերումներով: Փորձում եք ժողովրդին ներկայանալ որպես ամպոտ ոտքերով առաքյալ, որից հետո սկսում եք իշխանությունների, հատկապես նախագահի խարազանումը: Դա Ձեր անձնական գործն է,

ոչինչ չունեմ ասելու: Անկեղծ ասած, ես չեմ հավատում Ձեր անկեղծությանը, ասեմ՝ ինչու: 1998 թ. նախագահական ընտրություններում ձեր հեռուստաելույթներն սկսում էիք 1990 թ. մայիսի 27-ի կայարանամերձ հրապարակում հայտնի արյունալի դեպքերի տեսաժապավենի ցուցադրումով, որի նպատակը մեկն էր. Դուք այդ տեսաժապավենի վրա լավ էիք երևում, ինքնագովազդ էր: Դա անբարոյականություն էր, որովհետև էկրանից ևս մեկ անգամ ցուցադրվում էր հայ իրականության մեջ իր կատարման ճնով եզակի այդ ողբերգությունը (այդ օրը 31 մարդ կազմակերպված սադրանքի արդյունքում զոհվեց), էկրանից ցուցադրվում էին անմեղ զոհերի դիակները, որով կրկնակի անգամ հուզվում էին մեռածների հոգիները և ողջերի ծնողների հոգիները: Ոչ միայն չէր ասվում ճշմարտությունը կատարողների մասին, ավելին՝ նույնիսկ խաբում էին ժողովրդին: Մեջբերեմ Ձեր հեռուստաելույթից այս խոսքերը. «Ահագնացող ազգային-ազատագրական շարժումը ճնշելու համար Մոսկվան կազմակերպեց 90 թ. մայիսի 27-ի սադրանքը»... (Սոկրատ Հովսեփյան, իրավաբան):

– Դուք սխալվեցիք: Արդեն ինձ պարզ դարձավ, որ սա սարքված զանգ է, որովհետև տեսաժապավենը կա, և պատրաստ եմ Ձեզ նման ամպոտ առաքյալների համար մեր կուսակցության գրասենյակում ցույց տալ: Բարևեք այն մարդկանց, ովքեր Ձեզ կեղծ տեղեկատվություն են տվել: Դուք բացահայտ սուտ եք ասում: Ես այնտեղ ընդհանրապես չեմ խոսել՝ ի գիտություն Ձեզ: Այնտեղ միայն և միայն վավերագրական կադրեր են ցույց տրվել: Ես այդ տեսաժապավենը կտրամադրեմ նաև «Իրավունք» թերթի խմբագրության աշխատակազմին, որ ուշադիր նայեն և համոզվեն մի բանում. կան մարդիկ, ովքեր ուշի ուշով հետևում են Գեղամյանի ամեն քայլափոխին, փորձում են նենգափոխել Գեղամյանի քայլերը և նենգափոխված որպես ճշմարտություն հրամցնել ազգաբնակչությանը: Ձեր կեղծիքի ականջներն էշի ականջների նման երկար են և երևացող:

– Ձեր ելույթից անմիջապես երեք օր հետո «Մոլորակ» թերթում գրել եմ այդ առթիվ:

– 16 մարդ է զոհվել:

– 6-ը՝ կայարանում, 21-ը՝ Էրեբունի թաղամասում, որից հետո էլ մի գնդապետ վիրավորվեց, երկու ամիս հետո մահացավ Մոսկվայում:

– Ձեր ամբողջ տրամաբանությունը կառուցված է կեղծիքի վրա: Այդ դեպքը նկարահանված է ՀՀԾ օպերատորի կողմից: Վտանգելով մեր կյանքը՝ կանխեցինք մեծագույն արյունահեղություն, և այդ կանխողների մեջ, ի թիվս այլ մարդկանց, եղել եմ նաև ես: Դրա նախաձեռնողը ես եմ եղել, հետո ինձ հետ եղել են ներկայումս ԱԺ պատգամավոր Ռուբեն Գևորգյանը, Վարդան Հակոբյանը, կիլիկիացի Մացոն և Մանվել Քոչարյանը, որոնց գործողություններն այլ կերպ, քան հերոսական, ես չբնութագրել չեմ կարող, ինչը հասկանում եմ, որ Ձեզ հանգիստ չի տալիս:

Ղարաբաղի հարց

– Հանրապետությունում երևի մանուկներն էլ գիտեն, որ այսօրվա նախագահը եկել է իշխանության Ղարաբաղի հարցը լուծելու խոստումով: 4,5 տարի անցնելուց հետո

հիմնական բնակչությունը գիտի, որ այդ հարցը փակուղի է մտել, իսկ ապագան էլ ամեն դեպքում լինելու է ոչ Հայաստանի ու հայերի օգտին: Կա՛մ հարցի լուծումը լինելու է ոչ հայանպաստ, կա՛մ Հայաստանը մտնելու է պատերազմի մեջ: Ես հետևում եմ Ձեր ելույթներին նաև այդ հարցով և ուզում եմ դիմել Ձեզ՝ ինչո՞ւ միայն ասուլիսներում եք հարցը բարձրացնում, խոսում դրա մասին ու անցնում, իսկ ԱԺ-ում Ձեր խմբակցությունը, այլ խմբակցություններ, որոնք այդ հարցում Ձեզ կպաշտպանեն, չեք բարձրացնում այդ հարցը: Նույնիսկ Հուլիոս Կեսարը հաշվետու էր Սենատին, հիմա այս նախագահը մեր խորհրդարանի առաջ այդ հարցում գոնե պիտի հաշվետվություն տա՞, թե՞ ոչ: Ինչ տեսակ երկրորդական, տասներորդական, տասնհինգերորդական հարցեր ասես քննարկվում են ԱԺ-ում, դրանց մեծ մասը գզրոցներում քնում, կյանքի էլ չի կոչվում: Չե՞ք կարծում, որ այդ հարցը պետք է ԱԺ-ում լսվի:

– Դուք շատ տեղին, շատ ճիշտ հարց բարձրացրիք, ավելին, Ձեր դիտողությունը, որ ԱԺ-ում մինչև հիմա ԼՂՀ հիմնահարցի լուծման ուղիները չեն քննարկվել, դա էլ տեղին է: Նախ՝ Քոչարյանը չի եկել իշխանության, որ Ղարաբաղի հարցը լուծի, նա խաբել և զավթել է իշխանությունը, ժողովուրդն էլ հանդուրժել է՝ ենթադրելով, որ նա կարագացնի Արցախի հիմնախնդրի լուծումը: Ինչ վերաբերում է հայանպաստ կամ ոչ հայանպաստ որոշումներին, ապա բնական է, որ ոչ մի երկիր, առավել ևս Մինսկի խմբի համանախագահ երկրները, հաշվի չեն նստի Ռ. Քոչարյանի հետ, որին իրենք համարում են ոչ լեգիտիմ, անօրեն: Խոսքս մասնավորապես վերաբերում է Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտի՝ Կոնգրեսին հղած 2000 և 2001 թվականների տարեկան ուղերձներին, որտեղ հստակ գրված է, որ 1998 թ. ընտրություններին Քոչարյանի օգտին կեղծվել է ավելի քան 100 հազ. քվեաթերթիկ: Բնականաբար, նախագահը, որը կեղծիքներով է ընտրվել, ավելի ճիշտ՝ չի ընտրվել, այլ զավթել է այդ պաշտոնը, երբեք ու երբեք հեղինակություն չի վայելի այդ երկրների ղեկավարների շրջանում: Ուստի՝ մենք առաջիկայում պարտադրված ենք նախագահական, ինչպես նաև ԱԺ ընտրություններն անցկացնել ժողովրդավարության, ազնվության, արդարության, թափանցիկության պայմաններում, որպեսզի ընտրվածները (լինի դա ՀՀ նախագահ, թե ԱԺ պատգամավոր) իրականում լինեն ժողովրդի կամքը կրողները, այս դեպքում համոզված եղեք, որ ճիշտ նույն Մինսկի խմբի համանախագահ երկրներն իրենք շատ ավելի ուշադիր կլինեն ցանկացած այն մոտեցմանը, ցանկացած այն առաջարկին, որը կհնչի ժողովրդի կողմից ընտրված, ժողովրդականություն վայելող ղեկավարի կողմից: Իսկ ինչ վերաբերում է ոչ հայանպաստ որոշմանը կամ պատերազմական իրավիճակին, ապա հուսանք, որ առաջիկայում անցկացնելով ժողովրդական ընտրություններ՝ մենք կունենանք այնպիսի լուրջ փաստարկներ, որոնք կհամոզեն միջազգային հանրությանը, որ այդ հարցի խաղաղ լուծմանը և ոչ մի այլընտրանք չկա:

– Չե՞ք կարծում, որ վատ չի լինի, եթե այդ հարցը մեկ անգամ լսվի ԱԺ-ում:

– Միանգամայն ճիշտ եք: Ես կարծում եմ, որ դրա խիստ անհրաժեշտությունը կա: Պետք է ժողովրդին պարզ կերպով ասենք՝ ինչ հնարավոր լուծումներ ենք տեսնում, ինչպիսի լուծումներ են առաջարկում եռանախագահները, ինչ մոտեցումներ են

առաջարկում աղրբեջանցիները և նրանց թիկունքում կանգնած թուրքերը, որից հետո արդեն ժողովուրդը գոնե կողմնորոշիչներ կունենա, որոնց շուրջը կսկսվի համաժողովրդական քննարկումը, անհրաժեշտության դեպքում կանցկացվի հանրաքվե:

Ընտրողների թիվը օգոստոսի 8-ի դրությամբ կազմել է 2 մլն 200 հազար մարդ

– Առաջիկա թե՛ նախագահական, թե՛ խորհրդարանական ընտրություններում չե՞ք կարծում, որ եթե պետք է զեղծարարություն լինի, դա ոչ թե ընտրությունների ընթացքում է լինելու, այլ մինչև ընտրությունները (ընտրազանգվածին կաշառելու և այլ միջոցներով):

– Շատ սուր և տեղին հարց տվեցիք: Ցավոք, Ձեր ասածի նախադրյալներն արդեն կան: Իշխանություններն ամեն ինչ անում են, որ կեղծիքներ լինեն: Սրանից մեկ ամիս առաջ Ազգային վիճակագրական ծառայության փոխտնօրենը Հանրային հեռուստատեսությամբ ասաց, որ համակարգչային, ծրագրային ինչ-որ սխալ կա, ուստի իրենք չեն հասցնում խոստացած ժամկետում հրապարակել մարդահամարի արդյունքները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովում «Իրավունք և Միաբանություն» խմբակցության ներկայացնող Զավեն Պլուզյանը տեղեկացրեց, որ բոլոր մարզպետարաններից ստացվել են տեղեկանքներ ընտրողների թվի վերաբերյալ: Պարզվում է, որ Հայաստանում միայն ընտրողների թիվը օգոստոսի 8-ի դրությամբ կազմել է 2 մլն 200 հազար մարդ, մինչդեռ մենք շատ լավ գիտենք, որ այդքան ազգաբնակչություն արդեն իսկ Հայաստանում չի մնացել: Այս հարցը երկսայր սուր է. մի կողմից դա գոհացնում է մեզ, քանի որ իշխանությունները գիտակցում են, որ ազնիվ ընտրությունների պայմաններում իրենք Հայաստանում այլևս անելիք չեն ունենա: Նրանք վախեցած-սարսափած են: Եվ վախն է ստիպում, որ այսօրվանից սկսած՝ փորձում են այդ թիվը հրապարակ նետել, որ վաղն էլ, բնականաբար, շուրջ 700 հազար «մեռած հոգիների» հաշվին ընտրակեղծիքներ անեն: Դա նրանց չի հաջողվի: Մյուս կողմից՝ հարկ եմ համարում ասել և խնդրել ձեզ, որ այսօրվանից ձեր շրջապատի մարդկանց համոզեք, որ այդ ստի ու կեղծիքի առաջը մենք առնելու ենք, որ Հայաստանում երբեք ու երբեք չի կրկնվի այն, ինչ տեղի ունեցավ 1998 թ., երբ ընտրվեց Կարեն Դեմիրճյանը, իսկ իշխանության եկավ մեկ ուրիշը, որը բացարձակապես քվե չի ունեցել ոչ միայն իշխանության գալու, այլև նույնիսկ երկրորդ փուլ անցնելու համար:

Վարեց
Ռուսլան Թաթոյանը

«Իրավունք. հարց ու պատասխան», 13 – 15.VIII.2002:

Մեր դաշինքը զորանոցային համաձայնություն չէր, այլ երկու ինքնուրույն կուսակցությունների և անձերի դաշինք

Վերջերս «Ազգային Միաբանության» նախագահ Արտաշես Գեղամյանի հետ «Իրավունք» թերթի ընթերցողների հետ կայացած «Ուղիղ կապի» ժամանակ հարցերն այնքան շատ էին, որ դրանց բոլոր պատասխանները տեղ չգտան հրապարակման մեջ: Ձեզ ենք ներկայացնում այդ «Ուղիղ կապի» շարունակությունը:

– 1998 թ. նախագահական ընտրությունների երկրորդ փուլում Դուք պաշտպանել եք Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը: Ինչո՞ւ:

Ինչո՞ւ Դուք չմիացաք 13 ընդդիմադիր կուսակցություններին (Տիգրան Պողոսյան):

– Նախագահական ընտրությունների առաջին փուլից հետո հրապարակավ ելույթ եմ ունեցել, որը հեռարձակվել է Ազգային հեռուստատեսության առաջին ծրագրով: Ելույթի ժամանակ հստակորեն ասել եմ իմ դիրքորոշումը, որը հետևյալն է. «Ես կպաշտպանեմ նախագահի այն թեկնածուին, որը հրապարակայնորեն կխոստանա, որ օրենքի ուժով կպատժվեն երկրում թալան իրականացրած մարդիկ, ճանաչված մարդկանց աղմկահարույց սպանությունների հետևում կանգնած կազմակերպիչները, անօրեն փողերով դղյակ կառուցողները, երկրի ռազմաստրատեգիական, արդյունաբերության և կապի ճյուղերն օտարողները»: Այդ կտրվածքով ասել եմ, որ փոքր-ինչ հույս է ներշնչում Ռոբերտ Քոչարյանը, որովհետև վերջինս իր ընտրական խոստումներում ասել է, որ մարդասպանները, թալանչիները կդատվեն, թալանածը հետ կվերադարձնեն: Ավա՜ղ, այդպես չեղավ: Պարզապես այդ բոլոր ասածները, ինչպես մենք Ձեզ հետ համոզվեցինք, սուտ դուրս եկան, նա ոչ մի նախընտրական խոստում չկատարեց, ասեմ ավելին՝ այն թալանը, որ կար մինչև 1998 թ., է՛լ ավելի խորացավ, հանդուգն ու սահմռկեցուցիչ դարձան սպանությունները: Բնակչության սոցիալական ծայրահեղ բևեռացումն ավելի մեծ չափերի հասավ: Ես, ցավոք, 98-ին, փոքր-ինչ հույս կապելով Քոչարյանի հետ, չարաչար սխալվել եմ և շատ խիստ հուսախաբվել, ուստի կրկնակի եռանդով աշխատելու եմ իմ սխալն ուղղել, այն է՝ ամեն ինչ անել, որ օր առաջ թոթափվի Քոչարյանի բեռը, այս իշխանությունների լուծը:

Ինչ վերաբերում է 13 կուսակցություններին միանալ-չմիանալու հարցին, ապա այն բոլոր հարցադրումները, որոնք բարձրացված էին 13 կուսակցությունների կողմից (մասնավորապես «Ա1+», «Նոյյան տապան» հեռուստաընկերությունների բացման,

արդար, ազնիվ ընտրությունների անցկացման հետ կապված), հոգեհարազատ են «Ազգային Միաբանությանը», և մենք պաշտպանել ենք դրանք: Դրա հետ մեկտեղ մենք կողմնակից ենք, որ ոչ թե այս կամ այն առանձին (միգուցե շատ հրատապ և կարևոր) հարցերի շուրջ կազմվի համագործակցություն (13 կուսակցություններինը համագործակցություն է որոշակի հարցերի շուրջ), այլ ծրագրային հիմնադրույթների շուրջ, որոնց գերխնդիրը և նպատակը մեկն է՝ դուրս բերել Հայաստանն այս խոր, համընդհանուր ճգնաժամից: Ուստի, Ձեր հարցի մեջ ես տեսնում եմ նաև կոչ՝ անհրաժեշտ է, որ ընդդիմադիր բոլոր ուժերը միանան: Դա միանգամայն ընդունելի է, ավելին ասեմ՝ միանալը, դաշինք կազմելն իր հիմքում և հենքում պետք է ունենա լրջագույն հակաճգնաժամային ծրագիր, որը մատչելի և հասանելի կլինի այդ կուսակցություններին, իսկ որ ամենակարևոր և որոշիչն է՝ մեր ազգաբնակչությանը: Մեր կուսակցությունը տոգորված է այդ գաղափարով, լրջագույն աշխատանքներ ենք տանում , որ կարողանանք գոնե սեպտեմբեր ամսին հրապարակայնորեն հայտարարել, որ ժողովրդահայրենասիրական ուժերը համախմբվել են, համախմբման հիմքում դրված է հակաճգնաժամային ծրագիր, գիտականորեն մշակված, որն իրականացնող կուսակցությունները կազմում են նախընտրական դաշինք: Կանվանակոչենք այն մարդկանց, ովքեր կստանձնեն մեր ժողովրդին այս ծանր վիճակից դուրս բերելու պատվավոր, բայց դժվարին խնդիրը:

– «Իրավունք և Միաբանություն» խմբակցությունը գոյություն ունի՞:

– Ժամանակին, երբ լուրեր էին պտտվում Մարկ Տվենի մահվան մասին, նա հարկադրված էր ասուլիս հրավիրել և ասել. «Իմ մահվան մասին լուրերը չափազանցված են»: «Իրավունք և Միաբանություն» դաշինքի լուծարման մասին լուրերը չափազանցված են, դաշինքը գոյություն ունի, դաշինքի մայր ծրագիրը, բնականաբար, ուժի մեջ է, թե՛ ՍԻՄ-ը, թե՛ ԱՄ-ը այս 4 տարիների ընթացքում երբեք ու երբեք մայր դրույթներից չեն շեղվել: Այլ խնդիր է, որ տակտիկական այս կամ այն հարցի վերաբերյալ մեր մոտեցումներն երբեմն տարբերվել են: Իսկ դա բնական է, որովհետև մեր դաշինքը զորանոցային համաձայնություն չէր, այլ երկու ինքնուրույն, ժողովրդավարությամբ առաջնորդվող կուսակցությունների և անձերի դաշինք էր:

– Ե՞րբ եք հրապարակելու ձեր հակաճգնաժամային ծրագիրը, մենք շատ հույսեր ենք կապում դրա հետ:

– Ծրագիրը պատրաստ է, ծավալով 55 համակարգչային էջ է, ներկայումս հայերենից թարգմանվում է ռուսերեն, որ մենք կարողանանք այս ծրագրին իրազեկ պահել Ռուսաստանում բնակվող մեր հայրենակիցներին: Ամենայն հավանականությամբ, սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Ազգային Միաբանության» համագումարի ժամանակ, կհնչեցնենք այն, առանձին բրոշյուրով կտպագրենք և կխնդրենք մեր գործընկերներին, որ տպագրվի նաև «Իրավունք» թերթում: Դրանից հետո կսկսվեն լայն քննարկումներ այդ ծրագրի հիմնադրույթների շուրջ: Բացի այդ 55 էջից, 7-8 էջի վրա շատ համառոտ տրվելու են այն հիմնական արդյունքները, որոնց կհասնենք մենք, եթե կյանքի կոչենք ծրագրային հիմնադրույթները: Այդ արդյունքները մատչելի կլինեն մեր

ազգաբնակչության բոլոր խավերին, բոլոր բնագավառներում աշխատող մարդկանց:

– Կուզեի իմանալ Ձեր և ձեր կուսակցության կարծիքը Սամվել Բաբայանի մասին:

– Սամվել Բաբայանն այն եզակի ազգային հերոսներից է, որը պատիվ կբերեր ցանկացած ժողովրդի: Մեր կուսակցության կարծիքը նրա մասին ևս դրական է: Մի՞թե Սամվել Բաբայանի և Վազգեն Սարգսյանի օրոք հնարավոր կլիներ, որ մարտական որևէ հրամանատար պարտադրված լիներ նախագահական նստավայրից մեկ ուրիշ հրամանատարի վրա ցեխ շպրտել, մի՞թե հնարավոր կլիներ, որ բամբասանքը ներխուժեր հայոց ազգային բանակ, ընդ որում, թե՛ Արցախում, թե՛ Հայաստանում: Այդ նրանից է, որ երբ իրական հերոսները բեմահարթակից հեռացվում են, արդեն բեմահարթակ են գալիս մարդիկ, ովքեր երբեք ու երբեք չեն կարող կրել այն հատկանիշները, որոնք ներհատուկ են խրամատներում, այլ ոչ թե կաբինետներում իրենց հերոսությունը հյուսած մարդկանց: Ես համոզված եմ, որ մարտի 22-ին տեղի ունեցածը բացարձակ ոչ մի առնչություն չունի Սամվել Բաբայանի հետ: Մարդ, որը գրավել է բազմաթիվ խիստ ուժեղացված թշնամական միավորումներ, քաղաքներ, գյուղեր, ի՞նչ եք կարծում, եթե ուզենար մարդ վերացնել, այդպես ապաշնո՞րհ կաներ: Եվ ինչպե՞ս կարող է գնդակահարել և գնդակահարման թիրախ լինեն մարդու ոտքերը: Ոտքերն ավտոմեքենայի պատուհանից դուրս հանա՞ծ էին առավոտյան 6-ին շրջագայում Ստեփանակերտի փողոցներով: Բնականաբար, այդ ամենը շինծու էր, բնականաբար, այդ ամենը վաղ թե ուշ կպարզվի, և, որ ամենակարևորն է, հերոսին հերոս կասեն, իսկ հերոսին թշնամի դարձնողներին դավաճան դուրս կբերեն: Իհարկե, մեր խնդիրը ժողովրդի մեջ թշնամանք ներարկելը չէ, այլ՝ արդարության հաստատումը: Ես հավատում եմ Սամվելի օրինական արդարացմանը, ես հավատում եմ Սամվելի ապագային:

– Եթե Դուք իշխանության գաք, պատասխանատվության կենթարկե՞ք այն մարդկանց, ովքեր աղավաղել են մարդահամարի արդյունքները (Սերգեյ Մելքոնյան):

– Անշուշտ, ես կնպաստեի, որ իրավապահ մարմինները կատարեն անաչառ քննություն, խնդիր ունենալով, թե որ պաշտոնյաների կողմից է հրահանգվել կատարել նման մեծամասշտաբ զեղծարարություններ, կպարզեի, թե ինչու, ունենալով այդքան ժամանակ, ներքին գործերն իրենց անձնագրային ստորաբաժանումներով չբռնեցին զեղծարարների ձեռքը: Մարդահամարի տվյալների կեղծումը ոչ այլ ինչ է, քան լրջագույն պետական հանցագործություն, որը դնում է հիմքեր առաջիկա ընտրություններում բռնանալու ժողովրդի կամքի վրա, ընտրելու, ընտրվելու սահմանադրական իրենց իրավունքի վրա: Դա նշանակում է նաև, որ «հիմքեր» են ստեղծվում բռնի ուժով դարձյալ գրավելու իշխանությունը: Էլ չենք խոսում այն մասին, որ արհեստականորեն հիմքեր են ստեղծվում ուռճացնելու կենսաթոշակառուների և նպաստառուների թվերը, որոնց անունով էլ դուրս կգրվեն միլիարդների հասնող գումարներ և կյուրացվեն: Դա կնշանակի նաև, որ փորձ է նախապատրաստվում բռնի ուժով, կեղծիքներով դարձյալ գրավել իշխանությունը, որովհետև եթե այսօր իսկ առնվազն 650-700 հազար մարդ հավելագրում են անում (որոնք իբր պետք է ընտրություններին մասնակցեն), դա արդեն իսկ առաջիկա

պետական հեղաշրջման փորձ է, դրա հիմքերը դրվում են: Իսկ դա ծանրագույն հանցագործություն է:

– Դուք ասում եք՝ ամեն ինչ հնարավոր է սահմանադրական ճանապարհով ուղղել, հասնել արդյունքի, բայց որքա՞ն կարելի է այս իշխանություններին հանդուրժել: Ոչ տեղ մնաց, ոչ մարդ մնաց, դանակը ոսկորին է հասել: Այդ օրենքը հո մենակ Ձեր ու մեր համար չէ՞, նրանց համար օրենք չկա՞:

– Երբ ասում ենք սահմանադրական ճանապարհով, դրան իշխանությունը հակադրում է բռնություններ: Եթե մենք խոսենք հակասահմանադրական ճանապարհի մասին, որովհետև, իրոք, դանակը ոսկորին է հասել, ապա մենք մեծագույն ներ կմատուցենք Ռոբերտ Քոչարյանին. նրանք այդ պահին են սպասում, որ վաղը, մյուս օրն իրենց արյունալի գործողությունները քողարկեն արդեն օրինախախտումների դեմ պայքարի անվան տակ: Ասեն՝ ընդդիմությունը ոտնահարեց օրենքի այս, այն պահանջը, Սահմանադրության այս հոդվածը: Այդպիսի ներ չենք մատուցի Ռոբերտ Քոչարյանին, այն էլ այս վճռական փուլում, երբ ակնհայտ է, որ ինքը ձախողվել է և որպես նախագահ պետք է հեռանա: Եվ հավատացնում եմ Ձեզ, դա վախի դրսևորում չէ, դա հաղթանակի գրագետ կազմակերպման անհրաժեշտ պայմանն է: Քոչարյանը գնալու է: Տառապել ենք այսքան տարի, բայց քիչ մնաց:

– Մեր իշխանությունների կեղծ թվերը գնալով աճում են (Լևոն Պողոսյան):

– Ճիշտ եք ասում, որ այս իշխանությունների բոլոր բերած թվերը բացահայտ կեղծիք են, որովհետև չի կարող լինել այնպիսի երկիր, ուր երկանիշ թվերով համախառն ներքին արդյունքի աճ է իբր արձանագրվում, բայց ոչ մի քաղաքացի իր կենցաղում այդ ամենի պտուղները չի ճաշակում (չհաշված Քոչարյանի կլանը): Չի կարող 10% և ավելի աճ լինի, բայց շահութահարկի, եկամտահարկի գծով անգամ իսկ չհասնեն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշներին:

– Դուք վերջերս հայտարարել էիք, որ չեք խառնվելու ղարաբաղյան նախագահական ընտրություններին, բայց չէ՞ որ Դուք միշտ հանդես էիք գալիս Արկադի Ղուկասյանի սուր քննադատությամբ:

– Ես մի քիչ ուրիշ կերպ եմ ասել: Ասել եմ, որ Արցախի ժողովուրդն արդար, ազնիվ, թափանցիկ, ժողովրդավարական ընտրությունների ժամանակ ում էլ որ ընտրեց, այդ ընտրվածն ընդունելի է ինձ համար:

– Եթե ժամանակին Ռոբերտ Քոչարյանը Ձեզ նշանակեր վարչապետ, ինչպե՞ս էիք աշխատելու նրա հետ. չէ՞ որ Դուք նրան խիստ քննադատում եք:

– Նախևառաջ Ռոբերտ Քոչարյանի կլանի բոլոր մարդկանց կբերեի օրենքի դաշտ: Վեր կհանվեին հանրապետության կոռուպցիայի հիմնադիր հայրերը: Մենաշնորհային ճյուղերը կճեղքվեին և կստեղծվեին հավասար պայմաններ բոլորի համար: Չեռներեցն իրեն կզգար պաշտպանված Հայաստանի կառավարության կողմից: Մի խոսքով, կարվեր ամեն բան փակելու անօրինականությունների ճանապարհը, որ վերականգնվեր մարդկանց հավատը կառավարության, պաշտոնյաների նկատմամբ: Ջիջումներ չէին

արվի ո՛չ ղարաբաղյան ծագում ունեցողներին, ո՛չ հայաստանցիներին, ո՛չ էլ սփյուռքի մարդկանց՝ անկախ բարեկամական կապերից: Օրինազանցների նկատմամբ կկիրառվեր օրենքը: Գիտակցելով այդ ամենը՝ Ռ. Քոչարյանը վարչապետ նշանակեց մեկ այլ մարդու:

– *Իսկ եթե հիմա նախագահը Ձեզ խոստանա վարչապետի պաշտոնը, Դուք կմասնակցե՞ք նախագահական ընտրություններին որպես թեկնածու:*

– Միայն մի պայմանով, եթե նա ասի, որ ինքը հրաժարական է տալու, ես էլ կխոստանամ, որ ես էլ նախագահականին չեմ մասնակցելու, պարզապես ապահովելու եմ ազատ, արդար ընտրություններ: Այսինքն՝ լինի ճիշտ այն նույն տարբերակը, որը տեղի ունեցավ Ռուսաստանում, երբ նախագահ Ելցինը իշխանության ղեկը զիջեց Պուտինին: Ի տարբերություն Վլադիմիր Պուտինի, այդ տարբերակում ես իմ թեկնածությունը չեմ դնի նախագահական ընտրություններին, եթե ժողովուրդը, իհարկե, չպարտադրի այն:

– *Դա Քոչարյանի դեպքում, իսկ եթե ընդդիմության թեկնածուն լինի մեկ ուրիշը, Դուք կդնե՞ք Ձեր թեկնածությունը:*

– Եթե ծրագրային հենքը, որի վրա կընտրվի միասնական թեկնածու, հոգեհարազատ կլինի ինձ, բնականաբար, ես այդտեղ խնդիր չեմ տեսնի: Բայց եթե նրա ծրագրային հիմունքները, հիմնադրույթներն որոշակի կասկածներ առաջացնեն ինձ մոտ, բնականաբար, ես կառաջնորդվեմ իմ ծրագրով:

Ռուսլան Թաթոյան

«Իրավունք», 23 – 26.VIII.2002:

Քոչարյանը կաշխատի մեզ պառակտել

Արտաշես Գեղամյանը, սակայն, հավատում է ընդդիմության հաղթանակին

Երբ ստորագրվեց 16 կուսակցությունների միավորման քաղաքական հայտարարությունը, «Ազգային Միաբանության» նախագահ Արտաշես Գեղամյանը գտնվում էր ՀԱՀ մայրաքաղաք Յոհաննեսբուրգում: Վերջինս ասում է, որ ինքը հեռախոսով անընդհատ հետևում էր իրադարձությունների զարգացմանը և վստահ էր, որ միավորման ստեղծումն այլընտրանք չունի: «ԱՄ» նախագահը վերը նշված իրադարձությունը կարևոր հանգրվան է համարում ընդդիմության վերջնական հաղթանակի ճանապարհին: Իսկ նրան ուղղված մեր հարցերը վերաբերում են այդ նույն ընդդիմության անցած ճանապարհին և հետագա անելիքներին:

– Պարոն Գեղամյան, «Ազգային Միաբանությունը» ժամանակին հրաժարվեց միանալ 13-ի ֆորմատին, բայց դարձավ 16-ի միավորման նախաձեռնողներից մեկը: Ի՞նչն է նման պահվածքի պատճառը:

– Ընդդիմության միավորման գործընթացը զարգացում է ապրում: Սկզբում 3 կուսակցություններ գտան, որ ներկայիս վարչակարգը ոչ այլ ինչ է, քան մեծագույն խոչընդոտ Հայաստանի զարգացման ճանապարհին: Հետագայում մենք ականատեսը դարձանք հակաժողովրդական զարգացումներին, երբ փակվեցին «Ա1+» և «Նոյյան տապան» հեռուստաընկերությունները: Եռյակի առաջ քաշած պահանջին միացան ևս 11 կուսակցություններ և հայտարարեցին, որ կատարվածը տոտալիտար վարչակարգի գործողությունների հետևանք է: «Ազգային Միաբանությունը» այդ նույն ընթացքում ԱԺ ամբիոնից հանդես է եկել քաղաքական հայտարարությամբ, որն իշխանությունները հարկադրված էին հեռարձակել Ազգային հեռուստատեսությամբ: Ավելին, «ԱՄ» քաղաքական հայտարարությունը հանձնվել է ԵԽ ամենաազդեցիկ ղեկավարներից մեկին՝ Վալտեր Շվիմերին: Այնտեղ հստակ հիմնավորումներ կային Քոչարյանի անօրինական գործողությունների վերաբերյալ: Կարծում եմ, որ մեր աշխատանքը յուրովի լրացրեցին 13-ի կողմից կատարած միջոցառումները: Իսկ ներկա միավորումն ընդդիմության համախմբման նոր փուլ է և պայմանավորված է առաջիկա նախընտրական շրջանով:

– Այնուամենայնիվ, 13-ը պահանջում էին ոչ միայն խոսքի ազատության պաշտպանություն, այլ նաև իշխանափոխություն:

– Ասվածին ուզում եմ հավելել նաև, որ այն ժամանակ դեռ չէր ավարտվել խոստացված համընդհանուր ճգնաժամի հաղթահարման ծրագրի մշակումը: Իսկ մեզ համար կարևորը ոչ միայն Քոչարյանի վարչակազմի տապալումն է, այլ նաև պետք էր ցույց տալ այն միջոցները, որոնք կյանքի կոչելով՝ հնարավոր է երկիրը դուրս բերել այս վիճակից: Այժմ, երբ յուրաքանչյուր քաղաքացի պարզորոշ կերպով տեղեկացած կլինի, թե ծրագրի յուրաքանչյուր հիմնադրույթի կատարման դեպքում ինքը և իր ընտանիքի անդամներն ինչ դրական տեղաշարժ կունենան կամ ինքն ինչ դերակատարում կունենա իր կյանքը բարելավելու գործում, կլուծվի մեր պետության ամենավտանգավոր խնդիրը. կհաղթահարվի անտարբերությունը և անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ: Կարծում եմ, այդ ծրագրում եղած հիմնադրույթները հոգեհարազատ կլինեն թե՛ ազատական, թե՛ համայնավարական քաղաքականություն քարոզող կուսակցություններին: Դա Գեղամյանի հնարքը չէ, դա սոցիալական-շուկայական տնտեսության մոդելն է, երբ գործող օրենքները պարտավորեցնում են սեփականատիրոջն իր սեփականությունը ծառայեցնել ոչ միայն ունեցվածքը կրկնապատկելուն, այլ նաև հասարակական շահերին:

– Ձեր ընդդիմախոսները պնդում են, որ այս միավորումը ոչ թե հանուն ինչ-որ նպատակների իրականացման է, այլ ընդդեմ մեկ անձի՝ Քոչարյանի:

– 16-ի մեջ կան թե՛ ազատական, թե՛ համայնավարական, թե՛ սոցիալական, թե՛ շուկայական տնտեսության ջատագովներ: Բայց նրանք բոլորը գիտակցում են, որ պատասխանատու են ժողովրդի ապագայի առաջ, պատասխանատու են իրենց զավակների, ծնողների առաջ, պարտավոր են երկիրը դուրս բերել ներկա վարչակարգի ստեղծած մղձավանջից: Եթե հետևենք իրենց քաղաքական գործիչ հորջորջող որոշ մարդկանց տրամաբանությանը, ապա սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող Թոնի Բլերի կառավարությունը վաղուց պետք է Բրիտանիան հռչակած լիներ սոցիալիստական, էլ չենք խոսում Գերմանիայի կանցլեր սոցիալ-դեմոկրատ Գերհարդ Շրյոդերի մասին: Քաղաքագիտական կրթվածության որոշակի մակարդակ ունեցող մարդիկ վաղուց գիտեն, որ համաշխարհային ներկայիս զարգացումները խիստ պայմանական են դարձրել քաղաքական ուժերի բաժանումը՝ աջերի, ձախերի և կենտրոնամետերի: Այստեղ անհրաժեշտ է տեսնել մեկ ուրիշ վտանգ: Ներկայիս վարչակարգը կանի բազմաթիվ փորձեր՝ միավորման ներսում նման անպտուղ քննարկումներ ծավալելու համար, միավորման մաս կազմող կուսակցությունների ուժերը գուցեև արդիական հնչեղություն ունեցող խնդիրների վրա փոշիացնելու համար՝ դրանով իսկ միավորմանը շեղելով բուն նպատակից՝ Քոչարյանի վարչակազմի հեռացումից:

– 16-ի միավորման մեջ կան կուսակցություններ, որոնք ուղղակի կախվածություն ունեին կամ ունեն իշխանություններից:

– Մեր կողմից ընդունելի է քաղաքական ցանկացած ուժ, որի վերջնական նպատակը ժողովրդի բարեկեցությունն է և այդ նպատակից հետ չի կանգնել: Կան քաղաքական ուժեր, որոնք հավատացել են այն մարդկանց, որոնք շռայլ խոստումներ էին տալիս, սակայն հետագայում պարզվեց, որ դրանք ոչ այլ ինչ էին, քան ստոր խաբեություն,

նախընտրական խոստում: Եթե քաղաքական այդ ուժերը վերանայել են իրենց մոտեցումները և հասկացել, որ հանրապետության զարգացման միակ խոչընդոտն այդ խոստումների հեղինակ ներկա իշխանություններն են, պետք է ողջունել այդ կուսակցություններին: Ի վերջո, նրանք չեն հրաժարվել մայր գաղափարից՝ կառուցել բարգավաճող Հայաստան:

– Այսինքն, 16 կուսակցություններն էլ անկեղծորեն ցանկանո՞ւմ են Քոչարյանի վարչակազմի հեռացումը:

– Այն փաստը, որ հանձինս իրենց լիդերների 16 կուսակցություններ ստորագրել են նման փաստաթուղթ, խոսուն ապացույցն է նրանց ցանկությունների: Այլ խնդիր է, որ տառապանքներս փորձ ունեն, և հասկանալի է, որ Քոչարյանն իր քաղաքական կյանքն երկարաձգելու համար կփորձի խժդժություններ մտցնել 16-ի մեջ, կասկածամտություն փաթաթել լիդերներից յուրաքանչյուրի նկատմամբ: Բայց ուզում եմ հիասթափեցնել պարոն Քոչարյանին: Միացողը ոչ այնքան 16 կուսակցություններն են: Ժողովուրդն է նրանց ստիպել և պարտադրել միավորվել, իսկ նրանք գիտակցել են, և դա հասարակական լրջագույն պահանջ է, որից խուսափողը պետք է տնտեսական խանութից մի կողպեք գնի և փակի իր կուսակցության դուռը՝ վրան գրելով. *"Закрыто навсегда"*:

– Միավորման թիվ մեկ խնդիրը միասնական թեկնածուի ընտրության հարցն է: Հնարավո՞ր է, որ այն դառնա միավորման պառակտման պատճառ:

– Պարոն Քոչարյանն արդեն իր ողջ վարչական և քարոզչական մեքենան նպատակաուղղել է 16 կուսակցությունների միավորման պառակտմանը: Սա պետք է գիտակցենք բոլորս: Բացի այդ, մեր ներսում պետք է լինի համակարգված այնպիսի պայմանավորվածություն, որը թույլ չի տա ոչ մի շեղում որդեգրված ծրագրից, նույնիսկ իշխանափոխությունից հետո: Նախօրոք պետք է որոշել, թե յուրաքանչյուր կուսակցություն՝ նրա ղեկավարը առավել լավ, որ դերակատարությունը կարող է ստանձնել հայրենիքի վերածննդի գործում, որն է իրեն առավել հոգեհարազատ՝ արտաքին քաղաքականությո՞ւնը, պաշտպանությո՞ւնը, տնտեսությո՞ւնը, թե դրանց համակարգումը: Պետք է գիտակցել, որ 16 կուսակցություններում կան առնվազն 7-8 անհատներ, որոնք կարող են երկիրն անհամեմատ ավելի լավ ղեկավարել, քան ներկա նախագահը և նրա վարչակարգը:

– Ինչպե՞ս է 7-8-ից ընտրվելու մեկը: Իսկ մյուսների հավակնություննե՞րը:

– Դա էլ է բնական: Ուղղակի յուրաքանչյուրը պետք է գնահատի իր հնարավորությունները, անցած ճանապարհը, կամքի ուժը: Եվ յուրաքանչյուրը պետք է հասկանա, որ ինքը վերին արտի ցորեն չէ, և մեր ընդհանուր նպատակը Հայաստանի վերածնունդն է: Այդ դեպքում միասնական թեկնածուն անպայման ի հայտ կգա:

– Դուք պատրա՞ստ եք լինել միասնական թեկնածու և պատրա՞ստ եք չլինել միասնական թեկնածու:

– Ես պատրաստ եմ մինչև վերջ կյանքի կոչել մեր կուսակցության ծրագիրը, իսկ թե ինչ դերակատարություն կվերապահվի ինձ, ցույց կտա ժամանակը:

Ավետիս Քաբաջանյան

«Հայկական ժամանակ», 4.IX.2002:

Սա՛ է մեր տեսլականը

– *Պարոն Գեղամյան, արդյոք Ձեր հրապարակած հակաճգնաժամային ծրագիրը ստացա՞վ այն արձագանքը, որն ակնկալում էիք, հորդորելով Ձեզնից «մի քանի քայլ ետ մնացած» կուսակցություններին՝ առաջարկներով հանդես գալ:*

– Անշուշտ, բազմաթիվ արձագանքներ եղել են ծրագրի հետ կապված, որոնք ոգևորում են մեզ: Մեր հայրենակիցները մտածում են երկրի մասին՝ ինչպե՞ս դուրս գալ ճգնաժամից, սոցիալ-տնտեսական ծանր վիճակից, մարդիկ քաջալերում են «ԱՄ» կուսակցությանը, մասնավորապես՝ ինձ, հորդորում, որ ընտրած ուղուց ոչ մի պարագայում որևէ շեղում կամ նահանջ չլինի:

– *Բայց այս ծրագրում միայն նպատակներ են. ուղիներ, կարծես, չկան:*

– Ծրագիրն առաջին քայլն է այն մեծ ճանապարհի, որը մենք նախանշել ենք և որով հետևողականորեն գնալու ենք: Առաջիկա մեկ ամսվա ընթացքում կհրապարակվի ծրագրային հիմնադրույթները կյանքի կոչող լծակների, մեխանիզմների, կազմակերպական աշխատանքների մասին մանրամասն վերլուծություն, որպեսզի մարդիկ պատկերացում ունենան, որ ծրագրային հիմնադրույթներն ոչ թե բարի ցանկությունների շարք են, այլ խորը մտածված եզրակացությունների արդյունք, որը կյանքի կոչելու ուղիներն ենք ցույց տալու: Առարկայորեն բացատրելու ենք՝ ինչպես հասնել այն խնդիրների լուծմանը, որոնք արծարծված են ծրագրում: Եվ երրորդ փուլում հրապարակելու ենք, թե ինչ ժամկետներում ենք նախատեսում ծրագրի իրականացումը, և ամենակարևորը՝ գործնականում ի՞նչ կտա այն տարբեր խավերին՝ թոշակառուներն ի՞նչ կստանան, բյուջետային հիմնարկների աշխատակիցներն՝ ինչ, մանր ու միջին բիզնեսմեններն՝ ինչ, խոշոր ձեռնարկատերերը և այլն...

– *Երրորդ փուլը ե՞րբ եք հրապարակելու:*

– Երրորդ փուլը կլինի դեկտեմբերին՝ նախագահական ընտրությունների գործընթացների մեկնարկի հետ միաժամանակ: Մեր ծրագրով մենք պնդում ենք, որ ապագան կերտողն ինքը՝ հայ մարդն է: Եվ հենց ինքն իր կենցաղային մակարդակը, սոցիալական վիճակը շեշտակի կբարձրացնի իր քրտնաջան աշխատանքով, իսկ թե յուրաքանչյուրն իր ոլորտում ի՞նչ պետք է անի, մենք պարզորոշ ցույց կտանք մեր երկրորդ և երրորդ փաստաթղթերում:

– *Իսկ տեղական ինքնակառավարման համակարգն անտեսելու դիտողության մասին ի՞նչ կասեք:*

– «Հանրապետություն» կուսակցության կողմից դիտողություն է եղել, որ տեղական

ինքնակառավարման մարմինների աշխատանքների հնարավոր զարգացումներն ընդհանրապես չեն արծարծվել: Դիտողությունը տեղին է, սակայն մենք միտումնավոր այն չենք արծարծել, որովհետև եթե հարց է առաջ գալիս՝ ինչպիսի՞ երկիր ունենալ՝ նախագահական, պառլամենտական, թե կիսանախագահական, այդ մայր խնդրի լուծումով է պայմանավորված, թե ինչպիսին պիտի լինեն ՏԻՄ-երը, օրենսդրական ի՞նչ դաշտում պիտի գործեն:

– Ո՞րն է «Ազգային Միաբանության» գաղափարախոսությունը:

– Մեր կուսակցությունը սոցիալական-շուկայական տնտեսության գաղափարակիր է: Դա տնտեսություն և համակարգ է, որը հիմնվել է հետպատերազմյան Գերմանիայում, որի պայմաններում հրաշագործ Լյուդվիգ Էրխարդը կարողացավ Գերմանիան մոխիրներից դուրս բերել կայուն զարգացման ճանապարհ: Այդ ամենը հստակորեն գրված է մեր կուսակցության, ինչպես նաև այս հակաճգնաժամային ծրագրում: Ես բացարձակապես մեղավոր չեմ, որ այս կամ այն լրագրողն ամենևին ծանոթ չէ Լյուդվիգ Էրխարդի տեսությանը, որ չի պատկերացնում, թե կարելի է ժողովրդի լայն զանգվածներին հոգեհարազատ գաղափարախոսություններից վերցնել միջուկը, որի շուրջ հնարավոր կլինի կոնսոլիդացնել ամբողջ ազգը: Ուզում եմ շեշտել, որ մեր ծրագիրը շատ գիտնականների և ակադեմիկոսների կողմից բարձր գնահատականների է արժանացել:

– Պարոն Գեղամյան, Ձեր այս ծրագիրը մի փոքր լայնացրած տարբերակն է դեռ 2000թ. «Հայոց Աշխարհում» տպագրվածի:

– Առանցքն ու գաղափարական հենքը, բնականաբար, պիտի նույնը լինեն: Բայց եթե դուք ուշադիր ընթերցեք, կտեսնեք, որ թե բարձրացված հարցերի շրջանակն է մեծացել, թե բովանդակության մեջ շեշտակի փոփոխություններ կան, ծավալը 3 անգամ ընդարձակվել է: Այսինքն՝ նոր հարցադրումներ կան, նոր խնդիրների վրա է ուշադրություն սևեռված: Փոփոխություններ կան հարկային, դրամավարկային քաղաքականության, արտաբյուջետային միջոցների բնագավառներում: Այս բոլորը տրված են նոր մեկնաբանություններով, որովհետև 2000թ. հետո ՀՀ-ում լրջագույն բացասական փոփոխություններ են եղել: Նոր գլուխներ կան հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ, պետության կարգավորիչ դերի բարձրացման մասին և այլն: Կան հստակ ձևակերպված խնդիրներ, որ մինչ օրս ոչ մի կուսակցության ծրագրում չեմ հանդիպել, իսկ ես բոլոր ծրագրային փաստաթղթերը (հրապարակում եղած) ուշադիր ուսումնասիրել եմ:

– Ե՞վ...

– Թող տպավորություն չստեղծվի, թե չեն կարող լինել այլընտրանքային ծրագրեր, որ սա մի եզակի ծրագիր է: Մենք ուղղակի ասում ենք՝ սա՛ է մեր տեսլականը, սրա՛նք են մեր մոտեցումներն այդ տեսլականին: Ոչ մի սկզբունքային դրույթ հերքող առարկություն դեռ չենք ստացել, և դա մեզ ոգևորում է և համոզում, որ ճիշտ ճանապարհի վրա ենք: Եվ այդպես էլ պետք է լիներ, որովհետև ծրագիրը մշակելիս օգտագործվել է 77 անուն գիրք, ընթերցվել է 14570 էջ գրականություն, մշակվել են պարբերական մամուլում զետեղված ամենաժամանակակից տեսությունները (թվարկում է ամսագրերի անունները. – *Մ. Բ.*),

օգտվել եմ կլոր սեղանների լուսաբանումներից, որ կազմակերպում են ռուսաստանյան ամենատաղանդավոր մակրոէկոնոմիստները (թվարկում է ամենատաղանդավոր մակրոէկոնոմիստների անունները. – *Մ. Բ.*), որոնք ուղղված են անցումային շրջան ապրող երկրների անցումային էկոնոմիկայի ամենախորը վերլուծություններին: Իմ կողմից մշակվել և ուսումնասիրվել են ... (գիտնականների և տնտեսագետների անունների երկար շարք. – *Մ. Բ.*) աշխատությունները, գիտական աշխատությունները... Այս ցանկը ես անգիր հիշում եմ, որովհետև ամիսներ շարունակ եմ դրանով զբաղվել: Մի ամբողջ շարք նյութեր ես պարզապես կոնսպեկտավորել եմ և կարող եմ ցույց տալ այդ կոնսպեկտները: Կարելի էր թվարկածս 77 անվանումները գրել ծրագրի ետևում, բայց սա գիտական թեզ չէ, այլ ծրագիր, որը կազմված է լրջագույն վերլուծությունների արդյունքում և տեղայնացված ՀՀ պայմաններին:

– Ձեր նախորդ ծրագիրը հրապարակվեց 2000-ի մայիսին, երբ երկրում անհանդուրժողականության և անվստահության մթնոլորտ էր. Արամ Սարգսյանն արդեն վարչապետ չէր և չէին լռում նոր վարչապետի հնարավոր թեկնածությունների մասին խոսակցությունները: Կարծիքներ կան, որ այդ ծրագիրը նպատակ ուներ վարչապետի թափուր աթոռը զբաղեցնելու ճանապարհը դառնալ:

– 2000 թ. մայիսին, երբ արդեն իսկ նշանակված էր վարչապետը, ծրագրված էր անցկացնել «ԱՄ» երկրորդ համագումարը, որի օրակարգում էր նաև ծրագրային փոփոխությունների հարցը: Այնպես որ՝ դա կապել վարչապետի թափուր պաշտոնի հետ, առնվազն պայմանավորված է հիշողության կորստով, որովհետև մայիսի 25-ին էր մեր համագումարը, իսկ վարչապետը նշանակվել է մայիսի 11-ին: (Ճշտում՝ վարչապետը նշանակվեց մայիսի 12-ին, «ԱՄ» ծրագիրը հրապարակվեց ճիշտ նույն օրը. – *Մ. Բ.*): Մեր առաջին ծրագիրը գրվել էր 1997-ին, իսկ մինչև 2000 թվականը որոշակի փոփոխություններ եղան ՀՀ ներքին կյանքում. իշխանափոխություն տեղի ունեցավ, որը, ցավոք սրտի, հետագայում պարզեցինք, որ ոչ մի իշխանափոխություն էլ չէր, պարզապես մի հհշ-ականին փոխարինեց մյուսը:

– Շարունակո՞ւմ եք պնդել, որ նրանց միջև պայմանավորվածություն կար:

– Անշուշտ, այո՛:

– Ունե՞ք փաստեր, թե զուտ ենթադրությունների հիման վրա եք պնդում:

– Իրենց գործողություններն ամենացցուն և համոզիչ փաստերն են: Համադրեք և կտեսնեք: Պայմանավորվածությամբ իշխանությունը հանձնեցին Քոչարյանին:

– Հիմա՞ էլ են պայմանավորված:

– Անշուշտ, անշուշտ:

– Դա՞ էլ եք «համադրությունների» հիման վրա պնդում:

– Սրանք ենթադրություններ չեն: Այն, ինչ որ Քոչարյանը խոստացավ անել՝ հաջողությունների հասնել ղարաբաղյան հարցի լուծման մեջ, չկարողացավ՝ ձախողեց: Եվ քանի որ երկուսն էլ նույն «բնից» են, բնականաբար, իրենց շատ ավելի հոգեհարազատ է իշխանությունը տալ Լ. Տեր-Պետրոսյանին, որովհետև եթե գա 3-րդ ուժը, նա, այն բոլոր արատ-

ներն ու հանցագործությունները, որ տեղի են ունեցել նախորդ և ներկա իշխանությունների օրոք, բացահայտելու է, և մեղավորներն օրենքի ամբողջ խստությամբ պատժվելու են: Արտաշես Գեղամյանը ոչ հհշ-ական, ոչ էլ քոչարյանական վարչակազմում չի եղել, Գեղամյան Արտաշեսը ոչ նախկին թալանի մասնակից է, ոչ ներկայիս շարունակվող թալանի և սպանությունների, ուստի, բնականաբար, ես վտանգ եմ ներկայացնում: Եվ ճիշտ են անում, որ վախենում են, որովհետև գիտեն, որ ինձ ոչ իմ ընտրած ճանապարհից կարող են շեղել, ոչ էլ իմ խոստացած արդարություն հաստատելու կամքը թուլացնել:

– 1999 թ. խորհրդարանական ընտրություններից առաջ «Իրավունք և Միաբանություն» դաշինքը հրապարակեց իր նախընտրական ծրագիրը: Ձեր դաշինքն, այնուամենայնիվ, խորհրդարան մտավ և որոշակի իշխանություն, կարելի է ասել, ունի: Ձեր նախընտրական բազմախոստում ծրագրի դրույթներից ինչ-որ բան կատարե՞լ եք:

– 99 թ. խորհրդարանական ընտրություններից հետո իմ թեկնածությունն էլ էր երջանկահիշատակ Կարեն Սերոբիչի հետ դրված՝ որպես ԱԺ նախագահ, և ես հանդես եկա ծրագրային ելույթով: Տրվեցին բազմաթիվ հարցեր, որոնք ստացան սպառիչ պատասխաններ: Իր եզրափակիչ խոսքում Կարեն Սերոբիչն ասաց. «Մենք պիտի բոլոր խելացի ծրագրային հիմնադրույթները, իսկ այդպիսիք շատ են, վերցնենք մեր զինանոցում՝ անկախ նրանից, թե ում կողմից է ասվում՝ դիմության, թե ընդդիմության»: Այդ տեսաժապավենը ես տանը պահում եմ՝ որպես հուշ Կարեն Սերոբիչի մասին և որպես գնահատական մեր ծրագրի: Բայց, ավա՜ղ, արյունալի հոկտեմբերի 27-ից հետո գործադիր իշխանության եկան մարդիկ, ովքեր չէին կարող ունենալ Կարեն Սերոբիչի լայնախոհությունն ու գիտելիքները, որոնց սինթեզի արդյունքում նա այդ գնահատականն էր տվել մեր ծրագրին: Ինչ վերաբերում է՝ մենք պայքարել ենք, թե չէ, որպեսզի մեր ծրագրային հիմնադրույթները կյանքի կոչենք, ասեմ, որ հանրապետության բյուջեի 1999, 2000, 2001 թթ. նախագծերի քննարկումների ժամանակ «Իրավունք և Միաբանություն» դաշինքի բոլոր պատգամավորները ելույթ են ունեցել, իսկ ես երկու ելույթ եմ ունեցել, և մենք հետևողականորեն առաջարկել ենք, որ բյուջեում նախատեսված լինեն ծրագրային այն հիմնադրույթները, որոնցով եկել ենք ԱԺ, բայց, ավա՜ղ, այդ ամենը սվիններով է ընդունվում, որովհետև ասվում է մեր կողմից:

– Ձեր համագումարը մոտենում է: Եթե համագումարն առաջադրի Ձեզ որպես նախագահի թեկնածու, իսկ 16-ի միավորումը՝ ոչ, շարունակելո՞ւ եք համագործակցությունը:

– 16 կուսակցությունները միավորվել են և ստորագրել համագործակցության փաստաթղթի տակ, որում 4 առանցքային դրույթ է շոշափվում. Ռ. Քոչարյանի հրաժարականի հարցը, ազատ, արդար, թափանցիկ և ժողովրդավարական ընտրությունների հարցը, միասնական ծրագրի և միասնական թեկնածուի հարցը: Առաջին երկու հարցերի համար մենք հետևողականորեն պայքարելու ենք մինչև վերջ: Երրորդ հարցի կապակցությամբ. մենք մեր քայլն արեցինք, թող 15 կուսակցություններն էլ իրենց քայլերն ու առաջարկներն անեն, որից հետո կտեսնենք՝ ինչպես առաջ ընթանանք: Ինչ վերաբերում

է միասնական թեկնածուի հարցին...

– ...ասում են, որ արդեն իսկ որոշված է, թե ով է լինելու:

– Այո, ես էլ տեղեկություններ ունեմ, որ որոշված է, և, այնուամենայնիվ, հանգում ենք այն եզրակացությանը, որ Ռոբերտ Քոչարյանն է լինելու 16-ի միասնական թեկնածուն:

– Ի՞նչ:

– Այսինքն՝ հարցը երբ հասունանա, այդ հարցը, բնականաբար, կլուծվի այն եղանակով, որը հասկանալի և ընդունելի կլինի ոչ թե 16-ից 15-ի համար, այլ մեր ողջ ազգաբնակչության համար:

– Այնուամենայնիվ, եթե 16-ը չառաջադրի Ձեզ՝ որպես միասնական թեկնածու...

– «Ազգային Միաբանությունը» հոկտեմբերի 5-ին անց է կացնելու իր հերթական՝ երրորդ համագումարը, որի դատին է ներկայացվելու իմ հեղինակած հակաճգնաժամային ծրագիրը, որից հետո համագումարն որոշում կկայացնի՝ ինչպես կառուցենք մեր հետագա աշխատանքները. այս փուլով է առաջադրվելու Արտաշես Գեղամյանը, թե մյուս փուլով՝ կորոշի համագումարը: Եթե իմ կուսակիցներն որոշեն, որ Արտաշես Գեղամյանը պիտի առաջադրվի առաջիկա նախագահական ընտրություններին որպես նախագահի թեկնածու, ես կենթարկվեմ այդ որոշմանը: Հակառակ դեպքում կասեն՝ չհասկացանք՝ ծրագիրը գրեցիր, հիմա խուսափո՞ւմ ես այդ ծրագիրը կյանքի կոչելու պատասխանատվությունը ստանձնել: Չեմ խուսափում:

– Իսկ 16-ի հետ համագործակցությունն այդ դեպքում կշարունակվի՞:

– Անշուշտ, որովհետև մյուս երեք հարցերը ոչ պակաս կարևոր են:

– Մասնակցելո՞ւ եք 16-ի միավորման քաղխորհրդի նիստերին:

– Այժմ էլ իմ տեղակալը և Երևանի տարածքային կազմակերպության ղեկավարը մասնակցում են նիստերին: Եթե քննարկվեն հարցեր, որոնցում իմ մասնակցության կարիքը լինի՝ կմասնակցեմ:

– Շարունակո՞ւմ եք պնդել, որ 16-ի ներսում «ականներ» կան:

– Ես ասել եմ, որ դեկտեմբերին պարզ կդառնա, թե կուսակցություններից որն ինչի համար էր մտել 16-ի մեջ: Երկու ամիս էլ համբերեք՝ ամեն ինչ պարզ կդառնա:

Մելանյա Քարսեղյան

«Օրրան», 3.X.2002:

Քոչարյանի վարչակարգի ֆիասկոն

– Ռոբերտ Քոչարյանին պաշտպանող քաղաքական ուժերի ներկայացուցիչները կաշվից դուրս գալով փորձում են ապացուցել, որ Քոչարյանի պաշտոնավարման ընթացքում Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ իբրև թե լուրջ հաջողություններ են արձանագրվել, որոնց շարունակականությունը պայմանավորված է նրա վերընտրությամբ: Արդյո՞ք կան հաջողություններ և որոնք են դրանք:

– Այսօրվա նախընտրական քննարկումների զավեշտն այն է, որ Քոչարյանի և նրա վարչակազմի կողմից ՋԼՄ-ներում քննարկման առարկա են դարձվում առաջիկա նախագահական ընտրություններում Քոչարյանի հաջողության շանսերը: Մինչդեռ, ըստ գործող Սահմանադրության, պրն Քոչարյանը միմիայն օրենքի կոպիտ խախտումներով կարող է գրանցվել նախագահի թեկնածու՝ ի սկզբանե ճակատին դաջված ունենալով ոչ լեգիտիմի խարանը: Այնուամենայնիվ, անդրադառնալով Ձեր հարցին, ուզում եմ նշել, որ, ցավոք, պատկերը ճիշտ հակառակն է, և բոլոր բնագավառներում արձանագրված է լուրջ հետնահանջ: Այսպես, մինչև 1998 թվականի իշխանափոխությունը մենք ունեինք մի իրավիճակ, երբ ԼՂՀ-ն հանդիսանում էր ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցությունների լիիրավ սուբյեկտ, սակայն Ռոբերտ Քոչարյանի ապիկար արտաքին քաղաքականության արդյունքում Լեռնային Ղարաբաղը դարձավ բանակցությունների օբյեկտ: Այսինքն, եթե առաջ հարցը դիտարկվում էր իբրև հակամարտություն՝ Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև, իսկ Հայաստանին վերապահված էր միջնորդի և արբիտրի դերակատարում, ապա այժմ Հայաստանն ընկալվում է որպես հակամարտության անմիջական կողմ: Ավելին, եթե մինչև 1998 թվականը խոսք էր գնում տարածքների փոխընդունելի զիջման մասին, և բանակցությունները վերաբերում էին միմիայն ԼՂՀ ինքնապաշտպանության բանակի կողմից ազատագրված պատմական հայկական հողերին, ապա Ռոբերտ Քոչարյանի «ջանքերով» բանը հասավ այնտեղ, որ այժմ բանակցային գործընթացի ժամանակ խոսք է գնում Մեղրու միջանցքի մասին: Մյուս կողմից, խեղաթյուրվել է ոչ միայն բանակցող կողմերի հավասարակշռությունը և կարգավիճակը, այլև տեղի է ունեցել մեկ այլ վտանգավոր հետնահանջ ևս: Մինչև 1998 թվականը որդեգրված՝ ազգերի ինքնորոշման մայր սկզբունքից շեշտադրումը փոխվել է տարածքային վեճի: Մինչդեռ, ի սկզբանե, ԼՂՀ կայացումը համահունչ է եղել խորհրդային սահմանադրության և միջազգային իրավունքի նորմերին: Հայաստանը հետընթաց է արձանագրում նաև մեկ այլ չափազանց կարևոր հարցում, ինչպիսին է հարևան երկրների հետ բնականոն հարաբերություններ կառուցելու կարողությունը. մեր երկրի նկատմամբ

ոչ բարյացակամ տրամադրված Թուրքիայի և Ադրբեջանի կողքին մենք կանգնած ենք Վրաստանից ևս մեկուսանալու փաստի առաջ: Վրաստանը լրջագույն պայմանագիր է կնքել Ադրբեջանի և Թուրքիայի հետ. խոսքը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-էրզրում գազամուղի շինարարության ու շահագործման մասին է: Այստեղ բավական է նշել, որ միայն տնտեսական այս գործարքի շնորհիվ Վրաստանի բյուջեի եկամտային մասը կրկնապատկվելու է: Այստեղից էլ ակնհայտ է դառնում, որ տնտեսական այս դաշինքը վերաճելու է ռազմաքաղաքականի: Ահա ևս մեկ «հաջողություն», որի ետևում կանգնած է պարոն Քոչարյանը: Ուզում եմ հիշեցնել ևս մեկ սարսափելի փաստ, որին մինչև օրս պետական գնահատական տրված չէ: Երկու տարի անընդմեջ ԱՄՆ-ի պետդեպարտամենտը Կոնգրեսին ուղղված տարեկան ուղերձում հիշատակում է, որ 1998 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ հօգուտ պարոն Քոչարյանի կեղծվել է 100 հազար քվեաթերթիկ: Մինչդեռ, այս լրջագույն մեղադրանքներին ոչ Հայաստանի ԱԳՆ-ն և ոչ էլ նախագահը այդպես էլ որևէ կերպ չեն արձագանքել: Այսինքն, նրանք ընդունեցին, որ, այո՛, այդ քրեորեն դատապարտելի փաստը տեղի է ունեցել. իսկ ի՞նչ եք կարծում, իշխանություն, որի գործողություններում ակնհայտորեն մատնանշվում են հակասահմանադրական և քրեորեն պատժելի գործողություններ, կարո՞ղ է լուրջ ընդունվել, այն էլ այնպիսի երկրի կողմից, ինչպիսին Միացյալ Նահանգներն են, որն այսօր հանդիսանում է ժողովրդավարության հաստատման բաստիոնը աշխարհում: Այնպես որ, եթե բնութագրելու լինենք նախագահ Քոչարյանի կողմից վարվող արտաքին քաղաքականությունը, ապա կարելի է ասել, որ այն կրել է մեծագույն ֆիասկո, որի արդյունքում ընկել է ոչ միայն մեր երկրի միջազգային վարկը, այլ այն դարձել է մեծագույն պատնեշ Հայաստանի հետագա զարգացումների ճանապարհին:

– Քոչարյանին սատարող ուժերը որպես արտաքին քաղաքականության հաջողություն են ներկայացնում Հայաստանի անդամակցությունը Եվրախորհրդին, այժմ՝ արդեն Առևտրի համաշխարհային կազմակերպությանը...

– Չեռք բերվածն ամենևին չի կարելի համարել որպես Քոչարյանի արտաքին քաղաքական հաջողություն: Ինչ վերաբերում է Եվրախորհրդին անդամակցելուն, ապա պետք է ասել, որ միավորյալ Եվրոպան, ի դեմս Եվրախորհրդի, շահագրգռված է, որ եվրոպական այն արժեքները, որոնք ապահովում են զարգացում, հնարավորինս շուտ ընդունվեն և կիրառվեն հետխորհրդային հանրապետություններում: Ասվածի վառ ապացույց է հանդիսանում այն, որ հիշյալ հեղինակավոր կազմակերպության անդամ են հանդիսանում հետխորհրդային բազմաթիվ այլ հանրապետություններ, այդ թվում և Վրաստանն ու Ադրբեջանը: Եվրոպայի խորհրդում, տեսնելով, որ հետխորհրդային հանրապետությունները ժողովրդավարության հարցում դոփում են տեղում, մտածեցին, որ այս երկրներին իրենց ազդեցության ոլորտ ներգրավելու միջոցով կկարողանան այստեղ ավելի ներգործուն միջոցներ օգտագործել՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» սկզբունքները

կիրառելի դարձնելու համար: Ինչ վերաբերում է ԱՀԿ-ին անդամակցելուն, ապա դա տրամաբանական գործընթաց է, որը պետք է տեղի ունենար: Բայց փոխանակ թմբկահարելու ԱՀԿ-ին անդամակցելու փաստը, ավելի ճիշտ չէ՞ր լինի, եթե վերլուծեին հնարավոր այն վտանգները, որոնք դարանակալել են մեզ՝ այդ կազմակերպություն մտնելու դեպքում: Իսկ արդյունքում կստեղծվի մի այնպիսի իրավիճակ, որ Հայաստանը կողողվի օտարածին այնպիսի արտադրատեսակներով, որոնցից արտադրվում են նաև մեր երկրում: Սակայն էլեկտրաէներգիայի սակագնի և ներկրվող հումքի բարձր գների պատճառով, մեր տեղական արտադրանքը կդառնա անմրցունակ և դուրս կմղվի շուկայից: Բավական է ասել միայն, որ ԱՀԿ-ին անդամակցելուց հետո Հայաստանը կողողվի կարագով, տավարի, խոզի և թռչնի մսով, և շատ ավելի էժան գներով, քան դա նստում է մեր արտադրողի վրա: Եվ սարսափելին այն է, որ այս ամբողջ բացասականը, որի դառը և թունավոր պտուղները մենք շատ շուտով կքաղենք, հիրամցվում է որպես հաջողություն և նվաճում:

– Հունվարին, ընտրություններից մեկ ամիս առաջ կազմակերպվում է Ռոբերտ Քոչարյանի այցը Ռուսաստան, որը դիտարկվում է որպես այդ երկրի կողմից Քոչարյանի վարչակարգին ցուցաբերվող քարոզչական աջակցություն:

– Դեռ 1997 թվականին, Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահության օրոք, կնքվել է հայ-ռուսական ռազմավարական դաշնագիր: Այժմ շատ տրամաբանական է, որ երկու ռազմավարական դաշնակից պետությունների ղեկավարները պարբերաբար պաշտոնական և պետական այցեր են կատարում համապատասխան երկրներ: Բայց արդյո՞ք ներկայիս Ռուսաստանը կարող է աջակցել մի նախագահի, որի օրոք ծաղկում է կաշառակերությունը և կոռուպցիան, տնտեսության 40-60 տոկոսը ստվերային է, տեղի է ունեցել հոկտեմբերի 27-ի ոճրագործություն, որին զոհ են դարձել Ռուսաստանի մեծագույն բարեկամներ, երջանկահիշատակ Վազգեն Սարգսյանն ու Կարեն Դեմիրճյանը: Կրկին նկատի ունենանք, որ ահաբեկչությունը, կաշառակերությունն ու ստվերային տնտեսության հովանավորումը խստագույնս մերժված են նաև Ռուսաստանի իշխանությունների կողմից: Ստեղծված իրավիճակը հիշեցնում է նաև 13-14 տարի առաջ ԽՍՀՄ վերջին ղեկավար Միխայիլ Գորբաչովի ֆենոմենը, որին ընդունում էին ամեն տեղ՝ ԱՄՆ-ում, Արևմուտքում, կոչում էին տարվա, դարի մարդ, բայց նրան բացահայտ մերժում էր սեփական ժողովուրդը: Եվ բոլորս ականատես եղանք, թե ինչ կատարվեց նրա հետ: Նույնը մեր դեպքում, եթե պարոն Քոչարյանին մերժում է սեփական ժողովուրդը, մերժելու են մնացած բոլոր երկրներն ու նրանց ղեկավարները, որոնք հարկադրված են դիվանագիտական էթիկայից ելնելով՝ որոշակի հարաբերություններ պահպանել, այն էլ ոչ թե անձի, այլ երկրի հետ:

– Պարոն Գեղամյան, կա՞ արդյոք այլընտրանք, և ի՞նչ կփոխվի Ձեր՝ նախագահ ընտրվելու դեպքում:

– Եթե, հերթական անգամ, պարոն Քոչարյանը բռնազավթի իշխանությունը, և մենք ունենանք ոչ լեգիտիմ նախագահ, ապա նա դրանով կդրդի քաղաքացիական անհնազան-

դության ամենամասսայական դրսևորումների: Երկիրը կդառնա չափազանց խոցելի միջազգային հանրության համար և հեշտ կլինի ոչ լեգիտիմ նախագահին պարտադրել ցանկացած ոչ հայանպաստ լուծում: Ես ուզում եմ անդրադառնալ նաև Քոչարյանի վարչակարգի կողմից վարվող, այսպես կոչված, կոմպլեմենտար քաղաքականությանը, որը կառուցված է երկու գերտերությունների հարավկովկասյան տարածաշրջանում ունեցած երբեմնի հակասությունների վրա: Բնականաբար, ոչ բոլոր հարցերի շուրջ է, որ Արևմուտքը և Ռուսաստանը եկել են քաղաքական կոնսենսուսի: Նման պայմաններում Հայաստանի իշխանությունները պետք է լինեն լեգիտիմ և իրենց քաղաքականությունը կառուցեն ոչ թե հակասությունների վրա, այլ կարողանան ներդաշնակել ԱՄՆ-ի և Ռուսաստանի շահերը մեր տարածաշրջանում: Մանավանդ, 2001 թ. սեպտեմբերի 11-ի ողբերգական իրադարձություններից հետո, երբ ԱՄՆ-ը և Ռուսաստանը համագործակցում են այնպիսի գլոբալ խնդրի շուրջ, ինչպիսին պայքարն է միջազգային ահաբեկչության դեմ: Իսկ վերջերս տեղի ունեցած Բուշ-Պուտին հանդիպումը բոլորիս համոզմունք է ներշնչում, որ ԱՄՆ-ը և Ռուսաստանը խիստ շահագրգռված են ԱՊՀ երկրներում, հատկապես մեր տարածաշրջանում ստեղծել բոլոր հիմքերը՝ երկարատև խաղաղության և զարգացման համար: Իսկ այդ ծրագրերը կարող են իրականացնել ժողովրդի վստահությունը վայելող իշխանությունները: Իսկ այն անվստահությունը, ներքին տագնապները, որ տածում է յուրաքանչյուր հայաստանցի Քոչարյանի նկատմամբ, անհնարին է դարձնում նրա կողմից նույնիսկ հայանպաստ որոշումների իրականացումը: Դուք հարցնում եք, թե ի՞նչ կանեմ ես, եթե ընտրվեմ նախագահ կամ ի՞նչ կփոխվի: Հավատացնում եմ, որ մեզ անձի փոփոխություն չէ, որ պետք է: Մեզ անհրաժեշտ է, որ փոփոխվեն իշխանությունները: Որ իշխանության գան մարդիկ, ովքեր արատավորված չեն, ովքեր ունեն անձնական ազնվություն և կոմպետենտ են իրենց գործի մեջ: Ահա այսպիսի մարդկանցով է, որ պետք է ձևավորվի ազգային համաձայնության կառավարությունը, որը կարթնացնի հավատը ժողովրդի մոտ: Իսկ եթե հավատը արթնացավ, վստահ եղեք, հայ մարդը հրաշքներ կգործի: Եվ, որ պակաս կարևոր չէ, երկիր կվերադառնան փախստականի կարգավիճակով աշխարհով մեկ սփռված մեր հարյուր-հազարավոր քաղաքացիները: Ահա նման պայմաններում է, որ կկերտվի մեր պետության փառքն ու մեծությունը:

«Հայկական ժամանակ», 10.XII.2002:

Քոչարյանը բարոյալքել է Հայաստանի Հանրապետությունը

– *Պարոն Գեղամյան, ձեր գործընկեր Վազգեն Մանուկյանն այն կարծիքն է հայտնել, որ Քոչարյանը, որպես քաղաքական ուժ, այս պահին այլընտրանք չունի: Դուք կիսո՞ւմ եք նման դիրքորոշումը:*

– Պրն Մանուկյանը պնդելով այդ տեսակետը, հավանաբար, նկատի է ունեցել, որ Քոչարյանի օրոք հնարավոր է եղել իրագործել շուրջ երկու տասնյակ բարձրաստիճան պաշտոնյաների սպանություններ, որոնք մինչ օրս չեն բացահայտվել: Միգուցե, ըստ պրն Մանուկյանի, այդ փաստն իրոք խոսում է Քոչարյանի՝ «քաղաքական լուրջ ուժ» լինելու օգտին, և որին քաղաքական այլընտրանք չկա: Դրա «օգտին» են խոսում նաև Քոչարյանի կողմից անպատիժ խոսքի ազատության բացահայտ ճնշումները, որ իրականացվել են երկրում, և որի վառ վկայությունը «A1+»-ի և «Նոյյան տապանի» եթերազրկումն է: Հավանաբար, պրն Մանուկյանը նկատի է ունեցել նաև այն բացահայտ մերժողական վերաբերմունքը, որը դրսևորվեց Քոչարյանի թելադրանքով «Ընտրական օրենսգրքում» փոփոխություններ կատարելու՝ ընդդիմության կողմից առաջադրված փոփոխությունները մերժելով: Միգուցե, որպես քաղաքական ուժի դրսևորում է պրն Մանուկյանը դիտում նաև այն, որ, ընտրապայքարը դեռևս չսկսված, Քոչարյանը, օգտագործելով իր պաշտոնական դիրքը, արդեն իսկ պետական բյուջետային հիմնարկ հանդիսացող Գիտությունների ազգային ակադեմիայի շենքը վերածել է իր նախընտրական շտաբի: Միգուցե քաղաքական ուժի դրսևորում կարելի է համարել նաև այն, որ այսօր Հայաստանի Հանրապետության ազգային հեռուստատեսությունը, որը ֆինանսավորվում է Հայաստանի հարկատուների կողմից՝ բյուջեի հաշվին, ծառայեցրել է երկու խնդրի լուծմանը, այն է՝ գովազդել հանրապետության համար «հույժ» կարևոր երևույթներ. պրն Քոչարյանին և զանազան բարի, համով, ընտանեկան լոտոները և ակնթարթները:

Մի խոսքով, քաղաքական ուժի գնահատման իմ եւ պրն Մանուկյանի մոտեցումները, մեղմ ասած, տարբեր են: Ասեմ ավելին. այսօր քաղաքական ասպարեզում գտնվող բոլոր ուժերի շարքում Քոչարյանն ամենաթույլն ու ամենախոցելին է: *Հիմնավորեմ ասածս: Քաղաքական ի՞նչ ուժի մասին կարող է խոսք լինել, երբ երկու տարի անընդմեջ ժողովրդավարության շտեմարան հանդիսացող ԱՄՆ պետական դեպարտամենտը 2000 և 2001 թթ. Կոնգրեսին ուղղած իր տարեկան ուղերձներում հիշատակել է, որ 1998-ին նախագահական ընտրությունների ժամանակ հօգուտ Քոչարյանի կեղծվել է ավելի քան 100.000 քվեաթերթիկ:* Եվ ի՞նչ եք կարծում, այդ լրջագույն մեղադրանքներին ինչպե՞ս

արձագանքեցին մեր իշխանությունները: Ոչ մի կերպ: Քար լռությամբ, փաստորեն, ընդունեցին, որ խոշորածավալ ընտրակեղծիքների ճանապարհով են զավթել նախագահական աթոռը: Այդ ամոթը դամոկլյան սրի պես կախված է մեր պետականության վրա: Միգուցե այս հանգամանքը ն՞ս խոսում է Քոչարյանի՝ իբրև քաղաքական լուրջ ուժ լինելու մասին: Իսկ ամենավտանգավորն այն է, որ մարդ, որն անարդարացիորեն է դարձել հանրապետության նախագահ, ինչպե՞ս կարող է արտաքին քաղաքականության բնագավառում արդարության կոչերով դիմել պետություններին, ինչպե՞ս կարող է ջատագովը լինել ԼՂ-ի հարցի արդարացի լուծմանը: Անարդարը, երբ արդարության մասին է խոսում, դա, պարզապես, կատարյալ զավեշտ է: Միգուցե քաղաքական լուրջ ուժ լինելու մասին է խոսում այն, որ Քոչարյանը պարզապես ձախողել է ԼՂ-ի հարցի լուծումը:

Բերեմ հիմնավորումներ. դեռ 1998 թվականին, երբ բռնի ուժով տեղի ունեցավ իշխանափոխությունը, ԼՂՀ-ն բանակցային գործընթացներում հանդես էր գալիս բանակցությունների ինքնուրույն սուբյեկտ: Հայաստանն այդ բանակցություններում ստանձնել էր արբիտրի յուրօրինակ կարգավիճակ, իսկ հակամարտությունը դիտարկվում էր հիմնականում որպես Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև տեղի ունեցող հակամարտություն: Մինչդեռ Քոչարյանի իշխանության գալուց հետո իրավիճակը տրամագծորեն վատթարացավ. լրջագույն նահանջ արձանագրվեց Լևոն Տեր-Պետրոսյանի օրոք ձեռք բերված բանակցային գործընթացում ԼՂ-ի՝ ինքնուրույն սուբյեկտ հանդիսանալու խնդրում: Իսկ այսօր արդեն դերերը փոխվել են, ու բանակցային կողմեր են դարձել Հայաստանը և Ադրբեջանը՝ Ղարաբաղը վերածելով ընդամենը բանակցությունների օբյեկտի: Ավելին. եթե նախկինում հակամարտող կողմերի միջև փոխզիջումները պայմանավորված էին միայն ազատագրված տարածքների շրջանակում, ապա այսօր մեջտեղ է քաշվում Մեղրու խնդիրը: Եվ սա ոչ այլ ինչ է, քան Քոչարյանի կողմից հռչակված կոմպլեմենտար քաղաքականության դառը հետևանքներից մեկը: Էլ չխոսենք հիմնական ձախողման մասին, այն է՝ այդ քաղաքականության իրականացման արդյունքում Հայաստանի Հանրապետությունը սահմանակից չորս պետություններից երկուսի հետ ընդհանրապես դիվանագիտական կապեր չունի, իսկ ինչ վերաբերում է հարևան Վրաստանին, ապա վերջինս, ինչպես գիտեք, արդեն իսկ շատ սերտ համագործակցում է Ադրբեջանի և Թուրքիայի հետ՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի կառուցման ու հետագա շահագործման գործում: Միայն այդ գործոնի շնորհիվ առաջիկա տարիներին Վրաստանի պետական բյուջեի եկամտային մասը կրկնապատկվելու է՝ սրանից բխող քաղաքական բոլոր հետևանքներով: Այն է՝ տնտեսական սերտ համագործակցությունը Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի միջև մոտ ապագայում վերածվելու է ռազմաքաղաքական դաշինքի: Եվ սա որևէ կասկած չի հարուցում լուրջ քաղաքագետների շրջանում: Իսկ թե ի՞նչ ուղղվածություն է ունենալու այդ դաշինքը, հետևություն թող անի կոմպլեմենտարիզմի մեծ գիտակ Քոչարյանը:

Այստեղ անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ ևս մեկ փաստարկի: Անցած տարիների ընթացքում քոչարյանական արտաքին քաղաքականությունն ուղղված է եղել

մեր տարածաշրջանում ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Եվրամիության երկրների միջև առկա, շատ դեպքերում թվացյալ, հակասությունների վրա խաղալուն. մենք խաղացել ենք մեկ գերտերության դաշտում, մեկ՝ մյուսի: Այդ պարզունակ կոմպլեմենտար քաղաքականության ներքո տարվող խաղերը, բնականաբար, շատ հեշտությամբ «կարդացվել» են վերը հիշատակված երկրների կողմից ու մերժվել՝ դրանց հեղինակների մասին ստեղծելով համապատասխան կարծիք: Եվ, բնական է, որ այդ անհեռանկար կոմպլեմենտար քաղաքականությունը 2001թ. սեպտեմբերի 11-ի ամերիկյան ողբերգությունից հետո կրկնակի ֆիասկո ապրեց այն պարզ պատճառով, որ այսօր արդեն իսկ մենք կարող ենք գոհունակությամբ արձանագրել ԱՄՆ-ի և ՌԴ-ի ստրատեգիական համագործակցությունը: Կնշանակի, որ արտաքին քաղաքականությունը իրականացնողները ևս պետք է լինեն նոր մարդիկ, քաղաքական նոր դեմքեր, որոնք երբեք ու երբեք իրենց գործունեության ընթացքում այդ ոլորտին վերաբերող ճամարտակություններով հանդես չեն եկել: Պետք են մարդիկ, որոնք կկարողանան ՌԴ-ի, ԱՄՆ-ի և Եվրամիության երկրների հետաքրքրությունները միաձուլել, ներդաշնակել Հայաստանի զարգացման խնդիրների հետ: Իսկ դրա համար պետք է ձևավորել ազգային համաձայնության կոալիցիոն կառավարություն, որտեղ պահանջված կլինեն, այսպես կոչված, թե՛ ռուսամետները, թե՛ արևմտամետները:

– Այդուհանդերձ, կարծես թե իրավիճակը բարվոք չէ նաև ներքաղաքական ոլորտում:

– Դուք ճիշտ եք. Քոչարյանի ձախողումները շատ ավելի խորն են ներքաղաքական ոլորտում: Այսօր հասարակությունը երես է թեքել իշխանությունից, մեջքով է շուռ եկել դեպի Քոչարյանը: Եթե 1998-ին Քոչարյանի կարգախոսն էր՝ «Իմ կուսակցությունը իմ ժողովուրդն է», ապա այսօր այդ ժողովրդից մնացել է միայն նրան անհավես սատարող ընդամենը չորս կուսակցություն: Ընդ որում, երբ մենք առիթ ենք ունենում խոսել այդ կուսակցությունների շարքային անդամների հետ, համոզվում ենք, որ վերջիններս բացարձակապես չեն բաժանում իրենց կուսակցության վերնախավի ընդունած դիրքորոշումը, այն է՝ սատարել այս ապազգային վարչակազմին: Եվ ես ուզում եմ հորդորել Քոչարյանին սատարող կուսակցությունների ոչ թե վերնախավին (համոզված եմ, որ նրանք ևս ընտրությունների վերջին փուլում կկանգնեն ժողովրդի կողքին), այլ շարքային անդամներին. դուք այսօր սպասարկում, քաղաքական տեսք եք տալիս մի հանցավոր կլանի, որը կեղեքել, հարստահարել է մեր երկիրը: Սրա հետ նաև չափազանց կարևոր է և այն, որ այսօր մենք ականատեսն ենք հավատի խոր ճգնաժամի: Դրա պատճառները բազում են, սակայն հիմնականը բարոյազրկության, հոգևոր արժեքների խեղումն է, երբ հոկտեմբերի 27-ի ոճրագործության պարագլուխներից Նաիրի Հունանյանն իրեն այնքան պաշտպանված և արտոնյալ է զգում, որ իրեն հռչակում է ՀՀ նախագահի թեկնածու, իսկ Պողոս Պողոսյանի սպանությունն իրականացնողները շարունակում են սպայի ուսադիրներ կրել՝ այն էլ նախագահի թիկնազորում: Վախի, հիասթափության մթնոլորտ է ստեղծվել ներկայիս վարչակարգի կողմից: Անթաքույց փորձեր են կատարվում ընչազրկությամբ և սովով կամազուրկ դարձնել հայ ժողովրդին: Նորելուկներին խորհուրդ

կտայինք դասեր քաղել պատմությունից: Նույն ինքը՝ Բոնապարտ Նապոլեոնը, իր աստեղային ժամին հետևյալ միտքն է արտահայտել. *«Սվիններով կարելի է նվաճել գահը, բայց այդ սվինների վրա երկար նստելն անհնար է»:* Խոր ճգնաժամի մասին է խոսում նաև այն, որ այսօր իշխանական քարոզչամեքենան փորձում է սին պատրանքներ ներարկել ժողովրդի գիտակցության մեջ, թե իբր Հայաստանը վեր է ածվել շինհրապարակի: Մինչդեռ, երբ վերլուծում ես պաշտոնական թվերը, գալիս ես մի տխուր եզրահանգման. աղետի գոտում ընթացող շինարարության միայն 3,7 %-ն է բաժին ընկնում բյուջեին, մնացածը կա՛մ վարկեր են, կա՛մ հումանիտար օգնություն, կա՛մ էլ բնակչության սեփական միջոցներով կառուցվող օբյեկտներ: Եվ այդ ամենն այսօր հրամցվում է որպես Քոչարյանի «արարիչ» գործունեության վառ ապացույց:

Անհարմար է, երբ ողջ հայ ժողովրդի անունով վարկ կամ հումանիտար օգնություն է ստացվում, գոյացած պարտքերն էլ պետք է մարենք մենք կամ մեր զավակները, մինչդեռ, նույն այդ ժամանակ, Քոչարյանին մեծարելու հանդիսություններ են կազմակերպվում, որի ընթացքում վերջինս՝ «ժողովրդի մեծ բարերարը», թելեր է կտրտում: Զավեշտն հասել է այնտեղ, որ անգամ հայ ժողովրդին Քըրք Քըրքորյանի տրամադրած գումարները պայմանավորում են ոչ թե մեր երկրի, մեր պետության, մեր ժողովրդի գործոնով, այլ վերագրում են Քոչարյանի ղեկավարած տարիների «բարեբեր» առանձնահատկությանը, որը, իրականում, ոչ այլ ինչ է, քան կաշառակերության և կոռուպցիայի խորացում, հանցավոր տարրերի և իշխանությունների սերտաճում, երկրում տիրող անօրինականությունների արմատավորում, որը և, եթե լսես պետական քարոզչամեքենային, մեծ ոգևորություն է առաջացրել մեր մեծ հայրենակցի մեջ:

– *Այրուհանդերձ, իշխանական քարոզչամեքենան համառորեն տարփողում է, որ ընտրություններն ավարտվելու են մեկ փուլով:*

– Նման հրապարակումները հերթական անգամ գալիս են հաստատելու այն պարզ ճշմարտությունը, որ իշխանությունը հոգեվարքի մեջ է: Եթե ամեն ինչ այդքան դյուրին է, ինչո՞ւ են այդքան էջեր տրամադրում ընդդիմությանը վարկաբեկելուն, ինչո՞ւ են համառորեն փորձում սեպ խրել ընդդիմության միջև, զանազան ստահոդ, պատվիրված սոցիոլոգիական հարցումների արդյունքներ տպագրում, որոնց համաձայն Քոչարյանի վարկանիշն արդեն իսկ գերազանցել է 100%-անոց նիշը ... Մի բանում, այնուհանդերձ, կարելի է նրանց հետ համաձայնել. ամենայն հավանականությամբ, եթե Սահմանադրության կրկնակի կոպիտ խախտմամբ Քոչարյանն, այնուամենայնիվ, գրանցվի որպես ՀՀ նախագահի թեկնածու, ապա ընտրությունները, ըստ իս, կավարտվեն մեկ փուլով, ու պրն Քոչարյանն այդ ընտրությունների արդյունքում կգրավի 4-րդ կամ 5-րդ տեղը: Եթե ընդդիմությունը հանդես գա միասնական թեկնածուով, ապա Քոչարյանի պարտությունը կլինի ջախջախիչ: Իսկ եթե լինի 2-րդ փուլ, ապա համոզված կարող ենք ասել, որ այդ փուլում կմրցակցեն ընդդիմության երկու առաջատարներ, որոնք, բնականաբար, կգան քաղաքական համաձայնության, որովհետև այսօրվա ընդդիմությունը տոգորված է մեկ գաղափարով՝ ազատել Հայաստանն այս վտանգավոր, ապազգային վարչակազմից: Պետք

է միշտ հիշել, որ չի կարող մի իշխանություն, որն ամենուր բարոյալքում է սփռել՝ երկար կյանք ունենալ: Ժամանակին Հռոմը կործանվեց ոչ թե այն պատճառով, որ լեգեոներների սրերն էին բթացել. կործանվեց համընդհանուր բարոյալքության պատճառով: Գոնե պատմությունից դասեր քաղեն և գնան մեկ ճանապարհով՝ հրապարակավ քավություն աղերսեն, հայցեն ժողովրդի ներողամտությունը և այդ պարագայում, ես կարծում եմ, որ ընդդիմությունը կփորձի որևէ կերպ բացատրել ժողովրդին, որ այս մարդիկ 92-94-ին դրական որոշակի դերակատարություն ունեցել են արցախյան պատերազմի ժամանակ: Իսկ եթե Քոչարյանին թվում է, որ բռնի ուժով ինքը դարձյալ կարող է գալ իշխանության, ապա ես պետք է նրան զգուշացնեմ՝ պրն Քոչարյան, ձեզ հաջողվեց այս տարիներին պառակտել քաղաքական դաշտը, ձեզ հաջողվեց մեր մարտական գեներալներին ներքաշել դրյակաշինության մեջ, ձեզ հաջողվեց նսեմացնել մտավորականության այն ներկայացուցիչներին, որոնք հարկադրված էին ստանձնել ձեր քաղաքական սազանդարի դերակատարությունը, ձեզ հաջողվեց վերջին 5 տարիների ընթացքում երկրից օտար-ամայի ճանապարհ դուրս մղել շուրջ կես միլիոն մարդ, բայց ձեզ երբեք ու երբեք չի հաջողվի Հայաստանի Հանրապետությունը ջնջել աշխարհի քաղաքական քարտեզից: Այնպես որ, մեր երկրում ձեր այսօրվա եզակի առաքելությունն է՝ հրապարակավ հայտարարել, որ, գիտակցելով սեփական անձի առաջադրման հակասահմանադրական լինելը, դուք չեք մասնակցելու նախագահական առաջիկա ընտրություններին:

– Պարոն Գեղամյան, ԿԸՀ-ում ձեր ներկայացուցիչ Աղասի Արշակյանը հայտարարեց, որ եթե ժողովրդահայրենասիրական ուժերի դաշինքին միանան ՀԺԿ-ն ու «Հանրապետությունը», ապա հենց առաջին փուլում հաղթանակն ապահովված է: Մինչդեռ, ՀԺԿ քարտուղար Ստեփան Զաքարյանը բացառեց վերոնշյալ կուսակցությունների միացումն այդ դաշինքին:

– Այս կամ այն կուսակցությունները չեն միավորվելու. մենք բոլորս համախմբվելու ենք ժողովրդի շուրջ: Ես համոզված կարող եմ ասել, որ Հայաստանի ապագան շատ ամուր և մաքուր ձեռքերում է գտնվելու, և դրա առանցքը կազմելու են նաև ձեր թվարկած կուսակցությունները: Ինչ վերաբերում է իմ լավ բարեկամ Աղասի Արշակյանին, ապա նա մի բառ է մոռացել ավելացնել՝ ստեղծված դաշինքին նաև ՀԺԿ-ի և «Հանրապետության» միավորման դեպքում ո՛չ թե միասնական թեկնածուն կհաղթի, այլ ջախջախիչ հաղթանակ կտանի: Նա «ջախջախիչ» բառն էր մոռացել ավելացնել, որը և ես ավելացնում եմ: Իսկ մի ընդդիմադիր ուժը մյուսի նկատմամբ հաղթանակ տանել չի կարող, որովհետև մեր գործն ընդհանուր է: Մենք միասին ենք լինելու, ու այդ ամենը թվացյալ հակասություններ են, որ երբեմն-երբեմն հրահրվում են լրատվամիջոցների կողմից: Եվ եթե իշխանական լրատվամիջոցները երազում են, որ պառակտում լինի ընդդիմադիր դաշտում, ապա ընդդիմադիր թերթերը մեզ «թասիբի» են գցում, որ միասին լինենք: Եվ ճիշտ էլ անում են:

– Պարոն Գեղամյան, ՊՆախարարը գլխավորելու է Քոչարյանի նախընտրական

շտաբը. այդ նշանակումից չի՞ հետևում արդյոք, որ իշխանությունները կենաց-մահու պայքար են մղելու:

– Ես այդ հարցին այլ տեսանկյունից եմ նայում: Պարզապես, պրն Քոչարյանը գիտակցում է, որ ջախջախիչ պարտություն է կրելու և, հավանաբար, շատ է վախենում, որ դրանից հետո նոր իշխանությունները չկարողանան զսպել ժողովրդի ցասումն, ու ժողովուրդն ավերի նախագահական նստավայրը: Այդ տեսակետից Քոչարյանը ճիշտ որոշում է կայացրել, որովհետև Սերժ Սարգսյանի գործոնը, հավանաբար, հնարավորություն կընձեռի, որ նման զարգացումները մեղմվեն:

«Չորրորդ իշխանություն»

«Չորրորդ իշխանություն», 13.XII.2002:

Ազգային համաձայնության կառավարության շուրջ

– *Պարոն Դեղամյան, ձեր նախորդ հարցազրույցում դուք խոսել էիք նախագահական ընտրություններից հետո ազգային համաձայնության կառավարության ձևավորման անհրաժեշտության մասին: Չէի՞ք մանրամասնի, թե ինչպիսի ուժեր և գործիչներ պետք է ընդգրկվեն այդ կառավարության մեջ:*

– Ուզում եմ անպայման շեշտել, որ մենք պետք է հատկապես ուշադիր գտնվենք այն մարդկանց նկատմամբ, ովքեր ճակատագրի բերումով պարտադրված են շարունակելու այն գործը, որը կիսատ է մնացել հոկտեմբերի 27-ից հետո:

– *Դուք նկատի ունեք Ստեփան Դեմիրճյանին և Արամ Սարգսյանի՞ն:*

– Անշուշտ, առաջին հերթին հենց իրենց, ում համար երջանկահիշատակ Կարեն Դեմիրճյանի և Վազգեն Սարգսյանի գործի շարունակությունը պատվի խնդիր է, և նրանց հետ նաև Վազգեն Սարգսյանի հավատարիմ զինակիցներ Ալբերտ Բազեյանի, Վաղարշակ Հարությունյանի, Սմբատ Այվազյանի և հարյուրավոր այլ ազնիվ մարդկանց, ում վստահում էին Կարեն Դեմիրճյանը և Վազգեն Սարգսյանը: Կամ էլ միթե կարելի է այսպես անտեսել Վազգեն Մանուկյանի, Շավարշ Քոչարյանի, Արշակ Սադոյանի այն մեծ ներուժն ու փորձը, որ նրանք կուտակել են Երրորդ Հանրապետության կայացման տարիներին: Ինչպե՞ս կարելի է հայրենիքի բարգավաճման գործին չծառայեցնել այն անձնական և քաղաքական կապերը, որ Ռուսաստանի իշխանական շրջանակների հետ ունեն Վլադիմիր Դարբինյանը, Գառնիկ Մարգարյանը և դեմկուսի Արամ Սարգսյանը: Հայաստանի վաղվա օրվա համար չափազանց կարևոր կլինեն նախկին վարչապետ Արմեն Սարգսյանի փորձն ու գիտելիքները, որը, ավա՜ղ, պահանջված չէ այսօրվա իշխանությունների կողմից: Շատ օգտակար կլիներ Րաֆֆի Հովհաննիսյանը, որի պոտենցիալը այսօր գրեթե չի օգտագործվում: Ես նկատի ունեմ նաև մեր հայրենակից Արա Աբրահամյանին, որը կարողանում է օգնության ձեռք մեկնել մեր հարյուրհազարավոր հայրենակիցների՝ ԱՊՀ երկրներում, որի հնարավորությունների չնչին մասն է օգտագործվում երկրի ներսում: Եվ թող չընկնավորվեն բոլոր իշխանությունների օրոք իշխանական կերակրատաշտից մշտապես սնվող այն բարոյազուրկ քաղաքական բոմժերը, եթե ես տամ նաև Պետրոս Մակեյանի և իր նման հարյուրավոր այլ ազնիվ մարդկանց անուններ, ովքեր կարևոր դերակատարում են ունեցել Երրորդ Հանրապետության կայացման գործում: Կարող եմ էլի հարյուրավոր և հազարավոր մարդկանց անուններ նշել, ովքեր անհամբեր սպասում են ազատ, արդար ընտրությունների, որ

կարողանան սրտանց ծառայել սեփական ժողովրդին և ոչ թե Քոչարյանի կլանին: Ահա այս պայմաններում է, որ լիովին հնարավոր է ազգային համաձայնության կառավարության ձևավորումը:

– Կարծո՞ւմ եք, որ ձեր թվարկած մարդիկ կարող են լինել Քոչարյանի վարչախմբի այլընտրանքը:

– Ձեր հարցը ինձ ոգևորում է, քանզի թվարկած մարդկանցից և ոչ մեկի բարոյական, մասնագիտական և անձնական որակները հնարավոր չէ կասկածի ենթարկել: Եվ նրանք,այո՛, կարող են լինել ներկա վարչախմբի այլընտրանքը: Բայց թող բնավ թյուր կարծիք չստեղծվի, որ մենք անտեսելու ենք ՀՀԿ-ում և ՀՅԴ-ում գործող տասնյակ իրազեկ, ազգային նկարագիր ունեցող, մեր երկրի այն նվիրյալներին, որոնց գիտի և հարգում է ժողովուրդը: Եվ որոնք, համոզված եմ, որ, ի վերջո, կգործեն անշահախնդիր՝ ստեղծելով անհրաժեշտ պայմաններ առանց լուրջ ցնցումների Ռոբերտ Քոչարյանի հեռացումն ապահովելու համար:

– Պարոն Գեղամյան, ինչո՞ւ եք համոզված, որ հենց այդպես էլ լինելու է:

– Ձեր հարցին պատասխանեմ մեկ օրինակով. վերջերս Եղվարդում տեղի է ունեցել Քոչարյանին (գոնե ձևականորեն) սատարող ուժերի հավաք (բնականաբար, այդ կոնտինգենտին հատուկ խորոված-խաշլամայի և խմիչքների առատության մթնոլորտում): Այն պահին, երբ հավաքի մասնակիցներից մեկն ասել է, որ Կոտայքի մարզում կան ուժեր, որոնք սատարում են ընդդիմությանը, բոլորը չէ, որ հարբած են եղել: Եվ կազմակերպիչները հորդորել են տալ այդ ուժերի և մարդկանց անունները՝ խոստանալով, որ նրանցով կզբաղվեն հարկային տեսչության, ազգային անվտանգության և ներքին գործերի մարմինները: Տագնապ հնչեցնողը հուսահատ ասել է. «Ախր նրանք շատ-շատ են»: Այստեղ է, որ ուզում եմ օգնած լինել պարոն Քոչարյանին. ընդդիմությանը սատարողների փնտրտուքով դեսուդեն մի ընկեք, այլ դիմեք Ազգային վիճակագրական ծառայությանը, որ ձեր նախընտրական շտաբին փոխանցեն Հայաստանում անցկացված մարդահամարի տվյալները: Այդ ցուցակներից հանեք ձեր կլանի ներկայացուցիչներին, կլանի կողմից բիզնեսի ոլորտ գործուղված «կռիշ» կոմիսարներին, հարկային, մաքսային, ներքին գործերի և ազգային անվտանգության առավել կոռումպացված ու անբարեխիղճ ներկայացուցիչներին, և մնացած բոլորը, ասել է, թե՝ ողջ հայ ժողովուրդը՝ ձեր ընդդիմությունն է: Նրանցով դուք ի զորու չեք զբաղվելու, սակայն նրանք ձեր վարչակարգով կզբաղվեն շատ մոտ ապագայում:

– Իսկ ի՞նչ կփորձեն իշխանությունները հակադրել ժողովրդի կամքին կամ արդյո՞ք փորձ կանեն սպառնալ ձեզ:

– Եկեք ձեզ հետ մտորենք, թե ինչ կարող են հակադրել իշխանությունները թոշակառու ամուսիններին, որոնք կարոտ են տեսնել հայրենիքը ճարահատյալ լքած իրենց զավակներին, գուրգուրել իրենց թոռներին, ովքեր երազում են այն օրվա մասին, երբ երկրի մթնոլորտը կփոխվի, կգերակայի օրենքը և կընտրվի ժողովրդի դարդ ու ցավով տառապող նախագահ: Ժողովրդի ծոցում ծնված և մեծացած այդ խենթը, որն այսօրվա

բարոյալքության, թշվառության, հոգիների խռովվածության, կարոտի, հուսալքության ընդերքում տեսնում է այն լույսը, որն օրըստօրե կհալեցնի մեր ժողովրդի սառցակալած սիրտը, հույս կներշնչի տասնյակ հազարավոր ուսանողների, որ իրենց գիտելիքները ծառայեցվելու են երկրի զարգացման ազնիվ նպատակին: Հույս կներշնչեն հարյուր-հազարավոր գործազուրկներին, որ իրենք այլևս կդադարեն լինել անմեղ-մեղավորներ սեփական օջախներում, հարկադրված չեն լինի հայացքը փախցնել կիսաքաղց երեխաներից և կանանցից, որ իրենց գիտելիքները, ի վերջո, պահանջված կլինեն հայրենիքը շենացնելու գործում: Կվերականգնվեն հայ մարդուն բնորոշ այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են սերն ընտանիքի հանդեպ, հարգանքը մեծերի նկատմամբ, անմնացորդ տրվող գուրգուրանքը փոքրերին, ինքնազոհ նվիրվածությունը հայոց հողին ու ջրին, հայրենի ոստանին, քաղցրահամ հայոց լեզվին և իր իսկ դավանանքին ու հավատին, որն անընդմեջ փորձում են սպանել հայ մարդու մեջ: Ի՞նչ եք կարծում, մի՞թե այս մարդկանց սրտերը շահելու սուրբ առաքելությունը տրված է այս չարիքի հեղինակներին՝ ներկայիս վարչակարգին: Թող լավ գիտակցեն, որ բիրտ ուժին, որը իշխանությունների միակ զենքն է հանդիսանալու առաջիկա նախագահական ընտրությունների ժամանակ, հակադրվելու է մի ամբողջ ազգի հավաքական կամք: Ինչ վերաբերում է ինձ սպառնալու խնդրին, ապա ուզում եմ հիասթափեցնել պարոն Քոչարյանին. իմ վախը վաղուց է բռնված, և ես պաշտպանված եմ իմ ժողովրդով, ծառ ու թփով, ահելով ու ջահելով, հայրենյաց հող ու ջրով: Ես և իմ նմանները ծառան ու տերն ենք մեր երկրի, լավն էլ է մերը, վատն էլ: Իսկ առաքելությունը մեկն է՝ փրկել հայրենիքը: Այնպես որ, ձեռ քաշեք ինձանից, մի՛ փորձեք վնասել Արտաշես Գեղամյան տեսակին, և վերջապես, որպես գլխավոր հրամանատար, դադարեցրե՛ք սադրիչ գործողությունները բանակային որդուս նկատմամբ, չէ՞ որ դուք էլ եք հայր... Գիտակցեք, որ այս պայքարում դուք ի սկզբանե ոչ թե պարտված եք, այլ՝ դատապարտված:

– Պարոն Գեղամյան, դուք ամեն ինչում մեղադրում եք Ռոբերտ Քոչարյանին, սակայն տպավորությունն այնպիսին է, որ նա ձեր կողմից թվարկված բիրտ ուժի, սպառնալիքների և կեղծիքների իրականացման ողջ պատասխանատվությունը դրել է Սերժ Սարգսյանի վրա՝ հետո հնարավորություն ստանալով այդ ամենը ներկայացնել, իբրև, իրեն մատուցված արջի ծառայություն:

– Ականջից հիշում եմ այն հայտնի ասացվածքը, որ Բուրբոնները այդպես էլ ոչինչ չմոռացան, բայց ոչինչ էլ չսովորեցին: Այդ նշանակմամբ պարոն Քոչարյանը շատ ուժգին բարոյական հարված հասցրեց ողջ բանակին: Պարզեցնեմ միտքս: Վաղը յուրաքանչյուր զինվոր թե սպա կանգնելու է լրջագույն երկընտրանքի առաջ. մի կողմից զինվորը շատ լավ գիտի իր ընտանիքի, հարազատների, իր երկրի թշվառ վիճակը, շատ լավ գիտի, թե ով է այդ վիճակի պատասխանատուն, ինչպես են մի խումբ մեծահարուստ իշխանավորներ՝ ծառայեցնելով իշխանությունը սեփական գրպանին՝ հարստահարում երկիրն ու ժողովրդին: Եվ այս ամենի գիտակցման պայմաններում իրենց ստիպելու են կատարել հրաման՝ քվեարկել հօգուտ այս ամենի հինգը տարի երկարաձգման: Որպես երդում տված

զինվոր, նա երկփեղկված հոգով, կոտրված սրտով կանգնելու է ճամփաբաժանին. կատարում ես հրամանը՝ նզովում ես ինքդ քեզ, իսկ եթե չես կատարում՝ համարվում ես դասալիք: Ավելի ստոր, ճիզվիտական իրավիճակ մեր բանակի համար չէր կարող ստեղծել մինչև իսկ մեր դարավոր թշնամին: Մինչդեռ մենք ունենք արցախյան չլուծված հիմնահարց, դեռ ունենք ռազմատենչ կոչերով հանդես եկող հարևան Ադրբեջան: Ի՞նչ եք կարծում, այս բարոյական լուրջ հարվածներից հետո արդյո՞ք հայ զինվորների մեջ հայրենիքի պաշտպանությունը չի նույնացվի բռնությամբ իրենց պարտադրված իշխանության հետ... Այնպես որ, նախընտրական շտաբի պետ դառնալ-չդառնալու որոշումը մենք այլևս իրավունք չունենք դիտարկելու անձնական նվիրվածության դաշտում: Դե ինչ, որոշումը Ռոբերտ Քոչարյանինն է, որոշումը Սերժ Սարգսյանինն է, իսկ դատավորը ժողովուրդն է ու պատմությունը...

«Հայկական ժամանակ», 14.XII.2002:

Հարվածի՛ր յուրայինիդ, որ օտարները սարսափեն

– *Պարոն Գեղամյան, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ, «Օրակարգ» ծրագրի հեղինակ Տիգրան Նաղդալյանի սպանության հաջորդ օրը իշխանությանը սատարող որոշակի անձինք, հատկապես ՀՅԴ անդամ պատգամավորներ, անմիջապես քաղաքականացրեցին սպանությունը՝ դրա կազմակերպման և իրականացման պատասխանատու ճանաչելով ընդդիմությանը: Ձեր կարծիքով, ո՞րն էր նման արագ արձագանքի պատճառը:*

– Նախ՝ ուզում եմ ցավակցել Տիգրան Նաղդալյանի հարազատներին ու բարեկամներին և նրանց վստահեցնել, որ այդ ստոր սպանության պատվիրատուները և իրականացնողները կբացահայտվեն իշխանափոխության հենց առաջին ամիսներին: Իմ խորին համոզմամբ, կատարվածը հոկտեմբերի 27-ի ոճրագործության շարունակությունն է: Տիգրան Նաղդալյանը ի պաշտոնե շատ բան գիտեր ոճրագործության մասին, որոնք նրան հայտնի էին դարձել հոկտեմբերի 27-ին ԱԺ դահլիճում կատարված տեսագրության ամբողջական տարբերակի դիտումից: Չեմ կարծում, որ նա չէր կարող չզգալ իր տեղեկացվածության ողջ վտանգավորությունը և իր անվտանգությունը ապահովելու համար կփորձեր այդ ամենը ներկայացնել դատարանին: Հավանաբար, այս գիտակցումը ոմանց հասցրեց շոկային վիճակի, որոնք շտապեցին իրենց գործն անել մինչև Նաղդալյանի դատարան հասնելը: Այդ մարդիկ թող պարզ գիտակցեն, որ սպանություններով հոկտեմբերի 27-ի գործը կոծկել հնարավոր չի լինի: Ինչ վերաբերում է հաջորդ օրը սպանությունը քաղաքականացնելուն, ասեմ ավելին. դա տեղի է ունեցել ոչ թե հաջորդ, այլ հենց սպանության օրը, երբ Տիգրան Նաղդալյանը հիվանդանոցում էր և դեռ կենդանի էր: Հենց հիվանդանոցում հոկտեմբերի 27-ի գործով հիմնական կազմակերպչի կասկածանքով ձերբակալված հանրապետության նախագահի՝ այն ժամանակվա աշխատակազմի ղեկավար Ալեքսան Հարությունյանի աներ, մուլտիպլիկատոր Ռոբերտ Սահակյանցը լկտիություն և ստահակություն է ունեցել ասելու, որ այս դաժան սպանության կազմակերպիչը Արտաշես Գեղամյանն է: Դրա հաջորդ օրը տեղի ունեցան այնպիսի զարգացումներ, որոնք բացահայտ ցույց տվեցին, որ իշխանության թևում առկա են խուճապային տրամադրություններ: Երբ սպանվել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահը, փոխանակ հայտարարությամբ հանդես գա ՀՀ ոստիկանապետը, գլխավոր դատախազը, անվտանգության ծառայության ղեկավարը, ինչո՞ւ չէ՝ անվտանգության խորհրդի քարտուղարը, չգիտես ինչու, մեջտեղ է գալիս

արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, որը հայտարարում է, թե նման արարքի ընդունակ են այն մարդիկ, ովքեր Մոսկվա են գնում ասուլիսներ տալու և հոդվածներ գրելու համար: Իսկ Մոսկվայում ասուլիս տվել եմ միայն ես: Եվ խոսքը միայն այն մասին չէ, որ նա մատնացույց է անում ինձ, այլ անուղղակիորեն ուզում է հասկացնել, որ այս սպանության մեջ պետք է տեսնել նաև դրսի հետքը: Ճիշտ այդ նույն ժամանակ, Հանրային հեռուստատեսությունը շռայլորեն եթեր է տրամադրում հոկտեմբերի 27-ի մեջ կասկածվողի աներոջը՝ Ռոբերտ Սահակյանցին, որը, ասես փսիխոթերապևտ, անընդհատ և ռուսերեն բարոյականություն է քարոզում և ակնարկում Արտաշես Գեղամյանին: Դե ինչ, հոգեբանորեն կարելի է հասկանալ իր դստեր և փեսայի ճակատագրով մտահոգ մարդուն, որը գուցե ենթագիտակցորեն փորձում է հոկտեմբերի 27-ի կազմակերպման և դրա արյունալի հետևանքների պատասխանատվությունը հեռու վանել իր ազգակցից: Եվ պահն էլ ընտրել է ճիշտ. բորբոքված էին հարազատների կրքերը, որոնք կարող էին հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Ճիզվիտական քաղաքականություն, որը ներհատուկ է որոշակի ադրբեջանական միջավայրում ծնված առանձին հայերի: Բնականաբար, չէին կարող անտարբեր գտնվել նաև ՀՅԴ պատգամավորները, պատահականությո՞ւն է դա, թե՞ ոչ, թող ընթերցողն ինքը դատի: Մեր կողմից ասենք, որ ոչ շարքային դաշնակցականներ են եղել 27-ի գործով գնացողները՝ այդ թվում և՛ Նաիրի Հունանյանը, և՛ Նաիրի Բադալյանը: Միայն նրանց է հայտնի, թե 1994 թվականին ինչու իրենց շարքերից հեռացավ Տիգրան Նաղդալյանը և այդ նույն ժամանակ մետրոյի «Երիտասարդական» կայարանի մոտ «անզգույշ» ընկնելով՝ կոտրեց ոտքը: Ի վերջո, պետք է նկատի ունենալ այս կուսակցության ղեկավարության անմասն չլինելը «Դրո» և «Վահան Հովհաննիսյան + 30» գործերի հետ: Ինձ համար անակնկալ էր նաև տաղանդավոր բանաստեղծ Ռազմիկ Դավոյանի այն հայտարարությունը, որ իրեն հայտնի է, թե ով է այս սպանության կազմակերպիչը: Քրեագիտությունը ասում է, որ մանրակրկիտ կազմակերպված սպանություններին լավատեղյակ են լինում կամ կազմակերպիչները, կամ ճակատագրի բերումով քրեագետ դարձած մարդիկ, ում համար ամենևին նորություն չեն նմանատիպ ահաբեկչությունները և որոնք տեղյակ են բազմաթիվ նման փաստերի: Հավանաբար, իմ կողմից հարգված բանաստեղծը քրեագիտական իր երկրորդ մասնագիտացումը ձեռք է բերել նախագահի աշխատակազմում աշխատելու տարիներին: Ուզում եմ գլխավոր դատախազին հարցնել. արդյոք հարցաքննվե՞լ են Աղվան Վարդանյանը, Վահան Հովհաննիսյանը (խոսքը «Վահան Հովհաննիսյան + 30» գործի մասին չէ), Ռազմիկ Դավոյանը, ովքեր հեռուստատեսությամբ պնդում էին, թե գիտեն ովքեր են կազմակերպիչները, և եթե հարցաքննվել են՝ ի՞նչ արժեքավոր տեղեկություններ են փոխանցել նախաքննությանը:

– Իսկ ինչո՞ւ ընդդիմությունից որպես թիրախ ընտրվեցիք հենց դուք:

– Սպանության իրական կազմակերպիչները ցանկանում էին փսիխոզ ստեղծել Նաղդալյանի հարազատների շրջանում և այդ մթնոլորտում կփորձեին իրենց իսկ կողմից վարձված մարդասպանի միջոցով ահաբեկչություն իրականացնել իմ նկատմամբ: Հետո

էլ կասեին, որ իրենք ընդամենը տեսակետ են հայտնել, իսկ ընկերներն էլ բառացի հասկանալով՝ վրեժխնդիր են եղել՝ կորստի դիմաց: Բայց այստեղ վտանգավորը մեկ այլ երևույթ է: ԱԺ պաշտպանության, ներքին գործերի և ազգային անվտանգության հանձնաժողովի նախագահ Վահան Հովհաննիսյանը, ՀՅԴ խմբակցության ղեկավար Աղվան Վարդանյանը, ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը, նախագահի խորհրդական Ռազմիկ Դավոյանը, մարդիկ, ովքեր հանդիսանում են նախագահի հենարանը, ուղղակիորեն մեղադրելով ընդդիմությանը, ոչ միայն խախտում են անմեղության կանխավարկածը, այլև խախտելով քրեական օրենսգիրքը և օգտագործելով իրենց պաշտոնական դիրքը՝ փաստացի ուղղորդում են նախաքննությունը: Սա չափազանց վտանգավոր երևույթ է, որը հատուկ է հոգեվարքի հասած իշխանությունների համար: Նման իշխանությունների գործունեությունը դարձել է վտանգավոր երկրի գոյության և ապագայի համար: Ինչ վերաբերում է ինձ թիրախ ընտրելուն, ապա հօգուտ նախագահի թեկնածուների կազմակերպված ստորագրահավաքի արդյունքներից և դեկտեմբերի 20-ին «Իզվեստիա» թերթում տպագրված տեղեկանքում նշված հարցումների տվյալներից հետո (ըստ որոնց, 17 հազար հարցվածներից 68-70 տոկոսը նշել է, որ քվեարկելու է հօգուտ Արտաշես Գեղամյանի, և միայն 4.5 տոկոսը՝ հօգուտ Քոչարյանի), նախագահի շրջապատում շատ լավ հասկացել էին, որ առաջիկա ընտրություններում հաղթելու ամենամեծ հնարավորությունն ունեմ ես: Ինձ կապելով այս աղմկահարույց սպանության հետ՝ նրանք փորձում են յուրահատուկ պարիտետային վիճակ ստեղծել. հոկտեմբերի 27-ի ոճրագործության հետ կապված հիշատակվում է Ռոբերտ Քոչարյանի անունը, իսկ Տիգրան Նաղդալյանի սպանության գործում ՀՅԴ-թեթև ձեռքով պետք է հիշատակվեր իմ անունը: Եվ այնպես են ինձ մեղադրում իշխանության ձգտելու մեջ, կարծես իշխանությունն իրենց հոր տնից օժիտ են բերել: Ընկերներին ուզում ենք ասել, որ օժիտից օգտվելու համար մենք չենք ցանկանում ամուսնանալ այդ աղջկա՝ իշխանության հետ, համ գեշ է, համ էլ՝ փչացած:

– Դուք խոսում եք հնարավոր վրեժխնդրության մասին, արդյոք կա՞ սպառնալիք ձեր անվտանգության և կյանքի համար:

- Ցավոք սրտի, մեր երկրում ստեղծվել են այնպիսի իրավիճակ և բարքեր, ձևավորվել է հանցավոր այնպիսի վարչակարգ, որ հնարավոր է ամեն ինչ: Հնարավոր է հոկտեմբերի 27-ին ահաբեկչություն անել և հաջորդ օրն ասել՝ սա ուչաստկովի մակարդակի գործ է, ուղղորդելով դատաքննչական մարմիններին, լրագրող սպանել և մեղքը գցել ընդդիմության վրա: Բայց եթե հնարավոր է սպանել անհատների, ապա ամբողջ հայ ժողովրդին սպանել նրանց չի հաջողվի: Ժողովուրդը շատ լավ գիտակցում է, թե ինչ է կատարվում երկրում, և ինչի են ընդունակ այս իշխանությունները: Այնպես որ, բավական է նման արյունալի ճանապարհներով քաղաքական հարցեր լուծել, միևնույն է, դա իրենց չի հաջողվում: Չեմ կարծում նաև, թե այդքան բթամիտ են, որ մինչև այժմ չեն հասկացել, որ չեն կարող վախեցնել կամ կաշառել ինձ: Իշխանափոխությունից հետո անողոք կերպով նպաստելու եմ վերջին տարիներին կազմակերպված շուրջ 20 աղմկահարույց

սպանությունների բացահայտմանը, ինչի մասին արդեն հայտարարել եմ «Իզվեստիա» թերթի իմ հոդվածում: Կարծում էի, որ այս ամենն ամենաքիչը պետք է հուզեր Վարդան Օսկանյանին, որը կարծես անմասն է այս ամենից: Սինչդեռ, զավեշտը հասել է այնտեղ, որ երկրի ԱԳ նախարարը Հանրային հեռուստատեսությամբ ժողովրդին կոչ է անում ապստամբել ընդդիմության դեմ: Բնականաբար, մեր ժողովուրդը տարբերում է իր ծոցից ծնված, այս հող ու ջրի զավակին՝ այստեղ հյուրախաղերի եկածից, որը արհեստականորեն ուզում է ներդրվել մեր հողի վրա: Չի հաջողվելու իրեն:

– Տիգրան Նաղդալյանի սպանության պատասխանատվությունը գցելով ընդդիմության վրա՝ փորձ է արվում ահաբեկել և լռեցնել ընդդիմությանը: Արդյո՞ք այս սպանությունը էական ազդեցություն կունենա նախագահական ընտրությունների վրա:

– Իհարկե, իշխանությունները շատ են ցանկանում ահաբեկել մեր ժողովրդին, ցույց տալ, որ իրենց դեմ խաղ չկա, որ սա հերթական անպատիժ սպանությունն է, որի կազմակերպիչները և իրականացնողները չեն բացահայտվելու: Կուզենայի սխալված լինել, բայց սա շատ նման է ռուսական հայտնի ասացվածքին, որն ասում է. «Հարվածի՛ր յուրայինիդ, որ օտարները սարսափեն»: Դիմում եմ պատկան մարմիններին՝ ՀՀ ոստիկանությանը, անվտանգության ծառայությանը, դատախազությանը՝ շնորհակալություն հայտնելով իմ հեռախոսային և մինչև իսկ մեր բնակարանային խոսակցությունները լսելու համար: Դրան զուգահեռ՝ խնդրում եմ առանձնահատուկ կերպով ապահովել Ալեքսան Հարությունյանի, ԱՄՆ պարտադրված գործուղման ուղարկված Տիգրան Նազարյանի, Նաիրի Բաղալյանի անվտանգությունը, որոնք ևս կարող են դառնալ նման ահաբեկումների թիրախ: Հիշենք նաև, թե ինչպես բանտում աներևակայելի պայմաններում էլեկտրահարվեց հոկտեմբերի 27-ի հիմնական վկաներից մեկը: Այս ահաբեկումները կշարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ մենք ականատեսն ենք, թե ինչ արտոնյալ վիճակի մեջ է հայտնվել Նաիրի Հունանյանը՝ իր բանդայի հետ: Իսկ ելքը մեկն է՝ իշխանափոխություն, որին անհամբեր սպասում է համայն հայությունը:

«Հայկական ժամանակ», 8.I.2003:

Նա այդպես էլ օտար մնաց

– *Պարոն Գեղամյան, առաջին հարցս շատ կոնկրետ ձևակերպեմ՝ Քոչարյանի դեմ «խաղ կա՞»:*

– Իշխանական քարոզչամեքենան ամեն ինչ անում է հակառակ տպավորությունը ստեղծելու համար, բայց միևնույն է՝ ապարդյուն են այդ փորձերը: Եկեք ի մի բերենք այս հինգ տարիներին՝ Քոչարյանի օրոք, Հայաստանում կատարվածը: Քաղաքական երանգով 25 սպանություն, որոնցից ոչ մեկը չի բացահայտվել: Լրջագույն հետընթաց ղարաբաղյան հիմնախնդրի լուծման ճանապարհին. ԼՂ-ն մինչև Քոչարյանը բանակցությունների լիիրավ սուբյեկտ էր, այժմ դարձել է բանակցության օբյեկտ՝ ՀՀ-ի և Ադրբեջանի միջև: Անընդմեջ ձախողումներ արտաքին քաղաքականության մեջ. Քոչարյանի օրոք շրջանառության մեջ մտավ Մեղրիի միջանցքի մասին խոսակցությունը: Սոցիալական ծանր վիճակ. ՀՀ աշխատող ազգաբնակչության 64 տոկոսի աշխատավարձը մինիմալ սպառողական զամբյուղից ցածր է՝ 5-20 հազար դրամ: Սրա՞նք են այն ցուցանիշները, որ խոսում են Քոչարյանի օգտին: Գուցե երեխաների շրջանում շեշտակի աճ գրանցած թոքախտի բռնկումնե՞րն են ցույց տալիս, որ նրա դեմ «խաղ չկա»:

– *Իսկ տնտեսական աննախադեպ ա՞ճը…*

– 2002 թ. տնտեսության բոլոր ոլորտներում գրանցված ձախողումները թմբկահարվում են իբրև «տնտեսական աննախադեպ աճ»: Հրապարակեմ իրենց իսկ տվյալները: 2002-ին նախատեսված ծրագրով շահութահարկի գծով պլանը կատարվել է ընդամենը 78 տոկոսով, հողի հարկը՝ 33 տոկոսով, եկամտահարկը՝ 93 տոկոսով, ներմուծվող ապրանքներից մաքսային տուրք է հարկվել նախատեսվածի 78 տոկոսով: Շարունակե՞մ: Ավելի խայտառակ վիճակ է ծախսային ոլորտում. ընդհանուր ֆինանսավորումը կատարվել է ընդամենը 89,5 տոկոսով, ընդ որում՝ կրթության և գիտության ոլորտը 91 տոկոսով է ֆինանսավորվել, առողջապահությունը՝ 91 տոկոսով, բնակարանային կոմունալ տնտեսությունը՝ 34 տոկոսով (և դա է նաև պատճառը, որ, եղանակները ցրտելուն պես, 1500 շենք ճանաչվեց վթարային, օրերով զրկված էին ջրամատակարարումից, պայթել էր կոյուղին): Խայտառակ վիճակ է գրանցվել ջրամատակարարման ոլորտում, որը ֆինանսավորվել է ընդամենը 29,3 տոկոսով, հողերի բարելավման աշխատանքները ֆինանսավորվել են 19,8 տոկոսով, ինչի արդյունքում մեր սակավահող երկրում անընդհատ ավելանում են անապատացվող հողերը… Կարճ ասած՝ չկա մի բնագավառ, որտեղ չտեսնենք անդունդային անկում: Էլ չեմ խոսում բարոյազրկման և բարոյալքման այն աստիճանի մասին, որը տիրում է մեր ողջ հասարակության մեջ: Եվ հուսալքված ու

գազազած մարդիկ իրենց վրդովմունքն արտահայտում են՝ լքելով Հայրենիքը… Եվ այս համապատկերում նրանք հանդգնում են խոսել «Քոչարյանի դեմ խաղ չկա» լեզվո՞վ… Մի մարդ, որը, ինչպես բոլորս գիտենք, և՛ ՀՀ-ում, և՛ միջազգային կառույցներում իրավունք չուներ առաջադրվելու: Եվ արդեն իսկ ոչ լեգիտիմ նախագահի թեկնածու ունենք, ինչը ստվեր է գցում մեր ընտրությունների վրա:

– Անդրադառնալով Քոչարյանի գրանցմանը՝ինչպե՞ս եք գնահատում ԺՀՈՒԴ-ի ձեր դաշնակից կոմունիստների ներկայացուցչի պահվածքը ԿԸՀ-ում, երբ նա դեմ արտահայտվեց Ռաֆֆի Հովհաննիսյանի գրանցման հարցին և կրծքով պաշտպանեց Ռ. Քոչարյանին գրանցելու առաջարկը:

– Խիստ բացասական եմ վերաբերվում, սակայն այդ մասին ավելի ճիշտ կլինի խոսեք կոմունիստների հետ:

–Նորից վերադառնանք գործող նախագահին՝ մոռանալով կոմունիստներին: Մ՛յ, ասում եք՝ «ոչ լեգիտիմ է», իսկ որևէ բան ձեռնարկելո՞ւ եք այդ ուղղությամբ:

– Անշուշտ: Երբ ԿԸՀ-ում քննարկվում էր Քոչարյանի գրանցման հարցը, «Ազգային Միաբանություն» կուսակցության քաղխորհրդի անդամ, ԿԸՀ անդամ Զավեն Պլուզյանն իր ելույթում հիմնավորեց Քոչարյանի գրանցման անհնարինությունը՝պայմանավորված գործող Սահմանադրությամբ և ԸՕ-ով: Գրավոր ելույթը խնդրեց կցել քննարկման արձանագրությանը, հարց բարձրացրեց, որ ուսումնասիրեն իր բերած փաստարկները: Կոպտորեն խախտելով ԸՕ-ն՝ այդ հարցը չքննարկվեց: Բիրտ կերպով ընդունվեց կամայական որոշում, որին դեմ եղան ԱՄ և ԱԺՄ ներկայացուցիչները: Այդ հարցը քննարկման առարկա է դարձել նաև «16»-ի ներսում: Սկզբունքային պայմանավորվածություն կա համապատասխան հայտարարություն անելու, որն առաջիկայում անպայման կլինի:

– Դուք ասում եք՝ «բիրտ ուժով», «կամայական որոշում»… Որևէ երաշխիք չկա, որ ճիշտ նույն մեթոդներով իշխանությունները չեն անի իրենց ուզածը, այն է՝ բիրտ ուժով և կամայականորեն թույլ չեն տա իշխանափոխություն: Ընդդիմությունն ունի՞ համապատասխան ռեսուրսներ և կամք՝ գոնե անօրինակությունների դեմն առնելու…

– Եթե նրանք այդ ձևերով ուզում են ժողովրդին ապացուցել, թե «իրենց դեմ խաղ չկա» և անելու են իրենց ուզածը, չարաչար սխալվում են: Ուրեմն՝ չեն ճանաչում հային, հայի ոգին: Ընդդիմությունը, ի դեմս ԺՀՈՒԴ-ի, նաև՝ «16»-ի միավորման, համախմբված է այն գաղափարի շուրջը, որ առաջիկա ընտրությունները բախտորոշ են լինելու հայոց պետականության համար: Եվ մենք ունենք այն ռեսուրսները, այն նվիրյալներին, ովքեր երբեք չեն ընկրկելու այդ բիրտ ուժի առաջ, ովքեր պատրաստ են մինչև վերջ պաշտպանելու բոլորիս սահմանադրական իրավունքը՝ժողովրդավարական ընտրությունների արդյունքում ձևավորել ազգային համաձայնության իշխանություններ: Մենք այդ ուժն ունենք, և, Աստված մի արասցե, եթե հանկարծ Քոչարյանը կասկածում է դրան, եթե կարծում է, թե 98-ին տեղի ունեցածը կրկին կհաջողի: Երբե՛ք: Դա թույլ չենք տա: Առավել ևս, որ հիմա ԵԽ անդամ ենք, և եթե որևէ ոտնձգություն լինի ազատ և արդար

ընտրությունների նկատմամբ, փորձ արվի խափանել, համոզված եղեք, մենք կհասնենք մինչև եվրոպական բարձրագույն ատյաններ… Բայց հիմքում, իհարկե, ժողովրդի կամքը և մեր վճռականությունը կլինեն:

– Լավ, իսկ եթե ընտրությունները լինեն օրինակա՞ն… Չէ՞ որ իշխանություններն ամեն օր ցույց են տալիս Քոչարյանի ցնցող վարկանիշն ապացուցող սոցիոլոգիական տվյալներ: Չե՞ք հավատում դրանց: Ունե՞ք Ձեր տվյալները:

– Տվյալներն իմը չեն: Տվյալները վերջերս «Իզվեստիա» թերթում հրապարակված նյութերն են, որոնք 17 հազար մարդու շրջանակներում արված հարցման արդյունք են: Այդ հարցման արդյունքում Քոչարյանի վարկանիշը 4,5 տոկոս է ընդամենը: Իսկ այդ արհեստածին սոցհարցումների տվյալները, որ ներկայացնում են իշխանական քարոզչամեքենայի պատվերով, ընդամենը ծիծաղ են առաջացնում: «Հալվա, հալվա» ասելով՝ բերանդ չի քաղցրանա: Ավելին, եթե այդ հարցումներն արվեին նախագահի նստավայրում և լինեին փակ, գաղտնի, ապա այնտեղ էլ նրա վարկանիշը 10 տոկոսը չէր գերազանցի: Իհարկե, ցավալի է, որ նախագահին չեն վստահում անգամ իր մերձավորները: Առերևույթ նվիրվածություն են ցույց տալիս, բայց մտածում են նրանից շուտ ազատվելու մասին: Ցավալի է, բայց այդպես է, նա այդպես էլ չմերվեց այս միջավայրին, մնաց օտար:

– Պրն Գեղամյան, ընդդիմության շարքերում անընդհատ հնչում է այն տեսակետը, որ միասնական թեկնածուով հանդես գալու դեպքում ընդդիմության շանսերը՝ հաղթելու հենց առաջին փուլում, մեծանում են:

– Միանշանակ կիսում եմ այդ տեսակետը: Եթե ընդդիմությունը հանդես գա միասնաբար, Քոչարյանը հենց առաջին փուլում ջախջախիչ պարտություն կկրի: Եվ զուր չէ, որ դա գիտակցելով՝ իշխանական քարոզչամեքենան ամեն ինչ անում է ընդդիմության մեջ պառակտում սերմանելու համար: Բայց դա իրենց բնավ չի հաջողվի, որովհետև ընդդիմության յուրաքանչյուր թեկնածու շատ լավ գիտակցում է, որ այս պահին և մշտապես գլխավորը հայրենիքի փրկության հարցն է: Եվ բոլորովին էական չէ, թե ով կլինի միասնական թեկնածուն: Գործելու ենք միասնաբար: Անկախ նրանից՝ ով կլինի նախագահ, ով կլինի նախագահի զինակից: Հայրենիքի փրկության հարցը շատ ավելի վեհ է, քան այս կամ այն, այդ թվում՝ Արտաշես Գեղամյանի անձնական հավակնությունները: Եվ որևէ կասկած չունեմ, որ մենք կգտնենք այն եզրերը, որոնցով հնարավոր կդառնա լուծել միասնական թեկնածուի ընտրության հարցը: Այդ խնդիրը լուծելի է, և ի հեճուկս Քոչարյանի՝ մենք անպայման լուծելու ենք: Թե ընդդիմությունը և թե հայությունն ունեն այնքան պատվախնդրություն, որ գիտակցեն՝ այսպես, ստրուկի կյանքով, ապրել այլևս հնարավոր չէ:

– Դեռ չէ՞ք կոնկրետացնի՝ ով կլինի այդ թեկնածուն:

– Ընդդիմության յուրաքանչյուր թեկնածու՝ թե՛ Արամ Զավենի Սարգսյանը, թե՛ Արամ Գասպարի Սարգսյանը, թե՛ Ստեփան Դեմիրճյանը, թե՛ Վազգեն Մանուկյանը, թե՛ Գառնիկ Մարգարյանը, թե՛ մյուսներն իրենց բարոյական հատկանիշներով և երկրին նվիրվածու-

թյամբ շատ ավելի բարձր են ու անհամեմատ վստահություն են ներշնչում, քան այս վարչակազմը, որը զավթել է իշխանությունը և որի օրոք ականատես եղանք այդքան ահավոր սպանությունների: Ընդդիմությունը կընտրի իր միասնական թեկնածուին, և նրա առաջադրումը կլինի ողջ ժողովրդի հաղթանակը:

– *Ե՞րբ ենք տոնելու այդ հաղթանակը:*

– Առաջիկայում երկու հաղթանակ ունենք տոնելու: Մեկը՝ ընդդիմության միասնական թեկնածուի առաջադրումը, մյուսը՝ փետրվարի 20-ին, երբ ժողովուրդը ցնծագին կընդունի իր իսկ ընտրած նախագահին: Որ այդպես էլ լինելու է՝ ոչ մի կասկած չունեմ: Քանի որ ժողովուրդը մինչև փետրվարի 19-ը կծանոթանա ազգային համաձայնության կառավարությանը, որում ընդգրկված կլինեն և՛ ընդդիմության շարքերից, և՛ իշխանության մեջ գտնվող ազնիվ, պարկեշտ ու պրոֆեսիոնալ մասնագետներ: Մարդիկ, ում համար աչքի լույսի պես թանկ է ինքնիշխան, զարգացող Հայաստանի ճակատագիրը, ովքեր միայն մեր հողուջրի վրա են պատկերացնում իրենց ու իրենց սերունդների ներկան ու գալիքը, որն անպայման լուսավոր է լինելու:

Մելանյա Բարսեղյան

«Օրրան», 23. I. 2003:

Ես ոչ խենթ եմ, ոչ էլ ինքնահավանությամբ եմ տառապում

11 թեկնածուների քաղաքական դիմագծերը, համենայն դեպս՝ հայտնիների, արդեն, քիչ թե շատ, ծանոթ է հանրությանը: Սակայն մարդը բնութագրվում է ոչ միայն իր ծրագրերով, ելույթներով ու կոչերով, այլև իր կենսակերպով, կյանքի նկատմամբ իր հայացքներով, նախասիրություններով:

«Օր»-ն այսօրվանից սկսում է հարցազրույցների շարք՝ ՀՀ նախագահի բոլոր թեկնածուների հետ՝ հարցեր ուղղելով նրանց ամեն ինչի մասին, բացի քաղաքականությունից: Այսինքն՝ ազատ ոճի, անփողկապ:

Եվ, այսպես, առաջին անփողկապ հարցազրույցն սկսեցինք ցուցակում առաջին թեկնածուի՝ «Ազգային Միաբանություն» կուսակցության ղեկավար Արտաշես Մամիկոնի Գեղամյանի հետ:

– Սկսենք մանկությունից, դպրոցական տարիներին ի՞նչ սպորտաձևով եք զբաղվել:

– Շուրջ 4 տարի պարապել եմ բռնցքամարտ: Ծնողներս ինձ նախատում էին, որ թողնեմ բռնցքամարտը: Այդ օրը եկավ, երբ կոտրվեց քթիս միջնապատը, դժկամությամբ թողեցի այս մարզաձևը և սկսեցի զբաղվել ջրագնդակով: 4 տարի էլ զբաղվել եմ լողով և ունեմ առաջին կարգի որակավորում: Ինչպես յուրաքանչյուր երևանցի տղա, ես նույնպես տևական ժամանակ ֆուտբոլ եմ խաղացել «Կասկադ» թիմում:

– Ի՞նչ ոճի երաժշտություն եք նախընտրում լսել:

– Բավական տարված եմ դասական երաժշտությամբ: Իմ սիրելի կոմպոզիտորներն են Բեթհովենը, Մոցարտը, սիրում եմ նաև Արամ Խաչատրյանի երաժշտությունը, Բրամս, այսինքն՝ դասական երաժշտության մեծ սիրահար եմ, որովհետև այդ երաժշտությունը հանգստացնում է ինձ և մտովի տեղափոխում այն երանելի աշխարհը, որը կա իմ երազներում:

– Իսկ այդ երանելի աշխարհը տեղափոխող երաժշտությունը Ձեզ ուղեկցում է նաև աշխատա՞նքի ժամերին:

– Բնականաբար, այդ հնարավորությունից զուրկ եմ, քանի որ շտաբներից մարդիկ են գալիս-գնում և չի հաջողվում աշխատանքի ժամերին լսել երաժշտություն անգամ որպես ֆոն, ուստի միայն այն ժամանակ, երբ տանն եմ գտնվում, աշխատում եմ հնարավորինս միշտ երաժշտության ներքո կարդալ, հյուրեր ընդունել:

– Ի՞նչ գրականություն եք կարդում և ո՞րն է այժմ Ձեր ճեռքի գիրքը:

– Ես հիմա հիմնականում կարդում եմ քաղաքագիտական գրականություն, շրջանակը բավական լայն է, մասնավորապես մեծ հետաքրքրությամբ կարդում եմ Վ. Ինոզեմցևի «Անթոլոգիա»-ն, ուր ներառված են վերջին 20 տարիների ընթացքում ականավոր ֆուտուրոլոգների աշխատությունները: Հետաքրքրությամբ կարդացի Տոյնբիի «Постижение истории» աշխատության ռուսերեն հրատարակությունը և այլն: Հեղինակներ, որոնք քաջ հայտնի են արևմտյան ընթերցողին, որովհետև նրանք, փաստորեն, վեր են հանում և մատնանշում աշխարհի զարգացման հնարավոր ուղիները, և այդ ամենին, բնականաբար, պետք է իրազեկ լինես, որ կարողանաս, թերևս, տեսնել՝ որտե՞ղ է Հայաստանի դերն համաշխարհային այդ քաղաքակրթական զարգացումների խաչմերուկներում: Հետաքրքրվում եմ նաև Ա. Դուգինի աշխատություններով: Հակված եմ պատմական մեմուարների ընթերցմանը և կոնկրետ այս պահին կարդում եմ Շերվուդի «Ռուզվելտը և Հոպկինսը». շատ հետաքրքիր աշխատություն է, որում, փաստորեն, մանրակրկիտ կերպով, ոչ միայն գեղարվեստորեն նկարագրված են, այլ նաև վերլուծված են այն ծանրագույն տարիները, մեծ դեպրեսիայի, որոնք եղել են 20-րդ դարի 20-ական թվականների վերջին և 30-ականների առաջին կեսին, և որից կարողացավ փառահեղ կերպով, շնորհիվ իր քաղաքականության, Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը դուրս բերել երկիրը զարգացման շառավիղ, կարողացավ Երկրորդ համաշխարհային պատերազմում արդեն ունենալ այնպիսի էկոնոմիկա, որ դաշնակիցների հետ տապալեն ֆաշիստական Գերմանիայի աշխարհակալ ոտնձգությունները:

– Խոսենք արվեստի մեկ այլ ոլորտից՝ գեղանկարչությունից: Հետաքրքրվո՞ւմ եք, արդյոք, գեղանկարչությամբ, և ո՞վ է ձեր սիրելի նկարիչը:

– Գեղանկարչության հանդեպ իմ հետաքրքրությունն սկսվել է ուսանողական տարիներին, երբ ընթերցում էի գեղանկարչության հանրահայտ մասնագետ և գրականագետ Անրի Պերյուշոյի աշխատությունները՝ նվիրված Վան Գոգին, Գոգենին, Ռենուարին, մեջս հետաքրքրություն և սեր առաջացավ գեղանկարչության, մասնավորապես, իմպրեսիոնիստների և պոստիմպրեսիոնիստների նկատմամբ: Այ, հիմա խոսում եմ ու աչքիս առաջ գալիս է Գոգենի հանրահայտ «Իսկ դու խանդում ես» կտավը: Հանգամանքի բերումով բախտ եմ ունեցել լինել արևմտաեվրոպական աշխարհահռչակ թանգարաններում և ոչ թե 1 կամ 2 ժամով, այլ օրեր եմ անցկացրել՝ լինի դա Մադրիդի Պռադոյի թանգարանը, Լուվրը, բրիտանական ազգային թանգարանը կամ Ամստերդամի Վան Գոգի թանգարանը, Մոսկվայի Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանը: Ես հնարավորություն եմ ունեցել մոտիկից հաղորդակցվելու գեղանկարչությանը, և պետք է ասեմ, որ դա չափազանց հետաքրքիր մտորումների է բերել: Ինչևէ, գեղանկարչությամբ տարված եմ:

– Քանի որ տարված եք գեղանկարչությամբ, նկարելու փորձեր արե՞լ եք:

– Այդ գործում բացարձակ չկամ: Գիտե՞ք ինչու, հավանաբար, մեջս վախը կա: Երբ առնչվում ես գեղանկարչության համաշխարհային մեծ մաեստրոների գործերի հետ, առնվազն պետք է կամ խենթ լինես, կամ ինքնահավան, ինչ-որ անհասկանալի մի մարդ,

որ հանդգնես ինքդ նկարել: Ես ոչ խենթ եմ և ոչ էլ ինքնահավանությամբ եմ տառապում:

– Ձրույցից այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Դուք արվեստների մեծ գիտակ եք, իսկ թատերական արվեստին որքանո՞վ եք ծանոթ:

– Թատերական արվեստն, անշուշտ, այն եզակի մշակույթի ձևերից է, որը չափազանց մեծ ազդեցություն է թողել ինձ վրա: Երբ 1970 թ. նախադիպլոմային պրակտիկան անցկացնում էի Մոսկվայում, իմ լավ բարեկամի՝ Ալ. Հալաբյանի շնորհիվ, գրեթե 4-5 ամիսների ընթացքում կարողացա դիտել այն ժամանակվա ամենաժամանակակից բեմադրությունները, իսկ որ ավելի կարևոր եմ համարում, հնարավորություն ունեցա անմիջականորեն շփվել ռուսական թատերական արվեստի ամենակարկառուն գործիչների հետ: Այնպես որ, թատերական տեսակետից չափազանց երես առած եմ: Ավելին ասեմ. երջանկահիշատակ Հրաչյա Ներսիսյանի հետ նկարահանվել եմ «Տժվժիկ» ֆիլմում, որտեղ ես խաղում եմ նրա թոռան դերը:

– Քանի որ խոսեցինք կինոյից, ասացեք, խնդրեմ, Ձեր կարծիքը Ա. Էգոյանի «Արարատ» ֆիլմի մասին:

– Գիտեք, այն, որ ֆիլմը մեզ համար շատ հոգեհարազատ և ցավագին էջեր է լուսաբանում, դա ակնհայտ է: Ինչ վերաբերում է գեղարվեստական արտահայտչականությանը, ապա այստեղ տարբեր կարծիքներ կան: Կոնկրետ ինձ ավելի է դուր եկել Անրի Վերնոյի «Մայրիկ» ֆիլմը:

– Խոսեցինք արվեստի բնագավառներից, կարելի է ասել՝ պարզեցինք Գեղամյան-արվեստասերի նախասիրությունները: Ես կցանկանայի, որ անցում կատարեինք կենցաղ, և իմ առաջին հարցը՝ Դուք սիրո՞ւմ եք ձեր զոքանչին:

– Իմ զոքանչին թող իմ կինը սիրի, ես իմ զոքանչին հարգում եմ:

– Ունե՞ք Ձեր անեկդոտը զոքանչի մասին:

– Գիտեք, ես կողմնակից չեմ, երբ քո երեխային պահում-դաստիարակում է զոքանչը, և դու, ընդհանրապես, այդ ինստիտուտի մասին անեկդոտ ես պատմում: Դա երախտամոռության ինչ-որ մի ձև եմ համարում: Զոքանչների մասին անեկդոտ չեն պատմում: Այդ անեկդոտները հիմնականում պատմում են այն մարդիկ, ովքեր միշտ հայտնվել են կա՛մ կնոջ, կա՛մ իրենց զոքանչի կրնկի տակ:

– Կուզեինք հատկապես իմանալ՝ կարևոր որոշում ընդունելուց առաջ խորհրդակցո՞ւմ եք Ձեր ընտանիքի անդամների, մասնավորապես, Ձեր կնոջ հետ, և, հետևաբար, ականջալուր լինո՞ւմ եք նրա խորհրդին:

– Կինս հասարակության մի մասնիկն է: Եթե դու հասարակության ամենալայն զանգվածի տված խորհուրդը հաշվի ես առնում, ապա դու պարտավոր ես լսել նաև քո կնոջը: Բայց, լսես, որ կարողանաս հանրագումարի բերել բոլոր դիտարկումների հետ, և այդ ամենի հիման վրա կայացնես ճիշտ որոշում: Ես չեմ ընդունում այն մարդկանց, ովքեր կարծում են, որ ընտանիքի անդամին ականջալուր չլինելն իրենց լավ է բնութագրում, ես այդ կարծիքին չեմ, որովհետև ցանկացած ընտանիք, ինչքան կայուն է, նույնքան կայուն է նաև պետությունը: Այսինքն՝ երկրի և ընտանիքի գաղափարն ինձ համար սուրբ

գաղափար է: Ընտանիքն ինձ համար սրբությունների սրբոցն է, և հայրենիքը սկսվում է հենց ընտանիքից:

– *Լավ, ո՞րն է Ձեր սիրած ճաշատեսակը:*

– Հիմա, եթե ասե՛մ, ընթերցողը կասի՝ էս մեր կիսասոված հալիճ Գեղամյանն ուտելիքի մասին է խոսում, եթե չասե՛մ՝ էն կուշտ մարդիկ էլ կասեն՝ էս մարդը, եթե իրա բերնի համը չգիտի, մեր համ ու հոտը ոնց պիտի գնահատի: Դուք ուզում եք ասել, որ ես նմանվում եմ Ֆ. Ռաբլեի հերոսների՞ն: Ո՛չ:

– *Քանի որ մեր հարցազրույցն անփողկապ է, կխնդրեի ասել, թե դուք փողկապ սիրո՞ւմ եք և, ընդհանրապես, հագուստի՝ ձեր սիրած ոճը:*

– Բնականաբար, անկողին մտնելիս թե՛ փողկապը, և թե՛ վերնազգեստը հանում եմ…

– *Ձեր սիրած գույնը:*

– Սպիտակ, քանի որ դա մաքրության խորհրդանիշ է, և սպիտակի վրա կեղտն ու կեղծը շատ շուտ են երևում:

– *Դուք ունե՞ք Ձեր իմիջմեյքերը:*

– Ուրեմն, նախագահական ներկայիս ընտրությունների ժամանակ ընդդիմադիր թեկնածուներից և ոչ մեկին, ըստ իս, իմիջմեյքեր անհրաժեշտ չէ: Ուշադիր նայում ես պրն Քոչարյանի ընտրարշավին, քարոզչությանը, և վարվում ես ճիշտ հակառակը՝ համոզված լինելով, որ դա հարյուր տոկոսանոց հաջողություն կբերի:

– *Աստծուն հավատո՞ւմ եք:*

– Աստվածաշնչում գրված է՝ հավատքի մասին հրապարակավ մի խոսիր, ավելին՝ Աստծո անունը զուր տեղը մի՛ հնչեցրու:

Հարցազրույցը՝
Քրիստինե Մնացականյանի

«Օր», 23 – 24.I.2003:

Ընտրությունն իրենցն է, հաղթանակը՝ մերը

«Չի» – Պարոն Գեղամյան, ընդդիմությունը շարունակում է ստանալ հասարակության կամքի վրա իշխանությունների բռնանալու կոնկրետ և բազմաթիվ փաստեր: Մասնավորապես, մարզային հիվանդանոցներից մեկում ծանր հիվանդին օրերս պատրաստակամություն էին հայտնել անվճար վիրահատել միայն այն դեպքում, եթե վերջինս ստորագրի, որ պաշտպանելու է Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը:

– Նման գործընթացները գալիս են ապացուցելու այն պարզ ճշմարտությունը, որ պարոն Քոչարյանը, վարչապետությունից հետո զավթելով նախագահի աթոռը, այդպես էլ չհասկացավ մեր ժողովրդի հոգեբանությունը: Նա այդպես էլ չհասկացավ, թե ի՞նչ է նշանակում, երբ գալիս ես մարդու օջախ, մարդը, ելնելով իր պապերի, իր ազգին ներհատուկ ավանդույթներից, ջերմորեն, սրտաբաց ընդունում է քեզ և հետո հանկարծ փորձում ես հյուրընկալ տանտիրոջն անկյուն մղել ու նրան դուռը ցույց տալ: Մեր խոհեմ ժողովուրդն այս ամենն արդեն կրում է հինգ տարի շարունակ, բայց դա չի նշանակում, որ համբերության բաժակը չի լցվել: Քոչարյանի և այս վարչակազմի համընդհանուր մերժումը վեր է ածվել արդեն ատելության: Եվ ընդդիմությունն անընդմեջ քայլեր է արել, որ մեղմի այդ թշնամանքը, նրանց հուշի, որ բռնի և բիրտ ուժն անընդունելի է Հայաստանում, քանզի ցանկացած բռնություն ծնում է ավելի մեծ բռնություն: Պարոն Քոչարյանը թող ականջին օղ անի՝ ինչ ցանում են, այն էլ հնձում են: Թշնամանքի այս պտուղները, որ ցանվել են իշխանությունների կողմից, բնականաբար, շատ անկանխատեսելի և անցանկալի հետևանքների կհանգեցնեն: Տպավորություն է ստեղծվում, որ պարոն Քոչարյանի մերձավորները շատ ավելի են շահագրգռված, որ նա վերջնականապես հեղինակազրկվի, որովհետև իրենց որդեգրած քաղաքականությունը միայն և միայն ատելություն է առաջացնում, միայն ու միայն ավելի է խորացնում այն վիհն ու անջրպետը, որը առկա է նախագահի և ժողովրդի միջև: Երբ վերլուծում ես իրականացվող գործընթացները, ապա համոզվում ես, որ այս ամենն ուղղված է ոչ այնքան պարոն Քոչարյանի, որքան հայոց պետականության դեմ: Իսկ ո՞վ է շահագրգիռ, որ թուլանա հայոց պետականությունը. իշխանական կլանի այն տարրերը, որոնք անթաքույց թալանել և շարունակում են անպատիժ թալանել ազգային ունեցվածքը, որոնք, կարծում եմ, ոչ անմասն լինելու պայմաններում կատարել են աղմկահարույց սպանություններ և ահաբեկումներ: Ինչպես նաև այն մարդիկ, ովքեր ի սկզբանե փորձում են վիժեցնել ժողովրդավարությունը Հայաստանում, ովքեր դրդում են պարոն Քոչարյանին բացահայտ

ճնշել խոսքի ազատությունը՝ դրդելով վերջինիս ընտրել բռնությունների ճանապարհը: Եվ բնավ պատահական չէ, երբ ՆԳ, ԱԱ և, ընդհանրապես, պատկան մարմինները, զբաղված են ոչ իրենց ներհատուկ աշխատանքով, այլ սարսափի և վախի մթնոլորտ են ստեղծում ընտրողների շրջանում: Այս ամենը մարդկանց մեջ սերմանում է այն գաղափարը, որ իշխանությունները կարող են իրենց թույլ տալ ցանկացած անօրինական գործողություն և մնալ անպատիժ: Եվ նման պայմաններում, բնականաբար, չբացահայտված կլինեն սպանությունները, այս պայմաններում, բնականաբար, մարդիկ, լինելով ահաբեկված՝ կընտրեն փրկության միակ ճանապարհը, այն է՝ արտագաղթը: Այսինքն, իրականացվող բոլոր գործողությունները, երբ համադրում և համակարգում ես, ապա համոզվում ես. ի դեմս ներկայիս վարչակազմի, մենք գործ ունենք պետականությունը խստագույնս վտանգող մարդկանց հետ, որոնք օր առաջ պետք է հեռացվեն:

«ՉԻ» - Այդուհանդերձ, իշխանություններն էլ ընդդիմությանն են համարում հայոց պետականությունը վտանգող: Մասնավորապես, նրանք վերջերս պարբերաբար անդրադառնում են «Սոցիալիստական Հայաստան» միավորման համագումարին, ուր, իբր, Աշոտ Մանուչարյանը հնչեցրել է բռնության կոչեր:

- Ինչ վերաբերում է Մանուչարյանի խոսքի նենգափոխմանը, ապա ասենք, որ եթե Մանուչարյանի որևէ նախադասություն հակասում էր գործող օրենքին կամ Սահմանադրությանը, ապա համոզված եղեք, որ իշխանությունները, որոնց ձեռքում խամաճիկի դերակատարում են ստացել իրավապահ մարմինները, վաղուց ի վեր պատասխանատվության էին ենթարկել նրան: Ընդդիմադիր ցանկացած գործչի խոսքից, համատեքստից կտրում, աղճատում են այս կամ այն միտքը, այս կամ այն նախադասությունը և հրամցնում հասարակությանը որպես բռնության կոչեր: Բնականաբար, այստեղ ակամայից հիշում ես ռուսական հայտնի այն ասացվածքը, երբ բոլորից բարձր բղավում է հենց ինքը՝ գողը, գոչելով՝ բռնեք գողին: Ապակողմնորոշելու, մարդկանց ուշադրությունը շեղելու միտումներ եմ ես տեսնում նաև այստեղ: Մինչդեռ պարոն Մանուչարյանի խոսքը շատ պարզ էր ասված. նա նշեց, որ՝ ասես թե օկուպացրել են Հայաստանը, և այդ օկուպանտներն ինչ ձևերով և ինչ միջոցներով օկուպացրել են երկիրը, այդ ամենին մենք համարժեք հակահարված կտանք: Բնականաբար, ասվածի տակ ես էլ եմ ստորագրում: Այո՛, բռնազավթել են Հայաստանը, այո՛, անցած հինգ տարիներին բռնարարքների շարան է տեղի ունեցել, այդ տարիների ընթացքում հայ մարդը սեփական ոստանում անպաշտպան է իրեն զգացել, անցած 5 տարիների ընթացքում քաղցով կամազրկել են մարդկանց, մեծ մասամբ բարոյազրկել մտավորականությանը: Եվ, բնականաբար, երբ տեսնում են, որ այդ ամենը ցանկալի արդյունք չի տալիս, փորձում են մեղքը ոչ թե իրենց գործողությունների մեջ տեսնել, այլ ընդդիմության վրա բարդել: Մինչդեռ, ընդդիմությունն ընդամենն ասել և ասում է՝ մենք գնալու ենք օրինական ճանապարհով, հասնելու ենք ժողովրդավարական նորմերի հաստատմանը, հասնելու ենք նրան, որ յուրաքանչյուր մարդ կարողանա ինքն իր ազատ ընտրությունը կատարել: Իսկ սա նշանակում է, որ իշխանափոխությունն անխուսափելի է: Դրան իշխանությունները պատասխանում են

հակաօրինական հետևյալ գործողություններով. այն է՝ գործող նախագահի նախընտրական շտաբների պետերին, որոնք առանց բացառության պետական պաշտոնյաներ են, մարզպետներին պարտադրել են, որ վերջնագրեր ներկայացնեն գյուղապետերին՝ Քոչարյանի օգտին ապահովել այնքան ձայներ, որքան իրենք ստացել են տեղական ինքնակառավարման մարմինների վերջերս կայացած ընտրություններում, հակառակ դեպքում անվերապահորեն կզրկվեն իրենց պաշտոններից: Եվ եթե այս ամենին ավելացնենք, որ ընտրությունների նախաշեմին հակաօրինական սահմանափակումներ և արգելքներ են դրվում նախագահին ընդդիմադիր թեկնածուների առջև, կնշանակի նրանք սարսափած են ազատ և արդար ընտրություններից, կնշանակի վախենում են ճշմարիտ խոսքից, վախենում են ընդդիմադիր թեկնածուների հաղորդակցումից ժողովրդի հետ, կնշանակի իրենք այնքան բաներ են արել, որի մասին, եթե իրազեկվի հասարակությունը, ապա իրենք այլևս անելիք չեն ունենա Հայաստանում: Իշխանությունները չափազանց վտանգավոր քաղաքականություն են որդեգրել. նրանք իրենց վարչակազմը սպասարկող կլանին հակադրում են մի ամբողջ ազգի հետ, հակադրում են պետական շահի հետ, նրանք ուզուրպացրել են իշխանությունը, պետական շահը «շփոթում» են սեփական գրպանի հետ: Մենք վերջ ենք տալու երկրի համար խիստ վտանգավոր նման զարգացումներին, և փետրվարի 19-ին միասին փրկելու ենք Հայրենիքը:

«ՉԻ» – Պարոն Գեղամյան, Ձեր համոզմունքին հակադրվում է իշխանությունների վստահությունն առ այն, որ գործող նախագահը հաղթելու է հենց առաջին փուլում, այն էլ՝ նվազագույնը 70 տոկոս ձայնով:

– Ինչքան էլ փորձեն Քրիք Քրիքորյանի բարերարությունն ուղղված հայ ժողովրդին վերագրել միայն ու միայն Քոչարյանին և գովերգել վերջինիս, բնականաբար, իրենք հրաշալի հասկանում են, որ գործող նախագահի իրական վարկանիշն ընդամենը 4-4,5 տոկոս է: Եվ եթե պաշտոնյան իրական այդ թիվն է հրապարակում, բնականաբար, նրան մնում է մեկ բան՝ հրաժեշտ տալ իր պաշտոնին: Ցավոք, պետական չինովնիկների որոշակի մասը, թողած իրենց հիմնական աշխատանքը, լրջագույն այն ձախողումները, որոնք արձանագրված են իրենց իսկ կողմից վերահսկվող ոլորտներում, զբաղված են մարդկանց ուշադրությունը շեղելով և պարոն Քոչարյանին անսահման նվիրվածության երդումներ տալով: Այդ մարդիկ բոլորիս քաջ հայտնի են. դրանք կոմունիստականից ՀՀԾ, ՀՀԾ-ից երկրապահ, երկրապահից հանրապետական անցած միջակություններն են, որոնք, ինչպես կասեր գուսան Ջիվանին, «Աքլորի պես քարոզչի թիկնոց հագած ամբիոն են ելել, խելքի աշեցեք»: Դրանք այն նույն պնակալեզներն են, որոնք քծնում էին Լևոն Տեր-Պետրոսյանին, դրանք այն մարդիկ են, որոնք նույն հաջողությամբ քծնում էին երջանկահիշատակ Վազգեն Սարգսյանին և Կարեն Դեմիրճյանին: Եվ այդ նույն մարդիկ են, որոնք այսօր, վատաբանելով թվարկածս պետական այրերին, գովերգում են Քոչարյանին: Բնականաբար, այդ նույն մարդիկ հնարավորություն չեն ունենա փետրվարի 20-ին գովերգել մեզ, քանզի, գալով իշխանության, մենք առաջին հերթին վարչական մեքենայի ավգյան ախոռները պիտի մաքրենք: Օրինաչափ է, որ այդ մարդիկ

արդեն իսկ այսօր ստորագրել են քաղաքական աղբանոցում հայտնվելու իրենց իսկ կողմից որդեգրած և ընդունած դատավճռի տակ: Ընտրությունն իրենցն է, հաղթանակը՝ մերը:

«ՉԻ» – Պարոն Գեղամյան, անդրադառնանք նաև նախագահ Քոչարյանի մտքի վերջին «մարգարիտներին». ըստ Ձեզ, գործող նախագահն իրավունք ունի՞ որևէ մեկի, նույնիսկ ամենավերջին մարդու հասցեին ասելու «բոմժ»:

– Լավ, ամոթ չի՞, լավ, մի՞թե անհարմար չի զգում պարոն Քոչարյանը՝ նման ոճի արտահայտություններ անելով: Մի՞թե սազական է Հայաստանի նախագահին վատ պարողին խանգարող հանգամանքների մասին խոսելը, արտաքնոցի «օքուփայթ» լինելու, կլիզմայի մասին խոսելը: Ասում են՝ նրա կողքին մտավորականներ կան, որոնք երբեմն-երբեմն տխուր դեմքերով երևում են: Է, լավ, թող հուշեն, որպեսզի այդ մարդը չխոսի: Թող միայն իրենք խոսեն՝ գովերգելով պարոն Քոչարյանին: Միայն թե այդ մարդը լռի:

«Չորրորդ իշխանություն»

«Չորրորդ իշխանություն», 24.I.2003:

Он так и остался чужим

– *Господин Гегамян, вопрос очень конкретный – всесилен ли Кочарян?*

– Преданные властям СМИ пытаются сделать все, чтобы создать такое впечатление, но эти попытки обречены на провал. Давайте попробуем обобщить события, происшедшие в Армении за последние пять лет.

Совершено 25 политических убийств, и ни одно из них не раскрыто. Сдача серьезнейших позиций на пути к решению карабахской проблемы: из полноправного субъекта переговорного процесса, каковым был НКР до Кочаряна, Нагорный Карабах превратился в объект переговоров между РА и Азербайджаном. Бесконечные поражения во внешней политике: при Кочаряне стал муссироваться вопрос Мегри. Тяжелое социальное положение: заработная плата 64% населения ниже уровня потребительской корзины – от 5 до 20 тысяч драм. Это и есть показатели, говорящие в пользу Кочаряна? А может резкое возрастание случаев заболевания детским туберкулезом свидетельствует о его "всесилии"?

– *А как же беспрецедентный экономический подъем?*

– В 2002 году, во всех областях экономики зарегистрирован спад. Приведу официальные данные. В 2002 году предусмотренный программой план по объему налога на прибыль выполнен всего на 78%, по объему налога на землю – на 33%, по подоходному налогу – на 93%, в части таможенной пошлины на импорт – на 78%. Продолжить? В более позорном состоянии находится расходная часть: общие расходы составили всего 89,5% от предусмотренного, финансирование в сфере науки и образования выполнено на 91%, здравоохранения – на 91%, жилищно-коммунального хозяйства – на 34% (одна из причин того, что с наступлением морозов 1500 зданий были признаны аварийными, несколько дней были лишены водоснабжения, прорвало канализацию). Значительно хуже обстоит дело с водоснабжением, финансирование которого было осуществлено всего на 29,3%, финансирование работ по мелиорации земель – на 19,8%, вследствие чего происходит их непрерывное опустошение... Короче говоря, нет такой сферы, где не было бы провалов. Не говоря уже о степени деморализации нашего общества. В результате, потеряв всякую надежду,

люди покидают свою Родину. И в такой ситуации они осмеливаются говорить о "всесилии Кочаряна"?.. Человека, который не имел права выдвигать свою кандидатуру? И то, что мы уже имеем нелегитимного кандидата в президенты, дискредитирует сами выборы.

— *Кстати, о регистрации Кочаряна. Как Вы расцениваете поведение представителя коммунистов, Ваших соратников по Союзу НПС на заседании ЦИК, который высказался против регистрации Раффи Ованнисяна и защитил предложение о регистрации Р. Кочаряна.*

— Крайне отрицательно. Но правильнее задать этот вопрос коммунистам.

— *Оставим коммунистов и вернемся к действующему президенту. Вот Вы говорите: "нелегитимный", а собираетесь ли Вы что-либо предпринять в этом направлении?*

— Безусловно. Когда в ЦИК обсуждался вопрос регистрации Кочаряна, член политсовета партии "Национальное Единение", член ЦИК Завен Плузян заявил о неприемлемости регистрации Р. Кочаряна, поскольку она противоречит действующей Конституции и закону "О выборах". Попросил приложить текст своего выступления к протоколу обсуждения и предложил рассмотреть его доводы. Вопрос рассмотрен не был, что тоже являлось грубым нарушением закона "О выборах". Было принято волевое решение, чему воспротивились представители НЕ и НДС. Вопрос был рассмотрен также в рамках "16"-и. Достигнуто принципиальное согласие - выступить с соответствующим заявлением.

— *Вы говорите о "грубой силе" и "волевых решениях". Нет никакой гарантии в том, что те же методы не будут применены властями для достижения своей цели — не допустить смены власти. Есть ли у оппозиции соответствующая воля и силы, чтобы воспрепятствовать нарушениям?*

— Если они хотят таким способом доказать народу "всесильность" Кочаряна, то совершают грубейшую ошибку. Это значит, что они не знают наш народ. Оппозиция, в лице Союза НПС и объединения "16"-и, объединена вокруг идеи судьбоносности предстоящих выборов. И у нас есть люди, которые никогда не поддадутся грубой силе, которые готовы идти до конца в борьбе за наше конституционное право — путем демократических выборов сформировать власть национального согласия. И не приведи Господь, если Кочарян в этом усомнится и решит, что ему удастся повторить 98-й год. Никогда! Мы этого не позволим. Тем более, что мы сейчас в составе ЕС, и если будет сделана хоть какая-то попытка нарушить закон, то будьте уверены, мы дойдем до любых европейских инстанций...

Но в основе будет заложена воля народа и наша решимость.

— *Хорошо, ну а если выборы пройдут без нарушений? Ведь каждый день демонстрируются результаты социологических опросов, показывающих потрясающий рейтинг Кочаряна. Вы им не доверяете? У вас есть свои данные?*

— Данные не мои. Это материал, опубликованный недавно в газете "Известия", который является результатом опроса 17 тысяч человек. По результатам этого опроса, рейтинг Кочаряна составляет всего 4,5%. А данные, публикуемые по заказу преданных властям пропагандистов, вызывают смех. Более того, если бы эти опросы проводились в администрации президента, закрыто и тайно, то даже в этом случае его рейтинг не превосходил бы 10%. Обидно, конечно, что президенту не доверяют даже его ближние. Внешне демонстрируют преданность, а сами думают поскорей от него избавиться. Жалко, конечно, но он так и не вписался в эту среду, остался чужим.

— *Господин Гегамян, в рядах оппозиции бытует мнение, что в случае выдвижения единого кандидата шансы оппозиции победить в первом же туре резко возрастают.*

— Абсолютно согласен. Если оппозиция выступит единым фронтом, Кочарян в первом же туре потерпит сокрушительное поражение. Потому преданные властям предержащим СМИ делают все, чтобы расколоть оппозицию. Но это им не удастся, поскольку каждый кандидат от оппозиции прекрасно сознает, что важнейшей задачей является спасение Родины. И совершенно неважно, кто станет единым кандидатом. Работать будем вместе. Независимо от того, кто станет президентом и кто — его соратником. Дело спасения Отечества намного важнее личных амбиций каждого, в том числе и Арташеса Гегамяна. И я не сомневаюсь в том, что мы найдем точки соприкосновения и решим проблему единого кандидата.

— *Не пора ли уже назвать имя этого кандидата?*

— Каждый из кандидатов от оппозиции — Арам Завенович Саркисян, Арам Гаспарович Саркисян, Степан Демирчян, Вазген Манукян, Гарник Маргарян и остальные, по своим моральным качествам и в своей преданности стране во много раз превосходят эту, захватившую власть, администрацию, за время правления которой произошло столько убийств. Оппозиция выберет своего единого кандидата, и его выдвижение станет победой всего народа.

— *Когда же мы отпразднуем эту победу?*

— Нам предстоит отпраздновать две победы. Первая — это

выдвижение единого кандидата, вторая — 20-го февраля, когда народ восторженно примет выбранного им президента. И я нисколько в этом не сомневаюсь. Еще до 19-го февраля народ ознакомится с правительством национального согласия, в состав которого войдут и представители оппозиции, и работающие сегодня во властных структурах честные, скромные высокопрофессиональные специалисты. Это люди, которым дорога судьба независимой, развивающейся Армении, которые судьбу и будущее наших поколений видят в неразрывной связи с Отечеством.

Мелания Барсегян

"Армения за неделю", 28.I.2003.

2-րդ փուլը ծուղակ էր ընդդիմության համար

– Պրն Գեղամյան, ՀՀ նախագահական ընտրությունների 1-ին փուլից հետո «ԱԼՄ»-ի եթերով Դուք հպանցիկ վերլուծեցիք ՀՀ-ում ստեղծված իրավիճակը: Այսօր արդեն ավարտվել է ընտրությունների գործընթացը, բավականին նոր իրողություններ են ի հայտ եկել...

– Այսօր ևս դեռ այն պահը չէ, որ կարող ենք կատարել իրավիճակի խոր և բազմակողմանի վերլուծություն, քանի որ ընթացքի մեջ են ընտրությունների արդյունքների հետ կապված որոշակի գործընթացներ: Սակայն արդեն իսկ կարելի է արձանագրել, որ փետրվարի 19-ի, ապա և մարտի 5-ի նախագահական ընտրությունների հետևանքով, անգամ եթե ընտրությունները համարենք կայացած և դրանց արդյունքները ճանաչենք վավերական, կարող ենք փաստել, որ ՀՀ-ում առկա է համազգային խոր պառակտում, ճգնաժամ: Հասարակությունը բաժանվել է երկու մասի. ըստ ԿԸՀ-ի տվյալների, փետրվարի 19-ին շուրջ 700.000 ընտրող իրենց ձայնը տվեցին հօգուտ գործող նախագահի (ինչը, մեր խորին համոզմամբ, իրականությանը չի համապատասխանում), ճիշտ այդքան ընտրողներ էլ՝ շուրջ 700.000 մարդ, իրենց քվեն տվեցին ընդդիմադիր թեկնածուներին: Մարտի 5-ին տեղի ունեցավ քվեների որոշակի տեղաշարժ՝ հայտնի պատճառներով: Այս ամենով հանդերձ, ընտրապայքարի ողջ ընթացքը ցույց տվեց, որ երկրի փրկության եզակի ճանապարհը իշխանափոխության մեջ է: Այսօր մեր երկրում մի շարք նոր իրողություններ կարող ենք արձանագրել: Այսպես, ստեղծված ծանր ու լարված իրավիճակում վարչակարգը, փոխանակ ժողովրդի հետ հաշտեցման եզրեր գտնի, հրապարակ հանելով ազգը համախմբող գաղափարներ, ասես թե մեկ անգամ արդեն նախընտրած ճանապարհով է՛լ ավելի է խորացնում ժողովրդի և իր միջև առկա խորխորատը: Փետրվարի 20-ից ծայր առած բազմահազարանոց հանրահավաքների մասնակիցներին փորձում են պիտակավորել, տասնյակ ու տասնյակ մարդկանց վարչական կալանքի ենթարկել, փորձում են նրանց մեջ գտնել մեկ-երկու քրեածին տարրեր և դրանով իսկ ստվեր գցել մեր ժողովրդի մի ստվար զանգվածի վրա: Վարչակարգը այդպես էլ չի հասկանում, որ մարդիկ հանրահավաքների են մասնակցում, քանի որ վիրավորված են, որ վարչական մեքենան, իսկ շատ դեպքերում էլ՝ խուժանը, բռնացել է իրենց կամքն ազատ արտահայտելու իրավունքի վրա: Սրան հավելենք նաև այն, որ դուրս գալով փողոց՝ ժողովուրդն ասես թե խոստովանում է, որ կորցրել է հույսը իրավական դաշտում՝ դատարաններում պաշտպանելու իր ճշմարտացիությունը:

Փոխանակ այս ամենի գիտակցումով, պահի լրջության ըմբռնումով մոտենան հարցին, իշխանությունները խնդիր են դրել է՛լ ավելի սրել իրադրությունը, վիրավորել ժողովրդին:

Երկրորդ իրողություն. ինչպես էի ես հասկանում բոլորիս համար արդիական հնչեղություն ունեցող այն կարգախոսը, ըստ որի՝ մենք տեր ենք կանգնելու մեր քվեներին: Դա նախևառաջ նշանակում էր, որ մենք չենք ընդունելու փետրվարի 19-ի ընտրությունների արդյունքները, ժխտելու ենք 2-րդ փուլի օրինական լինելը, դրա անցկացումը, քանի որ հակառակ դեպքում կնշանակի, որ մենք վավերացնում, լեգիտիմացնում ենք այն, ըստ որի Ռ. Քոչարյանի օգտին, իբր, տրվել է 700.000 ձայն: Ինչպես արդեն բոլորս գիտենք, փետրվարի 19-ին առավել խայտառակ ընտրակեղծիքներ թույլ են տրվել ընտրությունների վերջին ժամերին և ընտրությունների արդյունքներն ամփոփելիս: Եթե ժամը 17.00-ի դրությամբ արդեն ՀՀ նախագահի վեց թեկնածուները միահամուռ էին ընտրություններն անվավեր ճանաչելու հարցում և համապատասխան հայտարարություն էին ստորագրել, ապա ի՞նչը փոխվեց, օրինականության օգտին ի՞նչ նոր փաստեր եղան, որոնց մասին մենք տեղյակ չենք: Չէ՞ որ չկան այդպիսի նոր հանգամանքներ, իսկ հակառակը՝ որքան ուզեք: Ուրեմն, ի՞նչը փոխվեց, ովքե՞ր են կանգնած այս ամենի հետևում: Պատասխանը մեկն էր. եթե անցնում ենք 2-րդ փուլ, կնշանակի մենք վավերական ենք ճանաչում Ռ. Քոչարյանի օգտին տրված 700.000 քվեները, թեթևամտություն ենք ցուցաբերում վարչակարգին ներկայացրած մեր իսկ պահանջների նկատմամբ, մյուս կողմից սա կառաջացներ, և ժամանակը ցույց տվեց, որ առաջացրեց, հասարակության, ժողովրդի մի ստվար զանգվածի մոտ խոր հիասթափություն, որն էլ կփորձեին ուղղորդել մեզ հայտնի ուժերը: Հայտնի է՝ ինչպիսի անհանդուրժողական արձագանքի արժանացավ մամուլի էջերում մեր կենտրոնական նախընտրական շտաբի փետրվարի 25-ի հայտարարությունը, որտեղ մասնավորապես ասված էր. «Չնայած մեր հայրենիքը քայքայած հին ու նոր կլանների ջանքերով նախագահական ընտրությունները վերածվեցին նախօրոք կանխորոշված արդյունքներով ֆարսի, չնայած մի կողմից վարչական մեքենան, մյուս կողմից՝ 1995, 1996, 1998 թվականների ընտրությունների արդյունքների կեղծման գործում մասնագիտացած հանցագործ կլանը զանգվածային կեղծիքների միջոցով երկրորդ փուլից դուրս դրեցին վերջին 12 տարիների ընթացքում իրականացված թալանի ռեալ այլընտրանքն երաշխավորող հայրենասիրական ուժերի առաջնորդին՝ Արտաշես Գեղամյանին, մենք չենք միանա մեր հայանպաստ աշխարհաքաղաքական գաղափարական հոսանքի տարրալուծմանը միտված ցանկացած նախաձեռնություններին: Մեզ համար իշխանության գալը ինքնանպատակ չէ, այլ պետք է դառնա սեփական գաղափարների՝ հակաճգնաժամային ծրագրի իրականացման միջոց: Մենք պահանջում ենք չեղյալ հայտարարել նախագահական ընտրությունների արդյունքները և անցկացնել ազատ, արդար, օրինական ընտրություններ: Ճանաչելով ընտրությունների առաջին փուլի արդյունքները սկզբից մինչև վերջ կեղծված և անօրինական, հավատարիմ մնալով փետրվարի 19-ին ժամը 17.00-ին ՀՀ նախագահի բոլոր 6 ընդդիմադիր թեկնածուների կողմից ստորագրված հայտնի հայտարարությունից բխող մեր պարտավորություններին՝

մենք չենք կարող ցուցաբերել անսկզբունքայնություն և աջակցել անօրինական երկրորդ փուլի անցկացմանը: Ընտրական անօրեն գործընթացի արդյունքում նախագահ դարձածը չի կարող ճանաչվել լեգիտիմ և ապահովել պետական իշխանության արդյունավետ գործունեությունը: Ուստի, անիշխանությունից և վրա հասնող քաոսից փրկության միակ ճանապարհը տեսնում ենք առաջին փուլի արդյունքները չեղյալ ճանաչելու և նոր՝ ազատ ու արդար ընտրություններ անցկացնելու մեջ»:

Երրորդ իրողություն: Այսօրվա իրենց պահվածքով, որդեգրած քաղաքականությամբ իշխանությունները բոլոր ազնիվ մարդկանց դրել են շատ ծանր երկընտրանքի առջև: Եթե քո ժողովրդի հարյուր հազարավոր մարդիկ ոտքի են կանգնել, ապա դու պարտավոր ես լինել նրանց կողքին: Բայց չէ՞ որ ժողովրդի ոտքի ելնելը ինքնին հետապնդում է մեկ նպատակ՝ չճանաչել ընտրությունների 1-ին փուլի արդյունքները, մարտի 5-ից հետո՝ նաև 2-րդ փուլինը: Եթե սա չէ հանրահավաքի պահանջի հիմնական մեխը, կնշանակի մենք ժողովրդին ի սկզբանե տանում ենք այնպիսի զարգացումների, որ հղի են լուրջ, անկանխատեսելի հետևանքներով:

– Այսօր շատերին է հուզում այն հարցը, թե Գեղամյանը ինչո՞ւ չպաշտպանեց 2-րդ փուլ դուրս եկած ընդդիմադիր թեկնածուին:

– Ես այդ մասին արդեն հպանցիկ նշեցի: Կրկնեմ. քաղաքական գործիչը պետք է լինի սկզբունքային, հետևողական իր քայլերի մեջ, պահի, դեպքերի ազդեցության տակ չփոխի իր կեցվածքը: Հարցին պատասխանեմ հարցով. ինչո՞ւ նրանք չհետևեցին փետրվարի 19-ի ժամը 17.00-ի հայտարարության բովանդակությանը, ինչո՞ւ տեր չկանգնեցին իրենց իսկ ստորագրությանը: Հարցրեք նրանց, այդ հարցը, չգիտես ինչու, նրանց չի տրվում, թող փորձեն պատասխանել:

– Պրն Գեղամյան, հասկանալի է, Դուք ընտրությունների 2-րդ փուլը չեք ընդունել, բայց, այնուամենայնիվ, այն կայացել է: Մեկ-երկու խոսքով անդրադարձեք, խնդրեմ, այդ հարցին:

– Հարգելիս, ինչպե՞ս կարելի է չկռահել, չհասկանալ, որ գնալով 2-րդ փուլ՝ ընդդիմությունը, ի սկզբանե, դատապարտված էր պարտության. դա ծուղակ էր յուրաքանչյուր ընդդիմադիր թեկնածուի համար, որը օդ ու ջրի պես անհրաժեշտ էր իշխանություններին՝ ընտրությանը երևութական լեգիտիմ տեսք տալու համար: Չէ՞ որ մի պահ, եթե նույնիսկ տեսականորեն, համարենք, որ ընդդիմությունը հաղթանակով դուրս գար դրանից, ապա միևնույն է, իշխանությունը ընտրությունները չեղյալ կհայտարարեր հենց նույն ընդդիմադիր վեց նախագահի թեկնածուների փետրվարի 19-ի վերոհիշյալ հայտարարության հիման վրա: Զարմանալի, բայց և տխուր ու ցավալի փաստ է, որ ընդդիմադիրների մեջ չգտնվեց և ոչ մի վերլուծաբան, որ հաշվարկեր հնարավոր բոլոր քայլերը, քաղաքական զարգացումները:

– Ի՞նչ կասեք Ձեր հայտնի կարգախոսի՝ «Փետրվարի 19-ին միասին փրկենք Հայրենիքը», մասին, որին զանազան մեկնաբանություններ էին տրվում:

– Այո, այսօր, ժողովրդի լայն զանգվածները գիտակցում են, թե որքանով էր հրատապ

մեր կարգախոսը՝ «Միասին փրկենք Հայրենիքը»: Այո՛, Հայրենիքը փրկենք ազգային պառակտումից, առճակատումից, ի սկզբանե ամեն բան ժխտելու՝ երկու կողմերի անհեռանկարային գործելակերպից: Տեսեք՝ ինչ անթաքույց ուրախություն կա իրենց հայրենասեր հորջորջող որոշ մարդկանց դեմքերին, երբ ասում են, որ Հայաստանը կմեկուսանա, կդառնա քաղաքակիրթ աշխարհի կողմից մերժելի երկիր: Իշխանություններն էլ իրենց գործողություններով ամեն ինչ անում են, որ զարգացումները լինեն ճիշտ այդպիսին: Իսկ ի՞նչ են այդ պարագայում ակնկալում՝ Հայաստանի ռմբահարումներ, դարձյալ ժողովրդին «թնդանոթի միս» դարձնելու փորձեր:

– Ի՞նչ եք կարծում, որո՞նք են ելքերն այսօրվա իրավիճակից:

– Նախևառաջ, հրամայական խնդիր է ստեղծված իրավիճակում համախմբել, կոնսոլիդացնել ազգը, ժողովրդին: Անհրաժեշտ է ամեն գնով հաղթահարել այն վիհը, անջրպետը, որ առաջացել և օրըստօրե խորանում է ժողովրդի լայն զանգվածների ու իշխանությունների միջև: Անհրաժեշտ է հաղթահարել ատելությունը և թշնամանքը մեկմեկու, իսկ շատերի մեջ՝ թշնամանքը պետության հանդեպ: Այդպիսի մթնոլորտում անհնար է երկիր պահել, պետականություն արարել: Ճնշելով այս ալիքը՝ մեծագույն սխալ կլինի արձանագրել հաղթանակ, քանի որ հաղթանակ չի լինում սեփական ժողովրդի հանդեպ. չէ՞ որ մենք մեր երկրում, մեր ժողովրդի հետ ենք: Մինչև հարյուր հազարավոր մարդիկ չհամոզվեն, որ իրենց արդարացի պահանջը բավարարված է, իրենց ընտրելու սահմանադրական իրավունքն ապահովված է, նրանք չեն հանգստանա, նրանք կխռովեն երկրից, պետությունից, իշխանավորներից: Երկիրը, ի վերջո, պետք է շարունակի ապրել, հայոց պետականությունը չի ավարտվում նախագահական ընտրություններով: Այդ իսկ առումով էլ, մենք, այսուհետև էլ պայքարելու ենք, որ երկրում ստեղծվեն բոլոր նախադրյալները մեր հակաճգնաժամային ծրագրի հիմնախնդիրները կյանքի կոչելու համար: Նախագահական աթոռին հասնելը մեզ համար ինքնանպատակ չէ, այլ ընդամենը միջոց՝ ապահովելու մեր երկրի, Հայրենիքի բարգավաճումն ու հզորացումը:

– Մի վերջին հարց ևս. ինչպե՞ս եք նախապատրաստվում Ազգային ժողովի ընտրություններին, դաշինք կազմելո՞ւ եք որևէ կուսակցության հետ:

– Պատասխանեմ կարճ. ԱԺ ընտրություններին մասնակցելու ենք շատ ակտիվ, մենք այսօր դրա բոլոր նախադրյալներն ունենք: «Ազգային Միաբանություն» կուսակցությունը, ինչպես երբեք, շատ ամուր է, իր առջև դրված խնդիրներն ի զորու է կատարել, առավել ևս, որ ժողովուրդը տեսավ ով-ով է: Դաշինքներ չենք կազմելու, միայնակ, բաց ճակատով մտնելու ենք մրցակցության մեջ՝ հաղթանակի ակնկալիքով:

Ա. Բ.

«Հայկական ժամանակ», 13.III.2003: «Հայեցակարգ», 13.III.2003:

Պնախարարը կդառնա նախագահի պաշտոնակատար

– Պարոն Գեղամյան, մինչ այժմ էլ շատերին է անհասկանալի, թե ինչու «Ազգային Միաբանությունը» և «Արդարություն» դաշինքը խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզչությունը կառուցեցին փոխադարձ մեղադրանքների վրա՝ավելի շատ մեղադրանքներ հնչեցնելով միմյանց, քան իշխանության հասցեին:

– Եթե ուշադիր հետևել եք, մենք հարկադրված ենք եղել պատասխանել մեր հասցեին հնչած մեղադրանքներին: Չպատասխանելու դեպքում այլևայլ մեկնաբանություններ կլինեին, որոնք կխանգարեին մեր քարոզարշավին: Երբևէ նախահարձակ չենք եղել այս հարցում, որովհետև հստակ գիտակցում ենք, որ հանրապետության օրհասական իրավիճակի այսօրվա բուն պատճառը գործող իշխանություններն են: Բնականաբար, մեր քննադատության հիմնական թիրախը եղել են իշխանությունը բռնազավթած Ռոբերտ Քոչարյանը և նրա թիմակիցները: Ուրիշ բան, որ արտառոցություն կար այն երևույթի մեջ, երբ ընդդիմադիր մեկ ուժը քննադատում է մյուսին: Բայց եկեք դա դիտարկենք որպես անցյալ, որովհետև առաջիկայում դարձյալ կփորձեն սադրանք անել, որ ընդդիմադիրների քննադատությունն ուղղված լինի ոչ թե Ռոբերտ Քոչարյանի կամ Սերժ Սարգսյանի և կամ նրանց կամակատարների, այլ միմյանց հասցեին, քանի որ նրանք գիտակցում են, որ ընդդիմադիր դաշտում ներգրավված քաղաքական գործիչների բարոյական ռեսուրսը և խոսքը շատ ծանրակշիռ են հանրապետության համար, ուստի կփորձեն դրանք ուղղորդել իրենց համար բարենպաստ ուղղությամբ: «Ազգային Միաբանություն» կուսակցությունը երբեք ու երբեք այդ ծուղակի մեջ չի հայտնվի:

– Այսինքն, դուք չե՞ք բացառում «Ազգային Միաբանության» և «Արդարության» դաշինքի համագործակցությունը:

– «Ազգային Միաբանությունը» հստակ կհայտարարի իր առաջիկա անելիքների մասին և, բնականաբար, եթե դաշինքի առաջադրած խնդիրների հետ նույնություն լինի, ինքնըստինքյան դա կնշանակի՝ այդ հարցերի շուրջ համագործակցություն. այն է՝ ԱԺ-ում համապատասխան օրենքների քննարկման ընթացքում միատեսակ դիրքորոշումների արտահայտում:

– Այնուամենայնիվ, տեսակետ կա, որ իշխանություններն իրենց վերջին գործողություններով ընդդիմությանը զրկել են գործելու դաշտից և անելիքից: Դուք ի՞նչ կարծիքի եք այս հարցում:

– Հակառակը, ընդդիմությանը գործելու ընդարձակ հնարավորություններ են

ընձեռված, որովհետև Հայաստանի ազգաբնակչության համար ակնհայտ դարձավ, որ պարոնայք Ռոբերտ Քոչարյանին ու Սերժ Սարգսյանին չեն հետաքրքրում հանրապետության բախտն ու ճակատագիրը, որովհետեւ խնդիր էր դրված օրինականացնել նախագահական անօրինական ընտրությունները՝ ավելի ապօրինի խորհրդարանական ընտրություններ կազմակերպելով: Ուշադիր նայենք կադրային վերջին նշանակումներին, և պարզ կդառնա, որ այդ մարդիկ առաջնորդվում են «Մեզնից հետո թեկուզ ջրհեղեղ» կարգախոսով: Հարց տանք. ինչպե՞ս եք պատկերացնում, Հայաստանի զարգացման համար բախտորոշ գիտական ի՞նչ ուղղությունների հիմնահարցեր կարող է քննարկել «Օրինաց երկրի» կրթության և գիտության նախարարը աշխարհահռչակ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի, անվանի ակադեմիկոսներ Էմիլ Գաբրիելյանի, Արմեն Գալոյանի, Կոնստանտին Ղարագյոզյանի և այլոց հետ: Էլ չենք խոսում Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի, Երևանի ճարտարագիտական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Յուրի Սարգսյանի, մեր բուհերի պատկառելի մյուս ղեկավարների հետ բարձրագույն դպրոցի հեռանկարային զարգացումների շուրջ նախարարի կողմից սպասվելիք քննարկումների մակարդակի մասին: Կամ էլ՝ մշակույթի նախարարը թատերական արվեստի ի՞նչ նոր մոտեցումներ կառաջարկի Սոս Սարգսյանին, կերպարվեստում՝ Զուլում Գրիգորյանին, Սլավիկ Պարոնյանին, կինոյի բնագավառում՝ Ներսես Հովհաննիսյանին և այլոց: Կադրային վերջին նշանակումներով ժողովրդի համար ակնհայտ դարձավ, թե ինչ աստիճանի է իջեցվում հոգևոր-մշակութային նշաձողը:

– Իսկ ինչպե՞ս եք պատրաստվում մասնակցել ԱԺ-ի աշխատանքներին և պատրաստվու՞մ եք, արդյոք, մասնակցել:

– Անշուշտ, խորհրդարանի աշխատանքներին մենք մասնակցելու ենք: Երբ առաջիկայում կհաստատվի կառավարության ծրագիրը, կոալիցիա կազմած կուսակցություններին, նախ, հնարավորություն կընձեռենք կյանքի կոչելու այն բյուր խոստումները, որոնցով հանդես էին գալիս նախընտրական շրջանում: Խոսքս հատկապես վերաբերում է «Օրինաց երկրին» և ՀՅ դաշնակցությանը: Դրանից հետո մենք մեր սկզբունքային խոսքը կհնչեցնենք ԱԺ ամբիոնից:

– Այնուամենայնիվ, ինչպիսի՞ ապագա եք կանխատեսում կոալիցիայի համար, և արդյոք ընդդիմությունը պե՞տք է աշխատի կոալիցիայի հիմքերը խարխլելու ուղղությամբ:

– Ընդդիմությունը, ըստ իս, երբեք ու երբեք այդ խայծը պիտի կուլ չտա: Այս կոալիցիան ստեղծված է մի նպատակով. այն է՝ ժամանակի ընթացքում ապահովել իշխանափոխություն Ռոբերտ Քոչարյանից՝ Սերժ Սարգսյանին:

– Ո՞նք կարծում են՝ Արթուր Բաղդասարյանին:

– Այդ մոլորությունը համակել է նաև «Օրինաց երկիր» կուսակցությանը: Իրականությունն այն է, որ աշխարհաքաղաքական զարգացումները հանգեցնելու են ԼՂ հարցի ամենաանհապաղ լուծմանը՝ հայկական կողմի համար: Ու այս վիճակում Քոչարյանը երկու տարբերակ ունի. մեկը՝ քաղաքական կատաղի պայքար հրահրել

ընդդիմության և կոալիցիայի կազմում ընդգրկված կուսակցությունների միջև, երկրում վիճակը ապակայունացնել և աշխարհաքաղաքական ոչ հայանպաստ զարգացումների մեղքն ամբողջությամբ բարդել ընդդիմության վրա: Մյուս կողմից, հիմա արդեն ակնհայտ է, որ 1998-ի իշխանափոխությունը կապ չուներ ԼՂ հարցի հետ, և դա սովորական իշխանազավթում էր: Այս պատճառով Քոչարյանը, ըստ իս, զերծ կմնա ԼՂ հարցի կարգավորման որևէ փաստաթղթի տակ ստորագրելուց և կիրագործի երկրորդ տարբերակը. իշխանությունը կփոխանցի այն մարդուն, ով իր հետ մասնակից է եղել 1998-ի ՀՀ նախագահի պաշտոնի բռնազավթմանը, ով իր հետ մասնակից է եղել 1999-ի ԱԺ ընտրությունների արդյունքների կեղծմանը, ով մասնակից է եղել 2003-ի նախագահական ընտրությունների խայտառակ օրինախախտումներին և մայիսի 25-ի ԱԺ ընտրությունների արդյունքների բացահայտ կեղծմանը ու դրան հաջորդած հակասահմանադրական հեղաշրջմանը. այն է՝ երկրի օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի փաստացի կցումը՝ Սահմանադրությամբ իր իսկ կողմից վերահսկելի գործադիր մարմնին: Իսկ մենք գիտենք, որ այդ գործում առաջին ջութակը պատկանում է Սերժ Սարգսյանին: Ու եթե մեր երկրում իշխանության գան իրապես ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարդիկ, իսկ մենք համոզված ենք, որ այդպես էլ կլինի, բնականաբար, պետք է պատասխանատվության ենթարկեն հասարակության և երկրի դեմ ուղղված այդ հանցավոր դրսևորումների հեղինակներին: Նման հեռանկարից խուսափելու համար Քոչարյանն ու Սարգսյանը պատճառ կգտնեն և Անդրանիկ Մարգարյանին կդնեն այնպիսի վիճակում, որ նա հրաժարական կտա, որից հետո նրան կվերագրեն իրենց բոլոր ձախողումները: Ապա վարչապետ կնշանակվի Սերժ Սարգսյանը, որից հետո Արթուր Բաղդասարյանին կասեն, որ հրապարակավ հայտարարի՝ նախագահի հրաժարականի դեպքում ինքը չի ստանձնելու նախագահի պաշտոնակատարի լիազորությունները, հակառակ դեպքում պարոններ Քոչարյանի և Սարգսյանի կողմից անխուսափելիորեն կքայքայվի «Օրինաց երկիր» կուսակցությունը, որի կազմում, լավագույն դեպքում՝ բացի Արթուր Բաղդասարյանից, կմնա միայն Թամարա Պողոսյանը: Այսպիսով, առավելագույնը մեկ տարվա ընթացքում նախագահի պարտականությունները կստանձնի Սերժ Սարգսյանը: Ինչ վերաբերում է ընդդիմությանը, կարծում եմ, մենք պետք է գիտակցենք, որ պարոնայք Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը կաշխատեն ամեն կերպ քաղաքական ուժերին հանել միմյանց դեմ. հատկապես ՀՀԿ-ին ու ՀՅԴ-ին՝ մի կողմից, իսկ ընդդիմադիր դաշտում գտնվող կուսակցություններին՝ մյուս կողմից: Նրանք չափազանց լավ են տիրապետում հայտնի կարգախոսին՝ բաժանիր, որ տիրես: Այդ գործը նրանց մոտ գերազանց է ստացվում: Քոչարյանն ու Սարգսյանը կարողացան կոմկուսը պառակտել, խժդժություններ մտցնել ԱԺՄ-ում և ՀԺԿ-ում: Ցանկացած ուժի, որ պոտենցիալ վտանգ է ներկայացնում իրենց իշխանությանը, բայց բարիք է բերում հայոց պետականությանը, նրանք աշխատում են պառակտել, որ հանրությունը հիասթափվի այդ ուժերից: Ես մեր պատգամավորական խմբակցության անդամներին զգուշացրել եմ, որ իշխանությունները կփորձեն խժդժություններ մտցնել մեզանում: Ուզում եմ նաև ասել,

որ մայիսի 25-ից հետո պարզ դարձավ, որ արհեստականորեն տարածվող լուրերը, թե տարաձայնություններ կան Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի միջև՝ ընդամենը ծուղակ էին այն ուժերի համար, որոնց մի մասը նեղացած է Սերժ Սարգսյանից, մյուս մասը՝ Ռոբերտ Քոչարյանից: Հիմա արդեն այս ամենն ակնառու է անզեն աչքով: Ակնհայտ է, որ գործընթացները ղեկավարելու իշխանությունների միակ լծակը ԱԺ այս կամ այն պատգամավորի մասին կոմպրոմատների տիրապետման մեջ է: Այսինքն, իշխանությունները նախօրոք գործարար պատգամավորներին հնարավորություն են տալիս, որ վերջիններս շրջանցեն օրենսդրությունը, հարստություններ ձեռքբերեն, հետո հանկարծ հիշեցնեն նրանց, որ շատ չոգևորվեն, չհամարձակվեն կատարել ինչ-ինչ ինքնուրույն քայլեր: Այսպիսով ցույց են տալիս, որ տերերն իրենք են, և եթե հանճնարարեն, այդ պատգամավորները, թեկուզ քթի տակ հայհոյելով, բայց շարքով կգնան և կընտրեն ԱԺ նախագահի կամ ցանկացած այլ պաշտոնատարի: Ժողովրդի լեզվով ասած, եթե իշխանության տերերն այսպես փչացրին բավական մեծ թվով պատկառելի մարդկանց, թող գիտակցեն, որ եթե վերջիններս այս պահին ատամները սեղմած լռեցին, ապա պահը կգա, և նրանց քթերից կբերեն:

– Դուք ներկայացրիք իշխանությունների անելիքը: Իսկ ընդդիմությունն ունի՞ այդ ծրագրերի իրագործումը թույլ չտալու մարտավարություն:

– Մենք պետք է մեր քաղաքական պայքարի սլաքն ուղղենք ոչ լեգիտիմ նախագահի դեմ: Եթե կարողանանք այդ ճանապարհին հաջողության հասնել, իսկ ես համոզված եմ, որ կհասնենք, կնշանակի բոլոր հարցերն ինքնըստինքյան կլուծվեն: Մենք պետք է կարողանանք երկրում բարոյահոգեբանական այնպիսի մթնոլորտ ստեղծել, որ հանրապետության նախագահը և պաշտպանության նախարարը գիտակցեն, որ Հայաստանում անելիք չունեն: Որ ճգնաժամային պահերին ձեռնպահ մնան Ղարաբաղից Երևան հատուկ գունդ բերելու մտքից, ինչպես դա տեղի է ունեցել նախագահական ընտրությունների առաջին փուլից՝ փետրվարի 19-ից հետո: Այդ գունդը բերվել էր ժողովրդի արդարացի և հետևողական պահանջը, ընտրությունների արդյունքներին տեր կանգնելու սահմանադրական իրավունքն ամեն գնով ճնշելու, ընդհուպ մինչև՝ Երևանի փողոցներում արյուն հեղելով: Ամփոփելով ասածս, ընդգծեմ. հանրապետության նախագահը, որը բռնազավթել է իշխանությունը, պետք է հրաժարական տա և հեռանա: Թե ի՞նչ ճանապարհով, այստեղ ընդդիմադիր կուսակցությունների դիրքորոշումների մեջ կարող են որոշակի տարբերություններ լինել, բայց մեկը մյուսին չպետք է բացառեն:

Ա. Կ.

«Հայկական ժամանակ», 17.VI.2003:

Եթե... ապա պարոն Քոչարյանին իրեն սատարողների հետ կտեսնենք Հաագայի միջազգային դատարանում...

Արձանագրելով, որ ընտրություններն ուղեկցվեցին բռնություններով, ընտրական օրենսգրքի համատարած խախտումներով, քվեատուփերի զանգվածային լցոնումներով, ուժայինների կողմից քաղաքացիների բացահայտ ահաբեկման բազմաթիվ դեպքերով, «Ազգային Միաբանություն» կուսակցությունն իր հայտարարության մեջ մասնավորապես նշում էր.

«ա) Զանգվածային ընտրակեղծիքներով ձևավորված Ազգային ժողովի ղեկավարների նշանակմամբ Հայաստանի Հանրապետությունում արմատախիլ արվեցին 90-ականներին նշմարվող ժողովրդավարության ծիլերը,

բ) Քոչարյանի և նրա կլանի ջանքերով իշխանության բոլոր ճյուղերի լեգիտիմության լիակատար բացակայությամբ պառակտվել է հասարակությունը, սեպ է խրվել հայաստանցիների և ղարաբաղցիների միջև, խորացել է բնակչության ատելությունը վարչակազմի նկատմամբ, ջլատվել է ազգային ներուժը, էապես թուլացել են Հայաստանի միջազգային դիրքերը, աշխարհաքաղաքական մարտահրավերներին դիմակայելու հնարավորությունները,

գ) Հայաստանի Հանրապետությունը նետելով աշխարհի կողմից մերժված ամբողջատիրական կառավարման վերակենդանացման հորձանուտ, իրենց գործունեությամբ սերմանելով ապերախտություն, երախտամոռություն, անհանդուրժողականություն, ուխտադրժություն, ցինիկ քամահրանքով ընդունելով ժողովրդի ներողամտությունն ու մեծահոգությունը և դրանց պատասխանելով բռնակալին յուրահատուկ վրեժխնդրությամբ ու նենգությամբ՝ Ռ. Քոչարյանը և ժողովրդի կողմից մերժված նրա շրջապատը իրենց դատապարտել են սերունդների նզովքին,

դ) սեփական կլանի ներկայացուցիչների համար ստեղծելով հարստացման, երկիրը թալանելու և հարկերից խուսափելու անսահմանափակ հնարավորություններ, գործող վարչակազմը նպատակամղված... նպաստում է պետական չինովնիկների միջավայրում կոռումպացվածության և ամենաթողության մթնոլորտի թանձրացմանը, ձգտում է կուսակցականացված խաժամուժին բարձրագույն պետական պաշտոնների հանձնման միջոցով երկարաձգել իր անօրեն իշխանությունը,

ե) տառապելով իրեն անվստահություն հայտնած ժողովրդից վրեժխնդիր լինելու

մոլուցքով՝ իշխող կլանն ընտրություններից անմիջապես հետո ձեռնամուխ է եղել հացի և կենսական նշանակություն ունեցող մի շարք այլ ապրանքատեսակների գների բարձրացմանը՝ ղեկավարվելով բոլոր ժամանակների կեղեքիչների՝ «որքան վատ ժողովրդի համար, այնքան լավ մեզ համար» տխրահռչակ սկզբունքով»:

Տարօրինակն այն է, որ երկրում տիրող իրավիճակին տրված այսպիսի սուր բնութագրումներից և իրերն իրենց անունով կոչելուց հետո անգամ որոշ լրատվամիջոցներ չզլացան «Ազգային Միաբանությունը» որակել որպես կեղծ ընդդիմություն: Ինչո՞ւ: Այս և մի քանի այլ հարցերի պատասխաններն ստանալու ակնկալիքով զրույցի հրավիրեցինք ԱՄ նախագահ, ԱԺ պատգամավոր Արտաշես Գեղամյանին:

– Գործընկերներով մենք արդեն կատակում ենք,- նշեց պարոն Գեղամյանը, – թե կարող ենք հայաստանյան և ոչ մի թերթ չկարդալ, քանի որ ի սկզբանե գիտենք, թե որ թերթն ինչ երանգներով կբնութագրի «Ազգային Միաբանությանը», նրա քաղաքական գիծը և ինչո՞ւ չէ, նաև Արտաշես Գեղամյանի ով լինելը: Եթե անկեղծ լինենք, այդ ամենն արդեն ձանձրացնում է, որովհետև իրենց ընդդիմադիր հռչակած տարբեր մարդիկ այդպես էլ չեն հասկանում, որ կամա թե ակամա գործում են պարոն Քոչարյանի ուրվագծած սցենարի շրջանակներում:

– Մի փոքր հանգամանորեն անդրադառնանք այդ սցենարին:

– Խնդրեմ: Հատկապես ժողովրդի հարգանքը վայելող քաղաքական գործիչների և կուսակցությունների շուրջ համընդհանուր կասկածանքի մթնոլորտ սերմանել, որպեսզի ժողովուրդը, իրարամերժ կարծիքներ լսելով ու դրանք մամուլում կարդալով, վերջնական եզրահանգում կատարի, թե բացարձակապես տարբերություն չկա գործող իշխանության և «Ազգային Միաբանության» միջև, թե երկու բևեռներն էլ հավատ չեն ներշնչում:

– Եվ Դուք համոզված եք, որ այդ «սցենարը» գրվել է նախագահական նստավայրում...

– ... որին, ի դեպ, տուրք են տալիս ընդդիմադիր դաշտում գործող լրատվամիջոցները: Նրանք չեն գիտակցում, որ իրենց սատարող և վարչակազմին ընդդիմադիր քաղաքական ուժերը, միևնույն է, դրանից ոչինչ չեն շահում:

– Ի՞նչ առումով:

– Այն, որ իրականությանը չհամապատասխանող յուրաքանչյուր քննադատություն ուղղված «Ազգային Միաբանությանը», ի վերջո, ջուր է լցնում Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան երկյակի ջրաղացին: Ցավն այն է, որ այսօր ընդդիմադիր դիրքերից խոսող որոշ նախկին պաշտոնյաներ սեփական անբավարարվածությունը, քաղաքական ձախողումներն իրենց որդեգրած կուրսի մեջ փնտրելու փոխարեն փորձում են մեղավորներ գտնել մեզանում՝ հանրությանը հավատացնելով, թե «բյուրեղյա» ընդդիմությունն այս կամ այն քաղաքական ուժն է, որն էլ կարող է երկրում փոխել վիճակը: Իսկ քոչարյանենք հենց դրան էլ սպասում են, որովհետև չափազանց լավ գիտեն, թե Արտաշես Գեղամյանին և նրա շուրջը համախմբված անձանց վարչակազմն ի զորու չէ

փաստարկված քննադատել, և մեզ թուլացնելու առաքելությունը «հանձնարարել են» «ամենաբյուրեղյաներին»: Վերջիններս էլ մեծ պատրաստակամությամբ այն իրականացնում են:

– Իսկ ինչպիսի՞ն է վերաբերմունքը Ձեր նշած «ամենաբյուրեղյաների» նկատմամբ...

– Բնականաբար, շատ հանդուրժողական վերաբերմունք են դրսևորում՝ գիտենալով, որ ինչքան էլ դրանք հասունանան, ինչքան էլ ժողովրդի լայն զանգվածներ վերջիններիս հետ հույսեր կապեն, կգա մի օր, երբ իրենք անպայման կհրապարակեն զարհուրելի փաստեր, տեղեկություններ:

– Այն է՝ «թխված», սարքված, բայց իրենց այնքան անհրաժեշտ «հիմնավորումներ»:

– Ընդունենք, որ դրանց 90 և ավելի տոկոսը չհինծու կլինի: Բա՞յց, ավա՜ղ ... 10%-ը, ցավոք, կա: Ահա նման պարագայում է, որ «Ազգային Միաբանությունը», գիտակցելով այս ամենը, որդեգրել է ինքնուրույն քաղաքականություն:

– Եվ իր հայտնի հայտարարությամբ Քոչարյանի ու նրա շրջապատի նկատմամբ հարուցել խիստ մեղադրանքներ:

– Հիշյալ հայտարարության մեջ նախ տրված են քաղաքական գնահատականներ, հստակ մատնանշված են մեր մոտեցումներն ու դիրքորոշումներն երկրում ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Եվ մենք հետևելու ենք մեր որդեգրած քաղաքականությանը: Ով կգա մեզ հետ, շա՜տ բարի: Չե՞ն գա... ինչ բնութագրումներ ուզում են, թող հրապարակեն և ներկայացնեն: Ժամանակն աշխատում է մեր օգտին, և դա անժխտելի փաստ է:

– Հատկապես ո՞ր բևեռին են վերաբերում Ձեր խոսքերը:

– Լինի դա իշխանական դաշտից, թե ընդդիմադիր, միևնույն է:

– Չեմ կարող չհարցնել՝ ինչո՞ւ էիք լռել մինչ օրս:

– «Ազգային Միաբանությունը» երբեք խնդիր չի դրել ու չի դնում քաղաքական մերկացումներով իրեն լավ ցույց տալ: Մենք հակառակ խնդիրն ենք դնում՝ կոնսոլիդացնել ազգը, կոնսոլիդացնել նախևառաջ ընդդիմությունը, որից հետո, ինչո՞ւ չէ, նաև այն կուսակցությունների առողջ կորիզները, որոնք այսօր իրենց իսկ կամքին հակառակ մաս են կազմում գործող վարչակազմի, բայց որոնք իրենց մեծամասնության մեջ բացարձակապես արատավորված չեն: Այլ խնդիր է, որ նրանց շարքերն են ներթափանցել, սողոսկել նախագահի դրածոները, արատավորված մարդիկ: Անձինք, ովքեր օրենքի գերիշխանության պայմաններում լրջագույն խնդիրներ կարող են ունենալ քրեական օրենսգրքի հետ: Բնականաբար, մեր շեշտադրումներն ու բոլոր հայտարարություններն ուղղում ենք նախևառաջ մեր բնակչությանը, հետո միայն կուսակցությունների մեջ առկա առողջ և հայրենասեր կորիզին, որը ցանկացած կուսակցության մեջ մեծամասնություն է կազմում: Արդյունքում, մեր այս դիրքորոշումը խիստ մտահոգություն է առաջացնում իշխանական բուրգում:

– Ինչպե՞ս կհիմնավորեք Ձեր այդ եզրահանգումը:

– Պարոն Քոչարյանը և իր շրջապատը շատ լավ են գիտակցում, որ մենք լուծելու ենք այդ խնդիրը, և իրենք բնավ անելիք չեն ունենա Հայաստանի Հանրապետությունում: Իսկ

կուսակցությունները պետք է ստեղծեն փոխադարձ հանդուրժողականության մթնոլորտ, որպեսզի հետքոչարյանական Հայաստանում հնարավորինս շուտ կարողանանք հաղթահարել ատելության և թշնամանքի իրավիճակը, որն առկա է ամենուր: Կարծում եմ՝ նման մոտեցումը հոգեհարազատ է բոլոր հայրենասիրական ուժերին:

– Այնուամենայնիվ, ինչո՞ւ են փորձում համոզել հանրությանը, թե ԱՄ-ն կեղծ ընդդիմություն է:

– Շատ են ուզում կասկածանքի այդ սերմերը տարածել ժողովրդի մեջ ու դրանով հանդերձ հերթական անգամ պարում են Սերժ Սարգսյանի «պլաստինկայի» տակ: Տպավորությունն այնպիսին է, թե քոչարյանենք վարձել են զանազան բարդույթներով տառապող, չկայացած ընդդիմադիր որոշակի գործիչների, ովքեր հիմնականում աչքի են ընկել իրենց ձախողումներով: Բայց նրանք պետք է գիտակցեն. միևնույն է, այդ պիտակը մեզ չի կպչելու, միևնույն է, ցանկացած դեպքում մենք կարող ենք ասել և հիմնավորել փաստերով, որ նման հայտարարություն անողները կա՛մ պարզապես կատարում են Ռ. Քոչարյանի և Ս. Սարգսյանի պատվերը, կա՛մ քաղաքականապես տգետ են, կա՛մ էլ առերևույթ են այս երկու գործոնները միաժամանակ:

– ԱՄ հայտարարությունը, ըստ Ձեզ, ինչո՞ւ նման խոսակցություններին վերջակետ չդրեց:

– Բայց չէ՞ որ այդ մարդիկ, ինչպես վերն ասացի, վարձված են իշխանությունների կողմից և պատվեր են կատարում՝ խնդիր ունենալով մեր քննադատության սլաքը իշխանություններից տեղափոխել մեկ այլ՝ քաղաքական անպտուղ բանավեճերի ոլորտ: Եվ ասվածի հիմնավորումն այն է, որ գործող իշխանությունների հասցեին հետընտրական շրջանում և ոչ մի կուսակցություն իր հայտարարության մեջ չի ներարկել ավելի լուրջ և ավելի անխոցելի ու հիմնավոր գնահատականներ: Ըստ էության, այս ամենն առաջ է բերել քաղաքական խանդ ևս:

– Ըստ Արտաշես Գեղամյանի, Հայաստանի համար այսօր ո՞րն է հրատապ լուծում պահանջող առաջնային խնդիրը:

– Ձերբազատվել այս իշխանություններից, որին կհաջորդեն ազատ և արդար ընտրություններ: Այդ ժամանակ, խնդրեմ, ընդդիմադիր ցանկացած գործիչ թող ասի իր ճշմարտությունը: Բայց այս փուլում չպետք է առաջնորդվեն «Ազգային Միաբանություն» կուսակցության վրա ստվեր գցելու անպտուղ զբաղմունքով: Ոչ էլ բանավիճելու ենք... հակառակորդը չկա:

– Ներկայացված ֆոնի վրա անդրադառնանք Քոչարյանի՝ ԱԺ ամբիոնից արած այն հայտարարությանը, թե յուրաքանչյուր իշխանություն իր թիկունքին պետք է զգա ընդդիմության շունչը:

– Պարոն Քոչարյանը փորձում է ինքն իրեն ոգևորել, ինքն իրեն սիրտ տալ, քանի որ անելով նման հայտարարություն՝ նա պարզապես խորամանկում է:

– Ինչո՞վ:

– Նա լավ գիտե, որ իրեն ոչ թե այս կամ այն կուսակցությունն է ընդդիմացել, այլ մի

ամբողջ ազգ: Երբ իշխանությունը բռնազավթած մարդուն մի ամբողջ ազգ է ընդդիմանում, բնականաբար, նա հանդես է գալիս նման հայտարարություններով, որոնք, իրենց խոսքով ասած, «ըմբռնումից» բացի որևէ այլ զգացում առաջացնել չեն կարող:

– *«Ամբողջ ազգ» ասվածից, թերևս, հանենք կոալիցիա կազմած ուժերին:*

– Եթե Ռոբերտ Սեդրակիչին հուշել են, թե կոալիցիայի ղեկավարներն ու կորիզը գիշերը քնում են «պարո՞ն Քոչարյան» կանչելով, իսկ առավոտյան բարի լույսի փոխարեն՝ «պարոն Քոչարյան» ասելով, ապա իրեն պարզապես ապակողմնորոշել են:

– *Ինչպե՞ս ուրեմն կբնութագրեք կոալիցիան:*

– Брак по не воле! Կգա օրն, ու այդ ուժերն իրենք կմրցակցեն, թե որն ավելի շուտ կազատվի պարոն Քոչարյանի հետ ունեցած «մտերմությունից»:

– *Շատ հաստատում են հնչում Ձեր խոսքերը:*

– Որովհետև ես տեսնում եմ այդ օրը, ինչպեսև համոզված եմ, որ այդ օրը տեսնում են և՛ ՀՅԴ-ն, և՛ ՀՀԿ-ն:

– *Իսկ «Օրինաց երկի՞րը»:*

– Եթե այդ կուսակցությունները գնան նման քայլի, «Օրինաց երկիրն» էլ, որը, ըստ իրենց հայտարարության, օրենքի երկիր կառուցելու ջատագովն է, կասի, ինչպես բոլորը, այնպես էլ մենք... Պարոն Քոչարյանը, կասեն կոալիցիոն ուժերը, արդեն իսկ արգելք է Հայաստանի զարգացման ճանապարհին, փաստարկները կլինեն բազում, այս հարցում ընտրությունն իսկապես ճոխ կլինի, չի զգացվի նաև հռետորների պակաս:

– *Ինչո՞վ կփաստեք նրա «արգելք» լինելու հանգամանքը:*

– Փաստելու հարկ չկա: Այդ հանգամանքի ականատեսն էինք անցած 10 օրերին, երբ հեղինակավոր Եվրախորհուրդը (ԵԽ), Եվրամիությունը (ԵՄ), ինչպես նաև ժողովրդավարության շտեմարան հանդիսացող ԱՄՆ-ը միարժեքորեն ամենածանր գնահատականները տվեցին Հայաստանում գործող վարչակազմին:

– *Ի՞նչ էր նշանակում ԵԽ խորհրդարանական վեհաժողովի (ԽՎ) այն բանաձևը, որը հրապարակվեց Ստրասբուրգում, և հայտարարեցին, թե չեն վավերացնելու նոր պատվիրակության մանդատները:*

– Միայն այն, որ ԵԽ-ն, ի դեմս ԽՎ-ի, անօրինական է ճանաչում ԱԺ ընտրությունները Հայաստանում և այդ անօրինական մարմնի ծնունդ պատգամավորների լիազորությունները, բնականաբար, չի հաստատում: Ավելի ծանր գնահատական լինել չէր կարող, քանի որ դա նշանակում է՝ տեղի է ունեցել օրենսդիր իշխանության բռնազավթում, նաև նշանակում է՝ այն բոլոր հակաօրինականությունները, որոնք մատնանշված են եղել դեռևս նախագահական ընտրությունների 1-ին և 2-րդ փուլերից հետո, որոնք արձանագրել են հիշատակածս կազմակերպություններն ու ԱՄՆ պետքարտուղարությունը, ոչ միայն արմատախիլ չեն արվել, այլև էլ ավելի են խորացել ԱԺ ընտրությունների ընթացքում: Իսկ դա ապացուցում է՝ Քոչարյանի հենարան են հանդիսանում ուժեր, ովքեր զավթել են իշխանությունն այս ճանապարհով: Եթե երկրի ղեկավարը, որին հասարակությունը մատնացույց է անում հանցագործությունների վայրը տեղամաս առ տեղամաս, հանցանք

կատարածներին, դրա առաջը չի առնում, ոչ մեկին չի պատժում, կնշանակի՝ կա՛մ նա ի զորու չէ գործադրել օրենքը, կա՛մ էլ նա պարզապես պատանդ է դարձել այդ մարդկանց ձեռքում: Արդյունքում ամենաապահովը մեր երկրում իրեն զգում է միայն և միայն ի վերուստ հովանավորյալ քրեածին տարրը: Ապա դուք ինքներդ ինչպե՞ս կմեկնաբանեիք վերջին օրերին Երևանում կատարված հանդուգն սպանությունները: Եվ բնավ էլ պատահական չէր մեր կարգախոսը՝ «Միասին փրկենք Հայրենիքը»:

– Չե՞ք կարծում, որ այս անգամ միջազգային հանրությունը կստիպի գիտակցել այդ իրողությունը:

– Միջազգային հանրությունը, ի դեմս ԵԽ 44 անդամ-երկրների, ի դեմս ԵՄ 15+10 անդամ-երկրների և ի դեմս ԱՄՆ-ի, ըստ էության, աշխարհով մեկ հայտարարում է, թե ՀՀ-ում ոչ թե ժողովրդավարության նահանջ կա, այլ ձևավորվել են անօրինական իշխանություններ, որոնք ի զորու չեն պայքարել հանցագործությունների դեմ, քանի որ իրենք իսկ հանցագործությունների ծնունդ են: Ավելի խիստ ձևակերպում միջազգային իրավունքի չափանիշներով քաղաքակիրթ երկրներում պարզապես չի լինում: Տրված գնահատականներից ավելի խիստը միայն պատերազմ հայտարարելն է:

– Այս պարագայում ինչպե՞ս եք գնահատում ժողովրդական զանգվածների անտարբերությունը:

– Կարծում եմ, եթե, իրոք, օրինական իշխանություններ լինեին, նման գնահատականների պարագայում ժողովուրդը դուրս կգար փողոց, ազգընտիր իշխանություններին սատարելու կոչերով, բազմահազարանոց հանրահավաքներ, երթեր կլինեին: Մեր ժողովուրդը, վիրավորված լինելով միջազգային հանրության աչքում երկրի խաթարված արժանապատվության համար, դրա հետ մեկտեղ իր զուսպ կեցվածքով ասես թե հավանության է արժանացրել միջազգային հանրության կողմից անցած ընտրություններին տված գնահատականները:

Այստեղ է, որ վարչակազմը պետք է գիտակցի, թե ինչ աստիճանի է հեղինակազրկված, օտարացած հայրենակիցներից, որ անգամ իսկ երկրին սպառնացող վտանգի պայմաններում ժողովուրդը երբեք ու երբեք չի համախմբվի իր շուրջը: Սա լուրջ սպառնալիք է հայոց պետականության համար: Եվ պարոն Քոչարյանը պետք է խորհի ու հետևություններ անի այս ամենից:

– Բայց ինչպե՞ս կմեկնաբանեք այն իրողությանը, որ ԵԽ-ում հնչած առաջարկին շատ հանգիստ են վերաբերվում նախագահականում: Ինչպես օրերս հայտարարեց Քոչարյանի մամլո խոսնակը, «Դա ընդամենը առաջարկ է, և քանի դեռ այն չի ընդունել որոշման կամ բանաձևի տեսք, այն որևէ պարտադրող, պարտավորեցնող, իրավական հիմք ունեցող որևէ բան չի կարող դիտարկվել»:

– Սա ինքնին ամենախոսուն վկայությունն է այն իրողության, որ երկրին տրվող գնահատականների բարոյական կողմը, մեր միջազգային վարկը ամենևին էլ չեն հուզում իշխանավորներին, քանզի բարոյականություն հասկացությունն ու Հայաստանի ներկայիս իշխանություններն անհամատեղելի են: Դրա հետ մեկտեղ նրանք, բնակա-

նաբար, չեն կարող խոստովանել, որ իրենց վարչակազմը ձևավորվել է հանցավոր ընտրությունների արդյունքում: Բայց համոզված եղեք, եթե իշխանությունները չանեն լրջագույն հետևություններ, կգործի... միջազգային դատարանը, որն էլ մեր փոխարեն միջոցներ կձեռնարկի մեր երկրում քաղաքացիական հասարակության ձևավորման ուղղությամբ:

– *Այս ֆոնի վրա որքա՞ն է իրատեսական հանրաքվեին ճգտելը:*

– Որքան էլ տարօրինակ հնչի, հանրաքվեի անցկացումն այսօր ամենից շատ բխում է պարոն Քոչարյանի շահերից: Քանի որ այդ պարագան միայն կմեղմի ԵԽ-ի, ԵՄ-ի, ԱՄՆ-ի դիրքորոշումները: Այդ գործընթացի ժամանակ նա թող պայքարի ժողովրդի քվեները վաստակելու համար, մենք էլ կպայքարենք հանրաքվեի միջոցով իշխանությունը լիիրավ տիրոջը՝ ժողովրդին, վերադարձնելու համար:

– *Բայց ինչո՞ւ եք համոզված, որ հանրաքվեի ընթացքում էլ չեն գրանցվի նույն կեղծիքներն ու խարդախությունները:*

– Արդեն իսկ, բառիս իսկական իմաստով, դա կդիտվի ապտակ՝ հասցված ոչ միայն մեր ժողովրդին, այլև միջազգային ողջ հանրությանը, որը, անտարակույս, միջազգային իրավունքի նորմերին համահունչ, համարժեք գործողություններ կձեռնարկի, և , ցավով եմ ասում, արդյունքում շատ հնարավոր է՝ պարոն Քոչարյանին իրեն սատարողների հետ տեսնենք Հաագայի միջազգային դատարանում...

Զրույցը՝
Փիրուզա Մելիքսեթյանի

«Իրավունք», 4 – 10.VII.2003:

Будущий президент Армении?

Визитная карточка: Арташес Гегамян, уроженец Еревана, 54 года, выпускник Политехнического института, бывший номенклатурный работник ЦК ЛКСМ и ЦК КП Армении. В 1989-90 годы – мэр г. Еревана. В 1990 г. приостановил членство в КПСС, одновременно подал в отставку с должности мэра. Успешно занялся бизнесом. С 1995 г. по настоящее время – депутат Национального собрания Армении. Основатель и лидер партии "Национальное Единение". В 2002 г. выдвинут кандидатом в президенты Армении.

– Г-н Гегамян, цель Вашего прибытия в США?

– В Вашингтоне 16 сентября состоялось празднование 25-ой годовщины со дня основания Международной парламентской организации "Парламентарии за глобальные действия". Как член этой организации я приглашен в Соединенные Штаты Америки. Одновременно я был приглашен для участия в конференции, посвященной становлению Международного уголовного суда, которая проходила в штаб-квартире Генеральной Ассамблеи ООН. В эти дни имел также неоднократные встречи в Нью-Йорке , Нью-Джерси, других местах со своими американскими соотечественниками – армянской диаспорой, на одной из которых, кстати, присутствовали и Вы. В рамках названных мероприятий я также встречался со своими коллегами, представителями 150 государств, были встречи с различными политиками США и других стран...

– Вы были одним из кандидатов в президенты Армении на последних выборах. Насколько помню, Роберт Кочарян победил во втором туре, имея в активе 67%, за ним шел Степан Демирчян с 33%. Сколько было у Вас?

– Знаете, это очень громко сказано, что Р. Кочарян и иже с ним победили на этих выборах. Там была явная подтасовка результатов. У меня было 17,5%, формально я шел третьим. Спросите любого жителя Армении, и он скажет, что победа была за мной.

– Ваши встречи в эти дни с политиками и деятелями США косвенно говорят о том, что Вы, по-видимому, намерены участвовать и в следующей избирательной кампании, так ли это? Если так, то, наверное, возникли

или возникнут какие-то новые обстоятельства и факторы, которые дадут Вам и Вашим сторонникам надежду на победу. Какие?

— Время покажет, в политике ничего нельзя однозначно утверждать и планировать. Тем не менее, думаю, что, если на политическом горизонте Армении не появится личность, которой можно будет всецело доверить будущее нашего народа, то я найду в себе силы и умение, чтобы баллотироваться и победить на выборах. В этом случае мы предпримем более жесткий и организованный контроль по предотвращению возможностей фальсификации итогов выборов. Это с одной стороны, а с другой — время господина Кочаряна явно идет к финишу со всеми вытекающими отсюда выводами. Это как шагреневая кожа, его возможности все более и более ограничиваются.

— *А куда денется Демирчян, шедший вторым номером?*

— В условиях честных, прозрачных выборов победителем буду я.

— *Кто Ваш, как сейчас говорят, электорат: рабочие, крестьяне, интеллигенция, богатые, бедные? Кто за Вами стоит в политическом и финансовом плане?*

— В Армении сложилось два класса. Это класс нуворишей, рвачей, которые сказочно разбогатели за последние годы, и подавляющая часть населения, куда входит и интеллигенция, о которой Вы упомянули: врачи, учителя, инженеры... Не будет преувеличением, если скажу, что вторая часть населения за меня. Что касается моих политических и финансовых спонсоров, то любой трезвомыслящий политик, конечно, заинтересован, чтобы в Армении был бы легитимный президент, поддержанный населением. Кроме того, такой президент в это трудное и сложное время, когда переплетаются в регионе Южного Кавказа интересы многих стран — России, США, других соседних государств, будет поддержан и ими. Что касается финансовой стороны, то, в условиях массового недовольства существующей властью, каждая прослойка населения найдет возможность оказать поддержку той силе, которая принесет избавление от этой власти.

— *Сейчас в Армении так много политических партий, что их всех и не упомнишь, но есть две весьма старые по стажу — Дашнакцутюн и Рамкавар. Ваши взаимоотношения с ними?*

— Благодаря этим партиям сохраняется армянская диаспора в мире. Они делают огромную работу по сплочению и консолидации армян всего мира. Партия "Национальное Единение" поддерживает конструктивные отношения с этими партиями в Армении. К зарубежным отделениям этих партий мы относимся с большим уважением.

— Но Рамкавар на последних выборах поддерживал кандидатуру Степана Демирчяна. Это не противоречит Вашему утверждению?

— Если политик претендует на роль лидера нации, он не должен зацикливаться на личных обидах и помнить о тех, кто поддерживал не его. Мы постараемся найти общий язык и уже делаем это.

— Что сегодня представляет Армения в социальном и экономическом плане - известно. Есть ли надежда, что в обозримом будущем улучшится жизнь простых людей?

— К сожалению, Армения скатилась сейчас на самое дно. Доход на душу населения ниже, чем в какой-либо стране СНГ. Более 50% населения бедные и очень бедные, а 87% населения живут, имея доход минимальной потребительской корзины, в рационе питания которых 70% приходится на хлеб и картошку.

— Это вина действующего президента?

— Я считаю, что это вина системы, укоренившейся в последние годы в Армении, а систему поддерживает президент и его окружение. Одним из самых серьезных последствий создавшегося положения является резкое сокращение прироста населения, и эта тенденция растет из года в год. Если это не остановить, то через 20 лет в Армении некого будет призывать в армию, и государство будет на грани исчезновения.

— Вы говорите страшные вещи, но проблема эта, мне кажется, не только в рождаемости. Проблема и в том, что из Армении уезжают все, кто только может, а это в массе молодые люди, т. е. "уплывают" рабочие руки и мозги. Имеется проблема и более глобального характера: уезжая, молодые женятся или выходят замуж за представителей местного населения, ассимилируются и теряют свои национальные корни. Это, кстати, наблюдается и в Америке. Но там это происходит в меньшей степени, т. к. армянская церковь США, в частности, собор Святого Вартана в Нью-Йорке, лично архиепископ Хажак, предводитель армянской церкви Восточного побережья США, и другие прилагают огромные усилия, чтобы не допустить подобной ассимиляции. Что, вероятно, нереально в СНГ.

— Вы правы. Это самая наболевшая проблема для Армении. Чтобы решить ее, надо устранить причины этого явления. А причина одна: отчуждение значительной части населения от власти. Власть живет своей жизнью, население переживает свои трудности. Самое обидное, что молодая семья не видит перспектив в Армении, не связывает свое будущее со своей родиной. Есть сотни молодых высокообразованных людей, которые свой потенциал используют во благо других стран, будь это Россия или

Европа и т. д.

— *Может быть, тяжелое положение Армении находится в прямой зависимости от проблемоы Карабаха: война, блокада и т. д. Не стал ли Карабах той гирей, которая потянула Армению ко дну?*

— Это ширма, за которой стремятся укрыться власти, чтобы скрыть истинные причины упадка страны. Истина же в том, что в Армении напрочь не соблюдаются законы свободного рынка, нет условий для свободного предпринимательства, конкуренции, свободного ценообразования, передвижения капиталов, основные области жизнеобеспечения монополизированы кучкой высокодолжностных людей, на корню душащих любое предпринимательство, которое зарождается вне их клана. Ни один более или менее грамотный и образованный человек не может начать свой бизнес, если не имеет покровительства в лице Кочаряна и его клана. Вот причина застоя и гибельного состояния экономики. Дело не в Карабахе. Наоборот, фактор Карабаха сцементировал армянский народ, не в пример властям, которые расололи общество, посеяли смуту в народе. Нынешняя власть паразитирует на этой теме. Народ увидит свет в конце туннеля тогда, когда будет устранена коррупция в структурах власти.

— *Думаю, что с Вашей точкой зрения согласятся не все. Напрашивается вопрос: что бы Вы сделали на месте Роберта Кочаряна? К примеру, в вопросе с Карабахом. Только война?*

— Ни в коем случае. Сейчас это совершенно не актуально. Есть много стран, в первую очередь США, которые крайне заинтересованы в мире в Южном Кавказе. Этот регион ожидают многомиллиардные инвестиции. Это нефтепровод Баку-Тбилиси-Джейхан, протяженностью 1730 км по территории Азербайджана, Грузии и Турции. Это газопровод Баку-Тбилиси-Эрзерум. Это сулит Грузии только за транзит нефти и газа порядка 800 миллионов долларов в год, Азербайджану от транзита и продажи нефти и газа — 4-5 миллиардов. Когда речь идет о таких суммах, конечно же, и США, и Россия, и Великобритания, другие страны Евросоюза заинтересованы в стабильном мире в этом регионе и не допустят войны. Интересы этих стран в этом вопросе сходятся. И надо воспользоваться этой ситуацией, чтобы решить вопрос Карабаха.

— *Как? Предположим, что желание есть, но Азербайджан и Армения в этом вопросе, как говорится, "упертые".*

— Это стереотип 19-20 веков. Были войны между Францией и Германией из-за Эльзаса и Лотарингии. По итогам второй мировой войны Эльзас перешел к Франции, хотя был заселен в основном немцами. Междуна-

родное сообщество нашло соломоново решение, сделав Страсбург столицей Евросоюза. Фактор принадлежности Страсбурга и Эльзаса к Франции или Германии сейчас не играет абсолютно никакой роли. Необходимо создать такие условия, когда ни одного человека в Нагорном Карабахе, будь то армянин или азербайджанец-возвращенец, не интересовало бы, кто является президентом или премьер-министром Карабаха, а была бы только уверенность в том, что там установлен прочный мир, гарантом которого являются США, Россия и Евросоюз. Если Европа в лице 15 государств объединилась в Евросоюз с единой валютой (за исключением Англии и Швеции), то почему нельзя объединить страны Южного Кавказа в Кавказский союз? Выработать единую Кавказскую конституцию с учетом общих национальных и исторических корней наших народов? Заодно решатся и проблемы Южной Осетии и Абхазии.

— *А что делать с политикой пантюркизма?*

— Если мы с Вами знаем об этой угрозе, то, естественно, о ней знают и страны Евросоюза, и США, и Россия в том числе. Эта угроза действительно существует. О ней писали европейские и американские государственные деятели. Будет сделано все, чтобы нейтрализовать эту опасность. Через объединение неисламских государств. Особенно после недавних событий в Афганистане, Ираке, в США (11 сентября 2001 г.). Интересы Армении и США здесь полностью совпадают, поскольку Армения является своего рода геополитическим клином, противодействующим созданию исламской дуги, начиная с Гибралтара и кончая Дальним Востоком. Тема пантюркизма слишком серьезна и широка, чтобы охватить ее в этом интервью. Это проблема, освещение которой требует отдельного разговора. Возвращаясь к предыдущему вопросу, добавлю только, что перспектива развития региона не в пользу Армении. К 2005 году, когда заработает нефтепровод, Азербайджан начнет семимильными шагами развиваться в экономическом аспекте. Грузия тоже, но с той разницей, что она полностью окажется в фарватере политики Азербайджана и Турции. Если, не дай Бог, Грузия закроет свои коммуникации с Арменией (черноморские порты Поти и Батуми), то у Армении останется для связи с Европой только небольшой перешеек, 46 км границы с Ираном. Но там сложности другого порядка. В случае возникновения сепаратистского процесса в так называемом Иранском Азербайджане может образоваться еще один Азербайджан, и тогда мечта Гейдара Алиевича Алиева, который однажды сказал, что Турция и Азербайджан — это одна нация—два государства, сбудется. Так вот, станет одна нация—три государства. А Армения окажется в

состоянии Лесото, т. е. анклава. Поэтому для Армении так важно иметь гарант стабильного мира и экономического развития. Естественно, таким гарантом не может быть Турция, которой до недавнего времени прочили эту роль страны Запада. Это могут быть только те государства, которые кровно заинтересованы в прочном мире, с одной стороны, и недопущении исламизации региона — с другой стороны. Здесь совпадают интересы России и США, а также Евросоюза.

— Г-н Гегамян, на мой взгляд, Армения по-прежнему сильно и в основном сориентирована на Россию, может быть, даже в ущерб сближению с США. Этим она отличается от своих соседей — Азербайджана и Грузии, чьи лидеры — Алиев и Шеварднадзе — беспардонно лебезят перед Америкой. Здесь и стремление стать членами НАТО, и мгновенная поддержка любых внешних действий США, как, например, военные действия в Ираке и т. д. Даже несмотря на то, что Азербайджан и Ирак являются мусульманскими странами. С одной стороны, на этом фоне сдержанность и достоинство Роберта Кочаряна у меня вызывают уважение, с другой — навевают мысль: а не лучше ли было и Армении полностью "лечь под Америку", расслабиться и получить удовольствие, как в старом анекдоте про изнасилование. Тем более, что и Россия уже давно там.

— Армения, по крайней мере, на обозримое время, "обречена" иметь исключительно теплые и партнерские отношения как с Россией, так и с США. Хотя бы по той простой причине, что на сегодняшний день порядка 2,5 миллионов наших соотечественников проживают в России и 1,2 миллиона — в США. Скажу больше, по итогам гуманитарной помощи на душу населения, оказываемой США, Армения стоит на втором месте после Израиля. С другой стороны, Россия и Америка становятся стратегическими партнерами. Соответственно Америка согласованно с Россией проводит свою политику в постсоветских странах. Этот поворот произошел после 11 сентября 2001 года. Так что искать какие-либо существенные различия между политикой США и России в регионе Южного Кавказа нет необходимости, так же, как и улучшать отношения с одной страной в ущерб другой. Мы заинтересованы в ровных и партнерских отношениях со всеми странами.

— Вернемся к Вашей политической деятельности. Совместимы ли политика и честность? Или политика всегда — грязное дело?.

— Политика, которая проводится грязными людьми, — грязное дело, и наоборот.

— Назовите место, где политика была бы чистой?.

— Весь земной шар, иначе цивилизация давно была бы погублена.

— *Может быть, тогда Вам удастся назвать имя политика, который был бы честен хотя бы в своих предвыборных обещаниях?*

— Абсолютной честности быть не может. Каждый политик очерчивает те границы, достичь которых он старается. Если политик придерживается того направления, из-за которого за ним пошел народ, то это — честный политик.

— *И все же, назовите, пожалуйста, имя. Кстати, поскольку политик и президент синонимы, может быть, назовете и имя честного президента. К примеру, я могу назвать только Вацлава Гавела, который стал президентом в результате демократических выборов, бескровно разделил власть и не цеплялся за нее "до гроба", а ушел добровольно, без внутренних или внешних причин. Просто это было его решение, и только его.*

— Не могу утверждать, что Шарль де Голль был нечестным президентом для Франции. О его честности говорит и факт добровольного отречения от власти. То же самое могу сказать о Черчилле, о Вилли Брандте. Но вообще-то абсолютно честных людей быть не может.

— *Я просмотрел Вашу биографию. Вы были активным функционером комсомола и компартии. Чтобы пройти этот путь, нужно было обладать определенными чертами характера: подхалимством, лестью, угодничеством, лицемерием, лукавством, мягко говоря, и т. п.*

— Не скажу, что перечисленные черты свойственны мне. Были и другие критерии, как, например, образованность и т. д. Доказательством служит то, что в 95 году я был избран депутатом подавляющим большинством населения именно того района, где работал секретарем райкома партии. Это не самодовольство, это ответ на Ваш вопрос.

— *Знаете ли в Армении честного политика, президента?.*

— Те политики, которые прошли в Национальное собрание без взяток, на сегодняшний день могут называться честными политиками.

— *И все же, какие качества необходимы сейчас, чтобы стать президентом, в частности, в Армении, и удержаться в этой роли: быть жестким или даже жестоким, обладать даром шахматиста — видеть на много шагов вперед, чувством ответственности за судьбу народа, страны? Специально не назвал ум и порядочность, т. к. именно этого в условиях Армении и России явно недостаточно, чтобы стать президентом. Думается, ни Андрей Сахаров, ни Александр Солженицын не смогли бы стать президентами именно потому, что не обладали ранее названными качествами.*

— На Ваш вопрос ответила Библия в лице царя Соломона. Никто не вспоминает, что он был очень жестким и прелюбодействовал с царицей Саврской, но вспоминают, что он был справедливым, мудрым при решении судеб своих подданных. Президент должен быть мудрым, как Соломон. А из всех "президентов" Армении честным могу назвать только царя Тиграна Великого (со смехом).

— *Роберт Кочарян дважды был избран президентом Армении, вероятно, не без явной или скрытой помощи России, да?*

— Здесь надо оговориться. Кочарян президентом Армении никогда не избирался. Он в 1998 и в 2003 годах узурпировал власть. Что касается помощи России? Скажу так: не без ее помощи.

— *У Вас есть такая помощь?*

— У меня есть поддержка населения Армении.

— *Как видим, этого мало.*

— Согласен, этого мало.

— *То есть у Вас нет нужных контактов с Кремлем?*

— У меня есть очень много друзей-коллег, которые работают в администрации Путина и в государственной Думе.

— *Как Вы думаете, смена власти в Азербайджане, а это совершенно очевидно произойдет в октябре, и приход к власти Ильхама Алиева, что также очевидно, отразится на взаимоотношениях Армении и Азербайджана?*

— Эти взаимоотношения зависят в первую очередь от взаимоотношений с Россией, США и Евросоюзом.

— *Не считаете ли Вы, что в результате войны с Ираком, контроля за его нефтью со стороны США и Запада несколько ослабнет интерес к азербайджанской нефти и не закончится ли на этом "медовый месяц" между Баку и Вашингтоном?*

— Многое зависит от развития событий в самом Ираке. Ирак обладает несравненно большим запасом нефти, чем Баку. Но интерес Америки не только в нефти, в частности, бакинской. Нефть и газ Казахстана, к примеру, представляют для США значительно больший интерес. В частности, переброска их на западную границу. Параллельно российскими нефтедобывающими компаниями разрабатывается проект прокладки нефтепровода до китайской границы. Америка всячески заинтересована, чтобы Китай не имел автономной системы энергоносителей, которые поступают из центра азиатского материка. В перспективе угрозой для Америки является не Россия, а Китай. Поэтому нефтепровод Баку-Тбилиси-Джейхан будет работать на полную мощность, т. е. будет перекачивать не только азер-

байджанскую, но и казахстанскую нефть. Интерес США к этому региону не будет ослабевать. Это схематичный ответ на Ваш вопрос, т. к. тема настолько обширна, что она заслуживает отдельного обсуждения.

— *Как Вы думаете, когда, наконец, будет решен вопрос признания Геноцида армянского народа, осуществленного Османской Турцией в начале прошлого века?*

— Решение этого вопроса зависит от конъюнктуры мировых отношений, в частности, от исхода антитеррористической операции, которую проводят США. Я не случайно связываю эти вопросы. В условиях начала войны, которую иные политики оценивают как столкновение христианской и исламской цивилизаций, США в ближайшей перспективе не захотят напрягать отношения с Турцией. Тем не менее, когда Турция, в канун начала военных действий США-Ирак, отказалась предоставить коридор американской армии, политическое руководство Америки проявило некоторую активность в вопросе обсуждения признания Геноцида армян. Повторяю, все зависит от политической конъюнктуры в определенной временной ситуации, а нам необходимо всегда этот вопрос заострять, историческая правда должна восторжествовать.

— *Есть мнение, что, может быть, лучше забыть о Геноциде, тем самым наладить отношения с Турцией и извлечь из этого пользу для нынешнего поколения Армении, нежели безрезультатно заниматься мазохизмом, получая от этого "удовольствие" и осложняя и без того трудную жизнь. Ведь крестьянину или учителю важнее сегодня иметь кусок хлеба, желательно с маслом, чем эфемерная надежда признания в неизвестном будущем Геноцида. Может быть, "подогрев" этой темы скорее выгоден сытой диаспоре, которая действительно имеет с этого дивиденды, как минимум, политические?*

— Во-первых, мазохизм — это шахсей-вахсей, присущий мусульманской традиции, а не христианской. Во-вторых, люди, которые забывают свое прошлое, напрочь лишены будущего. Мы не можем этого допустить и никогда не допустим, как бы тяжело нам ни было. Кроме того, всегда необходима какая-то объединительная идея для всех армян мира, которая в данном случае заключается в привлечении к ответу государства, являющегося правопреемником оттоманской Турции, виновной в уничтожении полутора миллионов армян. Если не будет идеи того же Арцаха, Арарата, армяно-григорианской веры и т. д., Армения растворится, ее будет ждать участь Вавилона, Мидии...

— *Почему не растворяются шведы, финны, другие малые народы... ?*

— Шведы и финны не находятся на перекрестке разных цивилизаций,

преследующих порой взаимоисключающие или же противоположные цели.

— Последний вопрос, касающийся, в основном, бакинских армян. По имеющейся информации, бакинские власти отдали распоряжение об уничтожении Армянского кладбища, обернув этот кощунственный акт в "фантик" о необходимости строительства дороги. Знают ли об этом беспределе в Армении, знаете ли об этом Вы, возможно ли принять какие-либо меры противодействия? От Вашего ответа будет зависеть настроение многих армян, живущих ныне в Америке. И еще: имели ли место подобные случаи в Армении?

— К сожалению, в Армении сведения о том, что происходит в Азербайджане, черпаются из прессы самого Азербайджана, какого-либо другого источника информации руководство Армении и Национальное собрание не имеют. Для нас любые могилы и память об усопших — это святое. Молчать об этом — тоже кощунство. Поэтому я сегодня же свяжусь со своими коллегами в Национальном собрании и попрошу их собрать достоверную информацию о сказанном Вами и обязательно, по возвращении в Армению, на первом же заседании мы заявим о недопустимости подобного. Также обратимся в посольство государств Совета Европы и ОБСЕ, членом которого является и Азербайджан, с настоятельным требованием предотвратить это варварское намерение. Что касается подобных случаев в Армении? Разумеется их нет. Армяне никогда не осквернят чье-либо кладбище. Менталитету армян, имеющих определенную историю, глубоко чуждо любое проявление вандализма: мы всегда были созидателями, а не разрушителями.

— Г-н Гегамян, думаю, что после этих Ваших слов ряды Ваших сторонников намного пополнятся. И в заключение. Как раз вчера прочитал книгу, которую прислал мне мой давний ереванский друг Рубик Аристакесян, внук знаменитого генерала Д. Нахичеванского. Книга называется "Армянский вопрос. Мы и Россия". Автор — Борис Тер-Медникян. Книга интересная и любопытная, хотя, на мой взгляд, спорная. На фоне довольно-таки резких и нелицеприятных характеристик, данных автором большинству армянских и российских политиков, вдруг встречаются слова о Вас. Позволю себе процитировать их: "27 мая 1990 г. произошло открытое столкновение с язовской армией в Ереване. С утра провокация КГБ на ереванском вокзале, затем бой в районе Советашен с танковым полком, попытавшимся войти в город. Полк был остановлен ценой жизни более чем 20 наших ребят (противник также понес потери и немалые). Через день мы с почестями хоронили наших первых героев на "Ераблуре" (армян-

ское воинское кладбище). Вечная им слава и вечная память. И еще, в тот памятный день 27 мая мы узнали и запомнили нашего ереванского мэра Арташеса Гегамяна. Он был единственным должностным лицом, прибывшим на место трагедии. Мы видели, как этот мужественный человек, истинный армянин и патриот преградил дорогу танкам, видели скупые мужские слезы на его глазах, наблюдали его переживания".

Думаю, уважаемый г-н Гегамян, комментарии здесь излишни. Спасибо за беседу и успехов Вам.

Тед Осепян
Независимый журналист,
Нью-Йорк

"Театр, искусство, литература", Нью-Йорк, 2003, № 11, с. 3-14; "Новый меридиан", Нью-Йорк, 24.IX. — 1.X.2003; "Новое русское слово", Нью-Йорк, 3.X.2003.

Հայ կինն անհամեմատ ավելի պարկեշտ է, քան տղամարդը

– *Ինչո՞վ կբացատրեք այն իրողությունը, որ այսօր կանայք, եթե կարելի է այսպես ասել, հեռացված են քաղաքական ասպարեզից:*

– Եթե ուշադիր հետևենք բարոյահոգեբանական այն մթնոլորտին, որը տիրում է և՛ օրենսդիր, և՛ գործադիր մարմիններում, ապա յուրաքանչյուր տղամարդ պարզապես կարգելի իր քրոջը, կնոջը կամ դստերը անգամ մոտենալ քաղաքական դաշտ կոչվածին:

– *Ինչո՞ւ:*

– Որովհետև այսօր չկան բարոյական այն արժեքները, որոնցով պետք է առաջնորդվեր քաղաքական ընտրանին: Խեղված է ամեն ինչ: Այսօր չկան այն հերոսուհիները, որոնց օրինակով կրթվել և դաստիարակվել է մեր սերունդը: Այս պարագայում յուրաքանչյուր ծնող, եղբայր կամ ամուսին կփորձի քաղաքական դաշտից հնարավորինս հետ պահել թե՛ կնոջը, թե՛ քրոջը, թե՛ դստերը: Թերևս սա է այն օբյեկտիվ պատճառներից մեկը, որ հայ կանայք շատ քիչ են ներգրավված օրենսդիր և գործադիր մարմիններում: Սա, ի դեպ, տղամարդկանց մասով:

– *Իսկ եթե հարցը դիտարկենք կանանց տեսանկյունից:*

– Հայ կինը, որքան էլ նրան վերջին 10-13 տարիներին ծանր կացության մեջ են դրել իշխանությունները իրենց վարած ապաշնորհ քաղաքականությամբ, անհամեմատ ավելի բարոյական բարձր չափանիշներով է առաջնորդվում, անհամեմատ ավելի պարկեշտ է, քան տղամարդը: Մեր կանայք շատ ավելի կայուն են: Դրանում համոզվեցինք 1992-94 թթ. ցուրտ ու մութ տարիներին: Համոզված եմ և ոչ մի այլ ազգի կին նման քաղաքացիական բարձր դրսևորումներով չէր կարողանա դիմակայել իր փխրուն ուսերին թափված դժվարություններին:

Երբ կանայք տեսնում են, թե ինչքան կեղտ կա քաղաքական դաշտ կոչվածում, բնականաբար, չեն ցանկանում կեղտոտվել: Սա նրանց քաղաքականությունից հետ պահող երկրորդ պատճառն է:

– *Որքան կռահում եմ Ձեր բառերի ենթատեքստից, կա նաև երրորդ պատճառը:*

– Երրորդ հանգամանքն այն է, որ կանայք ասես բնազդով են զգում, որ երկրում կատարվողն այն չէ, ինչ որ պետք է լիներ: Կանայք վտանգը շատ ավելի շուտ են զգում, քան տղամարդիկ: Զգալով վտանգը՝ նրանք փորձում են դրանցից զերծ պահել իրենց տղամարդկանց, ովքեր քաղաքականության մեջ են:

– *Չե՞ք կարծում, որ հայ կանայք իրենց ներուժով, հնարավորություններով ու*

ինտելեկտով ավելի բարձր են, քան այսօր պատասխանատու աթոռներ զբաղեցնողների գերակշիռ մասը: Արդյոք չարժե՞ր, որ հենց այդ կանայք ղեկավարեին երկիրը:

– Հարցը տեղին է: Բայց եկեք մի փոքր ընդարձակենք շրջանակները, քանի որ տվյալ պարագայում ֆիզիոլոգիան չպետք է դեր խաղա: Խնդիրն այն է, որ այսօր ազգի իրական ընտրանին չէ, որ ներկայացված է ղեկավարության մեջ՝ լինի կանանց, լինի տղամարդկանց հատվածով: Այսօր ամենևին էլ ամենաուսյալ, կրթված ու բարոյական բարձր հատկանիշներ ունեցող տղամարդիկ չեն, որ ներկայացված են իշխանական բուրգում: Կան բազում պատրաստված մարդիկ, ովքեր դուրս են մնացել իշխանական վերնախավից: Բնականաբար, որքան բարձր է մարդն իր ինտելեկտուալ հատկանիշներով, այնքան նմանատիպ մարդկանցով կշրջապատի իրեն, առավել ևս կանանցով, քանի որ կին ղեկավարը, ինչը ցույց տվեց նաև կոմունիստական վարչակարգի փորձը, շատ ավելի դժվար է դավաճանում, քան տղամարդը: Այս հանգամանքը դարձյալ պայմանավորված է կանանց թուլությամբ: Կնոջ վրա բղավելով՝ դու չես կարողանա ստիպել նրան, որ կատարի այս կամ այն գործողությունը: Կնոջը չես կարող նաև ստիպել, բնականաբար, արժանապատվություն ունեցող կնոջ մասին է խոսքս: Կնոջը դու պետք է համոզես և տրամաբանության ուժով քո մտածածը դարձնես իր իսկ սեփականությունը: Դրանից հետո հանգիստ կարող ես այդ հարցով չզբաղվել, որովհետև կինն ավելի բարեխղճորեն ու հետևողականորեն կկատարի այդ ամենը:

Քննարկվողը չափազանց լուրջ խնդիր է և պահանջում է պետական, համակարգված մոտեցում:

– Ի՞նչ կասեք այն առնչությամբ, որ որոշ երկրներում (ամենևին էլ ոչ երկրորդական կամ երրորդական) կնոջն են վստահվում առաջին դեմքի պարտականությունները:

– Վճռորոշ պահին քաղաքակիրթ ազգերը կնոջ մեջ են փնտրում միակ ճիշտ լուծումը, կնոջն են վստահում անգամ առաջին դեմքին պատկանող աթոռներ: Դա լինի Մեծ Բրիտանիան, Ֆիլիպինները կամ նույն Պակիստանը, երբ տարիներ առաջ շրջադարձային պահին ամբողջ ծանրությունը դրվեց կնոջ՝ Բենազիր Բհուտոյի ուսերին: Նմանատիպ օրինակները պատմության մեջ բազում են: Կրկնում եմ՝ կինը շատ ավելի նրբորեն և ավելի շուտ է զգում վտանգները, որոնք կուտակվում են ժողովուրդների ու պետությունների գլխին:

– Ըստ Ձեզ, այսօր Հայաստանում ունե՞նք այն կինը, որը կարող էր դառնալ Մարգրեթ Թետչեր, Բենազիր Բհուտո կամ Ինդիրա Գանդի:

– Թետչեր, Բհուտո կամ Ինդիրա Գանդի մեկ օրում չէ, որ ծնվում են: Նմանը զնմանին կսիրե... Անկիրթ ղեկավարն իրեն շրջապատում է ավելի թերուս մարդկանցով և այդպես շարունակ: Թերուսն ինքնահաստատման պահանջ ունի: Ինքնահաստատմանը նա կարող է հասնել նմանատիպ շրջապատում: Նման շրջապատում գենետիկորեն, ֆիզիոլոգիապես և իր ամբողջ էությամբ կինը չի տեղավորվում: Թերուսը, որն ինքնահաստատման կարիք ունի, երբեք կողքին կին չի պահի:

– Ինչո՞ւ:

– Որովհետև եթե նա ինքնահաստատվում է կանանց շրջապատում, ապա երկրորդ բարդույթն է ձեռք բերում, նմաններին ասում են «կնոջ կամանդիր» է դարձել: Ուժեղ մարդը միայն իրեն կշրջապատի կին գործիչներով:

– Անդրադառնանք այն պնդումներին, թե ԱԺ-ում կանանց թիվն ապահովելու համար պետք է լինեն քվոտաներ, ինչպես ԽՍՀՄ տարիներին էր:

– Խորհրդային տարիներին, բնականաբար, Սահմանադրությամբ կամ որևէ օրենքով նման սահմանում չկար: Պարզապես այն ժամանակ, համաձայն Սահմանադրության 6-րդ հոդվածի, որտեղ գրված էր, որ կոմկուսակցությունն է ղեկավար ուժը, ապա կոմկուսի կենտրոնական կոմիտեն իջեցնում էր քվոտաներ, համաձայն որի Գերագույն խորհրդում կանայք որոշակի տոկոս պետք է կազմեին: Բայց դա ձև չէր: Սակայն հաշվի առնելով այսօր հանրապետությունում տիրող իրավիճակը, անշուշտ, պետք է ձևը գտնել և օրենքով ամրագրել հիշյալ քվոտաները: Իսկ թե ինչ եղանակով, ապա դա շատ լուրջ օրենսդրական, հավասարակշռված մոտեցումներ պահանջող հարց է, որպեսզի չոտնահարվի մայր սկզբունքը՝ ժողովրդավարության սկզբունքը:

– Հատկապես ի՞նչը նկատի ունեք:

– Այն, որ թե՛ տղամարդուն, թե՛ կնոջն օրենսդիրում պետք է ընտրի ժողովուրդը, իսկ մենք ընտրողին իրավունք չունենք ասելու, թե չընտրեք այս տղամարդուն, հանուն այս կնոջ:

Զրույցը՝
Փիրուզա Մելիքսեթյանի

«Զարուհի», թիվ 21, X.2003:

Գեղամյանը ձեռք է մեկնում կոալիցիային

«Ազգային Միաբանության» նախագահ Արտաշես Գեղամյանը հայտարարել էր, թե իր կուսակցությունը պատրաստ է համագործակցել կոալիցիա կազմած ուժերի հետ, և պատրաստակամություն հայտնել մեղմացնել քննադատությունը նրանց նկատմամբ, լինել ավելի հանդուրժողական:

– Ինչո՞վ է պայմանավորված նման պատրաստակամությունը:

– Քաղաքական ողջամիտ բոլոր գործիչների համար ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության պետականությունը վտանգված է միայն և միայն իշխանությունը բռնազավթած Ռոբերտ Քոչարյանի ու նրա միակ հենարանի՝ Սերժ Սարգսյանի պատճառով: Ռոբերտ Քոչարյանը մերժելի է քաղաքական բոլո՛ր կուսակցությունների կողմից. ուղղակի ոմանք դրա մասին ասում են հրապարակայնորեն, իսկ ոմանք էլ՝ գոնե մտերիմների հետ զրուցելիս են խոստովանում, թե հարկադրված են մաս կազմել կոալիցիային: Քոչարյան-Սարգսյան տանդեմի հեռուն գնացող քաղաքականությունն է բոլոր ուժերին միմյանց հետ կռվեցնելը, որ հասարակությունն այն տպավորությունը ստանա, թե լինի ընդդիմադիր կամ իշխանամետ՝ բացի գզվռտոցից և միմյանց նկատմամբ մեղադրանքներ հարուցելուց՝ ընդունակ չեն այլևս և ոչ մի բանի: Փոխնախարարների պաշտոնների շուրջ իրարանցումը, որը սիրով մեկնաբանում են իշխանամետ լրատվամիջոցները՝ դրա վկայությունն է:

Այս պայմաններում, բնականաբար, պիտի փորձեինք մեր գործընկերներին՝ ԱԺ-ում ներկայացված կուսակցություններին զերծ պահել ազգակործան զարգացումներից: Առավել ևս, որ ո՛չ ՀՀԿ-ն, ո՛չ ՀՅԴ-ն, ո՛չ էլ «Օրինաց երկիրը» երբեք ու երբեք աչքի չեն ընկել ազգակործան այնպիսի դրսևորումներում, ինչպիսիք «27»-ը կամ հետագայում տեղի ունեցած վայրագություններն են: Հայաստանի զարգացման խոչընդոտը ոչ թե կոալիցիայի կուսակցությունների միջև կամ ընդդիմության և կոալիցիայի միջև առկա հակասություններն են (որոնք անշուշտ կան), այլ ոչ լեգիտիմ իշխանությունների՝ ամեն գնով սեփական իշխանությունը վերարտադրելու ձգտումը: Ահա այս պատճառով եմ կոալիցիային մաս կազմող ուժերին հորդորել՝ դուք դեռ այնքան արատավոր գործարքներով չեք պախարակել ձեր կուսակցությունները, և քանի շուտ է՝ կանգնե՛ք, սթափվե՛ք, քանի որ այն ուղին, որն առաջարկում է Քոչարյան-Սարգսյան տանդեմը՝ կործանարար է հայոց պետականության համար:

– Ինչո՞վ է պայմանավորված, որ հիմա եք հանդես գալիս նման հորդորով: Ի՞նչ խնդիրներ կարող եք լուծել այդ համագործակցությամբ, երբ իշխանության նկատմամբ վերաբերմունքի հարցում «Ազգային Միաբանության» և կոալիցիայի դիրքորոշումները տրամագծորեն հակադիր են:

– Քաղաքական իրական գործչի տարբերությունը քաղաքականությամբ զբաղվողից պայմանավորվում է նրանով, թե որքանով է նա տեսնում հեռանկարային զարգացումները: Ես հեռանկարային զարգացումները տեսնում եմ այսպես, որ այս իշխանությունները՝ ի դեմս Քոչարյան-Սարգսյան տանդեմի, իրենց կարևորությունը կկորցնեն հենց այն պահից, երբ հարկադրված լինեն ստորագրել հաշտեցման այն պայմանագրի ներքո, որն առաջարկվելու է Մինսկի խմբի համանախագահող երկրների կողմից: Իսկ որ դա առաջիկայում լինելու է՝ բոլորիս համար ակնհայտ է. թե չէ միջազգային հանրությունը՝ մասնավորապես ԵԱՀԿ-ն, Եվրախորհուրդը, Եվրամիությունը և ԱՄՆ-ն երբե՛ք ու երբե՛ք չէին փակի իրենց աչքերն այն խայտառակ ընտրությունների առջև, որոնք տեղի ունեցան Հայաստանում և Ադրբեջանում: Սա վկայում է, որ լինի Փարիզում, թե Քի Վեսթում՝ լուրջ պայմանավորվածություններ են եղել Քոչարյանի և Ալիևի միջև, ու դրանց կատարումը հետաձգվել է վերջիններիս խնդրանքով, քանի որ Ադրբեջանում և Հայաստանում պետք է տեղի ունենային ընտրություններ: Նրանք ուղղակի թայմ-աութ էին խնդրել, և պատահական չէ, որ ԱՄՆ-ն, ՌԴ-ն կամ ԵՄ երկրները շատ զիջողաբար վերաբերվեցին Ադրբեջանի ընտրություններին, քանի որ, բնականաբար, Իլհամ Ալիևը շարունակելու է իր հոր քաղաքականությունը:

– Կոալիցիոն ուժերի կողմից պատասխան նշաններ զգո՞ւմ եք, թե նրանք ևս պատրաստ են նման համագործակցության: Չէ՞ որ, ինչպես Հմայակ Հովհաննիսյանը նկատեց, նրանք «ուղղակի ատամներով են կառչած» Ռոբերտ Քոչարյանից և իշխանությունից:

– Բացարձակապե՛ս այն կարծիքին չեմ, թե ՀՀԿ-ն կամ ՀՅԴ-ն իրենց վարկը և հեռանկարային տեղն ու դիրքը կպայմանավորեն մի իշխանությամբ, որի ճախողման մեջ ի խորոց սրտի համոզված են բոլորը:

– Բացի աթոռակռվի մանրամասներից, որոնց անդրադառնում են բոլոր լրատվամիջոցները՝ որևէ այլ ապացույց ունե՞ք հիմնավորելու «Ազդակում» արած Ձեր հայտարարությունը, թե Ռոբերտ Քոչարյանն իրականացնում է կոալիցիան պառակտելու քաղաքականություն:

– Պարոն Քոչարյանը ոչ թե միայն այժմ կոալիցիայի հանդեպ է իրականացնում այդ քաղաքականությունը, այլ նաև իր ողջ պաշտոնավարման ընթացքում: «Բաժանիր, որ տիրես»-ը նրա աշխատանքային ոճն է: Եթե վերհիշեք՝ ո՛ւմ հետ էր նա ճանապարհ ընկել, և հետո ինչպե՛ս բաժանվեցին այդ ճանապարհները՝ հարցը կկորցնի իր արդիականությունը: Նա ընդունակ չէ հանդես գալ ազգը համախմբող որևէ գաղափարով: Նա ոչ մի կարգախոս չունի միակամ դարձնելու ազգին: Դրա հետ մեկտեղ՝ նա երբեք ու երբեք չի կարող պաշտոնավարել հանգիստ պայմաններում, քանի որ ընտրված չէ: Իսկ այդ

դեպքում փորձում են հնարավորինս շղարշ ստեղծել, որ եթե ինքը չլինի՝ ընդհանրապես ամեն ինչ կվերածվի քաոսի: Այդ տպավորությունը հիմնավորելու ճանապարհին նա փորձում է իրար դեմ հանել ընդդիմության թևերը կամ կոալիցիային մաս կազմող ուժերը, որ խճճված պայքարի, իրարամերժ գաղափարախոսությունների քաոսում մարդիկ ընդհանրապես հիասթափվեն քաղաքական ընտրանուց և ասեն, որ միևնույն է՝ այս նեղ մտածողությունն ունեցող, պաշտոնակռիվ տվող գործիչներից ոչինչ դուրս չի գա, ուստի ի՞նչ տարբերություն՝ սրա՞նք կլինեն, թե՞ նրանք: Եվ իրենք կհասնեն այն ամայությանը, որի պայմաններում կկարողանան վերարտադրել սեփական իշխանությունը, և Քոչարյանն իշխանությունը կհանձնի Սերժ Սարգսյանին: Այս մարտավարությունը կործանարար է երկրի համար: Եվ երբ այն գիտակցում ես՝ այո՛, ավելի լավ է քննադատության թիրախ դառնաս, բայց կոչ անես կոալիցիային մաս կազմող կուսակցություններին, որ չդառնան զենք պրն Քոչարյանի այդ նենգ քաղաքականության իրականացման գործում:

Հարցազրույցը վարեց
Աննա Իսրայելյանը

«Առավոտ», 23.X.2003:

Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը բուրբոնների նման ոչինչ չեն մոռացել և ոչինչ էլ չեն սովորել

Վերջին շրջանում հաճախ է հնչում այն ենթադրությունը, թե գերտերություններն առաջիկայում Հայաստանին պարտադրելու են ԼՂՀ հիմնահարցի լուծման ոչ նպաստավոր տարբերակ: Աշխարհաքաղաքական զարգացումների ներկա ֆոնի վրա հնարավո՞ր է նման պարտադրանքը, թե՞ ոչ: Հարցի առնչությամբ զրույցի հրավիրեցինք «Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ, ԱԺ պատգամավոր Արտաշես Գեղամյանին:

– Եկեք վերլուծենք, թե ինչի ականատեսն եղանք անցած ամիսների ընթացքում,- առաջարկեց պարոն Գեղամյանը: – Այն, որ փետրվարի 19-ի նախագահական ընտրություններն անցան ամենախայտառակ կերպով, արձանագրվեցին թե՛ Եվրախորհրդի դիտորդական առաքելության կողմից, թե՛ ԵԱՀԿ, և, ինչու չէ, մատնանշվեց նաև ԱՄՆ պետդեպարտամենտի համապատասխան հայտարարության մեջ: Դրանից հետո տեղի ունեցան իրենց անօրինականություններով չզիջող երկրորդ փուլի ընտրությունները, որոնց հաջորդեցին ԱԺ ավելի խայտառակ ընտրությունները: Այսինքն, ՀՀ ղեկավարությունը (ի դեմս Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան երկյակի), փաստորեն, իր վարքագծով արհամարհեց դիտորդական առաքելությունների և նրանց թիկունքում կանգնած երկրների գնահատականները:

– Ինչը, ի դեպ, ներվեց նրանց: Ինչո՞ւ:

– Հարցին հարցով պատասխանեմ. մի՞թե այդքան ուժե՞ղ էին Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը, որ կարողացան մարտահրավերի ձեռնոց նետել միջազգային հանրությանը: Իհարկե, ոչ: Շարունակեմ. դրան զուգահեռ վերջերս Ադրբեջանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: «Եվրանյուզի» և «Սի-էն-էն»-ի համապատասխան ռեպորտաժներից պարզ դարձավ, որ այնտեղ էլ օրենքի կոպիտ խախտումներ են եղել:

– Այնուամենայնիվ, միջազգային հանրությունը Ադրբեջանի պարագայում ևս կարծես չցանկացավ կենտրոնանալ կեղծիքների ու ապօրինությունների վրա:

– Միջազգային հանրությունը՝ ի դեմս գերտերությունների, այո՛, չցանկացավ որևէ սկզբունքային լուրջ քայլ կատարել թե՛ ՀՀ-ի, թե՛ Ադրբեջանի դեպքում:

– Ըստ Ձեզ, ո՞րն էր նման «նահանջի» պատճառը:

– Շուրջ երկու տարի առաջ Փարիզում և Քի Վեստում տեղի ունեցած Ալիև-Քոչարյան բանակցությունների ժամանակ նրանց միջև հստակ պայմանավորվածություն է կայացել, որը օրհնվել է Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կողմից: Եթե հիշում եք, այն ժամանակ ասում էին, թե առաջիկայում բոլորը հավաքվելու են Շվեյցարիայում և վերջնականապես ստորագրելու են պայմանագիրը, ինչը, սակայն, տեղի չունեցավ:

– Եվ ո՞րն էր պայմանագրի չկնքման գլխավոր պատճառը:

– Ի թիվս այլ պարագաների, կարծում եմ, հիմնական պատճառը նախագահներ Ռոբերտ Քոչարյանի և Հեյդար Ալիևի խնդրանքն էր նույն այդ երկրների ղեկավարներին՝ սպասել: Թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում տեղի էին ունենալու նախագահական ընտրություններ, և այդ տարբերակներով, ինչը պարտադրում էին հիշատակածս երկրները, բնականաբար, Քոչարյանն ու Ալիևը չէին կարողանա հաջողության հասնել ընտրություններում: Ըստ այդմ, նրանք ժամանակ խնդրեցին՝ պատճառաբանելով, թե առաջիկա ընտրություններում հաղթող ճանաչվելու դեպքում միայն կկարողանան երաշխավորել այդ պայմանավորվածությունների կատարումը:

Ի դեպ, Ֆրանսիայի Հանրապետությունը չափազանց բծախնդիր է այն պարգևների նկատմամբ, որոնք շնորհում է: Դրանք Բրեժնևի օրոք բռերով հանճնվող սոցաշխատանքի հերոսի կոչումներն ու շքանշանները չեն: Հիշենք, որ պարոն Քոչարյանը պարգևատրվեց Ֆրանսիայի բարձրագույն պարգևով: Կնշանակի՝ ղարաբաղյան հիմնահարցի առնչությամբ ամբողջությամբ Քոչարյանի կողմից ընդունվել էր Փարիզում Ալիևի հետ հանդիպման ժամանակ առաջադրված տարբերակը: Նմանատիպ պայմաններում պարզ է, թե ինչու միջազգային հանրությունն աչքերը փակեց այն խայտառակ ընտրությունների առջև, որոնք տեղի ունեցան հենց Հայաստանում, և որի ականատեսն էինք բոլորս: Այժմ արդեն եկել է այդ պայմանագիրը ստորագրելու ժամանակը, բայց պարոն Քոչարյանը քաջ գիտակցում է, որ հարցադրումները, որոնք կան այդ պայմանագրում, հնարավոր չէ վավերացնել: Ասել է, թե նա պետք է կրկին ժամանակ շահի:

– Բայց ինչպե՞ս:

– Մտածելով, որ առաջիկայում Ռուսաստանի Դաշնության Պետդումայի ընտրություններն են, որոնց անմիջապես հաջորդելու են նախագահական ընտրությունները, հետևապես կարող է ժամանակ շահել:

– Իսկ հետո՞:

– Նա համոզված է, որ այդ խնդրին դարձյալ հետամուտ չեն լինի այն պարզ պատճառով, որ աշնանը ԱՄՆ նախագահի ընտրություններն են: Այդ ժամանակահատվածում տեղի կունենան ուժերի վերադասավորումներ:

– Ինչպես ժողովուրդն է ասում՝ կա՛մ էշը կսատկի, կա՛մ իշատերը:

– Հենց դա առաջին տարբերակն է, որով էլ առաջնորդվելու է Քոչարյան-Սարգսյան դուետը: Այս սցենարի համաձայն նրանք ամեն ինչ պետք է անեն, որպեսզի ձգձգեն հարցի քննարկումը:

– Ըստ Ձեզ, կա՞ ճանապարհ, որով ընթանալու պարագայում գերտերությունները

չեն անդրադառնա քննարկվող հարցին:

– Կա ճանապարհ, և այն հիշյալ դուետի համար մեկն է՝ անհապաղ, ցանկացած միջոցներով ապակայունացնել իրավիճակը ՀՀ-ում: Եթե նրանց հաջողվի կյանքի կոչել այդ ծրագիրը, ապա նրանք կկարողանան արդարանալ նույն Ռուսաստանի, Ֆրանսիայի կամ ԱՄՆ-ի, այն է՝ Մինսկի խմբի համանախագահող երկրների առջև, թե սպասեք՝ երկրի ներսում կայունացնենք վիճակը, որից հետո նոր միայն կկարողանանք անդրադառնալ տրված խոստումների կատարմանը:

– Այժմ անդրադառնանք Ձեր ուրվագծելիք երկրորդ տարբերակին:

– Բնական է, կա նաև երկրորդ սցենարը, համաձայն որի, կրկին շիկացնելով իրավիճակը՝ կփորձեն հանգեցնել կառավարության կամ ԱԺ ղեկավարության փոփոխությանը: Եվ պատահական չէ, որ հիմա ամեն գնով աշխատում են հրահրել ընդդիմության և կոալիցիայի մաս կազմող կուսակցությունների հարաբերությունների սրում: Կարծում եմ, սակայն, կոալիցիոն կուսակցություններն այդ ծուղակն իրենց համար պարզաբանել են և այդ խայծը, բնականաբար, կուլ չեն տա: Կփորձեն նաև հասնել նրան, որ կոալիցիան ներսից պայթի և այդ ընթացքում դարձյալ պատրվակ կունենան երկարաձգելու հարցի լուծումը՝ ասելով, թե մենք հարկադրված ենք ձևավորել նոր կառավարություն, ԱԺ նոր ղեկավարություն և ժամանակ ենք խնդրում: Այսինքն՝ ամեն ինչ պետք է անեն, որպեսզի շահեն իրենց անհրաժեշտ ժամանակը:

– Որքան կռահում եմ Ձեր բառերի ենթատեքստից, կա նաև երրորդ սցենար:

– Կա: Երրորդն այն է, որ արդեն իսկ անպայման կփորձեն ԱԺ-ում ներգրավված կուսակցությունների, խմբակցությունների անունից հանդես գալ համատեղ հայտարարությամբ, ուր հստակ կհնչեն այն դիրքորոշումները, որոնք բոլորիս էլ հոգեհարազատ կլինեն: Խոսքս ԼՂՀ հիմնահարցի լուծման մասին է: Բնական է, այդ որոշումը ոչ մի ընդհանուր մոտեցումներ չի ունենա այն պայմանավորվածությունների հետ, որոնք կայացվել են Փարիզում և Քի Վեստում:

– Ասել է՝ նորից ժամանակի խնդիր է առաջ գալիս:

– Այո՛, այդ պարագայում պարոն Քոչարյանը դարձյալ արհեստական պատճառ կունենա, որպեսզի դիմի հիշատակված երկրներին ու ասի՝ տեսե՛ք, քաղաքական բոլոր ուժերը, անկախ ընդդիմադիր կամ դիմադիր լինելուց, այս հարցում միակամ են: Սա, ինչպես արդեն ասացի, երրորդ հնարավոր սցենարն է: Բնականաբար, քաղաքական ուժերը կարող էին դիմել համատեղ որոշում կայացնելու քայլին, եթե, իրոք, համոզված լինեին, որ ամեն ինչ արվում է հօգուտ ԼՂՀ հիմնահարցի լուծման:

– Այն է՝ նկատի ունեք համախմբո՞ւմը:

– Այո՛, բայց ինչպես կարելի է համախմբվել ի սկզբանե ոչ լեգիտիմ նախագահի շուրջ: Մենք գիտակցում ենք, չէ՞, որ ցանկացած քայլ միայն և միայն մեկ նպատակ ունի՝ երկարաձգել սեփական իշխանությունը: Ռոբերտ Քոչարյանը լավ է գիտակցում, որ ոչ հայանպաստ որոշում ժողովուրդը չի ընդունի, թեկուզև տասն անգամ ստորագրի այդ փաստաթղթի տակ: Փետրվարի 19-ի խայտառակ ընտրություններից հետո միջազգային

հանրության առջև նա չի կարող հանդես գալ ժողովրդի անունից: Եթե նա փորձի կարծր դիրքորոշում ցուցաբերել այս կամ այն հարցի լուծման ընթացքում և իր այդ քայլը հիմնավորի, թե խոսում է ժողովրդի անունից, բնականաբար, իշխանությունների կողմից կատարված բոլոր խայտառակ քայլերը Սինսկի խմբի համանախագահող երկրները կդնեն նրա առջև ու կասեն՝ դու բարոյական իրավունք չունես խոսել մի ժողովրդի անունից, որը քեզ չի ընտրել, իսկ մենք քեզ հանդուրժել ենք, որպեսզի դու այս հարցը լուծես:

Նման փակուղային իրավիճակում, որպես փրկօղակ, վստահության հանրաքվե անցկացնելու փոխարեն, ինչը շատ ազնիվ ու ժողովրդավարական կլինի և ինչը հասկանալի կդառնա միջազգային հանրությանը, սրանք փորձում են խորամանկել, միմյանց դեմ հանել քաղաքական բոլոր ուժերին, ստեղծել գզվռտոցային իրավիճակ, ինչն էլ նրանց հնարավորություն կտա դիմել ՀՀ ժողովրդին և ասել՝ ահա ձեր քաղաքական ընտրանին... Այս մարդիկ միայն գզվռտոցով են զբաղված, միայն պաշտոնակռվով: Սրանց համար շատ ավելի հետաքրքիր է, թե այս կամ այն փոխնախարարի պաշտոնը որ կուսակցության ներկայացուցիչը կզբաղեցնի, քան համազգային խնդիրները, ինչպիսին է, օրինակ, ԼՂՀ հիմնահարցը: Եվ ժողովուրդը հերթական անգամ հիասթափություն կապրի, կհուսալքվի և ապագային միտված որևէ հույս չի կապի այսօրվա քաղաքական ուժերի հետ: Հենց նման իրավիճակ է պետք Քոչարյան-Սարգսյան զույգին: Նկատի ունեցեք, հայ մարդը ցանկացած զրկանքի կհամակերպվի, միայն թե հերթական անգամ չխաբվի: Այս իրողությունը շատ լավ գիտե հիշյալ զույգը: Այս հնարավոր զարգացումները, բնականաբար, պետք է բացահայտվեն, ինչը և անում եմ՝ օգտվելով «Իրավունքի» ինձ ընձեռած հնարավորությունից:

– Ձեր պատկերած ֆոնի վրա անդրադառնանք փոխնախարարների պաշտոնների բաժանմանը: Ի՞նչ գնահատական կտաք այդ առնչությամբ տեղի ունեցած անցուդարձին:

– Ծայրաստիճան վտանգավոր զարգացումների առկայությամբ, որոնք, ի դեպ, սթափության ահազանգ պետք է հանդիսանային, մեր իշխանավորները զբաղված են արատավոր գործունեությամբ: Համոզված եղեք, փոխնախարարների պաշտոնակռիվը նույնպես հրահրված ու ղեկավարվում է նախագահականից: Դա միայն նրանց է ձեռնտու: Որովհետև միջոց է դիմել բնակչությանն ու ասել՝ տեսեք, երկիրը սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում է, նոր կառավարություն է ձևավորվել, այն էլ կոալիցիոն հիմքերի վրա, բայց հանապազօրյա խնդիրների լուծմամբ զբաղվելու փոխարեն այս կառավարությունը զբաղված է փոխնախարարների պաշտոնները մեջ-մեջ անելով: Կրկնում եմ, այս ամենը, անվերապահորեն հրահրվում և ոգևորվում է նախագահական նստավայրից: Այս իրողությունն ակնհայտ պետք է լինի բոլորի համար: Որովհետև երկրի ղեկավարը համապետական լրջագույն խնդիրներ լուծելու, հնարավոր մարտահրավերների առաջն առնելու և գոնե իրեն սատարած քաղաքական ուժերին կոնսոլիդացնելու փոխարեն խառնաշփոթ է ստեղծում, լարում իրավիճակը և թուլացնում իրեն սատարած կոալիցիոն ուժերին՝ մտածելով, որ երեք տեղ թուլացած ուժերին իշխելը հեշտ կլինի: Ցավում եմ, բայց մեր իշխանավորներն իրենց մտավոր կարողություններով 21-րդ դարի համար

պարզապես անախրոնիզմ են: Նրանք ի զորու չեն համահունչ գործելու այն բարդ-փոթորկալից իրավիճակում, որով հղի է մեր դարաշրջանը, որով հղի են գարգացումները մեր տարածաշրջանում:

– *Մեր իշխանավորները հավանաբար լավ են ուսումնասիրել պատմությունը և հիանալի տիրապետում են պալատական խարդավանքների հնարավոր բոլոր նրբություններին ու միջոցներին:*

– Անշուշտ, ենթադրում եմ, որ նրանք ուսումնասիրել են այդ ամենը, բայց բուրբոնների նման ոչինչ չեն մոռացել և ոչինչ էլ չեն սովորել:

– *Ինչո՞ւ եք այդպես կարծում:*

– Որովհետև պատմությունը բազում վառ օրինակներով ապացուցել է ապրողներիս, որ ինչ դավ նյութում ես ուրիշի հանդեպ, ինքդ ես դառնում քո նյութած դավի զոհը: Ինտրիգներով կարելի է երկարաձգել իշխանությունը, բայց երբ ինտրիգը դառնում է քաղաքականության բուն էությունը, հատկապես 21-րդ դարում, և հատկապես այնպիսի փոքր երկրում, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, հեռանկար չես կարող ունենալ: Քաղաքականությունը պետք է լինի պարզ ու հասկանալի բոլորի և առաջին հերթին սեփական ժողովրդի համար: Համայն աշխարհը պետք է իմանա, թե ՀՀ-ն ինչպիսի պետական երազանքներ ունի, որն է հայ ժողովրդի ազգային շահը, որոնք են մայր խնդիրները, և դրանք լուծելու ու ազգային շահին հասնելու քաղաքակիրթ ինչ ճանապարհ են որդեգրել ՀՀ իշխանությունները: Ցավոք, այս ամենը չկա: Կան միայն իրավիճակային խնդիրներ, որոնք որպես հրշեջ խումբ, փորձում են մեղմել Քոչարյանն ու Սարգսյանը, մինչդեռ իսպառ բացակայում է հեռանկարի զգացողությունը: Սա կործանարար է:

Զրույցը՝
Փիրուզա Մելիքսեթյանի

«Իրավունք», 24 – 30.X.2003:

Մեր կարգախոսը պետք է լինի՝ Ռոբերտ Քոչարյանը ոչ լեգիտիմ է, նա պետք է հեռանա

«Ո՞մ ձեռքում են կենտրոնացած ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական իշխանության իրական լծակները՝ Քոչարյանի՞, թե՞ Սերժ Սարգսյանի» հարցին ՀՀ բնակչության գերակշռող մասի պատասխանը նույնն է՝ Սերժ Սարգսյանի: Եթե փորձենք հարցադրել «ինչո՞ւ», կհետևի միանշանակ պատասխանը. «Հենց Սերժ Սարգսյանն է որոշում, թե քաղաքական գործիչներից կամ օլիգարխներից հատկապես ով պետք է արժանանա «բարձրագույն բարեհաճության» և ով ցանկացած միջոցով պետք է հեռացվի քաղաքական կամ տնտեսական ասպարեզից»:

«Ո՞վ է ավելի ուժեղ և ո՞վ զգալիորեն թույլ» հարցով էլ սկսեցինք զրույցը «Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ, ԱԺ պատգամավոր Արտաշես Գեղամյանի հետ:

– Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը նույն մեդալի երկու երեսն են, – ասաց նա, – կամ ինչպես Մայակովսկին կասեր՝ երկվորյակ եղբայրներ են (ըստ իս, այն տարբերությամբ միայն, որ պատմության համար այս դուետը որևէ արժեք չի ներկայացնում):

Այս երկուսն են 2003 թ. փետրվարի 19-ին տեղի ունեցած հակասահմանադրական հեղաշրջման հեղինակներն ու իրականացնողները: Նրանց երկուսի գործողություններն էլ այսօր միտված են մեկ նպատակի՝ ամեն գնով պահպանել Ռոբերտ Քոչարյանի իշխանությունը: Դրան զուգահեռ փորձում են ստեղծել այնպիսի պայմաններ, որ նախագահական արտահերթ ընտրությունների պարագայում իշխանությունը փոխանցվի Սերժ Սարգսյանին կամ ծայրահեղ դեպքում՝ իրենց դրածոյին, մի մարդու, որը հլու-հնազանդ կկատարի իրենց կամքը: Նրանց մարտավարական խորամանկությունները ամբողջությամբ աշխատում են կլանի համար ցանկալի այս նպատակի իրագործման ուղղությամբ: Նման զարգացումները բնավ էլ չեն բխում ժողովրդական լայն զանգվածների շահերից:

– Ինչպե՞ս ուրեմն մեկնաբանենք Քոչարյան-Սարգսյան առճակատումների կամ հակասությունների մասին մերթ ընդ մերթ հրապարակ նետվող լուրերը:

– Տարաձայնությունների առկայության, մեկի ուժեղության և մյուսի ենթադրյալ թուլության մասին խոսակցություններն ընդամենը միտում ունեն ապակողմնորոշել

հասարակական կարծիքը:

– Ուրեմն պետք է եզրակացնել, որ աշխատո՞ւմ է այդ խորամանկությունը:

– Իրավացի եք: Քոչարյանից դժգոհողները նետվում են Սերժ Սարգսյանի գիրկը և հակառակը: Վերջիններս ուշադիր ունկնդրում են յուրաքանչյուր «արտասվողի», իսկ հետո ինֆորմացիա են փոխանակում իրենց ռեժիմի պոտենցիալ հակառակորդների մասին: Այնուհետև իրականացնում են իրենց բազմիցս արդարացրած մտրակի և բլիթի քաղաքականությունը, ինչը, ի դեպ, մեկ անգամ չէ, որ կիրառվել է 1999-ի հոկտեմբերի 27-ից հետո: Մեկին սիրաշահում են բարձր պաշտոնով, մյուսին գեներալական ուսադիրներ են շնորհում խաղաղ ժամանակ ցուցաբերած «ռազմական» սխրագործությունների, այն է՝ անօրինական վարչակազմի վերարտադրության համար: Մատուցաբաններով շքանշաններ ու մեդալներ են բաժանում: Ինչ-որ մեկին ժամանակավորապես թողնում են մոտենալ ամբողջությամբ իրենց կլանի կողմից վերահսկվող բիզնեսին: Նրանց, ում վրա չեն կարող ազդել ուժով, դատապարտում են դանդաղ մահվան. խժռելու են տալիս ոստիկանությանը, մաքսային կամ հարկային ծառայություններին, կենտրոնական բանկին: Իսկ եթե իրենց անձնական իշխանության համար վտանգ ներկայացնողների վրա չի կտրում նրանց ատամը, ապա գործի են դնում ազգային անվտանգության ծառայություններին... Այսպիսի պայմաններում իմաստ չունի խոսել այն մասին, թե ում ձեռքում են կենտրոնացած տնտեսական ու քաղաքական իշխանության լծակները:

– Ասել է՝ արատավոր ու երկրի ապագան վտանգող է Քոչարյան-Սարգսյան երկյակի իշխանությունը:

– Նրանց իշխանության անատոմիան շատ պրիմիտիվ սխեմա ունի. քաղաքական որոշ գործիչների ու օլիգարխների գերիզորության համար ստեղծել բարենպաստ պայմաններ: Ընդ որում, Քոչարյան-Սարգսյան դուետի «բարձրագույն բարեհաճությանը» հիմնականում արժանանում են մարդիկ, ովքեր եղել են նաև նախկին ռեժիմի տնտեսական ու քաղաքական նեցուկը և ովքեր վճռորոշ պահին ակնթարթորեն դավաճանեցին (բուրբոնյան շքախմբի նման, բայց ժամանակակից գավառական վարիանտով, համերաշխորեն հեգելով. «Թագավորը մահացավ: Կեցցե՜, թագավորը»):

– Ինչո՞վ բացատրել Սերժ Սարգսյանի ամենազորության մասին առասպելը:

– Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ լինի ինչ-որ մեկին կարևոր պաշտոնում նշանակելու կամ որևէ «հերձվածողի» պատժելու հրամանը, տրվում է ինչպես Քոչարյանի, այնպես էլ Սարգսյանի կողմից: Եթե կատարողներից որևէ մեկը փորձի ճշտել նախագահից, թե արդյոք նա տեղյա՞կ է Սարգսյանի տված հրամաններից, ավելին՝ հանկարծ փորձի արտահայտել իր անհամաձայնությունը, խոր հիասթափություն կապրի: Բոլորիս համար պետք է պարզ լինի, որ Սարգսյանի արձակած հրամաններն ընդունվում են Քոչարյանի հետ համատեղ: Այն, որ Սարգսյանի անվան հետ հաճախ են կապում ամենատարբեր ստուգումները, որոնք իրականացնում են ոստիկանությունը, մաքսային ու հարկային ծառայությունները, մարդկանց թյուրիմացության մեջ է գցում: Քանիցս ասվածը կրկնում եմ նորից. նրանց գործունեության մեխանիզմը լուրջ վտանգ է

ներկայացնում հայոց պետականության համար:

– Այժմ անդրադառնանք հիշյալ երկյակի վարած արտաքին քաղաքականությանը, մասնավորապես, Մոսկվայի, Վաշինգտոնի և Անկարայի հետ Երևանի ունեցած հարաբերություններին:

– Հարցին հարցով պատասխանեմ. կարո՞ղ եք ասել, թե ինչպես պետք է գնահատել պետության վարած քաղաքականությունն ընդհանրապես, որն արդեն 13 տարի է, ինչ անկախ է, բայց մինչ օրս պարզ ու տրամաբանական պատասխան չի տվել այն հարցին, թե որոնք են Հայաստանի Հանրապետության ազգային հետաքրքրությունները գլոբալացվող այս աշխարհում: Ի՞նչ գնահատական տաս իշխանություններին, որոնք ղեկավարում են երկիրը՝ չունենալով ազգային անվտանգության հայեցակարգ, պաշտպանության և արտաքին քաղաքականության դոկտրինա, որոնք էլ հենց 21-րդ դարում պետք է նպաստեին մեր ազգային հետաքրքրությունների ու նպատակների իրականացմանը:

Մինչ օրս հստակեցված չեն հրատապ այնպիսի հարցեր, ինչպիսին է, օրինակ, Հայաստանի հարաբերությունները Վլադիմիր Պուտինի Ռուսաստանի հետ: Չի տրվում Հարավային Կովկասի իրավիճակային զարգացման վերլուծական տեսությունը՝ տարածաշրջանում իրականացվող տնտեսական բազմամիլիարդ արժողությամբ այնպիսի ծրագրերի տեսանկյունից, ինչպիսիք են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի կառուցումն ու շահագործումը, որոնք անվիճելիորեն որոշիչ ազդեցություն կունենան մեր հարևանների՝ Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական կողմնորոշումների վրա: Ինչպե՞ս կզարգանան իրադարձություններն Իրանի շուրջ, ինչի՞ կհանգեցնի հարավկովկասյան տարածաշրջանի որևէ հատվածում գերտերությունների միջամտությունը թեկուզև հումանիտար նպատակներով, դժվար է ասել: Ինչևէ, հստակեցված չէ Հայաստանի տեղը համաշխարհային առաջիկա զարգացման հնարավոր սցենարներում:

– Այդ ամենից ի՞նչ եզրահանգում պետք է կատարել:

– Հետևությունը մեկն է. երկրի ղեկավարությունն իր ոչ լեգիտիմության և պրոֆեսիոնալ անտեղյակության պատճառով ի վիճակի չէ դիմակայել երրորդ հազարամյակի մարտահրավերներին՝ աղեկվատ արտաքին քաղաքականությամբ և հասարակության կոնսոլիդացիայով:

Մոսկվայի և Վաշինգտոնի հետ Երևանի ներկայիս հարաբերությունները ստիպում են ավելի լավը ցանկանալ: Այսօր արդեն ՌԴ-ում ավելի քան 2,5 մլն հայ է ապրում: Մեր ավելի քան 1 մլն 200 հազար հայրենակիցներ ապրում են ԱՄՆ-ում: Խոստովանենք անկեղծորեն. եթե չլինեին ՌԴ-ից ու ԱՄՆ-ից ամեն ամիս ուղարկվող օգնությունները, Հայաստանի ժողովուրդն առանց չափազանցության ողբերգական վիճակում կհայտնվեր: Հարկ է նշել, որ ԱՄՆ-ից ստացվող մեկ շնչին ընկնող հումանիտար օգնության տեսանկյունից մեր երկիրը երկրորդ տեղն է գրավում աշխարհում՝ Իսրայելից հետո:

– Մենք շեղվեցինք հիմնական հարցից:

– Պատահական չէր այդ շեղումը. մատնանշածս գործոնները հենց պետք է կազմեին

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության միջուկը, ինչը, ցավոք, այսօր չենք նկատում:

Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ հարաբերություններին, ապա դրանք հիմնականում պետք է հստակեցվեն պաշտոնական Անկարայի գործողություններով, ասել է՝ այն պահանջների կատարումով, որոնք առաջադրել է Եվրամիությունը Թուրքիային, որը հավակնում է անդամագրվել ԵՄ-ին: Որքան ակտիվորեն ու նպատակասլաց շարժվի Թուրքիան դեպի Եվրամիություն, այնքան հաստատուն կդառնան հարաբերությունները Հայաստանի և Թուրքիայի Հանրապետության միջև:

Բազում են կուտակված հրատապ հարցերը: Անվիճելի է այն, որ նոր հազարամյակում ապագան այն պետություններինն է, որոնք հաստատուն բռնել են դեմոկրատական խոր վերափոխումների ուղին:

– Եվ ո՞րն է այդ ճանապարհին Հայաստանի կատարելիք առաջին քայլը:

– Անշուշտ, ժողովրդավարական ճանապարհով ընտրված լեգիտիմ իշխանությունների ձևավորումը: Ահա թե ինչու մեր կարգախոսը պետք է լինի՝ Ռոբերտ Քոչարյանը ոչ լեգիտիմ է, նա պետք հեռանա:

Զրույցը՝
Փիրուզա Մելիքսեթյանի

«Իրավունք+ հարց ու պատասխան», 28 – 30.X.2003:

Роберт Кочарян нелегитимен, он должен уйти

Так считает лидер фракции "Национальное Единение" в парламенте Армении Арташес Гегамян

В нынешнем году Армения прошла через очень бурные выборы президента и парламента республики. Эмоции явно перехлестывали через край. Казалось, когда выборы останутся позади, страсти уляжутся. Но этого не произошло - призрак гражданских столкновений по-прежнему бродит по республике.

На вопросы "НГ" отвечает один из ведущих лидеров армянской оппозиции, экс-кандидат в президенты республики Арташес Гегамян.

— Господин Гегамян, вы не раз заявляли, что в результате парламентских и президентских выборов власть в Армении была "узурпирована". Означает ли это, что вы намерены требовать отставки президента Роберта Кочаряна? Будете ли вы сотрудничать с оппозиционным блоком "Справедливость", который возглавляет лидер Народной партии Степан Демирчян?

— Выборами президента и парламента Армении завершился антиконституционный переворот и процесс захвата власти кланом Роберта Кочаряна. Начало этому было положено 19 февраля 2003 года в ходе первого тура выборов президента. (По официальным данным, в первом туре за Арташеса Гегамяна было подано 17,6% голосов. - "НГ"). Массовые нарушения закона о выборах, Конституции Армении, Европейской конвенции по правам человека — такова суть оценок первого тура выборов международными миссиями. Госдепартаментом США, ОБСЕ и Советом Европы были даны рекомендации властям принять исчерпывающие меры по недопущению грубых нарушений, обеспечить прозрачные, свободные и демократические выборы. Примечательно, что благодушные оценки наблюдателей СНГ во главе с господином Яровым были диаметрально противоположны впечатлению международных экспертов. Такой подход дис-

кредитировал Содружество в глазах широкой общественности республики.

Роберт Кочарян и его приспешники эти рекомендации проигнорировали. Гроздья гнева обманутого в своих ожиданиях, униженного и оскорбленного народа созрели быстро: на беззакония люди ответили двухсоттысячными митингами и демонстрациями. В ответ — незаконные аресты, административные задержания, штрафы граждан, вся вина которых заключалась в отстаивании своих конституционных прав. Страна оказалась на грани гражданской войны.

Кровопролитие удалось предотвратить во многом благодаря сдержанной позиции партии "Национальное Единение", проводимой нами широкой разъяснительной работе. Сегодня ни для кого не секрет, что власти практически украли сотни тысяч голосов, поданных избирателями в мою пользу как кандидата на пост президента.

Ощутив безнаказанность, власти столь же нагло сфальсифицировали итоги и второго тура президентских выборов. История повторилась: жесткие оценки западных наблюдателей, благодушие со стороны миссии наблюдателей СНГ. Госдеп США, ОБСЕ и Совет Европы настоятельно потребовали, чтобы нелегитимные власти Армении обеспечили честные и демократические выборы теперь уже в Национальное собрание республики. Но это означало бы, что нелегитимный президент должен отстранить от рычагов власти те силы, которые незаконным путем поставили его во главе государства. Естественно, этого не произошло, и майские выборы в парламент были столь же цинично сфальсифицированы.

Абсурдность ситуации очевидна. Можно предположить, что есть влиятельные силы, заинтересованные в том, чтобы любая власть в Республике Армения была нелегитимной, ибо такой властью, не пользующейся доверием народа, легко манипулировать. Это предположение выглядит особенно зловеще в свете острых, требующих незамедлительного решения проблем, накопившихся в регионе Южного Кавказа. Видимо, уже предрешено, что гордиев узел существующих противостояний должен быть разрублен в самом скором времени, поскольку того требуют интересы, выходящие за рамки региональных. Но гипотетические авторы такого сценария не учитывают, что армянский народ никогда не признает и не станет поддерживать соглашения и договоры, заключенные от его имени нелегитимными властями.

В этой ситуации любой здравомыслящий политик во имя сохранения армянской государственности обязан требовать и добиваться отставки Роберта Кочаряна. Естественно, борьба должна вестись в конституционных рамках, и в этой борьбе мы обречены на сотрудничество со всеми ответст-

венными политическими силами страны. Кстати, опасность дальнейшего существования нелегитимных властей уже осознают не только в оппозиционном блоке "Справедливость", но и в некоторых партиях, еще недавно агитировавших за Кочаряна.

— Официальная статистика утверждает, что ежегодный прирост ВВП в Армении превысил 14%. В то же время уровень жизни подавляющей части населения остается очень низким. Чем объясняется такое несоответствие?

— Властям ничего не мешает заявить, что прирост составляет даже не 14, а 150-200%. Все это блеф, рассчитанный на профанов в вопросах макроэкономики. Чтобы не уподобляться фальсификаторам, утверждения которых о небывалом росте ВВП голословны, сошлюсь на ту же официальную статистику.

Действительно, в сборнике Национальной статистической службы указано, что в январе-июне 2003 года рост ВВП составил 14,8% по сравнению с аналогичным периодом прошлого года. Казалось бы - прекрасно! Но статистика — штука тонкая. Там же, но на другой странице сказано: импорт драгоценных и полудрагоценных камней и металлов в первом полугодии текущего года по сравнению с тем же периодом 2002 года составил 234,56%, или 179 миллионов 335 тысяч долларов США (в прошлом году — 76 миллионов 423 тысячи долларов). Значит, указанных материалов завезено больше на 102 миллиона 935 тысяч долларов, а это — 11,27% от ВВП за первое полугодие текущего года. То есть затраты на дополнительный критический импорт (импорт товаров, аналоги которых в стране отсутствуют, но которые необходимы для изготовления конечной продукции) не вычитываются из конечного ВВП. В итоге вместо реального спада ВВП в текущем году на 11,27% наши "кудесники" от экономики и статистики показывают "небывалый рост".

На деле в первом полугодии 2003 года ВВП составил лишь 88,7% от аналогичного периода 2002 г. А если учесть, что доходная часть бюджета не превышает 15% ВВП (в странах ЕС этот показатель составляет от 36% до 49%), то реальное состояние экономики и степень ее коррумпированности очевидны. Мы имеем дело с экономическими "потемкинскими деревнями" в армянском варианте.

- Газеты пишут о фактах вопиющего произвола в отношении представителей местного и зарубежного бизнеса. Утверждается, что заниматься предпринимательской деятельностью в республике можно лишь при наличии связей и "личных отношений" в высших эшелонах власти. Так ли это? Как данное обстоятельство влияет на инвестиционный климат?

— То, о чем пишут газеты, — лишь вершина айсберга. Экономика

задыхается в объятиях властвующего клана. Все сферы жизнеобеспечения страны — снабжение топливом, продуктами питания — полностью монополизированы ставленниками режима. Ни один законопослушный предприниматель не имеет перспектив расширения своего бизнеса. Кто подчиняется не клану, а закону, обречен. Этот регулируемый властями беспредел принял особенно чудовищные формы в ходе президентской кампании, когда наши зарубежные соотечественники, видя бедственное положение людей, пытались хоть чем-то помочь оппозиции в ее борьбе.

"Оперативность" властей в пресечении любых подобных шагов заслуживает отдельного упоминания. Доносы на "внешние деструктивные силы", которые якобы желают "дестабилизировать" ситуацию, следовали один за другим. Увы, этот бред находил отклик в России! По отношению к патриотам Армении, патриотам России Москва применяла жесткие санкции - видимо, с целью умиротворить власти союзного государства. Плодом столь неосмотрительной позиции российских спецслужб стал беспрецедентный факт: десятки тысяч граждан Армении, где люди из поколения в поколение питают к России самые теплые, братские чувства, в феврале 2003 года скандировали у посольства РФ в Ереване антироссийские, антипутинские лозунги! Нам, последовательным приверженцам дальнейшего углубления стратегического партнерства Еревана и Москвы, нам, отстаивающим необходимость вхождения Армении в ЕЭП, стоило большого труда разъяснить людям, что Россия поддерживает не антиконституционный режим Кочаряна, а безопасность армянского государства.

Политика очернения и "нейтрализации" российских бизнесменов армянского происхождения, истинных патриотов своей исторической родины и России, продолжается и сегодня.

Излишне говорить, сколь негативно все указанные обстоятельства сказываются на инвестиционном климате. Так, за период пребывания Роберта Кочаряна у власти было организовано четыре Всеармянских экономических форума. Многие из их участников, зарубежных предпринимателей армянского происхождения, искренне стремились принять участие в восстановлении разграбленной экономики страны. Но, ознакомившись с истинным положением дел, увозили с собой не бизнес-проекты, а лишь воспоминания о старинных монастырях и красотах природы. Все эти "исторические", по определению властей, форумы имели крайне незначительный реальный эффект.

— *Некоторые эксперты считают, что Центральный банк республики в последние годы стал инструментом, с помощью которого власть вершит*

произвол в финансово-экономической сфере...

— Да, для любого беспристрастного наблюдателя очевидно, что Центробанк Армении, выполняя волю правящего клана, часто втягивается в политику, грубо нарушая Закон "О Центральном банке". Руководители и владельцы финансовых учреждений, имеющие несчастье попасть в немилость к Роберту Кочаряну и его сподвижнику, секретарю Совбеза, министру обороны Сержу Саркисяну, вскоре становятся банкротами. А вот те банки, в которых "прокручиваются" деньги этого клана, процветают на фоне стагнирующей экономики, по бросовым ценам приобретая лакомые куски дорогостоящей недвижимости. Часто это — собственность тех, кого они искусственным образом обанкротили. Именно так случилось с банком "Кредит-Ереван". Его владелец, человек честный и достойный, не пожелал стать "почетным рабом" правящего режима, за что и поплатился.

Не без помощи Центробанка был прикрыт и банк "Кредит-Сервис". Руководителем ликвидационной комиссии назначили одного из ведущих сотрудников ЦБ. Последний проворовался и сейчас находится в местах, как говорится, не столь отдаленных. А его высокопоставленные покровители из ЦБ ничем за это не поплатились...

Владелец банка "Экономинвест", депутат парламента республики, осмелился раскритиковать беззакония, творимые Центробанком. Кроме того, он последовательно выступал за экономическое сближение с Россией, особенно в энергетической сфере. Результат — опала, жесткие нападки и угрозы.

Примеров политической ангажированности ЦБ Армении очень много. Наш однопартиец, лидер Гюмрийской территориальной организации партии "Национальное Единение", был руководителем ликвидационной комиссии банка "Ширакинвест". В период президентской кампании, после моей очередной теплой встречи с жителями Гюмри, из ЦБ посыпались угрозы — привлечь нашего товарища к уголовной ответственности за огрехи в его профессиональной деятельности. Давление росло, и человек не выдержал: отказался баллотироваться на пост мэра Гюмри, вышел из партии... И тут же все изменилось волшебным образом: его выдвинули на руководящую должность в областной префектуре, ни о какой ответственности уже и речи нет.

Громкий резонанс получило утверждение на посту зампреда ЦБ некоего Джавадяна. В 90-х он занимал аналогичный пост в правлении коммерческого банка "Армения". Последний лопнул, обманув и лишив средств тысячи вкладчиков. Председатель правления этого банка не один

год провел за решеткой. А вот его заместитель будет отныне в числе тех, кто вершит финансовую политику страны.

Вывод очевиден: в государстве, руководимом нелегитимным президентом и нелегитимным парламентом, Центробанк не может быть независимым.

— В Армении поговаривают, что реальные рычаги политической власти и экономического могущества находятся ныне в руках не столько президента Кочаряна, сколько Сержа Саркисяна...

- Это действительно интересный вопрос. Я считаю, что Кочарян и Саркисян - это, говоря словами поэта, "близнецы-братья", только вот никакой ценности для "матери-истории" не представляющие. Они оба - организаторы и исполнители антиконституционного переворота в Армении. И сегодня вся их деятельность направлена лишь на сохранение власти Кочаряна и создание условий для передачи этой власти Саркисяну в случае досрочных президентских выборов. При этом "тандем" умело манипулирует общественным мнением, создавая впечатление о якобы имеющихся "противоречиях", силе одного и мнимой слабости другого. В результате недовольные Сержем Саркисяном "плачутся в жилетку" президенту и наоборот. Те их терпеливо выслушивают, а потом обмениваются информацией на предмет выявления потенциальных противников режима.

Поэтому говорить о том, в чьих руках больше власти, бессмысленно. Их власть, основанная на политике кнута и пряника, на страхе и грубой силе, глубоко порочна. Кстати, они предпочитают приближать к себе тех, за кем водятся грехи: таких в случае чего можно легко "поставить на место". Создан механизм своего рода управляемой охлократии от бизнеса и политики, что очень негативно сказывается на судьбе страны.

— В связи с приходом к власти в Баку Ильхама Алиева говорят о начале нового этапа карабахского урегулирования. В этой связи - как вы оцениваете внешнюю политику Еревана, уровень отношений Армении с Россией, США, Турцией? Есть ли перспективы у миротворчества и экономического сотрудничества на Южном Кавказе? Какова должна быть в этих процессах роль России?

— Пошел уже 13-й год независимого существования Армении, однако до сих пор нет вразумительного ответа на вопрос, каковы постоянные национальные интересы нашей страны в глобализованном мире. Так, до сих пор не проработана концепция отношений с Россией Владимира Путина. Нет аналитического прогноза развития ситуации на Южном Кавказе в связи с реализацией в этом регионе многомиллиардных энергетических проектов, которые, бесспорно, окажут решающее воздействие на геополи-

тическую ориентацию наших соседей — Грузии, Азербайджана и Турции. Нет понимания того, как будет развиваться ситуация вокруг Ирана, никак не определено место Армении в возможных сценариях мирового развития.

Уровень отношений с Москвой и Вашингтоном явно оставляет желать лучшего. И это при том, что в России проживает более 2,5 миллиона армян, а в США — 1,2 миллиона. И не будь ежемесячно присылаемой ими материальной помощи своим родственникам и друзьям, народ Армении оказался бы на пороге катастрофы. К тому же по объему на душу населения гуманитарной помощи со стороны США мы занимаем второе место в мире — после Израиля. Именно указанные факторы должны стать стержневыми при выработке внешней политики, но этого нет.

Отношения с Турцией должны определяться конкретными действиями Анкары на путях требований, выдвинутых Евросоюзом к этой стране как к претенденту на вступление в ЕС. И чем активнее будет двигаться Турция к Евросоюзу, тем благодатнее будет становиться почва для постепенной нормализации отношений между Ереваном и Анкарой.

Вывод очевиден: нелегитимное и некомпетентное руководство страны не в состоянии противопоставить вызовам времени адекватную внешнюю политику и консолидировать вокруг нее армянское общество.

В новом тысячелетии будущее принадлежит странам, твердо вставшим на путь демократии. Для Армении первый шаг на этом пути — формирование легитимных властей, избранных демократическим путем. Поэтому лозунгом дня должен стать призыв: "Роберт Кочарян нелегитимен, он должен уйти!"

Из досье "НГ"

Арташес Мамиконович Гегамян родился в 1949 г. в Ереване, окончил Ереванский политехнический институт. В 1971-1988 гг. работал на руководящих постах в комсомольских и партийных органах Армении. В 1989-1990 гг. — мэр Еревана. В мае 1990 г. приостановил свое членство в КПСС, в декабре того же года подал в отставку с должности мэра. В 1991-1995 гг. успешно занимался бизнесом. С 1995 г. по настоящее время — депутат Национального собрания РА, лидер партии "Национальное Единение". С 1999 г. - руководитель одноименной парламентской фракции.

Георгий Сулин

"Независимая газета", 30.X.2003.

Վերջնական, թե՞ պյուրոսյան հաղթանակ

Վրաստանի ընդդիմությունը միասնական ճանապարհով և ժողովրդի հետ իրականացրեց թավշյա հեղափոխություն: Ընդամենը լուրջ պայքարի 20 օր, և հակաժողովրդական իշխանությանը չենթարկվեցին նաև ոստիկանությունն ու բանակը, հեռուստատեսությունն ու անվտանգության խորհրդի քարտուղարը: Մեր ընդդիմությունը, որ տարբեր փուլերում տարբեր պատճառներով մեկ միասնություն չկազմեց, չկարողացավ օգտվել հասարակական այն հսկայական աջակցությունից, որ ուներ 2003 թվականի փետրվարի 19-ին: Մեր հարցերին պատասխանում է «Ազգային Միաբանության» նախագահ Արտաշես Գեղամյանը:

– Ինչպե՞ս եք մեկնաբանում Վրաստանի իրադարձությունները:

– Հարցը մենք պետք է քաղաքական այլ հարթության վրա դիտարկենք ու փորձենք վերլուծել. եթե նախագահ Էդուարդ Շևարդնաձեի հրաժարականը կնպաստի Վրաստանի պետության տարածքային ամբողջականության խնդրին, այն է՝ ժողովրդավարական ուժերի իշխանության գալով Աբխազիայի ինքնավար հանրապետությունը, Աջարիան, Հարավային Օսիան կհամախմբվեն միասնական պետությունում միասնական իշխանության շուրջ, ապա, բնականաբար, մենք կարող ենք արձանագրել, որ Շևարդնաձեի հրաժարականը նպաստեց Վրաստանի միաձուլմանը, Վրաստանի զարգացման նոր փուլ թևակոխմանը: Դրա հետ մեկտեղ, եթե անջատողական գործընթացները, որոնք իրականացվում են Աբխազիայում, Աջարիայում, Հարավային Օսիայում, էլ ավելի խորանան, կնշանակի, որ Շևարդնաձեի հրաժարականը և ընդդիմության հաղթանակը, ցավոք սրտի, վրաց ժողովրդի, վրաց պետականության համար ոչ այլ ինչ էին, քան պյուրոսյան հաղթանակ: Այս պահին գնահատելը չափազանց վաղաժամ է:

– Հետընտրական իրավիճակը Հայաստանում և Վրաստանում գրեթե նույնն էր, բայց մեր ժողովրդին չհաջողվեց իրականացնել իշխանափոխություն. պատճառը մի՞թե ընդդիմության անվճռականությունը չէր:

– Շատ տարբեր էին մեր ընդդիմության և Վրաստանի ընդդիմության գործողությունները, երբ մեր ընդդիմությունը շատ ավելի զորեղ հանրահավաքներ էր անցկացնում, ցավոք, այդ պահին միջազգային և ոչ մի կազմակերպություն իր վերջնական գնահատականը տեղի ունեցածին չէր տվել, ինչպես դա տեղի ունեցավ Վրաստանի դեպքում, մասնավորապես ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Բրյուս Ջորջի խստագույն

գնահատականը, նաև միջազգային դիտորդական այլ առաքելությունների կոշտ գնահատականները: Երբ մեր ընդդիմությունը հրավիրում էր իր բազմահազարանոց հանրահավաքները, ցավոք սրտի, սեփական գործերին ի աջակցություն՝ չուներ միջազգային կազմակերպությունների հստակ ձևակերպված գնահատականները, այդ ամենը մենք ունեցանք միայն և միայն ընտրությունների երկրորդ փուլից հետո, նույնիսկ ԱԺ ընտրություններից հետո: Իսկ երբ միջազգային դիտորդական առաքելությունների գնահատականը չկա, և ընդդիմությունը դիմում է ավելի կտրուկ գործողությունների, ապա հենց այդ նույն միջազգային կազմակերպություններն արդեն կդատապարտեին ոչ թե իշխանություններին, այլ ընդդիմությանը: Այնպես որ Վրաստանի և Հայաստանի իրավիճակն արմատապես տարբերվում են:

– Իսկ Դուք գործընթացների նման զարգացում հնարավոր համարո՞ւմ եք Հայաստանում:

– Հայաստանում ոչ լեգիտիմ, ոչ ժողովրդավարական ընտրությունների արդյունքում ձևավորված իշխանությունները, լինի դա նախագահը, ԱԺ-ն, թե գործադիրը, արդեն իսկ ցույց տվեցին իրենց բացարձակ սնանկ լինելը, որի ապացույցն է սոցիալական ցանկացած ոլորտում այս կես տարվա ընթացքում արձանագրված նահանջը. ես էլ չեմ ասում մեր ժողովրդի համար ծայրաստիճան կործանարար դրսևորման մասին, ինչը պայմանավորված է հացի գնի, ջրի, էլեկտրաէներգիայի, գազի սակագնի բարձրացման հետ: Երկիր, որը հռչակել է շուկայական տնտեսական հարաբերություններ, չի կարող զարգանալ ավտորիտար իշխանությունների գործունեության պայմաններում:

– Եվ, այնուամենայնիվ, այսօր երկրի միակ իշխանությունը մնում Է Ռոբերտ Քոչարյանը՝ իր կոալիցիայով:

– Ցավոք սրտի, դա այդպես է: Բայց դրա հետ մեկտեղ մեր ժողովրդի ընդերքում հասունանում է ցասումի մի վիթխարի ալիք, որը կավերի, կշրջի ձեր հիշատակած ինստիտուտները, եթե վերջիններս հոժարակամ արդեն իսկ հիմա պայմաններ չստեղծեն ժողովրդավարական ընտրությունների արդյունքում ձևավորելու թե՛ նախագահի ինստիտուտը, թե՛ ԱԺ-ն, թե՛ գործադիր իշխանությունը:

– Ձե՞ք կարծում, որ ընդդիմության միասնական լինելու դեպքում հնարավոր էր նաև հաղթել:

– Ընդդիմությունը միասնական էր ի սկզբանե, փետրվարի 19-ից, երբ որոշում կայացվեց ընդդիմադիր 6 թեկնածուների կողմից չճանաչել ընտրությունների առաջին փուլի արդյունքները, երբ դրանք դեռ չէին էլ ամփոփվել: Եթե այդ միասնականությունը պահպանվեր, ապա այդ նույն միջազգային կազմակերպությունները չեղյալ կհայտարարեին ընտրությունները և կհայտարարեին նորը: Ավա՜ղ, այդ միասնականությունը խախտվեց ոչ «Ազգային Միաբանության» կողմից:

Զրուցեց

Դիանա Մարկոսյանը

«Այբ-Ֆե», 25.XI.2003:

Հիվանդ գլխից առողջի վրա մի՛ բարդեք

Ընդդիմությանը մեղադրող մեր իշխանավորներին Ստրասբուրգից խորհուրդ է տալիս ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության անդամ, «Ազգային Միաբանության» նախագահ Արտաշես Գեղամյանը:

– Կարելի՞ է դիվանագիտական հաղթանակ գնահատել Հայաստանի վերաբերյալ ԵԽԽՎ բանաձևից «այլ» բառի դուրս բերումը:

– Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի այս քննարկումներում, ցավոք, մեր երկրի արտաքին քաղաքականությունը կրեց դաժան պարտություն: Այդ «այլ» բառի քվեարկությանը մասնակցեցին ընդամենը 40 մարդ, որոնցից «կողմ» քվեարկեցին 21-ը, այդ թվում՝ 4-ը Հայաստանի պատվիրակներն էին: Փաստորեն, 45 երկրների 313 պատվիրակներից ընդամենը 17-ի քվեարկությամբ որոշվեց մեր երկրի համար հույժ կարևոր հնչեղություն և հետևանքներ ունեցող հարցը: Սա Ռոբերտ Քոչարյանի և Վարդան Օսկանյանի որդեգրած արատավոր կոմպլեմենտարիզմի քաղաքականության ամենախայտառակ պտուղներից է:

Խայտառակություն եմ համարում նաև այն, որ Ադրբեջանի ժողովրդավարական ինստիտուտների գործունեության արդյունավետության մասին զեկույցում տեղ գտավ այն ձևակերպումը, թե «ԵԽԽՎ-ն ափսոսանք է հայտնում, որ առաջընթաց չի արձանագրվել Լեռնային Ղարաբաղի համար Հայաստանի և Ադրբեջանի հակամարտության խաղաղ լուծում գտնելու գործում»: Քվեարկության դրվեց այս ոչ հայանպաստ ուղղումը և «կողմ» քվեարկեցին 75 պատվիրակներ: Համեմատեք սա «այլ» բառի հանման օգտին քվեարկած 17-ի հետ: Անգամ Շավարշ Քոչարյանի առաջարկին «կողմ» քվեարկեցին 14-ը, այսինքն՝ ընդամենը 3-ով պակաս, քան հնարավոր եղավ կորզել հայկական ողջ դիվանագիտության տիտանական ջանքերի շնորհիվ:

– Սակայն արդյոք ընդդիմությունը պարտություն չկրե՞ց վստահության հանրաքվեի վերաբերյալ առաջարկի մերժմամբ:

– Այդ առաջարկի չընդունման պատճառը հետևյալն է. ԵԽԽՎ-ն արդեն հերթական անգամ է ապացուցում, որ Հայաստանի և Ադրբեջանի հարցում առաջնորդվում է, ցավոք, երկակի չափանիշներով: Այն է՝ Հայաստանի նախագահի ընտրության ժամանակ տեղի ունեցած խայտառակությունների առջև փակեցին իրենց աչքերը, կոծկեցին ԱԺ ընտրությունների խայտառակությունները՝ դրանով իսկ ապացուցելով իմ այն պնդումը, թե Ղարաբաղի հիմնահարցի լուծման վերաբերյալ պարտավորվածություններ են ստանձնել թե՛ Փարիզում, թե՛ Քի Վեսթում ու դրանց կատարումը, փաստորեն, պայմանավորում են Ռոբերտ Քոչարյանի և Ալիևի քաղաքականության շարունակու-

թյամբ: Ուստի ցանկացած հարցադրում, որ ընդդիմությունն է առաջադրելու մինչև այդ հարցի քննարկումը՝ ավա՞ղ, մտավախություն ունեմ, թե կունենա նույն վախճանը: Սա ոչ թե ենթադրություն է, այլ պնդում. մեր առաջարկած բազմաթիվ փոփոխություններից և ոչ մեկը չընդունվեց, ու դիտարկման հանձնախումբը հայտնեց բացասական կարծիք: Պարզ էր, թե որ հարցի շուրջ ինչ որոշում էր ընդունվելու: Մի դեպք չեղավ, որ հանձնաժողովի կարծիքը մեկ լիներ, իսկ վեհաժողովն ունենար այլ կարծիք: Սա մտածելու տեղիք է տալիս, թե ինչ է կատարվում ժողովրդավարության հետ հենց այստեղ՝ ժողովրդավարություն քարոզող կառույցում:

Հարցը հասավ աբսուրդի, և դրանով ի հայտ եկավ երկդիմի քաղաքականությունը, երբ ճիշտ և ճիշտ նույն առաջարկով հանդես եկան «այլ» բառը հանելու կապակցությամբ և՛ հայկական պատվիրակությունը, և՛ իտալացիները: Նույն առաջարկին մի դեպքում դիտարկման հանձնաժողովը կողմ էր արտահայտվել, մյուս դեպքում՝ դեմ: Այս վերաբերմունքն ապացուցում է, որ Հայաստանը չի ընդունվում որպես ժողովրդավարական երկիր, այլապես չէին հանդգնի վերաբերվել նման արհամարհանքով:

– Ինչպե՞ս եք գնահատում ԱԳ նախարարի պնդումը, թե ԵԽԽՎ-ում մեր պատվիրակությունը պառակտված է աշխատում, ընդդիմությունն «իր խնդիրներն է առաջ տանում, իշխանափոխության խնդիրը տեղափոխել է Ստրասբուրգ: Մեր, փաստորեն, կեղտոտ լվացքը տարել ենք այնտեղ»:

– Վարդան Օսկանյանի անտեղյակությունը հիացնո՛ւմ է ինձ: Սա նրա հերթական գլուխգործոցներից է: Անտեղյակ է, որ Տիգրան Թորոսյանի, Արմեն Ռուստամյանի դիրքորոշումը պաշտպանել ենք թե՛ ես, թե՛ Շավարշ Քոչարյանը: Ավելին՝ ասվել է, որ եթե ավելի կուժեղանան մեր դիրքերն «այլ» բառի հանման շուրջ նաև ընդդիմության տեսակետը հայտնելով՝ մենք պատրաստ ենք: Սակայն փոխանակ ընդդիմությանը մեղադրի և պառակտվածության մասին խոսի՝ թող Օսկանյանը հաշվետու լինի հայ ժողովրդին, թե ինչպես է ստացվում, որ 313-ից ընդամենը 17 պատվիրակներ են պաշտպանում Հայաստանի դիրքորոշումը: Մեր այդ բազմաթիվ դեսպանատները՝ իրենցից չափազանց գոհ դեսպաններով ու դիվանագիտական անձնակազմով, ինչո՞վ են զբաղված, եթե մեզ թև ու թիկունք չեն կանգնում այս բախտորոշ հարցի ժամանակ:

Ինչ վերաբերում է «կեղտոտ լվացքն» ասպարեզ հանելուն՝ այստեղ ես ողջունում եմ պրն Օսկանյանի արդարամտությունը. իրոք, կեղտը չափազանց շատ է Հայաստանի իշխանական բուրգում: Եվ երբ դա վեր ես հանում, որ կեղտից ազատես երկիրը՝ զայրանում են: Թեև, իրոք, ողջամտության դրսևորում է սեփական իշխանության նեխած լինելն ընդունելը:

Մենք ականատեսն ենք, որ իշխանությունը ձախողել է Ղարաբաղի բանակցային ողջ գործընթացը, իրեն սպառել արտաքին քաղաքականության բնագավառում և հիմա, բնականաբար, արդարանալու էլ ոչ մի միջոց չունի, քան իր մեղքերն ընդդիմության վրա բարդելը:

Հարցազրույցը վարեց
Աննա Իսրայելյանը

«Առավոտ», 29.I.2004:

Եվրոպան մեր կոմպլեմենտարիզմին լուրջ չի վերաբերվում

Հունվարի 26-30-ը Ստրասբուրգում կայացավ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանը: Միջոցառմանը ներկա էր նաև «Այբ-Ֆե»-ի թղթակից Ռուզան Ամիրջանյանը: Նա զրուցել է Հայաստանի պատվիրակության անդամների հետ: Ներկայացնում ենք Ա. Գեղամյանի խոսքը:

- Առաջինը, ծայրաստիճան մտահոգիչ է այն, որ Եվրոպային մեծ առումով չեն հետաքրքրում Հայաստանի հարցերը:

Ի ապացույց քվեարկության թվերը՝ 41 հոգի են մասնակցել քվեարկությանը, ավելի քիչ, քան երկիր կա ԵԽ-ում (45):

Սա մտահոգիչ է և խոսում է այն մասին, որ մեր կոմպլեմենտարիզմ ասածը՝ արտաքին քաղաքականությունն անլուրջ է ընդունվում ԵԽ անդամ երկրների գերակշռող մեծամասնության կողմից: 21 կողմ ձայներից 4-ը Հայաստանինն էր, մնացածին էլ եթե դիտարկենք, կտեսնենք, որ մի քվեարկությանը մի քանի երկիր է մասնակցել:

Երկրորդը, ստացվում է, որ ինչքան մենք ապավինում ենք Եվրոպային, այնքան հիասթափություն ենք ապրում, որոշումները կարծես դաջված լինեն ի սկզբանե:

Պարզ էր, թե որ հարցի շուրջ ինչ որոշում էր ընդունվելու: Մի դեպք չեղավ, որ հանձնաժողովի կարծիքը մեկ լիներ, իսկ վեհաժողովն այլ կարծիք ունենար: Սա մտածելու տեղիք է տալիս, թե ինչ է կատարվում դեմոկրատիայի հետ հենց այստեղ՝ դեմոկրատիա քարոզող կառույցում:

Երրորդը, կարելի է ասել, որ ինչպես դարեր առաջ, ինչպես 20-րդ դարի սկզբին էին երկրագնդի ճակատագիրը որոշում 2-3 երկիր, հիմա էլ նույնն է. այն որոշումները, որ արդեն ընդունված են, ժողովրդավարության շղարշով ներկայացվում են հանրությանը:

Բանաձևից «այլ» բառը հանելն ամենևին հաղթանակ չեմ համարում: Եթե մենք մեր հաղթանակները պայմանավորում ենք առանձին բառերի լինել-չլինելով, կնշանակի մենք ի սկզբանե պարտված ենք:

«Այբ- Ֆե», 30.I.2004:

«Տեխնիկական սխալը»՝ «այլ» բառը, հանվեց, բայց...

– *Լ*ուրջի առնչությամբ զեկույցից «այլ» բառի դուրս թողնելը ոմանք հաղթանակ են համարում, մյուսները՝ ձեռքբերում: Ո՞րն է Ձեր գնահատականը:

– Ցավում եմ հայկական դիվանագիտության համար, որն այնպիսի վիճակում է հայտնվել, որ մի բառն անգամ բախտորոշ կարող է լինել մեր երկրի ու պետականության համար:

Կարծում եմ, պարոն Օսկանյանն ասպետի կեցվածք կընդունի և մինչև Ստրասբուրգից ՀՀ ԱԺ պատվիրակության վերադառնալը հրաժարական կտա: Նրա այդ քայլը կդիտվի որպես ազնվության դրսևորում և կմեղմի այն պատիժը, որին նա արժանի է Հայաստանի արտաքին քաղաքականության ոլորտը ձախողելու համար: Օսկանյանը պարտավոր է հրաժարական տալ, որովհետև Ստրասբուրգում տեղի ունեցածը ոչ այլ ինչ է, քան նրա վարած քաղաքականության ձախողում, այն էլ՝ խայտառակ ձախողում:

– *Որպես Ձեր եզրահանգման պատասխան են հնչում Օսկանյանի այն մեղադրանքները, թե ընդդիմությունը «...մեր կեղտոտ լվացքը տարել է Ստրասբուրգ», թե մեր պատվիրակության ավելի խոհեմ աշխատող հատվածը, «...որը մեր ազգային շահերն է պաշտպանում, ստիպված է ոչ միայն աղրբեջանական կողմի դեմ պայքարել, այլ նաև պայքարել մեր օպոզիցիայի կողմից ստեղծված խնդիրների դեմ»:*

– Հայաստանյան ներկա իշխանությունները, այդ թվում և Օսկանյանը, համոզված են սեփական լրջագույն ձախողումների մեջ, դրա համար էլ հիվանդ գլխից փորձում են առողջ գլխի վրա բարդել «կոմպլեմենտարիզմ» կոչված քաղաքականության ֆիասկոն: Ավելի լավ է, Օսկանյանը մտածի, թե այդ ինչպես եղավ, որ 313-ից ընդամենը 17 պատգամավոր պաշտպանեց չարաբաստիկ «այլ» բառի հանումը բանաձևի տեքստից: Նաև Օսկանյանը թող համապատասխան եզրահանգում կատարի, թե 45 երկրից ինչու 3-4 երկրների պատվիրակներ պաշտպանեցին հայկական պատվիրակության միասնական առաջարկը, որի տակ, բնականաբար, ստորագրել էին ընդդիմադիրներ Շավարշ Քոչարյանը և Արտաշես Գեղամյանը:

– *Ըստ էության, ամբողջությամբ մերժվեցին Շավարշ Քոչարյանի և Ձեր (ի դեպ, պաշտոնական քարոզչամեքենան պնդում էր, թե Գեղամյանը չի միացել Քոչարյանի նախաձեռնությանը) առաջարկները, այդ թվում և վստահության հանրաքվեի անցկացումը: Ինչո՞ւ:*

– Մենք հերթական անգամ համոզվեցինք, որ երկրները հավատարիմ են մնացել

իրենց ընդունած այն պարտավորությանը, թե պետք է նպաստեն պարոններ Քոչարյանին և Ալիևին, համապատասխանաբար Փարիզում և Քի Վեսթում ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու հարցում: Բնականաբար, կա այն գիտակցումը, որ այս իշխանություններն սպառել են իրենց, կա այն գիտակցումը, որ այս իշխանությունների օրոք ժողովրդավարական և ոչ մի բարեփոխում հանրապետությունում չի իրականացվի, սակայն կատարած սեփական աշխատանքը չեն ուզում ջուրը լցնել: Չեն ուզում, որովհետև, կրկնում եմ, այսօրվա դրությամբ Փարիզը և Քի Վեսթը դոմինանտ են թե՛ Եվրախորհրդի համապատասխան երկրների, թե՛ Մինսկի խմբի համանախագահող երկրների համար, որոնք էլ եղանակ ու որակ են ստեղծում Հայաստանին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ:

– *Ճշտենք նաև, թե ինչպիսին են տրամադրությունները ԼՂ-ի առնչությամբ:*

– Միայն այն փաստը, որ «այլ» բառի քվեարկությանը 45 երկրների 313 պատվիրակներից մասնակցեց ընդամենը 40-ը, իսկ «կողմ» քվեարկեց 21-ը, որից 4-ը Հայաստանի պատվիրակներն էին, ինքնին վկայում է, որ մեր իշխանություններն իրենց վարած քաղաքականությամբ բացարձակապես կորցրել են հետաքրքրությունը Եվրախորհրդի անդամ երկրների համար: Իսկ ե՞րբ է նման կորուստ լինում... Երբ տվյալ երկրների իշխանությունների հետ հեռանկարային հույսեր կապել չի կարելի:

Քանիցս կրկնել եմ և հիմա նորից փաստում եմ. երկիր, որն իր անկախության 14 տարիների ընթացքում այդպես էլ չունեցավ արտաքին քաղաքականության դոկտրին, ազգային անվտանգության դոկտրին, պարբերաբար հայտնվելու է նմանատիպ իրավիճակներում: ԱԳ նախարարը փոխանակ լրջորեն մտածի այս հարցերի մասին, փիլիսոփայում է, խորհուրդներ է տալիս, թե ԱԺ պատվիրակության կազմում ում ընդգրկեն, ում՝ ոչ: Խորհուրդներ է տալիս ընդդիմության ներկայացուցիչներին հանել այդ կազմից՝ անտեսելով տարրական այն նորմը, որ ԵԽԽՎ պատվիրակության կազմի լիազորությունները հաստատելուց հետո, ավա՜ղ, նախատեսված չէ, որ Վարդան Սինասիչը ինքնակամ կարող է այն փոփոխության ենթարկել (հարկավ եվրոպացիների բացթողումն է): Սի՞թե այդքան տարրական իրողություններ չիմանալու պարագայում կարելի է արտաքին գերատեսչություն գլխավորել: Ավելին՝ այդ ձախողումներից հետո հանդգնել ու Հանրային հեռուստատեսությամբ քարոզներով հանդես գալ: Դե ի՜նչ... Ինչպիսին քահանան է, այնպիսին էլ «հոտն» է...

Զրուցեց

Փիրուզա Մելիքսեթյանը

«Իրավունք», 30.I. – 5.II.2004:

«Ազգային Միաբանության» նպատակն է ժողովրդին ճիշտ ուղով առաջնորդել

– *Վստահության հանրաքվեի հարցը, թվում է, վերջնականապես տապալվեց. այն «վերակենդանացնելու» հույսեր տեսնո՞ւմ եք:*

– Ձեր հարցում, թերևս, մեկ ճիշտ բառ հնչեց՝ «թվում» է: Իրոք, այդպես կարող է թվալ: Ես ճիշտ հակառակ կարծիքին եմ: Վստահության հանրաքվեի անցկացման հարցն ավելի արդիական է դառնում՝ պայմանավորված երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական վիճակով, որը լրջագույն տագնապներ է հարուցում: Մենք ականատեսը եղանք, թե ինչպես տապալվեցին Ռ. Քոչարյանը և նրան սատարող ուժերը. պատկերացրեք ժողովրդավարություն հռչակած մի երկիր, որի իշխանությունը բռնազավթած նախագահն այն աստիճան է համոզված իր անօրինական լինելու հանգամանքի մեջ, որ վախենում է ժողովրդի իրական կարծիքն իմանալ: Այն աստիճան են սարսափում սեփական ժողովրդից, որ գնում են ծայրահեղ քայլերի, արհամարհում են Սահմանադրական դատարանի 2003 թ. ապրիլի 16-ի համապատասխան որոշումը, սկսում են մեկնաբանել այն՝ անտեսելով «Սահմանադրական դատարանի» մասին օրենքը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանի որոշումները քննարկման ենթակա չեն, այլ միայն ենթակա են կատարման: Ավելին, ԱԺ կանոնակարգի լրջագույն խախտումներով, զոռբայությամբ տապալեցին «Հանրաքվեի մասին» օրինագծի քննարկումը ԱԺ-ում: Այս բոլորը բերում է այն համոզման, որ իշխանությունները, որքան էլ դա տարօրինակ հնչի, շահագրգռված են երկրի վիճակի ապակայունացմամբ: Մենաշնորհային կլանային տնտեսությունը, ազատ մրցակցության բացակայությունը, սակագների շեշտակի աճը, ինչն անխուսափելիորեն դեռ շարունակվելու է, իշխանություններին բերել է այն գիտակցությանը, որ իրենք դատապարտված են: Այդ ամենի մեղքն իրենց վրայից գցելու համար, նրանք փորձ կանեն բոլոր ձախողումները պայմանավորել ընդդիմության, իբր թե, ոչ կառուցողական գործունեությամբ: Դա արդեն հստակ ուրվագծվեց ԱԺ-ի վերջին քննարկումների ժամանակ:

Ինչ վերաբերում է Ստրասբուրգում վստահության հանրաքվեի հարցի մերժմանը, ապա դա չպետք է չափազանցնել այն պարզ պատճառով, որ դրա օգտին քվեարկել է 16, իսկ չարաբաստիկ «այլ» բառը հանելու օգտին, չհաշված մեր պատվիրակության անդամներին, ընդամենը 17 պատգամավոր: Այսինքն՝ կա մեկ ձայնի տարբերություն: Շ. Քոչարյանը և ես Ստրասբուրգում միտումնավոր այդ հարցը չսրեցինք, որպեսզի մեր երկրի արտաքին քաղաքականության պատասխանատուները հետագայում չփորձեն իրենց

ձախողումները բարդել ընդդիմության վրա:

– Վստահության հանրաքվեի խնդիրը խորհրդարանում մտավ փակուղի: Դուք ուրիշ ի՞նչ ուղիներ եք տեսնում՝ այդ նպատակին հասնելու: Դուցե խորհրդարանից դուրս ընդդիմության գործունեության ակտիվությամբ, ժողովրդին ոտքի հանելով և իշխանությունների վրա ճնշում գործադրելո՞վ:

– Վստահության հանրաքվեի անցկացման անհրաժեշտությունը կգիտակցեն իշխանություններն այն ժամանակ, երբ կտեսնեն, որ ժողովուրդը չի ընդունում իրենց և պատրաստ է ինքնաբուխ դիմել անհնազանդության ծայրահեղ դրսևորումների: Նրանք, ի վերջո, կհասկանան, որ արժանավայել, անցնցում հեռանալու միակ շանսը հենց վստահության հանրաքվեի անցկացումն է: Այսօր ժողովրդին հուսահատության գիրկն են նետել: Վախի մթնոլորտ է՝ վաղվա օրվա նկատմամբ խոր տագնապներով: Ժողովուրդը ոչ մի հույս չի կապում իշխանությունը բռնազավթած թե՛ նախագահի, թե՛ ԱԺ քաղաքական մեծամասնությունը կազմող կուսակցությունների հետ: Այս ամենը, բնականաբար, վտանգ էլ է պարունակում, որովհետև ժողովրդի ցասումը կարող է փոխարկվել անկառավարելի պոռթկումների: Ուստի, պատահական չէ, որ թե՛ ես, թե՛ ընդդիմադիր մյուս գործիչները մեր ելույթներում հորդորում ենք իշխանություններին գիտակցել պահի լրջությունը: Կարծում եմ, իշխանության բուրգում կգտնվեն պատասխանատու այրեր, ովքեր ետ կպահեն իրենց արկածախնդիր այն գործընկերներին, ովքեր կփորձեն ուժի միջոցով ճնշել համաժողովրդական անխուսափելի ընդվզումը:

– Պրն Գեղամյան, Դուք վստա՞հ եք, որ ժողովրդի ակտիվության մակարդակն առաջիկա ամիսներին կարող է այդչափ բարձրանալ: Առավել ևս՝ ընդդիմությունը բոլոր հարցերում չէ, որ միասնական է գործում:

– Երևանյան առանձնասենյակում նստում և հեռուն գնացող նմանատիպ հետևություններ են անում հատկապես իշխանամետ լրատվամիջոցները, քաղաքական որոշ գործիչներ: Նրանք բացարձակապես անտեղյակ են Հանրապետությունում ստեղծված ներկա իրավիճակից: Այսօր, կոնկրետ ԱՄ-ը մի խնդիր ունի. ոչ թե ժողովրդին ոտքի կանգնեցնել, այլ արդեն ոտքի ելած ժողովրդին ճիշտ ուղով առաջնորդել, որովհետև մարդիկ պատրաստ են դիմել ամենածայրահեղ քայլերի: Պետք է կարողանանք մեղմել ահագնացող այդ ցասումը, որպեսզի Հանրապետությունը չկրի անդառնալի կորուստներ:

– Ժամանակին Դուք դեմ էիք հանրահավաքային շարժմանը: Այժմ ի՞նչ ճանապարհով պետք է ուղղորդեք ժողովրդին:

– Քաղաքական ցանկացած գործիչ, եթե իրեն, իրոք, համարում է իր ժողովրդի հարազատ զավակը, պետք է գիտակցի, որ ինչքան ինքն ունի առաջնորդելու առաքելություն, տասն անգամ ավելի սովորելու բան ունի ժողովրդից: Դրանից ելնելով, բնականաբար, ես ականջալուր եմ լինելու ժողովրդի ներքին ձայնին, ներքին ցանկությանն ու պահանջին: Եթե մարդիկ պատրաստ են իրենց արժանապատիվ կյանքի համար կենաց-մահու կռիվ մղել, ապա քաղաքական պատասխանատու գործիչը պարտավոր է գլխավորել այդ շարժումը, դրան հնարավորինս քաղաքական երանգներ

հաղորդել: Ասեմ, որ ԱՄ գործողությունները բխելու են ժողովրդի պահանջներից: Եթե հանրահավաքային մոտեցումը իշխանությունների կողմից, այնուամենայնիվ, պարտադրվի ժողովրդին և ընդդիմությանը, բնականաբար, մարտահրավերի ձեռնոցը մենք կբարձրացնենք: Այդ պարագայում արդեն ողջ պատասխանատվությունը կընկնի իշխանությունների վրա, անցանկալի բոլոր հետևանքները կծանրանան նրանց խղճին: Չի կարելի սվիններով գալ իշխանության և փորձել սվիններով այն պահել:

– Այսինքն, եթե պահը հասունանա, Դուք ուղղորդելու եք ժողովրդին՝ չբացառելով նաև հանրահավաքնե՞րը:

– Պահը վաղուց է հասունացել: ԱՄ-ն այսօր այլ խնդիրներ է տեսնում, այն է՝ ժողովրդի ընդվզումը համակարգել, դարձնել կառավարելի, ճիշտ ուղղորդել և առաջնորդել: Պատահական չէ, որ մարզերում ժողովրդի հետ հանդիպումները նոր թափ են ստացել: Առաջիկա մեկուկես ամսվա ընթացքում այդ հանդիպումներն ավելի մեծ ընդգրկում կունենան: Ժողովուրդն իրազեկված կլինի մեր մոտեցումներին, անելիքներին ու հետագա քայլերին: Իշխանությունները, անշուշտ, տեղյակ են արդեն իսկ կայացած հանդիպումների, դրանց արձագանքների հնչեղության մասին. դա էլ թող նրանց համար սթափության կոչ լինի:

– Անդրադառնանք ԵԽ-ում վստահության հանրաքվեի խնդրի արծարծմանը: Ե՞րբ գտնում, որ այն հարվածում է Հայաստանի միջազգային իմիջին, ուրեմն անուղղակիորեն նաև՝ դարաբաղյան հիմնահարցի հայանպաստ լուծմանը:

– Ցավում ենք, որ մեր երկրի արտգործնախարարը իր վերջին հարցազրույցներում դրսևորում է բացարձակ անիրազեկություն՝ կապված ԵԽ-ում տիրող մթնոլորտի և բարքերի, ինչպես նաև՝ կանոնակարգի հետ: Չի ընկալվում այն իրողությունը, որ եթե որևէ երկրի պատվիրակության ընդդիմադիր անդամներ անկաշկանդ խոսում են իրենց երկրում ժողովրդավարության վերականգնման մասին, ապա դա ոչ թե գցում, այլ, ընդհակառակը, բարձրացնում է տվյալ երկրի վարկանիշը: Դա անուղղակի ապացույց է, որ, այնուամենայնիվ, տվյալ երկրում ժողովրդավարությունը դեռ վերջնականապես մեռած չէ:

Ինչ վերաբերում է արտգործնախարարի այն պնդմանը, որ հանրաքվեի վերաբերյալ մեր հարցադրումն իբր բացասական անդրադարձ է ունեցել ԼՂ-ի վերաբերյալ այդ չարաբաստիկ «այլ» բառի առկայության իմաստով, ապա գոնե պետք է տեղյակ լինեն, թե ինչ հերթականությամբ են քննարկվել հարցերը: Ադրբեջանին վերաբերող բանաձևի օգտին քվեարկել են 75 հոգի, մինչդեռ Հայաստանին վերաբերող բանաձևից «այլ» բառը հանելու օգտին քվեարկել են 21-ը, որից 4-ը ՀՀ պատվիրակներն էին, այդ թվում՝ ընդդիմադիր: Ըստ որում, Հայաստանին վերաբերող հարցի քննարկումը տեղի է ունեցել Ադրբեջանի վերաբերյալ բանաձևի ընդունումից 6 ժամ անց:

Ընդհանուր առմամբ, մեր արտաքին քաղաքականության ձախողումները պայմանավորված են նախագահական և խորհրդարանական խայտառակ ընտրություններով, որոնք պարզապես գետնին հավասարեցրին ՀՀ վարկանիշը որպես ժողովրդավարական երկիր: Մի երկիր, որը եվրոպական հեղինակավոր կառույցների առջև ստանձնել է պարտավորություններ և դրանք կոպտորեն ոտնահարում է, բնականաբար, թողնում է անլուրջ երկրի

տպավորություն: Իսկ անլուրջ երկրներին պատժում են, ինչը և տեղի ունեցավ Ստրասբուրգում: Որպես ասածիս ապացույց, բերեմ հետևյալ փաստը: «Լեռնային Ղարաբաղի և այլ գրավյալ տարածքները» ձևակերպումից «այլ» բառը հանելու երկու բանաձև կար: Մեկը ներկայացրել էր ՀՀ պատվիրակությունը, մյուսը, նույն բովանդակությամբ, Իտալիայի պատվիրակության ղեկավարը: Մեր բանաձևը չանցավ, իսկ իտալականը 15 րոպե հետո անցավ. դա առաջացրեց ադրբեջանական պատվիրակության ղեկավար Սեիդովի տարակուսանքը, որն ասաց. «Հասկանանք, թե ինչ է կատարվում այստեղ»: Իսկ կատարվածը շատ պարզ էր ու հասկանալի. ՀՀ պատվիրակության ասածը ոչ մի նշանակություն ու արժեք չի ներկայացնում ԵԽ անդամ երկրների համար: Փաստորեն, պատժեցին ՀՀ իշխանություններին և հասկացրին, թե որն է իրենց տեղը:

Հիմա իշխանավորները խոսում են ամեն ինչի մասին, բացի հարցի բուն էությունը պարզաբանելուց, որ մարդիկ հասկանան, թե իրականում ինչ է եղել:

– Առողջ ընդդիմության դերը նաև իշխանություններին սթափ պահելուն է միտված: Սակագների բարձրացումը կանխելու համար պայքարի ի՞նչ ուղիներ եք նախանշում:

– Ցանկացած սակագնի բարձրացման նախ պատճառը պետք է վերլուծել, կանխարգելիչ ծրագրեր մշակել, որոնք կմեղմեն սոցիալական հնարավոր հետևանքները: Մինչդեռ դա չի արվում այն պարզ պատճառով, որ Հայաստանում կենսապահովման բոլոր ոլորտները մենաշնորհային են, ղեկավարվում և տնօրինվում են քոչարյան-սերժսարգսյանական կլանի կողմից: Հացի գների աճը կարելի էր կանխել, եթե պետությունն ունենար 120-150 հազար տոննա ցորենի պահուստային ֆոնդ: Այդ դեպքում կարող էր մրցակից դառնալ ցորենի ներկրող մոնոպոլիստներին, որը կազդեր գնագոյացման վրա: Ռ. Քոչարյանն իր հեռուստաելույթում ասում է. «Դե, ազատ շուկայական տնտեսություն է և ազատ գնագոյացում: Պետությունն այստեղ անելիք չունի»: Ասում է, որովհետև իր շրջապատը, բնականաբար, ցամաք հացի կարոտ չէ: Իրենք տեղյակ էլ չեն, որ ամենամյա «Էնցիկլոպեդիա Բրիտանիկա» 2004 թ. ալմանախում (ENCYCLOPAEDIA Britannica Almanac) սահմռկեցուցիչ թվեր են բերված այն մասին, որ մեկ մարդուն ընկնող սննդառացիոնի անհրաժեշտ կալորիաների և տեսականու քանակով 220 երկրների մեջ ՀՀ-ն գրավում է 217-րդ տեղը: Գաղտնիք չէ, որ մարդու օրգանիզմի նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ է մոտ 2500 կկալորիա: Մինչդեռ Հայաստանում այն կազմում է անհրաժեշտի 77%-ը: Թերսնված է ողջ հայ ժողովուրդը: Ադրբեջանում այդ ցուցանիշը կազմում է 96%, Վրաստանում՝ 92%: Եվ այս իրավիճակում մեր կառավարությունը զբաղված է բանկետներ կազմակերպելով և աղքատության նվազեցման ծրագրեր հաստատելով: Պատկերավոր ասած՝ իրենք ուտել-խմելով են աղքատի դարդը լացում: Ահա այս ամենով էլ հենց պայմանավորված է իշխանափոխության հրատապությունը:

Զրուցեց
Արամ Հակոբյանը

«Ավանգարդ», 18 – 24.II.2004:

В стране непременно будет установлен конституционный порядок

Один из лидеров армянской оппозиции предрекает неизбежную смену власти в Республике

Начиная с февраля в Армении возобновились многотысячные митинги, руководимые депутатами Национального собрания (парламента) республики от оппозиции. Десятки тысяч граждан выражают свою солидарность с оппонентами президента Роберта Кочаряна, поддерживают бойкот, объявленный оппозицией работе парламента, требуют исполнения решения Конституционного суда о внесении изменений в закон о референдуме и проведении референдума о доверии президенту. Некоторые наблюдатели уже заявляют, что в Ереване могут повториться недавние события, имевшие место в Грузии. Противники правящего режима утверждают, что власти ведут страну к пропасти, и только скорые и радикальные перемены помогут избежать национальной катастрофы. Так, в частности, считает один из ведущих лидеров оппозиции, фаворит очередного "весеннего наступления на власть", лидер партии "Национальное Единение" и одноименной парламентской фракции Арташес Гегамян.

— Выступая на февральской сессии Парламентской ассамблеи ОБСЕ в Вене, вы охарактеризовали положение, сложившееся в Армении, как взрывоопасное. Нет ли в этом нередко свойственного оппозиционным деятелям преувеличения?

— Увы! Жизнь ежедневно подтверждает наши самые худшие опасения. Во всех без исключения регионах страны люди тысячами, десятками тысяч приходят на наши митинги. И все едины в оценке ситуации, которую иначе как общенациональный кризис не охарактеризовать, едины в своей решимости освободить Армению от бремени нелегитимной власти.

Это неудивительно: положение в социально-экономической сфере поистине катастрофично. Об этом более чем красноречиво и одновременно беспристрастно свидетельствует статистика, представленная авторитетным

изданием «ENCYCLOPAEDIA Britannica, Almanac 2004». Здесь обобщены основные показатели развития 220 стран мира. В частности, указано, что качество и калорийность ежедневного питания жителя Армении составляет лишь 77% от рекомендуемого ФАО (организация ООН по продовольствию и сельскому хозяйству) минимума. Кстати, у наших соседей в Грузии этот показатель составляет 92%, в Азербайджане — 96%. А ведь эти страны трудно назвать беспроблемными. Фактически по показателю «недоедания и голода» Армения соседствует с Афганистаном, Эритреей и Бурунди. А ведь лет 15—20 назад она была одной из развитых стран Передней Азии по уровню образования, медицинского обслуживания и социального обеспечения, доходам на душу населения...

Полуголодное существование не могло не сказаться на здоровье людей. Нельзя без содрогания смотреть на официальные данные, опубликованные Национальной статистической службой РА в ежегоднике «Социально-экономическое положение Республики Армения в январе—декабре 2003 года». Здесь сказано, что заболеваемость детей в возрасте до 14 лет острыми инфекционными заболеваниями в 2003 году в сравнении с 2002 годом возросла на 84%, вирусным гепатитом — в 2 раза, острыми инфекциями верхних дыхательных путей — в 4,8 раза, гриппом — в 7 раз, туберкулезом дыхательных путей — в 4,1 раза, чесоткой — в 4,2 раза... Это ли не катастрофа?!

Еще более ужасает положение полумиллиона пенсионеров, чья ежемесячная пенсия в четыре раза меньше минимальной потребительской корзины и в 2,5 раза меньше минимальной продовольственной корзины. А ведь пенсионеры составляют почти четверть реально проживающего в республике населения. Не лучше обстоят дела и с более чем 220 тысячами работников бюджетных организаций. Достаточно сказать, что их среднемесячная зарплата составляет чуть более 72% минимальной потребительской корзины. После этой, повторюсь, официальной статистики можно ли сомневаться, что республика находится на грани социального взрыва?

Подобный вывод еще более актуализируется, если учесть, что обстановка постоянно ухудшается из-за растущей поляризации общества. Нынешний правящий клан, возглавляемый президентом Кочаряном и его ближайшим сподвижником, министром обороны Сержем Саркисяном, грубо попирая законы, открыто богатеет на глазах у населения, влачащего поистине жалкое существование.

И на этом фоне правительство вопреки собственным обещаниям не предотвратило роста тарифов на воду и газ, на очереди — повышение

тарифов на электроэнергию. Жестоким испытанием на выживаемость явилось почти двукратное повышение в течение года цены на муку.

За прошедший год еще труднее стало учителям и врачам. «Забота» о них обернулась так называемой «оптимизацией» сфер образования и здравоохранения, в результате более 5 тысяч учителей уже потеряли работу, а в предстоящие два-три года будет сокращено еще 22 тысячи. Та же участь уготована работникам здравоохранения.

За годы президентства Роберта Кочаряна значительно увеличилась безработица. Как свидетельствует та же официальная статистика, с 1998 по 2003 год число занятых в хозяйстве республики сократилось с 1350900 до 1111600 человек, за 6 лет лишились работы почти четверть миллиона людей! А ведь придя к власти, президент обещал ежегодно создавать по 40 тысяч новых рабочих мест. На деле все произошло «с точностью до наоборот» — именно такое число рабочих мест каждый год ликвидировалось.

Перечень результатов бесславных деяний дуэта Кочарян—Саркисян и их политических сателлитов можно продолжить. Но и без того очевидно полное фиаско нынешней нелегитимной власти Армении.

— *Недавно на страницах «НГ» председатель парламента Армении Артур Багдасарян заявил, что правительственная пропрезидентская коалиция из трех партий «в состоянии решать проблемы страны, а не загонять их внутрь»...*

— Не исключаю, что господин Багдасарян попросту еще не успел ознакомиться и осмыслить сборник Национальной статистической службы за 2003 год, тем более — «ENCYCLOPAEDIA Britannica, Almanac 2004».

Еще в прошлом году, когда в стране прошли абсолютно скандальные, полностью сфальсифицированные выборы, мы предупреждали, что итоги этого политического шулерства будут долго и тяжело сказываться на всех аспектах жизни государства. И не случайно, что сразу после новогодних и рождественских каникул в Армении резко обострилась внутриполитическая ситуация. Две оппозиционные фракции — «Национальное Единение» и «Справедливость» в знак протеста против решения послушного Кочаряну парламентского большинства не выполнять постановления КС о внесении поправок в закон о референдуме и последующего проведения плебисцита о доверии президенту — выступили с совместным заявлением о бойкоте «законотворческой» работы парламента, который не выполняет решения Конституционного суда, хотя по закону решения КС обязательны для исполнения. Властей предержащих сильно раздражает, что бойкот не только не привел к нашей изоляции, а наоборот, сопровождался значи-

тельной активизацией оппозиционных депутатов в работе с населением, в том числе путем целенаправленного использования парламентской трибуны для разъяснения людям наших действий.

Конечно, похвально самокритичное признание господина Багдасаряна, что в стране «царит откровенная коррупция, в том числе и среди чиновников высшего звена». Отрадно, что он фактически не стал оспаривать отсутствие политической воли и несостоятельность правительственной коалиции в решении насущных задач, стоящих перед обществом. Ведь ни для кого не секрет, что в Армении высшие звенья руководства всеми ветвями власти комплектуются отнюдь не по признаку профессионализма и порядочности, а либо из числа ставленников клана Кочаряна—Саркисяна, либо партиями правительственной коалиции: Республиканской во главе с премьер-министром, партией «Страна закона», возглавляемой самим спикером, и Армянской революционной федерацией «Дашнакцутюн».

Нельзя не согласиться и с другим утверждением спикера: действительно, руководство пропрезидентских партий «не загоняет вглубь проблемы страны». Еще в мае прошлого года накануне парламентских выборов руководство «Дашнакцутюн» на предвыборном собрании бурной овацией приветствовало речь одного из политиков, который заявил, что для искоренения взяточничества и коррупции в Армении следует немедленно избавиться от министра обороны Сержа Саркисяна, отправить его в отставку. Заявление произвело эффект разорвавшейся бомбы, хотя для простых граждан ничего сенсационного в нем не было. Неожиданностью стало лишь то, что эти слова прозвучали на собрании политических сил, защищавших на президентских выборах Кочаряна. Это, по сути, был призыв к президенту «сдать» своего сподвижника, считающегося главным «дирижером» грубых фальсификаций президентских, а впоследствии и парламентских выборов. Я уже не говорю о том, что деяния Саркисяна неоднократно преподносились общественности с трибуны Национального собрания и в СМИ в качестве действий «крестного отца» клана, паразитирующего на несчастьях сотен и сотен тысяч жителей Армении. А чего стоят сообщения в местных газетах об отдыхе министра обороны в Монако вместе с домочадцами. Ничего странного! Ведь заработная плата наших высокопоставленных бюджетников, которым законом запрещается заниматься предпринимательской деятельностью, составляет целых 400 долларов в месяц! И если в течение года ничего не есть и ходить только в казенной военной форме, то как раз можно будет к отпуску накопить пару-тройку миллионов евро и потратить их для организации семейного

отдыха на Лазурном берегу Франции и знакомства с местными казино...

Похождения министра и его крупный проигрыш в казино стали притчей во языцех. Но «принципиальные споры вокруг животрепещущих проблем» на этом не кончились. Самого спикера — с подачи другой партии коалиции, в предвыборном списке которой под номером 2 значился Серж Саркисян, — обвинили в причастности к масонской ложе и принадлежности к агентуре одной из весьма уважаемых в Армении стран... И если в случае с проигрышем в казино Монте-Карло «верхи» ограничились лишь сообщением руководителя пресс-службы Минобороны о том, что они не комментируют частную жизнь министра, то в случае с разоблачениями спикера прибегли к испытанному ответу — дескать, на «бредни» второе лицо в государстве не реагирует.

Столь философски-стоическая реакция на обвинения не должна удивлять. Вероятно, наши государственные мужи, памятуя о легендарной коррумпированности местной правоохранительной системы, просто считают излишним обращаться в суд с целью защиты чести и достоинства. Во всяком случае, по этому пути они не пошли. Зато, осознавая свое полное морально-нравственное банкротство, дуэт Кочарян—Саркисян преуспел в изощренной саморекламе. Вот пример. В Армении, как известно, с огромным уважением относятся к Владимиру Путину, особенно после его душевного выступления на учредительном съезде Всемирного армянского конгресса в Москве. И вот в аккурат перед президентскими выборами в России пропрезидентская армянская газета публикует политический портрет Кочаряна — опус, по эмоциональности достойный Плутарховых жизнеописаний. Из которого выясняется, что Кочарян, оказывается, многими чертами своего характера схож с российским лидером. Думаю, большего издевательства нельзя было и придумать. Ведь почти миллион наших соотечественников бежали в Россию именно от беспредела правящего в Армении режима. Кстати, не менее кощунственным представляется мне и сравнение Сержа Саркисяна с Сергеем Ивановым. Вряд ли все это нуждается в комментариях.

Анализируя происходящее и ближайшие перспективы нашей страны, приходишь к неутешительному выводу: наша страна сегодня напоминает Древний Рим периода упадка — с его моральным разложением, бессилием, лицемерием. «Кочарянизм» становится трагедией для армянского народа и национальной государственности. И — я уверен — станет также личной трагедией для самого президента и Сержа Саркисяна. А ведь в свое время они немало сделали для Карабаха...

— Как непримиримые отношения между оппозицией и властями могут отразиться на международном имидже армянского государства, на разрешении застарелого конфликта вокруг Нагорного Карабаха?

— Непоправимый урон международному имиджу Армении был нанесен не оппозицией, а правящим дуэтом и его подручными. Ведь после первого тура прошлогодних президентских выборов наблюдательные миссии ОБСЕ, Совета Европы и госдепа США выступили с жесткими и весьма нелицеприятными заявлениями и оценками имевших место грубейших нарушений в ходе выборов и подсчетов итогов голосования. Более того, ими было высказано жесткое требование — не допустить повторения подобных беззаконий во втором туре. Этого, однако, не случилось. Поэтому, дав заключительные оценки по итогам двух туров президентских выборов, международное сообщество настоятельно потребовало привлечь к ответственности виновных в нарушениях и фальсификациях и создать необходимые предпосылки для организации честных, демократических и свободных выборов в Национальное собрание республики. Это требование также было полностью проигнорировано властями, Кочарян «благословил» свою команду на фальсификацию теперь уже и парламентских выборов.

Справедливости ради отмечу, что Армения стала скатываться в болото беззакония в феврале 1998 года, когда в республике, по существу, произошел государственный переворот. Первый президент Левон Тер-Петросян за свою «пораженческую» политику в вопросе мирного урегулирования проблемы Нагорного Карабаха был под угрозой применения силы отстранен от руководства страной. Кочарян — не без помощи своих сторонников из боевого крыла бывшей правящей партии Армянское общенациональное движение — узурпировал власть. Ореол одного из руководителей армии самообороны Карабаха, неизменные симпатии армянского народа к лидерам Карабахского движения (с горечью оговорюсь, что эти чувства сменились разочарованием и даже неприязнью) позволили несколько сгладить недовольство явной несправедливостью тогдашних выборов. Не последнюю роль сыграло и чувство избавления от непопулярного прежнего режима, в особенности — его отдельных высокопоставленных одиозных фигур. Но трагедия состоит в том, что за 6 лет своего правления нынешний режим уверенно отобрал у прежних властей пальму первенства по части ненависти со стороны подавляющего большинства населения.

Между тем обещания Кочаряна скорейшим образом урегулировать карабахскую проблему на первых порах пробудили радужные надежды,

которые, увы, очень быстро переросли в глубокое разочарование и заставили людей ощутить себя обманутыми. Новым властям было не до Карабаха — они энергично приступили к переделу собственности и формированию своего клана. И в этом, отдадим им должное, изрядно преуспели. Сегодня этот клан полностью монополизировал все основные сферы жизнеобеспечения страны. А вопрос мирного урегулирования проблемы Карабаха, как и следовало ожидать, претерпел значительный регресс.

— *Существуют ли конкретные свидетельства такого, как вы утверждаете, регресса?*

— Именно с приходом к власти Кочаряна Нагорный Карабах из полноправного субъекта переговорного процесса стал лишь объектом переговоров, был, по сути дела, отстранен от участия в обсуждении и решении своей судьбы. Процесс разрешения конфликта, в основе которого было естественное стремление народа Нагорного Карабаха к самоопределению в соответствии с нормами международного права, из-за бездарности проводимой внешней политики «соскользнул» в опасную плоскость территориального конфликта между Арменией и Азербайджаном. Кроме того, произошла своего рода интернационализация конфликта, приобщение к его разрешению международных сил с имманентно присущим им геополитическим видением будущего развития региона Южного Кавказа (причем векторы возможных путей регионального развития нередко, как показали прошедшие годы, имели взаимоисключающую направленность).

Провалы армянской дипломатии особенно рельефно проявились в ходе последней сессии ПАСЕ, проходившей 26—30 января сего года в Страсбурге. В резолюцию по вопросу о становлении демократических институтов в Азербайджане, принятую ПАСЕ, вкралась весьма опасная формулировка: «Нагорный Карабах и другие оккупированные территории Азербайджана». Она способна «взорвать» весь переговорный процесс, который почти 10 лет идет в рамках Минской группы ОБСЕ. Впервые за все время конфликта Нагорно-Карабахская Республика, уже около 15 лет являющаяся де-факто независимым государством, фактически названа территорией, «завоеванной» Арменией у Азербайджана... Примечательно, что из 313 депутатов ПАСЕ за азербайджанскую резолюцию проголосовали 75 парламентариев, а за армянскую — лишь 21 депутат, причем четверо из них — члены армянской делегации. Что это, если не полнейшая изоляция страны на международной арене?

Став свидетелями этих и многих других крупных неудач (я и мой коллега Шаварш Кочарян представлены от оппозиции в составе делегации

парламента Армении в ПАСЕ), мы и наши соратники окончательно убедились: единственно верный путь к возрождению доброго имени нашего государства в единой семье народов Европы и мира — скорейшее восстановление конституционных порядков в стране, прав граждан Армении. Тех самых прав, которые грубейшим образом были попраны в ходе президентских и парламентских выборов 2003 года. Это требование оппозиции созвучно желанию и чаяниям подавляющего большинства населения республики.

Таковы политические реалии, ставшие следствием крайне негативного политического имиджа нынешнего режима. В этих условиях вместо серьезного анализа причин крупных внутри- и внешнеполитических провалов (а они глубоко взаимосвязаны и взаимообусловлены) власти стремятся найти «крайних», причем не в собственных рядах, а среди оппозиционных деятелей. Но все дело в том, что такую сложную и застарелую проблему, какой является проблема Карабаха, возможно разрешить мирным, демократическим и справедливым путем лишь тогда, когда договаривающиеся стороны уполномочены вести переговоры от имени своих народов, когда легитимность главы государства не вызывает никаких сомнений, когда над головой главы государства, как это имеет место у нас, не висит, словно дамоклов меч, решение КС о проведении референдума о доверии президенту...

Естественно, такое положение дел в республике вызывает серьезную озабоченность в европейских структурах. Председатель Парламентской ассамблеи ОБСЕ Брюс Джордж на последней сессии в Вене высказал предположение, что есть необходимость тщательного рассмотрения ситуации, складывающейся в Армении, — или в рамках Минской группы ОБСЕ, или в комитете по вопросам политики и безопасности, или даже на пленарном заседании очередной сессии Парламентской ассамблеи в Эдинбурге. Большое беспокойство высказал и руководитель наблюдательной миссии Совета Европы на прошлых президентских и парламентских выборах, член Парламентской ассамблеи Совета Европы Пьетро Эрколе Аго.

Тем не менее власти пытаются сделать хорошую мину при очень плохой игре и уверяют, что все просто замечательно. Послушать их — так весь мир просто-таки мечтает записаться в друзья Армении и особенно — правящего ныне режима. И если бы эти, скажу прямо, благоглупости были рассчитаны лишь на «внутреннее пользование»! Так нет же, одурачивая собственных граждан, режим и во внешнюю политику привнес

ставший столь характерным для нашей внутренней жизни элемент известной карточной игры. Один блефует с Западом, а другой — с бывшим стратегическим противником Запада. И этот блеф длится уже шесть лет...

Но всему есть предел. Армения, армянский народ достойны лучшей судьбы. Мы уверены, что поддерживаемая подавляющим большинством граждан оппозиция Армении с честью возглавит всенародную борьбу за восстановление попранных конституционных порядков и свобод. Мы убеждены, что в своем стремлении установить верховенство закона в стране армянский народ в конечном итоге будет поддержан и Россией Владимира Путина, и оплотом демократии в мире — США, и всем европейским сообществом.

Василий Калинин
Ереван—Москва

"Независимая газета", 25.III.2004.

Քոչարյանը մեղադրյալի կարգավիճակում հայտնվելու 100 տոկոսանոց շանսեր ունի

– *Պրն Գեղամյան, մի քանի օր առաջ Իսագուլյանը մամուլում նշեց, որ «Արդարություն» դաշինքի և «Ազգային Միաբանության» հետևում կանգնած է ՀՀԾ-ն և հենց նա է ձեր կողմից կատարվող գործողությունների դիրիժորը: Ինչպե՞ս կմեկնաբանեիք նրա խոսքերը:*

– Պարզաբանում կարո՞ղ եք անել, խոսքը ո՞ր Իսագուլյանի մասին է. Լեռնային Ղարաբաղի ներքին գործերի նախարարի՞, որը վերջերս գեներալ-լեյտենանտի կոչում ստացավ՝ ապրիլի 13-ի ջարդը լավ կազմակերպելու համար:

– *Խոսքը վերաբերում է Քոչարյանի խորհրդականին:*

– Ձեր խմբագրակազմն անպայման ցանկանում է ինձ վիրավորած լինել, որովհետև թերթի հիմնադրման օրվանից առաջին հարցազրույցն է ինձ հետ, և դուք անպայման ցանկանում եք, որ իմ հարցազրույցը ՊԱԿ-ի նախկին գործակալի հայտարարությունների շուրջ լինի:

– *Սա է մեր իրականությունը:*

– Բայց «ՉԻ»-ն շահագրգռվա՞ծ է, որ ես Քոչարյանին քննադատելուց հետո իջնեմ նրա կամակատարների մակարդակին:

– *Բարի: Հարցս ձևակերպեմ: Ինչպե՞ս եք մեկնաբանում իշխանական քարոզչամեքենայի այն պնդումները, թե ձեր հետևում կանգնած է ՀՀԾ-ն:*

– Եթե իշխանական քարոզչամեքենան տառապում է ամնեզիայով, այն է՝ հիշողության կորստով, ասենք, որ «Ազգային Միաբանությունում» ասելով գործող ՀՀԾ-ականներ, նկատի ունենք պրն Քոչարյանին և իր շրջապատին, որոնք ավելի մոլեռանդ ՀՀԾ-ականներ են, քան բուն ՀՀԾ-ականները:

Եթե իմ գործողությունները ղեկավարվեին Քոչարյանի կողմից, այդ դեպքում ես կհամաձայնվեի, որ իմ հետևում ՀՀԾ-ի ականջներն են:

– *Ինչպե՞ս կմեկնաբանեիք այն տեղեկությունները, որ ԼՂՀ ՆԳ նախարար Արմեն Իսագուլովն ըստ էության այսօր համակարգում է ՀՀ ոստիկանության գործողություններն ընդդեմ ընդդիմության և փաստացի կատարում է ՀՀ ոստիկանապետի ֆունկցիաները: Ինչպես նաև այն տեղեկությունները, որ Քոչարյանը մի քանի հարյուր մարդ է Ղարաբաղից բերել՝ ձեր դեմ բանեցնելու համար:*

– Իսագուլովին բերել են հայ ժողովրդի դեմ, ինչպես նաև արցախահայության դեմ: Ոչ մի տարօրինակ և զարմանալի բան չկա այդ ամենում, որովհետև եթե փոքր-ինչ

խորանաք պրն Իսագուլովի կենսագրության մեջ, ապա կտեսնեք, որ տասնամյակներ առաջ նա դարձյալ եղել է ոստիկանապետ և կատարել է Բաքվից եկող հրամանները: Այսինքն, նա չհաջողված Ժավեռն է: Ես կցանկանայի, որ նա Ժավեռնի կենսագրությունը մինչև վերջ կրկներ: Հիշու՞մ եք, Հյուգոյի հայտնի Ժավեռնին, որը միակ ճիշտ ելքը գտավ. Սենայում հոժարակամ խեղդվեց: Ինքը ժողովրդի բարոյական մահապատիժն արդեն ստացել է: Ցավում եմ, որ Հրազդան գետը ծանծաղ է, իսկ Ղարաբաղում ոչ մի գետ կա դյուզգյունի, ոչ էլ լիճ, որ ինքը Ժավեռնի սխրանքը կրկներ:

– Արդեն տեղյակ ենք, որ շուտով մեկնելու եք Ստրասբուրգ: Ի՞նչ նպատակով եք մեկնում այնտեղ:

– Նպատակը մեկն է. Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովին իրազեկել այն ամենի մասին, ինչ տեղի է ունենում Հայաստանում: Իրազեկել ականատեսի, և ինչու չէ, տուժվածի կողմից: Ես և Շավարշ Քոչարյանը՝ այդ վեհաժողովի պատվիրակները լինելով, նաև անձեռնմխելի՝ համաձայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի», ենթարկվում ենք խուզարկության, մեր գրասենյակները պաշարվում են, ջարդուփշուր է արվում ամեն ինչ, այդ թվում՝ գրականությունը. ականատեսից հիշում ես 1933 թ. Գերմանիան, ուր դասականների գրքերն էին նույնիսկ այրում կամ 1937 թ. Սովետական Միությունը, երբ «վհուկների որս» էր իրականացվում: Այս ամենի մասին իրազեկելն իմ և Շավարշ Քոչարյանի սրբազան պարտքը կլինի: Մենք Ստրասբուրգ գնում ենք չափազանց լուրջ և կարևոր առաքելությամբ:

– Ըստ Ձեր կանխատեսումների, ինչպիսի՞ն կլինի միջազգային հանրության արձագանքն իշխանությունների կողմից ժողովրդի դեմ ձեռնարկված բռնարարքների նկատմամբ և ի՞նչ հետևանքներ դա կարող է ունենալ:

– Հետևանքը կանխորոշված է: Դրանք կլինեն շատ շուտ և շատ որոշակի: Մասնավորապես, ես ամենայն ուշադրությամբ կարդացի Սահմանադրական դատարանի նախագահի տեղակալի հայտնի գիրքը՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարան»: Բավական հաստափոր և ծավալուն ձեռնարկ է: Ուշադիր կարդալով տեսնում եմ, որ այդ դատարանում մեղադրյալի, այսինքն՝ ամբաստանյալի կարգավիճակում հայտնվելու 100 տոկոսանոց շանսեր ունեն թե՛ պրն Քոչարյանը և՛ թե նրա հրամանները կատարող կամակատարները:

Հարցազրույցը վարեց
Մհեր Ղալեչյանը

«Չորրորդ իշխանություն», 27.IV.2004:

Առջևում մեզ սպասվում է հաղթանակ

– *Պարոն Գեղամյան, մարտի 24-ին «Ժառանգություն» դաշինքը և «Ազգային Միաբանություն» կուսակցությունը հայտարարեցին համատեղ ջանքերով իշխանափոխություն իրականացնելու, սահմանադրական կարգը վերականգնելու և օրինական իշխանություն ձևավորելու իրենց մտադրության մասին: Որքանով է այս մեկուկես ամիսների ընթացքում ընդդիմությունը մոտեցել իր նպատակների իրականացմանը:*

– Նախ ուզում եմ հիշեցնել, որ մինչև մարտի 24-ը «Ազգային Միաբանություն» կուսակցության ղեկավարները 68 հանդիպումներ են ունեցել հանրապետության տարբեր մարզերում և այդ հանդիպումների ժամանակ ականատեսը դարձել, թե ինչ ողբերգություն են ապրում հայ շինականը, հայ ռանչպարն ու հայ մտավորականը: Մենք տեսանք ցասումի այն լցված բաժակը, որը, Աստված մի արասցե, եթե անկառավարելի դառնա՝ իր ճանապարհին կսրբի ամեն ինչ: Լինելով ընդդիմադիր քաղաքական ուժ, բնականաբար, մենք պարտադրված էինք առաջնորդել այդ համաժողովրդական ընդվզումը: Ահա սա էր պատճառը, որ մարտի 24-ին մենք և «Ժառանգություն» դաշինքը ստորագրեցինք համատեղ հայտարարություն, ուր պատրաստակամություն հայտնեցինք գլխավորել համազգային համաժողովրդական պահանջներ ներկայացնող շարժումը: Ինչ վերաբերում է բուն գործընթացին, ապա, ըստ էության, իշխանափոխության գործընթացն արդեն իսկ սկսված է: Այդ մեկուկես ամիսների ընթացքում ՀՀ քաղաքացիները տեսան, որ ի դեմս Ռոբերտ Քոչարյանի և նրա վարչախմբի՝ գործ ունեն սեփական ժողովրդի ու երկրի դեմ տրամադրված մարդկանց, որոնց համար մարդ արժեքը ոչինչ է: Հայ ժողովրդին նման բաներով չի կարելի ոչ միայն կոտրել, այլև նա դրանից ավելի է բռնկվում և միաբան դառնում: Մենք այս մեկուկես ամիսների ընթացքում բացահայտեցինք և ցույց տվեցինք, որ Ռոբերտ Քոչարյանի իրական քաղաքական հենարանը ժողովրդին, կանանց, աղջիկներին անպատիվ ծեծի ենթարկող քրեական տարրն է: Իսկ դա վկայում է պետականության մահամերձ վիճակի մասին: Մենք ցույց տվեցինք նաև, այսպես կոչված, կոալիցիայի՝ Քոչարյանի քաղաքական հենարանի էությունը, երբ վարչապետը հայտարարում է, որ եթե իրեն հեռացնեն կառավարությունից՝ նա կհամալրի ընդդիմության շարքերը, նույնն անում է ԱԺ նախագահը՝ Ռոբերտ Քոչարյանին սպառնալով իմփիչմենթով: Այս մեկուկես ամիսը մեզ տվեց նաև դասեր, որ մենք պետք է նկատի ունենանք մեր հետագա պայքարում: Իշխանություններն իրենց հատուկ նենգությամբ փորձում են ընդդիմության շարքերը մխրճել իրենց դրածոներին: Արդեն իսկ կան դեպքեր, երբ ոմանք հարթակ են ներթափանցում և այնտեղից ընդդիմադիր ճառեր ասում, ապա մի

քանի օր անց զանազան գործակալություններին տված հարցազրույցներում խոսում են արդեն ընդդիմության մեղքերի մասին, այն էլ՝ ճիշտ նույն ենթատեքստում, որը մենք տեսնում ենք իշխանական ՋԼՄ-ներում:

– Կոնկրետ ո՞ւմ նկատի ունեք:

– «Փալաքալը փակողին» և՝ ոչ միայն նրան: Հերթագրված են նաև ուրիշ անձինք. երբ ժամանակը կգա՝ իրենց էլ տեղը կդնենք, ուղղակի այսօր չեմ ուզում երկրորդ ճակատ բացել:

– Երբ ընդդիմությունը սկսեց հանրահավաքների կազմակերպումը՝ հայտարարում էր, որ իշխանափոխությունը շատ կարճատև գործողության՝ մեկ ամսվա պրոցես է: Բայց այդպես չեղավ:

– Եթե հրապարակային ելույթներում այս կամ այն ընդդիմադիր հռետորն ասում է, որ գարունը կդիմավորենք առանց Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի, կամ ասում է, որ այս կամ այն ամիսը վճռական է լինելու իշխանափոխության գործում, դա պետք է հասկանալ ոչ ուղղակի իմաստով: Այո, Քոչարյանը շարունակում է նստած մնալ նախագահի նստավայրում, սակայն ժողովրդի 90 տոկոսը նրան այլևս նախագահ չի ընդունում: Նա օտարված է ժողովրդից: Այս օտարված լինելու փաստը իրավաբանորեն հաստատելու ժամկետն է, որ ուշանում է, ուշանում է հասկանալի պատճառներով. քանի որ Ռոբերտ Քոչարյանը և նրա լրջագույն քրեական հանցագործություններ կատարած շրջապատը ամեն կերպ կառչած են այդ իշխանությունից: Բայց ժողովուրդը պետք է գիտակցի, որ խավարի իշխան Քոչարյանի զորությունը օր օրի նվազում է, և որևէ մեկն այլևս չի կասկածում, որ առջևում մեզ սպասվում է հաղթանակ:

– Տեսակետ կա, որ բռնության, բիրտ ուժի և անօրինականության վրա հիմնված իշխանությանը հնարավոր չէ ժողովրդավարական մեթոդներով հեռացնել. դուք համամի՞տ եք նման դիտարկմանը:

– Այսօրվա աշխարհը տրամագծորեն տարբերվում է սրանից 20 տարի առաջ գոյություն ունեցող աշխարհից: Այսօրվա աշխարհում վաղ թե ուշ հաղթանակելու են ժողովրդավարություն դավանող ուժերը: Եթե բիրտ ուժի կիրառումով հաջողվեց փոքրինչ ձգել համաժողովրդական ցասումը, դեռ չի նշանակում, որ Ռ. Քոչարյանը հաղթեց: Նա ի զորու չէ ետ շրջել պատմության անիվը, ի զորու չէ Հայաստանը մեկուսացնել ժողովրդավարական հանրությունից, ի զորու չէ կոտրել ազատ և արժանապատիվ ապրելու հայ ժողովրդի կամքը, որը հենց ժողովրդավարության հիմքն է: Այնպես որ, խավարի իշխանի պարտությունը կանխորոշված է թեկուզ պատմական զարգացման տրամաբանությամբ:

– ԱԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանը, ապա «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Մակեյանը հայտարարեցին, որ գործող ընդդիմությունը չստեղծեց ընդդիմադիր լայն ճակատ և չկարողացավ ընդդիմադիր շարժումը դարձնել համաժողովրդական. ինչպե՞ս եք վերաբերվում այսպիսի մեղադրանքներին:

– Ցանկացած կուսակցություն, որը համարում է, որ իշխանափոխությունն

անհրաժեշտություն է՝ կարող է ազատ և համարձակ գործել ինքնուրույնաբար, որ իշխանությունները չկարողանան ասել՝ միայն «Արդարություն» դաշինքն ու «Ազգային Միաբանությունն» են մեզ ընդդիմադիր, այլ կան նաև բազմաթիվ այլ կայացած կուսակցություններ, որոնք պահանջում են իրենց հրաժարականը: Ո՞վ է նրանց խանգարում ինքնուրույնաբար հավաքներ հրավիրել, իրենց բողոքի ձայնը բարձրացնել ընդդեմ ներկա իշխանությունների: Եվ այդ հնարավորությունը նրանք պետք է անպայմանորեն օգտագործեն: Հետո մենք բոլորս, ասես առուներ, կմիանանք իրար ու մի հորդառատ գետ կդառնանք:

– Տպավորություն կա, որ ժողովրդական շարժման ալիքն իջնում է: Ինչպիսի՞ն են լինելու ընդդիմության հետագա քայլերը:

– «Ազգային Միաբանության» գերխնդիրն այն է, որ ժողովուրդը գիտակցի, որ ինքը դուրս է եկել մի հաղթական ճանապարհ, որից հետդարձը վտանգավոր է ոչ միայն իր, այլև մեր երկրի ու ժողովրդի համար ընդհանրապես: Մի քանի ծախված մտավորականների, վայ քաղաքական գործիչների հայտարարություններն ամենևին առիթ չեն մտածելու, որ ժողովրդական խնդիրները լուծված են, Հայաստանը դարձել է ժողովրդավարական, իսկ իշխանությունը՝ լեգիտիմ: Ժողովուրդը պետք է գիտակցի, որ թեև իրենից այսօր բարոյական մի փոքր լարվածություն է պահանջվում, սակայն եթե նա սեփական ուժերով չթոթափի այս իշխանությունների բեռը, ապա մենք 21-րդ դարում դատապարտված ենք լինելու ապրել ճիզվիտական բարքերով առաջնորդվող երկրում:

Ավետիս Քաբաջանյան

«Հայկական ժամանակ», 12.V.2004:

Դավաճանականն իշխանության պահվածքն է

– Հունիսին Քոչարյանի հետ մեկնում եք Ստրասբուրգ: Ինչպե՞ս եք աշխատելու մի մարդու հետ, որը ձեր գործունեությունը որակեց իբրև «դավաճանությանը մոտ»:

– Ես Ռոբերտ Քոչարյանի հետ չեմ մեկնելու, մեկնելու եմ մեր սովորական երթուղային չվերթով: Ինչ վերաբերում է Ռոբերտ Քոչարյանի այդ գնահատականին, նախ ասեմ, վաղուց ի վեր նրա ասածին ես մեծ վերապահումով եմ վերաբերվում: Ավելին՝ նախատել եմ իր աշխատակազմին, որն այս 6 տարիների ընթացքում չհասկացավ. երբեք ու երբեք չի կարելի թույլ տալ, որ պարոն Քոչարյանը եթերում բանավոր խոսքով հանդես գա: Որովհետև ամեն բանավոր խոսքը, ասես թե հերթական անգամ ապացուցում է ոչ միայն մեր հանրությանը՝ մերոնք դա լավ գիտեն, այլև միջազգային հանրությանը, թե ինչքանով նա չի համապատասխանում թեկուզ և անօրեն զբաղեցրած իր պաշտոնին: Դավաճանություն եմ համարում այն, որ դատարկվում է Հայաստանը: Դավաճանություն եմ համարում այն, որ 800 հազար կենսաթոշակառուներ և բյուջետային հիմնարկների աշխատողներ զգալիորեն ավելի քիչ ամսական եկամուտներ ունեն, քան նվազագույն սպառողական զամբյուղը: Դավաճանություն եմ համարում այն, որ մինչև 14 տարեկան երեխաների մոտ գլուխ են բարձրացրել վտանգավոր հիվանդություններ: Դավաճանություն եմ համարում այն, որ երկրի «նախագահը», որ 6 տարի է բնակվում է Հայաստանում, այդպես էլ չկարողացավ իր նախադասություններում զերծ մնալ թուրքական ծագում ունեցող և օտարածին բառեր օգտագործելուց: Մի նախադասության մեջ մի քանի օտարածին բառեր է օգտագործում. «ֆոնոգրամա, սերիալ, իքի-բիր...», դա զավեշտ է: Ինչու չէ՝ «Հայոց լեզվի մասին» ՀՀ օրենքի կոպիտ ոտնահարում: Իսկ այդ օրենքն ոտնահարողը կամա թե ակամա դավաճանում է մեր ակունքներին:

– Հայաստանյան պատվիրակությունը Ստասբուրգում միասնականորե՞ն է գործելու, թե՞ փորձելու եք ապացուցել, որ ԵԽ ԽՎ բանաձևի կետերը չեն իրականացվել:

– Մեր քայլերը պայմանավորված չեն հենց բուն ԵԽ ԽՎ նստաշրջանի ընթացքում գործողություններով: Այդ քայլերը մենք անում ենք ամեն օր: Մասնավորապես ցանկացած հանրահավաքից հետո, ցանկացած հանդիպումից հետո, որ ԱՄ պատգամավորներն ունենում են տեղերում, մենք ԵԽ անդամ-երկրների բոլոր դեսպաններին վավերագրական տեսաժապավեններ ենք տրամադրում: Եվ այդ տեսաժապավենները, կարծում եմ, երբ համադրում են պաշտոնական լրատվամիջոցների հեռարձակած բացահայտ ստի և կեղծիքի հետ, իրենց համար ակնհայտ է դառնում, որ այս իշխանություններն իրենց ողջ

գործունեությունը պայմանավորում են ապատեղեկատվություն տարածելու հետ:

– *Այս ամենի արդյունքում կարո՞ղ է միջազգային կառույցները ստիպեն ՀՀ իշխանություններին գնալ ղարաբաղյան խնդրի պարտվողական կարգավորման:*

– Քոչարյանը միտումնավոր սրում է երկրի ներքաղաքական իրավիճակը, որպեսզի միջազգային հանրությանն ասի՝ թողեք լարվածությունը թուլանա, որ ես կարողանամ այն, ինչ խոստացել եմ դեռ Փարիզում և Քի Վեստում, կյանքի կոչել: Ամենևին պատահական չէ, որ վերջերս իր մերձավոր խորհրդականներից մեկը հանդգնեց ծայրաստիճան վտանգավոր բան հասկացնել հանրությանը, այն է. առանց Ղարաբաղի չի լինի Հայաստան: Տեսեք, ինչ վտանգավոր բաներ են ասում: Տեսեք, մի ամբողջ երկրի ճակատագիր փորձում են կապել ոչ թե Արցախի հիմնահարցի լուծման հետ, այլ փորձում են կապել, իբր, այդ հիմնահարցի միակ հետևողական պաշտպան Ռոբերտ Քոչարյանի հետ: Հայաստանը կբարգավաճի, և ծաղկուն, բարգավաճող Հայաստանի պայմաններում նոր մենք կկարողանանք արժանապատիվ կերպով լուծել Ղարաբաղի հիմնահարցը: Չի կարելի ածանցյալից կախյալ դարձնել ամբողջականը: Դա, իրոք, դավաճանական մոտեցում է: Եվ այդ մոտեցումը բացարձակապես ոչ մի ընդհանուր բան չունի ԼՂՀ հիմնահարցի լուծման հետ:

Զրուցեց
Լենա Բադեյանը

«Այբ-Ֆե», 11.VI.2004:

Նախ հարկ է լուծարել անգործունյա դարձած Ազգային ժողովը

Ազգային ժողովի հերթական եռօրյան նախորդներից առանձնանում էր թերևս միայն նրանով, որ ներկայացված օրենքների նախագծերի քննարկումներն անցնում էին գրեթե դատարկ դահլիճում: Թե՛ նախասրահում ու միջանցքներում, թե՛ աշխատասենյակներում տիրող մեռյալ վիճակը նյարդայնացրել էր լրագրողներին, որոնց թիվը, առանց չափազանցության, գերազանցում էր ներկա պատգամավորների թվին: «Շա՞տ է տխուր», – հոգոց էին հանում լրատվամիջոցների աշխատակիցներն ու մտաբերում նախորդ խորհրդարանները, ուր կարծիքների բախումներ կային, զարգացումներ, իսկ լրագրողների համար էլ ընթերցողներին ներկայացնելու հարուստ նյութ:

Խորհրդարանում թևածող մեռյալությունն էլ հենց ավելի ամրապնդեց ԱԺ միջանցքներում երբեմն-երբեմն հնչող այն միտքը, թե առաջիկայում լուծարվելու է «օրենսդիր մարմնում հավաքված անբանների ժողովը»: Տիրող անհուսալի այս վիճակը «Ազգային Միաբանություն» խմբակցության ղեկավար Արտաշես Գեղամյանին հիմք տվեց եզրակացնելու.

– ԱԺ աշխատանքներն այսօր բոյկոտում են կոալիցիայի մաս կազմող քաղաքական ուժերը, Քոչարյանի նկատմամբ լոյալ դիրք գրաված պատգամավորները և ոչ թե ընդդիմությունը: Բոյկոտի ականատեսն եղանք հատկապես այն ժամանակ, երբ քննարկվում էր ընտրական օրենսգիրքը: Դահլիճում 15-16 մարդ կար: Նրանք էլ այն պատգամավորներն էին, ովքեր հերթագրվել էին կա՛մ ելույթի, կա՛մ հարցեր տալու համար: Իսկ մեծամասնությունը ներկայացնող մյուս «օրենսդիրները», եթե անգամ իսկ գտնվում են Ազգային ժողովի շենքում, կարծում եմ, այնտեղ քննարկվող օրենքների հետ որևէ առնչություն չունեցող գործերով են զբաղվում: Ընտրական օրենսգրքի քննարկումների մթնոլորտը պատահական չէ, որ նշեցի. հիշո՞ւմ եք, ինչպիսի աղմուկ էին բարձրացրել կոալիցիայի մաս կազմող կուսակցությունները լրատվամիջոցներով՝ մեղադրելով ընդդիմությանն այդ օրինագծի քննարկումներին չմասնակցելու համար: Իսկ ինչո՞ւ իրենք այդ քննարկումները բոյկոտեցին...

– Ուրեմն, ինչպե՞ս հասկանալ կոալիցիայի այս բոյկոտը:

– Անխուսափելի էր դա, որովհետև ԱԺ աշխատանքները հիմնականում կառուցված էին ընդդիմության կողմից բարձրացվող հարցադրումների շուրջ ծավալվող քննարկումների վրա: Ընդդիմությունն էր նոր մտքեր արտահայտում, սուր հարցադրումներ անում,

որոնք պարզաբանման կարիք էին զգում: Սակայն երբ մենք վերջնականապես համոզվեցինք, որ մեր անգամ իսկ անվիճելի առաջարկություններից ու փաստարկներից հետո էլ, ավա՜ղ, օրակարգից հանվում էին հրատապ օրենքների նախագծերը, և ընդունվում էին այն օրենքները, որոնք մշակվում էին ոչ թե ԱԺ-ում քննարկումների արդյունքում, այլ նախագահի աշխատակազմում, բոյկոտեցինք նիստերը: Իսկ ստեղծված իրավիճակում դա արժեզրկեց ԱԺ-ում մեծամասնության գոյությունը, որն էլ դիմեց վերը հիշատակած լռակյաց բոյկոտին:

– Արդյոք ճի՞շտ են այն ենթադրությունները, թե առաջիկայում այս ԱԺ-ն լուծարվելու է:

– Այդ ինֆորմացիան նախագահական նստավայրից է սպրդում լրատվամիջոցների էջեր և սփռվում հեռուստաեթերում: Քոչարյանը ցանկանում է ընտրական օրենսգիրքն անցկացնել այնպիսի տեսքով, որ հերթական անգամ հնարավորություն ընձեռվի նորից կեղծել ընտրությունների արդյունքները, որ իշխանությունը ծնի նոր, ավելի անպտուղ և ավելի անմակարդակ իշխանություն: Նա խնդիր ունի սահմանադրական բարեփոխումների (որոնք իրականում չարեփոխումներ են) փաթեթն անցկացնել ԱԺ-ում: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ ԱԺ մեծամասնությանը պարբերաբար հասկացնում է՝ եթե հլու-հնազանդ չկատարեք իմ թելադրանքները, ապա դամոկլյան սրի նման ձեր առջև կծառանա ԱԺ-ն լուծարելու խնդիրը: Ավելացնեմ, որ իր հենարանը հանդիսացող տղաները 2003-ի թե՛ նախագահական, թե՛ խորհրդարանական ընտրությունների ժամանակ մեծ գումարներ են ծախսել: Շատերը, օգտվելով պատգամավորական մանդատից, շրջանցելով օրենքները, դեռևս չեն կարողացել հետ բերել դրանք և բնավ էլ նոր գումարներ ծախսելու ցանկություն ու մտադրություն չունեն:

Կա մեկ խնդիր ևս. քաղաքական ուժերին հասկացնել, որ ԱԺ նոր ընտրությունների դեպքում խորհրդարանի ներկայիս ղեկավարությունը (որը մերթընդմերթ ամբիցիոզ նկրտումներ է դրսևորում, էլ չենք ասում, որ ընդդիմադիր է ճևանում), ինչպես նաև հանճնաժողովների ղեկավարներից շատերը նույնիսկ պատգամավոր չեն դառնա, եթե ընտրությունները լինեն թափանցիկ, ժողովրդավարական և առանց խախտումների: Այնպես որ՝ ԱԺ-ն լուծարելու մասին պնդումներն արհեստական խոսակցություններ են, որոնք հնարավորություն են ընձեռում պարոն Քոչարյանին սանձած պահել այս մեծամասնությանը:

– Նման իրավիճակում ո՞րն է ընդդիմության դերակատարությունը:

– Ընդդիմության որդեգրած քաղաքականությունը, այն է՝ բոյկոտել ԱԺ նիստերը, միանգամայն արդարացված է, որովհետև ընդդիմությունը պարզ ասում է, որ մասնակից չի դառնա հիշատակածս խարդավանքներին և դրանք օրինականացնելու մտադրություն ու ցանկություն չունի:

– Ընդդիմադիր գործիչներից ոմանք, ի դեպ, մտավախություն ունեն, թե սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթն ընդունելու պարագայում հող կնախապատրաստվի Քոչարյանի երրորդ անգամ ընտրվելու համար: Ի՞նչ կասեք այս առնչությամբ:

– Այդ հարցադրումը նս ծնունդ է առել նախագահի աշխատակազմում, որից հետո

վարչակազմը կարողացել է ներազդել ընդդիմադիր այս կամ այն գործչի վրա, որպեսզի նրանք այդ տագնապալի և ժողովրդի համար անընդունելի լուրը հնչեցնեն, լսելի դարձնեն մարդկանց, թե հնարավոր է նաև այդպիսի տարբերակ: Դրանով իսկ փորձ է արվում Քոչարյանի հեռացման հրամայական պահանջից շեղել ժողովրդի ուշադրությունը:

Սակայն ակնհայտ է, որ իրականացվող այս քաղաքականության պայմաններում Քոչարյանը, բնականաբար, մինչև սահմանադրորեն նախատեսված ժամկետի ավարտը չի կարողանա պաշտոնավարել: Ուստի, դա շինծու հարցադրում է. ցավն այն է, որ այդ հարցն արծարծվում է անգամ ընդգծված ընդդիմադիր կեցվածք ունեցող թերթերի էջերում: Չեմ բացառում, որ մեր ընդդիմադիր գործընկերներից ոմանք գուցեև այդ հարցը հնչեցնում են՝ գիտակցելով, որ այս իշխանությունից ցանկացած անօրինականություն սպասելի է, թեպետ չեմ կարծում, թե նրանցից մեկը կամ երկուսը հենց այնպես, պատահականորեն, օրական 2-3 իշխանական հեռուստաեթերներից տարածում են այդ «ավետիսը», իբր, մտավախությունից դրդված:

– *Այսօր ինչի մասին էլ զրուցենք, կարծում եմ, չենք կարող անտեսել Հայաստանի ակամա շրջափակումն իր ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի կողմից: Ո՞րն է Ձեր դիրքորոշումն այն պնդման առնչությամբ, թե Վլադիմիր Պուտինը, Քոչարյանից հիասթափված, պատժում է հայ ժողովրդին՝ փակելով Վերին Լարսը:*

– Նման հարցադրում անողները դարձյալ փորձում են շրջանառության մեջ դնել Քոչարյանի աշխատակազմում եփված ապատեղեկատվությունը: Քոչարյանին երբեք ու երբեք չի կարելի նույնացնել հայ ժողովրդի հետ: Ինչպես կասեր ռուսը՝ «Это две большие разницы»: Հերյուրանքը տարածողներին՝ թե Վլադիմիր Պուտինը պատժում է հայ ժողովրդին, կոչ եմ անում մեկ անգամ ևս կարդալ Վլադիմիր Պուտինի այն ելույթը, որով նա հանդես եկավ Հայերի համաշխարհային կոնգրեսի անդրանիկ համագումարում: Ուրիշ հարց է, որ պարոն Քոչարյանի արտաքին քաղաքականությունն ապրում է լրջագույն ֆիասկո, որովհետև տարածաշրջանում որոշիչ դերակատարում ունեցող և ոչ մի պետություն (լինի ՌԴ-ն, ԱՄՆ-ը, թե Եվրամիությունը) ամենևին էլ չի կարող ՀՀ-ին վերաբերվել որպես լուրջ գործընկերոջ, քանզի իրարամերժ գործողություններով ու հայտարարություններով մեր իշխանությունները թողնում են քաղաքական անլուրջ գործընկերոջ տպավորություն: Նրանք այն աստիճանի դիլետանտ են, որ իրենց իրավունք են վերապահում արհամարհական կեցվածքով անտեսել Թերի Դևիսի զեկույցում տեղ գտած լրջագույն հարցադրումները կամ էլ հեծելազորայինին վայել եղանակով հայտարարել, թե Հայաստանը հարյուր տարի էլ կգոյատևի առանց կոմունիկացիաների ու տարածաշրջանային տնտեսական ինտեգրման (ակամա մտաբերում ես ոչ վաղ անցյալում ոմանց կողմից արվող այն թեթևամիտ հայտարարությունը, թե Հայաստանը կգոյատևի անգամ ջերմուկ արտահանելով): Ինչպես հիշում եք, այդ արտահայտությունը հնչեց որպես ՀՀ իշխանությունների պատասխան Սթիվեն Մանի միանգամայն տեղին և մեր երկրի ապագայի համար արդիական հարցադրումներին: Այստեղ կարելի էր բերել նման անհեռատես քայլերի բազմաթիվ այլ օրինակներ ևս, որոնց դրսևորումները չեն

կարող լուրջ ընդունվել արտաքին աշխարհի կողմից: Այս իրողությունն էլ հենց ընդդիմության գործողությունների առանցքն է դարձնում այն հրամայականը, որ ժողովրդին ներարկվի սեփական ներուժի նկատմամբ հավատն ու գիտակցումը, ըստ որի միայն համախմբվածությամբ ու միաբան լինելով է պայմանավորված Հայաստանի լուսավոր ապագան: Նշեմ նաև, որ թե՛ Վլադիմիր Պուտինը, թե՛ Ջորջ Բուշը, թե՛ Եվրամիության անդամ-երկրների ղեկավարները խոր հարգանք են տածում հայ ժողովրդի ու մեր երկրի հանդեպ, ինչի մասին քանիցս հրապարակավ հայտարարել են: Այնպես որ՝ իզուր են իշխանություններն իրենց գործողություններին հիշատակածս ղեկավարների տված համարժեք գնահատականները փորձում տարածել ողջ հայ ժողովրդի վրա: Աշխարհը շատ լավ էլ գիտակցում է, որ մի կողմից հայ ժողովրդի, Հայաստանի Հանրապետության և մյուս կողմից՝ ներկայիս գործող իշխանությունների միջև հսկայական անջրպետ կա, ինչն էլ պատճառ է դառնում մեր արտաքին քաղաքականության մեջ գրանցվող ձախողումների: Ընդ որում, դրանք խիստ բացասաբար են անդրադառնում երկրի ներտնտեսական իրավիճակի վրա: Այլ կերպ ես չեմ կարող մեկնաբանել Վերին Լարսի հետ կապված իրադարձությունները:

– *Ձեր նշած ձախողումներն արդյո՞ք ավելի չեն վտանգում մեր ապագան: Ըստ էության, տարածաշրջան է մուտք գործում ՆԱՏՕ-ն, Հարավային Կովկասի երկու երկրներում իրականացվում են շահավետ ու հեռահար նպատակ հետապնդող տնտեսական այնպիսի ծրագրեր, որոնցից Հայաստանը դուրս է մղված: Ու որքան էլ Վարդան Օսկանյանի շուրթերով մեր իշխանությունները պնդեն, թե Հայաստանը հարյուր և ավելի տարիներ կգոյատևի առանց այդ ծրագրերի, այնուամենայնիվ, արդյոք ՀՀ-ի մեկուսացվածությունը շատ մոտ ապագայում բումերանգի հարվածով չի՞ խփելու հենց մեր ճակատին:*

– Ստեղծված ծայրաստիճան վտանգավոր զարգացումներով (որը, բնավ, պայմանավորված չէ ՆԱՏՕ-ի Հարավային Կովկաս գալով) հղի իրավիճակից դուրս գալու ելքն առաջարկել ենք ժամանակին: Աշխարհիս երեսին իրական ժողովրդավարական և ոչ մի երկիր չեք գտնի, որի հանդեպ անպատիժ ոտնձգություններ իրականացվեն որևէ պետության կողմից: Ժողովրդավարություն որդեգրած երկրներն իրականում պաշտպանված են հենց նույն ՆԱՏՕ-ի կողմից ևս, էլ չեմ խոսում ժողովրդավարության ուղին ընտրած պուտինյան Ռուսաստանի մասին: Ուստի, Հայաստանի փրկության եզակի ճանապարհը ոչ թե սեփական ժողովրդին ապակողմնորոշելը, աշխարհի հզորների դեմ լարելն է, այլ խոստովանելը, որ, այո, այս ձախողումներից ու վտանգավոր զարգացումներից հետո վարչակազմը սթափվել է ու ճիշտ եզրահանգում կատարել: Այն է՝ պետք է հայտարարի, որ գործնականում աշխատելու է քայլեր անել իրական ժողովրդավարություն հաստատելու նպատակով: Իսկ դրա համար նախ հարկ է լուծարել անգործունյա դարձած ԱԺ-ն, որից հետո իրապես ժողովրդավարական չափանիշներին համապատասխանող ընտրություններ անցկացնել: Նոր խորհրդարանն էլ կձևավորի թե՛ ԱԺ ղեկավարություն, թե՛ կառավարություն, որոնց վրա արդեն խարանի նման դաջված չի լինի ոչ լեգիտիմության

դրոշմը: Դրանից հետո, բնականաբար, միջազգային ատյաններում այլ վերաբերմունք կդրսևորվի ՀՀ իշխանությունների հանդեպ: Եվ այնպիսի հարցեր, ինչպիսիք են նույն Վերին Լարսի խնդիրը կամ տարածաշրջանային շահավետ ու հեռանկարային ծրագրերը, անշուշտ, կվերանայվեն:

Զրույցը՝
Փիրուզա Մելիքսեթյանի

«Իրավունք», 15 – 21.X.2004:

Ժողովրդի կոնսոլիդացիան ընդդիմության առաջնային խնդիրն է

«Իրավունքին» տված վերջին հարցազրույցում «Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ և ԱԺ «Ազգային Միաբանություն» խմբակցության ղեկավար Արտաշես Գեղամյանը մասնավորապես նկատել էր, թե ՀՀ-ում անհրաժեշտ է «ժողովրդավարական չափանիշներին համապատասխանող ընտրություններ անցկացնել: Նոր խորհրդարանն էլ կձևավորի թե՛ ԱԺ ղեկավարություն, թե՛ կառավարություն, որոնց վրա արդեն խարանի նման դաջված չի լինի ոչ լեգիտիմության դրոշմը: Դրանից հետո, բնականաբար, միջազգային ատյաններում այլ վերաբերմունք կդրսևորվի ՀՀ իշխանությունների հանդեպ: Եվ այնպիսի հարցեր, ինչպիսիք են նույն Վերին Լարսի խնդիրը կամ տարածաշրջանային շահավետ ու հեռանկարային ծրագրերը, անշուշտ, կվերանայվեն»: Ինչո՞վ է պայմանավորված պրն Գեղամյանի այդ եզրահանգումը:

– Ժողովրդավարական և ո՛չ մի երկիր մեկուսացված չի կարող լինել, այն էլ այնպիսի բարդ տարածաշրջանում, ինչպիսին Հարավային Կովկասն է, – իր միտքը շարունակում է պրն Գեղամյանը: – Մի կողմից մեր հարևանը Իրանն է, որի նախագահը հայտարարել է քաղաքակրթությունների երկխոսության անհրաժեշտության մասին, մյուս կողմից էլ Թուրքիան է, որն իր վարչապետի, երբեմն էլ նախագահի շուրթերով հասկացնում է Արևմուտքին. ա՛յ, տեսեք, հա՞, եթե հանկարծ ձախողվի Եվրամիություն ընդունվելու խնդիրը, ապա Թուրքիայում կուժեղանան ռազմատենչ իսլամական ծայրահեղականները, որոնք աշխարհում կառաջացնեն լրջագույն խնդիրներ: Ինչին և ոչ մի բան չի կարող հակադրել Թուրքիայի ներկայիս քաղաքացիական իշխանությունը:

– Դրանով ի՞նչ է ուզում ասել Թուրքիան:

– Տողատակով կարծեք հասկացնում է, թե Եվրամիությունը կամ ԱՄՆ-ը փոթորկալից այս տարածաշրջանում այլևս չեն ունենա հուսալի այնպիսի դաշնակից, ինչպիսին Թուրքիան է:

– Այդ իրողությունն ի՞նչ ազդեցություն կունենա Հայաստանի վրա:

– Բնականաբար, Հայաստանը, լինելով քրիստոնեական հնագույն քաղաքակրթության երկիր, ինչպես կարող է կամուրջ հանդիսանալ քաղաքակրթությունների երկխոսության միջև, այնպես էլ կարող է կռվախնճոր դառնալ հենց այդ նույն քաղաքակրթությունների սահմանագծում: Ահա թե ինչու եմ համոզված ասում, թե ժողովրդավարության հաստատման պայմաններում ՀՀ-ն ուժեղ կլինի ներքին

համախմբվածությամբ ու պաշտպանված կլինի *քաղաքակիրթ Եվրոպայի, ժողովրդավարության ջատագով ԱՄՆ-ի և անշեղորեն ժողովրդավարության կուրսն ընտրած ՌԴ կողմից: Սա է մեր ապագան:*

– Արդյոք չե՞նք ուշանում Ձեր նշած ժողովրդավարության հաստատման առումով: Տարբեր երկրներ, կարծեք միմյանց ձայնակցելով, մեզ ագրեսոր են համարում, հայտարարում Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին: Նման դիրքորոշումները, ըստ էության, ի մի բերեց ու կարծեք ամբողջացրեց Թերի Դևիսի զեկույցը, որքան էլ պնդեն, թե այն զուրկ է իրավական հիմքից:

– Ձեր դիտարկումն առավել խորությամբ է ընկալվում, երբ հնարավորություն է լինում շփվել և «եփվել» համաեվրոպական քաղաքականություն մշակող «կաթսաներից» գոնե երկուսում: Նկատի ունեմ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովը (ԽՎ) և ԵԽ ԽՎ-ն: Ես անդամակցում եմ երկուսին էլ: Մասնավորապես, հոկտեմբերի 4-8-ը Ստրասբուրգում կայացած նիստերի ընթացքում ականատեսն էի, թե ինչպիսի նախանձելի հովանավորություն է ստանում Թուրքիան ԵԽ անդամ-երկրների կողմից, ինչպիսի նպաստավոր հարցերով էին դիմում Ռեջեփ Թայիբ Էրդողանին ԵՄ անդամ-երկրների պատվիրակները: Դրանից հետո ակամա մտածում էի, որ մեր արտաքին քաղաքականության ոլորտի ձախողումները տվել ու շարունակում են տալ իրենց դառը՝ ոչ հայանպաստ պտուղները: Իսկ որ ձախողումներն անակնկալ չպետք է լինեին, դա էլ է ակնհայտ:

– Ինչպե՞ս կհիմնավորեք Ձեր վերջին միտքը:

– Արտաքին քաղաքականությունը, ինչպես ասում են այդ բնագավառի դասականները, ներքին քաղաքականության տրամաբանական շարունակությունն է: Երբ երկրի ներսում իշխանությունները բարենպաստ հող են ստեղծում պառակտման համար, երբ քաղաքական էլիտան իր ողջ «մտավոր» կարողությունը սևեռում է ոչ թե քաղաքակրթական հնարավոր զարգացումների, աշխարհաքաղաքական հնարավոր մարտահրավերների առաջն առնելու, այլ համասեռության, ռեկետի, թմրամոլության և այլ արատների շուրջ բանավեճեր կազմակերպելուն, ապա թե՛ ներքին, թե՛ արտաքին բնագավառներում հնարավոր չէ ակնկալել լուրջ առաջընթաց, որը Հայաստանը դուրս կբերեր զարգացման մայրուղի: Սա, թերևս, որպես տագնապի ղողանջ պետք է հնչի բոլորիս համար, որովհետև երբ խորտակվում է պետականության նավը, արդեն նշանակություն չունի՝ դու հրամանատարական կամրջակին ես կանգնած, թե նավախցում: Դա առավել ևս պետք է գիտակցեն իշխանության ներսում այսօր աշխատող հատուկենտ պրոֆեսիոնալ և ազնիվ այն ֆունկցիոներները, ովքեր, իրենց գործը պատշաճ կատարելով հանդերձ, միևնույն է, չեն կարողանում ներազդել, որ նավարկողներն իրենց կուրսը փոխեն, որպեսզի փոթորկի ժամանակ նավը ոչ թե ժայռերին բախվի ու կործանվի, այլ հանգրվանի ավելի խաղաղ ծոցում:

– Դուք շատ մռայլ գույներով ուրվագծեցիք մեր վաղվա օրը, մեր ապագան՝ և՛ տարածքային կորստի առումով, և՛ պետականության:

– Տարածքների հարց ես չշոշափեցի: Իմ ասածն ընդամենը ճշգրիտ պատասխանն էր Ձեր չարագուշակ այն հարցադրումների, որոնք, ցավոք, այսօր կան և գերիշխող են

դարձել քաղաքական ցանկացած քննարկման ժամանակ: Երբեք ու երբեք չեմ պնդի, թե վիճակն անհուսալի է. պարզապես, աստիճանաբար ավելի է մեծանում այն իշխանավորների մեղքը, ովքեր իրենց գլուխները ջայլամի նման թաքցրել են ավազի մեջ և չեն ուզում իրականությունը տեսնել այնպիսին, ինչպիսին որ է: Մեր մոռայլ իրականությունը տեսանելի է դարձել անգամ եվրոպական մայրաքաղաքներում: Իրապես եկել է սթափվելու պահը, արմատական փոփոխություններ կատարելու ժամանակը:

– Եվ ո՞վ պետք է լինի «արմատական փոփոխություններ» նախաձեռնողը:

– Հիմնականում, անշուշտ, այն մարդիկ, ովքեր երկիրը հասցրել են այս վիճակին:

– Այն է՝ գործող նախագա՞հը:

– Բնականաբար, պրն Քոչարյանը՝ իրեն սատարող քաղաքական ուժերի հետ:

– Իսկ ի՞նչ պետք է անի ընդդիմությունը:

– Այս պարագայում ընդդիմությունը պետք է դրսևորի այնպիսի վարքագիծ, որը հնարավոր դարձնի առանց կորուստների անցնել այն ճանապարհը, ինչի մասին արդեն ասել եմ՝ ազատ, արդար, ժողովրդավարական ընտրությունների կազմակերպում և անցկացում: Իսկ այդ ամենի ապահովման *եզակի երաշխիքը ժողովրդին կոնսոլիդացիայի, միաբանության տանելն է:* Հենց սա պետք է լինի ընդդիմության ողջ գործունեության մեխը: Բոլորիս համար արդեն իսկ պետք է ակնհայտ դառնա այն իրողությունը, որ ներկայիս իշխանությունը սպառել է իրեն և Հայաստանի Հանրապետությունում, ինչպես կասեր Հովհ. Քաջազնունին, այլևս անելիք չունի:

Եթե այս ամենը մենք մեր նախաձեռնությամբ չանենք, ապա համոզված կարող եմ ասել, որ տարածաշրջանում տնտեսական, ինչու չէ, նաև աշխարհաքաղաքական լրջագույն խնդիրներ ունեցող երկրները (լինեն թե՛ մեր ռազմավարական դաշնակիցները, թե՛ մեր լավ բարեկամները) իրենք կպարտադրեն այդ հասունացած լուծումները: Հարավային Կովկասը ՌԴ-ի, ԱՄՆ-ի կամ Եվրամիության անդամ-երկրների համար նոր գլխացավանքի աղբյուր չի դառնա, նրանք դա չեն հանդուրժի: Ուրիշ բան է, որ այդ պարտադրանքը կլինի շատ ավելի ցավագին, քան եթե նշածս հարցերը ՀՀ իշխանություններն այսօր անտեսեն՝ լայնախոհություն չդրսևորելով:

– Ձեր նշած պարտադրանքներն արդյո՞ք ազատագրված տարածքները վերադարձնելու ձևով չեն ի հայտ գալու:

– Հոկտեմբերի 11-ին Երևանում բավականին հետաքրքիր հանդիպում ունեցա Նորվեգիայի արտաքին գործերի նախարարի հետ: Երբ անդրադարձանք Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին, շոշափվեց Ալանդական արշիպելագի հարցի կարգավորման տարբերակը: Ասեմ, որ այդ կղզիները բնակեցված են հիմնականում շվեդներով, բայց պատկանում են Ֆինլանդիային: Նման պատկանելությամբ հանդերձ՝ ունեն որոշակի ինքնուրույնություն: Այսինքն՝ այն, ինչի մասին ասվում էր Քի Վեսթում Ադրբեջանի և Ղարաբաղի դեպքում՝ «ընդհանուր պետության» ստեղծման պարագայում: Այդ մոդելի համաձայն՝ Ղարաբաղը պետք է ունենար իր սահմանադրությունը, իսկ Ադրբեջանի օրենքները պետք է գործեին միայն ու միայն այն պարագայում, եթե չհակասեին Ղարաբաղի սահմանադրությանը: Ինչևէ, այդ հանդիպման ընթացքում Նորվեգիայի

նախարարին հիշեցրի մի պարզ ճշմարտություն. շվեդները և ֆիններն պատկանում են նույն քաղաքակրթությանը, չունեն դավանաբանական և մշակութային այն լրջագույն խնդիրներն ու առանձնահատկությունները, որոնք առկա են Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի դեպքում: Ուստի, Ալանդական արշիպելագի հարցի կարգավորման օրինակն այստեղ կիրառելի չէ. հարցի խաղաղ կարգավորումը հրամայական է դարձնում ԼՂ միջազգային ճանաչումը որպես պետական առանձին կազմավորում: Հիշատակածս զարգացումները հնարավոր են միայն այն ժամանակ, երբ Հայաստանը Վրաստանի ու Ադրբեջանի հետ կորդեգրեն այն բոլոր սկզբունքներն ու օրենքները, որոնք դրված են Եվրամիությանը անդամակցել ցանկացող բոլոր երկրների առջև, եթե, իհարկե, ուզում ենք եվրահինտեգրվել: Կամ էլ եթե Հայաստանի Հանրապետության ներկայիս իշխանությունները, բնականաբար, ԼՂՀ-ի հետ համատեղ հայտարարեն իրենց պատրաստակամության մասին՝ անդամագրվելու Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի, Ուկրաինայի, Բելառուսի նախագահների հռչակած միասնական տնտեսական գոտի ստեղծելու գաղափարին: Վերը նշված տարբերակներին, կարծում ենք, այլընտրանք չկա, մնացյալը ճամարտակություններ են և, պատկերավոր ասած, հիշեցնում են «երեք սոսիների մեջ մոլորված» հերոսին:

– *Այժմ անդրադառնանք ազատագրված տարածքների վերադարձի խնդրին:*

– Կներեք, բայց դա առանձին խոսակցության նյութ է: Սիրով պատրաստ եմ այդ հարցի շուրջ «Իրավունքի» էջերում հրապարակել իմ տեսակետներն ու մոտեցումները:

– *Դա առաջիկայում, այժմ խնդրում եմ, թեկուզև կարճ, անդրադառնաք այդ հարցին:*

– Մեր իշխանություններն որքան էլ փորձեն շրջանցել այդ խնդիրը՝ ճամարտակություններ անելով, չի հաջողվի: Հարցը դրված է, և այդ առումով, թերևս, տագնապի շեփոր պետք է հնչեցնել ու ասել՝ բավական է սեփական ժողովրդի հետ պահմտոցի խաղալ: Պետք է անկեղծորեն խոսել բանակցային գործընթացում ստեղծված իրավիճակի մասին, որից հետո մտածել, թե ազգովի ինչպես դուրս գանք այդ վիճակի հաղթահարման ճանապարհ: Եթե այդ ուղին իշխանափոխություն է պահանջում, ապա իրենք պետք է նախաձեռնեն իրական իշխանափոխություն և ո՛չ թե իշխանությունը հանձնեն հերթական յուրայինին: Ժողովրդի ընտրյալը միայն վստահության քվեի մեծ պաշար կունենա և Հայաստանի շահերը, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը կկարողանա ըստ արժանվույն պաշտպանել և դրանց լուծումները փնտրել միջազգային ատյաններում: Իսկ քանի որ քաղաքական միամտություն կլինի հույսներս դնել այս ոչ լեգիտիմ իշխանությունների ողջախոհության, հայրենիքի շահը անձնականից վեր դասելու պատրաստակամության վրա, ապա ընդդիմությունը կրկին ու կրկին պարտավոր է իր առաջնային խնդիրը համարել ժողովրդի կոնսոլիդացիան, միաբանությունը, որն էլ հնարավոր կդարձնի դիմակայել մեզ արդեն իսկ պարտադրված մարտահրավերները:

Զրույցը՝

Փիրուզա Մելիքսեթյանի

«Իրավունք», 22 – 28.X.2004:

Ղարաբաղը՝ ոչ լեգիտիմության դառը պտուղ

– ԵԽ ԽՎ քաղաքական հարցերի հանձնաժողովն ընդունեց Աթկինսոնի ներկայացրած զեկույցը Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ, որը պարունակում էր աննպաստ ձևակերպումներ Հայաստանի համար: Արդյոք սա վերջնակա՞ն ձախողում է, թե՞ դեռ հնարավոր են որոշակի ելքեր:

– Երբեք չէի ցանկանա, որ ասելիքս ընկալվեր իբրև չարախնդություն, քանի որ ստեղծված պայմաններում ապիկար քաղաքականության հետևանքով տուժելու է մեր Արցախ-Հայաստան միացյալ երկիրը: Բայց ցավն այն է, որ մեր իշխանավորներն արտաքին քաղաքական հարցերին վերաբերում են ոչ թե կուռ տրամաբանված մոտեցումներով, այլ զգացմունքային տեսանկյունից: Այն խրոխտ գնահատականներից, որոնք լսում էինք գործադիր և օրենսդիր իշխանության, էլ չեմ ասում՝ նախագահի շուրթերից, ոչ գիտակ մարդկանց մոտ տպավորություն կառաջանար, թե հրես-հրես ամենահայանպաստ լուծումներն են սպասվում Ղարաբաղի հիմնահարցի քննարկման շնորհիվ: Ավա՜ղ, դեռ ամիսներ առաջ, երբ տագնապի շեփոր հնչեցրինք այս հարցերի կապակցությամբ՝ անտեսվեց այդ ամենը: Ավելի՛ն: Սեփական ձախողումների մեղավորությունը փորձեցին բարդել ընդդիմադիր ուժերի վրա՝ ասելով, թե մենք խանգարում ենք իշխանություններին միջազգային ատյաններում կյանքի կոչել իրենց քաղաքականությունը: Ահա այստեղ է, որ ուզում ենք ասել՝ եթե ժամանակին այս իշխանություններն որդեգրեին ժողովրդավարության զարգացման գործընթացներ և դրանք տեսանելի լինեին միջազգային հանրությանը, երբեք ու երբեք մեր պետության առջև չէին ծագի նման բարդ խնդիրներ ու նման հարցադրումներ չէին արծարծվի ԵԽԽՎ-ում: Այլ կսպասեին՝ տեսնեին ժողովրդավարական այդ զարգացումները գուցե ԼՂ հիմնահարցի լուծման առումով ապահովում են նո՞ր մոտեցումներ:

Խնդիր պետք է առաջադրվեր, թե ո՞րն է բանալին ստեղծված իրավիճակից, որի հնարավոր զարգացումներն արդեն իսկ ակնհայտ էին բոլորիս համար: Գուցե պետք էր փոքր-ինչ դադա՞ր տալ բանակցային գործընթացում՝ դրա համար պիտի պահանջվեին ներքաղաքական զարգացումներ: Միգուցե իշխանությունները պետք է ականջալո՞ւր լինեին այն առաջարկներին, որ անհապաղ լուծարվի ԱԺ-ն և ընտրություններում գերիշխողը լինի, թե քաղաքական ո՛ր ուժն ինչպիսի՛ լուծումներ կառաջարկի Արցախի հարցում: Եվ մեծամասնություն ստացած ուժը կկարողանար միջազգային ատյաններում հանգիստ խղճով հայտարարել, թե արտահայտում է ողջ հայ ժողովրդի կարծիքը: Միգուցե

պետք էր ամենաառանցքային հարցերի շուրջ դրսևորել հեղափոխական մոտեցումնե՞ր. ասենք, հաշվի առնելով այն, որ այժմ եվրոպական կառույցներն են զբաղվում Ղարաբաղի խնդրով՝ պետք էր հայտարարել, թե Հայաստանը պատրաստ է Ադրբեջանի և Վրաստանի հետ միասին ընտրել Եվրամիությանն ինտեգրվելու ուղին և այդ շրջանակում լուծել ԼՂ հիմնահարցը: Կամ գուցե անհրաժեշտ էր հայտարարել, թե Հայաստանը հայտնում է իր պատրաստակամությունն այսօր նեթ միավորվել Ռուսաստան-Բելառուս-Ղազախստան-Ուկրաինա ազատ տնտեսական գոտո՞ւն:

– Հայկական կողմն առանց այդ էլ բավական հայտարարություններ էր արել, որոնք բոլորն անտեսվեցին: Ասենք, Դևիսի Հայաստան այցի ընթացքում մեր պատվիրակությունը հույս էր հայտնել, թե նրա զեկույցում կարտացոլվեն հակամարտության նախապատմությունը, խնդրի իրավական կողմը: Սակայն Դևիսի, հետո էլ՝ նրանից արտագրած Աթկինսոնի կազմած փաստաթղթերում արձանագրվեց այս ակնկալիքների հակառակ պատկերը: Անտեսվեցին նաև տարածաշրջան այցելելու և ԼՂ մասնակցությամբ կլոր սեղան կազմակերպելու առաջարկները: Այս ամենի պատճառն արդյոք միայն երկրի կասկածելի ժողովրդավարական իմի՞ջն է:

– Ոչ միայն: Այլ նաև այն, որ միջազգային այդ կառույցներն այդպես էլ չեն հասկանում, թե իր համար ի՞նչ ճանապարհ է ընտրել Հայաստանը, ո՞ւմ հետ է 21-րդ դարում կառուցելու իր ապագան, արժեքային ի՞նչ համակարգի ջատագով է: Փոխարենը՝ այդ կառույցները մնում են համոզված, որ Հայաստանում առկա է նահանջ ժողովրդավարությունից, իշխանությունները ոչ լեգիտիմ են: Ուստի ավելի երանելի իրավիճակ չէին էլ կարող պատկերացնել՝ եթե խնդիր ունեն ադրբեջանանպաստ լուծումներ տալ ԼՂ հիմնահարցին, քանի որ իշխանությունները չունեն հենարան ի դեմս այն երկրի ժողովրդի, որին նրանք ներկայացնում են ի պաշտոնե: Իսկ նման թուլացած իշխանությունների վզով, բնականաբար, շատ ավելի դյուրին է փաթաթել ցանկացա՛ծ ոչ հայանպաստ որոշում:

– Աթկինսոնի զեկույցում երկրորդվեց Դևիսի առաջարկը, որ դիմենք Արդարադատության միջազգային դատարան՝ պարզելու, թե արդյոք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը խախտվա՞ծ է Հայաստանի կողմից՝ ԼՂ մարզի անջատման իրավունքը պաշտպանելու համար: Գուցե վա՞տ առաջարկ չէ, եթե խնդիր կա հիմնահարցը լուծել իրավական ճանապարհով:

– Հերթական անգամ համոզվում ենք, թե ի՛նչ նրբին է գործում բրիտանական դիվանագիտությունը: Այս առաջարկի ամբողջ «ծուղակն» այն է, որ եթե նույնիսկ Հայաստանը չդիմի այդ դատարան՝ տվյալ իրավունքից կօգտվի Ադրբեջանը: Իսկ ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանի համար ոչ միայն գերակա սկզբունքը տարածքային ամբողջականության պահպանումն է, այլև այն, որ այդ ատյանը երբեք ու երբեք դուրս չի գա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1993-ին ընդունած 4 բանաձևերի շրջանակներից: Եվ կմոռացվի, թե ինչ պայմաններում են կես տարվա ընթացքում ընդունվել այդ բանաձևերը, այլ դրանցից կփոխառվեն միայն ձևակերպումները և՛ էթնիկական զտումների, և՛ տարածքային ամբողջականության խախտման, և՛ գրավյալ

տարածքների մասին:

– Հաղորդվել է, թե ԵԽԽՎ-ի հունվարյան նստաշրջանում կընդունվի, որ այն, ինչ կատարվել է ԼՂ-ում, «Սահմանների անձեռնմխելիության մասին» միջազգային օրենքի ոտնահարում է, ուստի գրավող պետության, այսինքն՝ Հայաստանի կողմից պարտավորությունների խախտում: Իրակա՞ն եք համարում այս հեռանկարը:

– Այստեղ գործ ունենք դիվանագիտական տարրական հաշվարկի հետ: Ստեղծված իրավիճակում երբեք ու երբեք հնարավոր չի լինի Հայաստանին պարտավորությունների խախտման համար զրկել Եվրախորհրդի անդամակցությունից, հետն էլ պարտադրել նման բանաձև: Մանավանդ որ՝ չեմ կարծում, թե Ադրբեջանը ժողովրդավարության «դափնիները», հակառակ իմաստով, վերջնականապես է զիջել Հայաստանին: Ի՞նչ է, մինչ այժմ հայտնի՞ չէր Եվրախորհրդին, թե տարածքային ինչ տարաձայնություններ կան, ու դրանք ցցուն դարձան միայն այնժամ, երբ 2005-ի ապրիլին շահագործման է հանձնվելու Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամո՞ւղը: Իհարկե, ո՛չ:

Սակայն երբ միաբանված չէ ազգը ու քաղաքական ընտրանին իշխանությունների կողմից պառակտվում է միտումնավոր ու հետևողականորեն՝ պտուղները կլինեն դառը և թունավոր: Այլ հարց է, որ այդ պտուղները հավասարաչափ ճաշակելու են մի կողմից՝ թե՛ իշխանավորները, ովքեր ստեղծված իրավիճակի հիմնական մեղավորներն են, մյուս կողմից՝ ոչ թե ընդդիմությունը, այլ ողջ հայ ժողովուրդը: Եվ այս ամենի համար, բնականաբար, պատասխան կտան:

Զրույցը վարեց
Աննա Իսրայելյանը

«Առավոտ», 20.XI. 2004:

Առաջնորդվելով հայոց մեծերով

– *Պարոն Գեղամյան, Ձեր կարծիքով, ի՞նչ խնդիր էր հետապնդում ավանդների հարցով արտահերթ նստաշրջանի տապալումը:*

– Ավանդների հարցը բարձրացնելն ակնհայտ դարձրեց, որ իշխանության մաս կազմող կոալիցիայում կան պատգամավորներ, որոնք համոզված են, որ ավանդները վերադարձնելու գումարներ Հայաստանում կան: Սակայն այդ գումարները դուրս են բյուջետային համակարգից, որը հնարավոր է ուղղել բյուջեի եկամտային մաս. բայց հերթական անգամ պարզ դարձավ, որ այս կոալիցիան ի վիճակի չէ դա անելու, որովհետև այդ գումարները շրջանառվում են կոալիցիայի հենարան հանդիսացող առանձին օլիգարխների բիզնեսի տիրույթում: Երկրորդ, ակնհայտ դարձավ, որ կոալիցիան վախենում է բաց քննարկումներից, քանզի այդ դեպքում ընդդիմությունն ի ցույց էր դնելու կոռուպցիայի և կաշառակերության այն չափերը, որոնց մեջ թաթախված է այս իշխանությունը: Երրորդ, հերթական անգամ ակնհայտ դարձավ, որ կոալիցիայի մաս կազմող կուսակցություններն անկեղծ չէին, երբ ուղիղ 10 ամիս անընդմեջ ասում էին, թե պատրաստ են ցանկացած հարց քննարկել ընդդիմության հետ: Եվ չորրորդ, Քոչարյանը հերթական անգամ, մի կողմից՝ ՀՀԿ-ին և վարչապետին, մյուս կողմից՝ ՕԵԿ-ին և ԱԺ նախագահին հասկացրեց, որ պետք չէ չափից ավելի ոգևորվել, և որ այս երկրում հարցեր լուծողները միայն Քոչարյանն ու Սերժ Սարգսյանն են՝ իրենց փոքրաթիվ յուրայիններով: Մեզ այս սցենարն ի սկզբանե պարզ էր, քանզի ստորագրողների թվում կային այնպիսի պատգամավորներ, որոնք, անգամ ստամոքսի խանգարման դեպքում, նախագահական աշխատակազմ են զանգ տալիս և արտաքնոց գնալու թույլտվություն խնդրում:

– *Այդ դեպքում ի՞նչ իմաստ ունի ԱՄ-ի կայացրած որոշումը՝ մասնակցել բյուջեի ավարտական քննարկումներին և քվեարկությանը:*

– Մենք, այո, ուրբաթ օրը լինելու ենք խորհրդարանում և մեր պարտքն ենք համարում, մասնակցելով բյուջեի քննարկումներին, ցույց տալ այն ճանապարհները, որոնցով ընթանալով հնարավոր կլինի հավելյալ միլիարդավոր գումարներ բերել բյուջեի եկամտային մաս: Մասնակցելու ենք, որպեսզի հետո որևէ մեկը մեզ չմեղադրի՝ եթե ճանապարհը գիտեիք, ինչո՞ւ չէիք ասում:

– *Այդ վերադարձը նշանակո՞ւմ է, որ ԱՄ-ն գարնանային նստաշրջանից լինելու է ԱԺ-ում:*

– Անշուշտ՝ չի նշանակում: Քանզի եթե մենք մինչև վերջերս փոքր-ինչ պատրանք ունեինք, թե կոալիցիայի մաս կազմող կուսակցությունները գիտակցում են, որ առանց

ընդդիմության մասնակցության օրինաստեղծ աշխատանքը լեգիտիմ լինել չի կարող, ապա ավանդների հարցով ԱԺ արտահերթ նստաշրջանի արհեստական տապալումից հետո այդ պատրանքները հօդս ցնդեցին: Այդուհանդերձ, եթե պետության և ժողովրդի ճակատագրին վերաբերող հարցեր դրվեն խորհրդարանի քննարկմանը, մենք մասնակցելու ենք:

– Արևմտյան վերլուծաբանների գնահատմամբ՝ ուղին, որով ընթանում է Հայաստանը, ժողովրդավարության առումով տանում է փակուղի: Համաձա՞յն եք այդ գնահատականին:

– Որ ուրվագծվող աշխարհաքաղաքական նոր զարգացումների համատեքստում անաքրոնիզմ են համարվում այն երկրները, որոնք գլոբալացման ճամփեզրին են հայտնվել, որոնց թվում է նաև Հայաստանը, դա փաստ է: Հայաստանը դուրս է շպրտված այն բոլոր զարգացումներից, որոնք ներհատուկ են 21-րդ դարին. լինեն դրանք խոշորածավալ տնտեսական, թե ինտեգրացիոն ծրագրերը: Եվ այսօր գավառամտությունը հասել է այնտեղ, որ փորձ է արվում անգամ չեղած խնդիրների շուրջ ներքաղաքական բախումներ հրահրել, է՛լ ավելի խորացնելով Հայաստանի՝ այլևս փաստ դարձած լուսանցքային վիճակը, ասելով, որ Իրաք խաղաղապահներ ուղարկելը հղի է նոր ցեղասպանությամբ: Եվ փոխանակ ասվի, որ ահաբեկչության դեմ պայքարում մենք մեր համերաշխությունն ենք հայտնում 30 այն երկրներին, որոնց զինծառայողները գործուղվել են Իրաք, հակառակ քարոզչությունն է փորձում տարվել: Ահա այսօրինակ քաղաքականությունը, ժողովրդավարության առումով, Հայաստանին տանում է փակուղի:

– Այդուհանդերձ, Իրաքի հարցում ընդդիմության ճամբարը միակարծիք չէ: Մասնավորապես, «Արդարություն» դաշինքն ուրբաթ օրը ԱԺ-ում կտրուկ դեմ է արտահայտվելու Իրաք հայկական կոնտինգենտ ուղարկելուն:

– Ես ծանոթ չեմ «Արդարություն» դաշինքում ներգրավված ութ կուսակցությունների մոտեցումներին, սակայն ինձ անհասկանալի է, որ մի կողմից հենց ձեր թերթում երկարաշունչ և ծավալուն հոդվածներով են հանդես գալիս ժողովրդավարական արժեքների շուրջ և հանկարծ այդ ժողովրդավարության հիմնական շարժիչ ուժ հանդիսացող ԱՄՆ-ի քաղաքականությանը, որի մեխերից մեկը նաև այս հարցն է, գնում են հակառակ:

– Վերջին ժամանակներս կրկին ակտիվացել է Լևոն Տեր-Պետրոսյանի գործոնը: Դուք ինչպե՞ս եք գնահատում ՀՀ առաջին նախագահի անվան շուրջ առկա ակտիվացումը:

– Երբ ուշադիր հետևում ենք, թե առաջին նախագահի հետ կապված լուրերը, որ խողովակով են դրվում շրջանառության մեջ, տեսնում ենք, որ դա սկսվում է ՀՀԾ-ից, ինչը խիստ ոգևորությամբ ընդունվում է այս իշխանությունների կողմից, որովհետև ներկաներին թվում է, թե իրենց հանդեպ վերաբերմունքը շատ ավելի հանդուրժողական է, քան նախկինների: Այս հարցում, իհարկե, ներկաներին պետք է հիասթափեցնեմ. նրանց հանդեպ վերաբերմունքը շատ ավելի բացասական է, քան նախկինների: Մյուս կողմից, առաջին նախագահի թեման շոշափում են անկախ վերլուծաբանները, որոնք փորձում են սթափ գնահատել ՀՀ-ի թե՛ ներքին զարգացումները, թե՛ ՀՀ-ի շուրջ աշխարհաքաղաքական

հնարավոր զարգացումները, և այդ ամենը հանրագումարի բերելով՝ հանգում եմ այն եզրակացության, որ այսօր չկան ո՛չ սոցիալական, ո՛չ ներքաղաքական և ո՛չ էլ արտաքին քաղաքական այն զարգացումները, որոնք պահանջված կդարձնեն առաջին նախագահին:

– Եվ մի վերջին հարց. ձեր պարբերական հղումները հայոց մեծերին՝ ոմանց մոտ անլուրջ տպավորություն է թողնում:

– Նախ, այդ «ոմանք» երբեք ու երբեք ժողովրդի անունից խոսելու բարոյական իրավունք չունեն: Ինձ ոգևորում են նրանց այդ գնահատականները, որովհետև եթե մի բան ազդեցություն չի թողնում, այդ մասին այդքան չեն խոսում: Այո՛, ես ինձ հոգեհարազատ եմ համարում հայոց մեծերին, ես ինձ հոգեհարազատ եմ համարում քերթողահայր Խորենացուն, Նարեկացուն, Նահապետ Քուչակին, Խաչատուր Աբովյանին, Հովհաննես Թումանյանին, Չարենցին: Այո՛, Համո Սահյանի համար ես գժվում եմ, և ես շատ բան ունեմ սովորելու Մեր Մկրտչյանի անցած ուղուց: Իրենք են իմ մեծերը, և ցանկացած քայլ կատարելիս ես մտածում եմ, թե ինչ կասեր այս ամենի մասին Չարենցը, ինչ կասեր Ավետիք Իսահակյանը, որը հաճախ էր լինում Լենինականի մեր տանը, և որի գրկից բախտ եմ ունեցել ճաշ ուտել: (Ի դեպ, Գեղամյանը բախտ է ունեցել շփվելու նաև մեկ այլ մեծի՝ Հրաչյա Ներսիսյանի հետ՝ «Տժվժիկ» ֆիլմում նկարահանվելով նրա թոռան դերում. – *խմբ.*): «Ոմանց» ողբերգությունն այն է, որ Քոչարյանն իմ իմացած մեծերի Պանթեոնում չկա, և ես վերջինիս ցիտատներով ու մտքերով չէ, որ առաջնորդվում եմ: Դե ինչ, ծիծաղում է նա, ով վերջինն է ծիծաղում:

Նաիրա Զոհրաբյան

«Հայկական ժամանակ», 22.XII.2004:

Մենք իր չենք, որ բերեն Ազգային ժողով

– Պարոն Գեղամյան, դուք միշտ աչքի եք ընկնում Ձեր վերլուծություններով: Ըստ Ձեզ, ո՞ւմ էր ձեռնտու ավանդների վերադարձման շուրջ նման իրավիճակի ստեղծումը:

– Ի պաշտոնե Հանրապետության երկրորդ դեմքը՝ Արթուր Բաղդասարյանը, հանդես եկավ նախաձեռնությամբ, ինչը պաշտպանեց մինչ օրս ԱԺ նիստերը բոյկոտած ընդդիմությունը, և արդյունքում ստացվեց այնպես, որ կոալիցիայի մաս կազմող կուսակցություններից մեկն իր ղեկավարով՝ ԱԺ նախագահով, ի վիճակի չեղավ գումարելու այդպիսի հույժ կարևոր օրակարգով նստաշրջան: Բնականաբար, դրանում շահագրգռված են այն մարդիկ, ովքեր ուզում են վարկաբեկել ԱԺ նախագահին: Ինչպես տեսնում եք՝ ընդդիմությունն այդ նպատակը չէր հետապնդում, դրա համար սատարեց նրան: Իսկ եթե ընդդիմությունը չէ, նշանակում է՝ կոալիցիայի մաս կազմող իր գործընկերներն են: Այս խնդրի մյուս կողմն այն է, որ ՀՀԿ-ին էլ, որը մինչ վերջերս իրերի վիճակը ներկայացնում էր այնպես, թե իրենք են ԱԺ-ում մեծամասնություն կազմում և ի զորու են ցանկացած հարց մտցնել ԱԺ օրակարգ ու ընդունել համապատասխան օրենք, հասկացրին, որ շատ մի ոգևորվեք, որովհետև անգամ իսկ անկախ պատգամավորը, որը որևէ ֆրակցիա չի ներկայացնում, ի զորու է և կարող է հավաքել ճիշտ այնքան ստորագրություն, որքան անհրաժեշտ է արտահերթ նստաշրջան գումարելու համար: Այն էլ՝ ՀՀԿ կամքին հակառակ: Երբ այս երկու փաստերն արձանագրվեցին, պարոն Ռոբերտ Քոչարյանը հերթական անգամ ցույց տվեց կոալիցիոն կուսակցություններին, մասնավորապես՝ ՕԵԿ-ին և ՀՀԿ-ին, թե ցանկացած հարց քննարկել-չքննարկելու հարցում իրականում ով է տերը: Դրա հետ մեկտեղ նույն ՀՅԴ-ին դրեցին շատ ծանր կացության մեջ. որքան էլ իրենք փորձեն ասել, թե դեմ են 1000 ռուբլու դիմաց 30 ԱՄՆ դոլար փոխհատուցելուն: Է՛, դեմ եք, 30-ը դարձրեք 130: Բայց դաշնակներին էլ մի այնպիսի իրավիճակի մեջ դրեցին, որ նրանք հիմա հարկադրված են ինչ-ինչ պատճառաբանություններ, բացատրություններ տալ: Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ իշխանություններն ոչ միայն չեն ցանկանում այս հարցին դրական լուծում տալ, այլև չեն հանդուրժում այլակարծություն այս հարցում: «Կենտրոն» հեռուստաընկերությանն ու «Խորհրդարանական շաբաթ» հաղորդմանը խնդրեցի ինձ 30 րոպե եթեր տրամադրել, որտեղ ես կմատնանշեի այն սկզբնաղբյուրները, որոնք գործի դնելով՝ մենք կկարողանանք բյուջեի գումարներին ձեռք չտալով՝ զգալիորեն մեղմել այդ հարցը: Դրան էլ չեն գնում, ավաղ: Դրանից այն համոզմանն ես գալիս, որ ազգաբնակչության ճնշող մեծամասնության շահերն ինչպես օտար էին այս իշխանություններին, այդպես էլ

շարունակում են մնալ: Թող քննարկումն ուղիղ եթերով ապահովեին ու ժողովուրդն ինքը ուշի-ուշով լսեր, հասկանար, թե որն է պոպուլիզմը, որը գործնականը: Դրանից էլ են հրաժարվում, ինչը նշանակում է, որ այս իշխանությունների համար՝ ժողովրդի վիճակն ինչքան վատ, այնքան՝ իրենց լավ: Իրենք կարիքի բեռան տակ ծնկի են բերել մի ամբողջ ազգի: Եվ եթե թվում է, թե դա իրենց հաղթանակն է, ապա պետք է ասեմ, որ դա պյուրոսյան հաղթանակ է, քանի որ 2005-ին, ուզեն-չուզեն, լրջագույն փորձություններ են սպասվում մեր պետականությանը: Իսկ կարիքով կքված ժողովուրդը, բնականաբար, ի զորու չի լինելու դիմակայել այն ահավոր վտանգներին, որոնք դարանակալել են իրեն:

– Լոռու մարզում Ռ. Քոչարյանը հայտարարեց, որ այս նախաձեռնությունը Հմայակ Հովհաննիսյանինը չէ, նրա հետևում ինչ-որ ուժ կա, և պետք է պատգամավորները «ողջամտություն» դրսևորեն՝ թույլ չտալով ինչ-որ մեկին՝ վտանգել այդ հարցի լուծումը: Դրանից կարելի՞ է ենթադրել, որ այս ամենի նախաձեռնողը Ռ. Քոչարյանը չէր: Ըստ ձեզ, ո՞վ է իրականում հեղինակը:

– Սովորաբար նման պաշտոնի տեր մարդիկ մտածում են մի բան, ասում են մեկ այլ բան, կատարում՝ ճիշտ հակառակը: Ռ. Քոչարյանը հասավ իր նպատակին. կոալիցիայի մաս կազմող կուսակցություններին ցույց տվեց իրենց պստլիկ տեղը հայոց քաղաքական բեմահարթակի վրա: Իսկ մնացած խոսքերը խորամանկություններ են, ոչ ավելին, որովհետև ստորագրողների թվում կան այնպիսի մարդիկ, որոնք անգամ հույժ կարիքի դեպքում, արտաքնոց գնալուց առաջ, զանգ են տալիս նախագահական և թույլտվություն են հարցնում՝ կարո՞ղ են գնալ զուգարան, թե՞ գործողությունը կատարեն ոչ զուգարանում:

– Տարբեր ձևերով փորձ արվեց ընդդիմությանը բերել խորհրդարան, սակայն դա, պետք է խոստովանել, ավանդների հարցով հաջողվեց Հ. Հովհաննիսյանին. ինչո՞ւ որոշեցիք մասնակցել այս ֆարսին ու դադարեցնել ձեր բոյկոտը:

– Բնականաբար, ոմանք ի սկզբանե ցանկանում են այս ամենը ֆարս ներկայացնել, որովհետև լուրջ քննարկումների արդյունքում յուրաքանչյուր հայ մարդ մտովի կասեր՝ լավ, այս իշխանություններն ինչո՞ւ են այս աստիճան թշնամաբար վերաբերվում սեփական ժողովրդին: Քննարկումների արդյունքում ի հայտ կգային միլիարդավոր դրամի այն ռեզերվները, որոնք առանց նյութական ծախս կատարելու հնարավոր կլիներ ներգրավել բյուջեի եկամտային մաս, և հոգալ այն բոլոր խնդիրները, որոնք այսօր կան: Ինչ վերաբերում է մեզ ԱԺ բերել-չբերելուն, ապա մենք իր չենք, որ բերեն: Մեզ այսօր խորհրդարան է բերել մեր խիղճը և պատասխանատվության խորը, բարձր զգացումը մեր 2 մլն 200.000 ազգաբնակչության առաջ: Մեզ այս հարցն ավելի շատ է հուզում, քան վստահության հանրաքվե անելու-չանելու հարցը: Կոալիցիան իր այս ձախողումով անասելի նվեր մատուցեց ընդդիմությանը՝ ցույց տալով, որ վախենում են բաց քննարկումներից: Իսկ եթե վախենում են, նշանակում է՝ գիտակցում են, որ հայտնվել են քաղաքական «շտոպրի» իրավիճակում, և գիտակցում են, որ այդ գումարները կան, բայց իրենք անզոր են դրանք բերել բյուջե, որովհետև այդ գումարները կորզվում են ճիշտ նույն մարդկանց միջոցով, ովքեր կազմում են կոալիցիոն կուսակցությունների

հենասյուները: Միգուցե՝ բացառությամբ ՕԵԿ-ի, որը մասնակցեց քվորումի ապահովմանը: Ամենամեծ հետևությունն այն է, որ ապացուցվեց, որ այսօր Հայաստանում երաժշտություն պատվիրողներն օլիգարխներն են, որովհետև այդ գումարները, որոնք մենք մտադիր էինք բերել բյուջե, բնականաբար, իրենց գերշահույթներից պետք է լինեին:

Զրուցեց
Լիլիթ Սեյրանյանը

«168 ժամ», 23–29. XII. 2004:

Ամենավտանգավորը ժողովրդի հիասթափությունն է

– Պրն Գեղամյան, ավարտին է մոտենում սպասելիքներով, ցնցումներով, հնչ-որ տեղ հիասթափություններով հագեցած 2004 թիվը: Ի՞նչ տվեց այն մեր երկրին ու ժողովրդին:

– Ցավոք, երբ ուշադիր հետևում ես այն գնահատականներին, որոնք տրվում են տարեվերջին, ակամայից, գոնե քեզ համար, պարզում ես մի դառը ճշմարտություն. այն է՝ մերօրյա «քաղաքական ընտրանին»՝ կոալիցիան, չգիտես ինչու, իր հաջողություններն ու անհաջողությունները պայմանավորում է ոչ թե երկրում սոցիալական վիճակի բարելավմամբ կամ վատթարացմամբ, այլ սեփական կուսակցության, էլ չեմ ասում սեփական անձի վարկանիշի թվացյալ բարձրացմամբ կամ իջեցմամբ: Չնմանվելով իմ որոշ գործընկերներին՝ ուզում եմ այդ հարցին մոտենալ այն տեսանկյունից, թե 2004-ին ինչ ստացավ մեր ժողովուրդը:

Շուրջ կես միլիոն թոշակառուներն արդյո՞ք սկսեցին ավելի լավ ապրել: Ավա՜ղ... իհարկե, ոչ: Վերջիններիս թոշակների չափը նվազագույն սպառողական զամբյուղից 3 անգամ պակաս է:

Շուրջ 225 հազար բյուջետային աշխատողներն արդյո՞ք լավացրեցին իրենց սոցիալական պայմանները: Ցավոք սրտի, դարձյալ ոչ:

Հազարավոր նոր աշխատատեղե՞ր ստեղծվեցին երկրում: Ճիշտ հակառակը. հազարավոր մանկավարժներ և բժիշկներ ընկան, այսպես կոչված, օպտիմալացման ծրագրերի շրջանակներ, դուրս մղվեցին աշխատանքից և գործազուրկ դարձան:

Միգուցե ժողովրդի հավատը խորացա՞վ իշխանությունների հանդեպ: Կամ էլ՝ խաբված ավանդատուներն իրենց ավանդնե՞րը կարողացան ստանալ: Թե՞ թունելի վերջում լույս երևաց: Կրկին՝ ոչ:

Ղարաբաղի հարցո՞ւմ հաջողություններ արձանագրվեցին, թե՞ միջազգային ատյաններում: Ճիշտ հակառակը. Ադրբեջանին հաջողվեց ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի օրակարգ մտցնել Ադրբեջանի, իբր, գրավյալ տարածքների հարցը: ՄԱԿ-ի օրակարգ մտած հարցի ձևակերպումն ինքնին արդեն իսկ մեծագույն վտանգ է պարունակում: Ավելին, Թերի Դևիսի զեկույցին ԵԽ ԽՎ-ում փոխարինելու եկավ Դեյվիդ Աթկինսոնի զեկույցը, որտեղ Հայաստանի համար կրկին մտահոգիչ, վտանգավոր ձևակերպումներ կան: Մեր նահանջներն արձանագրող ցուցակը կարելի է անվերջ շարունակել: Բայց նկատի ունենալով այն, որ «Երրորդ ուժը» Ամանորի նախաշեմին է տպագրվելու, չեմ

ուզում տպավորություն ստեղծվի, թե չարախնդում եմ:

Երբ համադրում ես այդ ամենը, ապա տեսնում ես, որ, ավա՜ղ, և ոչ մի դրական փաստ ո՛չ սոցիալական բնագավառում է ամրագրվել և ո՛չ էլ արտաքին քաղաքականության ոլորտում: Իսկ ամենավտանգավոր հանգամանքներից մեկն էլ այն է, որ ժողովուրդը խոր հիասթափություն ապրեց իշխող կոալիցիայից: Այս ամենը շատ է ցավալի նաև միջազգային հանրության կողմից տրվող գնահատականների տեսանկյունից: Չէ՞ որ հիշատակածս հայտարարություններն ու ելույթները, բացի մեզնից ուսումնասիրում են և մեր բարեկամ երկրների դեսպանատներում: Նրանք կասեն՝ չհասկացանք, Քոչարյանն ամեն ինչ արեց, որ այս մարդիկ ԱԺ-ում ունենան մեծամասնություն: Սինչդեռ՝ ունենալով մեծամասնություն, նրանցից յուրաքանչյուրը ստեղծված իրավիճակում հանրության առջև ուզում է ազնիվ երևալ, բայց կաշառակերությունը շարունակվում է, իսկ կոռուպցիայի աղաղակող դեպքերն ակնհայտ են: Ուրեմն, ո՞վ է մեղավոր: Նշանակում է, մեղավոր է նրանց հովանավորը: Ահա այս պարագայում է, որ Հայաստանը շարունակաբար ճախողումներ է ունենում թե՛ արտաքին, թե՛ ներքին բնագավառներում: Իսկ ամենավտանգավորն այն է, որ էլ ավելի է խորանում հիասթափությունը ժողովրդի ամենալայն շրջաններում:

– ՀՀ քաղաքական դաշտը հետաքրքիր վայրիվերումներ դրսևորեց Թուրքիայի՝ ԵՄ անդամ դառնալու սկսված գործընթացի առնչությամբ: Արտահայտվող տեսակետները հաճախ տրամաբանորեն հակառակն են ու հակասում են միմյանց: Ինչպիսի՞ն պետք է լինի ՀՀ դիրքորոշումն այդ խնդրի վերաբերյալ:

– Վերջերս չափազանց մեծ արձագանք են գտնում Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու խնդրին առնչվող հարցերի քննարկումները: Թերևս, հասկանալի է այն հետաքրքրությունը, որը կա մեզանում: Բայց, ցավոք, մենք ականատեսն ենք այն բանի, երբ զգացմունքայնությունը հաճախ գերիշխում է քաղաքական ազգանպաստ հաշվարկին: Պարզեցնեմ միտքս. միայն ծույլերն են, որ չեն հայտարարում, թե ոչ մի դեպքում պետք չէ Թուրքիային ներգրավել ԵՄ, քանի դեռ Թուրքիայի կառավարությունը չի ընդունել հայոց ցեղասպանության փաստը: Սա հիշեցնում է մի իրավիճակ, երբ տանտերը, տվյալ պարագայում ԵՄ-ն, ուզում է հյուր հրավիրել իր օջախ, բայց փոքր-ինչ հեռավոր մի հարևան խրատներ է տալիս տանտիրոջը, թե այս կամ այն պայմանն առաջադրիր՝ մինչ հրավիրելդ: Նախ՝ դա վիրավորական է ԵՄ անդամ 25 երկրների քաղաքական իսթեբլիշմենթի համար, նաև ԵՄ անդամ-երկրների ժողովուրդների համար, քանի որ նրանց ականջից փորձում են ուղղություն ցույց տալ, նաև դասեր տալ: Այդ տեսակետից նման հարցադրումներն անընդունելի են: Նման դրսևորումներով, փաստորեն, ՀՀ-ն հակառակվում է ոչ միայն ԵՄ ներսում ընդունված կարգուկանոնին, այլ նաև այս հարցում ԱՄՆ-ի որդեգրած քաղաքականությանը: Եթե հիշում եք, պետդեպարտամենտի գործող քարտուղարը՝ Քոլին Փաուելը, հայտնելով ամերիկյան վարչակազմի կարծիքը, ասաց, որ իրենք տեսնում և ողջունում են ԵՄ այն քայլերը, որոնք ուղղված են Թուրքիայի անդամակցությանն այդ հեղինակավոր կազմակերպությանը: Բացի այդ, երբ արդեն իսկ Ավստրիայի և Ֆրանսիայի քաղաքական ղեկավարները հայտարարել են, որ, մեծ կարևորություն տալով

Թուրքիայի անդամակցությանն ԵՄ-ին, մտադիր են այդ հարցի պատասխանը ստանալ հանրաքվեի միջոցով, ապա պետք է հասկանալ, որ առանց մեր հուշումների էլ Ֆրանսիայում և Ավստրիայում գիտակցում են այդ հարցի հույժ կարևորությունը:

Մյուս հանգամանքը. բանակցությունների սկիզբը նշանակում է, որ ԵՄ անդամ-երկրները, հատկապես հիմնադիր երկրները՝ Ֆրանսիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Բենի-Լուքսի երկրները, գնալով ավելի հետևողական հարցադրումներ են անելու Թուրքիայի վերաբերյալ: Մասնավորապես՝ արդեն իսկ մայր-նախապայման է դրված, այն է՝ որ Թուրքիան պետք է ճանաչի Կիպրոսի Հանրապետության գոյության փաստը: Իսկ դա ընդունելով՝ Թուրքիան մեծագույն քայլ է կատարում սեփական նախապաշարումները հաղթահարելու գործում՝ ենթարկվելով ԵՄ-ի ներսում ընդունված նորմերին: Ընդ որում՝ Կիպրոսի ճանաչման խնդիրը Թուրքիայի քաղաքական ընտրանու համար նույնքան սկզբունքային ու ցավագին նշանակություն ունի, որքան հայոց ցեղասպանության ճանաչումը: Այդ պարագայում, բնականաբար, երբեք ու երբեք չհրաժարվելով հայոց ցեղասպանության ճանաչման հարցում գործադրվող մեր ջանքերից, մենք անպայման պետք է դրսևորենք նուրբ դիվանագիտություն, որպեսզի վաղը, մյուս օրը հանկարծ ու հանկարծ չստացվի այնպես, որ Թուրքիայի՝ ԵՄ անդամակցությանը որպես խոչընդոտ մատուցվի հայոց ցեղասպանության չճանաչման հարցը: Որովհետև եթե հիմա սառեցված հարաբերություններ են Թուրքիայի և Հայաստանի միջև, ապա դեպքերի նման զարգացման պայմաններում թշնամական հարաբերություններ կհաստատվեն ու համոզված կարող եմ ասել, որ Թուրքիան հարկադրված կլինի ավելի ներդաշնակ գործել իսլամական աշխարհի հետ: Իսկ իսլամական աշխարհում կան հայկական բազմաթիվ համայնքներ: Ուրեմն, թշնամանքը նման պարագայում կտարածվի իսլամական բոլոր երկրներում ապրող հայերի վրա: Ուստի, այս հարցում չափազանց զգուշավորություն է պետք:

Ավելին, քաղաքական մեր առօրյայից ելնելով, մենք պետք է բոլորովին այլ հարթության վրա խնդիրներ առաջադրենք: Մասնավորապես, հիշատակենք Հովհաննես Պողոս 2-րդի չափազանց իմաստուն և խորաթափանց քայլը, երբ նա Հունաստանի ուղղափառ եկեղեցու առաջնորդներից ներողամտություն հայցեց այն բարբարոսությունների համար, որ սրանից, եթե չեմ սխալվում, 800 տարի առաջ խաչակիրներն իրականացրել էին Կոստանդնուպոլսում և ավերել էին բյուզանդական հոգևոր կենտրոնն ու այնտեղ ալան-թալան արել: Ինչու չէ, նաև հիշենք Գերմանիայի կանցլեր Հելմութ Քոլի պաշտոնական այցը Երուսաղեմ, երբ նա հայտնի «Լացի պատի» մոտ ծնկաչոք հրեա ժողովրդի ներողամտությունը հայցեց նացիստական Գերմանիայի իրականացրած հոլոքոստի համար: Որովհետև Գերմանիայի լիդերը, որը դատապարտում էր նացիզմը, գիտակցում էր, որ իր կառավարությունը ֆաշիստական Գերմանիայի իրավահաջորդներից մեկն է:

Իսկ եթե Թուրքիան հավակնում է հավասար լինել ԵՄ անդամ-երկրներին, անտարակույս, պետք է ընդօրինակի նրանց բարոյական այն չափանիշները, որոնք ժամանակակից աշխարհում դարձել են խիստ պահանջված և մարդկայնորեն հասկանալի: Ուստի, տվյալ պարագայում, հատկապես Էրդողանի դեպքում, դա

չափազանց լուրջ ու կարևոր քայլ կդիտվի քաղաքակրթությունների մերձեցման ճանապարհին: Այն է՝ 60 միլիոնանոց իսլամական երկրի՝ ինչպիսին Թուրքիան է, առաջին դեմքը, երբ հրապարակայնորեն դատապարտի Օսմանյան կայսրությունում իրականացված այն բարբարոսությունները, որոնք իրականացվել են ոչ միայն հայերի, այլև հույների, բուլղարացիների, ինչու չէ, նաև արաբների նկատմամբ, ապա դա կխոսի հօգուտ թուրք ժողովրդի հաստատակամության՝ հետևել եվրոպական բարոյական ու մարդկային չափանիշներին: Ինչ խոսք, դա համահունչ կլինի նաև այն հայտարարությանը, որով դեկտեմբերին հանդես եկավ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը՝ հաստատելով ԱՄՆ-ի վճռականությունը՝ անել ամենը ոչ միայն քաղաքակրթությունների բախումը կանխելու, այլև այդ քաղաքակրթությունները մերձեցնելու համար:

Այդ ճանապարհին վերջերս Մարոկկոյի Ռաբաթ քաղաքում տեղի ունեցավ աննախադեպ համաժողով, որի աշխատանքներին մասնակցում էին Հյուսիսային Աֆրիկայի, Մերձավոր Արևելքի, Առաջավոր Ասիայի 28 երկրների ներկայացուցիչներ, գումարած Մեծ ութնյակի երկրները: Համաժողովի նախօրեին հայտարարվեց, որ դա ուղղված է քաղաքակրթությունների մերձեցմանը, որպեսզի 21-րդը դառնա համերաշխության դար՝ նախևառաջ քաղաքակրթությունների տեսանկյունից:

Ուստի, աշխարհաքաղաքական ընթացող զարգացումները մեզ հուշում են, որպեսզի Թուրքիայի հարցում լինենք հավասարակշռված ու զգուշավոր, անշուշտ, երբեք ու երբեք չմոռանալով այն ամենը, ինչը արյունոտ էջերով գրվեց 20-րդ դարասկզբին՝ պայմանավորված հայոց ցեղասպանությամբ:

– Այս օրերին աշխարհի ուշադրությունը կենտրոնացած է Ուկրաինայում տեղի ունեցող զարգացումների վրա: ՀՀ-ում հաճախ են համեմատում Ուկրաինայի և մեր ընդդիմություններին: Ձեր կարծիքով, տեղի՞ն են այդ զուգահեռները:

– Ըստ իս, աշխարհաքաղաքական հնարավոր զարգացումների առումով ընդհանրություններ գրեթե չկան: Թերևս, ընդհանրականն այն է, որ թե՛ Ուկրաինայում և թե՛ Հայաստանում նախագահական ընտրությունների 1-ին փուլից հետո ժողովուրդն ապրեց խոր հիասթափություն և ընդվզեց:

– Վիկտորներից որի՞ կողմն էր Ձեր համակրանքը:

– Բնականաբար, իմ մեծագույն համակրանքն Ուկրաինայի ժողովրդի ազատ կամքի արտահայտության արդյունքում ընտրված նախագահի կողմն է: Ում ընտրեց ուկրաինական ժողովուրդը, նրան էլ մենք պարտավոր կլինենք ընդունել՝ հարգելով այդ տաղանդավոր ժողովրդի ազատ ու արդար կամքի դրսևորման արդյունքը:

– Ինչպե՞ս կգնահատեք Ռոբերտ Քոչարյանի շտապողականությունը՝ շնորհավորանքը Ուկրաինայի չընտրված նախագահին: Արդյոք երկրի ղեկավարին վերելի՞ է այդպիսի սայթաքումը:

– Կարծում եմ, այդ հարցին լիարժեք պատասխանելու համար պետք է ամբողջությամբ տիրապետել այն ինֆորմացիային, ինչին տիրապետում էր տվյալ դեպքում Ռոբերտ Քոչարյանը: Ըստ իս, անշուշտ, դրսևորվել է շտապողականություն և դա հարիր չէր դե-

ֆակտոր Հայաստանը ներկայացնող առաջին դեմքին:

– 2004-ի ընթացքում տարբեր ուժեր բազմիցս հայտարարեցին, թե ընդդիմությունը փոշիացավ: Ձեր գնահատականն այդ առնչությամբ:

– Մեկ դար առաջ մի առիթով լուրեր էին տարածում, թե Մարկ Տվենը մահացել է: Նա հարկադրված եղավ հանդես գալ հրապարակմամբ ու վերջում ասել՝ հասկանում եմ, այս հոդվածով կհիասթափեցնեմ բոլոր նրանց, ովքեր ասում էին, թե ես վախճանվել եմ: Ուստի, կասեմ՝ լուրերն իմ վախճանի մասին չափազանցված են: Կան մարդիկ, ովքեր քնում և արթնանում են՝ մտածելով, թե ընդդիմությունը փոշիացել է: Բնավ էլ, այդպիսիք մեր ժողովրդի և նրա հույզերն արտահայտող ընդդիմության բարեկամները չեն: Ուստի, նրանք իրենց իրական ցանկությունները ջանում են ճշմարտության տեղ «սաղացնել» ժողովրդին: Ես կարող եմ «Ազգային Միաբանության» մասին ասել. անցած փորձություններից շատ ավելի համախմբված և կուռ դուրս եկանք: Ավելին, երևանյան բարբառով ասած, մի քանի գիշեր ոստիկանատներում կալանված լինելով՝ մերոնք իշխանությունների հրամցրած «ղազագրերը» չստորագրեցին, սեփական թուլամորթությունը հետագայում պոռոտախոս երկարաշունչ հոդվածներով քողարկելու կարիքը չունեցան... Էլ չենք խոսում Լևոն Տեր-Պետրոսյանի և նրա հանցավոր վարչակազմի ընտանեկան «փոդրաթ» եղանակով աշխատող սազանդարների սնանկ ջանքերի մասին, որոնք ժողովրդի արյամբ շաղախված փողերով անհաջողակ զուռնաչու ճիգեր են գործադրում՝ ինձ և իմ գործընկերներին իրենց թայը դարձնելու գործում, մեծահոգաբար թերթի մի ողջ համար... նվիրելով մեզ: Պարոն Լևոն Տեր-Պետրոսյան, սանձեք ձեր ձեռնասուններին, ապաշխարեք Համբարձում Գալստյանի, Համբարձում Ղևոնդիլյանի, գեներալներ Իսահակյանի և Մարիուս Յուզբաշյանի և այլոց՝ ձեր իշխանավարության տարիներին իրականացված և այդպես էլ չբացահայտված սպանությունների համար:

Թող չթվա, որ շեղվեցինք տրված հարցից, անգամ նախկին և ներկա իշխանությունների երկկողմանի նման բիրտ հարձակումների, հերյուրանքների և զրպարտանքների պայմաններում «Ազգային Միաբանությունը» է՛լ ավելի համախմբված և ուժեղացած է դիմավորում Ամանորը. հարյուրավոր նոր մարդիկ են անդամագրվել մեր կուսակցությանը: Այն, որ մենք չափազանց հզորացած ենք, ապացուցում է, թերևս, այն հանգամանքը, որ այդպես էլ, բացառությամբ «Կենտրոն» հեռուստաընկերության, և ոչ մի հեռուստաալիք ուղիղ եթեր չի հրավիրում մասնավորապես ինձ, որովհետև վախենում և խուսափում են ճշմարտությունից: Որովհետև այն փաստարկները, որոնք ներկայացնում եմ մեր կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ, անշուշտ, ճշգրտված են և, բնականաբար, ոչ այլ ինչ են, եթե ոչ այսօրվա խայտառակությունների հայելին: Եթե ընդդիմությունը փոշիացած է, եթե իրենից ուժ չի ներկայացնում, ապա թույլից ինչո՞ւ եք վախենում, ինչո՞ւ եք ընդդիմությանը զրկել եթերից:

Զրույցը՝

Նաիրա Հարությունյանի

«Երրորդ ուժ», 24 – 31.XII.2004, 14 – 21.I.2005:

Իրաքում մեր ռազմական առկայությունը անվտանգության երաշխիք է տեղի հայության համար

ԱՄՆ պետքարտուղարի օգնական Էլիզաբեթ Ջոնսը օրերս կատարած իր աղմկալի հայտարարությամբ «օգնեց» հայաստանյան քաղաքական դաշտին դուրս գալու ամանորյա տրամադրություններից և խումհարից: Այս օրերին գրեթե բոլորն ակտիվորեն քննարկում ու դատապարտում են այդ հայտարարությունը: «Իրավունքի» հերթական զրուցակիցը՝ ԱԺ «Ազգային Միաբանություն» խմբակցության ղեկավար Արտաշես Գեղամյանը, ևս կարծիք է հայտնում Էլիզաբեթ Ջոնսի արտահայտությունների վերաբերյալ:

– Ի տարբերություն Հայաստանում արմատավորված արատավոր ավանդույթի, ըստ որի, երբ տեղի է ունենում իշխանափոխություն, նորելուկ իշխանավորներն անմիջապես հայտարարում են արտաքին քաղաքականության արմատական փոփոխության մասին (հիշենք ԼՂՀ-ի հիմնահարցի փուլային և փաթեթային հնարավոր լուծումների հարցը), ամերիկյան վարչակազմում, անկախ նրանից՝ հանրապետականներն են իշխանության, թե ժողովրդավարականները, արտաքին քաղաքականության հիմնական ուղղվածությունը մնում է անփոփոխ: Առավել ևս այժմ, երբ ԱՄՆ նախագահական ընտրությունների արդյունքում վերընտրվել է Ջորջ Բուշ կրտսերը, ավելին՝ իր գլխավորած Հանրապետական կուսակցությունը վերջին ընտրությունների արդյունքում թե՛ ներկայացուցիչների պալատում և թե՛ սենատում ապահովել է իր մեծամասնությունը: Ուստի, Էլիզաբեթ Ջոնսի մեկնաբանությունները՝ տրված "Moscow Times" թերթին պետք է միայն և միայն վերլուծել նախկին խորհրդային տարածաշրջանում չկարգավորված հակամարտություններին ԱՄՆ-ի դիրքորոշումների տեսանկյունից:

– Ի՞նչ նկատի ունեք:

– Դա հեռուն գնացող, չափազանց լուրջ հայտարարություն է, որը մտածելու տեղիք պետք է տա բոլորիս: Ամենևին էլ պատահական չէ, որ այդ հայտարարությունն արվեց ճիշտ այն ժամանակ, երբ նախագահ Բուշը ամերիկյան հայտնի հեռուստակայանին տված իր վերջին հարցազրույցում չբացառեց, որ Իրանի Իսլամական Հանրապետության հանդեպ կարելի է կիրառել նաև ոչ դիվանագիտական գործողություններ, եթե Իրանը չհրաժարվի իր միջուկային ծրագրերից: Ինչո՞ւ հիշատակեցի Իրանը...

– Ինչո՞ւ:

– Եթե մենք ուշադիր վերլուծենք հնարավոր զարգացումները, ակնհայտ է դառնում, որ 21-րդ դարում աշխարհում իշխող դերակատարում կունենան այն երկրներն ու պետությունները, որոնք տիրում են էներգակիրներին, այսինքն՝ նավթային պաշարներին: Իրաքում ժողովրդավարություն իրականացնելուց հետո ԱՄՆ-ը փաստացի իր դաշնակիցների հետ վերահսկելու են Պարսից ծոցի նավթային հարստությունները, դրանով իսկ բացառելով նավթի վաճառքից ստացվելիք եկամուտների արտահոսքը դեպի միջազգային ահաբեկչության կենտրոնները: Եվ հաշվի առնելով այն, որ ԱՄՆ-ի հատուկ ծառայությունները պարբերաբար հրապարակում են, թե ահաբեկիչների որոշակի խմբավորումներ աջակցություն են ստանում Իրանից, պարզ է դառնում, որ ԱՄՆ-ի արտաքին քաղաքական ողջ ներուժն ուղղված է Իրանի սահմանների տրամագծով անվտանգության գոտի ստեղծելուն: Եթե արևմտյան սահմանը Թուրքիան և Իրաքն են, իսկ արևելյանը՝ Աֆղանստանը և Պակիստանը, ապա մնում է միայն հյուսիսային սահմանը, որը չի վերահսկվում ԱՄՆ-ի կողմից, այսինքն՝ ճիշտ այն սահմանը, որը Իրանն ունի Ադրբեջանի, Հայաստանի և Թուրքմենստանի հետ: Այդ սահմանագծի որոշ մասում այսօր գտնվում են Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության հայկական զորամիավորումները: Այնպես որ, այդ սահմանը նս վերահսկելի դարձնելու նպատակով, ԱՄՆ-ը, բնականաբար, կձեռնարկի համապատասխան գործողություններ: Նման եզրակացության ենք հանգում, երբ համակողմանի վերլուծության ենք ենթարկում հեղինակավոր աշխարհաքաղաքագետների հրապարակումները:

– Գործողություններ ասելով՝ նկատի ունեք այնպիսիք, ինչպիսիք տեղի ունեցան Իրաքո՞ւմ:

– Կարծում եմ, նրանք պարզապես խնդիր են դրել հայ-իրանական և ադրբեջանա-իրանական սահմանների վերահսկելիությունն ամրապնդել: Իսկ թե ի՞նչ եղանակով, ահա այստեղ է հարցի մեխը: Հետևաբար, Էլիզաբեթ Ջոնսի մեկնաբանությունները պետք է գնահատենք տարածաշրջանային խնդիրներին ԱՄՆ-ի որդեգրած մոտեցումներով: Ըստ որի, Իրանի հյուսիսային սահմաններում պետք է ստեղծվի վերահսկելիության գոտի, որն այսօր, ըստ ամերիկյան արտաքին գերատեսչության, այնտեղ բացակայում է: Այսինքն՝ Զանգելանում, Ֆիզուլիում, Ջեբրաիլում պետք է համապատասխանաբար լինեն այնպիսի երաշխիքներ, որոնք անհնար կդարձնեն տարածաշրջանում իրավիճակի հնարավոր սրման պայմաններում ռազմական գործողությունների ծավալումն այդ հատվածում: Հիշենք նաև, որ հյուսիսային Իրանում իրանական Ադրբեջանն է, որը հայկական պատմական Ատրպատականն է, ուր տարբեր տվյալների համաձայն բնակվում են 17-25 մլն էթնիկ ադրբեջանցիներ, որոնց շրջանում պարբերաբար անջատողական նկրտումներ են հասունանում, և որոնք խստագույնս ճնշվում են Իրանի իշխանությունների կողմից: Չմոռանանք նաև նշել, որ Քոլին Փաուելի՝ Իլհամ Ալիևին ուղղված նամակում վերահաստատվեց, որ ԱՄՆ-ը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը:

Եթե այս ամենը զուգակցում ենք, չի բացառվում, որ իրանական սահմանում կայուն

գոտի ստեղծելու համար ԱՄՆ-ն Ադրբեջանի կառավարության խնդրանքով որոշ զորամիավորումներ կարող է տեղակայել այնտեղ: Այդ պարագայում արդեն ՀՀ-ն ոչ մի լծակ չի ունենա իր բարեկամ, արդեն իսկ հակաահաբեկչական դաշինքով դաշնակից ԱՄՆ-ին հանդիմանելու:

Ինձ ցավ է պատճառում այն, որ իշխանություններն այս խորքային զարգացումները կանխագուշակելու, Հայաստանի և Արցախի անվտանգությանը նպաստող նախաձեռնություններով հանդես գալու փոխարեն՝ ուղղորդում են մանկամիտ, զգացմունքային հայտարարությունների ընդունումը:

– Հայաստանի իշխանություններն այսօր իրենց, ինչպես ասում եք, «քցված» են զգում: Եվ հաշվի առնելով քաղաքական այն վերլուծությունները, թե «Ազգային Միաբանությունը» պրոամերիկյան ուղղվածություն ունի, հետաքրքիր է, դուք և՞ս նման զգացում ունեք:

– Խորապես ափսոսում եմ, որ քաղաքական վերլուծությունների շրջանակներում օգտագործվում են այնպիսի բառեր, որոնք ներհատուկ են բազարին, երբ դրամաշորթությամբ զբաղվող անձինք միմյանց հետ հաշիվներ են պարզում «քցված» լինելու առումով: Խնդիրը հետևյալն է. տեղի՞ն էր Իրաք զորախումբ ուղարկելը, թե ոչ: Իհարկե, տեղին էր: Իհարկե, դա հնարավորություն ընձեռեց արդեն նույն ԱՄՆ-ի հետ քննարկումներ կատարել որպես գործընկեր երկիր և ոչ թե երկիր, որը խուսափում է իր թեկուզ փոքր լուման ներդնել հակաահաբեկչության պայքարի շնորհակալ, բայց դժվարին գործում: Դեռևս 4 ամիս առաջ ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը, երբ հանդիպեց ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովի հետ, ասաց, որ Ռուսաստանը մտահոգվելու առիթ չունի առ այն, որ մերձբալթյան հանրապետություններն անդամակցեցին ՆԱՏՕ-ին: Քանի որ հետխորհրդային տարածաշրջանում ԱՄՆ-ի համար առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում հնարավոր զարգացումները մասնավորապես Հարավային Կովկասի տարածաշրջանում: Ավելին, ասվել է նաև, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով Ադրբեջանում տեղակայվելու են ՆԱՏՕ-ի մոբիլ արձագանքման ստորաբաժանումներ: Բնականաբար, երբ այս ամենի մասին դեռ ամիսներ առաջ ասում էի իմ հրապարակային ելույթներում, որոնք, բարեբախտաբար, տպագրվել են հենց Ձեր թերթում, փոխանակ իշխանությունները լրջորեն մտածեին, որ ԱՄՆ-ն իր արտաքին քաղաքականության մեջ դրսևորելու է այս հարցերում հետևողականություն, չգիտես ինչու, ինձ անգամ զրկեցին այդ կարևոր հարցի շուրջ հեռուստատեսային ելույթից:

Ինչ վերաբերում է «Ազգային Միաբանություն կուսակցության» ամերիկամետությանը, ռուսամետությանը կամ եվրոպակենտրոնամետությանը, ապա նման գնահատական տվողներն աշխարհաքաղաքականությունից այնքան հեռու են, որքան, ինչպես կասեին երևանցիները, «խոզը տուռնիկից»: Իսկ քաղաքական լրջմիտ վերլուծաբանները կարող են ընդամենն արձանագրել, որ մեր կուսակցությունն ընդգծված հայամետ քաղաքական կուսակցություն է, որը ճշգրիտ տալիս է հնարավոր զարգացումների հետևանքները, ինչի ականատեսն ենք թեկուզ այս հարցում:

– Դուք քննադատեցիք ՀՀ իշխանությունների վարած արտաքին քաղաքականությունը: Հետաքրքիր է, ինչպիսի՞ վերաբերմունք ունեք ներքաղաքական, մասնավորապես կաղրային հարցերի և հայտարարված ստվերի դեմ պայքարի տարվա առնչությամբ:

– Քաղաքագիտության մեջ կա ընդունված տեսակետ, ըստ որի արտաքին քաղաքականությունը ներքին քաղաքականության տրամաբանական շարունակությունն է: Իրավիճակային ինչպիսի լուծումներ իրականացնում են արտաքին քաղաքականության ոլորտում, այդպիսիք էլ փորձում են, որպես մեծագույն նորամուծություն, իրականացնել ներքին քաղաքականության մեջ: Այդ մոտեցումն արմատապես պիտի փոխվի: Այն է՝ պիտի ձևակերպվեն երկրի առջև ծառացած ներքին և արտաքին գերխնդիրները, այնուհետև առաջարկվեն դրանց լուծման այլընտրանքային ճանապարհները, հասնեն այն բանին, որ վերջիններիս լուծումը դառնա հանրության կողմից ընդունելի, նրա սեփական խնդիրը: Որից հետո պարզ կդառնա, թե ինչ գիտելիքների, կենսափորձի և բարոյական նկարագիր ունեցող մարդիկ են ի զորու այդ խնդիրները կյանքի կոչել՝ անկախ կուսակցական պատկանելությունից: Եթե սա չի արվում, ապա երկրի առաջ ծառացած ցանկացած հարցի առկայության պայմաններում կհայտնվենք այն իրավիճակում, որը բնութագրվում է հայտնի կատակերգության վերնագրով՝ «Մեծ աղմուկ՝ ոչնչից»:

– Պրն Գեղամյան, քաղաքական շրջանակներում լուրեր են պտտվում, որ ընդդիմությունն ամեն կերպ ջանում է վերադառնալ խորհրդարան ու դրա համար առիթներ է փնտրում:

– Հարցի մեջ կա ապատեղեկատվություն: Խնդիրներ կան, որոնք վերաբերում են երկրի բախտին, ճակատագրին և շրջադարձային նշանակություն ունեն հեռանկարային զարգացումների համար: Առնվազն անսկզբունքայնության դրսևորում կլինի այդօրինակ օրենքների նախագծերի քննարկման ժամանակ բարձրաձայն տեսակետ չհայտնելը:

– Այդ դեպքում ի՞նչ իմաստ ունի մյուս նիստերի բոյկոտը:

– Քանիցս անդրադարձել ենք այդ հարցին. բոյկոտը մեզ համար երբևէ ինքնանպատակ չի եղել: Այդ մասին բազմիցս ասվել է նաև Ձեր թերթում:

– Աչքի առաջ ունենալով Իրաքի հարցի շուրջ ընդդիմության իրար չհամընկնող տեսակետները՝ կարո՞ղ ենք արձանագրել, որ սկզբունքային հարցերում ընդդիմությունը դեռևս չի կարող միասնական տեսակետ հայտնել:

– Հարցերը բազմերանգ են և բազմատեսակ: Իրաքի հարցում մեր տեսակետներն արտահայտվել են իմ ելույթներում: Համոզիչ հակափաստարկներ իմ կողմից բարձրացված հարցադրումների նկատմամբ մենք դեռ չենք արձանագրել: Այո՛, եղել են զգացմունքային հասկանալի գնահատականներ:

– Ո՞մ կողմից:

– Քաղաքական տարբեր ուժերի, ինչը միանգամայն ընդունելի է, քանի որ բոլորս՝ թե՛ իշխանությունները և թե՛ ընդդիմությունը միասնական են, որպեսզի ապահովվի թե՛ մեր զորախմբի և թե՛ սփյուռքահայության (լինի դա Իրաքում, Մերձավոր Արևելքում, թե այլուր) անվտանգությունը: Եթե հայության անվտանգության երաշխիքներն ոմանք տեսնում են

Իրաք զորախումբ չուղարկելու մեջ, մենք ճիշտ հակառակ կարծիքն ունենք: Այնտեղ մեր ռազմական թեկուզ սահմանափակ առկայությունն անվտանգության մեծ երաշխիքներ է ապահովում տեղի հայության համար: Պատահական չէր, որ ԱԺ-ում իմ ելույթում ասացի, որ եթե Իրաքում այսօր, երբ դեռ հայկական զորախումբ չկա այնտեղ, Աստված մի արասցե որևէ հայի մի բան պատահի, ինչպես ենք սատարելու նրանց՝ «Հայլուրի» բողոքներո՞վ, թե՞ թերթերի հրապարակումներով: Իսկ եթե այնտեղ զորախումբ կա, բնականաբար, ընկալումներն այլ են լինելու՝ հօգուտ հայերիս անվտանգության:

Զրուցեց
Թագուհի Թովմասյանը

«Իրավունք», 21 – 27.I.2005:

На ПАСЕ ложится серьезная ответственность

Сразу после принятия резолюции по нагорно-карабахскому конфликту я обратилась к члену нашей делегации Арташесу Гегамяну с просьбой прокомментировать ситуацию:

– Для меня странно, что у моих коллег по делегации были иллюзии в отношении резолюции. Вовсе не случайно в своем выступлении я заострил внимание на "непреходящей ценности", каковой является "черное золото" – нефть. Пока в мире будут руководствоваться интересами прежде всего чистогана и экономической выгоды, отбрасывая морально-нравственные ценности, все будет происходить так, как мы сегодня видели.

Я также не случайно вспомнил о премьер-министре Англии Солсбери, который еще в начале прошлого века цинично заявлял о том, что британские корабли не могут подняться на армянские горы. Сегодняшняя ситуация чревата повторением тех трагических событий. К счастью, были и другие политики – как другой британский премьер-министр Дэвид Ллойд-Джордж, который, анализируя итоги Парижской конференции, заметил, что турки изначально вели политику превращения армянского большинства в запуганное меньшинство. И это происходило с молчаливого согласия великих держав.

К сожалению, уроки истории не учтены теми политиками, которые сегодня хотят решить судьбу народа Нагорного Карабаха без его участия. Недопустимо выставлять себя поборником прав человека и при этом откровенно пренебрегать этими правами во имя корыстных целей. Это не делает чести Совету Европы.

Марина Григорян
Спецкор "ГА", Страсбург

"Голос Армении", 29.I.2005.

Ելքը խորհրդարանի լուծարումն է

– *Պարոն Գեղամյան, այսօր «Ազգային Միաբանություն կուսակցությունը» պայքարում է Ռոբերտ Քոչարյանի պաշտոնանկությանը հասնելու համա՞ր, թե շարունակում է աշնանը որդեգրած նոր մարտավարությունը, ըստ որի՝ վստահություն ունեցող իշխանություններ կարող են ձևավորվել Ռոբերտ Քոչարյանի կողմից ԱԺ-ն լուծարելու և խորհրդարանական նոր ընտրություններ կազմակերպելու դեպքում:*

– Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել է մի իրավիճակ, որի պահպանման մեջ շահագրգռված են հատկապես իշխանությանը մաս կազմող կուսակցությունները: Նրանք մտածում են՝ որքան մեծ լինեն միջազգային ճնշումները պարոն Քոչարյանի վրա, այնքան՝ նա ժամանակ և հնարավորություն չի ունենա սանձելու հենց այդ նույն ուժերի ֆինանսատնտեսական հենարանը հանդիսացող քրեածին տարրերին: Վերջին երկու տարիների Ազգային ժողովի և կառավարության գործունեությունն այլ կերպ, քան ձախողված՝ չես համարի: Իշխանություններն ընկել են իրենց իսկ լարած թակարդը: Երկրի նախագահի ինչ գործն է ստանձնել գործադիր և իրավապահ մարմինների ամենօրյա աշխատանքների օպերատիվ ղեկավարումը՝ այդ մարմինների բնականոն գործունեության երաշխավորը դառնալու փոխարեն: Հետևությունը մեկն է. կամ՝ պարոն Քոչարյանն իր այդ գործելակերպով հասկացնում է հանրությանը, որ չի վստահում կառավարությանը, կամ էլ՝ կան այնպիսի ոլորտներ, որոնց վրա գործադիրի վերահսկողությունն արգելված է: Ստեղծված վիճակից ամենադասական ելքը ԱԺ լուծարումն է և ազատ, արդար խորհրդարանական ընտրությունների անցկացումը, իհարկե, այն պայմանով, որ մինչ այդ կպատժվեն նախկին ընտրությունների ընտրակեղծիքների հեղինակները, և Ընտրական օրենսգիրքն այնպիսի փոփոխությունների կենթարկվի, որոնք նվազագույնի կհասցնեն ընտրությունները կեղծելու գործադիր և իրավապահ մարմինների համակարգված գործունեությունը: Նոր ընտրված ԱԺ-ն կձևավորի նոր կառավարություն, ինչը, անշուշտ, կառողջացնի իրավիճակը Հայաստանում: Իսկ դրան էլ կհաջորդեն նախագահական ընտրությունները:

– *Այսինքն, Ռոբերտ Քոչարյանի հրաժարականի պահանջն այլևս հրատապ չէ:*

– Ռոբերտ Քոչարյանի պաշտոնանկությունը հրամայական է, և դա կասկածի տակ չի վերցնում անգամ ինքը՝ Ռոբերտ Քոչարյանը: Հիմա ինձ համար ամենադյուրինը կլիներ, երկրում ստեղծված ծանր իրավիճակից ելնելով, ջախջախիչ քննադատության ենթարկել Ռ. Քոչարյանին և Ս. Սարգսյանին, բայց այդ ճանապարհը ընտրելու դեպքում՝ ավելի ենք ամրապնդում, երկարացնում ստեղծված վիճակի համար իրենց հետ հավասար մեղքի

բաժին ունեցող կոալիցիայի կյանքը: Ցուգցվանգային շատ զարմանալի վիճակ է ստեղծված. Քոչարյանին, Սարգսյանին չես քննադատում, ասում են՝ ընդհանուր լեզու է գտել հետները, քննադատում ես՝ նրանք էլ հենվում են այս արատավոր մեծամասնության՝ կոալիցիայի վրա: Արատավոր մեծամասնությանն ես քննադատում, արդեն ուրիշ բան են ասում՝ թույլ տեղ է գտել, մեղքը սրանց վրա է գցում, կոալիցիային է քավության նոխազ սարքում: Սակայն խնդիրն այն է, որ պետք է ամեն ինչ անել, որ շահի պետականությունը, իսկ պետականությունը կշահի ազատ և արդար ընտրությունների կազմակերպման դեպքում: Իսկ ոչ լեգիտիմ կոալիցիան կկարողանա՞ ազատ, արդար և ժողովրդավարական նախագահական արտահերթ ընտրություններ կազմակերպել: Իհարկե, չի կարող. ինչ եղանակով ԱԺ են եկել, նույն ձևով էլ կկեղծեն նախագահական ընտրությունները:

– Քաղաքական այլ ուժեր, որպես ստեղծված իրավիճակից ելք, առաջարկում են, նախ, բարեփոխել Ընտրական օրենսգիրքը, ընդունել Սահմանադրության փոփոխությունները, անցկացնել տեղական ինքնակառավարման մարմինների ժողովրդավարական ընտրություններ, 2007 թվականի խորհրդարանական ընտրություններ, իսկ 2008-ին էլ՝ հերթական նախագահական:

– Ցավոք, այդպես մտածողներին կարելի է երկու գնահատական նշանակել. կամ՝ նրանք չեն կարողանում դուրս պրծնել քաղաքական ռոմանտիզմի թմբիրից, կամ՝ զբաղված են դասական աչքակապությամբ: Նման մարդկանց պետք է հարցնել՝ գործող Ընտրական օրենսգրքո՞վ էր թույլատրված զանգվածային լցոնումները, թե՞ գործող Սահմանադրությունն է թույլ տալիս կազմակերպել շուրջկալներ և ծեծի ենթարկել խաղաղ ժողովրդին: Բարոյահոգեբանական մթնոլորտը պետք է փոխել և հաստատել օրենքի գերիշխանություն, որպեսզի 2004-ի ապրիլի 5-ին մեր կազմակերպած հանրահավաքի ժամանակ խաղաղ ցուցարարներին ծեծի ենթարկող սափրագլուխն անպատժելիությունից ոգևորված՝ այժմ էլ «Տէցի կռուգում» ավտոմատով մարդ չսպանի:

– ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը հայտարարել էր, որ տեղական ինքնակառավարման ընտրություններն ազատ և արդար անցկացնելու հիմնավորումը կարող է լինել 2006 թվականին նս ԵԽ-ի կողմից ոչ հայանպաստ որոշումների կայացումից խուսափելու գիտակցումը:

– Հավանաբար, ժողովրդավարության մասին նման պնդումներ անելու համար Արթուր Բաղդասարյանը լրջագույն հիմքեր ունի: Նրա մոտ նման մտքեր կարող էին ծնվել 2004-ի աշնանը՝ թիվ 44 ընտրատարածքում կազմակերպված ընտրությունների փորձն ուսումնասիրելիս: Երևի նա դրանով շատ է ոգևորված, մինչդեռ ինձ կոգևորեր ընտրությունների կազմակերպման ճիշտ հակառակ օրինակը:

– Իսկ ինչու՞ պետք է Ռոբերտ Քոչարյանը լուծարի Ազգային ժողովը:

– Զարգացումները լինելու են այնպիսին, որ նրանց տեսանկյունից չարյաց փոքրագույնը լինելու է հենց դա: Իշխանությունները թայմ-աութ վերցնելու լրջագույն խնդիր են ունենալու: Սակայն այդ թայմ-աութը պետք է լինի շատ հիմնավոր, ժողովրդավարական-աշխարհաքաղաքական մթնոլորտ ստեղծող տերությունների

սրտով: Եթե ամերիկյան պրեզիդենտներն առաջին ժամկետի ժամանակ մտածում և գործում են ընտրողների սիրտը շահելու միջոցով երկրորդ ժամկետն էլ ընտրվելու համար, իսկ երկրորդ ժամկետում աշխատելու ժամանակ մտածում են, թե ինչպես պաշտոնավարեն, որ իրենց անունը ոսկե տառերով գրվի ամերիկյան քոլեջների պատմության դասագրքում, ապա մեզ մոտ մեկ անգամ չընտրված նախագահը, որը երկրորդ անգամ է նույնկերպ զբաղեցրել այդ աթոռը, հավանաբար, պետք է մտածի այնպես անել, որ չարժանանա մի ամբողջ երկրի ժողովրդի և սփյուռքահայության նզովքին: Հնարավոր չէ, որ պարոն Քոչարյանը չգիտակցի, որ Վրաստանի և Ուկրաինայի զարգացումներից հետո հետխորհրդային պետություններում ժողովրդավարությունն այլընտրանք չունի: Իսկ ժողովրդավարությունն արգելակող նրա ցանկացած քայլ բերելու է նրան, որ ժողովուրդն ոչ միայն սելավի պես կսրբի-կտանի նրան, այլև կկանգնեցնի քրեական պատասխանատվության առաջ: Եթե նա այս վտանգը չի զգում, ապա ես հուշում եմ՝ այդ վտանգն անպայման չոքելու է նրա դռանը:

Ավետիս Քաբաջյան

«Հայկական ժամանակ», 8.II.2005:

Պատվիրատուն դարձյալ Գեղամյա՞նն է

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը մեր թղթակցի հետ զրույցում հայտարարել է, որ Ինտերպոլի կողմից փնտրվող էդուարդ Մադաթյանի դեմ հարուցված շինծու գործի առնչությամբ հայտնի Կծան Միշան հայտարարել է, թե Մադաթյանն իրեն ասել է, որ իշխանությունների դեմ կազմակերպվող մահափորձերի պատվիրատուն Արտաշես Գեղամյանն է եղել: «Տիգրան Նաղդալյանի սպանությունից հետո դատարանի դահլիճում հայտարարվեց, որ Գլխավոր դատախազության քննչական վարչությունը ճնշել-պարտադրել է հանցագործություն կատարածին, որ նա քննության ընթացքում հայտարարի, թե պատվիրատուները եղել են Արտաշես Գեղամյանն ու Ալբերտ Բազեյանը: Դա ես դնում եմ մի կողմ, հիշաչար չեմ: Դրանից հետո Լևոն Աբրահամյանը, որն իբր Սերժ Սարգսյանի դեմ կատարած մահափորձի համար էր մեղադրվում, դարձյալ նույնը հայտարարեց՝ ասելով, թե Գլխավոր դատախազության քննչական վարչության պետը պարտադրել-սպառնացել-հորդորել-խնդրել-համոզել է իրեն, որ ինքը կեղծ խոստովանություն տա, թե իբր պատվիրատուն եղել է Ա. Գեղամյանը: Բայց դա էլ ես մոռացա, որովհետև հիշաչար չեմ: Էդուարդ Մադաթյանի հետ կապված շինծու պատմության վերաբերյալ ոմն Կծան Միշա, որին բոլորը գիտեն ու գիտեն, թե որ սպայի գործակալն է եղել (որը, ի դեպ, մեծ առաջխաղացում ունեցավ պաշտոնական համակարգում), ասում է, թե իբր Մադաթյանն ասել է, որ Ա. Գեղամյանն է պատվիրատուն: Այդ ամենը ես դարձյալ դնում եմ մի կողմ, որովհետև հիշաչար չեմ: Մի քանի ամիս առաջ «Գոլոս Արմենիի» թերթը գրեց, թե երկու ամիս հետո Ա. Գեղամյանի դեմ մահափորձ անողները կկանգնեն դատարանի առջև: Անցնում է երկու ամիս, այո, այդ մարդիկ կանգնում են դատարանի առջև և ապօրինի զենք կրելու համար ընդամենը մեկ տարով ազատազրկվում են. ի՞նչ, սա Գլխավոր դատախազության աշխատանքի խոտա՞նն է, թե՞ կազմակերպված հետապնդում: Չեմ կարծում, թե այդ ամենը նախագահական պալատից կամ Սերժ Սարգսյանից է գալիս, իսկ եթե իրենցից չէ՝ կնշանակի, որ մենք հերթական անգամ գործ ունենք այն իրավիճակի հետ, երբ իր պաշտոնական ծառայությունների մեջ թերացող մարդը ցանկանում է երևալ առավել հավատարիմ նվիրվածությամբ առ իշխանությունները՝ իրենց դուր գալ: Պաշտոնական ծառայություններով աչքի ընկնելու փոխարեն՝ Քոչարյան-Սարգսյան քաղաքական հակառակորդի դեմ բանսարկություն անելով փորձում է դուր գալ իրենց», – հայտարարել է Արտաշես Գեղամյանը՝ ակնարկելով ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին:

«168 ժամ», 10 – 16.III.2005:

Իմաստուն ժողովրդին մեյմունությունների են դրդում

– *Վկայակոչելով մի շարք անօրինականություններ, հայտարարել էիք, թե պատրաստ եք համագործակցել իշխանությունների հետ՝ այդ խոշորածավալ հարկատուներին օրինական դաշտ բերելու համար: Տարեսկզբին Ռոբերտ Քոչարյանը հանդիպեց գործարարների, հարկային ու մաքսային ծառայությունների աշխատակիցների հետ՝ սպառնալով գործել բացառապես օրենսդրական դաշտում: Չե՞ք կարծում, որ արդեն ուշացել եք համագործակցության ձեր առաջարկով, և ինչո՞ւ եք որոշել իշխանություններին նման ծառայություն մատուցել:*

– Իմ ասվածի ենթատեքստից միտումնավոր հանվում է իմ խոսքի առանցքը, որը, բարեբախտաբար, հեռարձակվել է ԱԼՄ-ով: Իմ ելույթում ուղղակիորեն մատնանշել եմ այն աղբյուրները, որոնք եթե հարկային դաշտ բերենք՝ բյուջեն կկրկնապատկվի: Մասնավորապես հիշատակել եմ, որ 2003 թ. մաքսային և հարկային ծառայությունների ուշադրությունից «վրիպել» է 151.000 տոննա ցորեն: Ասել եմ, որ յուրաքանչյուր տոննան հաստատագրված արժեք ունի՝ 145 ԱՄՆ դոլար, որի 22 %-ը պետք է տային ԱԱՀ, 10%-ը՝ մաքսային տուրք: Դա բյուջե չի՛ մտել, իսկ դա 4 միլիարդ գումար է կազմում: Ասել եմ, որ 2005 թ. միայն հունվար ամսին մաքսային վարչարարության բարելավման արդյունքում 2 մլրդ դրամ ավելի է մուտքագրվել բյուջեի եկամտային մաս, 1 մլրդ 100 մլն դրամ էլ՝ Սոցիալական ապահովության հիմնադրամ: Այսինքն՝ 3 մլրդ 100 մլն դրամ՝ մեկ ամսվա ընթացքում: Ավելին, համաձայն Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների, 2004 թ.՝ 2003 թ. համեմատ, աշխատատեղերը 700-ով կրճատվել են: Բոլոր լրատվամիջոցները, չգիտես ինչու, ենթատեքստից կտրում են իմ խոսքը. ես ասել եմ՝ այդ հանցագործությունները ջրի երես հանելուն, մեղավորներին ի հայտ բերելու գործում, եթե իշխանություններն իրապես պայքար ծավալեն, պատրաստ ենք նրանց աջակցել, որովհետև մենք մեր ժողովրդի թշնամին չենք, իսկ այդ գումարները ժողովրդից են կողոպտվել: Թող գնան, մաքսայինի պետին հարցնեն՝ ո՞վ է հիմնական ցորեն ներկրողը, հարկայինի պետին հարցնեն՝ բա էս ցորենը, որ ներկրում են, հետո հրուշակեղեն է դառնում, հետո պատրաստի ուրիշ արտադրանք, ու դրանից ոչ ԱԱՀ է գանձվում, ոչ մնացած հարկերը, դրա հետևում ո՞վ է կանգնած: Դա թողնում են մի կողմ, ասում են՝ Գեղամյանը պատրաստ է համագործակցել Քոչարյանի հետ: Գեղամյանն ասել է, որ պատրաստ է համագործակցել անգամ իսկ սատանայի հետ, եթե դա պետք է ազգիս: Իսկ այդ գումարներն ազգիս պետք են, որ մտնեն բյուջե:

– Դուք նախկինում էլ եք տարբեր ամբիոններից նման կարգի փաստեր վկայակոչել, ինչո՞ւ այն ժամանակ չէիք մտածում, որ հանուն ազգի կարելի է նաև սատանայի հետ համագործակցել:

– Որովհետև, երբ 2004 թ. թվերը համեմատում եմ 2003 թ. հետ, դրա վերաբերյալ պաշտոնական տեղեկագիրն ընդամենը 20 օր առաջ է հրապարակվել, և ես այդ վերլուծությունն արել եմ վերջին 20 օրերի ընթացքում:

– 2000-2001 թթ. նման բան չի՞ եղել:

– 2003 թ. բյուջեն շրջանցած 150.000-անոց ցորենի խմբաքանակն այն է, որ ապացուցել է վիճակագրական ծառայությունը: Հիմա փաստն եմ ասել: Փոխանակ փաստին ընթացք տաք, ասում եք՝ ինչո՞ւ այն ժամանակ չէիք ասում, որ պատրաստ եք սատանայի կողքը կանգնել: Այն ժամանակ դեռ 2003 թ. պաշտոնական տվյալները, թե ցորենի ռեսուրսն ինչքան է եղել՝ չկար: Չկար նաև 2004-ինը, որ կարողանայի համեմատեի, վերլուծություն անեի: Բացի այդ, 2003 թ. նախագահական ընտրություններ էին, և եթե դու գտնում ես, որ կարող ես այդ պաշտոնը զբաղեցնողի հետ համագործակցել, էլ ինչո՞ւ ես թեկնածությունդ դրել: Սա է պատճառը:

– Ձեր վերջին հայտարարության մեջ փաստարկելով մաքսային և հարկային ծառայությունների թույլ տված անօրինականությունները, ասել էիք, թե դրանց հետևում կանգնած հանցավոր տարրերին չբացահայտելն իրավապահ մարմինների և առաջին հերթին՝ Գլխավոր դատախազության անգործության հիմնավոր ապացույցն է: Ինչո՞ւ եք սլաքն ուղղել հենց դատախազության վրա, եթե դրանում, ինչպես դուք եք ասում, մեղավոր են հարկային և մաքսային ծառայությունները: Արդյոք դա քաղաքական դրդապատճառներ չունի՞:

– Համատարած և շարունակական բնույթ կրող օրինախախտումների պարագայում, եթե այդ ամենը հատվածաբար չէ, այլ շարունակական է, և հանրապետությունում բոլորն այդ մասին գիտեն, ու ոչինչ չի ձեռնարկվում, բնականաբար, պարոն Քոչարյանն օր առաջ պետք է անվստահություն հայտնի գլխավոր դատախազին: Ուրիշ փաստեր էլ կարող եմ բերել. բերդում բանկետներ են անում, թեթևաբարո կանանց էլ տանում, պատիվ են տալիս: Նույն «Տէցի կռուգի», ապրիլի 5-ի պատմությունը... Եթե 250 ոստիկանի առաջ ծեծուջարդ են անում, ոստիկանը չի միջամտում, բա այդ ոստիկանին ո՞վ պետք է պատասխանատվության ենթարկի: Ուստի սլաքը երբեք ու երբեք ուղղված չէ Գլխավոր դատախազությանը: Ուշադրություն է հրավիրված նախագահին, թե ինչ է կատարվում երկրում այն մարմինների թողտվության պայմաններում, որոնք կոչված են առաջինները կանխելու այն: Այդ ի՞նչն էր խանգարում, որ նրանք էլ նստեին-վերլուծեին վիճակագրական տվյալները: Իսկ ինչ վերաբերում է Գլխավոր դատախազությանը, ապա թաղապետարաններում հայտարարություններ են փակցվում, որ գնան, մասնակցեն շուրջպարի, 2000-ական դրամ ու մի հատ էլ գլխարկ կտան, որ թեք դնեն, ման գան: Բա դա թաղապետարանների գո՞րծն է: Չե՞ն մտածում՝ թաղապետարաններին այդ գումարները որտեղի՞ց, որ հավաքագրեն, տանեն ժողովրդին պարացնեն: Իսկ դա արվում է Գլխավոր դատախազու-

թյան անմիջական հովանավորության ներքո: Թող զբաղվեն: Հազարավոր ուսանողներ են տանելու այնտեղ պարացնեն: Եթե այդքան գումար ունեն, թող ձեռքները խղճներին դնեն, ու այն ուսանողները, որոնք վարձը չմուծելու համար հեռացվել են, նրանց փոխարեն վարձ փոխհատուցեն:

– Հիմնավո՞ր չեն այն պնդումները, թե այդ շուրջպարը լինելու է ազգի համախմբման միջոցառում:

– Սյունեցիների հայրենակցական միությունն էլ Խուստուփ լեռան շուրջն է պարելու, ռնդամալցիներն էլ ծաղկաձորցիների հետ միասին Քյաչալ սարի շուրջն են պարելու, հետո՞: Ի՞նչ է, ուզում են, որ էս ժողովուրդն անլուրջ ազգի տպավորություն թողնի՞: Օսկանյանն էլ հպարտությամբ ասում է՝ ժողովուրդ ջան, աչքալուսանք ունենք, աշխարհի քյասիբների շարքում ենք, բայց փոխարենը մտել ենք «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի մեջ, և մեզ մեծ գումարներ են տալու, որ էս քյասիբությունից դուրս գանք: Այս քյասիբ ժողովուրդն էլ, փոխարենն իր իշխանությունների ուղեղը շարժի, միասնության ելքը շուրջպարի մեջ է գտել: Հետո՝ դա կռապաշտություն է, լա՛վ, այդ մարդիկ Աստվածաշունչ չե՞ն կարդում: Չէ՞ որ սարի շուրջն էին պարում, որ Աստված բոլորին պատժեց ու վրան էլ ոսկե ցլիկ է դրված:

– Չե՞ք կարծում, որ եթե այդ միջոցառումը կռապաշտության հետ որևէ աղերս ունենար, ապա Ամենայն հայոց կաթողիկոսը, որը նույնպես ապարանցի է, կարգելեր այն:

– Հանգիստ թողնենք Ամենայն հայոց կաթողիկոսին. մնում է արդեն նրան էլ քաղաքականացնենք: Այն, որ Գլխավոր դատախազությունը քաղաքականացված է ու նախընտրական շտաբի է վերածվել, բոլորն էլ գիտեն արդեն: Հիմա մնում է եկեղեցին էլ խառնենք այդ գործին, չի կարելի: Չի կարելի կիսաքաղցած մարդկանց համախմբել լեռան շուրջը: Գաղափար չլինելու պայմաններում, երբ սնանկ է պետական գաղափարախոսությունը, հարկադրված նման մեյմունությունների են դրդում մեր իմաստուն ժողովրդին: Արդեն կատակում են, թե Գլխավոր դատախազությանը միանալու են նաև հարկային ու մաքսային մարմիններն, ու շուրջպարը դառնալու է «Բերդ» պար, ու այդ 160.000 մարդու շալակը մեկական մարդ էլ է բարձրանալու: Բա կարելի՞ է այս ազգին, որ ժամանակին ճանաչել են Ա. Խաչատրյանով, Վ. Սարոյանով, Մ. Սարյանով և այլն, հիմա զուռնա-տրնգիով ճանաչեն, այն էլ՝ կիսաքաղց վիճակով: Ավելի մեծ թշնամանք մեր ազգի նկատմամբ կարելի՞ էր մտածել, որ դրանք են մտածել: Հասկանում եմ՝ ընտրակեղծիքներ անելու համար էս գլխից հիմքեր են ստեղծում, բա լավ, էս ազգի ճակատագրի մասին չե՞ն մտածում: Չե՞ն մտածում՝ ինչ վտանգավոր հաղթաթղթեր են տալիս մեր դարավոր «բարեկամներին», երբ երկրի ներսում ստեղծում են «Արցախ», «Սյունյաց արծիվներ», «Նիգ-Ապարան» հայրենակցական միություններ: Է, վաղը թուրքերն ու ազերիները կասեն՝ այ մարդ, էս մարդիկ իրար մեջ են իրարից բաժանված, էն գլխից են սեպարատիստ, որովհետև նույն երկրի մեջ 3 մլն ազգը 10 հայրենակցական միություն ունի, բա որ ասում էինք Ղարաբաղը սեպարատիստների՞նն է: Դա կճանաչեն ազգային հիվանդություն, և

դրա տակից ոչ ոք դուրս չի գա: Վաղն ապարանցին կասի՝ իմ հողին վտանգ չի սպառնում, ինչի՞ պիտի գնամ Ղարաբաղում կռվեմ, թող «Արցախ» միությունը կռվի: Այդպես էլ լինելու է, որովհետև միավորում է ոչ թե գաղափարը, այլ սարի շուրջ պարելը: Դե թող գնան պարեն, է, հետո՛: Մրջյունի ու ճպուռի պատմությունը գալու է ճիշտ ու ճիշտ մեր գլխին: Էն ասում է՝ ողջ ամառը երգեցիր, հիմա էլ գնա՝ պարի, դա է, որովհետև պետական մտածելակերպից զուրկ, աշխարհի հնարավոր զարգացումներից անտեղյակ մարդիկ են: Ինչի՞ սրա մասին չեք խոսում: Փոխանակ Տոյնբիի գործերը կարդան, Ֆուկույամա կարդան, փորձեն հասկանալ՝ այս աշխարհի զարգացումները որոնք են, մտածում են հազարապետերի, հարյուրապետերի ու տասնապետերի մակարդակով: Այսինքն՝ առաջ դեպի 19-րդ դար:

– *Շուրջպարի կազմակերպիչներին մոտ կանգնած անձինք պնդում են, որ Աղվան Հովսեփյանի նկատմամբ ձեր քննադատությունները պայմանավորված են այն մտավախությամբ, որ նա կարող է լուրջ ընտրազանգված կուտակել իր կողքին:*

– Դուք ձեր հարցով ապացուցեցիք, որ մի օր անգամ չի կարելի գլխավոր դատախազին թողնել իր պաշտոնին, որովհետև դա պետք է լինի ընդգծված ապաքաղաքական մարմին: Իսկ եթե արդեն իսկ իր շրջապատն ընդունում է, որ դա քաղաքական նպատակներ ունեցող կազմակերպություն է, ապա դա վկայում է, որ մեր երկիրը շատ լուրջ հիվանդ է:

– *Կարելի՞ է ենթադրել, որ Նապոլեոն Ազիզյանը դատախազի նկատմամբ ունեցած ձեր դիրքորոշումների պատճառով հեռացավ ԱԺ խմբակցությունից:*

– Ն. Ազիզյանը թասիբով մարդ է, ու մեր բոլոր կուսակիցներն ասում են, որ նա անպայմանորեն մոտ օրերս դիմում կտա և կհրաժարվի պատգամավոր լինելուց: Չեմ կարծում, թե նա չի գիտակցի, որ զբաղեցնում է ԱՄ ցուցակով իրենից հետո եկող շատ արժանավոր մի մարդու տեղը: Իր հարցազրույցը, որտեղ նա խոսում էր իր թասիբի մասին, ինձ ոգևորում է: Ինձ թվում է՝ նա կգիտակցի, որ ինքն ընտրվել է բացառապես շնորհիվ ԱՄ կուսակցության, և հիմա այն մարդիկ, ովքեր մեր կուսակցության պայքարի նվիրյալներն են, իրենք ըստ արժանվույն կներկայացվեն ԱԺ-ում:

Զրուցեց

Լիլիթ Սեյրանյանը

«168 ժամ», 10 – 16.III.2005:

Զբաղվի՛ր Կալմիկիայի տափաստաններով

Կալմիկիայից ՌԴ խորհրդի սենատոր Լևոն Չախմախչյանը «168 ժամ» շաբաթաթերթին տված հարցազրույցում նշել էր, որ թեև 30-35 տարի ճանաչում է Արտաշես Գեղամյանին, հարևաններ են եղել, սակայն *«նա շատ է փոխվել, և գործող նախագահի փոխարեն նրան չեմ տեսնում»:*

«Առավոտի» հարցին ի պատասխան՝ չի՞ կարողացել իր նախկին հարևանին համոզել, որ արժանի այլընտրանք է, պրն Գեղամյանը հիշեցրեց, թե Չախմախչյանը նաև խոստովանել է, որ 16 տարի չի բնակվում Հայաստանում. «Նա կտրվել է մեր իրականությունից: Եվ իմ կարծիքով՝ սենատոր Չախմախչյանը պետք է Կալմիկիայի տափաստանների խնդիրներով զբաղվի հիմա: Հասուն քաղաքական գործիչը (չնայած՝ ես նրան այդպիսին չեմ համարում), այնուամենայնիվ, քանի որ սենատորի կոչում է կրում՝ պիտի հասկանար, որ տվյալ դեպքում ինքը միջամտում է ինքնիշխան հանրապետության ներքին գործերին, ինչն իրենց թույլ չեն տալիս անգամ ՌԴ բարձրաստիճան պաշտոնյաները: Այստեղ ինքս ինձ հակասեցի՝ այդ պաշտոնյաները կայացած քաղաքական գործիչներ են, ի տարբերություն...»:

Ա. Ի.

«Առավոտ», 18.III.2005:

Իշխանությունը փորձում է կիսել պատասխանատվությունը

– «Ազգային Միաբանությունը» հայտարարությամբ «անպտուղ» է որակել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի շուրջ ԱԺ-ում կազմակերպվելիք լսումները և նշել, թե դրանք ուշադրությունը շեղելու միջոցներ են: Մինչդեռ նման լսումների անհրաժեշտությունը կարևորվում էր մինչև Դեյվիդ Աթկինսոնի զեկույցի ԵԽ ԽՎ-ում քննարկումը: Արդյոք դրանք ուշացա՞ծ են այսօր, երբ Գորան Լենմարկերի՝ ԼՂ հարցի շուրջ զեկույցը քննարկվելու է ամռանը՝ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովում, որի մի պատվիրակն էլ Դուք եք:

– Այնպիսի հույժ կարևոր հարցի շուրջ խորհրդարանական լսումները, ինչպիսին է ԼՂ-ի հիմնահարցի հնարավոր լուծումը, պետք է բխեին Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգից: Պետք է վերջապես ասենք՝ Հայաստանի Հանրապետությունն իր արտաքին քաղաքական կողմնորոշումներում և արժեքային համակարգով ի՞նչ մոդել է ընտրել, որտե՞ղ ենք ուզում տեսնել մեր երկիրը 2010-ին, քաղաքակրթական ո՞ր մոտեցումներն են դառնալու գերիշխող: Այդ ամենը պետք է համադրենք տարածաշրջանային հնարավոր զարգացումների, Ադրբեջանի որդեգրած քաղաքականության հետ, որ պայմանավորված է այն խոշորածավալ տնտեսական ծրագրերով, որ իրականացվելու են այդ երկրում: Այս համատեքստում՝ պետք է կարողանանք տեսնել, թե ինչ քաղաքականություն են որդեգրելու աշխարհի հզորները, առաջին հերթին՝ ԱՄՆ-ն, ՌԴ-ն և Եվրամիությունը, և հասկանանք, թե ինչը չի հակադրվում մեր երկրի պետական շահերին: Այս ամենը եթե չի արվում՝ ցանկացած լսում կարող է հիշեցնել միայն և միայն ոչ պրոֆեսիոնալ մարդկանց «աչքերին թոզ փչել»:

– Ազդարարվել է, թե ԼՂ հիմնախնդրի կարգավորման ուղիների շուրջ լսումների ընթացքում անդրադարձ է արվելու «տարածքներ՝ կարգավիճակի դիմաց» և «տարածքներ՝ խաղաղության դիմաց» մոտեցումների առավելություններին ու թերություններին, գնահատական է տրվելու արված առաջարկություններին և միջնորդական առաքելությունների արդյունավետությանը: Անդրադարձ է արվելու կարգավորման երկարաձգման հնարավոր հետևանքներին և պատերազմի վերսկսման հավանականությանը: Արդյոք այս ամենը պակա՞ս կարևոր եք համարում, քան այն խնդիրները, որ մատնանշեցիք:

– Անշուշտ, այդ բոլոր խնդիրները կարևոր են: Սակայն նրանք առնվազն 11 տարի ուշացումով են քննարկման առարկա դարձնում այս ամենը: Ուստի, պատահական չէ, որ մեր հայտարարության մեջ առանձնահատուկ շեշտել ենք, թե փորձում ենք հայի հետին

խելքով առաջնորդվել, երբ հասկանում ենք, թե չորս կողմից վտանգված է ԼՂ հիմնահարցի լուծումը: Այս բոլոր խնդիրները պիտի բաղկացուցիչը դառնային հայեցակարգային այն մոտեցումների, որոնք պետք է մատնանշված լինեին ազգային անվտանգության հայեցակարգում: Այլ հարց է, որ անցած 11 տարիների ընթացքում այդ հայեցակարգը կարող էր ենթարկվել փոփոխությունների:

– Լսումները կարող էին արդյունավետ լինել, եթե դրանց բոլոր մասնակիցները տիրապետեին բանակցությունների մանրամասներին: Սակայն այն պայմաններում, երբ բնավ այդպես չէ՝ արդյոք այդ քննարկումները չե՞ն վերածվի «պարկի մեջ գտնվող կատվի» մասին դատողությունների, երբ բոլորը կխոսեն մի բանի մասին՝ չիմանալով, թե իրականում ինչ է դա:

– Տեղեկատվական ներկա միջոցների պայմաններում աստվածաշնչյան հայտնի խոսքն առավել քան արդիական է, և, իրոք, չկա որևէ գաղտնի բան, որ հայտնի չդառնա: Եթե մեր իշխանավորները որդեգրել են իրենց հոգեհարազատ՝ ոչ այն է՝ կենդանի, ոչ այն է՝ թռչուն, ջայլամի քաղաքականությունը, և գլուխներն ավազի մեջ են մտցրել՝ ենթադրելով, թե հետույքը չի երևում հանրությանը՝ սխալվում են չարաչա՛ր: ԼՂ հարցում իշխանության ձախողումներն ակնհայտ են, և դրանք, ավա՛ղ, ամրագրվում են հատկապես վերջին տարվա ընթացքում միջազգային ամենատարբեր կազմակերպությունների, ցավոք, շատ դեպքերում՝ միաձայն ընդունվող որոշումներում: Բազմաթիվ օրինակներից մեկն էլ ԵԽ ԽՎ բանաձևն է: Եվ ինչքան էլ ցանկանում են դիակին գեղեցկուհու տեղ անցկացնել, միևնույն է՝ չի ստացվում, քանի որ չափազանց ոչ հայանպաստ փաստաթուղթ է: Եվ պատահական չէ, որ Ադրբեջանի գործիչները՝ Իլհամ Ալիևից սկսած, արդեն իսկ անընդհատ մատնանշում են այդ բանաձևը:

Ու երբ ի հայտ է եկել այն ամենը, ինչ իշխանությունը փորձում էր 7 տարի շարունակ թաքցնել հանրությունից՝ հիմա արդեն հարկադրված են հետին թվով համոզել ոչ թե միջազգային հանրությանը, այլ սեփական ժողովրդին, թե, իբր, մենք արդար ենք, բայց մեզ չեն հասկանում դրսում: Այս լսումների բուն նպատակն այդ է՝ իշխանություններն ուզում են սեփական ժողովրդին, որ բանակցային ամբողջ գործընթացի ընթացքում անտեսված ու արհամարհված էր, հիմա ոգեկոչել լինելու իրենց ձախողումների դատապաշտպանը: Եվ հետն էլ, որ ամենաճիզվիտականն է, փորձում են պատասխանատվությունը կիսել ԼՂ խնդրի հանգուցալուծման այն վտանգավոր զարգացումների համար, որոնց պատճառը հենց իրենք են: Նրանք հիշեցնում են կկվի պատմությունը, որն անվերջ բույնն է փոխում, քանի որ՝ ուր գնում է, տարածվում է գարշահոտություն: Քաղաքական նման խորամանկ հնարքները, որ գործադրում է իշխանությունը՝ ինչպես ամենահին մասնագիտությունը, արդեն չարչրկված ու մաշված են, ուստի՝ չեն գործի:

– «Ազգային Միաբանությունը» չի մասնակցելու նաև «Ի պաշտպանություն ԼՂՀ»-ի այսօր կայանալիք համաժողովի՞ն:

– Մեր կուսակցությունն այդ կազմկոմիտեի անդամ չէ: Խնդիրն այն է, թե բավակա՛ն է ինքներս մեզ համոզենք, թե հայ քրիստոնյաներ ենք ու մենք ճիշտ ենք: Բավակա՛ն է

ինքներս մեզ համոզենք, թե ԼՂ հարցն արդարացի, ազգի ինքնորոշման և ազատագրական պայքարի գագաթնակետ ու պսակ հանդիսացող խնդիր է: Մենք դա պիտի համոզեինք միջազգային հանրությանը, և ոչ թե միայն այժմ՝ խուճապահար վիճակում, երբ արդեն մեր դռանն է չոքել անբարենպաստ հանգուցալուծումը: Թող ոչ թե «Ընտանեկան զառը» կամ «Ընտանեկան լոտոն» գովերգող հոլովակներ նկարահանեին, այլ ազատագրական պայքարի արդարացիությունը ցուցադրող վավերագրական, գոնե կարճամետրաժ կինոնկարներ: Փոխանակ ճոխ քեֆեր անեին Սարդարապատում, այժմ էլ միլիոններ ծախսեն Արագածի շուրջը «Բերդ» պար կազմակերպելու համար՝ այդ միջոցները թող տրամադրեին, որ, ասենք, ԵԽ ԽՎ-ում Հայաստանի պատվիրակությունը 2001-ին Եվրախորհրդին անդամակցությունից սկսած 54 երկրների պատվիրակներին հեղեղեր մեր ճշմարտացիությունն ապացուցող փաստարկներով:

Հարցազրույցը՝
Աննա Խսրայելյանի

«Առավոտ», 18.III.2005:

Սատանային քահանայի հագուստն էլ չի օգնի

Ցցված ականջները, միևնույն է, կմատնեն

-Օրերս ԱՄՆ-ի հեղինակավոր վերլուծական կենտրոն «Stratfor»-ն իր ինտերնետային էջում հրապարակել էր Հայաստանին վերաբերող նյութեր, որոնցից կարելի էր հետևություն անել, որ Ռ. Քոչարյանը և Ս. Սարգսյանը որդեգրելով ընդգծված արևմտամետ քաղաքականություն՝ կարող են պահպանել իրենց տակ երերացող «աթոռները»: Այս հարցին ի պատասխան «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը տվեց հետևյալ մեկնաբանությունը:

-Ռ. Քոչարյանը և Ս.Սարգսյանը, իհարկե, անզոր են իշխանությունը պահել, անգամ իսկ, եթե ձև անեն, թե ավելի արևմտամետ են, քան իրենք՝ արևմտյան հայտնի ժողովրդավարությունները: Ի՞նչ է նշանակում վարել ընդգծված արևմտամետ քաղաքականություն: Դա առաջին հերթին նշանակում է պետականորեն հովանավորել արևմտյան արժեքների արմատավորումը մեր կյանքի բոլոր բնագավառներում: Այն է՝ ավտորիտարիզմի գրկում հայտնված Հայաստանի Հանրապետությունում անշրջելի դարձնել ժողովրդավարացումը ներքին և արտաքին քաղաքականության ոլորտներում: Մղել անողոք պայքար կոռուպցիայի և կաշառակերության դեմ, մարդու իրավունքների, օրենքների ոտնահարմանը հակադարձել օրենքի գերիշխանությունը: Կլանային, մենաշնորհային տնտեսությունը փոխարինել օրենքով հավասար, մրցակցային պայմաններում գործող տնտեսվարմամբ: Ապահովել դատական իշխանությունների՝ գործադիրից անկախ գործունեությունը, հասնել չորրորդ իշխանության լիակատար ազատությանը և անկախությանը: Այսինքն՝ ձերբազատվել այն բոլոր արատներից, որոնց կրողներն ու հովանավորն են այս իշխանությունները, որոնք անընդունելի են արևմտյան քաղաքակրթության համար:

Հակառակ դեպքում, պատկերավոր ասած, դա կլինի նույնը, եթե սատանային հագցնեն քահանայի զգեստներ և փորձեն խցկել դրախտ: Բա այդ դեպքում, որտեղ են դրախտի դարպասների պահապան հրեշտակները… Դրախտի սպասավորներին սատանայական արքունիքից չէ, որ զինվորագրում են: Եթե ավտորիտար իշխանազավթիչները՝ հռչակելով արևմտամետություն, կարողանան երկարաձգել սեփական արատավորված վարչակարգերը, ապա իրականություն կարող են դառնալ ամերիկացի հայտնի քաղաքական գործիչ (90-ականների սկզբին ԱՄՆ նախագահի թեկնածու) Պատրիկ Բյուկենենի «Արևմուտքի մահը» բեստսելլերում շարադրված մտքերը:

«Առավոտ», 5.IV.2005:

Նորից հայտնվել ենք «պատերա՞զմ, թե՞ խաղաղություն» ելակետում

Արտաշես Գեղամյանին խնդրեցինք պատասխանել մի քանի հարցերի: Ինչպե՞ս է մեկնաբանում այն իրողությունը, որ 8 հազար քառակուսի կիլոմետր տարածքով ԼՂՀ-ի գոյությունը 1998-ին կայացած Անվտանգության խորհրդում լիովին հնարավոր համարող իշխանության ղարաբաղյան թևի ներկայացուցիչները «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր: Կարգավորման ուղիներ» թեմայով խորհրդարանական լսումների ընթացքում արդեն հանդես էին գալիս «անվտանգության գոտի» կազմող տարածքները պատերազմի չվերսկսման երաշխիքների դիմաց զիջելու օգտին: Ինչի՞ վկայությունն է, որ Լևոն Տեր-Պետրոսյանին փուլային կարգավորման տարբերակի համար քննադատող-ներն այդ լսումների ընթացքում խոստովանեցին, թե դա արհեստական վեճ է: Ինչո՞ւ, եթե առաջ բոլոր տարածքներն էին անխտիր անվանվում «ազատագրված»՝ այժմ տարբերա-կում է արվում, թե, օրինակ, Աղդամը հայկական չէ (միևչդեռ նախկինում *պետել էին անգամ Աղդամի հին հայկական անվանումը՝ Տիգրանակերտ*): Արդյոք այս ամենը վկայությո՞ւնը չէ, որ տարածքների շուրջ կան ինչ-ինչ պայմանավորվածություններ, և նման լսումներով իշխանությունը ցանկանում է հաշտեցնել այդ գաղափարին: Եվ վերջապես, հաշվի առնելով այն փաստը, որ պաշտպանության նախարարն էլ հաստատեց, թե ադրբեջանցի-ներն առաջացել են և նրանց ու մեր դիրքերի տարբերությունը որոշ տեղերում հասել է 30-35-ի՝ արդյոք չկա՞ ռազմական գործողությունների վերսկսման վտանգ:

Հարցաղրումներին ի պատասխան պրն Գեղամյանն ասաց. «Այս լսումներին գնահա-տական տալուց առաջ՝ մտովի պետք է տեղափոխվենք 1997-ի նոյեմբերի 2, երբ «Հայաս-տանի Հանրապետություն» և այլ թերթերում զետեղվեց Լևոն Տեր-Պետրոսյանի վերլու-ծական հոդվածը՝ «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը»: Եվ եթե այդ տեսանկյունից դիտարկենք՝ մի քանի հետևություններ կան, որոնք պարտավոր ենք արձանագրել ի սկզբանե: Նախ՝ այդ հոդվածից անցած 7,5 տարիներից հետո էլ ճիշտ նույն ելակետին ենք, ինչ 1997-ին, քանի որ, ինչպես այն ժամանակ առաջարկվող խաղաղ կարգավորման ծրագրին չառաջարկվեց այլընտրանքային լուծում՝ հիմա էլ լսումների ընթացքում դարձյալ չառաջարկվեց հակամարտության կարգավորման այլընտրանքային որևէ ծրագիր: Հիշատակվեց միայն տեխնիկական գործողությունների շարքը: Սինչդեռ այդպես էլ չարձարձվեց հարցի լուծման գաղափարախոսությունը, որը ոչ միայն ընդունելի և հասկանալի կլիներ մեր ազգաբնակչությանը, այլ նաև ծանրակշիռ դերակատարում կունենար միջազգային այն կազմակերպություններում, որոնք այսօր ի զորու են լուծել

այս խնդիրը:

Իրականում ունենք ընդամենն այն, որ Հայաստանի Հանրապետությունն ինչպես 16 տարի առաջ, երբ սկսվեց Շարժումը՝ էլի պնդում է ազգերի ինքնորոշման սկզբունքը, իսկ ադրբեջանական կողմը դարձյալ տարածքային ամբողջականության սկզբունքի շրջանակներում է տեսնում խնդրի լուծումը: Հաջորդող տարիները պետք է անգամ ծույլերի համար հասկանալի դարձնեին այն ճշմարտությունը, թե այս հարցը միջազգային իրավունքի դաշտում չէ, որ լուծվելու է: Այն ունենալու է քաղաքակա՛ն լուծում, ինչի վառ ապացույցն է, որ այս հարցով զբաղվում են քաղաքական և ոչ իրավական մարմինները: Սա նշանակում է, որ մեր ամբողջ դիվանագիտական ու քարոզչական պայքարը պետք է ուղղված լինի այդ միջազգային կազմակերպություններին համոզելու և ապացուցելու ղարաբաղյան հիմնահարցում հայկական կողմի մոտեցումների ճշմարտացիության մեջ:

Հիմա փորձենք այս տեսանկյունից վերլուծել, թե արդյոք հասա՞նք այդ նպատակներին՝ կազմակերպելով քննարկումներ: Ի սկզբանե ասեմ, որ լսումներն ամենևին մտադրված չէր անցկացնել, որ հայ հանրությունն իմանա, թե ինչ մոտեցումներ է հղացել և հասունացրել մեր քաղաքական ընտրանին և առանձնապես այդ հարցին իրազեկ մարդկանց շրջանակը: *Լսումների բուն նպատակն էր դիվանագիտական կորպուսին որոշակի բաներ հասկացնելը*: Եվ Վարդան Օսկանյանն անզգուշություն ունեցավ ասելու, որ ուղղակի չի պատկերացնում, թե ինչպես կարող ենք ողջ ազգով բանակցել և ողջ ազգին տեղյակ պահել բանակցությունների մանրամասների մասին: Իսկ Արմեն Ռուստամյանն իր հերթին դաշնակցականին հատուկ ազնվությամբ խոստովանեց, թե լսումների հարցը մի քանի անգամ քննարկել են Ռոբերտ Քոչարյանի հետ, և նպատակահարմար է համարվել, որ պաշտոնական տեսակետները ներկայացնեն Վարդան Օսկանյանն ու Սերժ Սարգսյանը: Այսինքն՝ հերթական անգամ ապացուցվեց, որ Ազգային ժողովն իբրև գործիք է օգտագործվել, իսկ հարցը, ինչպես և «Ազգային Միաբանությունը» հայտարարել էր դեռ լսումների նախաշեմին՝ վճռվել էր Քոչարյանի կողմից:

Ի՞նչ խնդիրներ փորձեցին լուծել պարոնայք Քոչարյանը և Սերժ Սարգսյանը: Առաջին խնդիրը. պրն Քոչարյանը դիվանագիտական անձնակազմի և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների առջև արդեն կարող է երևալ իբրև Հայաստանի քաղաքական ընտրանու ամենահավասարակշռված քաղաքական գործիչը, որին այս հարցում իր «կառուցողական» դիրքորոշումների պատճառով քննադատում են թե՛ ընդդիմադիրները և թե՛ իր հենարանը հանդիսացող քաղաքական կուսակցությունները, և ինքը հարկադրված է դիմակայել եռակողմ՝ ներսից ու նաև միջազգային ճնշումներին: Խնդիր էր դրված ցույց տալ միջազգային հանրությանը, որ տեսեք, եթե հանկարծ իշխանափոխություն լինի՝ ինչպիսի տրամադրություններ կարող են գերիշխող դառնալ Լեռնային Ղարաբաղի հարցում, ուստի եթե միջազգային հանրությունը շահագրգիռ է այս խնդրի խաղաղ կարգավորմամբ՝ պետք չէ տուրք տալ ժողովրդավարացման դրոշը պարզած ընդդիմադիր քաղաքական ուժերին:

Երկրորդ խնդիրը, որ առաջադրված էր՝ հետևյալն էր. Սերժ Սարգսյանին

միջազգային հանրությանը ներկայացնել իբրև դարձյալ խաղաղասեր, հավասարակշռված ու խոհեմ քաղաքական գործիչ և անքակտելի դարձնել Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան զույգի գոյությունը Հայաստանի քաղաքական իշխանության բուրգի վերևում:

Երրորդ խնդիրը, որ կրկին ու կրկին տեղիք է տալիս լուրջ մտահոգության, այն է, որ փակուղի մտցված բանակցություններն այսօր փորձում են ներկայացնել իբրև հաղթանակ: Եվ Ադրբեջանի, ավա՜ղ, իրոք, դիվանագիտական հաջողությունն է, որ Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորմանը կարողացել է մասնակից դարձնել այնպիսի միջազգային կազմակերպությունների, ինչպիսիք են Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (իր աթկինսոնյան ոչ հայանպաստ զեկույցի հետևանքով ընդունված բանաձևով), նաև Իսլամական կոնֆերանսը (որ միաձայն ընդունեց խիստ հակահայկական բանաձև և դրա օգտին քվեարկեցին նաև Հավաքական անվտանգության պայմանագրի անդամ-երկրները՝ Հայաստանի ռազմաքաղաքական դաշնակիցները, այն է՝ Ղազախստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը), ու նաև ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի օրակարգ մտավ այս հարցը: Ինչպե՞ս է մեկնաբանում մասնավորապես Սերժ Սարգսյանն այս իրողությունը. նա ասում է՝ ուրեմն նշանակում է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբում հաջողություններ ունենք, ուստի և Ադրբեջանը փորձում է խախտել ստատուս-քվոն և խնդրի քննարկումը տեղափոխել այլ ատյաններ: Տրամաբանական հարց է առաջանում՝ փակուղի մտցված հարցը կարելի՞ է արդյոք համարել հաջողություն, և արդյոք միջազգային հանրությունը պատրա՞ստ է երկար հանդուրժել ստեղծված իրավիճակը: Այն էլ՝ այն պարագայում, երբ Հարավկովկասյան տարածաշրջանում արդեն իսկ իրականացվում են բոլորիս հայտնի տնտեսական խոշորածավալ ծրագրեր, որոնց մասնակցում են ոչ միայն Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան, այլ նաև առաջիկայում՝ Արևմտյան Եվրոպան, քանի որ այդ չարաբաստիկ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի շահագործմանը սպասում են արևմտաեվրոպական տասնյակ երկրներ: Վերջիններս կհանդուրժե՞ն պայթյունավտանգ իրավիճակ, որ հիմա ավելի ընդգծված է դառնում հայ-ադրբեջանական դիրքերի մոտեցմամբ: ԱՄՆ-Իրան միջպետական բարդ հարաբերությունների ստեղծված պայմաններում արդյոք կհանդուրժվի՞ Իրանի հյուսիսում մեկ այլ պայթյունավտանգ իրավիճակ: Իհարկե, չե՛ն հանդուրժի: Ուրեմն, ստատուս-քվոյի երկար պահպանումը երբեք ու երբեք չի հանդուրժվի ո՛չ Եվրամիության, ո՛չ ԱՄՆ-ի, ո՛չ էլ Ռուսաստանի Դաշնության կողմից: Ստատուս-քվոյի առկայությունն արդեն ծայրաստիճան վտանգավոր հետևանքների է հանգեցրել Հայաստանի տնտեսության համար: Որ մերկապարանոց չհնչեն խոսքերս՝ մեջբերեմ ընդամենը մեկ թիվ: Եթե 7 տարի առաջ, դատելով համախառն ներքին արդյունքում արդյունաբերական արտադրանքից, ինչպես նաև գյուղատնտեսության և շինարարության տեսակարար կշռից՝ կարելի էր արձանագրել, որ Հայաստանը դեռ շարունակում է մնալ արդյունաբերաագրարային երկիր, հիմա, երբ վերլուծում ենք այդ տվյալները՝ ստացվում էր, որ մեր երկիրը դարձել է ագրարա-

շինարարական հանրապետություն: Բնականաբար, առկա լրջագույն մրցակցության պայմաններում սա հեռանկար չի խոստանում սակավահող և սակավաջուր Հայաստանին: Այսինքն՝ ծառանում են այն վտանգները, որոնց մասին քանիցս հիրավարակավ ասել էր Իլհամ Ալիևը, այն է՝ որ Հայաստանի Հանրապետությունը չի դիմանա տնտեսական մրցակցությանը: Եվ «Նեզավիսիմոյե վոյեննոյե օբոզրենիյե»-ն մեկ ամիս առաջ իր համարներից մեկում արդեն իսկ հիշատակել է, որ Ադրբեջանի ռազմական բյուջեն կրկնակի ավելի է Հայաստանի բյուջեում պաշտպանությանը հատկացված միջոցներից: Սա՝ դեռ նավթատարը և գազատարը շահագործման հանձնած չլինելու պայմաններում: Սրան գումարվում է մեզ համար ևս մի չափազանց տագնապահարույց հարցի լուծում, որ արդեն իսկ վավերացվել է պայմանագրով: Արդեն իսկ սկսվելու է Բաքու-Աստարա-Կարզվին երկաթգծի շինարարությունը, որ կոչված է լինելու Ռուսաստանը, ինչու չէ՝ նաև Արևելյան Եվրոպան ցամաքային կապով միացնել Իրանի և Աֆղանստանի տարածքով Հնդկաստանի և Չինաստանի հետ, և այդ ճանապարհով փոխադրվող բեռները 25-30 օր ավելի շուտ են հասնելու հասցեատերերին: Եվ փոխադրումների հաշվարկների համաձայն՝ եթե սկզբնական շրջանում տարեկան կտրվածքով 15-20 մլն տոննա բեռ է փոխադրվելու, ապա հեռանկարում այդ թիվը հասնելու է 50 մլն տոննայի: *Եվ այս բոլոր ծրագրերից Հայաստանը դուրս է*:

Սա ապացույց է, թե ստատուս-քվոն, որ մերոնք փորձում են ներկայացնել իբրև հաղթանակ՝ իրականում մահապատժի դատապարտված մարդու վերջին օրերը, թող լինի՝ տարիներն են: Ուստի, ամենևին պատահական չէ, որ «Ազգային Միաբանություն կուսակցությունը», ի սկզբանե անդրադառնալով Ղարաբաղի հարցի լսումներին՝ իր հայտարարության մեջ նշեց. *«Անցած 7 տարիներն ակներև դարձրին 1998-ի հեղաշրջման բուն նպատակները՝ թալանչիական սեփականաշնորհման արդյունքում ժողովրդից կեղեքված հարստության վերաբաշխում իշխանությունը զավթած վերնախավի դրածոների միջև, ազգությամբ հայ (հատկապես՝ Ռուսաստանի Դաշնությունից) ներդրողների ունեցվածքի և բիզնեսի անօրեն օտարում (ռեկետ), նրանց նկատմամբ պետության կողմից իրականացվող քաղաքաքրեական հետապնդումների իրականացում, նախկինում կատարված սահմռկեցուցիչ հանցագործությունների բացահայտման սառեցում, կենսապահովման ոլորտների մենաշնորհային իշխանական կլանային համակարգի հիմնում»:* Այսինքն՝ այն «մեղադրանքները», որոնք առաջադրվում էին նախկին իշխանություններին իշխանափոխություն անելու նպատակով՝ բացարձակապես սին էին, քանի որ ճի՛շտ այդ փաստարկները, որոնց մասին հիշատակվում էր սրանից դեռ 7,5 տարի առաջ՝ հիմա ակներև են դարձել որպես եզակի կռվաններ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման համար:

Եվ պատահական չէ, որ այսօր խոսում են հրադադարի սահմանագծում տագնապահարույց զարգացումների մասին՝ փորձելով ասել, թե վտանգի պահն է, եկեք համախմբվենք: Տրամաբանական հարց տվեցինք՝ ո՞ւմ շուրջ համախմբվենք, այն ուժերի՞, որոնց անհեթեթ ու սնանկ արտաքին քաղաքականության հետևանքով դարձյալ կանգնել

ենք այն իրավիճակի առջև, որ հնարավոր են ռազմական գործողություններ: Այն մարդկա՞նց շուրջ, ովքեր, փաստորեն (գուցե միտումնավոր արեցին դա, իսկ գուցե թե՝ գիտելիքների խիստ սակավ լինելու պատճառով), ցույց տվեցին, թե Լեռնային Ղարաբաղը ոչ այլ ինչ էր, քան պատրվակ հանրային թալանված սեփականության վերաբաշխման ճանապարհին: Եվ 7,5 տարի հետո նորից հայտնվել ենք ճիշտ նույն՝ «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» ելակետում: Տվյալ պարագայում, կարծում եմ, եկել է պարոններ Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի և բոլո՛ր իշխանությունների օրոք բոլո՛ր իշխանավորներին գովերգող Վարդան Օսկանյանի լրջանալու պահը: Եվ, կարծում եմ, Ռոբերտ Սեդրակիչը Սերժ Ազատիչի և Վարդան Մինասիչի ձեռքերը բռնած ոչ թե կգնան Արագած լեռան շուրջը պարելու, այլ՝ «Եթե ուրախությունն ընդհանուր էր բոլորի համար, դժբախտությունն էլ մեկը կլինի բոլորի համար», երգելով կհեռանան Հայաստանի քաղաքական ասպարեզից:

Պատրաստեց
Աննա Իսրայելյանը

«Առավոտ», 7.IV.2005:

Երազել արգելված չէ ոչ ոքի

– *Պարոն Գեղամյան, շատերին է հետաքրքրում, թե ինչո՞ւ ուսանողների հետ իր վերջին հանդիպման ժամանակ Ռոբերտ Քոչարյանը, որը երբևէ որևէ գործչի հասցեին դրական բառ չէր ասել, որոշեց հանկարծ ձեզ գովել: Դուք դրա բացատրությունն ունե՞ք:*

– Հավանաբար, պարոն Քոչարյանին հայտնի են եղել «Միավորված հայեր» և «Փակագիծ» թերթերի անցկացրած սոցհարցումները, որոնց համաձայն, 812 հարցված քաղաքացիների 38 %-ը ՀՀ նախագահ տեսել են Արտաշես Գեղամյանին, որից հետո եկած քաղաքական գործիչներն իմ վարկանիշին զիջում էին ձայների զգալի տարբերությամբ: Ամենայն հավանականությամբ, Քոչարյանի խորհրդականները կարդացել էին նաև «Ժամանակի Միտք» շաբաթաթերթի սոցհարցումները, որոնց համաձայն էլ 500 հարցվածների 28,4 %-ն է ինձ նախընտրել երկրի նախագահ տեսնել, իսկ միայն 17,6%-ը՝ պարոն Քոչարյանին: Ենթադրում եմ, որ նրան հուշել էին, որ այդ թերթերին, որոնց նախագահականում մատների արանքով են նայել, պետք է ավելի լուրջ վերաբերել: Ակնհայտ է, որ վերջիններս դեռևս օբյեկտիվ լրատվամիջոցի համարում ունեն, ուստիև պարտադրված էին հետևություններ անել այդ հարցումներից՝ դրանից բխող քայլերով: Եվ այս պարագայում արդեն եթե Քոչարյանը ընդդիմության բոլոր գործիչներին նույն հարթակի վրա դներ, ապա մեր երկրում գործող դիվանագիտական առաքելությունները հերթական անգամ կհամոզվեին վերջինիս ոչ անաչառ լինելու մեջ: Երկրորդ պատճառը, ըստ իս, այն է, որ իմ հրապարակային վերլուծական-քննադատական և ոչ մի ելույթ չի հերքվել պաշտոնական որևէ գերատեսչության կողմից: Ու եթե Քոչարյանն իմ հասցեին այդ կեսբերան դրական ակնարկը չաներ, կնշանակեր, որ նա ինձ հնարավորություն էր ընձեռելու պնդել, որ այս իշխանությունները այդպես էլ չհաղթահարեցին սեփական մակերեսայնությունը, չխորացան երկրում առկա բազում խնդիրների թե՛ պատճառների և թե՛ դրանց վերացման ուղիների որոնման մեջ: Ու եթե համադրում ենք այս ամենը, հասկանում ենք, թե ինչո՞ւ Քոչարյանը, ճիշտ է, շատ մեծ դժվարությամբ, սակայն արտաբերեց մեր կուսակցության և նրա նախագահի անունը: Կարծում եմ, կան այլ պատճառներ ևս...

–*Սակայն եթե իշխանությունների ամենալուրջ մրցակիցը դուք եք, Քոչարյանը պետք է ձեզ ոչ թե գովազդեր, այլ փնովեր, ինչպես մյուսներին:*

– Այստեղ ևս նա դրսևորել է շրջահայացություն, և , ըստ էության, դա վիճելի է, որովհետև հայտնի է, թե նրա գովազդն ի՞նչ հետևանք կարող է ունենալ ընդդիմադիր ցանկացած գործչի համար: Առավել ևս իմ դեպքում, հաշվի առնելով, որ հավասարաչափ

անազնիվ քննադատության թիրախ եմ և՛ այս իշխանությունների, և՛ վերջիններիս դրածո ընդդիմադիրների, և՛ թե նախկին իշխանությունների համար:

– Պարոն Դեղամյան, երբ կազմվում էր «Ազգային Միաբանության» համամասնական ցուցակը, համառ էին լուրերը, որ Հմայակ Հովհաննիսյանը, ձեր գիտությամբ, «ԱՄ» ցուցակ է ներդրվել Սերժ Սարգսյանի կողմից: Հիմա ինչո՞ւ է ձեզ զայրացրել Հմայակ Հովհաննիսյանի վերջին ելույթը, ուր նա նախագահական ապագա է կանխատեսում Սերժ Սարգսյանի համար:

– «ԱՄ» ցուցակը կազմված էր՝ հաշվի առնելով այն աշխատանքը, որ այս կամ այն անհատը կատարել էր 2003-ի նախագահական ընտրությունների քարոզարշավի ժամանակ: Ի պատիվ Հմայակ Հովհաննիսյանի պետք է ասել, որ նա բոլոր հանդիպումների ընթացքում համոզիչ և փաստարկված մերկացնում էր Քոչարյան-Սերժ Սարգսյան զույգի քաղաքականության սնանկ լինելը: Բնականաբար, մենք մեր ֆիլմադարաւնում պահում ենք Հովհաննիսյանի «դասական» այդ բոլոր ելույթները, որոնք կարելի է համարել այս իշխանությունների հրապարակային դատապարտման գլուխգործոցներ: Եթե «ներդրվածն» այդքան համոզիչ և սպառիչ կերպով ազգաբնակչության առաջ մերկացնում է այդ զույգին և դրա համար են նրան «ներդրել» մեր ցուցակ, կնշանակի՝ դա Սերժ Սարգսյանի կողմից նոր խոսք է քաղաքական ինտրիգների գանձարանում, ինչին կնախանձեին անգամ իսկ այդ գործի վարպետներ Թալեյրանն ու Ֆուշեն: Այս դեպքում ակամայից հիշում ես մի հայտնի կերպարի ևս, դոկտոր Ֆրանկենշտեյնին, երբ վերջինս ծնում է իրեն հոշոտող հրեշին: Եթե դա էր Քոչարյանի և Սերժ Սարգսյանի նորամուծությունը, ապա ես նրանց շնորհավորում եմ քաղաքական նոր ընտրական տեխնոլոգիա հայտնագործելու համար: Ինչ վերաբերում է քաղաքագետի վերջին հայտարարությանը, ապա բրիտանական հայտնի վարչապետի խոսքն է տեղին հիշել՝ չկան մշտական բարեկամներ ու մշտական թշնամիներ, այլ կան մշտական շահեր: Եվ, ի վերջո, կյանքը շարունակվում է, մարդն իր կարծիքն է հայտնել, ինչո՞ւ եք այդչափ դրամատիզացնում իմ երեք րոպեանոց հեռուստաելույթը: Առավել ևս, մեր խայտաբղետ քաղաքական դաշտում, կարծում եմ, դեռ ոչ ոք բարձրաձայն չի ստանձնել քաղաքական մարգարե լինելու առաքելությունը: Իսկ եթե որևէ մեկը ստանձնել է, դա արդեն մեկ այլ ոլորտից է...*

- Դատելով ձեր հրապարակային ելույթներից՝ Հայաստանում սկիզբ է առել Սերժ Սարգսյանին լոբբինգ անելու գործընթաց, որին մասնակցում են ոչ միայն քաղաքական ուժեր, այլ նաև լրատվամիջոցներ: Սակայն այն վերլուծությունները, որ արվում են հայկական մամուլում, այդ ամենի մասին արդեն հայտնել է ամերիկյան «Սթրաթֆոր» վերլուծական կենտրոնը: Ձեր կարծիքով, այդ կենտրոնը ն՞ս զբաղված է Սերժ Սարգսյանի լոբբինգով:

– Զարմանալին այն է, որ վերլուծական կենտրոնի եզրակացությունները խորամանկորեն փորձում են ներկայացնել իբրև ԱՄՆ պետական մարմինների պաշտոնական կարծիքներին մոտ եզրահանգումներ: Պետք չէ այդ աստիճան պարզունակ ընկալել ԱՄՆ արտաքին քաղաքականության գերատեսչության գործողությունները: «Սթրաթֆորի»

նյութը, կարծում եմ, լրատվական հատուկ արտահոսք էր՝ Հայաստանի քաղաքական ուժերի արձագանքը ստուգելու համար: Այն, ինչ միտումնավոր կերպով լրատվության այդ արտահոսքում ներկայացրել է ամերիկյան այդ կենտրոնը, բնականաբար, դա այն չէ, ինչ իրականում կա: Ի դեպ, նման աշխատանոճը հատուկ է ոչ միայն ԱՄՆ-ին, այլ նաև դիվանագիտական լուրջ փորձ ունեցող բոլոր երկրներին: «Սթրաթֆորի» այդ վերլուծությունը հնարավորություն տվեց հայկական ընդդիմությանն արտահայտել իր կարծիքը, որ ցանկացած հեղափոխություն, որն իր հաղթարշավն է սկսել հետխորհրդային հանրապետություններում, հաջողությամբ է պսակվել միայն այն պատճառով, որ այդ հեղափոխության դրոշին գրված է եղել ժողովրդավարության հաստատում և պայքար կոռուպցիայի դեմ: Իսկ Սերժ Սարգսյանի պարագայում մենք կունենանք ոչ թե հեղափոխություն, այլ հերթական հակաժողովրդական հեղաշրջում, որի դրոշին, իրավամբ, կարելի կլինի գրել՝ է՛լ ավելի խորացնել կոռուպցիան Հայաստանում, է՛լ ավելի ճնշել ժողովրդավարությունն, է՛լ ավելի ծավալել անօրինականություններ: Ուստի, Սերժ Սարգսյանին նախագահ դարձնելու իշխանությունների պատրանքը «խփված խաղաքարտ է»: Այլ բան, որ ես չեմ կարող բռնանալ ո՛չ Սերժ Սարգսյանի և ո՛չ էլ Ռոբերտ Քոչարյանի ու նրանց երկրպագուների երազանքների վրա: Երազելը որևէ մեկին արգելված չէ: Այնպես որ, թող հանգիստ երազեն, հատկապես, որ նրանց նմանօրինակ երազանքը, որ շարադրվում է մամուլի էջերում, ավելի է խորացնում ժողովրդի ատելությունը այս վարչակազմի ու նրանց արմատավորած ապօրինի բարքերի հանդեպ :

– Իսկ դուք ինչո՞ւ եք բացառում, որ իշխանությունը, գիտակցելով ժողովրդավարական ռեֆորմների անխուսափելիությունը, ինչպես նաև ելնելով սեփական անվտանգությունն ապահովելու մտավախությունից, ինքը չի ստանձնի ռեֆորմներն իրականացնելու ծրագիրը:

– Իշխանություններն իրենք էլ համոզված են, որ իրենց հաշվված շաբաթներ, լավագույն դեպքում՝ հաշվված ամիսներ են մնացել, և պատահական չէ, որ հենց իշխանական կուսակցություններն են սկսել նախընտրական կատաղի պայքար: Բայց սա այն դեպքն է, որ նրանց ցանկացած գործողություն աշխատում է հենց իրենց դեմ: Ի՞նչը և ո՞վ է խանգարում, քաղաքագետի ասած՝ «հզոր գործիչ» Սերժ Սարգսյանին՝ օգտագործել իր իսկ հզորությունը, համատարած կաշառակերության, ստվերային տնտեսության ու օրըստօրե աճող ապօրինությունների առաջն առնելու համար: Գործող իշխանական բուրգում միայն Ռոբերտ Քոչարյանը կարող է խանգարել Սերժ Սարգսյանին պայքարել այդ ամենի դեմ: Տրամաբանական այլ եզրահանգում լրատվամիջոցների հրապարակումներից անել հնարավոր չէ: Ինչ վերաբերում է նրան, որ Սերժ Սարգսյանը ստանձնի ժողովրդավարական ռեֆորմների իրականացումը, ի՞նչ է, դուք ուզում եք ասել, որ հանձին Սերժ Սարգսյանի մենք հնարավորություն ունենք ստանալու բոլորովին նո՞ր մարդ: Այս դեպքում դա անգամ տեսականորեն հնարավոր չէ, քանզի մարդն ինքն իր սեփական երգի կոկորդին կանգնել չի կարող: Չի կարող ռեֆորմատոր լինել մի մարդ, որի կողմից եթե չհովանավորվեր կոռուպցիան, կաշառակե-

րությունն ու ստվերը, ինչպես բազմիցս նշվել է ընդդիմադիր մամուլում, Ազգային ժողովի ամբիոնից, ապա իշխանական մեծ լծակներ ունեցող շատ պաշտոնյաներ կհայտնվեին մեղադրյալների կարգավիճակում: Եվ, վերջապես, այս համատեքստում հետաքրքիր մերկացումներ են կատարել նաև իշխանական կոալիցիայի մաս կազմող գործիչներ՝ Արթուր Բաղդասարյանը, Վահան Հովհաննիսյանը և այլոք, այն էլ Ազգային ժողովի ամբիոնից: Իսկ ովքե՞ր կարող էին այդ գործերը ծածկադրբոց անել, եթե ոչ երկրի փաստացի երկու «տերերը»: Ցավով եմ ուզում ասել, որ վերն ասվածը, ավա՜ղ, ամենևին զգացմունքայնության արդյունք չէ: Ինչ վերաբերում է նրանց անվտանգությանն ապագայում, ապա ես կարող եմ երաշխավորել, որ այլևս անխուսափելի իշխանափոխությունից հետո, թե՛ նրանց, թե՛ իշխանական բուրգում գտնվող ցանկացած պաշտոնյայի համար կապահովվի պաշտպանվածությունն օրենքով: Եթե իրենց մեջ կլինեն մարդիկ, որոնք օրենքի հետ խնդիրներ չեն ունենա (իսկ ես համոզված եմ, որ այդպիսիք կան և ապագայում իրենց աշխատանքով պիտանի կլինեն հասարակությանը), ապա իշխանափոխությունից հետո նրանք Հայաստանից հեռանալու պատճառ չեն ունենա: Մնացած ամենը միֆ է՝ ժողովրդի ամենալայն շերտերում արմատավորված համոզմունքը, որ Հայաստանում կոռուպցիայի կնքահայր է համարվում Ձեր հիշատակած «նախագահացուն», չի կարող ընկալվել որպես ժողովրդավարության ռեֆորմատոր:

– Պարոն Գեղամյան, իշխանությունները գոնե երազում են: Իսկ ի՞նչ է անում ընդդիմությունը:

– Ես կարող եմ ասել, թե ինչ է անելու և ինչ է անում «Ազգային Միաբանությունը»: Այսպես, փետրվարի 19-ին մենք հրավիրեցինք կուսակցական կոնֆերանս, որը մեզ համար յուրատեսակ ստուգատես էր, թե որքանո՞վ են մարտունակ մեր տարածքային կառույցները և որքանո՞վ են պատրաստ իշխանափոխության միջոցով ՀՀ-ում իրականացնել համակարգային փոփոխություններ: Այնուհետև ապրիլի 7-ին տեղի ունեցավ իմ հանդիպումը շուրջ 1600 կանանց հետ, որը կրկին համոզեց, որ մեր կուսակցության կանայք ևս լուրջ պահին կանգ չեն առնի որևէ փորձության առաջ: Մայիսի սկզբին նախատեսված է կուսակցության երիտասարդների հավաքը, որը մեզ հնարավորություն կտա տեսնել, թե երիտասարդնե՞րը որքանով են պատրաստ առաջիկայում մեր ձեռնարկելիք հնարավոր գործողություններին: Ուժերի այս համախմբումից հետո, երբ ակնհայտ կդառնա մեր 100 տոկոսանոց պատրաստ լինելը, կկարողանանք հաշված օրերի ընթացքում մեր դրոշի տակ հավաքել 100 հազարավորների: Իսկ որ սկսված գործընթացներն այլևս անդարձ տանելու են երկրում ժողովրդավարական իշխանափոխության, դա պայմանավորված է ոչ միայն ներքաղաքական, այլ նաև տարածաշրջանային ժողովրդավարացման անխուսափելի զարգացումներով:

Նաիրա Զոհրաբյան

«Հայկական ժամանակ», 19.IV.2005:

Իսկ չէ՞ որ իմաստուն թագավոր էր Պետրոս Մեծը …

Օրերս Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական «Ռոսբալթ» (Մոսկվա) գործակալության թղթակից Յանա Ամելինան հարցազրույց է վերցրել «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանից: Կարծում ենք, մեր ընթերցողներին հետաքրքիր կլինի ծանոթանալ այդ նյութին, որը և ներկայացնում ենք ստորև ամբողջությամբ:

–Մի շարք փորձագետներ Հայաստանը նշում են այն երկրների թվում, որտեղ մոտ ժամանակներս կարող է տեղի ունենալ հերթական «նարնջագույն հեղափոխությունը»: Վրաստանում, Ուկրաինայում և, վերջապես, Ղրղստանում տեղի ունեցածը ցույց է տալիս, որ, այսպես կոչված, «հեղափոխությունների» համար ընդհանրական է նշված երկրներում ոչ սահմանադրական եղանակով իշխանափոխությունը, որը իրականացվում է Արևմուտքի ակտիվ , երբեմն՝ որոշիչ աջակցությամբ, ներառյալ ֆինանսական և կազմակերպչական աջակցությունը (ոչ կառավարական կազմակերպությունների և մերձկառավարական կառույցների): Համաձա՞յն եք, արդյոք, դուք «թավշյա հեղափոխության» այսպիսի գնահատականին, և այս կապակցությամբ ի՞նչ կասեք Հայաստանի վերաբերյալ:

– Քոչարյան-Սարգսյան վարչակարգին ընդդիմադիր քաղաքական ուժերն իրենց առջև դրել են ոչ թե հասարակական-տնտեսական հասարակարգի փոփոխման խնդիր Հայաստանի Հանրապետությունում, այլ սահմանադրական կարգի վերականգնման և, իհարկե, դա էլ ոչ թե հակասահմանադրական գործողությունների ճանապարհով: Այն անդառնալի գործընթացները, որոնք կատարվում են հայ հասարակության մեջ, սահմանել որպես «հեղափոխություն» քաղաքագիտության տեսակետից, այնքան էլ կոռեկտ չէ: Այլ հարց է, որ Հայաստանի իշխանությունների կողմից ոտնահարված սահմանադրական նորմերը վերականգնելու համար կարող են ոտքի ելնել հարյուր հազարավոր մեր քաղաքացիները: Ընդորոշել Վրաստանում, Ուկրաինայում, և, վերջապես, Ղրղստանում պատահածը որպես նշված երկրներում ոչ սահմանադրական եղանակով կատարված իշխանափոխություն, նշանակում է Ռուսաստանի Դաշնության բարձրագույն քաղաքական ղեկավարությանը դնել անհարմար դրության մեջ: Վրաստանի նախագահի պաշտոնական այցը Մոսկվա («ոչ սահմանադրական եղանակով» իշխանափոխությունից հետո), բարձր մակարդակի բանակցությունները Կրեմլում, իմ կարծիքով, վկայում են հարցի ոչ նման ձևակերպման օգտին: Ձեր տվյալ պնդումը, իմ կարծիքով, կոռեկտ չէ նաև

Ուկրաինայի պարագայում: Պետք չէ նաև թերագնահատել Ուկրաինայի և Ռուսաստանի նախագահների փոխադարձ այցելությունները: Ղրղստանի պարագայում՝ ավելի վատ է … Եվ, վերջապես, Հայրենական Մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած Մեծ հաղթանակի 60-ամյակի տոնակատարությանը և՛ ուկրաինական, և՛ ղրղզական բարձրաստիճան հյուրերի մասնակցությունը (կամ թեկուզ միայն «հանդիսությանը» մասնակցելու հրավերը վերոհիշյալ երեք պետությունների ղեկավարներին՝ «ոչ սահմանադրական եղանակով իշխանափոխություն կատարածներին») վերջնականորեն հաստատում են նման ձևով ներկայացված Ձեր հարցադրմանը իմ պատասխանի անհեռանկարությունը:

Ինչ վերաբերում է «հեղափոխությունների» իրականացմանը Արևմուտքի ակտիվ, երբեմն էլ որոշիչ աջակցությամբ (ներառյալ ֆինանսական և կազմակերպչական), փորձենք խորամուխ լինել նշված «հեղափոխությունների» նախապատմության մեջ: Ի՞նչ է, Շևարդնաձեի կամ Կուչմայի վարչակարգերը ժողովրդավարության արժեքների հաստատման ջատագո՞վ էին իրենց երկրներում, որն էլ ամրագրված էր նրանց սահմանադրություններով: Իսկ միգուցե այնտեղ սեփականաշնորհման գործընթացները իրականացվել են գործող օրենքներին համապատասխա՞ն, սոցիալական արդարության սկզբունքների պահպանմա՞մբ կամ նկատվել էին դրական տեղաշարժեր հակակոռուպցիոն գործընթացներում, ակտիվ պայքար էր մղվում հանցագործությունների դե՞մ: Ավա՜ղ, հենց ռուսական մամուլի վկայությամբ, ամեն ինչ կատարվում էր ճիշտ հակառակը: Այդ պետություններում իշխանությունները, որոնք աղտոտված էին կոռուպցիայի, պետական գույքի հափշտակման, կաշառակերության մեջ, առաջացնում էին կամ իրենց համաքաղաքացիների անթաքույց ատելությունը, կամ էլ, լավագույն դեպքում, մի իրավիճակ, երբ «ժողովուրդը լռում էր»:

Ով և ինչպես օգտվեց պայթյունավտանգ նման իրավիճակից, երբ իշխանությունները չեն կարող և չեն ուզում ղեկավարել նոր ձևով, իսկ ստորին խավերը չեն ուզում ապրել առաջվա նման, դա արդեն միանգամայն այլ խոսակցության նյութ է:

Ինչ վերաբերում է ոչ կառավարական կազմակերպությունների և մերձկառավարական կառույցների կազմակերպչական և ֆինանսական աջակցությանը, ապա անհրաժեշտ է հարց տալ. իսկ ի՞նչն էր ավելի մեծ չարիք Վրաստանի, Ուկրաինայի, և հենց այդ նույն Ղրղստանի քաղաքացիների համար: Շարունակել դիմանա՞լ կոռումպացված վարչակարգերին, որոնք օրեցօր էլ ավելի են վիրավորում և նվաստացնում իրենց համաքաղաքացիներին, թե՞ նման իշխանություններից ազատվելու նպատակով ընդունել ֆինանսական և կազմակերպչական աջակցություն, թեկուզ և դա ամրագրված չէ իրենց երկրների սահմանադրություններում: Ձեր հարցը նոր հնչեղություն է ստանում, երբ ուշադիր վերլուծում ես նախագահ Վլադիմիր Պուտինի ուղերձը Ռուսաստանի Դաշնության Ֆեդերալ ժողովին (25 ապրիլի 2005թ.), ամերիկյան «Սի-Բի-Էս» հեռուստաալիքի վարող Մ.Ուոլլեսին, ֆրանսիական «Ֆրանս-3» հեռուստաընկերությանը և, վերջապես, գերմանական «Բիլդ» թերթին (7 մայիսի 2005թ.) տված նրա հարցազրույցները: Վերոհիշյալ լրատվամիջոցներին

նախագահ Վլադիմիր Պուտինի տված պատասխաններում կարելի է հատուկ առանձնացնել հետևյալը: Որպես «գլխավոր քաղաքագաղափարախոսական խնդիր է համարվում Ռուսաստանի համար զարգացումը որպես անկախ, ժողովրդավարական պետություն»: Կամ երբ համարձակ հայտարարվում է, որ «մենք երախտագիտությամբ կընդունենք կողքից թարմ հայացքը: Եվ, ավելին, անգամ պատրաստ ենք կիրառել խորհուրդները, լրացուցիչ տեղեկատվությունը, այլ երկրների փորձը: Իսկ Միացյալ Նահանգներն անցել են ժողովրդավարության ինստիտուտների զարգացման մեծ ճանապարհ» և առավել ևս, երբ հայտարարվում է՝ «… չեմ բացառում, որ ինչ-որ փուլում մեր համագործակցությունը կլինի այնքան սերտ և ամուր, որ քիչ կտարբերվի Եվրամիությանը Ռուսաստանի անդամակցությունից»:

Հայաստանի պարագայում, «թավշյա հեղափոխության» հավանականության առնչությամբ կարելի է ասել, որ Քոչարյան-Սարգսյան վարչակարգը իրեն լիովին սպառել է և խոչընդոտում է երկրի զարգացմանը՝ իր մեջ վտանգ թաքցնելով՝ անկայունության պոտենցիալ օջախ դառնալ Հարավային Կովկասի տարածաշրջանում: Դա հղի է ապակայունությամբ, որը կարող է Ադրբեջանին դրդել վերսկսելու ռազմական գործողությունները, ինչն իր հերթին կարող է վերաճել տարածաշրջանային ռազմական լայնածավալ դիմակայության: Նշված հնարավոր հետևանքների գիտակցումն էլ որոշում է «Ազգային Միաբանություն կուսակցության» մարտավարությունը: Իսկ տարբեր տեսակի հղումները «կենցաղում շրջող կարծիքներին», որոնք, կարելի է վստահ ասել, տարածվում են բարձրաստիճան չինովնիկների կողմից, դրանք, հիմնականում, սպասարկում և գործում են կոռումպացված վարչակարգին ի հաճույս և հետապնդում են ընդդիմությանը վարկաբեկելու նպատակ: Այդ ամենը հասկացվում է Հայաստանի քաղաքացիների և ոչ թե միայն տեղական քաղաքական վերնախավի կողմից: Այդ ամենը հանրապետության բնակիչների մեծամասնության շրջանում խորը հիասթափություն է առաջացնում ոչ թե ընդդիմության գործողությունների, այլ իրականությունն աղավաղված մեկնաբանող «կենցաղում շրջող կարծիքների» հանդեպ, որոնք տարածվում են նաև դրսից պարտադրվելու ճանապարհով:

– Կարծիք կա, որ հայկական ընդդիմությունը, ինչպես ժամանակին վրացականը և ուկրաինականը, ֆինանսավորվում է արտասահմանից: Ֆինանսական միջոցների աղբյուրներ են նշվում Սորոսի հիմնադրամը, NDI-ի և մի շարք այլ ոչ պետական կազմակերպություններ ու ֆոնդեր: Դա արդյոք այդպե՞ս է:

– Ոչ, դա այդպես չէ: Համենայն դեպս «Ազգային Միաբանություն կուսակցության» մասին կարող եմ միանշանակ ասել, որ այդպես չէ: Սինհնույն ժամանակ ուզում եմ ասել, որ հասկանում եմ Ձեզ և իմ երախտագիտությունն եմ հայտնում անթաքույց ենթատեքստով հարցի այդքան ուրբանկատ ձևակերպման համար: Համաձայնեք, չէ՞ որ նման հարցը իմաստ է ստանում այն ժամանակ, երբ տրվում է ազնիվ մարդու:

– Հայաստանում արդյոք առաջացե՞լ է «հեղափոխական իրավիճակ»: Երկրում արդյոք կա՞ն օբյեկտիվ պատճառներ վաղաժամկետ իշխանափոխության համար:

«Ազգային Միաբանությունը» ինչպիսի՞ պահանջներ է ներկայացնում իշխանությանը և անձամբ նախագահ Ռոբերտ Քոչարյանին:

– Կարևոր են ոչ թե «Ազգային Միաբանության» ներկայացրած պահանջները անձամբ Ռոբերտ Քոչարյանին, այլ կարևոր է իրավիճակի գիտակցումը և Հայաստանում ու նրա շուրջը ստեղծված իրադրության անաչառ գնահատումը: Այն, որ Հայաստանը «դատապարտված է» զարգանալ ժողովրդավարական ճանապարհով՝ չի վիճարկվում անգամ ծույլերի կողմից: Տարածաշրջանային իրականացվող գործընթացների լույսի ներքո՝ Մեծ Մերձավոր Արևելք, Ընդլայնված Եվրոպա - Նոր Հարևաններ, այստեղ այլընտրանք չկա: Իսկ ի՞նչ ունենք մենք այսօր: Երեք հիմնարար սյուներ կան, որոնց վրա էլ հենվում է ժողովրդավարական ցանկացած հասարակություն. առաջին՝ քաղաքական այնպիսի համակարգի առկայություն, որը ձևավորվում է բնակչության ազատ կամքի դրսևորման պարագայում, այսինքն՝ օրենսդիր իշխանության մեջ ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների միջոցով, երկրորդ՝ տնտեսության իրական ազատականացման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքերի և պայմանների ստեղծում, փոքր և միջին բիզնեսի ոլորտում ստարտային հավասար պայմանների ապահովում, տնտեսության մեջ մենաշնորհային կարգավիճակի անթույլատրելիություն, մանավանդ Հայաստանի Հանրապետության համար կենսական նշանակաության ոլորտներում, երրորդ՝ օրենսդրական բազայի ստեղծում և դատական անկախ համակարգի կայացման համար պայմանների ապահովում և, վերջապես, չորրորդ իշխանության իրապես անկախ գործունեություն:

Հայաստանի Հանրապետությունում կոպտորեն կեղծվել էին 1998 և 2003թթ. նախագահական ընտրությունների արդյունքները, նույնչափ կոպտորեն կեղծվել էին 2003թ. մայիսի 25-ի՝ Ազգային ժողովի ընտրությունները: Հայաստանում այսօր նախագահական և օրենսդիր իշխանությունները լեգիտիմ չեն, և դա կասկած չի հարուցում Հանրապետության բնակչության գերակշիռ մեծամասնության շրջանում: Ոչ լեգիտիմ իշխանությունները պարտքի տակ չեն մնացել իրենց հովանավորների՝ քրեա-օլիգարխիական կառույցների առջև, որոնք կանգնած էին քվեատուփերի մեջ քվեաթերթիկների զանգվածային լցոնումների, ընտրական հանձնաժողովի անդամների զանգվածային կաշառքների և հարյուր հազարավոր ընտրողներին ողորմություն նետողների հետևում, ընտրողներ, որոնք կարիքից և աղքատությունից դրդված կորցրել են Հայաստանի ճակատագրի հանդեպ պատասխանատվության զգացումը:

Վիճակն ավելի անբարվոք է տնտեսության մեջ: ՀՀ կենսապահովման բոլոր հիմնական բնագավառները մենաշնորհված են: Ցորենի, շաքարի, բենզինի, դիզելային վառելիքի, ծխախոտի, սպիրտային խմիչքների մատակարարումը, որը կազմում է ներմուծվող ապրանքների կեսից ավելին, իրականացվում է մենաշնորհային վիճակում գտնվող քրեա-օլիգարխիական կառույցների կողմից: Այստեղ կորզվում են գերշահույթներ, որոնք դուրս են մնում հարկային դաշտից:

Իշխանական վերնախավում կոռուպցիան այնպիսի չափերի է հասել, որ անգամ Ազգային ժողովի ամբիոնից ի լուր ամբողջ Հայաստանի բազմիցս նշվել են

կաշառակերների և թալանի կոնկրետ հասցեներ, որոնց վերցրածը հասնում է հարյուրավոր միլիոնների: Ծախու «ֆեմիդան», բնական է, լռում է, ոչ մի միջոց չի ձեռնարկվում: Վիճակի զավեշտականությունն այն է, որ իշխանության հենարանը հանդիսացող կոալիցիան երբեմն ինքն է ձշում կոռուպցիայի աղբյուրը, դրանով, ասես թե, հասկացնելով բնակչությանը, որ իրենք ի զորու չեն որևէ բան ձեռնարկելու, բոլորին առանց այն էլ հայտնի է, որ կաշառակերները ոչ թե կոալիցիոն կուսակցությունների հովանու ներքո են, այլ Քոչարյան-Սարգսյանի զույգի: Այս ամենը կարելի է մանրամասնել՝ բերելով կոնկրետ օրինակներ, բայց, կարծում եմ, ավելորդ է: Քաղաքական դիտորդները, որոնք մեր իրականության այս հատվածի գործերի ընթացքով հետաքրքրված են ոչ պարապ հետաքրքրասիրությունից, իրենք կարող են տասնյակ օրինակներ բերել:

Խոսել երրորդի՝ ժողովրդավարության հաստատման անհրաժեշտ հենասյան՝ դատական համակարգի մասին, այլևս անիմաստ է: Նախագահական և խորհրդարանական ընտրությունների կեղծարարները, հարկերի վճարումից չարամտորեն խույս տված քրեա–օլիգարխիական կառույցները, հանցագործ խմբավորումները, որոնք հարյուրավոր ոստիկանների աչքի առջև իրականացրին լրագրողների զանգվածային ծեծ՝ ջարդելով նրանց ֆոտոապարատներն ու տեսախցիկները, ինչպես նաև ծեծի ենթարկելով 2004թ. ապրիլի 5 –ին և 12 –ին խաղաղ ցույցի մասնակից անզեն քաղաքացիներին, այդպես էլ չկրեցին որևէ պատիժ: Իսկ մարմնական, ընդ որում լուրջ, վնասվածքներ ստացան հարյուրավոր մարդիկ: Դատական համակարգը Հայաստանի քաղաքացիների կողմից ընկալվում է ոչ այլ կերպ, քան դաժան ճնշման գործիք՝ իրենց սահմանադրական իրավունքները պաշտպանող մարդկանց այլախոհության ցանկացած դրսևորման դեմ: Իսկ այդպիսիները և նրանց համակրող անձինք Հայաստանի բնակչության գերակշռող մեծամասնությունն են:

Թերևս անհրաժեշտություն չկա խոսելու լրատվության զանգվածային միջոցների անկախության մասին: «Ազգային Միաբանությունը» լիովին զրկված է իր միջոցառումները լուսաբանելու հնարավորությունից ինչպես հանրային, այնպես էլ որևէ առևտրային հեռուստաալիքի միջոցով: Խոսքը գնում է վճարովի եթերային ժամի մասին, անգամ «ամենաբարձր» գներով: Անհեթեթությունը հասել է այնտեղ, որ Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ձմեռային և աշնանային նիստերում իմ ունեցած ելույթները չի թույլատրվել ցուցադրել:

Այսպիսով, ամփոփելով, կարելի է պնդել, որ Հայաստանում ձևավորված քաղաքական համակարգը խոչընդոտում է տնտեսական համակարգի ձևավորմանը և ազատականացմանը, ինչը բարենպաստ հող է ստեղծում մենաշնորհային-օլիգարխիական հարաբերությունների արմատավորման համար, որն էլ անհնար է դարձնում միջին խավի՝ երկրի կայունության հիմքի, կազմավորումը: Այն առաջացրել է դատական ողջ համակարգի լիակատար կախվածություն նախագահական և գործադիր իշխանություններից, ինչն իր հերթին բերում է կոռուպցիայի մետաստազների համընդհանուր տարածում, անօրինականություն և անպատժելիություն: Եվ, վերջապես, բնակչությունը զրկված է օգտվելու իր սահմանադրական իրավունքի հնարավորությունից՝ բազմակողմանի և օբյեկտիվ

տեղեկատվություն ունենալ Հանրապետության կյանքի հրատապ հարցերի վերաբերյալ:

Երկրի համար արատավոր և կործանարար այս համակարգը ծնվել ու հիմնավոր պաշտպանվում է Քոչարյան-Սարգսյան երկիշխանությամբ: Այն կարող է քանդվել ինչպես թղթե տնակը, եթե Հայաստանի ժողովրդավարությամբ և բարգավաճմամբ հետաքրքրված ուժերը ցուցաբերեն մեզ բարոյական աջակցություն: Այո, բարոյական աջակցություն մեր կուսակցության գործողություններին, որոնք լիովին համապատասխանում են խոսքի ազատության երաշխիքի, ցույցերի, երթերի, հավաքների անցկացման սահմանադրական կանոններին: Այս աջակցությունը իրավունք ունի ցուցաբերել մեզ և՛ Ռուսաստանը, և՛ ԱՄՆ, և՛ Եվրամիությունը (Հայաստանի և նշված երկրների կողմից ԵԱՀԿ-ին և Եվրոպայի Խորհրդին անդամության կապակցությամբ ընդունված պարտավորության շրջանակներում): Ես էլ չեմ խոսում Հայաստանի այսօրվա կառավարողներին իշխանությունից հեռացնելու առաջին հայացքից ավելի պարզ ճների մասին: Օրինակ, այնպիսի եղանակի, ինչպիսին է նրանց պատկանող ունեցվածքի հրապարակումը, որը հաշվվում է ոչ մեկ հարյուր միլիոն դոլար և, որի տերերը, փաստորեն, բյուջետային աշխատավարձի վրա «նստած» Քոչարյան-Սարգսյանն են: Ի դեպ, նման տեղեկատվության արտահոսքի հնարավորության մասին գրվել է հայկական մամուլում: Ընդ որում, աղբյուրները նշմարվում էին և վստահություն ներշնչող էին:

–Մեկ տարի առաջ հայկական ընդդիմությունն արդեն անցկացնում էր զանգվածային գործողություններ՝ պահանջելով նախագահի հրաժարականը, բայց հաջողության չհասավ: Արդյոք հիմքեր կա՞ն ենթադրելու, որ այսօր նմանատիպ ելույթները կավարտվեն այլ կերպ՝ Ռ.Քոչարյանի հրաժարականով, նախագահական և պառլամենտական վաղաժամկետ ընտրությունների նշանակմամբ (հասկանալի է, եթե ընդդիմությունը և կոնկրետ «Ազգային Միաբանությունը» մտադիր են դրանք կրկնել): Մի խոսքով՝ կմնա՞, արդյոք, նախագահը մինչև իր ժամկետի վերջը:

– Միակ բանը, որ պահում է մեզ ակտիվ գործողությունների դիմելու հարյուր հազարավոր մարդկանց ներգրավմամբ, դա «դամոկլյան սրի նման» պետության գլխին կախված Լեռնային Ղարաբաղի չլուծված խնդիրն է: Արդեն բացահայտ է, որ Վարշավայում Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների ղեկավարների գագաթաժողովին Ալիև-Քոչարյան հանդիպման ընթացքում (ԵԱՀԿ Մինսկի խմբի ներկայացուցիչների, Ֆրանսիայի և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարների մասնակցությամբ) լուծվել է Լեռնային Ղարաբաղին հարակից ազատագրված 7 տարածքները Ադրբեջանի իրավասությանը հանձնելու հարցը: Քոչարյան-Սարգսյան զույգը 1998 թվականին բռնատիրեց իշխանությունը Հայաստանում՝ քողարկվելով «Ազատագրված հողի ոչ մի թիզ չենք հանձնի Ադրբեջանին» նշանաբանով: Դա էր, որ կասեցնող դեր խաղաց և կանխեց համաժողովրդական ապստամբությունը կամ, համենայն դեպս, քաղաքացիական համընդհանուր անհնազանդությունը: Այժմ դուետը շատ բարդ դրության մեջ է ընկել: Անազնիվ ճանապարհով նրանց կուտակած հարստությունը, ես դեռ չեմ նշում նրանց ղեկավարման տարիներին տեղի ունեցած աղմկալի հանցագործությունների մասին, դրան զուգընթաց

ԼՂՀ-ի շուրջ ընթացող բանակցությունների կատարյալ ձախողումը նրանց արդեն իսկ օրենքից դուրս է դրել: Որքան շատ կառչեն իրենց բռնազավթած պաշտոններից, այնքան շատ կխրվեն հակաօրինական գործողություններում, էլ ավելի կբարդացնեն իրենց առանց այդ էլ ծանր իրավիճակը: Նրանց համար հիմա շատ շահավետ է, որ ընդդիմությունը անժամանակ սկսի բողոքի զանգվածային գործողությունները: Այդ ժամանակ հենց իշխանությունները «կօգնեն ընդդիմությանը» ապակայունացնել իրավիճակը երկրում: Իսկ հետո, ժողովրդի հուզումների ալիքից ստեղծված իրավիճակից օգտվելով, տեղեկություն «կտարածեն», որ, իբր, ընդդիմությունը ներսից քայքայել, թուլացրել է պետությունը, ինչից և անհապաղորեն օգտվեցին մեր «հավերժ բարեկամները»՝ պարտադրելով երկրին ոչ հայանպաստ որոշումներ: Անդրադառնալով Ձեր հարցի վերջին հատվածին՝ ես կպատասխանեմ մեզ մոտ՝ Հայաստանում, տարածված թևավոր խոսքով. «Այն, որ նախագահը կնստի, փաստ է, բայց թե որտեղ, երբ և ինչի վրա, դա է հարցը»:

– Միասնակա՞ն է, արդյոք, ընդդիմությունն իր պահանջներում: Հնարավո՞ր է, արդյոք, ընդդիմադիր ավելի լայն կոալիցիայի ձևավորումը «Արդարություն» և «Ազգային Միաբանություն» դաշինքի հիման վրա: Ի՞նչ պատճառով Ձեր կուսակցությունը չի մտնում «Արդարություն» դաշինքի մեջ:

– Ընդդիմությունը միասնական է իր պահանջում՝ վերականգնել սահմանադրական կարգը երկրում, ինչի մասին մենք հանդես եկանք համատեղ հայտարարությամբ: Ընդդիմադիր ավելի լայն կոալիցիայի ձևավորումը, իհարկե, հնարավոր է, քանի որ Հանրապետությունում չկա թեկուզ և քիչ թե շատ հայտնի քաղաքական ուժ, որը չի ցանկանում «ընկերանալ ընդդեմ» Քոչարյան-Սարգսյանի: Հարցն ընդդիմության առկա ֆորմատի ընդարձակման նպատակահարմարության մեջ է: Նոր անուններ և տասնյակ նոր կուսակցություններ կարելի է ավելացնել, բայց մարդիկ, որոնք կանգնած են դրանց հետևում, որպես այդպիսիք, պարզապես հատուկենտ են:

«Ազգային Միաբանություն կուսակցության», այս խոսքերի հեղինակի վարկանիշները համաձայն թերթերի և քաղաքական կուսակցությունների, որոնց դժվար է կասկածել մեզ համակրելու մեջ, բազմիցս անցկացրած սոցիոլոգիական հարցումների՝ ամենաբարձրն են (ընդ որում կրկնակի և ավելի անգամ) այսօրվա քաղաքական ուժերի դասակարգման մեջ: Դա, անկասկած, մեծ պատասխանատվություն է մեզ վրա դնում՝ հանդես գալ որպես միջուկ, կոնսոլիդացնող ընդդիմադիր բոլոր ուժերը: Բայց մենք դասեր ենք քաղել ընդդիմադիր դաշինքներում վարչակարգից առատորեն ֆինանսավորվող դրածո անձանց ներդրման դառը փորձից: Նրանց պարտավորեցրել են ճգնաժամային պահին պառակտում մտցնել ընդդիմադիրների բանակում և սասանել վերջիններիս հանդեպ բնակչության լայն խավերի վստահությունը: «Ազգային Միաբանությունը» ինքնաբավ քաղաքական ուժ է, որը ղեկավարվում է իր Ծրագրով: Մեր կուսակցությունը բաց է այն կուսակցությունների համար, որոնք դավանում են փիլիսոփայական, քաղաքական և տնտեսական մեզ համար ընդունելի հայացքներ: «Արդարություն» դաշինքի հետընտրական ժամանակաշրջանում գործելու փորձը, թերևս, վկայում է մեր մարտավարության ճշմարտացիության մասին: Ավելին,

կարծում ենք, որ եթե «Արդարություն» դաշինքի գործընկերները հետևեին մեր կոչերին, այն է՝ չճանաչել նախագահական ընտրությունների առաջին փուլի արդյունքները (ի դեպ, համապատասխան փաստաթղթի տակ դրված էին ընդդիմադիր բոլոր թեկնածուների ստորագրությունները), ապա Հայաստանի Հանրապետությունում այսօր կգործեր ժողովրդի վստահությունը վայելող լեգիտիմ իշխանություն:

– Կարծիքներ կան, որ Ռոբերտ Քոչարյանը մինչև տարեվերջ «պալատական հեղաշրջման» արդյունքում կարող է հեռանալ իր պաշտոնից՝վաղաժամկետ վայր դնելով իր լիազորությունները և փոխարինող նշանակելով, որի համար նկատի են առնում պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանին: Ձեր կարծիքով, արդյոք, հնարավո՞ր է նման սցենար: Դա դրական, թե՞ բացասական կանդրադառնա երկրի իրավիճակի վրա:

– 1998 թ. պալատական հեղաշրջումը Հայաստանը հասցրեց այսօրվա ծանր սահմանագծին, երբ վտանգված է մեր պետականության գոյությունը: Այսօր միայն քաղաքական ավանտյուրիստները կամ հայ ժողովրդի թշնամիները կարող են խոսել պետական կամ «պալատական» նոր հեղաշրջման մասին: Կարծում եմ, Ս.Սարգսյանի խելամտությունը կհերիքի, որ իր մանկլավիկներին արգելի խոսել այդ մասին: Հայաստանի բնակչությունը դեռ չի մոռացել գնդակահարությունը Ազգային ժողովում /27 հոկտեմբերի 1999թ./, երբ զոհվեցին Ազգային ժողովի խոսնակը, վարչապետը, նախարար և պատգամավորներ: Չի մոռացել և այն, որ այդ ժամանակ Ազգային անվտանգության նախարար էր Սերժ Սարգսյանը, ընդ որում այդ պաշտոնում աշխատանքի բավականին երկար ստաժով … Ցավոք, անհեռատես քաղաքական առանձին գործիչներ կարծում են, որ եթե մեր օրերում հնարավոր է գնել որոշ արտասահմանյան բարձրաստիճան դիվանագետների բարի տրամադրվածությունը, մասնավորապես և բարեկամական երկրների, ապա կաշառակերության հետևանքը պետք է անպայման լինի ամնեզիան (հիշողության կորուստը): Բարեբախտաբար, Հայաստանում այդ երևույթը չի նկատվում, և Հայաստանի քաղաքացիներին հիշողության այդպիսի կորուստ՝ ամնեզիա, չի սպառնում: Պաշտպանության նախարարի կաղրային «առաջիրումը», իրականում, հիվանդ երևակայության արգասիք է… Սինչդեռ խնդիրն այլ է՝ ինչպե՞ս մեղմացնել Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի արդարացի փոխհատուցումը կատարածի համար: Ավա՜ղ, նրանց մեղքերը շատ են, բայց մենք գործ ունենք մարդկանց հետ, ովքեր Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարի ժամանակ իրենց դրսևորել են արժանավայել… Ինչպե՞ս անել, որ Հայաստանի պետական բարձր պաշտոններում նրանց շատ դեպքերում ոչ ազգանպաստ, անգամ իսկ կործանարար քաղաքականությունը չարատավորի մեր հայրենիքի մի մասի՝ Ղարաբաղի, ազատագրման համար հայ ժողովրդի մղած ազնիվ պայքարը:

– Վերջին ամիսներին Ռուսաստանում տարակուսանքով են հետևում հայ քաղաքական և հասարակական որոշ գործիչների տեսակետների էվոլյուցիային, ովքեր ավելի հաճախ են արտահայտվում հօգուտ Հայաստանի արտաքին քաղաքականության էական սրբագրումների՝ի նպաստ Հայաստանի, ԱՄՆ-ի և արևմտյան այլ երկրների հետ

մերձեցմանը: Նման մի բան էլ նկատվում է և ձեր արտահայտությունների մեջ: Ինչի՞ հետ են կապված այդօրինակ փոփոխությունները: Պատրաստ է, արդյո՞ք, Հայաստանը հրաժարվել Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկեր լինելուց՝ այդպիսի գործընկեր դառնալով բացառապես ԱՄՆ-ի համար: Հայտնի է, որ ԱՄՆ-ի և Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը Անդրկովկասում ուղիղ հակադիր են: Արդյո՞ք իր դարը չի ապրել կոմպլեմենտարության քաղաքականությունը: Ժամանակը չէ՞, որպեսզի Հայաստանը կատարի աշխարհաքաղաքական միանշանակ ընտրություն:

– Իմ կարծիքով, Հայաստանի քաղաքական գործիչների հայացքների էվոլյուցիան տարակուսանք կարող է առաջացնել միայն քաղաքականությանը մոտ կանգնած Ռուսաստանի այն գործիչների շրջանում, որոնք համառորեն չեն ցանկանում տեսնել հենց Ռուսաստանի քաղաքական ղեկավարության հայացքների էվոլյուցիան: Չէ՞ որ Ռուսաստանի քաղաքական ընտրանին, օբյեկտիվորեն գնահատելով աշխարհաքաղաքական զարգացման վեկտորները, արդեն կատարել է իր սեփական ընտրությունը, որի մասին արդեն վերը նշվեց: Եվ եթե խնդիր է դրված մեղադրել քաղաքական առանձին գործիչների, ապա միայն այն բանի համար, որ նրանց հայացքների էվոլյուցիան դեռ շարունակում է համահունչ մնալ Ռուսաստանի մեր գործընկերների հայացքների էվոլյուցիային: Կանխազգում եմ, որ այսպիսի համընկնման մեկնաբանությունները կարող են լինել շատ տարբեր և միմյանց բացառող:

Իսկ ճշմարտությունը մեկն է: Հայաստանը շատ է շահագրգռված դեմոկրատորեն զարգացող և բարգավաճող Ռուսաստանով, որտեղ ավելի շատ հայեր են ապրում, քան Հայաստանում: Եթե չլիներ նրանց նյութական օգնությունը, Հայաստանի հարյուր հազարավոր բնակիչներ քարշ կտային իրենց անտանելի, ողորմելի գոյությունը: Հայաստանը նաև շատ է շահագրգռված հաստատելու սերտ կապեր ԱՄՆ-ի և Եվրամիության երկրների հետ: Միայն ԱՄՆ-ում ապրում են ավելի քան մեկուկես միլիոն հայեր, որոնք նույնպես ակտիվորեն օգնում են իրենց բարեկամներին և հարազատներին Հայաստանում: Դեռ ավելին, մենք բարձր ենք գնահատում 1,5 միլիարդ դոլարի անհատույց մարդասիրական օգնությունը, որը հատկացրել է ԱՄՆ մեր հանրապետությանը անկախության տարիներին: Նույնը կարելի է ասել նաև Եվրամիության երկրների մասին: Ճշմարտությունը սա է, որի մասին էլ բացահայտ խոսում ենք: Գոնե նման դեպքերում փորձենք համբերատար և հանդուժող վերաբերվել ժողովրդավարության այս փոքրիկ դրսևորումներին: Եթե, իհարկե, տվյալ դեպքում գործ չունենք մեզ արդեն հայտնի արատավոր սինդրոմի տարրերի հետ. «Այն, ինչ կարելի է Յուպիտերին, չի կարելի Ցուլին»: Դեռ ավելին. համաձայն չեմ այն պնդման հետ, որ ԱՄՆ-ի և Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը Հարավկովկասյան տարածաշրջանում ուղիղ հակադիր են: Այդպիսի տպավորություն չի ստեղծվում, երբ ուշադիր վերլուծում ես Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Իրանի, Ադրբեջանի, Վրաստանի նախագահների, Թուրքիայի վարչապետի բարձր մակարդակի հանդիպումները: Այդպիսի եզրակացության չես հանգում նաև Ռուսաստանի և ԱՄՆ-ի նախագահների հանդիպումներից, հատկապես

2005թ. մայիսյան հանդիպումներից: Այդպիսի կարծիք չի ստեղծվում, երբ համեմատում ես Ռուսաստանի և ԱՄՆ-ի առաջնորդների գնահատականները, որոնք հրապարակվեցին կապված՝ Իրանի ատոմային ծրագրերի հետ կամ էլ, երբ վերլուծում ես Ջորջ Բուշի ելույթը Վրաստանում: Վերն ասված ամենը ձեր հարց-հաստատման օգտին չի խոսում: Եվ առավել ևս նորովի են ընկալվում ԱՄՆ-ի պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հարցազրույցից քաղվածքները, որը նա տվել էր ՍԻ-Էն-Էն հեռուստաընկերությանը 2005թ. մայիսի 10-ին: Պետքարտուղարը հայտարարել էր. «Ռուսաստանն ունի հարուստ մշակույթ, իսկ նրա ժողովուրդը՝ մեծ ժողովուրդ է, և շատ հաճելի էր գտնվել այստեղ, որպեսզի նորից տեսնել դա և հայացք գցել ավելի ժողովրդավար և տնտեսապես բարգավաճող Ռուսաստանի ապագային, որը կարող է Միացյալ Նահանգների համար դառնալ իրական գործընկեր »:

Հայկական պետության բարձրագույն շահերը անհրաժեշտաբար թելադրում են մեր արտաքին քաղաքականությունը կառուցել՝ ելնելով Ռուսաստանի և ԱՄՆ-ի ընդհանուր շահերից, այն է՝ Հարավային Կովկասի տարածաշրջանը տեսնել դեմոկրատորեն զարգացող, խաղաղ և բարգավաճող: Մի խոսքով, ապարդյուն է սև կատու փնտրել մութ սենյակում, որն այնտեղ ի սկզբանե չի էլ եղել: Հայաստանի աշխարհաքաղաքական ընտրությունը կլինի անսխալ և հեռանկարային, եթե այն որոշի հանրապետության քաղաքական այն ղեկավարությունը, որը կձևավորվի ազատ, ժողովրդավարական և թափանցիկ ընտրությունների հիման վրա: Եվ եթե առաջնորդվենք միակ ճիշտ այս նախապայմանով, ապա, բնականաբար, հայ ժողովրդի համակրանքը, որն իրական իշխանություն կրողն է, կլինի այն պետությունների կողմը, որոնք գիտակցաբար մեզ կօգնեն Հայաստանը դարձնել մի երկիր, որն ի վիճակի կլինի կատարել պատմական աշխարհաքաղաքական ճիշտ ընտրություն: Ընտրություն պետք է կատարի նաև Ռուսաստանը, այն է՝ ռազմավարական ինչպիսի՞ գործընկերներ կցանկանա ունենալ և, որ՞ պետությունները կարող են լինել Ռուսաստանի իսկապես ռազմավարական գործընկերները: Այն Ռուսաստանի, որն ինքն է ընտրել ժողովրդավարական զարգացման ճանապարհը: Ռուսաստանին որպես ռազմավարական գործընկեր պե՞տք է, արդյոք, մի պետություն, որի բնակչությունը տառապում է Քոչարյան-Սարգսյան կոռումպացված վարչակարգի ճիրաններում: Կամ էլ ռազմավարական նրա գործընկեր կարող է լինել մի երկիր, որը Ռուսաստանի պես պետք է անշեղ առաջ շարժվի, ինչպես ասել էր Վ.Պուտինը, «ինչ-որ բանում ետ մնալով, ինչ-որ բանում էլ առաջընթաց ունենալով եվրոպական չափանիշներից»:

– ԱՄՆ-ի քաղաքականության նպատակասլացությունը, համառությունը Հայաստանում և ավելի լայն՝ Անդրկովկասում, անվիճելի փաստ է: Կարո՞ղ եք Դուք նույնն ասել տարածաշրջանում ռուսական քաղաքականության մասին: Ձեր կարծիքով, բավարա՞ր է, արդյոք, ռուսաստանյան իշխող կառույցների տեղեկացված լինելու աստիճանը տարածաշրջանի և կոնկրետ Հայաստանի իրավիճակի մասին: Ինչպիսի՞ քայլեր կարող էր ձեռնարկել Ռուսաստանը, որ ամրապնդեր նրա դիրքերը Հայաստանում՝ հաշվի առնելով

հայ և ռուս ժողովուրդների դարավոր կապերը: Թե՞, Ձեր կարծիքով, Մոսկվան գործում է ելնելով իր «կայսերական պատվամոլությունից», որոնք բավարարելը շահեկան չէ հայկական կողմին: Ո՞րն է Ձեր դիրքորոշումը «Գույք պարտքի դիմաց» պայմանագրի վերաբերյալ, ինչը կոշտ քննադատության է արժանանում Հայաստանում: Նպաստու՞մ է, արդյոք, ռուս-հայկական հարաբերությունների ամրապնդմանը և ռազմավարական գործընկերությանը ռուսական բիզնեսի մուտքը Հայաստան:

– Ձեր հարցի առաջին մասը կարելի է գնահատել որպես կշտամբանք այն քաղաքականության, որը Ռուսաստանը վարում է Հայաստանում և, ավելի լայն, Անդրկովկասում: Ինձ իրավասու չեմ համարում գնահատական տալ Ռուսաստանի իշխող կառույցների տեղեկացվածության աստիճանի մասին Հարավային Կովկասի տարածաշրջանում: Հայաստանում գործերին տեղյակ լինելով, առանց վախենալու, որ կսխալվեմ, կարելի է համոզված ասել միայն Ռուսաստանի իշխող կառույցների ապատեղեկացված լինելու մասին (կարծում եմ, որ այս խիստ գնահատականը բխում է նաև Ձեր երկրի շահերից, այլապես մենք ավելի տխուր եզրահանգումների կգանք):

Ռուս և հայ ժողովուրդների դարավոր կապերը վերածվել են ամուր բարեկամության միայն այն ժամանակ, երբ մեր ժողովուրդները միասին էին պաշտպանում իրենց ազատությունը և անկախությունը, համատեղ դիմադրում արտաքին սպառնալիքներին: Անկախության տարիներին էականորեն փոխվել է այդ սպառնալիքների բնույթը: Այժմ հայ պետականության համար թիվ 1 սպառնալիքը ավելի շատ դառնում են ներքին սպառնալիքները՝ կոռուպցիան, կաշառակերությունը, ժողովրդավարական ազատության ճնշումը, կլանային տնտեսությունը, բնակչության զգալի մասի աղքատացումը և Հայաստանի քաղաքացիների զանգվածային արտագաղթը մերձավոր և հեռավոր արտասահման, վերջին տաս տարիներին 2,5 անգամ բնակչության բնական աճի նվազումը: Այս ամենը իր հերթին հավանական է դարձնում արտաքին սպառնալիքների հնարավորությունը Ադրբեջանի և նրան աջակցող Թուրքիայի կողմից: Այսպես, եթե Հայաստանը արտաքին սպառնալիքներից պաշտպանված է «Կոլեկտիվ անվտանգության պայմանագիր» կազմակերպությամբ, ապա ներքին ոչ պակաս վտանգավոր սպառնալիքներից պետության և ժողովրդի պաշտպանվածության մասին ամենևին խոսք լինել չի կարող:

Հայաստանի, նրա ժողովրդի պաշտպանությունը ներքին սպառնալիքներից յուրաքանչյուր ընտանիք կզգա ամեն ժամ, ամեն օր, որովհետև դրանից տառապում է Հանրապետության բնակչության մեծամասնությունը: Պաշտպանել Հայաստանի ժողովրդին ներքին սպառնալիքներից մեր երկրների վավերացրած պայմանագրերի և համաձայնագրերի շրջանակներում՝ դա էլ կլինի Ռուսաստանի հանդեպ հայ ժողովրդի վստահությունը ամրապնդելու բարեբեր հողը:

Իսկ ռուսական բիզնեսի ընդարձակումը Հայաստանում միայն օգտակար կլինի: Ինչ վերաբերում է «Գույք պարտքի դիմաց» համաձայնությանը. պետք չէ ողբերգականացնել հարցը, պարզապես պետք է հետևենք մի խելացի չինացու հայտնի ասացվածքին. «Կարևոր չէ՝ ինչ գույնի է կատուն, կարևոր է, որ նա բռնի մկներին»: Դրա հետ մեկտեղ արձանագրենք,

ավա՜ղ, Սիբիրի կատուն ինչ-որ ծուլանում է Հայաստանում մկներ բռնել …

Յանկանում եմ հիշել նաև հետևյալ պատմությունը, որը ասույթ է դարձել: Մի անգամ Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպանը շնորհավորեց ընդդիմության առաջնորդներից մեկի ծննդյան օրը: Շնորհավորանքը, ի թիվս այլ երկրների ներկայացուցիչների ողջույնների, ընդունված կարգի համաձայն ընթերցվեց կուսակցության ակտիվի առաջ և ներկաների կողմից ընդունվեց ջերմ: Այս տեղեկությունը հայտնվել էր «ընդդիմադիր» համարվող թերթերից մեկում: Այսօր ակնհայտորեն կարելի է պնդել, որ նմանատիպ լուրերի հրապարակման երանգները ուղղորդվում էին Ս.Սարգսյանի կողմից: Հաջորդ օրը այդ կուսակցության գրասենյակում ստացվեց անհանգստացած դեսպանի պատասխանը՝ սույն «տեղեկատվության արտահոսքի» համար: Այնուհետև՝ ավելին. մամուլում հրապարակում հայտնվեց ՀՀՇ-ի կարկառուն գործչի ստորագրությամբ, որում հիշատակվում էր, որ ռուս դեսպանը հարկադրված է ուղղորդվել իր գործունեության մեջ պաշտպանության նախարարի հրահանգներով: Ոչ մի բողոքի հայտագիր, ոչ մի հերքում դեսպանատան կողմից դրան չհաջորդեց… Իսկ մարդիկ կարդում էին և տարակուսում: Դրան զուգահեռ նշենք, որ Հայաստան գործուղված Ռուսաստանի բարձրաստիճան պաշտոնական անձանց արձանագրային համբույրները և փոխադարձ «քնքշանքը» Հայաստանի ոչ լեգիտիմ և դրա իշխանավորների հետ պրոպագանդումը լրատվական միջոցներով ամենևին չէին ավելացնում մեր ազգաբնակչության համակրանքը Ռուսաստանի հանդեպ: Երախտապարտ հայ ժողովրդի հիշողության մեջ վերակենդանանում և այսօրվա իրողությանը հակադրվում էր ռուսական մեկ այլ դեսպանի՝ Ա.Գրիբոյեդովի կերպարը:

Առաջին հայացքից սովորական թվացող հարցերը խորքային վերլուծությունների առիթ են տալիս: Ձեր անպատասխան մնացած մյուս հարցերը, իմ կարծիքով, բխում են գլխավորից: Կվերականգնվի Հայաստանում սահմանադրական կարգը՝ այդ ժամանակ մարդիկ կվերադառնան իրենց ակունքներին, նորից կարթնանան լուսավոր հիշողությունները, նորովի կգիտակցվի այն լավագույնը, որ դարերով միացնում էր մեր ժողովուրդներին:

Եվ այս պայմաններում անհրաժեշտ է նորովի իմաստավորել (զերծ մնալով կայսերական պատվամոլության բարդույթից) Պետրոս Մեծի 1724թ. նոյեմբերի 10-ի հրովարտակի հետևյալ խոսքերը. «Սույնով մենք հայ ժողովրդին հանուն քրիստոնեության մեր հաճության և հովանու ներքո ենք վերցնում»: Իսկ չէ՞ որ իմաստուն թագավոր էր Պետրոս Մեծը: Եվ ուզում եմ մտածել, որ ամենևին էլ պատահականություն չէր, որ 2003թ. հոկտեմբերի 6-ին Մոսկվայի Միությունների տան Սյունազարդ դահլիճում ելույթ ունենալով Հայերի համաշխարհային կազմակերպության հիմնադիր համագումարում՝ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը Պետրոս Առաջինի հենց վերոհիշյալ նախադասությամբ էլ ավարտեց իր ողջույնի խոսքը:

«Իրավունք», 3 – 9.VI.2005:

Ելույթներ

Выступления

Ճարպիկների անճարակ փորձը...

Հարգելի նախագահ, հարգելի գործընկերներ:

Առաջարկված օրակարգով Ազգային ժողովի արտահերթ նիստի հրավիրումը*, մեղմ ասած, տարակուսանք է հարուցում և ոչ այլ ինչ է, քան խորագույն համազգային ճգնաժամի ևս մի արտահայտություն:

Ի՞նչ են մեզ առաջարկել «Հանրապետություն» խմբակցության որոշակի մասն ու, համենայն դեպս, դրան հարած մեր մի շարք գործընկերները: Ի՞նչ նպատակներ են հետապնդում Ազգային ժողովի կանոնակարգում փոփոխություններ մտցնելու մասին օրենքի նախագծի նախաձեռնողները: Գուցե թե սա մի փորձ է վերջապես ժողովրդավա՞ր դարձնել միաբեղել խորհրդարանը և կամ էլ խթանել նոր ընդդիմության կազմավորումը՝ նախորդի յուրօրինակ ինքնաբացարկի պայմաններում: Ավելի շուտ՝ ոչ մեկը և ոչ մյուսը: Ժողովրդավարացման նպատակը երևութական է, իսկ նոր ընդդիմության ծնունդը՝ արհեստական, որը մատնում է միայն «Հանրապետություն» միավորման խոստումնառատ նախընտրական ծրագրի դրոշի ներքո Ազգային ժողով թափանցած որոշ պատգամավորների միանգամայն բացահայտ խուճապը հանրապետությունում և նրա շուրջն ստեղծված ծանր իրադրության առնչությամբ: Մեր առջև ուրացության, ավելի պարզ՝ ռենեգատության դասական օրինակ է, վերջին տարիների մեր բոլոր դժբախտությունների համար պատասխանատվություն կրող անճանցից առավել ճարպիկների անճարակ փորձը՝ մեղավորներից վերազգեստավորվելու մնադրողների:

Որո՞նք են իշխող ընտրախավի այսօրվա պառակտման դրդապատճառները:

Արդեն ակնհայտ է, որ շուկայական հարաբերություններին անցնելու պատրվակով կործանվել է մեր արդյունաբերական համալիրը, միլիոնների արժեք ունեցող հզոր ձեռնարկություններն ու ֆաբրիկաները մեկ բնակարանի արժեքով տիրացել են հրապարակ եկած ճարպիկ գործամոլները, խարդախներն ու թալանչիները:

Ազգաբնակչությունը, աշխատավորական զանգվածներն անմասն են մնացել ազգային հարստությունից: Փլուզվում է կրթական համակարգը, շատերին արդեն անմատչելի է առողջապահությունը: Փաստորեն կորստի են մատնվել մեր ազգային հարստությունը հանդիսացող գիտատեխնիկական ներուժը, մշակույթը: Մտավորականության ստվար մասն ընչաքաղց կյանք է վարում: Հողի սեփականաշնորհման քողի ներքո թալանվել ու ոչնչացվել են միլիարդների արժեք ունեցող գյուղատնտեսական հիմնական ֆոնդերը: Աղետի գոտում հազարավոր մարդիկ, արդեն 9-րդ տարին է, ապրում են

* Ապրիլի 22-ին :

տարրական հարմարություններից զուրկ կացարաններում: Մսխվել ու կողոպտվել են հարյուր միլիոնավոր դոլարների հասնող վարկերը: Հօդս են ցնդել նախկին տարիներին աշխատավորության կուտակած միլիարդավոր խնայողությունները: Հանրապետության բնակավայրերը լցվել են մուրացկաններով, անապաստան երեխաներով: Ժողովրդի ստվար հատվածի կենսապահովման միակ միջոցը պանդխտության մեկնածների դրամական օժանդակությունն է, որոնք օտար երկրներում կրում են անասելի զրկանքներ և անպատվություն: Անդառնալի կորուստ է ժողովրդագրական վիճակի կտրուկ փոփոխությունը: Երկրից արդեն հեռացել է բնակչության մոտ մեկ երրորդը:

Խաթարվում է աշխատասեր և ուշիմ ժողովրդի բարոյական նկարագիրը: Մարմնավաճառությունը, չարչիությունը, վաշխառությունը և բազմաթիվ այլ արատներ դարձել են կենսակերպ: Աներևակայելի ծաղկում են ապրում կաշառակերությունը, դաժանությունը, հայ մարդն իր հայրենիքում բացարձակ անպաշտպան է պետական մեքենայի անմարդկային ճնշումների դեմ: Այս ամենի մասին մեկ անգամ չէ, որ ասվել է այս ամբիոնից և չես կարող չկրկնել, քանի որ այդ բոլոր խնումները տեղի են ունեցել միաձայն ընդունված օրենքների, ներխորհրդարանական և մերձխորհրդարանական լոբբիի անսքող միջամտությամբ կայացված՝ ժողովրդի համար սոցիալական աղետալի հետևանքներով հղի որոշումների նվագակցության ներքո, երբ առարկող ձայները կամ չլսելու էին տրվում և կամ խլացվում միահամուռ քվեարկության կանոնավոր գործող մեքենայի միջոցով:

Այս է երեկվա և այսօրվա քաղաքականության իրական պատկերը Հայաստանում: Ներկայիս դժնի ու չարագուշակ արդյունքներին նաև ավելանում են Լիսաբոնի գագաթաժողովում հանրապետության քաղաքական, դիվանագիտական մեկուսացման բացահայտ կամ թաքնված հետևանքները:

Թվում էր, թե, ի հակակշիռ հայոց պետականությանը սպառնացող ներքին ու արտաքին այս վտանգների, «Հանրապետություն» խմբակցությունը արտահերթ նիստ պիտի նախաձեռներ՝ նկատի ունենալով հանրապետությունը օրհասական վիճակից դուրս բերելը, ժողովրդին հուսահատ, թշվառ կացությունից հանելու հրատապ հարցերը: Սակայն, ցավոք, իրենք առավել կարևոր են համարում խորհրդարանի կանոնակարգում առաջարկվող փոփոխությունների քննարկումը:

Այսպիսով, այսօր մենք ականատես ենք ոչ միայն ՀՀԾ-ի վաղեմի հիվանդության՝ պառակտման մոլուցքի մի նոր դրսևորման, այլև շատ ավելի ծանր իրողության՝ երկրի բախտը տնօրինում է ակնհայտորեն ժողովրդից կտրված, կազմակերպական տաղանդից և էներգիայից զուրկ եսամոլական շահերով առաջնորդվող, վստահություն չներշնչող խմբակցություն, որն ընդունակ չէ համախմբելու համայն հայության ուժերը և երկիրը դուրս բերելու օրավուր խորացող ճգնաժամից:

Ակնհայտ է, որ աշխարհաքաղաքական և ներքաղաքական ներկա ծանր պայմաններում ժողովրդի հավաքական կամքն օրենսդրական, կաղապային և այլ տիպի խորամանկ քայլերով ջլատելը, ազգային միաբանության գաղափարը նենգափոխելն ու ամլացնելն

ում կողմից էլ որ ձեռնարկված լինեն՝ հին կամ նոր հիշականների, որևէ քննադատություն չհանդուրժող պետական այրերի, թե առճակատման անխոհեմ, եթե չասենք՝ վտանգավոր ճանապարհն ընտրած ընդդիմադիր կուսակցությունների, ի սկզբանե կործանարար են մեզ համար…

Ականատեսից հիշում ես հայտնի պատմությունը. երկու գանձ որոնողներ, չհամաձայնելով գտածը կիսելու պայմաններին, մահացու մենամարտի են բռնվում: Անզիջում մենամարտողներին սթափեցնում է մարտավկայի ահև զգուշացումը՝ ով էլ հաղթի, նրան ևս սպասում է խստագույն պատիժ, քանզի այդպիսին է գանձախույզների իմաստուն օրենքը:

Շնորհակալություն:

«Իրավունք», 26. IV. – 1.V.1997: «Հայաստանի կոմունիստ», 26. IV. 1997:

Объединиться вновь. Во имя реальной свободы, достойной жизни...

2-4 *ноября в Калининграде прошла II сессия Парламентского собрания Союза Беларуси и России, в работе которой по приглашению председателя этого союза, председателя Госдумы РФ Геннадия Селезнева приняла участие и армянская делегация. Собрание единогласно приняло постановление, согласно которому внепартийному общественному объединению ,,Армянская народная инициатива Россия — Беларусь — Армения" предоставлен статус постоянного наблюдателя при Парламентском союзе.*

Ниже ,,НВ" публикует сокращенный вариант выступления на сессии депутата Национального собрания РА, руководителя армянской делегации Арташеса Гегамяна.

Наше присутствие здесь мы расцениваем как проявление уважения к доброй воле 1 миллиона 22-х тысяч 342-х граждан Армении, выразившейся в требовании от властей республики провести всенародный референдум по вопросу вхождения Республики Армения в союз Беларуси и России.

Что же побудило около половины наших сограждан, имеющих право голоса на выборах, откликнуться на воззвание о вхождении в союз, сделанное видными деятелями науки и культуры, представителями общественно-политических организаций? Какие думы, тревоги и чаяния обуревают нас на пороге третьего тысячелетия? Каким нам видится путь, следуя которому суверенная Республика Армения станет сильной как в экономическом, так и в военном отношениях? С кем и как можно добиться справедливого решения вопроса Нагорного Карабаха, обеспечить единство Армении и десятимиллионной армянской диаспоры — спюрка?

За годы независимости экономическая политика властей республики, проводимая под патронажем Международного валютного фонда, фактически сводилась к бесконтрольной приватизации госимущества, огульной либерализации экономики при кажущейся макроэкономической стабилизации через жесткое планирование денежной базы. Происходило это в ус-

ловиях свертывания роли государства как активного субъекта экономического влияния. В результате такой политики экономика Армении подверглась либерально-монетаристскому ,,шоку", из которого до сих пор и не вышла.

По сути наша экономика стала очередным полигоном практической реализации *теории "золотого миллиарда"*, в соответствии с которой, как вам известно, обеспеченное существование на планете может быть гарантировано только для миллиарда граждан наиболее преуспевающих стран. Нам же уготована жалкая участь поставщика дешевой рабочей силы и сырьевого придатка, назначение которого — смягчить последствия сырьевого и экономического кризисов, угрожающих благополучию и стабильности развитых государств. В рамках этой стратегии, известной под названием ,,Вашингтонского консенсуса", разработанной МВФ для слаборазвитых стран третьего мира, происходит фактическая деиндустриализация страны, свертывание наукоемких производств. Уже становится очевидным, что царящий в республике режим все более отчуждается от отстаивания национальных интересов. Не вызывает сомнений, что совместная выработка взвешенных и разумных мер по стимулированию инвестиционной и инновационной активности, экономического роста в условиях единого экономического пространства России — Беларуси — Армении мобилизует интеллектуальный, научно-производственный потенциал республики, приведет к сдвигам в экономике. Интеграция Армении в экономическое пространство союза вовсе не означает переход к политике изоляции от мировой экономики. Это уже и экономически невозможно, и бесперспективно с точки зрения национального развития. Нам представляется, что экономическая интеграция будет способствовать обеспечению национальной конкурентоспособности в плане экономической, научно-технической, образовательной и культурной деятельности в глобальном масштабе. Уверен, что экономическая интеграция Армении с Белоруссией и Россией воздастся сторицей и принесет огромную прибыль членам союза.

Уважаемые депутаты. Геополитический смысл союза ,,Россия — Беларусь" совершенно очевиден: недопущение образования при расширении НАТО Балтийско-Черноморской санитарной зоны между Европой и Россией. На гербе России — двуглавый орел, смотрящий на запад и восток. С образованием союза западный тыл России надежно прикрыт Беларусью. Настало время орлу окинуть взором и южные рубежи России, где происходит постоянное вооружение южного форпоста НАТО-Турции, которая небезуспешно пытается дать новый толчок пантюркизму и обнять подбрюшье России

,,культурным" (пока что) союзом тюркоязычных стран. Более того, уже есть модель некоего ,,Кавказа без России", фактически и без Армении. Известно также, как он должен быть устроен, кто какие в нем должны иметь позиции. И позиции эти проглядываются в поведении тех или иных стран СНГ в постсоветский период. В этой связи исключительную актуальность приобретает взвешенное решение проблемы Нагорного Карабаха. Думается, что ни у одного из здравомыслящих политиков не вызывает сомнений, что в деле укрепления позиций в Закавказье и на Кавказе в целом Армения для России объективно приоритетна. Сдача геополитических позиций в обмен на его экономические, нефтяные приобретения, чего добиваются некоторые политико-финансовые круги, будет в конечном итоге означать крах и в геополитике, и в геоэкономике. Подобная политика, на наш взгляд, способна нанести прямой ущерб стратегическим интересам России в регионе, которые во многом обусловлены обороноспособностью Армении и Нагорного Карабаха. Всемерное укрепление нашей обороноспособности поостудит пыл тех, кто свое будущее связывает исключительно с военным потенциалом натовской Турции. Чем может обернуться насильное включение Нагорного Карабаха в состав Азербайджана? Это чревато еще большими несчастьями для армян Карабаха, в сравнении с теми, которыми они были ой как сыты в советские времена. Но самое главное — это будет началом изгнания армян из Закавказья. Подумайте, кому это выгодно? Хотелось бы привести мнение первого Чрезвычайного и Полномочного посла России в Армении Владимира Ступишина. Вот о чем он говорит в статье, опубликованной в апреле в "Независимой газете": “Разумная политика: с соседями — как с соседями, в какой бы лес они ни глядели. Ну а уж с союзниками — как с друзьями и братьями, без хамства, измен и хитростей, с полным доверием и взаимной помощью, чтобы все видели надежность тесных уз с Россией. И не только надежность, но и выгодность. Вот это и будет политика, отвечающая национальным интересам наших народов, которые только и можно обеспечить всерьез, сохраняя совпадающие с нашими интересы союзников. В Закавказье — это Армения и Карабах. Дружить с ними, помогать им — совсем не препятствие к нормальным межгосударственным отношениям с Азербайджаном, да и той же Турцией. Наоборот, будем мы беречь своего союзника — будут и нас уважать больше". С этими оценками российского дипломата нельзя не согласиться.

Уважаемые депутаты. Сегодня для многих из властей предержащих республики, которые оказались вовлеченными в политику на волне критики

многовековой русской ориентации армянского народа, вступить в союз весьма нелегко, если не сказать невозможно. Для них это значит — наступить на горло собственной песне, признать, что обуревающий их на протяжении нескольких лет пафос разрушения "империи зла" на практике обернулся тем, что вместе с грязной водой выплеснули и ребенка. Страх перед такой перспективой является серьезным препятствием на пути вхождения Армении в союз Россия — Беларусь. Однако начавшийся процесс выражает чаяния армянского народа. Этому будет способствовать подписанный в августе 1997 года президентами России и Армении Договор о дружбе, сотрудничестве и взаимной помощи между Российской Федерацией и Республикой Армения, а также поддержка Парламентским собранием Союза народной инициативы Армения — Россия — Беларусь. Народная инициатива всецело одобряет договор о союзе Беларуси и России, стержневая идея которого емко и рельефно выражена в статье № 1, которая гласит: ,,... Каждое государство — участник союза — сохраняет государственный суверенитет, независимость и территориальную целостность, Конституцию, государственный флаг, герб и другие атрибуты государственности".

Уважаемые депутаты! На этой далекой от моей родины балтийской земле есть святое место — братская могила героев, павших в 1945 году при штурме твердыни пруссачества — Кенигсберга, где начертаны слова: ,,Ваше мужество беспримерно. Ваша воля была непреклонной. Ваша слава бессмертна". Впервые узнал я об этом памятнике братства и бессмертия из книги воспоминаний моего великого соотечественника, карабахца, маршала Советского Союза Ованнеса Баграмяна, воевавшего в этих краях и прекрасно знавшего цену дружбы, цену союза, имя которому — Победа. Свыше миллиона граждан-соотечественников победоносного маршала сказали твердое "да" союзу Армения — Россия — Беларусь, сказали "да" союзу, защищенному более полувека назад мужеством, непреклонной волей, кровью мудрых наших отцов, бессмертный подвиг которых призывает, требует, вопиет объединиться вновь во имя реального прогресса, во имя реальной свободы, во имя цивилизованной достойной жизни на планете. Да простится слову моему за несколько приподнятую для нашей деловой встречи тональность! Но как же иначе можно говорить о большой, народной тяге?!

"Новое время", 8.XI.1997.

«Ազգային Միաբանություն» հասարակական-քաղաքական կազմակերպության նախագահ Արտաշես Գեղամյանի հայտարարությունը

Ընտրությունների արդյունքները պաշտոնապես վավերացված են և ցանկանում եմ արտահայտել մի քանի խիստ կարևոր նկատառումներ:

Առաջին. Հայաստանում տեղի ունեցան ընտրություններ, որի դիմաց առանց վարանելու, կարելի է գրել՝ մեզ բոլորիս պատիվ չբերող ընտրություն, որն ուղեկցվեց տեղական ինքնակառավարման առանձին մարմինների անպատկառ վարքով, ընտրացուցակների խնաթյուրմամբ, ընտրողների վստահության քվեների արժեզրկմամբ:

Ժողովրդին պատկանող իշխանությունը կրկին իրենց ձեռքը գցեցին բազում մարդիկ, որոնք օրենքի տուն են շտապում՝ ոտնահարելով օրենք և օրինականություն, որոնք օրենսդիր մարմին են գնում՝ հույս ունենալով թաքցնել՝ երկիրն ավերածության վերածած մարդկանց հետ իրենց համագործակցությունը քաղաքական նոր տանիքում:

Ժողովրդի վստահության քվեն գրպանած այս մարդկանց վրա քաղաքական հաշիվներ անողներին ասենք. մոլոր եք...

Երկրորդ. Մենք խոնարհվում ենք այն տասնյակ հազարների առջև, ովքեր այս խառն օրերին, երբ բարոյական չափանիշներն են արդեն խնվում, հաստատակամ եղան և իրենց ձայնը բարձրացրեցին մեր քաղաքական պայքարի օգտին: Մենք լսեցինք նաև այն հազարների ձայները, որոնք խլացվում էին տնամասերում՝ ընտրական ցուցակների վրա սեփական պարտությունը խզբզող ճարպիկների ձեռքերով:

Մենք այսօր ուժն ենք, քան երբևէ, որովհետև նախընտրական և հետընտրական հիստերիայի, արհեստածին կուսակցական քաոսի մեջ, միևնույն է, մեր խոհեմ ժողովուրդը չսխալվեց:

Մի բան պարզ է. ստում ու կեղծում է նա, ով վախենում է, ում գործը չէ քաղաքականությունը, ում մանր խաղերն արդեն խաղացված են, ում բանեցրած գործիքը բթացած է արդեն:

Խնդրեմ՝ տեղական առանձին ցեցերի վարքը՝ քաղաքապետ, գյուղապետ, մարզպետներ, որոնք շատ օգտագործվելուց անպիտան են այլևս և պիտի քշվեն հայրենի կառավարության հետ ձեռք ձեռքի տված: Մենք չենք հանդուրժի, որ մեր ազգի արժանապատվության հաշվին սեփական փառասիրությանն առաջնություն տվողն իշխի

ժողովրդին. նրանք, եթե մի քիչ խոհեմություն ունենային, չէին հանդգնի կանգնել մեր և մեր, այսինքն՝ մեր և ժողովրդի միջև: Մենք սկզբունքներ ունենք, որոնք ամենևին էլ պայմանավորված չեն նախարար-մարզպետի կամ էլ քաղաքապետի նախընտրական ջանասիրությամբ ու նրանց շորթած տոկոսներով: Ուստի, մենք գալիս ենք նրանց կամքին հակառակ՝ հօգուտ հայ մարդու արժանապատվության:

Երրորդ. Այս ընտրությամբ հանրապետական-ժողովրդական միասնականները դեմ չեևն լինել ՀՀԾ-ի արժանի իրավահաջորդի դերում՝ չնայած ինքնամաքրվելու նրանց հնարավորությունը մենք դեռ չենք բացառում, քանի որ մեծ ցանկություն ունենք ազատված տեսնել նրանց ծպտված հիշականի կապանքներից:

Չորրորդ. Քաղաքական ռոմանտիկի դեր ստանձնած դրսի վարձկաններն այսօր հերթական անգամ սրտերը բաց են պահում օտար առաքյալների առջև. մոռանալով, որ մեզ դատողները դեռ պատիվ չեն մատուցել ներողություն հայցել մի ամբողջ ժողովրդից իրենց այն ստորագրությունների համար, որ դրել են 95, 96-ի կեղծված ընտրությունների տակ: Ու այսօր քաղաքական առանձին գործիչներ շունչները պահած շարունակում են սպասել դիտորդական հերթական գնահատականին, որ մանկամտաբար նրանց բողոքեն, թե ընտրական ծանր շղթա է կախված մեր ժողովրդի ազատության վրա: Քաղաքական կարճատեսության այս «տուրիզմը» չէր, որ տասը տարի շարունակ հայրենի գործիչներին պահեց խիստ վտանգավոր մի մտայնության ճիրաններում՝ թե դուրսը գիտի մեր ներսը: Դուրս ու ներսի բախտախնդիրներին, ժողովրդին քաղաքական ապրանք կարծողներին ասենք. առնվազն միամտություն կլինի, այսպես կոչված, ժողովրդավարական ինքնակառավարման մարմնից, որ քանիցս հաստատել է իր սնանկությունը, ակնկալել ավելին: Այս ամենը զարմանալի չէր, օրինաչափ էր ու սպասված: Եվ, բնականաբար, դարձյալ պիտի ընդգծվեին 95, 96-ի ծանոթ դեմքերը, որոնց ձեռք գցածը, ի դժբախտություն իրենց, ընդամենը մի թղթի կտոր է, ինչը կապ չունի ժողովրդի, առավել ևս՝ նրա վստահության հետ: Այս ամենը հետևանք ու արդյունք է նրանց խեղճության ու պարտության, իսկ նպատակը մեկն է՝ վրեժ լուծել սեփական քաղաքական անցյալից, փնտրել-գտնել մեղավորներին՝ միայն ոչ իր անցյալում, և չկանգնել ոչնչի առջև, անցյալի տեղ պայթեցնել անգամ ներկան՝ երկիր ու պետություն ներսից, միայն այն պատճառով, որ այդ երկրի ներսում է իր չուզած, չսիրած անցյալը:

Հինգերորդ. Գիտեք, մեր պետությունն այսօր կանգնած է տնտեսական, քաղաքական, ընդհուպ բարոյական ճգնաժամի առջև: Ու այսօր հաղթության դափնեպսակները հյուսվում են «Միասնություն» դաշինքի մի անհեռանկարային ծրագրի հենքի վրա: Մենք պարտավոր ենք զգուշացնել. այդ ծրագիրը հանրապետությանը տանելու է փակուղի: Հաղթարշավի կրքերով բռնկված նորընտիր մեծամասնությանը հուշենք, որ աթոռակռվի ժամանակը չէ, որ ժամն է քրտնաջան աշխատանքի, հորդորենք նրան՝ «Քարի եղեք հրաժարվել մի անհեռանկարային ուղեցույցից, որի վերնագիրը միասնության ծրագիր եք դրել»: Մեր ժողովրդի համար օրհասական այս ժամին բարի եղեք, վերջապես, կյանքի կոչել ազատական հայտարարված տնտեսությունը, տնտեսական ու իրավական այն

երաշխիքները, որոնցով մեր երկիրը, ի վերջո, դուրս կգա հոգեվարքից:

Նախընտրական շրջանում մենք գործազուրկին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող գաղթականին, Արցախի ազատամարտիկին, հերոսների այրիներին ու հարազատներին, ընկճված տարեցներին ու երիտասարդներին, մի խոսքով՝ մերոնց խոստացել էինք, որ իրենց բարեկեցության համար պատրաստ ենք մեր ծրագիրը տալ անգամ ամենահավակնոտին. այսօր մենք կատարում ենք մեր այդ խոստումը, հակառակ դեպքում՝ հերթական փորձությունը փորձանք կդառնա մեր պետության գլխին և կպարտվի ժողովուրդը: Իսկ մեր պետությունն ու ժողովուրդը չպիտի պարտվեն: Նրա հաղթանակի ծրագիրը դնում ենք ձեր առջև:

Տա՛ Աստված, որ խոհեմություն ունենանք այն իրագործելու:

«Իրավունք. հարց ու պատասխան», 8 – 14.VI.1999:

«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանի խոսքից

Անվիճելի է Հայ Հնավոխական Դաշնակցության ավանդը հայապահպանության, հայության երկու հատվածների մերձեցման, աշխարհասփյուռ մեր ժողովրդի ազգային, մտավոր և հոգևոր արժեքների պահպանման գործում: Այս կուսակցության նկատմամբ միարժեք գնահատականներ չեն եղել: Անարդարացի կլինի աչք փակել այն իրողության առաջ, որ դաշնակցական տասնյակ հազարավոր քաջարի հայորդիներ կուսակցության պատմության ողջ ընթացքում ընկել են ազգային գոյամարտերում՝ հանուն ազգի արժանապատվության, չտեսնելով իրենց երազած ազատ Հայաստանը:

Այս ընդհանուր ժողովը տեղի է ունենում մեր հանրապետության համար բախտորոշ ժամանակում: Նոր պետականության ակունքներում, ղարաբաղյան ազգային-ազատագրական պայքարի ճանապարհին իշխանությունը հայտնվեց բախտախնդիրների ձեռքում, որոնք հայոց համազգային շարժման քողի տակ սեփական երկրում բզկտեցին հայրենասեր ուժերին, կողոպուտի և թալանի մատնեցին նախորդ սերունդների ջանքերով ստեղծված մի վիթխարի հարստություն: Խոսքը միայն նյութական արժեքների մասին չէ: Հազիվհազ իրենց հողում ծվարած, իրենց տուն-տեղը դրած ժողովուրդը, այս անգամ արդեն ոչ օտարի ձեռքով, նորից կանգնեց զանգվածային արտագաղթի առջև:

Ստիպված ենք փաստել, որ վտանգված է հայոց պետականությունը: Երկիրը կործանման շեմին հասցրած նույն ուժերը, պատասխանատվությունից խուսափելու, թալանածը մարսելու նպատակով համախմբվել են: Խորացնելով ներքաղաքական ճգնաժամը, վախի, սպառնալիքի մթնոլորտում նրանք շարունակում են իրենց ազգադավ գործը:

Անհնար է չհասկանալ, որ դրսից վիթխարի գումարներ են ծախսվում հայերի ձեռքերով ապակայունացնելու իրավիճակը Հարավային Կովկասում: Անհրաժեշտ է տեսնել սպառնացող վտանգը, որի իրագործումն արդեն իսկ ստանձնել է հինգերորդ շարասյունը: Ասվածի մեջ չկան խտացված գույներ, ոչ էլ կոչ՝ սկսել վհուկների որս: Սա է իրականությունը:

Տագնապով արձանագրենք, որ ներկայիս Ազգային ժողովում քաղաքական մեծամասնություն կազմող կուսակցությունները, որոնք ձեղավորել են նաև կառավարությունը, չեն դրսևորում քաղաքական կամք և վճռականություն՝ անաչառ գնահատելու

ստեղծված իրավիճակը, անվանակոչելու այն տարրերին, որոնք, իրենց կուսակցություններ հորջորջելով, էլ ավելի են խորացնում ճգնաժամը: Առավել քան դատապարտելի է հայեցողական կեցվածքով օր օրի ուժ հավաքող հիշածին ռևանշիստների ոտնձգություններին հետևելը: Այս պարագայում լռելը նույնն է, թե կամովին հրաժարվել քաղաքական ընտրանի-էլիտա կոչվելու, ժողովրդի բախտը տնօրինողի իրավունքից:

Խոստովանենք, որ ներկայիս քաղաքական, բարոյահոգեբանական խոր ճգնաժամը գաղափարախոսության հետ առնչություն չունի:

Բոլոր հայրենասեր ուժերի համար այսօր կա մի գաղափարախոսություն՝ փրկել ազգային պետականությունը վերահաս վտանգից, ներքին և արտաքին այն ուժերից, որոնք փորձում են իրականացնել մեր թշնամիների երազանքը. «Մենք կշրջապատենք Հայաստանը, իսկ մնացածը հայերն իրենց ձեռքով կավարտեն»:

Սահմանադրական փոփոխությունները, կառավարման համակարգի վերաձևումներն ու նախագահական արտահերթ ընտրությունները և ոչ մի առնչություն չունեն ստեղծված վիճակին դիմակայելու հետ: Այդ պահանջները պարզապես ծխածածկույթ են հինգերորդ շարասյան դիվային ծրագրերն իրականացնելու համար:

«Ազգային Միաբանությունը» կոչ է արել, այսօր էլ է կոչ անում՝ լինել զգոն և աչալուրջ՝ գիտակցելով, որ զոհասնանին դրված է մեր բոլորի հայրենիքի բախտը, մեր բոլորիս երեխաների ապագան:

Գիտենք, որ երկրի ներկայիս վիճակը խիստ մտահոգում է նաև մեր սփյուռքահայ նբայրներին ու քույրերին, որոնց շարքերը գնալով արագորեն համալրվում են Հայաստանից խռոված հեռացող մեր հայրենակիցներով: Ուզում ենք վստահ լինել, որ հանրապետության առողջ ուժերը, ՀՅԴ-ն մեր պետության ու ժողովրդի այս ծանր ժամանակահատվածում կկատարեն իրենց առաքելությունը՝ վերահաս կործանումից փրկելու հայոց պետականությունը:

Ցանկանում եմ մեկ անգամ ևս հիշեցնել մեր նշանավոր հայդուկ Հրայր Դժոխքի՝ Արմենակ Ղազարյանի հայտարարությունը, որը 1895 թվականին հրապարակեց «Դրոշակը». «Ժողովրդի ներկա օրհասի մեջ կուսակցությունների բաժանված լինելը, անձնական կրքերից բխած կուրությունը, եսասիրական փառքը ժողովրդին տանում են հավիտենական կործանման դուռը»:

«Նորաթերթ», 1.II.2000:

«Իրավունք և Միաբանություն» ԱԺ խմբակցության նախագահ Արտաշես Գեղամյանի ելույթը

Հարգելի գործընկերներ

Ցավոք, 2000 թվականի համար ներկայացված բյուջեի նախագիծը վերջին 9 տարիներին վարվող տնտեսական քաղաքականության ճիշտ կրկնության արտահայտություն է: Ուստի, մինչև կառավարությունը հիմնավոր ձևով չվերանայի իր կողմից վարվող և իրեն չարդարացրած դրամավարկային, հարկային, ինվեստիցիոն, սոցիալական քաղաքականությունը, չնպաստի սեփականատիրոջ կայացմանը, մինչև որոշակի չդարձնի արտաքին տնտեսական քաղաքականությունը, չձևակերպի իր մոտեցումները սեփականաշնորհված, սակայն չաշխատող ձեռնարկությունների նկատմամբ, ինչպես նաև չսահմանի սեփականատիրոջ համար սոցիալական պարտավորությունների համակարգը և, վերջապես, մինչև պարզ չդառնա, թե ո՞րն է պետության դերը ներկայիս տնտեսական խոր ճգնաժամը հաղթահարելու գործում, ոչ մի դրական տեղաշարժի մասին խոսք լինել չի կարող: Խիստ անհրաժեշտ է տնտեսական նոր քաղաքականության մշակումն ու նրա իրականացումը: Մասնավորապես դրամավարկային քաղաքականության բնագավառում անհրաժեշտ ենք համարում անցումը դրամական առաջարկի ճկուն քաղաքականությանը, վարկավորման տոկոսադրույքի իջեցմամբ արդյունաբերության համար ֆինանսական հոսքերի ապահովմանը: Մենք գիտակցում ենք նաև հնարավոր այն վտանգները, որով հղի է նման քաղաքականության իրագործումը, եթե այն հիմնված լինի լայնածավալ էմիսիայի վրա: Չմոռանանք այս առումով մեզ հնարավոր քննադատներին հիշեցնել, որ երբ իրականացվող ներդրումների պայմաններում համախառն ներքին արդյունքի աճի տեմպերը գերազանցում են դրամական զանգվածի աճի տեմպերին, ապա սղաճը վտանգավոր չէ:

Դրա հետ մեկտեղ մենք համոզված կողմնակից ենք այն բանի, որ արտադրության ռեալ հատվածի արտոնյալ վարկավորման արդյունքում, ի հաշիվ վերահսկվող էմիսիայի, հնարավոր է հասնել տնտեսական շոշափելի աճի:

Հարկային քաղաքականության բնագավառում մենք կողմնակից ենք հարկային բեռի վճռական և համապարփակ թեթևացման, դրան զուգահեռ նաև՝ հարկման բազայի ընդլայնմանը: Հարկային նոր քաղաքականության հիմքում պետք է դրվեն հետևյալ չափանիշները.

ֆիզիկական անձից գանձվող հարկերը չպետք է գերազանցեն 10 տոկոսը,

ձեռնարկությունները գործնականում պետք է ունենան հարկային բեռի այն մակարդակը, որը չի գերազանցի 20 տոկոսը, իսկ գյուղատնտեսական ձեռնարկությունների համար՝ 15 տոկոսը:

Ստվերային տնտեսությունից դուրս եկող ձեռնարկությունների, տնտեսավարող սուբյեկտների մուծման ենթակա ներման հարկերը չպետք է գերազանցեն 12 տոկոսը: Դրա արդյունքում ստվերայինից դուրս գալը, օրինական ճանապարհով բարձր եկամուտներ ստանալը ինքնին կդառնա ավելի շահեկան: Զուգահեռաբար անհրաժեշտ է վերանայել անուղղակի հարկերի չափը, որոնք պետք է գանձվեն բնական ռեսուրսների, մասնավորապես՝ Հայաստանի ընդերքին հատուկ այնպիսի հանքատեսակների օգտագործման բնագավառում, ինչպիսիք են ոսկու, պղնձամոլիբդենային խտանյութերը, շինաքարերից՝ տուֆը, մարմարը, գրանիտը, տրավերտինը, պեռլիտը, ինչպես նաև անխնա օգտագործվող հանքային ջրերը: Ի վերջո, հարկաբյուջետային ողջ քաղաքականությունը նպատակաուղղված պետք է լինի արտադրության աճին, նրա ընդարձակմանն համար մակրոտնտեսական բարենպաստ պայմանների ստեղծմանը, ներդրումային ակտիվության բարձրացմանը:

Ինվեստիցիոն քաղաքականության և էֆեկտիվ սեփականատիրոջ ստեղծման բնագավառում

Անհրաժեշտ ենք համարում ազնիվ ճանապարհով ձեռք բերված մասնավոր սեփականության և սեփականատիրոջ իրավունքների օրենսդրորեն պաշտպանումը, արտաքին ներդրողների համար հարկային բարենպաստ պայմանների ստեղծումը, ներդրողների ռիսկայնության նվազեցումը: Դրա հետ մեկտեղ կարևորում ենք պետության կողմից հատկացվող արտոնյալ վարկերի ծավալների մեծացումը՝ նախապատվությունը տալով Հայաստանի էկոնոմիկայի առավել մրցունակ ներուժ ունեցող ճյուղերին, պետական պատվերի լայնածավալ կիրառմանը, հասարակական հանրօգուտ աշխատանքի կազմակերպմանը:

Սոցիալական քաղաքականության բնագավառում

Այստեղ մենք կողմնակից ենք եվրասոցիալիզմի գաղափարներին, որոնք առավել համահունչ են մեզանում ձեղավորվող շուկայական համակարգին, մասնավորապես՝ հասցեագրված սոցիալական նպաստների վճարմանը, առողջապահության բնագավառում ապահովագրական բժշկության զարգացմանը: Միաժամանակ կարևորում ենք առողջապահության և կրթական ոչ պետական հատվածների հետագա ընդլայնման անհրաժեշտությունը:

Արտաքին տնտեսական քաղաքականության բնագավառում ընդունելով արտաքին արտադրողի հետ մրցակցության օգտակարությունը, միաժամանակ ոչ միայն չենք բացառում, այլև նպատակահարմար ենք գտնում պետության կողմից տեղական արտադրողի նկատմամբ հովանավորչությունը և գործնական այնպիսի քայլերի իրագործումը, որը ներմուծվող ապրանքները կփոխարիներ տեղական արտադրանքով:

Անհրաժեշտ ենք համարում ձեռնարկել գործուն միջոցներ, որոնք տեղական հումք և կիսաֆաբրիկատ արտադրողների համար ավելի շահավետ կդարձնեին վերջնական

արտադրանքի պատրաստումն ու արտահանումը:

Սեփականաշնորհված, բայց չաշխատող ձեռնարկությունների նկատմամբ մեր վերաբերմունքը հետևյալն է՝ դեմ ենք ձեռնարկությունների ազգայնացմանը կամ սեփականատիրոջ կամայական փոփոխմանը: Դա հղի է լուրջ վտանգներով, նոր ավերածություններով: Միաժամանակ մենք կողմնակից ենք, որ ցանկացած սեփականություն, եթե այն չի ներառում իր մեջ ամբողջ հասարակության համար սոցիալական խնդիրների լուծման որոշակի պարտավորություն, ապա անուղղակի հարկերի միջոցով կարճ ժամանակաշրջանում պետք է ստեղծվեն պայմաններ ձեռնարկությունների կառուցվածքային փոփոխությունների և սեփականատիրոջ փոփոխման համար՝ նպատակ ունենալով կարգավորել այն շնումներն ու անօրինականությունները, որոնք տեղ են գտել սեփականաշնորհման ժամանակ և որոնց բացասական հետևանքները մինչև օրս չեն հաղթահարվել:

Առաջարկվող այս բոլոր ռեֆորմների երաշխավորը, անշուշտ, պետք է լինի պետությունը:

Պետական հոգածության արդյունքում պետք է իրականացվեն համալիր միջոցառումներ՝ շուկայական հարաբերությունների միջավայրի առողջացման, շուկայական մրցակցության և շուկայի ողջ ինֆրակառուցվածքի մեխանիզմի արդյունավետ աշխատանքն ապահովելու համար:

Պետությունը պետք է երաշխավոր դառնա մրցակցության զարգացմանը ապրանքների ու ծառայությունների, աշխատանքի, կապիտալի ու անշարժ գույքի շուկաներում: Նրա հոգածության առարկան պետք է լինի ներքին պահանջարկի աճի ապահովումը: Խոսքը գնում է հասարակական օգտակար այնպիսի աշխատանքների կատարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, ինչպիսիք են ճանապարհների շինարարությունը, մատչելի գներով իրականացվող բնակարանաշինարարությունը, աղետի գոտու վերականգնումը, բնապահպանական համալիրը, կապի և հաղորդակցության ամբողջ ինֆրակառուցվածքի զարգացումը:

Մենք կողմնակից ենք պետականորեն ներքին պահանջարկի խթանմանը՝ խնդիր ունենալով աշխատանքով ապահովել և ֆինանսավորել այն հասցեատիրոջը, ով ներգրավված կլինի հասարակական օգտակար աշխատանքներում, վարձատրել հենց նրանց, ովքեր, ապահովելով իրենց գոյության նվազագույն պահանջները, կխթանեն ներքին պահանջարկի աճը:

«Իրավունք և Միաբանություն» խմբակցությունը, ինչպես 9 ամիս առաջ, այնպես էլ այժմ առաջարկում է հանրապետությունը տնտեսական խոր ճգնաժամից դուրս բերելու իր մոտեցումները:

Օր առաջ կյանքի կկոչվեն դրանք՝ օր առաջ կստեղծվեն անհրաժեշտ հիմքերը հանրապետությունն օրհասական այս վիճակից դուրս բերելու համար:

«Նորաթերթ», 4.III.2000:

Սեփականաշնորհումը երբեք ինքնանպատակ չպետք է լինի*

Սույն օրենքով ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, վարչապետ Անդրանիկ Մարգարյանը փորձում են հիմքեր դնել՝ առաջիկայում արմատապես փոփոխելու ՀՀ արտաքին քաղաքականության գերակայությունները: Հիմնավորեմ ասածս: Այսօրվա վիճակով միայն առաքված էլեկտրաէներգիայի դիմաց վճարումները կազմում են 70%:

Շուկայական հարաբերությունների ջատագովներին հիշեցնեմ, որ հիմնական օրենքներից մեկն իրենց քարոզած, բայց իրենց համար անհայտ մնացած շուկայի օրենքը հետևյալն է՝ պահանջարկն է որոշում առաջարկը: Ուստի և փաստացի վճարունակ պահանջարկն այսօրվա դրությամբ, գոնե, 1-ին կիսամյակի արդյունքներով արտադրված էլեկտրաէներգիայի 70%-ն է կազմում: Սեփականաշնորհման պարագայում, բնականաբար, բաշխիչ ցանցի տերը կգնի բարձրավոլտից այնքան էլեկտրաէներգիա, որը վճարունակ պահանջարկ ունի: Այսինքն՝ թողարկվածի 70%-ը: Վաղը նա, բնականաբար, հարց կբարձրացնի, որ ինձ ավելցուկ էլեկտրաէներգիան պետք չէ: Դրանից կհետևի մեկ ուրիշ տրամաբանական խնդիր, որ առկա հզորությունները պետք է սևմվեն, ինչի՞ հաշվին, բնականաբար, Հայկական ատոմակայանի հաշվին: Որովհետև, գաղտնիք չէ, արդեն տարիներ շարունակ Համաշխարհային բանկը, միջազգային ֆինանսական կազմակերպությունները և համապատասխան երկրները ջանք ու եռանդ չեն խնայում, որ սառեցվի Հայկական ատոմակայանը: Պատահականությո՞ւն է դա, ոչ, որովհետև դա այն երակն է, որը կապում է ստրատեգիական հույժ կարևոր նշանակություն ունեցող ատոմակայանը մեր ռազմական դաշնակցի հետ: Կլուծվի այն գերխնդիրը, որը 4 տարի շարունակ կռվախնճոր է դարձել, բայց, չգիտես ինչու, այստեղ պարզ չեն ասում:

Պատահական չէր, որ հիշեցրեցի նախագահի և վարչապետի անունները: Ուղղակի, ազնվաբար ասեմ, չգիտեմ՝ պարտադրվա՞ծ են նրանք, հարկադրվա՞ծ են այս օրենքը բերելու, թե՞ ոչ: Գիտակցո՞ւմ են արդյոք հետևանքները, թե՞ ոչ: Այդ հարցը դեռ պարզ չէ ինձ համար:

Հաջորդ հարցը: Ատոմակայանը դուրս գալու պարագայում, հնացած հզորությունների պարագայում, բնականաբար, առաջ կգա 5-րդ էներգաբլոկի հարցը: Այնտև, խնդրեմ, ֆինանսավորում կտրվի: Իսկ ինչո՞ւ 5-րդ բլոկը, որովհետև գազի վրա է աշխատում: Էհ, կասեք, ի՞նչ վատ է, որ գազի վրա է աշխատում: Չափազանց վատ է, որովհետև զուգահեռ

* Ելույթ՝ ԱԺ-ում բաշխիչ ցանցերի հարցով (26.VII.2000):

շահագործման է հանձնվում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան գազամուղը: Վաղը նույն բաշխիչ ցանցերի տերերը կասեն, ինչո՞ւ եք Թուրքմենստանից Ռուսաստանով բերում գազը հասցնում, տրանզիտին այդքան փող տալիս: Թբիլիսիից կարճ կարող եք բերել Ղազախ, այնտեղից էլ ամբողջը կգա: Այդտև էլ կկտրեն մեզ ռազմական դաշնակցից:

Եթե այս պարզ ճշմարտությունները, որոնք քաղաքականության, աշխարհաքաղաքականության մեջ այբբենական են, ապա ինչու մենք մեզ անտեյակ մարդկանց տեղնը դնենք: Իսկ, ի՞նչ, կարծում եք, օր օրի թափ հավաքող Ռուսաստանը սա կների՞, ամենևին: Սա ընդգծված քաղաքական հարց է: Հայաստանի ապագա կողմնորոշումների խնդիր է և ոչ թե՝ սեփականաշնորհե՞նք, թե՞ ոչ, ազատական շուկայի կողմնակի՞ց ենք, թե՞ ոչ: Նախ՝ սեփականաշնորհումն ինքնանպատակ երբեք չպետք է լինի: Դա միջոց է ավելի անխափան, ավելի հուսալի աշխատելու: Եվ այդ միջոցի նպատակներին հասնելու բազմաթիվ ճանապարհներ կան, հատկապես՝ էներգետիկ համակարգում:

Այստեղ հնչեցին խոսքեր, որ կխթանվի արդյունաբերության զարգացումը: Փաստարկված և հիմնավորված չեն: Ասեմ՝ ինչու: Ձեր իսկ կողմից բաժանված տնեկանքում գրված է, որ արդյունաբերական ձեռնարկությունների պարտքը բաշխիչ ցանցերին առաքված էլեկտրաէներգիայի դիմաց կազմում է ընդամենը 62%: Հիշատակված են պղնձամոլիբդենային կոմբինատները: Այս պարագայում, բնականաբար, բաշխիչ ցանցերի տերը կտա 62%-ի չափով էլեկտրաէներգիա պղնձամոլիբդենային կոմբինատներին: Իսկ ո՞րն է արդյունքը. այդ հզորությունները կաշխատեն թերբեռնված: Դարձյալ տնտեսագիտությունից տարրական ճշմարտություն ասեմ: Թերբեռնված հզորությունների պարագայում արտադրանքի ինքնարժեքը կբարձրանա, մրցունակությունը կընկնի: Մրցունակությունը կընկնի, շուկաներից դուրս կմղվեն: Գործազրկության նոր ալիք: Ահա սա է ճշմարտությունը: Եվ այս ճշմարտության երեսին մենք պարտավոր ենք նայել: Մենք պարտավոր ենք յուրաքանչյուրս գիտակցաբար ընտրություն անել. արդյոք մենք տե՞րն ենք մեր երկրի, թե՞ ոչ: Արդյոք Հայաստանի զարգացումներն անորոշությա՞ն մեջ ենք տեսնում, թե՞ ռազմավարական հստակ դաշնակցի հետ կողք կողքի: Այս հարցերի պատասխանն է այսօր տրվում, ոչ թե այն, թե սեփականաշնորհե՞նք, թե՞ ոչ:

Այս օրենքը, անշուշտ, ունի նաև դրական կողմեր: Վերջապես մեր հայրենի կառավարությունը խոստովանեց, որ անճարակ և անզոր է կառավարելու էներգահամակարգը: Մարդիկ պարզ ասում են, սա ողջունելի է: Տխուր փաստ է, բայց ողջունելի է: Այստեղ փաստարկներ են բերում, որ սեփականաշնորհվելու պարագայում զգալիորեն կկրճատվեն կոռուպցիայի երևույթները: Ի՞նչ, Ամերիկայից շերիֆներ և ռեյնջերներ են գալու այստև, գողի ձեռքից բռնեն: Մեր օրենքներով են, չէ՞, դրա առաջն առնում: Եթե մեր օրենքներով կառավարությունն առաջը չի կարող առնել, այստեղ 3 հանգամանք կա: Առաջին՝ նույն գողերի հետ կապված են, իրենցից սնվում են, որը ես ուզում եմ բացառել: 2-րդ՝ անտեյակ են, 3-րդ՝ վճռականություն չունեն: 3 պարագայում էլ պետք է հեռանան: Այ, սա է ճշմարտությունը:

Չափազանց խորը հարգանք եմ տածում Գալուստ Սահակյանի հանդեպ:

Հարգարժան պրն Սահակյան, Հանրապետական կուսակցությունը ՀՀՇ կուսակցության հետ անցած ԱԺ-ում կազմում էր մեծամասնություն: 95 թվից, ՀՀՇ-ի հետ, Դուք ճանապարհները տեսել եք, հիմա էլ եք տեսնում, թե ուր բերեցին ճանապարհները: «Իրավունք և Միաբանություն» խմբակցությունը, բնականաբար, դեմ է լինելու ներկայացված օրենքի նախագծին:

«Իրավունք», 28.VII. – 3.VIII.2000:

«Ազգային Միաբանություն» կուսակցության հայտարարությունը

Հայաստանի Հանրապետության տնտեսական, հասարակական և քաղաքական ոլորտներն ընդգրկող խորը ճգնաժամը, պետության ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառներում Ռ. Քոչարյանի վարչակազմի ձախողումները լուրջ սպառնալիք են ստեղծել ազգային անվտանգության և հայոց պետականության համար: Գիտակցելով կոռումպացված սեփական վարչակազմի սնանկությունն ու անկարողությունը նման իրավիճակից երկիրը դուրս բերելու գործում, իշխանական կլանն անպտուղ փորձեր է անում.

1. այդ ամենի մեջը գցել ընդդիմության վրա.

2. գիտակցելով, որ եկել է Փարիզում և Քի Վեսթում տված ոչ հայանպաստ խոստումների կատարման պահը, նա միտումնավոր փորձում է ապակայունացնել վիճակը երկրում, խնդիր ունենալով արհեստականորեն երկարաձգել իր պաշտոնավարման ժամանակը և երկրի ապակայունացման պայմաններում խուսափել պատասխանատվությունից.

3. քաղաքական բախումների համար հող ստեղծելով՝ շեղել ժողովրդի անապահով ստվար զանգվածների ուշադրությունն իրենց ծանր վիճակից և սոցիալական հնարավոր պայթյունից.

4. մարդկանց շրջանում վախի, սպառնալիքի ու ահաբեկչության միջոցով նրանց հեռու պահել քաղաքական պայքարից, իրենց հիմնական խնդրից՝ երկիրն ազատել անօրեն իշխանություններից: Դրա նոր դրսևորումներից մեկը Երևանի «Ալմաստ» գործարանում Ռ. Քոչարյանի կողմից վախից տևացած սպառնալիքներն էին՝ ուղղված Ազգային ժողովի պատգամավորներին: Քոչարյանն այդպես էլ դասեր չառավ 2001թ. հոկտեմբերի 26-ին, եռյակի հանրահավաքի նախօրեին ժողովրդի արհամարհանքին արժանացած «գլխավոր հրամանատարի» մասին հիշեցնող իր անպտուղ սպառնալիքներից: «Կանչվածն» ու «իշխանությունը զավթածը» մոռանում է, որ գործ ունի ժողովրդի կողմից ընտրվածների հետ:

Ծայրաստիճան լարված սոցիալական վիճակի, մարդկանց իրավազրկության ու գործազրկության պայմաններում իշխանավորների գործած կամայականությունները դարձել են Քոչարյանի ամենօրյա գործունեության առանցքը և, ըստ էության, առաջին քայլերն են երկրում բռնապետություն հաստատելու ճանապարհին:

Երկրի ղեկավարի համար ակնհայտ ու պարտադիր պարտավորությունները կատա-

րելու փոխարեն Ռ. Քոչարյանն իր կամակատարների հետ դիրքավորվելով ժողովրդից կտրված դղյակներում, ապրելով ցոփ կյանքով, զբաղված են մարդկանց իրար դեմ հրահրելու, իրականությունը խնաթյուրելու, ճշմարտությունը ժողովրդից թաքցնելու, առաջընթացի կեղծ պատրանք ստեղծելու մոլուցքով:

Դրա ապացույցն էր նաև ԱԺ-ի վերջին նստաշրջանում, կոպտորեն ոտնահարելով «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի պահանջները, արդեն իսկ նստաշրջանի օրակարգ մտած Ռ. Քոչարյանի պաշտոնանկության հարցի քննարկման վիժեցումը, հարց, որի քննարկումը լույս կսփռեր ժողովրդին հուզող, երկրի արտաքին ու ներքին կյանքի կայունացման գործում վճռական դեր ունեցող մի շարք կարևոր հարցերի պարզաբանման վրա:

«Ազգային Միաբանություն» կուսակցությունը հայտարարում է, որ հանրապետությունը կործանման տանող և հոգեվարքի մեջ հայտնված Ռ. Քոչարյանի գլխավորած վարչակազմի՝ երկրի ղեկին գտնվելու յուրաքանչյուր օրը էլ ավելի է մեծացնում հայոց պետականության սպառնացող վտանգը, ուստի օր առաջ նրանից ազատվելը դարձել է համապետական, համազգային խնդիր:

Հանրապետությունում անօրինականությունների, վախի, շանտաժի, ահաբեկչության մթնոլորտի ստեղծումն էլ ավելի են բացահայտում իշխանությունների ապազգային և սնանկ լինելը, համախմբում հանրապետության առողջ ուժերին, ում համար թանկ է Հայաստանը և հայ ժողովրդի ճակատագիրը, որոնք իրենց երեխաների ու թոռների ապագան կապում են Հայաստան աշխարհի հետ և միաբանում նրանց՝ դիմակայելու վերահաս վտանգը, պայքարելու հանուն հայոց պետականության փրկության և երկրի առաջընթացի:

19 հունիսի 2002 թ.

Արտաշես Գեղամյան
«Ազգային Միաբանություն»
կուսակցության նախագահ

«Իրավունք. հարց ու պատասխան», 25 – 27.VI.2002:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 49-րդ և 59-րդ հոդվածների համաձայն Ռոբերտ Քոչարյանի պաշտոնանկության գործընթացն սկսելու հիմնավորումները*

Ես՝ Արտաշես Մամիկոնի Գեղամյանս, «Ազգային Միաբանություն» կուսակցության կողմից լիազորված եմ հայտարարել, որ Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը կոպտորեն և տևականորեն խախտում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 49-րդ հոդվածի հետևյալ դրույթը. «Հանրապետության նախագահը Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է»:

Հիմնավորեմ ասածս: Ազգային անվտանգությունը ներառում է իր մեջ կենսագործության բոլոր ոլորտներում ներքին և արտաքին սպառնալիքներից անձի, հասարակության և պետության պաշտպանվածությունը: Ազգային անվտանգությունը նախ և առաջ ազգային շահերի ապահովման գրավականն է: Ազգային շահը դա անհատի, հասարակության և պետության շահերի միասնությունն ու հավասարակշռումն է տնտեսական, սոցիալական, միջազգային, տեղեկատվական, ռազմական, բնապահպանական և այլ բնագավառներում:

Անհատի շահերն իրականացվում են սահմանադրական իրավունքով և ազատություններով, անձի անվտանգության ապահովմամբ, ապրուստի մակարդակի և որակի բարձրացմամբ, մարդու և քաղաքացու ֆիզիկական, հոգևոր ու մտավոր զարգացման աստիճանով:

Իսկ ինչպե՞ս են մեզ մոտ՝ Հայաստանում, պաշտպանվում անձի շահերը, արդյո՞ք ապահովված է անձի անվտանգությունը: Ավա՜ղ, ճիշտ հակառակը: Հայ մարդն իրեն անապահով է զգում Հայաստանի Հանրապետությունում: Բերեմ մի քանի պաշտոնական տվյալներ (բոլոր թվերը բերված են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ կառավարության և նախարարությունների զեկույցներից). 2002 թ. հունվարի 1-ի դրությամբ զբաղված աշխատուժի 64,1%-ը կամ տնտեսությունում զբաղված 821 հազար մարդկանց ամսական աշխատավարձը տատանվել է 5000-ից 20000 դրամի սահմաններում (սա այն պայմաններում, երբ

* Ելույթ՝ Մամուլի ազգային ակումբում (20.VI.2002):

սպառողական նվազագույն զամբյուղը կազմում է 25859,1դրամ): Եթե այս ամենին ավելացնենք 137,3 հազար գործազուրկներին, շուրջ 553 հազար թոշակառուներին, 565000 աշակերտներին, 141248 նախադպրոցական հասակի երեխաներին, 56 հազար ուսանողներին, շուրջ 6000 միջնակարգ մասնագիտական հաստատությունների սովորողներին, 60 հազար շարքային զինծառայողներին, ապա պարզ կդառնա անձի անպաշտպան լինելու, թշվառության այն աստիճանը, ուր հայտնվել է Հայաստանի ազգաբնակչությունը Քոչարյանի իշխանավարության տարիներին:

Անձի և ազգային անվտանգության խարխլման, ազգային շահերի ոտնահարման մասին են խոսում նաև հետևյալ փաստերը: Այսպես. 2002 թ. ՀՀ առանձին մարզերում նկատվում է ազգաբնակչության բնական աճի բացասական ցուցանիշ, այսինքն՝ մահերը գերազանցում են ծնունդները. Երևանում՝ 1,7%-ով, Լոռու մարզում՝ 4,6%, Շիրակում՝ 8,5%-ով: Եթե 2000 թ. հունվար-մարտին բնական աճը կազմել է 2933 մարդ, 2001թ. – 1769 մարդ, ապա 2002 թ. հունվար-մարտին ընդամենը 687 մարդ (8 անգամ պակաս 1996 թ. համապատասխան ցուցանիշից, 4,3 անգամ պակաս 2000 թ. և 2,6 անգամ պակաս, քան 2001 թ.): Ռ. Քոչարյանի պաշտոնավարության տարիներին արձանագրվել է ազգաբնակչության բնական աճի տեմպերի կտրուկ անկում: Այսպես.

1996 թ. ծնվածները կազմել են 48100մարդ, բնական աճը՝ 23200,

1997 թ. ծնվածները՝ 43929, բնական աճը՝ 19944,

1998 թ. ծնվածները՝ 39366, բնական աճը՝ 16156,

1999 թ. ծնվածները՝ 36558, բնական աճը՝ 12467,

2000 թ. ծնվածները՝ 34163, բնական աճը՝ 10321,

2001 թ. ծնվածները՝ 23676, բնական աճը՝ 8102:

Ազգաբնակչության գերակշռող մասը մատնված է սովի: Սննդի ֆիզիոլոգիապես պահանջվող օրական նվազագույն 2412 կիլոկալորիայի դեպքում այն 1996 թվականին կազմել է 2100, իսկ 2002 թ. հունվար-մարտին՝ 1412,1 կիլոկալորիա: Մարդկանց սննդի ռացիոնում 57,2%-ը բաժին է ընկնում ցամաք հացին և կարտոֆիլին: Թերսնվածության և հյուծվածության հետևանքով վտանգավոր միտումներ են արձանագրվել առողջապահության բնագավառում: Այսպես, մինչև 14 տարեկան 100 հազար երեխաների հաշվով 2002 թ. հունվար-մարտին 2001թ. նույն ժամանակի համեմատությամբ շնչառական օրգանների տուբերկուլյոզով (թոքախտով) հիվանդ երեխաների թիվն աճել է 4 անգամ, կարմրուկով հիվանդ երեխաների թիվը՝ 3,5 անգամ: Այստեղ հարկ է նշել, որ 2001թ. թոքախտով հիվանդ երեխաների թիվը 2000 թ. նկատմամբ աճել էր 44,8%-ով: Ազգաբնակչության 71,7%-ը պաշտոնապես ճանաչված է աղքատ կամ շատ աղքատ, այդ ընտանիքներում էլ ապրում են հանրապետության երեխաների 80%-ը:Ավելին, 2002 թ. հունվար-մարտին աճել է մահացածության գործակիցը (1000 բնակչի հաշվով)՝ կազմելով 7,7 նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 6,8-ի համեմատ: Մահացածների թիվը 2001 թ. հունվար-մարտին կազմել է 6403, իսկ 2002 թ. հունվար-մարտ ամիսներին՝ 7236 մարդ կամ աճել է 113%-ով:

Լրջագույն մտահոգության առիթ է հանդիսանում ազգաբնակչության ֆիզիկական անվտանգության ապահովման խնդիրը: Միայն 2002 թ. մայիս ամսին Հայաստանում կատարվել են 7 սպանություններ, 3 մահափորձ, մարմնական վնասվածք հասցնելու 52 դեպք, 8 ավազակային հարձակում, 14 կողոպուտ, խուլիգանության 33 դեպք, գողության ավելի քան 300 դեպք, հափշտակության 10 դեպք: Ահա թե ինչպիսին են անհատի շահերի, անվտանգությունն ապահովող երաշխավորի գործունեության արդյունքները:

Էլ ավելի վատթար վիճակ է հասարակության շահերի ապահովման գործում: Ինչպես հայտնի է, հասարակության շահերը ներառում են ժողովրդավարության ամրապնդումը, իրավական, սոցիալական պետության ստեղծումը, հասարակական համաձայնության նվաճումը և պահպանումը, նաև երկրի հոգևոր նորացումը:

Քոչարյանի իշխանավարության հատկապես վերջին երեք տարիների ընթացքում ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում դրվում են բռնատիրական համակարգ հաստատելու հիմքերը: Ռ. Քոչարյանի ցուցումով «Ա1+» և «Նոյյան տապան» հեռուստաընկերությունների ապօրինի փակումից հետո Հայաստանի Հանրապետության ազգաբնակչությունը զրկված է ճշմարիտ տեղեկատվություն ստանալու իր սահմանադրական իրավունքից: Նման օրինազանցությունը նպատակ ունի առաջիկայում տեղական ինքնակառավարման մարմինների, հանրապետության նախագահի և Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, կոպտորեն ոտնահարելով ժողովրդավարության նորմերը, զրկել ընդդիմությանն իր կարծիքն ու խոսքը հասցնելու ժողովրդին: Այս ամենով երկրում ոտնահարվում են 1984 թ. նոյեմբերի 22-ին Ստրասբուրգում վավերացված և ՀՀ օրենքի ուժ ստացած «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» սկզբունքները՝ ժողովրդի կողմից սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու, իր կարծիքը պնդելու, մամուլի միջոցով տեղեկատվություններ, գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի պահանջները:

Ժողովրդավարության ոտնահարման ամենացցուն օրինակ էր այն, երբ բացահայտ և կոպտորեն խախտելով «Ազգային ժողովի կանոնակարգ»-ի 22-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը, Քոչարյանի անմիջական ճնշման պարագայում Ազգային ժողովն իր 9-12 հունիսի եռօրյա նիստում այդպես էլ չքննարկեց «Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան դիմելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Սոցիալական պետություն ստեղծելու մասին խոսք անգամ լինել չի կարող, երբ ազգաբնակչության 71,7%-ը մատնված է սովի, ուր մահացածությունը մի շարք մարզերում գերազանցում է ծնելիությանը, ու աշխատանքով զբաղվածների 64,1 %-ի աշխատավարձը զգալիորեն զիջում է նվազագույն սպառողական զամբյուղին:

Միգուցե՞ Հայաստանի Հանրապետությունը կայացել է որպես իրավական պետություն: Իհարկե, ոչ: Բավական է հիշել «Առագաստ» սրճարանում նախագահի

№	Ցուցանիշի անվանումը	Սահմանային դրույքաչափ	Ընթացիկ տարվա ֆոնդային միավորի արժեքը
1.	Եզակի «Գյումրու ի-ՀՄՉ լոգիստիկ միջազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ 02145205) գծով ակտիվների զուտ արժեքի հարաբերությունը կանոնադրական կապիտալի նկատմամբ	50%	2,6%
2.	Ակտիվների ընդհանուր արժեքում ներդրումային միջոցների մասնաբաժինը ներդրումային միավորների զուտ արժեքի 2002 թ. 1-ին եռ.	10%	65,7%, 69,6%
3.	Ներդրումային միավորների զուտարժեքի տատանողականությունը ներդրումային միավորների զուտ արժեքի 2002 թ. 1-ին եռ.	20%	2% (2001 թ.), 1,8%
4.	Ակտիվների զուտ արժեքի ցուցանիշի հաշվարկման ամսաթիվը՝ ՀՀ ժամանակով 18:30-ը ՀՄՉ ի-ՀՀ-111223-8.% -ում, ներառյալ այն ակտիվների զուտ արժեքի փոփոխությունը, որոնք ձեռք են բերվել կամ օտարվել հաշվարկման ամսաթվին նախորդող աշխատանքային օրվա ընթացքում	25%	15,3% 3,8%

Ընդհանուր գործունեության ռազմավարության 14 լրացուցիչ պայմանագրեր

Ընկերությունը գործունեություն է ծավալում նաև ընդհանուր գործունեության 14 լրացուցիչ պայմանագրերի հիման վրա, որոնք կնքվել են ներդրողների հետ: Ընկերությունը չունի ներդրումային խորհրդատուներ, որոնք կարող են ներգրավվել ներդրողների հետ կնքվող պայմանագրերի շրջանակներում: Ընկերությունը չունի նաև ներդրումային կառավարիչ

5.	Գիտության բնագավառ ուղղված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ %	2%	0,23% 2 մլրդ 730 մլն
6.	Նվազագույն սպասողական ժամկետից զատ եկամուտներ ունեցող ձեռնարկատերերի տեսակարար կշիռը տնտեսությունում զբաղվածների 64% ն աշխատավարձերի	7%	71,7%
7.	Ամենաբարձր եկամուտներ ունեցող 10% ձեռնարկատիրության՝ 10% ամենացածր եկամուտներ ունեցողների հետ ունեցած հարաբերակցությունը	28 անգամ	8 անգամ
8.	Արտաքին պարտքի հարաբերակցությունը ՀՆԱ-ի հետ	25%	43,2%
9.	Բյուջեի պակասորդի ֆինանսավորման ծավալում արտաքին ֆինանսավորման ծավալները	40%	59,5%
10.	Արտարժույթի ծավալի հարաբերակցությունը ազգային փողի զանգվածի (M/2) հետ	10%	50,48%
11.	Ներմուծման (իմպորտի) ծավալները ներքին սպառման մեջ, ընդամենը այդ թվում պարենի մեջ*	25%	33,7%
12.	Նվազագույն սպառման զուտ միջին աշխատավարձի կտրվածքով [illegible]	[illegible]	[illegible]
13.	Փողի զանգվածի (M/2) հարաբերակցությունը ՀՆԱ-ի հետ	50%	14,6%***
14.	Գործազրկության ծավալը	7%	10,3%****

* Այդ թվում պարենի ներմուծման ծավալը 2002 թ. կազմել է 1 մլրդ 254,9 մլն ԱՄՆ դոլար, 2001 թ.՝ 1 մլրդ 100 մլն ԱՄՆ դոլար, 2000 թ.՝ 1 մլրդ 100 մլն ԱՄՆ դոլար:

** Հաշվարկված է ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների հիման վրա:

*** Այդ ցուցանիշը հաշվարկված է ՀՀ կենտրոնական բանկի տվյալների հիման վրա:

**** ՀՀ ԱՎԾ տվյալներով 2001 թ. գործազուրկների թիվը կազմել է 14 տոկոս:

վաքագրվել է 31 մլն 25,9 մլն դրամ կամ 89,9%. պաշտոնական տրանսֆերտների գծով 10 մլրդ 187,66 մլն դրամի փոխարեն ստացվել է 9 մլրդ 309 մլն դրամ կամ 91,4%: Ծախսերի գծով. կրթաթոշակների պարտքը փակվել է 66,5%, պարտադիր սոցիալական վճարումներինը՝ 85,2%:

Խիստ մտահոգիչ է վիճակը ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման բնագավառում: Այսպես, 2002 թ. հունվար-մարտին եկամուտների գծով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ այն կազմել է ընդամենը 88,2%, պարտադիր ապահովագրության վճարները նախորդ տարվա համեմատ կազմել են 79,2%: Իսկ կենսաթոշակային ապահովագրության ծախսերը կազմել են 2001 թ. փաստացի կատարվածի 78,5%-ը:

2002 թ. առկա խորը ճգնաժամի արդյունքում նկատվում են վտանգավոր երևույթներ բանկային համակարգում: Այսպես, առևտրային բանկերի ընդհանուր կապիտալը 2002 թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 12,8 մլրդ, որը 2002 թ. հունվարի 1-ի նկատմամբ նվազել է 7,6 մլրդ դրամով: Սա ոչ այլ ինչ է, քան ֆինանսական կապիտալի փախուստ: Նույն ժամանակաշրջանում 853 մլն դրամով բանկերում պակասել են բնակչությունից ներգրավված ավանդները: Իշխանությունները թմբկահարում են ՀՆԱ «աննախադեպ» աճի մասին, այդ նույն ժամանակաշրջանում 8 մլրդ 11 մլն դրամով (10,0%-ով) սևմում են դրամական բազան, 8 մլրդ 641 մլն դրամով էլ (5%)՝ դրամական զանգվածը:

Խիստ մտահոգիչ է այն, որ 2002 թ. ապրիլի 1-ի դրությամբ աճում են չմարված հարկային պարտավորությունները (ապառք, տույժ, տուգանք): Ներառյալ նախորդ տարվա մնացորդը՝ 2002 թ. ապրիլի 1-ի դրությամբ այն կազմել է 144 մլրդ 331,5 մլն դրամ, որից միայն ապառքների գումարը՝ 60 մլրդ 935 մլն դրամ: 2001 թ. ապրիլի 1-ի համեմատությամբ ապառքների տեսակարար կշիռը պարտավորություններում աճել է 1,3 տոկոսային կետով:

ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և պետբյուջեի օգտին բոլոր կատարողական վարույթներով գումարները կազմել են ընդամենը 1 մլրդ 836 մլն 596 հազար դրամ, իսկ չվերականգնված մնացորդ գումարը՝ 2002 թ. հունվար-մարտ ամսին կազմել է 41 մլրդ 485մլն դրամ: Սա խոսում է մեծ թվով ձեռնարկությունների սնանկ լինելու մասին:

Իշխանությունները փոխանակ լրջորեն վերլուծեն 2002 թ. 1-ին եռամսյակում տնտեսությունում առկա ծանրագույն զարգացումները, շարունակում են թմբկահարել միայն իրենց համար տեսանելի հաջողությունները, մինչդեռ 2002 թ. հունվար-ապրիլի արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները խիստ մտահոգիչ են:

Այս ֆոնի վրա շարունակվում է խոշորածավալ թալանը: Այսպես, 2001 թ. արտադրվել է 5 մլրդ 744 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա, կորուստներն ընդհանուր օգտագործման ցանցում կազմել են 1 մլրդ 502 մլն կվտ/ժամ կամ՝ 26,9%: էլեկտրաէներգիայի օգտակար

Տնտեսության ճյուղերը

2002 թ. մարտի 1-ի դրությամբ

NN		2002 թ. մարտի 1-ը 2001 թ. մարտի 1-ի %-ով
1.	Արդյունաբերական արտադրանքի ծավալը	88,1
2.	Էլեկտրաէներգիայի արտադրությունը	79,0
3.	Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	91,8
4.	Շահագործման հանձնված բնակելի տարածքները	72,6
5.	Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջա-նառությունը	81,5
6.	Արտաքին առևտրաշրջանառությունը	95,7
7.	Մանրածախ առևտրաշրջանառության ծավալը	99,4
8.	Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը	95,1

Ներմուծումների ծավալի նվազումը հիմնականում պայմանավորված է ներմուծման ծավալների կրճատմամբ հետևյալ ապրանքների գծով՝ ավտոմեքենաներ, ավտոմեքենաների պահեստամասեր, հեռուստացույցներ, ռադիոընդունիչներ, մագնիտոֆոններ, տեսախցիկներ, ինչպես նաև հանքային վառելիքի, նավթի և նավթամթերքի գծով:

Հանրապետության տնտեսական զարգացման ընթացքը հնարավորություն է տալիս կանխատեսելու, որ 2002 թ. ընթացքում կշարունակվի տնտեսական աճի միտումը: Մասնավորապես, ակնկալվում է, որ արդյունաբերական արտադրանքի ծավալը կաճի 6,5-7,5 տոկոսով, գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ 3-4 տոկոսով, շինարարական աշխատանքների ծավալը՝ 10-12 տոկոսով, ներդրումները՝ 15-20 տոկոսով, արտահանումը՝ 10-12 տոկոսով, ներմուծումը՝ 5-7 տոկոսով, իսկ մանրածախ առևտրաշրջանառության ծավալը՝ 5-6 տոկոսով:

Ներկայացված տնտեսական զարգացման ցուցանիշների կատարումն ապահովելու համար անհրաժեշտ է ակտիվացնել ներդրումային գործունեությունը, ինչի համար առկա են բավարար նախադրյալներ: Մասնավորապես, ներդրումային ակտիվության աճին կնպաստի ներդրումային նոր օրենսդրության ընդունումը, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման համար ներգրավվող միջոցների հարկային արտոնությունների տրամադրումը:

Ներդրումային ծրագրերի իրականացման համար ներգրավվող միջոցների հարկային արտոնությունների տրամադրման կարգը սահմանվում է «Ներդրումային գործունեության մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի նախագիծը մշակվել է 2001 թ. և ներկայումս գտնվում է ՀՀ կառավարության քննարկման փուլում: Նախագիծը նախատեսում է ներդրումային ծրագրերի իրականացման համար ներգրավվող միջոցների հարկային արտոնությունների տրամադրում, եթե ներդրումային ծրագրի ծավալը գերազանցում է 500 մլն դրամը (նորընտիր կառավարության որոշմամբ ՀՀ-ում ներդրումային ծրագրերի նկատմամբ կիրառվող նվազագույն շեմը սահմանվել է 500 մլն դրամ): Նախագիծը ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 2002 թ. հունվարի 10-ին, և այժմ այն գտնվում է ՀՀ Ազգային ժողովում քննարկման փուլում: Ակնկալվում է, որ նախագիծը կընդունվի մինչև 2002 թ. մայիսի 1-ը:

Ներդրումային ծրագրերի իրականացման համար ներգրավվող միջոցների հարկային արտոնությունների տրամադրման կարգը սահմանող նախագիծը նախատեսում է, որ ներդրումային ծրագրի իրականացման համար ներգրավվող միջոցների հարկային արտոնությունները կարող են տրամադրվել ինչպես ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո: Ընդ որում, ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում տրամադրվող հարկային արտոնությունները կարող են տրամադրվել ինչպես ներդրումային ծրագրի իրականացման համար ներգրավվող միջոցների, այնպես էլ ներդրումային ծրագրի իրականացման համար ներգրավվող միջոցների հաշվին ձեռք բերված հիմնական միջոցների նկատմամբ: Ներդրումային ծրագրի իրականացման ավարտից հետո հարկային արտոնությունները կարող են տրամադրվել միայն ներդրումային ծրագրի իրականացման համար ներգրավվող միջոցների հաշվին ձեռք բերված հիմնական միջոցների նկատմամբ:

Ներդրումային ծրագրերի իրականացման համար ներգրավվող միջոցների հարկային արտոնությունների տրամադրման կարգը նախատեսում է, որ ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում հարկային արտոնությունները կարող են տրամադրվել ինչպես ներդրումային ծրագրի իրականացման համար ներգրավվող միջոցների, այնպես էլ ներդրումային ծրագրի իրականացման համար ներգրավվող միջոցների հաշվին ձեռք բերված հիմնական միջոցների նկատմամբ: Ներդրումային ծրագրի իրականացման ավարտից հետո հարկային արտոնությունները կարող են տրամադրվել միայն ներդրումային ծրագրի իրականացման համար ներգրավվող միջոցների հաշվին ձեռք բերված հիմնական միջոցների նկատմամբ:

Ներդրումային ծրագրերի իրականացման համար ներգրավվող միջոցների հարկային արտոնությունների տրամադրման կարգը նախատեսում է, որ ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում հարկային արտոնությունները կարող են տրամադրվել ինչպես ներդրումային ծրագրի իրականացման համար ներգրավվող միջոցների, այնպես էլ ներդրումային ծրագրի իրականացման համար ներգրավվող միջոցների հաշվին ձեռք բերված հիմնական միջոցների նկատմամբ: Ներդրումային ծրագրի իրականացման ավարտից հետո հարկային արտոնությունները կարող են տրամադրվել միայն ներդրումային ծրագրի իրականացման համար ներգրավվող միջոցների հաշվին ձեռք բերված հիմնական միջոցների նկատմամբ:

Выступления Ելույթներ

Выступление Министра финансов и экономики РА Ованнеса Хачатряна "О социально-экономическом развитии РА в 2002 году"

Уважаемые господа депутаты!

Позвольте от имени Правительства РА представить вам основные направления социально-экономического развития Республики Армения в 2002 году.

Прежде всего, хотелось бы отметить, что в 2001 году в Республике Армения наблюдалась положительная динамика развития экономики. Так, по предварительным данным, ВВП-ГД в РА (валовой внутренний продукт по методологии ООН) в 2001 году составил 1 502 млрд драмов (около 2 790 млн долларов США), что на 9,6% больше, чем в 2000 году (по официальному курсу ЦБ РА на 01.01.2002 г.). Рост ВВП в 2001 году был обеспечен, в основном, за счет роста производства в сельском хозяйстве, строительстве, промышленности, а также в сфере услуг.

Темпы роста основных показателей социально-экономического развития Республики Армения в 2001 году по сравнению с 2000 годом приведены в следующей таблице:

NN	Отрасли экономики	2002 г. в % к 2001 г.
1.	Объем промышленной продукции	88,1
2.	Производство электроэнергии	79,0
3.	Валовая продукция сельского хозяйства	91,8
4.	Введено в эксплуатацию жилых домов	72,6
5.	Грузооборот транспорта общего пользования	81,5
6.	Внешнеторговый оборот	95,7
7.	Оборот розничной торговли	99,4
8.	Объем платных услуг населению	95,1

Снижение импорта обусловлено сокращением объемов импорта автомобилей, автозапчастей, телевизоров, радиоприемников, магнитофонов, видеокамер, а также минерального топлива, нефти и нефтепродуктов.

Анализ экономического развития страны позволяет прогнозировать продолжение тенденции экономического роста в 2002 году. Ожидается, что объем промышленной продукции возрастет на 6,5-7,5%, валовая продукция сельского хозяйства – на 3-4%, объем строительных работ – на 10-12%, инвестиции – на 15-20%, экспорт – на 10-12%, импорт – на 5-7%, а оборот розничной торговли – на 5-6%.

Для обеспечения показателей экономического развития, представленных выше, необходимо активизировать инвестиционную деятельность, для чего имеются достаточные предпосылки. В частности, активизации инвестиционной деятельности будет способствовать принятие нового инвестиционного законодательства, а также предоставление налоговых льгот привлекаемым средствам для реализации инвестиционных программ.

Порядок предоставления налоговых льгот привлекаемым средствам для реализации инвестиционных программ регулируется Законом РА "Об инвестиционной деятельности". Проект данного закона был разработан в 2001 г. и в настоящее время находится на стадии обсуждения в Правительстве РА. Проект закона предусматривает предоставление налоговых льгот привлекаемым средствам для реализации инвестиционных программ, если объем инвестиционной программы превышает 500 млн драмов (новое правительство РА установило минимальный порог в размере 500 млн драмов). Проект закона был одобрен Правительством РА, и в настоящее время он находится на рассмотрении в Национальном Собрании РА. Ожидается, что закон будет принят до 1 мая 2002 г.

Предусмотренный проектом закона порядок предоставления налоговых льгот привлекаемым средствам для реализации инвестиционных программ позволяет предоставлять налоговые льготы как в ходе реализации инвестиционной программы, так и после ее завершения. Причем налоговые льготы в ходе реализации инвестиционной программы могут предоставляться как по средствам, привлекаемым для реализации инвестиционной программы, так и по основным средствам, приобретаемым за счет привлекаемых для реализации инвестиционной программы средств. После завершения инвестиционной программы налоговые льготы могут предоставляться только по средствам, привлекаемым для реализации инвестиционной программы, и по основным средствам, приобретаемым за счет привлекаемых для реализации инвестиционной программы средств.

Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության
սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշներ
2001թ. արդյունքներով

,

12.	Ազգաբնակչության բնական աճը 1000 մարդու հաշվարկով 1997 թ. 1998 թ. 1999 թ. 2000 թ.	 5,3 4,3 3,3 2,7	 11,0 10,0 9,0 8,9
13.	Աշխատանքային ռեսուրսները, հազ. մարդ	2357 (100%)	4686 (100%)
14.	Տնտեսապես ակտիվ բնակչությունը, հազ. մարդ (%-ը աշխատանքային ռեսուրսների նկատմամբ)	1447 (61,4%)	3748 (80,0%)
15.	Զբաղված են տնտեսության ճյուղերում, հազ. մարդ	1278 (54,2%)	3705 (79,1%)
16.	Տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը, հազ. մարդ՝ այդ թվում աշխատունակ հասակում սովորողներ աշխատունակ բնակչություն, որը զբաղված է տնային տնտեսությունում	910 (38,6%) 144 (6,1%) 766 (32,5%)	938 (20,0%) 270 (5,2%) 668(14,3%)
	Ժողովրդագրական առումով այս վիճակը կարելի է բնութագրել մեկ բառով՝ աղետ		
17.	Գիտատեխնիկական աշխատանքների ծավալը 2000 թ. հազ. դոլար	2649,1	19047,7 ավելի քան 7,1 անգամ

	Ներդրումները	Ներդրողները
Ընդհանուր ներդրումները ըստ ներդրողների՝		
ՀՀ, համայնքներ միջոցներ	52 մլն դրամ	184 մլն դրամ
Ներդրումների ծավալների ավելացում՝ 2000 թ. 2001 թ.	2000 թ. 2001 թ.	2000 թ. 2001 թ.
ԱՄՆ կազմակերպությունների կողմից	42,1$ 43,1$	49,4$ 52,2$ 48,8$
Ներդրումների միջին չափը՝ ԱՄՆ հազար դրամով	8,2$	16,1$

Ներդրումների ուղղությունները ըստ ներդրողների՝

	Ներդրողները	Ներդրումները
1. Ջրի մատակարարում	42 մլն դրամ	89 մլն դրամ
2. Ճանապարհաշինություն	88 մլն դրամ	133 մլն դրամ
3. Ոռոգման համակարգեր	10 մլն դրամ	18 մլն դրամ
4. Գազ (գազիֆիկացում)	1 տոկոս	1 տոկոս
5. Կոմունալ ծառայություններ	7 մլն դրամ	15 մլն դրամ
6. Ջրամատակարարում (խմելու)	1670	2772

Ներդրումների ծավալների կրճատում ունեցող ոլորտներ՝ ըստ ներդրողների՝ ելնելով ներդրումների ծավալների կրճատման չափից՝

Ներդրումների ուղղությունները ներդրողների կարծիքով՝ ըստ նշանակության՝ 1-ին տեղում ներկայացված են ամենակարևոր ոլորտները: Ներդրումների ծավալների կրճատման պատճառների մասին հարցին ներդրողների մեծ մասը պատասխանել է, որ ներդրումների ծավալների կրճատումը պայմանավորված է ոչ թե ներդրողների հետաքրքրության նվազմամբ, այլ ներդրումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սակավությամբ: Ներդրողների կարծիքով՝ ներդրումների ծավալների կրճատման հիմնական պատճառներից են՝ ներդրումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սակավությունը, ներդրումների համար անհրաժեշտ ենթակառուցվածքների անբավարար զարգացվածությունը, ներդրումների համար անհրաժեշտ տեղեկատվության անբավարարությունը, ներդրումների համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի անկատար

Սվիններով չեք պահի իշխանությունը

«Ազգային Միաբանություն» կուսակցության հայտարարությունը

Հանրապետությունում օրեցօր կուտակվող և երկրի պետականության համար լուրջ վտանգ ներկայացնող սոցիալ-տնտեսական կարևորագույն խնդիրները լուծելու, սպառնացող սովի վտանգը կանխելու փոխարեն Ռ. Քոչարյանը, ասես դրսի թելադրանքով, անում է հնարավոր ամեն բան երկրում վիճակն ապակայունացնելու համար: Ցավալիորեն այս կևտոտ ու վտանգավոր ծրագրի իրագործմանը ներքաշվում են նաև լուրջ ծառայություններ ունեցող, հասարակության մեջ հարգանք վայելող անհատներ, կազմակերպություններ ու խմբեր:

1. Վերջերս Ռ. Քոչարյանը ՀՀ պաշտպանության նախկին նախարար, գեներալ-լեյտենանտ Վաղարշակ Հարությունյանին զրկեց զինվորական բարձր կոչումից: Դրան հաջորդեցին Քոչարյանի կողմից հրահրված բարձրաստիճան առանձին զինվորականների ելույթները, որոնք, համոզված ենք, հակառակ իրենց կամքի ստվեր գցեցին Արցախի գոյամարտում հաղթանակած բանակի վրա ընդհանրապես: 2. Ս/թ հուլիսի 24-ին մամուլում հրապարակվեց Հայաստանի համայնքների ղեկավարների հայտարարությունը: Նախագահի մնասակիցներն այս անգամ էլ փորձեցին քաղաքական խարդավանքների մեջ ներքաշել ժողովրդի ընտրյալներին, համայնքների ղեկավարներին՝ նպատակ ունենալով շեղել ժողովրդի ուշադրությունը Ռ. Քոչարյանի ու նրա վարչակազմի բացահայտ ձախողումներից և ստեղծել նախագահին սատարողների ու նրան խանգարող ուժերի պատրանք: Հանրապետության նախագահը պարտավոր էր, իրավիճակից ելնելով, բոլոր համայնքների ղեկավարների ուժերն ուղղել երկրում ծառացած, մարդկանց հուզող և անհետաձգելի բազմաթիվ խնդիրների լուծմանը: 3. Ռ. Քոչարյանի կողմից դարձել է արդեն գործելակերպ օրենքի նկատմամբ ճնշումներ գործադրելը, իշխանության տարբեր թևերի միջև սեպ խրելը՝ Սահմանադրության պահանջների ամենակոպիտ խախտումներով ու բռնություններով: Ասվածի ապացույցն ԱԺ պատգամավորին Երևանի ՆԳ քաղաքային վարչություն բերման ենթարկելը և դաժան ծեծելն անպատիժ մնալն էր:

Հանրահայտ է, որ Ռ. Քոչարյանը ձախողել է արցախյան հիմնահարցի խաղաղ կարգավորման գործընթացը: Ավերվել է երկրի տնտեսությունը: Մոտեցել է այս ամենի համար ժողովրդին պատասխան տալու ժամանակը: Գիտակցելով այս ամենը՝ հոգեվարք ապրող վարչախումբն սկսել է երկրում իրավիճակն ապակայունացնելու գործընթաց:

Նպատակը մեկն է՝ ամեն գնով պահել երերացող և իր տակից փախչող նախագահի աթոռը:

Գործելակերպը հետևյալն է.

1. Ժողովրդի ուշադրությունը շեղել բուն խնդրից, այն է՝ ազատվել Ռ. Քոչարյանի անօրեն կլանի իշխանությունից: 2. Պարզունակ ճանապարհով փորձ է արվում պատրանք ստեղծել, թե Ռ. Քոչարյանի և նրա կլանի ստնծագործ աշխատանքին ինչ-որ մեկը խանգարում է: Մինչդեռ ընդդիմադիր այս կամ այն գործչի ասածներն ուղղակիորեն հաստատում են այն փաստարկները, որոնց հավաստիությունը չի ժխտվել Սինսկի խմբի համանախագահող ոչ մի երկրի կողմից: Այնպես որ, իր ձախողումների մնքն ուրիշի վրա գցելը Ռ. Քոչարյանի համար ցանկալի, սակայն դյուրին գործ չէ: 3. Երկրում ստեղծել վախի, սպառնալիքի մթնոլորտ, որով ահաբեկել և լռեցնել ցանկացած քննադատական խոսք՝ ուղղված Ռ. Քոչարյանին: Պարարտ հող ստեղծել համայնքային, խորհրդարանական, նախագահական առաջիկա ընտրություններում ապօրինությունների, ընտրակեղծիքների և բռնությունների համար:

Ստնծված իրավիճակից ելնելով՝ դիմում ենք մեր հաղթանական բանակի հրամանատարներին, ժողովրդի կողմից ընտրված համայնքապետերին, քաղաքապետերին, թաղապետերին և գյուղապետերին, Ազգային ժողովի պատգամավորներին, բոլոր նրանց, ում համար թանկ է Հայրենիքի ճակատագիրը: Մեր ժողովուրդը, վստահելով ձեզ, մեծ հույսեր է կապել ձեզ հետ, սպասում է, որ Դուք սատար կկանգնեք իրեն՝ լուծելու ծառացած բարդ ու դժվարին խնդիրները: Իշխանությունը նվաճվել է սվիններով, սակայն սվիններով պահել այն հնարավոր չէ, առավել ևս հանուն Ռ. Քոչարյանի, որը մինչև օրս մեր ժողովրդին ոչինչ չտվեց, ավելին՝ հայ մարդու մեջ սերմանեց հուսահատություն, անհավատություն, ատելություն, անելանելիության զգացում ու թշնամանք: Մի ընդհարվեք այն ժողովրդի հետ, որը ձեզ քվե է տվել, իսկ այսօր մատնված է աղքատության ու անուշադրության: Մի մոռացեք, որ Ռ. Քոչարյանի վարչակազմը վաղուց բարոյապես սպառել է իրեն և ներկայումս ջղաձիգ գործողություններով, կուսակցություններն ու մարդկանց իրար դեմ լարելով, բանակի բարձրագույն սպայական կազմը կևտոտ բանսարկությունների մեջ ներքաշելով, ժողովրդին իր ընտրյալների դեմ հանելով փորձում է երկարացնել իր անփառունակ իշխանությունը: Վաղը նա ընդարձակելու է իր սադրանքների շրջանակները՝ փորձելով ընդգրկել անվանի գործարարների, գիտնականների, մտավորականների, քաղաքական գործիչների, հույս ունենալով հիմա էլ այսպես ապակողմնորոշել հասարակությանը: Մի տրվեք սադրանքներին և ձեր վեհ կոչումը՝ ծառայել հարազատ երկրին ու սեփական ժողովրդին, մի փոխարինեք Ռ. Քոչարյանի երերուն աթոռի պաշտպանությամբ: Մենք ողջամտության կոչ ենք անում և համոզված ենք, որ կհաղթանակի արդարությունը, կհաղթանակի ժողովրդի կամքը, ժողովուրդ, որի զավակն եք և Դուք:

Արտաշես Գեղամյան
«Ազգային Միաբանություն»
կուսակցության նախագահ

«Առավոտ», 25.VII.2002:

Հայաստանն ինչպես որ կա

Դեկտեմբերի 11-ին Ռուսաստան կատարած իմ այցը, Մոսկվայում տված մամուլի ասուլիսը հանգիստ չի տալիս որոշ հայտնի պնակալեզների: Այլոց «կառքին լծված», վայրահաչը զբաղմունք դարձրածներին դիմում եմ չարենցյան տողերով.

Ես հարց եմ տալիս հաճախ հիմա ինձ,
Նայելով ոմանց «փառավոր» դնչին,
Թե ինչո՞ւ է դարն այսքան վիթխարի,
Իսկ սրանք - այսքան փոքրիկ ու չնչին…

Հանրությանը ներկայացնելով մամուլի ասուլիսում հնչած առանցքային շեշտադրումներով հարցերը՝ ակնկալում եմ, որպեսզի ընթերցողն ինքը որոշի, թե ով՝ ով է: Սեծապես շնորհակալ եմ մոսկովյան «Мир новостей» գործակալությունում հանդես գալու ընձեռված հնարավորության համար:

Իրականությունը պարտադրում է խոստովանել, որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է համընդհանուր, խոր ճգնաժամի մեջ: Դրա հիմքերը մեծապես դրվեցին 1999 թ. հոկտեմբերի 27-ին, երբ, ըստ էության, երկրում տեղի ունեցավ պետական հնաշրջում. գնդակահարվեցին բարձրաստիճան պետական այրեր, ովքեր Ռուսաստանի բարեկամներն էին: Ահաբեկիչների պարագլուխն արդեն 3-րդ տարի ճգվող դատական պրոցեսի ընթացքում իրեն այնքան անկաշկանդ, արտոնյալ վիճակում է զգում, որ հայտարարում է իր թեկնածությունը նախագահական առաջիկա ընտրություններին առաջադրելու մտադրության մասին: Ըստ էության, դատավարությունը վերածվել է իսկական ցինիզմի: Մարդասպանը հաճախակի հանդես է գալիս ոչ այնքան մնադրյալի, որքան դատախազի դերում: Հասկանալի է, նման բան հնարավոր է միմիայն իշխանությունների թողտվության, իսկ եթե անկեղծ լինենք և իրերը կոչենք իրենց իսկական անունով, ապա նրանց վախի, երկյուղի պայմաններում: Ամենևին պատահական չէ, որ հոկտեմբերի 27-ի գործով այն ժամանակ անցնում էր Հայաստանի նախագահ Քոչարյանի աշխատակազմի ղեկավար Ալեքսան Հարությունյանը, որը մինչև 2000 թ. մայիսն ահաբեկիչների նախաքննական բոլոր ցուցմունքներում հանդես էր գալիս ոչ ավել, ոչ պակաս, քան կազմակերպիչ: Որոշ ժամանակ անց իրավիճակը կտրուկ փոխվեց. այն բանից հետո, երբ Հայաստանի վարչապետի պաշտոնից ազատվեց Արամ Սարգսյանը՝ երջանկահիշատակ վարչապետ Վազգեն Սարգսյանի նբայրը, ողջ գործընթացը միանգամայն այլ ուղով ընթացավ: Ես չեմ ցանկանում հանդես գալ Դելֆյան գուշակի դերում, սակայն ասեմ. ցանկացած

հանցագործություն, որին անմիջապես չի հետևում անխուսափելի պատիժը, կարող է կրկնվել: Չպատժված բռնությունը կարող է ծնել նոր բռնություն:

Ահա քաղաքական այսպիսի բարդ իրադրության մեջ սկսվեց նախագահական նախընտրական կամպանիան: Նորից մենք կանգնած ենք մարտահրավերի առաջ, որը հասարակությանը նետել է իշխանությունը՝ ի դեմս Հայաստանի նախագահ Ռ. Քոչարյանի: Ամենազայրացուցիչն այն է, որ այս մարդը, բացարձակապես չունենալով ոչ մի վարկանիշ, իր հույսը դրել է ընտրությունների արդյունքները կեղծելու վրա, որի մեծ փորձը նա արդեն ունի: 2000-2001թթ. ընթացքում ԱՄՆ պետդեպարտամենտը Կոնգրեսին հղած տարեկան ուղերձում երկու անգամ հստակ մատնանշել է, որ 1998 թ. նախագահական ընտրությունների ժամանակ Քոչարյանի օգտին կեղծվել է 100 հազար քվեաթերթիկ: Հայաստանի իշխանությունները դրան այդպես էլ չարձագանքեցին, ոչ մի ռեակցիա չտվեցին, այսինքն՝ նրանք դրա հետ համաձայնեցին: Նման պարագայում, դուք, անշուշտ, կարող եք պատկերացնել այն նախագահի երերուն, անկայուն, խախուտ վիճակը, որը լեգիտիմ չէ: Իսկ Հայաստանի առջև այս իրավիճակում ծառացել են կենսականորեն կարևոր, լուծում պահանջող հարցեր. դա ԼՂՀ-ի չլուծված պրոբլեմն է, հարյուր հազարավոր աշխատատեղերի ստեղծման հարցն է, բնակչության մասսայական արտագաղթն է, որն անչափ վտանգավոր է մեր երրորդ հանրապետության համար: Արտագաղթը վտանգավոր է նրանով, որ գյուղերն ամայանում են, որ սահմանամերձ բոլոր շրջաններն այսօր հիմնականում բնակեցված են միայն տարեց մարդկանցով և երիտասարդ մայրերով՝ երեխաների հետ, որոնց ամուսինները մեկնել են գլխավորապես Ռուսաստան՝ փող վաստակելու, իրենց ապրուստը հոգալու համար: Դա վտանգավոր է պետականության կորստի առումով: Ցավոք, այս բոլոր հարցերը լռությամբ շրջանցվում են. ավելին, եթե դիտենք Հանրային հեռուստաընկերության ծրագրերը, որոնք ֆինանսավորվում են բացառապես հանրապետության պետբյուջեից, այն տպավորությունը կարող եք ստանալ, թե Հայաստանը վերածվել է դրախտի, և որ հայ ժողովուրդն ապրում է Շվեյցարիայում: Մինչդեռ մարդիկ, գերակշռող մեծամասնությամբ, քարշ են տալիս իրենց ողորմելի, խղճուկ գոյությունը:

Բռնազավթման հաջորդ աղաղակող օրինակն այն է, որ գործող նախագահ Քոչարյանի նախընտրական շտաբի ղեկավար է նշանակվել ոչ այլ ոք, քան պաշտպանության նախարարը, որը միաժամանակ անվտանգության խորհրդի քարտուղարն է: Անհեթեթությունը հասնում է այնտեղ, որ պաշտպանության նախարարը հայտարարում է երեք ամսով արձակուրդ գնալու, պաշտպանական գերատեսչության ղեկավարությունը ՀՀ ՊՆ Գլխավոր շտաբի պետի վրա դնելու և հրամանատարներին ու սպաներին քաղաքականությամբ զբաղվելու խստիվ արգելման մասին: Այսինքն՝ Քոչարյանը պաշտպանության նախարարին դնում է միանգամայն անհեթեթ դրության մեջ, և դա, միանշանակ, բացասական դեր կունենա բանակի բարոյահոգեբանական վիճակի վրա, քանի որ նրանց կամա թե ակամա ներքաշում են քաղաքականության մեջ, որը Սահմանադրությամբ խստիվ արգելվում է: Դա խոսում է իշխանության վերնախավում տիրող բարոյական խոր ճգնաժամի մասին, դա խոսում է այն մասին, որ նրանց միջև չկա

փոխվստահություն: Նախագահը, փաստորեն, այս նշանակումով ստորագրեց իր բացարձակ սնանկության տակ՝ վստահելի անձանց ռեսուրսներ չունենալու առումով: Ըստ էության, Քոչարյանը ոչ մեկին չի վստահում անգամ ղեկավարել իր նախընտրական շտաբը, և, բնական է, որ թե՛ բարոյական և թե՛ քաղաքական առումով, հալածական գազանի նման անկյուն քշված, իրար հետեղից սխալներ է թույլ տալիս: Իսկ այդ սխալները հանգեցնում են նրան, որ եթե անկողմնակալ հայացքով գնահատենք և վերլուծենք Հայաստանում ստեղծված իրադրությունը, ապա այն կարելի է բնութագրել որպես խրախճանք՝ ժանտախտի ժամանակ:

Վերջին շրջանում իշխանությունն ամեն կերպ իրենց ձեռքում պահել ցանկացողները ընտրել են Ռուսաստանի և ռուսների հանդեպ Հայաստանի բնակչության բացարձակ մեծամասնության ջերմ, նբայրական զգացմունքների շահարկումը՝ ի նպաստ իրենց կողմից վարվող, ըստ էության, Հայաստանը Ռուսաստանից օտարելու նենգ նպատակների: Ռուսաստանի կառավարության անդամի աշխատանքային ցանկացած այց Հայաստան իշխանությունը և նրան ձայնակցող ՋԼՄ-ները ներկայացնում ու մեկնաբանում են ոչ այլ կերպ, քան Հայաստանի ներկայիս ղեկավարությանը բարոյական, հոգեբանական աջակցություն: Դրանով, անշուշտ, ակնհայտ վնաս է հասցվում ռուսաստանյան բարձրագույն իշխանություններին, քանի որ մեր ժողովրդի մոտ հարց է առաջանում. ինչպե՞ս կարելի է աջակցել այն վարչակարգին, որը նեխել է կոռուպցիայի մեջ, որի կառավարման տարիներին կատարվել է աղմկահարույց, չբացահայտված քսան սպանություն:

Ծովահրեշի նման քոչարյանական կլանն իր ձեռքն է վերցրել Հայաստանի կենսապահովման բոլոր ճյուղերը: Նավթամատակարարումը ամբողջովին քոչարյանական կլանի ձեռքում է, հանապազօրյա հացի՝ հացահատիկի մատակարարումը, ալկոհոլի, ծխախոտի բիզնեսը՝ ամբողջովին կուտակված է նրանց ձեռքերում, և ոչ մի միջին ձեռներեց հանրապետության համար հիմնարար այս ճյուղերում չի կարող իր ջանքերը ներդնել: Լայնորեն կիրառվում է, այսպես կոչված, կոմիսարների ներդրման ինստիտուտը: Ցանկացած բիզնեսում, որտեղ ամսական շրջանառությունը գերազանցում է 1500-2000 դոլարը, պարտադիր կարգով պետք է լինի քոչարյանական կլանի ներկայացուցիչ, որը, մտնելով գործի մեջ, չի կրում և ոչ մի պատասխանատվություն՝ բացարձակապես չներդնելով ոչ մի ջանք բիզնեսի կազմակերպման գործում: Նա յուրատեսակ «տանիք» է հանդիսանում այդ բիզնեսի համար, որը, բնականաբար, այդպիսի իրավիճակի դեպքում դառնում է ստվերային: Բավական է ասել,որ, փորձագետների գնահատականներով, Հայաստանի տնտեսության 40-50%-ը ստվերային է. դրա ցայտուն ապացույցն այն է, որ բյուջեի եկամտային մասը կազմում է հանրապետությունում արտադրվող ազգային համախառն արդյունքի միայն 14%-ը: Համեմատության համար ասեմ, որ Դանիայում այդ թիվը 49% է, Ֆրանսիայում՝ 41%: Այսինքն՝ տեղի է ունենում հասարակության ծայրահեղ բեղելացում: Առավել հարուստ մարդկանց եկամուտները 32 անգամ գերազանցում են բնակչության ճնշող մեծամաս-

նության հատվածի եկամուտներին: Սինչդեռ, հայտնի է, երբ այդ թիվը հասնում է մինչև 6-7 անգամի, ապա ահազանգ է հնչեցվում, թե հասարակության մեջ սոցիալական պայթյուն է հասունանում: Ահա այսքանը. նման կարճ տեղեկատվությունից հետո ես պատրաստ եմ պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին:

– Պարոն Գեղամյան, ասացեք խնդրեմ, երբ Դուք ասում եք քոչարյանական կլան, պե՞տք է արդյոք հասկանալ, որ դրանում ընդգրկված են ղարաբաղցիները, և արդյոք Դուք վտանգ չե՞ք տեսնում, որ եթե նախընտրական պայքարը գնալով թեժանա, ապա Հայաստանի և Արցախի միջև հարաբերությունները խիստ կբարդանան:

- Քոչարյանն ինքն է շահագրգռված, որ իր կլանի դեմ պայքարը վերածի Արցախի դեմ պայքարի: Արցախի բնակչության ճնշող մեծամասնությունը գտնվում է համանման պայմաններում, ինչ Հայաստանի բնակչությունը: Ե՛վ մայր Հայաստանում ապրող հայերը, և՛ Արցախի հայերը գտնվում են քոչարյանական նույն ծովահրեշի լծի տակ: Այս վարչակարգը մեր երկրի, մեր հող ու ջրի հետ ոչ մի առնչություն չունի: Հակաժողովրդական այս վարչակարգն անընդունելի է թե՛ Արցախի, թե՛ Հայաստանի համար, և, բնական է, որ մեր քաղաքական պատասխանատու բոլոր գործիչները թույլ չեն տա, որ այս վարչակարգի դեմ պայքարը դուրս գա սահմանադրական իր հունից, ինչը հրահրում են իշխանությունները՝ անպտուղ փորձեր կատարելով՝ իրենց հանդեպ ժողովրդի խիստ մերժողական տրամադրությունները տարածել արցախահայության վրա:

– Ինչպիսի՞ն է լինելու ընդդիմադիր թեկնածուների հետագա մարտավարությունը. ակնհայտ է, որ Քոչարյանին կարելի է հաղթել միայն միասնական թեկնածու առաջադրելով:

- Դուք միանգամայն իրավացի եք. միասնական թեկնածուի դեպքում ընտրությունները կավարտվեն հենց առաջին փուլում՝ ընդդիմության ջախջախիչ հաղթանակով: Ստեղծված իրադրության վտանգավորության գիտակցումը ընդդիմության մեր կոլեգաներին ստիպում է լրջորեն մտածել համախմբման գաղափարի շուրջ: Ինչևէ. վերադառնալով Ձեր հարցին՝ կրկնում եմ. մենք հանդես ենք գալու մեկ միասնական թեկնածուով:

– Պարոն Գեղամյան, ընտրությունների նախաշեմին Մոսկվա կատարած Ձեր այս այցը Ռուսաստանի աջակցությունը, պաշտպանությունը կանխապես Ձեզ համար ապահովելու փորձ չէ՞: Դուք արդյոք չե՞ք կարծում, որ այժմ պայքար է սկսվելու, և, ամենայն հավանականությամբ, այն արդեն սկսվել է ընդդիմության և Քոչարյանի միջև՝ Ռուսաստանի աջակցությունը ստանալու համար:

- Ռուսաստան կատարած իմ այցի հիմնական նպատակն այն է, որ համոզեմ մեր հայրենակիցներին, ովքեր ապրում են Ռուսաստանում, բայց չունեն այստեղի քաղաքացիություն, վերադառնան հայրենիք, որպեսզի նրանք պարտադիր մասնակցեն նախագահական առաջիկա ընտրություններին, քանի որ շուրջ 450 հազար մեր համաքաղաքացիները դե ֆակտո ապրում են Ռուսաստանում, բայց դե յուրե Հայաստանի քաղաքացիներ են: Նրանց անունները ընդգրկված են ընտրացուցակների մեջ, և եթե

նրանք չվերադառնան Հայաստան, ապա բարենպաստ հիմքեր կդրվեն ընտրությունների արդյունքները մասսայական կեղծելու համար: Իմ հիմնական խնդիրն է՝ մեր համաքաղաքացիներին և հայրենակիցներին համոզել և հավաստիացնել, որ փետրվարի 19-ին Հայաստանի վրա արև է ծագելու, որպեսզի նրանք քաջ գիտենան, որ ողջ ժողովուրդը լի է վճռականությամբ՝ ժողովրդավարական ազնիվ ընտրությունների անցկացման համար, լի է վճռականությամբ՝ ընտրել լեգիտիմ նախագահ և ամբողջովին ենթարկվել նրա կամքին:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի աջակցությանը, անշուշտ, նրա դերն այստեղ հսկայական է, և մենք համոզված ենք, որ Ռուսաստանի ղեկավարությունը կաջակցի ցանկացած նախագահի, որը կընտրվի ժողովրդավարական, լեգիտիմ հիմքով: Միակ խնդրանքը, որ հայաստանյան ընդդիմությունը կարող է ունենալ Ռուսաստանից, այն է, որ ստրատեգիական գործընկերոջ իրավունքով, Եվրամիության, ԵԱՀԿ անդամ-երկրների միջև գործող միջազգային իրավական պարտավորությունների շրջանակում օժանդակի ազնիվ, արդար և ազատ ընտրությունների անցկացման կազմակերպմանը: Այո՛, մենք հուսով ենք, որ Ռուսաստանը, միջազգային իրավունքի շրջանակներում, միջպետական երկկողմանի մեր պայմանավորվածությունների շրջանակներում, շահագրգռված կլինի, որպեսզի Հայաստանն ունենա ազնիվ ընտրված, ուժեղ նախագահ, քանի որ այն դաշինքը, որի մեջ եմ նաև ես, Հայաստանի ապագան տեսնում է Ռուսաստանի հետ սերտ փոխհարաբերությունների մեջ: Մենք կողմնակից ենք ոչ միայն ռազմաստրատեգիական, այլև տնտեսական սերտ համագործակցության: Մենք կողմնակից ենք և հետևողականորեն պետք է հասնենք այն բանին, որպեսզի ստեղծվի տնտեսական ընդհանուր, միասնական դաշտ, որպեսզի միօրինականացվեն մաքսային, հարկային օրենսդրությունները, որպեսզի լինի տարադրամի միասնական գոտի: Այո՛, մենք այսպիսի համագործակցության կողմնակիցներն ենք, քանի որ Հայաստանի ապագան մենք չենք պատկերացնում առանց Ռուսաստանի Դաշնության հետ սերտ փոխհարաբերության և գործընկերության: Ռուսաստանը, որը Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինի նախագահ դառնալուն պես անհաշտ, անողոք պայքար է հայտարարել կաշառակերությանը, կոռուպցիային, անողոք պայքար է հայտարարել ահաբեկչությանը, ահա այդ Ռուսաստանը, համոզված ենք, չի կարող աջակցել այն վարչակարգին, որը ներխել է կոռուպցիայի մեջ, վարչակազմ, որի ընդերքից ծնվում են անպատիժ ահաբեկիչներ: Դա է մեր համոզմունքը, հավատը. այս եզրակացությանն ենք գալիս, երբ խորությամբ վերլուծում ենք Ռուսաստանի ղեկավարության գործողությունները, և որոնք մենք լիովին ողջունում ենք:

– Պարոն Գեղամյան, հաջողության հասնելու դեպքում՝ ՀՀ նախագահ դառնալով, ինչպե՞ս եք ծրագրում ստեղծել նոր աշխատատեղեր, քանի որ, սկզբունքորեն, ռեսուրսները մնալու են նույնը:

- Հարյուրավոր հայրենակիցներ ունենք, ովքեր արտագաղթել են Հայաստանից վերջին 12 տարում. նրանցից և ոչ մեկը չի խզել իր կապերը Հայրենիքի հետ՝ լինեն դրանք

ազգակցական, թե տնտեսական: Նրանք բոլորը, իշխանափոխության դեպքում, պոտենցիալ ներդրումների պաշտպանվածության դեպքում, պատրաստակամություն են հայտնում Հայաստանի տնտեսության մեջ ներդնել իրենց միջոցները: Տնտեսությունը գործի գցելու համար կան բոլոր նախադրյալները: Մենք մեծ հույսեր ենք կապում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի միջև վերջերս ստորագրված՝ «Գույք՝ պարտքի դիմաց» պայմանագրի հետ: Դրա շրջանակներում պաշտպանական համալիրի մի շարք ձեռնարկություններ անցան Ռուսաստանի տնօրինության տակ, և եթե դրանք գործարկվեն, եթե ստեղծվի հարկային ու մաքսային միանման տարածություն Հայաստանի և ՌԴ-ի միջև, եթե լինի ռուբլու միասնական գոտի, եթե 2-3 խոշոր պատվեր ստանան հայկական ձեռնարկությունները, որոնք ամբողջովին կոոպերացված կլինեն ՌԴ-ի համապատասխան գործարանների հետ, ապա դա փոքրիկ Հայաստանի համար կլինի հենց այն փրկօղակը, որը հանրապետությունը կհանի այս համընդհանուր, խոր ճգնաժամից: Կրկնում եմ, տնտեսության ծաղկման համար բոլոր նախադրյալները կան: Բայց դա տեղի կունենա միայն այն ժամանակ, երբ բիզնեսմենը, ներդնողը վստահ ու համոզված կլինի իր պոտենցիալ ներդրումների պաշտպանվածության մեջ: Այժմ, ցավոք, նման վստահություն չկա:

– *Պարոն Գեղամյան, եթե հաղթի Քոչարյանի վարչակազմը, իսկապե՞ս քաղաքացիական պատերազմ կսկսվի:*

- Քոչարյանի վարչակազմը լիովին սպառել է իրեն, այն չի կարող հաղթել. այն կարող է միայն ուզուրպացնել իշխանությունը, իսկ ցանկացած բռնություն, անշուշտ, բռնություն է ծնում:

Հ. Գ. Դեկտեմբերի 20-ի «Իզվեստիա» թերթում տպագրված հայտնի հրապարակումից հետո իշխանական ողջ քարոզչամեքենան խաչակրաց արշավանք է սկսել Ա. Գեղամյանի դեմ՝ նրան մեղադրելով «տան կևտը» օտարին ցույց տալու մեջ: Մինչդեռ այդ նույն քարոզչամեքենան օր ու գիշեր գովերգում ու փառաբանում է այդ կևտի հևինակներին ու ստևծողներին:

«Հայկական ժամանակ», 26. XII. 2002:

Գեղամյանի ելույթը Ռոտերդամում

Ռոտերդամում կայացած ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովում «Ազգային Միաբանության» նախագահ Արտաշես Գեղամյանի ելույթը տարբեր շրջանակներում զանազան քննարկումների առիթ է տվել: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ համարեցինք այն ամբողջությամբ հրապարակել:

Հարգելի պարոն Նախագահ, հարգելի գործընկերներ, մինչ «Հայաստանում ընտրություններին հետևելու մասին զեկույցի» նկատմամբ իմ վերաբերմունքն արտահայտելը, որով ելույթ ունեցավ պրն Ջովանի Կեսլերը, ցանկանում եմ հայտարարել, որ ես արմատական ընդդիմություն եմ Հայաստանի նախագահին, ինչում դուք շատ շուտով կհամոզվեք: Բայց դրա հետ մեկտեղ, ես ցանկանում եմ իմ լիակատար գոհունակությունն արտահայտել այն սկզբունքային գնահատականների վերաբերյալ, որոնք հնչեցին հայկական պատվիրակության ղեկավար Վահան Հովհաննիսյանի ելույթում՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման և լուծման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության իշխանությունների քաղաքականության առնչությամբ:

Հարգելի գործընկերներ, սույն թվականին կայացան Հայաստանի Հանրապետության նախագահի և խորհրդարանի ընտրությունները: Օգտվելով առիթից, ցանկանում եմ երախտագիտությունս հայտնել ԵԱՀԿ, Եվրախորհրդի և ԱՄՆ պետդեպարտամենտի դիտորդական առաքելությունների անդամներին: Նրանք մեզ շատ օգնեցին: Նրանց ներկայության անհրաժեշտությունը հատկապես սուր զգացին նախագահի թեկնածուները, այդ թվում և՝ ձեր խոնարհ ծառան, ում, առաջին փուլի տվյալներով, տրվել էին ընտրողների 17.6 տոկոս ձայները: Նախագահական ընտրությունների ավարտից հետո կայացան խորհրդարանական ընտրությունները, որով և ավարտվեցին հակասահմանադրական հնաշրջումն ու իշխանության բռնազավթումը, իսկ այդ գործընթացի սկիզբը դրվել էր 2003 թ. փետրվարի 19-ին՝ նախագահական ընտրությունների առաջին փուլի ընթացքում: Ընտրական օրենսգրքի, ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» զանգվածային խախտումներ. այսպիսին է նախագահական ընտրությունների առաջին փուլի գնահատականների էությունը, որը ներգրավված էր դիտորդական առաքելությունների զեկույցներում: Սպառիչ միջոցների կիրառում՝ օրենքի կոպիտ ոտնահարումներ թույլ չտալու համար, ազատ, արդար, թափանցիկ ընտրությունների անցկացում նախագահական ընտրությունների երկրորդ փուլի ընթացքում. այս պահանջներն էին արտահայտում ԵԱՀԿ-ի, Եվրոպայի խորհրդի և ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից Հայաստանի իշխանություններին տրված անհետաձգելի հանձնարարականների հիմնական

բովանդակությունը: Երկրորդ փուլի ընթացքում նշյալ հանձնարարականները Հայաստանի իշխանությունների կողմից ցինիկ կերպով արհամարհվեցին: Երկրորդ փուլի արդյունքները ևս կոպտորեն կեղծվեցին: ԱՊՀ դիտորդական առաքելության կողմից նախագահական ընտրությունների առաջին և երկրորդ փուլերի համար տրվեցին (վերոհիշյալ առաքելությունների գնահատականներից-*խմբ.*) տրամագծորեն տարբեր գնահատականներ: Նրանց սրտաշարժ և բարեհոգի հետևությունները հանրապետության լայն հասարակայնության աչքում վարկաբեկեցին Անկախ պետությունների համագործակցությունը: Իր իրավունքներում խաբված, ստորացված և վիրավորված ժողովրդի ցասման պոռթկումն իրեն երկար չսպասեցրեց: Իշխանությունների ապօրինություններին Հայաստանի քաղաքացիները պատասխանեցին 150-200 հազարանոց հանրահավաքներով և բողոքի ցույցերով: Ի պատասխան հետևեցին հազարավոր մարդկանց անօրինական ձերբակալությունները, վարչական կալանքները և տուգանումները, որոնց հիմնական մնքն իրենց սահմանադրական իրավունքի պաշտպանությունն էր: Հայաստանի Հանրապետությունը կանգնեց քաղաքացիական պատերազմի շեմին: «Ազգային Միաբանություն» կուսակցության չափավոր դիրքորոշումը կանխարգելեց արյունահեղությունը և նբայրասպան պատերազմը Հայաստանում: Հատկանշական է, որ ընտրողների հարյուր հազարավոր ձայներ, որոնք տրվել էին այդ կուսակցության առաջնորդ, նախագահի նախկին թեկնածուի օգտին, առավելագույն չափով գողացվել էին իշխանությունների կողմից: Այսպիսին էր Հայաստանում ընտրություններից առաջ և հետո ընկած ժամանակահատվածը բնորոշող իրավիճակը: Իսկ հանրապետության իշխանությունները, զգալով իրենց կատարյալ անօրինական լինելը, նույն լկտիությամբ կեղծեցին նաև նախագահական ընտրությունների երկրորդ փուլի արդյունքները: Այստեղ պատմությունը դարձյալ կրկնվեց, բայց արդեն՝ խորը ափսոսանք և մտահոգություն առաջացնելով: Հետևեցին ԵԱՀԿ, Եվրախորհրդի և ԱՄՆ պետդեպարտամենտի առաքելությունների դիտորդների օբյեկտիվորեն կոշտ գնահատականները (ինչպես և սպասվում էր՝ ԱՊՀ դիտորդական առաքելության բարեհոգի գնահատականները), համապատասխան անհետաձգելի հանձնարարականներ և պահանջներ իջեցվեցին Հայաստանի իշխանություններին՝ապահովել ԱԺ արդար և ժողովրդավարական ընտրությունների անցկացումը: Դրան հետևեց վերոհիշյալ կազմակերպությունների հանձնարարականների հերթական, ցինիկ արհամարհանքը իշխանությունների կողմից: Մայիսի 25-ի ԱԺ ընտրությունները նույնպես կոպտորեն կեղծվեցին: Հայաստանի բնակչության գերակշիռ մասը տարակուսած է և արդարաբար հանգում է այն կարծիքին, որ ընտրությունների մոնիտորինգ իրականացնող կոնկրետ ազդեցիկ քաղաքական ուժերին, թերևս, ձեռնտու չէ, որ Հայաստանում իշխանության նախագահական, գործադիր և օրենսդիր թևերը լեգիտիմ լինեն: Մտահղացումը պարզ է: Բնակչության լայն շերտերի վստահությունը չվայելող իշխանություններին ավելի հեշտ է կառավարել և օգտագործել: Այդպիսի սցենարը չարագուշակ արդիականություն է ստանում՝ հաշվի առնելով այն սուր խնդիրները, որոնք կան Հարավային Կովկասում, և որոնց լուծումն օր օրի ավելի հրատապ է դառնում: Չէ՞ որ արդեն կանխորոշված է, որ մոտ ապագայում անխուսափելիորեն

պիտի կտրվի Հարավային Կովկասի խնդիրների գործնական հանգույցը: Եվ դա անխուսափելիորեն էական դեր կխաղա գլոբալ մասշտաբներով: Ցավոք, հաշվի չի առնվում մի շատ ու շատ կարևոր հանգամանք: Հայ ժողովուրդը չի պաշտպանի հանրապետության ոչ լեգիտիմ իշխանությունների կողմից ստորագրված պայմանագրերը: Այսպիսով, «Հայաստանում ընտրություններին հետևելու մասին զեկույցի» նման ձևով քննարկումը՝ կազմակերպված ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի կողմից, ոչինչ՝ բացի խոր հիասթափությունից, առաջացնել չի կարող: Այն բացարձակապես ոչինչ չի տա հայ ժողովրդին, որը հույսով և հավատով ակնկալում է լսել ժողովրդավարական ազատ Եվրոպայի, ԱՄՆ-ի և Կանադայի արդար ձայնը: Այն, երևի, միայն թեթև վախ առաջացնի իշխանությունների մոտ, որոնք վերջին կես տարվա մեջ մեկ անգամ չէ, որ արհամարհել են ԵԱՀԿ, Եվրոպայի խորհրդի և ԱՄՆ պետդեպարտամենտի հանձնարարականները: Իսկ ըստ էության կպատժվի հայ ժողովուրդը, որը, չնայած իր հինգհազարամյա պատմությանը, շարունակում է մնալ նորագույն պատմության նույն ռոմանտիկ ժողովուրդը: Ժողովուրդ, որը դեռևս չի կորցրել հավատը Հին և Նոր աշխարհի՝ իր հիմքում առաքինի ժողովրդավարության հանդեպ, որն իր ապագան տեսնում է ԵԱՀԿ անդամ-երկրների ընտանիքի հետ և մեջ:

Իմ ելույթի ավարտին ցանկանում եմ մտքերս կիսել Ադրբեջանի իմ գործընկերների հետ, որոնք այս Խորհրդարանական վեհաժողովի ընթացքում մեկ անգամ չէ, որ շոշափեցին մեզ բոլորիս համար շատ ցավոտ Ղարաբաղյան հիմնախնդիրը՝ ձգտելով մրոտել ինչպես Հայաստանի Հանրապետությունը, այնպես էլ Լեռնային Ղարաբաղը: Ազնվորեն պատասխանեմ: Հայաստանում մենք խորը ցավ ենք տածում Ադրբեջանի բանտերում տառապող ավելի քան 700 քաղբանտարկյալների ճակատագրի հանդեպ: Բայց սրանում մենք տեսնում ենք ոչ թե ադրբեջանական ժողովրդի մնքը, այլ՝ դժբախտությունը: Մենք մեծ ցավ ենք ապրում, երբ Եվրոնորություններով կամ CNN-ով ցուցադրում են դաժան կադրեր, թե ինչպես է ադրբեջանական ոստիկանությունը ծեծի ենթարկում խաղաղ հավաքների մասնակից կանանց, ուսանողների, տարեց մարդկանց. և դա նույնպես ադրբեջանական ժողովրդի մնքը չէ, այլ՝ դժբախտությունը, մեր ընդհանուր դժբախտությունը: Մենք ձգտում ենք աշխարհին նայել անգլիացի հումանիստ, գրող և բանաստեղծ, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ջորջ Բրյուսի հայրենակից Ջոն Դոնի աչքերով, որը դեռ 19-րդ դարում է ասել հետևյալ անմահ խոսքերը. «Չկա մարդ, որը կղզու նման լինի՝ ինքն իր համար: Յուրաքանչյուր մարդ մայրցամաքի մաս է, հողի մաս: Եվ եթե ալիքը քշի առափնյա ժայռը, Եվրոպան կփոքրանա, և նույնպես՝ եթե քշի հրվանդանի եզրն ու խորտակի ապարանքը քո, կամ ընկերոջը քո, ամեն մարդու մահ աղերսվում է ինձ ևս, քանզի ես մեկ եմ Մարդկության հետ, ուստի երբեք չհարցնես, թե ում մահն է գուժում Զանգը. այն գուժում է քո մահը»:

Կգիտակցի՞ համաեվրոպական մեր տունը, որ ուրիշի դժբախտությունը նաև իր դժբախտությունն է, ահա այդ ժամանակ 21-րդ դարը կդառնա ոսկե դար ողջ մարդկության համար: Շնորհակալություն ուշադրության և համբերության համար:

«Հայկական ժամանակ», 16.VII.2003:

Իրավունք չունենք ձեռքներս ծալած նստելու*

Մեծարգո տիկնայք և պարոնայք, ավելի քան հիսուն երկրներից ժամանած սիրելի քույրեր և եղբայրներ, պատմական այս համաժողովին մեր բոլորիս մասնակցությունն առաքելություն է, որ պետք է դառնա գործունեության հստակ ծրագիր տեղերում, բոլոր այն երկրներում, որի պատվիրակներն ենք այստեղ: Մենք միասնաբար պիտի կարողանանք այդ երկրների ղեկավարներին, նրանց քաղաքացիներին հասցնել համահայկական այս նոր կազմակերպության շունչն ու ոգին:

Հայրենակիցներ. ազգային խնդիրների լուծումը չի սիրում տարերայնություն: Պատմությունը վկայում է, որ դատապարտված են այն ազգերը, որտեղ այդ խնդիրներին տրվում են իրավիճակային լուծումներ: Ավելին, զարգացման հեռանկարից զուրկ են այն երկրները, որոնք չունեն ազգային գաղափարախոսություն, և որտեղ ազգի շահերը ստորադասվում են պահի թելադրանքին: Չէ՞ որ ազգային գաղափարախոսությունն արժեքների գնահատման և վերագնահատման միակ չափանիշն է ոչ միայն ներկայի, այլև անցյալի ու ապագայի համար: Այն կոչված է համազգային շահերի տեսակետից հետազոտել պատմական իրողությունները, ի հայտ բերել սխալները՝ դրանց կրկնությունը կանխելու նպատակով: Իրավունք ունի՞ հնագույն պատմամշակույթ և կենսափիլիսոփայություն ունեցող մեր ժողովուրդը, որ Աստծո ձեռամբ դրված է բոլոր ժամանակների պատմության խաչմերուկում, զլանալու ձևակերպել իր արտաքին ու ներքին անվտանգության հայեցակարգը: Արդյոք ժամանակը չէ՞, որ գիտակցենք՝ հարկ է ունենալ ազգային գաղափարախոսություն, որը վեր կլինի բոլոր խավերից և կուսակցություններից, մեծ ու փոքր չինովնիկներից ու իշխանիկներից: Անկասկած է, որ այդ գաղափարախոսության առանցքը պետք է լինի նաև համամարդկային արժեքների հաստատումը:

Մոլորակն այսօր փոքր ու խոցելի է, քան երբևէ: Մարդկության ջանքերն ուղղված են նրա վրա այնպիսի կանոններ հաստատելուն, փոխհարաբերությունների այնպիսի որակներ մշակելուն, որ բացառվեն քաղաքակրթությունների հնարավոր բախումները: Այս քառատրոփին ոտնատակ չլինելու համար երկրները համակվում են միասնականության, հանդուրժողականության պաթոսով, հանդես գալիս դիվանագիտական ու քաղաքավարական այնպիսի դրսևորումներով, որ դեռ երեկ դժվար էր անգամ երևակայել:

* Ելույթ՝ Հայերի համաշխարհային կազմակերպության հիմնադիր համագումարում:

Հենց այս իրավիճակն է պարտադրում մեզ՝ հայերիս, լինել միաբան և շրջահայաց: Ովքե՞ր ենք մենք՝ հայերս, քաղաքակրթության այս նոր քարտեզի վրա: 21-րդ դարի մարդու ուշադրությունը մեզ վրա սեղելելու համար քաղաքական, տնտեսական, հոգևոր ի՞նչ մշակույթի ենք դավանում՝ միացյալ ազգերի ընտանիքում արժանապատիվ տեղ գրավելու համար: Կարո՞ղ է մեր մոլորակը իր պտույտը դանդաղեցնել կամ կասեցնել, ինչ է թե՝ Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը որոշ երկրների սրտովը չէ կամ էլ առաջադեմ աշխարհը հրաժարվի ժողովրդավարություն հաստատելու իր ձգտումից միայն նրա համար, որ մեր երկրի ներկայիս վարչակազմին խորթ է այդ ժողովրդավարությունը: Իհարկե՝ ոչ: Ցավոք, վերջին իրադարձությունները՝ Հայաստանի նախագահի և Ազգային ժողովի ընտրությունները, ցույց տվեցին, որ մեծ տերությունները, իրենց բանուգործը թողած, ոչ մի գործնական քայլ չեն ձեռնարկի հանրապետությունում իրական ժողովրդավարություն հաստատելու համար, լավագույն դեպքում կբավարարվեն միայն խրատական-բացատրական սեմինարներ կազմակերպելով:

Պահն է գիտակցելու, որ մեր ազգային, պետական խնդիրները միմիայն մենք պետք է լուծենք: Հայաստանի կշիռը կբարձրանա այն ժամանակ, երբ մենք էլ, ի վերջո, աշխարհի անցուդարձին լիարժեք մասնակից կդառնանք: Հաղորդակից կլինենք մարդկության տագնապներին, երբ կցանկանանք տեսնել ու հասկանալ, թե ինչ է կատարվում քաղաքական մեծ հարթակի վրա՝ մի պահ կտրվելով գավառական այն թատրոնից, որ բեմադրվում է այսօր մեր երկրում: Լինել քաղաքակրթության անբաժանելի մասը. ահա մեր գենի կենսունակության այն երաշխիքը, որ մեզ ավանդել են սերունդները՝ կոփելով Հայաստանի, հայ ժողովրդի մարմինն ու ոգին պատմության երկար ու ճիգ քառուղիներում: Չէ՞ որ ներկայումս որևէ ժողովրդի ազգային իղձերը բավարարվում են այնքան, որքան նրա ավանդն է համաշխարհային գործընթացներում: Մենք դատապարտված ենք ազգովի ծառայել մեր մտավորական ընտրախավին՝ թույլ չտալով երկրից ուղևների արտահոսք, վերականգնելով ինքնադրսևորման այնպիսի մթնոլորտ, որտեղ աճել է մեր ազգի ոսկե հատիկը, որը սնել ու պահել է Հայաստան երկիր-ժողովուրդը դարեդար: Մենք իրավունք չունենք մսխելու այն կենսական էներգիան ու տաղանդը, որ ժառանգականությամբ փոխանցված է մեր ժողովրդին: Ճանաչենք մեզ, հարց տանք իրար՝ վերջապես ո՞վ է այսօր մեր ժամանակի երազած հերոսը: Ովքե՞ր են մերօրյա Տիգրան Մեծն ու Գրիգոր Լուսավորիչը, Մեսրոպ Մաշտոցն ու Վարդան Զորավարը, պատմահայր Խորենացին: Ո՞րն է լինելու 21-րդ դարի մեր ոսկե կառքը, Նարեկացու, Քուչակի, Շիրակացու ավանդած այն ցնի սիրտը, որ մեզ չպիտի թողնի աշխարհի փոշիների մեջ: Կամ՝ Չարենցի, Իսահակյանի, Վարուժանի այն ոսկե արտը, որտեղ պիտի կանգներ հայ ժողովուրդն իր ողջ հասակով մեկ՝ այդ աշխարհը դարձնելով իր ցնի հոգևոր տիրակալությունը: Նրանց արդար գրի բերածը ոչ մի անաստված չէր կարող խլել Արարատի ժողովրդից: Չէ՞ որ մեր մեջքը պնդվել է այդ բարոյականությամբ, չէ՞ որ մեր ազգային ներկայությունն այս աշխարհի վրա անհնար է առանց զգայական, հզոր ու հավաքական հոգևոր Հայաստանի, առանց մեր ոսկե արտի, ուր մեկ բուռ ցանքսը լցնում է մեր հոգու ամբարները և լիասիրտ

պահում մեզ՝ եկող-գնացող ցուրտ օրերի մեջ: Ազգային սնապարծությունը, որի հետևանքներն ինքնամեկուսացումն ու պետականության կորուստն են, մենք լիովին մերժում ենք: Այլապես ստիպված կլինենք կրկնելու Սասունցի Դավթի վերջին խոստովանությունը. «Իմ ցեց իմ անձից է, էդ իմ սերմն էր, որ ինձ սպանեց»:

Աշխարհը, այո, այլևս վտանգավոր ու անկանխատեսելի է համարում ազգերի ու պետությունների ինքնամփոփումը, փոխհամագործակցության այսօրվա կողմնորոշիչներին անհաղորդ մնալը կարող է ճակատագրական լինել: Այլ բան է, թե մենք ինչ պաշարով ենք գնում այնտեղ. եթե ձեռնունայն, ապա նույն գլոբալացումը, իրոք, մարտահրավեր է: Առանց սեփական դեմքի ու դիմագծի մխրճվել 21-րդ դարը բնորոշող այդօրինակ հզոր գործընթացներում՝ երկրի համար վտանգներով հղի բախտախնդրություն է: Հայաստանը չունի սովորական երկիր դառնալու հնարավորություն: Նայենք մեր տարածաշրջանին, որտեղ քաղաքակրթությունների բազմազանությունը հղի է իրենց մեջ հնարավոր հակամարտությունների առաջացումով: Դրանք համաշխարհային գործընթացների յուրօրինակ մինի մոդելներ են, որոնք կենսականորեն թելադրում են քաղաքակրթությունների մերձեցում՝ ապագա խաղաղ և հանդուրժողական գոյության համար: Այսպիսով, Հայաստանը, գտնվելով ամերիկյան, եվրոպական, ռուսական, արաբամուսլիմական քաղաքակրթությունների կիզակետում, պարտադրված է դառնալու այդ քաղաքակրթությունների համար ընդհանուր համամարդկային արժեքների մերձեցման մի յուրօրինակ մերան: Մենք մեր հզոր Սփյուռքով նաև ապացույցն ենք այն բանի, որ մոլորակի որդեգրած համընդհանուր ու Մեծ տան սկզբնավորվող գաղափարախոսությունը մեզանում այլընտրանք չունի: Հիշենք. մենք 2.5 միլիոն ենք Ռուսաստանում՝ ավելին, քան մեր պետության մեջ, 1.2 միլիոն՝ ԱՄՆ-ում, իսկ եվրոպական երկրներում՝ հատել ենք 800 հազարի սահմանագիծը: Աշխարհասփյուռ հայությունն այսօր պետք է ոչ միայն համակվի միասնական ուխտով, այլև կարողանա աշխարհին էլ ապացուցել, որ հայ ժողովուրդը խաղաղասեր ու արարիչ ազգ է: Մենք էլ այլ երկրների ու ժողովուրդների հետ մարդկության ճակատագիրը կերտելուն լիարժեք մասնակիցը լինելու խնդիրն ունենք, մենք էլ ենք տառապում մարդկության ցավերով և փորձության ժամին միասնական ենք: Բոլորիս երազանքը մեկն է՝ կերտել մարդկության լուսավոր ապագան: Եվ դրա համար մենք պետք է պատրաստ լինենք համագործակցել բազում երկրների հետ և նրանց հետ համահունչ զարգանալ: Այս մայրուղի դուրս գալու համար հարկ կլինի համատեղել Հայաստանի և Սփյուռքի ջանքերը, միավորել մեր ցաքուցրիվ և հախուռն ուժերը:

Հայրենակիցներ, արևմտյան քաղաքագիտական միտքը դատապարտված է համարում այն երկրներին՝

– որոնք չունեն ստրատեգիական պաշարներ,

– ունեն փոքր տարածք կամ մեծ տարածքի վրա փոքրաթիվ բնակչություն, անկլավային աշխարհագրական դիրք, ոչ բնական սահմաններ, որոնք կոնֆլիկտի աղբյուր են հանդիսանում,

– քաղաքական-աշխարհագրական տարածաշրջանում զուրկ են բնական դաշնակիցներից,

– պիտանի չեն ստրատեգիական ռազմաքաղաքական հենարանի համար,

– ունեն առաջին անհրաժեշտության ապրանքների ապահովության ցածր աստիճան, և վերջապես՝

– պատմաավանդական հակամարտության մեջ են հարևանների հետ:

Վերոթվարկյալներից անգամ մեկ խնդիր ունեցող երկրներն են այսօր խորապես մտահոգ և ակտիվ աշխատում են այն վերացնելու ուղղությամբ: Իսկ միանգամից այս բոլոր խնդիրներն ունեցող Հայաստանը մի՞թե կարող է իրեն թույլ տալ նման շռայլություն՝ նստել ձեռքերը ծալած ու սպասել գլխի գալիքին: Մինչ պետությունները փորձում են քաղաքական դաշնակիցների միջոցով մնմել վերահաս հնարավոր վտանգները, Հայաստանն այսօր իր կարճատես քաղաքականությամբ դուրս է մղել մեր երկիրը գլոբալացման գործընթացներից, զրկել է մեզ դինամիկ զարգանալու բոլոր հնարավորություններից: Ազգահավաք առաքելություններին հակակշիռ՝ մեր իշխանավորները իրենց գործունեությամբ նպաստում են երկրի դատարկմանը: Պահն է սթափվելու և մեղավորներին սթափեցնելու:

Հայրենակիցներ, համաշխարհային գործընթացներն այնքան սրընթաց են զարգանում, որ մեզ հապաղելու հնարավորություն չեն ընձեռում: Տաճար է մեր երկիրը, և մեր սերնդին է բաժին ընկել նրա առաջ ոչ միայն աղոթելու, այլև նրա լույսը պահել-փայփայելու ճակատագիրը: Բոլորիս պարտքն է՝ տերը լինել մեր պատմական հայրենիքից, ասես, որպես մասունք մնացած մեկ-տասներորդին և մեր հին արյան ու մեծ բարոյականության միջով մեկ անգամ էլ նայելու աշխարհին ու մեզ՝ հասկանալու համար, որ մենք չպիտի մնանք ճամփեզրին: Յուրաքանչյուր երկիր իր սրտի զարկով է չափում ժամանակը, իսկ երկրի սիրտը բաբախում է նրա ընտրյալ զավակների կրծքի տակ: Նրանք այդ երկրի բարոյականությունն են՝ ամենամեծ գանձը: Հանճարն ժողովուրդներ չկան, կան նրա հանճարն զավակները, ովքեր իրենց ուսերին են առնում երկիրն ու ժամանակը և նրան հասցնում երազած, ապահով եզերք: Աչքաբաց, հասուն ու խելոք լինելու մեր ժամանակն է: Ուրեմն, հանուն մեր ապագա սերունդների, մեր տառապած նախնյաց, հանուն մեր մեծերի հիշատակի՝ միաբան ու հաղթող լինենք այս գոյապայքարում, 21-րդ դարը դարձնենք հայ արարիչ մարդու հաղթանակների ժամանակաշրջան:

«Հայկական ժամանակ», 9.X.2003:

Գեղամյանի ելույթը Վիեննայում

Անցիլ մեկ տարի առաջ Հայաստանում տեղի ունեցան նախագահական հերթական ընտրություններ, որոնց ընթացքում, ցավոք, կոպտորեն խախտվեցին ՀՀ Ընտրական օրենսգրքի և ՀՀ Սահմանադրության դրույթները, որի արդյունքում իշխանությունը զավթեց պարոն Ռոբերտ Քոչարյանը: Նախագահական ընտրություններում տեղ գտած խախտումները խստորեն դատապարտվեցին թե՛ ԵԱՀԿ դիտորդական առաքելության, թե՛ ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից: Ավելին, ընդդիմադիր թեկնածուներին խորհուրդ տրվեց դիմել ՀՀ սահմանադրական դատարան, ինչին և հետևեցինք մենք: 2003 թվականին Հայաստանի սահմանադրական դատարանը, արձանագրելով, որ նախագահական ընտրությունները զուգորդվել են խախտումներով և դրանց արդյունքում երկրում վստահության ճգնաժամ է առաջացել, քաղաքական ուժերին հորդորեց՝ մեկ տարվա ընթացքում «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցնել Սահմանադրության դրույթներին և Հայաստանում անցկացնել Նախագահի վստահության հանրաքվե: Իսկ առջևում խորհրդարանական ընտրություններ էին, և ԵԱՀԿ-ն ու ԱՄՆ Պետական քարտուղարությունը Հայաստանի իշխանություններին կոչ արեցին գալիք ընտրությունների ընթացքում առաջնորդվել ժողովրդավարության սկզբունքներով, պահպանելով նաև Ընտրական օրենսգրքի ոգին ու պահանջները: Պարոն Քոչարյանը և նախագահական ընտրությունները կեղծած իրեն սատարող ուժերը, ըստ էության, արհամարհեցին թե՛ ԵԱՀԿ դիտորդական առաքելության, թե՛ ԱՄՆ Պետքարտուղարության հորդորները և հերթական անգամ ևս կոպտորեն կեղծեցին Ազգային ժողովի ընտրությունները: Հետևելով ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի, նաև Եվրամիության ու ԱՄՆ Պետքարտուղարության առաջարկներին, ինչպես նաև խնդիր ունենալով կյանքի կոչել ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, այն է՝ աջակցություն ցույց տալ մինչև 2004 թ. ապրիլի 16-ը ՀՀ Նախագահի վստահության հանրաքվեի կազմակերպման և անցկացման գործում, սկզբնական շրջանում ընդդիմությունը չբոյկոտեց ՀՀ նորընտիր Ազգային ժողովի աշխատանքները: Սակայն ԱԺ ոչ լեգիտիմ մեծամասնությունը, որն աջակցում էր հանրապետության ոչ լեգիտիմ Նախագահին, խորհրդարանական ընտրություններից անմիջապես հետո՝ 2003 թ. առաջին իսկ նստաշրջանի ժամանակ, խախտեց Սահմանադրական դատարանի պահանջը՝ օրակարգից և քննարկումից հանելով «Հանրաքվեի մասին» օրենքը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու հրատապ հարցը: Նման պայմաններում ԱԺ-ում ներկայացված քաղաքական ընդդիմությանն այլ բան չէր մնում, քան բոյկոտել Սահմանադրության պահանջները կոպտորեն խախտող ԱԺ աշխատանքները, ինչը և արվեց: Իշխանությունը բռնազավթած Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը երկիրը գցեցին քաղաքական և սոցիալական

խորը ճգնաժամի մեջ: Իսկ քաղաքական այն ուժերը, որոնք սատարում են նրանց, այսօր, արարիչ աշխատանք կազմակերպելու փոխարեն, փաստորեն, Ազգային ժողովի ամբիոնն օգտագործում են ընդդիմության, ինչպես նաև հանրապետության այն քաղաքացիների դեմ սպառնալիքներ հնչեցնելով, ովքեր, արտահայտելով հայ ժողովրդի ճնշող մեծամասնության կամքը, պահանջում են սահմանադրական ոտնահարված կարգերի վերականգնումը Հայաստանում: ՀՀ-ում առկա քաղաքական, պառլամենտական և սոցիալական ճգնաժամը հաղթահարելու նպատակով, կարծում եմ, ճիշտ կլինի, որ Էդինբուրգում հուլիսին կայանալիք ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովում քննարկման առարկա դառնա ՀՀ-ում սահմանադրական կարգի վերահաստատման հարցը: Այս խնդիրը չափազանց արդիական է նաև այն պատճառով, որ իշխանությունը բռնազավթած Նախագահը և Հայաստանի Ազգային ժողովի ոչ լեգիտիմ մեծամասնությունն իրենց գործողություններով, ըստ էության, խախտում են Հանրապետության կողմից ստանձնած բոլոր պարտավորությունները, որոնք Հայաստանի Հանրապետությունն ընդունել էր Եվրախորհրդին և ԵԱՀԿ-ին անդամակցելիս: Երկրորդ կարևորագույն հարցը, որի մասին կցանկանայի խոսել, հայ ժողովրդի ձգտումն է ավելի սերտ համագործակցել եվրոպական և եվրոատլանտյան կառույցներին՝ հավատարիմ մնալով այլ երկրների հետ ունեցած իր բոլոր դաշնակցային պայմանագրերին: Սա էր պատճառը, որ մենք հետևողական մասնակցում ենք ՆԱՏՕ-ի կողմից կազմակերպվող «Գործընկերություն՝ հանուն խաղաղության» ծրագրերի իրականացմանը, ինչը, ցավոք, ծայրաստիճան հիվանդագին է ընդունվում հարևան Ադրբեջանի կողմից: Դրա ապացույցն էր այն, որ վերջերս Ադրբեջանը հայ սպաներին թույլ չտվեց մասնակցել «Լավագույն ջանք-2004» զորավարժությունների նախնական հավաքին, որը տեղի ունեցավ Բաքվում: Դրա հետ մեկտեղ, երեկ տեղի է ունեցել միջազգային ահաբեկչության ծայրահեղ դրսևորում ադրբեջանցի սպայի կողմից, որը գիշերը կացնահարել և սպանել է հայ սպայի՝ Բուդապեշտ քաղաքում: Ուզում եմ հիշեցնել, որ հայ և ադրբեջանցի սպաները այնտեղ էին գտնվում «Գործընկերություն՝ հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում կազմակերպված ուսումնական դասընթացներին: Մենք այդ սպանությունը դիտարկում ենք որպես ադրբեջանական իշխանությունների ռազմատենչ հայտարարությունների հետևանք: Մեզ խիստ մտահոգում է նաև, որ ադրբեջանական իշխանությունները փորձում են վիժեցնել այն մեծ աշխատանքը, որ ԼՂ հարցի կարգավորման գործում իրականացրել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահողները: Կարծում եմ, որ միջազգային ահաբեկչության դրսևորումները, որոնք խրախուսվում են Ադրբեջանի իշխանությունների կողմից, ինչպես նաև վերջինիս ռազմատենչ ու ապակառուցողական դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման գործում, հանգեցնում են բանակցային ողջ գործընթացի տապալմանը: Ավելին, նման քաղաքականությունը հետապնդում է գեթ մեկ նպատակ. պատերազմ սանձազերծել և ուժային որոշումներով հասնել վիճարկվող հիմնահարցերի լուծմանը: Կարծում եմ նաև, որ ագրեսորին հանդարտեցնելու ուղիների որոնումը նույնպես պետք է դառնա Էդինբուրգում կայանալիք ԵԱՀԿ հերթական նստաշրջանի քննարկման առարկա:

«Հայկական ժամանակ», 21.II.2004:

2004 թ. հունիսին կայացած Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանի արդյունքները և Հայաստանի Հանրապետության առջև ծառացած նոր մարտահրավերները

Սիրելի՛ ընթերցող

2004 թ. հունիսի 30-ին Կինոյի տանը ընտրողների հետ հանդիպման ժամանակ հնչած ելույթս և հարցուպատասխանը տպագրելու անհրաժեշտությունը, թերևս, չէր լինի, եթե իշխանական լրատվամիջոցները, մասնավորապես հուլիսի 4-ի կիրակնօրյա «Հայլուրը» արմատապես չնենգափոխեին թե՛ հանդիպման ժամանակ բարձրացված հարցերը, թե՛ տրված գնահատականները:

Ձեր դատին ենք ներկայացնում այն ամբողջությամբ:

Արտաշես Գեղամյան

Նախ հայցում եմ բոլորիդ ներողամտությունն այն բանի համար, որ այսօր հարկադրված ենք եղել հենց այս դահլիճում հանդիպում կազմակերպել, որովհետև իշխանությունները կատեգորիկ արգելել են ավելի մեծ դահլիճներ տրամադրել «Ազգային Միաբանությանն» իր միջոցառումներն անցկացնելու համար: Նրանք, բնականաբար, գիտակցում են, որ ամենամեծ դահլիճն անգամ չի կարող իր մեջ ընդգրկել կուսակցության բոլոր համակիրներին, քանի որ մեր, ինչպես նաև ընդդիմադիր մյուս կուսակցություններին աջակցողներն այսօր առանց չափազանցության կազմում են ողջ հայ ժողովրդի 90 %-ը:

Այս հարցը պատահական չէ, որ այսօր քննարկման առարկա է դարձել, որովհետև, գտնվելով Ստրասբուրգում, ինտերնետով հետևում էի հայաստանյան մամուլում հրապարակվող նյութերին և չգիտեի՝ խնդամ, թե լամ, զարմանամ, թե տարակուսեմ: Որովհետև այն, ինչ տեսանք ու լսեցինք այնտեղ և երևանյան հրապարակումները, ասես, իրար հետ տրամաբանական ոչ մի կապ չունեին: Մասնավորապես, հանգամանքների բերումով, ես ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի պատգամավոր եմ և անցած մեկ տարվա ընթացքում նույն Ստրասբուրգի Խորհրդարանական վեհաժողովում հնարավորություն եմ ունեցել ունկնդրելու հարևան երկրների, այն է՝ Վրաստանի Հանրապե-

տության և Ադրբեջանի Հանրապետության նախագահների ելույթները: Եվ, բնականաբար, անտարբեր չէի, թե ինչպես կխոսեր Ռոբերտ Քոչարյանը հենց նույն Ստրասբուրգում, նույն Խորհրդարանական վեհաժողովում: Մտածում էի, որ վերջինիս գոնե բավարար մակարդակի ելույթից հետո ինքս կգնամ, նրա ձեռքը կսեղմեմ և կասեմ, որ, այո, ես էլ հպարտ եմ, որ Հայաստանի քաղաքացի եմ, որ երկրիս ղեկավարը եվրոպական չափանիշներով է խոսում, համամարդկային արժեքներն է ի ցույց դնում և ոչ թե հանդես է գալիս որպես դաշտային հրամանատար:

Առաջին դառնությունը, որ ճաշակեցի, հենց այնտեղ էր՝ Ստրասբուրգում: Ականջիս համեմատականներ ես անում, որովհետև հարևաններիդ և ոչ ոք չի փոխի. Ադրբեջանը կմնա իր տեղում, Վրաստանը՝ իր, Թուրքիան և Պարսկաստանն էլ՝ իրենց տեղերում: Ուրեմն, յուրաքանչյուրս մեր գործողությունները ծրագրելիս պետք է հաշվի նստենք նաև այն իրողության հետ, որը քարոզվում և իրականացվում է այդ երկրներում: Եվ այդ համեմատությունից, ցավով եմ ասում, տանուլ ենք տալիս: Օրինակներ բերեմ թե՛ Սահակաշվիլու, թե՛ Ալիևի ելույթներից: Լսում էի նրանց խոսքը Վրաստանի և Ադրբեջանի մասին, ասում էին՝ ինչպիսին են լինելու իրենց երկրները 2020 թվականին, մատնանշում էին այն խնդիրները, այն բարձրությունները, որոնք նվաճվելու են իրենց ժողովուրդների կողմից: Մատնանշում էին այն ճանապարհները, այն ուղիները, որոնցով գնալով իրենք կկարողանան հասնել բաղձալի նպատակին: Լսելով նրանց ելույթները՝ յուրաքանչյուր մարդ արդեն պատկերացում է կազմում և հասկանում է տվյալ երկրների ղեկավարների մտածելակերպի մասշտաբայնությունը: Մասնավորապես, օրինակ բերեմ Ադրբեջանից, որովհետև հայ ժողովրդի ապագա ճակատագրի համար առավել քան կենսական են այն զարգացումները, որոնք սպասվում են այդ երկրում: Միայն ու միայն 2004 թվականից յուրաքանչյուր օր Ադրբեջանի նավթային և գազային տնտեսության մեջ 10 միլիոն դոլարին համարժեք ներդրումներ են իրականացվում. կրկնում եմ, յուրաքանչյուր օր: Ավելին՝ մինչև 2015-2020 թթ. մեր հարևանը այդ համալիրից նվազագույնը միայն 20-28 միլիարդ դոլար մաքուր եկամուտ է ստանալու բյուջեում: Ինչո՞ւ է տատանումը 8 միլիարդ դոլար. դա էլ պայմանավորված է նավթի համաշխարհային գների հնարավոր տատանումներով:

Վրաստանի նախագահն ասում էր, թե ինչ ճանապարհ է սպասվում իր երկրին, որն արդեն իսկ հռչակել է Եվրամիությանն ինտեգրվելու մասին: Միաժամանակ մեր հարևանը ճկունություն է ունեցել սրանից դեռ 20 օր առաջ Վրաստանում ռուս ամենանշանավոր ձեռներեցների հետ ֆորում անցկացնել, որի մասնակիցներից մեկն էլ եղել է մեր հայրենակից Արա Աբրահամյանը: Վերջինս մեծագույն դերակատարում է ունեցել, որ այդ ֆորումը հաջողությամբ անցնի: Եվ, դրանով իսկ, ասես, տնտեսական ամենասերտ կապեր են հաստատվում Ռուսաստանի Դաշնության հետ: Իսկ նավթային ու գազային նույն համալիրի տրանզիտից Վրաստանի բյուջեն տարեկան կտրվածքով ակնկալում է ստանալ 800 միլիոնից 1 մլրդ դոլարին համարժեք հասույթ, այսինքն՝ Հայաստանի բյուջեի կրկնապատիկը:

Մարդիկ, այսպիսով, իրենց երկրների զարգացումն են տեսնում:

Լսում ենք, կարդում ենք պարոն Քոչարյանի ելույթը: Ասում է՝ վերջին 3 տարվա ընթացքում 12% աճ է արձանագրվել: Համաձայն ենք, ընդունեցինք: 15 տարի հետո անգամ աճի նման տեմպի դեպքում Հայաստանի Հանրապետությունում մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը կազմելու է միայն և միայն 1987 թվականի ցուցանիշը: Սա է լինելու Հայաստանի «նվաճումը»: Էդ ի՞նչ՝ առաջ ենք գնում, որ հետ գնա՞նք: Բա դա հպարտանալու թիվ է, նայեք 4 կողմը, տեսեք աշխարհը ոնց է զարգանում: Տնտեսական աճի մասին խոսելով և ասելով, որ համախառն ներքին արդյունքի 85%-ը բաժին է ընկնում մասնավոր ձեռներեցությունից ստացածից, չգիտես ինչու չի ասում, թե ինչ ողբալի վիճակում է հենց այդ նույն մասնավոր ձեռներեցությունը: Իսկ վիճակն այնպիսին է, որ Հայաստանի Հանրապետության 2003 թ. բյուջեում շահութահարկին և եկամտահարկին բաժին է ընկել գումարային առումով ՀՆԱ-ի ընդամենը 2,1%: Իսկ ի՞նչ է դա նշանակում. նշանակում է, որ մեր, իբր, ազատ տնտեսության պայմաններում աշխատող ձեռնարկություններն եկամտաբեր չեն, այսինքն՝ ենթակա են բանկրոտության: Ինչո՞ւ այս թվերը չեք ասում: Ու անհարմար չեք զգում և մարդկանց 12%-ով եք կերակրում: Որ հայ ընտանիքը 12%-ը կարագի կամ պանրի տեղ հացին քսեց, կերավ, ո՞րն իր կենցաղում, օջախում բարեկեցություն զգաց: Ուրիշ բան, իրենց կլանը, այո, օրըստօրե հարստանում է, տռզում են: Արդեն ավտոմեքենաների մրցույթ են հայտարարել, որ տեսնեն, թե ում մեքենան կես միլիոնից ինչքանով է ավել լինելու. . . Իսկ ժողովուրդը կիսաքաղց վիճակում է: Ինչի՞ այս ամենի մասին չի ասվում: (*Բուռն ծափահարություններ*):

Ելույթի երկրորդ մասը կոռուպցիայի դեմ պայքարն էր: Կոռուպցիայի և կաշառակերության: Այստեղ համաձայն եմ այն մտքի հետ, որ կոռուպցիան Հայաստանի համար դարձել է համակարգային չարիք: Միանգամայն ճիշտ է ասում Ռոբերտ Քոչարյանը: Իր վարչախմբի ստնծած համակարգը, այո, ծնում է կոռուպցիա, իր ստնծած համակարգը, այո, անզոր է կաշառակերության և կոռուպցիայի դեմ պայքար ծավալելու գործում: Եվ զավեշտն այն է, որ դա ասում է իրեն գովելով, որ «վերջերս իմ հրամանագրով ստեղծել եմ կոռուպցիայի դեմ պայքարը կոորդինացնող խորհուրդ»: Եվ այդ խորհրդի կազմում էլ ընդգրկել է հենց այն մարդկանց, ովքեր ի պաշտոնե պարտավոր էին պայքարել կոռուպցիայի դեմ: Կնշանակի ցուցավահանակը, յառլիկը փոխում են, կարծում են՝ պայքարի բովանդակությունն է փոխվել: Բա զավեշտ չէ, ի՞նչ է:

Կոռուպցիայի դեմ պայքար եք ուզում ծավալել, սրանից դեռ մեկ տարի առաջ հասցեով ասացինք, որ հայ անվանի ձեռներեց Լևոն Մարկոսից 15,5 միլիոնի կողոպուտ են արել Հայաստանում: Հասցեները տվել ենք, մարդկանց անունները՝ հիշատակել: Բացարձակապես ոչ մի ռեակցիա, ինչո՞ւ: Թալանչիներն իրենցից են: Ձախ ձեռքը չի կարող աջ ձեռքը բռնել:

Կոռուպցիայի դեմ պայքար եք ուզում ծավալել, վերցրեք, կարդացեք «Չորրորդ իշխանության» վերջին համարները: Էդ մարդիկ էլ ի՞նչ անեն: Կոռուպցիայի հիմնադիրների նկարներն ի ցույց են դնում, հասցեները նշում են, անուն-ազգանունները՝ գրում: Դրանից ավել ի՞նչ անեն այդ մարդիկ: Դե պայքարեք, ինչո՞ւ եք ԵԽ ԽՎ-ին

բյուրիմացության մեջ գցում:

Կոռուպցիայի դեմ պայքարել եք ուզում, դեռ մի տարի առաջ ՀՅԴ և «Հայ աշխատավոր» հասարակական կազմակերպության համատեղ ժողովի ժամանակ ղեկավարներից մեկը տղամարդկություն ունեցավ, կանգնեց և ասաց, որ եթե դուք ուզում եք Հայաստանում կոռուպցիան ու կաշառակերությունը վերանա, ապա պետք է բոլոր պաշտոններից ազատել Սերժ Սարգսյանին: Դահլիճը որոտընդոստ ծափահարեց: Դրանից հետո բացարձակապես և ոչ մի հերքում չեղավ, ոչ ոք դատի չտրվեց: Էդ որ «Փալաքալ» էի ասում, թասիբներիդ կպավ, դատի տվեցիք, բա ասում է՝ կաշառակերության քավորն ես, դատի տուր:

Եվ այս պայմաններում ամենազարմանալին այն է, որ իր ելույթի հաջորդ մասում Քոչարյանը խոսում է նաև հարևան երկրի մասին՝ Վրաստանի մասին, համեմատականներ անցկացնելով Հայաստանի հետ: Իրավիճակը մեզ մոտ, ասում է, ճիշտ հակառակն էր, քան Վրաստանում: Այսինքն՝ Վրաստանում շատ վատ էր, Հայաստանում շատ լավ է: Ակամայից հիշում ես հայտնի ասացվածքը. «Քյոսին տնազ անողը, գոնե, փարթամ մորուք պետք է ունենա»: Ո՞ւմ ես տնազ անում: Վրաստանի հետ համեմատականի համար բերեմ մի թիվ, որ տպագրված է «Քրիստոնեական Հանրագիտարան. 2004 թ. Ալմանախ»-ում: Աշխարհի 220 երկրներից Հայաստանն իր ազգաբնակչության քաղցածությամբ 217-րդ տեղում է: Մեզնից հետո Էրիտրեան, Բուրունդին ու Աֆղանստանն են: Սննդի մեր օրական ռացիոնը միջին հաշվով կազմում է օրգանիզմի պահանջված ֆիզիոլոգիական նվազագույնի 77%-ը: Ո՞ւմ վրա ես ծիծաղում. Վրաստանում դա 92% է, Ադրբեջանում՝ 96: Դրանից հետո դու երեսատ ունես, դեռ Վրաստանին ծաղր ու ծանակի ես ենթարկում: Իսկ կոռուպցիայի հետ կապված, երկրի անունը չի տալիս, բայց ահա թե ինչ է ասում. կոռուպցիայի դեմ պայքարը բարձրագոչ հայտարարու-թյուններով և աղմկահարույց դատավարություններով չեն լինելու: Էդ մարդը, էդ է անում. Սահակաշվիլին գողին գող է անվանում, հանցագործին ճաղերի հետևն է նետում: Հենց այդ նույն դատավարությունների արդյունքում Վրաստանի բյուջեն 50 միլիոն դոլարից ավելի գումար է ստացել:

Դե, վոյին ես, տղամարդ ես, ողջ Հայաստանը գիտի՝ ով է մեր երկրում կաշառակերության քավորը, ով է իր շրջապատը, մեկին նմուշի համար դատի տուր: Նմուշի համար մեկից պետության բյուջեի օգտին գումար վաստակիր, գանք թասիբդ պահենք, այ էս բոլորս ասենք՝ հալալ է քեզ: Բնականաբար, չի կարող դա անել:

Հենց այդ նույն ելույթի առաջին մասում նաև ասում է, որ Հայաստանը կոռուպցիայի դեմ պայքարի միջոց է տեսնում ազատ մրցակցության զարգացումը: Այսինքն՝ մրցակցության ներմուծումը բոլոր ճյուղեր: Դարձյալ անամոթաբար ստում է: Ի՞նչ ազատ մրցակցության մասին եք խոսում, պարոն Քոչարյան, «Հայլուրով» ցույց տվեք: Ո՞ր ազատ մրցակցության մասին եք խոսում, պարոն Քոչարյան, այն, որ բենզինի, դիզելային վառելիքի, ավիակեռասինի հոր գները վրան դրել եք, շուկայականից զգալի թա՞նկ եք վաճառում: Դա՞ է ազատ մրցակցությունը: Չգիտե՞ք, որ այդ բնագավառը մենաշնորհային

է, չգիտե՞ք: Կլան, որ ասում ենք, հենց կլանի բաղկացուցիչ մասը մենաշնորհի կարգավիճակով տնօրինում է այդ ճյուղը: Հետաքրքրվեք, այդ ինչպես ստացվեց, որ, Հայաստանի եզակի փոխադրամիջոցը լինելով հանդերձ, «Հայկական ավիաուղիները» 3-4 տարում հանկարծ սնանկացան, բանկրոտ ճանաչվեցին, հետո ջրի գնով իրենք իսկ սեփականաշնորհեցին, ապա հետքերը կորցնելու համար վաճառեցին ռուսական «Սիբիրավիային»: Այդ ո՞նց եղավ: Իսկ եղավ այն պարզ պատճառով, որ շուկայական գներից 2 անգամ ավելի թանկ էին ավիակեռասին գնում: Մինչդեռ հենց այս դահլիճում է մի մարդ (անունը չեմ ուզում ասել, որովհետև կյանքին վտանգ կսպառնա), որ առաջարկում էր, ասում էր կես գնով բերեմ Երևան հասցնեմ, Այրում կայարան: Կողքից ասացին, ջահել տղա ես, ընտանիք ունես, գործ չունես, գլուխդ շառի մեջ մի գցի: Մենաշնորհի մասին եք մտածում, ասում ենք՝ որն է մենաշնորհը: Ավելին. մեղադրում եմ Ձեզ՝ ասելով, որ Եվրախորհրդում ձեր ասածը և իրականությունը ոչ մի առնչություն չունեն: Ի՞նչ մրցակցության մասին եք խոսում, չլինի՞ ցորեն ներկրողն էլ է մրցակցության բովով անցնում: Էդ ո՞նց է ստացվում, որ մի տարվա ընթացքում 200%-ով ավելացավ մի պարկ ալյուրի գինը՝ 6,5 հազարից 14,6 հազար դրամ դարձավ: Համաշխարհային շուկայում նման տատանում չի եղել, լավագույն դեպքում 10-ից 15% է թանկացել: Անամոթաբար կանգնում, ասում են, որ Ռուսաստանում 2003 թ. բերքատվությունը ցածր էր, դրա համար գները կրկնակի թանկացան: 100%-անոց սուտ: Այո, նախանցյալ տարի Ռուսաստանում 17 միլիոն տոննա ավելցուկ ցորեն կար, բայց անցյալ տարի էլ կար մոտ 5 միլիոն տոննա: Պարզապես արհեստականորեն թանկացրեցին, որովհետև նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ կլանը փող շատ էր շաղ տվել, կաշառք անասելի շատ էր տվել: Ո՞ւմից պետք է հետ վերցնեին: Բնականաբար, ժողովրդից, ինչն էլ անում են: Դա՞ է ազատ մրցակցությունը: Էդ էլ 2-րդ հասցեն եմ տալիս, պարոն Քոչարյան: (*Բուռն ծափահարություններ*):

Անամոթաբար այսօր, ուրեմն, ամեն ինչ անում են, որ անվանի ոչ մի հայ ձեռներեց ՀՀ-ում չկարողանա բիզնես ծավալի, եթե չի անցել իրենց սրի տակով: Մասնավորապես, ես հիշեցի Լևոն Մարկոսին, նշեմ նաև ուրիշ դեպքեր: Հենց վերջերս, այո, Մոսկվայում հանդիպում եմ ունեցել Արա Աբրահամյանի հետ: Եվ պարոն Սերժ Սարգսյանի մանկլավիկները, առանց անհարմար զգալու, կանգնեցին, ասացին՝ Մոսկվայում Գեղամյանը կիսակրիմինալ տարրերի հետ է հանդիպել: Հանդիպման ժամանակ, շուրջ 6,5 ժամ քննարկել ենք այն բոլոր հարցերը, որոնք հնարավոր է կյանքի կոչել Հայաստանի Հանրապետությունում, և որոնք խոստանում են բազմամիլիոն ներդրումներ: Հայերի համաշխարհային միությունում արդեն իսկ կա պատրաստի փաթեթ, թե ով ինչ ծավալի ներդրում կարող է անել Արգենտինայից, Հարավային Կորեայից, Ճապոնիայից: Նույն մեծագույն պատրաստակամությունն ունի նաև Մոսկվայի հայության կազմակերպությունը՝ հանձինս իր ղեկավար Նորայր Թևանյանի: Այդ մարդիկ պատրաստ են բերել և հազարավոր, միլիոնավոր դոլարների ներդրումներ անել այստեղ: Իսկ ինչի՞ չեն անում, որովհետև հպարտ են, որովհետև չեն հանդուրժի ոչ մի չինովնիկի կամայականություն,

որովհետև իրենց համար Հայաստանն ու պատիվը աչքի լույսի նման են, որովհետև իրենք կլանի թրի տակով չեն անցնի: Հայաստանյան իշխանությունները բացարձակապես ամեն ինչ անում են վիժեցնելու այդ բոլորը, որովհետև այդ աշխարհաճանաչ բիզնեսմեններն իրենց վայրի կապիտալիզմի օրենքներին երբեք չեն ենթարկվի:

Այ, սա է իրական պատկերը՝ Քոչարյանի ելույթի առաջին 2 հատվածով:

Այժմ անցնենք 3-րդ հատվածին, երբ խոսում է գարնանային համաժողովրդական ընդվզման մասին: Իր համար պարզել է, թե պատճառը որն էր: Բանից պարզվում է՝ պատճառն այն էր, որ հայ ժողովուրդը մոռացավ մեր իշխանությունների կամայականությունները, մոռացավ, որ 1 միլիոնից ավել իր հարազատներից, ամուսիններից, նբայրներից հարկադրված մեկնել են արտագնա աշխատանքների և գյուղերում, քաղաքներում մնացել են հիմնականում ծերերը, կանայք, երեխաները, մոռացավ, որ ապրում է կիսաքաղց կյանքով, բայց, ահա, հրապուրվեց վրաստանյան «վարդերի հևափոխությամբ»: Անամոթաբար կանգնում, ասում է՝ հանրահավաքի մասնակից մարդկանց թիվը գնալով սակավանում էր, և ընդդիմությունը փորձ արեց արհեստականորեն վիճակը սրել, հևափոխական ճանապարհ դուրս գալ՝ խնդիր ունենալով նախ գրավել Ազգային ժողովը, որից հետո նախագահական նստավայրը և պարտադրել հրաժարական տալ: Բացարձակ սուտ: Եվ առանց անհարմար զգալու ասում է. երբ մենք տեսանք, որ ճանապարհը խցանվել է, և դա մեծագույնս ազդում է ԱԺ-ի, նախագահական նստավայրի բնականոն աշխատանքների վրա, հարկադրված էինք ներքին զորքերին համապատասխան հրաման տալ: Պարոն Քոչարյան, լավ, անհարմար չեք զգում, գիշերվա 2-ին որդ է աշխատում, գիշերվա 2-ին որդ ինչ արարիչ գործով է զբաղված, եթե աշխատանք չհամարենք որոշ նախարարների կազինոներում քրտնաջան ղումար խաղալը: Ահա, տեսեք, բոլորին, իսկ առաջին հերթին ԵԽ ԽՎ պատգամավորներին դրել էր անտնյակի տև, ուզում էր ցույց տալ, թե, իբր, Բաղրամյանի պողոտան Երևանի համար նույնն է, ինչ Շանզելիզեն Փարիզի համար, որովհետև այնտեղ գիշերվա 2-ին է կյանքը նոր սկսվում: Այսինքն՝ հերթական խաբեությունը: Իսկ ամենազարհուրելին այն էր, որ կանգնեց, Վրաստանի հետ դարձյալ զուգահեռներ անցկացնելով, ասաց, որ վրացական ոստիկանությունը չուներ այն մարտունակությունը և այն կռությունը, ինչն ուներ Հայաստանը: Ես ինչու եմ այս զուգահեռները մեկիկ-մեկիկ հիշատակում, որովհետև իր այդ ելույթով Քոչարյանը թշնամացրեց մի ամբողջ նբայրական ժողովուրդ, մի ամբողջ հանրապետություն: Իսկ ինչո՞ւ է նա այդքան խանդով մոտենում վրացիներին, Սահակաշվիլուն: Որովհետև այդ մարդը կանգնեց, թվարկեց այն ճանապարհները, որով ընթանալու է իր երկիրը, որովհետև, ի տարբերություն իր նախորդի, նա բացարձակապես չի հակադրում Վրաստանը Ռուսաստանին, Ռուսաստանը՝ ԱՄՆ-ին և Եվրամիությանը: Ընդհակառակը, իրականում կոմպլեմենտար քաղաքականություն է վարում: Իսկ ինչո՞ւ է մերն այնքան խանդում, որովհետև ինքը, ինչպես ասում են, 3 սոսիների մեջ արդեն մոլորվել է, ելքը չի գտնում: Հիմա հիմնավորեմ, թե ինչու եմ սա ասում: Այսպես, տասն օր առաջ, ինչպես հիշում եք, Աստանայում տեղի ունեցավ Եվրասիական տնտեսական համագործակցության

երկրների հանդիպում, որին դիտորդի կարգավիճակով նաև հրավիրված էր Քոչարյանը: Թվում է, թե ի՞նչ վատ բան կա, գնացել ես, լավ ես արել: Ուրեմն, ստացվել էր այնպես, որ նրա ելույթն առանձին էր նշված եղել, որի շուրջ թեթև խոսակցություն է ընթացել: Խոսակցությանն երբեք կարևորություն չէինք տա, եթե այն հետագա զարգացում չունենար: Եվ որպեսզի չստացվի, թե ես ինձնից բաներ եմ ասում, ընթերցեմ "Российская газета" թերթի հունիսի 19-ի համարից մի դրվագ, իսկ "Российская газета"-ն պաշտոնաթերթ է, կառավարական, պաշտոնական ատյանների տեսակետներն են տպագրվում այնտեղ:

Ուրեմն, "Российская газета", 19 հունիսի, 2004 թվական. հոդվածի վերնագիրն է՝ "Умные, объединяйтесь!": "Предоставляя слово президенту Армении, Норсултан Назарбаев отметил, что он "хотел бы исправить ошибку, которую заметил Владимир Путин". При этом глава Казахстана заверил армянского коллегу, что не имеет никакого отношения к тому, что в программе форума выступление Кочаряна обозначено особняком. Вышедший на трибуну Роберт Кочарян, настроившись на шутливый лад, заметил, что статус наблюдателя, видимо, все-таки дает определенные преимущества. "Отдельная строка в программе форума — это немало",— со значением сказал армянский лидер, добавив, что уже задумывается над тем, "стоит ли терять это преимущество, вступая в ЕврАзЭС". В зале раздались аплодисменты, на что президент России с шутливым негодованием крикнул в зал: "Чему же вы аплодируете? Свистеть надо, а не хлопать".

Այսինքն՝ Քոչարյանի այդ երկակի ստանդարտները, այդ կեղծ քաղաքականությունը վաղուց այնտեղ կարդացված են, և որի գնահատականը տրվել է Ռուսաստանի պրեզիդենտի շուրթերով, այն է՝ սուլել է պետք Քոչարյանին:Իսկ ինչո՞ւ ես սա հիշատակեցի: Որովհետև, դրանից ուղիղ 4 օր հետո, ելույթ ունենալով արդեն Ստրասբուրգում ԵԽ ԽՎ ամբիոնից՝ պարոն Քոչարյանը լրիվ ուրիշ բաներ էր ասում: Արդեն խոսում էր Միությանն անդամակցելու, ԵԽ-ի հետ ավելի ինտեգրվելու մասին: Արդեն ասում էր, որ ԼՂ հարցում ինքը վաղուց որոշումը կայացրել է (դա հարցուպատասխանի ժամանակ), և եթե Աղրբեջանը հետևեր փարիզյան սկզբունքներին, որոնք հետո պայմանավորվածությունների վերածվեցին քիվեսթյան բանակցությունների ընթացքում, ապա ամեն ինչ այլ կերպ կլիներ և գրավյալ տարածքներից առնվազն մի քանիսի ճակատագիրը նույնպես այլ կլիներ: Այ, հիմա տրամաբանական հարց է ծագում. պարոն Քոչարյան, եթե դա ձեր դիվանագիտական հաղթանակն էր, իսկ մենք հիշում ենք, որ բանակցությունները Փարիզում 2001 թ. փետրվար-մարտին էին, Քի Վեսթում՝ ապրիլ-մայիսին, ապա ինչո՞ւ հայ ժողովրդին տեղյակ չպահեցիք ղարաբաղյան բանակցություններում ձեր «փայլուն հաղթանակի» մասին: Ինչո՞ւ մեզ էլ չասացիք, մենք էլ ուրախանայինք ձեզ հետ: Էս ի՞նչ եք ուզում ասել: Ասածն ուրիշ է: Ասես թե, գլխի էր գցում Ռուսաստանին, որ կընդունի Փարիզի և Քի Վեսթի արդյունքում պայմանավորվածությունները,

եթե իր ասածները, ինչպես Աստանայում, շարունակվեն սուլոցով ընդունվել: Հիմա էլ այնտեղ՝ Ստրասբուրգում, ասում է՝ ես ձեր առաջարկն եմ ընդունում: Եվ այսպես տարիներ շարունակ մոլորությունների մեջ է գցում մի կողմից ԱՄՆ-ին, մյուս կողմից՝ Եվրամիությանը, երրորդ կողմից՝ Ռուսաստանի Դաշնությանը: Ահա սա է, որ հանդուրժել չի կարելի, ահա սա է, որ ասում եմ՝ 3 սոսիի մեջ այս մարդը մոլորվել է, շիվարել է, իրեն դռնից դուռ է գցում: Ո՞ւմ հաշվին. մեր ապագայի հաշվին, մեր ժողովրդի զարգացման հաշվին: Ահա սա է, որ ասում ենք, հերթական անգամ ուզում եմ կրկնել, Մինսկի խմբի համանախագահ բոլոր երկրներին. հույսներդ կտրեք, որ պարոն Քոչարյանի օրոք Լեռնային Ղարաբաղի հարցը լուծում կստանա, հույսներդ կտրեք և Դուք հայ ժողովուրդ, որովհետև նա չափազանց լավ գիտակցում է, որ լուծման հաջորդ իսկ օրը նրան Հայաստանում չեն հանդուրժելու: Եվ արհեստականորեն ձգձգում է, արհեստականորեն փորձում է գոյություն չունեցող հակասություններ ստեղծել, այն էլ արդեն գերտերությունների միջև, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եվրամիության երկրների միջև: Այդ խորամանկություններն էլ չեն անցնի, պարոն Քոչարյան: Հայ ժողովուրդը չափազանց լավ գիտի, որ անցած դժվարին տարիներին նույն ԱՄՆ 2 մլդ դոլարին համարժեք հումանիտար օգնություն է տվել մեր երկրին, բա չասե՞նք շնորհակալություն: Ասեմ ավելին, որ իր օգնության ձեռքն է մեկնել Եվրամիությունը: Նույն օգնության ձեռքն է մեկնել Ռուսաստանի Դաշնությունը, որի հետևողական աշխատանքների արդյունքում 1994 թվականին կնքվեց բոլորիս համար ցանկալի ու բաղձալի զինադադարն արցախյան ճակատամարտում: Ի՞նչ ես արհեստականորեն մոլորության մեջ գցում մեր ժողովրդին, ինչո՞ւ ես կասկածներ սերմանում այդ 3 գերպետությունների՝ ԱՄՆ, ՌԴ և ԵՄ (պայմանականորեն պետություն ասենք) հանդեպ: Ի՞նչ ես ուզում մեր ժողովրդից, մեկ օր ավել քո աթոռին մնալու համար ինչո՞ւ ես ուզում, որ հայ ժողովրդի անվանն ապերախտի, անշնորհակալի դրոշմ դաջվի:

Իր ելույթում, որը, բնականաբար, մեծ ոգևորություն առաջացրեց այստև՝ կլանի շրջանակներում, Քոչարյանը հպարտությամբ գովեց ոստիկաններին, որոնք ծեծուջարդի ենթարկեցին անզեն ժողովրդին, կանանց, երիտասարդներին, որոնց ձեռքի եզակի զենքը հանքային ջրի դատարկ պլաստիկե շիշն էր: Դրանով իսկ մեր ոստիկաններին հակադրեց վրացի ոստիկաններին: Փառք ու պատիվ վրացի ոստիկաններին, փառք ու պատիվ նրանց զինվորականներին, որ երբեք ու երբեք ձեռք չբարձրացրին, մահակ չբարձրացրին սեփական ժողովրդի վրա: (*Բուռն ծափահարություններ*):

Ուրեմն, սիրելի՛ ժողովուրդ, այս հարցերն այն կնճռոտ հարցերն են, որոնց իշխանություններն ամենևին չեն փորձում անդրադառնալ: Այսօրվա իմ խոսքն էլ անպայման խնաթյուրված են ներկայացնելու: Ես այս ամենին, բնականաբար, սովոր եմ: Ելույթում, ավելի ճիշտ հարցուպատասխանի ժամանակ, առանց անհարմար զգալու խոսեց Հայաստանում գործող իբր ազատ մամուլի մասին, իբր մեր ընդդիմությունը հավասար պայմաններ ունի իշխանամետ ուժերի հետ, այն է՝ հեռուստաալիքներից օգտվելու: Պարոն Քոչարյան, լավ, անհարմար չեք զգում: Վերջին 1 տարվա ընթացքում ես ընդամենը մեկ անգամ եմ 25 րոպե ուղիղ եթեր ունեցել: Ասեմ ավելին. 85 հանդիպումներ

ենք ունեցել մեր մարզերում, քաղաքներում, գյուղերում, դրանից միայն առաջին 2 հանդիպումը թույլ տվեցին, որ ԱԼՄ-ով ցուցադրվի, որից հետո վտանգի տակ էր հենց այդ նույն հեռուստաալիքը: Մենք էլ, հո, չէինք ասում նվեր անեն մեզ: Ասում էինք, որպես քաղաքական գովազդ՝ գործող օրենքների շրջանակներում, եղած տարիֆներին համահունչ մենք վճարումները կանենք, մարդիկ իմանան, ինչ է կատարվում երկրում: Ավա՞ղ: Ուրեմն, իրենք հերյուրանքը տպում են իրենց թերթերում, որից հետո բոլոր հեռուստաալիքներին պարտադրում, ստիպում են այդ հերյուրանքն որպես ճշգրտված տվյալ և փաստարկ հաղորդեն և ասեն՝ այս թերթն այս գրեց, այն թերթը՝ այն գրեց: Իշխանական թերթերն էլ այն աստիճան են իրենց խիղճը կորցրել, որ, այսպես, իրենք իսկ հերքում են իրենց գրածները: Որ ասածներս անհիմն և մերկապարանոց չլինեն, ուզում եմ, ընդամենը մեկ օրինակ բերել: Վերջերս, չգիտեմ ինչու, մոտ 3 ամիս անց "Независимая газета"-ում տպագրված (25 մարտի 2004 թ.) իմ հոդվածից հետո, "Голос Армении" թերթը (17 հունիսի 2004 թ.) հանկարծ հրապարակում է հոդված, որտեղ ոմն Միրզոյան, ինքն էլ՝ պրոֆեսոր (նա մեղավոր չէ, իրեն պրոֆեսորի կոչում տվողն է մեղավոր), իբր, հերքում է իմ գրածները: Ընդամենը մեկ օրինակով ես ուզում եմ անպայմանորեն հիմնավորել այն, ինչ տպագրված է եղել:

Եվ, այսպես, "Голос Армении"-ից (7 մայիսի 2002 թ.) կարդում եմ փոքրիկ մեջբերում. "Как сообщает "Ноян тапан", в 1-ом квартале 2002 г. минимальная продовольственная корзина в расчете на душу населения ежемесячно составляла 8528 драм, а потребительская корзина – 13887драм. По словам С. Мнацаканяна (Ստեփան Մնացականյան՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պետ – *Ա.Գ.*), согласно результатам изучения домашних хозяйств, которое было проведено в 2001 году, доля продовольствия в денежных расходах населения составила 65%. В случае ежедневной минимальной нормы 2412 ккал на душу населения энергетическая ценность фактической пищи в 1-ом квартале 2002 г. составила 1412 ккал". Ուրեմն, նվազագույն ֆիզիոլոգիական պայմանները բավարարելու համար սննդի էներգետիկ կարողությունը պետք է կազմի 2412 կիլոկալորիա: Իսկ ինչպես գրել է Ստեփան Մնացականյանը, այն կազմել է ընդամենը 1412 կկալ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պետն է գրել, "Голос Армении"-ն էլ տպել է: Այսպես, ուրեմն, ճիշտ այդ նույն ցուցանիշն օգտագործել էի "Независимая газета"-ի իմ վերլուծության մեջ: Եվ այս պաշտոնական թվերը դառնում են Միրզոյանի հոդվածում իմ դեմ ուղղված քննադատության առանցքը: Նա գրում է. "Так, в программе "Национального Единения" мы читаем: "Когда минимальная ежедневная норма в дневном рационе пищи на душу населения должна быть 2412 ккал., в январе-марте 2002 г. фактически потребляемая энергетика пищи составила 1412 ккал". Թվեր, որոնք ես մեկին մեկ արտագրել եմ "Голос Армении" վերը հիշատակված նյութից, որովհետև պաշտոնական տվյալ է: Այսքանից հետո ասում է՝ Գեղամյանը զբաղված է խաբեությամբ: Ուրեմն, պրոֆեսոր Միրզոյանին ասում եմ՝ Դուք,

պարզապես, շառլատան եք: Եվ բոլոր այն մարդիկ, ովքեր փորձում են հերյուրանքներ տարածել, մասնավորապես իմ կողմից բերված թվերի նկատմամբ, առնվազն կարող եմ ասել կամ մոլորյալներ են, կամ կատարում են իշխանական պատվեր:

Ավելին, խոսում են մամուլի ազատության մասին, որը, ըստ էության, վերածվել է անպատիժ, սանձարձակ հայհոյախոսության: Այսպես, իշխանական մամուլում խուլիգանական հոդվածներ են տպագրվում իմ և իմ գործընկերների դեմ: Հենց երեկվա «Հայոց Աշխարհ» թերթում (հիշեցնեմ, որ թերթի փաստացի տերը, ինչպես բոլորին հայտնի է մամուլից, Սերժ Սարգսյանն է) գլխավոր խմբագիրը գրում է, որ Գեղամյանն ու Շավարշ Քոչարյանը Ստրասբուրգում ձեռնպահ մնացին հարցեր տալուց, ելույթ ունենալուց, ասելով, թե իսկ ի՞նչ էին կարող անել այնտեղ: Այնքան են խառնվել իրար, որ իրենց հոգևոր հոր, այն է՝ Ռ. Քոչարյանի Ստրասբուրգում կարդացած տեքստից էլ են անտեսյակ: Նա ուղղակիորեն ԵԽ ԽՎ-ին ափսոսանք հայտնեց, որ առանձին պատգամավորներ կարողացան Եվրախորհրդին ներքաշել հայաստանյան իրավիճակի մեջ, և ընդունվեց 1374 բանաձևը: Դրանից հետո, կանգնում ամենալկտի արտահայտություններն են թույլ տալիս իմ հասցեին: Հավանաբար, գիտեին, որ երեկվա օրն ինձ համար չափազանց նշանակալի օր էր: Հավանաբար, «Հայոց Աշխարհի» այդ ստորները գիտեին, որ երեկվա օրով իմ տղան բանակից զորացրվել էր, հետև էլ ծննդյան օրն էր: (*Բոլոր ծափահարությունները*): Ինչպե՞ս կարող էին լուտանքներ և հերյուրանքներ չտպագրել իմ հասցեին հենց այդ օրով: Բնականաբար, ես նրանց նման ապերախտ չեմ, շնորհակալություն ասել գիտեմ, ես ուզում եմ հերթական անգամ փրկել պարոն Սերժ Սարգսյանի պատիվը: Ես ուզում եմ ասել՝ պարոն Սերժ Սարգսյան, վերջապես, երբ եք դատի տալու այն լրատվամիջոցին, որն անցյալ տարի ձեզ ղումարբազ անվանեց: Ես ուզում եմ, որ փրկենք ձեր պատիվը: Ես ուզում եմ, որ ղումարբազի դրոշմը, որ դաջված է ձեր ճակատին՝ հանենք: Երբ եք դուք դատի տալու ՀՅԴ-ին, որն իր համաժողովում «Հայ աշխատավորի» հետ ձեզ համարեց կաշառակերության կնքահայր: Մենք ուզում ենք գոնե ձեր թերթի՝ «Հայոց Աշխարհի» միջոցով գեթ մեկ անգամ զբաղվեք շնորհակալ աշխատանքով՝ Ձեր անվան վրայից հանելով հիշատակված խարանները: Եվ, վերջապես, պարոն Սերժ Սարգսյան, միթե ձեզ չեն ասում, թե ի՞նչ են գրում մոսկովյան լրատվամիջոցները: Եթե չեն ասում, իմ սրբազան պարտքն եմ համարում անպայման մի քանի տող ընթերցել նաև արդեն Ռուսաստանում տպված նյութերից: Ապրիլի 29, 2004 թվական, "Советская Россия" թերթ: Հոդվածի հեղինակը Լեոնիդ Իվաշովն է՝ "вице-президент Академии геополитических проблем, он же генерал-полковник". Ի՞նչ է գրում պարոն Իվաշովը. հոկտեմբերի 27-ի դեպքերից հետո, "Армия вышла из подчинения президента РА и была готова расправиться с убийцами народных лидеров. В Министерстве обороны республики постоянно заседали лидеры политических партий и общественных организаций. Общими требованиями были отставка президента Кочаряна и арест министра Национальной безопасности Сержа Саркисяна. Его подозревали, и не без основания, в органи-

зации покушения". Գեներալ-գնդապետն է գրում, դե, թասիբդ պահի, Գեղամյանից ո՞ւր ես կախվել: Ուրեմն, էս բոլորից հետո, բառիս իսկական առումով, շողուլից էնքան են ընկել, որ խոսում են ընդդիմության մահվան մասին: Կամա թե ակամա հիշում եմ հայտնի պատմությունը. աղվեսին բռնում են, կացինը կախում են գլխավերևից, ասում են՝ հիմա, աղվես ախպեր, ի՞նչ կասես, ո՞նց ես: Աղվեսն էլ կանգնում, ասում է՝ տնփեսուց հո լավ եմ: Հիմա մերն ա, տնփեսու կարգավիճակով Հայաստանում հայտնված իշխանավորներից հո լավ ենք, մենք մեր հող ու ջրի վրա ենք: (*Բուռն ծափահարություններ*):

Ժողովուրդ ջան, էնքան ջերմ եք ընդունում, որ երեք ժամ կխոսեմ. . .

Ապրիլի 12-ի լույս 13-ի ոճրագործությունից հետո իրենք, այո, երազում էին, որ ժողովուրդը շագրենյան կաշվի նման կուչ գար, որ ժողովուրդը վախենար, բայց լավ չգիտեն հայ մարդուն, հայ մարդու հոգեբանության հետ ընդհանրապես ծանոթ չեն: 5 հազար տարվա պատմություն ունեցող ազգը մահակից չի վախենում, մահակի հարվածից, ընդհակառակը, մեջքն ավելի է շտկում: Եվ թող իմանան, եթե ընդդիմությանը փորձում են պախարակել, ապա դա հիշեցնում է ևս մի հետաքրքիր պատմություն: Մոմավաճառները Եվրախորհուրդ բողոք են գրում, ասում են՝ կան մարդիկ, ովքեր մեր գործին խփում են: Էնտեղից հարցնում են՝ ձեր գործը ո՞րն է: Ասում են՝ մեր ծախած մոմերով ժողովրդին ջերմացնում և լույս ենք տալիս: Հետաքրքրվում են՝ ովքե՞ր են էդ հանդուգները: Է, այդ հանդուգներն արևի նման պայծառ հայ ժողովուրդն է: Եվ ինչպես մոմավաճառի մոմն իր լույսով չի կարող ստվեր գցել արևի վրա, այնպես էլ դուք, պարոն Քոչարյան, Ստրասբուրգի ձեր ելույթով, չկարծեք, որ ստվեր գցեցիք Հայաստանի ընդդիմության և ժողովրդի վրա: Ընդդիմությունը և ժողովուրդը միասնական են և, անտարակույս, հաղթանակը մերն է լինելու:

Սիրելի՛ ժողովուրդ, Ռոբերտ Քոչարյանի ելույթում կար մի նրբին հարց ևս, որը բացարձակապես իրավունք չունենք անտեսելու: Հարցուպատասխանի ժամանակ (իսկ հարցը, ասեմ, չափազանց լուրջ ծուղակ էր իրենից ներկայացնում) հարց տվողն աղրբեջանցի էր. ասաց, իսկ դուք կարո՞ղ եք հաղթահարել ձեր մեջ ատելությունը դեպի աղրբեջանցին և թուրքը: Պարոն Քոչարյանն արեց իր պատմությունը, այն է, որ 1991-93 պատերազմական տարիներին, այո, իր ընտանիքը և ինքը նկուղներում են եղել (ինչ խոսք, ընդունում եմ, շատ ծանր օրեր են ապրել): Բայց ինչպե՞ս կարելի է դարձյալ դաշտային հրամանատարի կատեգորիաներով մտածել, ինչպե՞ս կարելի է համահայկական ազատագրական պայքարը ցույց տալ մեկ ընտանիքի, այն էլ՝ սեփական ընտանիքի օրինակով: Իսկ ի՞նչ ասեր Սամվել Բաբայանի՝ մեր Արցախի հերոսի հայրը, որը հիվանդանոցում՝ մահամերձ վիճակում, այդպես էլ չկարողացավ տղային ցտեսություն ասել, հրաժեշտ տալ: Իսկ ի՞նչ ասի Վազգեն Սարգսյանի մայրը, որին ընդունելության չես արժանացնում: Իսկ ի՞նչ ասեն հարյուրհազարավոր հայաստանցիները, երևանցիները, որոնք հենց այդ նույն տարիներին ցուրտ ու մութ գիշերներ են անցկացրել, գիշերային թաղումներ են կատարել: Ինչպե՞ս կարելի է սեփականաշնորհել մի ողջ ժողովրդի տառապանքը՝ սեփական անձն ի ցույց դնելու համար: Ամոթ է: (*Բուռն ծափահարություններ*):

Հեռանկարային զարգացումների մասին: Պատահական չէր, որ ես խոսեցի Քոչարյանի քաղաքական վերջին, ցավոք սրտի, արկածախնդրությունների մասին: Այսինքն, երբ նևում էին Եվրասիայում, վազում է Եվրոպա, Եվրոպայում նևում են՝ վազում է հետ՝ Ռուսաստան: Հետն էլ Ամերիկային է ուզում փաղաքշել: Ուրեմն, մենք պետք է մեկ բան իմանանք. հայ ժողովուրդը պետք է գիտակցի, որ այսօր, այո, աշխարհում հաստատվել է նոր աշխարհակարգ: Այդ աշխարհակարգի առաջնորդներն են ԱՄՆ, Եվրամիության երկրները և Ռուսաստանը: Եվ առնվազն քաղաքականապես անհաշվենկատ և անհեռատես պետք է լինել, որ փոխանակ աշխատեն այդ ամենից օգտվել ի շահս երկրի զարգացման, փորձում են սեպ խրել ոչ միայն մեր ժողովրդի և այդ երկրների միջև, այլ նաև այդ երկրների շահերն են տարածաշրջանում փորձում արհեստականորեն իրար հակադրել: Սինևույն է, այդ ճամարտակությունները չեն անցնելու, միևնույն է վաղ, թե ուշ ամեն ինչ գալու, իր տեղն է կանգնելու: Եվ, այստեղ, ես ուզում եմ հստակ մեր ձևակերպումը տալ: Այո, հայ ժողովուրդը ստեղծված իրավիճակում դատապարտված է, կրկնում եմ, դատապարտված է խաղաղ գոյակցել իր բոլոր հարևանների հետ, նույն Վրաստանի, նույն Ադրբեջանի, նույն Թուրքիայի, նույն Պարսկաստանի, բնականաբար, նաև Ռուսաստանի: Սա է մեր ճակատագիրը և երբեք պետք չէ հոխորտալ, այն էլ դրսի ամբիոններից, այն էլ սնապարծությամբ զբաղվել: Մեծ-մեծ խոսում է Թուրքիայի մասին. ես Թուրքիայի գովքն անողը չեմ, բայց ուզում եմ թվերի լեզվով խոսել: Ու՞մ ես վատություն անում, պարոն Քոչարյան, ասելով, որ մենք պատրաստ ենք, էս ենք, էն ենք... Թուրքիան, իր շահերի առումով, արդեն իսկ շատ ավելի դրական է Հայաստանի հետ համագործակցում, քան Հայաստանը՝ Թուրքիայի: Պարզեցնեմ միտքս: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ Քոչարյանի իշխանավարության տարիներին, այսինքն՝ 1998-2003 թթ., Թուրքիայից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել 246 միլիոն 844 հազար դոլարի ապրանք: Հայաստանից Թուրքիա է արտահանվել 9 միլիոնի: Այսինքն՝ 246 միլիոն դոլարի թուրքական ապրանք ենք գնել և, փաստորեն, այդ ապրանքն արտադրողների համար աշխատատեղեր ենք ստեղծել: Դե թող այս թվերի մասին մտածի, հայրենասիրությունը, հո, հակաթուրքական տրամադրություններ սերմանելով չէ՞: Հայրենասիրությունն այն է, որ խելք ունենաս, քո հակառակորդին էլ օգտագործես երկրիդ շահերի համար: Ահա սա է հայրենասիրությունը: Առանց ամպագոռգոռ խոսելու մարդիկ 246 միլիոն դոլարի թուրքական ապրանքի համար շուկա են դարձրել Հայաստանի Հանրապետությունը: Մինչդեռ մեր նույն ձեռնարկությունները, որոնք նմանատիպ ապրանք էին արտադրում, հիմնովին սնանկացան, իսկ աշխատողները համալրեցին գործազուրկների շարքերը: Ավելին, հարկադրված եղան արտագնա աշխատանքների գնալու, որը Ռուսաստան, որը ԱՄՆ, որը Եվրոպայի տարբեր երկրներ:

Եվ ողբերգությունն այն է, որ իշխանություններն այդպես էլ չհասկացան՝ ինչ է նշանակում 21-րդ դարում երկիր ղեկավարել: Այդպես էլ չդրեցին այն չափանիշները, որոնց Հայաստանի Հանրապետությունը պետք է ձգտի, այդպես էլ չասացին, թե որոնք են մեր տնտեսության այն լոկոմոտիվները, որոնք աշխատացնելով կկարողանանք

ընդհանուր առմամբ տնտեսությունն ոտքի կանգնեցնել: Այդպես էլ չասացին, թե համաշխարհային աշխատանքի բաժանման ոլորտում ո՞րն է լինելու Հայաստանի Հանրապետության դերն ու դերակատարությունը, ի՞նչ խնդիրներ են մեզ համար այսօր առավել արդիական, ո՞ր ճյուղերն են Հայաստանի Հանրապետությունում զարգանալու, երկրի սակավահող պայմաններում ի՞նչ պետք է անենք, որ մեր շուրջ 350 հազար հեկտար վարելահողի կեսը չի օգտագործվում, որ այն օգտագործվի, որ փրկենք այս հողերն անապատացումից: Ի՞նչ անենք, որ լեռնային ու նախալեռնային գյուղերը, որոնք դատարկվում են, վերաբնակեցվեն: Ի՞նչ անենք, որ ի դեմս Հայաստանի ունենանք զարգացող պետություն, որը դրախտային պայմաններ կստեղծի ցանկացած ձեռներեցի համար: Այս հարցերն էր պետք Եվրախորհրդում բարձրացնել և ոչ թե դաշտային հրամանատարի թիկնոց հագած մատ թափ տալ, այն էլ այն երկրների վրա, որոնք, ավա՜ղ, այսօր շատ ավելի լավ ապագա ունեն, քան Հայաստանի Հանրապետությունը:

Այսքանը: Ժողովուրդ ջան, սիրով կպատասխանեմ Ձեր հարցերին: (*Բուռն ծափահարություններ*):

– *Պարոն Գեղամյան, ինչով բացատրել, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական քարտուղարությունը թե՛ նախագահական, թե՛ խորհրդարանական ընտրություններին և թե՛ գարնանային համաժողովրդական այս ընդվզումները ճնշելու իշխանությունների փորձերին տվեցին սկզբունքային, արդար գնահատականներ, իսկ Ռուսաստանը՝ ճիշտ հակառակը:*

– Ինչո՞վ դա բացատրեմ, բացատրեմ նրանով, որ ոչ միայն հայտարարված է, այլ իրականում Ամերիկայի Միացյալ Նահանգներն եղել է, կա և, հուսով եմ, կշարունակի լինել ժողովրդավարությունն ամրապնդող այն եզակի շտեմարանը, ում մենք պետք է հետևենք և որի օգնությունն ակնկալում ենք: Դրա հետ մեկտեղ, անպայմանորեն ուզում եմ առանձնակի նշել և իմ շնորհակալությունը հայտնել ԱՄՆ-ի դեսպան Ջոն Օրդվեյին և, այստեղ, չեմ ուզում անձնավորել, քանի որ հարցը, ինչպես շարադրանքից կհասկանաք, ինձ է վերաբերում: Ապրիլի 13-ի ողբերգական դեպքերից հետո, ժամը 12^{00} սահմաններում հնչեց հեռախոսազանգ: Բնականաբար, տանն էի, որովհետև այդ օրը տանս խուզարկություն էին կատարում, իսկ իշխանական լրատվամիջոցները տարածեցին, թե Գեղամյանը չկա, փախել է: Ուրեմն, զանգողը պարոն Ջոն Օրդվեյն էր: Նախ հետաքրքրվեց՝ զոհեր կան, թե ոչ, ով ինչ բժշկական օգնության կարիք է զգում: Հետաքրքրվեց, արդյոք վտանգ սպառնում է, մասնավորապես ինձ՝ Արտաշես Գեղամյանիս: Ավելին, ասաց, եթե այդպիսի վտանգ կա, մտավախություն կա, պատրաստ է աջակցություն ցույց տալ: Այ, սա է եղել մոտեցումը: Իմ տեսակետով, միևնույն վերաբերմունքն եղել է ընդդիմադիր մյուս գործիչների նկատմամբ ևս: Ասեմ ավելին. օրեր անց «Ազգային Միաբանություն կուսակցության» գրասենյակ եկավ ԱՄՆ-ի դեսպանը: Բարեկամաբար ասաց նաև ընդդիմության կողմից թույլ տրված սխալների մասին, ինչի համար խորին շնորհակալությունս եմ հայտնում: Խորհուրդներ տվեց: Եվ, բնականաբար, օբյեկտիվորեն, անաչառորեն ապրիլի 12-13-ի գիշերը ՀՀ մայրաքաղաքում տեղի ունեցած բարբարոսու-

թյունների մասին, կարծում եմ, ամենաստույգ տեսակությունները հաղորդվեցին ԱՄՆ պետական քարտուղարություն, որն էլ անհապաղ արձագանքեց իր խիստ, հավասարակշռված ու սկզբունքային գնահատականով:

Ես համոզված եմ, որ ճիշտ նույն գնահատականը կտային Ռուսաստանի Դաշնության պատկան մարմինները, եթե նրանք նույնպես լիարժեքորեն և օբյեկտիվորեն տիրապետեին այն տեսեկատվությանը, որն իրականում կար: Ավա՜ղ, հավանաբար, այստեղից շահագրգռված չեն եղել ասելու իրական պատկերի մասին, մոլորության մեջ են գցել հարևան բարեկամ երկրի ղեկավարությանը: Եվ ես, ցավոք սրտի, կասկածելու իրավունք ունեմ, որովհետև այդպես էլ անպատասխան մնաց «Չորրորդ իշխանություն» թերթում տպագրված այն հոդվածը, որի համաձայն Ռուսաստանի դեսպանն աշխատավարձ է ստանում Սերժ Սարգսյանից: Ահա սա է վիճակը: Բնականաբար, առանձին անբարեխիղճ դիվանագետների աշխատանքով երբեք ու երբեք և ոչ մեկին չի հաջողվի խարխլել հայ-ռուսական բարեկամությունը: Սա է պատասխանը: (*Բուռն ծափահարություններ*):

– Բանակից արդեն մեկ ամիս է զորացրվել եմ, ի՞նչ անեմ, աշխատանք չկա, ծնողներս էլ չեն աշխատում, ապրուստի միջոց բոլորովին չունեմ: Ի՞նչ է, գնամ գողություն անեմ . . .

– Ժողովուրդ ջան, ցավով եմ ասում. ելույթներիցս մեկում հարկադրված էի մեր այսօրվա երիտասարդությանը համեմատել դեռ անցած դարասկզբին գրված Ռեմարկի հայտնի գրքի հերոսների հետ: Խոսքս 3 ընկերների մասին է, որոնց մեկ նախադասությամբ Ռեմարկը բնութագրեց որպես կորսված սերունդ: Մեր պայքարն էլ հենց նրա համար է, որ դպրոցական աթոռից երեխան իմանա՝ սոցիալական ինչպիսի՞ սպասումներ ունի, որ իմանա՝ ի՞նչ խնդիրներ են պահանջվում, որ ինքը լուծի ուսման առումով, գիտելիքների ձեռքբերման առումով, ի՞նչ պարտավորություններ է վերցնում իր վրա պետությունը: Ահա սա է, որ այս անորոշությունը հանգեցնում է զանգվածային արտահոսքի: Հայ մարդու հոգեբանությունն այնպիսին է, որ նա ցրտին, մթին, սովին կդիմանա, բայց անորոշությանը, այն էլ սեփական զավակների ապագայի, չի դիմանա: Եվ գնացողների մեծամասնությունը, ցավով եմ ասում, երեխաների ապագան արարելու համար են լքում հայրենյաց ոստանը և դրսում, անգամ իսկ հաջողությունների հասնելու պայմաններում, մղկտում են, ասում են, որ Հայաստանում անտեր են թողել հարազատների շիրիմները, ասում են Համո Սահյան են գիշերները կարդում: Իսկ ի՞նչն են կարդում՝

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
Ախր ուրիշ տեղ հայրենիներ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
Սեփական հոգին խորովել չկա,
Ախր ուրիշ տեղ

Սեփական բախտից խռովել չկա:
Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Եվ մենք մեր երեխաների համար ենք պայքարում: Եվ երեխաների ապագան, այո, հենց նույն երեխաների հետ ենք արարելու, և հաղթանակը, միևնույն է, մերն է լինելու: (*Բուռն ծափահարություններ*):

– *«Գոլոս Արմենիի» թերթի հունիսի 17-ի համարում տպագրված էր, որ Գլխավոր դատախազությունը քրեական գործ է հարուցել, այսպես կոչված, «մոսկովյան քիլլերների» Գևորգ Մեսրոպյանի և Արթուր Մանգասարովի անկատմամբ, որոնք, Գլխավոր դատախազության քննչական վարչության պետ Անդրանիկ Միրզոյանի հաղորդմամբ, պետք է կրակեին Արտաշես Գեղամյանի վրա՝ ԱԺ պատգամավոր Սմբատ Այվազյանի ցուցում-պատվերով: Պարոն Գեղամյան, ինչո՞ւ որևէ մեկնաբանություն այս առիթով մինչև հիմա չեք արել:*

– Լավ, հիմա որ ինձ անտեյակի տեղ դնեմ, բնականաբար, առաջին հերթին, ինքս ինձ չեմ հարցի: Այո, մի քանի օր առաջ ինձ հրավիրեցին Գլխավոր դատախազություն: Թվում էր, թե կուսակցության առգրավված իրերը պետք է հետ տային: Ասացին՝ գլխավոր դատախազ պարոն Աղվան Հովսեփյանն ուզում է զրուցել Ձեզ հետ: Պատասխանեցի՝ խնդիր չեմ տեսնում: Գնացի, հանդիպեցինք: Ի դեպ, հայտնություն էր ինձ համար, գրականությունից խոսեցինք, ոտանավորներ է գրում, դա ինձ ոգևորում է, գևանկարչությամբ է զբաղվում, դա էլ է ինձ ոգևորում. կնշանակի՝ ամեն ինչ դեռևս կորած չէ: Այնուհետև գլխավոր դատախազն ինձ ցույց տվեց ցուցմունքը: Այն կարդացի ամենայն ուշադրությամբ: Ոմն երիտասարդ (Գևորգ Մեսրոպյանը) գրում է, որ, իբր, շեշտում եմ, իբր, իրեն վարձել էին, որ ապրիլյան միտինգից հետո հարցերս լուծի: Բնականաբար, ցանկություն հայտնեցի հանդիպել այդ երիտասարդի հետ: Նրա հետ հանդիպեցի Ազգային անվտանգության մեկուսարանում: Ինչ ցուցմունքում գրել էր՝ մեկին-մեկ նա կրկնեց: Անկնդությամբ ասեմ Ձեզ, ես նրան ընդամենն ասել եմ հետևյալը, հետո վերլուծել եմ՝ արդյոք ճի՞շտ եմ եղել, թե ոչ: Գտնում եմ, որ ճիշտ եմ եղել: Դատեք ինքներդ: Հետաքրքրվեցի՝ հարազատներ ունի, թե ոչ: Ասաց, այո, մայր ունի և քույր: Դատապաշտպանը հայտնեց, որ երիտասարդի մայրը 2 անգամ ինֆարկտ է տարել և շնչակտուր հազիվ գալիս է տղային տեսակցության ու ամեն անգամ հոնգուր-հոնգուր լալիս է: Ես ասացի՝ սիրում ես մորդ, քրոջդ (այսօր կարող է ասածս շատ առօրեական հնչի): Բայց, պատկերացրեք մարդու, որին ասում են՝ դիմացինդ քեզ ուզում է խփի, ի՞նչ պետք է անի, մի բան պե՞տք է ասի: Ասաց՝ այո: Հարցրեցի՝ դուք գիտեք, որ Սմբատ Այվազյանը մայր էլ ունի, նաբայր էլ ունի, կին էլ ունի, երեխաներ էլ ունի, այդքան մարդու մնքի տակ չե՞ս վախենում ընկնել: Պատասխան չստացա... Գրպանումս ես պահում եմ սուրբ մասունքներ: Այսօր էլ, այստեղ և միշտ հետս է, որ հենց սխալ բան անեմ, պատժվեմ տիրոջ կողմից: Ուստի, ուրիշներին դատել, ես՝ ինքս, բնականաբար, չեմ կարող: Երիտասարդին տվեցի

աղոթագիրք՝ խնդրելով, որ հանկարծ մեղք չվերցնի իր վրա: Հարցը տվեցիք՝ պատասխանեցի, չպատասխանեի՝ ամենատարբեր ստոր մեկնաբանությունները կլինեին: Բավարարվա՞ծ եք: (*Բուռն ծափահարություններ*):

– Քոչարյանը Ստրասբուրգում թոզ էր փչում Եվրախորհրդի պատգամավորների աչքերին, հպարտությամբ խոսում էր տնտեսական աճի մասին: Այո, եթե աճել է, ապա հացի գինն է 2 անգամ աճել, մրգի գինն է 10-15 անգամ աճել, բենզինի գինն է անընդհատ աճում, դրսում չեն հասկանո՞ւմ, որ աճի վերաբերյալ Քոչարյանի թվերն իր նման կեղծ են:

– Էդ ելույթ էր, ոչ թե հարց: Ժողովուրդ ջան, ամենայն հավանականությամբ, այո, դրսում հասկանում են, որ Հայաստանում վիճակն ամենևին այնպիսին չէ, ինչպես վարդագույն բնութագրեց Քոչարյանը: Եվ պարոն Քոչարյանը ԵԽ ԽՎ-ի իր ելույթում ևս մեկ վիրավորանք հասցրեց, մասնավորապես, ասելով, որ 2 պատգամավոր կարողացան ներքաշել ԵԽ ԽՎ-ին բանավեճի մեջ՝ կապված Հայաստանի ներքաղաքական իրավիճակի հետ, որի արդյունքում էլ ընդունվեց 1374 բանաձևը: Պարոն Քոչարյան, Դուք ինչո՞ւ եք վիրավորում ԵԽ ԽՎ-ին, ինչո՞ւ է ձեզ թվում, որ ձեզ նման բոլորը ջայլամային քաղաքականություն են վարում, գլուխներն ավազի մեջ է, քամակը՝ դուրս ցցած: Ամեն ինչ էլ գիտեն, տեղյակ են, թե ինչ է կատարվում Հայաստանում: (*Բուռն ծափահարություններ*):

– Պարոն Գեղամյան, ինչո՞վ եք բացատրում պարոն Քոչարյանի ծայրաստիճան դյուրագրգիռ գնահատականները՝ պայմանավորված Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի Հայաստանին վերաբերող ապրիլի 28-ի բանաձևի հետ:

– Ժողովուրդ ջան, վերջին հանրահավաքի ժամանակ ես մի մեջբերում արեցի. հիմա ոչ թե ուրիշը չեմ կարող անել, այլ այն ուղղակի դիպուկ էր: Հիշեցնեմ. դա Անդերսենի հագուստ սիրող հայտնի թագավորի մասին էր, որը, բանից պարզվում է, մերկ էր: Հիմա, այս վարչակազմի մերկությունն ի հայտ բերվեց, այն էլ՝ ԵԽ ԽՎ բարձր ամբիոնից: Եվ, բնականաբար, երբ վարչախմբի իրական պատկերը տեսան՝ սարսափեցին, թե ինչ հրեշ են ծնել, որովհետև պարոն Քոչարյանի ստեղծած վարչակազմը ոչ այլ ինչ է, քան Մերի Շելլիի «Դոկտոր Ֆրանկենշտեյնի» հերոսը: Այսինքն՝ պրոֆեսոր Վիկտոր Ֆրանկենշտեյնը ստեղծում է մի հրեշ, որը վերջում հոշոտում է ստեղծողին՝ հենց պրոֆեսորին: Այդպես էլ հիմա՝ քոչարյանական կոռումպացված համակարգը խժռելու է պարոն Քոչարյանին: Եվ այս սարսափից է, որ նա դյուրագրգիռ է ընդունում մեր բոլոր ելույթները:

Մուրադխանյան (հանդիպումը վարողը) – Ինչքան ուզում եմ առանց Քոչարյանի հարց գտնել, չի ստացվում:

– Էդ որ ասում է, մի բան հիշեցի. զուռնաչու կնկան հարցնում են՝ պար գալ գիտե՞ս: «Բա,- ասում է,- գործիս անունն ի՞նչ է»: Հիմա մեր ժողովուրդն էլ երկրի բացասական բոլոր կողմերը կապում է Քոչարյանի հետ: Եվ կապում է, ցավով եմ դա արձանագրում, ոչ թե անիիմն, այլ դրա պատճառները կան: Մասնավորապես, ո՞վ խանգարեց դաշնակներին, Վահան Հովհաննիսյանին, որը ԱԺ ամբիոնից հայտարարեց, որ Համաշխարհային բանկից ստացված 30 միլիոն դոլարի վարկերը մսխվել են: Ինչո՞ւ այդ մսխողներին

չպատժեցին, պատասխանատվության չենթարկեցին: Ընդդիմությո՞ւնը խանգարեց: Ո՞վ է խանգարում Արթուր Բաղդասարյանին, որը ԱԺ ամբիոնից ասաց, որ դատահիրավական համակարգի բարեփոխումների համար տրամադրված 4,5 միլիոն դոլարն իր նպատակին չի ծառայել: Ո՞վ է խանգարում Հայաստանի Սահմանադրությամբ ի պաշտոնե երկրի 2-րդ դեմքին՝ պատասխանատվության ենթարկել օրինազանցներին: Կանգնեց՝ ասաց. պարզեք՝ օպերայի հրապարակամերձ տարածքները, որ ջրի գնով տվել եմ, էդ ո՞ւմ եմ տվել: Ինքը ձեռները լվաց: Այսինքն՝ իրեն և յուրայիններին չեմ տվել: Ո՞ւմ եմ տվել, ընդդիմությա՞նն եմ տվել: Ահա դրա համար է, որ ասում ենք՝ ձուկը գլխից է փտել, գլխից է նեխել և, ցավով եմ ասում, այդ բոլորը գալիս է իշխանական կլանից, գալիս, մտնում է Քոչարյանի տակ: Սա է: Դրա համար կռվել է պետք, այո՛: Համեցեք: (*Բուռն ծափահարություններ*):

– *Լսել էի, որ Գեղամյանը խոսելու է. Լոռվա մարզի Ստեփանավանի շրջանից եմ եկել: Գյուղի մասին և՛ Քոչարյանը և՛ ոչ մեկը չեն մտածում: Աստվածն էլ է գյուղից երես թեքել, կարկտահարությունը մի կողմից, ցրտահարությունը մյուս կողմից, համատարած աղքատությունը մյուս կողմից...*

– Աստծուն մի խառնեք: Աստված միայն Քոչարյանից է երես թեքել, ցավոք սրտի, մեզ է պատժում:

. . . Մի անգամ չէ, որ մեր գյուղերը դատարկում են, դատարկողը՝ լինի թուրք, թե ով, ոչ մի նշանակություն չունի: Գյուղի մասին մտածող լինելո՞ւ է, թե ոչ, թե մենք մեր գլխի ճարը տեսնենք՝ շատերի պես լքելով գյուղը:

– Ցավոք սրտի, այս հարցը կարող էր լիներ ոչ միայն Ստեփանավանից, այլև Հայաստանի ցանկացած մարզից: Պատահական չէ, որ հիշատակեցի՝ եղել ենք հանրապետության 85 բնակավայրերում և բոլոր տեղերում գրեթե նույն վիճակն է: Պատահական չէր, որ ես թռուցիկ նշեցի, որ վարելահողերի միայն կեսն է օգտագործվում: Պատահական չէ, որ իմ ելույթներում հարկադրված եմ լինում թվերի լեզվով խոսել, որ այս իշխանությունները գիտակցեն, թե ինչ կործանարար քաղաքականություն են վարում: Ես ինքս ծնվել, մեծացել եմ Երևանում: Երևանցի լինելով հանդերձ՝ եկել եմ մի պարզ ճշմարտության. կլինի հայկական գյուղը, կլինի՝ Հայաստանը: Երևանի փողոցներով մենք երկիր չենք կարող պահել: Եվ, բնականաբար, իշխանությունները դեմքով պետք է շրջվեն դեպի գյուղը: Բնականաբար, մի բուռ Հայաստանի պայմաններում՝ ամեն մի մարզի կտրվածքով, ամեն գյուղի կտրվածքով հնարավոր է կազմել իրատեսական, համապարփակ զարգացման ծրագրեր, առավել ևս, որ այսօր շուրջ 400 միլիոն դոլարի սննդամթերք է ներմուծվում հանրապետություն: Այդ թվում այն տեսականին, որի արտադրությունը հնարավոր է հիմնել Հայաստանում: Միայն անցյալ տարի ներմուծվել է 304 հազար տոննա հացահատիկ, 86 հազար տոննա շաքարավազ: Եվ դա այն դեպքում, երբ, կրկնում եմ, վարելահողերի կեսից ավելին չեն մշակվում: Միլիոնները գնում են դուրս, գյուղացին այստեղ հարկադրված է ծնկի գալ: 98 միլիոն տուփ ծխախոտ է ներմուծվել: Մինչդեռ մենք գիտենք՝ նույն Նոյեմբերյանի, Շամշադինի, Մարտունու, Վարդենիսի տարածա-

շրջաններում բոլորը ժամանակին ծխախոտ էին աճեցնում: Եվ, այսպես, բնագավառ առ բնագավառ, որ վեր ես լուծում, հետո տեսնում ես, թե ինչ են անում, մտածում ես՝ լավ, էս մարդիկ ինչո՞ւ են թշնամաբար տրամադրված մեր ազգի հանդեպ, մեր ժողովրդի հանդեպ, ո՞ր մնքի համար, ո՞ր սխալի համար: Ախր ո՞ւմից են հանում, էն մարդկանցից, որոնք ցուրտ ու մութ գիշերները սառեցին, մեր ազգի՞ց, որը 7 հազար մարդ զոհ տվեց . . . Դրա համա՞ր են ոխ հանում:

Եվ, բնականաբար, այս ահազանգը Ստեփանավանից էր, կարծում եմ, չափազանց տեղին էր: «Ազգային Միաբանություն կուսակցությունն» ունի համապարփակ ծրագիր, որտեղ մշակված են ամենակարևորը՝ հայեցակարգային մոտեցումները, դրանց հետևելով մենք կկարողանանք երկիրը դուրս բերել օրհասական այս ծանր վիճակից: Այս ծրագրերից վարչակարգը սարսափում է: Սարսափում են ուղիղ եթերում բանավիճել: Ամենածանր հերյուրանքներն են տարածում իմ հասցեին, նախօրոք իմանալով, որ ես պատասխան տալու հնարավորությունից զրկված եմ նույն այդ հեռուստաեթերով: Այսպես, մազերը պոչ կապած, հյուս պահող մեկը դատարանի վճռով զրպարտություն ճանաչված, կնոջս վերաբերող՝ ադամանդի մոգոնված պատմությունն է շարադրում, հերյուրանք տարածելով: Երևանյան բարբառով ասած՝ ստի՞ ... Հիմա որ շարունակեմ, կասեն հայհոյում է: Հաշվարկը պարզ է. վերստին վարկաբեկել Գեղամյանին, քաջ գիտակցելով, որ նրա առջև իշխանությունները փակել են ուղիղ հեռուստաեթերը: Կամ էլ, թե չէ, անամոթաբար տարածում են՝ Սերժ Սարգսյանն ասաց, որ Գեղամյանը 3 միլիոն չարժի, 300 հազար արժի: Պարոն Սերժ Սարգսյան, եթե բան գիտես, ասա, դատի տուր: Փարաքարի համար են դատի տալիս, հերի՛ք է զրպարտությամբ զբաղվես: Ցանկացած լուտանք ու հերյուրանք տարածում են, որ կասկածանք սերմանեն Գեղամյանի հանդեպ, որովհետև չկարողացան ո՛չ «Ազգային Միաբանությանը», ոչ էլ, բնականաբար, ինձ՝ ոչ կաշառել, ո՛չ ծնկի բերել, ո՛չ էլ բերաններս փակել: Սա է հարցը:

Հիմա իշխանամետ լրատվամիջոցները կասեն՝ Գեղամյանին այնպիսի հարցեր տվեցին, որ չկարողացավ պատասխաններ գտնել, քրտնել, ջուր էր դառել: Էլ չեն ասի, որ հունիսի 30-ին էր միջոցառումը: (*Բուռն ծափահարություններ*):

– Երկու նախագահ ենք ունեցել, երկուսն էլ ամբիոններից իրար նման նախընտրական խոստումներ են տվել, թե աղետի գոտին կվերականգնենք, կվերակառուցենք, Գյումրին նոր կյանքով կապրի: Ես պետք է ասեմ, որ նրանցից ոչ մեկը ոչ միայն խոստումները չկատարեցին, այլև մեր հոգիներն էլ կոտրեցին: Ավելին, հեշտ էր տուժվել երկրաշարժից, քան այս 2 նախագահների վերաբերմունքից: Ասացեք խնդրեմ, պարոն Գեղամյան, նրանց վերջը տալո՞ւ եք, թե չէ:

– Երբ առիթ է լինում, հանդիպումների ժամանակ իշխանություններին մոտ կանգնած մարդիկ հարցնում են, լավ, վերջն ուզածդ ի՞նչ է, Արտաշես Գեղամյան, ասա, հասկանանք: Ասեմ, իմ ուզածը դուք երբեք չեք հասկանա, որովհետև շատ բարդ, բայց միաժամանակ մի շատ պարզ բան եմ ուզում: Ուզում եմ՝ մի 15-20 տարի հետո, ձեռքս թոռանս ուսին դնեմ, կինո «Նաիրիի» մոտից պրոսպեկտով իջնեմ, ամեն հանդիպած մարդ հարգանքով

բարև տա: Դա է ուզածս: Իսկ այդ ամենամեծ պատվից զրկված են, թե՛ Լևոն Տեր-Պետրոսյանը, թե՛ Ռոբերտ Քոչարյանը: Եվ, բնականաբար, զրկված են նաև այն մանկլավիկները, ովքեր այսօր Քոչարյանին սատարում են:

Սիրելի՛ ժողովուրդ, այստեղ խոսք գնաց, որ մեզ կարող են կոտրել, լուրեր են տարածում, որ քիլլերներ են վարձում: Ականջիցս, բնականաբար, նորից հիշեցի ինձ համար շատ թանկ մարդուն՝ Համո Սահյանին, որի կարոտը տղայից եմ առնում՝ Նահրիկից, կարող է այստեղ լինել, մեր ջատագովներից է: Հիշո՞ւմ եք խոսքերը.

Հայաստան ասելիս աշխարհը իմ տունն է,
Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ շունն է . . .

(*Բուռն ծափահարություններ*):

«Իրավունք», 16 – 22.VII.2004:

Իշխանությունները ենթագիտակցորեն ենթադրում են իմ բանավոր խոսքը...

Հարգելի ընթերցող

Հաշվի առնելով այն, որ իշխանական բոլոր լրատվամիջոցները, արհամարհելով Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 2004 թ. ապրիլի 28-ի թիվ 1374 հայտնի բանաձևը, շարունակում են ենթագիտակցորեն ենթադրել Արտաշես Գեղամյանի բանավոր խոսքը, իսկ Հանրային հեռուստաընկերությունն անում է իրականությանն ամենևին չհամապատասխանող մեկնաբանություններ, Ձեզ ենք ներկայացնում ս/թ սեպտեմբերի 10-ին կայացած «Ազգային Միաբանություն կուսակցության» ակտիվի ժողովում Արտաշես Գեղամյանի ելույթը:

«Ազգային Միաբանություն
կուսակցության» նախագահություն

Սիրելի՛ ժողովուրդ

Այսօրվա հանդիպումը նպատակահարմար համարեցինք անցկացնել 3-րդ գումարման Ազգային ժողովի 4-րդ նստաշրջանի նախաշեմին, որովհետև, չգիտես ինչու, իշխանությունները, ներքին և արտաքին լրջագույն զարգացումների հետ պայմանավորված, բազմաթիվ խնդիրներ թողած, մատի փաթաթան են դարձրել ընդդիմադիր պատգամավորներին մանդատից զրկել-չզրկելու հարցը, կարծես թե որ մանդատից զրկեցին, հացն ու ջուրը, կենսաթոշակները կավելանան, կպակասեն ալան-թալանը, կաշառակերությունը, արտագաղթն ու սափրագլուխների անօրինականությունները: Իմ ելույթում ես այս հարցին ավելի հանգամանալից կանդրադառնամ:

Այսօրվա ակտիվի ժողովը գումարվել է «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության նիստի որոշմամբ, նիստ, որտեղ քննարկվել էր «Ազգային Միաբանություն» պատգամավորական խմբակցության մասնակցության նպատակահարմարությունը 3-րդ գումարման ԱԺ 4-րդ նստաշրջանի նիստերին, տրվել էին արդիական հնչեղություն ունեցող մի շարք հարցերի պարզաբանումներ, ճշգրտվել այդ հարցերի լուծմանն ուղղված մոտեցումները:

Առաջարկություն կա ձեր ուշադրությանն ու քննարկմանը ներկայացնել մի քանի հայտարարություն, որ ընդունվել են ԱԺ «Ազգային Միաբանություն» պատգամավորական խմբակցության կողմից, ինչպես նաև ձեր անմիջական մասնակցությամբ: Պարզեցնեմ միտքս. խոսքը «Ազգային Միաբանություն կուսակցության» ընտրացու-

ցակում ընդգրկված պատգամավորության թեկնածուների և «Ազգային Միաբանություն» խմբակցության պատգամավորների կողմից ընդունված հայտարարությունների մասին է, նաև թիվ 44 ընտրատարածքի հետ կապված մեր մոտեցումների:

Սիրելի՛ ժողովուրդ, այսօր պարտադրված ենք երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական լրջագույն պրոբլեմների վերլուծության հետ մեկտև քննարկել նաև այն հարցը՝ արդյոք «Ազգային Միաբանություն» խմբակցությունը բոյկոտելու է, թե ոչ 3-րդ գումարման ԱԺ 4-րդ նստաշրջանի նիստերը: Մենք բոյկոտելու հարցը չէ, որ այսօր կարևորում ենք, որովհետև քաջ գիտակցում ենք, որ այդ խնդիրը չէ, որ ամենաարդիականն է Հայաստանի Հանրապետության համար, մեր ժողովրդի համար: Հարցի քննարկումը պարտադրված է իշխանությունների կողմից և ունի շատ հեռահար նպատակներ:Նրանք չափազանց լավ գիտակցում են, որ ժողովուրդը կիսաքաղց է, որ նա հասցվել է այն աստիճանի, որ, փախչելով սեփական իշխանություններից, փրկություն է փնտրում նույնիսկ իր դարավոր «բարեկամի» մոտ: Խոսքս պարզեցնեմ. Շիրակի, Արմավիրի մարզերից գյուղերով են գնում թուրքական սահման՝ թուրքից ողորմություն խնդրելու: Այս պարագայում քաղաքական ուժերին պարտադրում են քննարկել ընդդիմադիր պատգամավորների խորհրդարան գնալ-չգնալու հարցը, որպեսզի մարդիկ էլ տանը նստեն, ասեն, մեր վիճակը լանք, թե սրանց մանդատների շուրջ ծավալված գզվռտոցին ու կռվին հետևենք: Սա է խնդիրը, սա է նպատակը: Որն իրեն քաղաքական գործիչ է հորջորջում, պարտքն է համարում ամբիոն բարձրանալ, ընդդիմությանը մանդատից զրկել-չզրկելուց խոսել: Էդպես էլ պետք է լիներ, քանի որ մանդատներ ունենալուց զատ նրանք զրո են, իրենցից բան չեն ներկայացնում. մանդատ չունենան՝ նրանց կանայք էլ չեն թողնի, որ գիշերը մտնեն իրենց ծոցը: (*Բուռն ծափահարություններ*):

Ուստի և, քանի հարցը կա, բնականաբար, հարցի պատասխանը պետք է տանք, նոր անդրադառնանք մեզ հուզող, իրապես արդիական հնչնություն ունեցող հարցերին, այն է՝ Հայաստանի Հանրապետությունը 2004 թ. այս օրը՝ սեպտեմբեր ամսին, ի՞նչ մարտահրավերների առաջ է կանգնած, ի՞նչ վտանգներ են դարանակալել մեր պետականության ու ժողովրդին:

Անդրադարձ կատարենք: Փետրվարի 2-3-ի ԱԺ նիստը բոյկոտելուց հետո «Ազգային Միաբանություն կուսակցությունն» իրեն ամենագետի տեղ չդրեց. պատգամավորներով գնացինք գյուղեգյուղ, քաղաքից քաղաք, մարզից մարզ՝ խորհրդի նստելու ժողովրդի հետ, մեր խոսքն ասելու, իսկ ամենակարևորը՝ մարդկանց խոսքին ականջալուր լինելու: Շուրջ 70 բնակավայրում եղանք, 70-ում էլ մի պատգամ կար. թեկուզ մահի գնով փրկեք մեր ժողովրդին, մեր երեխաների ապագան, մեր պետականությունը: Սա էր, ահա, պատճառը, որ ապրիլի 5-ին որոշվեց «Ազգային Միաբանություն կուսակցության» համակիրների ուժերով Երևան քաղաքում կազմակերպել հանրահավաք: Եթե հիշում եք, դա այն եզակի հանրահավաքն էր, որ, ի սկզբանե, մատենադարանամերձ բոլոր մատույցներում հարյուրավոր զինվորներ էին բերել՝ վահաններով, մահակներով: Ամեն ինչ անում էին, որ հենց այնտեղ լինի առաջին ընդհարումը, որ արյան մեջ հևեն և սպանեն մարդկանց

վճռականությունը, ասես, թե դաս տան՝ ծեծուջարդի ենթարկելով «Ազգային Միաբանության» պատգամավորներին և ակտիվին: Մենք այդ օրը միտումնավոր 2 մեքենա բարձել էինք ձայնաուժեացուցիչներով, 2 տարբեր սարքավորումներով, որոնք ոստիկանների կողմից կալանվեցին՝ հանդիպումը ձախողելու նպատակով: Միամիտները կարծում էին՝ իրենց չափ կարճ ենք մտածում, չգիտեին, որ այդ ամենն աչքի առաջ ունեինք: 3-րդ մեքենայի թափքից հանրահավաք անցկացրեցինք: Հանրահավաքի նախօրեին Երևան քաղաքի ոստիկանության ղեկավար ողջ կազմը փոխվեց, համայնքային ոստիկանապետերը փոխվեցին. իլու հնազանդ կամակատարներ էին պետք: Իշխանության տեսակետից վերջիններս իրենց լիովին արդարացրեցին, երբ իրենց աչքերի առաջ ծեծուջարդ էր, երբ հրապարակում ոստիկանների առաջ, գնդապետների, ուսադիր կրողների առաջ իշխում էր սափրագլուխ խուժանը: Հարյուրավոր ոստիկաններ կային. սափրագլուխները սանձարձակ ծեծուջարդ էին փորձում սկսել, և ուսադիր կրողներից ոչ ոք չմիջամտեց: «Հայլուրն» էլ այն աստիճանի լկտիություն ունեցավ, որ երեկոյան, ցույց տալով այդ ծեծուջարդը, ասաց, որ, տեսեք, ցուցարարները խուլիգանական արարքներ թույլ տվեցին և կոտրեցին «Հայլուրի» տեսախցիկները : Ցավով եմ ասում, դրա հաջորդ օրը, բացառությամբ 3 թերթից՝ «Հայկական ժամանակ», «Առավոտ», «Չորրորդ իշխանություն» և ոչ մի թերթ, ոչ մի հեռուստամիջոց (բացառությամբ «Կենտրոն» հեռուստակայանից) չդատապարտեցին, քաղաքական գնահատական չտվեցին այդ բռնարարքներին: Կոալիցիայի մաս կազմող կուսակցություններից ոչ մեկը չարձագանքեց այդ ամենին, բայց նրանք, թերևս, կարող են արդարանալու փաստարկ բերել այն, որ մեր գործընկեր քաղաքական ընդդիմադիր կուսակցություններից նույնպես արձագանք չեղավ: Այնուամենայնիվ, որոնք էին ապրիլի 5-ի դասերը և կայի՞ն արդյոք դրանք: Իհարկե, կային. ամենակարևորն այն էր, որ պարզվեց, որ Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան զույգի եզակի և միակ հենարանը սափրագլուխ խուժանն է: Դա առաջին դասն էր: Երկրորդն այն էր, որ արդեն իսկ այդտեղ համոզվեցին, որ ոստիկանությունը, իր ճնշող մեծամասնությամբ, երբեք ու երբեք ձեռք չի բարձրացնի ժողովրդի վրա: Ուրիշ բան, որ չի էլ պաշտպանի խուժանից, բայց ինքը ձեռք չի բարձրացնի: Դա երկրորդ դասն էր. դրա հետևանքը մենք տեսանք ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը, երբ արդեն Ղարաբաղից բերեցին համապատասխան ստորաբաժանումներ, մեր ղարաբաղցի քաջարի ազատամարտիկներին թյուրիմացության մեջ գցելով, ասելով, որ ընդդիմությունն ուզում է իրենց Ռոբիկին գահընկեց անի ու Ղարաբաղը ծախի: Սա է ճշմարտությունը: (*Բուռն ծափահարություններ*):

Հաջորդ դասը: Հաջորդ դասն այն էր, որ ժողովրդի համբերության բաժակն արդեն լցվել էր, որ անգամ իսկ այդ բռնություններից հետո պատրաստակամություն հայտնեց հետագայում նս մասնակցել համաժողովրդական համընդհանուր պայքարին: Ճիշտ այդ օրերին «Ազգային Միաբանություն կուսակցությունը» և «Արդարություն» դաշինքը կնքեցին համաձայնագիր՝ ստանձնելով համատեղ գործելու պարտավորվածությունները: Հետևեցին ապրիլի 9-ի, 10-ի հանրահավաքները, ապրիլի 12-ի հանրահավաքին

հաջորդած երթը: Վերջինիս ժամանակ ժողովուրդը, ասես թե, վերածնվել էր: Հարյուրավոր, հազարավոր մարդիկ 89-90 թվականների նման հավատով լեցուն էին, ազգը պասիոնար վիճակում էր, բռունցքված էր, և մենք փորձեցինք անպայման գործը տանել ոչ թե արյունահեղության, այլ կոնսոլիդացիայի, համերաշխության և, պատահական չէր, որ «Արդարություն» դաշինքի և «Ազգային Միաբանության» պատգամավորական խմբակցություններից պատգամավորների գործուղեցինք Ազգային ժողովի ղեկավարության հետ հանդիպման, որ այնտեղ ասեն՝ եկեք ազգովի տեր կանգնենք ժողովրդին, միասին քննարկենք ծառացած խնդիրները, միասին ելքեր փնտրենք: Եվ ի՞նչ եք կարծում, ոստիկանությունը չի թողնում Ազգային ժողովի պատգամավորին մտնել իր աշխատասենյակը, մտնել իր աշխատանքի վայրը: Իսկ ի՞նչ է, առյուծի սիրտ էին կերել այդ ոստիկանը և ոստիկանապետը: Ցավով եմ ուզում ասել, քաջարի ազատամարտիկ է եղել այդ մարդը՝ Էրեբունու ոստիկանապետը, իրեն չափազանց լավ է դրսևորել Արցախում: Բայց եկեք տեսեք, որ իշխանություններն անպայման պետք է փչացնեն նման մարդկանց: Իրենց կողքին չեն կարող հանդուրժել անբիծ, քաջարի ազատամարտիկի, անպայման ուզում են յուրաքանչյուրի վրա անմն մարդկանց արյուն քսել, որ գայլերի ոհմակների օրենքներով առաջնորդվեն: Ահա սա է նրանց մոտեցումը և արդյունքում, բնականաբար, տեղի ունեցավ այն, ինչ պետք է տեղի ունենար: Այդ օրերին մենք հերթական անգամ համոզվեցինք, որ մեր ժողովրդի կամքը կոտրել ամենևին էր հնարավոր չէ: Եվ դրա ամենավառ ապացույցն այն եղավ, որ ամսի 13-ի այդ ծեծուջարդից, բռնություններից, ձերբակալություններից հետո էլ՝ ապրիլի 16-ին, ժողովուրդը կրկին դուրս եկավ բողոքի բազմահազարանոց ցույցի:

Իսկ ի՞նչ դասեր մենք քաղեցինք, ի՞նչ պտուղներ ճաշակեցինք այդ օրը: Ըստ իս, ամենահիմնականն այն է, որ հերթական անգամ համոզվեցինք՝ այս իշխանությունները սարսափում են իշխանափոխությունից: Իսկ ո՞ր դեպքում են իշխանությունները սարսափում իշխանափոխությունից. երբ գիտեն իրենց իսկ գործած հանցագործությունների մասին, երբ գիտակցում են, որ վախենալու շատ բաներ ունեն, որովհետև իշխանափոխության պայմաններում քրեորեն պատժելի շատ գործեր, անտարակույս, կբացահայտվեն: Եվ ցավալին այն է, որ այդ չարագործ իշխանությունը պահելուն, բռնազավթելուն մասնակից են դարձնում մարդկանց, ովքեր ամենևին էլ իրենց չեն արատավորել թե՛ իրենց աշխատանքային կենսագրության ընթացքում, թե՛, ինչու չէ, Ղարաբաղի ազատամարտի օրերին և տարիներին: Սա դասերից մեկն էր: Դասերից երկրորդն այն է, որ, ի դեմս իշխանական կոալիցիայի մաս կազմող քաղաքական ուժերի, ցավով եմ ասում, ունենք մարդկանց անդեմ, վախվորած միասնություններ. նրանցից և ոչ ոք այդպես էլ քաղաքական գնահատական չտվեց կատարվածին: Մենք ամենևին չէինք ակնկալում մեր ականջը շոյող խոսք: Մենք երբեք ու երբեք չէինք ակնկալում մեզ սատարող գնահատական: Մենք սպասում էինք, որ «Օրինաց երկիր», Հանրապետական կամ Դաշնակցություն կուսակցությունները տեղի ունեցած բռնություններին կտան գնահատական, և ոչ միայն քաղաքական, այլև անմն մարդկանց թափված արյան համար

մեղավորներին պատասխանատվության կկանչեն: Բացարձակապես ոչ: Մի քանի օր նրանք ավելի մեծ շոկի մեջ էին, քան ծեծուջարդի ենթարկված ժողովուրդը: Հավանաբար, խղճներն էր արթնացել: Դրան հաջորդեց հերթական ստի ու խաբեության տարափը, հնևը. ընդդիմությունը փախել է, ընդդիմությունն ընդհատակ է անցել: Տնաշեններ, եկել եք տունս խուզարկելու, տանը չլինեմ, զենք կգցեք, հաշիշ կգցեք, էլ չեմ ասում «կռապլյոնի» խաղաթուղթ կգցեք (դա նրանց ավելի հոգեհարազատ է). իրենք էլ գիտեն, ես դրա մասին ասել եմ, չեմ ուզում ծավալվել: Իսկ այդ բարբարոսության օրը, պետք է տեսնեիք, ինչ բավականություն էին ստանում, երբ ջրցան մեքենաների ջրելուց հետո էլեկտրաշոկի էին ենթարկում անզեն մարդկանց: Մասնավորապես, Ալեքսան Կարապետյանին՝ այն էլ սրտի հատվածում. նա ինֆարկտ տարած մարդ է: Դահճին հատուկ նենգությամբ էին այդ ամենն անում: Իսկ ավելի զարհուրելին տեղի ունեցավ դրանից հետո. ղարաբաղյան կլանի ներկայացուցիչները դրա հաջորդ օրը երևանյան ռեստորաններում բանկետներ էին անում, սևանից սևան խմիչք ու միրգ էին ուղարկում: Կարծում եք, չգիտե՞նք, ովքեր էին, կարծում եք, չգիտե՞ն, որ հենց նման բանկետներ կկազմակերպվեն, երբ իրենց այստեղից մեկ առ մեկ քշենք: (*Բուռն ծափահարություններ*):

Ավելին, երբ այդ բոլոր խարդավանքների, սրիկայությունների մասին Շավարշ Քոչարյանի հետ հանգամանալից իրազեկեցինք Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի մասնակիցներին և ապրիլի 28-ին ընդունվեց թիվ 1374 հայտնի բանաձևը, Երևանի քաղաքապետարանը ռազմարյադկա էր իջեցրել բոլոր համայնքներին, որ մարդ ապահովեն ու գան օդանավակայան՝ մեզ դիմավորելու: Ուրեմն, երբ մարդ էին ապահովել, մեր համակիրներից էլ կային, ասել էին՝ գնալու ենք օդանավակայան Գեղամյանին ու Շավարշ Քոչարյանին դիմավորենք: Էս մեր միամիտ ժողովուրդն ասել էր՝ գնանք ու այդ ոչ թերսնված թաղապետի ճակատը համբուրենք, վերջապես դարձի է եկել, վերջապես հասկանում է, որ ընդդիմադիրներին, իրոք, ծաղկեփնջերով պետք է դիմավորել: Տեսնելով մարդկանց ջերմ վերաբերմունքը մեր հանդեպ՝ այդ թաղապետն ասել էր՝ «Դուք տուն գնացեք»: Մարդկանց պարտադրել էին, որ գան այնտեղ և Ստրասբուրգում իմ ու Շավարշի կատարած ազգանպաստ գործողությունները նենգափոխեն և ներկայացնեն որպես թուրքանպաստ: Եվ սա պատահականություն չէր, արվում էր կանխամտածված: Փորձում էին քաղաքական հիստերիա բարձրացնել, որի արդյունքում արհեստականորեն կրքեր բորբոքեն և քիլլեր ուղարկեին, քիլլերն էլ, ուրեմն, խփի, իրենք էլ ծախու լրատվամիջոցներով արդարացնեին վարձված մարդասպաններին, ասեին, որ մարդիկ չափազանց զգայուն են ու ագրեսիվ, երբ թուրքին նպաստող գործողություններով հանդես է գալիս որևէ մեկը: Սա է իրենց ամբողջ հնարքը եղել: Եվ այդ ամենն ունեցավ իր տրամաբանական շարունակությունը՝ վերածվերով տրագիկոմեդիայի, երբ ես հրավիրվեցի Գլխավոր դատախազություն, ծանոթացա իմ դեմ մահափորձ նախապատրաստողի ինքնախոստովանական ցուցմունքի հետ... Այդ ամենը քաջ հայտնի է: Բարձրացված աղմուկին հետևեց օգոստոսի 10-ին ծածկադմփոց արված դատավարությունը, որի վճռով չկայացած քիլլերները դատվեցին մեկ տարվա ազատազրկման՝

ապօրինի զենք կրելու համար... Հավանաբար, իրենց գործակալներն են եղել, իրենց դրածոներն են եղել: Իսկ իշխանությունների խնդիրը մեկն է, անպայման պառակտել ընդդիմադիր դաշտը, փոխադարձ կասկածանքի մթնոլորտ սերմանել քաղաքական այս կամ այն ընդդիմադիր ուժերի մեջ: Այս հնարքը նույնպես, բնականաբար, տապալվեց ու ձախողվեց:

Հերթը հասավ այն առանցքային հարցին, որ ուզում եմ Ձեզ հետ քննարկել: Ճիշտ է, կամքի մեծագույն ուժ պետք է դրսևորել որոշ անհեթեթ հոդվածներ կարդալու համար, այնուամենայնիվ, ամենայն ուշադրությամբ կարդում ենք եղածները փետրվար ամսից առ այսօր: Հետևությունն այն է, որ ընդդիմությանը հավասարաչափ վարկաբեկման գործընթաց էին ձեռնարկում թե՛ իշխանամետ լրատվամիջոցները, թե՛, ցավով եմ ուզում ասել, ընդդիմադիր որոշակի թև ներկայացնող լրատվամիջոցներ: Որ թերթը բացում ես՝ թե՛ ընդդիմադիր, թե՛ իշխանամետ, գրում է՝ խարիզմատիկ լիդեր չկա: Լավ, հասկացանք, «ճարտարախոս» Ռոբերտ Քոչարյանով, Սերժ Սարգսյանով հիացած եք, ինչ նախադասություն ասում են, մարգարիտի հուլունքներ են, մեջներն էլ երկնագույն «կառբունկուլ» բրիլիանտն է: Է, հա, ի՞նչ անենք, մենք էլ՝ էս ենք, ոչ խոսել գիտենք, ոչ տրամաբանել: Եթե այդպիսին ենք, ինչո՞ւ եք սարսափում մեզանից: Ավելին, նաև ուրիշ երանգավորումներ էին տալիս. ընդդիմությունն ապաշնորհ գտնվեց, չկարողացավ համաժողովրդական ցասումը վերջնակետին՝ իշխանափոխությանը հասցնել: Ես համաժողովրդական ցասումը «վերջնակետին» բերողների հետ առնչվել եմ 1990 թ. մայիսի 27-ին, որի արդյունքում 17 անմեղ զոհեր էին Էրեբունիում և Կայարանում: Այդ վերջնակետի արդյունքում «հերոսներ» հորջորջվող մարդկանցից ոչ մեկին կողքիս չտեսա, բացառությամբ Մանվել Քոչարյանի, որն այստեղ է, մեր Գևորգյան Ռուբենի, որի քնքուշ անունը Ծաղիկ Ռուբո է, Մացոյի, Վարդանի ու ևս մի քանի հոգու: Ո՞ւր էին էդ «հերոսները», ո՞ւր էին նրանք ապրիլի 13-ի լուսաբացին: Այնտեղից գնացող վերջիններից ենք մենք եղել, առանց չափազանցության եմ ասում սա, ամենավերջիններն: (*Բուռն ծափահարություններ*):

Ավելին. միայն և միայն մի կին կար, այսօրվա պես հիշում եմ, որը բղավում էր՝ փրկեք ընդդիմադիր լիդերներին, առաջարկում էինք իրեն՝ եկեք ձեզ էլ մեզ հետ տանենք, մի քիչ գեր էր, ասաց, տղա ջան, ինձ բան չեն անի, ես տարիքով կին եմ: Բա էն որ հարյուրավոր մահապարտներ եկան Հրազդանից, Դարալագյազից, էլ չգիտեմ որտեղից, բա ո՞ւր էին: Հիմա էլ կան մարդիկ, որ ասում են՝ վճռականություն չկա. վճռականությունը ո՞րն է, անպայման, ուրեմն, մեկս այնտեղ պետք է զոհվեր, ճոխ թաղում կազմակերպեին, հետո դրա վրա սպեկուլյացիա անեի՞ն: Հմտությունն այն չէ, որ ժողովրդին արյունի բերանը տանես, արյուն տեսած մարդը, եթե արյունարբու և արյունախում չէ, երբեք, ուրեմն, ուրիշի կյանքը չի վտանգի, նա գիտե կյանքի քաղցրությունը, և չկա երկնային այդպիսի բարիք, որը, ինչպես Դոստոևսկին կասեր, երեխայի արցունքից ավելի թանկ է: Սա է իրականությունը, և, բնականաբար, չակերտները բացեմ: Ես հասկանում եմ նախորդ իշխանությունների զգացմունքները: Հասկանում եմ, որ իրենց ինտելեկտուալ

մակարդակով նրանք կարող են Ռ. Քոչարյանին, Ս. Սարգսյանին և վերջիններիս կլանին դասախոսություններ կարդալ: Դա փաստ է, բայց դրա հետ ցավն այն է, որ իրենց իշխանավարության տարիներին այդ ինտելեկտուալ կարողությունները ոչ միշտ են օգտագործվել, մեղմ ասած, ժողովրդի բարօրության համար: Եվ ժողովուրդը, քանի որ չափազանց մեծ հույսեր էր կապել նրանց հետ, մեծ էլ հիասթափություն է ապրել: Կարող է ժամանակն այդ վերքերը սպիացնի, կարող է հիշողությունները մնմվեն, բայց այսօր այդ պահը չէ: Ու եթե դուք, իրոք, հարգելի ՀՀԾ-ականներ, հայրենասերներ եք, ապա չպետք է իշխանությունների հետ համահավասար քարկոծեք ընդդիմությանը: Սա են պահանջում Հայաստանի Հանրապետության իրական շահերը: Կանեք, կհամոզեք մարդկանց, դա էլ կլինի քավության ճանապարհը բռնած ձեր առաջին քայլը: Եվ ոչ թե հրճվեք ասելով՝ ընդդիմությունը վերջնականապես տապալվեց, ընդդիմությունն իրեն սպառել է: Ախր, որտեղից իմացաք՝ սպառել է, թե չի սպառել: Ախր եթե ընդդիմությունն սպառվել է, ինչո՞ւ են ընդդիմությանը, մասնավորապես ինձ զրկել հեռուստաալիքներով ելույթ ունենալու հնարավորությունից: Անցած մեկ տարի 3 ամիսների ընթացքում ընդամենը մեկ անգամ եմ «Առավոտ» հեռուստակայանով 20 րոպե ելույթ ունեցել: Սրանից մի քանի օր առաջ էլ այդ նույն հաղորդումը կրկնեցին, որ Եվրախորհրդի մոնիտորինգի խմբին ասեն, ինչպես թե՝ 20 օր առաջ էլ է Գեղամյանը խոսել: Այ, ներկա և նախորդ իշխանություններն իրենց լրատվամիջոցներով անվերջ պնդում են, որ խարիզմատիկ լիդեր չկա, ընդդիմությունն իրեն սպառել է: Է, եթե այդպես է, ավելի լավ ձեզ համար, ամբիոն տվեք, մենք էլ խոսենք մեր սպառած բառապաշարով, գիտելիքներով, ունակություններով, դուք էլ ասեք, բա որ ասո՞ւմ էինք: Մեր ոչ մի հանդիպում թույլ չեն տալիս, որ հեռարձակվի: Հրապարակային ելույթից արգելում են նշույլ անգամ հիշատակել, իսկ հիշատակածն էլ ենթագիտոխում են: Փոխարենը իշխանամետ թերթերը դասեր են տալիս, խորհուրդներ են տալիս ընդդիմությանը՝ ինչով զբաղվի, մասնավորապես, ասում են, այ, օրինակ, ինչո՞ւ է Արտաշես Գեղամյանը միայն Սերժ Սարգսյանին ու Ռոբերտ Քոչարյանին քննադատում: Օլիգարխներին ինչո՞ւ չի քննադատում: Ի՞նչ է, վախենում է, թե՞ կաշառվել է: Ինչո՞ւ չի քննադատում Դալմայի այգիների ապօրինությունները, Հյուսիսային պողոտայի հետ կապված բազում այլ անօրինականություններ: Է, երեխային ծեծելու փոխարեն, պապային եմ քննադատում, ի՞նչ տարբերություն: (*Բուռն ծափահարություններ*):

Դա էլ պատահականություն չէ: Դա էլ հեռուն գնացող, մտածված քաղաքականություն է: Եվ դրա առանցքն ու մեխն այն է, որ մենք սկսենք արդեն քննադատել իրենց նազիր-վեզիրներին: Վերջիններիս էլ իրենք համոզեն, ասեն, այ, տեսեք, մենք ենք, մեր իշխանությունն է, որ ձեզ պաշտպանում և պահպանում է, թե չէ ձեզ ժողովուրդը կգզի: Սա է: Եվ հետո, համընդհանուր թշնամանքի մթնոլորտի պայմաններում, իրենց մանյովրի հնարավորությունները կշատանան, ծեծուջարդի կենթարկեն արդեն ընդդիմադիր դաշտի անվանի գործիչներին, էլ չեմ ասում ահաբեկչություն իրականացնելու մասին: Մենք այդ հաշվարկներն արել ենք և համոզված կարող եմ ասել, որ երբ

վերլուծում ես, թե ինչ վիճակում են հայտնվել այսօրվա կոալիցիայի մաս կազմող կուսակցությունները, թե ինչ վիճակի են հայտնվել օլիգարխները, ականատես հիշում ես Վարդան Այգեկցու հայտնի առակը: Ուրեմն, աղվեսը գայլին բարաթ է տալիս, որտեղ գրված է. «Գայլ ախպեր, որ գյուղ գնաս, գյուղի մարդիկ քեզ մի հատ ոչխար են տալու»: Տակն էլ գրված է՝ «Թագավոր»: Գայլը վերցնում է, գնում գյուղ: Գյուղում մարդիկ շներով ընկնում են գայլի հետևից, բռնում և շանսատակ են անում: Գայլը մի կերպ ոտքերը փախցնում է: Իսկ աղվեսը բուրդը քամուն տված գայլին տեսնելով՝ բլրի գագաթին նստած՝ հարցնում է. «Չհասկացա, ոչխար չտվի՞ն, բա էտ բարաթը ցույց չտվե՞ցիր»: Գայլն էլ միամիտ-միամիտ պատասխանում է. «Գյուղում գրագետ մարդ չկար, կարդացող չկար»: Հիմա, Ռոբերտն ու Սերժը մեր իրականության մեջ, ասես թե, 2 աղվեսի դերեր են ստանձնել, միայն գայլերն են ավելի շատ՝ օլիգարխներն ու իրենց կլանը: Ճիշտ այդ վիճակում ենք: Ուրեմն, մենք ուզում ենք ասել, միևնույն է, վաղ թե ուշ, եթե գործելակերպն այսպես շարունակվի, ժողովուրդն ոտնատակ է անելու, պատկերավոր ասած, թե՛ բարաթ տված աղվեսներին ու թե՛ գայլերին: Եվ ոչ մի ընդդիմադիր գործիչ, իր ողջ հևհևակությամբ, ճարտարախոսությամբ չի կարողանալու դրա առաջն առնել: Որովհետև մեր մարդիկ այլևս կորցնելու ոչ մի բան չունեն: Մարդիկ գիտակցում են, որ այս իշխանությունների օրոք դատապարտված են դանդաղ մահացության: Եվ այս հարցի լրջությունն իշխանությունները բացարձակապես չեն զգում և չեն էլ գիտակցում: Ավելին, էդ պայմաններում անհարմար էլ չեն զգում խոսում են տնտեսական ինչ որ աճից: Ականատես մտաբերում ես դարձյալ մի առակ. մարդը դավին՝ ուղտին, կորցնում է, ընկած մաև է գալիս, տեսնում է ճամփին մի տարեց կին է կանգնած, մոտենում, ասում է՝ դավիս տեսե՞լ ես, թե չէ: Է, ասում է, բալա ջան, ախր դու գիտե՞ս, էս հաղթանդամ, էս գեհենիկ տղամարդը ձեռքս խնդրեց՝ մերժեցի, էն գյուղի Ասլանը ձեռքս խնդրեց՝ մերժեցի, էն մյուսը ձեռքս խնդրեց՝ հրաժարվեցի, չորրորդը, հինգերորդը, յոթերորդը՝ մերժեցի: Տղամարդն էլ պատասխանում է. ես իմ դավի դարդն եմ լացում, դու ի՞նչ ես խոսում, այ պառավ: Է, ասում է վերջինս, ամեն մարդու համար իր դարդը մի դավա արժի, որից էլ խոսում է: Հիմա ով ինչի մասին խոսում է, Ռոբերտ Քոչարյանն ու Անդրանիկ Մարգարյանն էլ իրականում չեղած տնտեսական աննախադեպ աճից են խոսում, ասես թե էն պառավը լինեն: (*Բուռն ծափահարություններ*):

Խոսենք հասունացած, արդիական խնդիրների մասին, որովհետև գիտակցում ենք, որ այսօրվա դրությամբ, այս իշխանությունների պարագայում մեր ազգը, մեր երկիրը դատապարտված է: Երբ երկուսուկես ամիս առաջ Կինոյի տան դահլիճում առիթ եղավ ելույթ ունենալու, դրա հաջորդ օրն իսկ բոլոր հեռուստաալիքները խոսքները մեկ արած ասացին՝ Գեղամյանն իր աշխարհաքաղաքական հայացքները փոխել է՝ ռուսամետ էր, դարձել է արևմտամետ, ամերիկամետ: Հիմա չգիտես, ասած Հակոբ Պարոնյանի, այդ տգիտության վրա խնդաս, թե լաս, ինչպես արձագանքես: Հերթական անգամ, առավել դժվար հասկացող լրատվամիջոցների ներկայացուցիչներին ուզում եմ «Ազգային Միաբանություն կուսակցության» և իմ հստակ դիրքորոշումներն ասել Հայաստանի

արտաքին քաղաքական կողմնորոշումների մասին: Եվ խնդրում եմ առավել ուշադիր և բարեխղճորեն լսել ու արձանագրել, որ վաղը հերթական անգամ անհեթեթ մեկնաբանություններով հանդես չգաք: Միևնույն է, այն ինչի մասին խոսում եմ, հրապարակային ինչ ելույթներ ունենում եմ, այդ բոլորը տեսագրվում է և հասցվում հասցեատերերին: Բայց, այնուամենայնիվ, իմ հիմնական, կարևոր հասցեատերը՝ ժողովուրդն է, մեր ազգն է: Ուզում եմ, որ մարդիկ ստույգ իմանան մեր կուսակցության և իմ դիրքորոշումների ու մոտեցումների մասին: Ուրեմն, գաղտնիք չէ, որ 21-րդ դարը հիմնականում բարգավաճ կլինի այն ազգերի համար, ովքեր լուծել և որոշել են իրենց ռեսուրսային խնդիրները, մասնավորապես և հիմնականում, ովքեր կտիրեն էներգակիրներին, էներգետիկ ռեսուրսներին: Մերձավոր Արեղելքում ծավալված արյունահեղությունը, խոսքն Իրաքի մասին է, ինչու չէ, նաև լուրջ անհանգստությունը, որ պատճառում է Աֆղանստանը, պաղեստինա-իսրայելական հակամարտությունը, բնականաբար, համոզել է աշխարհի պետություններին, գերտերություններին և, առաջին հերթին, Ամերիկայի Միացյալ Նահանգներին, որ, ցավոք, իսլամական երկրների ու քրիստոնեական երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի միջև գոյացել է որոշակի վիհ: Եվ դա կարող է վերածվել թշնամանքի, ուստի Մերձավոր Արեղելքից էներգառեսուրսների ներկրումը կարող է պարբերաբար վտանգվել: Գիտակցելով այս ամենը, նույն ԱՄՆ-ը, բնական է, պետք է հոգա այլընտրանքային նավթամուղերի անվտանգ շահագործման հարցով: Եվ պատահական չէ, որ այս պարագայում արդեն իսկ Միացյալ Նահանգներն որոշում են կայացրել, որ, մասնավորապես, Արևմտյան Եվրոպայում գտնվող ավելի քան 115 հազարանոց իրենց զինվորական ստորաբաժանումների տեւակայումը փոփոխվի: Եվ վերջերս Ս. Պետերբուրգում Դոնալդ Ռամսֆելդը Սերգեյ Իվանովի հետ հանդիպման ավարտին, համատեղ ասուլիսի ժամանակ ուղղակիորեն ասաց, որ «Ռուսաստանը կարող է չմտահոգվել, այս տևաշարժերի ընթացքում զորքերը չեն գա մերձբալթյան հանրապետություններ, այլ կգնան հարավ»: Ակնհայտ է, որ Վրաստանը, Ադրբեջանը, Կենտրոնական Ասիայի երկրներն այսօր ԱՄՆ-ի համար առավել հետաքրքրություն են ներկայացնում, քանզի այնտեղ է այսօր ԱՄՆ-ի կենսական շահերի կիզակետերից մեկը՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարը: Այսինքն՝ գալու են Ադրբեջան ու Վրաստան: Սրան զուգահեռ, բնականաբար, հասունանում է նաև մեկ այլ գործոն ևս, որը կարող է դոմինանտ դառնալ 21-րդ դարում. դա Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գործոնն է: Այսօրվա դրությամբ տարեկան կտրվածքով Չինաստանը ներմուծում է 110 միլիոն տոննա նավթ, շուրջ 200 միլիոն տոննա էլ ինքն է արտադրում: 2012-2015 թթ. ներմուծվող նավթի կարիքները, կրկնում եմ, ներմուծվող, կազմելու է շուրջ 200 միլիոն տոննա: Որտեղի՞ց է բերելու. բնականաբար, հաշվի առնելով Պարսից ծոցում ստեղծված իրավիճակը, պետք է իր ուշադրությունը սեղելի Կենտրոնական Ասիայի, Կասպից ծովի և Ռուսաստանի վրա, որովհետև տարածաշրջանում արդեն չկան նավթահորերով հարուստ այլ երկրներ: Այս պարագայում, բնականաբար, առանցքային է դառնում Ռուսաստանի Դաշնության դերն ու դերակատարումը: Ռուսաստանն իր հերթին հասկանում և գիտակցում է, որ եթե

գցվի Չինաստանի Դացին գնացող նավթամուղ, ապա նավթամուղի, թե կառուցումը, առավել ևս հետագա շահագործումը կպահանջեն մարդկային հսկայական ռեսուրսներ, որոնք Արեղելյան Սիբիրում այսօր չկան, ուստի Չինաստանից են գալու: Իսկ դա տեղավորվում է Չինաստանի ռազմական դոկտրինի մեջ, որը մշակվել է դեռևս 1987 թ. և որի առանցքն է տնտեսական խաղաղ էքսպանսիայի միջոցով ապահովել իր երկրի օրըստօրե աճող պահանջները: Այս դոկտրինի շրջանակներում, մասնավորապես, այսօր արդեն արենդավորել են Լաոսի 5 հազար հեկտար վարելահողեր, ուր աճեցվում է բրինձ, երկրում Չինաստանի կարիքները հոգալու համար արտադրվելու է տարեկան 50.000 տոննա քլորական կալիում, հսկայական տարածքներ Կանադայում և Նոր Զելանդիայում՝ կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա այդ երկրներից Չինաստան է ներկրվում անտառ և անտառանյութ: Ավելին. Չինաստանն աշխարհի 18 երկրներում մասնակցում է նավթի և գազի արդյունահանման նախագծերին, որի արդյունքում այդ երկրներից տարեկան կտրվածքով Չինաստան է ներկրվելու 27 մլն տոննա նավթ և 2 մլրդ խորանարդ մետր գազ: Առանձնահատուկ կարևորվում է նաև Իրանի Իսլամական Հանրապետության հետ կնքված 25-ամյա պայմանագիրը, որով Չինաստան է ներկրվելու 110 մլն տոննա հեղուկ գազ: Նույն քաղաքականությունը կիրականացվի նաև Ռուսաստանում: Ռուսաստանը գիտակցում է, որ այս պարագայում տասնամյակներ հետո Արեղելյան Սիբիրում և Հեռավոր Արեղելքում իր ազգաբնակչության գերակշռող մասը չինացիներ կլինեն: Եթե սրան ավելացնենք այն, որ, փորձագետների կանխագուշակումների համաձայն, առաջիկա 15-20 տարիների ընթացքում Չինաստանի համախառն ներքին արդյունքը քառապատկվելու է և իր համախառն հզորությամբ հասնելու է ԱՄՆ-ին, ապա այս հնարավոր զարգա-ցումները կհանգեցնեն նրան, որ ԱՄՆ-ի և ՌԴ-ի աշխարհաքաղաքական հեռանկարային շահերը կհամընկնեն: Այս ամենն ի նկատի ունենալով եմ ասում, որ մենք անպայման այս իրողությունները պետք է հասկանանք և առաջնորդվենք դրանից բխող հետևություններով, որովհետև իր տեսակարար կշռով, իր նշանակությամբ աշխարհաքաղաքական այդ մեծ փոփոխությունների մեջ, ցավով եմ ասում, Հայաստանը դերակատարում գրեթե չունի: Աշխարհաքաղաքական այս զարգացումների վառ ապացույցը 2004 թ. լույս տեսած Զբիգնև Բժեզինսկու վերջին տարի-ներին հրատարակ-ված 2-րդ լրջագույն աշխատությունն է, որը հնհնակել է հետևյալ վերնագրով "Выбор: господство или лидерство": Եթե հիշում եք, նա 1988 թ. "Великая шахматная доска" գրքով էր հանդես եկել: Հիմա ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության այդ ռահվիրան տեսակետները փոխել է և այն, ինչի մասին ես ասացի, նաև բերված է նրա վերլուծություններից: Ահա այս պարագայում, երբ ընթանում են աշխարհաքաղաքական լրջագույն փոփոխություններ, մասնավորապես, Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում, բնականաբար, ԱՄՆ-ն և ՌԴ-ն, ունենալով տարածաշրջանում ընդհանուր շահեր, տարածաշրջանային հետագա զարգացումների շուրջ նախևառաջ իրար հետ են պայմանավորվելու և ոչ թե Հայաստանի հետ: Սա է իրականությունը: Նման զարգացում-ների վկայությունը կհանդիսանա այն, ինչ տեղի է

ունենալու հարևան Վրաստանում, ինչ տեղի է ունենալու նաև Ադրբեջանում, երբ արդեն իսկ որոշում կա հայտնի նավթամուղի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով Ադրբեջան գործուղել "силы мобильного реагирования"և դրանք տևակայել այդ երկրում: Խոսքը գնում է արագ արձագանքման ուժերի տևակայման մասին և ոչ թե ռազմական բազաների, քանի որ Ադրբեջանի Միլի Մեջլիսը համապատասխան օրենք է ընդունել, ըստ որի արգելվում է օտարերկրյա ցանկացած երկրի ռազմական զինակայանների տնաբաշխումը: Վրաստանում էլ հարցերը լուծվելու են ԱՄՆ-ի և ՌԴ-ի փոխհամաձայնության արդյունքում: Այո, Հարավային Օսեթիային և Աբխազիային, կարծում եմ, ստիպելու, պարտադրելու են, որ ճանաչեն Վրաստանի տարածքային ամբողջականությունը, բայց դրա հետ անպայմանորեն ռուսական ռազմական կայանները կշարունակեն մնալ այնտեղ, ՆԱՏՕ-ի զինյալ ուժերի հետ զուգահեռ, որ ապահովեն այդ երկրների բնիկ ազգաբնակչության անվտանգությունը, առավել ևս, որ այդ չճանաչված հանրապետություններում ազգաբնակչության 70%-ից ավելին ունեն ՌԴ քաղաքացիություն: Նմանատիպ լուծումը պայմանավորված կլինի այն հանգամանքով, որ բացառվի Կոսովոյի օրինակի կրկնությունը, երբ էթնիկ սերբերից քչերն են մնացել, համատարած էթնիկական զտումներ են կատարվել այնտեղ ալբանացիների կողմից:

Հիմա, երբ գիտես այս հնարավոր զարգացումների մասին, երբ տեսակետդ ես հանրությանը հայտնում, ասում են, թե Գեղամյանը փոխել է իր աշխարհաքաղաքական հայացքները: Խելքներիդ ճյուն գա, եթե աշխարհն է փոխվում, բա աշխարհաքաղաքական հայացքները չփոխվե՞ն: Եթե վիճելի բան եմ ասում, ապա հակափաստարկներ բերենք: Իրենք գիտեն, որ հակափաստարկներ բերել չեն կարող, իսկ եթե բերեն, ժամուկես դասախոսություն կկարդամ: Գեղամյանն աշխարհաքաղաքական հայացքները փոխել է... Չի փոխել, Գեղամյանի աշխարհաքաղաքական հայացքները ծնվել են, սնվել են Հայաստանի Հանրապետությունում: (*Բուռն ծափահարություններ*):

Առաջիկայում նույնպես այս ելույթս աղավաղված կներկայացվի: Բայց մենք հնարը կգտնենք: Այս որ ձայնագրվում է, անպայման կգտնենք թերթում ամբողջությամբ հրապարակելու ճանապարհը: Բնականաբար, խոսքս կնենգափոխվի, որովհետև ոչ մի հակափաստարկով հանդես գալ չեն կարող, որովհետև իշխանավորները բացարձակապես ժամանակ չունեն աշխարհաքաղաքական գրականություն կարդալ: Դարդներն է կտրվել Զբիգնև Բժեզինսկուն կարդալ. ասես՝ Բժեզինսկի, կասեն՝ դա ո՞վ է: Էս է սրանց մակարդակը: (*Բուռն ծափահարություններ*):

Իրենց տկարամտությունը քողարկելու նպատակով՝ արդեն իսկ անցնում են անձնական վիրավորանքների, որը չեմ ներելու: Մտածում էի՝ ասեմ, թե չասեմ, որոշեցի ասել, որ դաս լինի: Հեռուստաէկրանից ոչ միայն վիրավորում են, հետո այդ վիրավորանքներով հաղորդումը կրկնում են, որպեսզի իմ հասցեին ուղղված հերյուրանքները մտնեն մարդկանց ենթագիտակցության մեջ: Սրանից մի երկու ամիս առաջ, էն ամառվա շոգ օրերին, ասացին հեռուստացույց նայի. ասի ի՞նչ կա: Ասացին, ինչ որ մեկն ասում է, որ ֆիզիկապես թույլ տղամարդ ես: Ասի, ա՜յ քեզ հաջողություն:

Միացրեցի, տեսա կնոջ անունով, տղամարդու դիմագծերով սեքսապատոլոգ է: Հեռուստաէկրանից. արդեն մտել է անկողինս և խոսում է ֆիզիկական թուլության մասին: Հիմա կանգնես, վիրավորես, կասեն լավ էլ դարդ է եղել, չվիրավորես՝ հա կտարածվեն: Ուրեմն, ուզում եմ ասել իր հոգևոր ուսուցիչներին, դաստիարակներին և այդ հեռուստահաղորդման պատվիրատուներին. այո՛, երբ տղամարդու արտաքինով, բայց կնոջ անունով դեմքեր եմ տեսնում, ես անկարող եմ դառնում, որովհետև պրեզիդենտական ապարատում չեմ աշխատում: (*Բուռն ծափահարություններ*):

Հիմա, թիվ 44 ընտրատարածքի խայտառակությունների մասին: Ուրեմն, եթե որևէ մեկին թվում է, որ դրանք պատահականություններ էին, չարաչար սխալվում է: Դա պրեզիդենտական ապարատում ծրագրված դավադրություն էր արդեն իսկ սեփական հենարանների հանդեպ: Որովհետև վերջիններս մի քիչ չափից ավելի էին փորձում, ուզում իրենք իրենց ինքնուրույն զգալ, և Քոչարյանը, ասես, ապացուցեց, թե տան տերն ով է: Բնականաբար, խոսքը ոչ թե մեր Հայաստան-տան մասին է, այլ քոչարյանական արքունիքի: Արդյունքում, 2 կողմերին էլ միտումնավոր թույլ տվեցին խայտառակ ընտրակնիքների գնալ, կաշառել, մասնավորապես, ընտրողներին: 2 կողմերին էլ: Եվ ասածս երբեք ու երբեք մերկապարանոց լինել չի կարող, որովհետև հենց այդ նույն Եղվարդի տարածքային մեր կազմակերպության նախագահ Պապիկ Մուրադյանը, որին մենք հեռացրեցինք կուսակցության շարքերից, ըստ էության, նախագահության նիստում խոստովանեց, որ այդ ընտրատարածքում գերիշխում է կաշառակերությունը: Այս մարդը, կներեք երևանյան բարբառի համար, իրեն դրել էր «շուստրիի» տև, որքան հասկացանք, 2 կողմից էլ փող էր վերցրել...

Դրանից հետո հանդես ենք գալիս հայտարարությամբ, ահազանգում ենք, անվանական ասում ենք, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներին մենք չենք վստահում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ասած ռուսի՝ "ни в зуб ногой", բացարձակապես, դրել ես, արի տար. մեռելի պես ձեն չի հանում: Ինչո՞ւ: Անվանական ենք ասում, չէ՞: Մարդու, որը մեր ընկերն է եղել, որն այս պայքարի ժամանակ 10 օր էլ վարչական կալանքի է ենթարկվել, հարկադրված էինք հեռացնել կուսակցու-թյունից, որովհետև չես կարող քարոզել մի բան, իրական կյանքում վարվել ճիշտ հակառակը: Եվ ոչ ոք չարձագանքեց: Եվ ամենախայտառակ ընտրակնիքներն արձանագրվել էին հենց մեր հիշատակած տնամասերում: Ծածկադմփոց արեցին: Ի՞նչն էր պատճառը, ինչո՞ւ սա չհանդիսացավ ինքնամաքրվելու ճանապարհ, մի հատ տեսնեին, թե ինչպես է ստացվում, որ ընտրվողներից մեկի օգտին տրված 2050 քվեաթերթիկներն անվավեր են ճանաչվել: Էդ ո՞նց է ստացվում: Ուզո՞ւմ էիք ասել, որ այդ մեկի օգտին քվեարկողներն այն աստիճան անգրագետ են, որ չգիտեն ինչպե՞ս քվեարկեն: Իսկ խնդիրը շատ ավելի պարզ է, քան կարող է առաջին հայացքից թվալ: Որովհետև այդ օրը, երբ իշխանավորները, ժողովրդական լեզվով ասած, թոզլամա արեցին, գնացին դատախա-զությամբ հարցաքննեցին, տեղամասային հանձնաժողովների ղեկավարներից մեկն էլ իր ցուցմունքում ուղղակիորեն գրել է, որ

իրեն պարտադրել են ընտրակնճիք անի՝ ասելով, որ թև ու թիկունք կհանդիսանան: Եվ երաշխիքներ տվողը շատ բարձրաստիճան պաշտոնյա է: Քոչարյանին էլ դա էր պետք: Բարաթը վերցրեց, դրեց դարակը: Դե հիմա դու կանգնի՝ ասա, որ իմպիչմենթի հարց կմտցնեմ Ազգային ժողովի քննարկմանը: Սա է ամբողջ կռիվը, դրանից հետո արդեն, երբ հանցանքի պահին բռնված մարդիկ ուղղակի ցուցմունք են տալիս բարձրաստիճան պաշտոնյայի դեմ, ապա վերջինս դառնում է Քոչարյանի ստրուկը, իրենց ստորը: Եվ հիմա արդեն որոշված է, թե ինչպես են այնտեղ լինելու ընտրությունները և, ցավն այն է, որ մեր ընկերներից, նաբայրներից 2-ը, զուտ և զուտ հայրենասիրական նկրտումներով, գնացին իրենց երկրացուն պաշտպանելու: Գնացին պաշտպանելու, բոլորն ասացին, ըհը, ուրեմն, «Ազգային Միաբանությունը» դատախազի թևին է պաշտպանում: Ո՛չ, դատախազի թևը չենք պաշտպանում, պարզապես ապարանյան ծագում ունեցող մեր 2 ընկերները պաշտպանեցին իրենց «զեմլյակին»: Արդյունքում իրենց՝ ապարանցիների, հանդեպ էլ ծայր աստիճան անազնիվ գտնվեցին, իրենց նկատմամբ էլ ծայր աստիճան ստոր գտնվեցին: Փաստորեն, թող ներվի ասել, մի ամբողջ հայրենասեր, կուռ, համախմբված ժողովրդի մի հատվածի պատվի, կամքի, թասիբի հետ խաղացին: Եվ մեծագույն ամոթ կլինի ապարանցիներին եթե այս խայծը կուլ տան: (*Բուռն ծափահարություններ*):

Ուրեմն, մեզ հասցեագրված մնադրանքներից մյուսն էլ այն է, թե ինչու ընդդիմադիրները, եթե այդքան սկզբունքային և հետևողական են, չեն մասնակցում կոռուպցիայի դեմ հայտարարված պայքարին: Հիմա ես էլ ուզում եմ հանդիպակաց հարցը տամ. ո՞վ է ձեր ձեռքը բռնել, ջրային վարկերի մսխված տասնյակ միլիոնավոր դոլարների գործը ինչի՞ չբացվեց: Ո՞վ է ձեր ձեռքը բռնել՝ դատահրավական համակարգի մսխված 5 միլիոն դոլարի հետևում կանգնածները ինչո՞ւ չբացահայտվեցին: Չէ ո՞ր այս ամենի մասին, հարգելի իշխանություն, Ձեր բարձրաստիճան ներկայացուցիչներն են ահազանգել: Թե՛ Ռուսաստանում, թե՛ այլ երկրներում բարի համբավ և անուն ունեցող Լևոն Մարկոս հայտնի ձեռներեցից ո՞վ է վերջապես 17 միլիոն դոլար կողոպուտ արել: Մարդը համարձակություն, քաղաքացիական խիզախություն է ունեցել այդ ամենի մասին բաց նամակով գրել «Հայկական ժամանակ» թերթում: Գնացեք հետքերով: Ո՞րը եղավ արձագանքը. պաշտպանության նախարարը գանգատվում է ասուլիսի ժամանակ, որ Լևոն Մարկոսը և Մարտին Հովհաննիսյանն իրենց ողջ կարիերան արել են շանտաժով և կաշառելով: Է, շանտաժով էին արել, այդքան վախկո՞տ էիք, բռնեիք: Է, եթե շանտաժն անցել է, կնշանակի, ուրեմն տեղ ունեին անելու: Եվ հետո ի՞նչ եք միամիտի տեղ դրել մի ողջ ազգի. Մարտին Հովհաննիսյանին փախցրել են Հայաստանի Հանրապետությունից նույն իշխանությունները: Ասև չէ, որ անհայտ կորել է: Հիմա ողջ մնքն ուզում են բարդել Լևոն Մարկոսի վրա: Ինչո՞ւ, որովհետև տղամարդը համարձակություն ունի, որովհետև չի հանդուրժում, որ 17 միլիոն դոլարի կողոպուտի է ենթարկվել, որովհետև այդ ամենի մասին հրապարակայնորեն ասել է: Պատասխանը, ո՞րն է եղել: Գրանատամյոտից մոսկովյան օֆիսն են գնդակոծել: Եվ դրանից հետո մեկ էլ կարդում ես՝ Կենտրոնական բանկի խորհուրդը գրում է, որ Լևոն Մարկոսը 250 միլիոն դոլարի վարկեր էր ստանալու

ամերիկյան ճանաչված մի բանկից, 200 միլիոն դոլար գերմանական մեկ այլ բանկից, մյուսից, մյուսից: Եվ, իբր, այդ ամենը կատարվելու էր խաբեությամբ: Ի՞նչ է, ուրեմն, բոլոր բանկերն ախմախ էին, չգիտեի՞ն, թե ում են գումար տալիս, հարյուրավոր միլիոն դոլարների գումարներով վարկավորում: Իհարկե, գիտեին: Բայց ինչո՞ւ և ինչի՞ց իշխանությունները սարսափեցին: Սարսափեցին, որովհետև աշխարհաճանաչ հզորագույն այդ բանկերը, եթե վարկավորում, կրեդիտավորում են այս կամ այն ձեռներեցներին, ապա իրենք նաև պաշտպանում են նրանց օրինական շահերը: Չեն թողնի, որ այդ ձեռներեցին ռեկետի ենթարկեն: Ահա սրանից սարսափեցին իշխանությունները: Ահա սա է պատճառը, որ փոխանակ հստակ ձևակերպված հարցերի պատասխանը տրվի՝ ո՞վ գողացավ այդ 17 միլիոն դոլարը, ժողովրդական լեզվով ասած, հարցը գցում են «պեչենու բաղերը»: Սա է սրանց հուշարը: Մինչդեռ ականջից հիշում ես հայտնի պատմությունը, էն, որ վանքից նկար են գողանում, Կոջոյանի նկարն են գողանում: Քննիչը գալիս հարցաքննություն է կատարում, հարցնում է՝ ո՞վ էր այդ օրն այդտեղ: Ներկայանում են հոգևորականները, հեռու իրենցից՝ Եզնիկ սրբազան, չգիտեմ, Մարտին սրբազան, սրբազան այսինչը, սրբազան այնինչը: Վերջը, էս քննիչը լավ մարդ է լինում, կանգնում, ասում է, որիդ խոսեցնում եմ՝ սուրբ ու սրբազան եք, նկարն ո՞վ գողացավ: Հիմա ես հարցնում եմ՝ Լևոն Մարկոսի 17 միլիոն դոլարն ո՞վ գողացավ: (*Բուռն ծափահարություններ*):

Բնականաբար, ակամայից հարց է առաջանում. լավ ի՞նչ անենք ստեղծված իրավիճակում: Ըստ որում, այս հարցն արդիական է հայերիս համար ոչ միայն այսօր, այլև արդիական է եղել 19-րդ դարում, 20-րդ դարում: Մնքս ի՞նչ թաքցնեմ՝ չալարեցի, վերընթերցեցի Չերնիշևսկու "Что делать" և Լենինի "Что делать" աշխատությունները: Եվ, իրոք, այդ հարցը Ռուսաստանում, հավանաբար, շատ արդիական հնչնություն է ունեցել և հարցի պատասխանն էլ եղել է միարժեք: Խոսքը, բնավ էլ ռուսաց թագավոր Ալեքսանդր 2-րդի հայտնի մակագրության մասին չէ, որը Չերնիշևսկու գրքի "Что делать" վերնագրի կողքին գրել է՝ "Руду копать": Հիմա, եթե ընդդիմությանը հարցնում են՝ ի՞նչ անել, ապա պատասխանը մեկն է. պայքարե՛լ: Ի՞նչ ձևով, ի՞նչ միջոցներով:

Հերթական անգամ դիմում եմ քաղաքական այն ուժերին, ովքեր սեփական պատասխանատվություն են զգում երկրի ապագայի նկատմամբ: Բոլորս պարտավոր ենք հանուն մեր երեխաների, հանուն մեր ապագայի համախմբվել: Գաղափարը մեկն է՝ ոչ թե Ռոբերտ Քոչարյանին, Սերժ Սարգսյանին հեռացնելը, ոչ, երկիրը տնտեսապես, սահմանադրական զարգացման դաշտ, որի պայմաններում վերջիններս Հայաստանում այլևս անելիք չեն ունենա: Ստեղծված իրավիճակում դա է եզակի ճանապարհը: Պարոն Քոչարյան, դիմում եմ կրկին ու կրկին անգամ, դիմում եմ ձեզ, դուք խրվել եք ծայրաստիճան: Ձեր անունը, ցավոք, եթե գործերն այսպես ընթանան, ողբերգական երանգներով է հիշվելու: Ես երբեք չեմ ցանկանա, որ Հայաստանի նորագույն պատմության ընթացքում, լինի դա առաջին նախագահը, լինի դա երկրորդ, թե գալիք

նախագահները, հիշվեն նման երանգներով: Ուստի, քանի դեռ ժամանակ կա, անհապաղ լուծարեք այս ապիկար Ազգային ժողովը, ինքներդ երաշխավորը դարձեք ազատ, արդար, ժողովրդավարական ընտրությունների: Ժողովուրդն այդ պարագայում կձեղավորի Ազգային ժողով, վերջինս էլ՝ կառավարություն, և հավատացնում եմ բոլորիդ և ձեզ՝ պարոն Քոչարյան, նախկինում գործած ձեր մեղքերի քավությունը զգալիորեն դա կլինի: Միաժամանակ դիմում եմ նաև նախորդ իշխանություններին. ամենևին հակված չենք ձեր գործունեության մեջ միայն և միայն վատը տեսնելու, մենք հասկանում ենք՝ միգուցե ձեր մղումները նս արդար ու ազնիվ են եղել, ինչպես նաև հասկանում ենք, որ ձեզանից շատերը չդիմացան իշխանության գայթակղությանը և արատավորվեցին անկախության առաջին տարիներին: Բայց հիմա գժտությունների ժամանակը չէ, որովհետև վերահաս վտանգն արդեն թակում է մեր դարպասները, լինի դա հյուսիսից, հյուսիս-արեղելքից, թե հարավից: Մենք դատապարտված կլինենք, նզովված կլինենք, եթե այս ամենը չգիտակցենք: Դիմում եմ իմ գործընկերներին՝ ընդդիմադիր դաշտից, բոլորս պարտավոր ենք, բառիս իսկական առումով, տոգորվենք և առաջնորդվենք միայն ու միայն համախմբման գաղափարով: Համարեք, որ դուք մեզնից լավն եք, դուք մեզնից հնհնակավոր եք, դուք մեզնից խարիզմատիկ եք, ձեզ ավելի շատ մարդիկ են հետևում, մենք ձեզ ծառա, միայն համախմբված հանդես եկեք և մի ասեք, որ գնացքից թռնելու ժամանակն է: Գնացքից ով թռել է, վաղուց չոլերում կոտորվել է: Շնորհակալություն: (*Բուռն, երկարատև ծափահարություններ*):

Իսկ հիմա սիրով կպատասխանեմ ինձ ուղղված ձեր հարցերին:

– Հարգելի պարոն Գեղամյան, դուք, իրոք, Իսպանիայում եք հանգստացել, թե՞ ոչ: Այս հարցն իշխանությունները վերջին ամիսներին շատ են չարչրկել: Ի՞նչ կասեք:

– Ժողովուրդ ջան, այս հարցը, իրոք, շատ է անհանգստացրել իշխանություններին: Ասեմ. հուլիսի 20-ին, այո, ճիշտ եմ հիշում, հուլիսի 20-ին մեկնել էի Վիեննա: Այնտև կարևորագույն հանդիպումներ եմ ունեցել ԵԱՀԿ կենտրոնական գրասենյակի պատասխանատու մի շարք մարդկանց հետ: Իշխանությունները, բնականաբար, այս ամենի մասին գիտեին, որովհետև հեռախոսներս լսում են. տանն ասած-չասածների մասին էլ գիտեն: Դրանից հետո, այո, մեկնել եմ Վալենսիա՝ կնոջս բարեկամի հարսանիքին: Ժողովուրդ ջան, նա ականավոր գիտնական է, գիտությունների դոկտոր, խորհրդատվական աշխարհահռչակ ֆիրմաներից մեկի ճանաչված դեմքերից է: Վալենսիայում հարսանիքի ենք մասնակցել, եկևեցում էլ պսակադրության արարողություն ենք կատարել: (*Ծափահարություններ*):

Ասեմ ավելին. իմ բարեկամներից մեկն էլ Իսպանիայի ճանաչված մեծահարուստներից է, Միջերկրական ծովում սեփական կղզի ունի, մի քանի օր էլ, ի հեճուկս մեր իշխանությունների, այնտեղ եմ հանգստացել: (*Ծափահարություններ*):

Միայն մի բան կար, որ մերոնց սրտովը չէր (ախր էլի մեր այս ապիկար իշխանություններին մերոնց եմ ասում). հանգստիս վայրում կազինո չկար, որ գային, նկարեին,

ասեին՝ էտ էլ ձեր Գեղամյանը: Ա՜յ, դա է, որ հիասթափեցրել է իշխանություններին: (*Ծափահարություններ*):

Ամռանը Հայաստան էր ժամանել ԵԱՀԿ-ում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ և լիազոր դեսպան Ստեֆան Մինիկեսը, որի նստավայրը Վիեննան է: Արձակուրդն ընդհատել էր՝ նպատակ ունենալով այցելել հարավկովկասյան հանրապետություններ: Հանդիպումներ էր ունեցել Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում: Ես խնդրում եմ խորհեք այդ մասին: Ուրեմն, խորհե՞ք՝ ինչ է նշանակում սա, ԵԱՀԿ-ն ի՞նչ աստիճանի կարևորություն է տալիս տարածաշրջանին, ի՞նչ աստիճանի կարևորություն է հատկացվում, մասնավորապես ԱՄՆ-ի կողմից տարածաշրջանին, որ դեսպանին արձակուրդի օրերին գործուղում են այստեղ: Բնականաբար, հանդիպում կայացավ նաև ընդդիմության հետ, մասնավորապես իմ և Արամ Սարգսյանի հետ (Արամը մեր շուրջ 2 ժամ տեղած հանդիպման վերջին կես ժամին հասցրեց մասնակցել): Սա էլ է մտահոգել և հունից հանել իշխանություններին, որովհետև, հավանաբար, պատճառահետևանքային կապ են տեսնում իմ այս հանդիպումների մեջ: Այո՛, հանգամանքների բերումով զորև ընկերներ և հարազատներ ունեմ և՛ Ռուսաստանի Դաշնությունում, և՛ Արևմուտքում. ոտքի վրա ամուր կանգնած, թափով մարդիկ են և ասում են՝ օր առաջ իշխանափոխություն արեք, մեր ողջ հզորությամբ գանք Հայաստանը ծաղկեցնենք: (*Ծափահարություններ*):

– *Ի՞նչ կասեիք ավանդների վերադարձման շուրջ իշխանությունների կողմից սկսած ճամարտակությունների մասին:*

– Ավանդների վերադարձման խնդիրը, բնականաբար, բոլորիս համար արդիական է: Այսօր էլ կան անհրաժեշտ երաշխիքներ և հնարավորություններ առանց նյութական որևէ ծախս անելու կրկնապատկել բյուջեի եկամտային մասը, կրկնապատկելով հանդերձ՝ եռապատկել բյուջետային աշխատողների աշխատավարձերը, թոշակները և, բնականաբար, տարեկան կտրվածքով 25-30 միլիարդ դրամ տրամադրել միայն և միայն խաբված ավանդատուների խնայողությունների վերադարձման համար: Կա այդպիսի ծրագիր, մենք այդ ծրագիրն ունենք, և այդ ճամարտակությունները, աճպարարությունները, որոնցով իշխանությունները կերակրում են մեր ժողովրդին, ասելով, թե, իբր, ընդդիմությունը ծրագիր չունի, չգիտի անելիքը, ոչ այլ ինչ է, քան խաբեություն: Ընդդիմության ցանկացած ղեկավար տևով մեկ ծրագիր է, տևով մեկ հանրագիտարան է: (*Ծափահարություններ*):

– *Սահմանամերձ գյուղերը դատարկվում են, մնացել են միայն կանայք, երեխաները և ծերերը: Արդյոք, միայն սահմանապահների ուժերով հնարավո՞ր է պաշտպանել մեր սահմանները:*

– Սահմանամերձ գյուղերի մասին տագնապ է հնչեցնում մեր ընկերը. տագնապը տեղին է: Ես ավելի զարհուրելի փաստերի եմ ականատես եղել, երբ գործընկերներիս հետ այցելել ենք սահմանամերձ գյուղերը: Միտումնավոր հրապարակավ այդ ամենի մասին չենք խոսում, որպեսզի վաղը, մյուս օրը իշխանությունները չբարբաջեն, թե բա որ ասում էինք, սրանք նրանց կողմից են: Սա է պատճառը: Բայց գալու է հատուցման պահը,

գալու է այն պահը, որ յուրաքանչյուրը պատասխան է տալու իր արած-չարածների համար, պատասխան է տալու իր չարագործությունների, իր սադրանքների համար, դա ակնհայտ է և, իրենք էլ գիտեն, գալիս է հատուցման պահը:

– Պարոն Գեղամյան, մենք կորցնելու բան չունենք, ինչ ունեինք-չունեինք խլեցին, իրավունքներս ոտնահարեցին, ստիպեցին տներս ծախեցինք, որպեսզի գոյություններս պաշտպանելու համար մի կտոր հաց ուտենք: Իրենք մեր դժվարությունների վրա միլիոններ ու միլիարդներ են դիզում: Բավական է: Հարկավոր է զենքի դիմել և ոչ թե գնալ սահմանադրական ճանապարհով:

– Այստեղ տեղին է, որ մեզ քննադատում են միայն և միայն սահմանադրական ճանապարհով իշխանափոխություն կատարելու մեր դիքորոշումների համար: Ժողովուրդ ջան, ես հասկանում եմ ձեր ցասումը, ես նաև հասկանում եմ՝ ինչ մեծագույն նվեր տված կլինենք գործող իշխանություններին, եթե գնանք այդ ճանապարհով, որովհետև նրանք ձախողել են ցանկացած հարց, թե ներքին քաղաքականության բնագավառում, թե արտաքին քաղաքականության: Նրանք, ցավոք, ձախողել են նաև Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման խնդիրը և հիմա ուզում են միտումնավոր, արհեստականորեն ապակայունացնել Հայաստանի Հանրապետությունում իրավիճակը, խառնաշփոթ դրություն ստեղծել երկրում, որից հետո մեկ էլ հայտարարեն, որ պետականության նավը սասանեցին, պետականությունը թուլացավ, իսկ թույլին հեշտ է ճնշել և պարտադրել ոչ հայանպաստ լուծումներ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցում: Սա է իրենց հաշվարկը: Եվ սա է, որ զերծ է պահում մեզ ավելի վճռական քայլերից, սա է, որ մեզ թույլ չի տալիս գնալ առճակատման ճանապարհով, որը հղի կլինի արյունահեղությամբ: Դեպքերի նման զարգացման պայմաններում նախորդ իշխանություններն արդեն իսկ կհայտարարեն. ժողովուրդ, տեսեք մենք այսքան ժամանակ իշխանության էինք, բայց երբեք ու երբեք զանգվածային արյունահեղություն տեղի չունեցավ, իսկ այս մարդիկ, հանուն իրենց պաշտոնների, ժողովրդին տարան սրի բերան քաշեցին: Այս բոլորը մտածել ենք, այդ բոլորի մասին խորհել և քննարկել ենք:

– Արտաշես Մամիկոնովիչ, ի՞նչ կարծիքի եք իշխանությունների կողմից Հայաստանի զինվորականներին Իրաք ուղարկելու ընդունած որոշման մասին:

– Հարցը պետք է բաժանել մի քանի մասի. այն, որ ահաբեկչության դեմ պետք է անողոք պայքար մղվի, ակնհայտ ճշմարտություն է: Բայց եկեք այլ կողմից, այլ տեսանկյունից նայենք. բարոյական ի՞նչ իրավունք ունի վարչակազմը, կրկնում եմ, ոչ թե ժողովուրդը, այլ վարչակազմը, որ որոշում ընդունի ահաբեկչության դեմ պայքար մղել այլ երկրում (բացարձակապես նշանակություն չունի, որ երկրում), երբ սեփական երկրում բարգավաճում է ահաբեկչությունը, երբ սեփական երկրում անպատիժ է մնում Պողոս Պողոսյանի սպանողը, անպատիժ է մնում հոկտեմբերի 27-ի կազմակերպիչը, անպատիժ են մնում այն ստահակները, որոնք զանգվածային ծեծուջարդի ենթարկեցին թե՛ ապրիլի 5-ին, թե՛ ապրիլի 12 – 13-ին մեր մարդկանց: Իրավ է աստվածաշնչյան հայտնի ասույթը, թե՝ «Ուրիշի աչքից շյուղ են ուզում հանել, սեփական աչքերում գերանը չեն տեսնում»:

Այս իշխանությունները, ցավով եմ ասում, չարիք են մեր ժողովրդի համար և, ինչպես մեծն Թումանյանը կասեր, «չարի վերջը գալու է»: (*Երկարատև, բուռն ծափահարություններ*):

– *Հարգելի պարոն Գեղամյան, Օլիմպիադայում մեր հավաքականի ելույթը խայտառակություն էր: Դա Ռոբերտ Քոչարյանի խայտառակությունն էր: Սոված ժողովուրդը սպորտով չի զբաղվի, սոված մարդը տուռնիկ չի խաղա: Էդ ինքը կարա և՛ տուռնիկ խաղա, և՛ լիժա քշի, և՛ կատեռ քշի: Առաջարկում եմ Ռ. Քոչարյանին պաշտոնից հանել և օլիմպիադա ուղարկել՝ առնվազն երեք մեդալի թեկնածու է:*

– Օլիմպիադայի հարցին, եթե անդրադառնալու լինենք, ուզո՞ւմ եք բանաձև ընդունենք, մեր ժողովրդի անունից Իշխան Զաքարյանից ներողություն խնդրենք, մեր սեփական մնքերն ասենք, որ մեծ էին այդ ձախողումների համար: Անամոթաբար կանգնում հաթաթա են տալիս բոլորիս, ասում են՝ ամեն ինչ արել ենք, իսկ որ շտանգիստներից մեկի մարզակոշիկները մեկը մյուսից երկու համարով մեծ են եղել, դրանում էլ է ընդդիմության մնքը. սա է սրանց խելքը, սա է սրանց հունարը: Օլիմպիադայի ձախողումն արդեկ իսկ կանխորոշված էր անցյալ տարվա նախագահական ընտրությունների նախաշեմին, երբ մեր ճանաչված մարզիկներին ներքաշեցին քաղաքականություն, երբ նրանցից ստնծեցին «Հաղթանակ» հասարակական կազմակերպությունը: Կազմակերպություն, որը ոչ այլ ինչով էր զբաղված, քան ընտրակնծիքներով, ընտրական տնամասերում ազգաբնակչությանը ահաբեկելով և ստիպելով, որ ժողովուրդը, իր կամքին հակառակ, քվեարկի Քոչարյանի օգտին: Ահա հենց այդ օրերին էլ արվեց առաջին քայլը Օլիմպիադայում մեր մարզիկների խայտառակ ձախողումների ճանապարհին:

– *Պարոն Գեղամյան, ի՞նչ կասեիք Ձեր խոստացած սյուրպրիզի մասին:*

– Այստեղ ակամայից կրկին ուզում եմ անդրադառնալ աստվածաշնչյան հայտնի ասացվածքին՝ «Աչքեր ունեցողը կտեսներ, ականջ ունեցողը՝ կլսեր»: Հատակեցնեմ միտքս: Ամառվա ընթացքում, երեք ամիս անընդմեջ մի ամբողջ պետական մեքենա ահաբեկել, շանտաժի է ենթարկել, վախեցրել, փորձել են կաշառել մեր ակտիվին՝ խնդիր ունենալով պարտադրել մեր ընտրացուցակի պատգամավորության թեկնածուներին հանդես գալ հայտարարությամբ, ասելով, թե դատապարտում են «Ազգային Միաբանություն» պատգամավորական խմբակցության բոյկոտը, որ իրենք մեծ պատրաստակամությամբ կստանձնեն պատգամավորական մանդատները, որոնցից իշխանությունները սպառնում էին զրկել «Ազգային Միաբանության» պատգամավորներիս: Չհաջողվեց: Սյուրպրիզն այն էր, որ «Ազգային Միաբանություն կուսակցության» ընտրացուցակի պատգամավորության 68 թեկնածուներ մեկ մարդու պես ստորագրեցին հայտարարություն, որում վճռականորեն դատապարտում են իշխանությունների հերթական սադրիչ գործողությունները և պնդում, որ ճանաչում են միայն «Ազգային Միաբանություն» խմբակցության ներկայիս պատգամավորների լիազորությունները և կհրաժարվեն ստանձնել իշխանությունների կողմից մեզնից բռնազավթած պատգամավորական լիազորությունները: Դրան հաջորդեց «Ազգային Միաբանություն» խմբակցության հայտարարությունը, ըստ որի, վերջիններս

վայր կդնեն մանդատները, եթե Գեղամյանին կամ յուրաքանչյուր ընդդիմադիր պատգամավորի զրկեն պատգամավորական լիազորություններից: Ավելին. անգամ իսկ անկախ պատգամավոր Հմայակ Հովհաննիսյանն իր խղճի պարտքն է համարում դիմել մեր ակտիվին, խորին շնորհակալություն հայտնել, որ մեր ընտրացուցակով դարձել է պատգամավոր, և ասել, որ ինքը երբեք ստորություն չի անի, ստորաքարշ չի դառնա և երբեք թե՛ կուսակցության, թե՛ խմբակցության որոշումների կատարումից այս հարցում չի խուսանավի: Արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ իշխանությունների անօրինականությունների հետևանքով «Ազգային Միաբանություն» պատգամավորական խմբակցությանը ձայն տված ավելի քան 125.000 ընտրողներ կարող են զրկվել իրենց ներկայացուցիչներից Ազգային ժողովում, ինչը սահմանադրական պահանջների և ընտրական օրենսգրքի կոպիտ ոտնահարման նոր, վառ օրինակ կհանդիսանա: Եթե այս ամենը հայտնի թերթի լրագրողի համար սյուրպրիզ չէ, ապա, համոզված եղեք, Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի և նրանց մանկլավիկների համար լավ էլ սյուրպրիզ է. երեկոյան գնացեք շտապօգնության հիվանդանոցներ՝ կտեսնեք արյան ճնշման բարձրացման քանի կանչ կլինի «թագավորական արքունիքից»: (*Բուռն, երկարատև ծափահարություններ*):

«Իրավունք», 17 – 23.IX.2004:

“Нашу волю подтачивают ложь и лицемерие”, – заявил в своем выступлении на сессии ПАСЕ депутат НС РА Арташес Гегамян

Господин Председатель, уважаемые коллеги!

Хочу выразить благодарность господину Адриану Северину за актуальный доклад. Разделяю Вашу оценку в отношении того, что демократия сегодня переживает опасный кризис.

Есть ли наша вина в этом и какова наша ответственность? На нынешней сессии ПАСЕ большое внимание было уделено вопросам предотвращения угрозы терроризма, защиты демократических свобод и прав человека в странах-членах Совета Европы. В выступлениях ораторов неоднократно осуждались террористические атаки: на торговый центр Нью-Йорка, в Испании, Стамбуле, Эль Фаллудже, Москве и Беслане... В ходе, бесспорно, полезных обсуждений порой складывалось впечатление, что мы почему-то обходили стороной возможные цивилизационные корни этой чумы XXI века.

Никто из выступавших ораторов не смог привести хотя бы один пример официального осуждения преступлений террористов со стороны шиитских, суннитских, ваххабитских центров Ислама. Никто из террористов именем Корана так и не был заклеймен “шайтаном”. А ведь от рук террористов погибли и сотни правоверных мусульман, христиане, иудеи... Что это? Новая редакция “Заговора равнодушных” Бруно Ясенского? Или это сбывающиеся пророчества Сэмюэля Хантингтона, описанные им в ставшей политико-футурологическим бестселлером книге “Столкновение цивилизаций”? А может, это своего рода кара за неуслышанный призыв президента Исламской Республики Иран Мохаммада Хатами начать “Диалог цивилизаций”?.. Что же нам мешает преодолеть терроризм, установить подлинно демократические ценности в мире! Отсутствие воли, недостаток смелости, скудость знаний...? Думаю, что нет. Нашу волю в этой судьбоносной борьбе подтачивают ложь и лицемерие, проявления

которых мы нередко наблюдаем и здесь на ПАСЕ, когда ее высокая трибуна используется для тиражирования лжи.

Наш коллега из Азербайджана договорился до того, что обвинил Армению в терроризме. Его выпады в наш адрес иначе как проявлением кощунства к памяти сотен и сотен безвинно убиенных и заживо сожженных армян в Сумгаите, Баку и Кировабаде не назовешь. Видимо, кое-кого и поныне вдохновляет сатанинское высказывание Адольфа Шикльгрубера, воскликнувшего: "Кто сейчас вспоминает о резне армян в оттоманской империи?" — что по существу стало прологом Холокоста. И после всего пережитого армянами в Азербайджане без зазрения совести тот же оратор рядится в тогу праведника и скорбит по погибшим от рук террористов израильтянам. Что это, если не лицемерие. Или как иначе охарактеризовать то, что детям, родившимся 16 лет назад в свободном, независимом де-факто Нагорном Карабахе и в этом году окончившим школы и поступившим в университеты, из Страсбурга внушают, что они живут не на своей земле, не на своей Родине, где их предки жили еще со времен Римской империи. Более того, оскорбляют их родителей, обзывая оккупантами. И дети невольно задумываются над тем, как несправедливо устроен мир, если право говорить и писать на родном языке, справлять свадьбу в Апостольской церкви, как и подобает потомкам самой древней государственной христианской цивилизации, расценивается как проявление агрессии. А Азербайджан, который на протяжении десятилетий проводил политику государственного терроризма в отношении армян, с трибуны ПАСЕ представляется как жертва агрессии.

Господин Председатель! Дворец Совета Европы, несомненно, красивое здание, но страсбуржцам оно не заменит городского Кафедрального собора. Думаю, господин Питер Шиддер согласится, что этот Дворец для жителей Вены не заменит Собора Святого Стефана, а Терри Дэвис, кажется, не станет отрицать, что лондонцам он не заменит Собора Святого Петра и уж тем более всем нам — собора Святого Петра в Ватикане.

Каждый из нас является служителем Дворца Совета Европы, и нашими деяниями мы имеем шанс превратить его в духовный храм третьего тысячелетия, излучающий во всей Европе идеи демократии, свободы, милосердия, сострадания и гуманизма. И только в этом случае наше общеевропейское парламентское семейство может в духовном плане претендовать на "Святое семейство XXI века", архитектурное воплощение которого вот уже на протяжении целого столетия возводится в Барселоне по проекту великого Антонио Гауди. И тогда наши благодарные потомки, проходя

мимо Дворца Совета Европы, помянут добрым словом и нас, как мы помним и чтим память епископа Вернега Гамбургского и Конрада Кюнебургского, герцога Бабенбергера Генриха II, Кристофера Рена, я уже не говорю о Браманте и Сангало, гениальных Микеланджело и Рафаэле, обессмертивших себя созданием величественных соборов в Страсбурге, Вене, Лондоне и Риме. И да воплотятся наши мечты и чаяния в добрые дела, которые восславят нас до скончания века и во веки веков.

Арташес Гегамян

Армения, фракция Европейские народные партии
Парламентской Ассамблеи Совета Европы
Страсбург, 8 октября 2004 г.

"Голос Армении", 12.X.2004.

Աշխարհաքաղաքական զարգացումները և Հայաստանը կամ Արտաշես Գեղամյանի հրապարակային դասը իշխանություններին

Հոկտեմբերի 16-ին ՍԻՄ-ի «Ազդակ» ակումբի լեփ-լեցուն միջանցքներում և դահլիճում հավաքված մարդկանց բուռն ողջույնների ներքո սկսվեց «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ, ԱԺ «Ազգային Միաբանություն» խմբակցության ղեկավար Արտաշես Գեղամյանի հանդիպումը լրագրողների հետ: Վերջինս ելույթ ունեցավ «Աշխարհաքաղաքական զարգացումները և Հայաստանը» թեմայով: Ընթերցողների համար ելույթում արծարծված հարցերը, կարծում ենք, չափազանց հրատապ, հետաքրքրական և բովանդակալից կլինեն, իսկ իշխանությունների համար՝ խիստ ուսանելի: Հատկապես Եվրոպայի անվտանգության և համագործակցության հանձնաժողովի հոկտեմբերի 13-ի զեկույցից հետո, որում տրված են ՀՀ իշխանություններին դատապարտող գնահատականներ: Ստորև ներկայացնում ենք Ա. Գեղամյանի ելույթի համառոտ շարադրանքը:

Խնդրո առարկա թեմայի ինչ-ինչ հարցերի շուրջ առիթներ եմ ունեցել արտահայտվելու: Իսկ այսօր փորձեմ այդ հարցերը վերլուծել ամբողջության մեջ: Ահավասիկ, արդյոք 21-րդ դարը կլինի քաղաքակրթությունների բախմա՞ն, թե՞ երկխոսության դար: Երբ 1993 թ. աշխարհաքաղաքագետ Սեմյուէլ Հանտինգտոնը "Foreign Affairs" պարբերականում հրապարակեց իր «Քաղաքակրթությունների բախում» հոդվածը, որը հետագայում քաղաքական բեստսելլեր դարձավ, շատ ու շատ երկրների քաղաքական լիդերներ (ի տարբերություն քաղաքագետների) պատշաճ լրջությամբ չընդունեցին այդ աշխատությունը: Սակայն աշխարհում ընթացող զարգացումները ցույց տվեցին, որ, այո, իրոք, շատ հնարավոր է, որ եթե քաղաքակիրթ համայն մարդկությունը դրանցից ճիշտ հետևություններ չանի, ապա տեղի կունենա քաղաքակրթությունների բախում: Վերջինիս մասին առաջին անգամ արդեն պաշտոնական մակարդակով խոսվեց 2001 թ. սեպտեմբերի 11-ի զարհուրելի ահաբեկչությունից հետո: Դրան անմիջապես հաջորդեց Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մոհամմադ Խաթամիի վերլուծական հայտնի հոդվածը (որը թարգմանաբար տպագրվեց մոսկովյան «Նեզավիսիմայա գազետա» թերթում), ուր նա կոչ էր անում սկսել քաղաքակրթությունների երկխոսություն՝ գիտակցելով և, փաստորեն, ընդունելով, որ կա քաղաքակրթությունների բախման վտանգ:

Եթե այս տեսանկյունից փորձենք վերլուծել տարածաշրջանային հնարավոր զարգացումները և Հայաստանի դերակատարությունը դրանում, իսկ ավելի ճիշտ կլինի ասել՝ Հայաստանի անվտանգության ապահովման խնդիրները, ապա կհանգենք անպատասխան մնացած չափազանց լուրջ հարցադրումների: Քանի որ հենց այդ քաղաքակրթությունների սահմանագծում դարեր ի վեր գտնվող մեր երկիրը կրկին հայտնվել է մեծ տերությունների շահերի բախման կիզակետում: Ասես թե Հայաստանը քրիստոնեական աշխարհի ֆորպոստն է իսլամական աշխարհի ծոցում: Աշխարհ, որը, հիշեցնեմ, տարածվում է Ջիբրալթարից մինչև Խաղաղ օվկիանոս՝ Մարոկկո, Ալժիր, Թունիս, Լիբիա, Եգիպտոս, Մերձավոր Արեղելքի երկրներ, Թուրքիա, Իրան, ապա Պակիս-տան, մինչև Մալայզիա: Ավելին, տևեկանքի համար ասեմ, որ ներկայումս աշխարհում իսլամը դավանող մարդկանց թիվը կազմում է 1 միլիարդ 300 մլն: Վիճակագրությունը հաստատում է, որ միայն Ֆրանսիայում բնակվում է 5 միլիոն մահմեդական, Գերմանիայում՝ 3 միլիոն, մինչդեռ անլեգալների թիվը հասնում է շուրջ 5 միլիոնի, Մեծ Բրիտանիայում՝ 1,5 միլիոն: Մահմեդականների թիվը զգալիորեն ավելացել է Հոլանդիայում, Բելգիայում, Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում, մասնավորապես, շեշտված եմ այս թիվն ասում, Հունաստանի Հանրապետությունում, ըստ փորձագետների գնահատականի, բնակվում է շուրջ 1 միլիոն մուսուլման: Ուշագրավն այն է, որ Եվրամիության անդամ- երկրներում գնալով այդ թիվն աճելու է, ավելին, որոշ վերլուծաբանների գնահատականներով 2050 թ. բնիկ ազգաբնակչությունը կրճատվելու է շուրջ 14%-ով, և դա այն դեպքում, երբ այստեղ բնակվող իսլամ դավանողների թիվը շեշտակի աճի միտում ունի՝ հասնելով ազգաբնակչության 40-50%-ի: Եվ այս ամենը դեռ այն պայմանում, եթե Թուրքիան, որի ազգաբնակչությունը, ինչպես գիտենք, արդեն 70 միլիոն մարդու է հասնում, չանդամակցի Եվրամիության երկրներին:

Վերոշարադրյալը կարևորվում է հետևյալ համատեքստում: «Իսլամական համաժողով կազմակերպությունում» ընդգրկված շուրջ 50 երկրներ, որտեղ բնակվում է ավելի քան 800 մլն մարդ, ոչ վաղ անցյալում Պուտրաջայայում (Մալայզիայի պաշտոնական երկրորդ մայրաքաղաքն է) կայացած լիագումար համագումարի ժամանակ առանձնահատուկ նշեցին Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը վերահաստատելու իրենց պատրաստակամությունը: Եվ հետաքրքրականն այն է, որ համագումարում անողոք քննադատության թիրախ դարձավ նախ Իսրայելը, ապա Հայաստանը: Համագումարում ընդունված բանաձևում էլ գրվեց, որ Հայաստանի Հանրապետությունն ագրեսիա է գործել, որի արդյունքում բռնազավթել է Ադրբեջանի 20% տարածքը և 1 միլիոն մարդ դարձել է փախստական: Այս պարագայում աչքի առաջ ունենալով իսլամական համերաշխության այդ գործոնի առկայությունը, բնականաբար, մենք պետք է վերլուծենք գերտերությունների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ռուսաստանի Դաշնության և Եվրամիության անդամ-երկրների, քաղաքական հնարավոր քայլերը մեր տարածաշրջանում: Այդ առումով էլ ձեզ հիշեցնեմ անչափ հետաքրքիր հետևյալ իրողությունը: Այսպես, Եվրոպայում ԱՄՆ-ի զինված ուժերի փոխհրամանատար,

ռազմաօդային ուժերի գեներալ Չառլզ Ուոլդը, որը, ի դեպ, այս տարի 2 անգամ եղել է Բաքվում, Վաշինգտոնում՝ սենատի շենքում, գումարված հատուկ խորհրդակցության ժամանակ, խոսելով Եվրոպայում ամերիկյան ռազմական խմբավորման վերադիրքավորման մասին, մասնավորապես ասել է. «*Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը ներկայումս Կասպից ծովի նավթային էներգետիկ ռեսուրսների, ահաբեկչության հնարավոր վտանգների, զենքի անօրեն վաճառքի և թմրանյութերի տարածման պատճառով այժմ ճանաչվում են աշխարհաքաղաքական նոր առանցք*»: Նրա խոսքերով՝ Ադրբեջանում ամերիկացիները պարեկություն կանեն և կապահովեն Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի անվտանգ շահագործումը: Ի դեպ, դա անուղղակիորեն հաստատել է նաև ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովի հետ Սանկտ Պետերբուրգում վերջերս կայացած պաշտոնական հանդիպման ժամանակ: Անշուշտ, այս ամենը բաց տեղեկատվություն է, որոնց մասին եղել են պաշտոնական հաղորդումներ: Ասածս ընդունենք ի գիտություն: Այս ֆոնի վրա հետաքրքրականն այն է, որ Հայաստանի Հանրապետությունը «Կոլեկտիվ անվտանգության պայմանագիր կազմակերպության» անդամ է (որին չեն անդամակցում ո՛չ Ադրբեջանը և ո՛չ էլ Վրաստանը)՝ Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ղրղզստանի հետ: Հասկանալի է, որ այդ պայմանագրի համաձայն, թերևս, այսօր, երաշխավորվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանվածությունը արտաքին հնարավոր ոտնձգություններից:

Գաղտնիք չէ, որ 21-րդ դարում բարեկեցիկ կյանքով կապրեն այն պետությունները, այն երկրները, որոնք կտիրեն էներգետիկ ռեսուրսներին՝ առաջի հերթին նավթին և գազին: Ահա թե ինչու ենք կարևորում այն հանգամանքը, որ տասը տարի առաջ Հեյդար Ալիևի կողմից վավերացվեց, ինչպես քաղաքական գրականության մեջ հիմա նշվում է, «Դարի գործարքը», համաձայն որի կառուցվում է 1767 կմ երկարությամբ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարը: Ըստ որում, 2005 թ. փետրվար ամսին վրացական հատվածն ամբողջությամբ պատրաստ կլինի շահագործման, մարտ ամսին կշահագործվեն թուրքական և ադրբեջանական հատվածները, իսկ ապրիլին արդեն այդ նավթատարը՝ 50 միլիոն տոննա տարեկան հզորությամբ, պատրաստ կլինի Միջերկրական ծովի Ջեյհան նավահանգիստը տնափոխել հիշատակված նավթաքանակը: Վերջերս «Իզվեստիա» թերթի 2 էջը նվիրված էր առաջիկա տասնամյակում Ադրբեջանի Հանրապետության հնարավոր զարգացումներին: Ի թիվս մտահոգություն առաջացնող այլ հարցերի, թերթի էջերում հանդես է եկել այդ երկրի պետական նավթային ընկերության պրեզիդենտ Նաթիգ Ալիևը, որի տեսակալն էր մինչև վարչապետ ու պրեզիդենտ դառնալը Իլհամ Ալիևը: Երբ կարդում ես Ադրբեջանում սպասվող զարգացումների, դրանք բնութագրող ցուցանիշների մասին, ապա համոզվում ես, որ չափազանց լուրջ մարտահրավերների առաջ է կանգնած Հայաստանը, որովհետև նավթի և գազի պաշարները զգալի առավելություններ են խոստանում Ադրբեջանին: Մասնավորապես, այսօր իսկ Ազերի, Չիռակ, Գյունեշլի հանքավայրերի հետախուզված նավթի պաշարները

կազմում են 511 միլիոն տոննա, մինչդեռ, փորձագետների գնահատմամբ, Շախդենիզի նավթահորերի պոտենցիալ պաշարները շուրջ 2 միլիարդ տոննա է, էլ չեմ խոսում այստեղ հետախուզված գազի կոնդենսատի 1 տրիլիոն խորանարդ մետր հզորագույն պաշարների մասին: Վերջերս ևս մեկ նման հանքավայր են հայտնաբերել՝ «Զաֆար-Մաշալ», որի հետազոտված պաշարները դարձյալ կազմում են 1 տրիլիոն խորանարդ մետր գազի կոնդենսատ և շուրջ 140 մլն տոննա նավթ: Եվ այս ամենին գումարվում է Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի կառուցումը, որը նույնպես ընթացքի մեջ է: Ադրբեջանն ունի նավթային հիմնադրամ, որտեղ արդեն իսկ կուտակվել է 1 միլիարդ դոլար: Անցած 10 տարվա ընթացքում նավթարդյունաբերության մեջ կատարված ներդրումները կազմել են 7,5-8 միլիարդ դոլար, ըստ որում, սարքավորումների ձեռքբերման համար Ադրբեջանի Հանրապետությունը մեկ մանաթ անգամ չի ծախսել՝ արդեն ստանալով 1 միլիարդ 900 միլիոն դոլարին համարժեք մաքուր եկամուտ: Արդյունքում աշխարհի տրանսազգային նավթ մշակող 10 խոշորագույն կորպորացիաներ՝ ամերիկյան, բրիտանական, նորվեգական, ֆրանսիական, թուրքական, իրանական, այստեղ կատարել և կատարում են խոշորածավալ ներդրումներ ու առաջիկա տասնամյակների ընթացքում ակնկալում են ստանալ մեծ շահույթներ: Ինչու այս շարքում հիշատակեցի նաև Իրանին ու Ֆրանսիային, որովհետև այս երկրների հետ, բոլորս էլ գիտենք, Հայաստանն ունի բարիդրացիական, բարեկամական սերտ հարաբերություններ, որոնք, ավա՞ղ, հագեցած չեն տնտեսական խոշորածավալ համատեղ ծրագրերով: Այստեղ առանձնահատուկ ուզում եմ նշել իրողություն դարձած և այն փաստը, որ մեր անմիջական հարևանները՝ Վրաստանը, Ադրբեջանը և Թուրքիան, իրար հետ ունեն կենսական նշանակության տնտեսական շահեր, որոնք պայմանավորված են վերոհիշյալ նավթատարի և գազատարի շահագործմամբ, ինչն էլ հիմք կհանդիսանա ռազմաստրատեգիական դաշնակիցներ դառնալու համար:

Եվ երբ այս ամենը գիտես, և գիտես նաև, որ Ռուսաստանի Դաշնությունը քաջատեյակ է, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի լիարժեք շահագործելու պայմաններում Ադրբեջանից՝ Կասպից ծովից Նովոռոսիյսկ գնացող նավթատարը, փաստորեն, թերբեռնված կլինի՝ ՌԴ-ին հասցնելով շոշափելի տնտեսական վնասներ, ապա ենթադրելի է, որ տարածաշրջանում այս գործոնով պայմանավորված հնարավոր զարգացումները կարող են լինել էլ ավելի մտահոգիչ: Այս համատեքստում էլ վերհիշենք, թե Ռուսաստանի շահերի դեմ ինչ քաղաքականություն վարեց Թուրքիան ոչ վաղ անցյալում: Անգամ իսկ մեղմ քամիների և ալեկոծության դեպքում արգելում էր Բոսֆորի նեղուցով նավագնացությունը՝ պատճառաբանելով, թե էկոլոգիական աղետի վտանգ կարող է առաջանալ: Արդյունքում Ռուսաստանը հարյուրավոր միլիոն դոլարների վնաս կրեց, տուգանվեց, որովհետև չկարողացավ կատարել իր պայմանագրային պարտավորությունները, այն է՝ Նովոռոսիյսկից նավթը ժամանակին չհասցրեց պարտնյոր երկրների նավահանգիստներ: Այստեղ հարկ է աչքի առաջ ունենալ նաև այն հասկանալի շահագրգռվածությունը, որ ունի Ռուսաստանը Կասպից ծովի և, մասնավորապես, ղազախական նավթի որոշակի քանակը համաշխարհային շուկա իր տարածքով անցնող

նավթատարով արտահանելու հարցում: Իսկ թե ինչ լծակ կկիրառվի Ռուսաստանի Դաշնությունը տարածաշրջանային հնարավոր զարգացումներում իր կենսական շահերը պաշտպանելու համար, յուրաքանչյուրս կարող ենք յուրովի պատկերացնել:

Հարավային Կովկասում իրենց հետաքրքրություններն ունեն (և դա պատմականորեն միշտ եղել է) Եվրամիության երկրները ևս, որովհետև, ինչպես հիշատակեցի, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան որոշակի ներդրումներ են արել տարածաշրջանում, որոշակի ասելով՝ հարյուրավոր միլիոնները գերազանցող և, բնականաբար, նրանք էլ պաշտպանելու են իրենց շահերը:

Ահա այս պարագայում է, որ Հարավային Կովկասում խաչվում են Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Եվրամիության, Իրանի Իսլամական Հանրապետության և Թուրքիայի շահերը: Եվ, գիտակցելով այս ամենն ու տեսնելով Հայաստանի արտաքին քաղաքականության դրսևորումները, ապա, ասած Հակոբ Պարոնյանի, չգիտես՝ խնդաս, թե լաս: ՀՀ-ում, անկախության 14-րդ տարում, ցավոք, լուծվում են միայն և միայն իրավիճակային խնդիրներ, ավելին, այնպիսի հարցերի մեջ են, թող ներվի բառիս համար, քթները խոթում, որ բացարձակապես իրենց գործը չէ: Մասնավորապես, նկատի ունեմ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցելությունը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, երբ հայկական կողմը հայտարարում է, որ ճանաչում է Թայվանը որպես Չինաստանի անքակտելի մաս, իսկ մյուս կողմն ընդամենը նշում է, որ կողմնակից է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման գործընթացին, էլ չենք ասում, որ օրեր անց էլ երկրի բարձրաստիճան պաշտոնյայի շուրթերով հայտարարում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչման մասին և ոչ ավելի:

Ըստ այդմ, մենք պետք է չափազանց զգոն և ուշադիր լինենք՝ հաշվի առնելով նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ու Հնդկաստանի՝ գերտերություններ դառնալու լրջագույն հնարավորությունները, ինչը խանդով, էլ չեմ ասում տագնապով է ընդունվում վերը հիշատակածս գերտերությունների կողմից ևս: Փորձագետների պնդմամբ, այսօր արդեն իսկ Չինաստանն իր արդյունաբերական արտադրանքի ծավալով գերազանցել է անգամ Ամերիկայի Միացյալ Նահանգներին: Այո, ես չսխալվեցի: Եթե Միացյալ Նահանգների տարեկան համախառն ներքին արդյունքը մոտենում է 11 տրիլիոն դոլարի, Չինաստանինը կազմում է շուրջ 6 տրիլիոն դոլար, ապա ԱՄՆ-ի համախառն ներքին արդյունքում նյութական արտադրանքը կազմում է համախառն ներքին արդյունքի շուրջ 25%-ը, մինչդեռ Չինաստանում՝ 67%-ը: Այսինքն՝ Չինաստանի համախառն ներքին արդյունքում նյութական ապրանքային արտադրանքի ծավալը կազմում է շուրջ 4 տրիլիոն դոլար, այն դեպքում, երբ ԱՄՆ-ում այդ նույն ցուցանիշը չի գերազանցում 3 տրիլիոնը:

Այս ամենի հնարավոր զարգացումները կհանգեցնեն այն բանին, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ռուսաստանի Դաշնությունը, Եվրամիության անդամ-երկրները նույնպես յուրովի վերաբերմունք կդրսևորեն թեկուզև նույն Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի շահագործմանը, հաշվի առնելով այն, որ Չինաստանը 2010 թ. տարեկան

կտրվածքով 250-ից 300 միլիոն տոննա ներկրվող նավթի պահանջարկ կունենա: Եթե նախկինում այդ երկիրը նավթի պահանջարկը բավարարում էր հիմնականում Պարսից ծոցի երկրներից, ապա ներկայումս, հասկանալի պատճառներով, դա նվազելու միտում կունենա և, կամա թե ակամա, մեծանալու է կախվածությունը Ռուսաստանից, Ղազախստանից և Ադրբեջանից ներկրվող նավթի ծավալներից: Եվ պատահական չէ, որ վերջերս Վլադիմիր Պուտինը, երբ պաշտոնական այցով եղավ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում՝ բանակցությունների առանցքը դարձավ Ռուսաստանից Չինաստան նավթային մատակարարումների պայմանավորվածությունների ձեռքբերումը: Ռուսական պաշտոնական լրատվամիջոցներն այդ կապակցությամբ արդարացիորեն հայտարարեցին, որ Չինաստանի զարգացման բանալին մեծապես պայմանավորված է Ռուսաստանով:

Ահա, թերևս, սրանք են աշխարհաքաղաքական այն հնարավոր զարգացումները, որոնք սպասվում են մեր տարածաշրջանում: Եվ այս բարդ իրավիճակում էլ դատապարտելի է, որ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է սազանդարություն հիշեցնող կոմպլեմենտար կոչվող քաղաքականություն: Այս ամենից ելնելով՝ վարչակազմը պետք է ծանր ու թեթև աներ, պարզեր, թե որն է մեր ազգային շահը և հռչակեր իր արտաքին քաղաքական դոկտրինը, որն էլ կբխեր ազգային անվտանգության հայեցակարգից: Դրան մենք, ցավոք, այդպես էլ ականատես չևանք:

Կարծում եմ, որ հարց կծագի. իսկ Ղարաբաղի հիմնախնդրի լուծումները կա՞ն և ինչպիսի՞ն են դրանք: Կարծում եմ, որ այսպես, թե այնպես Ռուսաստանը և Ամերիկայի Միացյալ Նահանգները համաձայնության կգան հետխորհրդային նորանկախ երկրներում ծագած կոնֆլիկտների հանգուցալուծման շուրջ: Դրա հետ, գնալով ավելի շոշափելի է դառնալու նաև Եվրամիության ու Եվրախորհրդի դերակատարությունն այս գործում, որի առհավատչյան Թերի Դևիսի հայտնի զեկույցն է (զեկույց, որի վտանգավոր հետևանքներն իշխանություններն այդպես էլ համառորեն չեն ցանկանում տեսնել):

Օրեր առաջ լրատվական հնհնակավոր այնպիսի գործակալություն, ինչպիսին «Ասոշիէյթեդ պրեսն» է, տնեկատվություն տարածեց, ըստ որի առաջիկայում Ադրբեջանի տարածքում կտեղակայվեն մոբիլ արձագանքման ամերիկյան ռազմական ուժերը: Դրանք ամենից առաջ կոչված են լինելու ապահովել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի անվտանգ շահագործումը: Բայց տեղին է հիշել ելույթիս սկզբում մեջբերված գեներալ Չառլզ Ուոլդի խոսքերը, որ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերի առանցք հայտարարելու դրդապատճառներից են եղել նաև այդ տարածքով թմրանյութերի հնարավոր փոխադրման և զենքի անօրեն վաճառքի հետ կապված խնդիրները: Կարելի է ենթադրել, որ հիշատակված հարցերի առկայությունը պայմանավորվում է Իրանի Իսլամական Հանրապետության գործոնով, ակնարկն էլ ուղղված է հենց այդ երկրին և ոչ թե Թուրքիային, քանի որ վերջինս ԱՄՆ-ի ռազմաստրատեգիական հիմնական դաշնակիցն է այս տարածաշրջանում, ՆԱՏՕ-ի անդամ-երկիր: Ուստի, ամերիկյան մոբիլ արձագանքման ռազմական ուժերի մուտքն

Աղրբեջան՝ նավթատարի և գազատարի անվտանգ շահագործումն ապահովելուց զատ, թերևս, լուծելու է նաև իրանական սահմանի վերահսկողության հարցը: Իսկ դա հնարավոր կլինի միայն այն պարագայում, եթե այդ ուժերը տեղակայվեն Ղարաբաղի ինքնապաշտպանության բանակի հսկողության տակ այսօր գտնվող Զանգելանի, Ջեբրայիլի և Ֆիզուլու շրջաններում: Այսինքն՝ Մնրու շրջանում տեղակայված ռուս-հայկական սահմանապահ զորամիավորման անմիջական հարևանությամբ: Չմոռանանք Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված ռուսական ռազմական կայանների մասին ևս...

Այս իրողությունները, նաև Աբխազիայում և Հարավային Օսեթիայում հնարավոր զարգացումները հրամայական կդարձնեն տարածաշրջանում եղած կոնֆլիկտների հանգուցալուծումները գտնելու հարցը: Կրկնեմ. կարծում եմ, որոշիչ կլինեն ԱՄՆ-ի և Ռուսաստանի Դաշնության դերակատարությունները, Եվրամիության օրըստօրե արժեքավորվող խոսքը: Այստեղ չպետք է թերագնահատենք Թուրքիայի դերը և, ըստ իս, արդարացված չէ, երբ մենք, տուրք տալով զգացմունքայնությանը, գերագնահատելով մեր կշիռը, խառնվում ենք այն հարցերի մեջ, որոնց լուծման բանալին մեր ձեռքում չէ: Մասնավորապես, ի նկատի ունեմ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցելու հարցը, ինչի մասին այսօր իրենց «հնինակավոր» կարծիքը միայն ծույլերը չեն արտահայտում: Պետք է հասկանանք՝ այդ հարցի լուծումը, ավա՞ղ, պայմանավորված չի լինելու Հայաստանի կողմից արդարացիորեն բարձրացվող հիմնավորումների հետ. խոսքն առաջին հերթին Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման և կորուստների փոխհատուցման մասին է: Հայաստանը դարձյալ կարող է, ըստ իս, վտանգավոր դերակատարում ունենալ այս հարցում գերտերությունների կողմից վարվող, սակայն մեր իշխանավորների համար անհասանելի քաղաքական այդ բարդ փաստանսում:

Այսպիսով, ակնհայտ է, որ տարածաշրջանում կիզակետված են Եվրամիության, ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Իրանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական ու կենսական շահերը: Եվ ամենևին պատահական չէր, որ ելույթումս հիշատակեցի քաղաքակրթությունների երկխոսության անհրաժեշտության մասին: Հենց Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը կարող է դառնալ այն առաջին փորձաքարը, որի օրինակով կհարթվեն նմանատիպ բազմաթիվ և բազմաբնույթ այլ կոնֆլիկտներ: Այնպես որ, եթե մեր հարևան Իրանը խոսում է քաղաքակրթությունների երկխոսության անհրաժեշտության մասին, և դա, կարծես թե, ողջունվում է արևմտաեվրոպական մայրաքաղաքներում, ԱՄՆ-ում, ՌԴ-ում, ապա այդ ճանապարհով լուծելով ԼՂՀ-ի հիմնախնդիրը՝ գերտերությունները և մեր հարևանները դրանով իսկ կկարողանան ապացուցել, որ իրենք, այո, անկեղծ են:

Ներածական այս հակիրճ խոսքից հետո ակնկալում եմ Ձեր հարցերը:

– Ուշադիր կարդացել եմ Ձեր ելույթը Ստրասբուրգում, հիմա էլ ցուցադրվածը նայեցինք: Հոյակապ էր, հզոր էր, ես կասեի, որ միջազգային ամբիոններից դեռևս և ոչ մի հայի կողմից այդքան հայանպաստ, մեզ՝ հայերիս այդքան պարզերես դարձնող,

Արցախի հիմնախնդրի արդար լուծման համար այդքան արդյունավետ մտքեր չէին հնչել: Ինչո՞ւ հեռուստաալիքներով Ձեր այդ ելույթը ցույց չեն տալիս: Էստև էլ հո Քոչարյանին ու Սերժին բան չեք ասում:

– Շնորհակալություն գնահատականի համար: Մնք չվերցնեմ ինձ վրա, երեկ ինձ զանգել են «Հայլուրից» և հայտնել, որ մտադրություն ունեն կիրակի օրը ելույթը ցուցադրել, և ելույթի հետ առնչվող որոշակի մեկնաբանություններ հարցազրույցի տեսքով ինձնից վերցրեցին: Հուսանք, որ կցուցադրեն: Ամեն դեպքում մի կողմ, ելույթի կարևորությունն ասեմ ինչով էր գնահատելի. ելույթից հետո, երբ ամփոփում էին այդ հարցի քննարկումը, Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի քաղաքական հանձնաժողովի նախագահի տեսակետ Օկտաշը (եթե հիշողությունս չի դավաճանում, ազգությամբ թուրք պատվիրակ է) գնահատական տվեց: Սովորաբար, ամփոփելիս քաղաքական հանձնաժողովը ելույթներին պարտադիր գնահատական է տալիս, թե դրական, թե բացասական իր դիտողությունների մասին ասում կամ չի ասում, և ոչ մի բան այս դեպքում այնտեղ առարկության չհանդիպեց: Այսինքն՝ Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովում Հիտլերից ցիտատ բերելով վերահաստատվեց հայոց ցեղասպանության փաստը, վերահաստատվեցին Սումգայիթի, Կիրովաբադի, Բաքվի ջարդերը և այն բարբարոսությունները, որոնց մասին մենք քաջատեղյակ ենք: Կարող է հիմա ասածս ձեզ արդիական չթվա, որովհետև Դուք նախորդող հարցերը, քննարկումները չեք լսել: Թե՛ Մոլա-Զադեն, թե՛ Սեյիդովը, թե՛ Շախտախտինսկայան, թե՛ Հուսեյնովը, որը վեր էր կենում անգամ իսկ Սերբիայի և Մոնտենեգրոյի հարցերի քննարկման ժամանակ, էլ չեմ ասում Ադրբեջանի մոնիտորինգի, էլ չեմ ասում ահաբեկչության հարցերը, որ քննարկվեցին, վեր էին կենում և հայերիս ցեղասպանության, ագրեսիայի մեջ էին մեղադրում: Եվ այստեղ չափազանց հետաքրքիր նրբերանգ կար (կներեք, ելույթն եմ մեկնաբանում և ոչ թե ինձ ներկայացնում), դա այն է, որ, փաստորեն, ելույթում ասվում է, որ Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ամբիոնը դարձրել են երեսպաշտության, կեղծիքի տարածման ամբիոն: Եվ ամենևին պատահական չէ, որ խոսքս ուղղում եմ Պիտեր Շիդերին՝ Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահին ու գլխավոր քարտուղար Թերի Դևիսին, ասելով՝ գիտեք, սերունդները Ձեզ չեն հիշի, անգամ չեն հիշի Ձեր երկրներում, քանի այս ամբիոնը դարձրել եք սուտ տարածելու, կեղծիք տարածելու ամբիոն: Եվ հղումը, բնականաբար, պատահական չէր, որովհետև բոլորս գիտենք այն հայտնի զեկուցագրի մասին, որով հանդես էր եկել ճիշտ մեկ ամիս առաջ՝ սեպտեմբերի 14-ին, Փարիզում Թերի Դևիսը: Դրանով, ըստ իս, ելույթս իրապես իր նպատակին ծառայել է: Եվ մի հետաքրքիր շտրիխ ասեմ: Դուք լսեցիք, որ Ֆրանսիայի փոխնախագահը 3 անգամ «մերսի» ասաց այն դեպքում, որ ինձ պետք է դիտողություն աներ, որովհետև ես 35 վայրկյանով գերազանցել էի սահմանված ռեգլամենտը: Իրավունք ունեի խոսելու մինչև 5 րոպե, խոսել եմ 5 րոպե 35 վայրկյան: Իսկ այնտեղ ռեգլամենտը գերազանցելիս Վահան Հովհաննիսյանից շատ ավելի խիստ են ընդհատում: Ելույթումս, հավանաբար, հարցադրումներ կային, որ հոգեհարազատ էին փոխնախագահին, որովհետև գիտեք

Ֆրանսիան առաջին երկիրն էր, որ պետականորեն իր սենատով վավերացրեց ցեղասպանության փաստը և որը անասելի աղմուկ բարձրացրեց Թուրքիայում:

– Այսօրվա դրությամբ գյուղերն արդեն դատարկվել են՝ մնացել են ծերերը, երեխաները, կանայք: Դուք ինձանից շատ լավ գիտեք, որ աշխատատեղերը բոլորը փակված են, իմ հասակակիցների մասին չեմ ասում, բոլոր երիտասարդները գործազուրկ են: Նման իրավիճակում մարդիկ տանը մահանում են և ֆինանսական, սոցիալական պայմաններից ելնելով ռիսկ չեն անում բժշկի գնան: Այս ամենը մեր իշխանությունները գիտեն, գիտի նաև, ժողովուրդը: Գիտեք, պրն Գեղամյան, ժողովուրդը Ձեզ է սպասում և հավատում: Դուք ո՞ւմ եք սպասում: Հապաղումն ինչի՞ համար է:

– Ես ասվածն ավելի շուտ ընդունում եմ որպես պատգամ, քան թե հարց: Բոլորս էլ գիտենք, որ իշխանությունները ձախողել են, թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականությունը, և այդ ձախողումներն ոչ մի արդարացում չունեն: Բնականաբար, նման պայմաններում հենց նույն իշխանավորները կցանկանան արհեստականորեն ապակայունացնել իրավիճակը Հայաստանում, որ հետո այդ ձախողումների դառը պտուղները, որը ստիպելու են հայերս ճաշակենք, գցեն ժողովրդի և ընդդիմության անհնազանդ լինելու վրա, ասեն, որ վիճակը, իբր, ծանր էր և այդ ապակայունացումից օգտվեցին մեր դարավոր «բարեկամներն» ու պարտադրեցին այն լուծումները, որոնք, ավա՜ղ, արդեն իսկ մշակված են: Դա է քայլեր չանելու պատճառը, խնդիրը, որ վաղը, մյուս օրը հանկարծ ու հանկարծ սեփական մտորումների արդյունքում քեզ չդատապարտես, որ ժամանակին ու տեղին չէր այդ ամենը:

– Պրն Գեղամյան, Ձեր նշած սազանդարային կոչված կոմպլեմենտար քաղաքականության փոխարեն Դուք ի՞նչ առաջարկ ունեք արտաքին քաղաքական դոկտրինի վերաբերյալ:

– Ուրեմն, եթե որևէ մեկը 3 կամ 5 րոպեի ընթացքում առաջարկի արտաքին քաղաքականության դոկտրին, առավել ևս ազգային անվտանգության հայեցակարգ, կնշանակի նա բացարձակապես պատկերացում չունի, թե ինչ է նշանակում այդ բազմածավալ, բազմաբովանդակ, բազմաբեղել հարցը: Դա համակարգված պետք է լինի՝ հաշվի առնելով մեր հարգարժան ընկերոջ ասածը, նաև այն իրավիճակը, որում հայտնվել է Հայաստանի Հանրապետությունը: Խնդրեմ մի օր հրավիրեք «Ազդակ» ակումբ, սիրով կգամ զուտ արտաքին քաղաքական դոկտրինի կոնցեպցիայի մասին խոսելու, որովհետև դա չափազանց ծավալուն նյութ է: Հետաքրքրության համար ասեմ, որ Ռուսաստանի Դաշնությունն իր անկախության այս 14 տարիների ընթացքում արդեն արտաքին քաղաքական 3-րդ դոկտրինն է ընդունում և 2000 թ. ընդունել է ազգային անվտանգության 2-րդ հայեցակարգը՝ նախագահ Վ.Պուտինի հրամանագրով:

– Պրն Գեղամյան, վերջերս շատ է խոսվում Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության փոփոխության մասին, նշվում է, որ Հայաստանն էլ պետք է փոխի իր քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ, Դուք ի՞նչ կարող եք ասել հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ:

– Ուրեմն, ես այդ հարցին սպառիչ պատասխանել եմ հարգարժան Փիրուզա Մելիք-սեթյանին տված հարցազրույցում, որ չկրկնեմ, նևություն քաշեք և ծանոթացեք երեկվա «Իրավունք» թերթի իմ հարցազրույցին:

– Խնդրում եմ երկու բառով պատասխանել:

– Երբ հարց է տրվում, բնականաբար, պատասխանում եմ, բայց ոչ երկու բառով: Չի կարելի անդամակցել «Կոլեկտիվ անվտանգության պայմանագիր կազմակերպությանը» և առանց դրա անդամ-երկրների նախագահների հետ խորհրդակցելու որոշում կայացնել, որ 50 հոգանոց զորամիավոր պետք է ուղարկենք Իրաք: Այդ պայմանագրի հոդվածներում հստակ մատնանշված է, որ նմանատիպ միջամտությունների պայմաններում պետք է «Կոլեկտիվ անվտանգության պայմանագիր կազմակերպության» անդամ-երկրների համաձայնությունը պարտադիր լինի՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Իսկ ինչ վերաբերում է հայ պաշտոնյաներին, ապա ամենևին չի կարելի նրանց նկատմամբ եղած վերաբերմունքը տարածել ողջ հայ ժողովրդի վրա: Հարցազրույցումս ասել եմ, հիմա էլ կրկնեմ: Մասնավորապես պրեզիդենտ Վ.Պուտինի վերաբերմունքը հայերիս հանդեպ ամենահստակ կերպով նշվեց ուղիղ մեկուկես տարի առաջ Հայերի համաշխարհային կոնգրեսի անդրանիկ նիստում, երբ նա իր ելույթում ասաց, որ Պետրոս I-ից սկսած մինչ օրս մենք սիրում, հարգում, գուրգուրում ենք հայերին, այդպես էլ լինելու է:

– Վերջերս խոսակցություններ կան Քոչարյան-Սարգսյան հակասությունների մասին, չեմ հասկանում՝ դա քոչարյանական հերթական ապատեղեկատվությո՞ւն է: Եվ երկրորդ հարցը. Բաթումի և Փոթի նավահանգիստները, որքան հայտնի է, պետք է հանվեն աճուրդի: Ըստ տեղեկությունների, Քոչարյանի մոտ մեծ գումարներ կան կուտակված, միլիարդներ, եթե նա տարածք գնի ասենք մի նավի համար, ապա Հայաստանի օգուտները անչափ մեծ կլինեն. ինչպե՞ս կարելի է Քոչարյանի միջոցով այդ հարցը լուծել:

– Շնորհակալություն հարցերի համար: 1-ին հարցն (ես իմ կարծիքն եմ ասում և, դա, ըստ իս, բավականաչափ լուրջ հիմնավորումներ ունի) այն է, որ մամուլում հրապարակվող նյութերը, վերջիվերջո, պայմանավորված են Քոչարյանի աշխատակազմում մշակված հետևյալ քաղաքականությամբ: Այն է՝ հիմա որոշակի մարդիկ կփորձեն կանգնել Սերժ Սարգսյանի կողքին, որոշակի մարդիկ էլ՝ Ռոբերտ Քոչարյանի: Օրերից մի օր նրանք կհանդիպեն և կհայտնեն իրենց իմացածը: Սերժը կասի ով է Ռոբերտի հասցեին վատ բաներ ասել, վերջինս էլ կասի՝ ով Սերժի: Դրանով իսկ կպարզեն իրենց պոտենցիալ հակառակորդներին: Նրանք մեդալի 2 տարբեր երեսներն են, բայց մեդալը նույնն է: Միասին եկել են, միասին էլ պետք է գնան:

2-րդ հարցը. ինչ վերաբերում է Քոչարյանի անձնական գումարներին, ես դրա հաշվապահությանը տեղյակ չեմ: Կարող եմ հստակ միայն ասել հետևյալը. Հայաստանի Հանրապետությունում տարեկան կտրվածքով ամենապակասը 150-200 միլիոն դոլար ստվերային գումարներ է լվացվում: Լվացվում է և, բնականաբար, այդ ստվերային գումարները ոչ ոք չի կարող տնօրինել առանց իշխանական հզոր լծակներ ունենալու: Եվ ահա այդ չհաշվարկված գումարներն են, որ արհեստականորեն իջեցնում են դոլարի

և դրամի հարաբերությունը, որովհետև տնտեսագիտական ավելի մեծ աբսուրդ, նոնսենս չի կարող լինել, երբ դրամն իբր արժևորվում է, բայց գնողունակությունը գնալով ընկնում է: Դրա մասին շատ թռուցիկ ասել եմ (որովհետև 3 րոպեի ընթացքում հնարավոր չէր ավելի ասել) Ազգային ժողովի ամբիոնից, անգամ իսկ թվեր եմ բերել, որոշակի թվեր Ձեզ էլ ասեմ, որ իմանաք: Այդ գումարներն այն աստիճանի են շոշափելի մեր ֆինանսական շուկայի համար, որ 2004 թ. 1-ին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում դրամական զանգվածը կրճատել են 1 միլիարդ դրամով, այսինքն Կենտրոնական բանկը հարկադրված է եղել շրջանառությունից 1 միլիարդ դրամ հանել, որ էլ ավելի չընկնի դոլար-դրամի սպեկուլյատիվ այդ փոխհարաբերակցությունը, իսկ 1 միլիարդ դրամի հետ կատակ անել չի կարելի: Ավելին ասեմ. ԱԺ-ում հիշատակեցի, որ 2003 թ.՝ 2002 թ. համեմատ, իբր մենք՝ հայերս, 94 հազար տոննա ավելի պակաս ցորենի ռեսուրս ենք ունեցել: Սա ի՞նչ է նշանակում. նշանակում է, որ մաքսատանը ոչ մի բան չի գրանցվում, շրջանցում են մաքսատունը: Մաքսատան տվյալներով պակասել է սոլյարկայի, բենզինի ներմուծումը: Փողերը լվանում են տղերքը: Դուք ճիշտ եք ասում, նման գումարներ տնօրինելու պայմաններում հայրենանվեր, ազգօգուտ գործ արած կլինեն, եթե Բաթումի նավահանգստում գոնե մի փոքր տերմինալ կարողանային սեփականաշնորհել և ոչ թե գնային Կոմի Հանրապետություն՝ 50, թե 60 միլիոն դոլար տային ու ոսկու հանքեր գնեին: Կարելի է լրատվության օգնությամբ հուշել պրն Քոչարյանին, որ ներդրումային նշված գործարքը կնքի:

– *Պրն Գեղամյան, ԵՒ ԽՎ-ում Հայաստանի պատվիրակության համախմբված գործունեությունն առիթ տվեց, որ համագործակցությունն իր շարունակությունն ունենա նաև երկրի ներքաղաքական կյանքում:*

– Հասկացա: Այս հարցը, ցավոք, սխալ է մեկնաբանվել: Երբ գիտակցում ես, որ բարիդրացիական այն գնահատականները, որոնք հնչում էին Յասկերնյայի ելույթում վաղը, մյուս օրը կարող են մեծագույն ծուղակ հանդիսանալ Հայաստանի Հանրապետության համար, բնականաբար, պետք է գտնել դրա հակաթույնը: Ասեմ՝ ինչը նկատի ունեմ: Եվրախորհուրդը չափազանց լավ գիտակցելով, որ Հայաստանում ժողովրդավարությունից լրջագույն հետնահանջ է արձանագրվել անգամ իսկ նախանցյալ տարվա համեմատ, այնուամենայնիվ, գովեստի խոսքեր է ասում և ընդունում է «հայանպաստ, բարենպաստ» բանաձև: Վաղը, մյուս օրը կլսեն արդեն Աթկինսոնի զեկույցը և Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ կընդունեն մեզ համար ծայրաստիճան անբարենպաստ բանաձև: Եվ այդ ժամանակ, բնականաբար, նույն դիմությունը կմիանա ընդդիմությանը և կասի՝ էս Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովը երկերեսանիությամբ եթե չի զբաղված, ապա ինչո՞վ է զբաղված: Իսկ եվրոպացիներն էլ կասեն՝ չհասկացա՞նք, բա էդ որ ձեզ գովում էինք, էդ որ ասում էինք՝ ժողովրդավարությունը Հայաստանում արդեն խորը արմատներ է գցել, էն ժամանակ արդար էինք, հիմա՞ դառանք անարդար: Այսինքն՝ պատահական և ոչ մի հարց լուծում չի գտնում, ցավոք, դա կայսրությունների ժամանակից եկող բան է՝ մահակի և բլիթի քաղաքականություն է: Մի կողմից բլիթն են տալիս, մյուս

կողմից մեզ համար շատ ավելի կարևոր հարցում մահակ ի ցույց դնում և, դրանից ելնելով է, որ նպատակահարմար գտանք այդ պարագայում համատեղ որոշակի հարցադրումներ անել, ըստ որում՝ դեպի խստացում գործող բանաձևից, որ դա ընդունվի: Նկատենք, որ երբ դիմությունն ու ընդդիմությունը համատեղ են հանդես գալիս՝ Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի առարկությունները շատ ավելի սակավ են լինում: Հարցին հենց այդ տեսանկյունից պետք է նայել, թե չէ ոչ մի հիմնարար խնդիր, որոնք այսօր անջրպետել են կոալիցիային ողջ ժողովրդից, հաղթահարված չէ: Եթե կոալիցիան ընտրի բարձրացված հարցերի հաղթահարման ճանապարհը, իսկ դա, ցավոք, ես այսօր չեմ տեսնում, այդ ժամանակ, անշուշտ, անպայման երկխոսություն էլ կլինի, փոխզիջումների էլ կգնանք, բայց հիմա դա չկա:

– Այսօրվա մամուլի տեսության ժամանակ լուր սփռվեց, որ Ձեր կուսակցությունն ինչ որ չափով սառեցնում է իր հարաբերությունը դաշինքի հետ:

– Այդ մասին առաջին անգամ եմ լսում: Խոսքը վերաբերում է «Ազգային Միաբանության» այն մոտեցմանը, որ ամսի 26-ի հանրահավաքին և երթին չենք մասնակցելու: Դրա պատճառներն ամենևին պայմանավորված չեն մեր հարաբերությունների սառեցմամբ, այլ դա զուտ քաղաքական հաշվարկի արդյունք է: Շատ հակիրճ ասեմ. բոլորիս համար ակնհայտ է, որ ահաբեկչության դեմ հայ ժողովուրդը մի մարդու պես ոտքի կկանգնի, որովհետև ահաբեկչության զոհ ենք եղել պատմական քառուղիներում, էլ չեմ ասում 1890-ական թվականներին, 1915 թ.: Այդ պարագայում, ելնելով օբյեկտիվ պատճառներից, շատերը չեն կարողանա գալ ու մասնակցել այդ հանրահավաքին: Արդյունքում վարչակազմն ու իշխանական լրատվամիջոցները կշեփորահարեն՝ տեսեք, ընդդիմությունն այն աստիճանի է հևհևակազրկվել, որ անգամ հայերիս համար հոգեհարազատ հարցադրումներին, որ ընդդիմությունն է բարձրացրել, մարդիկ չեն գնում: Եվ կսկսեն դրա վրա սպեկուլյացիա անել: Ահա սա է: Մինչդեռ «Արդարություն» դաշինքի հետ պայմանավորվածություն ունենք քաղաքական համաձայնության մասին, այն է՝ միասին կստորագրենք ահաբեկչության դեմ ուղղված այն հայտարարությունը, որն այսօր պատրաստվում է:

«Իրավունք+հարց ու պատասխան», 26 – 28.X.2004:

Արտաշես Գեղամյանի հերթական ելույթը, որը հունից հանեց իշխանություններին կամ՝ հիշեցում նրանց, թե ովքեր ենք մենք՝ հայերս

Հոկտեմբերի 28-ին Կինոյի տան դահլիճը և միջանցքները լեփ-լեցուն էին: Հազարից ավելի մարդիկ եկել էին «Ազգային Միաբանություն կուսակցության» ԱԺ պատգամավորների հետ հանդիպման: Հոտնկայս, բուռն, որոտընդոստ ծափահարություններով ներկաները դիմավորեցին կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանին: Հերթական անգամ անհասկանալի և տարօրինակ էին իշխանական լրատվամիջոցներով Ա.Գեղամյանի ելույթին տրված հիվանդագին և ջղագրգիռ մեկնաբանությունները: Մեր այս գնահատականի հետ, հարգելի՛ ընթերցող, կարծում ենք, համակարծիք կլինեք՝ կարդալով նրա բանավոր խոսքի ամբողջական շարադրանքը:

Սիրելի՛ հայրենակիցներ, այսօրվա հանդիպումը մեծապես պայմանավորված է աշխարհաքաղաքական ծայրաստիճան այն բարդ իրավիճակով, որը, անշուշտ, իր լրջագույն ազդեցությունն է թողնելու ոչ միայն տարածաշրջանային հնարավոր զարգացումների վրա, այլ նաև Հայաստանի Հանրապետության: Բավական է հիշատակել Անվտանգության և համագործակցության եվրոպական հանձնաժողովի օրերս ընդունած անչափ վտանգավոր զեկույցը, որն արդեն իսկ քննարկվել է ամերիկյան սենատի համապատասխան ստորաբաժանումում: Զեկույցը բաղկացած է 24 էջից, որից 17-ը նվիրված են Հայաստանի Հանրապետության անկախությունից ի վեր զարգացումներին, արդարացիորեն առանձնահատուկ խիստ բացասական գնահատականներով նշված են անցած տարի կայացած թե՛ նախագահական, թե՛ խորհրդարանական ընտրությունները: Սահմռկեցուցիչ հարցադրումներ կան նաև կապված հոկտեմբերի 27-ի ոճրագործության վերաբերյալ: Զեկույցում մասնավորապես ակնարկվում է, որ կարող են նորանոր հանգամանքներ ի հայտ գալ հոկտեմբերի 27-ի գործով: Այդ ողբերգական դեպքերից 5 տարի անց հիշատակվում է, որ Կարեն Դեմիրճյանի և Վազգեն Սարգսյանի ընտանիքներում համոզմունք կա, որ այդ ամենի հետ առնչություն ունեն և Հայաստանի գործող իշխանությունները:

Այս զեկույցին հաջորդեց հոկտեմբերի 18-ի՝ ավելի քան 100 երկիր միավորող Միջազգային ճգնաժամերի վերլուծության կենտրոնի կազմած զեկույցը, որը նույն բնութագրմամբ, նույն գնահատականներով վեր է հանում Հայաստանի Հանրապետությունում և ընդհանուր առմամբ տարածաշրջանում ստեղծված իրավիճակը: Հենց այսօր

արդեն իսկ հայտնի դարձավ, որ Միավորված ազգերի կազմակերպությունում Ադրբեջանի մշտական ներկայացուցիչը հանդես է եկել հարցադրումով, որ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի քննարկման առարկան դառնա Հայաստանի կողմից, իբր, գրավված ադրբեջանական 20% տարածքների հարցը: Հարց է բարձրացված, ըստ որի, Հայաստանը, իբր, Ադրբեջանի Հանրապետությունում իրականացրել է էթնիկ զտումներ: Ցավով եմ ուզում ասել՝ ՄԱԿ-ի գլխավոր կոմիտեն ընդունել է դա և հարցն ընդգրկել օրակարգում: Երբ ամիսներ շարունակ տագնապի շեփոր էի հնչեցնում, մամուլում հանդես էի գալիս, հնարավոր եղավ նաև Ստրասբուրգում՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստում ելույթ ունենալ այս հարցերի շուրջ, մեր իշխանավորների կողմից արժանացան քար լռության ու անտարբերության: Եվ, ահա, այսօր մենք այստեղ հավաքվել ենք, որպեսզի Ձեզ հետ որոշենք մեր պատասխանատվության չափը, աստիճանը Հայաստանի առջև դարանակալած այն վտանգների, որոնք հղի են լուրջ հետևանքներով, և ձևակերպենք մեր անելիքները:

Նախ, սրտանց ողջունում եմ բոլորիդ և խորին շնորհակալություն հայտնում յուրաքանչյուրիդ, որ գալիս եք սատարելու ոչ թե ինձ կամ իմ գործընկերներին, այլ այն գործը, որին ձեռնամուխ ենք եղել տարիներ առաջ: Ինձ համար դյուրին չէ խոսել այս ամբիոնից, այն առումով, որ չկրկնեմ մտքերս, բայց ի՞նչ կարող եմ անել. վերքերը նույնն են՝ չեն սպիանում, արնածոր են լինում, իշխանությունները նույնն են, նրանց հանդգնությունը, արյունարբությունը, լկտիությունն ամենևին չի պակասել, բայց ավելացել են միայն երկրին սպառնացող մարտահրավերները: Եվ այս պարագայում ակամայից մտածում ես՝ խոսես կենսաթոշակառուների խղճուկ վիճակի՞ց, որոնց թոշակները 4 անգամ ավելի պակաս են, քան պարենային նվազագույն զամբյուղը, թե ուսանող պահող ծնողների դրությունից, ովքեր սեպտեմբեր ամսից սկսած ասես սուգ ու շիվան են կապել, որովհետև ուսման վարձի միջոցներ չունեն, իսկ միգուցե խոսես մանկավարժների առօրյայից, կյանքից, որոնք մինչ օրս դասարան են մտնում սովետի օրոք գնված շորերով: Թե խոսես բժիշկներից, որոնք սովից ուշագնաց են լինում անգամ վիրահատարանում, իսկ միգուցե խոսես ցոփ կյանքով ապրող, անաշխատ եկամուտները կազինոներում և գիշերային ակումբ-պոռնկատներում ցփնող այս վարչակազմի հենարանը հանդիսացող մարդկանց առօրյայից կամ էլ «փառապանծ» իշխանությունների վերջին սխրանքի մասին՝ Եհովայի վկաների գրանցումից և դրան հաջորդած խրոխտ կոչերից՝ դրա դեմ, իբր, պայքար ծավալելու վճռականությունից ու պատրաստակամությունից:

Այս ամենը, երբ գիտես, մտածում ես՝ լավ, ի՞նչ անես, ո՞նց անես, ո՞նց անես, որ հայը հայի արյուն չթափի, ո՞նց անես, որ իշխանափոխությունն անցնցում լինի, ինչի՞ն ապավինես, ո՞ւմ ապավինես, ո՞ր գաղափարը դրոշիդ վրա գրես:

Եվ, ահա, այս մտորումներն են, որ ակամայից ինձ տևափոխում են մեր մեծերի ժողովարանը: Ձեզ հետ մտովի գնանք, գնանք խորհրդի նստենք նրանց հետ, որովհետև այսօրվա մեր Հայաստանում հատուկենտ մեծեր են մնացել ում հետ կարելի կլիներ խորհրդի նստել, մնացած բոլորը մի բուռ շքանշանով հոգիները վաճառեցին սատանային:

Եվ այդ խորհրդարանում՝ հայոց մեծերի խորհրդարանում, անշուշտ, մենք կհանդիպենք (պատմական թվերով եմ ասում, չասեք՝ առաջինն Արտաշես թագավորին հիշեց) Արտաշես 1-ին թագավորին, կհանդիպենք Տիգրան Մեծին, Գրիգոր Լուսավորչին ու Տրդատ 3-րդին, Մեսրոպ Մաշտոցին կհանդիպենք: Այնտեղ կլինի, անշուշտ, Վարդան Զորավարը Սահակ Պարթևի հետ, մեծն Ագաթանգեղոսը քերթողահայր Խորենացու հետ: Ասես դատախազական աթոռին բազմած՝ իր «Դատաստանագիրքը» ձեռքին ներկա կլինի Մխիթար Գոշը, որը չգիտի՝ ո՞ւմ դատի, որովհետև մեղավորները մեզանում չափազանց շատ են, և նրանք բոլորն էլ հայեր են: Այնտեղ կլինի նաև Խաչատուր Աբովյանն՝ իր «Վերք Հայաստանի (Ողբ հայրենասերի)» գիրքը ձեռքին՝ մտածելով, իսկ մենք կարծում էինք, որ ազատ, անկախ Հայաստանում հայ ժողովրդի վերքերն արդեն կսպիանան: Կհանդիպենք Սողոմոնին՝ Կոմիտասին, Խրիմյան Հայրիկին՝ Վազգեն առաջին կաթողիկոսի հետ մտահոգ, կհանդիպենք Գրիգոր Զոհրապին, Սիամանթոյին, Դանիել Վարուժանին, ովքեր զարմացած, թվում է, թե կասեն՝ մեր արյունը հոսեց Կոստանդնուպոլսում, թույլ մի եղեք, թույլի արյունն են խմում, թշնամին նույնն է, պաշտպանը չունեք: Այնտեղ կտեսնենք Հովհաննես Քաջազնունուն՝ Ալեքսանդր Մյասնիկյանի հետ զրույցի բռնված, նաև Իսահակյանին, Չարենցին, Շիրազին, Պարույր Սևակին, Վիկտոր Համբարձումյանին: Կտեսնենք Հայաստան եկած Արամ Խաչատրյանին, Ալեքսանդր Սպենդիարյանին, Ալեքսանդր Թամանյանին ... Եվ, ահա, Ձեզ հետ փորձենք խորհել, թե ի՞նչ կասեն նրանք՝ մեր մեծերը, ի՞նչ խորհուրդ կտան, ի՞նչ կհուշեն բոլորիս, որ կարողանանք թոթափել ապազգային այս իշխանությունների բեռը, որոնք բացարձակապես ոչ մի ընդհանուր բան չունեն թե՛ մեր հող ու ջրի, թե՛ մեր նախնիների ու մեր մեծերի հետ: *(Բուռն ծափահարություններ):*

Արտաշես թագավորը, անշուշտ, կասեր՝ հայրենիք հիմնեցի, Արտաշատ մայրաքաղաք ստեղծեցի, Տիգրան Մեծը կավելացներ՝ Հայաստանը ծովից ծով դարձրեցի, Պաղեստինից հրեաներ բերեցի, որ արհեստներ զարգացնեմ, իսկ Գրիգոր Լուսավորիչը կասի՝ մի՞թե անիմաստ ու ապարդյուն 40 օր Խոր Վիրապի նկուղում՝ զնդանում, զօր ու գիշեր անցկացրեցի ու հավատքով լեցուն դուրս եկա: Տրդատն էլ կասի՝ քրիստոնեությունը պետական կրոն դարձրեցի, որ աչքի լույսի պես փայփայեք, որովհետև ով շնվում էր այդ ուսմունքից՝ խոզի ճակատագրի էր արժանանանում: Բա պետք չի՞ այս ամենից դասեր քաղել: Իսկ Մեսրոպ Մաշտոցը, հավանաբար, կտրտնջար ասելով՝ գիր ու գրականության տեր դարձրեցի, որ միմյանց հասկանաք, չկորցնեք Ձեր հավատքն առ Աստված ու հանկարծ Բաբելոնի աշտարակաշինարարների ողբալի ճակատագրին չարժանանաք, երբ միասին աշտարակ էին կառուցում, իրար լեզու չհասկանալով՝ գժտվեցին, հավատազուրկ էին, որի պատճառով էլ ոչ միայն աշտարակը չկառուցեցին, այլև կործանվեց Բաբելոնը: Քերթողահայր Մովսես Խորենացին մեզ հանդիպելիս, ավա՜ղ, ամենևին չէր խոսի հայկական հերոսապատումներից, այլ ցավով, ափսոսանքով կասեր, կհառաչեր՝ «*Ողբամ զգ Քեզ, Հայոց աշխարհ, զի թագավորդ մանուկ է*»: Սա է այսօրվա իրականությունը: Իսկ Մխիթար Գոշը շվարած կմտածեր՝ արդյոք «Դատաստանագիրքը»

գրե՞լ էի, որ հայոց մի ամբողջ «վերնախավ» դրանով դատվի, որ յուրաքանչյուր իշխանավոր այսօր դրա տասնյակ հոդվածներով պատժվող մնքեր գործած լինի, նզովվելու հիմքեր ունենա... Եվ, այսպես, պատմական քառուղիներով, երբ գալիս ես, անշուշտ, գալիս հասնում ես 19-րդ դարի սկիզբ՝ հանդիպում ես Խաչատուր Աբովյանին: Մի՞թե այդ մեծ մտածողն ու երազողը, որի վերջին հանգրվանն էր Արարատ սուրբ լեռը, կխոստովանի, որ մեր օրերի համար էլ է խիստ արդիական իր հայտնի վեպը: Այսօր էլ եթե ծնվի նոր Խաչատուր Աբովյան, ապա Քոչարյանին փառաբանող երկեր չի գրի, շքանշաններ ստանալուց կհրաժարվի, կգրի, այո, բայց նորօրյա «Վերք Հայաստանի (Ողբ հայրենասերի)»: Իսկ Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն կամ Դանիել Վարուժանն արդյոք չեն ասի՝ մի՞թե միլիոնավոր անմն մարդկանց թափված արյունը, Դեր-Զորի անապատից լսվող հառաչանքներն այդպես էլ ոչ մի դաս չտվեցին Ձեզ, մի՞թե չէիք գիտակցում հայոց «ջոջեր», որ սեփական գրպանով առաջնորդվողն անխուսափելիորեն սատանայի գիրկն է ընկնում:

Իսկ Քաջազնունին էլ իր հիացական հայացքը կգցի Ալեքսանդր Մյասնիկյանին, որը կործանված Առաջին հանրապետությունը՝ ողբի, վշտի, աղքատության, համաճարակների հանրապետությունը, վերածնեց, համայն հայության մեծերին բերեց, հավաքեց Հայաստանում, որ վերջիններս ստնծեն վիթխարի, հրաշակերտ կոթողներ, որով հայոց անունը, հայ մարդու ստնծագործ ու շինարար, մտքի հզոր թռիչք ունենալու փաստն արձանագրվի դարերի մեջ: Իսկ հայոց վիշտն իր մեջ ներառած Կոմիտասն էլ տխուր հայացքով ասես թե կմնադրի բոլորիս՝ ի՞նչ «Կռունկի» նոր մնեղի գրեմ, նոր բառերով հավելեմ 20-րդ դարի վերջին – 21-րդ դարի սկզբին անկախ Հայաստանը լքող «կռունկների» հարյուրավոր երամներով հարյուր հազարավոր մարդկանց ճակատագիրը: Խրիմյան Հայրիկն էլ Վազգեն կաթողիկոսի հետ ահազանգ կհնչեցնի. հիշեք Սողոմի և Գոմորի ողբալի ճակատագիրը, երբ հավատակորույս մարդիկ իրենց քաղաքներով կործանվեցին, իսկ Դուք 1700-ամյա հայոց եկեղեցու անցած հերոսապատումից և ոչ մի դաս չքաղեցիք, ձեզանում հանդուրժեցիք Եհովայի վկաների և մահաբեր աղանդների գոյությունը: Իսկ Չարե՞նցը, միգուցե նա էլ վերհիշի ասելով՝ «*Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի, Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան: Ու թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի, Չքնաղ երկիր, լուսապսակ քո ապագան*»: *(Բուռն ծափահարություններ):* Չգիտեր, հավանաբար, նա չգիտեր մեր գլխին գալիքը, որ հոկտեմբերի 27-ին, իրենից զատ, դարձյալ կախաղան են գնալու, բայց ստիպողաբար, ոչ թե հոժարակամ, Կարեն Դեմիրճյանը, Վազգեն Սարգսյանը, մեր մյուս 6 գործընկերները, որոնք այսօր էլ իրենց շիրիմներից բոլորիս ասես թե պատգամում են՝ Հայաստանի բախտն ու ճակատագիրը վերցրեք Ձեր ձեռքը, այլևս նահանջելու տեղ չկա ... *(Ծափահարություններ):*

Այնտև կհանդիպենք նաև Վիլյամ Սարոյանին՝ «*Ես հեռավոր Ֆրեզնոյում լավ ճակատագրից չէր, որ հայտնվեցա, ծնողքիս հետ եղելնուց փախած էի, հիմա այդ ինչ վիճակի եք հասցրել իմ չքնաղ երկիրը, որ մարդիկ կփախչեն հայրենիքեն ասես յաթաղանից: Ինչո՞ւ եք դատապարտում իս, որ հայ մանչուկներու համար հարազատ*

կերպար դառնա Ջոնին, ում սիրտը բաբախում էր օտար լեռներում...»:

Այնտև՝ մեր մեծերի ժողովարանում, եթե մտովի լինենք, ապա, համոզված կարող եմ ասել, մի կողմ կդնենք մանր-մունր բոլոր տարաճայնությունները, շինծու, արհեստական այն բոլոր խոչընդոտները, որոնք շատ հմտորեն ուղղորդվում են Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից: Եվ, լսելով մեր մեծերի պատգամ-նախազգուշացումները, կամա թե ակամա ներքին մեծագույն պահանջ ես ունենում վերլուծելու երկրումդ և տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, իսկ երբ խորհում ես այդ մասին, ապա հանգում ես չափազանց տխուր եզրակացությունների, որոնք, ավա՜ղ, այդպես էլ մեզանում լրջագույն քննարկման առարկա չեն դառնում:

Դեռ տարիներ առաջ ահազանգում էի Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի կառուցման և շահագործման հետևանքով Հայաստանի առջև ծառանալիք վտանգների մասին: Այսօր արդեն իսկ 1767 կմ երկարությամբ նավթատարը գրեթե կառուցված է. մարտին կավարտվի շինարարությունը Վրաստանի տարածքում, ապրիլին՝ Թուրքիայի և Ադրբեջանի տարածքներում, ու մայիսին տարեկան կտրվածքով 50 մլն տոննա նավթ հնարավոր կլինի Կասպից ծովից տեափոխել Միջերկրական ծովի Ջեյհան նավահանգիստը: Սա զուտ խողովակաշար չէ, ինչպես փորձում են ներկայացնել, սա այն խողովակաշարն է, որի վրա արդեն իսկ 3,5 մլրդ դոլար են ծախսել աշխարհի տրանսազգային նավթային 10 ամենախոշոր ընկերությունները, այդ թվում՝ ամերիկյան, բրիտանական, նորվեգական, ճապոնական, առանձնահատուկ ուզում եմ շեշտել, նաև՝ ֆրանսիական «Էլֆ» ընկերությունը, իրանական պետական նավթային ընկերությունը: Պատահական չէ, որ առանձնահատուկ եմ հիշատակում վերջիններին, դրանք մեզ բարեկամ երկրներ են:

Կարծում եմ՝ օրինաչափ էր, երբ տագնապի շեփոր հնչեցրեցի՝ մեջբերելով ՆԱՏՕ-ի շրջանակներում Եվրոպայում ԱՄՆ-ի զինված ուժերի փոխհրամանատար, ռազմաօդային ուժերի գեներալ Չառլզ Ուոլդի այն խոսքերը, ըստ որի Եվրոպայից իրենց ստորաբաժանումները տեափոխվելու են նաև Հարավային Կովկաս, մասնավորապես, Սենատի համապատասխան հանձնաժողովում ուղղակիորեն հիշատակվել է՝ Ադրբեջան, Հայաստան, Վրաստան: Առանձնահատուկ ասվել է, որ այս տարածաշրջանը Միացյալ Նահանգների համար դառնում է աշխարհաքաղաքական նոր առանցք՝ մի կողմից Կասպից ծովի նավթային պաշարների շնորհիվ, մյուս կողմից՝ այն վտանգների, որոնք պայմանավորված են թմրանյութերի տեափոխմամբ, զենքի անօրեն վաճառքով ու ահաբեկչությամբ: Բա լավ, իշխանավորնե՛ր, չմտածեք՝ ի՞նչ է դա նշանակում, ի՞նչ է նշանակում մեր տարածաշրջանում տեակայվել, որտե՞ղ պետք է տեակայվեն: Ինչ, կարո՞ղ է ակնարկն ուղղված էր Թուրքիային. իհարկե, ոչ, Թուրքիան ԱՄՆ-ի ռազմաքաղաքական դաշնակիցն է, ՆԱՏՕ-ի անդամ-երկիր: Բնավ Հայաստանին էլ ուղղված չէր, քանզի անկախության տարիներին ԱՄՆ-ն 2 մլրդ դոլարից ավել հումանիտար օգնություն է հատկացրել մեր երկրին, ավելին, բոլորն էլ գիտեն, որ այստեղ ո՛չ զենք են արտադրում և ո՛չ էլ կակաչ աճեցնում: Ուղղված չէր նաև Վրաստանին ու Ադրբեջանին: Ակնարկն ուղղված էր Իրանին: Իսկ ի՞նչ է նշանակում այնտեղից փակել

հնարավոր (չգիտեմ, գոյություն ունի այդ փաստը, թե ոչ), տարանցիկ երթուղիները: Դա նշանակում է, որ Ջեբրայիլի, Զանգելանի, Ֆիզուլու շրջաններում պետք է տեսակայվեն համապատասխան ուժեր, ինչի մասին և ասվել է: Հենց այս նույն հարցն է շոշափել Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարը՝ Պենտագոնի շեֆ Դոնալդ Ռամսֆելդը, սեպտեմբեր ամսին Սանկտ Պետերբուրգում Ռուսաստանի իր գործընկեր՝ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովի հետ: Հանդիպման ժամանակ նա ուղղակիորեն ասել է, որ Ռուսաստանի մտահոգությունները, ըստ որի Արևմտյան Եվրոպայում տեսակայված ամերիկյան ռազմական ուժերի վերադասավորությունների արդյունքում դրանք տեսափոխվելու են Ռուսաստանի արևմտյան սահման, ամենևին չեն համապատասխանում իրականությանը, քանի որ այդ զորքերը տարվելու են դեպի հարավ: Հայտնի է, թե ով է վերահսկում Զանգելանը, Ֆիզուլին, Ջեբրայիլը. Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության բանակը: Կգան, կտեսակայվեն այնտեղ: Իսկ ո՞վ է մեզ երաշխավորել, որ այդ պարագայում Իրանի Իսլամական Հանրապետությունը պատժամիջոցներ չի կիրառի: Ո՞ւմ հանդեպ. անշուշտ, Հայաստանի: Մնրիի սահմանը որ փակեցին, Ադրբեջանի ճնշման տակ էլ հանկարծ Վրաստանն էլ փակի իր սահմանը, ի՞նչ ենք անելու՝ սովամահ ենք լինելու: Բա չե՞ք մտածում, պարոններ Քոչարյան և մնացած նազիր-վեզիրներ, ովքեր ուղևները լարում են միայն խաղատներում կամ պետական ունեցվածքը և երևանյան հողատարածքները գրոշներով յուրացնելիս:

Հենց այս պատճառով է, որ հերթական անգամ հավաքվել ենք, ուզում ենք տագնապի շեփոր հնչեցնել, որովհետև Հայրենիքը վտանգի մեջ է, Հայրենիք ենք կորցնում: Լավ, մի՞թե չեք մտածում նաև այն պարզ ճշմարտության մասին, չեք վերլուծում այն, որ Ռուսաստանը նույնպես պարտադրված է իր շահերը պաշտպանել մեր տարածաշրջանում: Եվ որը, անշուշտ, մեծապես պայմանավորված է հենց այդ նույն անհիմնավոր նավթի գործոնով: Ինչպես մեկ դար առաջ աշխարհի մեծ տերությունների սեղելուն ուշադրության կենտրոնում էր մեր տարածաշրջանը, նույնի ականատեսն ենք այսօր. ավա՜ղ, պատմությունը, կարծես թե ուզում է կրկնվել: Եվ Աստված մի արասցե, որ այսօր էլ իբրև կատարված փաստի արձանագրում հնչի դժոխային՝ «Նավթի կշիռն ավելի ծանր է, քան հայի արյունը» արտահայտությունը:

Բա էս ամենի մասին ո՞վ պետք է մտածի: Ցավոք, դա բնավ էլ չի հուզում իշխանություններին: Ավելին, նրանք էն աստիճանի են սարսափում ճշմարիտ խոսքից, որ, մասնավորապես, Ստրասբուրգում Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի իմ ելույթն այդպես էլ Հանրային հեռուստատեսությամբ չցուցադրեցին: Միայն զգացմունքային մասը շարադրանքով՝ հայերեն լեզվով, արագ-արագ ասացին: Լավ, այդտեղ էլ հո չէի խոսում Քոչարյանի մասին, հո չէի խոսում մեր ապիկար իշխանությունների մասին: Բոլորիս թասիբն էի պահում, ձեր պատգամն էի կատարում, սիրելի ժողովուրդ: Լավ, ի՞նչն էր քար լռության պատճառը: Հարկադրված էի ելույթս գովազդային նաևակով տպագրել որոշ թերթերում: Մինչդեռ Թբիլիսիում Քոչարյանն ելույթներ է ունեցել, ասես թե ասածները մարգարիտ էին՝ ճշմարտության առաջ մնանչած կլինես, բայց այդ օրերին որ

հեռուստաալիքը միացնում էիր, տեսնում էիր նրան՝ անհասկանալի թեմաների շուրջ անհասկանալի եզրակացություններ անելիս: *(Ծափահարություններ):*

Ես չեմ ուզում Ձեզ շատ ծանրաբեռնել, որովհետև արդեն մեկ ժամ 15 րոպե քննարկումների մեջ ենք: Կրկնում եմ. այսօրվա դրությամբ ամեն ինչ արվում է, որ լռեցվի «Ազգային Միաբանություն կուսակցությանը»: Այսօրվա դրությամբ փոխանակ այն մայր խնդիրները, որոնց մասին լրջագույն հարցազրույցներ և վերլուծականներ են արվել և, մասնավորապես, տպագրվել «Իրավունք» թերթում, փոխանակ դրանց շուրջ քննարկումներ կազմակերպեն, չգիտես ինչու, կանգնել ու ասում են՝ ինչի՞ չգնացիք հոկտեմբերի 26-ի հանրահավաքին: Դա է այսօր բոլորից շատ հուզում ոչ թե ընդդիմադիր մյուս թևին, այլ իշխանություններին, որոնք ուզում են կասկածամտության որդն անպայման գցեն, ցեցը գցեն, կռվախնձոր դարձնեն մեր մեջ: Չգնացիք՝ գտանք նպատակահարմար չէ, և ցավով եմ ասում, մեր հիմնավորումներն ամսի 26-ի հետ կապված արդարացան: Այսօր քոչարյանական թերթերը հեգնում են՝ ասելով՝ հարցը, ճիշտ է, շատ կարևոր էր՝ «ո՛չ ահաբեկչությանը», բայց մարդիկ սակավաթիվ էին: Նրանց ահա այդ հաճույքից զրկելու համար չգնացիք ու էն գլխից էլ ասացիք՝ ինչ է պետք և ոնց է պետք: Կամ էլ հանկարծ հիշում են՝ ինչո՞ւ մենք մանրամասներ չբերեցինք անցյալ տարի նախագահական ընտրությունների ժամանակ 150 հազար թռուցիկ տարածողների մասին, թռուցիկներ, որտեղ չարամտորեն գրված էր, թե ես, իբր, հրաժարվել էի հետագա պայքարից: Դե, լավ, հասկացանք, բոլորս էլ գիտենք՝ ո՞վ էր, ի՞նչ էր ... Թարգեք այդ ճամարտակությունները, պարոննե՛ր, միևնույն է «Ազգային Միաբանությունն» այսօր քաղաքական այն ուժն է, որն անգամ իսկ ինքնուրույն կկարողանա հաղթահարել անտարբերության և կասկածամտության այն մթնոլորտը, որը պատել է ողջ Հայաստանին: *(Ծափահարություններ):* Այո՛, «Ազգային Միաբանությունն» այսօր քաղաքական այն ուժն է, որն իր մտավոր կարողություններով, կազմակերպվածությամբ Հայաստանի Հանրապետությունն ի զորու է դուրս բերել փրկության լուսավոր ճանապարհ:

Թող անակնկալ չլինի, խոսքս ուզում եմ ավարտել՝ դիմելով Գագիկին. թող ների Գագոն, իմ երկու որդիների լավ ընկերն է, հիմա էլ տեսնում եմ դահլիճում նստած է, ինչո՞ւ եմ ասում ներիր, որովհետև իր կյանքից եմ խոսելու. Գագոն երեխա հասակում մեր աշխարհը տեսել է, մեր ծաղկող Երևանն է տեսել, հետո, ավա՜ղ, տեսողությունը կորցրել է: Սակայն չի եղել և ոչ մի հանդիպում, չի եղել ոչ մի հանրահավաք, որ նա չգա: Եվ ինձ ցնցեց մի բան, երբ լսեցի, թե ինչ էր Գագոս թերահավատներին ասում. «*Լավ, կույրը ես եմ, բայց տեսնում եմ մեր հաղթանակը, իսկ Դուք ինչպե՞ս չեք տեսնում, որ «Ազգային Միաբանությունը» հաղթանակելու է»:* Բաներ կան, որ հոգով ու սրտով պետք է զգալ: *(Բուռն ծափահարություններ):*

Եվ ակամայից հիշում ես մեծն Հոմերոսին, հիշում ես «Ողիսականը», երբ արդեն իսկ նավարկությունից և ճակատագրի հասցրած արհավիրքներից հոգնած, բայց չընկճված Ողիսևսը խնդիր է դնում անպայմանորեն գնալ, և ի՞նչ եք կարծում ուր, գնալ ննջեցյալների հոգիների հանգրվանը՝ Աիդ արքայի մութ թագավորություն, քանզի այնտեղ

է ապագայի հայտնի գուշակ Տերեզին: Եվ գնում է նա, գուշակն ասում է՝ ինչո՞ւ է քեզ թվում, որ կյանքիդ նպատակը միայն Իտաքե կղզին տեսնելն է, Պենելոպայի և տղայիդ հետ ողջագուրվելն է. հենց քո իսկ ընտրած պայքարի ուղին էլ կյանքիդ իմաստն ու նպատակն է: Եվ շարունակեց պայքարը Ոդիսևսը, բայց և հասավ իր երազած Իտաքեին, կնոջն ու որդուն, իր ժողովրդին: Եվ այդպես մենք էլ լցվենք հավատով ու եթե անգամ իսկ փոքր նահանջներ ենք ունենում պայքարի մեր ճանապարհին, միևնույն է, համոզված լինենք, հասնելու ենք մեր Իտաքեին՝ լուսավոր Հայաստանին: *(Բուռն ծափահարություններ):*

Ծնորհակալություն: Սիրելի՛ ժողովուրդ, այստեղ որոշակի հարցեր են տրվել, փորձեմ անդրադառնալ դրանց, որ ոչ մի հարցադրում անպատասխան չմնա: Հարց կա՝ ինչո՞ւ ՀԺԿ 5-րդ համագումարին չենք մասնակցել: Չարաչար սխալվում եք: ՀԺԿ 5-րդ համագումարին «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության որոշմամբ մասնակցել է մեր գործընկեր Գագիկ Թադևոսյանը, որը նաև պատրաստել էր ողջույնի ջերմ խոսք: Ավա՜ղ, ողջույնի խոսքի համար ձայն չտրվեց (համոզված եմ՝ ոչ միտումնավոր), ուստի, ոմանք էլ, բնավ ոչ ընդդիմադիր դաշտից, շտապեցին տիրաժավորել այդ ապատեղեկատվությունը: Գնացել ենք, առաջիկայում հրավերի դեպքում նույնպես կգնանք: Եվ ոչ միայն ՀԺԿ-ի, այլ նաև «Արդարություն» դաշինքում ընդգրկված 9 կուսակցությունների համագումարներին, որովհետև մենք նույն հավասար վերաբերմունքն ունենք դաշինքի կուսակցությունների նկատմամբ և ներկայիս փուլում բոլորի գործունեությունը բարձր ենք գնահատում՝ գերապատվություն չտալով և ոչ մեկին, որպեսզի մեր գործընկերները ո՛չ նևանան, ո՛չ էլ խանդեն մեկը մյուսին: Սա է «Ազգային Միաբանություն կուսակցության» մոտեցումը: *(Ծափահարություններ):*

Կենսաթոշակառուների հետ կապված նույնպես հարց կա: Այս խնդրի մասին ես քանիցս խոսել եմ: Համոզված կարող եմ ասել մի բան. այսօր իսկ կան այն բոլոր նախադրյալները, հնարավորությունները, որոնք կյանքի կոչելով կկարողանանք անպայմանորեն այդ հարցը լուծել: Ուրեմն, հենց վերջերս շատ հետաքրքրական պարբերականներից մեկում՝ "Вопросы экономики" ամսագրի 2004 թ. 9-րդ համարում, հրապարակված էր, թե արևմտաեվրոպական որ երկիրը 2001 թ. իր բյուջեով ինչ գումարներ է տնօրինել: Մասնավորապես, Եվրամիության երկրների բյուջեները կազմել են տվյալ երկրում համախառն ներքին արդյունքի 40-ից 50%-ը: Հայաստանի Հանրապետությունում այդ թիվը կազմում է ընդամենը 15%, մինչդեռ մեզանում գործող հարկային դրույքաչափերի պայմաններում այն պետք է մոտենար ՀՆԱ-ի 40%-ին, այսինքն՝ ՀՆԱ-ի 25%-ի չափով գումարներ գրպանվում են: Գրպանվում է, անտարակույս, իշխանական կլանի կողմից: Եվ այդ փողերը «լվացվում» են հենց Հայաստանում, վերածվում դոլարի և երկրից դուրս բերվում, դրա համար էլ տնտեսագիտական մեծագույն նոնսենսի առաջ ենք կանգնել: Մենք ականատեսն ենք մի իրողության, երբ դոլարի փոխարժեքն ընկնում է, իսկ դրամինը՝ արժևորվում. մինչդեռ հենց այդ նույն ժամանակ ընկնում է նաև դրամի գնողունակությունը: Դրա հետ մեկտեղ չհաշվարկած շուրջ 600 միլիոն ԱՄՆ դոլար

տարեկան կտրվածքով Հայաստանից դուրս է բերվում, որով էլ Հանրապետության ֆինանսական շուկայում առաջանում են անառողջ վայրիվերումներ: Հիշատակածս կողոպուտի ճանապարհը կտրելով և այդ գումարները բյուջե մուտք անելով՝ հնարավորություն կունենանք շեշտակի անգամներ, ոչ պակաս 3 անգամ, բարձրացնել կենսաթոշակները, ինչպես նաև բյուջետային աշխատողների աշխատավարձերը, էլ չեմ ասում՝ հնարավորություն կունենանք ավելի արդարացի մոտեցումներ որդեգրել խաբված ավանդատուների նկատմամբ: Այդ բոլոր հաշվարկները մենք ունենք:

Չեզ թվում է՝ ինչ է, պատահական է, որ արգելքներ են դրված իմ հեռուստաելույթների վրա: Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանից առաջ «Կենտրոն» հեռուստաընկերությունը հրավիրեց ստուդիա, որ վաղը մյուս օրը չգնամ այնտեղ ու հայտարարեմ (միամիտներն այդպես էին կարծում), որ ինձ հեռուստաեթեր չեն տալիս: «Կենտրոնի» այդ ելույթիս առանցքը մեկն էր. խոսել վերահաս վտանգների մասին և մատնանշել դրանք հաղթահարելու ուղիները: Իշխանությունների պատվերն էլ հեռուստատեսությանը հետևյալն էր. 50 տարբեր տեղերում նկարահանումներ էին արել և միայն 4-5 հոգի էին թերահավատորեն խոսել, նրանց էլ հենց եթերով ցույց տվեցին ու հետո էլ Քոչարյանի սրտին յուղ նստեցնող մեկնաբանություններ արեցին: Է, լավ, հարգելի իշխանավորներ (ձերոնք հիմա նկարահանում են, դրա համար եմ ձեզ դիմում), եթե չեք վախենում, ուղիղ հեռուստաեթեր տրամադրեք՝ խոսեմ, հետո էլ ասածներս, եթե կարող եք, ջախջախեք ձեր փաստարկներով: Ժողովուրդ ջան, չեն կարող, որովհետև ոչ մի պարապ թիվ չեմ ասում, որովհետև ոչ մի պարապ խնդրի մասին չեմ խոսում:

Չստացվի, որ տխուր երանգներով եմ ավարտում խոսքս: Համոզված եղեք, Հայաստանում կա այն ներուժը, որն իշխանությունը վերցնելով՝ կծաղկեցնի մեր երբեմնի չքնաղ երկիրը, որովհետև մեր թիկունքին, բացի մեր ժողովրդից, կանգնած է ողջ Սփյուռքը, կանգնած են այն հիասքանչ ձեռներեցները, ովքեր պատրաստ են միլիոնավոր դոլարների ներդրում կատարել Հայաստանում, բայց այստեղից ճարահատյալ մեկնել են, որովհետև իշխանությունների կողմից միմիայն կողոպուտի են ենթարկվել: Լինի դա Լևոն Մարկոսը, թե լինեն տասնյակ խաբված ուրիշ ձեռներեցներ, լինեն Ռուսաստանում, հեռավոր Ամերիկայի Միացյալ Նահանգներում և թե այլուր հանգրվանած մեր հայրենակիցները: Հավատացած եղեք, նրանք բոլորն էլ հոգով ու սրտով այսօր էլ մեզ հետ են: Ի դեպ, երեկ վավերագրական կինոնկար տեսա և փշաքաղվեցի: Նստած է հայ մարդը, ահա, Խաղաղ օվկիանոսի ափին, նայում է հեռուները, հորիզոնից այն կողմ, արցունքն աչքերին տեսիլք է տեսնում՝ Արարատ լեռը: Հարյուր հազարավորներ են նմանները, և այդ մարդկանցից որին խոսեցնում էր լրագրողը, ասում էին՝ վերադառնալու ենք Հայաստան, երբ վերջ կտրվի այնտեղ տիրող անարդարությանն ու կողոպուտին: Ուշագրավ է և այն, որ այսօրվա դրությամբ ԱՄՆ-ում, մասնավորապես Կալիֆորնիայում մեր բոլոր հանդիպումները շատ ավելի լիարժեք և ամբողջական են լուսաբանվում, քան Հայաստանի Հանրապետությունում: Եվ, օգտվելով առիթից, ուզում եմ բոլորիս անունից մեր խորին շնորհակալությունը հայտնենք այդ գործերի քավոր, մեծ հայրենասեր Արկադի Գևորգի Բաղրամյանին,

որին էլ ծափողջույններով հայտնենք մեր շնորհակալությունը: *(Բուռն ծափահարություններ):*

Սիրելի՛ ժողովուրդ: Երբ այս ամենի մասին խոսում ես, միայն գլխովդ չէ, միայն ուղևովդ չէ, որ անց ես կացնում: Անշուշտ, նաև սրտով ես անցկացնում, որովհետև հայ ժողովուրդն ոգևեն ժողովուրդ է, որովհետև հայ ժողովուրդն ունեցել է Նարեկացի: Նարեկացու խոսքով էլ ավարտեմ. «*... Թող չպատահի ինձ հանկարծ, Երկնել, սակայն չծնել, Ողբալ՝ չարտասվել, Խորհել՝ չհառաչել, Ամպել՝ չաննձրեղել, Գնալ՝ չհասնել, Քեզ ձայն տալ, Եվ դու ձայնս չլսես...*»: Հայ ժողովուրդն «Ազգային Միաբանության» ձայնը լսում է ... *(Բուռն ծափահարություններ):*

Հիմա էս մեր լրագրողներից ոմանք, ովքեր քոչարյանական կերակրատաշտից են սնվում, կասեն՝ «Ազգային Միաբանությունում» ասելիք չունեին, միակ բանը, ինչը տպավորվեց, այն էր, որ Գեղամյանի ձայնը վերջում խզվեց: Էս է լինելու մեկնաբանությունը, էլ չեն ասի, ցավոք, ֆարիսգիտ ունեմ: Բայց արդեն իսկ հաստատ կարող եմ ասել, որ մոտ ապագայում կազատվեմ իմ ֆարիսգիտից, իսկ բոլորս՝ այս իշխանություններից:

Մեր քանաքեռցի Գրիշան ասելու բան ունի: Խնդրեմ:

– Թոռանս զինակոչում են բանակ: Նա ինձ հարց է տալիս, ո՞նց գնամ էն բանակը ծառայելու, որի նախարարը դումար է խաղում (Գրիշա Տեփոյան):

– Ժողովուրդ ջան, մեր քննադատությունից հետո նախագահականից ասացին՝ թարգել ա: *(Ծիծաղ, ծափահարություններ):*

Ինչպես բոլորիդ, այնպես էլ հարց տվող հարգարժան մեր մյուս ընկերոջը, որն իրավացիորեն ցասումով հարցնում է, իսկ ինչպե՞ս ենք կատարելու իշխանափոխություն, ասեմ, անշուշտ, կարելի է մանրամասներ հաղորդել մեր մարտավարության, մեր առաջիկա գործողությունների մասին: Բայց հենց դա հրապարակվում է, հենց արդեն տեղերում սկսում են այդ աշխատանքները կատարել, ինչպես մեր քանաքեռցի Գրիշայի դեպքում եղավ գարնանը, մարդկանց թևերն ոլորում են և տանում մոտակա ներքին գործերի, այն է՝ ոստիկանության բաժանմունքներ: Բարձրացված հարցը, ինչ խոսք, արդիական է: Մեկ այլ երանգի մասին էլ խոսենք: Այսօր, չգիտես ինչու, հիշատակվում է միայն Ստրասբուրգում ունեցած իմ ելույթը: Մինչդեռ փաստարկված, ծանրակշիռ ելույթներ եմ ունեցել Ռոտերդամում՝ ԵԱՀԿ-ի լիագումար վեհաժողովում, անցյալ տարի: Այս տարի՝ հունվարին, ելույթ եմ ունեցել նաև Վիեննայում՝ նույն կազմակերպության լիագումար նիստում: Մամուլի և ոչ մի միջոց դրանց բացարձակապես չանդրադարձավ: Մինչդեռ, կրկնում եմ, Եվրոպայում հնչած իմ ելույթներում միայն և միայն հարցեր էին բարձրացվում, որոնք կենսական նշանակություն ունեն մեր երկրի ճակատագրի, բոլորիս համար: Հարցեր էին բարձրացվում, որոնց լուծման դեպքում արդեն իսկ մեծապես կթուլանար դրսի վտանգավոր հնարավոր ազդեցությունը Հայաստանի Հանրապետության վրա: Էմբարգո ասեմ, տաբու ասեմ, արգելք է դրված խոսքս եթերով հնչեցնելու վրա: Իրենք էլ նենգ են, բայց, հո, ախմախ չեն, ընչաքաղց են, բայց հիմար չեն, որովհետև գիտակցում են, թե ինչքան վտանգավոր է իրենց վարած քաղաքականության և իրենց

հասցեին ասված ճշմարիտ խոսքը: Կնշանակի՝ գիտակցում են նաև, թե իրենց համար որքան սարսափազդու կլինի, եթե այս իրավիճակում մեր ժողովուրդը կոնսոլիդացվի: Այսօր իշխանությունները բոլորիցս շատ են ուզում, որ, այո, մենք գնանք երթերի, մեզանից ավելի շատ են ուզում, որ հանրահավաքներ անենք: Կարտոնեն, հետո էլ ամեն ինչ կանեն, որ նորից արյուն թափվի, հետո էլ կհայտարարեն՝ Հայաստանի Հանրապետությունում ընդդիմությունը վիճակն ապակայունացրեց, թուլացրեց պետականությունը, դրա համար դրսի ուժերն օգտվեցին պահից, ծնկի բերեցին մեր իշխանություններին՝ փաթաթելով բոլորիս վզին Ղարաբաղի համար ոչ նպաստավոր լուծումներ: Այդ բոլորը մենք հաշվարկել ենք, այդ բոլորը գիտենք: Եվ գոնե «Ազգային Միաբանություն կուսակցության» համար չկա ավելի վեհ գաղափար, քան Հայաստանի Հանրապետությունում անկախ պետականության լիակատար կայացումն է:

Այստեղ հարց տվողներից մեկն ասում է՝ ժողովուրդն ում նախագահի կընտրի, կընտրի: Իսկ ո՞վ ասաց, որ այդպես չէ: Ինչո՞ւ եք ձեր հարցով փորձում արհեստականորեն լարվածություն ստեղծել ընդդիմության տարբեր թևերի մեջ: Չէ՞ որ բոլորիս հասկանալի է հարցի նրբերանգը, այն է՝ ակնարկում եք ընդդիմության ղեկավարների միջև առկա մրցակցության մասին: Այո՛, այդպիսի մրցակցություն կա, որի առանցքն է՝ ում ավելի շուտ կհաջողվի մեր ժողովրդի շալակից թոթափել ապազգային այս իշխանությունների բեռը: Դրա հետ մեկտեղ մենք այսօր էլ հստակ հայտարարում ենք՝ որն է մեր ծրագիրը: Իսկ ծրագիրը մեկն է՝ համակարգային այնպիսի փոփոխություններ իրականացնել Հայաստանի Հանրապետությունում, որ ոչ մի դիկտատոր, ուզուրպատոր չկարողանա իշխանության տարբեր ճյուղերը դարձնել իր դռանը կապած շնիկը կամ շնիկները, որոնց պարտադրվում է իրականացնել նախագահականում թխված քաղաքականությունը: Եվ, վերջին հաշվով, քաղաքականությունը սև ու սպիտակ գույների խաղ չէ, այն հնարավորի արվեստ է և միտված է մի գաղափարի՝ ամենավտանգավոր իրավիճակից երկիրդ հաղթանակած դուրս բերես՝ սեփական եսդ ստորադասելով դրան: Մենք էն գլխից ասել ենք, մեր եսն էլ վաղուց ի վեր ստորադասել այդ նպատակին: Ասել ենք նաև, եթե կա մեկ այլ, ավելի կուռ ծրագիր, եթե կա ավելի կազմակերպված քաղաքական ուժ, քան մերն է, ապա գնանք նրանց դրոշի ներքո: Սրանք են մեր մոտեցումները: Հակառակ դեպքում ակամայից կարող ենք դառնալ իշխանությունների ջանքերով թատերականացված ներկայացումների վերածված միջոցառումների մասնակիցը: Խոսքս ԱԺ-ի բակում կայացած հոկտեմբերի 26-ի հանրահավաքի եզրափակիչ արարողության մասին է, երբ պսակադրությանը մասնակցում և ճառեր էին ասում ճիշտ այն նույն մարդիկ, ովքեր ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերվա ոճրագործության մասին այդպես էլ իրենց կարծիքը չարտահայտեցին, վայրագությունները դատապարտող գնահատականներ չտվեցին՝ լինելով այդ ծեծուջարդի, արյունահեղության հնինակի քաղաքական հենարանը: Այդպես էլ «ոչ» չասացին, մինչդեռ այդ գիշեր կարող էին հենց նույն հոկտեմբերի 27-ի նահատակների հարազատները նս զոհվել: Մենք չենք ուզում աչքակապությամբ զբաղվել: Եվ հետո. մեր դիրքորոշումները, որոնք հստակ, մատչելի և պարզ են, բացահայտ չենք

մանրամասնում, որովհետև իշխանությունը կփորձի անպայմանորեն դրանք օգտագործել ենթգ նպատակների իրականացման համար, այն է՝ առաջին հերթին հիասթափեցնել ժողովրդին, նրան գցել հուսահատության գիրկը՝ պառակտելով ընդդիմադիր քաղաքական ուժերին: Ջուր են լինելու այդ ջանքերը, միևնույն է, դա չի հաջողվելու:

– Մեծ գործերը զոհեր են պահանջում, հնարավոր է, որ մի քանի հոգի էլ զոհվեն իշխանափոխության ժամանակ (ռեպլիկ դահլիճից):

– Երբեք այդքան հանգիստ խղճով ու ձայնով մի ասեք՝ կարող է արյուն թափվել: Թարգեք էդ: Հուսահատված մարդիկ կամ էլ սադրիչներն են միայն նման կոչերով հանդես գալիս: Մինչդեռ, ցավոք, հենց վերջիններին այդպես էլ չտեսանք ապրիլի 12-ին, 13-ին մեր կողքին... Գային կողքներս կանգնեին, եթե սադրիչներ չէին, որ հիմա իրավունք ունենային թերթերով մեզ խրատներ տալու, թե իշխանափոխությունը զոհեր է պահանջում: Արյուն թափելը հենց ընկալվեց իբրև հասարակ, առօրեական երևույթ՝ իր հետեղից կբերի նոր հոկտեմբերի 27-եր:

Սիրելի՛ ժողովուրդ, հասկանում եմ, ալեկոծված են Ձեր սրտերը, խռովված՝ հոգիները: Համոզված ե՛ք, ճշմարիտ խոսքն ու գործը հաղթանակելու են, ճշմարիտ գաղափարի շուրջ համախմբվելու և արարելու է վաղվա իր լուսավոր օրը ողջ հայությունը: Դրա առհավատչյան այսօրվա մեր համախմբված ու վճռականորեն տրամադրված դահլիճն ու Ձեր ոգևորությունն է: Շնորհակալություն: *(Բուռն, որոտընդոստ ծափահարություններ):*

«Իրավունք», 5 – 11.XI.2004:

Слепота зрячести или зрячесть слепоты?

Этот вопрос прозвучал в выступлении депутата НС РА Арташеса Гегамяна на обсуждениях по проблеме Нагорного Карабаха в рамках сессии ПАСЕ 25 января.

Уважаемый председатель, уважаемые коллеги!

Характер обсуждения вопроса о противостоянии в Нагорном Карабахе напоминает дискуссию великих философов эпохи эллинизма Платона с Аристотелем на тему "Слепота зрячести и зрячесть слепоты, или Имеются ли у крота глаза?" Когда этот спор очень затянулся, раб-садовник просто предложил взять крота и посмотреть на его морду. Но философы ответили, что для выявления истины крот им не нужен...

Так и сейчас в ПАСЕ хотят решить судьбу 140 тысяч жителей Нагорного Карабаха, не пригласив их на эту дускуссию. Делегация Армении, настаивающая на их обязательном приглашении, увы, стараниями печально известных покровителей Азербайджана, по сути, оказалась в роли раба-садовника. И это при том, что наши коллеги из Азербайджана уж никак не тянут на Платона и Аристотеля, а их поводыри тем более. Не приходится говорить и о том, что многоуважаемый господин Дэвид Аткинсон более 10-и лет не был в Нагорном Карабахе.

В чем же суть вопроса? Азербайджан стремится установить власть над территорией с этнически чуждым населением, придерживающимся христианских морально-нравственных убеждений. Здесь, в ПАСЕ, упорно не хотят видеть, что *уровень образованности населения Нагорного Карабаха за 15 лет свободы и независимости, повторяю, свободы и независимости, значительно превзошел аналогичный показатель в Азербайджане. Число учителей, врачей, студентов и школьников на 1000 человек населения также выше, чем в Азербайджане, как и доходы на душу населения.*

А самое главное, народ Нагорного Карабаха завоевал свою свободу ценою огромных человеческих потерь и лишений, понесенных в результате погромов армян в Сумгаите, Баку, Кировабаде, Мингечауре, Дашкесане, я уже не говорю о многотысячных жертвах войны, навязанной 8-мил-

лионным Азербайджаном армянскому населению Нагорного Карабаха.

Сегодня наши азербайджанские коллеги после провалившихся насильственных военных действий упорно пытаются насиловать теперь уже историю конфликта. Единственным аргументом в этом неблагородном занятии для них является не восстановление исторической справедливости, а упование на силу черного золота — нефти. Той самой азербайджанской нефти, которая в конце XIX — начале XX веков перевесила кровь полутора миллионов безвинно убиенных армян в Османской империи. Волею исторических судеб, а быть может, волею божественного провидения, свидетелем этих трагических для армян лихолетий был премьер-министр Британской империи Роберт Солсбери. Именно он на мольбы армян спасти двухмиллионное население Западной Армении от турецкого ятагана в 1896 году серьезно и цинично заявил: "Английские военные корабли не могут подняться на армянские горы". Видимо, к этому времени они еще не успели спуститься с Гиндукушских гор Афганистана. И это обернулось первой трагедией — резней армян, учиненной в Османской империи в годы правления султана Гамида, прозванного кровавым.

Спустя годы в Британской империи был и другой премьер-министр, выдающийся политический деятель и гуманист Дэвид Ллойд-Джордж, который, характеризуя официальную позицию государств-участников Парижской мирной конференции 1919 года, писал: "Жители Армении и по расовому, и по религиозному принципу отличались от господствующей турецкой нации. По вере они были христиане. Недоброй памяти Абдул Гамид проводил политику изгнания этого древнего народа... превращения армянского большинства в жалкое запуганное меньшинство... Союзные державы (Британская империя, Франция, Бельгия, Греция, Польша, Португалия, Чехословакия, Румыния, Сербо- Хорватско-Словенское государство, ГедЖас и Япония) придерживались того мнения, что *нельзя позволить туркам воспользоваться плодами их зверств, а армянскому народу должно быть полностью возвращено наследие предков и предоставлена возможность восстановить свое былое могущество"* (*Дэвид Ллойд-Джордж:* "Правда о мирных договорах").

Спустя почти 90 лет историю хотят повторить. Однако, надеемся, ПАСЕ осознает, что народ Нагорного Карабаха непобедим, ибо он отстаивает свободу, а свобода не остерегается смерти, потому что она не боится божественного суда, в отличие от рабства, в которое кое-кто в ПАСЕ хочет ее загнать. Свое выступление хотел бы завершить словами великого человека в истории Великобритании Уинстона Черчилля: "Отличие госу-

дарственного деятеля от политика в том, что политик ориентируется на следующие выборы, а государственный деятель – на следующее поколение".

Если депутаты ПАСЕ не перейдут Рубикон, разделяющий политика от государственного деятеля, то очень скоро сбудутся мрачные предсказания талантливого немецкого философа Освальда Шпенглера и наступит "Закат Европы". И это будет на нашей с Вами совести...

Арташес Гегамян
Член делегации НС РА в Парламентской
Ассамблее Совета Европы
Европейские народные партии/христианские демократы
Страсбург, 25 января 2005 г.

"Голос Армении", 27.I.2005.

Народы Европы ждут покаяния...

Кроме доклада Аткинсона в повестке прошедшей в Страсбурге сессии ПАСЕ значился еще один документ, представляющий интерес для всех армян мира. Речь о докладе шведского депутата Матса Эйнарсона по проблемам насильственной депортации и этнических чисток, в котором докладчик умудрился обойти стороной Геноцид армян. Армянская делегация в ПАСЕ предприняла все возможное, чтобы трагедия армян была упомянута в этом документе. Членам делегации удалось собрать 24 подписи под этим предложением и заручиться поддержкой Политической комиссии (15 голосов "за"). Однако на заседании ПАСЕ доклад Эйнарсона был по предложению руководителя французской делегации Бернара Шрайнера отправлен на доработку. Депутаты ПАСЕ усмотрели в нем множество противоречий и недоработок. Вместе с докладом было отложено и решение по учреждению "Европейского центра памяти жертв принудительного перемещения населения и этнических чисток". Выступавшие по этому вопросу члены армянской делегации в ПАСЕ Арташес Гегамян и Шаварш Кочарян высказались в пользу создания подобного центра, акцентировав при этом жертвы, понесенные армянским народом.

Ниже приводится полный текст выступления Арташеса Гегамяна. Отметим, что в своем выступлении по поводу доклада Аткинсона Гегамян также обращался к Геноциду армян и теме покаяния, проведя параллели между трагедией 1915 года и ее повторением в виде погромов в Сумгаите, Баку, Кировабаде, Мингечауре, Дашкесане, не говоря уже о многочисленных жертвах войны, навязанной восьмимиллионным Азербайджаном армянскому населению Нагорного Карабаха...

Уважаемый господин председатель! Уважаемые коллеги!

Глубоко символично, что обсуждение вопроса о создании Европейского центра памяти жертв этнических чисток проходит в год 90-летия Геноцида армян в Османской империи. Цвет армянской нации, более 600 армян-интеллектуалов, архитекторов, врачей, представителей политической элиты, офицеров, которые жили в Константинополе, в ночь с 24 на 25 апреля 1915 года были арестованы и зверски убиты. Этим зловещим злодеянием

началось истребление полутора миллионов армян. С этого начались скитания чудом уцелевших от турецкого ятагана сотен тысяч армян по всему свету.

Тогда была написана одна из страниц в книге Бруно Ясенского "Заговор равнодушных". Европа промолчала. И не случайно, что четверть века спустя, в августе 1939 года Гитлер в своем диком расовом бреду, выступая перед командующими армий, заявил: "Моим частям "Мертвая голова" я дал приказ только на востоке неумолимо и без всякого сострадания посылать на смерть мужчин, женщин и детей польского происхождения и говорящих на польском языке. Только так мы завоюем жизненное пространство, которое нам нужно. Кто еще говорит сегодня об уничтожении армян?" В дальнейшем трагическую судьбу поляков разделили евреи. Был Холокост.

Рецидивы этнических чисток дали о себе знать в Европе в конце 80-х — начале 90-х годов. Когда были погромы сотен и тысяч армян в Сумгаите, Баку, Кировабаде, Дашкесане, когда более 450000 моих соотечественников лишь бегством из Советского Азербайджана избежали гибели. И только ценою больших человеческих потерь благодаря героизму смогло уцелеть лишь армянское население Нагорного Карабаха.

К сожалению, наш коллега из Турции, господин Мерчан, позавчера выступая здесь, гневно осуждал карабахцев за то, что они предотвратили геноцид собственного народа. Не выдерживают критики его попытки провести параллели между событиями в Нагорном Карабахе и отдельными проявлениями сепаратизма в странах Европы, что гневно осуждается подавляющим большинством населения самих европейских стран.

По сути, господин Мерчан призывал бельгийцев, французов, англичан, поляков, россиян, итальянцев спасаться от самих же себя. Хорошо, что представителей Канады не было в Совете Европы: им никак не простили бы, что пару лет назад правительство Канады дало возможность путем референдума определить квебекцам свою дальнейшую судьбу. Его выступление было выдержано в традициях византийской политики. Видимо, предав огню и мечу в 1453 году Константинополь, кое-какие уроки османцы извлекли из разрушенной ими византийской цивилизации. Справедливости ради скажем, что у византийцев переняли не самое лучшее. Почему-то нашим коллегой из Турции не были упомянуты июльские события 1974 года, когда турецкий военный корпус высадился на Кипре и аннексировал почти 40% территории суверенной независимой Республики Кипр, 82% населения которой составляли греки, а также армяне и мароните. Не было упомянуто, что ценой аннексии стала гибель тысяч греков-киприотов,

насильственное изгнание более двухсот тысяч киприотов-христиан, которые стали беженцами в своей собственной стране.

Невольно на память приходят слова из Библии: "И что ты смотришь на сучок в глазе брата твоего, а бревна в своем глазе не чувствуешь. Или как скажешь брату твоему — дай я выну сучок из глаза твоего. А вот в твоем глазе — бревно. Лицемер. Вынь прежде бревно из твоего глаза и тогда увидишь, как вынуть сучок из глаза брата твоего" (Евангелие от Матфея).

Создание европейского центра памяти жертв этнических чисток надо начать с восстановления нашей собственной исторической памяти. А примером на этом пути пусть послужит признание Mea Culpa — "Моя Вина", с которым выступил Папа Римский Иоанн Павел II в 2000 году от Рождества Христова. Он просил у Бога и человечества прощения за действия католической церкви в отношении еретиков и вольнодумцев, за нетерпимость, религиозные войны и крестовые походы, а также враждебность и недоверие многих христиан к евреям.

Думаю, что учреждению Европейского центра должно предшествовать заявление-самопризнание депутатов ПАСЕ Mea Culpa — "Моя Вина", ибо все этнические чистки на европейском континенте имели место по вине политиков, а не народов. А народы Европы ждут покаяния политиков, всех нас.

Арташес Гегамян
Европейские народные партии/
христианские демократы
Страсбург, 27 января 2005 г.

"Новое время", 1.II.2005; "Голос Армении", 1.II.2005.

21-րդը կդարձնենք Հայաստանի բարգավաճման դար*

Ս*իրելի՛ ընթերցող*

Կարծես գործելակերպ է դառնում, երբ հին ու նոր իշխանությունների սայլին լծված լրատվամիջոցները (հատկապես Լ. Տեր-Պետրոսյանին «ընտանեկան փողրատ» նանակով սատարողները) միտումնավոր ներգափոխում են Արտաշես Գեղամյանի հրապարակային ելույթները: Ասես թե վերջիններիս սրտներից արյուն է ծորում, հատկապես երբ նա տարածաշրջանում ստեղծված բարդ, լարված իրավիճակից դուրս գալու իրատեսական, հավասարակշռված ուղիներ է մատնանշում: Դե, ինչ, նրանց հաշվարկը պարզ է. գիտեն, որ Ա.Գեղամյանի ելույթների հեռարձակման վրա արգելանք է դրված, և կարող են ապատեղեկատվությունը ճշմարտության տեղ անցկացնել: Ուստի, Ձեր դատին ենք ներկայացնում Ա.Գեղամյանի բանավոր խոսքի շարադրանքը:

Նշենք, որ լեփ-լեցուն դահլիճում, ինչպես նաև նախասրահներում հավաքված ավելի քան երկու հազար երեք հարյուր մարդ շուրջ երկու ժամ համակ ուշադրությամբ և մեծ ոգևորությամբ ունկնդրեցին Ա.Գեղամյանի խոսքը:

Սիրելի՛ ժողովուրդ, կոնֆերանսի պատվիրակներ են ընտրվել 617 մարդ, բայց, ինչպես տեսնում եք, եռակի ավելի մարդ է եկել ներկա լինելու մեր աշխատանքներին: Ով ոտքի վրա է հարկադրված լինելու մասնակիցը դառնալ համաժողովին, նրանցից խոնարհաբար ներողություն եմ խնդրում:

Սիրելի՛ ժողովուրդ, «Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը և «Ազգային Միաբանություն կուսակցության» խնդիրները» հարցը դարձել է օրակարգային, քանի որ Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղը հայտնվել են ծայրաստիճան վտանգավոր զարգացումների նախաշեմին: Եվ ամենևին պետք չէ լինել Սողոմոն իմաստուն, որ գիտակցես այն վերահաս վտանգները, որոնք ծառացած են մեր ազգի, մեր ժողովրդի, հայության և հայոց պետականության առջև: Դրա ամենավառ ապացույցներն այն բոլոր հանդիպումներն ու քննարկումներն են, որոնց մասնակիցը դարձան «Ազգային Միաբանություն կուսակցության» Ազգային ժողովի այն պատգամավորները, ովքեր ականատեսն են եղել թե՛ Եվրախորհրդում, թե՛

---

* Ելույթ՝ «Ազգային Միաբանություն կուսակցության» կոնֆերանսում (19.II. 2005, ՀՀ կառավարության նիստերի մեծ դահլիճ):

ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովում, թե՛ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Խորհրդարանական վեհաժողովում ծավալված քննարկումներին: Բնականաբար, ելույթ ունենալուց առաջ մտածում էի՝ լավ, ստնծված իրավիճակը ո՞ր իրավիճակի հետ համեմատեմ, ի՞նչ զուգահեռներ անցկացնեմ, որն ընդունելի ու հասկանալի դառնա ոչ թե մեր ժողովրդի համար, ժողովուրդը բնազդով զգում է այդ վտանգները, այլ ըմբռնելի լինի իշխանությունների համար, ովքեր ինքնահանգստության թմբիրից մինչ օրս դուրս չեն եկել, ովքեր առիթը բաց չեն թողնում ասելու, որ տնտեսական աննախադեպ աճ կա, երկիրն էլ իր ապրուստով արդեն մոտենում է շվեյցարական կոնֆեդերացիային: Ասես թե այս մարդիկ Հայաստան աշխարհի հետ բացարձակապես և ոչ մի առնչություն չունեն: Իրողություն, որը մեզ համար պարզ ու հասկանալի էր դեռ տարիներ առաջ: Այդ մարդկանց պորտալարը հայոց հողի հետ և ոչ մի առնչություն չունի: Կրկնում եմ, հայոց հողի հետ՝ Արցախը ներառյալ…

Եվ ակամայից մտորումները տանում-հասցնում են 1915 թ., Եղեռնի զարհուրելի օրերը, որի 90-ամյա տարելիցը ձեզ հետ շուտով պետք է նշենք: Հիշում ես մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, որը տեղ ու դադար չուներ, անքուն գիշերներ էր անցկացնում, Թիֆլիսից գնում էր Ալաշկերտ, Արդահան, գնում էր Սարիղամիշ, որբուկ մանչուկներին հավաքում, Իգդիրի վրայով բերում Էջմիածին, տեր կանգնում նրանց: Կինը՝ Օլգան, նամակ էր գրում Հովհաննեսին, տրտնջում, ասելով, թե 4-5 տարեկան որբուկներին տեր ես կանգնել, չէ՞ որ քո տղաները 18-19 տարեկան են և տասը երեխայի հայր ես: Քո որդուն, ավագին՝ Համլիկին, տանում են ռազմաճակատ, որովհետև ուսման վարձը չի կարողացել տալ, իսկ դու օտարի երեխային ես տեր կանգնում: Այդ դժնդակ օրերին ամենուր համաճարակ էր՝ տիֆ էր, խոլերա էր, տրախոմա էր, դիզինտերիա էր, դիակները չէին հասցնում հողին հանձնել, ջրերն էլ վարակված էին: Մեծ բանաստեղծը ջրկիրների հետ կում-կում երեխաներին ջուր էր տանում... Ո՞ւր է և ո՞վ է այսօր այդ բանաստեղծը, չէ՞ որ վտանգված է մեր ազգը: Ունենք բարոյականությունը բարձր պահած մի կին՝ Սիլվա Կապուտիկյան, որի ծննդյան 85-ամյակը այդպես էլ պետականորեն չնշեցին: Ո՞վ է այն Թումանյանը, որ վաղը մյուս օրը վերահաս վտանգի ժամանակ կոչով դիմի ժողովրդին, վերջինս էլ անսա նրան, իմանա, որ այդ կոչի հետևում ոչ թե սեփական երեխաների բարեկեցությունն ապահովելու տենչանքն ու ցանկությունն է, այլ ժողովրդին ամոքելու, ժողովրդին փրկելու, ճիշտ ճանապարհը ցույց տալու մղումը… Եվ պատահական չէ, որ ակամայից մտաբերում ես բարոյալքության այն դրսևորումները, որոնք հետագայում բերեցին ավելի մեծ բարոյալքության: Արդեն իսկ Հայաստանի առաջին Հանրապետության վարչապետ Սիմոն Վրացյանը 1921 թ. խռովության ժամանակ, փետրվար ամսին, ի՞նչ եք կարծում, ո՞ւմ է դիմում օգնության համար: Դիմում է Մուստաֆա Քեմալին, ասում է՝ զորքերդ բեր, իշխանությունս պահեմ…

Ինչո՞ւ եմ պատմական այս զուգահեռները տանում, որովհետև այսօր ազգը պառակտված է: Պառակտել են ոչ թե ժողովրդին, այլ ժողովրդի երբեմնի ընտրանուն: Ազգի մտավորականությանը տարան Ազգային ակադեմիայի դահլիճ, ստիպեցին,

պարտադրեցին, որ երդվեն հավատարմության մեջ առ պարոն Քոչարյանը, ասեն, որ խելքներն իրենցը չի, ուզում են հենց նա դառնա երկրի նախագահը: Կարիքից կքված, հարկադրված, ստիպված էին դա անել մեր ազգի երեղելիները: Իսկ այնտեղ կային բոլորիս համար դեռ մինչ այդ օրերն ընդունելի մարդիկ, հայի անունը բարձր պահող, բարոյական բարձր չափանիշներ ունեցող մարդիկ: Ո՞ւր են այժմ նրանք. չկան, անգամ իսկ անհարմար են զգում փողոց դուրս գալ, որովհետև հայ մարդը՝ պարկեշտ լինելով, խոհեմ լինելով, կարող է երեսներին չթքել, բայց գլուխը հաստատ կթեքի:

Եվ, ահա, այստեղ է, որ «Ազգային Միաբանություն կուսակցությունը»՝ կրելով այդ անունը, պարտավոր է, այո՛, պարտավոր է, փնտրել միաբանության այն եզրերը, որոնք կհամախմբեն ժողովրդին, ուժ, վճռականություն և կամք կհաղորդեն նրան՝ վերահաս վտանգները դիմակայելու, դիմագրավելու համար: Եվ մեր այս կեցվածքը, չգիտես ինչու, խանդ է առաջացնում մեր գործընկերների մոտ, և թշնամանք՝ հին ու նոր իշխանավորների շրջանում: Երկու տարվա ընթացքում հազիվ կարողացանք ինֆորմացիոն շրջափակումը ճնքել, և երկու օր առաջ վերջապես ուղիղ եթեր տվեցին: Այն էլ հարկադրված էին գնալ այդ քայլին այն պարզ պատճառով, որովհետև Ստրասբուրգում հնչած իմ ելույթներն այլևս լռեցնել չէին կարող, և ոչ մեկի համար հասկանալի ու պարզ չէր դառնա՝ պատճառն ի՞նչ է: Եվ այդ ընթացքում անամոթաբար ասում են՝ Հայաստանի Հանրապետությունում կուսակցություն չկա, Հայաստանի Հանրապետությունում ընդդիմադիր քաղաքական ուժ չկա: Դե եկեք ու նայեք, աչքերդ էլ կպնի. կա՞, թե՞ չկա: *(Բուռն ծափահարություններ):*

Բնականաբար, այսօր իշխանություններին փնովելու ժամանակը չէ, տեղից վարկաբեկված են. մի երկու նախշ ավել, մի երկու նախշ պակաս, մեկ է՝ սատանան հրեշտակի տեղ չի կարող անցնել: Ուստի, եկեք հասկանանք, գիտակցենք՝ տնտեսապես և սոցիալապես ի՞նչ իրավիճակում է հայտնվել Հայաստանի Հանրապետությունը, արդյոք այդ իրավիճակից դուրս գալու ճանապարհները տեսանելի՞ են իշխանությունների համար և կա՞ն արդյոք դրանք: Իհարկե, կան:

Հենց վերջերս՝ 3 օր առաջ, լույս տեսավ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկագիրքը: Պարզ է, նույն օրը փորձեցի խորին վերլուծության ենթարկել այնտեղ նշված փաստերն ու թվերը: Եվ ի՞նչ եք կարծում՝ ավելի ողբալի վիճակ, քան այսօր Հայաստանում է, նկարագրել հնարավոր չէ: Մի քանի թվերով ու փաստերով հիմնավորեմ ասածս, որ վաղը, մյուս օրը հանկարծ, ավա՜ղ, շատ ազնիվ լրագրողներ ստիպված չլինեն իրենց տերերի կողմից թելադրված՝ հարկադրաբար գրելու և ասելու, որ Գեղամյանը մերկապարանոց հայտարարություններ արեց: Ահա, այսպես, անցյալ տարի 700 աշխատատեղեր են կրճատվել Հայաստանի Հանրապետությունում: Թվերն էլ ասեմ, ուշադիր գրեք, որ վաղը, մյուս օրը շառ չանեք. 1 միլիոն 111 հազար 600 մարդ զբաղված է եղել 2003 թ., 1 միլիոն 110 հազար 900 մարդ՝ անցյալ տարի. 700-ով աշխատատեղերը կրճատվել են: Բայց խնդիրը դա չէ, գրում են, որ ոչ բյուջետային յուրաքանչյուր հիմնարկում աշխատողի միջին աշխատավարձն ամսական կտրվածքով կազմում է 54-ից 56 հազար դրամ: Մինչդեռ ոչ բյուջետային ոլորտում աշխատում են

ընդամենը 890 հազար 900 մարդ, որոնք իրենցից բացի պետք է կերակրեն 2 միլիոն 300 հազար մարդու: Այսինքն՝ 2 աշխատող ապահովում են 5 հոգու ապրուստ: Եթե անգամ իսկ այդ գումարը կարողանանք հավասարաչափ բաշխել ազգաբնակչության միջև, յուրաքանչյուրին ամսական բաժին է ընկնում 21 հազար դրամ: Դա էլ այն դեպքում, երբ նվազագույն սպառողական զամբյուղը 28 հազար է: Բայց մենք գիտենք չէ՞, որ հավասար չի բաշխվում: Մի ամբողջ ազգ սովի է մատնված, մի ամբողջ ազգ թերսնված է: Երբ կարմրուկի, վարակիչ մյուս սուր հիվանդությունների վտանգավոր աճի մասին հայտարարեցի խորհրդարանական 3 րոպեանոց հնարավոր հեռուստաեթերով, ի՞նչ եք կարծում, վիճակագրական ծառայության պաշտոնական տարեկան տեղեկագրքից այդ տվյալներն արդեն հանել են: Փոխանակ հիվանդին դարմանեն, հիվանդին բուժեն, տողերն են հանել...

Մի ամբողջ ազգ թերսնված լինելու պայմաններում ի՞նչ են անում իշխանությունները: Իշխանություններն իրենց լրատվամիջոցներով դիմում են մեզ՝ ընդդիմությանը, ասում են, դուք միայն Ռոբերտ Քոչարյանին և Սերժ Սարգսյանին եք քննադատում, ինչո՞ւ չեք ասում՝ թալանը որտեղից է: Երեկ չէ առաջին օրը հեռուստատեսությամբ հուշեցի՝ որտեղից է: Արծագանք չկա, բայց չէ՞ որ հասցեներ տվեցի: Բա կանգնեք, ասեք՝ կամ ես զրպարտիչ եմ, կամ գողին աշխատանքից անհապաղ հեռացրեք: Գողերին: Որպեսզի հանկարծ չստացվի, որ մեր իշխանավորները, որևէ մեկը պատճառաբանեն, որ այդ հաղորդումը չեն լսել, բարեբախտաբար, այստեղ ամենատարբեր հեռուստաալիքներից լրագրողներ կան, թվային որոշ փաստեր հիմա էլ ներկայացնեմ բոլորիդ դատին և ուշադրությանը: Ուրեմն, հարգելի լրագրողներ, հարգելի ժողովուրդ, 2003 թ. ցորենի ռեսուրսը 151 հազար տոննայով ավելի պակաս է եղել Հայաստանում, քան 2004 թվականին: Մոտավորապես ճիշտ այդքան ավելի պակաս է եղել ցորենի ռեսուրսը 2002 թվականին նույնպես: Բա էդ ո՞նց է ստացվում: Ստացվում է շատ պարզ, որովհետև մաքսային կետերում այդ խմբաքանակները չեն գրանցվում: Իսկ 151 հազար տոննան, սիրելի ժողովուրդ, երեք հազար վագոն է, մեկը չի, երկուսը չի, որ արանքում պլստացնեն: Երեք հազար վագոն ո՞ւր է գնացել: Ամեն տոննայից պարտավոր էին 22% ավելացված արժեքի հարկ մուծել, 10% էլ՝ մաքսային տուրք, այսինքն՝ 32% գանձվեր բյուջե: 140 դոլար էլ մեկ տոննայի արժեքն է՝ հաստատագրված: Տասնյակ միլիոններ գրպանվել են: Այդ ինչո՞ւ 2003 թվականին գրպանվեցին, որովհետև ճիշտ 2 տարի առաջ՝ հենց այս նույն օրը՝ փետրվարի 19-ին, նախագահական ընտրություններ էին: Բա տղերքը փող են ծախսել չէ՞, կաշառել են չէ՞, մեր, ցավոք սրտի, խեղճուկրակության գիրկը նետված տասնյակ հազարավոր մարդկանց: Փողեր են, չէ՞, բաժանել ընտրական հանձնաժողովին, բա պետք է հետ բերեն, չէ՞, տղերքը:

Մի քանի օր առաջ պարոն Քոչարյանը հանդիպեց հարկային ծառայության պետի հետ: Նշվեց, որ 2005 թ. հունվար ամսին բյուջե հավելյալ 2 միլիարդ դրամ է մուտքագրվել, սոցիալական ապահովության հիմնադրամ հավելյալ 1 միլիարդ 100 միլիոն դրամ՝ 2004 թ. հունվար ամսվա համեմատ: Է, մենք էլ գիտենք՝ նոր հարկատուներ չեն գոյացել,

աշխատատներն էլ, ասացի, դեռ 700-ով պակասել են: Որտնի՞ց այդ փողերը: Թալանը մի քիչ կտրեցին, որովհետև տեսան՝ թալանի գլխում կանգնածների հետ ոնց է վարվում ժողովուրդը Վրաստանում և Ուկրաինայում, վախեցան: Ախորժակները մի փոքր սահմանափակեցին, համ էլ հիվանդություն ստանալու վտանգը կար՝ արդեն սրտի յուղակալում կարող է ստանային այդքան ուտելու պայմաններում: Այ, սա է ճշմարտությունը: Եվ եթե տարրական թվաբանության հիմքերին տիրապետում են, իսկ տղերքը գումարել ու բազմապատկել գիտեն (անօրեն դիզած հարստությունը վկա), հանել ու բաժանել չգիտեն, ապա պետք է քաջատևյակ լինեն, որ միայն այս պարագայում տարեկան կտրվածքով 70 միլիոն դոլարին համարժեք գումար շրջանցել է Հայաստանի Հանրապետության բյուջեն: 70 միլիոն դոլարի հետ խա՞ղ ենք անում: Հետո էլ ասում ենք՝ չհասկացա՞նք, այս ո՞նց է, որ դոլարի փոխարժեքը Հայաստանում ընկնում է, մինչդեռ եվրոյի նկատմամբ աճում: Անշուշտ, այդ 70 միլիոն չհաշվարկված գումարը տղերքը հո դրամով ադեի բալիշի տակ չեն դնում պահում, չէ՞: Դոլարի են վերածում, Հայաստանից դուրս հանում: 70 միլիոն դոլար: Տասնյակ միլիոններ էլ, ասացի, գրպանվում է ցորենի հետ կապված: Է, հիմա, էլի եմ դիմում Ձեզ՝ լրագրողներ, ասածս տեսագրեք, հեռուստատեսությամբ էլ ցույց տվեք, պրն Քոչարյանն էլ թող տեսնի. եթե ի զորու է հիմա պայքար ծավալել համատարած կոռուպցիայի դեմ, գնանք կողքը կանգնենք՝ միայն կաշառակեր գողերին բռնենք, թալանչիներին դնենք համաժողովրդական դատի, որ մնացած բոլորի համար խրատ լինի՝ ինչ է նշանակում թերսնված 3 միլիոն ժողովրդին կողոպուտի ենթարկել: Թերթերին էլ՝ ասացի հասցեները, բա մի հետաքրքրվեք, ցորենը կարո՞ղ է Գեղամյանը, Կարապետյանը, Առաքելյանն են ներկրում Հայաստան կամ Մուրադխանյան Սաքոն՝ իր քաղաքային ակտիվով, կամ էլ ընդդիմադիր դաշտի մեր մյուս գործընկերները: Իհարկե, ոչ: Դե թող ընդդիմադիրներից մեկը փորձի բիզնեսով զբաղվի՝ տեսեք գլխին ինչ օյիններ կբերեն: Ի՞նչ, կարծում եք մոռացե՞լ ենք, թե ինչպիսի զարհուրելի հաշվեհարդար տեսան մեր անվանի բիզնեսմենների նկատմամբ: Մտաբերենք երջանկահիշատակ Վանիկ Թորոսյանին, Դիոնիս Մարգարյանին՝ դաժանաբար սպանված Հայաստանից դուրս, բայց, անկասկած, հայաստանյան պատվերով: Հիշենք Ռաֆիկ Շահմուրադյանին, որը վերջերս դարձյալ սպանվեց Հայաստանից դուրս՝ հայաստանյան պատվերով: Նրանք բոլորն էլ ազնիվ բիզնեսով էին զբաղվում, իրենց «կտուր» կոչեցյալն էլ մենք էինք, ժողովուրդն էր և ոչ թե բարձրաստիճան առանձին չինովնիկներ կամ նրանց քաղաքական սպանդարները: Հրաշքով մազապուրծ եղավ անվանի ձեռներեց, «Լևոն Մարկոս» ֆիրմայի տնօրեն Լևոն Գրիգորի Հովհաննիսյանը: 17 միլիոն դոլարի չափով «քցեցին» մարդուն: Հետո էլ գրասենյակի վրա գրանատամյոտով կրակեցին: 17 միլիոն՝ օրը ցերեկով: Մաքուր հայ մարդ է, արդարության հասնելու հույսը դեռ չի կորցրել՝ պրեզիդենտին բաց նամակներ է գրում: Էլ ինչ շառ-շուռ ասես չկպցրեցին մարդուն: Է, եթե այդքան շառ ու շուռ եք անում, պարոնայք իշխանավորներ, իսկ այդ ո՞նց է նրա բիզնեսը Ռուսաստանում ծաղկում: Իսկ ինչպե՞ս է ծաղկում մեր մյուս հայրենակիցների բիզնեսը, նրանց բոլորի անունները հատիկ-հատիկ կարող եմ տալ,

բայց այստեղից այնտեղ կարող է նրանց վնասեն: Այնուամենայնիվ, մի երկուսինը նշեմ, որ չասեն՝ էդ ինչո՞ւ է միայն Լևոն Մարկոսինը տալիս: Կրասնոյարսկում, Խաբարովսկում՝ Ալեքսանդր Միկոյանը, փառահեղ բիզնեսմեն է: Առիթ է եղել՝ հարցրել, հետաքրքրվել եմ, լավ, տղերք, այս ո՞նց հասկանանք, ինչո՞ւ չեք գալիս, չեք շենացնում մեր հայրենի ոստանը: Ասում են՝ Լյովայի գլխին բերածը բոլորիս դաս եղավ: Նույնն ասում են Կալինինգրադի մեր ընկերները: Նույնն ասում են Արևմտյան Եվրոպայի երկրներում հայ ձեռներեցները: Է, որովհետև նրանք սովոր են բնականոն զարգացող բիզնեսի, որովհետև սովոր են պաշտպանված լինել ոչ թե զանազան «կռիշաներով», որոնց երբ գործից հանում են, իրենց հովանու ներքո գտնվող ձեռներեցների սպանությունն անհապաղ տեղի է ունենում, այլ սովոր են պաշտպանված լինել օրենքով:

Այնուհետև, բոլորս գիտենք, երկրում տնտեսական ահավոր հիվանդություններ կան. բերեմ հետևյալ խոսուն փաստը: Անցյալ տարի, համաձայն դատական որոշումների, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե և սոցիալական ապահովության հիմնադրամ պետք է բռնագանձվեր 37 միլիարդ դրամ, այնինչ գանձվել է ընդամենը շուրջ 6 միլիարդ դրամ: 31 միլիարդ դրամը, որը պետությանն էր, որը թոշակառուներինն էր, 520 հազար թոշակառուներինը, չի գանձվել: Համատարած չի գանձվում: Արդյունքում՝ ի՞նչ. ով, ժողովրդական լեզվով ասած, պետական «թավանի» տակ է, հարկադրված է փակել իր բիզնեսը կամ էլ մտածում է ոնց անի այն դուրս բերի Հայաստանի Հանրապետությունից: Իսկ առավել համարձակները մտածում են, ինչպես անեն, որ կարողանան բիզնեսը պահպանելով՝ սեփական դեմքը չկորցնեն, որովհետև եթե իշխանավորների ստրուկն ես՝ ճանապարհ ունես, եթե իրենց ստրուկը չես՝ բացարձակապես հույսդ կտրի, որ Հայաստանում կարող ես ձեռներեցությամբ զբաղվել:

Ահա, այսպես, բյուջե չմուտքագրված 70 միլիոն դոլարն այնտեղ, տասնյակ միլիոններ բյուջեն շրջանցած ցորենի գործով գրպանված գումարներ, 31 միլիարդ չբռնագանձված միջոցներ, երբ այս բոլորը գումարում ենք, թիվ է անում: Բյուջեին համահավասար թիվ: Ահա սա է, որ ասում էինք՝ կարելի է բյուջեն կրկնապատկել, միայն թե թալանչիների առաջն առնենք: Հարցնում էին աղբյուրը որն է, ասում եմ աղբյուրը: Տե՛ր կանգնեք: Նևն եք ընկել արդեն, վաղը, մյուս օրը դիմելու եք ժողովրդին, պաշտպան էլ չունեք ձեր թիկունքին կանգնած, հարկադրված եք արդեն 19-րդ դարից տղա բերել ձեզ պաշտպան, հեռուստաեթերով էլ ասում են՝ միաբանվեք իշխանությունների շուրջ: Հարցազրույցներ են տալիս, խրատներ անում… Այս ասածս էլ գրեք, ամեն թվի համար պատասխանատու եմ, ամեն ասածիս տերն եմ: Իհարկե, չեն անի: Իսկ կա՞ն վիճակը շտկելու ուրիշ ռեզերվներ: Բազմաթիվ են: Եվ, այսպես, կարելի է դրա մասին ժամերով խոսել: Բայց արդյոք դա իշխանավորներին հետաքրքրո՞ւմ է: Իհարկե, ոչ: Ինձ հուշեցին, ասացին. գիտես, իշխանություններին կրակն ես գցել ԱԼՄ-ի քո ելույթով: Հարցրի՝ ինչո՞ւ, նրանց համար, ի՞նչ է, դա պարզ չէ՞ր: Չէ, ասում են, կողոպտելով պետությանը, իրար էլ էին տղերքը «քցել»: «Քցվածները» չգիտեին, որ թվերն այդքան մեծ են: Այ, սա է վիճակը: *(Ծափահարություններ):*

Տնտեսական վերլուծություններով չծանրաբեռնեմ ձեզ, անդրադառնամ դրսից եկող վտանգներին: Բայց, մինչ այդ, բերեմ մի քանի թիվ և փաստ, որ իմ հարցազրույցներում նշել եմ, սակայն ցավով եմ ուզում ասել, որ և ոչ մի թերթ այդպես էլ չտպագրեց, մինչդեռ ես չէի, որ խնդրել էի հարցազրույց ունենալ: Հունվարի 26-ին Ստրասբուրգում՝ Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովում, ելույթ ունեցավ Միխայիլ Սահակաշվիլին: Նա հաշվետու էր լինում եվրոպացիներին, թե իր պաշտոնավարման մեկ տարվա ընթացքում ինչպիսի հաջողություններ և ինչպիսի դժվարություններ են եղել ու որոնք են դրանք: Մի քանի թիվ: Ուշադիր լսելով՝ գրում էի, ոմանք էլ ննսրտեցին, հարցրեցին՝ Սահակաշվիլու ասածն ինչո՞ւ ես կոնսպեկտավորում: Վիրավորվել էին: Ես էլ ուսման ծարավ մարդ եմ, ասի՝ գրեմ, էլի: Ուրեմն, ի՞նչ եք կարծում. Վրաստանի Հանրապետության բյուջեն մինչև «Վարդերի հևափոխություն» կազմել է 380 միլիոն դոլար: Մի տարվա ընթացքում, և ոչ մի նոր հզորություն շահագործման չհանձնելու պայմաններում, բյուջեն դարձել է 1 միլիարդ 780 միլիոն դոլար: Դե, թվերը համեմատեք: Եվրոպացիները հետաքրքրվեցին՝ որտնի՞ց, ո՞րն էր հնարը, ո՞րն էր էդ կախարդական փայտիկը, ասա, էնտև էլի քամբախ երկրներ կան, լսեն, սովորեն, ականջներին էլ օղ անեն: Պատասխանեց՝ թալանն է կրճատվել: Սա է: Դե համեմատեք 380 միլիոնը 1 միլիարդ 780 միլիոնի հետ: Ավելին, անկախ հետազոտական փորձագիտական կենտրոնները հարցախույզ են արել. եթե մինչև «Վարդերի հևափոխություն» իշխանություններին և հատկապես ոստիկանությանը Վրաստանի ազգաբնակչության 4-ից 5%-ն է վստահել, ապա մեկ տարվա ընթացքում արդեն իսկ 90%-ը վստահում է իր երկրի իշխանություններին, վստահում է իր երկրի ոստիկանությանը: Եվ այդ երկիրը, անշուշտ, կծաղկի, ինչքան էլ մենք ընդունենք, թե ոչ Վրաստանի այս կամ այն դրվածքն ու ներքին կյանքը, որովհետև մարդիկ չեն թալանում: Իսկ թալանը, այն էլ համատարած, գիտենք ինչ ողբերգական հետևանքների է հասել հենց մեր Հայաստանում: Հիմա դուք ինքներդ ասեք, դուք, ձեզանից յուրաքանչյուրը թող ձեռքը դնի սրտին, խղճին ու ասի՝ ո՞նց կարող է վստահի այն ոստիկանին, որն ապրիլի 12-ին ծեծուջարդի ենթարկեց անզեն հայ մարդուն: Կամ էլ՝ որի աչքի առաջ ապրիլի 5-ին, հենց ձեր իսկ, մեր բոլորի ուժերով, բոլորիս ջանքերով կազմակերպված հանրահավաքի ժամանակ, երբ խուժան սափրագլուխը ծեծի, ջարդի էր ենթարկում մեր համարձակ լրագրողներին և օպերատորներին 250-300 ոստիկանների աչքի առաջ և նրանցից ոչ մեկը չարձագանքեց: Դրա պտուղները զգացինք սրանից 1 ամիս առաջ «ՏԷՑ-ի կռուգում», երբ ճիշտ այդ խուժանը, սափրագլուխն արդեն ավտոմատային կրակահերթերով մի քանիսի կյանքը խլեց: Դե արի ու այս ոստիկանությանը վստահի: Ո՞նց կվստահես: Ի՞նչ, անպայման պետք է իրար մեջ այդ ռազբոռկաները լինեի՞ն, մարդ սպանվե՞ր, որ նոր հասկանայիք, թե ինչ է նշանակում, որ երբ ոստիկանի աչքի առաջ մարդ են ծեծում, մարդ են ջարդում ու նա չի արձագանքում, ապա դրա հետևանքներն ինչպիսին կլինեն…

Արտաքին վտանգների մասին: Մեծ են այդ վտանգները, և տարիներ շարունակ առիթի դեպքում դրանց մասին ասել եմ. մինչև դանակը ոսկորին չհասավ, այս մարդիկ

բացարձակապես չհասկացան ու չգիտակցեցին՝ որն է: Մեռա ասելով, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան՝ կառուցվող նավթի այդ խողովակաշարը քյալակ է բերելու մեր ժողովրդի գլխին, հոգնեցի ասելով, բացատրելով, որ եթե միլիարդների գումար են ներդնում Ադրբեջանում, հետո այդ գումար դնողը տեր է կանգնելու նրանց պայքարին, անկախ նրանից, որ անարդարացի պայքար է: Ասած ռուսի՝ "ни в зуб ногой": Բացարձակապես ոչ մեկի պետքը չէ: Հիմա գործը հասավ դիվանբաշուն, հիմա ականատեսն ենք, երբ երկուշաբթի օրվա «Նեզավիսիմայա գազետա»-ում Իլհամ Ալիևն արդեն լոթիաբար ասում էր՝ Հայաստանը մեզ համար ոչ հոգս է, ոչ էլ մտածմունքի առարկա, որովհետև այս տարի մենք ակնկալում ենք համախառն ներքին արդյունքի 15%-անոց աճ, էլ չեմ ասում, որ Ադրբեջանի Հանրապետության ռազմական բյուջեն երկու անգամ ավել է, քան Հայաստանի Հանրապետության ռազմական բյուջեն: Դե, պատկերացրեք, թե մի քանի տարի հետո ինչ է լինելու: Վատահ ու լկտի ասում է: Է, լավ, մինչև երբ իշխանավորների անխելքության զոհ պետք է դառնա քաջարի հայ ազատամարտիկը, մինչև երբ մեր իշխանությունների ընչաքաղցության հետևանքով ավերածություններ պետք է լինեն երկրում: Երբ այս ամենի մասին ասում ես, ճիշտ այն նույն մարդիկ, ովքեր պապանձվում են միջազգային ասպարեզում, երբ օրումեջ հնարավորություն ունեն ելույթ ունենալու, ասում են՝ Գեղամյանն Ադրբեջանի գովքն է անում: Բախտիցս էր երևի, որ Ստրասբուրգում ելույթներ ունեցա, թե չէ հիմա էլ շառ կանեին՝ մտածում է, բայց տեղն եկած ժամանակ չի ասում: Է, կասեն, նրանց լեզուն անոսկոր է: Դե թող մի օրինակ բերեն, ես չեմ ասել, դրա համար եմ ասում, մի օրինակ բերեն, որ միջազգային ամենաբարձր ամբիոններից ասվեր: Ասվեր, որ 1915 թ. ապրիլի 24-ին հայ մտավորականությունը գլխատվեց Կոստանդնուպոլսում: Թող ասվեր, որ 1896 թ. բրիտանական կայսրության վարչապետ Ռոբերտ Սոլսբերին ասաց. «*Բրիտանական նավերը չեն կարող մագլցել Արարատ լեռը և հայկական լեռնաշխարհ*»: Է, ասեիք, այդքան էլ ելույթներ եք ունենում, ամեն ելույթն էլ, հեռուստացույցը, երբ միացնես, օրը 10 անգամ ցույց են տալիս: Բա այդ ասելը, ի՞նչ, կարծում եք, հե՞շտ է, կարծում եք, հե՞շտ եմ մարսել: Իհարկե, ո՛չ: Իսկ ով չգիտի, որ ադրբեջանցիները և նրանց հովանավորները միլիարդներ են ծախսում աշխարհիս ապատեղեկացնելու համար, դու էլ մերկացնում ես իրենց՝ այն էլ եվրոպական ամբիոնից: Կանգնում Կիպրոսի թասիբն ես պահում, որ վաղը հույնը հայի թասիբը պահի, գոնե իմանանք, որ հարևաններից մեկը բարոյական պարտավորվածություն կունենա: Ամենաջերմ խոսքով հիշում ես ֆրանսիացուն: Հիմա էլ առիթը բաց չեմ թողնի, նորից կհիշեմ, շնորհակալությունս կհայտնեմ: Շնորհակալությունս կհայտնեմ այն ֆրանսիացիներին, ովքեր ողջ են, ում նախնիները 1915 թ. ռազմական հածանավով քաջարի մուսալեռցիներին փրկեցին, տարան հասցրեցին Մարսել: Խոնարհաբար շնորհակալությունս կհայտնեմ, որ թե՛ 1915 թ. մեր թասիբը պահեցին և թե՛ մեր թասիբը պահեցին՝ Եվրոպայում՝ առաջիններից մեկն իրենց ազգային ասամբլեայով Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և կազմակերպիչներին դատապարտելու փաստով: Շնորհակալությունս կհայտնեմ այն պարզ պատճառով, որ հենց Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկման

ժամանակ Ստրասբուրգում 45 երկրներից ընդամենը մեկ երկրի ներկայացուցիչ թասիբներս պահեց, այն է՝ Ռոժ Բլուանը, ֆրանսիացի, ողջունենք՝ ծափերով: *(Բուռն ծափահարություններ):*

Երբ լսում ենք Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ Վարդան Մինասիչին, Օսկանյանին, ըստ որում, որպես մարդ ազնիվ է, ուրեմն, հայերի գլխին ինչ փորձանք գալիս է, բանից պարզվում է, դա մեր դիվանագիտության հաղթանակն է, ժողովուրդ: Մնում է՝ խղճները կորցնեն, մեզ էլ, ուրեմն, անգրագետի տեղ դնեն, ասեն, ժողովուրդ ջան, էն, որ ցունամիից միայն Ինդոնեզիան ու Թայլանդը, մասամբ էլ Հնդկաստանը տուժեցին, Հայաստանը չտուժեց, դա էլ է մեր արտաքին դիվանագիտական լուրջ հաղթանակը: *(Ծիծաղ դահլիճում):* Բա էս ժողովրդին կարելի՞ է այդքան միամիտի տեղ դնել: Դիվանագիտական ասպարեզում էլ տեղ չմնաց, որ, ցավոք սրտի, պարտություն չկրեն: Վերցրեք, ուրեմն, Պուտրաջայան՝ Մալայզիայի ադմինիստրատիվ կենտրոնը, որտեղ սրանից մոտ մեկ տարի առաջ իսլամական բոլոր երկրներն իրենց «Իսլամական կոնֆերանս կազմակերպության» համաժողովում բավական չէ միաձայն որոշում ընդունեցին, որի համաձայն ճանաչեցին Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, այլև Հայաստանին ագրեսոր համարեցին, ղարաբաղցիներին՝ զավթիչ-անջատողական, միաժամանակ արձանագրեցին, թե, իբր, Ադրբեջանում 1 միլիոն փախստականներ կան և տարածքի 20%-ն էլ ագրեսորի, այն է՝ մեր կողմից զավթված է: Եվ այդ փաստաթղթի տակ ստորագրողների շարքում էին նաև մեր դաշնակիցները, «Կոլեկտիվ անվտանգության պայմանագիր կազմակերպության» անդամ-երկրները՝ Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը: Բա, ստացվում է, որ դաշնակիցդ էլ է մեջքից դաշույնով խփում, բա էս գովական արտաքին քաղաքականությանդ, դիվանագիտությանդ հաղթանակն էլ ո՞րն է, մի ասեք, բացատրեք՝ հասկանամ: Էդ ո՞ր հաղթանակն է: Միացյալ ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի օրակարգ են մտցնում Ադրբեջանի տարածքային ամբողջականության, ինչպես նաև էթնիկ զտումների հարցը, որոնք, իբր, իրականացրել ենք մենք՝ խոհեմ, ուշիմ, շինարար, ռանչպար, շինական հայերս, ադրբեջանցիների նկատմամբ: Հարցը միաձայն մտնում է օրակարգ: Գոնե մի երկիր, նմուշի համար, ձեռք բարձրացներ, ասեր՝ էս ի՞նչ եք անում, ես դեմ եմ: Վերջերս՝ հունվարի 25-ից 28-ը Ստրասբուրգում կայացած Խորհրդարանական վեհաժողովի նիստի ժամանակ, ցավոք, ծայրաստիճան վտանգավոր բանաձև ընդունվեց: Մեր իշխանավորները կանգնում, ասում են՝ ոչ մի երկիր, այն էլ խոշոր երկիր, իբր, չի ճանաչել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: 100%-անոց սուտ: Որ երկրի առաջին դեմքն առիթ է լինում, անպայման հարկ է համարում նշել Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին: Բա այս պարագայում, երբ աշխարհը, փաստորեն, այս հարցում մեջքով է շուռ եկել մեզ, ի՞նչ են մտածում մեր իշխանավորները: Այս պարագայում, երբ, ցավոք, գնալով շիկանում է իրավիճակը հարևան Իրանի շուրջ, ո՞րն է մեր պաշտոնական պետական քաղաքականությունն այս գործում: Եկեք ձեզ հետ մտորենք. Իրանը մեր հարևանն է, մեծ գաղութ ունենք այնտեղ, 1992-94 թվականներին, երբ պարտադրված էինք պատերազմել, համատարած

շրջափակման մեջ էր Հայաստանը, կյանքի ճանապարհը Իրանով էր գնում, ցորենը, սննդամթերքը հիմնականում գալիս էր Պարսկաստանով: Մյուս կողմից՝ ԱՄՆ-ը նույնպես մեր բարեկամն է: Ցրտի, մթի տարիներին, նավթն էլ, բենզինն էլ, հիշում եք, ալյուրն էլ, երբ մեզ ընդհանրապես խնդել էին, 7 օրվա հացի պաշար էր մնացել Հանրապետությունում, ԱՄՆ-ն ապահովեց, որ Թուրքիայով քարավաններով հաց եկավ: Էլ չեմ ասում, որ 1,5 միլիոն հայ էլ բնակվում է այնտեղ, էլ չեմ ասում, որ անկախության տարիներին 2 միլիարդ դոլարից ավել օգնություն են ցույց տվել մեզ ամերիկացիները: Եվ Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից մեկ շնչին ցույց տված օգնությամբ Հայաստանն աշխարհում գտնվում է երկրորդ տեղում: Առաջինն Իսրայելն է: Ո՞րն է մեր քաղաքականությունը: Բա երկիր ենք՝ մտածեք, իշխանությունն էլ, ոչ բարով-խերով, դուք եք՝ խորհեք: Վաղը, մյուս օրը, արդեն հայտարարվել է, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի անվտանգությունն ապահովելու համար ՆԱՏՕ-ի ռազմական ուժերը գալու են անվտանգության գոտի ստեղծեն և պարսկական սահմանը վերահսկեն: Դա նրանց որոշումն է: Եվ դրա մասին մամուլում հայտարարվել է: Ես չեմ խորանում՝ հիմքեր կան, թե չկան, որովհետև ես այդ հարցի գիտակն ու մասնագետը չեմ: Իսկ ո՞րն է այդ սահմանը: Փորձենք դա էլ վերհիշել, մտովի պատկերացնենք աշխարհագրական քարտեզը: Այսպես, Իրանը հարևան Ադրբեջանի հետ էլ սահման ունի, Թուրքիան է՝ ԱՄՆ-ի դաշնակիցը, Իրաքն է, որտեղ հակաահաբեկչական կոալիցիայի 28 երկրների զորքերն են տեղակայված՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ: Մյուս կողմից, համապատասխանաբար, Պակիստանն է (գիտեք, Փերվեզ Մուշարաֆը Ամերիկայի հետ վարում է մերձեցման քաղաքականություն), մյուսից՝ Աֆղանստանն է (այդտեղ էլ նույն ՆԱՏՕ-ի զորամիավորումներն են), մյուս կողմից՝ Կասպից ծովով գնացող սահմանն է, որն անվերահսկելի չէ, որովհետև 5 երկրներ են այդտեղ խաչվում: Եվ Հայաստանի սահմանն է, ոչ միայն 46 կմ Մնրու հատվածը, այլ նաև ազատագրված այն, երկարաձիգ ասենք, սահմանը, որն այսօր վերահսկվում է Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության բանակի կողմից: Այսինքն՝ Զանգելանի, Ջեբրայիլի, Ֆիզուլիի… Իսկ եթե մեքենայացված արձագանքման զորամիավորումները գան սահմանի անվտանգությունը պաշտպանելու, ի՞նչ ենք անելու, ո՞նց ենք անելու, ո՞րն է քաղաքականությունը: Պրն Օսկանյան, էդ հաղթանակների շարանի հետ Դուք, Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանն ասեք՝ ո՞րն է մեր քաղաքականությունը ստեղծված իրավիճակում: Ասեք, մարդիկ իմանան: Բա որ վտանգն արդեն ավելի առարկայական դարձավ, ի՞նչ ենք անելու: Հիմա էլ, ի՞նչ, ողջ աշխարհին եք թշնամացնելու ձեր ապիկար, անհեռատես քաղաքականության արդյունքում: Ակնհայտ է, որ իշխանություններն ընկել են կրակը, եթե հիշել ու խոսում են ազգային միաբանության անհրաժեշտության մասին: Լավ, այսքան տարի մենք ի՞նչ էինք ասում, այսքան տարի ահազանգում էինք, բա ո՞ւր էիք, հիմա էլ չենք չարախնդում, որովհետև մեր երեխաների ապագան այստեղ է որոշվելու, այստեղ հարազատների շիրիմներ ունենք, այստեղ ենք առաջին անգամ «Դլե յամանը» լսել:

Եվ, ահա, այս իրողությունների պայմաններում, երբ միացնում ես հեռուստա-

ալիքները, դիտում պաշտոնական հանդիպումների մասին հաշվետվությունները, ապա մնում ես շիվար: Կամ էլ կարդում ես թերթերն ու զարհուրում. ինչպե՞ս կարելի է այդ աստիճան մակերեսորեն մոտենալ հարցերին, ինչպե՞ս կարելի է այս վտանգները չզգալ, չհասկանալ, ինչպե՞ս կարելի է չգիտակցել, որ վտանգված է ոչ թե պրն Քոչարյանի պաշտոնը, այլ Հայաստանի Հանրապետությունը: Ինչպե՞ս չեն հասկանում ու չեն գիտակցում, որ երկիրը կանգնած է պայթյունավտանգ զարգացումների շեմին, որ այդ հևափոխություն ասածը Հայաստանում կատարվելու է այն պարզ պատճառով, որովհետև ժողովուրդն էլ համբերելու, էլ դիմանալու հնար ու հունար չունի: Ո՞նց դա չեն գիտակցում, ինչպե՞ս չեն գիտակցում, որ սելավի պես այդ հևափոխություն ասածը կքշի ոչ միայն իրենց, այլ նաև հայոց պետականությունը: Ո՞նց չեն գիտակցում, որ հենց այդ ժամանակ գլուխը կբարձրացնի ասկյարը: Եվ այդ վիճակում, ասես թե հաճույք են ստանում, որ թերթը բացում ես՝ նախկին իշխանությունների կերակրատաշտից սնվող թերթերը ձայնակցելով գործողներին, անթաքույց հրճվանքով ավետում են ժողովրդին, թե, իբր, ընդդիմությունը մեռած է: Այդ ֆոնին էլ՝ մարդիկ ականատեսն են լինում նաև, որ կոալիցիան էլ իրար միս է ուտում Ազգային ժողովում բոլորի աչքի առաջ: Լավ, հիմ ու նորեր, բա չեք մտածո՞ւմ, թե ինչ եք անում, այս ժողովուրդը գնա կորի՞: Ո՞ւմ հավատա, ինչի՞ն հավատա, ո՞ւմ հետեղից գնա, ի՞նչ անի, ո՞ւմ լսի: Իրենց՝ իշխանավորներին, չի լսի, չի էլ հավատա, որովհետև տեսել ու համոզվել է, որ նրանց խոսքը գործի հետ ոչ մի առնչություն չունի, որովհետև ճաշակել է 2003 թ. փետրվարի 19-ի Հանրապետության նախագահի ու մայիսի 25-ի Ազգային ժողովի խայտառակ ընտրությունները: Որովհետև նա տեսել ու ճաշակել է այս կեղծավորությունը, որը կա, երբ 2004 թ. ապրիլի 12-13-ի ծեծուջարդից հետո կոալիցիայի մաս կազմող կուսակցություններն առանձին-առանձին մնայականով են եկել, անվերջ մեզ համոզելով, որ մեղավորը Ռոբերտն ու Սերժն էին, տղերք, մենք կապ չունենք: Հիմա, ես էլ ասում եմ, հիշեմ էլի Բրունո Յասենսկու իմաստուն խոսքերը՝ «Անտարբերների դավադրությունը»: Ասում է. այն, որ մարդասպանը մարդ պետք է սպանի, մի զարմացեք, դրա համար էլ մարդասպանի պիտակը դաջված է ճակատին: Այն, որ գողը պետք է գողանա, մի զարմացեք, այն, որ պոռնիկը պոռնկություն պետք է անի, դարձյալ մի զարմացեք: Դուք զարմացեք ու զարհուրեք անտարբերներից, որոնց անտարբերության պայմաններում հնարավոր են սպանությունները, պոռնկությունը և գողությունը: Եվ այս ամենը, երբ գիտես, իսկ ես գիտեմ, և դա իմանալով հանդերձ, համոզված ես և ասում ես՝ աչքի լույս, եթե ունեմ, աչքիս լույսը՝ հայոց պետականությունն է և ոչ թե սեփական նկրտումներս, կանգնում, անամոթաբար վերադարձնում են ինձ՝ ասելով. էս չլինի՞ «Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավարների հետ իշխանությունները լեզու են գտել, բան-մաև են խոստացել: Ուրեմն, հերթական անգամ ուզում եմ ասել. պրն Ռոբերտ Քոչարյան, պրն Սերժ Սարգսյան, պարոններ կոալիցիա. իմացեք դուք և հուշեք ձեր գովքն անող լրատվամիջոցներին, որ այն, ինչ ես եմ ուզում, ոչ դուք, ոչ ձեր իմացած մարդիկ ինձ տալ չեն կարող: Ես ուզում եմ ժողովրդի նվիրվածությունը և աջակցությունը, որն էլ ունեմ: *(Բուռն, երկարատև ծափահարություններ):*

Սիրելի՛ ժողովուրդ, փորձեմ կրքերը դնել մի կողմ, սակայն առանց կրքի խոսելն էլ, կնշանակի՝ սիրտ չունես, հոգի չունես: Իսկ ես, ցավոք, գիտեմ, որ վիճակը ծանր է, ուստի լռելը կրկնակի հանցագործություն է, ուզում եմ բղավել, իրենց կպնել, ուզում եմ գութը շարժեմ, բայց գիտեմ, որ այսօրվա իշխանությունների դեպքում դա անօգուտ զբաղմունք է: Իրենց թասիբի գցելով՝ ուզում եմ այս խայտառակությունների առաջ պատնեշ կանգնեմ: Խայտառակություններ, որոնք հենց իրենցից են գալիս: Իշխանությունների անզորությունն ու չկամությունը, ասես թե, հուշում են մեզ, որ երկրի փլուզման առաջն առնելը միայն զենքով է հնարավոր: Իսկ այսօր սխալ է, որ Հայաստանում հայը հայի դեմ զենք օգտագործի: Թե հիշեցնեմ 1908 թ. պատմությունը Ռուբեն Տեր-Մինասյանի՝ Ռուբեն փաշայի հետ կապված: Դաշնակցական հատուկ հանճնաժողովը, որի կազմում էին Զավարյանը, Սմբատ զորավարը՝ Մախլուտոն, բժիշկ Հայկը և ուրիշ հևինակավոր դաշնակցականներ, ժողովուրդ ջան, ապացուցեցին, հիմնավորեցին, որ Ռուբեն Տեր-Մինասյանը կրակել ու սպանել է Գևորգ Չաուշին: Անցան տարիներ՝ Ռուբեն փաշան Առաջին Հանրապետության ռազմական նախարարը դարձավ: Լավ, այս բոլորի հետ մենք զուգահեռներ չպե՞տք է անցկացնենք: Այս ամենն իմանալով հանդերձ՝ չպե՞տք է գիտակցենք, որ դա այժմ էլ կործանարար ճանապարհ է: Խորհեք ինքներդ, չեմ ուզում անուններ տալ... Մտածեք ինքներդ, մենք դա տեսել ենք, մենք դա անցել ենք: Մենք ականատեսն եթե անգամ իսկ չենք եղել, ապա այսօր էլ հասկանում ենք և գիտակցում՝ ի՞նչ է նշանակում որբ մանչուկը, ի՞նչ է նշանակում բորոտ երեխան, որոնք հազարներով անցյալ դարասկզբին Էջմիածնի վանքի պատերի տակ էին: Եվ մի ուշագրավ հուշ, որի մասին գրում է Նվարդ Թումանյանը՝ մեծն լռեցու դուստրը: Ասես, թե երկինքն էլ էր երես թեքել այն ժամանակ հայերից, կնճռոտվել, ամպոտվել էր Էջմիածնի երկինքը, տևատարափ անձրև էր տևում և, որբ երեխաները կուչ էին եկել եկեղեցիների պատերի տակ: Ամենայն հայոց բանաստևծը դիմեց Ամենայն հայոց կաթողիկոսին՝ ասելով. բացե՛ք բոլոր եկեղեցիների դռները: Վեհափառն անսաց բանաստեղծի խոսքին՝ բացվեցին եկեղեցիների դռները, բացառությամբ Վեհարանի, որը նոր էր կառուցվել: Մեծ բանաստևծն ասաց. Վեհարանի դուռն առաջինը պետք է բացվեր: Եվ ենթարկվեց կաթողիկոսը Մեծ բանաստեղծին, որովհետև նրա հևինակությունը շատ էր բարձր: Եվ Վեհարանում անձրևից պատսպարվելով՝ երեխաները փրկվեցին: Ինչո՞ւ եմ կրկին անդրադառնում Թումանյանին: Նրան եմ մտաբերում, որովհետև հայ ժողովուրդն այդ արհավիրքներից կարողացավ դուրս գալ, քանի որ ուներ այդպիսի մարդիկ, որովհետև ուներ բարոյականության փարոսներ: Որովհետև Թումանյանի օրինակն ունենալով, հաջորդ՝ սովետական իշխանությունը պետք է գոնե փորձեր առաջնորդվել բարոյական այդ չափանիշներով, որովհետև հասկանում էր, որ հայ մարդը միայն նման չափանիշներ է ընդունում, միայն նման չափանիշների է ենթարկվում: Իսկ ի՞նչ ունենք այսօր: Մի՞թե պատերազմում մեծ կորուստների գնով հաղթանակ տարած ժողովուրդն արժանի էր այս ճակատագրին: Երբ հայ մարդն ականատեսը դարձավ, թե ինչպես են իշխողներն իրենց վարքուբարքով, ցոփ կյանքով, թալանով, անբարոյականությամբ հայոց պետականության

պատվանդանը պղծում…

Սիրելի՛ ժողովուրդ, այնուամենայնիվ, ո՞րն է բանալին: Բանալին ժողովրդավարության հաստատումն է, որովհետև այսօր աշխարհը դա է ճանաչում: Որովհետև աշխարհի քաղաքական քարտեզի վրա դուք այսօր չեք գտնի և ոչ մի պետություն, որը, իրոք, ժողովրդավարական է և որը, հանկարծ, միջազգային հանրության կողմից պաշտպանված չէ: Իսկ այդ ժողովրդավարություն ասվածը Հայաստանում կա՞ արդյոք: Իհարկե, չկա: Չորս հիմնական բաղկացուցիչ մաս ունի ժողովրդավարություն ասվածը, չորս հենասյուներ, որոնք եթե կան, ժողովրդավարություն կա: Եթե ժողովրդավարություն կա, ուրեմն զարգացում ու փրկություն կա: Եվ որո՞նք են դրանք:

Նախևառաջ, ժողովրդավարության քաղաքական հենարանը կարող է խարսխվել և կառուցվել միայն մի պարագայում, եթե այդ երկրում իշխանությունները ձեղավորվում են ազատ, արդար, թափանցիկ ընտրությունների արդյունքում: Մեզանում, ավա՜ղ, դա չկա: Դրա ամենավառ ապացույցը 2003 թ. նախագահական և խորհրդարանական ընտրություններն էին:

Երկրորդ հենասյունն ազատ շուկայական տնտեսության ձեղավորումն է: Ի՞նչ, դա կա՞ Հայաստանում: Իհարկե, չկա: Ի՞նչ ազատ շուկայական տնտեսության մասին կարելի է խոսել, երբ Հայաստանի Հանրապետությունում կենսապահովման բոլոր ոլորտները մենաշնորհային կարգավիճակում են: Եվ դրա ամենապարզ օրինակը յուրաքանչյուրդ ձեզ վրա տեսել եք և յուրաքանչյուրդ ճաշակել: Դրամը, իբր, արժևորվում է, դոլարն՝ արժեզրկվում, բայց գները բարձրանում են, ինչո՞ւ: Որովհետև հիմնական ներկրողները 5-6 հոգի են, այն էլ իշխանական կլանից, իրենք էլ կամայականորեն սահմանում են գները: Իսկ որտեղ օլիգարխիկ տնտեսություն է, այնտեղ չի կարող լինել ազատ մրցակցություն, չի կարող լինել ազատ գնագոյացում, չեն կարող լինել մեկնարկային հավասար պայմաններ ձեռներեցություն ծավալելու համար: Այսինքն՝ ժողովրդավարության երկրորդ բաղկացուցիչ մասն էլ, երկրորդ հենասյունն էլ է բացակայում մեզանում:

Երրորդը դատական համակարգն է, նրա անկախ գործելը: Իսկ ի՞նչ անկախ դատական համակարգի մասին կարելի է խոսել, կարելի է հիշատակել, երբ բոլորիդ աչքի առաջ էր, որ զանգվածային ընտրակեղծիքների արդյունքում՝ թե՛ նախագահական, թե՛ խորհրդարանական ընտրությունների, և ոչ մի մարդ չպատժվեց: Նմուշի համար մեկին պատժեին: Իսկ փոխարենը, ճիշտ հակառակը, քաղաքական պատվեր կատարելով՝ տղերքը եկան, 9 հոգով էլ լցվեցին մեր տուն՝ խուզարկության: Թնդանոթներ էին մանգալիս, «СС –300» հրթիռներ էին որոնում: Սա է դատական համակարգի անկախ լինելը: Մտան Ալեքսան Կարապետյանենց տուն: Երկու անգամ ձերբակալեցին Արմավիրից Թադևոսյան Մյասնիկին, տասնյակ հարյուրավոր ուրիշ մարդկանց: Պատվեր չէր, ի՞նչ էր: Եվ ինչպե՞ս կարող է դատական համակարգն անկախ լինել, եթե «Արդարադատության խորհուրդ» ասվածը պրն Քոչարյանի համար գրպանային ինչ-որ մի կազմակերպություն է. ինքը նշանակում է այդ խորհուրդը նշանակողին: Ուրեմն, երրորդ հենասյունն էլ է

բացակայում մեզանում:

Եվ, վերջապես, չորրորդ իշխանության անկախ գործելը: Ի՞նչ անկախության մասին կարող է խոսք գնալ, այն էլ չորրորդ իշխանության, երբ, կրկնում եմ, շուրջ երկու տարի անընդմեջ ինֆորմացիոն շրջափակում ասեմ, էմբարգո ասեմ, արգելք է դրված իմ հրապարակային ելույթներն ուղիղ եթերով հեռարձակելու վրա: Մեկ անգամ հրավիրեցին, որ «Կենտրոն»-ով ելույթ ունենամ՝ այն էլ մոնիտորինգային խմբի սուր քննադատության արդյունքում: Ես չեմ ասում, որ «Կենտրոն»-ի ստեղծագործական կոլեկտիվը չէր ուզում, իհարկե, ուզում էր: Բայց Եվրախորհրդում հարցը պետք է լսվեր, Խորհրդարանական վեհաժողովում հարցը պետք է քննարկվեր, արդյունքում մի զարմանալի իրողության ականատեսն էին դարձել ուսումնասիրողները: Ո՞րն է այդ իրողությունը: Երբ նայում են ընդդիմադիր գործիչներին եթերաժամ տալու ժամաքանակին, տեսնում են, որ վերջիններիս ավելի շատ եթերաժամ են տրամադրել, քան իշխանավորներին: Բայց երբ ասացի՝ այնտեղ մեկն էլ կա՝ Արտաշես Գեղամյան, նրա ժամերն էլ նայեք, նայեցին տեսան՝ ոչ մի րոպե: Իշխանություններն իրենք ծնում են ընդդիմություն, իրենց ծնած ընդդիմությանն ամբիոն են տալիս, օրը 12 ժամ խոսում են, քննադատում են իրենց: Թող ներվի ասելը, այս դեպքում նրանց համար հաչան շունը կծան չի: *(Ծիծաղ դահլիճում):* Այս է իրականությունը: Այսինքն՝ չորրորդ իշխանություն ասածն էլ չի կայացել:

Վերջերս մի զավեշտալի հրապարակում եղավ: Ո՞րն էր դրա մեխը: Սրանից 25 օր առաջ այստեղ էր գտնվում շատ պատկառելի մի հանձնախումբ, այն է՝ Մարշալի կազմակերպության ամերիկյան մասնաճյուղի 12 սենատորների և կոնգրեսականների խորհրդականների խումբը, որին հանդիպեցինք ընդդիմադիր դաշտի մյուս գործիչների հետ՝ «Երևան» հյուրանոցում: Հանգամանքի բերումով այնպես ստացվեց, որ «Ազգային Միաբանություն»-ից այդ օրը ներկա էի միայն ես: Մեր գործընկերները փոքր-ինչ ավելի մեծ կազմով էին, թվով 7-8 հոգի: Բնականաբար, տրամաբանական կլիներ, ասացի, սկզբից լսեն իմ գործընկերների կարծիքը, որից հետո իմը, որովհետև իմ և խմբակցության կարծիքը նույնն է, ոչ թե մարդ-ֆրակցիա եմ, այլ այդ բոլոր հարցերը վաղուց ի վեր քննարկել ենք, թե՛ «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության, թե՛ մեր խմբակցության նիստերում: Այդպես էլ ստացվեց, վերջում խոսեցի: Փոքր-ինչ երկար էր իմ խոսքը, որովհետև քննարկվող հարցերը յոթն էին և բավականաչափ սուր: Ես հարկ համարեցի այդ բոլոր հարցերի վերաբերյալ իմ տեսակետները շարադրել: Եվ, ի՞նչ եք կարծում, 10 օր հետո ընդդիմադիր թերթերից մեկը գրում է. էս Գեղամյանն էլ դրանց զահլեն էնքան տարավ, որ երբ սկսեց շատ երկար խոսել, նրանք սկսեցին մենյուն նայել: Ասեմ, որ հանդիպմանը թղթակիցներ չկային, այդ ապատեղեկատվությունը ո՞ր սրիկան էր տարածել, դա էլ թող մնա նրա խղճին: Այ, գլխներիդ ճյուն գա, այ, թղթակիցներ, այնտեղ մենյու ընդհանրապես չկար, և երբ ես նրանց հետաքրքրող հարցերին էի պատասխանում, արդեն իսկ կերել, խմել պրծել էին, կոֆե էին խմել, իհարկե: Ոմանց մեջ թույնը եռում է, եռում… Լավ է, որ այնտեղ համապատասխան դեսպանատան շատ հևհևակավոր մարդիկ կային: Բնականաբար, հենց հոդվածը կարդացի, զանգահարեցի նրանց, ասացի, այ, տեսնո՞ւմ

եք, ընդհանրապես, ցավոք սրտի, մամուլն ազատ չի, կարդացեք այսինչ հոդվածը, բարեբախտաբար, Դուք եղել եք այդ հանդիպման անմիջական մասնակիցը, տեսել եք ցուցաբերված հետաքրքրությունը և, վերջին հաշվով, կարող եք գնահատել: Անշուշտ, կարդացել էին և զարմացել նենգափոխված ապատեկատվությունից… Ահա դրա համար էի ասում, որ հեռուստաալիքներից շատ լրագրողներ կան այստև, և, բացառված չէ, որ նրանցից ոմանք մեր հանդիպումը ներկայացնեն իրենց ուզած մեկնաբանություններով: Հիմա ես տեսնում եմ, որ այստեղ բոլորը համակ ուշադրությամբ լսում են, հեչ որ չէ, սրանից 2 ժամ հետո փողոցից մեկին կգտնեն, կբերեն, կնստացնեն, կասեն՝ խոռացրու: Հեռուստացույցով էլ ցույց կտան, կասեն՝ Գեղամյանի ասածներից այնքան էր հոգնել, որ խոռացնում էր: Մի 100 մանեթ էլ փող կտան, կասեն՝ մի երկու քննադատական խոսք էլ ասա: Էս է սրանց լրատվությունը, էս է սրանց չորրորդ իշխանությունը: *(Ծափահարություններ):*

Օգտվելով այսօրվա մեր հանդիպումից՝ ուզում եմ ընդամենը մի նախադասություն ասել բոլոր տեսակի իշխանավորներին՝ թե՛ ստվերային և թե՛ ի պաշտոնե: Ուշքի եկեք, մենք արդեն ի վիճակի չենք լինի կանգնեցնել համաժողովրդական ցասումը: Իսկ ժողովուրդը, որ ոտքի կանգնեց, հանկարծ մի վայրկյան չկասկածեք, դրոշակն առաջից բռնած կգնանք, բայց արյունահեղության համար ողջ պատասխանատվությունը ձեզ վրա է ընկնելու: *(Բուռն, երկրարատն ծափահարություններ):*

Այնուհետև Արտաշես Գեղամյանը պատասխանեց ելույթ ունեցողների և կոնֆերանսի մասնակիցների բարձրացրած հարցերին:

- Ինձ թերթ փոխանցվեց՝ «Հանուն հայրենիքի» վերտառությամբ, որտեղ Արմեն Ավետիսյանի՝ «Հայ արիական միաբանության» ղեկավարի բարեկամները, ընկերները, հայ մարդիկ ասում են՝ ինչո՞ւ «Ազգային Միաբանությունը» չի դիմում դատական մարմիններին, իշխանություններին, որ նրան ազատ արձակեն: Թվում է, թե, իսկապես, ինչո՞ւ:

Ժողովուրդ ջան, սա այն դեպքն է, որ գնաս արդարություն պահանջես այն նույն մարդկանցից, որոնց Արմեն Ավետիսյանը, փաստորեն, անթաքույց համասեռական է անվանել: Բնականաբար, նա հիմա նևության մեջ է, մենք այսօր մեր սատարման խոսքն այստեղ կհչեցնենք: Մենք կասենք, որ միևնույն է, չենք թողնի Արմենի գլխից մազ անգամ ընկնի, բայց, միաժամանակ, ուզում եմ Արմենին իմ դառը փորձից ասել հետևյալը. Արմեն ջան, եթե ուզում ես պաշտպանված լինել՝ համասեռականին անվանական ասա, անկախ նրանից՝ ինչ պաշտոն է զբաղեցնում, եթե ուզում ես պաշտպանված լինել, ասա՝ ով է պոռնիկը, ով է կաշառակերը, ով է ղումարբազը: Որովհետև այդ ժամանակ, եթե քեզ վտանգ սպառնա, արդեն հանրությանը պարզ կլինի, թե դրա հետևում ով է կանգնած, և ոչ թե յոթ ամիս շարունակ ասա՝ցուցակ ունեմ, կիրապարակեմ: Է, ի՞նչ ես գաղտնիք պահում: Ասեիր, մենք էլ ձեզ հետ և՛ կուրախանայինք, կզվարճանայինք, և՛ կիմանայինք, թե իշխանություններն որ չափով են պոռնիկ, որ չափով՝ համասեռական: Անվանական ասա: Կարծում ես,

հե՞շտ է, կարծում ես, մենք ընտանիքներ չունե՞նք, որ կանգնում, ասում ենք՝ կոռումպացվածն ու թալանչին ով է, հանցագործն՝ ով: Կարծում ես, չե՞նք գիտակցում՝ ինչ է նշանակում, երբ մի ողջ համակարգ, այո՛, կաշառված, կոռումպացված համակարգ, որին ինչ հանցագործության դեպքի վայրում բռնում են, ասում են, ասա՛, Գեղամյանն է կազմակերպիչը, քեզ բաց կթողնենք: Բա հե՞շտ է դրան դիմակայելը, հե՞շտ է դիմակայելը, երբ թոռանդ ներկայությամբ տունդ տակնուվրա են անում: Իսկ ծախված լրատվամիջոցներն էլ ասում են՝ ապրիլի 13-ին Գեղամյանին չկարողացանք գտնել: Տունս «մոյկա» էին անում, լրատվամիջոցնե՛ր: Ասածս այն է, որ մինչև նրանց անվանական չկպնեք և բուն պատճառն էլ չվերհանեք, այո՛, կբռնեն: Իսկ երբ անվանական ասում եմ՝ կաշառված, կոռումպացված համակարգ է և համակարգի գլխավերևում էլ Ռ. Քոչարյանը, Ս. Սարգսյանը և նրանց մանկլավիկներն են, տո, թող հա էլ բռնեն, իմ փոխարեն իմ նման հարյուրավոր մարդիկ կգան: *(Ծափահարություններ):* Է, հետո էլ շանս ենք տալիս: Ասում եմ՝ մաքրվեք: Մաքրվեք, ապացուցեք, որ դուք այդպիսին չեք: Հանցագործների անունները հատիկ-հատիկ տալիս ենք, զբաղեցրած պաշտոններն ասում ենք, հիմնարկները նշում: Սա ի միջի այլոց: Բայց դա ամենևին չի նշանակում, որ արդարացնում ենք այն վայրագությունները, որոնք իրականացնում են Արմեն Ավետիսյանի հանդեպ: Ուղղակի, խնդրում եմ այն մարդկանց, ովքեր հնարավորություն ունեն հետո առնչվելու, լինեն՝ դատապաշտպանները, լինեն՝ ընկերները, հուշեն. այնտեղ հանկարծ ղազագիր չստորագրի. որ օրը ղազագիր ստորագրեց՝ արդեն ինքը համասեռականների հետ թև թևի տված հարկադրված կլինի լքել Հայաստանի Հանրապետությունը: Թե չէ ընդդիմադիր դաշտից ոմանք գնացին ղազագրերը ստորագրեցին, հիմա էլ թերթերի էջերով մեզ բարոյականություն են քարոզում:

- Այստեղ հարց է եղել 2 օր առաջվա իմ հեռուստաելույթի հետ կապված. ասում են՝ ամեն ինչ ջուրը լցրեցիր, երբ ասացիր, որ Քոչարյանը Ղարաբաղի հերոս է:

Ժողովուրդ ջան, ես կարող եմ չընդունել ու չսիրել մարդուն, կարող եմ մերժել նրա ողջ գործողությունները: Բայց նաև չեմ կարող ուրանալ, թե ինչ են նրանք արել: Իրենք, այո՛, հերոսաբար, այն ժամանակ բոլորիդ հետ, պահել, ազատագրել են Արցախը: Հետո նույն ձևով այլասերվել են: Հիմա կարող ենք միշտ նրանց այսօրվա այլասերված քաղաքականությունը մատնացույց անել: Դրանից ի՞նչ կփոխվի: Ես էլ, կարծում եմ, ասենք, թող էն անցած առանձին լուսավոր էջերից, իրենց ընկերների թափած արյունից գոնե ամաչեն, դարձի գան, որովհետև իրենք էլ հայեր են: Սա է իմ տեսակետը:

- Հարց են տալիս՝ ինչո՞ւ իշխանությանը, դատախազությանը, ոստիկանությանը հարցում չեք անում, ի՞նչ աշխատանք են անում, որ գտնեն և հանձնեն Վանո Սիրադեյանին:

Այ, այսպիսի միամիտներ էլ կան դեռ մեզանում: Այ, մարդ, Վանո Սիրադեյանին, որ օրը Հայաստանից ճանապարհ գցեցին, դրա հաջորդ օրը Քոչարյանի հրամանագրով ոստիկանապետը՝ գեներալ-մայոր էր, գեներալ-լեյտենանտ դարձավ, ազգային անվտանգության ծառայության այն ժամանակվա պետը՝ գեներալ-մայոր էր, գեներալ-

լեյտենանտ դարձավ: Հիմա ես, որ հարցում անեմ, Քոչարյանը կասի՝ էս Գեղամյանն ուղևը զադնի՞ է տվել, մի՞թե բան չի հասկանում: Այդքան միամիտ մի եղեք: Եվ հանկարծ որևէ մեկը չասի, որ 1998 թ. Հայաստանում տեղի է ունեցել իշխանափոխություն: Չի եղել այդպիսին Հայաստանում: Պարզապես նույն կլանի տարբեր թևեր ռակիրովկա են արել, հիմա էլ ուզում են նույնն արած լինել: Բայց մենք ասում ենք՝ միևնույն է, չի հաջողվի, հին ու նոր իշխանավորներ՝ դա ձեզ մոտ չի ստացվի: Դե, լավ, 1998 թ. զոռբայությամբ եկաք իշխանության, հասկացանք, Ղարաբաղի հարց էր, իրենք էլ ավելի մեծ ամագ ունեին այդ հարցում, երկիրը ծաղկացնեիք, ալան-թալանի երկիր չդարձնեիք: Գագիկ Կոստանդյանն իր ելույթում այդ մասին իրավացիորեն ասաց: Իրենց քաղաքականության հետևանքով այսօր նույն Ղարաբաղը դատարկվում է: Է, հա, հասկանում ենք, Ստրասբուրգում նշեցի՝ 140 հազարանոց բնակչություն ունի երկիրը, բայց մենք հո գիտենք, ինչքան մարդ կա: Մենք հո գիտենք, որ այսօր Հայաստանում հիմնականում բոլոր ձեռներեցները Ղարաբաղը վերջին տարիներին լքածներն են: Ես դեմ չեմ, որ նրանք էլ լինեն, բայց ոչ թե գան ու խլեն, ոչ թե ստեղծվի այնպիսի իրավիճակ, որ հարյուրավոր ձեռներեցներ Հայաստանից փախչեն, հարստացնեն այն երկրների բյուջեները, որտեղ կարողացել են ծաղկուն դարձնել իրենց բիզնեսը: Խոսքս դրա և ոչ թե ազգի տարբեր հատվածների մեջ խժդժություններ գցելու մասին է: Ինքս խոնարհվում եմ և՛ ղարաբաղցու, և՛ գորիսեցու, սիսիանցու, երևանցու, սփյուռքահայերի առաջ:

- Այստեղ բժշկական համալսարանի հետ կապված հարցեր կային, հիվանդանոցային բազայի: Բնականաբար, դա ուսումնասիրության կարիք զգացող հարց է: Անպայման մենք նախագահությունում կխնդրենք Գագիկ Թադևոսյանին, որն այդ գործի հրաշալի մասնագետն է, ուսումնասիրի, և ձևը կգտնենք հարց տվողին ու հանրությանն այդ մասին իրազեկելու: Հարց կա նաև մեր «Կանազի» հետ առնչվող, որ այսօր այն, իբր, կողոպտվում, թալանվում է:

Ես պատրաստ չեմ այդ հարցին պատասխանել, որովհետև իմ ունեցած տեղեկությունները հակասում են այս տեղեկատվությանը: Իմ տեղեկություններով այնտեղ այսօր խոշորածավալ վերազինման գործընթաց է ընթանում: Եվ առաջիկայում գործարանը վերագործարկվելու է: Բայց ահազանգը կա, համոզված եմ, որ այն բարի նպատակներով ու միտումներով է հնչեցվում այստեղ, այդ հարցն անպայման խորությամբ կուսումնասիրենք: Այ, եթե ասեին, որ այսօր «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման քլորոպրենային կաուչուկի հոսքային ամբողջ գծերն ապամոնտաժման են ենթարկվում և առաքվելու են Չինաստան, կասեի՝ ճիշտ եք ասում, ժողովուրդ ջան: Բայց Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունն այստեղ բացարձակապես ոչ մի սխալմունք թույլ չի տվել. ինչ գին դրել են, այդ գնով մարդիկ գնել են: Ազատ շուկայական տնտեսություն է, Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ ենք, մարդիկ մասնակցել են աճուրդին, գնել են: Բայց դե բոլորս գիտենք, որ քիմիական արդյունաբերության լոկոմոտիվից ենք զրկվում, որի շնորհիվ աշխատում էին «Պոլիվինիլացետատը», «Ավտոդողերի» գործարանը և մի շարք այլ ձեռնարկություններ:

Ժողովուրդ ջան, և վերջին հարցը, որ չստացվի՝ վրիպեցի: Այստեղ, երբ մեր գործընկեր Գագիկ Կոստանդյանը հիշատակեց Վարդան Մինասիչին՝ մեր Օսկանյանին, Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ կապված նրբերանգներ հնչեցին, որոնց մեկնաբանությունն ուզում եմ ավելի հստակ լինի. այսօր Հայաստանի Հանրապետության ժողովրդավարության կայացման հիմնական հենասյունը պետք է լինի հենց այդ նույն երկիրը: *(Ծափահարություններ):*

Խոսքս ուզում եմ ավարտել՝ համոզմունք հայտնելով, որ ամենևին դեռ ամեն ինչ կորսված չէ: Հայ ժողովուրդն իր մեջ մի այնպիսի վիթխարի ներուժ ունի, որ, համոզված կարող եմ ասել, 21-րդ դարը լինելու է Հայաստանի Հանրապետության դարը: Եվ Հայաստանի Հանրապետության դարը կդառնա այս հարյուրամյակը, եթե մենք ձեզ հետ հասնենք Ազգային Միաբանության: *(Բուռն, որոտընդոստ ծափահարություններ):*

Խորին շնորհակալություն բոլորից:

«Իրավունք+հարց ու պատասխան», 1 – 3.III.2005:

«Ազգային Միաբանություն կուսակցությունը» և ԱԺ «Ազգային Միաբանություն» խմբակցությունը հայտարարում են

1998 թ. Լ. Տեր-Պետրոսյանի ՀՀԾ-ական իշխանությունների ռազմատենչ թևը իրականացրեց ներպալատական հևաշրջում: Առիթը, իբր, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման տերպետրոսյանական իշխանությունների որդեգրած փուլային տարբերակն էր:

Անցած յոթ տարիներն ակներև դարձրին հևաշրջման բուն նպատակները՝ թալանչիական սեփականաշնորհման արդյունքում ժողովրդից կևեքված հարստության վերաբաշխում իշխանությունը զավթած վերնախավի դրածոների միջև, ազգությամբ հայ (հատկապես Ռուսաստանի Դաշնությունից) ներդրողների ունեցվածքի և բիզնեսի անօրեն օտարում (ռեկետ), իրենց նկատմամբ պետության կողմից իրականացվող քաղաքաքրեական հետապնդումների իրականացում, նախկինում կատարված սահմռկեցուցիչ հանցագործությունների բացահայտման սառեցում, կենսապահովման ոլորտների մենաշնորհային իշխանական կլանային համակարգի հիմնում... Այս ամենի հետևանքը ժողովրդավարության առկա ծիլերի ոչնչացումն էր, իշխանությունների և կրիմինալի սերտաճումը, արտաքին քաղաքական մեկուսացումը, տարածաշրջանային տնտեսական հեռանկարային ծրագրերից Հայաստանի դուրս մղումը, ազգաբնակչության ճնշող մեծամասնության սոցիալական ծանր դրությունը, համատարած հուսահատությունը, թերահավատությունը վաղվա օրվա, ապագայի նկատմամբ, չդադարող արտագաղթը:

Նման պայմաններում Քոչարյանի հենարանը հանդիսացող քաղաքական կոալիցիան որդեգրել է երկրում կատարվող անօրինական գործողությունների հրապարակումներ, որոնք ուղեկցվում են փոխադարձ աննախադեպ մնաղրանքներով և մերկացումներով: Պատահական չէ, որ գործող իշխանությունների համար կատարված հանցագործությունների մատնանշումներն այդպես էլ չեն դառնում իրավապահ պատկան մարմինների հետաքննության առարկան, վկայելով, որ կոալիցիա կազմող քաղաքական կուսակցությունները Ռ. Քոչարյանի հետ անզոր են օրինականություն հաստատել երկրում կամ էլ ապացուցում են, որ դրա խոչընդոտը ոչ լեգիտիմ նախագահն է:

Հայոց պետականության համար ստեղծված վտանգավոր իրավիճակը հանգեցրել է հանցագործությունների աննախադեպ աճի. այսպես, 2004 թ. արձանագրվել է ծանր

հանցագործությունների 3492 դեպք՝ 1243-ով ավելի, քան 2003 թ., իսկ առանձնապես ծանր հանցագործությունները՝ 177 դեպք՝ 2003 թ. 127-ի դիմաց: Մինչդեռ ամենաթողության հիմնական պատասխանատուները՝ Գլխավոր դատախազության ղեկավարությամբ, զբաղված են Արագած լեռան շուրջ կռապաշտներին հատուկ շուրջպարերի՝ «խորովոդների» կազմակերպմամբ:

Հայաստանի Հանրապետությունում ստեղծված ծանր իրավիճակի գնահատականը վերջերս տվել են թե՛ Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովը, թե՛ ԱՄՆ պետական դեպարտամենտը: Իշխանություններն էլ, փոխանակ միջազգային հանրության արձագանքներից լրջագույն հետևություններ անեն, ժողովրդի ուշադրությունը շեղելու նպատակով՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործում իրենց ձախողումները քողարկում են 11 տարի ուշացումով Ազգային ժողովում անպտուղ լսումների կազմակերպմամբ:

Մենք գտնում ենք, որ այսօր իշխանությունների կողմից ի պաշտպանություն ԼՂՀ-ի կազմակերպվող հասարակական լսումները կդառնան ոչ այլ ինչ, քան հասարակության և միջազգային հանրության ուշադրությունը շեղող գործընթացներ:

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը և պատգամավորական խմբակցությունը հերթական անգամ հայտարարում են, որ ԼՂՀ-ի հիմնահարցի արդարացի լուծման միակ երաշխավորը ի զորու են դառնալ ազատ, արդար, ժողովրդավարական ընտրությունների արդյունքում ձեղավորված նախագահական և խորհրդարանական իշխանությունները:

Արտաշես Գեղամյան
«Ազգային Միաբանություն կուսակցության»
նախագահ, ԱԺ «Ազգային Միաբանություն»
խմբակցության ղեկավար

«Առավոտ», 17.III.2005:

Հայտարարություն

ՀՀ Ազգային ժողովի «Ազգային Միաբանություն» խմբակցությունը և ԱՄ կուսակցության նախագահությունը արձանագրում են, որ 2003 թ. ՀՀ նախագահական և խորհրդարանական կեղծված ընտրությունների արդյունքում իշխանությունն երկրում բռնազավթած ոչ լեգիտիմ ՀՀ նախագահը, անօրինական գործադիր և օրենսդիր մարմիններն իրենց ապաշնորհ և ազգադավ երկտարյա կառավարմամբ հանրապետությունը հասցրել են անկանխատեսելի ու վտանգավոր զարգացումների շեմին:

Անպատիժ թողնելով ընտրակեղծիքների և խախտումների կազմակերպիչներին, կոռուպցիան ու կաշառակերությունը հովանավորողներին՝ պարարտ հող ստեղծեցին 2004 թ. ապրիլի 5-ի ծեծուջարդի կազմակերպման համար, երբ ոտնահարվեցին ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, բռնությունների ենթարկվեցին քաղաքացիները, լրագրողները, քաղաքական գործիչները: Այս ամենն ապրիլի 12-ի լույս 13-ի արյունոտ գիշերվա նախերգանքն էր: Ժողովրդավարության «բնօրրան» ներկայացող Ազգային ժողովը, «կոալիցիոն» կուսակցությունների և իրենց պատգամավորների լռելյայն համաձայնությամբ, իր տարածքը տրամադրեց համազգեստ հագած հրոսակախմբերին: Դրան հաջորդեց ջարդի, կտտանքների, խոշտանգումների ու անօրինական ձերբակալությունների սատանայական խրախճանք: Ժողովրդավարությունը և օրինականությունը որպես «առաջնային նպատակ» հորջորջող կամ երկրում ստեղծված ողբերգական վիճակն իդեալականացնող քաղաքական այդ ուժերն այդպես էլ օբյեկտիվ գնահատական չտվեցին 2004 թ. ապրիլյան դեպքերին և շարունակում են երեսպաշտորեն ժողովրդի ուշադրությունը շեղել երկրում կուտակված ու հրատապ լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներից, կեղծավոր, փքուն հայտարարություններ են անում, համագործակցության և համաձայնության պայմանագիր կնքելու դատարկ կոչերով դիմում ընդդիմությանը:

Իշխանությունը բռնազավթածների գործունեության արդյունքը դարձավ շարունակվող արտագաղթը, գործազրկության ու աղքատության աճը, սոցիալական խուլ լարվածությունը, կոռուպցիայի դեմ պայքարի իմիտացիան: Դրանց գումարվեցին հաբրգած օլիգարխների անօրինականությունները, ճանաչված գործարարների չբացահայտված սպանությունները, «ՏԷՑ-ի կռուգում» ինքնաձիգերով զինված հանցագործների և իրավապահ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ աննախադեպ բախումը: Ի հայտ են գալիս բանկային խոշորածավալ մեքենայություններ, ժողովրդից թալանված մեծածավալ «կևտոտ» փողերի «լվացում», որի արդյունքում

շոշափելի կրճատվում է մեր հայրենակիցներին ուղարկվող օգնության չափը. ըստ էության, իշխանությունների թողտվությամբ տեղի է ունենում ազգաբնակչության զանգվածային թալան: Բնիկ երևանցիներն իրենց պապենական տներից դուրս են նետվում, քաղաքի կենտրոնի հողերն ապօրինի զավթվում են իշխանավորների և նրանց հանցակիցների կողմից: Փարիսեցիությունը հասնում է այնտեղ, որ կոալիցիոն կուսակցությունները, ձև անելով, որ պայքար են սկսել կոռուպցիայի դեմ՝ խոսելով կոռուպցիայի առավել բացահայտ դրսևորումների մասին (ջրային վարկը, դատաիրավական բարեփոխումների նպատակով տրամադրված միջոցները, քաղաքի կենտրոնի հողատարածքների չնչին գներով սեփականաշնորհումը և այլն), դրանց հետևում կանգնած բարձրաստիճան պաշտոնյաներին այդպես էլ թողնում են անպատիժ: Կոալիցիայի անդամ կուսակցությունների սնանկությունը մի անգամ ևս համոզիչ դրսևորվեց Ազգային ժողովում խնայդրամարկղերում քաղաքացիների կուտակված ավանդների վերադարձման հարցի տապալմամբ:

Լուրջ ձախողումներ են արձանագրվել արտաքին քաղաքականության բնագավառում, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորմանն ուղղված բանակցություններում: Միջազգային հեղինակավոր մի շարք կառույցներում ընդունվել են ոչ հայանպաստ փաստաթղթեր: Հայաստանի Հանրապետությունը մեկուսացվել է տարածաշրջանային գրեթե բոլոր հիմնական տնտեսական ծրագրերից:

Ստեղծված իրավիճակի համար իշխանությունը բռնազավթած Ռոբերտ Քոչարյանի ու Սերժ Սարգսյանի հետ նույն պատասխանատվությունը կրում են վարչակարգի հենարան կոալիցիայի մաս կազմող կուսակցությունները, որոնք վիժեցրեցին ԱԺ-ում Հանրաքվեի մասին օրենքում փոփոխություններ կատարելու Սահմանադրական դատարանի պահանջը: Փորձեր են արվում Ռ. Քոչարյանի իմիտացիոն իմպիչմենթի գործառույթներ սկսելու ուղղությամբ, հրահրում են իրենց իսկ կողմից մշակված «հեղափոխության» ալիքի բարձրացում՝ խնդիր ունենալով ընդդիմությանը ներքաշել իշխանությունների կողմից ծրագրված այդ սցենարների մեջ, վարկաբեկել խորհրդարանում ներկայացված ընդիմադիր ուժերին, թերահավատության մթնոլորտ սերմանել մեր առաջիկա գործողությունների նկատմամբ:

ԱԺ «Ազգային Միաբանություն» խմբակցությունը և ԱՄՆ կուսակցության նախագահությունը հայտարարում են, որ օրվա հրամայականն է օրենսդիր և գործադիր իշխանությունների հեռացումը. առաջնահերթ են դառնում, թե՛ Ազգային ժողովի և թե՛ նախագահական արտահերթ ընտրությունները:

Հայրենակիցնե՛ր, ժամն է միաբանվելու և երկրում արդարություն հաստատելու համար:

Արտաշես Գեղամյան
ԱԺ «Ազգային Միաբանություն» խմբակցության և
ԱՄԿ նախագահության անունից

«Իրավունք», 8–14.IV.2005:

Արտաշես Գեղամյանի խոսքը*

Թերևս ամենադժվար ելույթն է, որ պետք է ունենամ, որովհետև խիստ անսովոր լսարան է: Սովորաբար լինում է հակառակ պատկերը, այն է՝ դահլիճում գերիշխողը տղամարդիկ են և, ցավոք սրտի, սակավ թվով կանայք: Անգամ այդ պայմաններում սակավ թվով կանայք, ասես, ստիպում և պարտավորեցնում են, որ զգոն լինես, զգույշ լինես այն արտահայտությունների մեջ, որոնք գալիս են մտքիդ, լեզվիդ, բայց, ավա՜ղ, խևդում և ճնշում ես: Հիմա պատկերացրեք իմ վիճակը, այն էլ այն խոսքերից հետո, այն ճշմարտացի քննադատությունից հետո, այն մտահոգություններից հետո, որոնք բոլորս Ձեզ հետ այսօր ունկնդրեցինք: Բնականաբար, մտածում էի՝ ինչպես կառուցեմ ելույթս, հիշե՞մ համաշխարհային քաղաքակրթության անվանի կանանց՝ սկսած Հին կտակարանից, Հուդիթին հիշե՞մ, որ կարողացավ անճնազոհության ճանապարհով փրկել իր ազգին՝ հրեաներին, գլխատելով իր սիրած էակին՝ Օլոֆերնին՝ Ասորեստանի Նաբուգոդոնոսոր արքայի անվանի զորապետին, միգուցե Կլեոպատրային հիշե՞մ, որն իր անմման գնեցկությամբ ու խելքով գերեց Հուլիոս Կեսարին, որի շնորհիվ էլ դաժանորեն պատժեց իր բոլոր հակառակորդներին և միանձնյա գերիշխանություն հաստատեց Եգիպտոսում: Իսկ միգուցե հիշե՞նք պաշարված Կարթագենի կանանց սխրանքը, որոնց հռոմեացիները մեծահոգաբար հորդորել էին այրվող քաղաքից դուրս բերել իրենց ամենաթանկ էակներին, և զարմանքով տեսան, որ պաշարվող և այրվող Կարթագենի դարպասներից կանայք կքված՝ իրենց մեջքերի վրա դուրս էին բերում ոչ թե սեփական երեխաներին, այլ վիրավոր զինվորներին: Թե հիշե՞մ մեր դյուցազնավեպի հերոսուհիներին՝ Ծովինարին, Խանդութին: Եվ ի՞նչ զուգահեռներ տանեմ այսօրվա մեր կյանքի, այսօրվա մեր իրողությունների հետ: Ականատես եղա այն հանդիպումները, որոնք ունեցել եմ իմ գործընկերների հետ Հայաստանի ամենատարբեր մարզերում: Առավել տպավորվել էր Վարդանի ձոր գյուղում ունեցածս հանդիպումը: Սևրու շրջանում, լեռնային հատվածում անտառների մեջ կորած մի գյուղ էր: Հանդիպմանը, ասես, ամենաուշադիրը տարեց մի կին էր, որ արցունքն աչքերին ունկնդրում, գրեթե որսում էր իմ ամեն մի խոսքը: Այդ պահին ինձ համար հասկանալի չէր, թե ի՞նչն էր այս կլանվածության պատճառը: Հանդիպումից հետո ասաց՝ տղա ջան, անպայման պետք է գնանք մեր տուն: Պատասխանեցի՝ սիրով, բայց ի՞նչն է խնդիրը: Հոգոց քաշեց՝ ազատամարտիկ է որդիս, ամուսինս էլ է ազատամարտիկ եղել, նա զոհվել է, իսկ որդիս անկողնային հիվանդ է՝ ողնաշարի

* Ելույթ՝ Գնեցկության և մայրության տոնի առթիվ «Ազգային Միաբանություն կուսակցության» կազմակերպած միջոցառմանը (7.IV.2005, Կինոյի տան դահլիճ):

հատվածում փամփուշտ կա, գամված է անկողնուն: Ասացի՝ շատ լավ, սիրով: Ընկերներիս հետ հուզված մտանք տուն: Հայկական չքավոր մտավորականի տուն էր. կիսակոտրված պահարան՝ գրքերով լեցուն, անկողնուն գամված երիտասարդ: Կինն ընդամենը մի բան խնդրեց, հորդորեց՝ որդուս ասա, որ դու կառավարության ներկայացուցիչ ես, իշխանությունների ներկայացուցիչ ես և հատուկ եկել ես գյուղ, որ տեսնես իրեն, որովհետև տասը տարուց ավել է գամված է անկողնուն և անուշադրության մատնված: Բացարձակապես ոչ մի իշխանավոր չի հետաքրքրվել նրա կյանքով ու առօրյայով, անգամ սայլակ չունի: Ասացի՝ ախր, մայրիկ ջան, ես ճիշտ հակառակը՝ ընդդիմադիր եմ, ինչպե՞ս խոսեմ: Պատասխանեց՝ դու դրանով կփրկես կամ կերկարաձգես որդուս կյանքը: Գնացինք, ներկայացանք իբրև կառավարության անդամներ: Տղան անկողնու մեջ նստեց, մայրը՝ հուզվեց: Ակամայից գրականությունից հիշեցի Օ'Հենրիի «Վերջին տերևը» պատմվածքը: Երբ թոքերի բորբոքումով մահամերձ աղջնակը հույսը դրել էր պատուհանից երևացող ծառի վրայի եղած տերևների վրա և ինքն իրեն ներշնչել, որ երբ ծառի վրայի վերջին տերևն ընկնի, այդ ժամանակ էլ իր կյանքի թելը կկտրվի: Եվ այդ վերջին տերևը, ինչքան էլ փոթորիկ ու քամի է լինում, այդպես էլ չի ընկնում: Երեխան ապաքինվում է: Երբ ապաքինվում է, մայրն ասում է, իսկ դու, բալաս, ուշադրություն չդարձրիր, որ անգամ այդ ահև քամիների դեպքում էլ տերևը նույնիսկ չշարժվեց: Աղջնակը զարմացած հայացքը հառեց մորը: Մայրն էլ պատասխանեց, թե դա հռչակավոր գևանկարիչ Գերմանի վերջին աշխատանքն էր, նա էր ուշ գիշերով, երբ քամին գցել էր վերջին տերևը, այն նկարել: Աղջնակը փրկվեց, իսկ գիշերով քամուն, անձրևին ու ցրտին այդ տերևը նկարելով, ինքը՝ նկարիչը, հիվանդացավ և թոքաբորբից մահացավ՝ սեփական կյանքի գնով փրկելով աղջնակին: Սա է զուգահեռը. ազատամարտիկի մայրն ասում է՝ եկեք, թեկուզ խաբեության գնով փրկեք որդուս կյանքը, որ նա ապրի, փոխարենը թող ես մահանամ, որ ստով եմ կյանքը փրկում: Ահա, այսպիսին է հայ կնոջ պատկերը:

Մեկ ուրիշ դրվագ, որը նույնպես մխրճվել է սրտիս մեջ և արյունը մինչ օրս էլ ծորում է: Այսօր էլ, երբ տեսնում եմ կանանց թշվառ վիճակը, ասես, աչքիս առաջ են գալիս նրանց հոգու վեհությունը բնութագրող դրվագները: Բյուրականից գալիս էինք, սև հագուստով կանայք մեքենայի ճանապարհը կտրեցին: Ճանապարհը կտրեցին, անշուշտ, իջանք՝ հարցնելով, թե ինչո՞վ կարող ենք օգտակար լինել: Ստիպեցին, որ անպայման գնանք իրենց տուն: Ասացինք՝ ախր, դատարկ ձեռքով առաջին անգամ օջախ ո՞նց մտնենք: Պատասխանեցին՝ ոչինչ, մտեք: Մտանք օջախը՝ տունը գրեթե դատարկ էր, մահճակալ էր, պատին զոհված ազատամարտիկի պատկեր, կիսակոտրված աթոռներ, սևան: Հարցրինք՝ ինչո՞վ կարող ենք օգտակար լինել: Պատասխանեցին՝ մի կես ժամ առաջ այստեղ էին դատական հարկադիր կատարածուները, եկել էին գույքագրելու տան եղածչեղածը, որ չմուծված ջրի վարձի դիմաց օտարեին այն: Հարկադիր կատարածուները 14.000 պարտքի դիմաց բարեխղճորեն եկել են զոհված ազատամարտիկի մոր տան եղածչեղածը տանելու: Երիտասարդ այրին պատասխանել էր՝ ինչ տանում եք տարեք, միայն թե ամուսնուս նկարը չտանեք, որովհետև տանս ամենաթանկը դա է: Կատարածուները

խիղճ են ունեցել, հուզվել են, ասել են՝ հարամ լինի էն հացը, որ մենք ուտում ենք: Միամիտս կարծեցի, որ այդ հարկադիր կատարածուների ազգանունները պետք է տար, որ ես հետագայում ամբիոնից նրանց ուղարկողներին անարգանքի սյունին գամեմ: Բայց, ոչ, տանտիրուհին ասաց, որ հերվան կովը ծնել է, կաթը յուղալի է, Դուք էլ ճամփի վրա եք, ուզում եմ՝ թան խմեք, նոր գնաք: Էս է հայ կինը:

Եվ ականջից մտածեցի. իսկ որտեղից է իր հոգևոր սնունդը ստանում հայ կինը, ակունքները որտե՞ղ են: Բնականաբար, ակունքները մեր դյուցազնավեպում են, «Սասունցի Դավթում» են: Բոլորս հիշում ենք, թե ինչպես Խանդութը պահեց իրեն՝ հեռակա սիրահարված լինելով Դավթին: Երբ Դավիթը երկու-երեք օր ռազմի դաշտից չի վերադառնում, Խանդութի սիրտը տագնապով է լցվում. չլինի՞ թե վիրավորել կամ սպանել են Դավթին: Գնում է Դավթի հետևից, որ դին կարողանա թշնամուց վերցնել, բերել հողին հանձնել և լալ: Ճանապարհին տեսնում է, որ Դավթի ձիու վրա դյուցազուն է գալիս: Հեծյալի դեմքը կարմիր լաթով ծածկված է լինում և ձայնն էլ, թվում է, թե ուրիշ է: Հարցնում է, ո՞ւր ես գնում: Գնում եմ Դավթին տեսնեմ: Ասում է՝ Դավթին ես սպանել եմ, և խուրջինի մեջ էլ նրա գլուխն է: Խանդութն ըմբոստանում է, գոտկակռվի է բռնվում հետը: Երբ Դավիթը ծնկի է բերում Խանդութին, վերջինս հարկադրված ասում է, որ ինքը կին է: Այդ ժամանակ էլ հեծյալը ծիծաղում է, Խանդութն էլ հասկանում է, որ նա Դավիթն է: Այնուհետև նրանք ամուսնանում են: Սիրահարված կինը գնում է դեռ իր ամուսին չդառած ընտրյալի հետևից, մարտի դաշտից դին բերելու: Արդյոք նույնը չէի՞ն անում մեր քույրերը Արցախի ազատամարտի ժամանակ, երբ, ինչպես պատմում էր Արցախի հերոս Սամվել Բաբայանը, մնում էինք զարմացած բուժքույրերի սխրանքից. ծանր վիրավոր ազատամարտիկներին ռազմի դաշտում պայթող ռումբերից պաշտպանում էին իրենց մարմնով: Բա մեր կանանց այս օրը պետք է գցեի՞ն, բա չգիտակցեի՞ն, չհասկանայի՞ն, ով է հայ կինը, բա չհասկանայի՞ն, ով է Ծովինարը, որը հարկադրված էր մի ամբողջ երկիր փրկելու համար գնալ Բաղդադի խալիֆայի կինը դառնալ. Ծովինարը, հղիանալով բուռուկես ջրից, այդպես էլ չտրվեց խալիֆային: Բա հիմա Ծովինարի պատկե՞րը հիշենք, թե՞ այսօրվա վայ իշխանավորների պատկերը, որոնց ղեկավարած երկրից փախչում են մեր կանայք նույն այդ խալիֆաների մոտ, Թուրքիա: Իսկ ինչո՞ւ է այդպես: Այսօրվա իշխանավորները չգիտեն մեր հողուջրի, մեր ժողովրդի պատմությունը: Անտևյակ են հայ մարդու կերպարից, եթե տեղյակ լինեին, մի՞թե կթողնեին, որ այս վիճակում հայտնվեր հայ կինը: Մի՞թե կարելի կլիներ անգամ իսկ կանանց տոնը նշելու համար զրկել «Ազգային Միաբանություն կուսակցությանը» ավելի մեծ դահլիճում հանդիպում ունենալու հնարավորությունից: Կարելի է նորանոր պատմություններ հիշել հայ կնոջ անվեհերության, տոկունության դրսևորումների մասին, բայց, թերևս, ամենաճիշտը կլինի այն, որ մենք այսօր՝ սակավաթիվ տղամարդիկ, կարողանանք խոստովանել, որ մենք անասելի պարտք ունենք տալու մեր քույրերին, մեր մայրերին, մեր կանանց, մեր դուստրերին: Եվ այդ պարտքը մենք պետք է, այո, երդվենք, որ անպայման փոխհատուցելու ենք Ձեզ՝ Ձեր տանջանքների, տառապանք-

ների համար, որ Դուք կրեցիք 1991-95 թթ., երբ ցուրտ ու մութ տարիներին ոչ միայն Ձեր ամուսիններին, Ձեր որդիներին էիք սիրտ տալիս, այլ նաև Ձեր ողջ կեցվածքով ստիպում, պարտադրում էիք, որ մենք էլ մեզ հպարտ զգանք, իմանալով, որ յուրաքանչյուրիս տանը Խանդութ կա, ամենքիս տանը Փառանձեմ կա, որն անգամ իսկ կյանքի գնով կարողացավ իր որդուն՝ Պապին փրկել, ուղարկել Հռոմ՝ ուսում ստանալու, Հայաստանի թագավոր կարգվելու: Էլ չենք խոսում, թե որքան բարձր պահեց նա իր ամուսնու՝ Արշակ թագավորի պատիվը: Ուրեմն, երիցս փառք հայ կնոջը: *(Բուռն ծափահարություններ):*

Որ չստացվի, թե խոսք էր՝ ասացի, պետք է երդվենք: Ուզում եմ պատմությունս շարունակած լինել: Նույն մեր դյուցազնավեպի հերոսը՝ Սասունցի Դավիթը, երդմնազանց եղավ՝ Չմշկիկ Սուլթանին խոստանալով վերադառնալ 7 օրից, բայց չկատարեց իր խոստումը, 7 տարի ուշացավ: Եվ երբ վերադառնում էր, սպանվեց թունավոր նետից, որն արձակել էր մի չքնաղ աղջնակ: Չմշկիկ Սուլթանի աղջիկն էր նա, որը Դավթից էր: Դավիթն ասաց, որ իմ սերմն ինձ սպանեց: Ուրեմն, եթե այստեղ գտնվող տղամարդիկ, նրանց ընկերները չկարողանան հայ կնոջն այս վիճակից հանել, չկարողանան լուսավոր տաճարի ճանապարհ բացել, ուրեմն, թող Դավթի նման երդմնազանց համարվեն ու թող մեր սերմն էլ մեզ սպանի:

Սիրելի՞ կանայք, ախր, ինչքան ուզում եմ չլրջացնել, չի ստացվում, որովհետև երբ գիտես իրական վիճակը, չես կարող ուրախ պատմություններ պատմել, ուրախ դեպքեր մտաբերել: Թող միակ ոգևորիչն իմ խոսքում լինի այն, որ այսօր էլ Ձեր այստեղ գալը, համակ լռությամբ Ձեր գործընկերուհիներին լսելն ամենամեծ գրավականն է այն բանի, որ հայ կինը եղել է, կա ու հավերժ ապրելու է իր բնօրրանում՝ Հայաստանի Հանրապետությունում: (*Որոտընդոստ ծափահարություններ*):

«Իրավունք», 15–21.IV.2005:

«Ցևի սիրտը»

… Ձեր խոնարհաբար մասնակցությունը Հռոմի պապի հուղարկավորությանն ոչ այլ ինչ է, քան երեսպաշտություն, եթե դուք… չեք պարտադրում Թուրքիային ճանաչել Հայոց ցեղասպանությունը

«Ազգային Միաբանություն կուսակցությունը», ընդառաջ գնալով ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգի իր տասնյակ հազարավոր համակիրների խնդրանքներին, ձեռնամուխ էր եղել Եղեռնի 90-րդ տարելիցին նվիրված «Ցևի սիրտը» վավերագրական ֆիլմի ստեղծմանը: Օրերս մեր հայրենակիցներն ԱՄՆ-ում հնարավորություն կունենան դիտելու այն: Ցավոք, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հնարավորություն չեն ունենա այն դիտելու , քանի որ «Ազգային Միաբանություն կուսակցության» ցանկա-ցած միջոցառման, կուսակցության առաջնորդ Արտաշես Գեղամյանի ելույթների հեռարձակման վրա իշխանությունների կողմից արգելանք է դրված:

Ձեզ ենք ներկայացնում ֆիլմում հնչած Արտաշես Գեղամյանի խոսքի շարադրանքը:

Սիրելի հարազատներ, բարեկամներ, հեռավոր օվկիանոսի ափին ինձ ունկնդրողներ. մոտենում է ապրիլի 24-ը՝ Հայոց եղելնի 90-րդ տարելիցը: Այս օրերին, բնականաբար, յուրաքանչյուրս փորձում է վերհիշել այն տառապանքները, տանջանքները, այն մեծագույն ողբերգությունը, որը բաժին ընկավ մեր ժողովրդին: Այդ ամենն առանց սահմռկեցուցիչ զգացմունքի վերապրել հնարավոր չէ, եթե սիրտ ունես և դրա փոխարեն քար ու ապառաժ չէ:

Բայց նաև մտածում ես՝ 21-րդ դարում ի՞նչ քաղաքականություն որդեգրես, ի՞նչ արժեքներ դավանես, որ քո ցավը, քո հոգու ճիչը, վիշտը հասկանալի լինի աշխարհին, նրա հզորներին, և ոչ թե փորձես խղճահարություն առաջացնել նրանց մոտ, այլ ցասում՝ արդարություն հաստատելու գործում: Ակամայից այդ մտորումներն ինձ տարան, հասցրեցին Վատիկան, ուր Հռոմի պապ Հովհաննես Պողոս երկրորդի հուղարկավորության արարողություններն էին: Ասես համայն մարդկությունն էր սգում այդ կորուստը: Հրեաները ցավակցում էին կաթոլիկ Հռոմին, ցավակցում էին, որովհետև Հռոմի պապը համարձակություն և լայնախոհություն ունեցավ Երուսաղեմում ներողամտություն հայցել հրեաներից ֆաշիստական Գերմանիայի իրականացրած ջարդերի համար, հոլոքոստի համար, որի հեղինակները նաև կաթոլիցիզմ դավանողներ էին՝ կաթոլիկներ: Սգում էր

Պաղեստինը, արաբական, իսլամական աշխարհը, որովհետև Պապը համարձակություն, քաղաքացիական արիություն և վիթխարի հեռատեսություն դրսևորեց՝ այցելելով Դամասկոսի Օմեյադների մզկիթը, իսլամական սրբավայրերը, դասախոսությամբ հանդես գալով Կահիրեի Ալ-Ազխար իսլամական համալսարանում: Սգում էր ուղղափառ աշխարհը, հունական և ռուսական ուղղափառ եկեղեցիները, որովհետև 2004 թ. Հռոմի պապը հայցեց հունական ուղղափառ եկեղեցու պատրիարքի ներողամտությունն այն բանի համար, որ սրանից 802 տարի առաջ՝ 1203 թ., կաթոլիկ խաչակիրները ավերածություններ էին արել ուղղափառ եկեղեցու սրբավայրերում՝ Կոստանդնու-պոլսում: Իր կարեկցանքն արտահայտեց նաև հայ առաքելական եկեղեցին, որովհետև բոլորիս հիշողության մեջ վառ էր, երբ Շառլ Ազնավուրի աստվածային «Ավե Մարիայի» հնչյունների ներքո Հովհաննես Պողոս երկրորդը Ծիծեռնակաբերդում ծնկի եկած աղոթեց 1915 թ. Եղեռնի անմեղ զոհերի համար:

Ի վերջո, այս մեծ մարդու արածն ի՞նչ էր: Մեր Արարչին հետևելու իր անձնազոհ պատրաստակամությամբ, իր հայտնի «Mea Culpa» - «Իմ մեղքը» ինքնախոստովանություն - ապաշխարանքով, ասես թե, համայն աշխարհի մեծերին բարոյականության դասեր տվեց:

Մի՞թե այս մոտեցումները չեն այն բանալին, որով պետք է բացվեն աշխարհի մարդկանց հոգիները Հայոց եղելնի ճանաչման դժվարին ճանապարհին: Մեր քաղաքականության առանցքը, իմաստը պետք է պայմանավորված լինի համամարդկային հենց այս մոտեցումները դավանելով և ոչ թե անվերջ անպտուղ բանավեճերի կազմակերպմամբ: Ո՛չ, մենք պետք է կարողանանք, Հռոմի պապի օրինակով աշխարհին հասկացնել և նրան լսելի դարձնել հետևյալը. եթե Դուք, իրոք, ուզում եք Տիրոջ կողմից կանչված լինել, կանչված լինել ոչ թե դժոխք, այլ դրախտ, ապա պետք է մեղքերի թողություն աղերսեք: Եվ դա պետք է անի ոչ թե Թուրքիան, ո՛չ, այլ աշխարհի այն մեծ տերությունները, որոնց անտարբեր պահվածքի պայմաններում հնարավոր դարձավ իրագործել մարդկության պատմության մեջ ամենամեծ ու սոսկալի ոճիրը՝ Հայոց ցեղասպանությունը: Ահա թե ինչու մեր խոսքն առաջին հերթին պետք է ուղղված լինի աշխարհիս հզոր պետություններին: Նրանց պետք է ասենք, որ Ձեր խոնարհաբար մասնակցությունը Հռոմի պապի հուղարկավորությանն ոչ այլ ինչ էր, քան երեսպաշտություն, եթե Դուք այդպես էլ, չեք ամոքել մի ամբողջ ազգի վիշտ՝ Ձեր ձեռքին ունենալով բոլոր հնարավորությունները, չեք պարտադրել Թուրքիային ճանաչելու 20-րդ դարի մեծագույն ողբերգությունը: Մինչդեռ Եվրոպան և, համոզված եմ, Ամերիկայի Միացյալ Նահանգները ճանաչում են ցեղասպանությունը: Վերջինիս վկայությունն է, որ ԱՄՆ-ի 37 նահանգ պաշտոնապես ճանաչել է Հայոց եղելնը:

Ականատեսից միտքս եկավ ուշագրավ մի դեպք. հանգամանքի բերումով անցյալ տարի մասնակցեցի հարսանյաց արարողության: Ամուսնացողը հարազատներիցս էր՝ հայ, մեր առաքելական եկեղեցու դավանանքը կրող մի սքանչելի երիտասարդ՝ Մյունխենում պաշտպանած գիտությունների դոկտոր: Աղջիկը կաթոլիկ իսպանուհի էր: Երբ գնացել

էինք խոսք ուզելու, իսկ Դուք գիտեք, որ Իսպանիան կաթոլիկ երկրներից ամենաաչքի ընկնողներից է, մեղավոր հայացքով ալեհեր տարեց մի մարդ, որը, ինչպես պարզվեց, ճանաչված և հարգված մեծահարուստ անձ էր, բնականաբար, իսպանացի, ասաց՝ ես չեմ կարողանում նայել Ձեր աչքերին, հայերիդ աչքերի մեջ: Բոլորս զարմացած հարցական հայացքներ ուղղեցինք այդ համակրելի մարդուն: Եվ ասես լուսավորվեց նա, ասաց՝ ես առիթ էի փնտրում հայերից ներողություն խնդրելու, հայերի ներողամտությունը հայցելու: Հետաքրքրվեցինք՝ ինչո՞ւ և ո՞րն է պատճառը. դեռ 115թ., այո, ես չսխալվեցի, 1900 տարի առաջ իսպանական ծագում ունեցող հռոմեական հայտնի կայսր Նեռվա Տրայանը պատերազմել էր Հայաստանում և արշավանքների ժամանակ թափվել էր անմեղ հայերի արյուն: 19 դար անց, իսպանացի այդ կաբալեռոն ներողություն էր հայցում, իսպանացի այդ տարեց մարդը, ասես, իր ապաշխարանքով հավասարվեց Հռոմի պապին, որովհետև դարեր առաջ իր ցեղակցի կատարած, հանցանք էլ ասել չի կարելի, արշավանքի համար էր ներողամտություն հայցում: Դա էլ այն դեպքում, երբ հենց այդ նույն կայսր Տրայանը պատերազմական այդ գործողություններից հետո շինարարական ծավալուն աշխատանքներ էր կատարել հին Հայաստանում: Այդ մասին սեպագիր արձանագրությունը՝ որպես պատմական վկայագիր, մինչ օրս խնամքով պահպանվում է Հայաստանում: Քրիստոնյա իսպանացու մնանչում, քրիստոնյա հայոց երկրի խոհեմության ահա այսպիսի դրսևորում…

Միտքս հետևյալն է, սիրելի ժողովուրդ. մեր ուժը բարոյական մեր արժեքները տարածելու մեջ է, մեր ուժը ազգային միաբանության մեջ է, մեր ուժը սեփական սխալներից, իսկ ավելի շատ ուրիշի գործած սխալներից մեր ազգի բարեկեցության համար դասեր քաղելու մեջ է: Այս հարցերը ինձ ընձեռված հնարավորության սահմաններում հնչեցնում, լսելի եմ դարձնում, մասնավորապես Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովում ունեցածս ելույթների ժամանակ: Հոգ չէ, որ հայաստանյան և ոչ մի հեռուստաալիք այդպես էլ չհեռարձակեց ելույթս, որը մնադրական էր, ասես, Նյուրնբերգյան դատավարություն էր թուրքական այսօրվա իշխանությունների համար: Այո, ճշմարիտ խոսքը, որքան թուրքի, ավա՜ղ, այնքան էլ մերօրյա հայ իշխանավորների համար է վախենալու: Լավագույն դեպքում իրենք կարող են սեփական ժողովրդի հանդեպ ջարդ իրականացնել, որը, անշուշտ, մեր վաղեմի հակառակորդները, օգտագործում են իրենց քարոզչության մեջ, ասելով՝ ի՞նչ ցևասպանության մասին է խոսքը, ովքե՞ր են դատապարտում այն, եթե հենց իրենք Երևանի կենտրոնում են ծեծուջարդի ենթարկում անզեն, խաղաղ ցուցարարներին…

Օրը խորհրդավոր է, և մենք պետք է մեկընդմիշտ հասկանանք. թույլ մարդու դարդը ոչ ոք չի լացում, թույլին լավագույն դեպքում ողորմության են արժանացնում: Մինչդեռ Սասունցի Դավթի ազգը հաղթանակող ազգ է, մինչդեռ մենք այսօր էլ մեր ձեռքերում ենք պահում թուր Կեծակին, մեր տակն է Քուռկիկ Ջալալին: Նժույգը հեծած, թուր Կեծակին բռնած՝ 21-րդ դարը կդարձնենք մերը, այն կվերածենք Հայոց միաբանության, Հայոց պետականության զարգացման և բարգավաճման դարի:

Ես սրտանց ցանկանում եմ, որ բոլորս մեզ համարենք մի ընտանիք, որին Արարիչը հնարավորություն է տվել Դեր-Զորի անապատներից համայն աշխարհով սփռել մեր քաղաքակրթության ամենաանվիրական իղձերը, որով Արարիչը հնարավորություն է ընձեռել մեզ գիտակցել, որ այն քաղաքակրթությունը, որը վերապրեց Բաբելոնին, Ասորեստանին, Միդիային և հին աշխարհի ամենախոշոր ու ամենազորեղ կայսրություններին, ունի լուսավոր տաճարը տանող ճանապարհ: Այդ ուղու վրա մենք մի ազգ ենք, մի մշակույթ ենք, մի ժողովուրդ ենք: Ես խոնարհվում եմ Ձեր առաջ և համբուրում բոլորիդ:

Ամենայն հավանականությամբ, հունիսի 30-ից հուլիսի 5-ը հյուրընկալվելու եմ Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Խորհրդարանական վեհաժողովում, որն անց է կացվելու Վաշինգտոնում: Հնարավորության դեպքում անպայմանորեն կուզենամ լինել Կալիֆորնիայում, հանդիպել իմ հարյուր հազարավոր ընկերների, հարազատների, բարեկամների, ծանոթ-անծանոթների հետ: Ձեզ հետ նստել Խաղաղ օվկիանոսի ափին, նայել հեռուները և այնտեղ տեսնել մի լուսավոր աշխարհ՝ Հայաստան աշխարհը:

«Իրավունք», 22–28.IV.2005:

От ПАСЕ требовалась как минимум “минута молчания”...

“Браво, Арташес!” — так откликнулся руководитель делегации дружественной гордой страны на выступление Арташеса Гегамяна на заседании Парламентской ассамблеи Совета Европы

“Миграция и интеграция: вызов и новые возможности для Европы” — так называлось одно из заседаний весенней сессии ПАСЕ, проходящей на этой неделе в Страсбурге. В выступлении члена армянской делегации Арташеса Гегамяна на этом заседании сделана попытка привлечь внимание европейской общественности к той опасности, которая будет грозить народам мира до тех пор, пока не будет покаяния за полтора миллиона погибших и сотен тысяч разбросанных по миру мигрантов, ставших жертвами чудовищного злодеяния, совершенного в начале прошлого века по отношению к армянам. Предлагаем вниманию читателей полный текст этого выступления.

Уважаемый господин председатель, уважаемые коллеги!

Вопросы миграции более полутора веков не теряют своей актуальности для армянского народа.

Известный французский писатель Анатоль Франс в 1916-ом году гневно осудил европейских правителей за их равнодушие к судьбе армянского народа. Он писал: “На востоке умирает наша сестра. Все ее преступление в том, что она разделяет наши чувства, любит то, что любим мы. Она вобрала и воплотила в себе, как и мы, мудрость, справедливость, поэзию, искусство. Вот в этом и заключается ее “непростительная” вина. Армения умирает, но она возродится. У нее осталось очень мало крови, от которой родится героическое поколение”. Так охарактеризовал великий гуманист судьбу сотен тысяч армян, чудом спасшихся от геноцида, учиненного в Османской империи в 1915 году. Чудом уцелевшие армяне спаслись бегством в арабские страны. Сотни тысяч из них получили приют и

убежище в Российской империи, во Франции и в Греции, в США и в Австралии. Имена многих из этих эмигрантов и их детей золотыми буквами вписаны в новейшую историю приобретенной ими второй родины.

Во Франции с почтением относятся к творчеству талантливого писателя Анри Труайя и кинорежиссера Анри Верноя, любят и гордятся Шарлем Азнавуром. Египтяне с глубоким уважением произносят имя одного из лучших своих премьер-министров и министров иностранных дел XIX века Нубара паши, видного государственного деятеля — гуманиста, который спас и обустроил жизнь многих десятков тысяч своих соотечественников, бежавших от турецкого ятагана из сирийской пустыни смерти Дер-Зор. Арабский Восток, да и Европа, и, уж конечно, ливанцы всегда с добрыми чувствами будут вспоминать сына армянской беженки, великого сына Ливана, погибшего от рук террористов, премьер-министра Ливана Рафика Харири. Благодарные американцы гордятся талантливым писателем Уильямом Сарояном и одаренным художником Аршилом Горки, знаменитым кинорежиссером Рубеном Мамуляном и столь же именитым губернатором Калифорнии Джорджем Докмеджяном, близким другом и сподвижником Рональда Рейгана.

Трагические страницы нашей истории болью отдаются в сердцах сегодняшнего поколения, особенно в эти апрельские дни, когда двенадцатимиллионное армянство, разбросанное по всему свету, зажигает в церквах и соборах поминальные свечи в память о безвинно убиенных в Анатолии полутора миллионах своих соотечественников. В эти дни мы сопереживаем еще и потому, что угроза насильственной миграции армян не потеряла своей актуальности и сегодня.

Я приведу выдержку из интервью Гейдара Алиева, напечатанного в газете “Бакинский рабочий" от 25 июля 2002 года под рубрикой “Средства массовой информации должны быть глашатаями правды..." Гейдар Алиев, будучи тогда президентом Азербайджана, рассказал правду о политике официального Баку в отношении армян Нагорного Карабаха: “Я говорю о периоде, когда был первым секретарем и много помогал развитию Нагорного Карабаха. Одновременно я старался изменить там демографию. К примеру, Нагорный Карабах поднимал вопрос об открытии там института, вуза, а у нас все возражали против этого. Я подумал и решил открыть. В итоге азербайджанцев из прилегающих районов мы отправляли учиться не в Баку, а туда... Или, открыв в НКАО большую обувную фабрику, направляли туда азербайджанцев из окружающих область мест. Этими и другими мерами я старался, чтобы в Нагорном Карабахе стало

больше азербайджанцев, а число армян сократилось". Откровеннее не скажешь. Именно в этой проводимой в те годы политике и кроются причины массовой эмиграции более полумиллиона армян из многих десятков армянонаселенных городов и районов Азербайджана. Именно такая политика насильственного выживания армянского населения со своей исторической родины и привела к борьбе граждан Нагорного Карабаха за свое национальное самоопределение.

Если сегодня мы в ПАСЕ глубоко не изучим причины миграции в регионе Южного Кавказа и не примем должных мер по их пресечению, то потенциальными эмигрантами могут стать более 140 тысяч жителей Нагорного Карабаха, и это обернется гуманитарной катастрофой в регионе. К сожалению, кое-кто здесь, в ПАСЕ, готовит почву для массового оттока армян, обрекая их на повторение участи сотен тысяч наших соотечественников, проживавших в начале XX века в Османской империи и Нахичеванской автономии, исторической армянской области, территория которой была насильно отторгнута Азербайджаном от Армении.

Уважаемые коллеги! В первые апрельские дни мир прощался с Папой Римским Иоанном Павлом Вторым. Со смертью Папы скорбели все — иудеи, правоверные мусульмане, индуисты, христиане-протестанты, англиканцы, православные, григорианцы. Главы их государств и правительств, их духовные лидеры прибыли в Вечный город на похороны понтифика. Иудеи высоко ценили Иоанна Павла Второго за покаяние в Иерусалиме у Стены плача за преступления Холокоста, мусульмане отдали должное мужеству Папы за то, что он впервые за всю историю католицизма посетил в Дамаске исламские святыни — мечеть и святилище Омейядов, за его публичное покаяние за мусульманскую кровь, пролитую крестоносцами в войнах за освобождение гроба Господня. Православные христиане почитали Папу за смиренное покаяние по поводу разграбления византийских святынь, Константинопольского храма и разрушений, учиненных крестоносцами 800 лет назад. Великий Папа завоевал сердца как простых людей, так и сильных мира сего тем, что каялся за грехи, содеянные не им и не в годы его папства. Он понимал разумом и чувствовал сердцем свое великое предназначение. И, казалось, первый урок из пережитого в эти дни должны были извлечь мы — служители Храма Свободы и Демократии, служители Дворца Совета Европы, депутаты ПАСЕ. Казалось, что нам следовало попробовать осмыслить свое собственное предназначение.

И требовалось от нас, быть может, самое малое — начать работу

нашей сессии с того, чтобы стоя почтить минутой молчания память полутора миллиона армян — жертв геноцида 1915 года. И, думается, что необходимо было сделать это хотя бы сегодня — в связи с 90-летием со дня этой страшной трагедии XX века. И только при этом условии глубокие и проникновенные слова, произнесенные каждым из глав государств, правительств, конфессий в дни прощания с Папой, были бы восприняты не только армянами, но и народами мира как осознанное покаяние признанными лидерами современных цивилизаций за Геноцид армян, официально осужденный все еще не всеми странами, за непрекращающиеся в мире войны, за все еще продолжающееся голодное и нищенское существование почти миллиарда граждан планеты Земля. И нитью Ариадны на этой тернистой дороге могут послужить решения, принимаемые нами здесь, в сердце Европы. Без осмысления депутатами ПАСЕ своего предназначения не будет ни единения наших помыслов и действий, ни оправдания нам, ни спасения.

Уж очень не хотелось бы, чтобы слова гуманиста-норвежца, большого друга армянского народа Фритьофа Нансена, сказанные им в те трагические для нас годы, стали эпилогом нашей новейшей истории.

Вспомним и призадумаемся еще раз над тем, о чем предупреждал великий норвежец: “Горе армянам, что они втянулись в европейскую политику. Для них было бы гораздо лучше, если б ни один из европейских дипломатов не произносил имя Армения”.

Арташес Гегамян
Европейские народные партии/
христианские демократы
Парламентская Ассамблея Совета Европы
Страсбург, 27 апреля 2005 г.

“Новое время”, 30.IV.2005.

Վլադիմիր Պուտինը Ռ. Քոչարյանին և Ս. Սարգսյանին հանում է սգից

Մայիսի 5-ին Կինոյի տանը կայացած Արտաշես Գեղամյանի հանդիպումը երիտասարդության հետ, արդեն իսկ համոզված կարելի է ասել, որ զգալի ոգևորություն է առաջացրել երիտասարդության շրջանում և մեծ իրարանցում՝ իշխանական բուրգում: Հետեղելով սեփական «ավանդույթին»՝ իշխանական լրատվամիջոցները, հատկապես «Հայլուրը», նենգափոխեցին հանդիպման ողջ ընթացքն ու բովանդակությունը:

Անասելի ցավ էին ապրում հայլուրականները և Քոչարյան-Սարգսյան կերակրատաշտից սնվող լրատվամիջոցները, երբ Արտաշես Գեղամյանն իր ելույթում՝ դիմելով շուրջ 1500 երիտասարդ ունկնդիրներին ասաց, որ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարություն հաստատելու ճանապարհին մենք պետք է օրինակ վերցնենք ԱՄՆ-ից: Տղերքը շատ էին ազդվել, սուգ ու շիվան էին կապել չգիտես ինչո՞ւ … Ռուսաստանի Դաշնության համար…

Հանգամանքների բերումով, Գեղամյանի ելույթից երեք օր անց Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը (հավանաբար, փորձելով պարոններ Քոչարյանի և Սարգսյանի ապրումները մնմել՝պայմանավորված Գեղամյանի ելույթով), պատասխանելով ամերիկյան հայտնի Սի-Բի-Էս հեռուստաընկերության մեկնաբան Մ.Ուոլեսի այն հարցին, թե «Ռուսաստանում կա ժողովրդավարություն… և ԱՄՆ-ն չպե՞տք է խառնվի այդ գործընթացին», ասաց. «Դա այնքան էլ այդպես չէ: Ես ասացի, որ մենք շնորհակալությամբ կընկալենք թարմ հայացքը կողքից: Ավելին, անգամ պատրաստ ենք օգտագործել խորհուրդները, լրացուցիչ տեղեկատվություն, այլ երկրների փորձը: Իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգները ժողովրդավարական ինստիտուտների զարգացման մեծ ճանապարհ են անցել»:

Արկածախնդիր վայ իշխանավորներին և իրենց գրչակներին հուշում ենք բանսարկություններից զատ ժամանակ գտնել և ծանոթանալ նաև ԱՄՆ-ի պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի 2005թ. մայիսի 10-ին CNN հայտնի հեռուստաընկերությանը տված գնահատականներին, որտեղ մասնավորապես նա նշել է. «Մեզ մոտ Ռուսաստանի հետ ստեղծված են շատ կառուցողական հարաբերություններ, որոնք ծառայում են ԱՄՆ-ի շահերին, ծառայում են Ռուսաստանի շահերին և ծառայում են համայն միջազգային հանրության շահերին»: Այս հարցերին չէինք անդրադառնա, եթե չլիներին Սերժ Սարգսյանի և Ռոբերտ Քոչարյանի կողմից ուղղորդվող թերթերի անգամ իսկ հայհոյախոսության աստիճանի հասած վերնագրերի ներքո տպագրված հրապարակում-

ները: Խնդիրը մեկն էր՝ ընդգծված ազգային նկարագիր ունեցող քաղաքական կուսակցությանը և նրա ղեկավար Արտաշես Գեղամյանին փորձել ներկայացնել մեկ ռուսամետ, մեկ ամերիկամետ, զուրկ աշխարհաքաղաքական կայուն դիրքորոշումներից: Կարծում ենք, այս պայմաններում Արտաշես Գեղամյանի նման հասուն քաղաքական գործիչը, հասկանալի է, կարիք չունի «Հռոմի պապից ավելի կաթոլիկ երևալու», ինչպես փորձում են մեր հանրությանը, իսկ ավելի ճիշտ ԱՄՆ-ին և ռազմավարական դաշնակից Ռուսաստանին ներկայացնել քոչարյանա-սարգսյանական լրատվամիջոցները: Ավելին, ահա հենց ԱՄՆ պետքարտուղարի նման գնահատականների լույսի ներքո խիստ մտահոգիչ է ՀՀ իշխանությունների հիստերիկ իրարանցումը, երբ վերջիններս այն աստիճան են տագնապած և խճճված, որ մոլորվել են «երեք սոսիների մեջ». պաշտոնաթերթում և հանրային հեռուստալրատվությամբ փորձելով պարզապես ենթագիտակցորեն փոխել և վիրավորել միջոցառմանը մասնակցած և ելույթով հանդես եկած ԱՄՆ-ի Ազգային ժողովրդավարության ինստիտուտի (NDI) հայաստանյան ներկայացուցիչ Չեդ Ռոջերսին: Զավեշտալի երևույթ. ստացվում է, իշխանություններին, երբ պետք է մուրալ և ԱՄՆ-ից ստանալ ավելի քան 1,5 միլիարդ դոլարի մարդասիրական օգնություն, ամերիկացիներն ընդունելի են, սակայն նույն իրենք՝ամերիկացիները, իշխանությունների ուղղորդմամբ անողոք քննադատության են արժանանում, երբ հայերիս օգնության ձեռք են մեկնում՝ հուշելով, թե ինչ պետք է անեն քաղաքական կուսակցությունները, երիտասարդները, որպեսզի Հայաստանի Հանրապետությունն իր տաղանդաշատ ժողովրդով ի զորու լինի դուրս բերել երկիրը զարգացման մայրուղի՝ թոթափելով մեզ համար անպատվաբեր աղքատ երկիր լինելու համարումը: Վտանգավոր ենք համարում նաև, որ իշխանական լրատվամիջոցների հրմշտոցի նպատակային ուղղվածությունն այն էր, որ հայ ընթերցողի կամ ունկնդրի մոտ սերմաներ այն թյուր կարծիքը, որ ԱՄՆ-ի հայաստանյան բարեկամները անտարակույս պետք է թշնամաբար տրամադրված լինեն մեր բարեկամությանը Ռուսաստանի Դաշնության հետ և ընդհակառակը: Գավառամտությունը, որն իշխանություններն տևափոխում են արտաքին քաղաքականություն, դառնում է վտանգավոր, առավել ևս այն պարագայում, երբ երկրում տիրում է տգիտության խրախճանք, երբ թշնամաբար են ընդունվում ազգին պատիվ բերող «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահի ելույթները (հատկապես անգլերենով) Ստրասբուրգում, երբ սվիններով է ընդունվում ամերիկացի գործընկերոջն ուղղված (վերջինիս համար հասկանալի լեզվով) ողջույնի խոսքը:

Ավարտելով՝ անդրադառնանք Վ.Պուտինի՝ վերը հիշատակված Մ. Ուոլլեսի հարցազրույցի վերջին հարցի պատասխանին, երբ հեռուստամեկնաբանը Ռուսաստանի նախագահին խնդրեց անգլերենով իր ցանկությունները հղել ամերիկյան ժողովրդին, վերջինս միայն ասաց. "aAll the best to every family in America!" - «Բոլոր լավագույնը ամերիկյան յուրաքանչյուր ընտանիքին»:

Չեզ ենք ներկայացնում մայիսի 5-ին Կինոյի տանը կայացած կուսակցության

երիտասարդական կազմակերպության հավաքում հնչած Արտաշես Գեղամյանի ելույթը:

Արտաշես Գեղամյանի բանավոր խոսքի շարադրանքը

Շնորհակալություն: Չեդին երկու բառ ասեմ (Արտաշես Գեղամյանն անգլերեն ողջունում է Չեդ Ռոջերսին, շնորհակալություն հայտնում երիտասարդությանն ուղղած ջերմ խոսքերի համար, հույս հայտնում, որ «Ազգային Միաբանության» երիտասարդներն անպայման կխորհեն ասվածի շուրջ, ինչը դահլիճն ընդունում է բուռն ծափերով և ողջույնի բացականչություններով): Ես իմ խորին շնորհակալությունը հայտնեցի նրան իր հետաքրքիր ելույթի համար, որը, բառիս իսկական առումով, կարծում եմ, պետք է կարևորվի, ուսանելի լինի, և ոչ այն բանի համար, որ ասողը՝ ձեր հասակակից, իմ կրտսեր բարեկամն է, այլ որ նա սրտացավություն է դրսևորում մեր երիտասարդության հանդեպ:

Չթաքցնեմ՝ անցյալ տարվա ապրիլի 12-ին, ես այն աստիճան մտահոգ չէի, երբ ձեր հասակակիցները մահակներով գլխներիս էին տալիս, ինչքան այսօր, որովհետև ֆիզիկական ցավը հեշտ է տանելի, բայց երբ շուրջ հազար հինգ հարյուր մարդ հավաքվել են և քեզնից հոգևոր խոսքի սպասելիք ունեն ու եթե հանկարծ այս դահլիճից հիասթափված հեռանան՝ կնշանակի հիասթափություն ես պատճառել այդ մարդկանց, որովհետև նրանք իրենց ազատ ժամանակն են հատկացրել այս հանդիպմանը, որովհետև հույսեր են տածել գալով այս դահլիճ՝ «Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավարության հետ հանդիպելու համար: Խոստովանեմ, մինչև այս հանդիպման կայանալը, երբ մեր Վիլենն ասաց, որ «Ազգային Միաբանության» երիտասարդական կազմակերպության անդամները ցանկություն են հայտնել հանդիպելու, մտածեցի՝ լավ, ի՞նչ պետք է ասենք այս մարդկանց, որ իրենց առօրյա հոգսերից և վշտերից կարողանան մի պահ կտրվել և ոչ միայն կտրվել, այլև հավատան, վստահեն սեփական ուժերին, ապավինեն միայն ու միայն իրենց կամքին ու աշխատասիրությանը: Իսկ, որ ամենակարևորն է, նրանց մոտ արթնանա տեսլականը՝ Հայաստանի Հանրապետության 21-րդ դարում երջանիկ արարելու հեռանկարը: Եվ ականջից, երբ լսում էի Չեդ Ռոջերսի ելույթը, մտաբերեցի այն բազում ելույթները, որոնց հետ ծանոթացել եմ վերջերս: Եվ հիշեցի Չեդի մեծ հայրենակից Ռոնալդ Ռեյգանին, որը 60-ական թվականներին Կալիֆորնիայի նահանգապետն էր: Այդ թվականների երկրորդ կեսը չափազանց փոթորկահույզ էր ամերիկացիների համար, որովհետև երիտասարդական մի մեծ ալիք էր բարձրացել վիետնամական պատերազմի հետ կապված: Եվ, ահա, Ռեյգանը գնաց Բերկլիի համալսարան, որը ԱՄՆ-ի ուսումնական խոշորագույն կենտրոններից մեկն է (ի դեպ, ես բախտ եմ ունեցել լինել այնտեղ): Համալսարան գնալուց առաջ նա մտորում էր. գիտակից ողջ կյանքիս ընթացքում այսքան երկչոտ վիճակում երբեք չեմ եղել: Եվ Ռեյգանի երկչոտությունն էլ պայմանավորված էր ոչ թե նրանով, որ խիզախ, հանդուգն, համարձակ մարդ չէր, ոչ, այլ որովհետև նա մեծագույն պատասխանատվություն էր զգում երիտասարդական լսարանում, հենց

ուսանողական լսարանում, որովհետև գիտակցում էր՝ 60-ական թվականների երիտասարդությունը կարող է դառնալ 2000-ական թվականների Ամերիկայի Միացյալ Նահանգների գերիզորության երաշխիքը: Իր ելույթն ուսանողների առաջ Ռեյգանը սկսեց մի հետաքրքիր ակնարկով. այստեղ գալիս, ասաց նա, ակամայից հիշեցի, որ իմ պատկերով խրտվիլակներ այնքան շատ են այրվել Կալիֆորնիա նահանգում, և, մասնավորապես, ձեր համալսարանում, որ, կարծում եմ, թե բենզինի վաճառքով զբաղվող բիզնեսմենները պետք է շնորհակալություն հայտնեն ինձ՝ իրենց առևտուրն առաջընթաց տեմպերով զարգացնելու համար, չէ որ նկարներս այրելիս բենզին էին լցնում դրանց վրա: Ահա ձեզ պրեզիդենտի մոտեցում, այն ժամանակ՝ նահանգապետի: Իսկ մեզ մոտ ինչպե՞ս է. «Առագաստ» սրճարանում Ռ.Քոչարյանին բարև են տալիս, թիկնապահները ծեծում, ջարդում, սպանում են: Իսկ Ռեյգանի նկարը, երբ այրում էին, դրա համար նա շնորհակալություն էր հայտնում, որովհետև նա գիտակցում էր, որ դա յուրովի նախազգուշացում էր իրեն, և որ երկրում ամեն ինչ այնպես չէ, ինչպես պետք է լինի: Ամենաուշագրավն այն է, որ իր այդ հանդուրժողականության համար ընտրապայքարում առավել հետևողական էին Ռեյգանին սատարում երիտասարդները, որոնք ժամանակին այրում էին իր նկարով խրտվիլակները և որոնք հետագայում հավատացել էին իրեն (հետո նա իր հուշերի մեջ արձանագրեց այդ ճշմարտությունը): Իսկ ի՞նչ էր ասել նա, որն էր նրա խոսքի մեխը: Նա պարզապես դիմելով երիտասարդներին ինքնախոստովանություն էր արել.« Եթե ես կանգնած եմ Բերկլիի համալսարանի ուսանողների առաջ և քարոզում եմ հետևել այս կամ այն նորմերին, հարց է առաջանում, իսկ արդյո՞ք ես և իմ սերնդակիցներն այդ նորմերին հետևում ենք, թե ոչ»:

Եվ, բնականաբար, եթե ձեզանից տարիքով ավագն այս ամբիոնից խոսում է, նախևառաջ պետք է իրեն հարց տա, թե ինքն անձամբ և թե իր սերնդակիցներն արդյո՞ք հետևում են այն գաղափարներին, որոնց հետամուտ լինելու կոչով դիմում են երիտասարդական լսարանին: Արդյո՞ք մենք անում ենք մեզնից կախված ամենը, որ վաղը հանգիստ խղճով ձեզ ասենք՝ այն, ինչ ճակատագրի, կյանքի բերումով դրված է մեր ուսերին՝ լիարժեքորեն կատարեցինք: Ցավոք սրտի, դա այդպես չէ, սուտն ու կեղծիքը մեր երկրում խնդում են բոլորիս: Քանի-քանի անգամ դիմել եմ իշխանություններին՝ ասելով, եկեք մի անգամ, ինչպես հայկական, քրիստոնեական բարեկիրթ ընտանիքում է ընդունված, նստենք կլոր սեղանի շուրջ, մեր բոլոր հոգսերի, ցավերի մասին խոսենք՝ ժողովուրդը տեսնի, ժողովուրդն ինքը դատի, ինքը որոշի, թե որն է ճիշտ, որ ճանապարհով պետք է գնալ, որով՝ ոչ: Այն, որ ես համաձայնվեցի հանդիպել ձեզ հետ, հիմա էլ, օգտվելով առիթից, շնորհակալությունս եմ հայտնում ձեզ, որ նախաձեռնել և եկել եք, ուներ իր դրդապատճառները: Վերջերս Հանրապետության Նախագահի պաշտոնում հայտնված Ռոբերտ Քոչարյանը հանդիպում ունեցավ ուսանողության հետ: Մտահոգիչ մի հանդիպում. միթե՞ կարելի էր 20-22 տարեկան երիտասարդին, ուսանողին նախօրոք ասել, թե ինչ հարց տա, իսկ որն էլ, որ հանկարծ շնվում էր այդ տրաֆարետից, շաբլոնից, անասելի հանդիմանանքի էր արժանանում: Ակամայից մտածում էի՝ ինչո՞ւ է մեզ մոտ

այսպես, փորձում էի գտնել պատասխանները: Այս ամենի հիմնական մայր պատճառը, ինչքան էլ զարմանալի ու տարօրինակ թվա, այն է, որ թե երիտասարդները, թե ավագ սերունդը դեռևս չեն ձերբազատվել կապանքներից, զուրկ են ազատությունից, մինչդեռ միայն ազատ մարդը կարող է ազատորեն մտածել, ինքուրույն որոշումներ կայացնել և ինքն էլ ձեռնամուխ լինել դրանց կատարմանը:

Տագնապներիս պատասխանը տարօրինակ մի զուգադիպությամբ, իսկ միգուցե խորը օրինաչափությամբ, գտա, հիշելով, որ 60-ական թվականների վերջին նահանգապետ Ռեյգանը ուսանողության թիվ մեկ խնդիրը համարեց դաստիարակությունը՝ ազատության ոգով: Եվ, ահա, շուրջ երեքուկես տասնամյակ անց, արդեն իսկ պրեզիդենտ Ջորջ Բուշն իր ինագուրացիոն ելույթում բոլորից շատ կարևորեց «ազատություն» բառը և ասաց, որ երբ կարողանանք լիարժեք ազատ լինել, կկարողանանք, այո, աշխարհը բնականոն զարգացման ճանապարհով տանել, արարել, ունենալ տպավորիչ ձեռքբերումներ ի բարօրություն մարդկության… Այո, իրավամբ, միայն ազատ մարդը կարող է գործել ազատ, միայն ազատ ձեռներեցը կարող է հրաշքներ իրականացնել, ինչի ականատեսն ենք թե՛ Միացյալ Նահանգներում, թե՛ Եվրամիությունում, թե՛ Ճապոնիայում:

Մեկ այլ զարմանալի զուգադիպության մասին ևս խոսեմ. անցյալ տարի մարտին հանդիպում ունեցա երիտասարդության հետ, և չորս տարի առաջ նույնպես եղել է նմանատիպ հանդիպում: Ամենայն ուշադրությամբ նայեցի դրանց տեսահոլովակները, որտեղ կային թե՛ երիտասարդների, և թե՛ իմ ելույթները: Անցած չորս տարիների, անգամ մեկ տարվա ընթացքում, վիթխարի փոփոխություններ են տեղի ունեցել աշխարհում, որոնք, դարձյալ չափազանց հետաքրքիր է, առաջնահերթ կարգով հուզում են զարգացած երկրներին: Միայն վերջին երեք տարիների ընթացքում Միացյալ Նահանգներում հրատարակվել են վերլուծական շատ լուրջ գրքեր, մասնավորապես, Զբիգնև Բժեզինսկու «Ընտրություն. գլոբալ տիրակալություն կամ գլոբալ գործընկերություն», որտեղ հզոր երկրի ամենաանվանի քաղաքագետներից մեկն այսօր տագնապի շեփոր է հնչեցնում Ամերիկայի Միացյալ Նահանգների հեռանկարային զարգացման համար: Հենրի Քիսինջերը հրատարակել է «Արդյո՞ք անհրաժեշտ է Ամերիկային արտաքին քաղաքականություն», Պատրիկ Բյուկկենենը հրատարակել է «Արևմուտքի վախճանը», ֆրանսիացի Էմանուէլ Տոդդը, շատ հետաքրքիր մի քաղաքագետ, հրատարակել է ևս ուշագրավ գիրք՝ «Pax Americana- վերջի սկիզբը» վերնագրով: Մարդիկ լինելով գերհզոր, հարուստ երկրների քաղաքացիներ, այսօր մտածում են հեռանկարային զարգացումների մասին, այսօր խորհում են 2020-2030 թվականների մասին, թե ինչպիսի՞ն պետք է լինի Արևմտյան Եվրոպան, ինչպիսի՞ն պետք է լինի Միացյալ Նահանգները, ինչպիսի՞ քաղաքականություն պետք է որդեգրեն իրենք, ի՞նչ զարգացումներ պետք է ունենան: Այ մարդ, նայում ես մեր այս ողորմելի իշխանություններին, մի հատ վերլուծական ելույթ չեն ունեցել, վերլուծական մեկ հոդվածով հանդես չեն եկել: *(Ծափահարություններ):* Մինչդեռ դա ամենից շատ անհրաժեշտ է հենց մեզ, մեր երկրին, որովհետև խիստ վտանգավոր զարգացումների շեմին ենք կանգնած: Ընդամենը մի քանի թիվ բերեմ, որ բոլորիս համար պարզ լինի, թե

վիճակն ինչպիսին է. 1996 թ. Հայաստանի Հանրապետությունում ազգաբնակչության բնական աճը կազմել է 23 հազար 198 մարդ, 2002 թ.՝ 7 հազար 65, անցյալ տարի՝ 11 հազար 703 մարդ, 2-2,5 անգամ ավելի պակաս, քան 1996 թ.: Բա լավ, չմտածենք, թե մի 15-18 տարի հետո ո՞վ է բանակ գնալու, 15 տարի հետո ո՞վ է մեր սահմանները պաշտպանելու: Ո՞վ է մտածում այս ամենի մասին: Ամպագոռգոռ, կեղծ հայրենասիրական ելույթներով են հանդես գալիս, որովհետև բիրդան աղայի հոգեբանություն ունեն, որովհետև առաջնորդվում են «մեզնից հետո ջրհևն» արատավոր կարգախոսով: Երբ այս հարցերի մասին խոսում ես, ասում են՝ միայն վատն է ուզում տեսնել. է, լավը ցույց տվեք: Վատն էլ ոչ թե տեսնում եմ, այլ դրա վտանգն եմ զգում, որովհետև ապագաս կապել եմ միայն ու միայն Հայաստանի հետ, որովհետև այստեղ են իմ հարազատների շիրիմները, Հայաստանում է լինելու իմ ընտանիքի բարգավաճումը՝ ժողովրդիս բարգավաճման հետ: *(Ծափահարություններ):* Այսօր խոսում են ամենատարբեր խնդիրներից, մինչդեռ չեն ասում ամենակարևորը՝ ինչպիսի՞ն է լինելու 2020-2030 թվականներին Հայաստանը, եթե այսօր չձեռնարկենք գործնական քայլեր: Չէ՞ որ արդեն իսկ համախառն ներքին արդյունքում արդյունաբերությանը մաս հասնող թիվը կազմում է ընդամենը շուրջ 21 %, Հայաստանի Հանրապետությունը դարձել է ագրարային, շինարարական պետություն: Բա մեր սակավահող Հայաստանը կարո՞ղ է գյուղատնտեսության շնորհիվ զարգացում ապրել. ցավոք սրտի, ոչ, ունենք-չունենք 450 հազար հեկտար վարելահող ունենք: Էլ չեմ ասում, եթե լսենք իշխանավորներին, գյուղատնտեսությունն էլ 4 թշնամի ունի՝ ձմեռ, գարուն, ամառ, աշուն. կամ ձմեռը իշխանությունների սրտով չի լինում, կամ՝ գարունը, կամ՝ ամառը, կամ էլ՝ աշունը: Ոչ ոք իր անհեռատես քաղաքականության մեջ սեփական մնքի բաժինը չի տեսնում: Բայց պետք է վերլուծել չէ՞: Բա չպե՞տք է վերլուծել ու տեսնել, թե հարևան երկրները զարգացման ինչ ճանապարհ են ընտրել: Բա չպե՞տք է վերլուծել, թե ինչու ենք ապաշնորհ արտաքին քաղաքականության պատճառով դուրս մղվել տարածաշրջանում իրականացվող տնտեսական լրջագույն ծրագրերից՝ լինի դա՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարը, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը, լինի դա՝ Բաքու-Ռեշտ-Կազվին-Աստարա երկաթգիծը, որը միացնելու է Ռուսաստանն ու Աղրբեջանը Պարսկաստանի հետ: Եվ հետագայում էլ այդ ճանապարհը զարգացում է ապրելու՝ Պարսկաստանով գնալու է Աֆղանստան, այնտեղից Պակիստանով Հնդկաստան ու Չինաստան: Հայաստանը չկա տարածաշրջանում իրականացվող և ոչ մի ծրագրում, Հարավային Կովկասում իշխանավորները կույր աղիք են դարձրել մեր երկիրը: Իսկ ինչո՞ւ: Որովհետև իրենց ուղեները կույր աղիքի նման է, որովհետև չեն ուզում Հայաստան աշխարհը տեսնել հարևան երկրների բնականոն զարգացման շառավիղի մեջ: Եվ երբ այս ամենը վեր ես լուծում, քննարկում ես, ակամայից քեզ մեղավոր ես զգում արդեն երիտասարդության առաջ: Մասնավորապես, մեղավոր ես զգում, որ քեզ չի հաջողվել առաջն առնել բարոյական այն այլասերվածության, որ 60 միլիոն դրամ տալիս են ու մի ամիս բազեներ ճամբարներում խաղացնում, մինչդեռ այդ գումարի մեկ քառորդը բավարար կլիներ, որ հարյուրավոր ուսանողներ ուսման վարձ չտալու համար

ինստիտուտներից դուրս չմնային: *(Ծափահարություններ):*

Ավագ սերնդից յուրաքանչյուրը հիշում է իր երիտասարդությունը. նախորդ համակարգում թերություններ, անշուշտ, կային, անշուշտ, ազատությունը ճնշվում և խեղվում էր, միապետություն էր, բայց չէ որ կար այն նվազագույնը, որն ապահովում էր պետությունը: Լավ, կարելի էր քաղաքական համակարգը փոխել, և դա շատ ճիշտ էր, շատ տեղին էր, հասունացած հարց էր, բայց համակարգի առանձին դրական ձեռքբերումներն ինչո՞ւ ջուրը գցեցին: Ինչո՞ւ պետք է այսօր ծնողը շիվար մնա՝ չիմանալով երեխան դպրոցն ավարտելուց հետո, համալսարան ընդունվելով՝ կկարողանա սովորել, թե ոչ: Խնդիրն էլ ոչ թե գիտելիքների սակավության, այլ ծնողի անվճարունակության մեջ է: Ապա, համալսարանն ավարտելուց հետո, արդյոք իր երեխան պահանջվա՞ծ է լինելու ժողովրդական տնտեսության մեջ, բիզնեսում, թե ոչ, որո՞նք են պետության կողմից երիտասարդության ապագայի երաշխիքները: Բացարձակապես ոչ մի երաշխիք չկա, սոցիալական ոչ մի սպասում պետականորեն չի կարգավորվում և հովանավորվում, որ յուրաքանչյուր երիտասարդ իմանա՝ դպրոցն ավարտելուց հետո իրեն ինչ է սպասում: Արդյոք սրա հետևանքը չէ, որ միայն 2005 թ. հունվարից ապրիլի 15-ը, կրկնում եմ, ընդամենը 4 ամսվա ընթացքում՝ այն էլ ոչ լրիվ 4 ամսվա, ինքնասպանության 109 փորձ է եղել մեր մի բուռ Հայաստանում: Միայն ապրիլի 15 օրերի ընթացքում ինքնասպանության 47 փորձ է եղել, որից 29-ը՝ ավարտվել է մահով: Իսկ ո՞վ է լավ կյանքից կամովի հեռանում: Հոգեբանները վերլուծել են դրանց պատճառները:Դրանք, իհարկե, մեծապես պայմանավորված են չլուծված խնդիրներով, անբավարարվածությամբ ու վիճակն շտկելու անհուսությամբ: Անհարմար է ասել, երիտասարդ աղջիկները, ոչ չասեմ գնում են Դուբայ կամ Թուրքիա, ասեմ, որ հարկադրված գնում են արևմտաեվրոպական երկրներ, ԱՄՆ դայակություն անելու, այնտեղից գումար ուղարկելու, որ այստեղ իրենց ծնողներին, նբայրներին և ամուսիններին պահեն: Բա թասիբ ունեցող հայ տղան էլ, եթե գործ չի գտնում, մեկ-երկու, արդեն ինքնասպանության է գնում: Իսկ ո՞վ պետք է մտածի այս ամենի մասին: *(Ծափահարություններ):* Որքան փորձում եմ տխուր բաներից չխոսել, չի ստացվում: Հավանաբար, բոլորիս առողջության նշանն է այն, որ կարողանում ենք ախտորոշել մեր հասարակության հիվանդությունները: Մինչդեռ դրանք հասարակությանը պարտադրված են: Դրանք իշխանական հիվանդություններ են: Դրանք շատ հեշտ ու շուտ էլ կբուժվեն, եթե Ձեզ հետ վստահենք մեր ուժերին, հավատանք մեր ապագային, մեր ճակատագիրը վերցնենք մեր ձեռքը և, ինչպես շատ ճիշտ նկատեց Ձեդ Ռոջերսը, յուրաքանչյուրս այստեղից հեռանալով՝ մեկ ջատագովով ավելացնենք «Ազգային Միաբանությունը», մեկ համակիրով ավելի խտացնենք մեր շարքերը: *(Ծափահարություններ):* Ճիշտն ասած, Վիլենն իմ առաջ խնդիր էր դրել, որ երկար ճառ չասեմ, այլ պատասխանեմ Ձեր հարցերին: Ուստի, իմ այս խոսքից հետո, որ ավելի կենդանի լինի մեր հանդիպումը, մեր զրույցը՝ սիրով կպատասխանեմ Ձեր հարցերին: *(Բուռն ծափահարություններ):*

-Պրն Գեղամյան, սոցիալական վիճակը գյուղում, մանավանդ լեռնային ու

սահմանամերձ, այնքան վատթար է, որ երիտասարդների մեծ մասը չեն համարձակվում ամուսնանալ, ընտանիք կազմել, լքում են գյուղը: Վերջն ի՞նչ է լինելու: (Սասուն Ներսիսյան, Ստեփանավան):

-Ցավոք, դա իրողություն է, որը հղի է շատ վտանգավոր զարգացումներով: Երբ հանդիպումներ ենք ունենում հատկապես լեռնային և նախալեռնային շրջաններում, ականատեսն ենք դառնում, որ երիտասարդները չեն ամուսնանում և երբ հետները խոսում ես, փորձում պատճառն իմանալ, ասում են՝ ծնողիս պահել չեմ կարող, ես ոնց մնքի տակ ընկնեմ, հարս բերեմ տուն, ոնց մնքի տակ ընկնեմ՝ երեխա ունենամ: Եվ այս հարցը, բնականաբար, դարձյալ ու դարձյալ, երբ խորանում ես՝ ունի մեկ լուծում: Հայաստանում այսօր կան բյուջեն կրկնապատկելու բոլոր հնարավորությունները: Այսօր Հայաստանը դինամիկ զարգացում չի ապրում այն պարզ պատճառով, որ ժողովրդավարությանը, ազատ տնտեսությանը ներհատուկ և ոչ մի գործոն չի աշխատում: Կյանքի կենսաապահովման հիմնական ոլորտներն օլիգարխիկ կառույցների ձեռքերում են, որոնք գործում են իշխանավորների, այն էլ բարձրաստիճան իշխանավորների հովանավորության ներքո: Հսկայական գումարներ են շրջանցում Հայաստանի Հանրապետության բյուջեն: Երեկ էր, այո, երեկ էր, «Հայկական ժամանակ» թերթում կարդացի, որ Գլխավոր դատախազությունը քրեական գործ է հարուցելու 23 դատավորների նկատմամբ: Շատ էլ լավ է անելու: Հիմա հարց եմ տալիս և խնդրում եմ հատկապես «Հայլուրին» նկարել, մի անգամ գոնե ասված ճշմարիտ խոսքը ցույց տվեք: *(Ծափահարություններ:)* Իսկ ինչո՞ւ Հանրապետության գլխավոր դատախազը քրեական գործ չի հարուցել այն օլիգարխների նկատմամբ, ովքեր շուրջ 110 հազար (նվազագույն թիվն եմ ասում) տոննա ցորեն մաքսանենգ ճանապարհով 2003 թ. ներմուծել են Հայաստանի Հանրապետություն: Դե հաշվեք՝ ի՞նչ է անում 110 հազար տոննա ցորենը. 2200 վագոն կամ 140 էշելոն:

Այսինքն՝ էլի մանր-մունր գործերով մի երկու-երեք հոգու «խռիկ» կտան, այն էլ ոչ թե արդարություն հաստատելու համար. երևում է, դատավոր տեղավորելու մարդիկ կան՝ ում պարտքի տակից պետք է դուրս գան: Դե տեսեք: Ասեմ ավելին, Ստեփանավանի մեր ընկերոջ հարցի հետ ասածս ուղղակի կապ ունի, որովհետև եթե թալանի առաջն առնվի, ապա բյուջեն կկրկնապատկվի, կեռապատկվի:

Ի՞նչ սրիկայություններ, ի՞նչ մեքենայություններ արեցին դոլար-դրամ փոխարժեքի հետ: Նայում ես դոլար-եվրո փոխարժեքը, տեսնում ես տատանումները 5-7% են եղել մեկ տարվա ընթացքում: 20-25 %-ով արժեզրկվել է դոլարը դրամի հետ կապված: Պատճառը ո՞րն է: Պատճառները մի քանիսն են: Անցյալ տարի փետրվար ամսին, երբ որոշվում էին խմելու ջրի, էլեկտրաէներգիայի, գազի, հեռախոսավարձի սակագները, խփեցին, արհեստականորեն բարձրացրեցրին առաստաղ՝ 565-570 դրամ դարձրեցին մեկ դոլարի փոխարժեքը: Դոլարի հենց այդ փոխարժեքով էլ սահմանեցին սակագները: Երկու ամիս անց տնտեսական այդ ի՞նչ հրաշք եղավ Հայաստանի Հանրապետությունում, որ 120 դրամով դոլարն արժեզրկվեց: Նույն ժամանակահատվածում եվրոյի հետ դոլարի

փոխարժեքի տատանումները չեն գերազանցել 3 %-ը: Այս ամենն ինչի՞ մասին է խոսում. խոսում է այն մասին, որ դոլարով գործարքներ կատարող օլիգարխները գերշահույթներ կստանան, այդ թվում՝ գազ, բենզին (տարեկան 210 հազար տոննա), դիզելային վառելիք (106 հազար տոննա), ցորեն (380 հազար տոննա), ծխախոտ (106 մլն տուփ) ներկրողները: Մի խոսքով իշխանության հենարանը հանդիսացող օլիգարխները, էլ չենք խոսում այդ բիզնեսում իշխանավորների զգալի փայաբաժնի մասին: Չէ՞ որ արտաքին առևտրում գործարքներն իրականացվում են դոլարով:

Երբ ուսումնասիրում ես բյուջետային մուտքերը, թվում է, թե դոլարի արհեստական արժեզրկման հետևանքով գոյացած օլիգարխների գերշահույթներից պետք է համապատասխան մուտքեր գանձվեին բյուջեի եկամտային մաս: Բացարձակապես նման բան չկա. ավելին ասեմ, որոշ ժամանակ անց, ուրիշ մեքենայության գնացին: Դա էլ պայմանավորված էր նրանով, որ 1 դոլարի փոխարժեքը 2-3 օրում 35-40 դրամ տատանումներ չի կարող ունենալ: Բուն պատճառը մեկն է. ապահովել օլիգարխների համար գերշահույթներ ստանալու պայմաններ, որովհետև բոլոր ներկրողներն օլիգարխներն են ու իրենցն են: Արհեստականորեն դոլարն իջեցնում են, իջեցված ժամանակ շուկայից հսկայական չափով գումարներ են վերցնում, հետո գնում են, ասենք, 380 հազար տոննա ցորեն: Դա գնում են 1 դոլարը 420 դրամ համարժեքով, բայց հետո մեկին երկու շահույթով վաճառում են ազգաբնակչությանը: Հիմա, տեսեք, ի՞նչ ահռելի գումարներ են վաստակում: Երբ դրա մասին ասում ես, քար լռություն: Եթե հերյուրանք է ասածս, ինչո՞ւ պատասխանատվության չեք ենթարկում, ինչո՞ւ հերյուրանքի համար դատի չեք տալիս: Իսկ եթե հերյուրանք չէ, ապա միթե՞ երեսպաշտություն չէ, որ Գլխավոր դատախազությունը այդ շնածկներին օրենքի դաշտ բերելու փոխարեն, այս կամ այն դատավորի նկատմամբ է քրեական գործ հարուցում: Ինչ խոսք, եթե դրա հարկը կա, նրանք պետք է պատժվեն, մենք էլ կհավատանք, որ սա հերթական անգամ ժողովրդի երեսին թոզ փչել չի: Ստեփանավանի իմ բարեկամին ասածս այն է, որ եթե այս թալանի առաջն առնվի, ապա Հայաստանի Հանրապետությունում բյուջեն կկրկնապատկվի: Բյուջեն կրկնապատկելու պայմաններում զգալիորեն կմեմվի սոցիալական այն լարվածությունը, որն այսօր երիտասարդությանը հնարավորություն չի ընձեռում, որ ընտանիք կազմի: Իսկ ընտանիք չկազմելու վտանգավոր հետևանքների մասին ասացի. կրկնեմ, եթե 1996 թ., իսկ եթե հիշում եք, դա չափազանց անբարենպաստ տարի էր, որովհետև դրան նախորդել էին 1992-95 թթ. ցրտի, մթի տարիները, այնուամենայնիվ, 23 հազար բնական աճ է եղել՝ 2002 թ. 7 հազար 65-ի դիմաց:

-Պրն Գեղամյան, հայտնի է, որ Հայաստանում ժողովրդավարություն չկա, սակայն հայտնի է նաև, որ եթե ժողովրդավարություն չհաստատվի, մեր երկիրը կկորցնենք: Ի՞նչ եք կարծում, առանց դրսի օգնության մենք կարող ենք ժողովրդավարություն հաստատել: Եթե ոչ, ապա ո՞ւմ օգնությունն է ակնկալում «Ազգային Միաբանությունը»:

-Նախևառաջ օգնում են այն մարդուն, որ ինքն է ձգտում հենց ինքն իրեն օգնի, ով ապացուցում է, որ իրենից կախված ամեն բան անում է, սակայն դիմացի բիրտ ուժը,

ճնշում գործադրելով, չի թողնում երկիրը բնականոն զարգացում ապրի: Ուստի, առաջնահերթ խնդիրը մեկն է: Այն է, որ, այո, մենք դառնանք ոչ թե բազմություն, այլ դառնանք կազմակերպված այնպիսի ուժ, որի դրոշին գրելով՝ ազգային միաբանություն, ժողովրդավարության հաստատում, համոզված կարող եմ ասել, հասկանալի կդառնանք զարգացած ցանկացած երկրի և, բնականաբար, նախևառաջ Ամերիկայի Միացյալ Նահանգների համար, երկիր, որն այսօրվա աշխարհում ինքն է ծածանում ժողովրդավարության դրոշը: *(Ծափահարություններ):* Անվերապահորեն կարող եմ ասել հետևյալը. այս իշխանություններն արդեն իսկ սպառել են իրենց բոլոր հնարավորությունները և ռեսուրսները: Այն աստիճանի են սպառել, որ գզվռտոցն արդեն մտել է իրենց շրջանը, որ արդեն իրենք էլ հասկանում և գիտակցում են, որ ժամանակն է լքել այն նավը, որի ղեկին Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանն են: *(Բուռն ծափահարություններ):*

- Պրն Գեղամյան, Ստրասբուրգում ապրիլի 27-ի Ձեր ելույթը, թերևս, միջազգային առումով միակն էր Մեծ եղեռնի 90-ամյակի հետ կապված: Ասացեք, ինչպիսի՞ արձագանք ունեցավ Ձեր ելույթն այնտեղ՝ Եվրախորհրդարանում և, ի՞նչ եք կարծում, գնասպանության հետ կապված ինչպիսի՞ զարգացումներ կլինեն առաջիկա տասը տարում՝ մինչև հարյուրամյակը: (Եղեռնից մազապուրծ եղածի ծոռ՝ Սամվել):

-Ստրասբուրգի ելույթը, ի դեպ ասեմ, կարող էր և չլինել: Չլինել այն պարզ պատճառով, որ ԵԽԽՎ-ի Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում ես փոխարինող եմ, որովհետև իշխանավորները գտել են, որ գիտելիքներս, աշխարհա-յացքս և իմացության պաշարս ավելի սակավ է, քան կոալիցիայի մաս կազմող իմ գործընկերներինը: Եվ քանի որ հիմնական կազմից բացակայողներ կային, ուստի ելույթով հանդես գալու հնարավորություն ընձեռվեց: Մի հետաքրքիր բան ասեմ. եթե ելույթն ըմբռնում գտավ Եվրախորհրդի մի շարք երկրների պատվիրակների կողմից, եթե այն վրդովեցրեց առավելապես Թուրքիայի և Ադրբեջանի պատգամավորներին, ապա ոչ պակաս վրդովեցրեց նաև մեր իշխանություններին: Ահա սա է իրականությունը: Այստեղ՝ Երևանում, իշխանավորների տրամադրություններն ընկավ, որովհետև չէին կարող դարձյալ «ռազնարյադկայով» օդանավակայան մարդ բերել, պաստառների վրա էլ գրել՝ Շավարշ Քոչարյան, Արտաշես Գեղամյան՝ դավաճաններ: Հիշեցնեմ, որ մեր գործած մեղքն էլ այն էր եղել, որ Ստասբուրգում 2004 թ. ապրիլի 5-ի, 12-13-ի դեպքերից հետո իշխանությունների վայրագությունների մասին, ինչ կա՝ այդ էինք ասել: Նրանք այնքան տկարամիտ են, որ չեն հասկանում, որ երբ պետության, երկրի քաղաքական ուժն ինքն է խոսում իր երկրի թերացումների, երկրում կուտակված խնդիրների մասին, ապա դիմացինին հույս է ներշնչում, որ այդտեղ առողջ կորիզ կա, որն ինքնուրույն կարող է հաղթահարել այդ արատները առանց դրսի միջամտության: Անգամ այս տարրական ճշմարտությունը չեն հասկանում: Ինձ համար բավականաչափ հաճելի և ընդունելի էր, որ ելույթիցս հետո (ինֆորմացիա եմ տալիս, չասեք՝ գլուխ է գովում. ինչ կա, այդ եմ ասում) Ֆրանսիայի պատվիրակության ղեկավարը հենց դահլիճում մոտեցավ, սեղմեց ձեռքս և քաջալերեց՝ ասելով. «Բղավո, մսյո Գեղամյան»: Երեք անգամ դա կրկնեց: *(Ծափահարություններ):*

Դա չափազանց կարևոր էր. ոչ թե, որ իմ հասցեին գովեստի խոսք ասվեցին, դա չէր էականը, այլ այն, որ Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ապրիլի 27-ի նիստի արձանագրությունում գրված է, որ Հայաստանի պատվիրակության անդամ, թող լինի Պետրոսյանը, իր ելույթում, ըստ էության, հանդիմանեց Եվրախորհրդի պատգամավորներին՝ ասելով, որ եթե մենք, իրոք, անկեղծ էինք Հռոմի պապ Հովհաննես Պողոս II-ի հուղարկավորության ժամանակ ասված մեր ելույթներում, ապա ճիշտ կլիներ այսօրվա նիստը սկսեինք հոտնկայս՝ մեկ րոպե լռությամբ հարգեինք Մեծ եղելնի անմն զոհերի հիշատակը: Ահա սա էր ամենակարևորը: *(Բուռն ծափահարություններ):* Բայց ճշմարտության առաջ չեմ ուզում մնանչած լինել. 4-5 րոպեանոց ելույթիս, այնուամենայնիվ, 16 վայրկյան «Հայլուր»-ով անդրադարձան, փոքր ինչ ավել՝ 1 րոպեի շրջանակում, ԱԼՄ-ն տվեց, Տիգրան Կարապետովիչի ականջը կանչի, և Հայաստանի երկրորդ ալիքը: Ելույթն ամբողջությամբ այդպես էլ չհեռարձակվեց, մինչդեռ ինքներս կատարել էինք ելույթի հայերեն սինխրոն թարգմանությունը: Այսինքն, որ հեռուստաալիքները հոգս չքաշեն, ինչ ասեմ, սա է:

- Դուք հավատո՞ւմ եք կոալիցիայի կուսակցությունների այն հայտարարություններին, թե տեղական ինքնակառավարման մարմինների առաջիկա ընտրությունները պետք է անցնեն ազատ, արդար և թափանցիկ: Եվ չե՞ք միանալու այս առումով առաջարկված պայմանագիրը ստորագրելուն:

-Ուրեմն, մեկը լինի իրենց հարցնի՝ իրենք իրենց ստորագրածին հավատո՞ւմ են: *(Ծիծաղ, ծափահարություններ):* Ինչպես կարող եմ ես հավատալ այն կուսակցությունների հայտարարություններին, որոնք բռնությամբ տապալեցին 2003 թ. Ազգային ժողովի ընտրությունների բնականոն ողջ գործընթացը, որոնք ընտրապայքարի ժամանակ պարկերով ալյուր էին կաշառք տալիս, դիզելային վառելիքով էին կաշառում, կաշառում էին գումարով, հիմա էլ, առանց անհարմար զգալու, կանգնել արդարամտության կոչերով են հանդես գալիս: Կարծում են մի ամբողջ ազգ հիշողության կորստով է տառապում, այն է՝ մոռացել ենք բազում խայտառակությունների մասին, որոնց ականատեսն եղանք վերջերս Ազգային ժողովի 44-րդ ընտրատարածքում թափուր պատգամավորական տեղի շուրջ ծավալված անառողջ մրցակցության ժամանակ: Նրանք քաջ գիտեն և գիտակցում էլ են, որ ազատ, արդար, թափանցիկ ժողովրդավարական ընտրությունների պայմաններում իրենք ընդհանրապես Ազգային ժողով մտնելու և ոչ մի հեռանկար չունեն: Իսկ իրենց կոչերը արդար ընտրություններ անցկացնելու մասին պարզապես ճամարտակություններ են, որոնք ուղղված են միջազգային հանրության մոլորության մեջ գցելուն:

- Պրն Գեղամյան, Հայաստան-Թուրքիա հարաբերությունները հետաքրքիր զարգացումներ են ստանում: Նամակներ են գրում, հանճնաժողովներ են ուզում ստեղծել, տարբեր կարծիքներ են արտահայտում եթերում և մամուլում: Դուք ի՞նչ կարծիքի եք: (Համալսարանի ուսանող, Գագիկ Հարությունյան):

- Ուրեմն, եկեք ելակետը ընդունենք այն, որ Հայաստանը և Թուրքիան իրենց աշխարհագրական դիրքերը չեն փոխելու: Այսինքն՝ դատապարտված են դարեր ի վեր

միասին կողք-կողքի ապրելու: Բնականաբար, սա արդեն հրամայական է դարձնում հարաբերությունների բնականոն հաստատման գերխնդիրը: Դրա հետ կարևորում եմ, որ այսօր մի շարք երկրներ ընդունել և ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, այդ թվում նույն Ամերիկայի Միացյալ Նահանգներում 37 նահանգ պաշտոնապես ճանաչել է ցեղասպանության փաստը: Արձանագրենք նաև, որ նոր իրավիճակ է ստեղծվել այսօր՝ պայմանավորված Թուրքիայի նկրտումներով՝ անդամակցել Եվրամիությանը: Եվ Եվրամիությանն անդամակցելու գործընթացում, եթե ոչ նախապայման, ապա, կարծում եմ, քննարկման առարկա կդառնա Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Ամենևին էլ պատահական չէր, որ երեկ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Գերհարդ Շրյոդերը Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ հանդիպման ժամանակ, երբ խոսքը գնացել է Բունդեստագում «Ցեղասպանության հայկական պնդումների» բանաձևը օրակարգում ընդգրկելու մասին, շատ հետաքրքիր պատասխան է տվել՝ հղում անելով գերմանական հետևյալ ասացվածքին. «Բաց ծովում և խորհրդարանում պետք է ապավինել Աստծո ողորմածությանը»: Իսկ ի՞նչ է նշանակում այս պատասխանը՝ ապավինել Աստծուն: Հիշենք «Մի՛ սպանիր» Աստծո պատվիրանը: Այսինքն՝ նա չի ասել, որ դա երկու երկրների ներքին խնդիրն է, չի ասել, որ այդ հարցը գոյություն չունի: Նա պարզապես դիվանագիտական պատասխան է տվել: Սինչդեռ Թուրքիայի քաղաքական ընտրանին շատ լավ գիտակցում է, որ երկրի Եվրամիությանն անդամակցելուն մեծագույն խոչընդոտ կարող է դառնալ իր կողմից Հայոց ցեղասպանության չճանաչման հարցը: Թուրքիան գիտակցում է, նաև, որ, մասնավորապես, Ֆրանսիայի Հանրապետությունում մենք շուրջ 200 հազար հայրենակիցներ ունենք, որոնք թոռներն ու ծոռներն են այն մարդկանց, ովքեր մազապուրծ են եղել Դեր-Զորի մահաբեր անապատից, և ովքեր այդ հարցը բարձրացրել էին իրենց կառավարության առաջ մինչև նա պաշտոնապես չճանաչեց ու չդատապարտեց Եղեռնը, այնպես, ինչպես այդ հարցը դրվել էր Հունաստանում և տասնյակ այլ երկրներում, որոնք պաշտոնապես ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը: Ի վերջո, դարձյալ անդրադառնանք Հովհաննես Պողոս II պապի հուղարկավորությանը. այնտեղ հավաքված էին, բոլորդ հեռուստահաղորդումների շնորհիվ ականատես եք եղել, թե՛ իսրայելիտները, թե՛ մահմեդականները, թե՛ քրիստոնյաները՝ լինեն կաթոլիկներ, թե ուղղափառներ: Ակամայից այդ օրերին մտածում էիր, որն էր Հռոմի պապի հանդեպ տածած հարգանքի պատճառը, որ դրսևորեցին հիշատակածս կրոնական զանազան կոնֆեսիաների ներկայացուցիչները և աշխարհիկ ղեկավարները: Պատասխանը մեկն է. այդ մեծ մարդը վերցրել էր իր նախնիների բոլոր մնքերն իր վրա: Լինեն դա խաչակիրները, որոնք ավերածություններ էին արել ուղղափառ Բյուզանդիայում, Կոստանդնուպոլսում (Սուրբ Սոֆիայի տաճարում), լինեն դա ավերածությունները, որոնք արել էին խաչակրաց արշավանքների ժամանակ Մերձավոր Արեղելքում, լինեն դա արաբական երկրները, լինի՝ Իսրայելը: Որովհետև նա համարձակություն էր ունեցել հայցել ուղղափառ քրիստոնյաների ներողամտությունը, այդ պայմաններում գնալ Երուսաղեմի ողբի և լացի պատի մոտ ու ծնկաչոք ներողա-

մտություն աղերսել հրեաներից Հոլոքոստի համար, որովհետև դրա հետևում, ի թիվս այլոց, նաև կաթոլիկներ կային: Ու եթե աշխարհը անկեղծ էր Պապի այդ սխրանքը մեծարելիս, և եթե Հռոմի պապի թաղմանն իր մասնակցությունը բերած Էրդողանը նույնպես անկեղծ էր, ուրեմն, նա մինչև վերջ պետք է անկեղծ լինի և այդ նույն ճանապարհը փորձի անցնել Թուրքիայի քաղաքական ընտրանու հետ, այն է՝ ներողամտություն աղերսի Օսմանյան կայսրությունում նահատակված 1,5 մլն հայերի համար: Այդ պարագայում, մենք՝ հայերս, համոզված եմ, կընդունենք Թուրքիայի ապաշխարանքը, քանի որ հիշաչար չենք: Վերընթերցենք Դերենիկ Դեմիրճյանի «Ո՞վ է հայը», նա ինքն է բարեկամանում, ուրիշի բարեկամությունը չի ընդունում, նա ինքը կգնա, ինքը բարեկամություն կհաստատի: Այնպես որ ես կողմնակից եմ, որ, այո, Եվրամիությանը Թուրքիայի անդամակցելու հարցում սկսվեն բանակցությունները: Ռուսական շատ հետաքրքիր ասացվածք կա՝ «Ուրիշի եկեղեցին սեփական կանոնադրությամբ չեն գնում», այլ ընդունում ես այն օրենքները, բարոյական այն նորմերը, որոնք հատուկ են տվյալ դեպքում Եվրամիության անդամ-երկրներին: Կանցնի՞ այդ փորձությունը Թուրքիան պատվով, բոլորիս համար ողջունելի կլինի, չի անցնի՝ մնքն իրենց վիզը: *(Ծափահարություններ):*

- Պրն Գեղամյան, Դուք արդեն որերորդ անգամ լրատվամիջոցներով ու Ձեր ելույթներում մատնացույց եք անում կոռուպցիայի ոլորտներն ու անգամ տներն ու չափերը: Ինչո՞ւ իշխանություններն ընթացք չեն տալիս դրանց, չեն հայտնաբերում, դեմը չեն առնում:

-Ինչո՞ւ չեն անդրադառնում: Է, մարդ ինքն իրեն ո՞նց բռնի, իշխանություններն իրենք իրենց, ո՞նց բռնեն: Մի բուռ Հայաստանում էդ ո՞վ է քանի գլխանի, յոթ գլխանի վիշապ է, ինչ է, տարվա ընթացքում 110 հազար տոննա ցորեն ներկրի մաքսանենգ ճանապարհով և բացարձակապես ոչ մի լումա բյուջե մուտք չանի: Էդ որտե՞ղ է գրված, որ օրը ցերեկով մարդուն սպանեն բարև տալու համար, դատարանի դահլիճից էլ ազատ արձակեն: Էդ որտե՞ղ է գրված, որ ապրիլի 5-ին ծեծուջարդի ենթարկեն լրագրողների, ծեծուջարդի ենթարկող անձն, ընդամենը 100 հազար դրամ տուգանվի, որ հետո էլ՝ 3 ամիս անց, «ՏԷՑ-ի կռուգում» չարաբաստիկ, արդեն սպանության ելքով, կռվի մեջ հայտնվի, էլի դատարանի դահլիճից ազատվի: Չի լինում այդպիսի բան երկրների նորագույն պատմության մեջ: Իսկ ո՞վ է բռնել Գլխավոր դատախազության ձեռքը՝ հիշատակածս դեպքերի համար քրեական գործեր հարուցելու: Այ, եթե նման դատավարություն իրականացնող դատավորներին հետ կանչեն, քրեական գործ հարուցեն, նոր կասեմ, այո, դարձի են եկել դատախազության ընկերները: Չեն անի: *(Ծափահարություններ):* Չեն անի այն պարզ պատճառով, որովհետև եթե այդ դատավորներին մի քիչ շատ նևեն, նրանք էլ կկանգնեն ու ճակատներին կասեն՝ Ձեր հանճնարարությունն ենք կատարել: Չէ՞ որ Դուք եք մեզ հրահրել այդ ամենը անելու, չէ՞ որ Ձեր պարտադրանքով ենք մենք գնացել այդ քայլերին: Ցավոք, այստեղ տեղին է հայկական հայտնի ասացվածքը. «Ձուկը գլխից է փտում»: *(Ծափահարություններ):*

- Պրն Գեղամյան, ԲՈՒՀ-երի հազարավոր շրջանավարտներ անգործ են, աշխատանք չեն կարող գտնել ոչ միայն ըստ մասնագիտության, այլև ընդհանրապես: Ի՞նչ անենք,

ո՞ւմ դիմենք, ելքը ո՞րն է:

- Շատ ցավոտ հարց է: Ես պատահական չէ, որ կարևորեցի՝ ասելով, որ այսօր իսկ մենք պետք է խորհենք Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացումների մասին, պարզենք, թե ինչպիսին ենք ուզում, որ լինի մեր երկիրը, ասենք, 2020 թվականին: Եվ այդ ամենի հիմքերը հիմա պետք է դրվեն: Պարզ, հասարակ տրամաբանություն է: Մենք, ավա՜ղ, սակավահող երկիր ենք և հիմա էլ դարձանք սակավամարդ: Ուստի և, հաշվի առնելով, որ արդյունաբերությունը հիմնահատակ ոտատակ է արված, պարտադրված ենք այլընտրանքային զարգացման ուղիներ որոնել: Որո՞նք են դրանք: Դա ծրագրավորումն է, ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումն է, գիտատար ճյուղերի և աշխատատար ճյուղերի զարգացումն է: Իսկ դրա համար պետք է այսօր արդեն որոշակի փոփոխությունների ենթարկվեն մեր դպրոցական ծրագրերը, որ այսօրվա աշակերտը պատրաստ լինի 2020 թ. ամենաժամանակակից հաշվողական տեխնիկայով հագեցված ինֆորմացիոն և ինովացիոն ճյուղերում աշխատի: Որ ինքն այսօր իսկ արդեն իմանա մոտակա տարիներին իրեն ինչ է սպասվում, դրա համար պետք է պետության զարգացման հեռանկարային ծրագրավորում, դրա համար, վերջին հաշվով, պետք է ծրագիր կազմողներն իրենք ուսյալ լինեն, որ իրենք իրենց չխաբեն թվացյալ տոկոսային աճ արձանագրելով, որ ի զորու լինեն տեսնել Հայաստանի հեռանկարը աշխարհաքաղաքական զարգացումների մեջ: Չունեն դա, չեն էլ կարող ունենալ, որովհետև երկիրը զարգացում է ապրում այն ժամանակ, այն էլ անցումային շրջանում հայտնված պետությունը, երբ այդ երկրի ղեկին ուսյալ մարդիկ են, գիտակ մարդիկ, ովքեր խորքային աշխարհայացքի կրողներ են, ովքեր գիտեն, թե ինչպիսի զարգացումներ են լինելու աշխարհում: Չկա դա: Այսօրվա Ազգային ժողովի ղեկավարությունը կարո՞ղ է դա անել, այսօրվա կառավարության անդամները կարո՞ղ են դա անել: Իհարկե, ոչ: Եվ սա ցավ է պատճառում, սա ավելի է արդիական դարձնում բոլորիս վճռականությունը՝ օր առաջ թոթափել այս անտաղանդ իշխանությունների բեռը: *(Ծափահարություններ):*

Սիրելի երիտասարդներ, ձեր մեջ շատ կան ուսանողներ, դուք սովոր եք, որ 45 րոպե հետո պետք է ընդմիջում լինի, և կսկսեք խոսել: Ուրեմն քանի դեռ չեք սկսել խոսել, ես իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում: Ես ուզում եմ, որ բոլորս մեկ անգամ ևս ողջունենք Չեդ Ռոջերսին, որ նա եկավ մասնակցելու մեր միջոցառմանը: Շնորհակալություն, Չեդ: *(Ծափահարություններ)*:

Սիրելի ժողովուրդ, առաջիկայում մենք անպայմանորեն հանդիպումներ կկազմակերպենք ըստ բնակության վայրերի: Եվ բոլոր այն հարցերը, որոնք ավելի երկար պատասխաններ են պահանջում և, ընդհանրապես, քննարկումներ, անշուշտ, դրանց շուրջ մտքեր կփոխանակենք: Մեր ընդհանուր հաղթանակի ակնկալիքով՝ խորին շնորհակալություն բոլորից: *(Բուռն, երկարատև, որոտընդոստ ծափահարություններ և ողջույններ):*

«Իրավունք», 13–19.V.2005:

Հավելված

Приложение

Քոչարյանը պարեց իր «Կարապի պարը»*

– *Պարոն Գեղամյան, ընդառաջ գնալով ժողովրդավարական Սահմանադրություն ունենալու ԵԽ-ի պահանջին՝ Ռոբերտ Քոչարյանը կարծես թե փակում է սահմանադրական հանրաքվեն իշխանափոխության վերածելու ընդդիմության ճանապարհը:*

– Եվրոպային ընդառաջ գնալու Քոչարյանի մտադրությունն ինձ հիշեցնում է խաբեբա հովվի մասին հայտնի առակը, որը պարբերաբար կեղծ աղմուկ էր բարձրացնում, թե իբր գայլերը եկել ու ոչխարներին կերել են: Ու երբ մի օր էլ իրականում գայլերը գալիս ու ողջ հոտն ուտում են, հովվի աղմուկին արձագանքող այլևս չի լինում: Անցած տասը տարիների ընթացքում մենք ականատեսն ենք եղել Քոչարյանի բազմաթիվ խիստ խորհրդակցությունների, որոնց ժամանակ վերջինս խրոխտ ձայնով հաթաթա է տվել իր մերձավորներին, որպեսզի այդ մերձավորները թարգեն կոռուպցիան, ոստիկանությանը բազմիցս հրահանգել է բռնել ընտրակնճարարների ձեռքն ու այսպես տարիներ շարունակ: Այսինքն, երբ տարիների ընթացքում նա անընդհատ նույն թատրոնն է բեմադրել, իսկ ժողովուրդը տեսել է, որ այդ տրագիկոմեդիաների արդյունքում ոչինչ չի փոխվել, ավելին՝ կոռուպցիայի և օրինախախտումների գծով օլիմպիական չեմպիոնների պաշտոններն են բարձրացվել, ահա այս ամենը նմանվել է հայտնի առակի ստախոս չոբանի հայտնի պատմությանը: Ուստի, մեկ օրում որոշել, որ գերանդիով ու բահով դառնում ես եվրոպացի, և նրանք էլ անմիջապես թասիբ պիտի պահեն՝ անմտություն է: Չեն պահելու. ստախոս չոբանի առակն իրենց էլ է լավ ծանոթ:

– *Այդուհանդերձ, եվրոպացիներն օրինապահ քաղաքացիներ են և այնքան էլ լավ չեն տիրապետում «ֆռռացնելու» մեխանիզմներին: Եթե նրանց առջև դրվի Սահմանադրության նորմալ փաստաթուղթ, հանուն ինչի՞ չպիտի պահեն Քոչարյանի թասիբը:*

– Տվյալ դեպքում եվրոպացիներն ինձ կհիշեցնեն նույն այն գյուղացիներին, որոնք քանիցս խաբվել են ստախոս հովվի կողմից: Ժողովրդավարությունը վաղուց է, որ վտանգված է Հայաստանում, և պետք չէ մտածել, թե եվրոպացիները մեր հարցում նույն միամիտն են մնացել: Բացի այդ, չեմ կարծում, թե արժի ժամանակից շուտ աղմուկ բարձրացնել մի հարցի շուրջ, որի իրավացիության մեջ կհամոզվենք առաջիկա օրերին:

– *Ձեր կարծիքով, ինչո՞ւ Քոչարյանը, որը դեռ մեկ շաբաթ առաջ պատրաստ չէր զիջելու «հզոր ղեկավարի» մասին իր պատկերացումները, հանկարծ որոշեց դառնալ ռեֆորմատոր:*

---

* Ժողովածուի առաջին խմբաքանակի տպագրությունից հետո հեղինակը տվել է հարցազրույցներ և հաղես եկել ելույթներով. դրանք զետեղում ենք «Հավելվածի»-ի տակ *(Կազմող)*:

– Ամեն ինչ շատ պարզ է դառնում, երբ վերլուծում ես Քոչարյանի աշխատաոճը: Երբ նա իր դիմաց ուժ է տեսնում, շատ լավ էլ նահանջում է՝ մոռանալով, որ վոին է ու միակ տղամարդը: 2000-ի մարտին նա տեսավ Հանրապետականի և ՀԺԿ-ի միասնությունը և Անդրանիկ Մարգարյանին, որը նրա հեռացումն ու դատն էր պահանջում, պիոների պես, շատ սիրուն, նշանակեց վարչապետ: Այժմ էլ, երբ տեսավ, որ այս անգամ նույն Վենետիկի հանճնաժողովը, ինչպես նաև Եվրամիությունը, հետևողական են իրենց սկզբունքներում, այս մի ուժի առաջ ևս ընկրկեց: Այլ ճանապարհ նա չուներ. հակառակ դեպքում, համայն հայությունն անասելի սկանդալային «ո՛չ» կասեր իր բարեփոխումներին, որը հերթական անգամ ոչ լեգիտիմության դրոշմ կդաջեր նրա դեմքին:

– Այսինքն, կարո՞ղ ենք ասել, որ գնալով զիջումների՝ Քոչարյանն իր դիրքերն ամրապնդեց թե՛ երկրի ներսում, թե՛ արտաքին աշխարհում:

– Ցանկացած ղեկավարի դիրքերի ամուր լինելը պայմանավորված է վստահության այն տոկոսով, որը նա վայելում է իր ժողովրդի շրջանում: Ցավոք, այդպես էլ ո՛չ ինքը ճանաչեց Հայաստանի ժողովրդին որպես իր ժողովուրդ և ո՛չ էլ ժողովուրդը նրան ընդունեց որպես իր նախագահ: Բացի այդ, գործող Սահմանադրությունը չէ պատճառը, որ անօրինականության ճիրաններից երկիրը դուրս չի գալիս, Սահմանադրությունը չէր պատճառը, որ Պապլավոկում բարևի համար մարդ են սպանում, ինչպես նաև՝ Սահմանադրությունը չէր պատճառը, որ 2003-ի համապետական ընտրությունները խայտառակ կեղծվեցին: Այս ամենի պատճառը կկվի մեջ է, ոչ թե այն բների, որոնք իրենք փորձում են փոխել, և այն դիմակների, որոնք փորձում են շղարշի պես քաշել իրենց դեմքին: Սակայն դիմակափոխության բոլոր այս շոուներն այլևս խփված խաղաքարտեր են:

– Պարոն Գեղամյան, 2003 թվականից ընդդիմությունը պահանջում է անցկացնել վստահության հանրաքվե: Իշխանություններն այժմ պատասխանում են, թե այդ հանրաքվեն տեղի ունեցավ մայիսի 28-ին Արագածի փեշերին:

– Աղոթում եմ այն բոլոր մարդկանց ճակատագրերի համար, ովքեր պարտադրված էին մասնակցել այդ շուրջպարին, որպեսզի տասնյակ հազարավոր գյուղացիների անեծքներն այդ մասնակիցներին չկպնեն: Քանզի Արագածի փեշերին հարող բոլոր արտերի ցանքսն ու տնկիները ոչնչացվել են, էլ չեմ խոսում այն խոզանոցի մասին, որ թողեցին իրենց հետևից: Հայհոյելու տեսակետից, այո, մայիսի 28-ին ժողովուրդը միասնական էր: Եվ եթե իշխանություններին ուղղված միասնական այդ հայհոյանքն իրենց կողմից ընկալվում է վստահության դրսևորում, դա խիստ յուրովի մեկնաբանություն է: Քոչարյանը փորձեց թոզ փչել համայն աշխարհի դեմքին և հերթական անգամ ձախողվեց ու խայտառակ եղավ: Արդյունքում, աշխարհը համոզվեց, որ այս մարդիկ ոչ միայն երկիր ղեկավարել, այլև մի պար կազմակերպել անգամ չեն կարող: Իսկ ընդհանրապես, ես Քոչարյանին խորհուրդ կտայի նայել հանրահայտ «Կարապի պարը», որովհետև շուրջպարի պարային իր կատարումը նրա կարապի պարն էր: Ի դեպ, հույս ունեմ, որ պարելիս նրան ոչ մի հանգամանք չի խանգարել:

– Պարոն Գեղամյան, ասացիք, որ Քոչարյանն ընկրկում է միայն ուժի դիմաց: Կարո՞ղ ենք ասել, որ, ի դեմս հայաստանյան ընդդիմության, նա չի տեսնում այդ ուժը, ուստիև չի նահանջում:

– Պարոն Քոչարյանն ընդդիմությունից չէ, որ պետք է վախենա: Նա պետք է վախենա, որ 98-ին իշխանության բռնազավթման դրոշին հայրենասիրական կարգախոսներ գրելով՝ ինքը պղծել է բոլոր այդ կարգախոսները՝ Վարշավայում համաձայնություն տալով հետ վերադարձնել ազատագրված յոթ տարածքները: Նա իր այդ քայլի հատուցումից պետք է վախենա, որովհետև հանուն համատարած թալանի և ընչաքաղցության՝ դավաճանվեց մի ամբողջ ազգի ամենանվիրական պոռթկումներից մեկը:

– Քաղաքական դաշտում վերջերս բավականին հետաքրքիր տրանսֆորմացիաներ են տեղի ունենում: Մասնավորապես, շատ է խոսվում ձեր գործընկեր Արամ Զավենի Սարգսյանի և ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանի նորելուկ համերաշխության մասին: Այդ համերաշխությունը կարո՞ղ է վերածել քաղաքական համագործակցության:

– Ես մասնագիտությամբ էլեկտրոտեխնիկ եմ, և երբ փորձում են տրանսֆորմատորների գործունեությունը տնափոխել քաղաքական դաշտ, ես կարող եմ ասել, որ դա կարող է առաջացնել միայն Ֆուկոյի հոսանքների էֆեկտը (խոսքը՝ ապարդյուն և կիրառական որևէ նշանակություն չունեցող թափառող հոսանքների մասին է. – *խմբ.*):

– Այնուամենայնիվ, Արամ Սարգսյանը կարծես թե գործուն քայլի է պատրաստվում. ըստ տեղեկությունների, ԱՄՆ-ից վերադառնալուն պես վայր է դնելու պատգամավո-րական մանդատն ու դուրս է գալու սահմանադրական ուղու վրա «լռված» «Արդարություն» դաշինքից:

– Արամ Սարգսյանի այդ հայտարարությանը վերաբերում եմ ճիշտ այնպես, ինչպես հենց Արամ Սարգսյանն է վերաբերում իր արած հայտարարությանն, ու վերաբերում եմ ճիշտ նույն կերպ, ինչպես դրան վերաբերում է Ստեփան Դեմիրճյանը:

– Սակայն ժողովուրդը տեսնում է, որ ընդդիմությունը որևէ քայլ, բացի խոսելուց, չի անում: Եվ պատահական չէր, որ նախօրեին ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը ևս նկատեց, թե արձակուրդների ու հանգստի գնալով՝ իշխանափոխություն չես անի: Ի՞նչ է անելու ընդդիմությունը:

– Ես հասկանում եմ, որ Հրանտ Մարգարյանի սիրտն անկնծորեն ցավում է, որ ընդդիմությունը չի կարողանում օր առաջ թոթափել Քոչարյանի ռեժիմը: Հրանտի տված խորհուրդները մենք անպայման հաշվի կառնենք և ամեն ինչ կանենք, որ հաջորդ ասուլիսի ժամանակ Հրանտն ասի, որ ընդդիմադիր իր ընկերները լսեցին իր հորդորը: Որովհետև Հրանտի խոսքերի տողատակում ես հասկանում եմ մի բան՝ տղե՛րք, դուք մի բան արեք, մենք տեր ենք ձեր արածին: Շատ մոտ ապագայում մենք անպայմանորեն կարդարացնենք ընկեր Հրանտի և մնացած բոլորի հույսերը:

– Սակայն ձեր գործընկեր Վազգեն Մանուկյանի, ինչպես նաև Բաբկեն Արարքցյանի կարծիքով, եթե Հայաստանում ցունամիի պես անկանխատեսելի գործընթացներ տեղի չունենան, ապա ընտրությունները լինելու են հերթական: Համաձա՞յն եք այդ

կանխատեսումների հետ:

– Որպես պրոգնոզ, ես կարող եմ ընդունել նրանց ասածները, սակայն դրանց հետ ամենևին համաձայն չեմ: Քոչարյանն ինքն ամենածանր պահին, երբ ստիպված է լինելու գործնական քայլեր կատարել՝ Վարշավայում իր կնքած պայմանավորվածությունների ուղղությամբ, կհասկանա, որ իր փրկության եզակի օղակը օր առաջ ԱԺ արտահերթ ընտրություններ նշանակելն է, որից հետո արդեն, քաղաքական բացարձակ նոր իրավիճակում, տեղի կունենան նախագահական ընտրություններ: Իսկ այդ պահը խիստ մոտ է, ուստի շատ մեծ է հավանականությունը, որ հերթական ընտրությունների մասով Վազգեն Մանուկյանի և Բաբկեն Արարքցյանի արած կանխատեսումները չիրականանան:

Նաիրա Զոհրաբյան

«Հայկական ժամանակ», 18.VI.2005:

Այս իրավիճակը երկար չի ճգվի

– *Ինչպե՞ս կմեկնաբանեիք այսօրվա ընդդիմության գործունեությունը: Կարծես այն ստանալով ընդդիմության կարգավիճակ՝ իրեն լիովին բավարարված է զգում և ոչ առաջ է շարժվում, ոչ՝ հետ:*

– Այն սցենարներով, որոնք մշակված են հին և նոր իշխանությունների կողմից, բնականաբար, ընդդիմությունը չի գործի: Որովհետև այսօր երկու կողմերն էլ շահագրգռված են, որ ընդդիմությունը կրկին նախաձեռնի այնպիսի գործողություններ, որոնք անարձագանք կմնան իրենց վերջնակետում. լինի դա ժողովրդի համար, թե դրսի: Մասնավորապես այն ակնհայտ հանգամանքը, որ վերջերս Վարշավայում Եվրոպայի խորհրդի անդամ երկրների գագաթաժողովի օրերին Քոչարյանը Իլհամ Ալիևի հետ վարվող բանակցություններում Մինսկի խմբի համանախագահների և Ֆրանսիայի, Ռուսաստանի արտգործնախարարների ներկայությամբ համաձայնվել է յոթ ազատագրված տարածքների վերադարձման փաստին և այս պարագայում, երբ Քի Վեսթի պայմանավորվածություններից հետո նման հնարավորություն է բացվել, նույն Մինսկի խմբի համանախագահները, նույն ԵԽ-ն, անշուշտ, չեն ողջունի այն գործողությունները, որոնք Հայաստանում կձեռնարկվեն այն իշխանությունների դեմ, որոնք արդեն իսկ համաձայնվել են այդ յոթ տարածքները վերադարձնել: Որովհետև այդ դեպքում, մի կողմից դրսի ջանքերը ջուրն են լցվում, մյուս կողմից՝ Քոչարյան-Սերժ Սարգսյան զույգին հնարավորություն է ընձեռվում սեփական դիվանագիտության անասելի ծանր ճախողումները վերագրել ընդդիմության կողմից ձեռնարկված գործողություններին՝ հետագայում պատճառաբանելով, թե տեսեք՝ նման բախտորոշ հարց էր ծառացած երկրի առջև, իսկ ընդդիմությունն ապակայունացրեց իրավիճակը Հայաստանում, ինչից էլ օգտվեցին մեր դարավոր «բարեկամները»: Սա կլինի այդ զույգի տրամաբանությունը:

Նախորդ իշխանությունների տրամաբանությունը, ընդ որում, ես այս հարցազրույցում չեմ ցանկանում նրանց քննադատել, որովհետև գնալով համոզվում եմ, որ նրանք էլ են գիտակցում, թե ինչ չարիք է այսօրվա իշխանությունը, և կարծես հաշտություն են կնքել ընդդիմության մեր թևի հետ, հետևյալն է. կլինի ընդվզում, կրկին արյուն կթափվի, որովհետև Քոչարյան-Սերժ Սարգսյան զույգի համար իշխանափոխության հարց չի դրված, այլ՝ կենաց-մահու հարց: Նրանք էլ կասեն, թե՝ ա՛յ ժողովուրդ, մեզնից հետո այս էլ որերորդ անգամ ընդդիմությունն ոտքի է հանում ձեզ, արդյունքում սրի է քաշում, նման պարագայում այս ընդդիմության հետ լուրջ հեռանկարներ կապելը և ապագա տեսնելն անիմաստ է: Ուստի, չարյաց փոքրագույնն ընտրեք, այն է՝ ընտրեք նախորդ իշխանություններին:

Անդրադառնալով ձեր հարցին՝ ասեմ. այո, ընդդիմությունը չի գնում այն ճանապարհով, որը ցանկալի է հին և նոր իշխանություններին: Հարց է առաջանում. իսկ ո՞ր ճանապարհով է ընդդիմությունը գնալու կամ ո՞ւմ է սպասում:

Պետք է նշել, որ իրապես բախտորոշ հարցեր են լուծվում: Հանգուցալուծումը տեսնում ենք: Չպետք է թույլ տանք, որ այս իշխանությունները անցած 13-14 տարիների տառապանքը՝ հանուն իրենց աթոռների պահպանման, ջուրը գցեն: Այդ ժամանակ մենք կգտնենք այն կարգախոսները, որով կկարողանանք վերահաստատել ժողովրդավարական կարգեր: Որովհետև ժողովրդավարական իշխանություններին եթե որևէ մի երկիր կամ միջազգային կազմակերպություն փորձի ծնկի բերել, նշանակում է փորձել ծնկի բերել ոչ թե այդ իշխանություններին, այլ ամբողջ ազգին: Նման պարագայում դա ոչ ոքի չի հաջողվի:

Այս անգամ, և ես ընդունում եմ ձեր քննադատությունը, մենք չպետք է կրկնենք այն սխալները, որոնք թույլ տրվեցին անցյալ տարի:

– Այսինքն, մենք սպասենք հերթական ընտրությունների:

– Բացարձակապես գործը հերթական ընտրություններին չի հասնի: Շատ ավելի շուտ և մոտալուտ հանգուցալուծումներ են լինելու: Ավա՞ղ, սա այն դեպքն է, որ իշխանափոխությունից զատ այսօր ավելի վտանգավոր խնդիրներ կան կանգնած մեր պետականության առջև. այս ապաշնորհ իշխանությունները Հայաստանին միջազգային ասպարեզում ծանր դրության մեջ են դրել: Նման նուրբ հարցերի բալաստն է, որ մեզ այսօր զերծ է պահում ժողովրդին համատարած ոտքի կանգնեցնելու քայլից:

– Բայց այդ իրավիճակը կարող է անընդհատ ձգվել, նաև արհեստականորեն:

– Անընդհատ ձգվել երբեք չի կարող: Որովհետև մենք արդեն աշխարհաքաղաքական հարցերի ոլորտ ենք տեափոխվելու: Հանգուցալուծումները մեր տարածաշրջանում անխուսափելի են: Այս իրավիճակը երկար չեն էլ հանդուրժի: Ոչ մեր ժողովուրդը՝ առաջին հերթին, չեն հանդուրժի նաև Հարավային Կովկասն իրենց կենսական շահերի ոլորտ հայտարարած գերտերությունները: Փոփոխություններ կլինեն, և դրանց կատալիզատոր կհանդիսանա նույն սահմանադրական բարեփոխումների հարցը, որքան էլ տարօրինակ է հնչում, Ընտրական օրենսգրքի հետ առնչվող հարցը, հանրահավաքներ, երթեր, ցույցեր անելու օրինագիծը: Այս առումով պատահական չէ Վենետիկի հանձնաժողովի, Եվրամիության, ԵԱՀԿ-ի դիրքորոշումը. տարբեր տեսերից նույն մեխին են խփում:

– Ինչպե՞ս եք պատկերացնում Ղարաբաղի հարցի լուծումը:

– Եթե որևէ մեկը փորձի Ղարաբաղի հարցի դևատոմս տալ, կնշանակի, որ նա կամ չի տիրապետում խնդրո առարկային, կամ առնվազն լուրջ չի ընդունում այն: Այսօր հարցն այնպիսի փուլ է թևակոխել, որ դա պետք է դիտարկել Հարավային Կովկասի տարածաշրջանի հեռանկարային զարգացումների շառավիղում: Եթե մենք այդ շառավիղի մեջ պետք է դիտարկենք, ապա լուծումը կլինի այնպիսին, որը եթե ոչ ամենացանկալին, ապա ընդունելին կարող է դառնալ: Մենք պետք է ձգտենք այդ շառավիղում լուծել հարցը: Թեկուզ «Ընդլայնված Եվրոպա - Նոր հարևաններ» ծրագրի շրջանակներում: Որովհետև եթե դու ընտրել ես այդ ճանապարհը, ապա այդ ճանապարհին խորթ լուծումներ կամ քաղաքակա-

նություն վարել հնարավոր չէ ո՛չ մեր, ո՛չ Ադրբեջանի, ո՛չ էլ այս երկու պետություններին սատարող կամ խանգարող երկրների կողմից:

Միայն դա է լուծումը: Իրատեսական առումով ես այլ լուծում չեմ տեսնում: Եթե մենք հայտարարենք, որ ամբողջությամբ ընդունել և կրում ենք այդ ամենը, եթե նույն ԼՂՀ-ն ինքը որպես այդ ամենի դրոշակակիր դառնա, իսկ դրա շանսը նրան տրված է կիրակի օրվա ընտրությունների ժամանակ, և այդ ընտրությունները գրագետ ներկայացվի միջազգային հանրությանը, ապա վստահեցնում եմ, որ այդ ժողովրդին արհեստականորեն ոչ մի սեմ օղակի մեջ չեն կարողանա մտցնել: Ես այս մասին խոսել եմ Ստրասբուրգում, այդ ելույթներս խոր թշնամությամբ ընդունվեցին ադրբեջանցիների և թուրքերի կողմից: Բայց այդ ելույթներս ոչ միայն Հայաստանում, այլ նույնիսկ Ղարաբաղում չցուցադրեցին: Միայն Տիգրան Կարապետյանի մոտ հարցի մասին մի փոքր խոսեցինք: Պետք է սթափվեն, իրենց հարցնեն, թե այս ի՞նչ ենք անում և ո՞ւր ենք գնում:

– Մենք ճիշտ հասկացա՞նք, դուք մտածում եք, որ ղարաբաղյան հարցը պետք չէ շուտափույթ լուծել և պետք է լուծումը թողնել մինչև «Ընդլայնված Եվրոպա - Նոր հարևաններ» ծրագրի իրականացումը, մինչև ինտեգրվենք և սահմանները էական չդառնան:

– Ավա՞ղ, միայն մեզանով չէ պայմանավորված խնդրի շուտափույթ կամ ուշ լուծումը: Եվ ամենևին պատահական չէ, որ ադրբեջանական կողմն ամեն ինչ անում է հարցի լուծումը արագացնելու համար, որովհետև, հակառակ պարագայում, եթե մենք, իրոք, շոշափելի քայլեր ենք անում «Ընդլայնված Եվրոպա - Նոր հարևաններ» ծրագրի շրջանակներում, ապա դրանով իսկ ստնծվում է նոր իրավիճակ, որի պայմաններում արդեն անհնարին կդառնա խոչընդոտել Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության միասնականության գործընթացներին: Այլընտրանք դրան այսօր չկա: Ես չեմ բացառում, որ երկարաժամկետ կտրվածքով լինեն լրացուցիչ խոչընդոտներ: Բայց ժողովրդավարության ճգտող պետություններին, պետական միավորներին երբեք չեն կարող պարտադրել այն, ինչը շեղելու է այդ ճանապարհից: Երբ Արցախի ժողովրդի կամքը ձեղավորված է ազատ ընտրությունների արդյունքում, ապա հնարավոր չէ նրան պարտադրել այն, ինչը հակասում է միջազգային ընդունված մոդելին:

Եթե Ադրբեջանի ամենաբարձր պաշտոնյաներն անկեղծ են իրենց այն արտահայտություններում, որ իրենք որդեգրել են եվրոպական արժեքները, որ իրենք ընտրել են ժողովրդավարացման զարգացման ուղին, ապա մենք ողջունում ենք Ադրբեջանի այդ ճգտումները և ինքներս ցանկանում ենք երկուստեք թեթևացնել այս խնդիրները, քանզի ժողովրդավարության ուղին ընտրած պետությունները շատ ավելի շուտ են հաշտության եզրեր գտնում, քան այն երկրները, որոնք այդ ճանապարհով գնալու համար նախապայմաններ են դնում:

– Չեր ասածը 100%-ով ընդունելի կլիներ, եթե արբիտրը, տվյալ դեպքում՝ ԵԱՀԿ-ն, լիներ օբյեկտիվ: Բայց ոնց որ թե անաչառ չեն: Դուք ինքներդ զրույցի սկզբում նշեցիք, որ քանզի Քոչարյանը համաձայնվել է 7 շրջանը վերադարձնել, դրա համար նրանք կպահեն Քոչարյանին: Ստացվում է, որ մեր հակառակորդը ոչ թե Քոչարյանն է կամ

Ալիևը, այլ միջազգային հանրությունը:

– Ձեր հարցը շատ տեղին է: Ահա այստեղ է, որ Քոչարյանին եզակի շանս է տրված՝ ընդունելով 1998թ. հետո կատարված բոլոր սխալները, աղերսի՝ ասելով. ժողովուրդ, ես քաղաքականություն եմ մտել ազատ, անկախ Արցախի և ազատագրված տարածքների անձեռնմխելիությունը երաշխավորողի կարգախոսը դրոշիս դաջված, հիմա ես հասկանում եմ, որ անգամ իսկ այդ դրոշը ձեռքիս զոհվեմ, միևնույն է, դրանից չենք հաղթանակում, ուստի եկեք, ով ինչ մոտեցում ունի, ազնիվ կերպով հանրությանն ասենք: Ես լուծարում եմ այս անբան խորհրդարանը, թող քաղաքական ուժերը ներկայացնեն սեփական լուծումները: Եվ այդ պարագայում ընտրված նոր Ազգային ժողովը կձեղավորի նոր կառավարություն, որն էլ իր հերթին պայմաններ կստեղծի ազատ և արդար ընտրությունների համար: Այդ դեպքում նման իշխանությունը, երբ կխոսի Ղարաբաղի հարցի վերաբերյալ այս կամ այն ընդունելի մոտեցման մասին, նա չի խոսի արդեն իր կամ Անվտանգության խորհրդի անունից: Որովհետև Հայաստանում ընդամենը 2-3 հոգի հաստատ գիտեն, թե բանակցություններն ինչպես են ընթանում: Ո՛չ Անդրանիկ Մարգարյանը, ո՛չ Արթուր Բաղդասարյանը չգիտեն, գաղափար չունեն բանակցությունների մասին: Իսկ եթե ժողովուրդն ինքն է իր իշխանությունը ձեղավորում, եթե տեսնում է, որ իշխանությունն իր շահերն է պաշտպանում, այդ դեպքում նա կպահի այն մարդկանց պատիվն ու թասիբը, ովքեր այս հարցը կներկայացնեն միջազգային ասպարեզում:

– Մեր ասածն էլ դա է, որ միասնական ժողովրդին ոչ ԱՄՆ-ը, ոչ Եվրախորհուրդը չեն կարող հաղթել, բայց հենց դա էլ գիտակցելով, թույլ չեն տա, որ դուք միասնական լինեք:

– Դրա համար եմ ասում, որ Քոչարյանը՝ Սերժ Սարգսյանի հետ միասին շանս ունի նմանատիպ հայտարարությամբ հանդես գալու:

– Լավ, շանս ունեն, բայց չեն անում: Հետո՞:

– Ուրեմն, եթե չեն անում, մենք էլ ձեզ հետ, ձեր թերթերում գրենք հետևյալը, որ այս մարդիկ, չենք ասում այս-այս մարդկանց վերացրեցին, դրա համար են դավաճան, որ մի ամբողջ ազգ թալանեցին, դրա համար են դավաճան, այլ այն, որ մի ամբողջ սերնդի, ազգի ապագայի, հեռանկարի վրա են քար գցում: Որքան այդ երանգով թասիբներին կպնենք, ինչքան ասենք, որ նրանք վատ չեն դրսևորել իրենց Ղարաբաղում, այնքան շուտ կհասկանան: Ես պատահական չեմ ասում սա: Սիրահարված չեմ նրանց արածչարածին: Պետք չէ առնետին անկյուն քշել. նա առյուծ է դառնում:

Հետո էլ պետք է ասել՝ լավ-վատ, վերջին հաշվով իրենց օրոք է ազատագրվել Արցախը: Եթե մենք ամեն ինչ սևացնում ենք, վաղը ադրբեջանական պրոպագանդան կասի, թե եթե սրանք այն գլխից հանցագործներ են, ապա ո՞նց կարող է հանցագործը բարի գործ արած լինի: Հեչ պարտադիր չէ, որ լավ զորավարը լավ կառավարիչ դառնա: Վելինգտոնին Վաթեռլոյից հետո ժողովուրդը ձեռքերի վրա էր տանում, քաղաքականության մեջ մտավ, 10 տարի անց նեխած ձվերով պատուհանները ջարդեցին:

«Չորրորդ իշխանություն»

«Չորրորդ իշխանություն», 21.VI.2005:

Ովքեր գտնում են, որ ընդդիմությունը պարտվել է, չարաչար սխալվում են

– Պրն Գեղամյան, այս օրերին Դուք մեկնում եք Միացյալ Նահանգներ՝ մասնակցելու Վաշինգտոնում տեղի ունենալիք ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի աշխատանքներին, որից հետո էլ կմեկնեք Լոս Անջելես: Ի՞նչ հանդիպումներ են նախատեսված այցի շրջանակներում:

– Ինչպես ինքներդ նշեցիք՝ ՀՀ ԵԱՀԿ պատվիրակությունը, որի անդամն եմ արդեն երեք տարի, Վաշինգտոն է մեկնում մասնակցելու ԵԱՀԿ նիստին, որը, ի դեպ, հոբելյանական է և նվիրված է կազմակերպության ստեղծման 30-րդ տարելիցին, ուր, ի շարս այլ հարցերի, քննարկվելու է նաև բոլորիս համար խիստ կենսահույզ ԼՂ հարցը:

Այո, այնտեղից էլ իմ բարեկամների հրավերով մեկնելու եմ Լոս Անջելես, ուր նախատեսված են մի շարք հանդիպումներ, այդ թվում և հայ համայնքի հետ: Որից հետո էլ վերադառնալու եմ Նյու Յորք, ուր ևս նախատեսված է հանդիպում հայ համայնքի հետ:

Մի շարք հանդիպումներ եմ ունենալու նաև ԵԱՀԿ ամերիկյան պատվիրակության անդամների հետ: Ավելին՝ այդ հանդիպումները «որոշակի» ջերմություն են ունենալու իրենց մեջ այն պարզ պատճառով, որ ինձ հետ վերցնում եմ հոդվածների, հարցազրույցների, ելույթների իմ հևհևական և նոր լույս տեսած գիրքը, ուր կան շատ հետաքրքիր լուսանկարներ՝ մասնավորապես ԱՄՆ սենատոր պրն Հարկինի, կոնգրեսական Դենիս Կուսենիչի հետ.... բոլորին չես թվի. հենց այդ «բոլորի» հետ էլ ես կհանդիպեմ այցի ընթացքում:

– Դառնանք լոսանջելեսյան հանդիպմանը. հայահոծ այդ քաղաքում շատ մեծ տագնապով են հետևում Հայաստանում տեղի ունեցող գործընթացներին. օրերս այնտեղ էր Արամ Սարգսյանը, հիմա՝ Դուք եք գնում. ի՞նչ եք ասելու մեր այն հայրենակիցներին, որոնք սպասում են մեզանում տեղի ունենալիք փոփոխություններին, որպեսզի վերադառնան բարեփոխված հայրենիք:

– Եթե ես հիմա «Ժամանակին» ասեմ այն բոլորը, ինչի մասին պատրաստվում եմ խոսել իմ հեռավոր հայրենակիցների հետ, ապա իմ համակիրները չեն գա հանդիպման, կմտածեն՝ դե ինչ ասելու էր, կարդացինք. եկեք չզրկենք իմ հազարավոր համակիրներին ինձ հետ հաղորդակցվելու հնարավորությունից:

– Իսկ ի՞նչ եք կարծում, Ձեր այցից հետո մեզանում փոփոխություններ կլինե՞ն:

– Փոփոխությունները մեզանում մեկնարկել են 2003 թ. փետրվարի 20-ից: ԵԽ վերջին

բանաձևի ընդունումից հետո էլ այդ փոփոխությունների անխուսափելիությունը ևս մեկ անգամ ամրագրվեց, քանզի ՀՀ իշխանությունները երկիրը տանում են լճացման, տարածաշրջանային և միջազգային մեկուսացման, ինչը խիստ անտրամաբանական է և որն էլ կկանխվի ամենամոտ ժամանակներս:

– Եվ, այնուհանդերձ, պրն Գեղամյան, արևմտյան փորձագետները գտնում են, որ Հայաստանում իրավիճակը հնափոխությունների, փոփոխությունների համար դեռ հասունացած չէ, և «դուրսը» դեռ չգիտի իր անելիքը մեզանում:

– Ձեր արտահայտած միտքը շարունակում է այն թյուրիմացությունը, որն առկա է լրագրողական աշխարհում ընդհանրապես: Նկատի ունեմ այն թեզի շրջանառությունը, որ, իբր, Վրաստանում և Ուկրաինայում դրսից, իսկ կոնկրետ դեպքում՝ ամերիկացիներն են հրահրել գունավոր հնափոխությունները: Ոչ, այդ հնափոխությունները նախաձեռնողները եղել են հիշատակածս երկրների ազգաբնակչությունը: Այլ հարց է, որ ազգաբնակչության ձայնը լսելի դարձավ աշխարհում՝ շնորհիվ լրատվամիջոցների՝ մասնավորապես Սի-Էն-Էն-ի, Եվրոնյուզի, որոնք արդեն թույլ չտվեցին Շևարդնաձեի, Կուչմայի վարչակարգերին արյան մեջ հեղել համաժողովրդական ընդվզումները:

– Այդ դեպքում ինչո՞ւ 2003-ին մեր ձայնը լսելի չեղավ աշխարհին. մենք ավելի շատ ժողովուրդ ունեինք Մատենադարանի մատույցներում, առավել արմատական էինք տրամադրված:

– Հարցը շատ տեղին է ու տրամաբանական: Ընդդիմությունը պետք է կարողանա սեփական սխալները նկատել, վերլուծել: Մասնավորապես մենք այդ ամենից մեծ դասեր ենք քաղել, քանզի տեսել ենք այդ սխալները:

– Կմատնանշե՞ք դրանցից մի քանիսը. երբ մենք ենք մատնանշում, ընդդիմությունը մեզնից նևանում է:

– Յուրաքանչյուր մարդ, էլ չեմ ասում քաղաքական ուժ, որն իշխանափոխության խնդիր է դնում իր առջև, պետք է զարգացումների բոլոր տարբերակները հստակ մշակած և աղեկվատ քայլերը «քարտեզագրած» լինի: Ջորօրինակ մենք՝ ԱՄ-ականներս, որոշակի զարգացումներ անտեսել էինք և բացառել էինք, որ իշխանությունները բիրտ ուժի կդիմեն, տարեց մարդկանց, կանանց վրա էլեկտրաշոկ կկիրառեն, պայթուցիկներ-նռնակներ կնետեն. նման զարգացումները մենք հաշվի չէինք առել:

– Ունե՞ք այդ իրավունքը:

– Չունեինք: Դրա համար էլ այժմ բարձրաձայնում ենք այդ մասին:

–Եվ, այնուհանդերձ, կա տեսակետ, որ Ուկրաինայում, Վրաստանում էլեկտրաշոկ չկիրառվեց, որովհետև ընդդիմությունը Մայդանում մեկ թեկնածուով էր կանգնած, մեզանում այդ կոնսոլիդացիան չկայացավ:

– Վրաստանում, օրինակ, երեքն էին՝ Բուրջանաձե, Ժվանիա, Սահակաշվիլի: Երբ արդեն Շևարդնաձեի վարչակարգը տապալվել էր, նոր այդ ժամանակ նրանք երեքով նստեցին և Վրաստանի ապագա զարգացումների ճակատագիրը վճռեցին:

– Ոչ, նրանք նախօրոք ունեին սցենարը:

– Չէ, այդպես չէ, սկզբնական սցենարը բացառապես առնչվում էր Շնարդնաճեի վարչակարգի տապալմանը:

Ինչ վերաբերում է իմ և մեր կուսակցության որդեգրած քաղաքականությանը, ապա անցնող 2 տարիներն ապացուցեցին, որ 2003-ին մեր ընտրած մարտավարությունը, ավա՞ղ, շատ ճիշտ էր: Ինչո՞ւ եմ «ավաղ» ասում, որովհետև հայ ժողովուրդն այն օրերին հիանալի հնարավորություն կորցրեց. ասել է՝ եթե մեր ընդդիմադիր գործընկերները մեզ հետ համատեղ բոյկոտեին նախագահական ընտրությունների երկրորդ փուլը, համոզված կարելի է ասել, որ զարգացումները բոլորովին այլ հունով կընթանային, և ոչ մի երկիր, այդ թվում և Միացյալ Նահանգները, չէին ճանաչի պարոն Ռոբերտ Քոչարյանի նախագահ լինելու հանգամանքը:

– Եվ, այնուհանդերձ, տեսակետ կա, որ 2003-ին մեր ընդդիմության պարտության պատճառներից մեկն էլ, եթե ոչ՝ գլխավորը, ռուսոֆիլ լինելն էր:

– Նախ. ովքեր գտնում են, թե ընդդիմությունը պարտվել է, չարաչար սխալվում են. պարտվում է քաղաքական այն ուժը, որն իր թիկունքին չունի ժողովուրդ, մինչդեռ այսօր, եթե որևէ քաղաքական ուժ իր թիկունքին ժողովուրդ ունի, ընդդիմությունն է: Պարտվել են այն մարդիկ, ովքեր ժողովրդի կամքը ոտնահարելով պաշտպանել են այս իշխանությանը, և այդ իսկ պատճառով էլ այսօր արժանացել են ժողովրդի ատելությանը:

Եվ ապա՝ ռուսոֆիլության մասին պնդումները հիրավարակ նետողներն ինձ հիշեցնում են քաղաքական «ղումարբազների». երբ պետք է սիրաշահել ռուսներին, ապա ռուսոֆիլը շատ դրական է մատուցվում: Երբ պետք է սիրաշահել Արևմուտքին, ապա ամերիկամետն է շատ դրական:

Տվյալ դեպքում՝ ի դեմս «Ազգային Միաբանության», ունենք ընդգծված հայամետ քաղաքական ուժ, որն առաջնահերթությունը տալիս է սեփական երկրի զարգացումներին, բնականաբար, հաշվի առնելով աշխարհաքաղաքական գործոններն ընդհանրապես և տարածաշրջանայինը՝ մասնավորապես: Եթե ՀՀ շահերն ստիպեն մեզ ավելի ջերմ հարաբերություններ հաստատել Եվրամիության երկրների հետ, առաջնահերթությունը տալ իրենց, ապա համոզված եղեք՝ ԱՄՆ-ն առաջինն այդ դրոշը կպարզի: Եթե ազգային ամենանվիրական շահերը պահանջեն Ռուսաստանի հետ էլ ավելի խորացնել մեր կապերը, ապա, բնականաբար, մենք կառաջնորդենք այդ ամենը: Եթե Միացյալ Նահանգների՝ նույնը կանենք այդ պարագայում:

Բարեբախտաբար, հիշատակածս այս երեք «գործոնների» և, առաջին հերթին, Միացյալ Նահանգների մոտեցումներն այնքան են փոխշաղկապված, որ այդ պարագայում իմաստուն քաղաքական գործիչը ոչ թե պետք է իրեն երկրից երկիր նետի, այլ կարողանա այդ երեք «գործոնների» հետաքրքրությունները ծառայեցնել սեփական երկրի, ժողովրդի շահերին:

– Պրն Գեղամյան, անշուշտ, կներեք հարցիս համար, սակայն ոմանք էլ Ձեր կուսակցությանն են մնադրում, ասենք՝ Մատենադարանից ռուսերեն հնչեցնելու մեջ. նախորդ օրն էլ ՀՅԴ ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանն ընդդիմությանը մնադրեց՝

անգլերեն սովորելու համար...

– Ցավում եմ, որ ես Հրանտ Մարգարյանի նման պարսկերեն չգիտեմ. առաջիկայում պարսկերենն էլ պիտի յուրացնեմ, որովհետև մարդ ինչքան լեզու գիտի, այնքան հարուստ է:

Ինչ վերաբերում է ռուսերեն դիմելուն. ցավում եմ նաև «ոմանց» համար, որովհետև, չգիտես ինչու, չեն հիշատակում, որ եվրոպական երկրների պրեզիդենտներին էլ Ստրասբուրգում ես դիմում եմ անգլերենով, լավ է, դա էլ որպես արատ չեն ներկայացնում:

Հումորով և կարեկցանքով եմ մոտենում այդ մարդկանց ասածներին: Ինչ վերաբերում է «հանգստանալու մեկնելուն». դուք չասացիք, սակայն Հրանտ Մարգարյանն այդ մասին էլ է խոսել, ապա՝ հանգստանալու պահանջն այն մարդկանց համար, ովքեր տարին 12 ամիս հանգստանում են, հասկանալի չէ, իսկ նրանք, ովքեր ծանրաբեռնված աշխատում են, այո՝ պետք է հանգստանան, ուժերը վերականգնեն՝ գիտակցելով, որ միևնույն է՝ իշխանափոխությունն անխուսափելի է, և հոգնած մարդը չպետք է գա իշխանության՝ թե ֆիզիկապես հոգնածը, առավել ևս՝ մտքից տկարը:

– Մի պահ կրկին վերադառնանք Ռուսաստանին. այսօր կարծես թե նոր պահանջարկ-առաջարկ է հաստնանում. նկատի ունեմ արդեն իսկ որոշակի ուժերի կողմից շրջանառության մեջ դրվող՝ ռուսական ռազմաբազաները Հայաստանից դուրս բերելու խնդիրը. Դուք ինչպե՞ս եք մոտենում այս հարցին:

– Կարծում եմ՝ քանի դեռ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները չեն տեափոխվել բնականոն-քաղաքակիրթ հուն, Հայաստանը պետք է անվտանգության որոշակի երաշխիքներ ունենա: Այդ երաշխիքները երկուսն են. մեկը, որ Հայաստանն անդամակցեր ՆԱՏՕ-ին, մյուսը՝ ՀԱՊԿ-ին, որի անդամն է այսօր: Երրորդ ճանապարհ, տվյալ պահին, չկա: Ուստին՝ Հայաստանի այսօրվա շահերից է բխում անդամակցությունն այդ կազմակերպությանը:

– Պրն Գեղամյան, հայաստանյան ընդդիմությունն այսօր դժվար է «հասկացվում», այդ թվում և՝ դրսի կողմից, այն պատճառով, որ դարաբաղյան, հայ-թուրքական հարաբերությունների մի շարք հարցերում իշխանություններն առավել պրոգրեսիվ մոտեցումներ են դրսևորում, քան ընդդիմությունը: Դո՞ւք ինչ մոտեցումներ ունեք այդ հիմնախնդիրների նկատմամբ:

– Հայ-թուրքական հարաբերությունների մասով. հարցը բավականին բազմաշերտ է. Արևմտյան Եվրոպայում ընդհանուր սահմանադրությանը «ոչ» ասելու փաստը մեծապես պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Եվրոպայում տագնապում են, թե օրերից մի օր 60-70 միլիոնանոց ոչ քրիստոնեական Թուրքիան կանդամակցի Եվրամիությանը՝ դրանից բխող բոլոր անցանկալի հետևանքներով: Եվ, այնուհանդերձ, այս պայմաններում, Հայաստանն արհեստականորեն բզի դեր չպետք է ստանձնի, որ վաղը-մյուս օրը 70 միլիոնանոց թուրքերն իրենց ձախողումների պատճառը տեսնեն Հայաստանի Հանրապետության մեջ:

Այդ հարթությունից տեափոխվենք մեկ այլ հարթություն. 21-րդ դարում խիստ

անբնական է, երբ հարևան երկրների միջև սահմանված չեն դիվանագիտական քաղաքակիրթ հարաբերություններ:

Իսկ այս ամենը, բնականաբար, երբեք ու երբեք չպետք է արվի ուրացման ճանապարհով. այն է՝ մոռանանք Հայ դատը, 19-րդ դարի վերջին սուլթան Համիդի օրոք սանձազերծված ջարդերը և կամ՝ 15 թ. ցեղասպանությունը: Ոչ: Երբեք՝ ոչ:

Ղարաբաղյան հիմնախնդրի առնչությամբ ևս պետք է նախ և առաջ լուծվի մայր հարցը, և խնդիրը դիտարկվի առավել գլոբալ հարթության վրա. ինչպիսի՞ն ենք ուզում տեսնել 21-րդ դարում Հայաստանի Հանրապետությունը, ովքե՞ր են լինելու մեր բարեկամները, ի՞նչն է ապահովելու Հայաստանի ներդաշնակ ինտեգրումը Եվրամիությանը՝ աշխարհի քաղաքակիրթ երկրների այդ ակումբին: Ասել կուզի՝ նախ պետք է պատասխանել այն հարցին, թե մինչև 2020 թ. զարգացման ի՞նչ հեռանկարների է համապատասխանելու Հայաստանը: Եվ եթե մայր խնդիրը, որին պետք է ծառայեցվեն մնացած բոլոր հարցերը, լուծվեց, նոր հնարավոր կլինի խոսել մնացյալ հարցերի շուրջ, և ոչ թե վերցնենք ու հենց այնպես խոսենք Ձեր՝ քիչ առաջ մատնանշած՝ 5+1+1 «ձևաչափի» մասին:

Երկրորդեմ՝ եթե մենք խելամտություն չունեցանք և անտեսեցինք վերը նշված մայր խնդիրները, ապա տանուլ կտանք և Ղարաբաղում, և Հայաստանում:

– Եվ, այնուհանդերձ, այսօր արդեն իսկ խոսվում է կոնկրետ զիջումների մասին:

– Արտաքին քաղաքականության մեջ յուրաքանչյուր փոխզիջում իր գինն ունի, եթե ՀՀ կառավարությունը փոխզիջման է գնում, ապա՝ ի՞նչ գին է պահանջում դրա դիմաց. այդ փոխզիջման արդյունքում Հայաստանի առջև զարգացման ի՞նչ հեռանկարներ են բացվում. այ սրա մասին, ավաղ, բացարձակապես ոչ ոք չի խոսում:

– Պրն Գեղամյան, չեմ կարող չհարցնել նաև. Ձեր կուսակցությանը երբեմն «մնաղրում» են Սերժ Սարգսյանի հետ համագործակցելու մեջ. և, ընդհանրապես, վերջին շրջանում մեր քաղաքական դաշտում բոլորը հայտնվել են այդ «կլիշեի» տակ: Ձեր դեպքում մատնանշվում է Իրաք զորամիավորում ուղարկելուն կողմ քվեարկելու հանգամանքը, որի մեծագույն ջատագովն էր Սերժ Սարգսյանը: Այսօր էլ դուք պատրաստվում եք մասնակցել սահմանադրական քննարկումներին, ասել է թե՝ վերադառնում եք պառլամենտ. վերջինի առնչությամբ էլ ՄԱԿ խմբակցության ղեկավար Գուրգեն Արսենյանն էլ ասաց հետևյալը. հազիվ լեգիտիմ հիմք գտան պառլամենտ վերադառնալու:

– Կարծում եմ՝ հարցեր կան, որ պատասխանները հարց տվողին չեն հետաքրքրում, պարզապես շատ դեպքերում խնդիր է դրվում ընթերցողի ենթագիտակցության մեջ մտցնել, որ՝ այ-այ, էսպիսի բաներ կան:

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի ղեկավարի արտահայտությանը, եթե դրա մեջ հեգնանք կա, ապա ես «պապիրոսի» ներկրման և դոլարի կուրսի տատանումների վրա գերշահույթ ստացողների հետ «պոլեմիկայի» մեջ չեմ մտնում:

Ինչ վերաբերում է Իրաքին. եթե որևէ մեկը՝ լինի լրագրող կամ քաղաքական գործիչ,

դեմ է արտահայտվում Իրաք զորամիավորում ուղարկելուն, ապա աշխարհաքաղաքականությունից բացարձակ անտեյակ մեկն է: Այդ առնչությամբ երկու ելույթ եմ ունեցել. դրանցում այնպիսի փաստարկներ եմ բերել, որոնք ներառում էին արևմտյան ողջ վերլուծական մտքի արգասիքը. այդ վերլուծություններից հետո նույն Սերժ Սարգսյանը, տվյալ դեպքում ի պատիվ իրեն, ասաց, որ Արտաշես Գեղամյանի ելույթներից հետո կարելի է ընդհանրապես ելույթ չունենալ և կողմ քվեարկել: Այսպիսով՝ եթե ելույթիս նման գնահատական է տրվում մի մարդու կողմից, որի քաղաքական վարքագիծը ես միշտ քննադատել եմ, ապա ընդամենը պետք է ֆիքսել, որ նա պարզապես պաշտպանել է այն համոզմունքները, որ հնչեցրել են ԱԺ ամբիոնից:

Ինչ վերաբերում է «կլիշեներին», ապա դրանք թխվում են նույն Ս. Սարգսյանի շրջապատում, նախագահական նստավայրում, և խնդիրը շատ պարզ է. ե՞րբ են քաղաքական գործչի մասին խոսում. երբ նրա անունը շոշափվում է մեկ այլ՝ ավելի մեծ հնչնակություն վայելող քաղաքական գործչի հետ: Տվյալ պարագայում, հեչ կարևոր չէ՝ ասվածը ճշմարտություն է, թե ոչ, կարևորը՝ հոլովվում են Գեղամյան-Սերժ Սարգսյան անունները. և ի՞նչ երանգ են տալիս. եթե Գեղամյանը, որն ունի ինքնուրույն մտածելակերպ (կարծում եմ՝ ոչ ոք չի փորձի հերքել այդ փաստը), ապա, ուրեմն, պատկերացրեք՝ ինչքա՞ն խելացի մարդ է Սերժ Սարգսյանը:

– Բայց պրն Գեղամյան, այնուհանդերձ, չե՞ք ընդունում, որ նա, իրոք, խելացի է խաղում ու «խաղացնում» բոլորին:

– Տեսնում եք՝ իմ պատասխանը Ձեզ այն աստիճան «հուզեց», որ Դուք նույնիսկ բարկացաք, ինչն էլ ապացուցեց իմ ասածի ճշմարտացիությունը, որ Ձեր վերջին հարցը պատվեր էր... Ծիծաղել պետք չէ. և եթե պատվեր չէր, ապա խնդրում եմ՝ իմ պատասխանն ամբողջությամբ թերթի մեջ զետևեք:

– Ձետևեց... Այսպիսով՝ պրն Գեղամյան. ընդունում, թե՞ չեք ընդունում՝ Ս. Սարգսյանը «լավ խաղացո՞ղ» է. զորօրինակ նույն «պատվերի» շրջանակում ես օրերս «հասա նրան», որ ՀՅԴ ներկայացուցիչ, ի դեպ հիշենք, որ դա այն կուսակցությունն է, որի երբեմնի փակման գործում ոչ պասիվ դերակատարություն է ունեցել Ս. Սարգսյանը, Հրանտ Մարգարյանը մեր թերթի հարցին, թե՝ հնարավո՞ր է առաջիկա նախագահական ընտրություններում պաշտպանեք Ս. Սարգսյանի թեկնածությունը, բառացի ասաց հետևյալը. «Ամեն ինչ այս կյանքում հնարավոր է»:

– Ուրեմն՝ Հրանտ Մարգարյանը մեծ հարված է հասցրել սեփական կուսակցության հնչնակությանը: Հիշեցնեմ՝ 2003 թ. ապրիլին, ՀՅԴ վերնախավը ԱԺ նախընտրական գործընթացի ժամանակ՝ հոտնկայս, բուռն ծափահարություններով ողջունեց «Գրանտ Քենդիի» սեփականատեր Հրանտ Վարդանյանի այն միտքը, որ Հայաստանի Հանրապետությունում օրինականություն, կարգ ու կանոն կհաստատվի, կոռուպցիային և կաշառակերությանը վերջ կդրվի միայն այն ժամանակ, երբ իշխանությունները, մասնավորապես, Ռ. Քոչարյանը ձերբազատվի այդ ամենի «քավոր» Սերժ Սարգսյանից...

– Եվ վերջին հարց. վերևում Դուք ասացիք, որ իշխանափոխությունն անխուսափելի է՝ «ո՞ւմով, ե՞րբ, ինչպե՞ս»:

– Ինչպես. Սահմանադրության ուժով, ժողովրդի կամքով: Երբ. երբ այդ երկու պայմանները լիարժեքորեն հասունացած կլինեն: Ումով. կորոշի ժողովուրդը:

Հարկ է հիշել հետևյալը. երբ հեղափոխություններն իրականացվում են ոչ թե ժողովրդով, այլ՝ առանձին լիդերներով, ապա լիդերներն ունենում են ճիշտ այն ճակատագիրը, ինչին արժանացավ ֆրանսիական հեղափոխության միանձնյա առաջնորդ Մաքսիմիլյան Ռոբեսպիերը:

– Որի՞ն...

– Գիլյոտինի ենթարկեցին...

Կարմեն Դավթյան

«Ժամանակ», Լոս Անջելես, 2.VII.2005:

11 հազար կիլոմետր հեռու Հայաստանից

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը Վաշինգտոնում ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանից հետո մի շարք հանդիպումներ ունեցավ ԱՄՆ-ում:

– Հայաստանյան գործիչներն ամերիկյան այցերից հետո փորձում են խորհրդավորության մշուշով պատել իրենց հանդիպումները, ակնարկներ անել ինչ-ինչ կարևոր պայմանավորվածությունների շուրջ, տպավորություն ստեղծել, թե հենց իրե՛նք են ԱՄՆ ընտրյալը: Ինչո՞ւ խախտեցիք արդեն իսկ հաստատվող այդ ավանդույթը:

– Քաղաքական այն գործիչը, որը սեփական կայացման խնդիրը պայմանավորում է այս կամ այն, այդ թվում, ինչու ոչ՝ ամենազարգացած և ամենազորեղ ժողովրդավարության շտեմարան հանդիսացող երկրով, միայն ապացուցում է, որ դեռ ունի կարդալու, սովորելու, պատմությունից դասեր քաղելու խնդիր: Մարդ պետք է իրեն զորև զգա նախ և առաջ այն գաղափարներով, որոնք հոգեհարազատ են սեփական ազգին: Եվ դրանցով առաջնորդվելով՝ կկարողանաս երկիրդ դուրս բերել զարգացման շառավիղ:

– ԵԱՀԿ ԽՎ նստաշրջանին մասնակցելուց հետո ի՞նչ հանդիպումներ ունեցաք ԱՄՆ-ում:

– Նյու Յորքում և Կալիֆոռնիայում «Ազգային Միաբանությունն» ունի բազմաթիվ համակիրներ, որոնք երբ իմացել էին, որ ժամանելու եմ ԱՄՆ՝ խնդրել էին անպայմանորեն կազմակերպել հանդիպումների շարք իրենց հետ:

Նյու Յորքի Սուրբ Վարդան եկեղեցում հատուկ ընդունելություն էր կազմակերպվել իմ պատվին, որտեղ հանդես եկա ելույթով: Հանդիպման ամբողջական տեսագրությունը հեռարձակվեց հայկական 2 հեռուստաալիքներով: Հնարավորություն ընձեռվեց հանդիպել Հայկական համագումարի ներկայացուցիչների, նաև Կալիֆոռնիայի համալսարանի ազգությամբ հայ ուսանողների հետ: Բազմամարդ հանդիպում եղավ Գլենդելի հանդիսությունների սրահում՝ շուրջ 650-700 մեր հայրենակիցների և բնիկ ամերիկացիների հետ: Չորս հեռուստածրագրերով 8,5 ժամ ուղիղ եթեր եմ ունեցել և պատասխանել հեռախոսով տրվող ամենաբազմաբնույթ հարցերի: Ինչպես նշում էին իմ այնտեղի բարեկամները՝ դա աննախադեպ մի երևույթ էր՝ հաշվի առնելով, որ ընդամենը 4 օր եմ հյուրընկալվել Կալիֆոռնիայում:

100 հազարավոր մեր սփյուռքահայ հայրենակիցներ այսօր տոգորված են մեկ

խնդրով՝ ինչ և ինչպես անել, որ Հայաստանը կարողանա այս ծայրաստիճան վտանգավոր զարգացումներից դուրս գալ անկորուստ, և Լեռնային Ղարաբաղի հարցը հանկարծ այս ապիկար իշխանությունների ապաշնորհ քաղաքականության հետևանքով չստանա աննպաստ լուծում: Եվ նրանց հարցերից բխող ընդհանուրն այն էր, որ հայ ժողովուրդն արժանի է շատ ավելի գիտակ, խոհեմ, ուսյալ և հեռատես ղեկավարության, որի բացակայության արդյունքն է, թերևս, այն, որ օրըստօրե էլ ավելի է ահագնանում արտագաղթը, հուսահատությունը պատում տասնյակ հազարավոր հայորդիների, որոնք հայտնվել են Հայաստանից 11 հազար կմ հեռու:

– «Արդարություն» դաշինքի ամերիկյան համակիրները հայաստանյան մամուլում չեն թաքցնում իրենց հուսահատությունը նաև ընդդիմության գործողությունների նկատմամբ: Ձեր հանդիպումների ընթացքում արդյոք չե՞ն առաջադրվել նաև նման հարցադրումներ:

– Չէի ասի, թե «Ազգային Միաբանության» նկատմամբ հիասթափություն կա: Հակառակը՝ ասես թե մի նոր շունչ և ոգի հաղորդվեց նրանց: Անշուշտ, ապատևեկացված էին: Բայց այն հոդս ցնդեց ուղիղ եթերում առաջին իսկ հանդիպման ժամանակ, երբ ներկայացվեց իրական վիճակը: Սփյուռքահայ մեր հայրենակիցներն ապատևեկացված էին Հանրային հեռուստաընկերության կեղծ տեղեկատվության հետևանքով, թե ներկա իշխանությունները գրեթե անփոխարինելի են, անում են անհնարինը, մարտի են բռնվել ադրբեջանաթուրքական աշխարհի գործիչների հետ և ժողովուրդն անսահմա՜ն հավատում ու վստահում է այսօրվա իշխանավորներին, ավելի՛ն՝ քնում և արթնանում է «Ռոբերտ-Սերժ» ասելով:

– ԱՄՆ-ում հանդիպումները սահմանափակվեցին հայկական շրջանակներո՞վ:

– Իհարկե, ո՛չ: ԵԱՀԿ 55 անդամ-պետությունները խորհրդարանական վեհաժողովում ներկայացված են տվյալ երկրների ամենաազդեցիկ քաղաքական դեմքերով: Բարեբախտաբար, մի շարք ամենաազդեցիկ քաղաքական դեմքերի հետ հաստատված է վաղեմի բարեկամություն: Առավել ևս, որ հնարավորություն եղավ նրանց նվիրել իմ հարցազրույցների, հոդվածների և ելույթների ժողովածուն, և այնտեղ նրանցից շատերը տեսան սեփական նկարները: ԱՄՆ կոնգրեսականների հետ հանդիպումների ընթացքում ինձ ոգևորողն այն էր, որ նրանք ամենևին էլ անտարբեր չէին հայոց պետականության ճակատագրի հանդեպ և պատրաստ էին սատարել քաղաքական այն բոլոր ուժերին, որոնք ճիշտ են հասկանում ժողովրդավարությունը և գիտակցում, թե խորամանկելով ու ապատևեկատվություն սփռելով՝ երկիրը երբե՛ք 21-րդ դարում չի կարող հասնել հաջողության: Այս տեսանկյունից՝ շատ օգտակար էր իմ այցելությունն ԱՄՆ:

– Հրապարակվել է, թե ԱՄՆ նախկին նախագահ Բիլ Քլինթոնն իր ելույթում անդրադարձ է կատարել ԵԱՀԿ ԽՎ-ում հնչած Ձեր ելույթին՝ կարևորելով դրա թեման, այն է՝ քաղաքակրթությունների հնարավոր բախումը:

– Իմ ելույթում արծարծվել էր այդ հնարավոր բախման խնդիրը՝ պայմանավորված

ԼՂ խնդրի ոչ արդարացի լուծմամբ: Եվ այդ օրինակով բացատրված էր, որ եթե տասնյակ նմանատիպ արյունածոր հակամարտություններ չեն գտնում լուծումներ, ուրեմն, պետք է փոխվեն մոտեցումները և վերանայվի կարգավորման փիլիսոփայությունը:

Եվ Բիլ Քլինթոնը նախօրեին իր ելույթում հայտարարեց, թե սեպտեմբերի 15-ին ԱՄՆ-ում ծրագրվում է աշխարհի նախկին նախագահների հանդիպում, ու որպես դրա անհրաժեշտության հիմնավորումներից մեկը նշեց, թե վերջերս ԵԱՀԿ ԽՎ-ում սրությամբ արծարծվել է քաղաքակրթությունների բախման հնարավոր զարգացումների հարցը, և աշխարհի լրջմիտ քաղաքական գործիչները պիտի նորովի վերլուծեն այդ խնդիրները:

Արձանագրենք, որ ԵԱՀԿ ԽՎ վաշինգտոնյան նստաշրջանում քաղաքակրթությունների հնարավոր բախման մասին խոսվել է միայն և միայն իմ ելույթում: Ուստի, սա վկայում է, թե այս հարցն ամենալուրջ արձագանքն է գտել աշխարհի ամենաազդեցիկ քաղաքական շրջանակներում:

Հարցազրույցը վարեց
Աննա Իսրայելյանը

«Առավոտ», 20.VII.2005:

Կանխատեսել պատմության մարտահրավերները

Մ/թ հունիսի 30-ից հուլիսի 12-ը «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը գտնվում էր ԱՄՆ-ում: Վաշինգտոնում կայացած Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Խորհրդարանական վեհաժողովի հոբելյանական նստաշրջանի լիագումար նիստում նա հանդես եկավ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման խնդրում սկզբունքային նոր մոտեցումներ արծարծող ելույթով: Ելույթ, որը միաժամանակ կոչ էր ԵԱՀԿ անդամ-երկրներին՝ տեղի չտալ ԼՂՀ հիմնահարցի լուծման աղբրեջանաթուրքական մոտեցումներին, որոնք հղի են տարածաշրջանի ապակայունացմամբ: Ելույթ, որը նաև նախազգուշացում էր Հարավային Կովկասում քաղաքակրթությունների հնարավոր բախումը կանխելու համար: Ուշագրավը, ի դեպ, այն է, որ Ա.Գեղամյանի ելույթի արձագանքը երկար սպասեցնել չտվեց. ԱՄՆ-ի նախկին նախագահ Բիլ Քլինտոնը վերջերս կայացած իր հեռուստաելույթում առանձնահատուկ կարևորել է ԵԱՀԿ ԽՎ-ում հնչած այս հարցի հույժ արդիականությունը, որը և դառնալու է սեպտեմբերի 15-ին ԱՄՆ-ում կայանալիք աշխարհի պետությունների նախկին նախագահների վեհաժողովի քննարկման հատուկ առարկա:

ԵԱՀԿ շրջանակներում վաշինգտոնյան հանդիպումներին հետևեցին Կալիֆոռնիայում և Նյու Յորքում Ա.Գեղամյանի ունեցած քննարկումներն արդեն հայ համայնքի ներկայացուցիչների հետ, ուղիղ հեռուստաելույթները (ութուկես ժամ տևողությամբ) հայկական տարբեր հեռուստաալիքներով, մամուլի ասուլիսը և հարցազրույցները:

Այդ շարքից Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Ա.Գեղամյանի տված հարցազրույցը Կալիֆոռնիայի Գլենդել քաղաքում հրատարակվող «Ավանգարդ» շաբաթաթերթին (հուլիսի 18-ին):

Օրերս «Ավանգարդ» շաբաթաթերթը, «Կռունկ», «Մուսա», «Ծիածան», «Առողջություն և գեղեցկություն» ամսագրերը հրատարակող «ՆՄՄԿ» հրատարակչական տան հյուրն էր Հայաստանի քաղաքական հայտնի գործիչ, «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը: Նա սիրով համաձայնեց հարցազրույց տալ «Ավանգարդին»:

– *Պարոն Գեղամյան, Դուք համարվում եք Հայաստանում գործող իշխանության ընդդիմադիր շարժման ամենավառ առաջնորդներից մեկը: Հետևաբար, զարմանալի չէ, որ մեր թերթի ընթերցողներից շատերին հետաքրքրում է, թե արդյոք չե՞ք պատրաստվում*

Ձեր թեկնածությունն առաջադրել նախագահական առաջիկա ընտրություններում:

– Լուրջ քաղաքագետի համար Հայաստանի նախագահական ընտրություններին մասնակցելը ոչ մի դեպքում ինքնանպատակ լինել չի կարող: Խնդիրը, որ այժմ ծառացել է ընդդիմության առջև, և որին այս պահին ու այստեղ ներկայացնում եմ ես՝ լինելով «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահը, այս է՝ Հայաստանի Հանրապետությունում ստեղծել ժողովրդավարական անշրջելի զարգացումների համար բարենպաստ և անհրաժեշտ պայմաններ: Այս մոտեցումն այլընտրանք չունի: Ցանկացած այլ սցենար երկիրը հանգեցնելու է ստագնացիայի և, վերջին հաշվով, Հայաստանի պետականության կորստի:

Ներկա պայմաններում, երբ հստակորեն դիտարկվում են մեր երկրի զարգացման բացասական միտումներ, ակնհայտ է դառնում, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում խորանում է մարդկանց դժգոհությունն արտաքին ու ներքին քաղաքականությունից, ինձ ոչինչ չի մնում, քան պատասխանատվություն վերցնել մեր երկրի ու ժողովրդի ապագայի համար:

– Այդ դեպքում, պարոն Գեղամյան, ԱՄՆ ուղևորվելու Ձեր նպատակներից մեկն արդյոք այն չէ՞, որ ստանաք մեր ընտրողների աջակցության երաշխիքը:

– Բնավ չէի ցանկանա նևացնել այն մարդկանց, ովքեր այստև՝ Կալիֆոռնիայում, իմ համակիրներն են, ովքեր նախորդ ընտրությունների ժամանակ քվեարկել են իմ օգտին, բայց, պետք է ասեմ, որ ուղևորությունս Ամերիկա մի փոքր այլ նպատակ է հետապնդում: ԵԱՀԿ-ի պառլամենտական ասամբլեայում, լինելով Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակության անդամ, ես մասնակցեցի ասամբլեայի հոբելյանական նիստին: Հոբելյանական, քանի որ 30 տարի առաջ Հելսինկիում ստորագրվեց Եվրոպայում անվտանգության և համագործակցության պայմանագիրը: Այս փաստաթուղթը ստորագրեցին Եվրոպայի 33 երկրների, ինչպես նաև ԱՄՆ-ի և Կանադայի ղեկավարները: Ճակատագրի կամոք ինձ բախտ վիճակվեց ելույթով հանդես գալ Վաշինգտոնում՝ հոբելյանական այդ վեհաժողովի լիագումար (պլենար) նիստում: Տարբեր երկրների բազմաթիվ կոնգրեսականների և պառլամենտների անդամների կարծիքով՝ այդ ելույթի հիմնական դրույթները կարող են ունենալ շատ ու շատ հետաքրքիր զարգացումներ:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ում ապրող իմ հայրենակիցների աջակցության երաշխիքները ստանալուն, ապա չափազանց բարձր եմ գնահատում այն, քանի որ, ամեն ինչից զատ, ենթադրում եմ, որ հենց ԱՄՆ-ում բնակվող հայ ընտրողն է համարվում «լակմուսաթուղթը», նախագահի այս կամ այն թեկնածուի նկատմամբ ընտրողների իրական մոտեցման դրսևորողը: Համաձայնեք, որ սա կամքի բացարձակապես ազատ արտահայտություն է, քանզի այստեղ բացառվում է ընտրողների նկատմամբ որևէ ճնշում գործադրելու հնարավորությունը:

Իր հերթին, սա արտացոլում է ընտրողների իրական տրամադրությունները Հայաստանում, քանի որ աշխարհի տարբեր երկրներում ու նաև այստև՝ Կալիֆոռնիայում ապրող հայերին միավորում են ազգակցական զորև կապերը մայր հայրենիքի հետ:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ բոլոր ամերիկահայերին շնորհակալություն

հայտնել նյութական այն օգնության համար, որ ցույց է տրվում Հայաստանի բնակիչներին: Եթե չլիներ այդ աջակցությունը, ապա, հասկանալի է, թե որքան դժվար ու ծանր էր լինելու մեր հայրենակիցների վիճակն այն պայմաններում, որ ստեղծվել են Հայաստանում՝ հիմնականում կոռուպցիայի և գործող իշխանության անճարակության հետևանքով:

Որպեսզի իմ դիրքորոշումն ավելի մոտ ու հասկանալի լինի ԱՄՆ-ի իմ հայրենակիցներին, ես փորձեցի օգտվել այստեղ գտնվելու հանգամանքից, որպեսզի իմ գնահատականները տամ ոչ միայն բուն Հայաստանում, այլև Հարավային Կովկասի տարածաշրջանում ստեղծված իրավիճակին, առաջ քաշելու խնդիրներ, որ ծառացած են մեր երկրի, մեր ժողովրդի առջև: «Մեր ժողովուրդ» ասելով՝ նկատի ունեմ ողջ հայությանը, քանի որ գտնում եմ՝ եթե չլինի Հայաստանի Հանրապետությունը, սփյուռքն աստիճանաբար կազմալուծվելու, վերանալու է: Մյուս կողմից, եթե չլիներ այն օգնությունը, որ հատկապես վերջին տարիներին Հայաստանը ստանում է սփյուռքից, ավելի որոշակի՝ ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Արևմտյան Եվրոպայում բնակվող հայերից, հարցականի տակ էր դրվելու հայկական պետականության գոյությունը: Իսկ սա խայտառակ դատավճիռ կդառնար մեր սերնդին՝ ժառանգած հայ քաղաքակրթությունը պահպանել չկարողանալու համար, քաղաքակրթություն, որ իր արմատներով հազարամյակների խորքն է գնում և կարողացել է հաղթահարել պատմության արհավիրքները:

Քաղաքակրթությունների սահմանագծին գտնվող Հայաստանին կարող է հատկացվել կարևոր դեր

– Պարոն Գեղամյան, այն, որ Դուք բազում կողմնակիցներ ունեք ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում՝ կասկած չի հարուցում: Բայց խնդրում եմ պարզաբանեք, թե ինչի վրա է հիմնվում Ձեր այն համոզվածությունը, որ ստեղծված իրավիճակում Հայաստանի նախագահ դառնալու Ձեր հնարավորությունը շատ ավելի համոզիչ է, առավել հավանական:

– Երկու խոսքով դժվար է պարզաբանել բոլոր հնարավորությունները, որպեսզի կարողանամ համոզիչ հիմնավորել Հանրապետության Նախագահի պաշտոնին հավակնելը: Բայց պետական բարձր պաշտոնի հավակնորդի վերաբերյալ կարծիք կազմելու հնարավորություն տվող չափանիշների մասին կցանկանայի արտահայտվել:

Այսօր գլոբալացվող աշխարհում բոլոր պետություններն այնպես են շաղկապված, որ այս կամ այն երկրի քաղաքական ղեկավարության իմաստությունը (մանավանդ այնպիսի փոքր երկրի, ինչպիսին Հայաստանն է, որ հիմնականում շրջապատված է, ցավոք, ոչ բարյացակամ պետություններով) կազմում են համապարփակ գիտելիքները ոչ միայն սեփական երկրի, այլև հարևան պետությունների զարգացման հեռանկարների մասին: Սա հավասարապես վերաբերում է և այն տերություններին, որոնց աշխարհաքաղաքական շահերն առնչություն ունեն և Հարավային Կովկասի տարածաշրջանի հետ:

Ժամանակակից քաղաքագետի համար կարևոր է կանխատեսել համաշխարհային պրոցեսների զարգացումները և դրա շնորհիվ սեփական երկիրը հեռու պահել հնարավոր

բացասական հետևանքներից: Ու նաև այն, որ հայրենի երկրի համար այս բարդ ու հակասական աշխարհում կարողանաս ընտրել գոյատևման առավել անվտանգ տարբերակներ:

Շատ հարցերի պատասխաններ կարողացա գտնել ապագան կանխատեսող հայտնի մասնագետների ու քաղաքագետների աշխատություններում: Համաշխարհային քաղաքական գործընթացների նկատմամբ համակարգային մոտեցում դրսևորելու հարցում սեփական պատկերացումներ ձեղավորելու տեսակետից անգնահատելի օգնություն են ցույց տվել Ֆրենսիս Ֆուկույամայի, Սեմյուել Հանտինգտոնի, Էմանուել Տոդդի, Պատրիկ Բյուքենենի, Հենրի Քիսինջերի, Զբիգնև Բժեզինսկու աշխատությունները: Խորությամբ ուսումնասիրելով վերջերս հրապարակած նրանց աշխատությունները, վերլուծելով պատմության առաջ քաշած մարտահրավերները, որ հառնում են նույնիսկ այնպիսի հզոր երկրների առջև, ինչպիսիք են, օրինակ, ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, ինձ հաջողվեց կազմել առաջիկա երկու տասնամյակում Հայաստանի միջպետական փոխհարաբերությունների հնարավոր զարգացման մոդելը: Այդ մոդելի հիմքում դրված առանցքային գործոնը երկարատև և կայուն խաղաղության հաստատումն է տարածաշրջանում: Դա էլ պետք է բխի ոչ թե ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Եվրամիության երկրների (պետություններ, որոնք Հարավային Կովկասը համարում են իրենց աշխարհաքաղաքական և կենսական շահերի գոտի)՝ այս տարածաշրջանում առկա որոշակի հակասություններից, այլ պետք է հիմնված լինի այդ երկրների հետ Հայաստանի երկխոսության և համագործակցության գաղափարի անհրաժեշտության վրա՝ ելնելով պատմական այն իրողությունից, որ Հայաստանը քրիստոնեական հին քաղաքակրթություն ունեցող երկիր է, որի պահպանումն ու զարգացումը ոչ միայն մեր՝ հայերիս, խնդիրն է, այլև քաղաքակիրթ ողջ աշխարհի առաքելությունը:

Աշխարհում քաղաքակրթությունները միմյանց դեմ դուրս բերելու ի հայտ եկող միտումը հանգեցրել է հակասությունների ամենասուր ձևերի՝ գլոբալ ահաբեկչության, ինչը երկրագնդի վրա ապրելը դարձրել է մղձավանջային:

Քաղաքակրթությունների երկխոսության անհրաժեշտությունը, որը պետք է բացառի քաղաքակրթությունների բախումները, գիտակցում են ամենատարբեր հայացքների տեր քաղաքագետները՝ սկսած Մուհամեդ Խաթամիից մինչև Ջորջ Բուշը: Պատահական չէ, որ ԱՄՆ-ի նախագահն իր վերջին ելույթներից մեկում ներկայացրեց համաշխարհային զարգացումների երեք կարևորագույն ուղղությունները՝ ազատության և դեմոկրատիայի հետ նաև քաղաքակրթությունների երկխոսություն: Այս միտումի կոնտեքստում քրիստոնեական և մահմեդական քաղաքակրթությունների սահմանագծին գտնվող Հայաստանին կարող է հատկացվել չափազանց կարևոր դեր:

– Հայաստանի ընդդիմադիր շարժման առաջնորդները հասկանո՞ւմ են, որ նախագահական առաջիկա ընտրություններում ընդդիմությունից ավելի քան մեկ թեկնածուի առաջքաշումը գործող իշխանություններին թույլ կտա իրենց դրածոյին անցկացնել և հասնել նրա հաղթանակին նախագահական հերթական ժամանակաշրջանի համար:

– Այստեղ առաջ է գալիս իրարամերժ երկու մոտեցումների բախում: Ի սկզբանե

հետևելով Ձեր տված հարցի տրամաբանությանը՝ ընդդիմությունը պետք է հնարավոր համարի, որ Հայաստանում նախագահական ընտրություններում հերթական անգամ չեն բացառվի տարբեր բնույթի խախտումներ, կեղծումներ և ընտրողների սահմանադրական իրավունքների ոտնահարումներ:

Ես կարծում եմ, որ եթե մենք իսկապես հավատում ենք Հայաստանում ժողովրդավարական փոփոխությունների անխուսափելիությանը, եթե մենք իսկապես պատրաստ ենք դրա համար ամենաթանկ գինը վճարել, ընդդիմությունն իր ամբողջ քաղաքականությամբ, իր բոլոր գործողություններով պետք է համոզի ընտրողներին, Հայաստանի բոլոր բնակիչներին, որ մենք ընտրություններին ներկայանալու ենք մի քանի թեկնածուով, բայց նրանք բոլորը լինելու են համախոհներ և ազատ, դեմոկրատական ընտրությունների ապահովման երաշխավորներ: Այլապես մենք ի սկզբանե, փաստորեն, հաշտվում ենք այն մտքի հետ, որ եթե ընդդիմությունից մեկ թեկնածու չլինի, նախագահական ընտրություններում իշխանությունները վերստին դիմելու են խախտումների և կեղծիքների:

Սա հարցի մի կողմն է: Կա և մյուս կողմը՝ թեկնածուներն իրավունք չունեն իրենց պայմանավորվածություններով ճնշում գործադրելու շարքային ընտրողի վրա: Այսպես, ասենք, Գեղամյանը կարող է ընդունելի լինել ընտրողների մի մասի համար, և միանգամայն անընդունելի՝ մյուսի: Հանդես գալով իշխանության դեմ՝ ընտրողների այս զանգվածը կկամենա ձայնը տալ ընդդիմության այլ թեկնածուի օգտին: Եթե մենք մեր գործողություններով ստիպում ու զրկում ենք ընտրողին ընդդիմադիր թեկնածուներից ընտրություն կատարելու հնարավորությունից, նա իրավունք կունենա կասկածի տակ առնելու Հայաստանում ժողովրդավարական վերափոխումներին ուղղված մեր սկզբունքային դիրքորոշումը:

– Հայաստանի ներկայիս ղեկավարության արտաքին քաղաքականությունում դրսևորվող կոմպլեմենտարությունը նվաստացուցիչ է երկրի համար: Կոմպլեմենտարությունն արտաքին քաղաքականությունում մի գործիք է քաղաքական հավասարակշիռ կառույցների համար: Եվ այս պարագայում, երբ կողմերից մեկը ոչ լեգիտիմ և թույլ իշխանություն է, դա հղի է միակողմանի զիջումներով, ինչը դեմ է ազգի շահերին: Հենց նման միտում է նկատվում այսօր ԱՄՆ-ի և Ռուսաստանի հետ Հայաստանի փոխհարաբերություններում: Մինչդեռ Հայաստանի համար ոչ պակաս կարևոր է կարգավորել շփումները նաև հարևանների հետ: Դուք, պարոն Գեղամյան, ընտրվելով նախագահ, ի՞նչ մտադրություններ եք ունենալու մերձավոր հարևանների հետ հարաբերությունները կառուցելու հարցում:

– Ձեր հարցի սկզբնամասը միևնույն ժամանակ և պատասխան է: Դրա տակ ես պատրաստ եմ դնելու իմ ստորագրությունը: Ինչ վերաբերում է հարցի երկրորդ մասին, ապա հարևանների հետ հարաբերություններն անհրաժեշտ է կառուցել՝ հիմնվելով այն կանխադրույթների վրա, որոնք պարզ են ու հասկանալի ոչ միայն քո երկրի բնակիչներին, այլև այն պետություններին, որոնք որոշում են համաքաղաքական զարգացումներն աշխարհում: Այսպիսով, այդ ամենը պետք է հիմնված լինի այն երկրների քաղաքացիների

իրավունքներն ու ազատությունը հարգելու վրա, որոնց հետ դուք մտադիր եք կարգավորել քաղաքական կապերը: Դրանք պետք է բացառեն լարվածության նոր օջախների առաջացման հնարավորությունը և պետք է ուղղված լինեն տնտեսական կապերի ամրապնդմանը, քանի որ առանց տնտեսական կապերի հնարավոր չէ երկրների նորմալ համագործակցություն, երկրներ, որոնք հոգևոր ու բարոյական տարբեր արժեքներ են դավանում: Տվյալ դեպքում ես նկատի ունեմ մեր հարևաններին՝ Ադրբեջանին, Թուրքիային, Իրանին, բնականաբար, Վրաստանին: Եվ մեր քաղաքականությունը պետք է անմիջականորեն հիմնվի Հայաստանի Հանրապետության կենսականորեն կարևոր շահերի վրա՝ նկատի ունենալով այն, որ այսօր մեր բոլոր հարևանները, բացի Իրանից, հայտարարել են Եվրամիությանն ինտեգրվելու գաղափարին իրենց հակվածության մասին:

Նշանակում է, մենք պետք է ճշգրտենք մեր գործողությունները՝ հաշվի առնելով համագործակցող այս պետությունների պահանջները, որոնց հետ մոտ ապագայում ևս ունենալու ենք բավականին երկարաձիգ սահման: Մեզ համար դա պատմական միանգամայն նոր իրավիճակ է, և անհրաժեշտ է դրանից քաղել որոշակի օգուտ՝ և՛ քաղաքական, և՛ տնտեսական:

Հռոմի պապից ավելի կաթոլիկ չլինենք

– Պարոն Գեղամյան, մի առիթով Դուք նշել եք, որ ներկայիս իշխանությունը, պատկերավոր ասած, կտրում է Հայաստանը սփյուռքի հետ կապող պորտալարը: Ինչպիսի՞ն եք Դուք տեսնում այդ կապն ապագայում:

– Այնպիսի փոքր պետության համար, ինչպիսին, ավա՜ղ, այսօրվա Հայաստանն է, հանցանք է, երբ սփյուռքը, որտեղ գործնականում ապրում է հայության 75 %-ը, արհեստականորեն բաժանվում է Հայաստանից, որտեղ բնակվում է մեր ազգի միայն մեկ քառորդը: Եթե առանցքայինը չդառնա հայության պահպանության համընդհանուր գաղափարը, որն ի սկզբանե ներառում է գլոբալիզացիայի մարտահրավերներին հակակշռող բոլոր գործոնները, ապա մենք կդատապարտվենք կամ բացարձակ ինքնամեկուսացման, կամ, վատագույն դեպքում, կանհետանանք աշխարհի քաղաքական քարտեզից: Ուրեմն, Հայաստանը պետք է պետական, քաղաքական իմաստություն ձեռք բերի, որպեսզի օգտագործի սփյուռքի այդ հսկայական ներուժը՝ երկկողմանի զարգացման ու փոխհարստացման համար, որպեսզի յուրաքանչյուր հայ, ասենք, Կալիֆոռնիայի բնակիչ, իմանա, որ ԱՄՆ-ում ունեցած իրավունքներից ու պարտականություններից բացի, համապատասխան իրավունքներ ու պարտականություններ ունի նաև իր պատմական հայրենիքի առջև: Եվ այս մոտեցումները կյանքի կոչելը պետք է լինի ոչ թե սփյուռքի, այլ Հայաստանի ղեկավարության պարտականությունը:

Հայաստանի ներկայիս ղեկավարությունը պետք է գիտակցի, որ, ունենալով այդ աստիճան չօգտագործված և նույնիսկ իր կողմից չպահանջված հոգևոր, տնտեսական, ինտելեկտուալ վիթխարի ներուժ ունեցող սփյուռք, ի զորու չէ դիմակայելու գլոբալիզացիայի մարտահրավերներին և պետք է հեռանա պատմական ասպարեզից. այդպիսի

իշխանությունն արդեն իսկ վտանգավոր է ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև աշխարհասփյուռ հայության համար:

Մենք պետք է վերջապես լուծենք երկքաղաքացիության խնդիրը: Համաշխարհային պրակտիկայում նման նախադեպեր արդեն կան, օրինակ՝ Իսրայելում, Հունաստանում, Չինաստանում և այլ երկրներում: Անհրաժեշտ է Հայաստանի Սահմանադրության մեջ ամրագրել այն դրույթը, որ ազգությամբ հայը ի ծնե համարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իսկ նրա իրավունքներն ու պարտականությունները կանոնակարգվում են համապատասխան օրենքներով:

– Մենք բոլորս մեծ հույսեր ենք կապում մեր ընդդիմության հետ: Սակայն բոլորիս մոտ այն զգացողությունն է մնացել, որ անցյալ տարիներին ընդդիմադիր շարժումը որոշակի սխալներ էր թույլ տալիս: Ինչպիսի՞ գլխավոր հետևությունների է հանգել ընդդիմությունն անցած ընտրարշավներից՝ և՛ Հայաստանի Նախագահին, և՛ Ազգային ժողովի պատգամավորներին ընտրելիս:

– Առաջին և հիմնական հետևությունը, որ տվյալ դեպքում կատարեց մեր կուսակցությունը, այս էր. մենք հազար անգամ իրավացի էինք, երբ խնդրում, համոզում էինք մեր գործընկերներին՝ չգնալ նախագահական ընտրությունների երկրորդ փուլ: Ընտրություններ, որոնց մասնակցելով, փաստորեն, լեգիտիմացրեցին առաջին փուլի արդյունքները, որոնք հարյուր տոկոսով կեղծված էին: Այս հետևության էությունն այն էր, որ չի կարելի ապօրինի հիմքի վրա փորձել կառուցել օրինավոր շինություն:

Մեր սխալն այն էր, որ չէինք նախատեսել իրադարձությունների զարգացման նման տարբերակ: Մենք պարտավոր էինք կանխատեսելու դա և ընտրողներին հայտնելու ընտրությունների երկրորդ փուլին նրանց մասնակցության հետևանքները, որպեսզի ընտրողները գիտակցաբար բոյկոտեին երկրորդ փուլը:

Երկրորդ և շատ էական բացթողումը, որն ինձ էլ է վերաբերում, այն էր, որ մենք չկարողացանք նախապես ապահովել միջազգային կազմակերպությունների, ԵԱՀԿ-ի կամ Եվրախորհրդի, առանձին պետությունների աջակցությունը մեկ հարցում՝ Հայաստանի բնակիչների ժողովրդավարական իրավունքների պաշտպանության, որոնք ամրագրված են Սահմանադրությունում: Պետք էր ձգտել հասնելու այն բանին, որպեսզի Հայաստանում նախագահական ընտրությունները գտնվեին համաշխարհային հասարակայնության ուշադրության կենտրոնում:

Երրորդ բացթողումն այն էր, որ մենք անբավարար չափով աշխատեցինք սփյուռքի հետ: Հարցն այն չէ, որ ավելի լավ կազմակերպվեին ընտրությունները Հայաստանի սահմաններից դուրս, այլ այն, որ սփյուռքը, աջակցելով ընդդիմադիր շարժմանը, սա արտահայտելու էր ընտրությունների ժամանակ՝ այս կամ այն թեկնածուին տալով նախապատվությունը, միևնույն ժամանակ դրական ազդեցություն գործելով Հայաստանում բնակվող իր հարազատների, մտերիմների ու ծանոթների վրա: Որպեսզի հայաստանցիներն իմանան, որ նրանք պաշտպանության տակ են ոչ միայն ընդդիմության, այլև սփյուռքի և այն երկրների կառավարությունների ողջ զորությամբ, որտեղ ապրում են մեր հայրենակիցները:

– Դուք համաձա՞յն եք, որ Հայաստանը քաղաքականապես պետք է կողմնորոշվի դեպի Միացյալ Նահանգներ: Ի՞նչ կտա այդ կողմնորոշումը Հայաստանին:

– Ստեղծված իրավիճակում Հայաստանը պետք է առաջնահերթություն համարի սեփական անվտանգությունը և իր ժողովրդի բարգավաճումը: Եթե այսօր Հայաստանի դե յուրե հիմնական ռազմավարական դաշնակից Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն ասում է, որ ռուսական նորելուկ ժողովրդավարությունը շատ բան ունի սովորելու Ամերիկայի Միացյալ Նահանգներից, որովհետև Միացյալ Նահանգների ժողովրդավարական ինստիտուտները հնագույններն են և տվել են իրենց արդյունքները, այդ պարագայում մենք՝ հայերս, Հռոմի պապից ավելի կաթոլիկ չպետք է լինենք:

–Պարոն Գեղամյան, թույլ տվեք շնորհակալություն հայտնել Ձեզ հետաքրքիր զրույցի համար:

Հարցազրույցը վարեց
Կ. Քալակիրյանը

Հ. Գ. Միրելի ընթերցող, ինչպես և սպասում էինք, հայրենյաց իշխանություններն արգելեցին հեռուստաալիքներով հանրությանն իրազեկել ԱՄՆ-ում Ա.Գեղամյանի կատարած արդյունավետ և ազգանպաստ գործունեությունը: Դե ինչ, կարծում ենք, Ձեզ համար էլ անակնկալ չի լինի, եթե առաջիկայում «խիստ հավաստի աղբյուրները» բոլոր հեռուստաալիքներով և իշխանամետ ռադիոկայաններով ու թերթերով եթեր արձակեն և հրապարակեն Ռ.Քոչարյան-Ս.Սարգսյան կերակրատաշտից լափող գրչակների «հույժ հավաստի» տեղեկատվությունը, ըստ որի Ա.Գեղամյանի աղջիկն ամուսնանում է Ռ.Քոչարյանի որդու հետ, իսկ Գեղամյանն ինքը այս օրերին Ս.Սարգսյանի հետ Մոնտե Կառլոյի կազինոներում տանուլ է տվել վերջինիս պատկանող հայաստանյան ստվերային ողջ տնտեսության հալալ կեսը … Եվ ամենևին էլ կարևոր չէ, որ Գեղամյանն ընդհանրապես դուստր չունի, իսկ Մոնտե Կառլոյում էլ երբեք չի եղել… Կամ էլ, աստված մի արասցե, հրապարակ կնետեն մեկ այլ ստոր հնարք, այն է, որ Ա.Գեղամյանը, իբր, գաղտնի պայմանավորվածություն ունի Ռ.Քոչարյան-Ս.Սարգսյանի հետ՝ նախագահական ընտրություններում վերջինիս աջակցելու համար: Հաշվարկը պարզ է. Հայաստանի Հանրապետության քաղաքական ցանկացած գործչի վարկաբեկելու ավելի գործուն հնարք, քան նրան կապելն այս զույգի հետ , ուղղակի չկա:

Ի վերջո, հասկացեք, որ 1998 և 2003 թթ. նախագահական խայտառակ ընտրությունները Սերժ Սարգսյանի պարագայում ձեզ երբեք ու երբեք կրկնել չի հաջողվի: Դրանց փորձերն անգամ հղի են քաղաքացիական պատերազմի վտանգով: Այնպես որ զուր են ձեր փորձերը Մոսկվայից Կալիֆոռնիա մարդկանց գցել թյուրիմացության մեջ՝ անբարոյական կնոջը հատուկ ձևերով շառ աներով, թե Գեղամյանը ձեզ հետ գործարքի մեջ է: Մանգլիգներդ քառասուն օր է… Պարոնա՛յք, բարգեք ձեր ճամարտակությունները:

«Ազգային Միաբանություն կուսակցության» մամուլի ծառայություն

«Իրավունք», 29.VII.–4.VIII.2005:

«Ազգային Միաբանություն» առայժմ ձեռնպահ է մնում

«Հանրապետություն» կուսակցության ակտիվի հավաքում կուսակցության լիդերի կողմից կարծիք հնչեց, որ ովքեր այսօր հևափոխություն բառը չեն արտասանում, մեկ ամիս հետո «Հանրապետությունից» ավելի բարձր են գոռալու: Մենք հարցրինք «ԱՄ» նախագահ Արտաշես Գեղամյանին՝ ինքը պատրաստվո՞ւմ է մեկ ամիս անց գոռալ այդ բառը: Պարոն Գեղամյանի պատասխանը, ինչպես միշտ, խիստ ինքնատիպ էր. «Մի հայտնի քաղաքական գործիչ մի առիթով ասել է՝ եթե մարդ երիտասարդ է և հևափոխական չէ, նշանակում է՝ նա սրիկա է, իսկ եթե մարդ տարեց է և պահպանողական չէ, նշանակում է՝ նա ապուշ է»:

–Պարոն Գեղամյան, փաստորեն, «Հանրապետություն» կուսակցությունը բոլոր ընդդիմադիր ուժերին հրավիրեց հևափոխություն անելու, «Ազգային Միաբանություն կուսակցությունը» ընդունելո՞ւ է «Հանրապետություն» կուսակցության հրավերը և փողոց դուրս գալո՞ւ է:

– Արձանագրենք այն փաստը, որ 2003 թվականի նախագահական խայտառակ ընտրություններից հետո ինչպես «Հանրապետություն» կուսակցությունը, այնպես էլ «Ազգային Միաբանությունը» և ընդդիմադիր դաշտի բոլոր կուսակցությունները համակարծիք էին, որ ունենք ոչ լեգիտիմ նախագահ, իսկ խորհրդարանական խայտառակ ընտրություններից հետո՝ նաև ոչ լեգիտիմ Ազգային ժողով: Այն ժամանակ հրապարակ իջավ բոլորիս համար ընդունելի կարգախոս՝ օր առաջ ձերբազատվել այս ոչ լեգիտիմ իշխանությունից: Դրան հաջորդեց համաժողովրդական վերելքը, որը ճնշվեց 2004 թվականի ապրիլի 12-13-ին, ճնշվեց այն պայմաններում, երբ ավելի քան 40-45 հազար մարդ էր հավաքվում: Եթե մենք այդ վերելքին միջազգային հանրության կողմից տրված գնահատականները փորձում ենք համեմատել այն գնահատականների հետ, որոնք տրվում էին նմանատիպ համաժողովրդական պոռթկումներին Վրաստանում և Ուկրաինայում, ապա կույր պետք է լինել՝ չարձանագրելու համար հիմնական մի փաստ, այն է՝ այսօրվա ոչ լեգիտիմ իշխանությունը ձեռնտու է ճիշտ այն նույն միջազգային կազմակերպություններին, որոնք սատարեցին մի դեպքում՝ Վրաստանին, մյուս դեպքում՝ Ուկրաինային, և չսատարեցին Հայաստանին: Իսկ ե՞րբ են ոչ լեգիտիմ իշխանությունները գոհացնում միջազգային կազմակերպություններին, երբ այդ կազմակերպությունները ունեն որոշումներ, որոնք ցանկացած գնով պետք է կյանքի կոչել: Հայաստանի

պայմաններում դա ԼՂ հիմնահարցի կարգավորման մոտեցումներն ու որոշումներն են, որոնք կայացվել են դեռ 2001-ին, մասնավորապես, Փարիզում կայացած Քոչարյան - Հ. Ալիև - Ժ. Շիրակ հինգուկես ժամ տեղած բանակցությունների ընթացքում, այնուհետև 2001 թվականի գարնանը, արդեն Քի Վեսթում՝ Քոլին Փաուել-Ջորջ Բուշ-Քոչարյան-Հ. Ալիև հանդիպման ժամանակ: Այս ամենից հետո միջազգային հանրությունը, հանձինս Մինսկի խմբի երկրների, ոչ միայն չի փոխել իր մոտեցումներն ու դիրքորոշումը, այլև ավելի է կարծրացրել, ինչի ականատեսը եղանք 2005-ի մայիսին Վարշավայում կայացած ԵԽԽՎ անդամ երկրների ղեկավարների գագաթաժողովի ժամանակ, երբ տեղի ունեցավ նաև Քոչարյան–Իլհամ Ալիև-Մինսկի խմբի համանախագահողներ-Սերգեյ Լավրով-Յուդրին հանդիպումը, որն արձանագրեց, թե սկզբունքային որոշում է կայացվել ազատագրված 7 տարածքներից ԼՂ ինքնապաշտպանության զինված ուժերի դուրսբերման վերաբերյալ: Երբ ԵԱՀԿ-ի, ԵԽ-ի համար կարևորագույն հնչեղություն ունեցող հարցի վերաբերյալ կան սկզբունքային պայմանավորվածություններ, որոնք գոհացնում են այդ երկրներին և երբեք ոչ Հայաստանին, բնականաբար, իրենք չեն սատարի Հայաստանի ժողովրդին, ոչ թե ընդդիմությանը, չեն սատարի՝ սեփական ջանքերը, «չարչարանքը» ջուրը չլցնելու համար: Ուրեմն, արձանագրենք այս իրողությունը: Նաև այն, որ այսօր Հայաստանի իշխանությունները սեփական քաղաքականության սնանկությունը քողարկելու նպատակով կփորձեն իրենց վրայից պատասխանատվությունը բարդել ընդդիմադիր քաղաքական ուժերի վրա՝ ասելով, որ երկիրը ներսից ապակայունացրին, սասանեցին իշխանական բուրգը, թուլացած իշխանության վզին փաթաթեցին ոչ հայանպաստ լուծումներ: Ահա սա է մայր պատճառը, որ «Ազգային Միաբանությունը» առայժմ ձեռնպահ է մնում հայտարարել, որ միանում է «Հանրապետություն» կուսակցության կողմից հրապարակ իջեցված այդ կոչին: Որ չստացվի՝ «Մրից ելանք, մրջուրն ընկանք»:

– «Հանրապետություն» կուսակցության հավաքում մարդիկ բավականին վճռական էին տրամադրված և նույնիսկ ասացին, թե պատրաստ են միայնակ իրականացնել գործը:

– Արձանագրեք նաև մյուս իրողությունը. ձեր հրապարակումից ես հասկացա, որ մարդիկ մեծագույնս ոգևորությամբ պատրաստ են թեկուզ ինքնազոհողության ճանապարհով, բայց՝ գնալ իշխանափոխության: Սա ապացուցում է, որ մարդիկ իրենց գոյության համար ծայրաստիճան վտանգավոր շեմի են հասել, կորցնելու բան չունեն, պատրաստ են գնալ ծայրահեղ միջոցների: Ինչ վերաբերում է «Արդարություն» խմբակցության անդամ մյուս կուսակցություններին, ապա նրանց դիրքորոշումն ինձ համար չափազանց հասկանալի է և նույնպես ընդունելի, որովհետև ակնհայտ է, որ միջազգային հանրությունը հանդուրժում է այս ոչ լեգիտիմ իշխանությանը՝ սեփական իսկ խնդիրներ հետապնդելով: Իսկ եթե ընդդիմությունն արհամարհի այդ կառույցների հորդորները՝ աջակցել սահմանադրական բարեփոխումների ոչ միայն քննարկմանը, այլև ընդունմանը, եթե նրանց հորդորը մենք չլսենք, ապա հնարավորություն կտանք ոչ թե

ընդդիմության, այլ հայ ժողովրդի թշնամիներին ասել՝ ի դեմս Հայաստանի քաղաքական ընտրանու մենք մի կողմից ունենք իշխանությունը բռնազավթած քաղաքական ուժ, մյուս կողմից՝ մարգինալ, խոսք չհասկացող, անգամ ԵԽԽՎ-ն արհամարհող ուժ, որին երբեք չի կարելի վստահել իշխանությունը: Այս ամենը համադրելով՝ քեզ իրավունք չես վերապահում միարժեքորեն, երրորդական դատավորի կեցվածք ընդունելով գնահատականներ տալ: Այս իրավիճակը ճգնաժամ է ոչ թե ընդդիմության, ոչ թե «Արդարություն» խմբակցության, այլ՝ ճգնաժամ է հայոց պետականության համար, որովհետև առկա մարտահրավերներին իշխանությունները ոչ մի կերպ ի զորու չեն և ոչ էլ խելքներն է կտրում արձագանքել:

Մարգարիտ Եսայան

«Առավոտ», 29.VII.2005:

Զրահաբաճկոնի կարիքը չունեմ

«Փոքրիկ» ճշտում

«Ազավոտի» խնդրանքով արձագանքելով դատարանում հնչած Միշա Խուդավերդյանի («Կծան Միշայի») ցուցմունքին, թե երկրի ղեկավարության դեմ հաջող մահափորձից հետո նախատեսվում էր, որ Արտաշես Գեղամյանը պիտի դառնար երկրի նախագահ, իսկ Էդուարդ Մադաթյանը («Խուճուճ Էդոն»)՝ վարչապետ, պարոն Գեղամյանը կատակով պատասխանեց. «Այստեղ մի փոքրիկ վրիպակ կա. այդ սցենարն իրականացվելու դեպքում ես պիտի վարչապետ նշանակեի Սաշիկ Ազատի Սարգսյանին»:

Իշխանությունների խարդավանքների մասին

– Պարոն Գեղամյան, ինչպե՞ս կմեկնաբանեիք Գ. Գրիգորյանի դատավարության ընթացքում «Կծան Միշայի» տված այն ցուցմունքը, համաձայն որի՝ կապի նախկին նախարար Էդուարդ Մադաթյանը, կազմակերպելով ՀՀ ղեկավարության սպանությունը, մտադիր էր «պրեզիդենտ կարգել» ձեզ:

– Մինչ այդ հարցին պատասխանելը՝ ուզում եմ հիշել մի քանի ոչ վաղեմի դեպքեր: Նախ, երբ 2002 թվականի դեկտեմբերի 27-ին կրակել էին Տիգրան Նաղդալյանի վրա, Տիգրանը դեռ հիվանդանոցում էր, որ նրա յուրայինները զարհուրելի տեղեկություն էին փորձել տարածել՝ իբր սպանության կազմակերպիչը Արտաշես Գեղամյանն է: Բարեբախտաբար, հիվանդանոցի բժիշկների մեջ եղել են պարկեշտ մարդիկ, ովքեր մոտիկից էին ճանաչում ինձ, և տևում հանդիմանել էին զրպարտիչներին, ասելով՝ անհարմար չե՞ք զգում, մնաղրանքներ եք հարուցում մեր կողմից ընդունված և հարգված մարդու հասցեին: Իսկ դեկտեմբերի 28-ին և 29-ին բոլոր հեռուստաալիքներով եթեր էր սփռվում Վարդան Օսկանյանի այն միտքը, թե սպանության հետքերը հաստատ կտանեն այն մարդու շրջապատը, որը ռուսաստանյան թերթերում հանդես է գալիս հանրապետության ղեկավարության դեմ ուղղված հոդվածներով: Նա մատնանշում էր ինձ, որովհետև մեկ շաբաթ առաջ «Իզվեստիայում» տեղ էր գտել իմ հոդվածը: Հաշվարկը պարզ էր. հեռուստաղիտողի մոտ տպավորություն ստեղծել, որ կան անառարկելի փաստեր, որոնք

տանում են դեպի Արտաշես Գեղամյանը: Այդ ժամանակ իշխանությունները ինձ կհանեին ասպարեզից՝ մնքը գցելով Նաղդալյանի հարազատ-բարեկամների վրա, որոնք, իբր, վրեժխնդիր եղան իրենց որդու համար: Այնուհետև, երբ իսկական մարդասպանները ձերբակալված էին, դատարանում մնաղդյալը հայտարարեց, որ իրեն մեկուսարանում ոտքերից կախել են և ռետինե մահակներով ծեծուջարդի ենթարկել՝ ասելով, որ ցուցմունք տա Ալբերտ Բազեյանի և Արտաշես Գեղամյանի դեմ՝ իբր մենք ենք պատվիրել այդ սպանությունը:

– *Կարծեմ, դա միակ դեպքը չէր, որ ձեր անունը կապում էին մահափորձերի հետ:*

– Այո, իսկապես: Այդ պատմությունից մի քանի ամիս անց ձերբակալվեց անվտանգության գնդապետ Լևոն Աբրահամյանը՝ Սերժ Սարգսյանի դեմ, իբր, կազմակերպված մահափորձի մնաղրանքով: Նա դռնբաց դատավարության ժամանակ ասաց, որ իրեն շանտաժի են ենթարկել, ասել են՝ եթե ցուցմունք տաս, որ մահափորձի պատվիրատուն Գեղամյանն է, ապա դատարանի դահլիճից ազատ կարձակենք: Իսկ երբ վերաքննիչ դատարանը քննում էր Լ. Աբրահամյանի բողոքը, պարզ դարձավ, որ իշխանությունները ահաբեկել են ոչ միայն նրան, այլև նրա հարազատներին, ասելով՝ եթե կրկնես, որ մենք քեզ ստիպել ենք Գեղամյանի անունը տալ, ապա հարազատներդ և բարեկամներդ խստագույնս կհետապնդվեն և կպատժվեն: Այս մասին Լ. Աբրահամյանի բարեկամները հայտնել էին լրագրողներին:

Այնուհետև, այս ձմռանը, մինչև Խուդավերդյան Միշայի ձերբակալությունը, լուրեր տարածվեցին իշխանամետ շրջանակներում՝ իբր Գեղամյանը մահափորձ է ձեռնարկում Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի և Գագիկ Ծառուկյանի նկատմամբ: Հաշվարկը նույնն էր. եթե դրան լուրջ մոտենար այնպիսի պատվախնդիր մեկը, ինչպիսին Գագիկ Ծառուկյանն է, ապա վաղը-մյուս օրը իշխանություններն ահաբեկչություն կանեին Գեղամյանի դեմ, և մնքը կգցեին Ծառուկյանի վրա, իբր՝ վրեժխնդիր է եղել: Հետո կասեին, թե անողոք պայքար են սկսել օլիգարխների դեմ, և Ծառուկյանից կազատվեին՝ իբր հավասարաչափ պայքարում ենք բոլորի դեմ՝ անկախ նրանց դիրքից:

Հիմա նույն իշխանական լրատվամիջոցներով փորձում են լուրեր տարածել՝ իբր ես ու Սերժ Սարգսյանը պայմանավորվածություն ունենք, բոլոր պրոբլեմները լուծված են, և նախագահական ընտրություններում, իբր, Արտաշես Գեղամյանը պաշտպանելու է Սերժ Սարգսյանին: Լուրեր տարածողները կրկնակի նպատակ էին հետապնդում. երբ կահաբեկեին Գեղամյանին, բոլոր կասկածները Սերժի վրայից դուրս կգան, որովհետև նախապես հայտարարել են, թե մենք իրար հետ լավ ենք: Երկրորդ՝ Սերժ Սարգսյանի անվան հետ ում անունը կապվի, վարկաբեկվում է: Այսինքն՝ մեր շախմատի ֆեդերացիայի նախագահը հերթական անգամ բազմաքայլ կոմբինացիա արեց, բայց չար գործն այս անգամ էլ խափանվեց:

Ես Հայաստանում թշնամի չունեմ: Ի դեմս Քոչարյանի և Սարգսյանի, ունեմ լրջագույն քաղաքական հակառակորդներ, որոնք, հատկապես՝ Սերժ Սարգսյանը, չեն

խորշում քաղաքական պայքարում դիմել խարդավանքների:

– *Այսինքն՝ ձեր մտերիմների նվիրած զրահաշապիկի կարիքը չե՞ք զգում:*

– Ես իմ զրահաշապիկը հաճույքով կնվիրեմ Սերժ Սարգսյանին, որն իր խարդավանքների արդյունքում շատ ու շատ թշնամիներ է վաստակել:

Մելանյա Բաբսկյան

«Առավոտ», 4.VIII.2005, 5.VIII.2005:

Ինչի՞ց է ոգևորվել Պրյախինը

«Եթե մամուլն ազատ է և ընդդիմությանը տեղ են տալիս, ուրեմն ինչո՞ւ 2004-ի ապրիլի 5-ին «Առավոտի» թղթակցուհուն ծեծուջարդի ենթարկեցին, գուցե դա՞ ոգևորեց պարոն Պրյախինին, որ այսպիսի հետևությունների հանգեց: Գուցե պարոն Պրյախինին ոգևորում է նաև այն, որ ամեն քայլափոխի խախտվում է գործող Սահմանադրությունը, այդ խախտումներն անհետևանք են մնում և երբեք չեն արժանանում նույն ԵԱՀԿ երևանյան գրասենյակի գնահատականին»,- այսպես է արձագանքել Արտաշես Գեղամյանը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավարի վերջին հայտարարություններին:

Հայաստանի ժողովուրդն ինքը կորոշի իր ճակատագիրը

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տնօրեն Վլադիմիր Պրյախինին ասում է «Ազգային Միաբանություն կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանը:

– Պարոն Գեղամյան, Երևանում ԵԱՀԿ գրասենյակի ղեկավար Վլադիմիր Պրյախինը մամուլի ասուլիսում օրերս հայտարարեց, որ Հայաստանում մարդկանց ճնշող մեծամասնությունը վստահ չէ, որ այն ուժերը, որոնք կգան իշխանության, կկարողանան բարելավել իրենց վիճակը: Այդ պատճառով, եզրակացրել էր ԵԱՀԿ ներկայացուցիչը, Հայաստանում հնափոխական իրավիճակ չկա: Դուք համաձա՞յն եք այս գնահատականին:

– Երբ խորանում ես պարոն Պրյախինի՝ այս օրերին տված հարցազրույցում, ակամա մտածում ես, որ դրա բուն թեման «թխվել է» կամ պաշտպանության նախարարի, կամ Ռոբերտ Քոչարյանի աշխատասենյակում: Քանզի ճշտությամբ կրկնվում են այն գնահատականները, որոնց քանիցս անդրադարձել են հիշատակածս անձինք: Պարոն Պրյախինն ասում է, որ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը ուղղակի իմաստով այն կարծիքին է, որ իշխանափոխությունից հետո իր վիճակը չի բարելավվի: Տեսեք՝ ի՞նչ վտանգավոր հարցադրումներ է նա անում, ոչ թե ընդդիմությանը գնահատական տալով, այլ, ասես, փորձում է սաստել մեր ժողովրդին՝ զսպաշապիկ հագցնելով, ասելով՝ ինչ կա՝ սա է, այս իշխանություններն են, և երբեք մտքներովդ չանցնի, որ իշխանափոխություն կանեք և կապրեք ավելի լավ կյանքով: Չափազանց վտանգավոր է, երբ նման պաշտոն զբաղեցնող մարդն է այս մասին խոսում: Կամ, այդ ե՞րբ եք դուք, հարգարժան ԵԱՀԿ

ներկայացուցիչ, ազգաբնակչության ճնշող մեծամասնության կարծիքն ուսումնասիրել: Եթե իրոք ուսումնասիրել եք, ապա ձեզ համար պարզ պետք է լիներ, որ Հայաստանում բոլոր հույսերը կապված են իշխանափոխության հետ: Իշխանափոխության հետ հույսեր չեն կապում գյումրեցիները, երբ յուրաքանչյուր երրորդը գործազուրկ է, գուցե սյունեցիները, երբ յուրաքանչյուր չորրորդն է գործազուրկ, կամ՝ շուրջ կես միլիոն կենսաթոշակառուները ենք ոգևորված այս իշխանություններից, որոնց ամսական թոշակը զգալիորեն ցածր է անգամ նվազագույն պարենային զամբյուղից: Հաջորդը, պարոն Պրյախինն ասում է, երբ միացնում ես ցանկացած հեռուստաալիք, տեսնում ես ընդդիմադիր գործչի: Բացահայտ սուտ է ասում: Ցավում եմ, որ ստիպված եմ կրկնել, սակայն ուզում եմ նրան հիշեցնել, որ անցած մեկ տարվա ընթացքում, մասնավորապես ես ԵԽԽՎ ամբիոնից հինգ անգամ ելույթ եմ ունեցել, մեկ անգամ՝ Վաշինգտոնում, ԵԱՀԿ ԽՎ ամբիոնից, և պարոն Պրյախինի հիշատակած ոչ մի հեռուստաալիք այդ ելույթներից որևէ մեկը չի ցուցադրել: Հիշեցնեմ նաև, որ 2003-ի խորհրդարանական ընտրություններից հետո Արտաշես Գեղամյանին նույն Հանրային հեռուստատեսությամբ նույնիսկ մեկ րոպե չի տրամադրվել: Այդ որտե՞ղ է պարոն Պրյախինն ընդդիմադիր գործչի ելույթ տեսել հեռուստաալիքով: Սա՞ է մամուլի ազատությունը, սա՞ նկատի ունի պարոն Պրյախինը, թե՞ նա պարզապես ուզում է հասարակությանը հասկացնել, թե հույսներդ կտրեք, որ «Ա1+»-ի վերաբացման հարցը կարող է նորից օրակարգային դառնալ: Հիմա ես հասկանում եմ, թե ինչո՞ւ այդքան անհետևողական գտնվեց ԵԱՀԿ երևանյան գրասենյակը «Ա1+»-ի վերաբացման խնդրում: Չէ՞ որ մեր խնդիրն է ունենալ այլակարծությունն ապահովող հեռուստաալիք: Չէ՞ որ մենք քանիցս դիմել ենք այդ գրասենյակին, հեռուստաելույթների նյութերն ենք ուղարկել, և դրանք անպատասխան են մնացել: Անշուշտ, իր այս մտքերով պարոն Պրյախինը վերջնականապես փակեց, մասնավորապես իմ անձի և իմ գործընկերների մասին է խոսքը, ընդդիմադիր գործիչների հայտնվելը որևէ հեռուստաեթերում:

Ամենևին չեմ ուզում որևէ վիրավորական խոսք ասել որևէ մեկի հասցեին, բայց դիմում եմ երկրներին և միջազգային կազմակերպություններին հետևյալ խնդրանքով՝ ի սեր Աստծո, Հայաստանի Հանրապետությունը մի դարձրեք երջանիկ ծերություն ապահովելու նստավայր: Հայ ժողովուրդն ամեն ինչ շատ լավ հասկանում է և այդ ամենի գնահատականը տալու է՝ ի հեճուկս բոլոր այն մարդկանց, ովքեր միջազգային կազմակերպությունների դրոշի ներքո այսօր պարզապես ստանձնել են Քոչարյան-Սարգսյան զույգի խոսնակի դերակատարումը, ասելու է՝ զուր են ձեր ջանքերը, միևնույն է՝ Հայաստանի Հանրապետությունում անխուսափելի են համակարգային փոփոխությունները: Չանի՛ այս ընդդիմությունը, ժողովուրդը կգտնի այն ուժը, որը կիրականացնի այս անհապաղ լուծումները:

– Սակայն Վլադիմիր Պրյախինը պատահական մեկը չէ, և նրա գնահատականները, թերևս, նաև այն կառույցի գնահատականներն են, որն ինքը ներկայացնում է: Ինչո՞վ եք

բացատրում այս ակտիվությունը:

– Դուք միանգամայն ճիշտ եք. չգիտես ինչու, ամառային այս շոգ օրերին, երբ թվում է՝ քաղաքական կյանքը փոքր-ինչ անդորր պիտի ապրեր, շատ են ակտիվացել միջազգային կամ դրսի ուժերը, որոնք ասես իրենց պարտքն են համարում դատավորի կեցվածք ընդունել և հավատաքննիչի կերպարանքով գնահատականներ տալ: Ես չէի արձագանքի այս ամենին, եթե չլիներ ոմն Շարբաթյան, թե՞ Շաքարյան, թե՞ Քաղցրիկյան ազգանվամբ մեկը, որն արդեն Մոսկվայից է հուշում և բացատրում Հայաստանում զարգացումների ու վիճակի մասին: Եղբայր, հանգստացեք, մի խառնվեք, Հայաստանի ժողովուրդն ինքը կորոշի իր ճակատագիրը: Իսկ դուք անպոչ գդալի նման մի փորձեք ձեր սուլուլիկ, երկար քթերը մտցնել մեր քաղաքական կյանքից ներս: Ձեր աջակցության կարիքը հայ ժողովուրդն ուներ ապրիլի 5-ին, երբ լրագրողների էին ծեծուջարդի ենթարկում, ապրիլի 12-13-ի գիշերը խաղաղ ցուցարարների էին ծեծուջարդի ենթարկելով անդամալույծ դարձնում, ձեր աջակցությունը, մասնավորապես պարոն Պրյախինի, Արտաշես Գեղամյանը և Շավարշ Քոչարյանն ունեին այն ժամանակ, երբ ԵԽԽՎ պատգամավորների, ԵԱՀԿ ԽՎ պատգամավորի տուն էին մտնում, երեխաների, թոռան և հարազատների աչքի առաջ տունը տակնուվրա էին անում, խուզարկում էին: Այդ ժամանակ դուք սրտացավություն դրսևորեիք և իշխանություններին պարտադրեիք, որ պահպանեն օրենքը, ինչը արգելում էր իշխանություններին զբաղվել նման կամայականություններով: Իսկ հիմա՝ հանգստացեք:

Մարգարիտ Եսայան

«Առավոտ», 9.VIII.2005:

Следующий президент Армении будет народным избранником!

Беседа с Арташесом Гегамяном, депутатом Национального собрания Армении, основателем и лидером партии "Национальное Единение", состоялась в одном из фешенебельных отелей Манхэттена. До его отлета на родину оставалось пять часов, из коих часа два мы беседовали в уютном баре отеля.

— Господин Гегамян, в последний раз мы виделись в Нью-Йорке два года назад. Что ныне привело вас в США?

– В Вашингтоне проходила юбилейная сессия парламента ОБСЕ, посвященная 30-й годовшине создания этой организации. В составе делегации Национального собрания Армении я принял участие в этой сессии, выступив с докладом об урегулировании проблемы Нагорного Карабаха.

В повестку дня последнего заседания был включен доклад шведского парламентария о путях урегулирования карабахского конфликта. К докладу прилагалась подготовленная азербайджанской делегацией резолюция из 19 пунктов, каждый из которых, на мой взгляд, способен вновь взорвать ситуацию в регионе Южного Кавказа. Только 5 из 55 государств ОБСЕ поддержали эту резолюцию: Казахстан, Азербайджан, Турция, Дания и Белоруссия.

После лишенного объективности и полного нападок доклада руководителя азербайджанской делегации Сафарова и представителя Великого Национального собрания Турции слово было предоставлено мне. Резонанс от моего доклада был весьма заметным. Все ведущие СМИ Армении опубликовали его в полном объеме. В Вашингтоне мне предложили перевести его на английский язык.

— После Вашингтона вы побывали в Калифорнии?

– Калифорнийские, так сказать, болельщики нашей партии пригласили меня на встречи с армянской общиной Калифорнии.

Я говорил об истинном раскладе политических сил в республике и о возможностях решения Карабахского вопроса. Встречи с диаспорой, в том числе с армяноязычными студентами калифорнийских учебных заведений,

проходили в самых престижных залах Лос-Анджелеса. Я тронут интересом, который проявила молодежь к политическим событиям в Армении. Видел школьников от 8 до 15 лет, которые начинали свой урок с клятвы верности Армении.

А здесь, в Нью-Йорке, в соборе Святого Вартана у меня состоялась встреча с представителями местной общины, организованной ее председателем Светланой Амирханян. Я рассказал на ней о сессии парламента ОБСЕ.

Процессы, происходящие в Армении, интересуют не только здешних армян, но и американских конгрессменов, в чем я не раз убеждался.

— Весной прошлого года оппозиция вывела на улицы Еревана тысячи людей, требующих отставки президента Армении Роберта Кочаряна. В самый кульминационный момент, когда на площадях и улицах Еревана бушевали страсти, по ТВ показали Кочаряна, спокойно попивающего кофе в одном из ночных клубов. Это был отличный пиар-ход. Он, по-видимому, хотел продемонстрировать уверенность в стабильности своего положения?

– Оппозиция тогда возглавила взрыв негодования, связанного с нечестной избирательной президентской кампанией. Армения уже не выдерживает беззакония, коррупцию, нищенского существования большой части населения. По статистике, более 500 тыс. пенсионеров получают пенсию на 45% меньше прожиточного минимума, 230 тысяч бюджетников получают зарплату ниже того же минимума, прирост населения катастрофически падает. 12 апреля 2003 года, в день завершения выборов президента, на улицы вышли 45 тысяч людей.

— Обделенных, вы говорите, 730 тысяч, почему же протестующих было всего 45 тысяч?

– Для Еревана это немало. Это больше, чем год назад в Тбилиси, и почти столько же, сколько было в Киеве на Майдане. А насчет уверенности Кочаряна в стабильности своего положения — я сильно сомневаюсь. Нелегетимность Кочаряна как президента не вызывает сомнений. Он политический банкрот. Он растерял весь тот позитив, который имел в 90-е годы на волне борьбы за независимость Карабаха. Так что эпизод с кофе — хорошая мина при плохой игре.

— И все же — не были ли тогдашние уличные демонстрации попыткой оппозиции свергнуть существующий режим?

– Нет. Цель была одна: чтобы президент и его свита подчинились решению Конституционного суда от 16 апреля 2003 г. о проведении всенародного референдума по вопросу досрочных выборов.

— В этом году не было попыток повторить подобное?

– Не было. Оппозиция отказалась от проведения крупномасштабных акций, поскольку этой весной в Варшаве прошел саммит глав государств Европы, где состоялась встреча Роберта Кочаряна и Ильхама Алиева. К сожалению, на ней было дано согласие на вывод сил самообороны Карабаха из семи районов Азербайджана. Об этом официально заявил в своем интервью "Независимой газете" министр иностранных дел Азербайджана. Западные послы, аккредитованные в Армении, в беседах со мной подтвердили это.

— Что же взамен?

– Пока абсолютное молчание. Судя по всему, азербайджанская сторона добилась, чтобы переговоры о статусе Нагорного Карабаха продолжились только после возвращения этих районов. Это говорит о полном банкротстве Кочаряна и во внешней политике. И если бы оппозиция сейчас стала проводить политические акции, это дало бы повод обвинить ее в ослаблении власти, то есть свалить на нее всю ответственность за провал внешней политики Кочаряном.

— Народ Армении и Карабаха знает о решении руководства страны возвратить земли?

– Народ Армении знает: нам удалось, используя СМИ, разъяснить ситуацию. Насчет карабахского населения затрудняюсь сказать с уверенностью, потому что туда поступает исключительно односторонняя информация. Я шесть раз выступал на международных форумах по поводу конфликта в Нагорном Карабахе. Ни одно из этих выступлений не транслировалось по телевидению в Армении, а тем более в Карабахе.

— Возможна ли в Армении "цветочная революция"?

– Армения не палисадник для выращивания цветов. В силу своего географического положения она не имеет на это права. Нашей стране нужна конституционная смена власти. Любой другой вариант приведет к немедленному развязыванию военных действий Азербайджаном и Турцией, которые будут объясняться тем, что, дескать, в Армении захватили власть силы, могущие привести к непредсказуемым последствиям для этих стран. Особенно с учетом того, что в Армении имеется атомный реактор.

— Президентские полномочия Кочаряна заканчиваются в январе 2008 года. Если следующим президентом станете Вы, какие меры будут вами приняты для улучшения благосостояния народа?

– Сошлюсь на американский источник. Ежегодно Госдепартамент США представляет Конгрессу сведения об экономическом положении государств, которым оказывается финансовая помощь, в том числе об Армении. В

этом году отмечалось, что более 40% экономики Армении "в тени" и не облагается налогом, а в отдельных, наиболее прибыльных отраслях, эта цифра доходит до 85%. Если вывести эти прибыли "из тени", то без каких-либо дополнительных затрат можно удвоить бюджет, увеличить пенсии, зарплаты и т. д. Что приведет к росту потребительского спроса населения, к расширению производства, поднятию экономики в целом.

— *Почему так не поступает нынешний президент?*

– Кочарян в неоплатном долгу у людей, приведших его к власти. Это олигархи, в руках которых сосредоточены все наиболее прибыльные отрасли экономики.

— *Кого вы видите реальным претендентом на президентский пост?*

– Недавно был проведен социологический опрос на эту тему. Большинство назвали Арташеса Гегамяна.

— *Не заключается ли сила Кочаряна в том, что его поддерживает Россия и лично Путин?*

– Когда человек политики не апеллирует к собственным политическим категориям, а делает достоянием гласности подобные обстоятельства, он расписывается в личном политическом банкротстве.

Могу только добавить: следующий президент Армении никогда не будет никем назначен, он будет избран народом.

— *Не считаете вы, президент Грузии Саакашвили проходящая фигура? Он никак не выйдет из революционной эйфории, более того, пытается взять на себя роль экспортера "цветочных" революций в другие страны СНГ. Между тем в Грузии половина населения не работает, стоят фабрики и заводы, размер пенсий 13 долларов, процветает массовая наркомания и т. д.*

– Саакашвили удалось в течение года повысить доходную часть бюджета более чем 2,5 раза, и этого достаточно, чтобы его имя было вписано золотыми буквами в новейшую историю Грузии. Он создал ситуацию, когда грузинский полицейский может быть не взяточником, а грузинский олигарх чувствует, что над ним не Саакашвили, а закон.

Насчет "революционности" Саакашвили – я считаю, что если ты молодой человек и не революционер, то ты уже умер.

— *Ваше мнение о предполагаемом вступлении Турции в Евросоюз в принципе, а также в свете непризнания ею геноцида армян?*

– Последние референдумы во Франции, Голландии сказали Турции твердое "нет". Проживание в Европе большого числа турок, турок-месхетинцев и т. д. уже позволило 25 странам Евросоюза понять негативные

последствия вступления Турции в ЕС. Другой вопрос, что армянам не надо торпедировать вступление Турции в Евросоюз: в чужой монастырь не лезут со своим уставом.

В свое время Гельмут Коль покаялся у Стены Плача за Холокост. Так что есть с кого брать пример. Пусть премьер Турции Реджеп Эрдоган приедет в Армению и покается у памятника жертвам геноцида.

— *Это только мечта. Пока что министр иностранных дел Турции выразил официальный протест Осло против открытия там выставки, посвященной армянскому геноциду. В этом вопросе Турция совсем утратила чувство реальности.*

– Одно из моих выступлений в Страсбурге как раз касалось лицемерия внешней политики Турции. В апреле, когда отмечалось 90-летие геноцида, Эрдоган обратился к Кочаряну с предложением приступить к изучению событий 1915 г. на научном уровне. Босфорский университет Стамбула объявил о проведении в мае этого года научной конференции на эту тему. Но ректор и зав. кафедрой истории университета тут же подверглись остракизму, а конференцию отложили на неопределенный срок, иначе говоря, навсегда.

— *Недавно один из армянских дипломатов сказал, что Армения даже заинтересована во вступлении Турции в Евросоюз. Дескать, это даст возможность Армении в дальнейшем тоже претендовать на вступление в ЕС, поскольку она будет граничить с членом этого союза. Вы согласны с его точкой зрения?*

– Армения искренне желает иметь соседей с демократическими режимами. Ради этой идеи мы готовы пойти на какие-то определенные компромиссы. Но только при условии признания Турцией геноцида.

— *Что бы вы хотели пожелать своим соотечественникам, проживающим в Америке?*

– Никогда не забывать своих корней.

Тед Осепян

"Новое русское слово", Нью-Йорк, 5.VIII. 2005.

ПАСЕ должна осудить подстрекательства к терроризму

20 *июня в Страсбурге на пленарном заседании ПАСЕ обсуждался вопрос "СМИ и терроризм". Азербайджанская делегация в традиционном для себя стиле поведения раскрутила тему на предмет обвинений в адрес Армении. "Домашнюю заготовку" озвучил депутат Рафаэл Гусейнов, заявивший, что армянские СМИ пропагандируют терроризм, а само армянское государство является террористическим(?!). К тому же среди делегатов был распространен документ "Новые террористические организации, провокационные центры и новые планы Армении по оккупации Азербайджана". Потоки лжи и клеветы не остались без ответа. Член армянской делегации, лидер партии "Национальное Единение" Арташес Гегамян дал им острый и аргументированный отпор. Его выступление, построенное на конкретных цитатах из азербайджанской прессы и заявлениях ряда политических деятелей, оказалось столь убедительным, что бакинское "Зеркало" срочно состряпало отклик в духе "нашего ответа Чемберлену". Мол, призывы уничтожить армян не наши методы и, вообще, в азербайджанской прессе (а заодно и в турецкой) нет агрессивности против армян. Словом, Арташес Гегамян напрасно посоветовал депутатам ПАСЕ почитать газету "Зеркало". Впрочем, о том, что именно советовал депутатам ПАСЕ лидер "Национального Единения", лучше читать в оригинале, а не в пересказе от "Зеркала".*

Предлагаем вниманию читателя упомянутое выступление Арташеса Гегамяна.

Уважаемый председатель, уважаемые коллеги!

Трудно переоценить значение обсуждаемого на заседании ПАСЕ вопроса "СМИ и терроризм", который особенно актуален для Армении.

Газета "Зеркало", 28 февраля 2004 года, Азербайджан. Выдержка из интервью омбудсмена Республики Азербайджан Эльмиры Сулеймановой: "Рамиль Сафаров должен быть примером патриотизма для азербайджанской молодежи".

Газета "Зеркало", 6 марта 2004 года. Выдержка из интервью депутата милли-меджлиса Азербайджана Анара Мамедханова: "Я всегда говорил нашим офицерам, которые служили в Турции, вы нам нужны в Карабахе. Они, армяне, должны быть убиты в Карабахе, а не в других странах".

Есть множество подобных примеров, иллюстрирующих, как именно

реагировали азербайджанские политики на варварское убийство армянского офицера Гургена Маркаряна, совершенное азербайджанским офицером Рамилем Сафаровым. Гурген Маркарян находился на учебе в Будапеште в рамках программы НАТО "Партнерство во имя мира" и был зверски убит топором во сне, в 5.30 утра.

Читая азербайджанскую прессу, невольно задаешься вопросом: кто бóльший террорист, Рамиль Сафаров или депутат милли-меджлиса Анар Мамедханов и омбудсмен Азербайджана Эльмира Сулейманова? А может, причастны к террору редакции азербайджанских газет, тиражирующие их человеконенавистнические бредни? Кто более преступен — призывник азербайджанской армии, который начитался подстрекательских выступлений сих государственных мужей и стал впоследствии террористом, или же сами подстрекатели? Кто в ответе за действия 18-20-летних азербайджанских солдат, которые и сегодня по приказу командиров и с благословения омбудсмена и депутатов милли-меджлиса снайперским огнём убивают своих сверстников на линии разграничения боевых действий в Карабахе? Что чувствуют родные и близкие убитого Гургена, родные Рамиля- убийцы... Что чувствуют те, кто постоянно читает полные ненависти к армянам азербайджанские и турецкие газеты? И наконец, какова наша с вами роль в предотвращении этого зла XXI века, какова ответственность депутатов ПАСЕ, и не нам ли, депутатам, дается оценка, когда омбудсмен страны — члена Совета Европы героизирует жестокого убийцу?

Почему мы не задаемся вопросом, кто они и где они, герои современной Европы? Кто они— современные Фритьоф Нансен и Анатоль Франс, Иоанн Павел Второй и Мать Тереза. В чём наше с вами предназначение?

Уважаемые коллеги! На весенней сессии 97 депутатов ПАСЕ обратились с призывом к руководству Армении о принятии предложений премьер-министра Турции Реджепа Эрдогана по поводу совместного изучения событий, имевших место в Османской империи в ходе первой мировой войны. Подписавшие документ депутаты, видимо, поверили в искренность обращения турецкого премьера. Поверили в обращение Эрдогана и инициаторы проведения в Стамбуле научной конференции. Она должна была состояться 25-27 мая в Босфорском университете по теме: "Армяне в период упадка Османской империи: научная ответстенность и вопросы демократии". Еще до начала конференции влиятельная турецкая газета "Миллиет" осудила не начавшийся форум ученых, назвав Босфорский университет местом, где "подвергают ревизии события 1915 года и официальную точку зрения государства".

"Хурриет", "Заман", "Миллиет" и другие ведущие газеты Турции устами профессора Галатасарайского университета Ильбера Ортайлна, председателя Союза историков Турции Юсуфа Халачоглы, депутата Великого Национального собрания Турции Шюкрю Элекдага и депутата — члена "Партии

справедливости и развития" Рамазана Топрака (лидером которой является сам Эрдоган) подвергли остракизму организаторов конференции, нанося им личные оскорбления.

Примечательно, что, выступая против проведения конференции по армянскому вопросу в Босфорском университете, депутат Топрак взял под сомнение факт существования демократии в Швейцарии и Франции, заявив: "Вы можете себе представить, чтобы в Швейцарии или Франции были организованы научные конференции по подтверждению какого-либо турецкого тезиса?". Эти слова, наверное, были адресованы депутату ПАСЕ от Швейцарии госпоже Запл-Гельбинг Розмари в знак благодарности за её подпись под вышеупомянутым воззванием 97 депутатов ПАСЕ.

Министр юстиции Турции Джемаль Чичек пошел ещё дальше и, как сообщалось в газетах "Заман" и "Миллиет", 25 мая 2005 года с трибуны Великого Национального собрания Турции заявил: "С нетерпением жду, как выполнит свой долг совет по высшему образованию". Организаторов конференции к позорному столбу — таков был по сути лейтмотив выступления турецкого министра юстиции. В тот же день ректорат Босфорского университета был вынужден заявить о переносе конференции на неопределенный срок.

Или же другое проявление подстрекательства к террору. Недавно азербайджанские газеты распространили заявление председателя исламской партии Азербайджана Гаджиага Нуриева, в котором он призывает: "Начать против Армении священную войну, объявить джихад..." И эта гнусная информация подавалась азербайджанской прессой с нескрываемой симпатией.

ПАСЕ сегодня должна проявить волю и выступить с резолюцией, осуждающей вышеуказанные и любые другие действия, которые подстрекают к терроризму.

Уважаемые коллеги!

Не сделаю открытия, сказав, что лживые и лукавые политики порождают безответственную прессу, которая, в свою очередь, создает благодатную почву для современного терроризма.

И именно здесь, в ПАСЕ, как и тысячелетия назад в разрушенном Карфагене, почва, подпитывающая терроризм, должна быть трижды вспахана и посыпана густым слоем соли, чтобы в нашем общеевропейском доме, в любом уголке Европы навсегда были изжиты террор и войны. В этом и есть наша историческая миссия.

Арташес Гегамян
Европейские народные партии/
христианские демократы
Парламентская Ассамблея Совета Европы
Страсбург, 20 июня 2005 г.

"Новое время", 23.VI.2005.

Только с победой великих истин приходит время великих умов

Выступления лидера "Национального Единения" Арташеса Гегамяна на международных форумах становятся традиционной формой работы наших парламентских делегаций за рубежом. Более того, необходимой, потому как было бы неосмотрительно игнорировать столь громкую трибуну, каковыми являются парламентские ассамблеи. Главная задача при этом — суметь представить собственные национальные интересы в контексте глобальных процессов.

Насколько лидер "НЕ" справился с этой задачей, судить читателю. Предлагаем вашему вниманию его выступление в Вашингтоне 4-го июля 2005 года на 14-й сессии ПА ОБСЕ, проходившей под девизом "30 лет после Хельсинки: вызовы впереди".

Господин президент, уважаемые американские коллеги! Прежде всего разрешите поздравить вас и в вашем лице американский народ со знаменательным праздником – Днем независимости и пожелать блага и процветания каждой американской семье.

Уважаемые коллеги! Выступая на открытии пленарного заседания Парламентской ассамблеи ОБСЕ, государственный секретарь США доктор Кондолиза Райс образно отметила: "Мы переживаем великие исторические изменения. То, что еще вчера казалось невозможным, сегодня становится неизбежным". Невольно задаешься вопросом, а может, происходящие на наших глазах необратимые перемены на политической карте мира в свое время предвидел и предвосхищал президент США Джеральд Форд, который, вопреки настоятельным советам многих политиков из своего ближайшего окружения, в августе 1975 года поставил свою подпись под Заключительным актом теперь уже исторического Договора по безопасности и сотрудничеству в Европе. Более того, в ответ на упреки в свой адрес он ответил своим оппонентам: "История будет судить нас не по тем обещаниям, которые мы делаем, а по тем обещаниям, которые мы сдерживаем и выполняем."

Зададимся и мы вопросом, а как оценят грядущие поколения нашу

с вами работу на этой блестяще организованной принимающей стороной сессии, скажем, в 2035 году. Имеет ли нынешняя Парламентская ассамблея шанс стать такой же знаменательной поворотной вехой в глобализирующемся мире, как Хельсинское совещание по безопасности и сотрудничеству в Европе 1975 года? Ставить перед собой подобные судьбоносные задачи — не только наше право, но и прямая обязанность. И решить эти задачи нам будет под силу, если мы сумеем непредвзято проанализировать, что же происходит в наши дни на пространстве ОБСЕ.

Уважаемые коллеги! Думаю, что вы не станете оспаривать тот факт, что после распада СССР вот уже 15 лет подряд ни один авторитетный международный политико-правовой форум не проходит без обсуждения проблем урегулирования ситуации в Нагорном Карабахе, Абхазии, Южной Осетии, Приднестровье. На этих форумах, как правило, поднимаются и болезненные для России вопросы об ущемлении гражданских прав русскоязычного населения в республиках Прибалтики, равно как и обсуждаются проблемы морально-правового характера из недавнего исторического прошлого, которые представители прибалтийских республик поднимают перед Российской Федерацией.

Этим, к сожалению, не исчерпывается перечень острых проблем, волнующих народы европейского континента, США и Канады. Не утихают страсти вокруг Республики Кипр, всех нас тревожит судьба сербского населения, да и Косово в целом. Почему эти проблемы и конфликты не получают своего мирного разрешения? В чем причина? В кризисе институтов международного права? В несовершенстве деятельности международных организаций? В отсутствии доброй воли у ведущих стран мира и их политиков в мирном разрешении этих кровоточащих конфликтов? Думаю, что, нет. На примере Армении попробуем осмыслить, каковы истинные причины неадекватности действий политиков в преодолении этих новых вызовов, сопутствующих, а скорее являющихся одним из следствий глобализирующегося мира. Пример Армении в нашем предстоящем анализе глубоко символичен. В древние века Армения являлась не только носителем ценностей эллинистско-римской цивилизации, она одновременно являлась их активным распространителем на всем пространстве Передней Азии. В силу этого, волею исторических судеб, моя родина неоднократно оказывалась вовлеченной в межцивилизационные конфликты Персии, Греции, Римской и Византийской империй. Армения неоднократно оказывалась в эпицентре арабо-мусульманских и христианских войн. К

гордости армян, Армения на протяжении всей своей истории всегда оставалась верной христианским ценностям и глубоко закономерно, что именно она первой в мире заявила о признании христианства в качестве своей государственной религии в 301 году. И есть высший смысл, что армяне, неоднократно подвергаясь опустошительным набегам воинственных соседей и будучи лишенными государственности, на протяжении столетий даже под угрозой физического уничтожения так и не ассимилировались.

Армянская цивилизация пережила Вавилон и Ассирию, Римскую и Византийскую империи, Арабский халифат и Оттоманскую империю. Более того,она стала свидетелем и обвинителем человеконенавистнических злодеяний в годы агонии Османской империи. И есть великий смысл, что в предгорьях и на равнинах библейской горы Арарат, на одной десятой части своей исторической родины, в независимой Республике Армения продолжает созидать армянский народ.

Как носителей исторической памяти древнейших цивилизаций нас особенно настораживают события, разворачивающиеся в регионе Южного Кавказа в наши дни. Республика Армения подвергается серьезной опасности. Если ОБСЕ, США, Россия и ведущие государства Евросоюза не предпримут действенных мер, то наш регион может вновь стать ареной серьезного военного противостояния, чреватого перерасти в опасный межцивилизационный конфликт. И сказанное не есть драматизация ситуации. Проанализируем вместе, какие опасности подкарауливают Армению и страны региона.

Уважаемые коллеги! Парламентская ассамблея ОБСЕ оперативно, порой самоотверженно реагирует на военные, правовые, гуманитарные вызовы на своей территории. В свете этого вызывает тревогу и недоумение, почему за прошедшие 15 лет ОБСЕ никак не прореагировала на жесточайшую экономическую блокаду, проводимую Турцией и Азербайджаном в отношении Армении. Более того, этими странами инициируется и осуществляется отстранение Армении от участия в крупномасштабных региональных экономических проектах, будь то нефтепровод Баку-Тбилиси-Джейхан, газопровод Баку-Тбилиси-Эрзрум или железная дорога, сооружаемая в рамках программы Север-Юг, которая соединяет Россию через Азербайджан с Ираном. Азербайджаном и Турцией поставлена вполне конкретная задача — обескровить экономику Армении, полностью изолировать от возможной интеграции в

экономическое пространство Южного Кавказа и Центральной Азии. Их расчет циничен и прост. Ведь только от блокады коммуникаций экономике Армении нанесен ущерб на сумму свыше 12 млрд. долларов. Вызывает огорчение, что основными инвесторами вышеназванных проектов являются государства - члены ОБСЕ. Такова экономическая и финансовая цена, которую Армения уже заплатила за право народа Нагорного Карабаха на свое самоопределение, за свою приверженность идеалам свободы и демократии.

Но есть еще не поддающиеся оценке потери, невосполнимые потери в виде жизней тысяч и тысяч карабахцев. Положение еще более усугубляется тем, что предложения по мирному разрешению Карабахского конфликта изначально таят в себе заряд такой взрывной силы, который, будучи приведенным в действие, может дестабилизировать ситуацию во всем регионе. Сказанное не есть преувеличение, а вывод, к которому неизбежно приходишь, когда стараешься осмыслить философию, заложенную в предложениях по мирному урегулированию Нагорно-карабахского конфликта. Углубляясь в нее (философию), мысленно переносишься в судьбоносные для современной человеческой цивилизации время. Начало нашей эры. Вершится суд над Иисусом Христом. Обвинитель и главный судья — в одном лице — первосвященник Каиафа. Его обвинения сводятся к тому, что народ уверовал во Христа и будет следовать за ним. Уверовав в него, он перестанет подчиняться римским законам и римскому прокуратору Иудеи Понтию Пилату. И тогда народ восстанет против Цезаря и Рима. Затем железные римские легионы потопят восстание в крови восставших. Доводам Каиафы вняли, Христа распяли... Однако восстания избежать так и не удалось . И в Иудее пролилась кровь тысяч и тысяч людей, повинных лишь в своем стремлении жить в свободе и независимости.

Вот и теперь ценою жизни пусть немногочисленного, но гордого народа Карабаха думают и надеятся , что смогут воцарить длительный и прочный мир на Южном Кавказе. Да, я не оговорился, сказав ценою жизни. Народ, вот уже 15 лет вкусивший сладость свободы, демократии и независимости, за ценой не постоит. Нам важно понять, что нерешенность проблемы Нагорного Карабаха вовсе не является следствием отсутствия доброй воли конфликтующих сторон, а уж тем более посреднической миссии ОБСЕ в лице Минской группы. Проблема не в политике и политиках. Она намного глубже, в философии и нашем христианском самосознании. Ведь и первосвященник Каиафа был искренен, когда думал и надеялся, что ценою

жизни Иисуса Христа, одного человека, можно будет спасти жизнь целого народа. Это было его убеждением. Ему и впрямь казалось, что во имя спасения своего народа следует поставить на алтарь жертвенности жизнь Христа. Наша же армянская христианская жизненная философия базируется на основополагающем христианском постулате, который непререкаемо утверждает, что жизнь каждого, отдельно взятого человека, неповторима и бесценна. Борьба за каждую человеческую жизнь, за отстаивание его идеалов, свободы и независимости — это и есть единственный путь спасения человечества. Он единственен, и лишь этот путь способен сохранить нашу общечеловеческую цивилизацию в великом противостоянии вызовам глобализации.

Сумеет Парламентская ассамблея ОБСЕ найти адекватные философские объяснения, приемлемые для современных цивилизаций — значит надежды на успех диалога между цивилизациями обретут реальные контуры. И успех политиков в разрешении конфликтов будет гарантирован в прямой зависимости от степени их профессионализма. Не сумеем сделать этого, тогда уже сейчас должны будем смириться с тем, что наши потомки будут судить о нас, вспоминая изречение великого проповедника Эклезиаста: "Все суета, суета, суета сует и томление духа", а выступления депутатов Парламентской ассамблеи ОБСЕ в исторической, даже самой короткой перспективе, не прибавят им ни чести, ни славы. Ведь был же до нас великий Цицерон — оратор и философ, озвучивавший бессмертную греко-римскую философию. Пора всем понять, что "Только с победой великих истин приходит время великих умов", которым под силу преодолеть новые вызовы третьего тысячелетия.

Арташес Гегамян

Вашингтон, 4 июля 2005 г.

"Новое время", 12.VII.2005; "Аргументы и факты", № 28, июль, 2005 (АиФ в Армении).

Արտաշես Գեղամյանի ելույթները Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում

«Երկիր ենք կորցնում, սթափվե՛ք»

29.08.2005 թ.

Սիրելի՛ ժողովուրդ, Ազգային ժողովի նստաշրջանին ամենայն ուշադրությամբ հետևում էի իմ աշխատասենյակում, հետո դահլիճում: Եթե Ազգային ժողովի պատգամավոր չլինեի և չլսեի հնչած ելույթները, երբեք մտքովս չէր անցնի, որ այս քննարկումները տեղի են ունենում Հայաստանի Հանրապետությունում: Երբեք մտքովս չէր անցնի, որ մենք ապրում ենք մի երկրում, որտեղ վստահության խոր ճգնաժամ կա, որտեղ թե՛ իշխանություններին, թե՛ ընդդիմությանը, առավել ևս Նախագահին ու Սերժ Սարգսյանին ժողովուրդը չի ընդունում ընդհանրապես: Խոսում են եվրոպական չափանիշներից՝ մոռանալով մեր իրականությունը: Իսկ ինչո՞վ է պայմանավորված այս համատարած անվստահությունը, որը ճարակել է երկրով մեկ: Պայմանավորված է նրանով, որ Նախագահի թիկնապահները մարդ են սպանում՝ մի րոպե ամբաստանյալի աթոռին չեն նստում: Պայմանավորված է նրանով, որ 2004 թվականի ապրիլի 5-ին ծեծուջարդի են ենթարկում լրագրողներին, այդ թվում մեր չքնաղ Աննա Իսրայելյանին, հարյուր հազար դրամ տուգանքով են ազատ արձակվում: Ճիշտ նույն մարդիկ 7 ամիս անց մարդասպանություն են անում «ՏԷՑ-ի կռուգում», ամիս ու կես գնում են հանգստանալու գաղութում: Ինչո՞ւ ամիս ու կես՝ հարց տվեք. որ այդ ընթացքում հասցնեն 200 հազար դոլլարանոց «Խամմերը» բերեն կատարված հանցագործությունների պարագլուխ բանգլադեշցի Համոյին: Սա է երկրի իրավիճակը, ինչի՞ց եք խոսում, ի՞նչ այոյից, ի՞նչ ոչից: Զանգեզուրում՝ Գորիսում, օրը ցերեկով դատավոր են ծեծում ճիշտ այն նույն մարդու յուրայինները, ովքեր անցյալ տարի բնակելի շենքի շքամուտքում մարդ սպանեցին: Այնտև էլ ընդամենը տարի ու կես նստեցին սպանության համար, որովհետև Նախագահի, Սերժի «պեռվի կռուգ» մոտիկներից չէին, մի քիչ ավելի հեռու էին: Երկրում կարգ ու կանոն հաստատել չեք կարող, լավ, հեռու ենք Սյունիքից, Ղարաբաղից «սպեցնազ»-ը բերեք: Չէ՞ որ բերեցիք հասցրեցիք Երևան, ապրիլի 12-ին ծեծուջարդ

սարքեցիք, մեր վրա վարժեցվեցին, մարզվեցին, դե թող քթների տակ մարդ սպանողներին կարգի հրավիրեն: Եվ այս պարագայում անամոթաբար կանգնում խոսում ենք բարեփոխումներից, մյուսից, մյուսից: Երկիր ենք կորցնում: Ոչ մեկին արդեն ազգը չի հավատում շնորհիվ նրա, որ հին ու նոր իշխանությունները ձայները մեկ են արել, ուրեմն, մի խնդիր են հետապնդում. գիտակցելով, որ իրենց չեն ընդունում, ամեն ինչ անում են, որ ընդդիմությանն էլ չվստահեն: Հենց այս նույն ամբիոնից հարգարժան Արթուր Բաղդասարյանը կանգնեց՝ ասաց. քաղաքի կենտրոնի հողերը շան մսի գնով են վաճառում: Ո՞վ արձագանքեց: Եթե չեն արձագանքում, ի պաշտոնե Հայաստանի երկրորդ մարդն է, կնշանակի հենց Քոչարյանը չի թողնում արձագանքեն: Հարգարժան Վահան Հովհաննիսյանը ճիշտ այս նույն ամբիոնից կանգնեց, ասաց. 30 միլիոն դոլլարի ջրային վարկերը կերել են: Ի՞նչ եղավ, ավելի խիստ բաներ էլ ասաց: Եղան նոր քննարկումներ, ավելի խիստ մնադրանքներ հնչեցին, սակայն բացարձակապես ոչ ոք ոչ մի պատասխանատվության չենթարկվեց: Բա այս պարագայում ժողովուրդը որի՞դ ձայնը կլսի, որի՞դ կհավատա և կգնա «այո» կասի: Զավեշտը հասել է նրան, որ հասարակությունը, հիվանդ լինելով հանդերձ, երբ իրեն դև են տալիս, դևը չի ուզում վերցնի, որ բուժվի: Չի ուզում այն պարզ պատճառով, որ դևը տալիս է իրեն հիվանդացնողը. վախենում է արանքում դևին թույն ավելացնի: Այս հարցերի մասին մտածեք: Հիշատակածս անօրինականություններին տասնյակ, հարյուրավորներ կարելի է գումարել:

Ի՞նչ պայքար է մղվում: Դատախազը շուրջպարեր է պարեցնում, արանքում էլ «Ազգային Միաբանությունն» է փորձում քայքայել: Բացարձակ ամենաթողություն է ամեն բնագավառում: Եվ դրա համար էլ պատահական չէր, որ «Ազգային Միաբանությունը» առաջարկում էր, որ պետք է հաղթահարել նախ անվստահության մթնոլորտը: Աստված մի արասցե, եթե հանկարծ խժդժություն եղավ սահմաններում, որն աչքի առաջ պետք է ունենանք, որովհետև Ալիևը օրը մեջ ասում է, որ Ադրբեջանի ռազմական բյուջեն դարձնելու ենք Հայաստանի բյուջեի չափ: Ո՞վ կգնա կռվի, ո՞ւմ կոչով կգնան: Ի՞նչ, կարող է երեկվա մեր հերոսական տղե՞րքը, գեներալնե՞րը «Խամմեր»-ներով գնան պաշտպանեն: Չեն գնա: Այլասերել եք նրանց էլ: Բա այս հարցերի մասին ո՞վ պետք է մտածի, չէ՞ որ երկիր ենք կորցնում, Քոչարյանը, Սերժը գնացող են:

Օգտվելով առիթից, որ նիստը հեռարձակվում է, դիմում եմ Լևոն Տեր-Պետրոսյանին, չսխալվեցի՝ հենց նրան, և Սերժ Սարգսյանին: Մեկդ ձեր բարեկամների գյամը քաշեք, մյուսդ էլ՝ յուրայինների: Հերիք է աշխարհով մեկ տարածեք, թե Գեղամյանը պայմանավորվածություն ունի Սերժ Սարգսյանի հետ: Դուք՝ հներդ, ունեք այդ պայմանավորվածությունը նոր իշխանությունների հետ այն պարզ պատճառով, որովհետև իրենք պարտակեցին ձեր օրոք կատարված հանցագործությունները՝ Ղանդիլյանի, Իսահակյանի սպանությունները, Համբարձում Գալստյանի սպանությունը, տասնյակ ուրիշ մարդկանց սպանություններ: Լևոնենց թիմից որը գնում է Ամերիկա, ասում է՝ Գեղամյանը ռուսների գործակալն է, Սերժենք են գնում Մոսկվա, ասում են՝ Գեղամյանն Արևմուտքի գործակալ է: Գեղամյանն իր ժողովրդի ծառան է, միևնույն է, ձեր շառուշռուռը

ինձ չի կպնելու:

Սիրելի՛ ժողովուրդ, մեկ հարցի մասին ես: Վերջերս, որ հեռուստաալիքը միացնում ես՝ քաղաքի նախկին ճարտարապետ Նարեկին ես տեսնում: Ասում է՝ հիմա Երևանը սահմանափակենք կենտրոնով: Ազգովի շնորհակալություն հայտնենք, որ չի ասում՝ Երևանի անունն էլ փոխենք, Նարեկավան դարձնենք: Բա, լավ, անհարմար չէ՞: Մարդ, որ նորմալ հասարակարգում առնվազն պետք է հայտնված լիներ Կոշի գաղութում, այն էլ «հարիֆի» կարգավիճակով, այսօր մեզ խրատներ է տալիս:

Եվ այս պարագայում սթափվել է պետք, անգամ իսկ ընդհատել նիստը, մի հատ խելք խելքի տանք՝ ընդդիմություն, դիմություն, պրեզիդենտ, մյուսները: Երկիր փրկենք, ոչ թե աչքակապությամբ զբաղվենք, որ այստև, այս ամբիոնից, Եվրոպայի անունից մաստերովկով մեզ խրատներ չտան:

«... Երբ պաշտոններից կազատվի Սերժ Սարգսյանը»

30.08.2005 թ.

Սիրելի՛ ժողովուրդ, մեկ անգամ ևս ուզում եմ պարզաբանել «Ազգային Միաբանություն» խմբակցության առաջարկները՝ հետևելով հայտնի ասացվածքին, որ կրկնությունը գիտության մայրն է, երևանյան բարբառով հայտնի ֆիլմից, կրկնում եմ, հասկանալի ըմբռնում ունեցող մարդկանց (բթամիտների-*խմբ.*) համար:

Եվ այսպես, ի՞նչ է առաջարկում «Ազգային Միաբանություն» խմբակցությունը: «Ազգային Միաբանություն» խմբակցությունն առաջարկում է. հաշվի առնելով, որ, այնուամենայնիվ, քննարկվող սահմանադրական փոփոխությունները մի քայլ առաջընթաց են ապահովում գործող Սահմանադրությունից, ասում ենք՝ «այո» այն պայմանով, եթե այստեղ գտնվող բոլոր մարդիկ վայր են դնում մանդատները, պատգամավորական լիազորությունները: Եվ, ինչպես գովաբանվում է, սահմանադրական փոփոխությունների ընդունման պարագայում երկրում ստևծվում են ազատ, արդար ընտրություններ անցկացնելու լիարժեք պայմաններ: Քավ լիցի, ժողովուրդը թող ընտրի. կընտրի պատգամավորների այս կազմը, շատ լավ, այս կազմը կաշխատի, կընտրվեն արտախորհրդարանական ուժեր, իրենք կաշխատեն: Նորընտիր Ազգային ժողովը կձեղավորի Կառավարություն: Կառավարության կազմավորման 50-րդ օրը առաջարկում ենք, որ Հանրապետության Նախագահի պաշտոնում գտնվող մարդը հրաժարական տա, նշանակվեն արտահերթ նախագահական ընտրություններ: Հիմա այստև, ի՞նչն է անընդունելի: Եթե համոզված եք, ինչպես Գալուստ Սահակյանն ասաց, որ ընդդիմության զանգվածը փոքր է, ավելի լավ ձեզ համար, չենք անցնի, դուք կլինեք պատգամավոր: Դե գնացեք այդ քայլին: Հո խոսելով չի: Գործնական առաջարկություն եմ անում: Իսկ ինչո՞ւ եմ դա առաջարկում. առաջարկում եմ այն պարզ պատճառով, որովհետև այս Ազգային

ժողովը, այս Կառավարությունը, այս կոալիցիան արդեն իսկ սպառել են վստահության քվեն ժողովրդի կողմից: Ներկայացնեմ հենց ձեր խոսքերը. օգոստոսի 20-ին՝ Վանաձորում, հարգարժան Արթուր Բաղդասարյանը ելույթ ունեցավ իր համակիրների առջև, ասաց ընդամենը հետևյալը. էս էլ բերել եմ կարդամ, որ վրաս հետո գործ չսարքեն: Ուրեմն, Արթուր Բաղդասարյանի խոսքը. *«Իշխանություն էլ կա, իշխանություն էլ: Մեջներն էնքան ավազակներ կան, փողով ձայներն առել են, եկել նստել են, գյուղ կա՞, որ չուն չունենա»*: Տղերք ջան, Արթուրն էստև չի, հատ-հատ ասեք՝ այս սա՝ փողով է անցել, նա՝ փողով է անցել, նա՝ Կառավարության միջի շունն է, նա էլ գել ու կատուն են: Բա այս պարագայում ժողովուրդը ո՞նց հավատա ձեր խոսքին, ոնց վստահի ձեզ: Լավ, որ չատացվի միայն Արթուրի ասածն եմ բերում, ՀՅԴ ներկայացուցիչ Շիրակի մարզպետն էլ «Օրինաց երկրի» իմ կողմից հարգված, շատ պարկեշտ անձնավորությանը կանգնեց՝ ասաց. մարդասիրական օգնությունը՝ կաթի փոշին, գողանալու համար նստած է եղել: Է, սա է Ձեր կոալիցիան, բնականաբար էլ ձեր մեծամասնությունը: Որ հռետորը բարձրանում է ամբիոն, առանց անհարմար զգալու կանգնում և ասում է. *«Սիրելի՛ ժողովուրդ, այ, կընդունենք սահմանադրական այս փոփոխությունները, այ, կտարանջատվեն իշխանության տարբեր թևերի լիազորությունները, դատական մարմինները անկախ կդառնան, հավասարակշռող մեխանիզմներ կմտցվեն՝ երկրում վիճակը կբարելավվի»*: Ի՞նչ է սրա տակ թաքնված: Տղերքը ձեռքերը սիրուն լվանում են, փախչում են Նախագահից: Հասկացնում են ընտրողներին՝ մենք կապ չունենք, չէ՞ որ սահմանադրական փոփոխությունների մեխն այն է, որ Նախագահի լիազորությունները զգալիորեն կրճատվում են: Ուրեմն, եթե կրճատվում են՝ երկրի վիճակն էլ բարելավվում է, տրամաբանությունն էլ գալիս է ասելու մի բան, որ չարիքի ողջ կուտակումը Նախագահի տակ է: Հաշվի առնելով այս ամենը՝ սրտանց շնորհավորում եմ պարոն Քոչարյանին, ասելով, որ հենարան ունես, աշխարհը չունի:

Հաջորդ հարցը: Ի՞նչ է առաջարկում «Ազգային Միաբանություն» խմբակցությունը: «Ազգային Միաբանություն» խմբակցությունն առաջարկում է, որ անպայմանորեն նշված լինի, որ միևնույն անձը 3 անգամ անընդմեջ իրավունք չունի առաջադրվելու Հանրապետության Նախագահ: Ինչո՞ւ ենք սա առաջարկում: Լավ կյանքից չէ, ժողովուրդ ջան: Թե չէ Սահմանադրական դատարանը ոնց 1998 թ. առանց անհարմար զգալու կանգնեց ասաց, որ այս մարդը 10 տարի անընդմեջ Երևանում է ապրում, է՛, հիմա էլ կասի՝ այնտեղ՝ սահմանադրական փոփոխություններում, այս կամ այն բառերը լավ չեք հասկացել, երրորդ անգամ էլ կարող է ընտրվել: Ոնց 2003 թ. Սահմանադրական դատարանը որոշում ընդունեց՝ ասելով, որ մեկ տարվա ընթացքում վստահության հանրաքվե պետք է անցկացվի, հետո խոսքից հետ կանգնեց: Ի՞նչ երաշխիք ունենք, որ նույնը չի կրկնվելու. ոչ մի երաշխիք չունենք: Ահա սրա համար ենք անում մեր առաջարկը: Եթե հանկարծ Սահմանադրական դատարանի նախագահը փորձի ինքնուրույնություն դրսևորել, ժողովուրդ ջան, կանեն հետևյալը. բնակարանում, որտեղ ապրում է, նկուղը ռումբ կգցեն: Ռումբ կգցեն կամ էլ կհիշեն, որ սրանից 10 տարի առաջ փեսան ինչ-որ

կռիվ էր արել, մարդ էր ծեծել: Այսինքն՝ մարդուն շանտաժի կենթարկեն: Է, նա էլ կհամաձայնվի: Համաձայնվելու երկրորդ օրը կասեն՝ ռումբ չէր պայթել նկուղում, նեխած կամպոտ էր, կռիշկան էր թռել, ոնց որ մի քանի տարի առաջ եղավ ռազմական դատախազի հետ: Բարեբախտաբար, վերջինիս թիկունքին կարգին տղերք կային, չթողեցին կուլ տալ Ջհանգիրյանին, թե չէ վաղուց կուլ էին տվել:

Միանում ենք «Արդարություն» խմբակցության մեր գործընկերների առաջարկներին: Շատ տեղին են, հիմնավորեմ: Առանձնահատուկ ուզում եմ նշել այն նախապայմանը, համաձայն որի պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը պետք է հանվի իր պաշտոններից: Կարծում եմ, այս առաջարկին սիրով և մեծ ոգևորությամբ կմիանա նաև ՀՅԴ-ն: Ինչո՞ւմ է իմ համոզմունքը: Համոզմունքս պայմանավորված է նրանով, որ 2003 թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին «Գրանդ-Սան» ընկերության դահլիճում հավաքված էր հարգարժան ՀՅԴ-ի վերնախավը, և երբ մասնակիցներից առավել աչքի ընկնող մարդկանցից մեկը, դիմելով պրն Քոչարյանին, հեռակա դիմելով, ուղղակիորեն ասաց, որ ՀՀ-ում կարգ ու կանոն կհաստատվի այն ժամանակ, կաշառակերության, կոռուպցիային վերջ կտրվի այն ժամանակ, երբ պաշտոններից ազատվի պրն Քոչարյանի նախընտրական շտաբի պետ Սերժ Սարգսյանը: Եվ, ի՞նչ եք կարծում, այդ առաջարկն առաջացրեց անասելի ոգևորություն և դահլիճը հոտընկայս, որոտընդոստ ծափերով ողջունեց այն: Այնպես որ «Արդարություն» դաշինքին, «Ազգային Միաբանությանը», համոզված ենք, կմիանա նաև ՀՅԴ-ը: Իսկ դա արդեն հաջողության կեսն է:

«Ձեզ բացարձակապես ոչ մի բան չի փրկի, առավել ևս՝ խունվեյբինները»

31.08.2005 թ.

Ելույթս սկսեմ իմ կատակասեր ընկերոջ երեկվա մեկնարկից՝ հիշեցնելով հետևյալը. եթե ասելիք չունես, ուզում ես գոռա, ուզում ես լռի, միևնույն է, տպավորություն չես գործի: Հիմա, ըստ էության. շնորհակալությունս եմ հայտնում հարգարժան պրն Տ. Թորոսյանին, ինչպես նաև հարգարժան պրն Գ. Սահակյանին, որովհետև իրենց ելույթներով շատ ու շատ հեշտացրին իմ այսօրվա առաքելությունը: Ինչո՞ւ եմ շնորհակալություն հայտնում: Նախ, ամրագրեցին այն, ինչ ասում էր Շավարշ Քոչարյանը *(պրն Թորոսյան, մի խանգարեք, խնդրում եմ, ես ձեզ ուշադիր լսում էի, չնայած դա շատ դժվար էր)*: Նախ, ինչ ասաց պրն Քոչարյանը *(մեր հարգարժան Շավարշի մասին է խոսքը)*: Նա ասաց, որ սահմանադրական փոփոխությունները կոալիցիայի համար խորթ զավակ են: Եվ իրավամբ: Ակամայից հիշեցի Սողոմոն իմաստունի դատը, երբ երկու կին վիճարկում են իրենց որդուն՝ երեխային, մեկի հարազատին, մյուսի՝ ոչ: Եվ վերջում, երբ Սողոմոն իմաստունն ամենաիմաստուն որոշումն է կայացնում՝ կիսել երեխային, որը բոլորիս հայտնի է, իրական մայրն ասում է՝

երեխաս տվեք խորթ մորը, որովհետև երեխայի կյանքն ինձ համար շատ ավելի թանկ է, քան վիճարկությունը, թե նա ումն է: Բա եթե այս Սահմանադրությունը ձեզ համար այդքան թանկ է, ի՞նչն է պատճառը, որ ձեր մանդատներն ավելի վեր եք դասում, ավելի բարձր եք գնահատում, դե դրեք մանդատները, եթե, իրոք, ձեր խորթ զավակը չէ: Կամ էլ ասում եք՝ ի՞նչ կապ ունի մանդատների վայր դնելը սահմանադրական փոփոխությունների հետ: Հիմա, որ լարվածությունն ընկնի, մի համեմատություն անեմ: Մի չքավոր գետի ափին կանգնած է, նավավարին խնդրում է՝ այս ափից տար այն ափը, բայց իմացիր՝ փող չունեմ, չեմ վճարելու: Է, հա, նավավարն էլ պատասխանում է՝ եթե փող չունես, քեզ համար ի՞նչ տարբերություն՝ այս ափին ես, թե այն: Հիմա այս «բարեփոխված» Սահմանադրությունն եք էլի քարոզում. ժողովրդի համար ի՞նչ տարբերություն՝ հինն եք խախտում, թե՞ նորը:

Եվս մի նոր բացահայտում. եթե ուշադիր լսել եք, ես իմ երկու ելույթների ժամանակ Հանրապետական կուսակցության անունը բացարձակապես չեմ հիշատակել: Բացարձակապես: Ի՞նչ, պատահակա՞ն էր: Իհարկե, ո՛չ: Ինձ հետաքրքիր էր՝ ի՞նչ զարգացումներ կունենան այս մարդիկ, եթե անունները չես տալիս: Զարգացումները հետևյալն էր, այն էր, որ այս ամբիոնից անթաքույց գովեստի խոսքեր շռայլեցին գործող Սահմանադրությանը, շնորհակալություն հայտնեցին այդ Սահմանադրությանը: Այլ կերպ չէր էլ կարող լինել. չէ՞ որ երբ այդ Սահմանադրությունն էր ընդունվում՝ գործողը, իրենք ՀՀԾ-ի դաշնակիցներն էին և քարոզում էին, ինչպես հիմա են քարոզում, որ, ժողովուրդ ջան, այս Սահմանադրությունն ընդունում եք, ու Սերգո Երիցյանը սկսում է լավ ապրել: Սա է իրականությունը եղել: Իհարկե, այնքան մռայլ չէ, ինչքան կարելի է պատկերացնել: Երեկ պրն Գալուստ Սահակյանն ավետիս բերեց ժողովրդին, ինչի համար շնորհավորում եմ Ձեզ՝ ժողովուրդ: Նա ասաց, որ Հանրապետականը պաշտպանում է պրն Քոչարյանին: Ավետիսը պրն Քոչարյանինը չէր, ժողովրդինն էր, որովհետև ճիշտ նույն մարդիկ պաշտպանում էին Լևոն Տեր-Պետրոսյանին և շատ կարճ ժամանակ անց Լևոն Տեր-Պետրոսյանի հետ թե ինչ կատարվեց, բոլորս ականատեսն էինք: Այնպես որ, դա, իրոք, բարի լուր էր, իրոք, ավետիս էր:

Ինչ վերաբերում է Եվրախորհրդի դռները կոտրելուն: Եղել է այդպիսի դեպք, սիրելի՛ ժողովուրդ, խոստովանեմ: Երբ պատվիրակության անդամներից մեկը կմկմալով մի կերպ տեքստն էր կարդում, ազերիներն ու թուրքերը հեգնանքով նայում էին, ասես թե ասում էին՝ էս չե՞ք դուք *(այդ պահերին մեծ էր ցանկությունը՝ կոտրել դուռը և փախչել դահլիճից)*: Եղել է: Այդ դեպքի ականատեսը ես եղել եմ: Մինչդեռ, միթե՞ անհարմար չեք զգում, որ անգամ իսկ Եվրախորհրդի՝ Ստրասբուրգի 5 ելույթներս և Վաշինգտոնի ելույթս, այստեղ ուզում եք մատուցել, թե, իբր, Եվրախորհրդի դռներն եմ ջարդել: Չեն ջարդում այն դուռը, որն առաջդ բաց է: Սկսենք դրանից: Ուրիշ բան, որ կան մարդիկ, որոնք սովոր են պատուհանից մտնել: Բայց, դե, իհարկե, ընդդիմության շարքերում այդպիսիք չկան: Հիմա եմ հասկանում՝ ինչի ամեն ինչ արեցին, որ Եվրախորհրդի՝ Ստրասբուրգի և ոչ մի ելույթս հեռուստատեսությամբ չցուցադրվի: Փառք Աստծո Տիգրան Կարապետովիչին, որը հնարավորություն ընձեռեց՝ գոնե մի երկուսը ցուցադրվեցին: Հիմա եմ հասկանում, թե

ինչու, երբ դեռ ելույթ չունեցած՝ իշխանական թերթերում գրում էին՝ Գեղամյանը Ստրասբուրգ է գնացել իր իմիջի համար ելույթ ունենալու: Զարմանալին այն է, որ երբ իմ խնդրանքով ինտերնետից թարգմանաբար ինձ ասում էին՝ ինչ են գրում թուրքական և ադրբեջանական թերթերը, տեսնում էի, որ ելույթներս հավասարապես մերժվում են և այս իշխանությունների կողմից, առավել կատաղի՝ թուրքերի ու ազերիների կողմից: Դե, հետևությունը, ժողովուրդ ջան, դուք արեք: Մի հատ ուշադիր մտածեք՝ *«ի՞նչ կցուցաներ այս առակը»*: Եվ լկտիությունը հասավ նրան, որ երբ ելույթներիս տեքստերը «Հայաստանի Հանրապետություն»-ում ամբողջությամբ տպագրվեցին, սկսեցին գրել, ըհը, Գեղամյանը պրն Քոչարյանի հետ լեզու է գտել *(ի դեպ, շնորհավորում եմ նրա ծննդյան օրը. սա փաստն եմ արձանագրում)*, լեզու է գտել պրն Քոչարյանի հետ, թե չէ՝ չէին տպագրվի: Խելքներիդ ճյուն գա. անգամ պետականամետ ելույթը բյուջեով սնվող թերթում գովազդային հանակով՝ փողով ենք տպել: Սա՛ է ճշմարտությունը: Եվ պատահական չէ, որ ելույթներիս Լեռնային Ղարաբաղի հեռուստատեսությամբ բացարձակապես ոչ մի անդրադարձ չեղավ: Լավ, չքնաղ ժողովրդից ինչո՞ւ եք թաքցնում ելույթներիս բովանդակությունը: Չէ՞ որ սկզբից մինչև վերջ իրենց թասիբն եմ պահել, չէ՞ որ սկզբից մինչև վերջ մեր երկրի թասիբն եմ պահել: Է, հասկանալի է, ինչի են անում: Է, վաղը «սպեցնազ»-ին ո՞նց ասեն՝ Գեղամյանը դավաճան է: Շավարշ Քոչարյանի հետ Ստրասբուրգից գալիս ենք՝ անամոթաբար պաստառներով են դիմավորում. գրած է. Գեղամյան՝ դավաճան, Շավարշինն էլ անունով էին գրել՝ դավաճան, հասկանալի պատճառներով: Ռազնարյադ-կայով մարդ եք տարել աերոպորտ, բերել, դե, հիմա էլ, այդ նույն մարդկանց շարան-շարան կանգնեցրեք այստև, շարան-շարան կանգնեցնելուց հետո համապատաս-խանաբար էլ ասեք՝ դավաճանն ո՞վ է, որ արդեն տասը ժամ է այս ամբիոնից իմ ու Շավարշի ստրասբուրգյան առաջարկների գովքն են անում: Չեզ՝ պարոնայք իշխանավորներ, բացարձակապես ոչ մի բան չի փրկի, առավել ևս՝ խունվեյբիները:

Չախջախիչ դաս դուրսպրծուկներին

31.08.2005 թ.

Սիրելի՛ ժողովուրդ, նախ Չեզ հետ՝ եղած մի քանի իրողություն արձանագրենք: Իրողություն համար առաջինն. այս քննարկումների ժամանակ իշխանությունները տապալվեցին: Դրա ամենավառ վկայությունը, թերևս, այն է, որ ընդդիմության ցանկացած ելույթ ունեցողի տրամաբանական և ոչ մի փաստարկին հակափաստարկ, համարժեք հակափաստարկ ներկայացնել չկարողացան: Դրա վառ ապացույցը նաև այն է, որ փորձեցին քաղաքական բանավեճը տեսափոխել այլ՝ տղայական «ռազբորկաների» հարթություն: Դա էլ է խոսում այն մասին, որ այս մարդիկ սպառված են: Երկրորդ իրողությունը. ինչո՞ւ կրքերն այսքան բորբոքվեցին հենց վերջին օրը: Որովհետև

նախագահականից սաստեցին՝ էս ի՞նչ եք անում, տարվում-պարտվում եք, խայտառակ եք լինում, ուստի պետք էր դիմել սադրանքի, ժողովրդի առաջ ներկայացում բեմականացնել, որ ժողովուրդն ասի՝ ո՛չ ընդդիմությունն է մի բան, ո՛չ էլ, դե, որ դիմությունը մի բան չի, արդեն գիտի, ասել էլ պետք չէ:

Դրա հետ մեկտև, երբ անձնական վիրավորանքներ էին հնչում, ակամայից մտածում էի՝ ո՞վ է ուսուցիչը, դասատուն ո՞վ է: Է, ուսուցիչը, ճիշտ այն մարդն է, որը 2000 թ. մարտ ամսին մոլեռանդորեն պրն Քոչարյանի հրաժարականն էր պահանջում, երկու ոտը մեկ էր անում, կուրծք էր ծեծում, պաշտոնը ստացավ՝ հանգստացավ: Հիմա աշակերտն այս ամբիոնից բարոյականություն է քարոզում: Ուսուցիչը ճիշտ այն նույն մարդն է, որ անցյալ տարվա մարտ-ապրիլ ամիսներին, երբ իշխանությունները երերում էին, կանգնեց, ինչպես կասեին բանակում, «սողդատսկի պրիչինա» բռնեց և հայտարարեց. եթե հանկարծ պաշտոնից հանեք՝ ընդդիմություն եմ դառնում: Երիտասարդն էլ կարծում է՝ հետը պետք է բանավիճեմ: Տո, սկի դասատուիդ հետ չեմ բանավիճի: Հին Երևանում, եթե որևէ մի դուրսպրծուկ ուզում էր աչքի ընկնել, որ իր մասին խոսեին, հայհոյում էր քաղաքի ամենասիրված և հարգված տղաներին՝ լիներ դա Սիմոնյան Փայլակը, լիներ՝ Թադևոսյան Նորիկը: Հետո, երբ դուրսպրծուկին շանսատակ էին անում, գլուխ էր գովում, ասում էր՝ ես կռիվ եմ տվել Փայլակի կամ Նորիկի հետ: Ճիշտ նույն սինդրոմն է այս դեպքում արդեն՝ նորօրյա դրսևորմամբ:

Ինչ վերաբերում է «Զվարթնոց» օդանավակայանի մայիսի 1-ի հիշատակած դեպքին, ապա այստեղ գործ ունենք չափազանց վտանգավոր երևույթի հետ: Երիտասարդը կանգնեց և առանց անհարմար զգալու ասաց. ինչ ելույթ ունեցել եք Ստրասբուրգում *(խոսքը 2004 թ. ապրիլյան նստաշրջանի մասին է)*, դե համարձակվեք նույն ելույթն էլ այստեղ ունեցեք: Մինչդեռ անցյալ տարվա գարնանը ես Ստրասբուրգում ելույթ ընդհանրապես չեմ ունեցել: Իսկ վտանգը ամենևին էլ պայմանավորված չէր նրանով, որ «ռազմարյադկայով» վարձկան բոմժերին նստացրեցին «Ռոգդան» ավտոբուսները և բերեցին «Զվարթնոց»: Վտանգն այն էր, որ խունվեյբինության ամենավառ դրսևորման հետ գործ ունենք: Այս մարդն անգամ չգիտեր՝ ինչի՞ համար է գնում, ինչի՞ համար պետք է հայհոյախոսի, ինչի՞ համար պետք է լուտանքներով պաստառներ բռնի: Հետո էլ հեգնում է՝ պատգամավորականով դուրս չեկավ, ժողովրդի հետ դուրս եկավ: *(Բա ես ժողովրդի կողմից եմ պաշտպանված՝ գայիք այնտեղ Ձեր պաստառներով)*: Ձեր ճղճիմ հաշվարկները քնած ժամանակ եմ անում:

Սիրելի՛ ժողովուրդ, ինչ վերաբերում է համարձակությանը. չանդրադառնամ մյուս ելևէջներին, միայն ասեմ, որ էդ «համարձակներին» ես լավ էլ տեսել եմ 1990 թ. մայիսի 27-ին: Երբ երկուստեք սադրանք կազմակերպվեց, որի արդյունքում 17 մարդ զոհվեց: Ընդամենը 5 հոգով գնացինք տանկերի դիմաց, փառք Աստծո, վավերացված տեսակադրերը կան: Հիշեմ և շնորհակալությունս հայտնեմ Գևորգյան Ռուբիկին, Մանվել Քոչարյանին, Մացոյին, Վարդանին: Ո՞ւր էին էդ «դուխով» տղերքը: 200 հոգի բոմժ էին բերել, ասյան էին կտրում, առյուծ էին ճնանում: Կամ՝ Գագիկ Կոստանդյանն ի՞նչ ասաց,

որ իրար եք խառնվել. ասաց՝ գիտենք բոլորդ էլ ով եք: Իսկ ի՞նչ նկատի ուներ Գագիկը: Նկատի ուներ այն, որ երբ ընդմիջմանը դուրս էի գալիս դահլիճից, ցանկացած կռիվ սարքել: Կռիվ անելու տեղ կա, դրան էլ եմ պատրաստ, ով էլ որ անի՝ մեծ կտորն ականջը կմնա: Իսկ ասվածի իմաստն էլ հետևյալն է. բերդերում «կռիսյատնիկներ» կան, որտեղից առնետին ուղարկում են կռիվ, շամաթա սարքի: Այնպես էլ հիմա փորձեցին կռիվ, շամաթա սարքել, որ այդ կռիվ, շամաթայի արդյունքում էլ ասեն. այ մարդ, էս ընդդիմությունը կռիվներ է սարքում, նա կարո՞ղ է երկիր ղեկավարել: Էդ դասերն էլ ենք վաղուց անցել:

Եվ վերջապես: Սիրելի՛ ժողովուրդ, հարցը շատ պարզ է դրված: Կներեք՝ Հովհաննես Մարգարյանի խոսքին չանդրադարձա: Եթե ուշադիր լսել էիք ելույթս, ես ասացի՝ իմ կողմից շատ հարգված, պարկեշտ մարդ: Այսինքն՝ ես այդ բոլորը գիտեի: Ես ուզում էի ասել, թե ի՞նչ վիճակի է հասել այսօրվա իշխանությունը, որ անգամ իր գործընկերոջը՝ պարկեշտ ու հարգված մարդուն *(Հովհաննես Մարգարյանին)*, վարկաբեկելու նպատակով հերյուրանքներ է տարածում նրա հասցեին: Սա՛ է իրականությունը:

Սիրելի՛ ժողովուրդ, արդեն ակնհայտ դարձավ, որ այստեղ, իրոք, եթե պաշտոնակռիվ է, ապա դա տալիս են գործող իշխանությունները, որոնք սեփական պատգամավորական մանդատներն ավելի բարձր են դասում, քան սահմանադրական փոփոխությունների ընդունումը:

Եվ վերջին հարցը: Է՛, լավ, պատմություն գիտենք, հիշողություններս էլ՝ ոչինչ: Երբ 1936 թ. ընդունվեց ստալինյան Սահմանադրությունը, գովերգվում էր, որ Սովետական Միության պատմության մեջ ամենաժողովրդավարական Սահմանադրությունն է: Դրան հաջորդեց 37 թիվը: Երբեք չեմ ուզում հիշատակել սուլթան Համիդի կողմից ոտնահարվող Սահմանադրությունը, որը հանգեցրեց նրան, որ 1907 թ., երբ երիտթուրքերն արդեն արյունոտին ուզում էին գահընկեց անել, վերջինս խոստացավ, որ ինքը *(սուլթան Համիդը)* կայսրությունում գործող ժողովրդավարական համարվող Սահմանադրությամբ է առաջնորդվելու: *(Այնպես որ, երբ ամեն քայլափոխի կոպտորեն խախտվում է Սահմանադրությունը, ապա ամենևին և ոչ մի նշանակություն չունի, թե այն որքանով է ժողովրդավարական)*: Սա՛ է իրականությունը, ճշմարտությունը: Դուք ի զորու չեք փոխվելու: Ինքներդ չեք կարող թոթափել այն բեռը, որ կա ձեր շալակին:

Հիշատակվեց նաև, որ 1995 թ. Արցախի հերոսները, որ եկան, Սահմանադրություն էր պետք, թե չէ երկրում քաոս էր լինելու: Փառք Աստծո, հրամանատար ունեին, որի արդյունքում դուք, և որի սկզբունքները դավաճանելով, այսօր այստեղ եք և իշխանության գլխին եք: Ի՞նչ, կարծում եք, մոռացել ենք, կարծում եք, դուխներս չի հերիքի՞ ամեն ինչ ասել:

Սիրելի՛ ժողովուրդ, եթե դուք «ոչ» եք ասում Սահմանադրությանը, իսկ «Ազգային Միաբանությունը» կոչ է անում միարժեքորեն ասել՝ «ո՛չ», դուք «ոչ» եք ասում հոկտեմբերի 27-ին, դուք «ոչ» եք ասում 1998 թ., 2003 թ. կեղծված նախագահական ընտրություններին, դուք «ոչ» եք ասում 2004 թ. ապրիլի 5-ի և 12-ի բարբարոսություններին: Եվ, վերջապես, դուք ասում եք, որ իրական իշխանությունը պատկանում է ձեզ:

Խնդրում եմ, ուղղակի խնդրում եմ, հանգստացե՛ք: Աստված մի արասցե, որ ասեմ այն, ինչին տիրապետում եմ, կասեմ՝ անվանական: Եվ, վերջապես, Գագիկ Կոստանդյանի ասածն էլ այն էր, որ համապատասխան մարդը գալիս, մոտենում է ինձ, ասում է՝ քննադատելու համար պետք է ճանապարհ անցած լինես: Տղե՛րք ջան, ինձ խորհուրդ տվողի պես չեմ նստել, մնքս դա է, «Ռոսիա» կինոթատրոնի աթոռները բրիտվայով չեմ ճղել, «պիսկովատ» չեմ արել, քաղաքական դատավճռություն չունեմ:

Հ.Գ. Երբ նյութը պատրաստվում էր տպագրության, Արտաշես Գեղամյանը խնդրեց հայցել թե՛ հեռուստաղիտողների, թե՛ «Իրավունքի» ընթերցողների ներողամտությունը ելույթներում իրեն ոչ հատուկ առանձին արտահայտություններ օգտագործելու համար: Պրն Գեղամյանը պարզաբանեց, քանի որ թե՛ օրենսդիր, թե՛ գործադիր իշխանության վերնախավում կան ոչ վաղ անցյալում քրեական հանցագործություններ կատարելու համար դատվածներ, որոնց համար առավել ըմբռնելի է «ռաբիսի» լեզուն, ուստի հարկադրված էր իր ելույթները կառուցել նկատի ունենալով նաև այդ հանգամանքը: Ելույթներին հաջորդեցին արձագանքներ. ոչ անհայտ ՀՀԾ-ական ծղրտոցին Ա.Գեղամյանը նպատակահարմար չգտավ արձագանքել՝ասելով, որ պրն Տեր-Պետրոսյանը, հավանաբար, դեռ չի հասցրել իր խնամու հետ համապատասխան բացատրական աշխատանք տանել: Իսկ ՊՆախարար Սերժ Սարգսյանի հայտնի հարցազրույցին պատասխանել է այսպես.

«Մոնրե Կառլոն շատ է...»

Առաջին տպավորությունը, որ ստացա «Հայլուր»-ով՝ լսելով Սերժ Սարգսյանի իմ հասցեին ուղղված լուտանքները, ակնհայտ դարձավ, որ պրն Սարգսյանը Մոնտե Կառլոյում արևահարվել է կամ նյարդեր հանգստացնող ընդունած դեղամիջոցի դոզան բարձր է եղել: Պարզվում է, որ «համեստ» պաշտոնյան բյուջեից ամիս առ ամիս ստացած և տնտեսած իր աշխատավարձը, որով նա մեկնել էր Մոնակո, չարին ծառայեցրեց:

ՊՆախարարի հարցազրույցից ակնհայտ դարձավ, որ իշխանությունները հոգեվարքի մեջ են: Ի՞նչն է խանգարում Հանրապետության վարչակազմի փաստացի տիրոջը զրպարտության համար (եթե, իրոք, դա այդպես էր) դատի տալ այն մարդկանց և կուսակցությանը, որոնց կազմակերպած նախընտրական ժողովին դեռ 2003 թ. գարնանը «Գրանդ-Սան»-ի դահլիճում ասվել էր, որ Հանրապետությունում կոռուպցիային և կաշառակերությանը վերջ կտրվի այն պահից, երբ իր պաշտոններից կազատվի պետությունը քայքայող, այդ արատները հովանավորող Սերժ Սարգսյանը. առավել ևս, որ ասվածի հիշատակումները եղել են մամուլում:

Ես հասկանում եմ Սարգսյանի խուճապի պատճառը. եթե սահմանադրական փոփոխություններով ընդունվում է պրն Քոչարյանի ցմահ անձեռնմխելիությունը ապահովող 56.1 հոդվածը, արդեն Քոչարյանի իրավահաջորդի հարցը, որին հավակնում էր Սերժ Սարգսյանը, կորցնում է իր արդիականությունը: Ավելին, նա դառնում է ռեժիմի կողմից կատարված բոլոր հանցագործությունների միակ կրողը և պատասխանատուն:

Կարծում եմ, արևահարման հետևանք էր նաև պրն Սարգսյանի հիշողության կորուստը:

Նա մոռացել է, որ 2004 թ. դեկտեմբերի 25-ի ԱԺ-ի արտահերթ նիստում հայկական զորախումբը Իրաք գործուղելու հարցի քննարկման ժամանակ իր ելույթում չթաքցրեց ոգևորությունը իմ ելույթների համոզիչ հիմնավորվածությամբ:

ՊՆախարարը կորցրել է տրամաբանելու ընդունակությունը ևս. ինչպես խոստովանեց, նա չի լսել իմ ելույթները և թունոտ եզրակացություններին հանգել է, հավանաբար, բամբասանքների արդյունքում, այլապես իրեն հարգող պետական պաշտոնյան ելույթներիցս հետո պետք է հրաժարական տար:

Եվ, վերջապես, վտանգավոր չարաճճիության է դիմում պրն Սարգսյանը՝ կրկին փորձելով ակնարկել ինչ-որ չկայացած համագործակցության մասին, քաջ գիտակցելով, որ քաղաքական ցանկացած գործչի համար հեռավոր կապերն անգամ իրենց հետ վարկաբեկիչ են:

Կարծում եմ, այս հակիրճ պատասխանից անգամ ընթերցողի համար ակնհայտ կդառնա, թե ով է իրականում ստախոսը, բամբասկոտը և ում գլուխն ու սիրտն են իրականում դիողի պես դատարկ:

Բա, որ ասում են՝ Մոնտե Կառլոն շառ ա…»:

Հ.Գ. Ի դեպ, «Ժամանակի ՄԻՏՔ» անկախ շաբաթաթերթի 2005 թ. սեպտեմբերի 6-12 -ի համարում զետևված է «Հայաստանի քաղաքական գործիչներից և կուսակցություններից ո՞ւմ և որի՞ն եք նախընտրում» հարցախույզը, ըստ որի՝ «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանին իրենց համակրանքն են հայտնել 500 հարցվողներից 177 մարդ, իսկ ծղրտացողի խնամուն՝ ընդամենը 6-ը: Ապա՝ «Ազգային Միաբանություն կուսակցությանը» նախընտրել են 176 մարդ, մինչդեռ ՀՀԿ-ին՝ ընդամենը 2-ը (հավանաբար, խնամիներով): Հետևությունը թողնում ենք ընթերցողին:

«Իրավունք», 9-15.IX.2005:

Արտաշես Գեղամյանի ելույթները Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում

27.09.2005 թ.

Հարգելի ընթերցող.

«Ժամանակի ՄԻՏՔ» անկախ շաբաթաթերթը սեպտեմբերի 27- հոկտեմբերի 3-ի համարում տպագրել է «Հայաստանի քաղաքական գործիչներից և կուսակցություններից ո՞ւմ և որի՞ն եք նախընտրում» հարցման պատասխանները: Ըստ այդմ, 500 հարցվողներից 189-ը կամ 37,8%-ը նախընտրել են Արտաշես Գեղամյանին, 99-ը կամ 19,8%-ը՝ Ռոբերտ Քոչարյանին, 49-ը կամ 9,8%-ը՝ Տիգրան Կարապետյանին: Առանց մեկնաբանության…

Ինչպես փչացրեցին կոալիցիային

Հարգելի՛ գործընկերներ… Թունելագործ ընկեր, լսի՛ր: Հարգելի՛ գործընկերներ, այս հարցի քննարկումը պարզապես կազմում է վաղօրոք մշակված սցենարի այն մասը, որ ծրագրված է եղել դեռ ամիսներ առաջ նախագահականում՝ պարոններ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի կողմից: Փորձենք առանց կրքերի հիմնավորել այս թեզը:

Եվ, այսպես, ի՞նչ է տեղի ունեցել. դեռ մայիս-հունիս ամիսներին կոալիցիայի անունից Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվեց սահմանադրական փոփոխությունների մասին օրենքի նախագիծը: Ըստ որում, դա և ոչ մի քննադատության չդիմացավ, երբ եկավ Վենետիկի հանձնաժողովը, եթե հիշում եք: Կոալիցիան պնդեց, ասաց, այո, այս տեսքով մենք պետք է քննարկենք, որից հետո Վենետիկի հանձնաժողովի պատվիրակները հանդիպեցին պրն Քոչարյանին: Վերջինիս հետ հանդիպելուց հետո սահմանադրական փոփոխությունների փաստաթուղթը ենթարկվեց արմատական փոփոխությունների: Նախկինում որդեգրած բոլոր սկզբունքները կոալիցիան դրեց մի կողմ, նոր փաստաթուղթ ներկայացրեց երկրորդ ընթերցման:

Ինչո՞ւ տեղի ունեցավ այդ կատակերգությունը. մի պարզ պատճառով՝ պրն Քոչարյանը ցանկացավ Եվրախորհրդի փորձագետներին ասել, թե տեսեք՝ ինչ ողբերգական վիճակում եմ ես աշխատում, տեսեք՝ անգամ իսկ իմ հենարան հանդիսացող

կուսակցություններն ինչքան հետադեմ են, տեսեք՝ համ ընդդիմության հետ եմ պայքար տալիս, համ՝ կոալիցիայի: Բայց քանի որ իմ ամբողջ էությամբ ես ժողովրդավար եմ, ուստի անպայման կփորձեմ առաջին հերթին համոզել կոալիցիային, որ գնան այն բարեփոխումներին, որոնց վրա մատնացույց է անում Վենետիկի հանձնաժողովը: Այդպես էլ տեղի ունեցավ: Արդեն իսկ եվրոպական հանրության համար պրն Քոչարյանը ժողովրդավար, առաջադեմ նախագահ է, կոալիցիան էլ հետադեմ ուժ է, որին միայն Նախագահի կամային հատկությունների արդյունքում է, որ հնարավոր է դառնում կոտրել և դուրս բերել ժողովրդավարացման ճանապարհ: Ժողովրդական լեզվով ասած՝ փչացրեցին կոալիցիային:

Հիմա հերթը հասավ ընդդիմությանը. ի՞նչ անեն, ո՞նց անեն, է, մեջտև եկավ «Համայնքապետ» օպերացիան: Ի սկզբանե «Արդարություն» դաշինքը և «Ազգային Միաբանություն»-ը քանիցս ասել են՝ երբեք ու երբեք չենք քաղաքականացնելու այդ ընտրությունները, քանիցս կրկնվել է դրա մասին: Եվ առաջին իսկ շաբաթից հետո արդեն իշխանությունները բանուգործերը թողած, Հանրապետությունում կատարվող սպանությունները մի կողմ դրած՝ ասում էին, թե ինչպես են ընթանալու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպիսին է լինելու այս կամ այն քաղաքական ուժի դերակատարումը: Արհեստականորեն ուռճացրեցին, ուռճացրեցին, ուռճացրեցին, որ հետո էլ անեն այն, ինչ արեցին: Այսօր կարդում եմ ռուսալեզու թերթերից մեկը. ժողովուրդ ջան, դարդ են անում, որ «Ազգային Միաբանությունը» չի պաշտպանել մեր գործընկեր «Արդարություն» դաշինքի թեկնածուին: Լացուկոծերը դրել են՝ էս ի՜նչ ողբերգություն է, էս ի՜նչ վայ-զուլում եկավ ընդդիմության գլխին: *Հիշում են 2003 թ., որ Արտաշես Գեղամյանը չմիացավ ընդդիմության իր գործընկերներին՝ հորդորելով, որ պետք չէ գնալ երկրորդ փուլ, որովհետև կեղծելու և օրինականացնելու են առաջին փուլի անօրինականությունները* (ավա՜ղ, ժամանակն ապացուցեց այդ կանխատեսումը): Այսօր իշխանական կերակրատաշտից սնվող ռուսալեզու թերթն է կոկորդիլոսի արցունքներ թափում. ինչի՞, որ ընդդիմության մեջ կռիվ գցեն: Միտումնավոր մոռանում են, որ մայր հարցում, սկզբունքային ամենակարևոր հարցում մեզ շեղել հնարավոր չէ, այն է՝ օր առաջ պետք է վերահաստատվեն սահմանադրական կարգերը: Բայց որպեսզի «Ազգային Միաբանությանն» էլ ձեռքի հետ չխփեին, չհարվածեին, մտածված մեր երիտասարդական թևի ղեկավարին՝ Վիլեն Արևշատյանին, ասացինք. հլը ջահելներով մասնակցեք, տեսեք, ընտրակեղծիքների ի՞նչ մեխանիզմներ կան, համ էլ՝ ընտրվեք: Արդյունքում ավագանու 48 թեկնածուներից «Ազգային Միաբանություն կուսակցության» երիտասարդական թևի առաջնորդ Վիլեն Արևշատյանը գրավեց առաջին տևը՝ ստանալով երկրորդ տևում ընթացողից 650-700 ձայն ավել:

Իշխանական այս սցենարն էլ կնշանակի չանցավ, հիմա ի՞նչ անեն: Օդուջրի պես պետք է ընդդիմությանը կռվացնեն, օդուջրի պես պետք է, որ անպայմանորեն բուն՝ մայր խնդիրներից շևեն ընդդիմության և ժողովրդի ուշադրությունը երկրորդական, ոչ սկզբունքային նշանակություն ունեցող, ոչ քաղաքական հարցերի վրա: Աչքի փուշ մնաց

«Ազգային Միաբանություն կուսակցությունը», մասնավորապես նաև ես: Ի՞նչ անեն, ո՞նց անեն, էս թերթերի ասածն իրենք գիտեն, որ մարդիկ լուրջ չեն ընդունում, որովհետև հասկանում են, թե դրանք որտեղից են սնվում: Ուրեմն, պետք էր էլի մեջտև բերեին մի ահավոր հերյուրանք, որ հանրության ուշադրությունը լոսանջելեսյան գնված բենզալցավորման կայաններից շնվի դեպի մի ուրիշ հանգամանքի վրա: Փորձված մեխանիզմ ունեն: Ո՞րն է դա. դեռ 2002 թ. դեկտեմբերի 27-ին հրապարակ իջեցրեցին այն լուրը, թե Տիգրան Նաղդալյանի սպանության հետևում կանգնած է Արտաշես Գեղամյանը: Հիմա կասեն՝ ինչու այդ դեպքը հիշեց, մոտենում եմ, ժողովուրդ ջան, հարցի պատասխանին: Այդ հերյուրանքները, բարեբախտաբար, ընդդիմադիր դաշտի թերթերից մեկում մանրամասն վերլուծության ենթարկվեցին, և փուչիկը պայթեց: Տղերքը չհանգստացան, դրանից հետո նույն այդ սպանություն կատարողին ասացին՝ Ալբերտ Բազեյանի և Արտաշես Գեղամյանի անունը տուր որպես պատվիրատու, ամենամեմ պատիժը կկրես: Մարդն այդ ամենի մասին դատարանում խոստովանեց. էդ երկրորդ փուչիկն էլ պայթեց: Մնացածի ու երրորդ փուչիկի մասին կասեմ խմբակցության անունից խոսելիս:

Ճանապարհը տանում է Հաագայի միջազգային տրիբունալ

Հարգելի՛ գործընկերներ, որ լարվածությունը փոքր-ինչ մնմվի, դիմում եմ հիմնականում մեր լրագրողներին. դուք, խնդրում եմ, արձանագրեք փաստը. Ազգային ժողովի այսօրվա այս քննարկումը բոյկոտում է կոալիցիան, այն պարզ պատճառով, որ կոալիցիայից և ոչ մի մարդ ելույթ չի ունեցել ու ոչ էլ ցուցակագրվել է: Սա խոսում է այն մասին, որ այս մարդիկ հաշտվել են դակիչ մեքենա լինելու փաստի հետ: Ցավ է, ողբ է: Ողբ է ոչ թե իրենց համար, այլ մեր ժողովրդի համար, որ նման օրենսդիր մարմին ունի: Սա թող հնչի որպես ներածական խոսք:

Մինչև իշխանական երրորդ փուչիկին անդրադառնալը, ուզում եմ ասել, որ շատ դաժան գտնվեցին այսօրվա իշխանությունները նույն կոալիցիայի հանդեպ: Տեսեք՝ ճիզվիտական ի՞նչ քաղաքականություն են վարում: Ճիշտ այս ամբիոնից կամ այնտեղից (հռետորն ակնարկում է նախագահությանը- *խմբ.*) հարգարժան Արթուր Բաղդասարյանը շատ կարևոր հարցեր է բարձրացնում, անգամ իսկ անվանական է մատնանշում, բացարձակապես ոչ մի ռեակցիա: Ի՞նչ՝ պատահականությո՞ւն է. իհարկե, ոչ. դա պարզապես հնինակազրկելու միջոց և ձև է: Ավելին. այն կենսահույզ հարցերը, որոնք բարձրացնում է «Օրինաց երկիրը», համոզված եմ, որ «Ազգային Միաբանությունը» և «Արդարությունը» կողմ կքվեարկեին, վիժեցվում են, օրակարգ չեն մտցվում: Նույնիսկ դրանց ընդդիմախոսում են նաև ընդդիմադիրի թիկնոցով քողարկված առանձին մարդիկ: Նույնը, ավա՜ղ, կատարվում է Հայ Հնափոխական Դաշնակցության հետ: Դարձյալ կերած փողերի մասին են անվանական ասում, ոչ մի ընթացք. դա էլ արդեն ուրիշ ձև է նրանց

վարկաբեկելու: Կամ էլ, չհասկացանք, էս քննեցին-քննեցին, հանրաքվեից առաջ ինչո՞ւ մեր հերոս զորավարները, այդ թվում իմ կողմից շատ հարգված Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդոսը, հանկարծ հիշեց «Դրոյի» գործի մասին, հետո «Վահան Հովհաննիսյան + 30» գործի մասին՝ հորդորելով, որ սպանության համար դատված մարդկանց անպայմանորեն ազատ արձակեն: Ինչո՞ւ եմ ես այս ամենի մասին առանձնահատուկ նշում, իբր, պատահական զուգադիպությունների մասին ասում: Արցախի իրական հերոս Սամվել Բաբայանի գլխին էն ինչ սարքեցին, դրանից հետո բացարձակապես նույն զորավարները մի անգամ ներում շնորհելու «պետիցիայով» հանդես չեկան, բայց հիմա հանդես են գալիս: Կամ էլ հենց այս նույն ամբիոնից հրահրեցին, որ լինի «Ազգային Միաբանություն»— Հանրապետական կուսակցության բախումը, որ դարձյալ երկուսը գարնանային ձնծաղիկի պես մաքուր դուրս գան: Քաղաքական ողջ դաշտն իրար միս է ուտում, հետադիմական են, հանրաքավե են բոյկոտում, էս են անում: Ջույգի հաշվարկը պարզ է. միջազգային հանրության համար թյուր տպավորություն ստեղծել, որ էլի իրենք են, որ երկիր են պահում, այսինքն՝ «պրեեմնիկ» օպերացիան շարունակվում է:

Հիմա բուն փուչիկին անդրադառնամ: Երբ Տիգրան Նաղդալյանի սպանության հետ կապված բանսարկությունները հօդս ցնդեցին, հաջորդ փուչիկին անդրադարձան: Հնարը գտան. Լևոն Աբրահամյանը, որը ՊԱԿ-ի գնդապետ էր, իբր, մահափորձ էր կազմակերպել Սերժ Սարգսյանի վրա և դա, բարեբախտաբար, «բացահայտվել էր»: Եվ, ի՞նչ եք կարծում, Լևոն Աբրահամյանին բանտում հորդորեցին. կասես, որ Գեղամյանն է այդ գործի հետևում կանգնած եղել և դատարանի դահլիճից ազատ կարձակվես: Մարդը սպա էր, թասիբ ունեցավ, ազնվություն ունեցավ՝ դատարանի դահլիճում այդ խարդավանքի մասին հրապարակեց:

Կարծում էի՝ էս մարդիկ հասկացան, որ երկրորդ անգամ նույն գետը չեն մտնի: Չէ, հիմա երրորդ սցենարն են գործի դրել. ոնց պտտվեցին՝ չկարողացան «Ազգային Միաբանությանը» վարկաբեկել (հանրաքվեի նախաշեմին ի՞նչ անեն, ո՞նց անեն, որ կեղծելով գալիք հանրաքվեն, ասեն. դե, մարդիկ ընդդիմությունից ոչ ոքի չէին հավատում, դրա համար էլ ասացին՝ ոնց կա, թող այդպես էլ մնա կամ էլ փորձենք իշխանություններին մեկ անգամ ևս): Հիմա էլ Մադաթյան Էդիկին (ԱԺ նախկին պատգամավոր, ՀՀ տրանսպորտի նախկին նախարար. – *խմբ.*) լուր են հասցրել Պոդոլսկ՝ ասելով. քո մոտիկ ընկերը քեզ դավաճանեց, վրադ ցուցմունք տվեց, մենք էլ դատարանի դահլիճից, տղամարդ էինք՝ խոսքներիս տերն էինք, ներան ազատ արձակեցինք: Արի Հայաստան, ասա, որ Արտաշես Գեղամյանն է պատվիրատուն եղել, մի բան, որ իրենց գործակալ Կծան Միշան արդեն Գեղամյանի անունը հնչեցրել է (խոսքը բարձրաստիճան պաշտոնյաների դեմ, իբր, կազմակերպված և բացահայտված ահաբեկչության մասին է. – *խմբ.*)՝ քեզ էլ դատարանի դահլիճից ազատ կարձակենք: Հիմա, ես համոզված եմ, որ այդ սցենարի հևհևակը պրն Քոչարյանը չէ, որովհետև նա, կարծում եմ, գիտի, որ ամերիկյան պրեզիդենտները երկրորդ ժամկետում մտածում են՝ ինչպես անեն, որ իրենց անունն

անպայման հիշատակվի պատմության դասագրքերում և ոչ թե մնացած օրերը Հաագայի միջազգային տրիբունալում դատվելով՝ նստեն: Բայց ես համոզված եմ նաև հարցի մյուս կողմի մեջ, որ այս ամենը պատահականություն չէ և այդ իսկ պատճառով էլ չի կանխվում: Ի դեպ, օգտվելով առիթից, լրատվամիջոցների օգնությամբ ուզում եմ ասել. եթե հիշատակածս մարդկանց որևէ բան սպառնում է, ապա «Ազգային Միաբանությունից» չի սպառնում, «Արդարությունից» չի սպառնում, այլ սպառնում է աշտարակցի Մուշևի բարեկամներից, Դիոնիս Մարգարյանի և Վանուշ Թորոսյանի բարեկամներից (վերջիններս, ինչպես նաև հայտնի գործարարար Ռաֆայել Շահմուրադյանը սպանվել էին տարօրինակ և չբացահայտված պայմաններում), սպառնում է ճիշտ այն մարդկանց կողմից, ովքեր կողոպտվել են, ովքեր կևեքվել են և որոնք այս երկրում այդպես էլ չհասան արդարադատության:

Ես համոզված եմ՝ հերթական անգամ բոլոր լրատվամիջոցներով հերյուրանքներ, լուտանքներ, տո հազար ու մի բան կտարածեն Գեղամյանի հասցեին, միևնույն է դրանք ինձ չեն կպնելու: Լոս Անջելես չեմ գնացել, որ այստեղ լվացած փողերը այնտեղ լվանամ, գնացել եմ այնտեղ հայրենակիցներիս հետ հանդիպելու: Հայաստանից փախուստի չեմ դիմել, որովհետև պոչիս ամենատարբեր ռանգի ու ջուռի մարդիկ չկան: Չի ստացվելու, պարոն Սերժ Սարգսյան, Ռոբերտին դեռ հանգիստ եմ թողում, որովհետև նա էլ է նրա ձեռքը կրակն ընկել: Այ, սա է իրական վիճակը, և ցավն այն է, որ այս ամենը կատարվում է ճիշտ այն ժամանակ, երբ վերահաս վտանգը չորս կողմից, ասես, դարանակալել է Հայաստան պետության գլխին: Կուսակցությանը կուսակցության դեմ են լարում, հարևանին՝ հարևանի, բարեկամին՝ բարեկամի՝ ներսից քայքայելով պետականությունը: Բաժանել են, որ տիրեն, գաղութ են դարձրել, իրենք էլ գաղութատերերն են: Պատմությունից հիշեցնեմ. գաղութատիրությանը վերջ տրվեց դեռ անցյալ դարի 60-ական թվականներին: Հիշեցնեմ նաև հետևյալը. երկու ճանապարհ ունենք. մեկն այն է, որ հենց այս նույն քաղաքական ուժերը պայմանավորվեն և օրենքի համաձայն, ժողովրդավարության նորմերին համաձայն սահուն իշխանափոխություն անեն և իշխանությունը տան իրական կրողին՝ ժողովրդին, իսկ երկրորդ ճանապարհը տանում է Հաագայի միջազգային տրիբունալ:

«Իրավունք», 30.IX.- 6.X.2005:

Մեր հանդիպումները Արտաշես Գեղամյանի հետ. «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր

Հարց– Առի՞թը Միացյալ Նահանգներ ձեր այս այցելության, հարգելի պրն Գեղամյան:

Պատասխան– ԱՄՆ իմ հիմնական առաքելությունը պայմանավորված էր այն գլխավոր հանգամանքով, որ հունիսի 30-ից հուլիսի 5-ը Վաշինգտոնում պիտի կայանար Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության Խորհրդարանական վեհաժողովի հոբելյանական նստաշրջանը: Ես հանդիսանում եմ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվիրակներից մեկը՝ ներկայացնելով ընդդիմադիր թևը:

Սա էր հիմնական առաքելությունը: Բնականաբար, ես չէի կարող չլինել Կալիֆոռնիայում, որտեղից քանիցս հրավերներ եմ ստացել, սակայն նոր հաջողվեց այնտեղ գտնվել, հանդիպումներ ունենալ մեր հայ համայնքի հետ, ինչու չէ՝ համալսարանական ուսանողների հետ, մասնակցել Գլենդելում մեծ հավաքի, ուր շուրջ 600 հայրենակիցների հարցերին պատասխանելով տվեցի լուսաբանություններ: Չորս տարբեր ամերիկահայ հեռուստակայաններում ելույթ եմ ունեցել: Բախտ վիճակվեց նաև Նյու Յորքում հանդիպում ունենալ Ս. Վարդան տաճարում կազմակերպված հավաքին, ուր ամերիկահայ բարեկամները, կարծում եմ, գոհացած են այն հարցադրումներից, որոնք հնչեցին իմ ելույթում:

Հարց– Ընդհանրապես ինչպե՞ս կգնահատեք այս վեհաժողովում Հայաստանի մասնակցությունը:

Պատասխան– Գիտեք, նման վեհաժողովները օգտագործում ենք իրազեկելու համար Եվրոպայի հանրությանը, Ամերիկային ու Կանադային՝ կենսական այն հարցերի մասին, որոնք հրատապ են այսօրվա Հայաստանի Հանրապետության համար: Ամերիկայի կողմը և ընդհանրապես ԵԱՀԿ-ի երկրները, բնականաբար, իրենց եզրակացությունները պետք է անեին իմ ու վեհաժողովի մասնակից պատգամավոր Վահան Հովհաննիսյանի ելույթներից. վերջինս մասնակցում էր որպես իշխանության մաս կազմող ՀՅԴ-ի անդամ:

Կարծում եմ, ամենից խիստ քննադատն անգամ, եթե փորձի վերլուծել ելույթները, կասի, որ ընծեռված հնարավորություններն օգտագործվել են լիովին: Այս համոզմունքը հայտնում եմ այն պարզ պատճառով, որովհետև ելույթիցս հետո տեսա թուրք և ազերի պատգամավորներին, որոնք ճնշումի բարձրացման խնդիր ունեցան ու դևահաբ էին ընդունում. նշանակում է, որ ելույթն իր ազդեցությունն էր թողել:

Հարց– Անցյալ տարվա մեր հանդիպումից հետո ընդդիմադիր շարժումը բավական աշխույժ գործունեություն ցուցաբերեց Հայաստանում: Դուք ևս այդ շարժման ետին կեցող կարևոր քաղաքական դեմքերից մեկն եք: Ինչպե՞ս կգնահատեք այսօր այդ շարժումը:

Պատասխան– Վստահաբար նկատի ունեիք անցյալ տարվա ապրիլյան ոչ թե ընդդիմության ոտքի կանգնելու փաստը, այլ համաժողովրդական վերելքը, որ խնդիր էր դրել իր առջև թոթափելու հայաստանյան ապազգային իշխանությունները: Դա ընդդիմության բարոյական հաղթանակն էր, այն է՝ մենք հերթական անգամ համոզվեցինք և համաշխարհային հանրությանը համոզեցինք, որ ներկայիս Հայաստանի իշխանություններն արդեն իսկ բարոյապես պարտված են, որովհետև իրենք մեր քաղաքական ընդդիմախոսությանը, մեր քաղաքական մնադրանքին, բացի մահակներից և ոչ մի բան առարկայորեն հակադարձել չեն կարող:

Բնականաբար, մենք թույլ ենք տվել սխալներ և դրանց մասին պետք է խորհենք, որ առաջիկայում ժողովրդին դեպի հավաքատեղիներ առաջնորդելիս զերծ մնանք այդ սխալներից:

Որո՞նք էին այդ սխալները:

Ըստ իս, թերևս ամենամեծ սխալն այն էր, որ մենք պետք է կանխագուշակեինք, թե իշխանություններն իրենց զինանոցից ինչ զենքեր գործի կդնեն և նախապատրաստեինք միջազգային կազմակերպություններին, դեսպանատներին, որոնք ուշի-ուշով հետևում են հայաստանյան իրադարձություններին, որ Հայաստանի իշխանությունը սրբորեն կատարի իր ստանձնած պարտավորությունները, պարտավորություններ, որոնց ներքո ստորագրել են Հայաստանի ղեկավարները, երբ անդամակցության հայտ էր ներկայացրել ընդունվելու Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն:

Սխալ էր նաև այն, որ ապրիլի 12-ին, երբ շուրջ 40 հազար մարդ էր հավաքվել Ազատության հրապարակում, որն այնուհետև գնաց նախագահական նստավայր (ուր ժողովուրդը տոնում էր իր հաղթանակը, որովհետև դա շատ մոտ էր), գիշերվա 1-ի սահմաններում 40 հազարից մնացին 6-7 հազար մարդ: Եվ այդ 6-7 հազար մարդիկ, ավա՜ղ, չկարողացան դիմակայել այն բիրտ ուժին, որը տարբերություն չդնելով թե տարիքավոր անձանց, թե կանանց, թե, ինչու չէ, երիտասարդների միջև, փաստորեն, մահակներով, էլեկտրաշոկով, ջրցան մեքենաներով ճնշեց համաժողովրդական այդ միանգամայն խաղաղ վերելքը:

Թերևս դրանք էին մեր սխալները:

Ահա այսպիսին էր ընդդիմության վերելքը, ահա այսպիսի պարկեշտ մարդկանցով էինք մենք համախմբված և այս մարդկանցով պարտության չպետք է մատնվեինք: Այդ

օրերին էր, որ ես համոզվեցի, որ իշխանություններն անվերադարձ պարտված են: Իշխանությունների խնդիրն այսօր պետք է լինի այն, որ իշխանափոխությունից հետո իրենք փոքր-ինչ բարոյական իրավունք վաստակած լինեն Հայաստանում ապրելու համար: Մեր գործը դժվարանում է, որովհետև իշխանափոխությունից հետո ժողովրդի ցասումն այնքան մեծ է լինելու, որ մենք վախենում ենք չկարողանանք զսպել մարդկանց հաշվեհարդ տեսնելուց:

Հարց– Իսկ եթե հաշվեհարդար եղավ, ապա նախկին իշխանության համար նույնը պիտի չլինի՞:

Պատասխան– Նախորդ իշխանությունների օրոք վարչապետ, Ազգային ժողովի նախագահ, Ազգային ժողովի նախագահի տեղակալ, պատգամավորներ չեն սպանվել: Այդտեղ են եղել քաղաքական երանգ ունեցող սպանություններ: Նախորդ վարչակարգի օրոք, երբեք ու երբեք, Լևոն Տեր-Պետրոսյանին բարև տալու համար մարդուն ծեծով չեն սպանել: Նախորդ իշխանությունների օրոք բոլոր անօրինականությունների, թալանի պայմաններում անգամ խաղաղ ցուցարարների նկատմամբ մահակներ, էլեկտրաշոկ չեն օգտագործվել:

Նախորդ իշխանություններին հեռացնելու հիմնական պատճառն այլ էր: Վերջիններիս մեղադրում էինք, որոնց ամենազորեղ քննադատներից մեկն էլ ես եմ եղել, դավաճանության մեջ, քանզի նրանք մտածում էին վերադարձնել ազատագրված յոթ տարածքները՝ փոխարենը Հայաստանի տարածքով անցկացնել Բաքու – Ջեյհան նավթամուղը, որը որոշակիորեն կախվածության մեջ էր դնում Հայաստանին հարևաններից: Ավա՜ղ, յոթը տարի անց տեսնում ենք, որ Վարշավայում, Եվրախորհրդի անդամ երկրների ղեկավարների գագաթաժողովի ժամանակ, ձեռք է բերվել պայմանավորվածություն, ըստ որի նախագահ Քոչարյանը համաձայնվել է վերադարձնել ազատագրված հինգ տարածքներ. այսինքն՝ համաձայնվել է անել այն, ինչի մասին ակնարկել էր Լևոն Տեր-Պետրոսյանը, երբ վերջինիս ճակատին դրոշմեցին «դավաճան» բառը և հնաշրջում կատարեցին:

Հարց– Ինչպես կգնահատեք ընդդիմադիր երեք գլխավոր կուսակցությունների՝ Ստեփան Դեմիրճյանի գլխավորած ժողովրդական կուսակցության, Արամ Սարգսյանի՝ Հանրապետություն կուսակցության և ձեր միջև եղած հարաբերությունները և որքանով եք համախոհ գործունեության դաշտ ստեղծել:

Պատասխան– Կուզեմ հստակեցնել մեկ բան. այսօր կուսակցությունները չեն, որ իշխանությունների նկատմամբ ընդդիմադիր են: Այսօր ողջ ժողովուրդն է ընդդիմադիր իշխանություններին: Իսկ ավելի ճշգրիտ լինենք. այսօր իշխանություններն են ընդդիմադիր ժողովրդին, թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում և թե՛ Սփյուռքում: Այդ իշխանություններն են ընդդիմադիրները, որ թշնամաբար են տրամադրված սեփական ժողովրդի նկատմամբ:

Հայաստանի քաղաքական ընդդիմադիր և ընդհանրապես բոլոր քաղաքական կուսակցությունները մեկ խնդիր են իրենց առջև դրել. այն է՝ Հայաստանի Հանրապետու-

թյունում հաստատել ժողովրդավարություն, որ գերիշխեն իրավունքները, օրենքները ու վերջ տրվի կաշառակերությանը, պետության մարմինը խժռող կոռուպցիային: Այս հիմնահարցերն են, որ խոչընդոտում են Հայաստանի Հանրապետության զարգացումը: Եվ այս հիմնահարցերը կազմում են այն առանցքը, որի շուրջ համախմբվել են թե՛ կուսակցությունները և թե՛ ժողովուրդը:

Եթե մենք կարողանանք միասին թոթափել այս հակաժողովրդական իշխանությունների լուծը, հավատացած եղեք, ազատ ու արդար ընտրության պայմաններում ժողովրդի հավաքական որոշումը կլինի ամենազորևը, կլինի ամենաճիշտը:

1995 թվականից ի վեր ոչ մի ընտրություն՝ լինի դա նախագահական, լինի դա խորհրդարանական, ազնիվ, արդար, թափանցիկ, ժողովրդավարական մթնոլորտում չի անցել: Մշտապես մենք ղեկավարության ղեկին ունեցել ենք մարդիկ, որոնք չեն ընտրվել, մարդիկ, որոնք պարզապես կաշառքով, ընտրակնճիքներով ընտրությունների արդյունքները խեղաթյուրելով զավթել են իշխանական լծակները: Եվ, ահա, հանցագործ մի ոհմակ՝ ձեռք ձեռքի տված, գիտակցում են, որ ժողովրդի կամքի հաղթանակման պարագայում անպայմանորեն բազմաթիվ հարցեր կծագեն:

Եթե մենք կարողանանք օրենքի գերիշխանություն հաստատել, իրավունքի գերիշխանություն հաստատել, համոզված կարող եմ ասել, որ Հայաստանը կթևակոխի զարգացման մի նոր փուլ:

Հարց– Վերջերս ընդունեցին Հայաստանի Սահմանադրության մեջ կատարվող փոփոխությունները, այն ինչպե՞ս ընդունվեց:

Պատասխան– Ամփոփ ուզում եմ անդրադառնալ դրա պատմությանը: Սրանից կես տարի առաջ «Ազգային Միաբանություն կուսակցությունը» և «Արդարություն» դաշինքը հանդես եկան համատեղ հայտարարությամբ, ուր մատնանշվում էին սկզբունքային այն երեք հարցերը, որոնց կիրառման պարագայում, սահմանադրական փոփոխության մասին է խոսքը, մենք անպայմանորեն ոչ միայն կմասնակցեինք Ազգային ժողովում դրա քննարկմանը, այլ նաև բացատրական աշխատանք կտանեինք ժողովրդական ամենալայն զանգվածների շրջանակներում՝ դրանք կյանքի կոչելու համար:

Իշխանություններն ի սկզբանե մերժեցին, ավելին, իրենցից օգտվող և սնվող լրատվամիջոցների ու հեռուստապաստառից լուտանքներ էին թափվում ընդդիմության վրա, ասելով, որ ընդդիմությունն ուզում է սահմանադրական այնպիսի փոփոխություններ ընդունի, որոնք կհանգեցնեն քաոսի:

Նախևառաջ մենք կարևորել էինք, որ կողմնակից ենք սահմանադրական այնպիսի փոփոխությունների, ուր օրենքով և Սահմանադրությամբ կհավասարակշռվեն գործադիր և օրենսդիր իշխանությունները: Թե չէ արդեն իսկ Նախագահի ինստիտուտը հիշեցնում է ասիական թագավորություն:

Երկրորդ կարևորագույն հարցը, որ դատական իշխանությունները գործեն բացարձակապես անկախ՝ թե՛ նախագահական, և թե՛ օրենսդիր ու գործադիր իշխանություններից, միայն ենթարկվեն Սահմանադրության և օրենքների պահանջներին:

Երրորդն այն էր, որ համայնքներում ունենանք ոչ թե նշանակովի, այլ ընտրովի պաշտոնյաներ: Խոսքը գնում է Երևանի քաղաքապետի մասին: Քաղաքապետությունը, ինչպես գիտեք, արդեն 15 տարի է նշանակովի պաշտոն է դարձել, արդյունքում ունենք օրըստօրե տգևացող քաղաքի կենտրոն. թամանյանական ճարտարապետական հուշարձան գոհարները պղծվում են զանազան առևտրական նպատակներով: Օպերայի հիանալի պուրակը գրեթե ամբողջությամբ զրկված է կանաչ գոտուց: Էլ չեմ խոսում անճաշակ շենքերի մասին, որոնք ամենաանկանոն կերպով տնադրվում են Երևանի, հատկապես կենտրոնական շրջաններում: Ու եթե Երևանի քաղաքապետը գիտակցի, թե ինքը հաշվետու է իր ընտրողներին և ոչ թե իրեն նշանակող Քոչարյանին, ապա նա այլ կերպ կվերաբերվի քաղաքամայր Երևանի նկատմամբ: Ոչ թե Քոչարյանի հասցեին գովասանքի խոսքեր շռայլելով է նա երկարաձգելու իր պաշտոնավարությունը, այլ երևանցիների սիրտը շահելով է ընտրվելու նա: Երևանցին իր քաղաքում տեր է զգալու և ոչ թե տնվոր:

Հարց– 2008 թ. նախագահական ընտրություններին կդնեք արդյո՞ք Ձեր թեկնածությունը:

Պատասխան– Եթե Ամերիկայում սպասում եք 2008 թվականին, ապա մենք Հայաստանում շատ ավելի շուտ ենք սպասում նախագահական ընտրություններին:

Հարց– Ի՞նչ դեր կստանձնեք արտահերթ նախագահական ընտրություններում:

Պատասխան- Կարևոր չէ Գեղամյանով ենք փոխարինելու Քոչարյանին, թե ոչ: Խնդիրն այն է, որ Հայաստանի Հանրապետությունը մենք կարողանանք վերադարձնել զարգացման սահմանադրական հուն՝ հիմքում դնելով ոչ թե այնպիսի համակարգ, ուր անձն ամբողջական դերակատարում ունենա, այլ ոչ թե սահմանափակված լինի գործողությունների մեջ, գործի Սահմանադրությամբ ու օրենքներով: Իմ խնդիրն է ամեն կերպ նպաստել նման համակարգի ձեղավորմանը: Այդ դեպքում մենք կունենանք երազելի, ինձ համար գոնե, երազելի այն Հանրապետությունը, ուր ամենևին էլ կարևորություն չի տրվի, թե ո՞վ է երկրի նախագահը, այլ տվյալ նախագահի պարագայում ժողովուրդը և հայրենիքը պաշտպանված կլինեն օրենքով: Մարդիկ, ի դեմս պետության, ունեն մի այնպիսի կենսաբարո ուժ, որը քաղաքացուն ներշնչում է հպարտություն, համոզմունք և հավատք իր լուսավոր ապագայի հանդեպ:

Հարց– Ինչպես եք տեսնում հայկական հարյուրամյա փորձառությամբ մեր ավանդական կուսակցությունների ներդրումը Հայաստանի ներքաղաքական կյանքում:

Պատասխան– Ես կարծում եմ, որ դա բոլորիս կորուստն է, երբ ավանդական կուսակցությունները, որոնք ունեն իրենց ստորաբաժանումները Հայաստանում, ըստ իս լիարժեքորեն չեն կարողանում օգտագործել այն վիթխարի ուժը, որը կա , մասնավորապես, տվյալ պարագայում Ռամկավար Ազատական կուսակցության ներքո: Ռամկավարների շարքերում ես գիտեմ լուսավոր ուղևներ, որոնք իրենց մտավոր կարողություններով կարող են շատ և շատ օգնել ոչ միայն Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությանը, այլ՝ հայ ժողովրդին ընդհանրապես:

Ես կարծում եմ, այս ուղղությամբ շատ անելիքներ ունեն թե՛ ավանդական կուսակցությունները և թե՛, ինչու չէ, նաև մենք: Եվ ասեմ՝ ինչպես եմ դա տեսնում. ես փորձելու եմ օգտվել այն բարեկամական վերաբերմունքից, որը հաստատվել է մասնավորապես ՌԱԿ-ի ամերիկյան թևի և «Ազգային Միաբանության» միջև՝ ակնկալելով ձեր մտավոր կարողությունների կիրառումը հայաստանյան կյանքում: Որոշակի հարցադրումներ կան, հատկապես հայության հետ կապված, սփյուռքահայության հետ կապված, որոնց մոտենալու ենք ավելի մասնագիտորեն:

Ասեմ ավելին. ռամկավարները հարյուրամյակի ընթացքում կարողացել են ապացուցել, որ իրենց համար երկրորդական է այն, թե ով է իշխանության գլխին, առաջնայինն իրենց համար Հայաստանի Հանրապետությունն ու հայությունն է և հայոց երկիրը: Ահա սա է այն օրինակը, որը պետք է բոլորիս համար ուղեցույց լինի: Կուսակցությունները կգան ու կհեռանան քաղաքական ասպարեզից, իսկ հայրենիքը մնայուն արժեք է, որը մենք աչքի լույսի պես պիտի փայփայենք և չփորձենք բզկտել՝ յուրաքանչյուրս մեր կողմ քաշելով:

Մեկ ազգ ենք, մեկ մշակույթ ենք, մեկ ճակատագիր ունենք, ուստի այդ ճակատագրին բոլորս պետք է տեր կանգնենք: Որովհետև եթե այսօր երեխան հիվանդ է և, եթե գիտենք մեկին, որը բժիշկ է, բայց այսօր նա այդ իշխող կուսակցությունների շարքում չէ, չի նշանակում, որ բուժումը մենք պետք է արգելենք: Դա հարիր չպետք է լինի հատկապես մեր երկրի նման փոքր պետության համար: Պետք է արժևորենք յուրաքանչյուր խոսք, հատկապես այն մարդկանց խոսքը, այն կուսակցությունների խոսքը, որոնք հարյուրամյա պատմություն ունեն: Կնշանակի կուսակցություններն իրենց մեջ ունեցել են այնպիսի ներուժ և այնպիսի կենսափիլիսոփայություն, որ կարողացել են պատմության այս խաչմերուկներում, ամենազանազան քաղաքակրթությունների շրջաններում չկորցնել ամենակարևորը՝ իրենց հայկական լինելը, Հայաստանին իրենց նվիրված լինելը:

Ես կարծում եմ, թե՛ իշխանությունների կողմից, թե՛ իշխանական այդ կոալիցիա կազմող ուժերի կողմից աններելի թողտվություն է, երբ չեն կարողանում օգտագործել ներուժը: Եվ սա ընդհանրապես Ռամկավար Ազատական կուսակցության պարագայում:

Հարց– Պրն Գեղամյան, հայտնի դարձավ, որ կարող է տեղի ունենալ գունագն հնափոխություններ նախկին սովետական հանրապետություններում, անշուշտ, Միացյալ Նահանգների միջամտությամբ: Նման արագ իշխանափոխություն նախատեսվում է արդյո՞ք Հայաստանում:

Պատասխան– Հարգելի Վարդիվառյան, մտովի հարց տանք. ի՞նչ, 2003 թ. Հայաստանի Ազատության հրապարակում, Մատենադարանի մերձակա հրապարակում ավելի սակավ մա՞րդ էր հավաքվել, քան Թիֆլիսում կամ Կիևում: Իհարկե, ո՛չ: Դեռ մի բան էլ ավելին: 2004 թ. ապրիլին ավելի՞ պակաս մարդ էին հավաքվել. իհարկե, ո՛չ: Ինչո՞ւմն է խնդիրը: Երբ խորանում ես, ապա վերադառնում ես դարձյալ ու դարձյալ 2001 թվական, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, երբ Քի Վեսթում տեղի ունեցավ Հեյդար Ալիև և Ռոբերտ Քոչարյան հայտնի հանդիպումը, Քոլին Փաուելի մասնակցությամբ, և

որի եզրափակիչ փուլին իր մասնակցությունը բերեց նաև նախագահ Ջորջ Բուշը: Բուշը պետական քարտուղար Փաուելի առաջ պայման էր դրել, որ ինքը հանդիպմանը կմասնակցի միայն այն պարագայում, երբ արդեն իսկ երկու կողմերը որոշակի համաձայնության կգան: Երկու կողմերը որոշակի համաձայնության եկել էին, մշակել էին այն սկզբունքները, որոնցով պետք է Ղարաբաղի հիմնահարցը գտներ իր լուծումը: Սակայն այդ բանակցությունից հետո իրենք խնդրել էին Միացյալ Նահանգներին, Ֆրանսիային, Ռուսաստանին (խոսքս Մինսկի խմբի համանախագահողների մասին է), աղերսել էին, ասելով, որ եթե այդ առաջարկներով վերադառնան Ադրբեջան և Հայաստան, ապա իրենց ժողովուրդը չի ընդունի այդ առաջարկները և առաջիկա նախագահական սպասվելիք ընտրությունները կձախողվեն: Ուստի, Ամերիկան, Ֆրանսիան և Ռուսաստանը հարկադրված կլինեն բանակցային ողջ գործընթացը սկսել սկզբից՝ սպիտակ, բաց էջից: Ահա այդ էր պատճառը, որ վերոհիշյալ երկրները 2003 թ. խայտառակ ընտրությունները հանդուրժեցին:

Ճիշտ է, ԱՄՆ-ի պետական քարտուղարության գնահատականները շատ հավասարակշռված ու կոշտ էին, քննադատաբար էին տրված, նույնը և Ֆրանսիայի: Այդպես էլ Ռ. Քոչարյանին շնորհավորանք որպես այդպիսին ոչ նախագահ Բուշը, ոչ էլ նախագահ Ժակ Շիրակը չհղեցին:

Վարշավայում արդեն իսկ նորից պայմանավորվածություն է ձեռք բերվել, արդեն Ալին կրտսերը և Ռոբերտ Քոչարյանը համաձայնության են եկել (ռուսական «Նեզավիսիմայա գազետա» թերթի հունիս ամսվա նախավերջին ուրբաթ օրվա համարում, հաղորդվում է, որ Սամեդյարովն ասել է, որ համաձայնությունը սենսացիա է դառնալու երկու երկրների հարաբերությունների մեջ):

Լրիվ նոր իրավիճակ է արդեն ստեղծվել. այս պարագայում հևափոխություն սկսելը մեր կողմից ճակատագրական սխալ կլիներ, որովհետև այդ դեպքում պարոն Քոչարյանը կասեր. երկիրը ներսից ընդդիմությունը թուլացրեց և թուլացած իշխանությունների վզով անբարեվարք պայմանագրեր պարտադրեցին: Այսինքն՝ իր սեփական արտաքին քաղաքականության ձախողումները կփորձեր գցել ընդդիմադիր քաղաքական ուժերի վրա:

Հարց– Ավելի քան երկու հարյուր տարիներ երկարող հարաբերություն է մշակած հայությունը Ռուսաստանի հետ: Որքան դժվար կլինի այս հանգրվանի սերտ կապերի թոթափումը այդ տարածաշրջանում:

Պատասխան– Դուք ճիշտ եք ասում, Ռուսաստանի հետ հարաբերությունների սկիզբը եղել է 1827-ի հայտնի պայմանագրից հետո և արդեն շուրջ երկու հարյուր տարվա պատմություն ունի: Հայաստանի նման երկիրը, որն այսօր ունի աշխարհագրական այն դիրքը, որի մասին չափազանց լավ գիտեք, նկատենք, որ Ռուսաստանի հետ ուղղակի սահման չունի: Մենք դատապարտված ենք անպայմանորեն հաշվի առնել մեր հարևանների ռազմաքաղաքական դաշինքները: Այսօր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում նավթատարի և գազատարի շինարարությունը Վրաստանին,

Ադրբեջանին և Թուրքիային դարձրել է ամենասերտ տնտեսական բարեկամներ:

Ասեմ ավելին, այսօրվա դրությամբ Վրաստանի պետական բյուջեն տարեկան կտրվածքով, միայն նավթի և գազի տեափոխումից և դրանից բխող տնտեսական խնդիրների լուծումից, արդեն ստանում է տարեկան 850 միլիոն դոլարի մաքուր եկամուտ: Այսինքն՝ Վրաստանի զարգացումները մեծապես պայմանավորված են ադրբեջանական նավթով և գազով: Դա, բնականաբար, գիտակցում են թե՛ ազերիները և թե՛ թուրքերը: Եվ իրենք ունենալով տնտեսապես ներազդելու նման զորև լծակներ, համոզված կարող եմ ասել, որ տնտեսական այդ դաշնությունը կվերածվի ռազմաքաղաքական դաշինքի: Մենք պետք է աչքի առաջ ունենանք նման զարգացում և իմանանք, որ մի օր էլ կարող է, ինչպես Թուրքիան է այսօր բլոկադայի ենթարկել Հայաստանի Հանրապետությունը, այնպես էլ Վրաստանը շինծու պատրվակով հարկադրված լինի նույնն իրականացնել Հայաստանի նկատմամբ: Կամ էլ՝ Վրաստանով մեր երկիր ներկրվող ապրանքների բեռնափոխադրման ծախսերը և հարկերն այնքան բարձր կդարձնեն, որ կյանքը Հայաստանում շեշտակի կթանկանա:

Մյուս կողմից՝ Իրանի այսօրվա իրավիճակը նպաստավոր չէ, երբ մամուլում գնահատվում է, որ արմատական ու պահպանողական իսլամիստ է դարձել երկրի նախագահը և երբ գիտենք Իրանի հանդեպ Միացյալ Նահանգների վերաբերմունքը:

Կամա թե ակամա այս պայմաններում մնում է Ռուսաստանի Դաշնության գործոնը, որի հետ Հայաստանի Հանրապետությունն ունի կոլեկտիվ անվտանգության դաշնագիր: Այսօր պաշտպանված ենք դրանով: Ու հարևաններից միակ երկիրը, որի հետ ռազմական համագործակցության դաշնագիր ունենք, դա Ռուսաստանն է, և նա գիտակցում է դա, ճնշումների հնարավորություններն էլ մեծ են, ինչը որ անթույլատրելի է: Ուստի, այս պարագայում Հայաստանը պետք է փայփայի նաև համագործակցություն հաստատի խաղաղության ՆԱՏՕ-ի շրջանակներում: Վաղը, մյուս օրը մեր բարեկամ երկիրը պետք է գիտակցի, որ եթե ինքը փորձի խառնվել հայաստանյան քաղաքականությանը, առավել ևս փորձի ճնշումներ կատարել, ապա Հայաստանը միշտ ունի այլընտրանքի ճանապարհ. դա հենց այդ ճանապարհն է, որի մասին ասացի:

Մենք պետք է Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և Եվրախորհրդի շահերը տարածաշրջանում օգտագործենք ի նպաստ Հայաստանի Հանրապետության:

Հարց– Երբ Հայաստանի մեջ իրավ ռամկավարական իրավիճակ ստեղծվի, կխորհե՞ք, որ Սփյուռքի մեր տնտեսական ուժերը կկարողանան օգնել մեր հայրենիքը:

Պատասխան– Ես դրանում համոզված եմ: Դուք աշխարհում չեք գտնի որևէ իրապես ժողովրդավարական երկիրը, որը հայտնված լինի մեկուսացման մեջ, և որի անվտանգությունը հարցականի տակ լինի: Բազմաթիվ օրինակներ կան, երբ գերհզոր պետությունները սատարում են ժողովրդավարության ուղին բռնած երկրներին: Մասնավորապես, եթե Հայաստանը Հարավային Կովկասի տարածաշրջանում դառնա ժողովրդավարության կղզին, Ամերիկայի Միացյալ Նահանգների կենսական շահերից է բխում, որ Իրանի հարևան երկիրը՝ Հայաստանի Հանրապետությունը, շնորհիվ իր

ժողովրդավարության զարգացման աննկարագրելի առաջընթաց ապրի, որով էլ կարելի է ցույց տալ նույն պարսիկներին, որ եթե դուք ընտրեք նմանատիպ ճանապարհ Ձեր ընդերքի հարստության պայմաններում, ապա դուք կապրեք ավելի լավ, քան այսօր:

Հարց– Հայաստանի մամուլի ազատության մասին ի՞նչ կասեք:

Պատասխան– Եթե թերթերի կտրվածքով ազատություն կա, ապա հեռուստատեսությամբ չկա: Մեկ օրինակ բերեմ ու վերջացնեմ: Վեց ելույթ եմ ունեցել վերջին մեկ տարվա ընթացքում, չորսը՝ Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ամբիոնից՝ Ստրասբուրգում, երկուսը՝ Եվրախորհրդում: Բոլորն էլ հայրենասիրական ոգով արտահայտված մտքեր էին, այն աստիճան, որ թուրքական և ադրբեջանական մամուլը իսկույն արձագանքեց: Սակայն իմ ելույթներից և ոչ մեկը Հայաստանի հեռուստատեսությամբ չներկայացվեց: Եթե սա մամուլի ազատության ճնշում չէ, ապա ի՞նչ է:

Հակոբ Վարդիվառյան

11 հուլիսի 2005 թ., Նյու Յորք

«Նոր Օր», Նյու Յորք, 13.VIII.2005: “Armenian Reporter”, New York, 20.VIII.2005.

Կենտրոնում հաղթել ենք մենք

– Պարոն Գեղամյան, տեսակետ կա, որ առանց իշխանությունների «դաբրոյի» ձեր կուսակցության երիտասարդական թևի ղեկավարը չէր կարող ընտրվել Կենտրոն համայնքի ավագանու անդամ՝ առավելագույն ձայներով: Պարզապես թույլ չէին տա:

– Շատ շնորհակալ եմ, որ նման տեսակետ են տիրաժավորում, որը մեկ անգամ ևս հաստատում է այն փաստը, թե ի՞նչ աստիճան է կարևորվում «Ազգային Միաբանություն» կուսակցությունը, որ անգամ իսկ մեր երիտասարդական թևի առաջխաղացումը, որը եղել է միայն և միայն այդ թևի կազմակերպչական աշխատանքի արդյունքում, այնքան է նշանավորվում, որ անպայման «դաբրո» պետք է տային: Կնշանակի «Ազգային Միաբանության» յուրաքանչյուր անդամ լուրջ վտանգ է ներկայացնում գործող իշխանությունների համար, և իրենք պարզապես չեն ցանկացել արհեստականորեն կրքեր բորբոքել՝ գիտակցելով, որ դրա արդյունքում հերթական անգամ կրելու են լրջագույն պարտություն:

– Կենտրոնում ձեր գործընկեր «Արդարություն» դաշինքի թեկնածուի նման պարտությունն այնքան է ոգևորել և «դուխ» տվել իշխանություններին, որ ոմանք արդեն իսկ միանշանակ երաշխավորում են սահմանադրական հանրաքվեի դրական ելքը՝ նշելով, որ ընդդիմությունն ապացուցեց իր անգործությունը:

– Իսկ ի՞նչ է, Կենտրոնի ընտրությունից հետո 440 հազար թոշակառուների թոշա՞կն ավելացրեցին իշխանությունները, օրինազանցություններին և կամայականությունների՞ն վերջ տրվեց, սպանություններ կատարած անձի՞նք դատարաններում պատժվեցին, որ հանկարծ նման «դուխ» ստացան: Չէ՞ որ այդ ամենը պահպանված է և ոչինչ չի փոխվել: Այնպես որ, ես չեմ հասկանում, թե կոնկրետ ի՞նչը պետք է նման աննախադեպ «դուխ» տար իշխանություններին: Իրականությունն այն է, որ ընդդիմությունը, ի դեմս «Ազգային Միաբանության», ջախջախիչ հաղթանակ կրեց Կենտրոնում, և մեր երիտասարդական թևի ղեկավար Վիլեն Արևշատյանը ավագանու անդամության 48 թեկնածուների մեջ գրավեց առաջին տեղը՝ երկրորդ տեղը զբաղեցրած թեկնածուից առաջ անցնելով շուրջ 600 ձայնով: Կենտրոնում մենք արձանագրեցինք կոնկրետ, գործնական հաղթանակ, իսկ բարոյական հաղթանակներ «Ազգային Միաբանությունն» ամեն օր է կրում, և բնավ պատահական չէ, որ անցած մեկ-երկու ամսվա ընթացքում կուսակցությանն անդամագրվելու դիմումներ արդեն հազարներով ենք ստանում:

– Ասացիք, որ «Ազգային Միաբանությունը» ջախջախիչ հաղթանակ կրեց Կենտրոնում: Ասվածից ենթադրվո՞ւմ եք, որ դուք հաղթանակ կրեցիք նաև «Արդարություն» դաշինքի հանդեպ, որի թեկնածուն Կենտրոնում պարտվեց:

– Իհարկե, չի նշանակում, որովհետև հաղթանակ տանում են քաղաքական

հակառակորդի հանդեպ: Իսկ «Արդարություն» դաշինքը մեր գործընկերն է, որի հետ մենք առաջիկայում դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու, որը տանելու է դեպի հաղթանակ: Այնպես որ, «Համայնքապետ» օպերացիայով որևէ մեկին չի հաջողվի ընդդիմության մեջ պառակտում գցել:

– Այդուհանդերձ, ինչո՞ւ «Արդարություն» դաշինքը, որը 2003-ի նախագահական ընտրություններում Կենտրոնում իր ստացած ձայների թվով երկրորդն էր, երեք տարի անց նույն համայնքում նման պարտություն կրեց: Համաձա՞յն եք թեկնածու Ռուզան Խաչատրյանի այն պնդման հետ, որ ընտրությունները Կենտրոնում լեգիտիմ չէին:

– Յուրաքանչյուր քաղաքական ուժ սեփական մասնակցությունը ընտրություններին գնահատում է՝ իր ձեռքի տակ ունենալով տեղեկատվության որոշակի աղբյուրներ և փաստեր: Եվ եթե մեր գործընկերները գտնում են, որ ընտրությունները լեգիտիմ չէին, ուրեմն նրանք իրենց ձեռքի տակ համապատասխան նյութեր և դիտարկումներ ունեն: Կոնկրետ մեր թեկնածուի պարագայում կարող եմ ասել, որ Վիլեն Արևշատյանն իր վստահված անձանց, ինչպես նաև տեղամասային հանձնաժողովների մեր անդամների միջոցով արեցին ամեն ինչ, որ ընտրությունները լինեն օբյեկտիվ, և կարողացան տեր կանգնել մեր թեկնածուի օգտին տրված ձայներին: Ինչ վերաբերում է «Արդարություն» դաշինքի թեկնածուի պնդումներին, թե ընտրություններում եղել են ապօրինություններ, ես իմ գործընկերներից խնդրել եմ ինձ տրամադրել իրենց ունեցած նյութերը, և դրանց ծանոթանալուց հետո միայն մենք մեր կարծիքը կհայտնենք:

– Համաձա՞յն եք այն տեսակետին, որ Կենտրոնում պարտությունը լուրջ հարված էր «Արդարություն» դաշինքի հնհնակությանը:

– Երբ 1812 թվականին Միխայիլ Կուտուզովը հանձնեց Մոսկվան, և Նապոլեոնը տիրեց Մոսկվային, այն ժամանակվա որոշ կարճատես քաղաքական գործիչներ ասում էին, թե Ռուսաստանը կործանվեց: Մինչդեռ, ամիսներ անց ճիշտ այդ նույն Կուտուզովի գլխավորած բանակը ջախջախիչ պարտության ենթարկեց Նապոլեոնի բանակին: Ուստի, «Արդարություն» դաշինքի հնհնակության անկման մասին նման լրջագույն հետևություններ անելը, կարծում եմ, խիստ վաղաժամ է:

– Կիսո՞ւմ եք Գալուստ Սահակյանի այն գնահատականը, որ «Արդարությունն» իր կին ներկայացուցչին հանձնեց առյուծի բերանը:

– Այն, որ այս իշխանությունները գիշատիչ են՝ այդ կարծիքին ես համաձայն եմ: Ինչ վերաբերում է գնահատականի երկրորդ հատվածին, ապա ես խիստ կասկածում եմ, թե ով ում բերանն է հանձնվել: Իշխանությունները դեռ շատ երկար են ճաշակելու իրենց անցկացրած բոլոր ընտրությունների դառը պտուղները:

– Պարոն Գեղամյան, դուք, որպես Կենտրոնի բնակիչ, մասնակցե՞լ եք ընտրություններին և ո՞ւմ օգտին եք քվեարկել:

– Ես ընտրություններին մասնակցել եմ և քվեարկել եմ Վիլեն Արևշատյանի օգտին:

Նաիրա Զոհրաբյան

«Հայկական ժամանակ», 30.IX.2005:

«Ազգային Միաբանությունը» կգործի միայնակ

– *Պարոն Գեղամյան, ինչո՞ւ «Ազգային Միաբանությունը» որոշեց չմիանալ սահմանադրական փոփոխությունները մերժող 16 կուսակցություններին և որոշեց բացել սահմանադրական «ոչ»-ի երկրորդ ճակատը:*

– Այն, որ «Ազգային Միաբանությունը» հանդես եկավ ինքնուրույն հայտարարությամբ, որին հաջորդեց իշխանական լրատվամիջոցների բարձրացրած աղմուկը, դա համոզեց մեզ, որ մեր ընտրած մարտավարությունը միանգամայն ճիշտ և տեղին է: Պարզվում է՝ իշխանությունները դարդ են անում, թե ինչո՞ւ ընդդիմությունը հանդես չի գալիս միացյալ ճակատով և կարեկցում են 16-ին, որ «Ազգային Միաբանությունը» չմիացավ համատեղ հուշագրին: Այս խուճապն արդեն իսկ ապացուցում է, որ այն սցենարը, որը մշակված էր իշխանական վերնախավում, այն է՝ աջակցել «միասնական» ընդդիմադիր ճակատի ստեղծմանը, այնուհետև վարկաբեկել և տապալել ընդդիմության միասնական գործողությունները, ձախողվեց: Իսկ ինչ վերաբերում է ինքնուրույն հանդես գալու մեր մարտավարությանը, ապա կուսակցության հայտարարության մեջ մենք հստակ ձևակերպել ենք սահմանադրական փոփոխություններին «ոչ» ասելու մեր հիմնավորումները: Մասնավորապես, «ԱՄ»-ն գտնում է անհրաժեշտ, որ ոչ միայն հնարավորինս մեծ թվով մարդիկ գնան, մասնակցեն հանրաքվեին, ասեն իրենց վճռական «ո՛չ»-ը, այլ նաև հանրաքվեից հետո տեր կանգնեն իրենց դիրքորոշմանը: Երկրորդ առաջարկը մենք ուղղել ենք ԱՄՆ-ի, ՌԴ-ի և ԵՄ երկրների դեսպանատներին: Հայտնելով մեր շնորհակալությունն իրենց պատրաստակամության համար՝ նպաստելու, որ հանրաքվեն անցնի ժողովրդավարության պայմաններում, մենք խնդրել ենք վերջիններիս, հանրաքվեի օրն իրականացնել ժողովրդավարական երկրներում լայնորեն կիրառվող «էկզիտպոլի» մոնիտորինգային գործողություն. այն է՝ ընտրատեղամասերի մոտ, անմիջապես քվեարկությունից հետո, անկախ մասնագետների կողմից հարցումներ անցկացնել, պարզելու, թե ընտրության մասնակիցների քանի՞ տոկոսն է սահմանադրական նախագծին ասել «այո», իսկ քանիսը՝ «ոչ»: Երրորդ, և ոչ պակաս կարևոր հանգամանքն այն է, որ հանրաքվեն հրաշալի հնարավորություն է բոլոր այն արտախորհրդարանական ուժերի համար, որոնք հայտարարում են, թե կուտակած հսկայական կազմակերպական և գաղափարական ներուժ ունեն՝ ի ցույց դնելու այդ ներուժը: Հրաշալի հնարավորություն է խորհրդարանական այն ուժերի համար, որոնք կարծում եմ, արդարացիորեն ասում են, թե ՏԻՄ ընտրություններում

իշխանությունների կողմից չարչրկվող հայտնի անհաջողությունները պատահականություն էին, հանրաքվեի ընթացքում ապացուցելու իրենց իրական մարտունակությունը: Իսկ եթե «Ազգային Միաբանությունը» ևս միանար 16-ի համատեղ հայտարարությանը, հաջորդ իսկ օրը իշխանությունները թմբկահարելու էին, թե բան չհասկացանք այս ընդդիմությունից, որի մի մասը հանրաքվեն բոյկոտելու կոչ է անում, մյուս մասը՝ «ոչ»-ի կողմնակից է, երրորդ մասը կոչ է անում մարզերում այլ մարտավարություն ընտրել, քաղաքում՝ մեկ այլ, և այդ կոնտեքստում էլ ոմանք իրենց գործընկերներին, հուրախություն իշխանությունների, քնքշորեն մեղադրեցին քաղաքական իդիոտիզմի մեջ: Եվ եթե նման իրավիճակում մենք հայտնեինք մեր անհամաձայնությունը մեր գործընկերների այս կամ այն քայլին, կամ արդեն հնչած քաղաքական հայհոյանք-բնութագրումներին, ապա անմիջապես հետևելու էր իշխանական քարոզչամեքենայի գրոհը, թե «Ազգային Միաբանությունն» պառակտում է ընդդիմադիր դաշտը և ական է: Այնպես որ, մենք ճիշտ մարտավարություն ենք ընտրել և իշխանություններին զրկել ենք այս ամենի մասին խոսելու հաճույքից: Բացի դա, մենք խիստ ուշադիր հետևում ենք բոլոր այն սոցհարցումներին, որոնք, ինչքան էլ կողմնակալ են, այնուամենայնիվ, ապացուցում են, որ, ի դեմս «Ազգային Միաբանության», գործ ունեն բարձր վարկանիշ ունեցող, բավականին կազմակերպված և ինքնաբավ քաղաքական ուժի հետ: Իսկ ինքնաբավ ուժը կարող է և պարտավոր է ինքնուրույն քաղաքականություն վարել՝ այդ հարցում լուրջ անհանգստություններ պատճառելով իշխանություններին: Երբ իշխանությունները կենտրոնացած են մեկ քաղաքական բևեռի վրա, նրանք կարող են հաշվարկել այդ բևեռի հնարավոր քայլերը, սակայն երբ գործ ունեն երկու ճակատի հետ, նրանք ստիպված են լինելու երկփեղկվել և պայքարել սահմանադրական «ոչ»-ի երկու բևեռների հետ միաժամանակ:

– Այսինքն, կարո՞ղ ենք ասել, որ «Ազգային Միաբանությունը», գիտակցելով իր կշիռն ու ուժը, չի ցանկանում մտնել միացյալ ընդդիմության միասնական պատասխանատվության տակ, որպեսզի նաև հնարավոր դափնիները չվերագրվեն այլ ուժերին:

– «Ազգային Միաբանությունն» իր թե՛ դրականի և թե՛ բացասականի պատասխանատուն է, և, այո, մենք չենք կարող արհեստականորեն կրել պատասխանատվություն 16-ի հնարավոր ոչ հեռանկարային և մեր կողմից չընդունվող այս կամ այն գործողությունների և քայլերի համար: Ուստի, որպեսզի իրականացվող բոլոր քայլերի պատասխանատվությունը լինի ճշգրտված, «Ազգային Միաբանությունը» որոշել է գործել առանձին: Բնականաբար, քարոզարշավի ընթացքում և կոնկրետ հանրաքվեի օրը մեր գործընկերների հետ կփոխանակենք երկուստեք հետաքրքրություն ներկայացնող լրատվություն և տեղեկատվություն: Ընդդիմության համար «ԱՄ»-ի այս որոշումից ողբերգություն սարքել պետք չէ, մինչդեռ իշխանությունների համար մեր որոշումն իրոք անակնկալ էր, որը ունենալու է լուրջ հետևանքներ. մենք զրկեցինք ՀՀ իշխանություններին գործելու մեկ, կենտրոնացված ճակատի դեմ: Ինչ վերաբերում է քաղաքական դափնիներին, ապա ի սկզբանե դափնեկիրը որոշված է. դա մեր ժողովուրդն է, որին ընձեռված է հիանալի հնարավորություն՝ թոթափելու վաղուց իրեն սպառած այս իշխանությունների բեռը:

– Պարոն Գեղամյան, միջազգային կառույցների բարյացակամ վերաբերմունքը սահմանադրական փոփոխություններին հիմք է տվել իշխանություններին ենթադրելու, որ եթե ընտրակեղծիքներն արվեն «նամուսով», ապա այդ կառույցները դրանց վրա աչք են փակելու: Նման վստահության պատճառ էր և՛ ԵԽ նախարարների կոմիտեի մոնիտորինգի խմբի ղեկավար Վեգեների նամակն ուղղված ԱԺ-ին, որտեղ նա հորդորում է ապահովել սահմանադրական «այո»-ն, և՛ Ջանի Բուքիքյոյի զգուշացումը, որ «ոչ»-ի դեպքում Հայաստանը լուրջ պրոբլեմներ է ունենալու:

– 2003-ի խայտառակ նախագահական և խորհրդարանական ընտրություններից հետո, երբ ԵԽ ԽՎ-ի և ԵԱՀԿ-ի կողմից ընդունվեցին համապատասխան փաստաթղթեր, որոնք գործող իշխանություններն անտեսեցին, մեր հասարակության կողմից դրսևորվեց որոշակի վերաբերմունք այդ կազմակերպությունների հանդեպ: Եվ եթե գոնե այս ընթացքում միջազգային այդ կառույցները տեր կանգնեին սեփական իսկ որոշումներից մեկ-երկուսին՝ պարտադրեին ՀՀ իշխանություններին բացել «Ա1+» հեռուստաընկերությունը կամ հետևողական լինեին ընտրակեղծարարներին պատժելու իրենց պահանջի մեջ, այդ ամենը մեր ժողովրդի շրջանում փոքր-ինչ հավատ ու վստահություն կներշնչեր այդ կազմակերպությունների հանդեպ: Ավա՜ղ, որևէ բան այդպես էլ չարվեց և այդ կառույցների բոլոր պահանջներն իշխանությունների կողմից մնացին անպատասխան: Եվ այն համոզչությամբ, որ միջազգային կազմակերպությունները հորդորում են կողմ քվեարկել սահմանադրական փաթեթին ու սպառնում են ինչ-ինչ հետևանքներով, թող նրանք նույն համոզչությամբ իրենց կարծիքը հայտնեին ֆրանսիացի կամ հոլանդացի ժողովրդի հանդեպ, որոնք մերժեցին ԵՄ-ի Սահմանադրությունը: Մինչդեռ, երբ Ֆրանսիայի գենետիկորեն ժողովրդավար հանրությունը «ոչ» ասաց ԵՄ-ի Սահմանադրությանը, նա մերժեց տվյալ կառավարությանն ու նախագահ Ժակ Շիրակը գնաց ժողովրդի կամքին ընդառաջ և արձակեց կառավարությունը: Նույն իրավիճակը Հայաստանում է. ժողովուրդը «ոչ» չի ասում սիրուն և գեղեցիկ շարադրված սահմանադրական փոփոխությունների տեքստին, այլ «ոչ» է ասում իշխանություններին, այն մարդկանց, ովքեր ոտնահարել և շարունակում են ոտնահարել գործող Սահմանադրության ոչ պակաս սիրուն և գեղեցիկ ձևակերպումները: Այնպես որ, թող միջազգային կառույցների շատ հարգելի ներկայացուցիչներն իրենք իրենց հարց տան, թե այդ ինչպե՞ս եղավ, որ դեռ մայիսին նույն այս կոալիցիոն ուժերն աննախադեպ խանդավառությամբ գովերգում էին առաջին ընթերցմամբ ընդունված սահմանադրական փոփոխությունների նախագիծը, իսկ 24 ժամ անց, նույնպիսի խանդավառությամբ սկսեցին գովերգել տրամագծորեն հակառակ սկզբունքների վրա խարսխված նախագիծ: Եվ մի՞թե այդ կառույցների համար հասկանալի չէ, որ այս իշխանությունների համար կարևորը ոչ թե բովանդակությունն է, այլ ժողովրդավար երևալու արտաքին էֆեկտները: Եվ եթե այս ամենի հանդեպ անտարբեր են պարոններ Վեգեներն ու Բուքիքյոն, ապա ես դրա համար ընդամենը ցավում եմ: Այդուհանդերձ, եթե այդ կառույցները իսկապես շահագրգիռ են հանրաքվեի ազատ և արդար անցկացմամբ, ինչպես բազմիցս ասվել է, ապա թե՛ պարոն Բուքիքյոն, և

թե՛ պարոն Վեգեներն իրենց կառույցներով հնարավորություն ունեն նպաստելու ընդդիմությանը, որն առ այսօր զրկված է այս հարցում ուղիղ եթերից, ներկայացնելու սեփական տեսակետը: Ընդ որում, սատարելու նաև ֆինանսապես, որպեսզի մենք կարողանանք, ինչպես իրենք են ասում, մեր կարծիքը ներկայացնելու ընտրողներին՝ օգտվելով վճարովի հեռուստաեթերաժամերից (կարծում եմ, իրենց մոտ չկան կասկածներ, թե ո՞ւմ են ֆինանսավորում երկիրը թալանող կլանները): Ես վստահ եմ, որ այդ կառույցներն առանձնահատուկ պայմաններ կստեղծեն թե՛ ընդդիմության և թե՛ դիմության համար, որպեսզի երկու կողմերն էլ հավասարապես կարողանան ներկայացնել իրենց տեսակետները:

– Պարոն Գեղամյան, դուք հիշատակեցիք Ֆրանսիայի օրինակը, որտեղ ԵՄ Սահմանադրության տապալումից հետո կառավարությունը հրաժարական տվեց: Սակայն մեր ղեկավարները, ի դեմս վարչապետի և Պնախարարի, արդեն իսկ հայտարարել են, որ հանրաքվեի տապալումը որևէ քաղաքական հետևանք իշխանությունների համար չի ունենալու:

– Ես սրտանց շնորհավորում եմ պարոն Քոչարյանին, որ իր փոխարեն արդեն պաշտպանության նախարարն է որոշումներ կայացնում և ինքն է որոշում, թե ո՞ր պարագայում ինչպես պետք է վարվի Ռոբերտ Քոչարյանը: Այս ավետիսը խոսում է արտահերթ նախագահական ընտրությունների մոտալուտ կայացման մասին: Այնպես որ, ձեր այդ հարցը ճիշտ կլինի վերահասցեավորել պարոն Քոչարյանին:

– «Ռոուզ-ռոթ» սեմինարի ընթացքում, ձեր կուսակցության փոխնախագահի հարցին ի պատասխան, թե արդյո՞ք ճիշտ չէր լինի հանրաքվեից հետո անցկացնել արտահերթ ԱԺ և նախագահական ընտրություններ, ԱՄՆ դեսպանը կրկին շեշտեց, որ Հայաստանում ընտրությունները պետք է լինեն հերթական:

– Ես պարոն Էվանսի հայտարարությունը կմեկնաբանեի հետևյալ կերպ. նա չի ասել, թե պարոն Կարապետյանի հարցադրումը տեղին չէ, այլ ուղղակի ասել է, որ հերթական ընտրություններին մնացել է ընդամենը 15 ամիս. այսինքն՝ հասկացրել է, թե այսքան դիմացել եք, դիմացեք նաև այդ 15 ամիսը, որը մեկ օրվա պես կանցնի և կգա իշխանափոխության անխուսափելի ու բաղձալի ժամանակը: Եվ ես ողջունում եմ Ջոն Էվանսի այն հայտարարությունը, որ 2007-ին և 2008-ին ԱՄՆ կանի ամեն-ինչ, որպեսզի ընտրությունները Հայաստանում անցնեն ազատ և արդար: Ինչպես նաև վստահ եմ, որ արդեն իսկ առաջիկա սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ընթացքում ԱՄՆ դեսպանատունը կանի ամեն ինչ՝ ապացուցելու ազատ և արդար հանրաքվե անցկացնելու երաշխավորը լինելու իր պատրաստակամությունը:

Նաիրա Զոհրաբյան

«Հայկական ժամանակ», 11.X.2005:

«Ի՞նչ կնշանակեն օրենքներն առանց բարքերի, ի՞նչ կնշանակեն բարքերն առանց հավատի...»

Հոկտեմբերի 22-ին Կառավարության նիստերի դահլիճում ասեղ գցելու տեղ չկար: «Ազգային Միաբանություն կուսակցությունը» անցկացնում էր հերթական V համագումարը: Դժվար էր ստույգ ասել՝ բազկաթոռներին տեղ ունեցող 650-ից ավելի պատվիրակնե՞րն էին ավելի շատ, թե՞ ոտքի վրա կանգնածները: Ինչևէ, «Ազգային Միաբանություն կուսակցության» շուրջ 1300 պատվիրակներ և հրավիրվածներ 1 ժամ 10 րոպե համակ լռությամբ և անսահման ուշադրությամբ ունկնդրեցին կուսակցության առաջնորդ Արտաշես Գեղամյանի բանավոր խոսքը, որն էլ առանց կրճատումների ներկայացնում ենք ընթերցողի դատին:

Սիրելի ժողովուրդ, մեր այս փոթորկահույզ օրերում չափազանց դժվար է ելույթ ունենալ, այն էլ հաճախակի, այսպիսի պատկառելի լսարանի առաջ այն առումով, որովհետև վտանգ կա, որ կարող ես կրկնվել: Խոստովանեմ, մտածում էի, այսօր մեր համագումարը, եթե ունենա իր կարգախոսը կամ նշանաբանը, ո՞րը պետք է լինի:

Ամենայն ուշադրությամբ նայել եմ հայկական տարբեր հեռուստաալիքների վերլուծական ամենօրյա ծրագրերը, ուշադրությամբ հետևել եմ պարբերականներին, դրանց հրապարակումներին: Ավա՜ղ, այդպես էլ դրանցում չգտա նշանաբանը: Բայց արդեն իսկ նման իրավիճակների համար փորձված ելքեր կան: Մտովի տեղափոխվեցի Հին Հունաստան, մեկ անգամ ևս ընթերցեցի, վերընթերցեցի ինձ առավել հոգեհարազատ Պլատոնի, Սոկրատեսի, Դիոգենեսի, Արիստոտելի՝ դարերի հորձանուտում իրենց արդիականությունը չկորցրած գործերը: Ընթերցեցի նաև մի շարք պոետների, լինի դա հին հունական էպիկական հրաշք էպոսների հեղինակ Հոմերոսը, լինեն հին հռոմեացիներ Վերգիլիոսը, թե Օվիդիոսը, ինչու չէ՝ ընթերցեցի նաև պատմիչներին՝ Հերոդոտին, Ստրաբոնին, մեր Եղիշեին, քերթողահայր Մովսես Խորենացուն, Փավստոս Բուզանդին, նաև մեր դարաշրջանին մի քիչ ավելի մոտ, 19-րդ դարի պատմիչներին՝ Սոլովյովին, Կլյուչևսկուն: Հիմա չստացվի, որ ընթերցածս եմ ուզում Ձեզ հաղորդել: Ի վերջո, գտա նշանաբանը և այն էլ Հորացիոյի մոտ: Խոսքս Համլետի ընկեր Հորացիոյի մասին չէ (խոսքն էլ Հարությունյան Համլետի մասին չէ, այլ Շեքսպիրի Համլետի), այլ հռոմեական բանաստեղծի, որը ժամանակակիցն էր Հուլիոս Կեսարի, Օգոստոս կայսրի: Եվ այնտեղ

զարմանահրաշ ու այսօրվա համար էլ խիստ արդիական տողեր գտա: Եվ այդ տողերը հետևյալն են. «Ո՞րն է օգուտը զուր գրված օրենքներից այնտեղ, ուր չկան բարքեր: Ի՞նչ կնշանակեն փուչ օրենքներն առանց ադաթների: Ի՞նչ կնշանակեն օրենքներն առանց բարքերի, ի՞նչ կնշանակեն բարքերն առանց հավատի»: Ճիշտ և ճիշտ այսօրվա մեր քաղաքական իրավիճակի բնութագրականն է, որի պայմաններում գրվել է նոր Սահմանադրություն, բայց ուր բարքեր չկան: Եթե անգամ իսկ այդ բարքերը կան, ապա դրանք թղթի վրա են: Եվ այդ բարքերը մեր հավատքից չեն գալիս: 20 և կես դար առաջ գրված տողեր են: Բայց կարծես թե Հորացիոն այսօր Հայաստանում է ապրում, ասես թե նա ականատես է այն թշվառության, մտքի թշվառության մասին է խոսքը, իշխանությունների ինքնագոհության խրախճանքին, որը ծավալվել է թե հեռուստատեսությամբ, թե մամուլով, թե հենց այս նույն դահլիճում օրեր առաջ, երբ փորձում էին բարքերի իսպառ բացակայության պայմաններում, հավատքի իսպառ կորստի պայմաններում վզներովս նոր օրենք փաթաթել:

Ուստի, Հանրապետությունում ստեղծված իրավիճակի ստույգ գնահատականը տալու համար վերհիշենք 2003 թվականի իրադարձությունները, որովհետև այսօրվա իրավիճակը մեծապես պայմանավորված է 2003 թվականով, իսկ եթե ուզում եք ավելի ճշգրիտ լինեմ՝ 2002 թ. ամառային ամիսներով: Եվ, այսպես, ի՞նչ տեղի ունեցավ այն ժամանակ: 2002 թ. «Ազգային Միաբանություն կուսակցությունը» «Հանրապետություն» կուսակցության և Հայաստանի ժողովրդական կուսակցության հետ եկան պայմանավորվածության, որ այս իշխանությունների բեռը թոթափելու համար պետք է ստեղծվի միասնական ճակատ: Բոլոր խնդիրները ճշգրտված էին, կրկնում եմ, խոսքը 2002 թվականի ամռան մասին է: Այնուհետև վերջին րոպեին միացավ ևս մեկ քաղաքական ուժ: Եվ սեպտեմբերին, երբ գործուղման մեջ էի Հարավաֆրիկյան Հանրապետությունում (գործուղումս, բնականաբար, Ազգային ժողովից չէր, այլ համաշխարհային պառլամենտական անկախ կազմակերպություն կա, ուր ներգրավված են 105 երկրների պառլամենտականներ, «Պառլամենտականներ՝ գլոբալ գործողության համար», այդպես է այդ կազմակերպությունը կոչվում), ընկերներս հեռաձայնեցին Յոհաննեսբուրգ և հաղորդեցին, որ եռյակի, այն է՝ «Ազգային Միաբանություն կուսակցության», «Հանրապետություն» կուսակցության և Հայաստանի ժողովրդական կուսակցության, առաջարկն այնքան գրավիչ և հրապուրիչ է եղել, որ տասնյակ ուժեր են ուզում միանալ և պատրաստ են դնել իրենց ստորագրությունը, ավելին՝ շատերը ստորագրություններն արդեն իսկ դրել են եռյակի հռչակած սկզբունքների ներքո: Եվ 3 կուսակցություններն ընդարձակվեցին, դարձան 16:

Այնուհետև թևակոխեցինք նախագահական ընտրությունների փուլը: Կրկնում եմ, բոլոր հարցերը եռյակում ճշգրտված էին: Նախագահական ընտրությունների նախաշեմին պայմանավորվածությունները փոքր-ինչ խախտվեցին: Ընդդիմադիր ընդհանուր ճակատը բաժանվեց 2 մասի. մեկի հիմքում հետո ստեղծվեց «Արդարություն» դաշինքը, մյուսը՝ «Ազգային Միաբանությունը», որի հետ էին Սոցուժերի միավորումը և Հայաստանի

կոմկուսը: Ավելին, մարտավարական խնդիրներից ելնելով՝ որոշում կայացվեց, որ «Ազգային Միաբանության» թեկնածուին, այն է՝ ինձ, սատարելու համար մեր դաշնակիցները ևս իրենց 2 թեկնածուներն առաջարկեն նախագահական ընտրությունների ժամանակ: Կոմկուսից առաջարկվեց Վլադիմիր Դարբինյանի, Սոցուժերից էլ՝ Գառնիկ Մարգարյանի թեկնածությունը: Քարոզարշավի ողջ ընթացքում իմ գործընկերները, մեր դաշնակիցները, ավա՜ղ, բերանները ջուր առած դրվատանքի մի նախադասություն չասացին ո՛չ «Ազգային Միաբանության», ո՛չ էլ նրա լիդերի հասցեին: Բացարձակապես ոչ մի խոսք: Քարոզարշավի ամբողջ ընթացքում միակ մարդիկ, ովքեր կոմկուսից եկել են հետս, եղել են մեր Գագիկ Թադևոսյանը, Խորեն Սարգսյանը և Նորիկ Պետրոսյանը: Ասեմ ավելին. քարոզարշավի վերջին օրը մեր գործընկերներն իրենց հեռուստաժամը տրամադրեցին ընդդիմադիր թևի մյուս թեկնածուի գովազդին, որի ընթացքում իմ դաշնակիցները, մեր դաշնակիցները հայտարարեցին, որ իրենց ձայները տալիս են մյուս թեկնածուին: Եվ, փաստորեն, ստացվեց այնպես, որ ընտրությունների քարոզարշավի ավարտին, այն է՝ նախավերջին օրը, մոլորության մեջ գցեցին մեր բոլոր կողմնակիցներին, նրանց հասկացնելով, ասելով, որ Գեղամյանն իր թեկնածությունը հանում է: Ի՞նչ, պատահականություն էր սա: Իհարկե, ոչ: 16 կուսակցություն էին՝ 9-ը մի կողմում, 7-ը՝ մեր: Եվ ամենահետաքրքրականն այն է, որ այս բոլորը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ հեռուստատեսությամբ հեռարձակվեց հայտնի բանավեճը իմ և Սերժ Սարգսյանի միջև: Բանավեճ, որը կարող էր շրջադարձային դառնալ ընդդիմության հաղթանակի ճանապարհին: Այսինքն՝ դրան հաջորդած գործողությունների սցենարը գրվեց ոչ թե ընդդիմադիր դաշտում, այլ նախագահականում և, ի պատիվ իրենց, լավ էլ կարողացան անցկացնել:

Ինչևէ. ընտրությունների առաջին փուլը տեղի ունեցավ խայտառակ խախտումներով: Կոչ արեցինք մեր գործընկերներին՝ ոչ մի պարագայում չգնալ երկրորդ փուլ: Հորդորում էինք, որ երկրորդ փուլին մասնակցությունը ոչ այլ ինչ է, քան առաջին փուլի անօրինականությունների լեգիտիմացում, օրինականացում: Չլսեցին և տեղի ունեցավ այն, ինչ եղավ: Դրանից հետո, կրքերը հանդարտեցնելու համար, ապրիլի 16-ին Սահմանադրական դատարանն ընդունեց հայտնի որոշումը, ուր ուղղակիորեն նշված էր, որ մեկ տարվա ընթացքում նորընտիր Ազգային ժողովը պետք է քննության առարկա դարձնի հանրաքվեի մասին օրենքում համապատասխան փոփոխությունների հարցը, որից հետո էլ համաժողովրդական հանրաքվեի դնի Ռ.Քոչարյանի վստահության հարցը: Հենց այդ որոշումն էլ պատճառ դարձավ, որ խաչակրաց արշավանք սկսեցին արդեն ոչ միայն «Ազգային Միաբանության», այլ նաև «Արդարություն» դաշինքի դեմ: Իշխանությունների հաշվարկը պարզ էր, այն է, որ եթե «Ազգային Միաբանություն» և «Արդարություն» դաշինքը կարողանան գոնե պահպանել այն ձայները, որ անգամ բազմաթիվ կեղծիքների արդյունքում ժողովուրդը տվել էր իրենց, իսկ ժողովուրդը նախագահական ընտրությունների ժամանակ տվել էր ոչ ավել, ոչ պակաս, քան քվեների 51%-ը ընդդիմադիր դաշտի թեկնածուներին, ապա նորընտիր Ազգային ժողովում

ունենալով մեծամասնություն, անտարակույս, հանրաքվեի օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը և հանրաքվեն անցկացնելու օրինագիծը կգտնեին դրական լուծումներ: Ահա սա էլ եղավ հիմնական պատճառը, որ իշխանություններն երկրորդ անգամ գնացին էլ ավելի խայտառակ կեղծիքների: Դրան հաջորդեց այն, որ, այնուամենայնիվ, մասնակցեցինք նորընտիր Ազգային ժողովի աշխատանքներին՝ նպատակ և խնդիր հետապնդելով՝ ինչ գնով էլ ուզում է լինի հանրաքվեի օրենքում փոփոխությունների հարցը մտցնել օրակարգ և դարձնել քննարկման առարկա: Գործող կանոնակարգին հակառակ արվեց ամենը, որ դա տեղի չունենա: Սրան էլ հաջորդեց ընդդիմության համատեղ բոյկոտի գործընթացը: Բոյկոտեցինք Ազգային ժողովի նստաշրջանները, մինչդեռ ամենահետևողական աշխատանքներն էինք կատարում՝ լինի դա Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովը, լինի դա ինտերպառլամենտը, լինի դա ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովը: Այնուհետև 2004 թ. փետրվար ամսից սկիզբ առավ համաժողովրդական վերելքը, որն իր գագաթնակետին հասավ ապրիլի 5-ին, երբ իշխանությունները փորձեցին ուժ կիրառել «Ազգային Միաբանության», կրկնում եմ, «Ազգային Միաբանության» հանդեպ, որովհետև ապրիլի 5-ի հանրահավաքը միմիայն Ձեր բոլորի ջանքերով կազմակերպված հանրահավաք էր: Առաջին անգամ մահակավորները, սափրագլուխներն իրենց ուժերը փորձեցին ճիշտ այդ օրը և ծեծուջարդի ենթարկեցին լրագրողուհու՝ Աննա Իսրայելյանին, կոտրեցին տեսախցիկներ: Ուժերի փորձարկում էր, կարծեցին «Ազգային Միաբանություն կուսակցության» ակտիվին, համակիրներին կկարողանան դրանով սաստել, վախեցնել: Բնավ ոչ մի բան նրանց մոտ չստացվեց: Չստացվեց, որովհետև դրանից հետո արդեն ընդդիմության համատեղ հանրահավաքներ տեղի ունեցան Ազատության հրապարակում, որոնք իրենց կուլմինացիային հասան ապրիլի 12-ին: Ապրիլի 12-ի լույս 13-ի դեպքերի մասին բոլորդ գիտեք: Հիշեցման կարգով ասեմ, որ ամենավտանգավոր պահերին (ուզում եմ օգտվել առիթից և շնորհակալություն հայտնել) կողքիս կանգնած էին «Հանրապետությունից» Արամ Զավենի Սարգսյանը, Ալբերտ Բազեյանը, Սմբատ Այվազյանը, նաև՝ Ալեքսան Կարապետյանը, Գագիկ Կոստանդյանը և մեր մյուս գործընկերները: Երկու կուսակցություն էր կրակագծում: Դրան հաջորդեցին այն դեպքերը, որոնց մասին դարձյալ բոլորդ տեղյակ եք: Այն է, լկտիաբար խուզարկեցին տունս, ես էլ այնտեղ էի, որ հանկարծ բնավորություններին համաձայն զենք չգցեն, հաշիշ չգցեն (հաշիշ եթե գցեին էլ, միևնույն է, մարդիկ չէին հավատա, գիտեն, որ կյանքում ծխած չկամ): Ուրեմն, մեր հարգարժան «Հայլուրը», ողջունում եմ Ձեզ՝ Տաթևիկ (Գեղամյանը դիմեց դահլիճում գտնվող «Հայլուրի» լրագրողուհուն.-*խմբ.*), հաղորդեց, որ Արտաշես Գեղամյանը դիմել է փախուստի, գտնվելու վայրը չգիտենք:

Այս ամենին հաջորդեց այն, որ «Ազգային Միաբանություն կուսակցությունը» նպատակահարմար գտավ և որոշում կայացրեց, որ մեր խմբակցությունը, այնուամենայնիվ, գնա Ազգային ժողով և մասնակցի նիստերին, որովհետև արդեն իսկ մեզ զրկել էին ցանկացած ամբիոնից, ժողովրդի հետ հաղորդակցվելու ցանկացած տարբերակից:

Սենք, ճիշտ է, կարող էինք շարունակել հանրահավաքների կազմակերպումը, բայց, վերջին հաշվով, Հանրապետությունում ստեղծված իրավիճակում խելացի չէր լինի ժողովրդին վտանգելը, ավելին՝ առավել ևս դրա իրավունքը չունեինք: Այն բոլոր հարցերը, որոնք բախտորոշ էին մեր երկրի ներկայի և ապագայի համար, անշուշտ, մեր կողմից մանրակրկիտ վերլուծության ենթարկվեցին ոչ միայն կուսակցության գրասենյակներում, այլ նաև Ազգային ժողովի ամբիոնից՝ լինի դա բյուջեի քննարկումը, լինի դա Իրաք զորամաս ուղարկելու հարցը, լինի դա ավանդների փոխհատուցումը: Ասել է թե՝ «Ազգային Միաբանությունը» միարժեքորեն ձևակերպած իր դիրքորոշումը ցանկացած հարցի վերաբերյալ մշտապես ներկայացրել է մեր ժողովրդի դատին:

Այնուհետև մեջտեղ եկավ սահմանադրական փոփոխությունների հարցը: Այս հարցում նաև «Ազգային Միաբանություն կուսակցությունը» որդեգրեց քաղաքականություն, որը ձևակերպվեց մեր հայտնի պահանջների մեջ, որին կանդրադառնամ մի փոքր ուշ: Եվ ասես թե նույն պարագայում, ինչպես և 2002 թ. սեպտեմբեր ամսին, դարձյալ 16 կուսակցություններ հանդես եկան ստորագրությամբ: Մեղադրանքներ հնչեցին «Ազգային Միաբանության» հասցեին, որ, իբր, «Ազգային Միաբանությունն» անջատողական քաղաքականություն է վարում և չի միանում 16-ի ֆորմատին: Մեղադրողը 16-ը չէ, այլ Հանրային հեռուստատեսությունն ու իշխանական լրատվամիջոցներն են: Այստեղ 2 պատճառ կարելի է նշել. մեկն այն է, որ իրենք ևս այն աստիճան են զզվել այս իշխանություններից, որ ուզում են օր առաջ միանանք և ժողովրդի շալակից թոթափենք այս իշխանությունների բեռը, մյուսն էլ այն է, ինչ իրականում է. կոկորդիլոսի արցունքներ են թափում, որովհետև 16 է, էլի, կմիանային, այնուհետև շատ կարճ ժամանակ անց, ասած երևանցու՝ «սոլդատսկի պրիչին» կբռնեին, կսկսեին տակներիցս փախնել, ինչի ականատեսն ենք արդեն իսկ այսօր: Երբ միացան, փաստաթուղթը ստորագրեցին, հետո էլ, ուրեմն, կարկառուն գործիչներից մեկը կանգնեց հայտարարեց, այն էլ մամուլի ասուլիսում, որ առնվազն «քաղաքական իդիոտիզմ» է Սահմանադրության փոփոխություններին «ոչ» ասելը: Բոլոր հեռուստաալիքները ցուցադրեցին դա: Ընդդիմադիր դաշտից, 16-ից էր ասողը: Ասուլիսների շարան եղավ, հրավերները տարափի պես տեղացին մարքսիստ Դավիթ Հակոբյանի գլխին: Էս մարդու կուսակցությունում էլ ընդամենը 3 հոգի են՝ 1-ը շնչավոր, 2-ը անշունչ: Շնչավորը ինքն է, անշունչներից մեկը՝ Մարքսի նկարն է երիտասարդ հասակում, երկրորդը՝ Մարքսի նկարը հասուն տարիքում: *(Աշխատություն դահլիճում):* Մինչդեռ նա հանդես է գալիս որպես ընդդիմադիր գործիչ, ցանկացած հեռուստաալիք էլ էկրան է տրամադրում: Վերջերս էլ սույն անձնավորությունը «Հայլուրի» «360Ե» վերլուծական ծրագրով հայտարարեց, որ փոշիացել է ընդդիմությունը, վերջինիս էլ «ինքի բիր» անվանեց: Ինչպես ես հասկանում եմ, այս մարդը բացատրական լուրջ աշխատանքի կարիք է զգում: Եվ այդ աշխատանքը կտարվի թե՛ մեր տարածքային կազմակերպություններում և թե՛ հանրաքվեի հարցերը կանոնակարգող մեր շտաբի կողմից:

Այժմ վերլուծենք ու տեսնենք, թե սահմանադրական փոփոխությունների հետ ի՞նչ

ձևափոխումներ տեղի ունեցան: Դեռ ապրիլ ամսին կոալիցիայի անդամ կուսակցությունները Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ քննարկման առարկա էին դարձրել Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու իրենց տարբերակը: Հիշեցնեմ, ինչ ջանասիրությամբ հիմա են ասում «այո», նույն ջանասիրությամբ, դեռ մի բան էլ ավելի կրքոտ, առաջին ընթերցման ներկայացրած փաստաթղթի գովերգումն էին կատարում ցանկացած հեռուստաալիքով: Դեռ մի բան էլ ջիգյարով, որովհետև իրենք էին գրել: Փոփոխությունները հունիսին անցավ առաջին ընթերցմամբ, կոալիցիայի մաս կազմող կուսակցությունները մի մարդու պես կողմ քվեարկեցին, վերջում էլ ընդդիմությանը ջիգրու ծափահարեցին: Անցավ մի շաբաթ, Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի Վենետիկի հանձնաժողովը, որը մասնագիտանում է Եվրախորհրդի անդամ երկրներում սահմանադրական փոփոխությունների և սահմանադրությունների ընդունման հարցերում, եզրակացություն տվեց: Եզրակացություն արեց, համաձայն որի առաջին ընթերցմամբ ընդունված այդ փաստաթուղթը բացարձակապես չի համապատասխանում այն պահանջներին, որոնք Եվրախորհրդի կողմից դրված են Հայաստանի Հանրապետության առջև: Վենետիկի հանձնաժողովին նույն կրքոտությամբ հակադարձեցին կոալիցիայի մաս կազմող կուսակցությունները, թե՝ առաջին ընթերցմամբ ընդունված փաստաթղթից մի քայլ անգամ չենք զիջի: Այնուհետև վենետիկցիները հանդիպեցին պարոն Քոչարյանին: Արդեն իսկ համոզված կարելի է ասել, որ նա վերջիններիս տրտնջաց, տրտնջաց՝ ասելով, որ դե հիմա դուք իմ հալը տեսեք ոնց է: Մի կողմից հետաղիմական, կարծրացած մտածելակերպ ունեցող կոալիցիան է, որը համառորեն չի ուզում Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական փոփոխություններ լինեն, մյուս կողմից էլ ընդդիմությունն է, որը ընդհանրապես բանակցությունների չի գնում: Ուրեմն, տեսեք, թե ինչքան մեծ ջանքեր են պահանջվելու ինձնից՝ մեծ դեմոկրատիցս, Դեմոկրիտի քաղաքական ժառանգորդից, այս փոփոխությունները կյանքի կոչելու համար: Հետո կանչեց կոալիցիային, տղերքի ձեռքերը ոլորեց, և ի հայտ եկավ այն փաստաթուղթը, որն էլ դրվեց արդեն երկրորդ ընթերցման: Ըստ որում, երկրորդ ընթերցման դրված փաստաթուղթը ոչ մի աղերս չունի առաջին ընթերցմամբ ընդունված օրինագծի հետ: Սկզբունքային տարբեր մոտեցումներ են որդեգրված, տարբեր հարցադրումներ կան այնտեղ: Մտածում եմ՝ ի՞նչ համեմատություն անեմ, որ փաստաթղթի այս տրանսֆորմացիան ավելի հասկանալի լինի: Հիշեցի մի անեկդոտ, ժողովուրդ ջան: Ուրեմն, հավին հարցնում են՝ 2003-2005 թթ. ամենամեծ նվաճումդ որն է եղել (բերված տարեթվերը համընկնում են կոալիցիայի իշխանավարման ժամկետին.- *խմբ.*): Հավը պատասխանում է. ամենամեծ նվաճումս այն է, որ 5 կգ-անոց ձու եմ ածել: Հարցնում են, իսկ ամենամեծ երազանքդ որն է: Պատասխանում է, ամենամեծ երազանքս էլ այն է, որ 10 կգ-անոց ձու ածեմ: Ասում են՝ շատ լավ: Աքլորին են հարցնում, իսկ քո ամենամեծ նվաճումը որն է եղել: Պատասխանում է, ամենամեծ նվաճումս եղել է այն, որ հավը 5 կգ-անոց ձու է ածել: Հարցնում են, իսկ ամենամեծ երազանքդ որն է: Պատասխանում է, ջայլամների մռութը կոտրելը, որովհետև գիտի, որ էդ 5 կգ-անոց ձուն իրենից չէ,

ջայլամներից է: *(Ծիծաղ, ծափահարություններ):* Եվ, այսպես, ի՞նչ կցուցանե առակը: Առակը կցուցանե այն, որ այս Սահմանադրությունը կոալիցիայի ծնունդը չէ, որ այս կոալիցիան այս Սահմանադրությունը որպես 5 կգ-անոց ձու ածել է ոչ թե իրենց ղեկավարների միջամտությամբ, այլ ջայլամների, ըստ որում՝ տվյալ պարագայում ջայլամները՝ Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը ոմանց կողմից կարող են ընկալվել որպես դրական կերպարներ: Կարծում եմ, «Հայլուրը» կներկայացնի իմ այս խոսքը, չէ՞ որ իրենց շեֆերին դրական գնահատականի եմ արժանացնում: Ի դեպ, հավաքական աքլորի դերում էլ, ինչպես բոլորդ հասկացաք, կոալիցիայի ղեկավարներն են, որոնք, իհարկե, գիտեն, որ հավերին, այն է՝ կոալիցիայի անդամներին, աքլորների աչքի առաջ բռնաբարել են, և օրը գա աքլորները իրենց մուռը հանելու են ջայլամներից: *(Ծափահարություններ):*

Հիմա ո՞վ է կողմ քարոզում սահմանադրական «այո»-ին: Ուրեմն, քաղաքական ներկա իրավիճակը զարմանահրաշ դեմքեր է հրապարակ իջեցրել: Մասնավորապես, առաջին օրվանից «ազգանվեր» այս գործին լծվեց քաղաքական մի գործիչ, որը, հիշո՞ւմ եք, դեռ կոմունիստական վարչակարգի ժամանակ պնդում էր, որ այն, ինչ ասում է կենտրոնական կոմիտեի բյուրոն, սրբություն է, ժողովուրդ ջան: Կոմունիստներին հաջորդեցին ՀՀԾ-ականները: Սրանց օրոք սազը ձեռքին գովերգում էր ՀՀԾ-ական առաջադեմ վարչակարգը: «Մակարդակով գովեց», իսկ նա անխելք մարդ չէ, գիտակ կերպով գովեց և ստացավ բարձրագույն պաշտոններից մեկը: Որոշ ժամանակ անց, չէ, տեսավ, որ ՀՀԾ-ի ոտքի տակից հողը գնում է, գտավ, որ ամենաճիշտը երջանկահիշատակ Վ.Սարգսյանն ու Ռ.Քոչարյանն են: Սիրուն, էն մի գիշերում, երբ թավշյա հեղաշրջում եղավ Ազգային ժողովում, ՀՀԾ-ի ջատագովից դարձավ երկրապահի մոլեռանդ պաշտպան: Հետո էլի ամենաբարձր պաշտոնը ստանձնեց՝ արդեն Ազգային ժողովում: Միառժամանակ անց տեսավ, որ արդեն իսկ նոր դաշինք է ձևավորվում երջանկահիշատակներ՝ Վազգեն Սարգսյանի և Կարեն Սերոբի Դեմիճյանի կողմից, իսկ Ռ.Քոչարյանի ոտքի տակի հողը երերում է, սիրուն գնաց այնտեղ: Բայց դե Ռոբերտն ու Սերժն աչալուրջ են, «բարձր են նստած, հեռուն են տեսնում»: Տեսան, ֆիքսեցին և պաշտոնից հանեցին: Ձայնը տևական ժամանակ չէր լսվում: Մեկ էլ հանկարծ հիմա մտածում է, բա ո՞նց անենք, ի՞նչ անենք: Մարդ կա՝ խորհուրդ էր տալիս գնացքից թռչել, սա էլ հակառակ ուղղությամբ ուզում է գնացող գնացքը թռնել: Հիմա սկսեց գովերգել այս նոր Սահմանադրությունը: Գովերգում, գովերգում է, դե ինչ, ամեն մարդ իրավունք ունի իր կարծիքը հայտնի, բայց հանկարծ չհամարձակվի տողատակով քննադատել մեր գործընկերներին, պիտակավորել մեր գործընկերներին, մասնավորապես Վիկտոր Դալլաքյանին, անհետևանք չենք թողնի, կպատժենք:

Մյուս կատեգորիան, ուրեմն, 16-ի հետ ստորագրեցին հայտարարությունը, հիմա էլ ասում են՝ գործելու ենք առանձին, ոչ «այո» ենք ասելու, ոչ էլ՝ «ոչ», ոչ էլ բոյկոտելու ենք, և մեր կարծիքը կհայտնենք վերջում (ինչպես ընթերցողը հասկացավ, խոսքը վերաբերում է «Հզոր Հայրենիք» և Ռամկավար ազատական կուսակցությունների որդեգրած

դիրքորոշմանը.- *խմբ.*): Կրկին մտածում ես, լավ, պատմական ի՞նչ զուգահեռ անցկացնես, որ հասկանալի լինի: Ականջիդ հիշում ես հաճախ մեջբերվող հայտնի բանավեճը, երկխոսությունը, որը վերագրում են Ժոզեֆ Ֆուշեին և Թալեյրանին: Հիշատակում են, որ սարի բարձունքից Աուստերլիցի ճակատամարտին են հետևում: Իսկ այնտեղ էլ, հաջողությունը փոփոխական էր. մեկ ավստրո-հունգարա-ռուսական զորքերն էին առաջ մղվում, մեկ հակառակը՝ Նապոլեոնը: Ով առաջ էր գնում՝ Թալեյրան Պերիգոռը, նույն ինքը՝ իշխան Բենևետսկին, ասում էր՝ մերոնք հաղթում են: Թե ճակատամարտն ինչպես ավարտվեց, գիտեք: Դրանից հետո Ֆուշեն հարցնում է իշխան Բենևետսկուն. ինչպե՞ս հասկանանք՝ գրոհում էին ավստրիացիները, ասում էիք մերոնք հաղթում են, գրոհում էին մերոնք, ասում էիք՝ կրկին մերոնք են հաղթում: Վերջը ո՞վքեր են ձերոնք: Պատասխանում է՝ ովքեր հաղթեցին, նրանք էլ մերոնք են: Հիմա այս երկու կուսակցություններն էլ, հաստատ գիտեմ, ոչ Թալեյրանի, ոչ էլ Ֆուշեի հուշերը կարդալով չէ, որ նման քաղաքականություն են որդեգրել: Դե, ինչ, սա էլ է դիրքորոշում:

Այս իշխանությունների մյուս գլուխգործոցն էլ այն է, որ լենինյան գաղափարախոսություն քարոզող Յուրա Մանուկյանը 3 օր առաջ «Ար»-ի «Ազդարար» ինֆորմացիոն ծրագրով կանգնեց և ասաց. լավ, վերջապես, ինչքան ժամանակ մենք պետք է մեկուսացման մեջ լինենք, բա չգնա՞նք տեսնենք եվրոպական երկրներն ինչ են ասում, բա չգնա՞նք բոլորս իրար հետ մտնենք այդ թոհուբոհի մեջ, այդ կրակի մեջ: Այ տնաշեն, Չինաստանին էլ գոնե դրանց շարքում հիշատակեիր, կասեինք, հա, մի երկրի խաթեր կոչ ես անում թոհուբոհին միանալ: Բա սրանից մի երկու տարի առաջ և մինչև վերջերս, երբ կոմկուսից պառակտվեցիք և նորացված կոմունիստական կուսակցություն ստեղծեցիք, անվերջ կանգնում ասում էիք՝ մեր դրոշին ավելի մատչելի ու հասկանալի է գրված միջազգային իմպերիալիզմի դեմ անողոք պայքարը: Ես ի՞նչը փոխվեց, որ հիմա էլ դարձյալ ձեր կողմից չընդունված էդ կապիտալիստական հասարակարգի բարքերը ոչ միայն լռակյաց ընդունել եք, այլ նաև հրապարակավ քարոզում եք: Այս ձևափոխումները նույնպես կարելի է պատմական զուգահեռներով հիմնավորել և բացատրել: Սա նորություն չէ, սիրելի ժողովուրդ: Ինչպես հիշում եք, Յուդիֆը դավաճանեց Օլոֆեռնին և գլխատեց նրան՝ փրկելով Հրեաստանը: Բրուտոսը դավաճանաբար դաշույնով սպանեց Հուլիոս Կեսարին, իբր, փրկելով Հռոմի հանրապետական կարգերը: Լավ, որ մի քիչ մոտիկ պատմությունը լինի ասեմ. Շառլոտա Կորդեն սպանեց Մարատին, երբ խեղճը լոգանք էր ընդունում վաննայի մեջ: Այսքանից հետո, որ ավելի հասկանալի լինի մեր իշխանություններին, հիշատակենք, որ Նատաշա Կորոլյովան էլ դավաճանեց Իգոր Նիկոլաևին՝ գնալով Տարզանի մոտ: Հիմա այդպես էլ Յուրա Մանուկյանը դավաճանեց Լենինի գաղափարներին: Էս է սրանց՝ իշխանությունների հենարանը հանդիսացողների դիմանկարը, ժողովուրդ ջան: *(Բուռն, երկարատև ծափահարություններ):*

Բայց իշխանությունների զինանոցում միայն հիշատակածս կերպարները չեն, որ հայտ են ներկայացրել դառնալու մերօրյա քաղաքականության գոհարներ: Կան նաև այլ տիպի կերպարներ, կան այլ մարդիկ: Ճիշտ հենց այս նույն դահլիճում հայտարարվեց,

որ հայրենակցական միությունները մի մարդու նման կողմ են սահմանադրական փոփոխություններին և «այո» են ասելու: Ավելին, հայտարարեցին, որ չեն հասկանում մեր դիրքորոշումը: Եվ այդ հավաքի ժամանակ գլուխգործոցներ էին հարգարժան Աղվան Հովսեփյանի և Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի ելույթները: Հիմա ես էլ հանդիպակաց հարցով եմ ուզում դիմել Սուրեն Խաչատրյանին: Սրանից մի վեց-յոթ ամիս առաջ, երբ Շիկահողի արգելոցը՝ Մթնաձորի կուսական անտառներով, վտանգված էր, պետք է անտառները հատվեին ու ցախ դառնային, բա էդ Սյունիքի հայրենակցական միությունը ինչո՞ւ ոտքի չկանգնեց, ինչո՞ւ մի անգամ այստեղ չհավաքվեց, իր բողոքի ձայնը չբարձրացրեց այդ բարբարոսության դեմ: Ինչո՞ւ նույն դատախազին չհիշեցրեց, որ Ազգային ժողովը առնվազն 4 օրենք է ընդունել բնապահպանական թեքում ունեցող, էլ չեմ ասում տասնյակ միջազգային կոնվենցիաների է միացել, ուր բնապահպանության հարցերը, ասես թե, առանցքային են: Կամ՝ Աղվան Հովսեփյանն էր ելույթ ունենում այս ամբիոնից և ասում, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում ապահովվում է դատական համակարգի անկախությունը: Հիմա եկեք Ձեզ հետ մի քանի ճշգրիտ, ճշտված փաստեր վերլուծենք և տեսնենք՝ գործող Սահմանադրությո՞ւնն էր դատախազությանը խանգարում հանցագործ տարրերին, պետության թալանը իրականացնողներին պատժելու: Մի պարզ օրինակ բերեմ. երկու-երեք տարի առաջ Ազգային ժողովն ընդունեց համապատասխան որոշում, որով «Բաշխիչ էլեկտրացանցեր» սահմանափակ պատասխանատվությամբ պետական ձեռնարկությունը սեփականաշնորհվեց ինչ- որ «Միդլենդ Ռեսուրսիզ»-ի կողմից: Դեռ այն ժամանակ Համաշխարհային բանկը զգուշացրեց, ասելով, որ քանի որ այդ փուչիկի պես շինծու, օֆշորային գոտում գրանցված կազմակերպությունը մասնագիտացած չէ բաշխիչ էլեկտրացանցեր շահագործելու աշխատանքում և առաջարկեց ձեռնպահ մնալ այդ գործարքից: Չլսեցին: Խորհուրդն անտեսեցին և վաճառեցին: Որոշ ժամանակ անց, վերջերս, երբ բացարձակապես ոչ մի լուրջ ներդրումային աշխատանք, ինչպես բոլորս գիտենք, չէր կատարվել այնտեղ, սկզբնական վաճառքի գնից 2,5 անգամ ավելի թանկ՝ 72, թե 75 միլիոն դոլարով արդեն վաճառեցին ռուսական հայտնի «ՌԱՕ-ԵԷՍ»-ին: Բա չե՞ք մտածում՝ այս ինչ գործարք է, բա չե՞ք մտածում, թե ինչպես պատահեց, որ պետության ամենաբարձրաստիճան պաշտոնյաները, եթե շահագրգռված չլինեին, այդ ինչպե՞ս հանդուրժեցին, որ 2 տարում «Միդլենդ Ռեսուրսիզը» տեղում նստած առանց լուրջ, լայնամասշտաբ ներդրումների, այս տարօրինակ վաճառքից նվազագույնը 38 միլիոն դոլար է վերցնում դնում գրպանը, հետն էլ, համոզված կարող ենք ասել, փակում իշխանությունների կողմից «ՌԱՕ-ԵԷՍ»-ին պատկանող, մինչ այդ գրպանված «պարտքերը»: Հիշեցնեմ՝ ինչ «պարտք» փակեցին: Սրանից շուրջ երկու տարի առաջ, երբ Վրաստանում վարդերի հեղափոխությունը եղավ, Շևարդնաձեի վարչակարգի էներգետիկայի պատասխանատուին կալանավորեցին: Դատարանում նա «երգեց»: «Երգելու» սյունակներից մեկն էլ նվիրված էր Հայաստանի Հանրապետությանը, առ այն, որ մեր երկրին իր էներգետիկ պարտքը (շուրջ 7 միլիոն դոլարի չափով, եթե հավատանք մամուլի՝ իշխանությունների կողմից այդպես էլ

չհերքված, հրապարակումներին) Վրաստանի Հանրապետությունը մարել էր: Մինչդեռ իշխանությունների բոլոր հաշվետվությունների մեջ, ինչպես նաև իրազեկ մարմինների հաշվետվությունների մեջ դա գրված էր որպես պարտք: Այն ժամանակ տեղի ունեցավ խորհրդավոր մի այցելություն. մի քանի ժամով Հայաստան եկավ Չուբայսը, երկու-երեք պաշտոնյաների հետ զրույց ունեցավ, գնաց ինքնաթիռով: Ասաց, տղերք, էս դուք ինչո՞ւ եք քցում մեզ, այն էլ 7 միլիոն դոլարի (վերջինս համոզվել էր, որ վրացական կողմը, հակառակ մեր իշխանությունների պնդումների, պարտքի գումարը փոխանցել էր): Այ, հիմա այդ էլ փակեցին՝ բաշխիչ ցանցերը վաճառելով 75 միլիոնով: Պարոն Աղվան Հովսեփյան, խորացեք այս հարցերում: Սահմանադրությո՞ւնն է ձեզ արգելում զբաղվել այս հանցագործության դեմն առնելու, ասեք, գործող Սահմանադրության ո՞ր հոդվածն է խանգարում, ո՞ր հոդվածն է ձեզ կաշկանդում, որ տասնյակ միլիոնների կողոպուտը ջրի երես հանեք:

Չստացվի մի օրինակ եմ բերում, երկրորդ օրինակը բերեմ: Երկրորդ օրինակն էլ վերաբերում է «Հայկական ավիաուղիների» տխուր ոդիսականին: Ուրեմն, ի՞նչ խորամանկ, ճիզվիտական քաղաքականություն են իրականացրել այս հարցում: «Հայկական ավիաուղիների» կազմավորման օրվանից շարունակաբար ստիպեցին, պարտադրեցին, որ նավթը, կերոսինը, ավիակերոսինը գնեն միայն և միայն մի կազմակերպությունից, այն էլ այն գներով, որն այն ժամանակ 2 անգամ գերազանցում էր շուկայական միջին գինը: Մեր գործընկերներից մեկը, որ լավ կապեր ունի համապատասխան երկրներում, դիմեց նրանց՝ ասելով, որ դուք տոննային 440 դոլար գնով եք վերցնում, ես 250-ով բերեմ հասցնեմ Այրում երկաթուղային կայարան: Ասացին՝ առաջարկդ արա: Մանրամասն ներկայացրեց: Ավելին, հայտնեց, որ առաջին խմբաքանակի համար բացարձակապես պետք չէ գումար փոխանցել, ինքն իր հնարավորություններով, միջոցներով կբերի, տեղ կհասցնի, որից հետո միայն՝ ակնկալելով վճարումը: Կողքից, նրանց մեջ էլ խղճով մարդիկ կան, որ ոսկին մարդու կյանքի գնից թանկ չեն դասում, հուշեցին, հասկացրեցին, ասացին՝ «Ախպոր նման գործ չունես, գլուխդ կկորցնես ճանապարհին»: Ուրեմն, շարունակեցին 440 դոլարով նավթի տոննան վաճառել «Հայկական ավիաուղիներին»՝ ստանալով գերշահույթ: Եվ գերշահույթ ստացող հիմնարկներն էլ (որոնց տերերը իշխանական կլանի հայտնի դեմքերն են), հանկարծ միամիտ չլինեք՝ Հայաստանում գրանցված չեն, կարող է մեկը Բուլղարիայում գրանցված լինի. այս հասցեն էլ բերում եմ, որ հասկանան՝ գիտեմ, ուղղակի չեմ տարածվում: Եվ արդյունքում մեկ տոննան 440 դոլարով նավթ գնողը, այն է՝ շուկայական գնից 2 անգամ թանկ, բնականաբար, սնանկության կենթարկվի: «Հայկական ավիաուղիները» դարձրեցին բանկրոտ: Բանկրոտ դարձնելուց զատ, համապատասխանաբար, շան մսի գնով գնեցին, հետո էլ «ИЛ-86» ինքնաթիռն էլ բռնագանձեցին պարտքի դիմաց: Իսկ 2 օր առաջ՝ հինգշաբթի օրը, երբ Կառավարությունը նիստ էր անցկացնում, այդ նույն ժամերին մեր փառապանծ օդաչուները հարկադրված Կառավարության տան առջև բողոքի ցույց էին անցկացնում: Ճիշտ այն նույն օդաչուները, որոնց բոլորս տասն անգամ,

հարյուր անգամ մեր կյանքն ենք վստահել իրենց վարած ինքնաթիռներով գործուղումների մեկնելիս: Մարդկանց ուզածն էլ ի՞նչ էր: Ընդամենը մի բան. աշխատավարձերի կուտակված պարտքերը փակելը: Ի՞նչ, միամիտ ենք, չե՞նք հասկանում, որ «Հայկական ավիաուղիներին» միտումնավոր դարձրին սնանկ՝ անօրեն ճանապարհով կորզելով հսկայական գումար: Պարոն Աղվան Հովսեփյան, զբաղվեք էս հարցով: Նիգ-Ապարանում կարող ուժեր կան, առանց ձեր բարձր միջամտության էլ կկարողանան համապատասխան քարոզն անել: Տասնյակ միլիոնների կողոպուտի մասին եմ ասում: Գործող Սահմանադրության ո՞ր կետն է ձեզ արգելում բացահայտել այն:

Մեկ ուրիշ օրինակ էլ բերեմ: «Գույք պարտքի դիմաց» պայմանագիրը կնքելիս կառավարման հանձնվեց նաև հայկական ատոմային էլեկտրակայանը: Եվ հայտարարվեց, որ այն շուրջ 20 միլիոն դոլարի պարտքեր է կուտակել, այսինքն, ըստ էության, անվճարունակ կազմակերպություն է: Կառավարումը վստահվեց «ՌԱՕ-ԵԷՍ»-ին: Այսպես, 2 տարվա ընթացքում աշխատավորական այդ նույն կոլեկտիվը ճիշտ նույն հզորություններով ոչ միայն պարտքերը փակեց, այլ նաև Եվրամիությունը տարեկան 10-ից 12 միլիոն եվրո միջոցներ էր տալիս ատոմակայանի անվտանգ շահագործումն ապահովելու համար, այդ հոգսերն էլ կարողացավ ինքնուրույն հոգալ և այժմ տարեկան մոտ 20 միլիոն դոլարի եկամուտ է ստանում: Ի՞նչը փոխվեց: Կարո՞ղ է որևէ մեկը միամիտ է, չի հասկանում, որ իրականացվող անասելի ալան-թալանին պարզապես վերջ տրվեց: Իսկ հետո էլ ասում են, թե որտեղից են 30 միլիոն դոլար տալիս ավտոլվացակայան առնում Կալիֆորնիայում կամ էլ Կոմի Ինքնավար Հարապետությունում 50 միլիոն դոլարով ոսկու հանքեր առնում «հայ ձեռներեցները»: Էդ ո՞նց է լինում, այ հենց այսպես է լինում: Դե զբաղվեք, պարոն Հովսեփյան, ոչ թե Սահմանադրության գովքն արեք, ինչը Ձեր կողմից գործող օրենքի կոպիտ խախտում է, որովհետև դատախազությունը և դատական մարմինները քաղաքականությամբ զբաղվելու իրավունք չունեն: Դա էլ հենց այս մեր գործող Սահմանադրության մեջ է գրված: Դե, բացահայտեք հանցագործներին:

Կոռուպցիայի հասցե՞ եք ուզում, մի ուրիշ հասցե էլ ասեմ: Մոնումենտի անտառի մեջ շքեղ հյուրանոց կառուցեցին, անունն էլ «Գոլդեն Փելես» դրեցին, որովհետև կառուցողները, իրենց շրջապատը մանկուց անգլերեն են խոսում: «Փալաս» էլ չէ, այլ «Փելես» են անունը դրել, մինչդեռ արածները փալասություն է: *(Ծափահարություններ):* 10-12 միլիոն դոլար արժողությամբ շենք է: Հլա մի հատ գնացեք նայեք, որ այդ շինանյութը, որ բերել են, այդ կազմակերպություններն ավելացված արժեքի հարկ մուծե՞լ են, թե՞ չէ վաճառված ապրանքի դիմաց: Հլա մի հատ նայեք, էդ շենքը կառուցող մեր անվանի շինարարները ինչպես են վարձատրվել, գործատուները սոցիալական հիմնադրամին մի քոռ լումա փոխանցե՞լ են, թե՞ չէ:

Այ, սրա համար ենք ասում, որ այս իշխանությունների օրոք երբեք ու երբեք և ոչ մի սահմանադրական փոփոխություն ոչ մի լավ բանի հանգեցնել չի կարող: Այ, սրա համար ենք ասում, մեկ անգամ ևս միահամուռ գնանք և «ՈՉ» ասենք այս իշխանություններին, որովհետև Սահմանադրությունը չէ, որ խանգարում է երկրում կարգուկանոն

հաստատելուն: Այ մարդ, սրանք հիշեցնում են էն կկվին: Բնից բուն է թռնում, ամեն տեղ գարշահոտություն է գալիս: Կարծում է, որ իր զավթած բնից է՝ տեղի քշված կկուների հոտն է գալիս: Էլ չգիտի՝ հոտն իր հետ է:

Կեղծիքը, ավազակությունը այս համակարգի հետ են, այս իշխանությունների հետ են: Դրա համար ենք ասում, գնանք և «ՈՉ» ասենք:

Կանգնում ասում են՝ բախտորոշ նշանակություն ունի Սահմանադրության փոփոխությունների ընդունումը, դա մի նոր, մեծ առաջընթաց քայլ է: Ասում են՝ իրապես բախտորոշ է: Դե, եթե բախտորոշ է, ինչի՞ եք պաշտոնակռիվ անում, ինչի՞ եք կառչել ձեր աթոռներից: Եթե նոր Սահմանադրությամբ նախատեսված օրենքներով, կարգուկանոնով եք շարժվելու, եկեք բոլորս միասին, միահամուռ մեր դեպուտատական մանդատները վայր դնենք: Եվ ժողովուրդն այդ ժամանակ կասի. այո, սրանք դարձի են եկել, խելքի են եկել, ուզում են երկրում, իրոք, դրական բարեփոխումներ լինեն և իրենք նախապայմաններ են ստեղծում խորհրդարանական ազատ, արդար ընտրությունների համար: Ոչ, իշխանությունները կտրականապես դեմ են մեր այս առաջարկին: Վերջերս ամերիկյան դեսպանատանը առիթ եղավ հանդիպելու Կոնդոլիզա Ռայսի Եվրոպայի և Եվրասիայի գծով տեղակալ Դենիել Ֆրիդի հետ: Նա ինձ հարց ուղղեց. «Դուք դեմ եք այս իշխանություններին, դրա համա՞ր եք «ոչ» ասում Սահմանադրությանը»: Պատասխանս հետևյալն էր. 1936 թ. Սովետական Միությունում ընդունվեց Սահմանադրություն: Երբ այսօր ստալինյան այդ Սահմանադրության հոդվածները, հիմնադրույթները ուշադիր ընթերցում ես, ապա մարդու իրավունքները, մարդու սոցիալական պաշտպանվածությունը այնտեղ գերգերազանց ամրագրված են: Բայց դրան հետևեց 1937 թվականը: Մի զարհուրելի օրինակ ևս բերեցի. այն է՝ Օսմանյան կայսրությունում Սուլթան Համիդ արյունարբուի իշխանավարման օրոք գործում էր Սահմանադրություն, որը սահմանադրական իրավունքի մասնագետները դեռ 1870-ականների վերջին գնահատել էին ամենաառաջադեմ, առաջավոր սահմանադրություններից մեկը: Բայց հենց այդ նույն առաջադեմ, առաջավոր Սահմանադրության պայմաններում տեղի ունեցան հայկական ջարդերը 19-րդ դարի 90-ական թվականներին: Իմ այս պատասխանը ընդունվեց: Պատասխանս տարակուսանք, հարցեր չառաջացրեց: Արդյունքում, հավանաբար, ծնվեց այն, որ հետագայում ասվեց. խոր անվստահություն կա ընդդիմության և իշխանության միջև: Եվ առանցքային խնդիր հռչակվեց այն, որ ժողովրդավարությունն այնքանով է ժողովրդավարություն, երբ յուրաքանչյուր մարդ կարող է ազատ, անկաշկանդ իր կարծիքն արտահայտել՝ համոզված լինելով, որ եթե դա արտահայտում է քվեարկության եղանակով, ապա երբեք ու երբեք չի կեղծվի:

Հիմա, լավ, այնուամենայնիվ, «Ազգային Միաբանությունը» ինչո՞ւ է այս աստիճան մտահոգ սահմանադրական փոփոխություններով: Եվս երկու-երեք օրինակ բերեմ՝ չչարաշահելու համար Ձեր համբերությունը: Ուրեմն, այս նույն Սահմանադրությամբ, հոդված 30-ում (հոդվածի թիվը կարևոր չէ) երկքաղաքացիության մասին աղերսներ կան: Ասում են, բա մեր եղբայրները արտասահմանում չօգտվե՞ն այն իրավունքներից, որոնցից

օգտվում են մեր հայերը, հայաստանցիները: Իհարկե, քող օգտվեն: Իսկ մեկն էլ հարց չտվեց՝ անկախության տարիներին առնվազն 1,5 միլիոն մարդ Հայաստանը լքել գնացել է, ամենաանվազագույն թիվն եմ ասում, ոմանք Ռուսաստանի Դաշնություն, ոմանք Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ոմանք Եվրոպա: Բա լավ, էդ մարդկանց մասին ինչո՞ւ չենք մտածում, որոնք այսօր էլ Հայաստանի քաղաքացիներ են, որոնք այսօր էլ, համոզված եմ, մեծամասնությամբ պատրաստ են Հայաստանի Հանրապետություն վերադառնալ, եթե իշխանափոխություն լինի: Բա եթե այնտեղ մեր եղբայրները, ում նախնիները ճակատագրի բերումով Սփյուռքում են ծնվել, նույն իրավունքներից են օգտվելու, նույն արտոնություններից են օգտվելու ինչ Հայաստանի քաղաքացիները, այդ դեպքում ինչո՞ւ է մեր քաղաքացին շահագրգռված լինելու վերադառնալ հայրենիք: Կմնա այնտեղ, տվյալ երկրի սոցիալական պաշտպանվածության օրենքներից կօգտվի, այսպես ասած, դրսից էլ մեր երկրին «բալետ» կանի: Էս առաջին հարցը: Երկրորդ հարցը: 2,5 միլիոն հայ կա Ռուսաստանի Դաշնությունում, 1,2-1,5 միլիոն ԱՄՆ-ում, ըստ որում նրանց 65-70%-ը դեռ շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ: Լավ, վաղը, մյուս օրը Ազգային ժողովի ընտրություն կա, ՀՀ Նախագահի ընտրություն կա, հանկարծ ու երկրների հարաբերություններն այնպես դասավորվեցին, որ պետք լինի այս կամ այն անբանին կարգել Նախագահ, որ աշխարհաքաղաքական իրենց կողմից հետապնդվող շահերը լուծվեն: Եվ Հայաստանի բախտն այդ ժամանակ կորոշվի ոչ թե Հայաստանում, այլ Կալիֆորնիայում կամ Ռուսաստանում: Խորհե՞լ եք, այս մասին, պարոնայք իշխանավորներ: Քանիցս ասացինք՝ պետք չէ նման ձևակերպումներով սահմանադրական փոփոխություններում այդ հարցը մտցնել: Գրված է՝ նրանց իրավունքները կարգավորվելու են օրենքներով: Օրենքներ գրողներն էլ, ավա՜ղ, ստանձնել են դակիչի դերակատարումը: Ինչ օրենք էլ դեմ տան՝ պարտադիր կարգով կընդունվի այս Ազգային ժողովում: Բա ինչպե՞ս կարելի է հանդուրժել: Հիմա կասեք՝ ինչո՞ւ եք այստեղ խոսում, մի բան գտնեիք, որ դրա առաջն առներ: Իհարկե, գտել էինք. «Ազգային Միաբանություն» խմբակցության առաջարկների մեջ գրել էինք, որ 150 հազար ստորագրության պայմաններում Ազգային ժողովը պարտավոր է հայտարարել այս կամ այն հարցի վերաբերյալ, որի տակ ստորագրություն է հավաքվել, հանրաքվե անցկացնելը: Բացարձակապես ոչ մի ընթացք: Ընդհակառակը, հանեցին: Դեռ ժողովրդավարությունից են խոսում, իսկ 150 հազար հայ մարդու եթե այդ հարցը հուզում է, եթե այդ հարցը մտահոգում է, լավ, ի՞նչն էր կոալիցիային խանգարում ընդունել մեր առաջարկը: Վախենում են:

Ստեղծված իրավիճակում վտանգավոր եմ համարում նաև այն, որ ՏԻՄ ընտրությունները մեկ անգամ ևս ապացուցեցին, որ այս իշխանությունների որդեգրած ներքին քաղաքականությունը, ասես թե, ուղղված է գեթ մեկ խնդիր լուծելուն. այն է՝ ամեն գնով թշնամացնել մարդկանց: Դուք տեսեք, թե Արմավիրի մարզում ինչ էր կատարվում, թեկուզ ավագանու ընտրությունների ժամանակ: Նույնը Արագածոտնի մարզում: Հարևանը հարևանի հետ չէր խոսում, վախենում էր բարև տալ, որովհետև մի ուրիշ բարեկամի

խոստացել էր, որ ավագանի կընտրի: Օջախների մեջ կռիվ գցեցին: Եվ ամենուր դա է: Ասես թե Հայաստանը դարձել է հակամարտող մարդկանց մի կծիկ: Պառակտվել է հասարակությունը: Հավատ ընդհանրապես գոյություն չունի իշխանությունների հանդեպ, դա արդեն երկար, տևական ժամանակ է, թերահավատորեն են տրամադրված նաև ընդդիմության նկատմամբ, որովհետև նույն չակերտավոր ընդդիմադիրներին անվերջ հեռուստաէկրան են տալիս, որ հիասթափեցնեն ժողովրդին և մեզ անվերջ պախարակեն: Իսկ սա չափազանց վտանգավոր է հասարակության համար, պետության, երկրի համար, որը չլուծված ղարաբաղյան խնդիր ունի: Եվ չլուծված խնդիր ունեցող Հայաստանում, չլուծված սահմանային խնդիրներ ունեցող երկրում, հարևանների հետ տարածքային խնդիրներ ունեցող հանրապետությունում առաջարկում են, որ սահմանադրական փոփոխությունների մեջ (81-րդ հոդվածն է) Ազգային ժողովին օժտեն սահմանները փոփոխելու լիազորություններով: Է, լավ, մի՞թե չեք հասկանում՝ սրա հետևում ինչ է դարանակալած: Բանակցություններ են գնում ազատագրված տարածքները վերադարձնելու վերաբերյալ, ավելին, գարնանը Վարշավայում արդեն իսկ համաձայնության են եկել: Է, վաղը, մյուս օրը դեմ կտան սահմանները փոփոխելու հարցը, Մեղրու հարցը կարող է մեկ էլ հանկարծ կրկին ծլի: Ի՞նչ, այս Ազգային ժողովն այս կազմով կկարողանա՞ դիմակայել ոչ լեգիտիմ իշխանությունների ճնշումներին: Ցավոք սրտի, ոչ, որովհետև պատգամավորների մեծամասնության պոչը իշխանությունների կրնկի տակ է: Նրանք էին, որ իրենց թողեցին անպատիժ իրականացնել հակաօրինական գործողություններ, ինչու չէ՝ նաև թալան: Է, հա, էդ անօրինականությունների մասին փաստող պապակները հավաքել են, հլա վաղը, մյուս օրը թող կոալիցիայից որևէ մեկը հանդգնի իր իրական կարծիքն ասի, ասի այն կարծիքը, որն ինքը հարազատներին է ասում: Ես էլ չեմ ասում՝ հրապարակային ելույթ ունենա: Անհապաղ քրեական գործ կհարուցվի նրանց դեմ: Այ, դրա համար ենք ասում՝ «ՈՉ» այս իշխանություններին: Սահմանների ի՞նչ փոփոխության մասին կարող է խոսքը գնալ և դա էլ վստահել այս Ազգային ժողովին: Այ, դրա համար ենք ասում՝ այս Ազգային ժողովը պետք է լուծարվի: Դե, եթե ազնիվ ու արդար եք, երկրի համար ճակատագրական նման հարցերը Սահմանադրությամբ կանոնակարգեք, ըստ որի դրանք պետք է ընդունվեն կամ մերժվեն հանրաքվեի ժամանակ: Ականջներիդ էլ օղ արեք, որ հայրենիքի համար բախտորոշ հարցերը պետք է ազգովի լուծվեն: Մի՞թե, անգամ մի թիզ հողը տալու որոշումը Ազգային ժողովին վստահելով, չեք մտածել մեր հերոսների մասին, չեք մտածել Եռաբլուրում հանգչող հազարավոր ազատամարտիկների մասին, մինչև օրս մղկտացող նրանց բարեկամների մասին: Այ, սրա համար ենք ասում, որ կատեգորիկ չի կարելի ընդունել հանրաքվեի դրված Սահմանադրության փոփոխությունները:

Եվ այս քարոզարշավի ժամանակ, այ մարդ, նստում ու մտածում ես, ասած Պարոնյանի, չգիտես՝ խնդաս, թե լաս, որովհետև մեկ էլ ի հայտ է գալիս 21 կուսակցություն, որոնցից շատերի գոյության մասին մինչ օրս չէին լսել, 200 հասարակական կազմակերպություն, որի գոյության մասին նույնպես չէին լսել: Ականջիցս հիշում ես

հայտնի ասացվածքը. ասում են՝ ճագարները կարծում էին, թե իրենց շատ են սիրում, դրա համար են թողնում, որ բազմանան, էլ չգիտեն, որ իրենց բազմացնում են մորթելու համար: Մեր պարագայում՝ վարկաբեկելու համար: Լավ է, գոնե, Արմեն Ռուստամյանը՝ դաշնակցական, անկեղծություն ունեցավ և լրագրողի հարցին, թե ճանաչո՞ւմ եք Սահմանադրության փոփոխություններին «այո» ասող այս 21-ին, պատասխանեց. ոչ, կուսակցություններ կան, որոնց գոյության մասին առաջին անգամ եմ լսում, իսկ ղեկավարներին էլ առաջին անգամ եմ տեսնում: Է, հարգելի Արմեն, որտեղից ճանաչես, իրենց օջախում ապրող մարդիկ, իրենց հետ նույն մուտքում ապրող մարդիկ չեն ճանաչում. բարաք էր պետք, տղերքից էլ իշխանությունները «այո»-ին միանալու ստորագրությունները կորզեցին: Եվ վտանգավորն այն է, որ այս լրջագույն հարցերի ժամանակ փորձում են անպայմանորեն ստվեր գցել ընդդիմության վրա, զրկելով ընդդիմությանը, մասնավորապես «Ազգային Միաբանությանը» և ինձ հեռուստաեթերով ելույթ ունենալու տարրական հնարավորությունից: Իմ անունից կամ էլ ինձ վերագրում են տասնյակ անտրամաբանական մտքեր, գաղափարներ, որոնք երբեք ու երբեք ոչ ասել եմ, ոչ էլ հնարավոր է, որ ասեմ: Ամենախայտառակ ձևով ելույթներս մոնտաժի են ենթարկում, կցկտուր կպցնում իրար, որ լսողն ասի՝ չհասկացանք, էս Գեղամյանի մտքի տրամաբանական թելը կտրված էր, ինչ էր, բան չհասկացանք, թե ինչ է ուզում ասել: Լավ, եթե տղամարդ եք, եկեք նստենք հեռուստաէկրանի առաջ, դուք ձեր «այո»-ի քարոզն արեք, ես էլ հիմնավորեմ՝ ինչու ենք ստեղծված իրավիճակում ասում «ՈՉ»: Չնայած կոմպրոմիս մինչև օրս էլ առաջարկում ենք: «Ազգային Միաբանության» այն առաջարկը, որը հավանության է արժանացել տարածքային կազմակերպությունների կողմից, ուժի մեջ է: Եթե, իրոք, իշխանավորներ անկեղծ եք, եթե, իրոք, մտահոգ եք երկրի ապագայով, ապա առաջինը ինչ պետք է արվի, երկրում անհրաժեշտ է փոխադարձ վստահության մթնոլորտ հաստատվի, վստահությունը վերականգնվի հանդեպ իշխանությունները: Պարզից էլ պարզ է, որ այս իշխանությունների նկատմամբ վստահության վերականգնումը բացառվում է, որովհետև չափազանց մեծ են հանցանքները, չափազանց խորն է ազգի և ժողովրդի վիրավորանքը: Ուստի, բանալին մնում է մեկը: Եկեք պայմանավորվենք հեռուստաէկրանի առաջ, ողջ հայության առաջ այն գաղափարի շուրջ, որ, այո, միասին լծվենք, ասենք «այո» այս Սահմանադրությանը, պայմանով, որ սահմանադրական փոփոխությունների ընդունման հաջորդ իսկ օրն Ազգային ժողովը լուծարվում է և միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ ու հսկողությամբ անց է կացվում ազատ, արդար խորհրդարանական ընտրություններ: Եվ մենք ակնկալում ենք ընտրություններ, որոնք առաջին անգամ կլինեն ազատ, արդար, ժողովրդավարական և թափանցիկ: Եթե չեք կառչել ձեր աթոռներից, եթե դուք՝ իշխանավորներ, պաշտոնակռիվ չեք անում, համաձայնվեք:

Մյուս կողմից էլ մտածում ես՝ չկա չարիք, առանց բարիքի: Լավ է, այս իշխանությունները վերջապես «գործ» ունեցան, որովհետև կոալիցիան հանրօգուտ ոչ մի բան անել չի կարող, հիմա էլ այս քարոզի պատրվակով օրումեջ հեռուստատեսությամբ ելույթներ

ունենալով՝ աշխատանքի պատրանք են ստեղծում: Ի հայտ են գալիս իրենց սպառած գործիչներ, նորանոր մարդիկ, նորանոր անհայտ դեմքեր: Արանքում էլ իրենց պարտքն են համարում բզկտել «Ազգային Միաբանությանը», Գեղամյանին: Վերջերս պետական վերլուծական «360Ե» ծրագրով մեկ էլ եթերում հայտնվեց Դավիթ Շահնազարյանը: Ելույթի մեխը «այո»-ն կամ «ոչ»-ը չէր, հարցազրույցի մեխն այն էր, որ ասեր՝ Գեղամյանը, դեռ հարց է, ընդդիմություն է, թե իշխանություն: Հետո էլ վիրավորվածի կեցվածք ընդունելով հանդիմանի «Հայլուրի» լրագրողին, որ իրեն՝ պարոն Դավիթին, չիջեցնի «նվաստիս» մակարդակին: Ասեմ, որ ես դրանից չեմ վիրավորվում, քանի որ լսողը գիտի, թե ասողն ով է: Ուշագրավն այն է, որ իմ իշխանություն լինելու շահնազարյանական «մերկացումների» մասին, իշխանական վերլուծական ծրագիրն է տալիս: Դե, եթե ես իրենցից եմ, իշխանություններից եմ, ապա ինչո՞ւ են ինձ ծախում: Բայց ՀՀԾ-ական՝ գնացած ու անփառունակ հետ վերադարձած, Դավիթի և իրենց գործընկեր «Հայլուրի» խնդիրը նույնն է. կասկածանքի որդը գցել մարդկանց գիտակցության մեջ: Ուրեմն, ես էլ, օգտվելով առիթից, ուզում եմ մի փոքր դրվագ կարդալ է ս/թ հոկտեմբերի 6-ի «Հայկական ժամանակ» թերթից: Մահախցում հայտնված մարդը, որը, ըստ հոգեբանների, հաղորդակցվում է միայն Աստծո հետ և բացի ճշմարտությունից էլ ոչ մի ասելիք չունի, գրում է հետևյալը: Խոսքս Արմենակ Մնջոյանի մասին է. «…դեռևս 1991-ից անձիս դեմ կատարվել են մի շարք ոտնձգություններ, իրականացվել է 4 անգամ անհաջող մահափորձ: … Խոշոր գումարների, շանտաժի և ահաբեկումների միջոցով փորձ է կատարվել ինձ հավաքագրելու օտար պետությունների շահերի համար ծառայող ազգադավ, ստրկամիտների բանակը: Նույնը շարունակվել է ձերբակալությունից հետո՝ ԱԱՊՎ-ի մեկուսարանում դեռ այնքան ժամանակ, քանի դեռ Դավիթ Շահնազարյանը ղեկավարում էր այդ կառույցը»: Ուրեմն, ի՞նչ ողորմելի վիճակում է հայտնվել իշխանությունը, որ Գեղամյանին վարկաբեկելու համար զինակից է դարձրել հանրության համար վտանգավոր այս տեսակի սուբյեկտին: Ես սրա մասին չէի ասի, պարզապես սիրտս ցավում է կիրովաբադցիների համար, որ Դավիթով են իրենց մասին կարծիք կազմելու, որ Դավիթի նմաններն են իրենց խայտառակ անում, իսկ նրանց մեջ լավ մարդիկ շատ ու շատ կան: Սա է այսօրվա իշխանությունների և նրանց սատարող գործիքների դիմապատկերը:

Սիրելի ժողովուրդ, ես համոզված կարող եմ ասել մի բան. եթե բոլորս, յուրաքանչյուրս մեր տարածքներում կարողանում ենք համոզիչ կերպով ասել և բերել այն փաստարկները, որոնք, անտարակույս, դեռ կհնչեն իմ գործընկերների ելույթներում, ապա իմացեք, նոյեմբերի 27-ին, ավելի ստույգ 28-ին իրապես նոր իրավիճակ է ստեղծվելու Հայաստանի Հանրապետությունում: Արդեն մարդիկ, ճիշտ այդ նույն միջազգային կառույցները կհասկանան, որ այս իշխանություններն այն աստիճան վստահություն չեն վայելում և ատելի են, որ անգամ իսկ սովից, ծարավից հանգչողին եթե մի բաժակ փրկարար ջուր տան, ապա հիվանդը կգերադասի մեռնել, քան սրանցից փրկություն աղերսել: *(Բուռն ծափահարություններ):*

Շնորհակալություն:

Արտաշես Գեղամյանի եզրափակիչ խոսքը կուսակցության V համագումարում

Հարգելի բարեկամներ, սրտանց շնորհավորում եմ ընտրված մեր բոլոր գործընկերներին և ցանկանում եմ, որ այն բոլոր հույսերը, որ ազգաբնակչության ամենալայն շերտերը կապում են «Ազգային Միաբանության» հետ, իրականություն դառնան: Ուզում եմ համոզված ասել՝ Ձեզ՝ միևնույն է, անխուսափելի է մեր, իսկ դա նույնն է՝ մեր ժողովրդի հաղթանակը, որովհետև մենք անճնական և ոչ մի խնդիր չունենք լուծելու: Մենք իշխանությունից վերցնելիք չունենք, օրինաչափ ճանապարհով իշխանության գալով «Ազգային Միաբանությունը» ժողովրդին, մեր ազգաբնակչությանը տալու է իր ավյունը, իր գիտելիքները, իր փորձը: Սա է մեր կուսակցության նպատակը:

Համոզված եղեք, որ լուսաբացը իրապես գալու է մեր հինավուրց հողը: Համոզված եղեք, որ իշխանությունների իրարանցումը, եթե պատկերավոր բնութագրելու լինենք, ապա կապզեր զուգահեռ անցկացնել նշանավոր Դիոգենես Սինոպացու հայտնի վարքագծի հետ: Իսկ ո՞րն է ընդհանրականը. զուգահեռն այն է, որ երբ Դիոգենեսը բնակություն է հաստատում Կորնթոսում, հանկարծ լուր են ստանում, որ Փիլիպ թագավորը՝ Ալեքսանդր Մակեդոնացու հայրը, արշավանքով գալիս է դեպի Կորնթոս: Բոլորը խառնվում են իրար, խուճապ է սկսվում, իսկ փիլիսոփան էլ այդժամ իր կավե տակառ-բնակարանը մտահոգ և լուրջ դեմքով հետուառաջ է գլորում: Ասում են՝ իմաստուն, ի՞նչ ես անում: Պատասխանում է. ես էլ ուզում եմ ձեր նման պատրանք ստեղծել, որ, իբր, Կորնթոսը պաշտպանում եմ: Հիմա էլ սրանք՝ կոալիցիոն ուժերը և իրենց սազանդարները, ուզում են պատրանք ստեղծել, որ «մեծ» գործ են անում: Ի վերջո, ինչպես Կորնթոսը պաշարվեց Փիլիպ արքայի կողմից, այնպես էլ կպաշարվի և կկործանվի այս իշխանությունը: Առավել ևս, որ իրենց շարքերում Դիոգենես Սինոպացու նման պաշտպան էլ չունեն: *(Բուռն, երկարատև ծափահարություններ):*

Ժողովուրդ ջան, թեթև սրտով գնացեք յուրաքանչյուրդ ձեր տարածքային կազմակերպություն, հանգիստ խղճով ասեք՝ միահամուռ գնում ենք հանրաքվեի և «ՈՉ» ենք ասում այս իշխանություններին: Հաղթանակը մերն է:

«Իրավունք», 28.X.-3.XI.2005:

Եկավ Սերժն, ու վեներաները զարթնեցին

– Պարոն Գեղամյան, իշխանությունները վստահ են, որ ընդդիմությունը միասնական չէ, և դրա պատճառն այն է, որ դուք ձեր մեծ հավակնությունների մասին հայտարարում եք հենց այն պահին, երբ ընդդիմությունը միասնանալու փորձեր է անում:

– Ձեր հարցից բխում է, թե իբր իշխանությունները ցավում են ընդդիմության համար: Իսկ ո՞ր դեպքում կարող է իշխանությունը նման հոգատարություն դրսևորել ընդդիմության հանդեպ: Միմիայն այն դեպքում, երբ իր կողմից կանխավ մշակված սցենարը խախտվում է: Ահա սա է պատճառը, որ երբ ցանկացած լրատվամիջոց ընթերցում ես, տեսնում ես, որ իրենց բանուգործը թողած՝ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի «այո»-ն իշխանական լրատվամիջոցների պարագայում, կամ «ոչ»-ը՝ ընդդիմադիրների պարագայում, քարոզելու փոխարեն, բոլորը Գեղամյանի հարցն են քննարկում: Ի վերջո, քաղաքականությունը չի ենթադրում, որ քաղաքական ուժերը պետք է Հովհաննես Չեքիջյանի երգչախումբը հիշեցնեն. 17+1 + «Ազգային Միաբանություն» + ևս մի քանի քաղաքական ուժեր և այրեր կանգնեն հարթակին ու տարբեր ձայներով, շատ դեպքերում բաղաձայն, «ոչ» վանկարկեն: Քաղաքականությունը ենթադրում է քաղաքական լուրջ պայքար, և նման պայքարում դու պետք է առաջնորդվես քո կուսակցությանը հոգեհարազատ մոտեցումներով և այն ծրագրային հիմնադրույթներով, որոնք հաստատվել են համագումարի կողմից, ինչը և մենք անում ենք: Նաև բարոյական չենք համարում մեր մոտեցումները պարտադրել ընդդիմադիր դաշտի մեր գործընկերներին, ինչպես և իրենք իրավունք չունեն իրենց մարտավարությունը պարտադրելու մեզ: Եվ ընդհանրապես, շատ հետաքրքիր քաղաքական զարգացումների ականատես ենք դառնում վերջին օրերին: Ընդդիմադիր ճնացող անձինք նամակներ են հղում թերթերին և, այդ նամակներում իրենք իրենց հորջորջելով ընդդիմություն, մեջբերումներ են անում պաշտպանության նախարարի խոսքերից: Այսինքն, իրենց ընդդիմադիր ներկայացնող գործիչները հալած յուղի պես են ընդունում Սերժ Սարգսյանի՝ իմ հասցեին հնչեցրած հերյուրանքները: Դա շատ լուրջ մտորումների տեղիք է տալիս առ այն, որ ընդդիմադիր ճնացող այդ մարդիկ ի սկզբանե գործում են խիստ համահունչ այս իշխանությունների հետ, եթե չասենք՝ վերջինիներիս թելադրանքով: Եվ բնական է, որ նման իրավիճակում, ասենք, օրինակ, «Ազգային Միաբանությունը» երկու կողմից թիրախ է դառնում «Էմմա Գաբրիելյան» անվան քողի տակ թաքնված տղամարդ ճնացողների կողմից: Բացի այդ, վերջին մի քանի իրադարձություններն ինձ հիշեցրեցին հռչակավոր նկարիչ Ջորջոնեի հայտնի կտավը՝ «Քնած Վեներան», որտեղ պատկերված է մերկ քնած գեղեցկուհին:

Ավելի ուշ Ջորջոնեի աշակերտ Տիցիանը մեկ ուրիշ շեդևր նկարեց՝ «Ուրբինայի Վեներան», որտեղ Վեներան արդեն արթնացել է: Ու երբ վերլուծում ես քաղաքական այս զարգացումները, ակամայից հիշում ես «այո» քարոզող որոշ գործիչների, որոնք իրենց ողջ քաղաքական մերկությամբ մինչև վերջերս քնած վիճակում էին՝ ինչպես Ջորջոնեի Վեներան, մեկ էլ հանկարծ պաշտպանության նախարարը վերադարձավ Ամերիկայից, և մեկեն արթնացան մեր մերկ վեներաները: Բայց եթե առաջին դեպքում գործ ունեինք շեդևրների հետ, ապա ի դեմս Քոչարյանի և Սերժ Սարգսյանի՝ ամենևին տաղանդավոր գեղանկարիչներ չունենք, առավել ևս՝ մոդելն էլ Վեներան չէ, այլ ընդամենը Խոսրով Հարությունյանը: Ինձ համար նաև զարմանալի է, թե ինչու են սարսափած ասում, որ եթե Գեղամյանը գա իշխանության, ապա իր հակառակորդները կենթարկվեն գիլյոտինի: Օրենքի գերակայության պայմաններում գիլյոտինը իշխանության ձեռքին երբեք չի կարող գործիք դառնալ: Բացի այդ, պատիժը փոխաբերական իմաստով պետք է հասկանալ, որովհետև մի պարագայում գիլյոտինն է ընդունվում պատժագործիք, իսկ մեկ այլ դեպքում՝ քաղաքական պարսավանքը: Դա նույնն է, որ, ասենք, երբ կնոջ բեղիկներն են քաշում, դա ամենևին էլ պատիժ չէ, այլ էպիլյացիա, իսկ եթե տղամարդու բեղիկներն են քաշում, դա արդեն ինքնին պատիժ է: Նայած, թե որ տեսանկյունից մոտենաս. պարոն Հարությունյանը մոտեցել է գիլյոտինի տեսանկյունից, մինչդեռ մենք քաղաքական դաշտը ենթարկելու ենք կոսմետոլոգիական էպիլյացիայի՝ քաջ գիտակցելով, որ վերջինիս համար անպաշտոն մնալը հավասարազոր է գիլյոտինի ենթարկվելուն: Միգուցե ա՞յս երանգն է նա նկատի ունեցել՝ սարսափելով իշխանափոխությունից:

- Սակայն, բացի իշխանությունից, ընդդիմության միասնականության բացակայության համար ցավում է նաև ընդդիմադիր դաշտի ներկայացուցիչ Ալբերտ Բազեյանը, որն ասում է՝ եթե ընդդիմությունը երեք բևեռով գնա սահմանադրական «ոչ»-ին, ապա կրելու է հերթական պարտությունը:

- Հարգում եմ, բայց չեմ կիսում Ալբերտ Բազեյանի այդ կարծիքը: «Ազգային Միաբանությունը» սահմանադրական հանրաքվեն երբեք իր համար չի դիտում իբրև յուրովի քաղաքական Վաթեռլո: Մենք մեր համագումարի ընթացքում ձևակերպել ենք քաղաքական մոտեցումը՝ ասել «ոչ» այս նախագծին: Եվ եթե մենք քարոզարշավ ենք անում և դրա ընթացքում մեր զինանոցում եղած փաստարկներով կոչ ենք անում ասել «ոչ», այստեղ միաբանվելու ի՞նչ խնդիր կա: Անպայման պետք է ինձ հետ լինեն իմ մյուս գործընկերները, որ իմ «ոչ»-ն ավելի համոզի՞չ դառնա: Հակառակը, նույն այդ ընթացքում նրանք գնում են ուրիշ բնակավայրեր, և արդյունքում ընդդիմությունը կկարողանա «ծածկել» ողջ հանրապետությունը: Մեզ համար գերխնդիրն այն է, որ տեղերում չկեղծվեն հանրաքվեի արդյունքներն, ու մենք շեշտը դնելու ենք դրա վրա: Եթե մենք կարողանանք տեղերում պաշտպանել ընտրության արդյունքները, այդ պարագայում պարտադիր չի լինի Երևանում ինչ-որ ակցիաներ անել: Մեր ձեռքի տակ եղած՝ հանրաքվեի իրական արդյունքները ամենաարդյունավետ ձևը կգտնենք ներկայացնելու նախ մեր հանրությանը, ապա միջազգային ատյաններին, որոնք քանիցս հայտարարել են, որ չեն

հանդուրժի հանրաքվեի արդյունքների կեղծում: Վերջին հաշվով, «17+1»-ը այնքան հզոր ֆորմատ է, որ, կարծում եմ, նրանք ամենևին «Ազգային Միաբանության» կարիքը չեն ունենա, որպեսզի Երևանում մարդաշատ հանրահավաք կազմակերպեն:

– Այսինքն, համաձայն չե՞ք Արամ Զ.Սարգսյանի այն կոչին, որ պետք է նոյեմբերի 27-ին գնալ քվեարկության և գալ Երևան, որովհետև ժողովրդի քվեն պետք է պահվի Երևանում:

– Ես ի գիտություն եմ ընդունում ցանկացած քաղաքական ուժի մոտեցում, սակայն գտնում եմ, որ պակաս կարևոր չէ տեղերում, հանրաքվեի ողջ ընթացքում, առավել ևս դրա արդյունքներն ամփոփելիս իրականացնել խիստ հսկողություն: Ակնհայտ է, որ եթե տեղերում չկեղծվի, ճանապարհին չեն կարողանա կեղծել, որովհետև «բարաթն» արդեն մեր ձեռքին կլինի:

– Եթե տեղերում պահեցիք ժողովրդի «ոչ»-ը, ի՞նչ է հետևելու դրան:

– Եթե տեղերում պահեցինք, և չկարողացան կեղծել, ապա արդեն իսկ միջազգային հանրությունը, որն աչք էր փակել 2003-ի խայտառակ նախագահական և ԱԺ կեղծված ընտրությունների վրա, վերջապես կհասկանա, որ այս իշխանությունները ոչ մի հեղինակություն չեն վայելում ժողովրդի մեջ, ու եթե նրանք հույս են փայփայում, որ այս իշխանության հետ կարող են կարգավորել ԼՂ հարցը, ինչպես իրենց կարողացել են համոզել Ռ.Քոչարյանը և Ս.Սարգսյանը, որն էլ վերջիններիս տարիներ շարունակ պաշտոններին մնալու յուրովի փրկօղակ է հանդիսանում, ապա այդ հույսերը սին են: Մինչդեռ մենք լավ գիտենք, թե ինչ ճակատագրի են արժանանում կոռումպացված իշխանությունները միջազգային կառույցների սկզբունքային և հետևողական դիրքորոշման պայմաններում: Իսկ ԼՂ հարցը կարող է կարգավորել միայն լեգիտիմ, ընտրված իշխանությունը:

– Իսկ եթե կեղծեցին և ապահովեցին «այո»-ն, դրա՞ն ինչ կարող է հետևել:

– Քաղաքականությունը պետք է զերծ պահենք եթե-ներից, որովհետև ցանկացած քաղաքական ակցիա, իսկ կեղծիքը նույնպես քաղաքական ակցիա է, ենթադրում է բազմաբնույթ արձագանքներ: Եթե ես այսօր այդ մոտեցումների մասին սկսեմ վերլուծություններ անել, կնշանակի, որ հաշտվում եմ այն մտքի հետ, թե իրենք կեղծելու են, և ես անզոր եմ դրա առաջն առնել: Մինչդեռ, իշխանություններն այսօր շատ ավելի թուլացած են, քան երկու տարի առաջ էին, որովհետև այս տարիների ընթացքում ժողովուրդը վերջնականապես համոզվեց, որ սրանց պարագայում ոչ մի լավ բան չի սպասվում ո՛չ մարդկանց, ո՛չ պետությանը:

– Համաձա՞յն եք «Հանրապետություն» կուսակցության նախագահի հետ, որ ստեղծված իրավիճակից ելքը միայն հեղափոխությունն է, որն ընդդիմությունը պետք է փորձի իրականացնել նոյեմբերի 27-ին:

– Իմաստուն մի քաղաքագետ ասել է՝ եթե քաղաքական գործիչը երիտասարդ է ու հեղափոխական չէ, ապա նա սիրտ չունի: Եթե միջին տարիքի է և պահպանողական չէ, կնշանակի խելք չունի: Բանալին այս իմաստուն խոսքերի մեջ է:

– Պարոն Գեղամյան, իշխանությունն արդեն «այո»-ի իր քարոզչական կարգախոսն ընտրել է՝ գործող Սահմանադրությունը ՀՀԾ-ինն է, և «ոչ»-ի թիկունքից երևում են ՀՀԾ-ի ականջները: Իսկ առաջարկվող փոփոխություններով ունենալու ենք եվրոպական Սահմանադրություն: Մտավախություն չունե՞ք, որ ձեզ և ձեր գործընկերներին կանվանեն ՀՀԾ-ի ականջ սատարողներ:

– Նման մտավախություն չունեմ, որովհետև տվյալ դեպքում կոնկրետ կոալիցիան ասպետական դիրքորոշում չի դրսևորել իր գործընկեր ՀՀԿ-ի հանդեպ: Չէ՞ որ ՀՀԿ-ն 95-ին ՀՀԾ-ի հետ «Հանրապետություն» բլոկի մեջ էր, և գործող Սահմանադրությունն ինչքան ՀՀԾ-ինն է, նույնքան էլ ՀՀԿ-ինն է: Եթե ՀՀԿ-ն այս հարցում համարժեք պատասխան չի տալիս նման պնդման հեղինակներին, կնշանակի զբաղված է ինքնախարազանմամբ: Ավելին. եթե իրենք նկատի ունեն, որ գործող Սահմանադրության մի ականջը ՀՀԾ-ական է, ապա ակնհայտ է, որ մյուսը հանրապետական է: Այնպես որ, իշխանությունները հերթական անգամ «մոլորվել են երեք սոսիների մեջ»:

Նաիրա Զոհրաբյան

«Հայկական ժամանակ», 4.XI.2005:

«Աստծուց մի բան եմ խնդրում...»

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի հանդիպումները բնակչության հետ վերածվում են յուրովի մանիֆեստացիաների: Բացառություն չէր նաև նոյեմբերի 20-ին Արմավիրի մշակույթի պալատում կայացած Ա.Գեղամյանի հանդիպումը արմավիրցիների հետ: Պրն Գեղամյանին նրանք դիմավորեցին աղուհացով, ծաղկեփնջերով և անդադար հնչող ծափողջույններով: Իսկ հասուն տարիքի մարդիկ ծափահարելուց զատ մեծական օրհնանքներ էին շռայլում Արտաշես Գեղամյանին: «Մեծ դժվարությամբ» Ա.Գեղամյանին հաջողվեց ճեղքելով անցնել հանդիպմանը եկած հազարից ավելի մարդկանց շարքերի միջով: «Երազանքս կատարվեց, թույլ տուր քեզ համբուրեմ», «Աստծուց մի բան եմ խնդրում, չմեռնեմ, տեսնեմ այն օրը, երբ դու մեր ժողովրդին դուրս կբերես այս ողբալի վիճակից», «Արդեն հինգ տարի է՝ որդիս Չելյաբինսկում է, գիտեր, որ գալու եմ հետդ հանդիպման, ասաց՝ ճակատդ համբուրեմ և աղաչեմ քեզ, որ մի ճար անեք՝ հետ գամ». նման ցանկություն-խնդրանքներով, ոմանք էլ արտասուքն աչքերին դիմավորում էին «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահին: Ահա նման պայմաններում Ա.Գեղամյանը քայլեց դեպի դահլիճ:

Արդեն իսկ դահլիճում (ուր ընդամենը 350 նստատեղ կար, որոնք էլ նախօրոք զբաղեցրել էին արմավիրցիները) «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի մեկժամանոց ելույթը ներկաները՝ բոլոր տարիքի մարդիկ, երիտասարդ, թե տարեց, կին, թե տղամարդ, շուրջ 700 մարդ շարքերի արանքում և լեփ-լեցուն նախասրահներում կանգնած համակ ուշադրությամբ ունկնդրեցին Գեղամյանի խոսքը:

Քարոզարշավի ողջ ընթացքում իրական պատկերն այն է, որ իշխող կոալիցիայի բոլոր հանդիպումները բնակիչների հետ գրեթե առանց բացառությունների տապալվում են: 300-400 տեղանոց դահլիճներում հավաքվում է լավագույն դեպքում 50-100 մարդ, որոնք, եթե հանդիպումը ԲՈՒՀ-ում է, ուսանողներ են, եթե մարզերում՝ քաղաքապե-տարանի, մարզպետարանի աշխատակիցներ, իսկ որոշ տեղերում՝ աշակերտներ, որոնք հանդիպման կեսից սկսում են ճողոպրել դահլիճներից: Այսպիսի ստիպողական հանդիպումների ականատես լինելուց հետո պարզապես անհավատալի է թվում, երբ տեսնում ես, թե ինչպիսի ջերմությամբ է ընդունվում «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը: Դիցուք, կիրակի օրը Արմավիրում կատարված հյուրընկալությունն այնպիսի անկեղծ մթնոլորտում տեղի ունեցավ, որ

մշակույթի տան բակում հավաքված ոստիկաններն ապշած իրար երեսի էին նայում:

Որոտընդոստ ծափահարությունները, որոնք սկսվեցին Գեղամյանի ամբիոն բարձրանալուց, դադարեցին հռետորի ողջույնի խոսքերը հնչելուց հետո: Հենց սկզբում պրն Գեղամյանը հայտարարեց, որ սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ արտահայտած ընդդիմության դիրքորոշման հստակեցումը՝ բոյկոտի կոչ անելը, լրջագույն խուճապ առաջացրեց իշխանական կոալիցիայի շարքերում: «Երբ մենք ի սկզբանե ասում էինք, որ «ՈՉ» ենք քարոզելու, փորձեցինք գոնե մեկ անգամ հավատալ կոալիցիոն ուժերին, Ռոբերտ Քոչարյանին, նրա աշխատակազմին, ովքեր ասում էին, որ նորովի են ուզում ապրել՝ սահմանադրական փոփոխություններն ընդունելուց հետո, որ կստեղծեն հավասար պայմաններ, որպեսզի ցանկացած քաղաքական ուժ հնարավորություն ունենա իր տեսակետը բարձրաձայն լրատվամիջոցներով՝ հատկապես հեռուստատեսությամբ հայտնել: Եվրախորհրդի, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովների նախագահներն այս շրջանում եկան Հայաստան, միահամուռ հորդորեցին, որ պետք է ամեն ինչ անել, որպեսզի ողջ գործընթացը թափանցիկ լինի՝ ժողովրդավարական հիմունքների վրա խարսխված: Բայց արդեն 1 ամսից ավել է անցել այն օրից, երբ պաշտոնապես հայտարարվել է քարոզարշավի մեկնարկի մասին, սակայն այդ ընթացքում հայաստանյան և ոչ մի հեռուստատեսություն գեթ 1 րոպե չի տրամադրել «Ազգային Միաբանության» թե՛ նախագահին, թե՛ տեղակալներին»,- ասաց Ա.Գեղամյանը՝ փաստելով, որ լրատվամիջոցները միայն «այո» են քարոզում: Նույնիսկ բանը հասել է այնտեղ, որ «այո»-ի կողմնակիցներն են իրար հետ բանավիճում՝ «Գեղամյանին և ընդդիմությանն ընդհանրապես վերագրելով բաներ, որոնք չեն ասվել»: «Իսկ ես զրկված եմ եղել հեռուստատեսությամբ իմ ուղիղ խոսքն ասելուց,- ընդգծեց Գեղամյանը՝ հավելելով,- եթե մարդ բարոյական նորմերի արժեքակիր է, բնականաբար, ստեղծված պայմաններում, երբ զրկված է եղել ազգաբնակչությանը հասցնելու բազմաթիվ փաստարկներ՝ սահմանադրական փոփոխությունները մերժելու հետ պայմանավորված, ավելին, երբ ժողովուրդը միայն և միայն «այո»-ի քարոզն է լսել, ապա ազնիվ կլինի, երբ այդ ամենին անտեղյակ ժողովրդին կոչ անես բոյկոտելու հանրաքվեն: Դրանով իսկ շեշտելով, որ եթե իշխանությունները արհամարհում են ժողովրդի սահմանադրական իրավունքը՝ իշխանականին հակառակ տեսակետներ լսելու ևս, ապա արդարացի կլինի, որ ժողովուրդն իր բոյկոտով պատասխանի նրանց: Հաշվի առնելով այս ամենը, «18+8» քաղաքական-հասարակական կազմակերպությունների ձևաչափը, «Արդարություն» դաշինքը, «Ազգային Միաբանություն կուսակցությունը» համատեղ կոչ են արել բոյկոտել հանրաքվեն»:

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը Արմավիրում, կրկին խոսելով փաստարկված թվերի լեզվով, ներկայացրեց Հայաստանի տնտեսական դաշտում տիրող իրավիճակը, որի արդյունքում իշխանության հովանու ներքո գործող կլանները զարտուղի ճանապարհներով գերշահույթներ են ստանում: Դահլիճից մի քաղաքացի լրացրեց հռետորին՝ ասելով, նմաններին պետք է տալ

«խուժաններ» որակումը: «Ես տնտեսական գնահատականն էի տալիս, իսկ դուք քաղաքական գնահատական տվեցիք: Այո՛, ճիշտ է, թերևս քաղաքական խուժաններ»,- ժողովրդի բուռն ծափահարությունների ներքո նկատեց Գեղամյանը՝ շարունակելով մատնացույց անել այն ոլորտները, ուր բարձիթողի վիճակ է, ուր արմատացած է կոռուպցիան, ուր բացահայտ ալան-թալան է: «Հիմա կանգնում և անամոթաբար պնդում են և փորձում են մի ողջ ժողովրդի թյուրիմացության մեջ գցել՝ ասելով, թե գործող Սահմանադրությունն է արգելում պայքար մղել կաշառակերության, կոռուպցիայի դեմ: Միամիտս էլ կարծեցի՝ միգուցե իսկապե՞ս գործող Սահմանադրության մեջ կան այնպիսի հոդվածներ, որոնք խանգարում են պարոններ գլխավոր դատախազին, ոստիկանապետին, հարկային և մաքսային ղեկավարներին, որ հանցագործ, կաշառակեր, կոռումպացված չինովնիկի ձեռքը բռնել: Իհարկե, չկան այդպիսի դրույթներ»,- հավաքվածներին բազում օրինակներով փաստարկված և համոզիչ բացատրեց «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահը՝ այդ կերպ հասկացնելով, որ Սահմանադրության փոփոխությունը այս իշխանությունների օրոք ոչինչ չի տա մեր երկրին: Նա նաև նկատեց, որ իշխանություններն իրենց վարքագծով նպաստեցին, որ ընդամենը 7 դիտորդ գա ԵԱՀԿ-ի կողմից՝ մասնակցելու հանրաքվեի գործընթացին: Իսկ այն, որ Հայաստանի իշխանությունները, ասես թե «առյուծի սիրտ են» կերել ու անտեսում են Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանների հայտարարությունները՝ քարոզչության հավասար պայմանների անհրաժեշտության վերաբերյալ, խոսում են այն մասին, որ իշխանություններին տրված է «ապահովագիր», որը և մտածելու տեղիք է տալիս առ այն, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների հետ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցը լուծելու ուղղությամբ: Եվ եթե իշխանությունների համատարած ապօրինությունների հանդեպ վերջիններս կոծկում են իրենց աչքերը և չեն տալիս համապատասխան գնահատական, ապա դժվար չէ կռահել, թե ինչ որոշում է փաթաթվելու հայ ժողովրդի վզին:

Ա.Գեղամյանը նոյեմբերի 27-ի հանրաքվեի կապակցությամբ հետևյալ կանխատեսումներն ունի. «Մենք բոլորս ականատես եղանք, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանում, երբ հազարավոր մարդիկ հավակնում էին համայնքապետերի և ավագանու պաշտոններին ընտրվելու և շատ դեպքերում որդեգրել էին հակաօրինական գործողություններ, հասարակությունը գիտակցաբար չգնաց և չմասնակցեց ընտրություններին: Անգամ իսկ կազմակերպական և ֆինանսական հսկայական ռեսուրսներ ներգրավելու պայմաններում, այն էլ բազմաթիվ կեղծիքների արդյունքում լավագույն դեպքում 30-37 % մարդ գնաց քվեարկության: Տրամաբանական է, որ հանրաքվեին էլ ավելի պակաս թվով մարդիկ կմասնակցեն, իշխանությունները թող այդ թվերն էլ նկարեն: Եվ եթե մինչ այժմ միջազգային հանրությունն է հայ ժողովրդին գնահատականներ տվել, կգա պահը, որ մենք այդ միջազգային կազմակերպություններին կասենք՝ ինչո՞ւ եք առաջնորդվում երկակի չափանիշներով, ինչո՞ւ, եթե ձեզ պետք է, որ

մի բան անպայման անցկացնեն, ձեր աչքերը փակում եք աղաղակող օրինախախտումների վրա»: Սա, ըստ Արտաշես Գեղամյանի, կլինի այն դեպքը, երբ մեր ազգը արդեն իսկ ինքը գնահատական կտա մեզ ժողովրդավարություն քարոզող միջազգային ատյաններին:

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը խոսքի վերջում կոչ արեց բոյկոտել հանրաքվեն: «Բոյկոտելով քվեարկությունը՝ մենք բոյկոտում ենք այս իշխանություններին»,-ասաց նա:

Իհարկե, արմավիրցիների համար շատ դժվար էր բաժանվել Արտաշես Գեղամյանից, քանի որ նա բարձրացնում էր իրենց սրտի խոսքը, կիսում իրենց դարդուցավը, մատնանշում այն ուղիները, որոնք երկիրը կհանեն այս ծանր վիճակից: Հավանաբար, սա էր պատճառը, որ նրանցից շատերը շրջապատել էին Արտաշես Գեղամյանին ու փորձում էին մի երկու բառ ավել փոխանակել նրա հետ: Հենրիկ Դադումյանը, չկարողանալով հասնել Ա.Գեղամյանին, փորձեց լրագրողների միջոցով իր գրած բանաստեղծությունը հասու դարձնել նրան: Հ.Դադումյանը նույնիսկ արտասվեց տողերն ընթերցելուց հետո: Միջին հասակի մի տղամարդ էլ հետաքրքրվեց. «Հիմա ի՞նչ եք ասում, 27-ին պիտի գանք Երևա՞ն»: «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահը պատասխանեց, որ դա ձեր որոշելիքն է, իսկ մեր խնդիրն այն է լինելու, որ ընտրատեղամասերում դիտորդական խմբերի միջոցով ամրագրենք միայն քվեարկության եկածների իրական թվերը: «Մենք ձեր ելույթը ո՞նց մոռանանք, որ «այո» ասենք»,- իր դիրքորոշումը հիմնավորեց Արմավիրի բնակիչը: Մի տիկին էլ ասաց, որ բոյկոտելը բավարար չէ, երկրի ողբալի վիճակի համար պետք է Քոչարյանը պատասխան տա: Նրա խոսքը շարունակեց մեկ այլ քաղաքացի՝ «վառված ենք իշխանություններից, վառված» արտահայտությունները անընդհատ կրկնելով: «Մենակ կռապաշտը ծնողին երեխայից կկտրի,- ասում էին արմավիրցիները,- էս ինչ երկիր սարքեցին, ժողովրդի գլխին էս ինչ զուլում բերեցին, որ ծնողն ու երեխան անհույս բաժանվել են իրարից»: Սա վերաբերում էր արտագաղթին, որը համատարած բնույթ ունի Արմավիրում, ինչպես և ողջ Հայաստանում:

Այս ամենը դահլիճում, իսկ մշակույթի տան բակում արդեն սկսվեց սրտաբուխ խոսքերի շարան. «Սեռնեմ ջանիդ, Արտաշես Գեղամյան ջան», «Գեղամյան՝ նախագահ» վանկարկում էին հարյուրավոր մարդիկ և բուռն ծափահարում:

Ոստիկանների զգաստ հայացքի ներքո արմավիրցիները ինչպիսի ջերմությամբ ընդունել էին Գեղամյանին, այդպիսի տրամադրությամբ էլ ճանապարհ դրեցին: Իսկ Հենրիկ Դադումյանը օրհնեց դեկտեմբերի 2-ը, որը, ինչպես պարզվեց, «Ազգային Միաբանություն կուսակցության» առաջնորդի ծննդյան օրն է: Մի խոսքով՝ արմավիրցիները հարգում, սիրում և հավատում են Ա.Գեղամյանին:

Գոհար Բադեյան

«Իրավունք+հարց ու պատասխան», 22.–24.XI.2005:

Մեծն այծը. վհուկների գիշերաժողովը

Երբ մտովի փորձում էի ամփոփել Սահմանադրության փոփոխությունների կոալիցիոն կուսակցությունների քարոզարշավի առանձնահատկությունները, ակամայից մտաբերում էի Կեղծիք Ստախոսի Քյալագյոզյանի կյանքն ու գործունեությունը: Իհարկե, ժողովրդի համար ակնհայտ դարձավ կոալիցիոն կուսակցությունների քարոզչության սնանկությունը, երբ խստագույնս արգելվեց ինձ և իմ գործընկերներին ելույթ ունենալ որևէ հեռուստաալիքով: Կարելի էր այս ամենին նայել ինչպես Արարատյան հարթավայրի անցյալ տարվա ձնածածկույթին, եթե վերջիններիս ստախոսությունները չհամեմվեին ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտոնյայի անունը հիշատակելով, դրանով իսկ փորձելով սեփական սուտը արդարության տեղ սաղացնել: Հերթական անգամ հիշողությունները կորցրած մարդկանց հայտնեմ «Ազգային Միաբանություն կուսակցության» տեսակետը, որը մեր խմբակցությունը գրավոր ներկայացրել էր Ազգային ժողով Սահմանադրության փոփոխությունների փաստաթղթի երկրորդ ընթերցման քննարկման ժամանակ: Եթե, իրոք, կոալիցիոն կուսակցությունները, ինչպես իրենք բազմիցս հայտարարել են, Սահմանադրության փոփոխությունները բախտորոշ են համարում երկրի համար, որոնք ստեղծում են իրավական հնարավորություններ տնտեսության աննախադեպ զարգացման, օրինականության հաստատման գործում, նպաստելու են ժողովրդավարության անշրջելի հաստատմանը, ապա կոալիցիայի պատգամավորները սեփական իսկ անշահախնդրությունը ապացուցելու համար, իրենց վերագրվող «պետական այր» բարձր կոչումը հաստատելու նպատակով թող վայր դնեն պատգամավորական մանդատները: Ապա կանցկացվեն Ազգային ժողովի և Նախագահի արտահերթ ընտրություններ, արդեն իսկ Սահմանադրության նոր պահանջներին համապատասխան: Զարմանալի է, որ սահմանադրական փոփոխությունները կիրառվելու են ընդունման դեպքում միայն երկու տարի անց. ինչո՞ւ են շահագրգռված, որ իշխանական մեքենան ևս երկու տարի «յուղ վառի»: Համաձայնելով մեր առաջարկին՝ կոալիցիան կհամոզեր ժողովրդին, որ վարչախումբը ընտրել է իր գործած մեղքերի համար քավության ճանապարհը և գիտակցում է, որ իշխանությունը բռնազավթած մարդիկ կորցրել են մեր երկիրը ղեկավարելու բարոյական իրավունքը: Չգիտես ինչու այս ամենը ոմանց հիշողության մեջ առաջացրել է սև քառակուսի (խոսքը Կազիմիր Սևերինովիչ Մալևիչի հայտնի գեղարվեստական շեղվի մասին չէ): Ասուլիսի ժամանակ բերված փաստարկներս ոմանք միտումնավոր չեն հիշատակում և խոսում են միայն մանդատները վայր դնելու, իբր, օդից կախված առաջարկի մասին: Հետաքրքիրն այն է, որ իրենք իրենցից զարմացած են այն

աստիճան, որ ԱՄՆ -ի պետքարտուղարության ներկայացուցչի պաշտոնը (ում հետ վերջերս ԱՄՆ -ի դեսպանատանը կայացել էր հանդիպում) բարձրացրել են սեփական անձերի կարևորությունը ընդգծելու համար...

Դե ինչ, հավանաբար, կուսակցապետերի նման տեղակալների հանդիպումների տեսլականն է ունեցել իսպանացի մեծատաղանդ գեղանկարիչ Ֆրանսիսկո Գոյան, երբ 1820-1822 թթ. կերտել է իր աշխարհահռչակ գլուխգործոցներից մեկը՝ այն անվանելով «Մեծն այծը. վհուկների գիշերաժողովը»:

Հարգանքով խմբագրությանը, կարեկցանքով
այդպես էլ չկայացած ընդդիմախոսներիս՝

Արտաշես Գեղամյան

«Իրավունք», 25.XI.–1.XII.2005:

«Ես հայ եմ, դրանով էլ երջանիկ եմ»

Եվ ազգիս երջանկությունը գողացողները հավերժ դատապարտված են լինելու

Սիրելի ընթերցող, նոյեմբերի 12-ին Վանաձորի Հովհ.Աբելյանի անվան դրամատիկական թատրոնի թե դահլիճում, թե նախասրահում ասեղ գցելու տեղ չկար: Մարդիկ եկել էին հանդիպելու «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի հետ: Ստորև ներկայացնում ենք նրա բանավոր խոսքի շարադրանքը: Կարծում ենք, դա մեծ ոգևորություն կառաջացնի նոյեմբերի 27-ի հանրաքվեից հետո իրենց «անաչառությամբ և ճշմարտախոսությամբ» աչքի ընկած Ռ.Քոչարյանի և կոալիցիայի մաս կազմող կուսակցությունների ղեկավարների շրջանում:

Խորին շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ, որ ժամանակ գտաք գալու այս հանդիպմանը: Ձեզ հետ մենք փոթորկահույզ ժամանակներում ենք ապրում, հայտնվել ենք մի այնպիսի իրավիճակում, որ թվում է, թե ամբողջ աշխարհը կարող է գլուխ թեքել մեզնից, խռովել հայերիցս, եթե հանկարծ, ինչպես իշխանական քարոզչությունն է ասում, հանրաքվեն բոյկոտվի կամ «ՈՉ» ասվի:

Փորձենք Ձեզ հետ մանրակրկիտ վերլուծել, թե ինչու է «Ազգային Միաբանություն կուսակցությունը» գտնում, որ ստեղծված իրավիճակում միակ ճիշտ ուղին հանրաքվեն բոյկոտելն է կամ էլ «ՈՉ» ասելը: Եվ այսպես: Ի՞նչ իրավիճակում է հայտնվել այսօր Հայաստանի Հանրապետությունը: Ցանկացած հեռուստաալիք միացրեք, ցանկացած ռադիոկայան լսեք և դուք կտեսնեք ու կլսեք, թե, իբր, մեր ժողովուրդը սահմանադրական փոփոխություններին միահամուռ ասում է «այո», որ «այո»-ին այլընտրանք չկա: Ավելին, բոլորիս մեղադրում են անգամ իսկ մեր ապագայի վրա քար գցելու մեջ: Ընդդիմադիր գործիչներին ուղիղ եթեր բացարձակապես չեն տրամադրում: Եթե հանկարծ ելույթներս տեսագրում են, ապա երեկոյան, երբ տեսնում ես, թե սեփական խոսքդ ինչպես են աղավաղել, ինչ աստիճանի են խեղաթյուրել, մնում ես զարմացած: Ինչպե՞ս կարելի է մոլորության մեջ գցել մի ամբողջ ազգի, ինչպե՞ս կարելի է շփոթեցնել մի ժողովրդի, որն արդեն 15 տարի անընդմեջ տառապում է իրար հաջորդող, բայց էությամբ նույն իշխանությունների ձեռքին, կրում է անասելի կորուստներ, զրկվում հարազատներից, բարեկամներից, ում շուրջ 1,5 միլիոն ազգականներ հարկադրված են եղել արտագաղթել և այժմ էլ դեգերում են օտարության մեջ: Լսում ես կոալիցիոն կուսակցությունների ղեկավարների խոսքերը, ճառերը, բոլորը միաբերան ասում են՝ այո, մենք չենք հանդուրժի,

որ ընտրակեղծիք լինի: Հրապարակավ դա են հռչակում, իսկ վարագույրի հետևում «ռազնարյադկաներ» են իջեցնում, որ 80% նկարեն «այո», 20 %՝ «ոչ»: Արդեն զավեշտի է հասնում քարոզարշավը, զավեշտի է հասնում այն աստիճան, որ հենց վերջերս թերթերից մեկում՝ «Առավոտում», առիթ եղավ կարդալու Երևանի կենդանաբանական այգու տնօրենի (մի շատ պարկեշտ անձնավորություն է, որովհետև կարողացավ ցուրտ ու մութ տարիներին փրկել գազանանոցը), ամենայն հավանականությամբ, հարկադրաբար տված հարցազրույցի հետևյալ փաստարկը. «Անգամ փիղն «այո» կասեր Սահմանադրության փոփոխություններին, քանզի Երևանի քաղաքապետի պաշտոնը դառնում է ընտրովի»: Լավ է, հետո էլ չի ավելացրել, թե արջն էլ ճամփա է ընկել Դեբեդ գետով՝ «պառախողով» է գալիս «այո» քարոզելու: *(Ծիծաղ դահլիճում: Ծափահարություններ):* Այ, «այո»-ի քարոզիչների հիմնավորումները այս մակարդակի վրա են: Ավելին, մարդկանց հուշում են, թե «այո»-ի ամենասպառիչ պատասխանը կարող եք լսել նաև մեր տաղանդավոր երգիչ-երգչուհիների համերգների ժամանակ: Մասնավորապես, շնորհալի երգիչ Արսեն Սաֆարյանը համերգի ընթացքում «Դվե յաման»-ը կատարելիս, ընդհատելով երգը և դիմելով դահլիճին ասելու է՝ «այո» կասեք, կշարունակեմ երգելը, որովհետև ինձ հասկացրել են՝ զուլում կբերենք գլխիդ, հետ կուղարկենք Ղարաբաղ, Ստեփանակերտում կերգես: Սիրուշոյին էլ արգելել են երգել «Ով սարեր, մով սարեր, մանկությունս հետ բերեք» երգը, որովհետև «այո»-ի գաղափարախոսները նրան գլխի են գցել՝ մանկությունդ անցել է հին Սահմանադրության տարիների ժամանակ, ուստի երգածդ հին Սահմանադրության քարոզ կընկալվի: Այս է այդ մարդկանց բռնած գործը: Ավելին, սուպերմարկետների տնօրենների հետ պայմանավորվել են, որ վաճառողներն էլ պետք է քարոզեն և հետն էլ հօգուտ Սահմանադրության բարեփոխումների՝ գնորդներին քարոզաթերթիկներ բաժանեն: Էն աստիճանի են ուղեղները հետ տվել, որ հեռուստատեսությամբ 550-551 հեռախոսահամարով գովազդ կա, հիմա էդ համարով, երբ զանգ եք տալիս՝ ծիածանափայլ իշխանն ու կարմրախայտը պատասխանում են՝ կասեք «այո», կգանք, ձեր ուրախության սեղանը մեզանով կզարդարենք, «այո» չեք ասի՝ չենք գա: Ձավեշտ չի, բա ի՞նչ է:

Այս պարագայում եկեք մտովի վերհիշենք, թե ի՞նչ իրավիճակում ի հայտ եկավ սահմանադրական փոփոխությունների այս տարբերակը: Դեռ մայիսի վերջին հրապարակ էր իջեցվել սահմանադրական փոփոխությունների մի օրինագիծ, որի տակ իրենց ստորագրություններն էին դրել կոալիցիայի մաս կազմող բոլոր կուսակցությունները: Ասեմ ավելին, առաջին ընթերցմամբ այդ տարբերակը միաձայն ընդունվեց: Խոսքս կոալիցիայի մաս կազմող կուսակցությունների մասին է: Ոչ միայն միաձայն ընդունվեց, այլ նաև հեռուստաեթերը հեղեղել էին քարոզով, որ պետք է քվեարկել ու «այո» ասել ընդունված նախագծին: Դրան հաջորդեց այն, որ երբ Վենետիկի փորձագիտական հանձնաժողովն այցելեց Հայաստան, խոտանեց Սահմանադրության փոփոխությունների այդ նախագիծը, ասելով, որ այն բացարձակապես ոչ մի պահանջ, ոչ մի առաջընթաց չի ապահովում ու չի երաշխավորում: Այնուհետև նրանք գնացին պարոն Քոչարյանի մոտ: Վերջինս ընդունեց Լյուդովիկոս XIV-ի կեցվածքը ու, ասես թե, բացականչեց.

«Պետությունը ես եմ», ինչպես կասեմ, այնպես էլ կլինի: Եվ առաջին ընթերցմամբ ընդունված նախագծից արմատապես տարբերվող նոր օրինագիծ դրվեց արդեն իսկ երկրորդ ընթերցման: Եվ իրականությունն այն է, որ ճիշտ այն նույն մարդիկ, ովքեր քարոզում էին 1-ին տարբերակի օգտին, հիմա տրամագծորեն հակառակ, նոր սկզբունքների վրա խարսխված փոփոխությունների օգտին են քարոզում, ավելին՝ ջանասիրաբար պնդում ու փորձում են հանրությանը համոզել, որ առաջարկվող տարբերակը կատարյալ է: Հայտարարում են, որ եթե այս օրինագիծը չընդունվի, ապա խաչ է դրվում երկրի ապագայի վրա, որ ամբողջ Եվրոպան ու քաղաքակիրթ աշխարհը կխռովեն մեզանից և առաջընթաց չի ապահովվի: Ավելին, հեգնում են, որ պետք է կույր լինել չտեսնելու համար, որ այդ տարբերակով հստակ տարանջատվում են նախագահական, օրենսդիր, գործադիր, դատական մարմինների լիազորությունները, և որ ընդունվող փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության զարգացմանը խոչընդոտող բոլոր արատները կվերացնի: Նաև՝ Երևանի պետական համալսարանի ուսանողության հետ կայացած հանդիպման ժամանակ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը խոստովանեց, որ երկրում առկա արատները մեծապես պայմանավորված են նրանով, որ դատական համակարգը անկախ չի գործում, անկախ չէ: Հարց է ծագում, իսկ ո՞վ կարող է ներազդել դատական համակարգի վրա: Ի՞նչ, ընդդիմությունը, իհարկե, ոչ: Կոալիցիայի անդամ կուսակցությունները, իհարկե, ոչ, քանի որ նրանց Ազգային ժողովում պարզապես տրված է կոճակ սեղմելու, դակիչի դերակատարություն: Ապա ո՞վ, կնշանակի Քոչարյանը: Այսինքն՝ ակամայից գալիս ես տրամաբանական մի եզրահանգման, որ դատական իշխանությունների վրա ճնշում է գործադրում հենց ինքը՝ պարոն Քոչարյանը: Եվ, հավանաբար, այդ ճնշման ներքո է, որ բարև տալու համար մարդ են սպանում ու անգամ մեկ ժամ մեղադրյալի աթոռին չեն նստում: Ավելին, «ՏԷՑ-ի կռուգում» նույնպես մարդ են սպանում, և ընդամենը մեկուկես ամիս ձևի համար նստում, որից հետո որպես «պատիժ» 150000 դոլարանոց «Խամմեր» են ստանում, և դրանցով էլ իշխանությունների պատվերը կատարող կիլլերները թիկնապահներով այսօր շրջում են ոչ միայն Երևանում, այլև Հայաստանով մեկ:

Պարզապես զվարճալի էր պարոն Քոչարյանի հանդիպումը Երևանի պետական համալսարանի ուսանողության հետ: Հանդիպման 7-րդ, թե 8-րդ րոպեին պարոն Քոչարյանը հանեց մի փաստաթուղթ, որն էլ բարձրաձայն ընթերցեց՝ նշելով, որ այսօր սահմանադրական փոփոխությանը «ՈՉ» են ասում ճիշտ այն մարդիկ, ովքեր 2000 թ. մարտի 3-ին ստորագրել են Եվրախորհուրդ ուղարկված այս փաստաթուղթը, որում և հաստատում էին իրենց պատրաստակամությունը նոր Սահմանադրության ընդունման հարցում: Բնականաբար, հիշատակվեցին Վազգեն Մանուկյանի, Արտաշես Գեղամյանի, Խորեն Սարգսյանի և այն ժամանակվա վարչապետ Արամ Ջավենի Սարգսյանի ազգանունները: Հետո էլ դիմեց դահլիճին՝ հարցնելով, թե ինչպես է ժողովուրդն անվանում այն մարդկանց, ովքեր խոստանում են և հետո չեն կատարում: Վարժեցված մի քանի հոգի իրենց կարծիքը հայտնեցին: Ես էլ՝ նվաստս, մտածեցի, թե մի վերհիշեմ, թե այդ ի՞նչ

փաստաթղթի տակ եմ դրել իմ ստորագրությունը, որ այսօր երեսովս եմ տալիս: Բարեբախտաբար, «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթը տպագրեց այդ գրությունը: Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում դրա բովանդակությունը, որովհետև կարևոր եմ համարում, որ մեկ անգամ ևս Ձեզ հետ մտաբերենք այն: Փաստաթուղթը հասցեագրված է լորդ Ռասել-Ջոնսթոնին՝ Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի այն ժամանակվա նախագահին. «Հարգելի նախագահ, առաջին հերթին թույլ տվեք հայտնել մեր բավարարվածությունը Եվրոպայի խորհրդին Հայաստանի անդամակցության գործընթացի առաջընթացի կապակցությամբ: Խնդրում եմ տեղյակ լինել, որ անդամակցությանը առնչվող պարտավորությունների ցանկը (կրկնում եմ՝ պարտավորությունների ցանկը և ոչ թե վերջիններիս բովանդակությունը.- *Ա.Գ.*) քննարկվել է խորհրդարանում ներկայացված քաղաքական կուսակցությունների կողմից և պատիվ ունենք զեկուցելու, որ պարտավորությունները ամբողջությամբ ընդունելի են մեզ համար»: Այնուհետև շարունակվում է, որ «Հայաստանի միացումը Եվրոպայի խորհրդին ոչ միայն կուժեղացնի մեր համագործակցությունը, այլ նաև վստահորեն էլ ավելի կհամախմբի Հայաստանում ժողովրդավարացման գործընթացները»: Այո, այս փաստաթղթի տակ ստորագրել ենք 2000 թ. մարտի 3-ին: Բայց չէ՞ որ 2003 թ. փետրվարի 19-ի նախագահական խայտառակ ընտրություններն այդ փաստաթղթի հիման վրա ստանձնած պարտավորությունները բացառում էին: Բացառում էին նաև նույն թվականի մայիսի 25-ի խորհրդարանական խայտառակ ընտրությունների հնարավորությունը, որովհետև դրանք ժողովրդավարության հետ ոչ մի աղերս չունեին: Բացառում էին նաև այն կամայականությունները, որոնց ականատեսը եղանք ձեզ հետ, երբ 2003 թ. ապրիլի 16-ին Սահմանադրական դատարանն ընդունեց որոշում, համաձայն որի ակնկալվում էր «Հանրաքվեի մասին» օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և Ազգային ժողովին ասվում էր, որ մեկ տարվա ընթացքում պետք է անցկացնել Նախագահի վստահության հանրաքվե: Սահմանադրական դատարանի որոշումն արհամարհվեց: Բա մեր ստանձնած պարտավորություննե՞րը, ստորագրած փաստաթուղթը դա ի նկատի ունե՞ր: Ասեմ ավելին, 2004 թ. ապրիլի 5-ին, երբ «Ազգային Միաբանություն» խմբակցությունը, համաձայն Ազգային ժողովի կանոնակարգի, հանդիպում էր կազմակերպել ընտրողների հետ, ճիշտ այդ նույն բիրտ ուժը, խուժանը, բառիս իսկական առումով, 250 ուսադիր կրող բարձրաստիճան ոստիկանների աչքի առաջ կռիվ սարքեց: Այնքան էլ վախկոտ, սրիկա և ստոր էին, որ կին լրագրողի ծեծեցին, ծնունդով վանաձորցի մեր Աննա Իսրայելյանին: Իսկ ի՞նչ է նշանակում ոստիկանների աչքի առաջ մարդ ծեծել, ոստիկանն էլ դա չտեսնելու տա: Ի՞նչ է նշանակում, որ ոստիկանների աչքի առաջ տեսախցիկներ կոտրեն, այդ թվում նաև «Հայլուրի» տեսախցիկը, և ոստիկանները բացարձակապես անտարբեր մնան այդ ամենին: Դրան հաջորդեցին ապրիլի 12-ի խայտառակ դեպքերը, երբ ամենաանամոթ կերպով ծեծի էին ենթարկում կանանց և տարեցներին: Դրա հետևանքն էր այն, որ ուղիղ մեկ տարի անց հենց այդ նույն խուժանն արդեն իսկ «ՏԷՑ-ի կռուգում» սպանություն կատարեց: Ինքնաձիգերով պատերազմում

էին Երևան քաղաքում, չլինի թե թուրքերն էին վրա տվել, հա՞: Ի՞նչ, մենք՝ փաստաթուղթը ստորագրողներս, ա՞յս էինք ակնկալում: Իհարկե, ոչ: Մեր ստորագրած փաստաթուղթն ամենևին նման զարգացումներ ոչ միայն չէր ենթադրում, այլ նաև դրանք իսպառ վերացնելու ուղիներ էր սահմանում: Եվ փոխանակ այս ամենի մասին խոսվի, պարոն Քոչարյանը կանգնում ուսանողներին մոլորության մեջ է գցում ասելով՝ ստորագրել էին միջոցառումների ցանկը: Այո, ընդունում ենք, որ, ի թիվս այլ միջոցառումների, ընդգրկված էր նաև Սահմանադրության փոփոխությունը, բայց բովանդակային առումով ինչպիսի՞: Այնպիսի, որ էլ ավելի համախմբի Հայաստանի Հանրապետության հասարակությանը և ոչ թե խորացնի վիհը, անջրպետը, որ կա իշխանության ու ժողովրդի միջև:

Հիմա անդրադառնամ երդմնազանցության հարցին. տղամարդու համար ամենածանր մեղադրանքներից է, ըստ իս, երդմնազանցությունը, երբ մարդ երդվում է և իր վրա վերցրած պարտավորությունը չի կատարում: Մտածեցի, որ խոսքս լինի առավել հիմնավոր, չալարեցի (չնայած անգիր էլ հիշում էի), «պեղեցի» պարոն Քոչարյանի երդմնակալության արարողության ժամանակ նրա ելույթը, և այդ ելույթի մի քանի դրվագի վրա ուզում եմ հրավիրել Ձեր ուշադրությունը: Եվ այսպես. Ռ. Քոչարյանի ճառը երդմնակալության արարողության ժամանակ, ապրիլի 9-ը 2003 թ. «Անհրաժեշտ է արդյունավետ և հասցեագրված սոցիալական քաղաքականություն, որ կպաշտպանի մեր հասարակության ամենախոցելի խավերին»: Երդման հիանալի խոսքեր են: Արդյունքում ի՞նչ ունենք: 540 հազար թոշակառուներից 445 հազարի ամսական թոշակները զգալիորեն պակաս են, քան պարենային նվազագույն զամբյուղը, որը 18 հազար դրամ է կազմում: Իսկ ի՞նչ է սա նշանակում: Նշանակում է, որ եթե թոշակառուն անգամ իսկ իր ամբողջ թոշակը տանի տա սննդի, թերսնված է մնալու: Էլ չեմ թվարկում բոլոր այն ծախսերը, որոնց մասին յուրաքանչյուրդ էլ քաջատեղյակ եք, լինի դա ջուրը, լույսը, կենցաղային այլ խնդիրների լուծումը: Ահա թե ինչ է եղել: Ավելին ասեմ. վերջերս նվազագույն աշխատավարձը 13 հազար դրամից բարձրացրեցին, դարձրեցին 15 հազար դրամ, և աշխարհով մեկ «ծուղրուղու» կանչեցին: Ժողովուրդ ջան, փրկվում եք, 13 հազարը դարձել է 15 հազար: Ես էլ իրենց գիտցած միամիտը չեմ, ասացի՝ հլա մի հատ, այնուամենայնիվ, չնայած ամենօրյա կենցաղից գիտեմ, ստուգեմ, տեսնեմ այդ նույն ժամանակաշրջանում, վերջին երկու տարիների ընթացքում առաջին անհրաժեշտության ապրանքների սպառողական գների աճն ինչպիսի՞ն է եղել: Եվ ինձ օգնության հասան Ազգային վիճակագրական ծառայության տարեկան հաշվետվությունները: Եվ, այսպես, ըստ պարենային առանձին ապրանքախմբերի, կարդամ գների փոփոխությունները: Սիրելի ժողովուրդ, պարենային ապրանքների գները 2005 թ. սեպտեմբերի դրությամբ աճել են 109,6%-ով, սա 2003 թ. հունվարի համեմատ, հացամթերքինը՝ 120,5%, մսամթերքինը՝ 125,3%, ձկնամթերքինը՝ 127,9% և այլն, ոչ ոգելից խմիչքներինը՝ 117%, լիմոնադը, ջերմուկն ինչի՞ եք թանկացրել: Այ տնաշեններ, ջուրը գետնի տակից գալիս է, դոլարի կուրսն էլ գցում եք: 120%-ով հիմնական սննդամթերքի գների աճ կա: 13 հազարը դարձնում են 15 հազար և առանց անհարմար զգալու խոսում են առաջընթացի մասին:

Ահա սա է իրական պատկերը: Ասեմ նաև, որ այս թվերը բերված են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թ. հունվար-սեպտեմբեր» տեղեկատվական ամսական զեկույցի էջ 73-ից, որ առավել թերահավատները, իշխանությունների նվաճումների գովքն անողները չծուլանան, գնան տանը բացեն կամ գնան Ազգային վիճակագրական ծառայություն՝ բողոքելով, թե էս ի՞նչ թվեր եք հրապարակել, որոնք էլ մեջ էր բերում Գեղամյանը: Ի՞նչ, կատարե՞լ է պարոն Քոչարյանը երդումը, որ թեթևացնի սոցիալական խավերի վիճակը, իհարկե, ոչ:

Հիմա հաջորդը, երդմնակալության ճառի հաջորդ «գոհարը». «Պայքարը կոռուպցիայի, կլանայնության և հովանավորչության դեմ պետք է առաջնահերթ դառնա մեր աշխատանքում: Այդ պայքարի արդյունավետությունը կախված է իշխանությունների քաղաքական կամքից և ժողովրդի քաղաքացիական ակտիվությունից»: Երդվել է պարոն Քոչարյանը, որ պայքարը ուժեղացնելու է կոռուպցիայի, կաշառակերության դեմ և դրսևորելու է քաղաքական կամք: Մի քանի օրինակներ բերեմ, որոնք ապացուցում են ճիշտ հակառակը: Ուրեմն, շուրջ 3 տարի առաջ սեփականաշնորհվեց «Բաշխիչ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն: 12 միլիոն դոլար կանխիկով պետությունը վերցրեց, 28 միլիոն էլ վարկ ձևակերպեցին: Անցնում են տարիներ, առանց մի լումա կապիտալ ներդրումների այդ նույն բաշխիչ ցանցերը վաճառում են 79 միլիոն դոլարով «ՌԱՕ ԵԷՍ»-ին: Չլինի՞ թե կարծում եք միամիտ ենք, չենք հասկանում, որ առաջին առքուվաճառքը թղթի վրա է եղել, վարկն էլ փակել են ճիշտ այդ նույն բաշխիչ էլեկտրացանցերի շահագործումից ստացած եկամուտներից: Այդ ո՞նց է լինում, այ մարդ, էս մեր երկիրը սրանց ձեռքում «Էլդորադո» է դարձել, մեր վրա էլ խաբար չկա, ժողովուրդ ջան: Երկու տարվա ընթացքում դրսից եկած տղերքն այնքան շնորհքով էին (խոսքս «Միդլենդ Ռեսուրսիզ» -ի տերերի մասին է, որը գրանցված է ինչ-որ օֆշորային գոտում), որ մեկը երկուս են դարձրել՝ 40 միլիոն դոլարը դարձրել են 80 միլիոն դոլար: Պարզ չէ՞, ինչ է տեղի ունեցել: Դրածո մարդկանց միջոցով թղթերը ձևակերպել են, հետո էլ 2-3 տարվա ընթացքում առնվազն 60 միլիոն դոլար գրպանել: Սա ակնհայտ է, չէ՞: Այսպե՞ս է ընթանում պայքարը կաշառակերության դեմ, այսպե՞ս է պարոն Քոչարյանը պայքարում կոռուպցիայի դեմ: Բերեմ մեկ այլ օրինակ: Հայկական ատոմային էլեկտրակայանը, երբ վերջերս հանձնվեց Ռուսաստանին (նրանք են հիմա ատոմակայանի կառավարումն իրականացնում, մենեջմենթ կոչվածը), կուտակել էր 18 միլիոն դոլարի պարտք՝ միջուկային վառելիքի գնման և այլ կարիքների դիմաց: Ավելին, տարեկան 10-ից 12 միլիոն եվրո էր ստանում համապատասխանաբար Եվրամիությունից, որ կարողանա այդ գումարներով ապահովել ատոմակայանի անվտանգ շահագործումը: Այս պարագայում կառավարումը վերստին հանձնեցին այդ խնդիրներում մասնագիտացված Ռուսաստանի «ՌԱՕ ԵԷՍ»-ին: Ի՞նչ եք կարծում, նույն այդ ատոմակայանը, նույն աշխատակազմով, բացառությամբ մի երկու-երեք թալանչիների, նույն հզորություններով աշխատելու պարագայում, նույն սպառողները ունենալու պայմաններում արդեն իսկ իր կառավարման 1-2 տարվա ընթացքում մարեց 18 միլիոն դոլարի պարտքը, հրաժարվեց տարեկան 10-12 միլիոն եվրո վարկ ստանալուց, հետո էլ

ապահովեց 20 միլիոն դոլարի մաքուր եկամուտ: Ի՞նչ, երեխա՞ ենք, չե՞նք հասկանում՝ ինչ է տեղի ունենում: Ո՛չ հզորությունն ավելացրեց, բացարձակապես ո՛չ սպառողներն են շատացել, ո՛չ էլեկտրաէներգիայի գներն են ավելացել. կնշանակի «մերոնք» պարզապես թալան էին անում ատոմակայանում: Պարոն Քոչարյան, է՞ս է ձեր պայքարը կաշառակերության, կոռուպցիայի դեմ, հետո էլ խոսում եք երդմնազանցությունից, բա եղա՞վ, բա սազե՞ց: Մի օրինակ էլ բերեմ: Երևանի կոնյակի գործարանը վաճառվեց «Պեռնո Ռիկար» ֆրանսիական հայտնի ձեռնարկությանը 28 միլիոն դոլար գումարով. այդ գործարքը սկսվեց 1996 թ. վերջին և ավարտվեց 1997թ.: Անցան տարիներ, բացարձակապես ոչ մի լումայի կապիտալ ներդրում այնտեղ չի արվել: Ասեմ ավելին, եղած հնագույն, թանկ սպիրտների քանակը պակասել է, կիսվել է: Կարդում ես նրանց էլեկտրոնային կայքը և ի՞նչ ես տեսնում. գործարանի շուկայական գինն այսօր, որ հայտարարագրված է այնտեղ, ոչ ավել, ոչ պակաս 770 միլիոն դոլար է: Ի՞նչ, չե՞նք հասկանում՝ ինչ է կատարվում, կարծում եք, մարդիկ անգրագե՞տ են: Ընդհակառակը ժամերով դասախոսություն կկարդանք ցանկացած նման թեմայով: Եվ այս թվերին կարելի էր ավելացնել «Հայկական ավիաուղիների» պարտադրված խայտառակ սնանկացումը, երբ ավիակերոսինի մեկ տոննայի գինը շուկայում 220-250 դոլար էր, պարտադրում էին 450 դոլարով գնել: Իշխանությունների գործելակերպը հետևյալն է. արհեստականորեն սնանկացրին, հետո էլ շան մսի գնով վաճառեցին ճիշտ այն նույն ընկերությանը, որը ավիակերոսինը վաճառում էր կրկնակի անգամ թանկ գներով:

Սիրելի ժողովուրդ, ուզում եմ անդրադառնալ մի շատ հետաքրքիր դրվագի, որից հետո Ձեզ հետ դրա պատասխանը կտանք: Խնդրում եմ ասեք, ընդհանրապես, եթե մեկը մի բան է պարտավորվում, հետո չի անում, ժողովրդի մեջ ինչպե՞ս են որակում նման երդմնազանցին: Այդ մարդը երդվել է, մենք չենք երդվել, նա երդվել է՝ մի ձեռքը դրած Սահմանադրության, մյուս ձեռքը՝ Աստվածաշնչի վրա: Ժողովուրդ ջան, մենք ավելի կիրթ կգտնվենք, բոլորդ գիտեք, թե երդմնազանցներին ինչպես են անվանում, բայց այս հանդիպման մասնակիցների անունից դիմենք պարոն Քոչարյանին, որ ինքն ասի, քանի որ նման դեպքերի համար գաղտնի պահած բառ ունի, որն առավել կբնութագրի իր իսկ երդմնազանցությունը, ինչը տեղի է ունեցել ապրիլի 9-ից հետո իր կառավարման ողջ ժամանակահատվածում: Այ սա է մեր պատասխանը: *(Բուռն, երկարատև ծափահարություններ)*:

Կոռուպցիայի, կաշառակերության այս փաստերը պատահական չէ, որ ես հիշատակեցի: Հիմա ազգային ջոջերին հանդիպակաց հարց եմ ուզում ձեզ հետ տալ. գործող Սահմանադրության այդ ո՞ր հոդվածն է խանգարում, որ այդ աղաղակող թալանի առաջն առնեք: Ոչ մի հոդված չեք գտնի: Եթե մարդն օրինազանց է, եթե մարդիկ Սահմանադրությունը խախտելով երկիրը փորձում են դարձնել իրենց բոստանը, նրանց համար ի՞նչ տարբերություն՝ Սահմանադրության գործող տարբերակն է, թե փոփոխվածը: Ո՞վ է խանգարում հիշատակածս փաստերին համապատասխան դատական ընթացք տալ: Իհարկե, ոչ ոք չի խանգարում և գործող Սահմանադրության ոչ մի հոդված չի կաշկանդում:

Բայց ինչպե՞ս կարող է ձախ ձեռքը բռնել աջ ձեռքին և հակառակը: Քանիցս կրկնել եմ, եթե ասածներիցս որևէ մեկը իրականությանը չի համապատասխանում, թող հակափաստարկը բերեն, ավելին՝ թող զրպարտության համար ինձ տանեն դատեն: Չեն կարող: Ասածներս հատիկ-հատիկ ստույգ են, դեռ մի քանիսն էլ մտքումս եմ պահում: Բա ոնց:

Վերջերս ձեր համաքաղաքացին՝ իմ կողմից շատ հարգված Վիկտոր Դալլաքյանը, Ազգային ժողովի ամբիոնից հրապարակեց ՀՀ-ում կաշառակերությունը բնութագրող զարհուրելի թվեր: Հրապարակեց այն, ինչ տեղ է գտել Համաշխարհային բանկի զեկույցի մեջ: Եվ, այսպես, նավթ, բենզին ներկրողները զարտուղի ճանապարհներով յուրացնում են ոչ ավել, ոչ պակաս, քան մեր երկրի համախառն ներքին արդյունքի 1,4%-ը: Բա դա էլ հո ընդդիմությունը չի՞ ասում, Համաշխարհային բանկն է փաստում: Այդ բոլոր թվերը վերլուծում, համադրում ես, համապատասխան բանաձևերը կան, որոնք նվազագույն կողոպուտի չափն են հաշվարկում, որն էլ այս դեպքում 56 միլիոն դոլար է կազմում: Խա՞ղ եք անում այս ծավալի կողոպուտի հետ, և հետո էլ անամոթաբար, ասես թե, մի մեծ լավություն են անում, երբ մարդկանց հալալ քրտինքով վաստակած ավանդների դիմաց խոստանում են 1 միլիարդ դրամ գումար հետ վերադարձնել: Սա էլ հրամցնում են որպես մեծ հաղթանակ: Բա լավ, անհարմար չէ՞, ինչքա՞ն կարելի է տզրուկի նման մեր ժողովրդի արյունը խմել, ինչքա՞ն կարելի է սեփական անգրագիտությունը, որ արդեն ցցում է դարձել, քողարկել և ժողովրդին անհասկացողի տեղ դնել:

Այժմ, անդրադառնանք Սահմանադրության հետ առնչվող հարցին: Պարոն Քոչարյանը, ինչպես հիշատակեցի, իր պահվածքով հռչակել էր, որ պետությունը ինքն է՝ մերօրյա Լյուդովիկոս XIV-ը: Բա լավ, էդ կոալիցիան ի՞նչ արեց: Կուրծք էր ծեծում, սահմանադրական փոփոխությունների 1-ին տարբերակն էր գովերգում, իրեն կոտորում էր, ասում էր սրա նման երկրորդը չկա: Հետո, երբ իրենց պարտադրեցին հրաժարվել 1-ին փաստաթղթից, ու դարձան ականատեսը, որ իրենց տերն ասում է՝ ինքը պետություն է, դրսևորելով մտքի ճկունություն, հավանաբար, հիշեցին ֆրանսիական պատմությունից մեկ այլ իրողություն: Այն է՝ Հենրիխ IV-ի (Հենրիկ Քոչինյանի մասին չէ խոսքը, այլ Նավառայի թագավորի) երդմնազանցությունը հիշեցին. 1593 թ., լինելով բողոքականների՝ հուգենոտների առաջնորդը, մի գիշերվա մեջ դավաճանեց իր դավանանքին ու կաթոլիկ դարձավ և ավետեց թևավոր հետևյալ արտահայտությունը՝ «Փարիզն արժե ժամերգության», կարգվելով Ֆրանսիայի թագավոր: Հիմա կոալիցիայի անդամ կուսակցությունները սեփական պաշտոնները պահելու համար, եթե իրենց ավագը՝ Քոչարյանը, Լյուդովիկոս XIV-ն է, իրենք էլ, նրա պապուպապի կեցվածքն ընդունելով, մի օրում դավաճանեցին դավանած սահմանադրական փոփոխությունների 1-ին ընթերցմամբ ընդունված օրինագիծը, սկսեցին նոր փաստաթղթի ընդունման համար պայքարը: Եվ այս պարագայում, երբ ամեն ինչ աչքիդ առաջ է տեղի ունենում, ակամայից մտքովդ պատմական զուգահեռներ ես անցկացնում, որ ավելի ցայտուն ու հատկանշական լինի համեմատությունը և տպավորվի լսարանի հիշողության մեջ: Անդրադառնանք արդեն մ.թ.ա. IV դարին, հայտնի Դիոգենեսին: Օրը ցերեկով փիլիսոփան ջահը վառած Էֆես

քաղաքում փնտրտուքի մեջ էր: Համաքաղաքացիները հարցնում են՝ այ Դիոգենես, էդ ի՞նչ ես ման գալիս: Պատասխանում է՝ մարդ եմ փնտրում: Էֆեսացիները տարակուսում են՝ բա այսքանս մարդ չե՞նք: Անդրդվելի է Դիոգենեսը. այստեղ ես մարդ չեմ տեսնում, տեսնում եմ միայն սրիկաների: Եթե դուք հիմա օրը ցերեկով, ջահը վառած, գնաք կոալիցիայի պատգամավորների մեջ գտնեք այս հարցում սկզբունք դրսևորած մարդ, ուրեմն կխոստովանեմ՝ հալալ է ձեզ: *(Ծափահարություններ):*

Այս ամենը շատ ավելի տխուր է, քան իրականում մենք կարող ենք պատկերացնել, որովհետև ճիշտ այս պայմաններում մեր հարևան «դարավոր բարեկամները» անասելի առաջընթաց են արձանագրում իրենց տնտեսական զարգացման ճանապարհին: Մեր իշխանավորներն ամեն եռամսյակից հետո անդադար խոսում են տնտեսական աննախադեպ աճի մասին, բերում են համապատասխան փաստեր, թվեր և տեղեկություններ: Չեր խոնարհ ծառան չալարեց, վերլուծեց, թե հարևան երկրներում վիճակն ինչպիսին է: Եվ պաշտոնական տեղեկագրից համապատասխանաբար դուրս եմ գրել հետևյալ փաստացի տվյալները: Խնդրում եմ ուշադրությամբ լսեք, որ համոզվեք, թե Հայաստանի համեմատ Ադրբեջանի տնտեսության ոլորտում ինչ զգալի աճ է արձանագրվել: Այդ ցուցանիշները, իհարկե, անգիր եմ հիշում, բայց անգամ իսկ 0,7 %-ի սխալ, որ անեմ, վաղը, մյուս օրը համապատասխան լրատվամիջոցները կհեգնեն՝ օդից թվեր էր ասում պարոն Գեղամյանը: Իսկ մինչ թվերի հրապարակումը, նշեմ, որ պարոն Քոչարյանը համալսարանում հանդիպման ժամանակ գոհունակությամբ ավետեց, որ ընդդիմությունը, եթե չի ուզում, որ իր լիազորությունները սահմանափակվեն, ապա կնշանակի ընդդիմությունը իրեն շատ է սիրում: Ցավոք, այս մարդկանց այդպես էլ չկարողացանք հասկացնել, որ Հայաստանում պարզապես ընդունված չէ, որ տղամարդը տղամարդուն սիրի, էլ չեմ ասում շատ սիրի: *(Ծիծաղ, բուռն ծափահարություններ)*:

Հիմա անդրադառնանք վիճակագրությանը: «ԱՊՀ երկրների հիմնական ցուցանիշները 2005 թ. հունվար-օգոստոս» զեկույցի համաձայն, համախառն ներքին արդյունքը Հայաստանում 8 ամիսների կտրվածքով արձանագրել է 111% աճ, Ադրբեջանում՝ 121%: Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի աճը Հայաստանում կազմել է 106,2%, Ադրբեջանում՝ 121%: Բնակչության դրամական եկամուտները Հայաստանում արձանագրել է 114% աճ, Ադրբջանում՝ 126%: Բնակչության կողմից ապրանքների գնման և ծառայությունների վճարման դրամական ծախսերը Հայաստանում կազմել է 110%, Ադրբեջանում՝ 121%: Հայաստանում բնակարանային շինարարությունում ներդրումները կազմել են ընդհանուր առմամբ 126,0 հազար քառ.մ (բնակմակերեսի կտրվածքով է գումար ներդրվել), Ադրբեջանում՝ 634 հազար քառ.մ («Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թ. հունվար-սեպտեմբերին», էջ 181): Այս պայմաններում հայրենյաց իշխանությունները էլ ի՞նչ աճից են զմայլված: Չէ՞ որ Ադրբեջանի համախառն ներքին արդյունքի 1% աճի տեսակարար կշիռը Հայաստանի համախառն ներքին արդյունքի առնվազն 5%-անոց աճին է համարժեք: Եվ աճն Ադրբեջանում, ցավոք, այնքան է, որ արդեն իսկ իրենք հայտարարել են, որ հաջորդ տարի ռազմական ծախսերը կազմելու են ոչ ավել, ոչ պակաս,

քան 600 միլիոն ամերիկյան դոլարին համարժեք: Իսկ մեր իշխանությունները զարմացած են իրենց 1միլիարդ դոլարանոց բյուջեի ծախսային մասով: Մինչդեռ, դա էլ, գիտեք չէ՞, ինչով է պայմանավորված. ածի հիմքում է նաև դրամի փոխարժեքի արհեստական իջեցումը: Դրան ես հետո կանդրադառնամ: Ահա սա է իրական վիճակը: Մեր բյուջեի 70%-ի չափով Ադրբեջանը միայն ռազմամթերք է գնելու, իր բանակի հոգսերն է հոգալու: Փոխանակ այս հարցերին լրջմիտ կերպով վերաբերվեն, ամենամեծ ուշադրությունը դարձնեն, առանց անհարմար զգալու Ազգային ժողովի ամբիոնից նախարարներից մեկը կանգնում և ասում է. բյուջետային համակարգի կատարելագործման և բյուջետային մուտքերի ապահովման հարցում Հայաստանը շատ մեծ առաջընթաց է արձանագրել: Ու նա հաղթականորեն շարունակում է. թող անհամեստություն չհնչի, բայց մեր մասնագետները գնացել են Սլովենիա և Լյուբլյանայում տեղի մասնագետների համար այս հարցերի շուրջ, ոչ ավել, ոչ պակաս, դասախոսություններ են կարդացել: Ա՛յ քեզ հաջողություն. ուրեմն՝ տղերքը գնացել են Եվրամիության անդամ երկրի՝ Սլովենիայի գիտնականներին և երկիրը կառավարողներին դասախոսություն կարդալու: Էն որ «Գրանդ քենդիի» կոնֆետները ուրիշ էին, գիտեինք, «մերն ուրիշ է», բայց որ Հայաստանի կառավարիչներն էլ են ուրիշ, դա էլ նախարարի ելույթից իմացանք: Ցնծա, ով հայ ժողովուրդ: Այնուամենայնիվ, միամիտս ասացի՝ Արտաշես, կարող է, հանկարծ, դու ևս սև ակնոց ես դրել ու չես ուզում էս բացահայտ առաջընթացը արձանագրած լինել, հլա մի հատ մի ալարի, Սլովենիայի տնտեսությունը բնութագրող թվերը բարձրացրու: Փառք Աստծո, գտա նաև Սլովենիային վերաբերող թվերը: Եվ դրանք ուզում եմ ձեզ ներկայացնել: Ըստ որում, համեմատական թվերը: Ուրեմն, Սլովենիայում մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը կազմում է ոչ ավել, ոչ պակաս 19300 դոլար: Հայաստանում այդ ցուցանիշը կազմում է 3607 դոլար, 6 անգամ պակաս: Սլովենիան այդ ցուցանիշով աշխարհում գրավում է 29-րդ տեղը, Հայաստանը՝ 95-րդ: Ավելին, ուրեմն, Սլովենիայում մեկ շնչին ընկնող եկամուտները կազմում են 10615 դոլար, Հայաստանում՝ 3130 դոլար: Աշխարհի միջինի հետ համեմատած Սլովենիայում այդ եկամուտները 214% են կազմում, Հայաստանում՝ ընդամենը 63%: Բա լավ, գլուխգովան իշխանավորներ, անհարմար չե՞ք զգում: Այստեղ են ասել՝ խելքներիդ ճյուն գա, էս գնացել եք, որ Սլովենիայի ղեկավարությանն ու գիտնականներին սովորեցնեք, թե ինչպես մեկ շնչին ընկած համախառն ներքին արդյունքը, որը կազմում է 19300 դոլար, բերեն դարձնեն 3607: Սա է հուշում ձեր լոպազության տրամաբանությունը: Այս ամենից մնում ես զարմացած: Եվ հետևությունը մեկն է, քանի որ մերօրյա իշխանությունների իրական հենարանը կամ ինքնասիրահարված սիրամարգ պաշտոնյաներն են, կամ գող-կաչաղակներներն են, կամ էլ կրիմինալին կաշառված չինովնիկները, ես էլ չեմ խոսում քրեածին մյուս տարրերի մասին, այլ բան այս մարդկանցից ակնկալել անհիմն կլիներ: Հիմա էլ, ինքնամաքրման համար, իրենց սատարողներին արդեն կենդանական աշխարհից են որոնում՝ փիղ, արջ, դա է սրանց հուսարը: Մինչդեռ երկրի վիճակը ծայրաստիճան վտանգավոր և ծանր է: Կուրծք են ծեծում, երկքաղաքացիությունից են

խոսում, միտումնավոր մոռանում են նշել այն մեծագույն վտանգները, որոնք դարանակալած կլինեն, եթե սահմանադրական փոփոխություններում առաջարկվող ձևակերպմամբ երկքաղաքացիության արգելքը հանվի: Հարցրեք, ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ այսօրվա դրությամբ առնվազն 2-2,5 միլիոն Հայաստանի քաղաքացիություն ունեցող հայեր բնակվում են Ռուսաստանում, առնվազն 1-1,5-ն էլ Կալիֆոռնիայում: Պարոն Քոչարյանը համալսարանում ունեցած իր ելույթում ասաց, որ ինչ վատ կլինի, որ մեր քաղաքացիները, մշտական բնակություն հաստատելով արտասահմանում, չզրկվեն հայաստանյան քաղաքացիությունից: Վարդան Օսկանյանն էլ էլ ավելի հեռուն գնաց և ասաց՝ իսկ ինչ վատ կլինի, որ մեր քաղաքացիները, որոնք դրսում են, իրավունք ունենան տվյալ երկրի քաղաքացիությունը ստանալ: Հիմա հարց եմ տալիս. Վարդան Սինասիչ, որ հայերը Ամերիկայում ԱՄՆ-ի քաղաքացիություն ստանան, Ռուսաստանում՝ Ռուսաստանի, պաշտպանված լինեն այդ պետությունների սահմանադրություններով, որոնք թշվառ վիճակի չեն հասցնում իրենց երկրների թոշակառուին, իրենց հիվանդին, իրենց նպաստառուին, նրանցից ո՞րն արդեն հայրենիք կվերադառնա: Ոչ ոք հետ չի գա: Գան այստեղ ի՞նչ անեն: Շարան-շարան «համմերները» տեսնեն, դրանց մեջ նստած լկտի մարդկանց տեսնեն, որ կարող են վրաերթի ենթարկել և բացարձակապես մեկ րոպե անգամ պատիժ չկրել: Բա հայրենիքի հետ կապող պորտալարը միթե՞ հայաստանյան քաղաքացիություն ունենալը չէ, եթե նա ուրիշ երկրի քաղաքացի դարձավ (ցավոք սրտի, ուրիշ երկրներում հայ մարդը շատ ավելի է պաշտպանված, քան սեփական երկրում), էլ նա հետ չի վերադառնա: Ես էլ չեմ խոսում ընտրությունների մասնակցության, բանակում ծառայելու մասին: Ամենաբարձր ամբիոններից առանց անհարմար զգալու կանգնում հայտարարում են, որ դա կարգավորվելու է առանձին օրենքով: Լսեք, հասկացանք, առանձին օրենքով: Ոչ մի օրենք չի կարող ավելի վեր դասվել, քան տվյալ երկրի Սահմանադրությունն է: Եվ եթե տվյալ երկրի Սահմանադրությամբ ինքն արդեն իսկ քաղաքացիություն է ձեռք բերում, կնշանակի ինքնաբերաբար նա կարող է ընտրել և ընտրվել: Այսինքն՝ մենք այստեղ նստած՝ Հայաստանի Հանրապետության Նախագահին, Ազգային ժողովի պատգամավորներին ընտրելու են այլ երկրներում, ավա՜ղ, ոչ միշտ ինքնուրույն: Չէ՞ որ յուրաքանչյուր երկիր ունի իր պետական շահերը, որոնք միշտ չէ, որ համընկնում են Հայաստանի Հանրապետության շահերին: Սա՞ էր մեր երազած անկախությունը, սա՞ է ժողովրդավարությունը: Բա, ինչպես կարելի է, երկիրը, որը բազում չլուծված խնդիրներ ունի, երկիրը, որը շրջափակված է, մեղմ ասած, ոչ բարեկամներով, այդ պետության իշխանություն ձևավորելու բանալին թույլ տալ, որ լինի մեր հանրապետությունից դուրս: Բա դա հանցագործություն չէ, ի՞նչ է: Կանգնում անամոթաբար դեռ մեզ են հաթաթա տալիս, մունետ գալիս մեզ վրա: Բա լավ, եթե ազնիվ եք, արդար եք, ի՞նչն է ձեզ խանգարում, քանիցս ասել եմ, մի ժամ եթերաժամ հատկացրեք: Ձեր «այո»-ի ամենազորեղ փաստարկները բերեք, դրանց բոլորին հանգիստ, հիմնավոր պատասխանեմ: Բացարձակապես մեկ րոպե եթեր չեն տալիս: Ինչո՞ւ չեն տալիս, որովհետև դրանց անհեթեթ և վտանգավոր լինելու մասին սպառիչ,

մեկիկ-մեկիկ կասվի, չէ՞: Է, մեր ժողովուրդն էլ, փառք Աստծո, փաստերը շատ լավ մեկնաբանել կարող է, կնստի, կմտածի. լավ, սրանք, որ էսքան խառնվել են՝ ի՞նչն է պատճառը, այս իշխանություններն ինչի՞ են լեղապատառ ամեն տեղ փորձում արգելքներ դնել, որ ոչ մի դեպքում հանկարծ ընդդիմությանը, մասնավորապես ինձ հեռուստաեթեր չտրամադրվի: Զանգ են տալիս տեղակալներիս և ասում՝ Ձեզ հրավիրում ենք հեռուստաեթեր: Նրանք էլ պատասխանում են՝ «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահության որոշում կա, ըստ որի հեռուստաեթերով հանդես գալ մենք լիազորել ենք Արտաշես Գեղամյանին: Արձագանքը նույնն է. տաս րոպե հետո զանգ կտանք: Սիրելի ժողովուրդ, դեռ պիտի զանգ տան: Ցավն այն է, որ անցած երկու ամիսների ընթացքում Հայաստան այցելած եվրոպական, ամերիկյան հեղինակավոր բոլոր պաշտոնյաները մեկ մարդու պես հայտարարել էին, որ ամեն ինչ պետք է արվի, որ թե «այո» քարոզողները, թե բոյկոտ և «ՈՉ» քարոզողներն ունենան հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ՝ ելույթ ունենալու, իրենց տեսակետները էլեկտրոնային լրատվության միջոցներով հայտնելու համար: Վաղը, երեք րոպե ելույթ ունենալու հնարավորությունը կա, և ես Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվող «Խորհրդարանական շաբաթ»-ով դիմելու եմ այդ երկրների դեսպաններին՝ նշելով, որ ՀՀ իշխանությունները անտեսում են իրենց հորդորները: Անձամբ ես, իմ որոշ գործընկերների հետ, հանդիպել և մանրամասն զրուցել եմ Եվրոպայի և Եվրասիայի գծով ԱՄՆ-ի պետական քարտուղարի տեղակալ Դենիել Ֆրիդի, ինչպես նաև ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Էլսի Հաստինգսի հետ: Նրանք նույնպես զարմացած են և պատահական չէ, որ իրենց տված մամուլի ասուլիսների ժամանակ առանձնահատուկ շեշտել են այդ խնդիրը: Իշխանությունների կողմից բացարձակապես և ոչ մի դրական արձագանք:

Վերլուծելով երկրում ստեղծված իրավիճակը՝ ակամայից գիտակցում ես վերահաս վտանգը: Իսկ ո՞րն է դա: Վտանգն այն է, որ մենք ինքներս, հանդուրժելով այս իշխանություններին, ստեղծում ենք բոլոր նախապայմանները, որոնք դյուրին են դարձնում մեր թշնամիների համար սասանել հայոց պետականությունը: Ընդամենը մի փաստ բերեմ: Չգիտես ինչու, հայրենասիրությունից առավել կրքոտ և մշտապես խոսողները երբեք ու երբեք չեն հիշատակում, թե արտաքին առևտրաշրջանառությունը Հայաստանում ի՞նչ թվերով է բնութագրվում: Բնութագրվում է այն թվերով, որ այս տարվա 9 ամիսների կտրվածքով 561,3 միլիոն դոլարից ավել է եղել արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը: Իսկ սա ի՞նչ է նշանակում. նշանակում է, որ արտերկիր արտահանված և վաճառված ապրանքների գումարը ավելի քան 561,3 միլիոն դոլարով պակաս է եղել արտերկրներից գնված ապրանքների գումարից: Իսկ սա էլ նշանակում է, որ Հայաստան ներմուծված ապրանք արտադրողների համար մեր միջոցներով արտասահմանում աշխատատեղեր են ստեղծվել: Առևտրաշրջանառության բացասական հաշվեկշռում 40 միլիոն դոլար բաժին է ընկնում Թուրքիային, այն էլ այս տարվա միայն անցած 9 ամիսների ընթացքում: 3 միլիոնի չափով արտահանել ենք, 40 միլիոնի չափով ներկրել: 40 միլիոն

դոլարի ապրանք ենք ներկրել Թուրքիայից 9 ամիսների ընթացքում: Մինչդեռ անցած ամբողջ տարվա ընթացքում 30 միլիոնի չափով: Այսինքն՝ մենք բոլորս, մեր հարկատուները, մեր մարդիկ դրսից՝ հարազատներից, օգնության գումար ենք ստանում, որ կարողանանք մեր գոյությունը պահպանենք, հիմա այդ գումարների զգալի մասը գնում է Թուրքիա, այնտեղ աշխատատեղեր են ստեղծում: Չէ՞ որ դրանով մենք թուրքական ապրանք արտադրողին ենք խրախուսում: Բա ո՞ւր է կոալիցիայի կուսակցությունների հայրենասիրությունը, հայրենական արտադրողի շահերի պաշտպանությունը, ի՞նչ, հոդս ցնդե՞ց: Պարզապես կրկին նրանք իրենց գրպանի խնդիրն են լուծում, որովհետև այսօր Հայաստան հիմնական սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների ներկրումն անում են միայն և միայն իշխանական կլանի ներկայացուցիչները: Լինի դա ցորենը, բենզինը, դիզելային վառելիքը, ավիակերոսինը, լինի դա խմիչքը, շաքարավազը: Եվ այս տեսակետից ամենևին էլ պատահական չէ, որ դրամի հետ նման վայրիվերումներ են կատարվում: Ֆինանսական շուկայում, իսկ դրա ամենազգայուն կողմնորոշիչներն են Նյու Յորքի ֆոնդային բորսան, Լոնդոնի, ինչպես նաև աշխարհի մի քանի հեղինակավոր այլ բորսաներ, երբ ֆինանսական և ոչ մի շոշափելի տատանում չի արձանագրվում, մեկ էլ հանկարծ ճիշտ այդ նույն ժամանակ Հայաստանի Հանրապետությունում մի գիշերվա մեջ դոլարի կուրսը զգալիորեն, 30-40 մինչև 50 դրամով ընկնում է: Էլ չասեմ նախանցյալ տարվա արժույթային շուկայում իշխանությունների կողմից հրահրած խաբեության մասին: Պարզեցնեմ միտքս: Սիրելի ժողովուրդ, կարծում եմ, հիշում եք, որ երբ որոշում էին սակագները՝ էլեկտրաէներգիայի, ջրի, հանկարծ դոլարի գինը «պատալոկ» բարձրացրին՝ 570 դրամ, սակագները որոշեցին դոլար-դրամի այդ փոխարժեքով, ապա հետագայում 7 ամսվա ընթացքում դոլարի փոխարժեքը 120 դրամով իջեցրեցին: Դե հիմա պատկերացրեք՝ ինչ մեծ գերշահույթներ ստացան տղերքը: Իրենք էդ թվերը շատ լավ գիտեն: Բանկային փոխադրումներով բոլորիս հարազատները տարեկան կտրվածքով Հայաստան 1 միլիարդ դոլարի չափով փող են ուղարկում, որ ժողովրդի մեծամասնությունը, երկիրը սովից չմահանա, չհանգչի: Էդ մի միլիարդ դոլարը, որի փոխարժեքը 20%-ով արհեստականորեն իջեցնում են, իր գնողունակությամբ ստացվում է փաստացի 800 միլիոն դոլարին համաժեք: Երբ ազգաբնակչությունը հարկադրված է էժան գնով դոլարը փոխանակել դրամով, ապա ապրանք ներմուծողները դրանք առնում են, որով էլ նույն ցորենն են ներմուծում, նույն բենզինը, դիզելային վառելանյութը, շաքարավազը, արդեն իսկ Հայաստանում դոլարի փոխարժեքի արհեստական իջեցման պարագայում ապահովելով առնվազն 20% հավելյալ եկամուտ, որն էլ գրպանում են: Ի՞նչ, չենք հասկանում սա: Իհարկե, հասկանում ենք: Եվ ի՞նչ, այդ քաղաքականությունը պատահականությո՞ւն է: Ամենևին էլ ոչ: Իշխանությունների հաշվարկը պարզ է. նրանք քաջ գիտեն ճիզվիտական այն ճշմարտությունը, որ քաղցած մարդը, հոգսաշատ մարդը, բեռների տակ կքած մարդը, հյուծված լինելու պարագայում երբեք ու երբեք չի կարողանա իր քաղաքացիական շահերը պաշտպանել: Նա կխռովի թե՛ իշխանություններից, թե՛ հասարակությունից, կմեկուսանա և ինքն իրեն կդնի թշվառականի կացության մեջ: Դրա հետ

մեկտեղ էլ, երկրի այս ծանր վիճակում, որ հեռուստաալիքը միացնում ես, իշխանությունները բանուգործները թողած կանգնում անամոթաբար ասում են՝ տեսնո՞ւմ եք, հանրաքվեի հարցում ընդդիմությունը միասնական չէ: Չհասկացա՝ նույն «ՈՉ»-ը ասելու կամ բոյկոտելու մեջ միասնական լինել կամ չլինելը ո՞րն է: Որը «այո» է ասում, դա ընդդիմություն չի, որը «ՈՉ» է ասում, բոյկոտում է, դա, բնականաբար, ընդդիմություն է: Իսկ ինչո՞ւ են այդպես անում. այդպես են անում, որ հանրաքվեին «ՈՉ» ասող կամ բոյկոտող բոլոր քաղաքական ուժերին մի տեղ հավաքեն, որից հետո նրանց սադրանքով և հերյուրանքներով վարկաբեկելը ավելի դյուրին կլինի: Հիմա խառնվել են, չգիտեն «18+8» ֆորմատի հետևից գնան, արգելքներ դնեն, «Արդարություն» դաշինքի հետևից գնան, նույնը անեն, թե «Ազգային Միաբանության» հետևից գնան ու մեր հանդիպումները խանգարեն: Դարդ են անում, որ բոլորս իրար հետ լինենք, որ բոլորը մի տեղ կուտակված լինեն, և իրենք էլ անեն այն, ինչ արեցին ապրիլի 12-ին: Այդ դասերը վաղուց յուրացրել ենք: Եվ մեկտեղ հավաքվելով չէ «այո»-ի և «ՈՉ»-ի քարոզի արդյունավետությունը: Դե, պատկերացրեք, իմ լավ գործընկերների, բարեկամների հետ 27 հոգով գայինք այստեղ՝ 18 կուսակցության ղեկավարներ, մտավորականների ֆորմատը, 8 հասարակական կազմակերպություններ և մենք: 27 հոգուց, որս խոսեր, որը չխոսեր: Կարո՞ղ է իշխանությունների երազանքն է, որ մաեստրո Հովհաննես Չեքիջյանի երգչախմբի նման ընդդիմադիր լիդերները կողք կողքի կանգնեն «ՈՉ» կամ միասնաբար բոյկոտ վանկարկեն, որ գոհանան: Հիմա գոնե ես հնարավորություն եմ ունենում մտքերս արտահայտել, ավելին հնարավորություն կունենաք դուք հարցերով դիմել, իսկ ես հարցերին կպատասխանեմ: Մեր գործընկերներն էլ այսօր, ես գիտեմ, Աշտարակում են, վաղը, մյուս օրը կլինեն մեկ ուրիշ վայրում և հնարավորության սահմաններում ավելի շատ մարդկանց հետ մենք կկարողանանք հանդիպել: Ահա սա է խնդիրը: Եվ արհեստականորեն պետք չէ տարանջատել ընդդիմությանը: «Ոչ»-ը՝ ոչ է, բոյկոտը՝ բոյկոտ: Էս էլ չլինի, որ հայտնի երգի բառերով առաջնորդվենք՝ «Իմ ջուրն, ուրիշ ջրեն է» ասելով: Հիշո՞ւմ եք, Սայաթ-Նովան երգ ունի, չէ՞: *(Ծիծաղ դահլիճում, ծափահարություններ):*

Ժողովուրդ ջան, ես կարող եմ բազմաթիվ փաստեր, թվեր բերել, բայց, կարծում եմ, ճիշտ կլինի, որ Դուք հարցեր տաք, որպեսզի մենախոսություն չլինի:

Արտաշես Գեղամյանն այնուհետև հանգամանորեն պատասխանեց իրեն ուղղված հարցերին և հանդիպումն ավարտեց հետևյալ խոսքերով.

— Յուրաքանչյուր մարդ հպարտ է այն երկրով, որի քաղաքացին է նա: Կոռուպցիայի և կաշառակերության մեջ թաղված երկիրն աշխարհում հեղինակություն չի կարող վայելել, և այդ երկրի քաղաքացիները, ավա՜ղ, դատապարտված են չարքաշ կյանքով ապրելու: Ուստի, երբ թոթափենք այս իշխանությունների բեռը, երկիրը դարձնենք օրինակելի և աստվածապաշտ, համոզված կարող եմ ասել, որ հայ մարդը մոլորակի ցանկացած վայրում հպարտությամբ կբարձրացնի իր անձնագիրը և կասի՝ ես հինավուրց քաղաքակրթություն կրող, աշխարհում պետականորեն առաջինը քրիստոնեություն

ընդունած և դավանող ազգի զավակն եմ, ուստի և իրավունք ունեմ ամենուր արժանապատվորեն հանդես գալ ու բացականչել. «Ես հայ եմ, դրանով էլ երջանիկ եմ»:

Շնորհակալություն, սիրելի վանաձորցիներ: *(Բուռն, որոտընդոստ, երկարատև ծափահարություններ):*

Հ.Գ. *«Մենք՝ ապաբարոյապաշտներս, առաքինության արդյո՞ք վնաս ենք հասցնում: -Նույնքան քիչ, ինչքան անարխիստները՝ թագավորներին: Միայն այն ժամանակվանից, երբ նրանց սկսեցին կրակել, նրանք կրկին պինդ նստած են իրենց գահերին: Առակս զի՞նչ ցուցանե՝ հարկավոր է կրակել բարոյականության վրա», – այսպես կբնութագրեր մերօրյա իշխանություններին մեծ փիլիսոփա Ֆրիդրիխ Նիցշեն:*

«Իրավունք», 2.–8.XII.2005:

Սեփական երկրում ժողովուրդը չի կարող պարտվել

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունն ամենևին չէր ծրագրել տպագրության հանձնել Արմավիրում նոյեմբերի 20-ին կայացած հանդիպման ժամանակ Արտաշես Գեղամյանի բանավոր ելույթի շարադրանքը: Սակայն երբ ականատեսը եղանք ելույթում մատնանշված զարգացումների կատարմանը, առավել կարևորեցինք բանավոր խոսքի վերջնական եզրահանգումը, այն է՝ բազմաթիվ կեղծիքներով անցկացված սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն իշխանությունների «պյուրոսյան հաղթանակն է», իսկ մեզ՝ ժողովրդի համար, «Քորոդինոն»: Դրան էլ կհաջորդի այս իշխանությունների անփառունակ վախճանը:

Սիրելի արմավիրցիներ, մեր այս հանդիպումը պետք է կայանար փոքր-ինչ շուտ, սակայն, ավա՜ղ, կյանքը մնում է կյանք, հարգելի պատճառներով մի քանի օրով հետաձգվեց: Եվ, ահա, այսօր ես առանձնահատուկ ջերմությամբ ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել ձեզ, որ կիրակի օրով, ձեր հանապազօրյա հոգսերը թողած, ժամանակ եք գտել ու եկել եք այս հանդիպմանը: Ներողություն եմ խնդրում հատկապես այն մարդկանցից, այն արմավիրցիներից, ովքեր հարկադրված են լինելու ոտքի վրա լսել այն խոսքը, որ ուզում եմ ուղղել ձեզ յուրաքանչյուրիդ: Եվ ոչ մեկի համար թող գաղտնիք չլինի, որ բախտորոշ օրեր ենք ապրում ձեզ հետ: Ցանկացած հեռուստաալիք, ցանկացած ռադիոալիք, բացառությամբ, միգուցե, «Ազատություն» ռադիոկայանի, որ ժամին էլ միացնես, որ ժամին ունկնդրես կամ դիտես, տեսնում ես այն նույն մարդկանց, ովքեր անցած 3 ամսվա ընթացքում երկու, եթե ոչ երեք անգամ տրամագծորեն փոխեցին իրենց գնահատականները, իրենց վերաբերմունքը սահմանադրական այս փոփոխությունների հանդեպ: Ինչպես գիտեք, ընդդիմադիր դաշտի քաղաքական ուժերը, նաև հասարակական կազմակերպություններն անցած երեքշաբթի օրը՝ նոյեմբերի 15-ին, հանդես եկան հայտարարությամբ և կոչ արեցին ազգաբնակչությանը պարզապես բոյկոտել սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն, որն անցկացվելու է նոյեմբերի 27-ին: Դա լրջագույնս խուճապ առաջացրեց իշխանական կոալիցիայի շարքերում: Երբ մենք, ի սկզբանե, ասում էինք, որ «ՈՉ» ենք քարոզելու, բնականաբար, փորձում էինք գոնե մեկ անգամ հավատալ կոալիցիայի մաս կազմող քաղաքական ուժերին, հավատալ Ռոբերտ Քոչարյանին, իր աշխատակազմին, որոնք անընդմեջ համոզում էին ժողովրդին, թե, իբր, իշխանությունները նորովի են ուզում սկսել ապրել

Սահմանադրության փոփոխություններն ընդունելուց հետո: Որ կողմնակից են Հայաստանում ժողովրդավարացման գործընթացների խորացմանը, որ կստեղծեն հավասար պայմաններ, որ ցանկացած քաղաքական ուժ հնարավորություն ունենա իր տեսակետը հեռուստալրատվամիջոցով բարձրաձայն հաղորդելու ազգաբնակչությանը, ժողովրդին մասնակից դարձնելու հանրաքվեի և սահմանադրական փոփոխությունների ողջ գործընթացին: Ասեմ ավելին, Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի պատկառելի ներկայացուցիչներ եկան, մասնավորապես Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ռենե վան դեր Լինդենը: Նրանից հետո եկավ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Էլսի Հաստինգսը: Երկուսն էլ խիստ կարևորեցին այն միտքը, որ պետք է ամեն ինչ անել, որ սահմանադրական փոփոխությունների ողջ գործընթացը լինի թափանցիկ, ժողովրդավարական հիմունքների վրա խարսխված: Այսինքն, որ յուրաքանչյուր մարդ, առավել ևս քաղաքական ուժ, որին ժողովուրդը վստահել է, և որն Ազգային ժողովում ունի իր խմբակցությունը, հնարավորություն ունենա իր տեսակետները հայտնելու ժողովրդին, իրազեկելու ազգաբնակչությանը, թե որոնք են տագնապահարույց այն հոդվածները, որոնց ընդունման պարագայում լրջագույնս կվտանգվի Հայաստանի Հանրապետության անկախությունը: Մեկ ամիս 5 օր է անցել, ինչ պաշտոնապես սկսվել է քարոզարշավը: Այդ ողջ ընթացքում հայաստանյան և ոչ մի հեռուստամիջոց գեթ մեկ րոպե չի տրամադրել «Ազգային Միաբանություն կուսակցության» թե՛ նախագահին, թե՛ տեղակալներին: Այդպիսի բան բացարձակապես տեղի չի ունեցել: Մինչդեռ որ հեռուստաալիքը միացնում ենք, «այո»-ի կողմնակիցներն են: Եվ զավեշտը հասել է այնտեղ, որ վերջիններս են միմյանց հետ բանավիճում, նրանցից յուրաքանչյուրը ընդդիմադիրներին վերագրում է մտքեր, որոնք մենք չենք արտահայտել: Այսպես, բանավիճողներից մեկը, մասնավորապես ինձ միտք է վերագրում, որը երբեք չեմ արտահայտել, մյուսը սկսում է ինձ վերագրվող միտքը «ջախջախել»: Մինչդեռ ես զրկված եմ եղել ցանկացած ամբիոնից հանդես գալուց: Խոսքս հեռուստաամբիոնի մասին է: Ստեղծված իրավիճակում, եթե մարդ սկզբունքների իրապես կրող է, եթե մարդ բարոյական արժեքակիր է, բնականաբար, իրավունք չունի դիմելու ազգաբնակչությանը և ասելու՝ գնացեք «ՈՉ» ասեք: Քանի որ մեզ այդ «ՈՉ»-ը հիմնավորելու հնարավորություն չի ընձեռվել, որի հետևանքով այդ «ՈՉ»-ը չի դարձել յուրաքանչյուրիդ մտքի, սրտի, խղճի սեփականությունը: Մենք զրկված ենք եղել հնարավորությունից, որ ձեր դատին ներկայացնենք համոզիչ փաստարկներ «ՈՉ»-ի օգտին, որ յուրաքանչյուրդ գիտակցաբար այդ «ՈՉ»-ը ասի և ոչ թե նրա համար, որ ձեր կողմից մի քիչ ավել, մի քիչ պակաս ընդունելի կամ հարգելի քաղաքական այս կամ այն գործչի կոչով շարժվի: Դա, արդեն, իրապես մեր կողմից կլիներ մերժելի: Եվ, հաշվի առնելով այս ամենը, «18+8» քաղաքական և հասարակական կազմակերպությունների ձևաչափը, «Արդարություն» դաշինքը և «Ազգային Միաբանություն կուսակցությունը» հանդես եկան հայտարարությամբ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն բոյկոտելու որոշումով: Մեր որոշման հիմքում եղել է նաև այն իրողությունը, որ արհամարհվել է սահմանադրական այն դրույթը,

համաձայն որի յուրաքանչյուրդ իրավունք ունեք այլակարծություն լսելու, տվյալ դեպքում ընդդիմադիր դաշտի պատգամավորները կարողանային անկաշկանդ իրենց տեսակետները հաղորդել և ձեզ հաղորդակից դարձնել դրանց: Մինչդեռ դա տեղի չունեցավ: Տրամաբանական հարց է ծագում. եթե իշխանությունը, ինչպես ինքն է քարոզում և հայտարարում, իրապես համոզված է մեր երկրի հետագա առաջընթացի վրա սահմանադրական փոփոխությունների բարերար ազդեցությամբ, Հայաստանի զարգացման հեռանկարն է տեսնում, որն էլ պայմանավորում է այդ փոփոխությունների ընդունմամբ, ապա այդ դեպքում ի՞նչ էր խանգարում կոալիցիային բանավեճի հրավիրել հակառակ կարծիք կրողներին: Ասենք, այնպես, ինչպես դա եղավ թեկուզ և երեկ, երբ «Ազատություն» ռադիոկայանով մեր հարգարժան Աննա Իսրայելյանի կողմից հեռարձակվեց բառիս իսկական առումով բանավեճ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի, «Ազգային Միաբանություն կուսակցության» փոխնախագահ Գագիկ Թադևոսյանի և կոալիցիայի ղեկավարներից Վահան Հովհաննիսյանի միջև: Մեր գործընկեր ընդդիմադիրներն իրենց հարցերով, իրենց փաստարկներով շատ անհարմար վիճակի մեջ գցեցին վերջինիս: Եվ նա չգտավ համոզիչ գեթ մեկ փաստարկ, որով կարողանար հակադրվել բերված հիմնավորումներին: Կոալիցիայի քարոզչական զինանոցում է նաև այն, որ հեռուստաեթերով անամոթաբար անընդմեջ ասում են, թե, իբր, ընդդիմությունը, երբ տեսավ, որ քարոզարշավում պարտություն է կրում, երբ համոզվեց, որ «ՈՉ»-ի քարոզարշավն իր ցանկալի արդյունքները չի տալիս, ժողովրդին կոչ արեց բոյկոտել հանրաքվեն: Ըստ էության, զրկելով մեզ հեռուստատեսությամբ «ՈՉ»-ի լիարժեք քարոզարշավ անցկացնելու տարրական հնարավորությունից, նենգորեն փորձում են դա ներկայացնել իբրև փաստարկների բացակայություն: Հետս բերել եմ ուրբաթ օրվա «Առավոտ» օրաթերթը, որի 7 էջի վրա հոդված առ հոդված տպագրված են այն բազում հիմնավորումները, որոնք, անտարակույս, Դամոկլեսյան սրի նման կախված կլինեն հայոց պետականության գլխավերևում, եթե սահմանադրական այդ փոփոխություններն ընդունվեն: Եվ այս նյութը, ի դեպ, տպագրվել է Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ -ի դեսպանատան աջակցությամբ: Դե, եթե այդքան համոզիչ հակափաստարկներ ունեն իշխանությունները, թող գոնե մի հիմնավորում, որը հիշատակված է այս ներդիրում, հերքեն ու մերժեն: Հանկարծ տպավորություն չստեղծվի, որ ես ապավինում եմ լրագրողական վերլուծությանը, հիշատակածս հրապարակումը ոչ թե լրագրողական, այլ փորձագիտական լրջագույն վերլուծություն է և իր մեջ այն աստիճանի հիմնավորվածություն է պարունակում, որ ԱՄՆ-ի դեսպանատունը, այսինքն՝ մի երկրի դեսպանատուն, որ շուրջ 220 տարի առաջ հռչակել է ժողովրդավարություն և այսօր հետևում է ժողովրդավարական այդ գործընթացներին, համոզվելով, որ ընդդիմությունը զրկված է սահմանադրական փոփոխություններում թաքնված վտանգները ժողովրդին բացատրելու հնարավորությունից, ավելին, երբ այս հարցում ճնշվում է այլակարծության ցանկացած դրսևորում, նպատակահարմար է գտել տպագրել այս նյութը: Եվ դրա բուն իմաստը եղել է մեկը, որ մարդիկ գիտակցաբար գնան և իրենց վճիռը կայացնեն՝ «այո»-ի կամ «ՈՉ»-ի

ճանապարհով:

Իսկ որո՞նք են վտանգները: Հպանցիկ անդրադառնամ մի քանիսին, որոնք հասկանալի են յուրաքանչյուրիդ համար: Համոզված եմ, այստեղ չկա ընտանիք, որի բարեկամը, հարազատը, ջիգյարը չլինի օտարության մեջ: Ես այդ եզրահանգմանը եկել եմ, երբ ձեզ հետ հանդիպումներ եմ ունեցել գյուղերում, համայնքներում: Մարդիկ մղկտում են, ինքս եմ ականատեսը եղել, երբ որդիներն ի զորու չեն եղել գալ իրենց հարազատների հուղարկավորությանը: Դեպքեր են արձանագրվել, երբ դրսում, օտարության մեջ՝ Ռուսաստանում կամ Միացյալ Նահանգներում, մի քիչ էլ խոսքիս լավ երանգ տամ, հարսանիք են անում, նրանց ծնողներն էլ, քանի որ հնարավորություն չունեն գնալու, այստեղ՝ Հայաստանում են դա անում առանց հարս ու փեսայի մասնակցության: Եվ այս պարագայում մեկ էլ հանկարծ իշխանությունները բանուգործները թողած, ընդդիմությանը բարոյականություն են քարոզում՝ պայմանավորված, մասնավորապես, երկքաղաքացիության հետ: Այսպես, Ռոբերտ Քոչարյանը Երևանի պետական համալսարանում ուսանողների հետ կայացած հանդիպման ժամանակ տրտմում է, ասում է՝ ի՞նչ վատ կլինի, որ երկքաղաքացիության արգելքը Սահմանադրությունից հանվի: Ասածն էլ հիմնավորում է նրանով, որ միայն անցյալ տարի 470 մարդ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվել են, որ ստանան մեկ այլ երկրի քաղաքացիություն: Մինչդեռ նա չի ուզում հասկանալ և մտածել, որ Հայաստանի քաղաքացիությունն այն պորտալարն է, որ մեր մարդկանց, բացի արնակցական, հարազատական կապերից, դեռևս կարողանում է միջազգային իրավունքի շրջանակում կապել հայրենիքի հետ անկախ բնակության ներկայիս վայրից, լինի դա ԱՄՆ-ը, լինի դա Ռուսաստանը, Մերձավոր Արևելքը, թե եվրոպական երկրները: Եթե նրանք ստանում են երկքաղաքացիության իրավունք և դառնում են այն երկրի, ուր այսօր հարկադրված են դեգերել, քաղաքացիները, ապա արդեն պաշտպանված են լինում տվյալ երկրի օրենքներով: Եվ ի ուրախություն ու միաժամանակ, ցավոք սրտի, հայ մարդն ամեն տեղ կարողանում է իրեն գտնել, իր ներուժը կիրառել և արժանվույն վարձահատույց լինել, բացի իր բնօրրանից: Եվ ասվածը զուտ տրամաբանական հետևություն չէ: Իմ այս պնդումը հիմնված է այն փաստարկի վրա, որ Հայաստանի Հանրապետության շատ քաղաքացիներ տարեկան կտրվածքով միայն և միայն բանկային համակարգով գրանցված, ֆիքսված առնվազն 1 միլիարդ դոլարի հասնող օգնություն են ստանում մեր երկրից արտագաղթած և արտերկրներում ապրող իրենց հարազատներից ու բարեկամներից: Ավա՜ղ, նրանք շատ դեպքերում հարկադրված են օտարության մեջ նաև ամենաանպատվաբեր աշխատանքը կատարել: Եվ, չգիտես ինչու, այս հանգամանքի մասին «մոռանում» են: Ոչ միայն «մոռանում» են, այլ նաև դրա վրա հսկայական գումարներ են «աշխատում»: Որովհետև եթե 2 տարի առաջ 1 միլիարդ դոլարի գնողունակությունը համապատասխան քանակի էր, ապա այսօր առնվազն 20 %-ով պակասել է: Եվ ինչո՞ւ է պակասել, ի՞նչ եք կարծում: Պակասել է նաև այն պարզ պատճառով, որովհետև Հայաստանի Հանրապետությունում այսօր իսկ առաջին պահանջարկի արտադրանք ներմուծողները միմիայն իշխանական

կլանից են: Հայաստանում որքան դոլարը թվացյալ արժեզրկվի, այդքան էլ ներմուծողները, այն է՝ իշխանական կլանի մարդիկ, այստեղ ֆինանսական շուկայից էժան գնով կկարողանան գնել այդ դոլարները և դրանցով Հայաստան ներկրել, մասնավորապես ցորեն, դիզելային վառելիք, բենզին, ծխախոտ և այլն, որոնց վաճառքից էլ ստանում են հավելյալ հսկայական գումարներ: Եվ այս պայմաններում ամենևին պատահական չէ, որ ապրանքի ներմուծումը դառնում է շատ ավելի շահավետ, քան դրա արտադրության կազմակերպումը երկրում, էլ չենք խոսում, որ դրամի արհեստական արժևորման պայմանում խստագույնս ընկնում է տեղական արտադրանքի մրցունակությունը միջազգային շուկայում: Երկրում վարվող ֆինանսական քաղաքականությունը, ըստ էության, ուժգնորեն հարվածում է տեղական արտադրողներին՝ սահմանափակելով արտահանման տարրական հնարավորությունները: Արդյունքում տարեկան կտրվածքով 2004 թ. առևտրաշրջանառության բացասական սալդոն կազմել է 636 միլիոն դոլար, իսկ 2005 թ. հունվար-սեպտեմբերին՝ 561 միլիոն դոլար: Այսինքն՝ 2005 թ. ինը ամիսներին 561 միլիոն դոլարի ավելի շատ արտադրանք է ներմուծվել Հայաստան, քան այստեղից արտահանվել է:

Մեկ այլ ուշագրավ երևույթի մասին էլ խոսեմ. այս անգամ արդեն դոլարի արհեստական արժևորման: Սիրելի արմավիրցիներ, իշխանությունների ստորությունը և սրիկայությունը հասել էր այնտեղ, որ 2 տարի առաջ բոլորիս համար կարևոր նշանակություն ունեցող կենսական ոլորտների սակագները որոշելիս, այն է՝ լույսի, ջրի, ֆինանսական շուկայում առկա դոլարները Կենտրոնական բանկի հրահանգով առևտրային բանկերը գնեցին, արհեստականորեն կանխիկ դոլարների պակասորդ ստեղծեցին, 1 դոլարի գինը բարձրացրին 575 դրամ: 1 դոլարի փոխարժեքը սահմանելով 575 դրամ, այդ գնով էլ լույսի և ջրի սակագները դոլարային կտրվածքով հաշվարկեցին: Անցավ 4-5 ամիս, աշխարհի ֆինանսական շուկաները բացարձակապես և ոչ մի ցնցումների մեջ չընկան, Հայաստանի տնտեսությունում էլ չարձանագրվեց որևէ «հրաշք», և հանկարծ այս պայմաններում դոլարի փոխարժեքը արհեստականորեն 125 դրամով իջեցրեցին՝ 575-ը դարձրեցին 450: Մինչդեռ սակագները հաստատագրված էին դոլարի, այն էլ՝ 1 դոլարը 575 դրամ հարաբերակցությամբ: Կնշանակի այդտեղ էլ գերաշահույթ ստացան կլանային այն բոլոր կազմակերպությունները, որոնք ընդգրկված էին այդ ոլորտներում: (Ռեպլիկ դահլիճից՝ խուժանները.- *խմբ.*): Միանգամայն ճիշտ եք, սակայն ձեր ասածը քաղաքական գնահատականն է, ես տնտեսականն էի տալիս: *(Աշխուժություն դահլիճում, ծափահարություններ):*

Սիրելի ժողովուրդ, երբ ասում ենք՝ ալան-թալան, դա պատահական չի ասվում: Պատահական չէ, այդ բոլորի տակ փատեր կան, կան հիմնավոր վերլուծություններ, կան համոզիչ հիմքեր: Հիմա, անամոթաբար կանգնում, պնդում և փորձում են մի ողջ ժողովրդի թյուրիմացության մեջ գցել՝ ասելով, որ գիտեք ինչ կա, սահմանադրական այս փոփոխությունների բացակայությունն է խոչընդոտում, որ պայքար մղվի կաշառակերության, կոռուպցիայի դեմ: Միամիտս մտածեցի, միգուցե, իրապես, գործող

Սահմանադրության մեջ այնպիսի հոդվածներ կան, որոնք արգելում են հարգարժան գլխավոր դատախազին, ոստիկանապետին, հարկային և մաքսային մարմինների ղեկավարներին, որ թալանչիի, հանցագործի, կաշառակերի, կոռումպացված չինովնիկի ձեռքը բռնեն: Իհարկե, չկան այդպիսի հոդվածներ: Երկու, երեք անգամ Ազգային ժողովի ամբիոնից (մեկ անգամ հեռարձակվել է հեռուստատեսությամբ, որովհետև ամբողջ նիստն էր հեռարձակվում) հայտարարեցի, որ 2003 թ. նվազագույն հաշվարկով 110 հազար տոննա ցորեն է շրջանցվել մաքսային կետերից (ես էլ չեմ ասում 110-180 հազար տոննա): 110-ը դա այն թիվն է, որ թուղթ ու մատիտով կարելի կլինի ապացուցել՝ հենվելով իրենց իսկ վիճակագրական ծառայության թվերի վրա: 110 հազար տոննային համարժեք միլիոններ պետության բյուջեն չի ստացել հարկերի և տուրքերի տեսքով: Իսկ ինչո՞ւ են այդքան անտարբեր: Անտարբեր են, որովհետև ցորեն ներկրողներն այսօրվա իշխանությունների մանկլավիկներն են: Մարդիկ են, ովքեր 6-7 տարի առաջ, ինչպես շատ պատկերավոր կասեր պատգամավորներից մեկը, չլուտ, բասանոշկաներով եկան, իսկ էսօր 150-200 հազար դոլարանոց մեքենաներով են շրջում: Այդ ո՞նց է ստացվում, մի ամբողջ ազգ աղքատանում է, իսկ առանձին, ըստ որում, տգետ մարդիկ, ըստ որում, Հայաստանի հետ և ոչ մի առնչություն չունեցող մարդիկ, հանկարծ բոլորիցս ավելի խելացի, ավելի գործունյա են դառնում: Է, շատ պարզ պատճառով, որովհետև մաքսային տուրք չեն մուծում, որովհետև հարկեր չեն մուծում, իսկ տեղացի ձեռներեցները, ովքեր, բառիս իսկական առումով, ձեռներեցներ են, բնականաբար, պարտադրված են (և ճիշտ է, որ պարտադրված են), և՛ հարկեր են մուծում, և՛ մաքսեր են մուծում: Սինչդեռ հարկեր ու մաքսատուրքեր չմուծող իշխանությունների յուրայինները շուկայական գնից էժան են վաճառում իրենց ապրանքը, որի արդյունքում ազնիվ, օրինապաշտ ձեռներեցները բանկրոտ են դառնում, սնանկանում են և այդ բիզնեսից դուրս մղվում: Բիզնեսից դուրս մղվելով՝ ձեռներեց մարդը հարկադրված է լինում լքել Հայաստանը և բռնել գաղթի ճանապարհը: Դրանից հետո էլ շուկայում այլևս մրցակցություն չունեցողը ապրանքների վրա սահմանում է մենաշնորհային գներ, որոնք արդեն իսկ զգալիորեն գերազանցում են այդ ապրանքատեսակների միջազգային շուկայական գները: Իսկ մեր երկրում մերժված ազնիվ ձեռներեցը մեկ էլ տեսնում ես օտարության մեջ հիմնում է արագ զարգացող բիզնես, որն էլ շենացնում է իրեն ապաստանած երկիրը: Տեսնում ես՝ հարյուրավոր մարդկանց ապահովում է աշխատանքով: Եվ ցավն այն է, որ նրանց մեջ շատերը մեր հայրենակիցներն են, այդ ձեռներեցների հարազատներն ու բարեկամները: Ճիշտ է, մարդիկ ստիպված փախչում-գնում են այնտեղ, սովից փրկվում, բայց մյուս կողմից էլ Հայաստանը դատարկվում է: Իսկ իշխանություններն այս հարցերին երբեք չեն անդրադառնում: Կարելի էր բազում փաստեր բերել, որոնք կլինեին մեր երկրում համատարած ալան-թալանի, կոռուպցիայի, կաշառակերության խոսուն վկայությունների ապացույցները, որոնց մասին քանիցս ահազանգել եմ թե՛ Ազգային ժողովում և թե՛ մամուլով: Դուք այդ ամենի մասին քաջատեղյակ եք, լինի դա «Արմենտելի», կոնյակի գործարանի, բաշխիչ էլեկտրացանցերի, «Հայկական ավիաուղիների»՝ շուկայական գնից

անգամներով էժան սեփականաշնորհումը, որոշ դեպքերում էլ արհեստական սնանկացումից հետո:

Հիմա, երբ այս ամենի մասին գիտենք, մնում ես զարմացած և ապշած, որ այս աղաղակող թալանն ու անօրինականությունները փորձում են հիմնավորել գործող Սահմանադրության մեջ, իբր, առկա արգելքներով: Առանց անհարմար զգալու Վարդան Օսկանյանը, Վարդան Մինասիչը (ըստ որում, եզակի ազնիվ մարդկանցից մեկն է, ինչքանով հնարավոր է այս վարչախմբում ազնիվ լինել) կանգնում և ասում է՝ գիտե՞ք, ես պետք է խոստովանեմ, որ գործող Սահմանադրության պարագայում դատական համակարգը, դատավորները պաշտպանված չեն, անկախ չեն, ասես թե, դրանով արդարացնելով երկրում տիրող համատարած ապօրինությունների և անօրինականությունների գոյության փաստը: Է, կանգնես ասես՝ դատարանները, դատախազական համակարգը ո՞ւմից են կախված, կարո՞ղ է Գեղամյանից, կարո՞ղ է ընդդիմությունից, բոլորի հետևում դուք եք կանգնած, իշխանավորներդ: Դուք էլ, ձեր հերթին, Ռ. Քոչարյանի հլու-հնազանդ կամակատարներն եք: Ուրեմն, եթե դատարանները կաշառված են և անկախ չեն, կնշանակի, որ, վերջին հաշվով, դրանք կախված ու ենթակա են Քոչարյանին: Ստացվում է այնպես, որ Վարդան Օսկանյանը մեղադրեց Ռոբերտ Քոչարյանին առ այն, որ նա, ըստ էության, դատական ամբողջ համակարգում կաշառակերության կնքահայրն է: Ես բաժանում եմ Վարդան Օսկանյանի այդ տրամաբանական թեզը: *(Ծափահարություններ):*

Առանձնահատուկ հիշատակման է արժանի այսօրվա կոալիցիան: Գիտե՞ք, երկար եմ մտածել, թե վերջինիս ինչպես բնութագրեմ, որ անճնապես վիավորած չլինեմ, բայց և առավել տպավորիչ լինի նրանց գործողություններին տված բնութագիրը: Կոալիցիայից որն ամբիոն է բարձրանում, խոսում է ժողովրդավարությունից, խոսում է նրանից, որ, այ, եթե Սահմանադրության փոփոխություններին «այո» ասենք, բյուջեն մեկ տարվա ընթացքում կկրկնապատկվի: Թվում է, թե՞ ինչ վատ բան է ասում: Բայց, եթե այդքանն ասում ես, «ա»-ն ասում ես, ապա մինչև «ֆ»-ն ասա: Իսկ այսօր ո՞վ է խանգարում, չէ՞ որ բոլորս էլ գիտենք՝ Հայաստանի Հանրապետությունում բացառապես բոլոր չինովնիկները «պեշկաներ» են, ընդամենը 2 մարդ՝ Ռոբերտ Քոչարյան և Սերժ Սարգսյան, նրանք են փաստացի ղեկավարում երկիրը: Այն էլ հաջորդաբար. մեկը «թագավոր» է լինում, մյուսը՝ «թագուհի», հետո տեղերով փոխվում են՝ ըստ հանգամանքի: *(Ծափահարություններ):* Եվ այդ պարագայում տղերքը համ ուզում են, թող կանայք ներեն, բայց ժողովրդական ասացվածք է, համ ուզում են հաճույք ստանալ, համ ուզում են կույս մնալ: Երևանյան բարբառով ասած՝ մեջտեղը ուտում են, կողքերը՝ ֆռֆռում: Այդպես ո՞նց է լինում: Դիմեմ դասականներին, թե չէ կասեն՝ Գեղամյանն արդեն անցել էր հայհոյախոսության: Ուրեմն, վերհիշենք XIV դարի ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա Ժան Բուրիդանին՝ իր հայտնի պատմությամբ, որը վերաբերում է ավանակին: Ուրեմն, ավանակին կանգնեցնում են խոտի 2 դեզի արանքում և ասում՝ հիմա դու ազատ ես քո գործողությունների մեջ, ինքդ որոշի՝ ի՞նչ ես անելու: Էս ավանակն էլ, որի մեջ բնածին ազնվություն կա, մտածում է, որ

կողմը գնա՝ ա՞ջ, թե՞ ձախ: Էնքան է մտմտում, մտմտում, այդպես էլ որոշում չկայացնելով՝ վերջը սովից սատկում է: Հիմա այս կոալիցիան է. համ չի ուզում ժողովրդից կտրվի, չի ուզում անազնիվի, երկդիմիի խարանը դաջվի ճակատներին, հետն էլ ոչ մի կերպ չի ուզում իշխանության «բարիքներից» զրկվի: Արդյունքում, նա էլ Բուրիդանի ավանակի պես քաղաքական մահվան է դատապարտված: Սա է պատասխանը: *(Ծափահարություններ):*

Սիրելի ժողովուրդ, որ հանկարծ տպավորություն չստեղծվի, թե չեմ խոսում սահմանադրական այս կամ այն հոդվածից, անդրադառնամ առավել վտանգավոր և փոխշաղկապված 2 հոդվածի: Դրանք են՝ հոդված 56. 1-ը՝ անձեռնմխելիության մասին է, և հոդված 81-ը. դա էլ այն է, որ միջազգային պայմանագրերի վավերացման հարցում Ազգային ժողովին իրավասություն է տրվում տարածքների, սահմանների վերաբերյալ որոշումներ ընդունել: Եվ կանգնում ու առանց անհարմար զգալու ասում են. մենք պատերազմում հաղթանակել ենք, իսկ ինչո՞ւ չեք ուզում, որ վաղը, մյուս օրը Ազգային ժողովը լիազորություն ունենա Հայաստանի Հանրապետության տարածքները ընդարձակելու ազատագրված հողերի միացմամբ: Այ մարդ, եթե դու ուզում ես ազատագրված հողերը կցել Հայաստանի Հանրապետությանը, բա դրա փառքը թող քեզ լինի, ինքդ համապատասխան փաստաթղթի տակը ստորագրի: Միամիտ չենք, հասկանում ենք, որ, ավա՜ղ, իրողությունն այլ է: Ուստի և ինքներս մեզ հարց տանք. իսկ ինչո՞ւ են Ազգային ժողովին տալիս տարածքային փոփոխություններ վավերացնելու լիազորությունը, և ինչո՞ւ է հիմա հենց այդ հոդվածն այդքան չարչրկվում: Ահա թե ինչու. դեռևս ս/թ մայիս ամսին Վարշավայում տեղի ունեցավ Եվրախորհրդի անդամ երկրների ղեկավարների գագաթաժողովը: Եվ հրապարակումներ եղան (ոչ հայաստանյան մամուլում, բայց դրա արձագանքները տարածվեցին նաև մեզանում) առ այն, որ պարոններ Քոչարյանը և Ալիևն այնտեղ փոխհամաձայնության են եկել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման կապակցությամբ: Եվ փոխհամաձայնությանը ներկա են եղել բանակցային այդ գործընթացներին մասնակից Մինսկի խմբի համանախագահող երկրների ներկայացուցիչները, այսինքն՝ Ֆրանսիայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի կողմից համանախագահները, ինչպես նաև Ֆրանսիայի ու Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարները: Եվ այդ փոխհամաձայնագրի առանցքը կազմել է այն, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնապաշտպանության զորքերը անվերապահորեն դուրս են բերվելու ազատագրված տարածքներից, բոլոր յոթ տարածքներից: Այդ պայմանավորվածությունը եղել է: Բնականաբար, պարոն Քոչարյանը, հեռատես լինելով, գիտակցում է, թե դա ինչի կարող է հանգեցնել, և իրեն «մանյովրի», նահանջի տեղ է թողնում: Որ անգամ իսկ եթե որոշակի տարածքներ մնան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնապաշտպանության զորքերի վերահսկողության տակ, ապա դիմացը ինչ-որ բան պետք է փոխհատուցեն: Իսկ դա մեկն է՝ Սեղրիի տարածքը: Եթե ոչ ամբողջությամբ, ապա այն, ինչ օրգանապես հետաքրքրում է ադրբեջանցիներին: Եվ այս պարագայում շատ հետաքրքիր զարգացումներ եղան: Այսպես, երբ նոյեմբերի 2-ին Ադրբեջանում տեղի ունեցան Միլի Մեջլիսի ընտրությունները, և ընդդիմությունը ոտքի

կանգնեց, սկզբից թվում էր, թե դիտորդական առաքելությունների ղեկավարներն ամենախիստ գնահատականները տվեցին, կրկնում եմ՝ ամենախիստ գնահատականները: Մեկ էլ հանկարծ, էն փուչիկի նման, որ փոքր-ինչ ծակում ես, թե չէ, չի գմփում, այլ հանգիստ փսկում է, այդպես էլ բազմամարդ և տարաբնույթ դիտորդական առաքելությունները հանգստացան, լռեցին: Ինչո՞ւ, որովհետև ճիշտ այդ նույն ժամանակ «Վաշինգտոն պոստ» թերթում տպագրվեց ԵԱՀԿ-ի այսօրվա դրությամբ նախագահող երկիր Սլովենիայի արտաքին գործերի նախարար Ռուպելի հայտնի հարցազրույցը: Այդտեղ մասնավորապես ասվում էր, որ ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ, որ Ադրբեջանում իրավիճակն ապակայունանա, քանի որ Հայաստանի հետ զինադադարից հետո անցած 11 տարիների ընթացքում եզակի հնարավորություն է ստեղծվել, երբ կողմերն այդքան մոտ են համապատասխան պայմանագիր կնքելուն: Այդ հարցազրույցից հետո, ասես թե, կախարդական փայտիկի շարժումներով, Հայաստանում անդամագրված միջազգային համապատասխան կառույցները և օտարերկրյա դեսպանատները դրսևորեցին միատեսակ կեցվածք՝ խնդիր ունենալով հանրաքվեին նախորդող քարոզարշավի ընթացքում հանդես գալ լոկ ճնշական հայտարարություններով, ժողովրդական լեզվով ասած՝ «գելի գլխին ավետարան կարդալով»: Եվ արդյունքում արձանագրվեց այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության համար բախտորոշ այնպիսի հարցի ժամանակ, ինչպիսին հանրաքվեն է, ԵԱՀԿ-ի կողմից մոնիտորինգ են անցկացնելու ընդամենը յոթ դիտորդ: Այս պայմաններում դյուրին է ենթադրել, որ նրանցից մեկը կգնա Կառավարությունում կնստի, մեկը՝ Նիգ-Ապարանի նախագահությունում, մյուսը՝ Ազգային ժողովում, չորրորդը՝ Արդարադատության նախարարությունում, մեկն էլ ճնի համար կգնա համապատասխանաբար տեղամասերից մեկը, որտեղ ռազմական ուսումնարանների և բուհերի կուրսանտները շարքերով, այն է՝ «ստրոևոյով» գնալու են, քվեաթերթիկները քվեատուփը գցելիս պատիվ բռնելով կատարեն իրենց «քաղաքացիական պարտքը» և «այո» ասեն: Ընդ որում, չստացվի, որ կրկնում եմ, պարզապես շատ եմ կարևորում այն հանգամանքը, որ Եվրախորհրդի անդամ երկրները, մասնավորապես նրանց դեսպանները, քանիցս հանդես են եկել հայտարարություններով, ուր մատնանշում էին, որ հանրաքվեի քարոզարշավի ժամանակ պարտադիր կարգով պետք է հավասար պայմաններ ստեղծվեն «այո»-ի և «ՈՉ»-ի կողմնակիցների համար: Այդ կոչերն իշխանությունների կողմից անտեսվեցին, դիվանագիտական լեզվով ասած, նրանց ցույց տվեցին դուռը: Այսինքն՝ իշխանություններն իրենց վարքագծով, ըստ էության, ասացին՝ դուք մեզ համար կաք, թե չկաք, միևնույն է: Իսկ ի՞նչ է, էդ առյուծի սիրտ էին կերել պարոններ Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, եվրոպայամետ Արթուր Բաղդասարյանը, Նժդեհի ուսմունքը դավանող Անդրանիկ Մարգարյանը, որ այդքան համարձակ են իրենց զգում և եվրոպացիների ասածը գրոշի տեղ չդրեցին: Ոչ, պարզապես խնդիրն այն է, որ ստեղծված իրավիճակում նրանց օդի ու ջրի պես պետք է, որ լինեն այն լուծումները, որոնք հետապնդում են գեթ մեկ խնդիր. ի կատար ածեն այն պայմանավորվածությունները, որոնք, կարելի է ենթադրել, որ հայանպաստ չեն, սակայն արդեն իսկ ձեռք են բերվել համապատաս-

խանաբար Մինսկի խմբի համանախագահող երկրների կողմից: Այս պարագայում, երբ միջազգային հանրությունը դրսևորում է խուլի, կույրի և համրի վարքագիծ, անգամ իսկ եթե մեր ամբողջ ազգը ոտքի կանգնի, բացարձակապես միջազգային ոչ մի կառույցում դա որևէ արձագանք չի ունենա: Եվ նման պայմաններում իշխանություններն առիթն ուզում են օգտագործած լինել, որ, ըստ իրենց հաշվարկների, հեղինակազրկեն ընդդիմադիր քաղաքական ուժերին, որովհետև դա հիմա իրենց առավել քան խիստ անհրաժեշտ է: Ինչո՞ւ, որպեսզի 2006 թ., երբ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ պարտադրվի ոչ հայանպաստ որոշում, արդեն իրենց հակառակ, իրենց դիմադրող կազմակերպված ուժ չլինի: Եվ հիմա, ճիզվիտական մտածելակերպ դրսևորելով, իրենց ամենօրյա գործողություններով ապացուցում են, որ իրենք շատ ավելի են շահագրգռված, որ Հայաստանում իրավիճակն ապակայունանա, քան կարող է թվալ որևէ մեկին: Իշխանությունները դրանում շատ են շահագրգռված: Ուզում են, որ դա լինի նոյեմբերի 27-ին կամ նոյեմբերի 28-ին, ժողովուրդն էլ անպայմանորեն ոտքի կանգնի: Որովհետև մի կրակոցով միանգամից 2 խնդիր են լուծում: Մեկն այն է, որ քաղաքակիրթ աշխարհը, որն անգամ իսկ աներևակայելի երազում չի կարող պատկերացնել թե՛ հայաստանյան իշխանությունների անօրինականություններ կատարելու չափն ու սահմանը և թե՛ վերջիններիս կառավարումից հոգնած ու զզված ժողովրդի ցասումի հնարավոր դրսևորումները: Ուստի և նրանց համար այնքան էլ հասկանալի չի լինի, թե վերջին հաշվով, ինչպես կարելի է սահմանադրական հանրաքվեի արդյունքում ապստամբություն բարձրացնել: Առավել ևս, որ, կարծես թե, կարողացել են իրենք իրենց և ոչ թե մեր ժողովրդին «համոզել», որ, այնուամենայնիվ, սահմանադրական փոփոխություններով առաջընթաց քայլ է ապահովվում: Դա մի խնդիր: Երկրորդը. պատկերացրեք մարդկանց հիասթափության աստիճանն ու չափը, եթե հանկարծ հանրաքվեի արդյունքների հնարավոր կեղծման պարագայում, ինչն այս իշխանությունների համար խիստ հատկանշական է, ժողովուրդը, կքված լինելով սոցիալական անասելի ծանր վիճակի տակ, կրկին ու կրկին անգամ ոտքի ելնի և դա էլ, աստված մի արասցե, ապարդյուն անցնի: Արդեն 2006 թ., եթե Հայաստանի կեսն էլ վերցնելու լինեն, ապա մարդիկ այնքան հիասթափված ու զզված կլինեն ամեն ինչից, որ լուռումունջ կենթարկվեն օտարների կողմից պարտադրված ճակատագրին: Երբ սրանից մոտ քսան օր առաջ «Հայկական ժամանակ» թերթում մեր հարգարժան Նաիրա Զոհրաբյանին հարցազրույց էի տվել, որտեղ մասնավորապես ասել էի, որ նոյեմբերի 27-ը ընդդիմության համար, փոխաբերական իմաստով, ամենևին էլ Վաթեռլո չէ, սա այն ճակատամարտը չէ, որ վերջնական է լինելու ժողովրդի և ընդդիմության միասնական պայքարում այս իշխանությունների դեմ, այս միտքն անասելի աղմուկ առաջացրեց վարչախմբի միջավայրում: Իշխանական լրատվամիջոցները, Հանրային հեռուստատեսությունը և մնացած «մանկլավիկ» հեռուստաալիքներն իրար ձայնակցելով միաբերան սկսեցին հայտարարել, որ Գեղամյանը խոսում է նահանջի մասին և պարտվողական տրամադրություններով է հանդես գալիս: Ավելին, հնարամտությունները հասավ այնտեղ,

որ երկրորդ ծրագրով ցուցադրեցին մուլտիպլիկացիոն կինոնկար, որտեղ Գեղամյանը թմբուկի վրա ռիթմն է պահում, այն էլ Քոչարյանի և Սարգսյանի «նվագախմբում», իսկ Արշակ Սադոյանն էլ Ստեփան Դեմիրճյանին գանգատվում է, թե, տես, որ նա նրանցից է, այսինքն՝ իշխանություններից: Բա եթե ձերոնցից եմ, իշխանական եմ, ապա ինչո՞ւ եք ձեր կամակատար հեռուստաալիքով ինձ մատնում, ծախում՝ նենգ ու անազնիվ իշխանություններ: Խնդիրը, որ հետապնդում են սրանք, մեկն է, կասկածանքի որդը գցել, սերմանել ժողովրդի գիտակցության մեջ: Իսկ ես ուզում եմ ասել, որ այդ մուլտն այլ կերպ հասկացա: Այո, իմ խփած դհոլի տակ կգա օրը, երբ կպարեն հենց այդ մուլտի պատվիրատուները՝ նույն Ռոբերտն ու Սերժը: Ես դրա տերն եմ: Համապատասխան ռիթմն էլ սովորում եմ: Իրենց պարած պարն էլ հենց նույն հեռուստաալիքով որպես վավերագրական կինոնկար՝ կցուցադրենք: Եվ ինչպես նախկինում երկար սպասված ֆիլմերն էին գովազդվում գեթ մեկ բառով՝ «скоро», նույնն էլ շուտով է սպասվում: *(Ծափահարություններ):*

Ժողովուրդ ջան, համոզված եմ, որ առաջիկայում ևս իշխանություններն ամեն ինչ կանեն, որ տպավորություն ստեղծեն, թե, իբր, մոտենում էր վճռական պահը և, հանկարծ, «Ազգային Միաբանությունը» կրկին չմիացավ իր ընդդիմադիր գործընկերներին, ինչպես 2003 թ. փետրվարի 19-ին: Ես այդ օրինակը քանիցս բերում եմ մեկ խնդիր ունենալով. ցույց տալ, որ այս իշխանությունները շատ ավելի խորամանկ ու նենգ են, քան կարող է թվալ, որ ի դեմս ընդդիմության և ի դեմս ժողովրդի ճնշող մեծամասնության տեսնում են իրենց թշնամիներին, և որ դա նրանց լրջագույն հոգևոր ողբերգությունն է, որովհետև տասնամյակներ շարունակ ապրել են թշնամական միջավայրում, օտարության մեջ: Եվ այդ իրավիճակում երկար ու ձիգ տարիներ ապրելը մեջներն սերմանել է հայերիս ներաշխարհին խորթ և օտարածին բնավորության գծեր: Իրենց կողմից չգիտակցված, բայց հենց իրենց իսկ մեծագույն ողբերգությունն այն է, որ վերջիններս, չսիրելով ժողովրդին, անտարբեր են իրենց հանդեպ ժողովրդի դրսևորած զգացմունքներից: Ցավ եմ ապրում, որ երեկ «Ազատություն» ռադիոկայանով Վահան Հովհաննիսյանը խոստովանեց, որ, այո, ժողովուրդը չի սիրում իր իշխանություններին: Բա լավ, վարչախմբի համար բա դրանից մեծ ողբերգություն արդյոք կա՞: Ես ավելի մեծ ողբերգություն չեմ պատկերացնում, երբ մի ամբողջ ազգ, մի ամբողջ երկիր չի սիրում իր ղեկավարին: Չէ՞ որ մեր երկիրը զինադադարի պայմաններում է, դեռ խաղաղություն չի հաստատել, եթե չսիրված նախագահը վաղը ասի՝ վեր կացեք, թասիբս պահեք, որովհետև ես էլ ի պաշտոնե երկրի թասիբն եմ դրսում պահում, ո՞վ կլսի նրան: Իհարկե, ոչ ոք: Իսկ դա չափազանց վտանգավոր է, որովհետև իշխանությունները կգան ու կերթան (ինչպես կասեր մեծն Ջիվանին՝ «ձախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան»), բայց Հայաստանը մեկն է, մեր աշխարհը եղել է, կա և կլինի: Եվ համոզված եմ, որ կլինի այն Հայաստանը, որը կերտել են ձեր ծնողները, բոլորիս պապերը, և մենք պետք է հենց Հայաստանի կերտման, արարման դրոշակակիրները լինենք՝ առավել խելոք գտնվելով տվյալ իրավիճակում: Պատահական չէր, որ վերը հիշատակեցի փետրվարի 19-ը: Հիմա

էլ համոզված կարող եմ ասել, որ եթե բոլորս, այն է՝ ընդդիմադիր դաշտի նախագահի 6 թեկնածուները, որոնք, դեռևս ընտրությունները չավարտված, գրավոր հրաժարվել էին ճանաչել դրանց արդյունքները, կարողանայինք հավատարիմ մնալ մեր իսկ կողմից ստորագրած փաստաթղթին, և երկրորդ փուլը չլիներ, ապա այս իշխանություններին և ոչ ոք, և ոչ մի երկիր չէր ճանաչի, ու այն ժամանակ պատմությունը լրիվ ուրիշ կերպ կգրվեր: Հիմա նույնը վերաբերում է նոյեմբերի 27-ին: Վերջին հաշվով եզակի հնարավորություն է տրված, որ Դուք, տանը նստելով, այո, բառիս իսկական առումով՝ տանը նստելով, պարագնեք այս իշխանություններին, պարագնեք: Համոզված եմ, իրենց այս քարոզարշավից հետո և ոչ մի մարդ գիտակցաբար չի գնա քվեարկության, չի մասնակցի հանրաքվեին, այն պարզ պատճառով, քանի որ հասարակ տրամաբանություն և պարզ հաշվարկ կա: Ո՞րն է դա. վերջերս ավարտվեցին ՏԻՄ ընտրությունները: Առավել թեժ պայքար էր ընթանում Երևան քաղաքում և, ինչու չէ, նաև Արմավիրի մարզում, գյուղական համայնքներում: Երբ 50-ից ավել մարդիկ էին հավակնում 15 ավագանու տեղի համար, 4-5 հոգի համայնքապետի տեղի համար, երբ նրանցից յուրաքանչյուրն իր կողմնակիցներին, ջատագովներին, իր համակիրներին կարողացել էր մոբիլիզացնել, երբ իրենց կազմակերպական, ինչու չէ՝ ֆինանսական ողջ ռեսուրսները ներգրավելու պայմաններում լավագույն դեպքում, այն էլ կեղծիքների արդյունքում, ի՞նչ եք կարծում, ընդամենը 30-37% մարդ գնաց քվեարկության: Դրանով իսկ ժողովուրդը մեկ անգամ ևս ցույց տվեց, որ, չվստահելով այս իշխանություններին, նա բոյկոտում է վերջիններիս կողմից առաջարկվող ցանկացած միջոցառում, անգամ իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Առավել ևս հիմա ժողովուրդը գիտակցաբար չի գնա հանրաքվեի: Ուստի, իշխանությունները հերթական անգամ ստիպված կլինեն թվեր նկարել: Ու եթե մինչ այժմ հանրապետությունում անցկացված ցանկացած ընտրությունից հետո միջազգային կազմակերպություններն են մեզ միշտ գնահատականներ տվել, ահա կգա պահը, երբ արդեն իսկ մենք դրանց ներկայացուցիչներին, նույն այդ երկրների դեսպաններին կասենք. ինչո՞ւ եք լռում թեկուզ այս հանրաքվեի քարոզարշավի ընթացքում իշխանությունների կողմից թույլ տրված բազմաթիվ անօրինականությունները տեսնելիս, ինչո՞ւ եք առաջնորդվում երկակի ստանդարտներով: Ինչո՞ւ, եթե ձեզ պետք է, որ մի բան անպայման անցնի, ձեր աչքերն իսկույն կոծկում եք աղաղակող թերությունների վրա: Եվ սա կլինի այն դեպքը, երբ մեր ազգն արդեն նրանց գնահատականը կտա: Եվ ամենևին պատահական չէր, որ անցյալ կիրակի, Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվող «Խորհրդարանական շաբաթ»-ում, օգտվելով 3 րոպե ընձեռած հնարավորությունից, ես ուղղակիորեն դիմեցի դեսպաններին և ասացի՝ հայաստանյան իշխանությունների կողմից Դուք արհամարհվել եք: Դրանով իսկ անասելի հարված է հասցվել այն մարդկանց, ովքեր դեռ երեկ հավատում էին, որ Եվրամիության անդամ երկրներն իրապես ժողովրդավարության քարոզիչներ են, ջատագովներ են, որ իրապես ԱՄՆ-ը ուզում է ամենուր ժողովրդավարություն հաստատել, մասնավորապես նաև Հայաստանի Հանրապետությունում:

Սիրելի արմավիրցիներ, ես այս ամենը ձեզ ասում եմ ոչ թե ձեր գիտակցության մեջ հուսահատություն սերմանելու, ոչ թե ընկճվածություն առաջացնելու համար, այլ որպեսզի ազգովի գիտակցենք, որ մեր ճակատագիրը մեր ձեռքում է, որ վերջնական որոշում կայացնողը մենք ենք ձեզ հետ լինելու: Որ մենք էլ իմանանք այսօր այստեղ՝ այս դահլիճում, ինչքան նստած մարդ կա, ինչքան էլ մարդ կանգնած է շարքերի արանքներում և լեփ-լեցուն նախասրահում, դա է բոլորիս պատասխանը բարձրաստիճան իշխանավորների «այո»-ի քարոզիչների դատարկ լսարաններին: *(Ծափահարություններ):*

Եվ այս պարագայում առանց անհարմար զգալու հրապարակում են սոցիոլոգիական հարցումների արդյունքներ, ըստ որի, իբր, հարցվածների 80%-ը կողմնորոշված է «այո»-ի, 20 %-ը՝ «ՈՉ»-ի: Տնաշենները գոնե մի փոքր խիղճ ունենային և խոստովանեին, որ այդ հարցումներն անց են կացվել Նախագահի կամ Կառավարության աշխատակազ-մերում: Նման կեղծ հարցումների արդյունքները հրապարակելով, ասես թե, դրսի մարդկանց են լսեցնում, միաժամանակ էլ հուշում են «նկարիչներին», թե ինչպես պետք է հանրաքվեի թվերը կեղծեն: (Ռեպլիկ դահլիճից՝ դա իրենց արհեստն է.-*խմբ.):* Այո, իրենց արհեստն է, բայց, ցավոք սրտի, անտաղանդ նկարիչներ են: Այս իշխանությունների իրական դեմքը, իրական պատկերը ձեզ հետ տեսանք Նոր Հաճնի քաղաքապետի ընտրությունների ժամանակ: Եվ նորհաճնցիները, որոնցից շատերը, բարեբախտաբար, հնարավորություն ունեն օրական 12 ժամ աշխատելու, ընտրեցին մի մարդու, որը դրանից մեկ շաբաթ առաջ մարդ էր սպանել, սպանել էր քաղաքապետ դառնալու իր հնարավոր մրցակցին: Հիմա դիմենք Վարդան Օսկանյանին և հարցնենք. խոսում ես ընդդիմության բարոյականությունից, իսկ քո իշխանության բարոյականությունից ո՞վ պետք է խոսի: Հայ դատի խնդիրն են մեծ-մեծ, ամպագոռգոռ բարձրացնում, ես էլ, քեզ հիշեցնեմ, Ստրասբուրգում կարողացել եմ 5 անգամ ելույթ ունենալ, 1 անգամ էլ Վաշինգտոնում ամոթանքի, լուտանքի խոսքեր եմ ուղղել թուրքերին, աղրբեջանցիներին, փաստերով հիմնավորել ասածս, բա որ հիմա հանկարծ նրանք էլ կանգնեն և ասածներս վերադարձ-նեն ինձ՝ ասելով. էս որ մեզ դասեր էր տալիս Գեղամյանը, եվրոպական առանձին երկրների ներկայացուցիչներն էլ անթաքույց շնորհավորում էին, էս հայերը էն ազգը չե՞ն, որ հենց վերջերս մարդասպանին քաղաքապետ են ընտրել: Դրա պատասխանը թողնում եմ ձեր արատավոր վարչախմբին: Այս հարցերը թողած՝ կանգնել երկքաղաքա-ցիության դեմ արտահայտվողների բարոյականության մասին ես խոսում: Այդ մասին դասեր են տալիս մարդիկ, ում հարազատները, եթե քիչ թե շատ նորմալ երկիր լիներ, այստեղից ոչ շատ հեռու՝ Կոշի գաղութում կհայտնվեին:

Սիրելի ժողովուրդ, երբ իրապես մտածում ես այս իշխանությունների մասին, ապա գալիս ես մի համոզման, որ սրանք, իրոք, անուղղելի են և դատապարտված են կործանման: Էլի պատմական զուգահեռ անցկացնեմ. մ.թ.ա. 278 թ. Էպիրոս քաղաքի թագավոր Պյուրոսը, երբ հռոմեացիների նկատմամբ հաղթանակ տարավ, ճակատամարտից հետո տեսնելով, որ իր բանակն էլ է մեծ կորուստներ կրել, բացականչեց. «Եվս մի այսպիսի ճակատամարտ և մի այսպիսի հաղթանակ, ու մենք վերջնականապես կկործանվենք»:

Այս խոսքն ուղղում եմ իշխանություններին: 1998 թ., երբ պարոնայք Ռ.Քոչարյանը և Կ° նախագահական արտահերթ ընտրություններում հեղաշրջում կատարեցին, ժողովրդի զգալի մասի հավատը կոտրվեց: Հատկապես այն մարդկանց, ովքեր հրապուրված էին Լեռնային Ղարաբաղի ազատամարտով և նաև դրա խորհրդանիշ դարձած Ռ. Քոչարյանով, որ այն ժամանակ երջանկահիշատակ Վազգեն Սարգսյանի ամենամերձավոր դաշնակիցն էր: 2003 թ. նախագահական ընտրություններից հետո, երբ պարոն Քոչարյանը «թվացյալ» երկրորդ հաղթանակը տարավ, արդեն ազգի համար ակնհայտ դարձավ, որ սրանք զեղծարարներ են, որ սրանք բացարձակապես և ոչ մի սրբություն չունեն, որ սրանք տենչում են ինչ գնով էլ ուզում է լինի՝ մեկ օր ավել մնան իրենց աթոռներին: Ոչ, ոչ թե Հայաստանը շենացնելու համար, այլ որ կարողանան բենզալցման կայաններ և ավտոլվացման կետեր գնել Կալիֆոռնիայում, որ կարողանան Հայաստանից մի քանի տասնյակ միլիոն դոլար կտրեն ու տանեն Կոմի Ինքնավար Հանրապետությունում ոսկու հանքեր գնեն: Եվ հիմա էլ պատրաստվում են հերթական «հաղթանակին», որի համար ուզում են պրոպագանդիստական հենք ստեղծած լինել, այն է՝ «ապահովել» Սահմանադրության հանրաքվեում ժողովրդի «այո»-ն: Ես համոզված կարող եմ ասել, որ դա իրենց համար դառնալու է «պյուրոսյան հաղթանակ»: Հիշեցնեմ, որ ուղիղ մեկ տարի անց՝ մ.թ.ա. 277 թ., Էպիրոս քաղաքը կործանվեց, կործանվեց նաև Պյուրոս արքան: Սա է իշխանությունների գլխին գալիքը, քանզի սեփական երկրում ժողովուրդը չի կարող պարտվել:

Սիրելի արմավիրցիներ, բոյկոտելով այս հանրաքվեի քվեարկությունները, իմացեք, որ բոյկոտում ենք այս իշխանություններին: Շնորհակալություն: *(Բուռն, որոտընդոստ, երկարատև ծափահարություններ):*

«Իրավունք», 9.–15.XII.2005:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Ազգային Միաբանություն» խմբակցության հայտարարությունը

Հարգելի հայրենակիցներ, Հայաստանի իշխանությունները կոպտորեն կեղծելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու սույն թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքները, կատարեցին հակասահմանադրական հեղաշրջում:

Միջազգային կազմակերպություններն ու Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչություն ունեցող պետությունները հանրաքվեի արդյունքներին տվեցին իրենց գնահատականները, որոնք էականորեն տարբերվում են Հանրապետության իշխանությունների պաշտոնապես հայտարարած գնահատականներից:

Դրա հետ մեկտեղ, դիտորդների տված գնահատականները հանրաքվեն բոյկոտած Հայաստանի ավելի քան երկու միլիոն ընտրողների թույլ տվեցին օբյեկտիվ կարծիք կազմել ազատության և ժողովրդավարության գաղափարին միջազգային կազմակերպությունների և առանձին պետությունների նվիրվածության աստիճանի մասին:

Ազգային ժողովի դեկտեմբերի 8-ի նիստը, որին նախատեսվում է Ռուսաստանի Դաշնությունից բարձր հյուրի՝ պարոն Ս.Միրոնովի ելույթը, Հայաստանի իշխանությունների կողմից անկասկած կօգտագործվի որպես չկայացած հանրաքվեի լեգիտիմացման փորձ: Մեր այս պնդումը հիմնված է 2003 թ. նախագահական և խորհրդարանական ընտրությունների կոպիտ կեղծումների իրողություններին հաջորդած գործընթացների վրա:

Հատուկ կարևորություն տալով Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև ռազմավարական համագործակցության հետագա ամրապնդմանը, թանկ գնահատելով այն ջերմ զգացմունքները, որ տածում է հայ ժողովուրդը Ռուսաստանի քաղաքացիների նկատմամբ, գտնում ենք ոչ նպատակահարմար «Ազգային Միաբանություն» խմբակցության ներկայությունը ՀՀ Ազգային ժողովի վերոհիշյալ նիստին, որը, կրկնենք, Հայաստանի ղեկավարությունը կփորձի օգտագործել ինչպես իր սեփական իշխանության, այնպես էլ չկայացած հանրաքվեի արդյունքների լեգիտիմացման համար:

Հարգելի հայրենակիցներ, «Ազգային Միաբանություն» պատգամավորական խմբակցությունը վերստին հաստատում է իր վճռականությունը՝ տանելու հետևողական պայքար Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգի հաստատման նպատակով:

Արտաշես Գեղամյան
ՀՀ Ազգային ժողովի
«Ազգային Միաբանություն»
խմբակցության ղեկավար

«Իրավունք», 9.-15.XII.2005:

Վերջապես լսեք բանականության ձայնը

Ամիսներ առաջ «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը հորդորում էր Ռ. Քոչարյանին և նրա հենարանը հանդիսացող քաղաքական կոալիցիային՝ կառուցողական մոտեցումներ դրսևորել ընդդիմադիր քաղաքական ուժերի առաջարկներին՝ դրանով իսկ ազգային համաձայնության մթնոլորտ ստեղծել սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի անցկացման համար: Մեր առաջարկների ընդունումը, անկասկած, կուժեղացներ Հայաստանի Հանրապետության դիրքերը ԼՂ հակամարտության բանակցային գործընթացներում: Սակայն զավթած պաշտոնների պահպանման մոլուցքն այս էլ որերորդ անգամ գերիշխեց ազգային շահի հրամայական պահանջին: Արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կրկին հայտնվեց վտանգավոր զարգացումների առջև: Այս պարագայում կարևորում ենք քաղաքացի Ր. Կ. Հովհաննիսյանի զգուշացում-ահազանգերն՝ ուղղված «ՀՀ Նախագահի պաշտոնակատար Ռ. Քոչարյանին»:

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը ծանոթացավ քաղաքացի Ր. Կ. Հովհաննիսյանի «Հանրային Հաշվետվություն Քաղաքացիական Պահանջագիր» հարցադիմումի բովանդակության հետ՝ ուղղված «ՀՀ Նախագահի պաշտոնակատար Ռ.Քոչարյանին»: Նամակում առաջ քաշված հարցերը կրկին երևան են հանում հայոց պետականության հիմքում դրված ականները և վտանգները, որոնք պայմանավորված են ոչ լեգիտիմ թե՛ Նախագահով և թե՛ օրենսդիր ու գործադիր իշխանություններով: Տարակուսանք է հարուցում այն, որ Ռ.Քոչարյանին սատարող ուժերը և իշխանական քարոզչամեքենան փոխանակ իրենց շնորհակալական խոսքն ուղղեին քաղաքացի Ր.Կ. Հովհաննիսյանին, որը, դրսևորելով բարի կամք, Նախագահի պաշտոնակատարին հուշում և զգուշացնում է 2006 թ. սպասվելիք Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման շուրջ ծավալվող բանակցություններում հայկական կողմի խոցելի տեղերի մասին, զբաղված է դիմումատուի անհարկի քննադատությամբ: Ակնհայտ է, որ վարչախմբի կողմից քրեորեն պատժելի բազում օրինախախտումների փաստերը Հայաստանի համար ոչ բարենպաստ աշխարհաքաղաքական զարգացումների դեպքում անխուսափելիորեն կօգտագործվեն ԼՂ հարցի անարդարացի լուծման համար: Առավել ևս, որ դիմումում արծարծված խնդիրների մասին անցած ութ տարիների ընթացքում հայաստանյան մամուլում հրապարակվել են բազմաթիվ առարկայական հոդվածներ,

որոնք հիմնավոր մեղադրանքներ են եղել՝ ուղղված թե՛ «ՀՀ Նախագահի պաշտոնակատար Ռ. Քոչարյանին» և թե՛ նրա վարչախմբին: Գոհունակությամբ նշում ենք, որ խնդրո առարկա հարցերը համահունչ են «Ազգային Միաբանություն կուսակցության» կողմից տարիներ շարունակ բազմիցս հնչեցրած թե՛ բանավոր և թե՛ գրավոր ելույթ-հայտարարություններին, ինչպես նաև 2005 թ. հոկտեմբերի 22-ին կայացած կուսակցության 5-րդ համագումարի գնահատականներին: Կարևորում ենք նաև, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար «Ազգային Միաբանություն կուսակցության» կողմից բարձրացված հարցադրումները գտնում են լայն ընկալում, արժանանում քաղաքացիների ուշադրությանը, դառնում նրանց սեփականությունը:

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը իր հերթին դիմելով «ՀՀ Նախագահի պաշտոնակատար պրն Քոչարյանին», հույս է հայտնում, որ վերջապես նա կդրսևորի սթափություն և հրաժարական կտա, գիտակցելով, որ իրեն ուղղված հարցերը, իսկ ավելի ճիշտ, հարցերի հետևում առկա իրողությունները խիստ վտանգավոր են պետության համար և այլևս գաղտնիք չեն ինչպես մեր ժողովրդի ամենալայն զանգվածների, այնպես էլ Հարավային Կովկասում որոշակի շահեր հետապնդող միջազգային կազմակերպությունների համար: Հակառակ դեպքում Ռ. Քոչարյանի հետագա պաշտոնավարությունն անկասկած կվնասի մեր երկրի անվտանգությանը:

Ընդգծելով «Քաղաքացիական պահանջագրի» մեջ արծարծված հարցերի արդիականությունը՝ խնդիր ունենալով երկիրը զերծ պահել այս գործում օտար ուժերի հնարավոր շահարկումներից, «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը վերստին կարևորում է հեղինակազրկված Ազգային ժողովի լուծարումը և խորհրդարանական ազատ, արդար, ժողովրդավարական ընտրությունների կազմակերպումը: Այնուհետև՝ նոր կառավարության ձևավորումը, ապա՝ նախագահական արտահերթ ընտրության անցկացումը: Մեր համոզմամբ, միայն այս ճանապարհով հնարավոր կլինի կանխել հայոց պետականությանը սպառնացող վտանգները, որոնք, կրկնում ենք, պայմանավորված են Ռ. Քոչարյանի անօրեն, հակասահմանադրական գործունեությամբ:

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը ակնկալում է, որ Հայաստանի ապագայի մասին մեր կուսակցության իրատեսական և կառուցողական մոտեցումները այսուհետ ևս կունենան իրենց արձագանքը քաղաքացիների լայն շրջաններում:

15.12.2005 թ.

«Ազգային Միաբանություն կուսակցության»
նախագահության անունից՝
Արտաշես Գեղամյան

«Իրավունք», 16.–22.XII.2005:

Չեր անհետևողականության հետևանքն է

Եվրախորհրդի չինովնիկներին հակադարձում է «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ, ԵԽ ԽՎ-ում ՀՀ պատվիրակության անդամ Արտաշես Գեղամյանը:

Ակնհայտ է, որ «Ազգային Միաբանությանն» էր վերաբերում Հայաստանի սահմանադրական հանրաքվեն դիտարկող ԵԽ ժամանակավոր հանձնախմբի ղեկավար և զեկուցող Թոմաս Ջիրսայի նախնական զեկույցում առկա հեգնալից ակնարկը, թե հետաքրքիր էր իրենց այցի ժամանակ շրջանառվող «Արևմտյան դավադրության տեսությունը», որ ԼՂ հակամարտության կարգավորման դիմաց՝ կասպիական վառելիքով շահագրգիռ Արևմուտքը պատրաստ է աչք փակել հանրաքվեի հնարավոր խախտումների վրա. «Ուստի ընդդիմության մի հատվածը գրեթե թշնամաբար էր վերաբերվում պատվիրակությանը և մեղադրում ԵԽ-ին իշխանամետության մեջ»:

Այս վարկածը հրապարակավ հայտնել էր Արտաշես Գեղամյանը, և նրա ղեկավարած խմբակցությունն անգամ հրաժարվել էր դիտորդների հետ հանդիպումից: Այժմ էլ՝ հօգուտ այդ տեսության, պրն Գեղամյանը հիշեցրեց «Նյու Յորք թայմս»-ում և «Վաշինգտոն պոստ»-ում Դմիտրի Ռոգոզինի հարցազրույցը. «Այստեղ նա ուղղակիորեն ասում է՝ երբեք ու երբեք պետք չէ թույլ տալ, որ վիճակն ապակայունանա թե՛ Ադրբեջանում և թե՛ Հայաստանում: Եվ կեղծված, տապալված հանրաքվեից հետո գրեթե քար լռություն էր տիրել՝ մինչև վերջերս: Ուստի ի՞նչ եզրակացության պիտի գար ընդդիմությունը, մասնավորապես՝ «Ազգային Միաբանությունը», երբ արհամարհվում էին ԵԽ ԽՎ նախագահ Ռենե վան դեր Լինդենի հորդորները՝ հանրաքվեից դեռ 1,5 ամիս առաջ ուղղված այս իշխանություններին: Նա հորդորեց, թե ընդդիմությունը պետք է հավասար պայմաններ ունենա օգտվելու բոլոր լրատվամիջոցներից, որ իրենք չափազանց են կարևորում տեսակետների ազատ արտահայտման հնարավորությունը: Մինչդեռ «Ազգային Միաբանության» և ոչ մի անդամ այդպես էլ չունեցավ գեթ մեկ րոպե հեռուստաեթերով իր կարծիքը հայտնելու հնարավորություն: Քարոզարշավը ընթացավ միակողմանի, ընդդիմության հանդիպումների առջև հարուցվում էին խոչընդոտներ, սակայն Արևմուտքը և ոչ մի կերպ չէր արձագանքում: Եվ եթե տեղերով փոխվենք՝ ինչպե՞ս պրն Ջիրսան կբնութագրեր այն կազմակերպության լիազորների ջանքերը, որոնք լռում էին՝ ունենալով բոլոր լծակները: Մենք չենք ընդունում եվրոպական այն չինովնիկներին,

որոնք պատրանք են ստեղծում և ոչ թե հետամուտ լինում իրական ժողովրդավարությանը: Սակայն երբե՛ք առանձին չինովնիկների անբարեխիղճ աշխատանքը, ինչի ականատեսը քանիցս եղել ենք այստեղ՝ չենք վերագրել ողջ Եվրոպայի խորհրդին: Եվ հիմա չակերտների մեջ ձշված «տեսության» մասին հիշատակումներն ինձ չեն տխրեցնում, հակառակը՝ ուրախացնում են: Նշանակում է՝ ճիշտ հետևություններ են արել, տեղ է հասել քննադատությունը: Ուրեմն՝ անտարբեր չեն Հայաստանի ապագայի նկատմամբ և իրոք ցանկանում են, որ մեր երկրում հաստատվի իրական ժողովրդավարություն»:

Ակնհայտ է, որ Եվրոպայի խորհուրդը բնավ մտադիր չէ աչք փակել կատարված կեղծիքների վրա: Սրա ապացույցը նաև դիտորդների այս զեկույցն է, որում, հիշեցնենք, նշված է, թե «մարզերի որոշ տեղամասերը և Երևանի՝ գործնականում բոլոր տեղամասերն ապշեցուցիչ դատարկ էին՝ անկախ օրվա այն ժամանակահատվածից, երբ կատարվել է այցը (բացառությունը միայն այն պահերն էին, երբ քվեարկում էին զինվորականները): Պատկերն օրվա ընթացքում շատ կրկնվող էր, որ թույլ տար հավատալ, թե մեծ ակտիվությունը, որի մասին մեզ վստահեցնում էին ընտրական հանձնաժողովների ղեկավարները՝ միշտ լինում է հենց այն ժամանակ, երբ մենք այնտեղ չենք»: Թոմաս Ջիրսան մի օրինակ է մեջբերել, որ վերաբերում է սեփական փորձառությանը Երևանի 06/01 ընտրատեղամասում: Նշում է, թե այնտեղ է ժամանել 18:15-ին, և ընտրահանձնաժողովի ղեկավարը հայտնել է, որ 1868 գրանցված ընտրողներից քվեարկել են շուրջ 800-ը, մինչդեռ ընդդիմության դիտորդը հայտնել է, թե մասնակցել են 278 հոգի. «Քվեատուփի կիսաթափանցիկ տուփում կարելի էր հստակ տարբերել լցոնված քվեաթերթիկների մեծ քանակ: Ընտրացուցակի ամեն էջում կար ընդամենը մի քանի ստորագրություն: Այն ընթացքում, մինչ մենք զանգում էինք ԿԸՀ, որ հայտնենք խախտման մասին՝ ընտրացուցակը փոխվեց մեկ ուրիշով, որը լեցուն էր ստորագրություններով: Ընտրական հանձնաժողովի նախագահը մեզ թույլ չտվեց, որ հաշվենք դրանք: Շուրջ 2 ժամվա ընթացքում քվեարկելու եկան հազիվ 20 հոգի, և նրանց բոլորին ուղարկեցին հարևանությամբ գտնվող ընտրատեղամաս, որտեղ նրանց անունները գրված էին առանձին ցուցակում: Քվեատուփը բացելուց առաջ ընտրական հանձնաժողովի անդամներն այն լավ թափ տվեցին, որ լցոնված քվեաթերթիկներն այլևս նկատելի չլինեն: Այնուամենայնիվ՝ բացելուց հետո մենք ներսում հայտնաբերեցինք ոչ միայն մեկ, այլ մի քանի նման խմբաքանակներ»:

Նախնական զեկույցում ափսոսանք է հայտնված ընդդիմության դիրքորոշման կապակցությամբ, որն ընտրահանձնաժողովների իր բոյկոտով միայն խոչընդոտեց քվեարկության թափանցիկությանը և հետո էլ բողոքներ չուղարկեց ԿԸՀ-ին ու դատարաններին. «Ժողովրդավարության մեջ տարաձայնությունները չեն կարող լուծվել ամբողջական մերժմամբ և «ինչ լինելու է՝ թող լինի» սկզբունքով. նույնիսկ, եթե ժողովրդավարական գործընթացներն անկատար են կամ անգամ թերի՝ պետք է օգտագործվի իրավական բոլոր միջոցների ամբողջ ներուժը»:

Ընտրական հանձնաժողովներից առաջինն իր ներկայացուցիչներին հետ կանչած

«Ազգային Միաբանության» առաջնորդն ի պատասխան նշեց. «Ցավոք, իրենց այս քննադատությունը բումերանգի պես ուղղված է առաջին հերթին ԵԽ ԽՎ-ին: Վեհաժողովը պիտի հետևողականություն դրսևորեր սեփական իսկ բանաձևերի կատարման առնչությամբ՝ ասենք, նախագահական ու խորհրդարանական խայտառակ ընտրություններից հետո իշխանություններին տրված հանձնարարականի՝ ընտրակեղծիքների պատասխանատուներին ի հայտ բերելու և պատժելու վերաբերյալ: Ահա այդ ժամանակ, այո՛, տեսնելով, որ ԵԽ ԽՎ-ն տեր է կանգնում սեփական որոշումներին՝ ընդդիմությունն էլ հետ չէր կանչի հանձնաժողովներից իր անդամներին՝ համոզված լինելով, որ իրենց կողմից բացահայտված թերությունները չեն մնա անհետևանք, ինչպես մնացին 2003-ի ընտրակեղծիքները: Իսկ ընդդիմությունը, մասնավորապես՝ «Ազգային Միաբանությունը» երբե՛ք հարվածի տակ չի դնի իր ակտիվին, որին Հայաստանի գլխավոր դատախազը և տարածքային դատախազները ահաբեկում էին՝ սպառնալով, թե կկալանավորեն, եթե չգնան ընտրությունների: Մինչդեռ, երբ կեղծիք է իրականացվել, դրա ներքո կան ստորագրություններ, ու հուշում ենք, թե ընդամենը պետք է կանչել ընտրական հանձնաժողովների անդամներին, հարցաքննել նրանց՝ Աղվան Հովսեփյանը դա որակում է իբրև հետապնդում և իրավագիտության մայր սկզբունքի՝ անմեղության կանխավարկածի ոտնահարում: Այս իրականության մեջ ընդդիմությունն, անշո՛ւշտ, պետք է ինքնաքննադատաբար վերլուծի իր գործողությունները (իսկ ինքներս մեզ քննադատելու բան ունենք շատ հարցերի առնչությամբ), բայց եվրոպացիներն էլ՝ մինչև ուրիշին սովորեցնելը, թող Հայաստանի վերաբերյալ սեփական բանաձևերին գեթ մեկ անգամ հետևողականորեն տեր կանգնեն»:

Աննա Խսրայելյան

«Առավոտ», 24.XII.2005:

Վարունգ գողացողների վերջը

Հարցազրույցն ամանորի նախաշեմին տպագրելը պայմանավորված է այն իրողությամբ, որ արդեն իսկ իշխանական լրատվամիջոցները ծավալել են նախագահական ընտրություններին բնորոշ բուռն քարոզարշավ: Տպավորություն է ստեղծվում, որ Քոչարյանի անմիջական հենարանի և շրջապատի մարդիկ այս օրերին սկսած իրենց գործունեությամբ հիմնավորում են նախագահական արտահերթ ընտրություններ անցկացնելու ընդդիմության կանխատեսումը: Դիմելով պարոն Ռ. Քոչարյանին՝ հարցնենք. «Ռոբերտ Սեդրակիչ, եթե նման բան կա, ասեք, ժողովուրդն էլ իմանա: Համոզված եղեք, որ անկախության անցած 15 տարիների ամենաբարի ավետիսը կլինի ձեր հրաժարականը: Եվ ամանորյա առաջին բաժակը յուրաքանչյուր հայկական օջախում կբարձրացվի հանուն կենաց հայության»:

– Պարոն Գեղամյան, քաղաքական տարին ավարտվեց, և թեպետ Դուք ու ընդդիմության մյուս լիդերները դեռևս 2004-ի ավարտի Ձեր բարեմաղթանքներում խոստացել էիք, որ 2005 թ. ազատվելու ենք այս իշխանություններից, սակայն 2006 ենք մտնում դարձյալ նույն վարչախմբի բեռով: Այսպես էլ գնալո՞ւ ենք հերթական ընտրություններին:

– Հարցին հիմնավոր պատասխանելու համար հարկ է պարզաբանել մի քանի իրողություններ: Նախ, ինչո՞ւ երկրում գործող վարչախումբն արհամարհեց Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի Հայաստանին վերաբերող հայտնի բանաձևը, որով իշխանություններին հորդորում էին բացահայտել և խստագույնս պատժել 2003 թ. թե՛ նախագահական ու թե՛ խորհրդարանական ընտրությունների կեղծարարներին: Երկրորդ, ինչո՞ւ հայաստանյան իշխանություններն անպատիժ մնալով արհամարհեցին ՀՀ-ում հավատարմագրված ԵԱՀԿ անդամ երկրների դեսպանների պահանջները՝ Սահմանադրության փոփոխությունների քարոզարշավի ժամանակ հավասար պայմաններ ստեղծել թե՛ իշխանության և թե՛ ընդդիմության համար: Ավելին, «Ազգային Միաբանությանը» ընդհանրապես զրկեցին և՛ հանրային, և՛ մասնավոր հեռուստաալիքներով իր կարծիքը ժողովրդին ներկայացնելու տարրական հնարավորությունից: Երրորդ, ինչո՞ւ ԱՄՆ -ի դեսպանատունը, որը մշտապես աչքի էր ընկնում Հայաստանում ժողովրդավարության խորացման ուղղությամբ տարվող աշխատանքներով, սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի արդյունքների խայտառակ կեղծումից հետո սահմանափակվեց ըմդամենը ԱՄՆ -ի պետքարտուղարության Եվրոպայի ու Եվրասիայի հարցերով զբաղվող ստորաբաժանման հայտարարությամբ, որի առանցքն էր ոչ թե

սեփական դիտարկումների վերլուծությունը, ինչպես դա եղել էր նախագահական ու խորհրդարանական ընտրություններից հետո (և ոչ միայն մեր երկրի), այլ սահմանադրական հանրաքվեի ընթացքը մոնիտորինգի ենթարկող Եվրոպայի խորհրդի ժամանակավոր հանձնախմբի եզրակացությունները: Եզրակացություններ, որոնք արվել էին միայն 14 հոգուց բաղկացած պատվիրակության ուժերով: Չորրորդ, ինչո՞վ բացատրել, որ հանրաքվեին գնահատական տրվեց «Հազարամյակի մարտահրավերների» կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրեն Ջոն Դանիլովիչի կողմից: Չէ՞ որ դրանով, ըստ էության, ենթադրվում է, որ կիրառելի հնարավոր պատժամիջոցների հետևանքով տուժելու են ոչ թե հանրաքվեի արդյունքների կեղծողները, այն է՝ գործող վարչախումբն իր հենարանը հանդիսացող քրեածին տարրերի հետ, այլ հայ ժողովուրդը, ում անունով ԱՄՆ -ի կոնգրեսը, պրեզիդենտ Բուշը որոշել էին առաջիկա 5 տարիների ընթացքում իրականացնել 235 մլն 600.000 դոլարի՝ հանրապետության համար խիստ անհրաժեշտ ծրագրեր: Եվ, վերջապես, ինչո՞ւ ժողովրդավարության հաստատման ճանապարհին կեղծված հանրաքվեի արդյունքների դեմ ժողովրդի հնարավոր ընդվզումը, փաստորեն, կանխարգելվեց ԵԱՀԿ նախագահող երկրի՝ Սլովենիայի արտգործնախարար Դմիտրի Ռուպելի հայտնի հարցազրույցով, որը զետեղվեց «Նյու Յորք թայմս» և «Վաշինգտոն պոստ» հեղինակավոր թերթերում: Հիշո՞ւմ եք, պարոն Ռուպելը հայտարարել էր, որ չպետք է ապակայունացնել իրավիճակը թե՛ Ադրբեջանում՝ ի նկատի ուներ նոյեմբերի 6-ի Միլի Մեջլիսի կեղծված ընտրությունների դեմ ուղղված զանգվածային ցույցերը, և թե՛ Հայաստանում: Մեր երկրի պարագայում էլ ակնարկվում էր հասունացած համաժողովրդական ընդվզման կասեցումը, որն արդեն իսկ անփուսափելի էր հանրաքվեի արդյունքների աղաղակող կեղծումներից հետո: Սլովենիայի արտգործնախարարը պարզաբանել էր իր այդ նախազգուշացումների կարևորությունը նրանով, որ Ադրբեջանն ու Հայաստանն առավել, քան երբևէ մոտ են Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորմանը: Ավելին, ըստ նրա, 2006 թ. եզակի տարի է այդ հակամարտությունը խաղաղ կարգավորելու համար: Դրան զուգահեռ, Մինսկի խմբի համանախագահող երկրներից ԱՄՆ -ի ներկայացուցիչ Ստիվեն Մանն էլ իր հերթին նշել էր, որ եթե ԼՂՀ-ի հարցի կարգավորում չլինի 2006-ին, ապա այն կարող է ձգձգվել ևս 100 տարի:

Բնականաբար, հարց կառաջանա, թե ինչո՞ւ եմ ակնարկում և, ըստ էության, կարևորում Հայաստանում իշխանափոխություն իրականացնելու գործում միջազգային կառույցների դերակատարությունը: Ավելին, դրանով իսկ արդյոք չե՞մ թերագնահատում մեր ժողովրդի գործոնը երկրի ճակատագրի տնօրինման հարցում: Թերևս, պատասխանեմ, որ ոչ: 2004թ. Երևանում տեղի ունեցած ապրիլյան դեպքերը, երբ ընդդիմության հանրահավաքներին իրենց մասնակցությունն էին բերում 35–40 հազար մեր հայրենակիցներ (ավելի շատ, քան Վրաստանում վարդերի և Ուկրաինայում նարնջագույն հեղափոխությունների ժամանակ), միջազգային հանրությունը, բերանները ջուր առած, կարծես թե, անտեսում էր մեր երկրում օր օրի թափ առնող համաժողովրդական բողոքի ալիքը: Տիրում էր քար լռություն, ինչպես արտասահմանյան երկրների մամուլում, այնպես էլ եվրոպական և ամերիկյան մասնագիտացած հայտնի հեռուստալրատվամիջոցներում,

որոնք արագորեն արծագանքում են աշխարհի տարբեր ծայրերում կատարվող իրադարձություններին: Մեր հայրենակիցներն էլ, փառք աստծո, կարող են տրամաբանել՝ համեմատելով դա վրացական և ուկրաինական հեղափոխությունների շահագրգիռ լուսաբանման հետ: Ժողովուրդը տարակուսում էր, ավելին՝ դյուրահավատորեն սատարում էր փնտրում իր արդարացի պայքարում ժողովրդավարության ջատագով պետությունների կողմից: Ավա՜ղ, ստեղծված իրավիճակում ականատեսը դառնալով հակառակ զարգացումների, այն է, թե՛ միջազգային կառույցների, թե՛ ժողովրդավարական երկրների խուլ անտարբերության, թևաթափվեց՝ դառը հետևություններ անելով:

Մեր հարգարժան ընթերցողի հետ խորհենք այս ամենի մասին: Անդրադառնալով Ձեր հարցի բուն պատասխանին՝ խոսքս ավարտեմ մեր ազգային էպոսից մի փոքր դրվագ հիշեցնելով. երբ Սասունցի Դավթի հուժկու հարվածից հետո Մսրա Մելիքը երկու կես է լինում, նրան թվում է, թե դեռ կենդանի է և Դավթին հորդորում է մեկ էլ հարվածել: Դավիթը բացականչում է՝ Մսրա Մելիք, մի թափ տուր քեզ: Մսրա Մելիքը թափ է տալիս իրեն և երկու կես եղած փլվում գետնին: Այս իշխանությունները, հատկապես հանրաքվեի խայտառակ կեղծումից հետո, էլ ավելի ծանր վիճակում են հայտնվել, որովհետև վարչախմբին հարված հասցնողը մի ամբողջ ազգ էր:

– Հեղափոխական ընդդիմադիրները ձեզ և Ստեփան Դեմիրճյանին համարում են էվոլյուցիայի կողմնակիցներ ու գտնում են, որ Դուք իրենց առաջարկած հեղափոխությանն այլընտրանքային որևէ տարբերակ չեք առաջարկել: Ի՞նչ ճանապարհ եք տեսնում այս իշխանություններից ձերբազատվելու համար:

– Հարցադրումն ինքնին, կարծում եմ, ճիշտ հասցեով չի ուղղված: Ասեմ՝ մեր գործընկերների մոտեցումներին ես հարգանքով եմ վերաբերում: Սակայն գտնում եմ, որ քաղաքական ցանկացած ուժի (այն էլ թվով այդքան խորհրդավոր՝ «18+1+8») խնդիրը պետք է լիներ համոզել ոչ թե մեզ՝ «Ազգային Միաբանություն կուսակցությանը», իրենց ընտրած հեղափոխական մարտավարության գործնականության և պահանջվածության մասին, այլ ժողովրդին: Չէ՞ որ ցանկացած հեղափոխության հաջողության գրավականը ժողովրդի ամենալայն զանգվածների ներգրավմամբ է պայմանավորած: Ավա՜ղ, դա, տեղի չունեցավ: Մինչդեռ դրա պատճառների խորքային վերլուծությունը, կարծում եմ, պետք է «քաղաքական դարվինիզմը» չճանաչողների կամ էլ հերքող քննադատողների խնդրո առարկան դառնա: Իսկ թե ի՞նչ ճանապարհ ենք տեսնում այս իշխանություններից ձերբազատվելու համար, պատասխանեմ աստվածաշնչյան հայտնի խոսքերով. «Ինչքա՜ն անձուկ է դուռը և նեղ՝ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն»: Վերը թվարկածս հարցերի պատասխաններում է թաքնված երկրի և ժողովրդի համար կենսահույզ դարձած իշխանափոխության հրամայականի բանալին:

– Բրիտանական «Էկոնոմիստ» հանդեսն այն տեսակետն է հայտնել, որ հայաստանյան ընդդիմությունն իր ներքին պառակտվածության պատճառով առաջիկա երկու տարում կմնա նույնքան թույլ և անօգնական, որքան այսօր է: Համաձա՞յն եք այդ տեսակետին:

– Հարցին հարցով անդրադառնամ: Արդյո՞ք Ձեզ համար տարօրինակ չի թվում այն իրողությունը, որ լինի դա եվրոպական, լինի դա ռուսական կամ ամերիկյան

պարբերականներում Հայաստանին վերաբերող ցանկացած հոդված-վերլուծությունների մեխը մեկն է, այն է, որ հայաստանյան ընդդիմությունը թույլ է: Դուք երբեք չեք գտնի գեթ մեկ հրապարակում, ուր մատնանշվեն այս իշխանությունների օրոք կատարված ու չբացահայտված բազում հանցագործությունները, համատարած կոռուպցիայի և կաշառակերության մեր հանրությանը հայտնի փաստերը, իսկ որ ամենակարևորն է, հրապարակվեն այդ ամենի հետևում կանգնած իրենց քաջ ծանոթ բարձրաստիճան չինովնիկների անունները: Հանկարծ չկարծենք, որ սա պատահականություն է. հանցագործություն կատարած ղեկավարին սանձել և ենթարկեցնելը դյուրին գործ է: Փոխարենը զանազան լրատվամիջոցներ հանկարծ թվացյալ սրտացավություն են դրսևորում երկրի ճակատագրի հանդեպ, այն էլ ոչ թե երկրի արատները բացահայտելով և սուր քննադատության ենթարկելով, այլ ընդդիմության ոսկորները լվանալու միջոցով: Եկեք, մտածենք նաև այս ամենի շուրջ:

Ինչ վերաբերում է բրիտանական «Էկոնոմիստ» հանդեսի վերլուծական հավելվածի հայաստանյան պատասխանատու Աննա Ուոքերի «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցին, ապա, կարծում ենք, որ հարգելի լրագրողը ցանկացել է ավելի շուտ մեղմել Եվրամիության անդամ երկրների երկակի վիճակում հայտնվելու տխուր իրողության փաստը, իսկ ավելի շուտ՝ մարդկանց ուշադրությունը շեղել այդ մռայլ պատկերից: Պարզեցնեմ միտքս: Մենք ազգովի ականատեսը դարձանք, թե ինչպես հայաստանյան իշխանություններն արհամարհեցին եվրոպական մի շարք պետությունների հորդորները՝ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն անցկացնել արդար, ազատ, թափանցիկ և ժողովրդավարական նորմերին համապատասխան: Ավելին, Հայաստանի Հանրապետության սանձարձակ վարչախումբն անթաքույց, խայտառակ կերպով կեղծեց հանրաքվեի արդյունքները: Դրա անդրադարձն էլ, ի զարմանս մեզ, յուրովի զարգացում ունեցավ և, ըստ էության, եղավ «Էկոնոմիստ»-ի հավելվածի պատասխանատու լրագրողի նման հարցազրույցը, որում, փաստորեն, արձանագրում է, որ 2008 թ. նախագահական ընտրություններում հաղթելու շանսերը առավել գերադասելի են Պնախարարի մոտ, իսկ ընդդիմության «թուլությունը» պարզապես ծխածածկույթ է այդ միտքը ժողովրդի ենթագիտակցության մեջ ավելի խորը արմատավորելու գործում: Հետևությունը մեկն է. քաղաքական որոշակի շրջանակներ, ասես թե, խնդիր են դրել ոչ միայն մոռացության տալ նոյեմբերի 27-ին Հայաստանում իրականացված հակասահմանադրական հեղաշրջման փաստը, այլև դափնեպսակ դնել այն իրականացնողների գլխին: Կարծում ենք, որ «Էկոնոմիստ»-ն իր խիստ կասկածելի, վտանգավոր և ուղղորդված հետևությունների փոխարեն օգտակար գործ արած կլիներ, եթե մինչ ընդդիմությանը գնահատականներ տալը, և Պնախարարին չքմեղացնելը, մասնավորապես խորամուխ լիներ, թե ո՞ւմ կողմից մսխվեցին Եվրամիությունից (այն է՝ այդ երկրների հարկատուների գումարներից) ստացված շուրջ 2 մլրդ եվրոյի հասնող անհատույց մարդասիրական օգնությունը, որտե՞ղ կորավ շուրջ 2 մլրդ դոլար ԱՄՆ-ից ստացված մարդասիրական օգնությունը, այդ ո՞ւմ անմիջական ղեկավարությամբ կեղծվեցին 1998 թ., 2003 թ.

նախագահական ընտրությունները, 2005 թ. սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն և «Ազատություն» ռադիոկայանով հնչեցներ այս կենսահույզ հարցերի պատասխանները: Մենք էլ մեր հերթին նշենք, որ այդ գումարները մսխողների, Հայաստանում անցած 7 տարիների ընթացքում առնվազը չորս հակասահմանադրական հեղաշրջում (1998 թ. փետրվար, 1999 թ. հոկտեմբեր, 2003 թ. փետրվար, 2005 թ. նոյեմբեր) իրականացնողների անպատժելիությունը, միջազգային հանրության կողմից հանդուրժողականությունը, իսկ առանձին դեպքերում՝ անուղղակի խրախուսումը (որի խոսուն ապացույցը «Էկոնոմիստի» այս արձագանքն է) չե՞ն արդյոք թևավորում այս իշխանությունների լկտի և հանդուգն պահվածքը՝ դրանով իսկ թուլացնելով ընդդիմությանը: Ինքնաքննադատաբար խոստովանեմ նաև, որ եթե ընդդիմությունն արժանի է խիստ քննադատության, ապա, թերևս, այն բանի համար, որ երբեմն մենք չափից ավելի ենք կարևորում նմանատիպ հրապարակումները, որոնք շատ դեպքերում ունեն «հայաստանյան հետք» կամ էլ շատ ենք գերագնահատում ժողովրդավարության ամենատարբեր քարոզիչների դերն ու նշանակությունը՝ դրանով իսկ թերագնահատելով մեր ժողովրդի որոշիչ գործոնը երկրում օրենքի գերիշխանություն հաստատելու դժվարին պայքարում:

– *Ժողովրդավարության կովկասյան ինստիտուտի անցկացրած սոցհարցման արդյունքներով՝ հարցին, թե «նախագահական առաջիկա ընտրություններում ո՞ւմ կընտրեք», առաջին տեղում եղել է ձեր անունը: Սակայն, այն հարցին, թե ո՞վ է դառնալու Հայաստանի Հանրապետության հաջորդ նախագահը, առաջին տեղում է եղել Պնախարար Սերժ Սարգսյանը: Ձեզ վստահություն ներշնչո՞ւմ են հարցման արդյունքները:*

– Ձեր հիշատակած սոցիոլոգիական հարցման մեխը, ըստ իս, ամենևին էլ այն չէր, որ ժողովրդի ազատ կամարտահայտության պայմաններում Հանրապետության Նախագահ դառնալու գերադասելի շանսեր ունի Արտաշես Գեղամյանը, ում, ազատ և արդար ընտրությունների պայմաններում, հարցվածների ձայները շուրջ 2 անգամ գերազանցել են Պնախարարի օգտին արտահայտվածներից: Ոչ: Սույն հարցման առանցքն այն էր, որ 1600 հարցվածների միայն 5,7%-ն էր ազատ, արդար, ժողովրդավարական ընտրությունների պայմաններում պատրաստ իր ձայնը տալ Պնախարար Սերժ Սարգսյանին: Սակայն առակս ի՞նչ կցուցանե. ունենալով վստահության նման չնչին տոկոս, չարժեր հայաստանյան թե՛ հանրային և թե՛ մասնավոր հեռուստաալիքներով, էլ չեմ ասում իշխանական մամուլի էջերում Պնախարարին գովազդող հարայ-հրոց գցել, ցանկալին իրականության տեղ սաղացնել, ժողովրդին լսեցնելով՝ հաշտվեք այն մտքի հետ, որ նախագահական գալիք ընտրությունների արդյունքները վերստին կեղծվելու են և Նախագահ է կարգվելու իրականում չնչին վարկանիշ ունեցող անձնավորությունը: Եթե հայաստանյան լրատվամիջոցներն այդքան անաչառ են, ապա ինչո՞ւ չտպագրեցին « Кремль. ORG» քաղաքական փորձագիտական էլեկտրոնային ցանցում 2005 թ. նոյեմբերի 2-ին «Դունավոր հեղափոխությունների ժամանակը դեռ չի ավարտվել…» վերտառությամբ Սերգեյ Տրուսևիչի հայ ընթերցողին արդեն հայտնի հոդվածից հետևյալ մեջբերումը. «Ի դեպ, ինչպես միշտ, ամերիկացիները մտաղրություն չունեն հավկիթները

մի զամբյուղում դնելու… Խաղաքարտն ավելի շուտ դրվելու է նաև Պնախարար Սերժ Սարգսյանի վրա… Սակայն այդ նույն հետազոտության (խոսքը ԱՄՆ -ի դեսպանատան պատվերով վերջերս կատարված սոցիոլոգիական հետազոտության մասին է) համաձայն, ճիշտ է, Ս.Սարգսյանի վարկանիշն անցյալ տարվա հետ համեմատած ավելացել է 1%-ով, բայց, միևնույն է, կազմում է ընդամենը 1.8%: *Դրա պատճառն աղմկահարույց սկանդալներն ու Պնախարարին ուղղված մեղադրանքներն են, մաֆիոզ խմբավորումների հետ նրա ունեցած կապերն են թե՛ երկրի ներսում և թե՛ երկրից դուրս»:* Եթե այս հոդվածը ևս հրապարակվեր մեր մամուլում, ապա Ձեր հարցի արդիականությունը, կարծում եմ, ուժը կորցրած կլիներ: Ի դեպ, ասեմ, որ հիշատակածս հոդվածի հեղինակը Ռուսաստանի Դաշնության «Парламентская газета» պաշտոնաթերթի Դաշնային Ժողովի հետ աշխատանքները համակարգող բաժնի խմբագիրն է:

– Պարոն Գեղամյան, կստորագրեի՞ք Ռոբերտ Քոչարյանին ուղղված Րաֆֆի Հովհաննիսյանի 21 հարցի տակ:

– Նախ ասեմ, որ դատապարտում եմ այն խաչակրաց արշավանքը, որ իշխանական ողջ քարոզչամեքենան վերջերս ձեռնարկել է Ր. Հովհաննիսյանի դեմ: Եթե իշխանավորները համոզված են, որ տրված հարցերի պատասխաններից լույս աշխարհ չեն գա իրենց բովանդակությամբ զարհուրելի փաստեր, ապա թող պատասխանեն քաղաքացի Ր. Կ. Հովհաննիսյանի հարցերին, այլ ոչ թե ընտրեն քաղաքական բանավեճի «Сам дурак» գավառական տարբերակը: Իսկ ինչ վերաբերում է իմ մոտեցմանը, ապա, ասեմ, անհատ մարդկանց նամակների տակ ստորագրություն դնելուց ձեռնպահ եմ մնում: Չէ՞ որ այս դեպքում ունենք ճիշտ նմանօրինակ նամակ՝ուղղված Ռ.Քոչարյանին քաղաքացու կողմից: Ինչ վերաբերում է «Ազգային Միաբանություն կուսակցության» դիրքորոշմանը նամակում արծարծված հարցերի նկատմամբ, ապա դրանք մեզ համար ամենևին նոր չեն: Հիշեցնեմ նաև, որ «Իրավունք» թերթի դեկտեմբերի 16-22-ի համարում «Վերջապես լսեք բանականության ձայնը» խորագրի ներքո «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունը ներկայացրել է իր դիրքորոշումն այդ հարցի շուրջ:

– ՀՀ գլխավոր դատախազն իրեն ուղղված ձեր գրության պահանջը՝ հարցաքննել ընտրական հանձնաժողովների անդամներին, համարեց հետապնդման կոչ և հայտարարեց, որ ինքը դեմ է մարդկանց հետապնդելուն: Գրավոր որևէ պատասխան ձեր դիմումին տրվե՞լ է:

– Ի սկզբանե արձանագրենք, որ հարգարժան գլխավոր դատախազն անցնող տարում քանիցս աչքի ընկավ հումորի յուրահատուկ դրսևորումներով: Չգիտես ինչու, հանրաքվեի անցկացման տեղամասային հանձնաժողովների «Ազգային Միաբանություն կուսակցության» անդամներին նոյեմբերի 25-ին, 26-ին դատախազություն կանչելը, հաթաթա տալը որակվում է իբրև օրենքից բխող բացատրական աշխատանք, իսկ համատարած ընտրակեղծիքներ հանդուրժած կամ էլ կեղծիքներ կատարած ճիշտ այդ նույն տեղամասերի իշխանությունների ներկայացուցիչներին դատախազություն հրավիրել և հարցնել, թե այդ ինչպե՞ս եղավ, որ կիսադատարկված գյուղերում հանրաքվեի մասնակիցների թիվը գերազանցել է այդ օրը գյուղերում փաստացի ապրող բնակչության

թվին, կրկնում եմ, ապրող ողջ բնակչության, այլ ոչ թե միայն ընտրողների թվին, սա պարոն գլխավոր դատախազը որակում է որպես հետապնդում: Ես ըմբռնումով եմ վերաբերում գլխավոր դատախազին. նա մշակութային նկարագիր ունեցող մարդ է: Հիշո՞ւմ եք նրա կազմակերպած աշխարհացուցց շուրջպարը: Իսկ որ այդ միջոցառման արդյունքում հիմնահատակ ոչնչացվեց Արագած լեռան չորսբոլորը գտնվող և տառապանքի գնով կատարված գարնանացանն ու աշնանացանը, հոգ չէ, «արվեստը զոհեր է պահանջում»: Կամ հիշատակեմ արված իսկապես բարի գործը՝ տաղանդավոր գիտնական, ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանի գեղանկարչության ցուցահանդեսի կազմակերպումը: Սակայն այս դեպքում էլ հոգ չէ, որ ճիշտ այդ նույն Գուրզադյանի տասնամյակների տիտանական ջանքերի արդյունքում Գառնիում հիմնված և ներկայումս «Գալակտիկա» անվանումը կրող միավորումը հիմնահատակ թալանված է: Թալանչիներին էլ անպատիժ թողնելու փաստը կրկին ու կրկին համոզում է մեզ, որ անօրեններին ու ավազակներին օրենքով հետապնդելը մեր գլխավոր դատախազի «ամպլուան» չէ: Մարդը հանցանք կատարածներին օրենքով հետապնդելու գործում չկա, փոխարենը մշակութային հակումներ ունի. հո զոռով չի: Ինչ վերաբերում է նրան, թե գլխավոր դատախազը պատասխանել է մեր նամակին, ասենք,այո, պատասխանել է բոլոր հեռուստաալիքներով, այն էլ մշակութային գործչին հատուկ հիմնավորումներով:

– Իշխանությունը նոյեմբերի 27-ի հանրաքվեի անցկացումը համարում է 2007թ. ԱԺ ընտրությունների «գեներալնի ռեպետիցիան»: Մտավախություն չունե՞ք, որ այդ ընտրություններն էլ, նույն գեղանկարչական մեթոդով, նրանց հաջողվելու է հրաշալի իրականացնել:

– Երևանյան բարբառով մեղմ ասած՝ միշտ չէ, որ բանջարանոցից վարունգ գողացողի միայն ձեռքերում է հայտնվում այդ նույն վարունգը: ԱՊՀ երկրների նորագույն պատմության փորձից ելնելով (Շևարդնաձեի, Կուչմայի, Ականի քաղաքական ֆիասկոն ձեզ օրինակ)՝ ականատեսն ենք եղել, երբ ընդդիմության և ժողովրդի ջանքերով քաղաքական այդ վարունգը, այն է՝ իշխանական մտրակը, ի վերջո, մարմնի աշխարհագրական այլ հատվածում է հայտնվել: Կարծում եմ, որ այս հեռանկարը, բարեբախտաբար, ոչ բոլոր իշխանավորների սրտովը կլինի: Այնպես որ, պատասխանելով ձեր հարցին, ասում եմ՝ ո՛չ, խորհրդարանական առաջիկա ընտրությունները բացառում եմ, որ իշխանությունները կարողանան կեղծել: Իսկ բախտախնդիր հնարավոր կեղծարարները թող «գեներալնի ռեպետիցիա» անեն երկրից ճողոպրելու անվտանգ «մարշրուտները» (իրենց համար հասկանալի լեզվով ասած՝ գծերը) ճշտելու համար: Նշեմ նաև, որ դեռ տարիներ առաջ քաղաքագետի կողմից կանխագուշակված և մեզ քաջ հայտնի պնդումն այն մասին, որ «Փարաքարը փակվելու է», կարծես թե, իրականություն դառնալու մեծ հնարավորություն ունի:

«Իրավունք+հարց ու պատասխան», 27.-29.XII.2005:

Какую цену заплатить нам, армянам, чтобы не уничтожались армянские святыни Нахичевана?

Выступление члена армянской делегации лидера партии "Национальное Единение" Арташеса Гегамяна в ПАСЕ на пленарном заседании ассамблеи, посвященном миграционной политике правительства Нидерландов, вызвало резкое недовольство турецкой и азербайджанской делегаций. Впрочем, реакция эта была вполне предсказуемой. Ведь Гегамян, прибегнув к историко-философским параллелям, использовал отведенный ему регламентом повод для того, чтобы озвучить боль и возмущение в связи с актами вандализма по отношению к армянским культурно-историческим памятникам в Джуге (Нахичеван). Ранее с предложением направить в Джугу инспекционную комиссию обращался в Комитет министров СЕ и бывший уже делегат ПАСЕ от блока "Ардарутюн" Шаварш Кочарян.

Усилия армянской делегации по привлечению внимания европарламентариев к проблеме разрушения армянских хачкаров не прошли даром. Достигнута договоренность о том, что в конце мая в Нахичеване побывает докладчик ПАСЕ по вопросам культурного наследия.

Предлагаем вниманию читателя текст выступления Арташеса Гегамяна, прозвучавшего на пленарном заседании ПАСЕ в Страсбурге 26 января.

Гуманизм, высокое чувство личной ответственности и глубокое сопереживание за происходящее в нашем общеевропейском доме – таково первое впечатление и восприятие доклада уважаемой госпожи Розмари Запфл-Гелбинг.

Доклад пробуждает в каждом из нас желание объективно разобраться в причинах массовой иммиграции афроарабов, пакистанцев, турок в страны Западной Европы, в особенности, во Францию, Великобританию, Федеративную Республику Германии. Становится актуальной выработка общеевропейской политики, имеющей целью недопущение перерастания недовольства сотен тысяч иммигрантов своим тяжелым социально-экономическим положением, своей необустроенностью в опасный межцивилизационный конфликт.

Ноябрь 2005 года, Франция. Тысячи сожженых автомобилей, сотни

разбитых и разграбленных магазинов, полыхающие в разных городах страны пожарища.

Как же случилось, что Родина идеи "прав человека", более двухсот лет назад провозгласившая, что любой человек, ступивший на ее землю, становится свободным гражданином, получила в ответ акты вандализма? События, имевшие место во Франции, острой болью отдались в сердцах всего армянства. В памяти нашего народа никогда не померкнет чувство глубокой благодарности к христианской Франции, так же, как и к мусульманскому арабскому Востоку, которые дали приют сотням тысяч беженцам- армянам, чудом уцелевшим от геноцида 1915 года в Османской империи.

Каковы истоки конфликта, имеют ли они под собой цивилизационные корни? Если мы не дадим исчерпывающих ответов на эти вопросы, то рано или поздно Европа окажется перед выбором: покориться миру "новых варваров", либо отдать себя под покровительство крайних радикалов правого и левого толка, а по своей сути – фашистов, тем самым вызвав призраки собственного варварства.

Думается, что недавние тревожные события во Франции имеют глубокие цивилизационные корни. Они обусловлены принципиальным различием между западной цивилизацией и исламским миром, противоречиями между базовыми социальными ценностями. Для Запада это безусловная Свобода личности. Для Ислама – ключевая ценность– Справедливость.

"Свобода человека" как базовая ценность предполагает ответственность каждого человека только за самого себя и только перед самим собой.

Принцип исламской справедливости требует всеобщей ответственности всего общества, отдельных групп и людей друг перед другом, перед прошлым, перед будущим, но, прежде всего, перед Аллахом, Творцом.

Свобода неизбежно, рано или поздно, убивает Справедливость. Этот объективный трагизм сформулировал в известном афоризме Фридрих Ницше: "Надо быть сильным, чтобы жить забывая, насколько это одно и то же: жить и быть несправедливым".

Конфликт между западной цивилизацией и исламским миром – это драма предельно острого столкновения между Свободой и Справедливостью в исламском толковании.

Осознание этих реалий накладывает особую ответственность на каждую из стран-членов Совета Европы. В этой связи вызывает серьезную тревогу проявление актов вандализма при прямом участии правительства Азербайджана. Так, в декабре 2005 года около 100 азербайджанских солдат, проникнув в армянский некрополь Старой Джульфы в Нахичеванской

автономии, громили кувалдами и тяжелой техникой изумительной красоты надмогильные камни-кресты IX–XVII-го веков, являющиеся частью не только армянского, но и всемирного культурного наследия. В середине XVIII века по свидетельству авторитетных и общепризнанных научно-исторических источников, в некрополе насчитывалось около 10 тысяч хачкаров, до карабахских событий "в наследство" от советского Азербайджана осталось всего 2700 малых памятников христианского архитектурного зодчества. Уничтожение наследия армянской истории в Старой Джульфе Нахичеванской автономии Азербайджана завершается в наши дни.

Невольно вспоминается удивительная история. В 1820-х годах лорд Джордж Ноэл Гордон Байрон принимал самое деятельное участие в освободительной борьбе греков против турецкого владычества. Он был сильно потрясен, когда ему рассказали об осаде греками Парфенона– храма Афины Парфенос на Акрополе в Афинах, захваченного османами. У осажденных турок кончился свинец на патроны. И тогда турки решили расплавить колокола Парфенона и все металлические детали этого чудо-памятника V века до н. э., чтобы отлить снаряды и патроны. Узнав о намерении османов, греки сами доставили свинец туркам с условием, чтобы те не трогали колокола Парфенона. Из этого свинца отливались снаряды и пули, которыми турки потом убивали греков. Какую цену заплатить нам, армянам, Азербайджану, чтобы азеры не уничтожали армянские святыни Нахичевана?

А может поставить условие перед Турецкой Республикой, которая в соответствии с Московским договором между Россией и Турцией от 16 марта 1921 года является гарантом статуса Нахичеванской автономии, чтобы она, остановив надругательства азербайджанцев над армянскими святынями, на деле показала свою приверженность общеевропейским ценностям и тем самым готовность стать полноправным членом Евросоюза?

Закончить свое выступление хочу выдержкой из политического бестселлера кандидата в Президенты США начала 90-х годов от Республиканской партии Патрика Бьюкенена "Смерть Запада". Бьюкенен предостерегал, высказав следующую мысль: "В науке, технологиях, экономике, промышленном производстве, сельском хозяйстве, разработке и производстве вооружений и демократичности общества Америка, Европа, Япония ушли вперед на многие поколения. Но исламский мир сохранил нечто утраченное Западом, а именно, желание иметь детей и продолжить свою цивилизацию, культуру, семью и веру. Почти невозможно отыскать ныне европейское государство, коренное население которого не вымирало бы, и почти невозможно найти исламскую страну, население которой не

возрастало бы с каждым днем. Да, Запад узнал много такого, о чем неведомо Исламу. Однако, Ислам помнит то, о чем Запад позабыл: “Нет иного мира, кроме сотворенного верой”.

Призадумаемся, во что вырождаются европейские ценности сегодня, в наши дни. Доминирует безбрежная Свобода и толерантность, то есть признание права каждого жить по-своему. Это в обыденной жизни выливается в сжигание автомашин и магазинов, безнаказанное, более того, фактическое поощрение Азербайджаном, государством–членом Совета Европы, надругательств над святынями древнейшей армянской христианской нации... Неужто на самом деле сбываются пророчества Патрика Бьюккенена и наступает “Смерть Запада”.

“Новое время”, 28. I. 2006.

«Պարապ զբաղմունք»

Այսպես է գնահատում «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ, ԵԽ ԽՎ-ում Հայաստանի պատվիրակության անդամ Արտաշես Գեղամյանը Դիտարկման հանձնախմբի հայտարարությանն անդրադառնալը:

– ԵԽ ԽՎ Դիտարկման հանձնախումբն էլ իր հայտարարությամբ կրկնեց ԱՄՆ-ի դիրքորոշումը, թե Հայաստանը չօգտագործեց հանրաքվեի հնարավորությունը միջազգային չափանիշներին համապատասխան ընտրական գործընթաց կազմակերպելու համար, սակայն նման համապատասխանություն պիտի ապահովվի հաջորդ անգամ՝ 2007-2008-ի ընտրություններին: Արդյոք որևէ հիմք ունե՞նն նման ակնկալիքները:

– Եթե փորձենք վերլուծել այն ամենը, ինչ կատարվում է թե՛ Հայաստանի ներսում, թե՛ մեր երկրի շուրջ, ապա կգանք շատ տխուր եզրահանգումների: Այն է՝ ակնհայտ է աշխարհի գլոբալացումը: Ակնհայտ է, որ տարածաշրջանում լուծվում են բախտորոշ հարցեր: Եվ ցանկացած կորսված օր կարող է անդառնալի կորուստներ բերել ապագայում: Հայաստանը մինչ օրս հստակորեն չի մատնանշել այն ուղին, որով պետք է ընթանա մեր երկրի զարգացումը: Չի մատնանշվել, թե որո՞նք են մեր հիմնական շահերը տարածաշրջանում, ի՞նչ խնդիրներ է իր առջև դրել ու ինչպե՞ս է դրանք լուծելու Հայաստանը, ո՞ր երկրների (թե՛ տարածաշրջանային, թե՛ գերհզոր տերությունների) հետ համագործակցելով, հանգելով փոխհամաձայնեցված մոտեցումների: Չի մատնանշվել, թե գերտերությունները տարածաշրջանում ի՞նչ զարգացումներ են ծրագրավորել, և արդյոք դրանց մեջ կա՞ն այնպիսի ընդհանրական կետեր, որոնք ընդունելի կլինեն Հայաստանի համար, որ մեր երկիրը ճգտի այդ տերությունների շահերի մեջ ապահովել իր զարգացումը: Միայն այդ ամենից հետո կարելի է այդքա՜ն կարևորություն տալ այն հարցերին, որոնք, անշո՛ւշտ, կունենան իրենց որոշակի տեղն ու նշանակությունը, սակայն՝ ընդամենը որպես միջոցներ այդ մայր խնդիրներին հասնելու ճանապարհին: Իսկ մենք հիմա միջոցների շուրջ ենք ծավալում սկզբունքային պայքար, դրանց իրականացման կամ չիրականացման շուրջ բարձրացնում տիեզերական աղմուկ: Մինչդեռ իրական զարգացումները թելադրում են սկզբունքորեն այլ մոտեցումներ, որոնք, ավա՜ղ, երբեք ու երբեք քննարկման առարկա չեն դառնում հայաստանյան մամուլում:

Այդ տեսակետից եթե գնահատելու լինենք Դիտարկման հանձնախմբի այս հայտարարությունը, դարձյալ պետք է պատասխան տանք ինքներս մեզ՝ արդյոք սա մայր խնդիրներին անդրադառնալուց հերթական անգամ չի՞ շեղում մեր ուշադրությունը:

Հայտարարության մեջ առկա բոլոր հիշատակումները և արծարծված հարցերը նպատակային դերակատարում կունենան միայն և միայն այն դեպքում, եթե որոշվեն զարգացման մայրուղային ճանապարհները: Իսկ դրանց բացակայության դեպքում քննարկելը, թե որքանո՞վ են լավ, կնպաստե՞ն կամ ոչ՝ ի սկզբանե պարապ զբաղմունք է:

– Այսուհանդերձ, ինչպե՞ս եք գնահատում այն փաստը, որ ի տարբերություն ՕԵԿ-ի և ՀՀԿ-ի գործիչների, որոնք ընդունեցին հանրաքվեում կատարված լցոնումների և մասնակիցների թվի ուռճացման իրողությունը՝ ՀՅԴ գործիչները, որոնք այլ առիթներով հայտարարություններ են անում արդար ընտրությունների մասին, ոչ միայն նախընտրեցին լռել, այլև նրանց ներկայացուցիչը ԵԽ ԽՎ ամբիոնից այս ամենի պատասխանատվությունն անուղղակիորեն դրեց Հայաստանի ընդդիմության «ուսերին»:

– Ես հասկանում եմ Արմեն Ռուստամյանի որդեգրած դիրքորոշումը ԵԽ ԽՎ-ում, այլ հարց է, որ չեմ կարող արդարացնել: Իսկ ինչո՞վ էր պայմանավորված այդ, ընդ որում՝ ազնիվ մարդու կողմից արտահայտված դիրքորոշումը: Մեր երկրի բարեկամները՝ Ֆրանսիայի պատվիրակության անդամներ Կոլոմբիեն և Ռոշբլուանն անպայմանորեն ուզում էին, որ ադրբեջանական հարցի քննարկման ֆոնին Հայաստանը հանդես գա շատ շահեկան դիրքերից: Եվ այդ շահեկանությունը նրանք իրենց ելույթներում պայմանավորել էին ՀՀ-ում ընդունված հանրաքվեի փաստով, որն ինքնին, եթե թափանցիկ, արդար ու ազնիվ քվեարկության արդյունք լիներ՝ անշո՛ւշտ, կներառեր դրական լիցքեր: Կստացվեր մի զարմանալի իրավիճակ, եթե ֆրանսիացիները, բնականաբար, լավը ցանկանալով հայ ժողովրդին՝ որպես Հայաստանի առաջադիմության ու ժողովրդավարության վկայություն փաստարկեին հանրաքվեն, ու հանկարծ հակառակ ելույթ ունենար Արմեն Ռուստամյանը, որ չափազանց լավ գիտի այն բոլոր կեղծիքների և լցոնումների մասին, որոնց միջոցով անցավ հանրաքվեն: Հայտնի խոսքի պես՝ սա «փրկարար սուտ» էր: Բայց արդյոք այս փոքր խորամանկությունն ավելի մեծ կորուստների չի՞ հանգեցնում: Ինքս առավել սա եմ կարևորում, քան այն փաստը, որ ԵԽ ԽՎ-ում «հիվանդ գլխից փորձեցին առողջի վրա բարդել» ու այդ խայտառակ անօրինականությունների պատասխանատու դարձնել ընդդիմությանը: Կարծում եմ, որ սա ամենաճիշտ ուղին չէր, որ ընտրվել էր Արմեն Ռուստամյանի կողմից:

– ԵԽ ԽՎ-ում Ձեր ելույթում անդրադարձաք Հին Ջուղայում ավերվող խաչքարերի խնդրին: Իր ասուլիսում ԵԽ ԽՎ-ում մեր պատվիրակության ղեկավարը նշեց, որ դեռ 2002-ին Վեհաժողովում ՀՀ պատվիրակության անդամ Աշոտ Գալոյանն արծարծել էր Հին Ջուղայի հայկական կոթողների անմխիթար վիճակի մասին հարցը, և դեռ 2003-ին էր ընդունվել որոշում ԵԽ ներկայացուցիչ ուղարկելու և տեղում իրավիճակին ծանոթանալու վերաբերյալ, սակայն ձգձգվել էր դրա կատարումը: Ո՞րն է պատճառը, որ Եվրոպայի խորհուրդը պատշաճ ուշադրությամբ չի արձագանքում այս ահազանգերին:

– Ողջունում եմ Տիգրան Թորոսյանի՝ սեփական աշխատանքին ինքնաքննադատաբար տված գնահատականը. այն է՝ թե անտեսվում են պատվիրակության հորդորներն ուղղված Եվրոպայի խորհրդին: Նրա պատասխանը երկսայրի սուր է: Սակայն ոգևորիչ

և հուսադրող է այն, որ այս ինքնաքննադատությանը կհետևեն գործողություններ: Այն է՝ որ գոնե այս անգամ իմ ելույթը, որը մեծ հետաքրքրությամբ ունկնդրվեց անգամ իսկ ԵԽ ԽՎ նիստը նախագահող՝ ԵԽ ԽՎ փոխնախագահ Թոնի Լլոյդի կողմից, կարժանանա Հայաստանի հանրային հեռուստաընկերության ուշադրությանը: Եվ դրանով իսկ պետությունը կապացուցի իր հասունության աստիճանը, քանի որ երբ վտանգված են ազգի սրբությունները, իսկ խաչքարերը հենց այդ սրբությունն են՝ պետք է վեր կանգնել իրենց կողմից մեր վզով փաթաթված «իշխանություն-ընդդիմություն» ճղճիմ մոտեցումներից և գործել համազգային, համընդհանուր շահերի դրոշի ներքո:

Հարցազրույցը վարեց

Աննա Իսրայելյանը

«Առավոտ», 2.II.2006:

Արտաշես Գեղամյանի ելույթները Ազգային ժողովի նստաշրջանում

Արտաշես Գեղամյանի ելույթները Ազգային ժողովի երեկ ավարտված քառօրյայում ալեկոծեցին ոչ միայն քաղաքական դաշտը, այլև ողջ հանրությանը: Հաշվի առնելով հասարակական մեծ հետաքրքրությունը ելույթների նկատմամբ, դրանք ներկայացնում ենք ընթերցողին:

Խռովկան կոալիցիան

6 փետրվարի 2006թ.

Ես ամբողջությամբ պաշտպանում եմ Վիկտոր Դալլաքյանի առաջարկը, առ այն, որ օմբուդսմենի ընտրության ողջ գործընթացը հեռարձակվի հեռուստատեսությամբ: Զարմանք և տարակուսանք է առաջացնում այն, որ մատների արանքով ենք փորձում ներկայացնել քաղաքացիական հասարակարգի կայացման համար այդ հույժ կարևոր ինստիտուտի հետ կապված բոլոր գործընթացները: Միաժամանակ ոգևորում է այն, որ կոալիցիան ամեն գնով ուզում է, որ այլընտրանքային ոչ մի թեկնածու չլինի: Կնշանակի՝ գիտակցում է, որ մոտալուտ ժամանակներում իշխանությունների հանցավոր մասը, կրկնում եմ, իշխանությունների հանցավոր մասը, մարդու իրավունքների պաշտպանի խիստ կարիք է զգալու, ուստի, բնականաբար, այդ լիազորությունները պետք է իրականացնի իրենց համար վստահելի մի մարդ: Ինձ զարմանք է պատճառում նաև այն, թե ինչու սրանից մեկ տարի առաջ կոալիցիան, որ ջերմեռանդորեն «սիրահարված» էր Լարիսա Ալավերդյանին, հանկարծ հիմա խռովեց: Լավ, առանձին տղամարդ առանձին կնոջից կարող է խռովել: Բայց մի ամբողջ կոալիցիա ինչո՞ւ խռովեց Լարիսա Ալավերդյանից և ինչո՞ւ հիմա էլ տղամարդուն ոչ վայել այդքան քինախնդիր վարքագիծ է դրսևորում, որ անգամ իսկ զրկում է հնարավորությունից, որ մարդն իր կատարած աշխատանքի մասին այս ամբիոնից ընդամենը հաշվետվություն տա: Մի՞թե միակ տղամարդու, վոինի օրինակը ձեզ բան չի հուշում, որ դուք էլ դառնաք յուրաքանչյուրդ ձեր բնագավառում միակ տղամարդը, ու հաշվեհարդար չտեսնեք անպաշտպան կնոջ նկատմամբ: Ընդ որում, հիշեցնեմ. «Ազգային Միաբանություն կուսակցությունը» ի սկզբանե, երբ կոալիցիայի և մարդու իրավունքի պաշտպանի միջև փոխադարձ քնքշության խաղաղ ժամանակներն էին, չի պաշտպանել Լարիսա Ալավերդյանի թեկնածությունը:

«Պլատոնն իմ ընկերն է, բայց արդարությունն ավելի թանկ է»

7 փետրվարի 2006թ.

Ես սրտանց ուզում եմ շնորհավորել Ազգային ժողովի բոլոր պատգամավորներին, որովհետև անցած 3 տարիների ընթացքում, թերևս, սա եզակի այն քննարկումն էր, ուր հնարավորություն ընձեռվեց նաև ընդդիմության ներկայացուցչին այս ամբիոնից հանգիստ պատասխանել այն բոլոր հարցերին, որոնք հուզում են ոչ միայն պատգամավորներիս, այլև, որն ավելի կարևոր է, մեր ժողովրդին:

Սակայն դրա հետ մեկտեղ, չեմ կարող չարձանագրել մի քանի փաստեր: Անթույլատրելի եմ համարում, երբ Ռուբեն Թորոսյանն այս ամբիոնից ուղղակի մեղադրանքներ է հրապարակում, իսկ կեսից չեն թողնում, որ նա միտքն ավարտի և ընդհատում են հռետորին: Մինչդեռ, ես կարծում էի, որ նախագահության անդամները կողջունեն Ռուբեն Թորոսյանին, որն այդքան ուշադիր ունկնդրել է վարչապետին, Արթուր Բաղդասարյանին, ինչու չէ՝ նաև Վահան Հովհաննիսյանին (ինչն ակներև երևաց նրա ելույթից): Ինչ, կարո՞ղ է, այս ամբիոնից չէր, երբ հարգարժան Վահան Հովհաննիսյանն ասաց, որ 30 միլիոն դոլարի ջրային վարկերը մսխվել են: Ո՞ւմ, չլինի թե՞ընդդիմության կողմից: Ի՞նչ կամ հենց այս նույն ամբիոնից չէր, որ հարգարժան Արթուր Բաղդասարյանն ասաց, որ քաղաքի կենտրոնի հողերը շան մսի գնով են վաճառվում: Ո՞ւմ են վաճառում, ընդդիմությա՞նը: Ի՞նչ, Անդրանիկ Մարգարյանը չէր, որ իրեն հատուկ հումորով «Կենտրոն» հեռուստաընկերությունում ամանորյա հարցազրույցի ժամանակ ռուսական երգի բառերը հայերեն ասելով՝ «Если радость на всех одна, на всех и беда одна»: Ասածն այն էր, որ եթե կերել-թալանել ենք, ապա մենակ չենք կերել, կոալիցիան է կերել: Ռուբենն էլ հենց այդ էր ասում, ինչի՞ ընդհատեցիք: Ցիտում էր մեր կոալիցիայի ղեկավարներին:

Երկրորդ հանգամանքը. ես կրկին շնորհակալությունս եմ հայտնում «Օրինաց երկիր» և Հանրապետական կուսակցություններին, որոնք հնարավորություն ընձեռեցին, որ այս քննարկումը տեղի ունենա: Հիասթափությունս եմ հայտնում այն պատգամավորներից, շուրջ 10 հոգի, ովքեր ընդդիմադիրի քող հագած, ասում էին՝ Ռուբենի օգտին 27-րդը մենք կստորագրենք, մինչդեռ կոալիցիայի անդամ երկու կուսակցություններն էին, որ ընձեռեցին այս քննարկումների հնարավորությունը: Եվ հիմա, եթե Ռուբենն ինքնաբացարկ հայտարարի, և քննարկումն իր տրամաբանական ավարտին չհանգի, այդ դեպքում մենք՝ ընդդիմադիրներս, ինչո՞վ ենք տարբերվելու կոալիցիոն կուսակցություններից: Ասածս այն է, որ Թորոսյանը չպետք է հանի իր թեկնածությունը: Եթե կոալիցիայից անգամ իսկ մի մարդ այս քննարկումների արդյունքում մտքափոխ եղավ, ուրեմն իզուր չէր մեր քաղաքական բանավեճը:

Զարմանալին նաև այն էր, որ մեր հարգարժան Սամվել Նիկոյանն ասաց. «Ռուբեն Թորոսյանն արեց ամեն ինչ, որ չընտրվի»: Ո՞վ ասաց, իսկ ի՞նչ, պետք է քծներ ձեզ, պետք

է հաճոյանա՞ր, պետք է ձեր սրի, թրի տակո՞վ անցներ, պետք է սե՞ր բացատրեր Ռոբերտ Քոչարյանին, որ ընդունելի դառնար կոալիցիայի համար: Շատ ճիշտ, սկզբունքային դիրքորոշում է որդեգրել Ռուբեն Թորոսյանը՝ դրանով իսկ ապացուցելով, որ իրականում, անկախ առաջիկա ընտրությունների արդյունքից, Հայաստանի Հանրապետությունում կա մարդու իրավունքների պաշտպան: Եվ այս քննարկումներից հետո ժողովուրդը հենց նրան կճանաչի մարդու իրավունքների պաշտպան:

Կամ էլ, հարց են տալիս Թորոսյանին՝ համալսարանը հեռակա՞ եք ավարտել, թե ոչ: Այ մարդ, այդ հարցը համալսարանի գիտխորհրդի ժամանակ տայիք Սերժ Սարգսյանին, հարցնեիք, իսկ ընդհանրապես նա համալսարանն ավարտե՞լ է, թե ոչ: Մինչդեռ այստեղ Ռուբեն Թորոսյանին են այդ հարցը տալիս:

Սիրելի ժողովուրդ, Ռուբեն Թորոսյանը, այո, ապացուցեց, որ բացարձակապես նշանակություն չունի՝ իր ընկերն է ամբիոնից խոսում, թե իր քաղաքական հակառակորդը: Նա որդեգրեց Արիստոտելի վարքագիծը, որը, եթե հիշում եք Հին Հունաստանի պատմությունից, Պլատոնին ասել էր. «Պլատոնն իմ ընկերն է, բայց արդարությունն ավելի թանկ է»: Ինչն էլ արեց այս ամբիոնից Ռուբեն Թորոսյանը՝ բացահայտելով իր լավ ընկերոջ, պատգամավոր-վաղեմի բարեկամի համար տհաճ, սակայն արդարացի իրողություն: Հենց այս բոլորը հաշվի առնելով, ես ուզում եմ, որ այս օրերին ծնունդ առնող ավանդույթը շարունակվի: Միգուցե քննարկման ժամանակ կրքերը երբեմն-երբեմն դավաճանում էին մեզ, բայց ամենակարևորն այն է, որ անկեղծ քննարկում տեղի ունեցավ: Եվ դա փոքր-ինչ հույս է ներշնչում «Ազգային Միաբանություն կուսակցությանը» ԱԺ-ի հետագա գործունեության համար:

Ես շնորհակալություն եմ հայտնում Ռուբեն Թորոսյանին՝ համոզված լինելով, որ նա, անկախ ընտրության արդյունքից, միևնույն է, կդրսևորի անկոտրում կամք և այդ կամքով կառաջնորդվի իր հետագա գործունեության մեջ՝ հանուն մարդու իրավունքների պաշտպանության: Մի փոքր դիտարկում ևս. այս մարդուն հարց եք տալիս՝ ինչպե՞ս է նա պատկերացնում մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի աշխատանքը: Հո Շվեդիայից (ուր ծնվել է մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը) օրինակ չպետք է բերի, չէ՞, բերում է Հայաստանում գործող համակարգից: Եվ, չգիտես ինչու, Ռուբենի կողմից տրված ամենազուսպ, բայց և օբյեկտիվ գնահատականը դնում են մի կողմ ու ասում են՝ նախորդ օմբուդսմենի հասցեին քար շպրտեց: Ընդհակառակը, նա տվեց ամենապարկեշտ գնահատականը, ասելով, որ, այնուամենայնիվ, մեր երկրում կայանում է մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը: Փոխանակ այս գնահատականը կարևորեն, չգիտես ինչու, տեղի-անտեղի Լարիսա Ալավերդյանին են հիշում, հետն էլ կուրծք ծեծում՝ ասես թե ցույց տալով, թե որն է ավելի սրտացավ, որն է ավելի հոգատար տղամարդ:

…Նրանք էլ առնետ կգրանցվեն

7 փետրվարի 2006թ.

Դիմում եմ Գլխավոր դատախազին, որ սույն թվականի հունվարի 19, 20, 21-ի «Փակագիծ» թերթի համարներում խայտառակ ոտնձգություններ են կատարվել Հանրապետության Նախագահի աշխատակազմի մի խումբ բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ. «Քաղաքական առնետների համար իրոք եկել է կողմնորոշվելու պահը» նախաբան-մեկնարկով տպագրվել են հոդվածներ «Սերժ Սարգսյան, թե Ռոբերտ Քոչարյան. կողմնորոշվելու պահը» վերնագրի ներքո: Ըստ որում, առնետների շարքին են դասել Գառնիկ Իսագուլյանին, Արմեն Գևորգյանին, Հասմիկ Պետրոսյանին, Վիգեն Սարգսյանին, Վիկտոր Սողոմոնյանին և, չգիտես ինչու, նաև Հովիկ Աբրահամյանին: Ասեմ ավելին, դրանով չեն բավարարվել հոդվածի պատվիրատուները, արդեն ոտնձգություն են արել Սերժ Սարգսյանի նկատմամբ՝ վերջինիս, ըստ հոդվածների տրամաբանության, մեղադրելով կաշառատվության մեջ՝ այն էլ 3 միլիոն դոլարի: Ավելին, նրան, փաստորեն, մեղադրել են նաև կաշառակերության մեջ: Որովհետև մենք բոլորս գիտենք, որ Սերժ Սարգսյանն աշխատավարձով ապրող մարդ է և այդ չափի գումարներ ուրիշ աղբյուրից ունենալ չէր կարող: Դրանով էլ սույն հրապարակման պատվիրատուները չեն հանգստացել, գնացել են հեռու, մարդուն դիոլի պես դատարկ են ներկայացրել՝ հասկացնելով, որ Սերժ Սարգսյանը (կամ էլ նրա գիտությամբ) 300 հազար դոլար է տվել ինձ՝ Արտաշես Գեղամյանիս, 2003 թ. հունվարի հայտնի տելեդեբատի ժամանակ, երբ Պնախարարի քաղաքական կատարյալ սնանկությունը հանրապետության սեփականությունը դարձավ: Դրանով էլ չեն բավարարվել. մեղադրում են Սերժ Սարգսյանին ապերախտության մեջ: Հոդվածներից բխում է, որ Նախագահի աշխատակազմի վերը հիշատակված պաշտոնյաները պետք է կողմնորոշվեն՝ թե ու՞մ հետ են՝ իր, թե Ռոբերտ Քոչարյանի, հակառակ դեպքում նրանք առնետ կգրանցվեն: Ըստ էության, տողատակով մեղադրում են այն մարդուն (Ռոբերտ Քոչարյանին), որը փրկեց Սերժ Սարգսյանին 1999 թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործությունից հետո, երբ նա ազգային անվտանգության նախարար էր: Չէ՞ որ հանցավոր անգործունեության արդյունքում էր կատարվել այդ ոճրագործությունը, որի համար նա նվազագույնը պետք է հեռացվեր պաշտոնից, եթե չասենք՝ դատի գնար: Ինչո՞ւ եմ դիմում Գլխավոր դատախազին, որովհետև ճիշտ այդ նույն հոդվածներից մեկում գրված է, որ Աղվան Հովսեփյանը Սերժ Սարգսյանի թիմակիցն է, և նա, համոզված ենք, թույլ չի տա, որ այս թերթը, որի խմբագիրն է Գայանե Մանուկյանը, նույն ինքը՝ Ագապի Հայկազունին, ստվեր գցի իր բարերարի վրա: Ես կարծում եմ, որ պատվիրատուն նրան էլ է թիկունքից դաշույնով հարվածել, որովհետև Գայանե Մանուկյանը թույլ չէր տա իր բարերարի նկատմամբ (Սերժ Սարգսյանի) նման հոդվածաշար լույս ընծայվեր: Դրա հետ մեկտեղ՝ իմանալով պարոն Աղվան Հովսեփյանի գերծանրաբեռնվածությունը, «Ազգային Միաբանությունը» կիսով չափ պատրաստ է նրա հոգսը թեթևացնելու, այն է՝ մենք պաշտպանում ենք «Նիգ-Ապարան» հայրենակցական միության նախաձեռնությունը, և «Ազգային Միաբանությունը» մասնակցելու է ծառատունկին:

«Իրավունք», 10.–16.II.2006:

… Չի «թագավորդ» օրինազանց է…

Արդեն տխուր ավանդույթ է դարձել, որ իշխանական քարոզչամեքենան, հատկապես քոչարյանա-սարգսյանական հեռուստատեսությունը ենթգափոխում են Արտաշես Գեղամյանի հրապարակային ելույթների իմաստն ու բովանդակությունը: Վերլուծելով իշխանական քարոզիչ-սազանդարների հեռուստահաղորդումները՝ հանգում ենք այն եզրակացության, որ նրանք կամ մասնագիտական գիտելիքներ ունենալուց բացարձակ բոբիկ են, կամ զուրկ են տարրական հումորի զգացումից, կամ էլ ակամայից մտածում ես, որ պարզապես բութիկներ են:

Ձեզ ենք ներկայացնում Ազգային ժողովի փետրվարի 17-ի արտահերթ նիստում Ա.Գեղամյանի ունեցած բանավոր խոսքի շարադրանքը:

Հարգելի գործընկերներ, ես ուզում եմ օմբուդսմենի ընտրության հարցի քննարկմանը մոտենալ փոքր-ինչ այլ տեսանկյունից: Այսօր Հայաստանի Հանրապետությունը հայտնվել է մի այնպիսի իրավիճակում, երբ պաշտպանված չէ անգամ Հանրապետության Նախագահի պաշտոնը զբաղեցնողը: Եթե պաշտպանված չէ երկրի ի պաշտոնե առաջին դեմքը, ապա սովորական քաղաքացիների ի՞նչ պաշտպանվածության մասին կարելի է խոսել: Իհարկե, ոչ մի:

Հիմնավորեմ ասածս, թե ինչո՞ւ է անպաշտպան Ռոբերտ Քոչարյանը: Նա պաշտպանված չէ այն պարզ պատճառով, որովհետև նրան պարզապես ստիպում են անօրինականություններ, օրինազանցություններ անել: Թերևս առաջին տպավորությունն այդպիսին է: Կարծում եմ, որ պարոն Քոչարյանին ստիպեցին, պարտադրեցին և շատ ծանր կացության մեջ դրեցին, պարզապես ապակողմնորոշեցին, երբ նա սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ժամանակ բաց քվեարկեց: Մի՞թե կարելի էր այդ աստիճան ստոր վարվել երկրի Նախագահի պաշտոնում հայտնված մարդու հետ: Մի՞թե չէր կարելի նրան հուշել, որ դեռևս 2001 թ. մարտ ամսին Վարշավայում ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական ինստիտուտների և Մարդու իրավունքների բյուրոյի կողմից հատուկ որոշում է ընդունվել, ուր «Քվեարկության կարգը» 12-րդ պարագրաֆում ուղղակիորեն նշված է. «Գաղտնի քվեարկությունը ընտրողի համար հանդիսանում է ոչ միայն իրավունք, այլև նրա բացարձակ պարտականություն է»: Լավ, սուֆլյորները այդ չէին կարդացել, հասկացանք, ԵԱՀԿ-ի հանդեպ սեր չունեին, բա լավ, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի երաշխավորությունները կարդային գոնե: Չէ որ վերջերս Վենետիկի հանձնաժողովի ասածները հլու-հնազանդ ընդունում եք իբրև սրբի, մարգարեի խոսք: Ճիշտ այդ նույն Վենետիկի հանձնաժողովի մշակած և Եվրախորհրդի կողմից 2002 թ.

հոկտեմբերի 30-ին վավերացված «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք» ձեռնարկի 4-րդ կետի «ա» ենթակետում սևը սպիտակի վրա գրված է. «Քվեարկողի համար քվեարկման գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն…»: Մի՞թե սեփական անհիրազեկության պատճառով կարելի էր այդքան հարվածել այդ մարդուն և աշխարհով մեկ խայտառակ անել:

Ավելին, Քոչարյանն իր անպաշտպան լինելը ի հայտ բերեց նաև «Ազգային Միաբանություն կուսակցության» պարագայում, երբ, խախտելով «Ընտրական օրենսգրքի» 35,36,38-րդ հոդվածների պահանջները, դեկտեմբերի 5-ից այդպես էլ հրաժարվում և մինչև օրս չի հրամանագրում «Ազգային Միաբանություն կուսակցության» Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամին: Լավ, չի գիտակցում, որ դրանով իսկ արդեն փորձ է կատարվում բացել ճանապարհ 2007 թ. խորհրդարանական ընտրությունների ընտրակեղծիքների համար: Կամ էլ պրն Քոչարյանի մտքով չի՞ անցնում, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում չունենալով լիազոր ներկայացուցիչ՝ խոչընդոտվում է «Ազգային Միաբանություն կուսակցության» տարածքային, տեղամասային հանձնաժողովների բնականոն աշխատանքը: Առավել ևս, որ այս օրերին սկսված է հանձնաժողովների անդամների ուսման գործընթացը: Իսկ եթե մտքով անցել է և չի հրամանագրում, ապա նենգության ավելի համոզիչ օրինակ դժվար է պատկերացնել: Եվ այս ամենի գիտակցումով դիմում եմ ԱՄՆ -ի դեսպան պարոն Ջոն Էվանսին. ամերիկացի հարկատուների 7 միլիոն դոլարը, որ ամերիկյան կառավարությունը նախատեսել է Հայաստանի Հանրապետությունում 2007-2008 թթ. խորհրդարանական և նախագահական ընտրություններն ազատ, արդար, ժողովրդավարական, թափանցիկ անցկացնելու համար, այս իշխանավորները քամուն են տալու, որովհետև ընտրակեղծիքների համար պարարտ հող է ստեղծվում հենց այս օրերին, հենց այս ժամանակ, այն էլ՝ բացահայտ:

Կամ էլ՝ ինչպե՞ս կարելի էր ապակողմնորոշել պարոն Քոչարյանին, որ Ռամբուեից շնչակտուր գալով (գիտակցելով սեփական անձի հույժ կարևորությունը հայ-ադրբեջանական բանակցությունները տապալելու գործում) անհապաղ հավաքեց խորհրդարանական կոալիցիային և իր իսկ գովերգած փոփոխված Սահմանադրության 83-րդ հոդվածի կետ 1-ը հրապարակավ խախտեց, ուր ուղղակիորեն գրված և նշված է, որ Մարդու իրավունքների պաշտպանի ընտրությունն Ազգային ժողովի մենաշնորհը և պարտավորությունն է: Բա որ ընդդիմությունն Ազգային ժողովի այս ամբիոնից ասում էր՝ այս իշխանությունների օրոք ի՞նչ տարբերություն հին Սահմանադրությունն է գործելու, թե փոփոխվածը, միևնույն է խախտելու են, հենց նաև նման դեպքերն ի նկատի ունեինք: Պարոն Քոչարյան՝ Ձեզ ո՞վ է իրավունք տվել Սահմանադրությունը խախտել: Միգուցե, կեղծիքներով ընդունված լինելու հանգամանքն է քաջալերում: Բա կոալիցիա. էլ ի՞նչ մնաց Ձեր կողմից թմբկահարվող Ազգային ժողովի դերի, դերակատարության բարձրացումից, ինքնուրույնությունից: Սահմանադրական փոփոխությունները գեշովլավով, խախտումներով անամոթաբար անցկացրիք, դե գոնե հիմա տղամարդ եղեք ու մի

ոտնահարեք դա: Սահմանադրական պահանջները ինչո՞ւ չեք կատարում, վախենո՞ւմ եք:

Պարոն Քոչարյանն անպաշտպան է նաև իր ապարատի կողմից: Տեսեք, վարկաբեկիչ ի՞նչ մեկնաբանություններ արեցին, երբ նա Ռամբուեից վերադարձավ: Հայ-ադրբեջանական ընդհատված բանակցություններին վերաբերող «Մեդիամաքսին» տված հայտնի հարցազրույցում տարան բերեցին ու ասացին. պարոն Քոչարյանը պարապ մարդ չէ, նա թանկ է գնահատում իր ժամանակը և բանակցությունների իմիտացիային չի մասնակցում: Մալադեց: Հալալ ա Ձեզ: Բա որ հանկարծ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ֆրանսիան, ինչու չէ, նաև Ռուսաստանը կանգնեն ու հակադարձեն. էդ չհասկացանք՝ Ստիվեն Մանը, Բեռնար Ֆասյեն, Յուրի Մերզլյակովը կարող է պարա՞պ էին, որ այնտեղ մնացին: Թե՞ Ժակ Շիրակն էր պարապ: Բա որ դրանից հետո էլ «հանդգնեն» ու շարունակեն՝ էդ ձեր Քոչարյանի արած գործն ի՞նչ է, կարող է նրա զբաղմունքը Ծաղկաձորի Քաչալ սարից դահուկով վեր ու վար սլանալը չէ՞ կամ էլ «բուրան» քշելը չէ՞: Բա դրա տակից ո՞նց եք դուրս գալու:

Եվ այս պարագայում, գիտակցելով իր այդչափ անպաշտպան լինելը (հակառակ դեպքում միայն օրինազանց լինելու մասին են խոսում բերված փաստերը), արդեն իսկ թվում է, թե հասկանալի է դառնում՝ ինչու է նա ամեն գնով ուզում, որ Մարդու իրավունքների պաշտպանն իր ներկայացուցիչը, իր մարդը լինի: Բայց ահա այստեղ է, որ ուզում եմ նրան հուշել. պրն Քոչարյան ամենևին էլ պարտադիր չէ, որ Մարդու իրավունքների պաշտպանը լինի ձեր յուրայինը: Չէ՞ որ դուք անպաշտպան եք առաջին հերթին հենց ձեր շրջապատից, և այդ շրջապատից մեկը չի կարողանա պաշտպանել Ձեզ:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, պատահական չէ, որ «Ազգային Միաբանություն» խմբակցությունը որոշում է կայացրել ձայները տալ Մարդու իրավունքների պաշտպանի թեկնածու Հրանտ Խաչատրյանին, որը հասարակական, պետական հայտնի գործիչ է: Ես առանձնահատուկ եմ սա շեշտում, որովհետև նրա համար բացարձակապես նշանակություն չի ունենալու, թե նա պաշտպանելու է դիմության, թե ընդդիմության շահերը: Մենք համոզված ենք, Հրանտ Խաչատրյանը պաշտպանելու է օրենքները, պաշտպանելու է Հայաստանի քաղաքացիներին անօրեն իշխանությունների կամայականություններից, պաշտպանելու է, ինչու չէ, նաև պարոն Քոչարյանին: Որովհետև նրան իր իսկ շրջապատը այսօրվա դրությամբ հանրությանը ներկայանալի է դարձնում իբրև անտեղյակ մի մարդու, էլ չենք ասում՝ որպես օրինազանցի:

«Իրավունք», 24.II–2.III.2006:

Աշխարհը ղեկավարում էին ամենևին ոչ հերոսներ, առավել ևս ոչ իմաստուններ

2006 *թ. փետրվարի 23-24-ին Եվրոպայի Անվտանգության և համագործակցության կազմակերպության Խորհրդարանական վեհաժողովի նախագահ, ԱՄՆ կոնգրեսական Էլսի Հաստինգսի նախաձեռնությամբ Վիեննայի նստաշրջանի օրակարգում մտցվեց «Խոսքի ազատության և կրոնական համոզմունքների հարգանքի շուրջ աշխարհում առկա ճգնաժամը» հարցը: Նստաշրջանում ելույթ ունեցավ ՀՀ Ազգային ժողովի ԵԱՀԿ-ում պատվիրակության անդամ, «Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավար Արտաշես Գեղամյանը: Ավանդույթ դարձած սովորությամբ, իշխանությունների կողմից վերահսկվող հեռուստալրատվամիջոցները լռության մատնեցին Ա.Գեղամյանի այս ելույթը նույնպես: Հասկանում ենք, հայրենյաց կառավարողները, հավանաբար, հերթական անգամ ազերի և թուրք պատվիրակների նման մտատանջվեցին: Բարեբախտաբար, Ա.Գեղամյանի ելույթում արծարծված լրջագույն մեղադրանքները հենց նույն նստաշրջանի ժամանակ պաշտպանության արժանացան Ալֆորվիլի քաղաքապետ, Ֆրանսիայի պաշտոնական պատվիրակության անդամ Ռենե Ռուկեի ելույթում:*

Ստորև ներկայացվում է Ա.Գեղամյանի ելույթի տեքստի ամբողջական շարադրանքը, որը և կարծանագրվի ԵԱՀԿ-ի Վիեննայի նստաշրջանի ամփոփիչ փաստաթղթերում:

Հարգելի գործընկերներ, ցավում եմ, որ Ադրբեջանի Սիլի մեջլիսի պատգամավորն այնքան ցածրացավ, որ այստեղ, այս հեղինակավոր լսարանում, Եվրոպայի, ԱՄՆ-ի և Կանադայի 55 երկրների ներկայացուցիչների ու մահմեդական երկրներից հրավիրված բազմաթիվ հյուրերի ներկայությամբ հանդգնեց վիրավորել Եվրամիությանը և Եվրախորհրդարանին, ըստ էության, նրանց մեղադրելով զրպարտության մեջ: Կարծում եմ, որ Եվրամիության երկրների պատվիրակները պատշաճ ձևով կարձագանքեն այդ ծանր, միաժամանակ անհիմն ու զրպարտչական մեղադրանքներին, ըստ որի Հին Ջուղայի հայկական գերեզմանատան խաչքարերի ոչնչացումը (որի մասին իր ելույթում հիշատակեց հայկական պատվիրակության ղեկավար Վահան Հովհաննիսյանը), իբր, հայկական քարոզչության հորինվածք է: Փաստորեն, ադրբեջանցի խորհրդարանականը կշտամբեց Եվրախորհրդարանին 2006 թ. փետրվարի 16-ին «գոյություն չունեցող» փաստերի հիման վրա բանաձև ընդունելու համար:

Այժմ շարունակեմ ելույթս օրակարգային հարցի շուրջ:

Հարգելի գործընկերներ: Այսօր խնդրո առարկա հարցը հույժ արդիական է աշխարհի

ճակատագրի համար, և դա չափազանցություն չէ: Կարևոր է գտնել հետևյալ հարցի անկողմնակալ պատասխանը. ինչպիսի՞ արմատներ ունեն իրենց տակ իրադարձությունները, որոնք ցնցեցին մահմեդական աշխարհը դանիական օրաթերթում պատվելի Մոհամմեդ մարգարեի հասցեին ծաղրանկարների տպագրումից երեք ամիս անց: Ինչպիսի՞ երևույթի հետ մենք բախվեցինք:

Ի՞նչ է դա. խոսքի ազատության կամ կրոնական համոզմունքների նկատմամբ առկա համաշխարհային ճգնաժա՞մ, թե՞ միգուցե միջքաղաքակրթական բնույթի խոր հակասությունների դրսևորում: Իսկ միգուցե դա քրիստոնեական, հրեական և մահմեդական դավանանք կրող երկրների միջև խաղաղ համագործակցության ճգնաժամի հետևա՞նք է: Փորձենք համակողմանի վերլուծել ստեղծված իրավիճակը:

Այսպես, 1993 թ. «Foreign Affairs» ամսագիրը տպագրեց Սեմյուել Հանթինգտոնի «Քաղաքակրթությունների բախում» («The clash of civilizations») հոդվածը: Որոշ ժամանակ անց, 1996 թ. այն հրատարակվում է առանձին գրքով, որը կարճ ժամանակից դառնում է քաղաքական բեսթսելլեր: 10 տարի անց՝ 2002 թ., Պատրիկ Բյուքենենը (նախագահներ Նիքսոնի և Ռեյգանի խորհրդական, իսկ 1992 և 1996 թթ. Հանրապետական կուսակցության կողմից առաջադրված ԱՄՆ նախագահի թեկնածու) հրատարակում է «Արևմուտքի մահը» («The Death of the West») մենագրությունը: Արդեն մեկ տարի անց այն վերահրատարակվում է աշխարհի բազմաթիվ երկրներում: Եվս մեկ տարի անց ֆրանսիացի հեղինակ Էմանուել Թոդդը հրատարակում է «Կայսրությունից հետո. Pax Americana- վերջի սկիզբը» աշխատությունը, որը Եվրոպայում և ԱՄՆ-ում դառնում է առավել հաճախ բանավեճեր առաջացնող գիրքը: Ճիշտ այդ նույն ժամանակ Իրանի նախագահ (ներկայումս արդեն նախկին) Մոհամմադ Խաթամին հանդես է գալիս «Քաղաքակրթությունների երկխոսություն» պոլեմիկական հոդվածով, որը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս:

Փիլիսոփայական տարբեր աշխարհընկալումներ ունեցող հեղինակներ իրենց վերլուծություններում վտանգներով լի համաշխարհային քաղաքակրթությունների զարգացումներ են կանխատեսում:

Վերոհիշյալ խորիմաստ վերլուծություններից յուրաքանչյուրում արծարծվում են խոսքի ազատության նկատմամբ մարդկանց կողմից առկա ճգնաժամի պատճառները: Վերահմաստավորվում են այն պայմանները, որոնք հանգեցրել են այլախոհության, կրոնական համոզմունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի բացակայությանը, ինչպես նաև վերլուծվում են արևմտյան ժողովրդավարության և մահմեդական աշխարհակարգի միջև օրեցօր խորացող առկա հակասությունները: Այսօր մենք ականատես ենք, թե զարգացած երկրներում ինչպես է խոսքի ազատությունն իր ժամանակակից դրսևորումներով հակասությունների մեջ մտել արդարության գաղափարի լայն ըմբռնմանը, որը մեկնաբանվում է մահմեդական երկրներում:

Մեր կարծիքով, ի հայտ եկած խոսքի ազատության համաշխարհային ճգնաժամը պայմանավորել դանիական օրաթերթում զետեղված ծաղրանկարների հանգամանքով՝

խիստ միակողմանի բնույթ կկրի: Ակնհայտ է, որ այստեղ դիտարկվող երևույթը ոչ այնքան խոսքի ազատության ճգնաժամի մասին է ընդհանրապես, այլ, ավելի շուտ, վկայում է դրա դրսևորման ոչ ազատ, ընտրողական բնույթ ունենալու մասին: Դա ակներև է դառնում անգամ համաշխարհային հեռուստալրատվական ծանրակշիռ և առաջատար գործակալությունների հաղորդումներից:

Այսպես, տեղեկատվական առաջատար գործակալությունները լայնորեն լուսաբանում էին նախանցյալ տարվա ամռանը Ուզբեկստանում տեղի ունեցած արյունալի իրադարձությունները: Նրանց ուշադրությունից չվրիպեց նաև ղրղզական վարդակակաչների հեղափոխությունը: Ցավոք, այդ նույն հեռուստաալիքները բացարձակապես չարձագանքեցին, երբ 2005 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ավերվում էին Նախիջևանի Հին Ջուղայի հայկական քրիստոնեական գերեզմանատան IX-XVII դդ. փոքր ճարտարապետության հուշարձանները:

Քիչ չեն խոսքի ազատության դրսևորման հանդեպ ընտրովի մոտեցման և այլ օրինակները: Այսպես, համաշխարհային հեռուստաալիքները լայնորեն լուսաբանում էին վարդերի և նարնջագույն հեղափոխությունները Վրաստանում և Ուկրաինայում: Սինչդեռ նրանք, ցավոք, բացարձակ անուշադրության մատնեցին 2003 թ. փետրվարին Երևանում տեղի ունեցող և շուրջ մեկ շաբաթ չդադարող 150 հազարանոց բողոքի հանրահավաքներն ու ցույցերը: Ցույցեր, որոնք նախագահական ընտրությունների ժամանակ կատարված զանգվածային ընտրակեղծիքների հետևանք էին: Հանրահավաքները և ցույցերը շարունակվում էին ոչ մեկ և ոչ էլ երկու օր, սակայն դեպքի վայրից աշխարհը չտեսավ ու չլսեց և ոչ մի ռեպորտաժ: Հենց այդ օրերին էր, որ Հայաստանի քաղաքացիների մեծամասնության գիտակցության մեջ լուրջ կասկածներ ծնվեցին ԵԱՀԿ անդամ պետություններում խոսքի ազատության հանդեպ ընտրողական մոտեցումների վերաբերյալ: Ակնառու դարձավ երկակի ստանդարտները խոսքի ազատության իրականացման հարցում:

Սիգուցե Հայաստանի քաղաքացիների ընկալումները չլինեին այդքան հիվանդագին, եթե նրանք վկաները չդառնային նախագահական և Ազգային ժողովի ընտրություններից առաջ միակ, իրականում անկախ «A1+» հեռուստաալիքի փակմանը: Հեռուստաալիք, որը պարիտետային սկզբունքով եթերային ժամանակ էր տրամադրում ինչպես իշխանություններին, այնպես էլ ընդդիմությանը և անկախ փորձագետներին: Լուրջ մտահոգություն է առաջացնում և այն, որ Հայաստանի իշխանություններն արհամարհեցին ԵԱՀԿ և ԵԽ ԽՎ կողմից ընդունված մի շարք բանաձևերն ու պարտավորեցնող հանձնարարականները «A1+» հեռուստաալիքի աշխատանքների վերսկսման մասին:

Ասեմ նաև, որ վերջերս սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի նախօրեին Հայաստանում հյուրընկալվեցին ԵԱՀԿ ԽՎ նախագահ հարգելի Էլսի Հաստինգսը և ԵԽ ԽՎ նախագահ հարգելի Ռենե վան դեր Լինդենը: Բարձրաստիճան երկու հյուրերն էլ պաշտոնական Երևանի և ՋԼՄ-ների ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ բազմիցս նշել էին հանրաքվեի ժողովրդավարական

անցկացման համար համապատասխան պայմանների ապահովման սկզբունքային անհրաժեշտությունը և իշխանություններին ու ընդդիմությանը եթերից օգտվելու հավասար հնարավորությունների ընձեռումը: Ավա՜ղ, նույնիսկ եվրոպական բարձրաստիճան պաշտոնյաների հրապարակային հայտարարություններից հետո էլ հայաստանյան ոչ մի հեռուստաալիք այդպես էլ ոչ մի րոպե եթերաժամ (այդ թվում նաև՝ վճարովի) չտրամադրեց Հայաստանի խորհրդարանի՝ մեծությամբ երկրորդ ընդդիմադիր խմբակցության՝ «Ազգային Միաբանության» պատգամավորներին:

Հայաստանի ժողովուրդը, ինչպես «Քորիս Գոդունով»-ում կասեր Պուշկինը, լռում էր (безмолвствовал): Միևնույն ժամանակ, երկրի քաղաքացիները լրջորեն մտորեցին այն մասին, որ Հայաստանի իշխանությունները մի՞թե այն աստիճան են համոզված սեփական ամենաթողության դրսևորումների անպատժելիության մեջ, որ ցուցադրաբար արհամարհեցին ԵԱՀԿ և Եվրախորհրդի ղեկավարության վերը նշված հետևողական հորդորները: Այո, այս իմաստով մենք իրավասու ենք այստեղ խոսել ԵԱՀԿ և Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների շրջանակներում խոսքի ազատության լուրջ ճգնաժամի մասին:

Ավելին. Հայաստանի իշխանությունները խոսքի ազատության ճնշման գործում այն աստիճան իրենք իրենց գերազանցեցին, որ ժամանակ առ ժամանակ նրանց գործողությունները հասնում էին անհեթեթության: Այսպես, Հայաստանի հանրային և այլ խոշոր հեռուստաընկերություններին արգելված է ցուցադրել ԵԽ ԽՎ լիագումար նիստերում ունեցած իմ ելույթները, ինչպես դա տեղի էր ունեցել 2004-2005 թթ. և այնպես էլ վերջերս՝ 2006 թ. հունվարի 26-ին (ԵԽ ԽՎ-ի վերջին նստաշրջանում):

Կարծում եմ, որ ԵԱՀԿ և Եվրախորհրդի կողմից ընդունած իրենց իսկ բանաձևերի ու երաշխավորությունների կատարման գործում դրսևորած անհետևողականությունը վերջին դերը չի խաղում առանձին վերցրած պետությունում՝ Հայաստանի Հանրապետությունում խոսքի ազատության ճգնաժամի խորացման հարցում: Իսկ առանձին երկրներում առկա խոսքի ազատության ճգնաժամերը իրենց ամբողջության մեջ, իհարկե, հանգեցնում են համաշխարհային մասշտաբով խոսքի ազատության ճգնաժամի:

Խոսքի ազատության ճգնաժամի և կրոնական արժեքների նկատմամբ անհարգալից դրսևորումների ակունքները և պատճառները ամենևին թաքնված չեն կրոնական տարբերությունների մեջ: Դրանց արմատները, կարծում եմ, պետք է փնտրել ոչ այդտեղ. մահմեդական աշխարհը չի ընկալում ժողովրդավարության արևմտյան այն չափանիշները, որոնք խոսքի ազատության պայմաններում իրենց դրսևորումներում կարող են ընկալվել նրանց կրոնական ինքնագիտակցման կամ ազգային արժանապատվության զգացմունքների ճնշման արտահայտություն, ինչը տեղի էր ունեցել Մոհամմեդ մարգարեի անընդունելի ծաղրանկարների հրատարակման պարագայում: Մահմեդականների պատկերացմամբ դա խորապես հակասում է Իսլամի հիմքում դրված Արդարության գաղափարին:

Մեր խնդիրն է միավորել, մոտեցնել հակամարտության վտանգավոր անդունդ

սողացող քաղաքակրթությունների համար առանցքային հանդիսացող Արդարություն և Ազատություն փիլիսոփայական հիմնախնդիրները, որոնք առաջնային են Արևմտյան և Իսլամական քաղաքակրթությունների համար: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է հետևողականորեն դատապարտել նրանց, ովքեր մեր իրականության մեջ միտումնավոր ենթագիտակցում են խոսքի ազատության իրական իմաստը: Կարևոր եմ համարում նաև մերկացնել այն մարդկանց, ովքեր Արդարության դրոշի ներքո դրսևորում են միմիայն անձնական շահամոլություն:

Այս ամենը խիստ կարևոր ենք համարում, որպեսզի ի սկզբանե բացառենք ցինիկության այնպիսի գործելակերպը, երբ, օրինակ, ադրբեջանական հեռուստատեսությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հերոսացվում է ակնհայտ մարդասպան Ռամիլ Սաֆարովը կամ էլ որպեսզի անհնար դարձնենք հայկական քրիստոնեական Նեկրոպոլի անարգման փաստերի լռության մատնելը ոչ միայն Ադրբեջանում, այլև միջազգային տեղեկատվական առաջատար հեռուստաալիքների կողմից, հանգամանք, որը համարում ենք խիստ սկզբունքային: Կարծում եմ, եկել է ժամանակը խորհելու, ինչպիսի՞ աշխարհում ենք մենք ապրում և ո՞րն է մեր անձնական պատասխանատվությունը մարդկանց ճակատագրերի հանդեպ: Մենք պարտավոր ենք, անկողմնակալ և ինքնաքննադատաբար վերլուծել մեր գործողությունները ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի իրավասությունների շրջանակում և անհապաղ համապատասխան միջոցներ ձեռնարկել գլոբալացման մարտահրավերներին դիմակայելու համար: Հակառակ դեպքում գալիք սերունդները մեր էպոխան բնութագրելիս կասեն. աշխարհը ղեկավարում էին ամենևին ոչ հերոսներ, առավել ևս ոչ իմաստուններ: Հիրավի, ցավալի է դրա գիտակցումը…

Արտաշես Գեղամյան
2006 թ., 24 փետրվարի, Վիեննա,
ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի
լիագումար նիստ

«Իրավունք», 3-9.III.2006:

… Եվ հայաստանյան նրանց խամաճիկները …*

Հարգելի գործընկերներ, հոգ չէ, որ փետրվարի 24-ին Վիեննայում կայացած Եվրոպայի Անվտանգության և համագործակցության կազմակերպության լիագումար նիստում մեծ արձագանք գտած իմ ելույթը հայկական հեռուստալրատվամիջոցների ու թերթերի կողմից լռության մատնվեց: Լավ, գոնե Վահան Հովհաննիսյանի լուրջ, հիմնավորված և հայանպաստ ելույթը պրոպագանդեիք, ժողովուրդն էլ իմանար, որ մենք իբրև զբոսաշրջիկ չենք գնում ստրասբուրգներ ու վիեննաներ: Թեպետ, իշխանական լրատվամիջոցների նման պահվածքը բնական եմ համարում, դա նրանց ճաշակի խնդիրն է: Էս մարդիկ սիրում են գովազդել չարաճճի, միևնույն ժամանակ խիստ դատապարտելի մանկություն ունեցող այսօրվա զառամյալ ծերուկների երազանք դարձած մերկ կանանց «Օմեգա» ակումբը, «կազինո» կոչված ղումարբազանոցները, «կուսական» մաքրությամբ ներկայացվող ընտանեկան զառերը և զանազան լոտոները:

Մտորումներիս խնդիրն այլ է: Վտանգելով անձս, ելույթ ունենալով միջազգային ամենահեղինակավոր ամբիոններից արդյո՞ք ազերիներից ու թուրքերից է, որ պետք է պաշտպանեմ ազգս: Միգուցե ավելի ազնիվ ու հրատապ կլիներ մեր ժողովրդին սեփական իշխանություններից պաշտպանելու ելույթներով հանդես գայի՞:

Հիմա էլ աչքակապության նոր դրսևորում. Արցախի, ինչ խոսք, արժանավոր ազատամարտիկներին 11 տարի անց հանկարծ հիշեցին, բռերով մեդալներ ու փողեր են բաժանում: Ճիշտ այն մարդկանց, ում զոհված ընկերների ծնողներին լույսի վարձ չմուծելու համար դատական կատարածուների միջոցով մինչև վերջերս տնից հանում՝ փողոց էին նետում, ում այրիները պարտադրված էին կիսաքաղց դռնեդուռ ընկնել և ապրուստի միջոց կամ հիվանդ որբուկի համար դեղեր գնելու փող մուրալ: Հենց նույն ազատամարտիկներին են մեդալ շնորհում, ում ընկեր-բարեկամների՝ Բուզանդի, Արամի փողոցների տները, օջախներն էլ հետը քարուքանդ արեցին, որ տեղում լափած գումարներով իրենց համար ապարանքներ կառուցեն: Տեղները նեղն է, որ էլի Արցախը հիշեցին: Եթե, իրոք, սրտացավ եք դարձել, դե մի հետաքրքրվեք՝ այդ ո՞ր սրիկայի պատվերով սպանվեցին Արցախի քաջարի ազատամարտիկ Վանուշ Թորոսյանը (մեր Կոնդի, «Դվինի» Վանիկը) կամ էլ Արցախին զենք ու զինամթերքով օգնած Դիոնիս Մարգարյանը:

---

* Ելույթ՝ Ազգային ժողովի 2006թ. փետրվարի 28 -ի նիստում:

Սրտացա՞վ եք, մի հատ հետաքրքրվեք, թե ինչպես է, որ անպատիժ մնացին Արցախի ազատագրման գործում գեներալ Լեբեդի հետ լուրջ դերակատարում ունեցած Լևոն Գրիգորի Հովհաննիսյանին 17 մլն դոլարի կողոպուտի ենթարկողները: «Լևոն Մարկոս» ֆիրմայի վրա բարդեցին «Կրեդիտ Երևան» բանկի՝ իշխանությունների թելադրանքով մսխված գումարների լուծը: Ավելին, Լևոնի հանդեպ այստեղից պատվիրված և չհաջողված մահափորձերից հետո 2 մլն 355 հազար դոլար էլ կողոպտեցին, որը նա, անսալով սրանց մուրացկանությանը, հայթայթել էր Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատը սնանկությունից փրկելու համար: Տղերքը փողը կերան, կոմբինատն էլ անվճարունակ ճանաչեցին, որ պարտքը չվերադարձնեն: Հպարտ երևանցուն՝ Լևոն Գրիգորիչին էլ լռեցնելու համար, նրա վրա գործ սարքեցին, «Ինտերպոլով» հետախուզում հայտարարեցին: Տղերքը կատու են ճղում: Ասենք, որ չի ստացվի, նա ձեր սատանայական բարքերն ընդունող ոզիկներից չէ:

Հիրավի, մտաբերում ես իրավիճակ, երբ հանցագործն ինքն է լեղապատառ բղավում. «Քոնի՛ր հանցագործին»:

Պարոններ Քոչարյան-Սարգսյան, «Ինտերպոլով» հետախուզում հայտարարեք Զանգեզուրի պղնձամոլիբդենային, Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատների հանցագործ իրական սեփականատերերին ջրի երես հանելու համար: Եթե անմասն եք այդ հանցավոր սեփականաշորթությանը, ապա տագնապելու ի՞նչ ունեք, ինքներդ դիմեք «Ինտերպոլին»: Եթե վերջինս դժվարանա, կօգնենք, չնայած սեփական կաշիները փրկելու համար մի երկու նախարար առաջ կընկնեն ու մատնացույց կանեն թալանչիներին:

Հարգելի գործընկերներ, Վիեննայում ելույթս ավարտեցի՝ նշելով. «Գալիք սերունդները մեր դարաշրջանի մասին կասեն. աշխարհը ղեկավարում էին ամենևին ոչ հերոսներ, առավել ևս ոչ իմաստուններ»:

Ավելացնեմ, որ այսօրվա Հայաստանը բնութագրելիս, ավա՛ղ, ցավով կարծանագրեն. «Երկիրը ղեկավարում էին ղարաբաղյան հանցավոր կլանը և հայաստանյան նրանց խամաճիկները»:

«Իրավունք», 3.–9.III.2006:

Պարոնայք, ընդունեք, որ պարտվել եք*

Սիրելի ժողովուրդ, նախ ուզում եմ շնորհավորել պարոններ Ռոբերտ Քոչարյանին և Սերժ Սարգսյանին Ազգային ժողովի այսօրվա նիստում ընթացող այս հիանալի բեմականացման համար, որի սցենարի հեղինակները հենց իրենք են: Ուշագրավ է, որ թատերական արվեստում մինչ օրս չի բեմականացվել գեթ մեկ ներկայացում, երբ արտիստները դեր են կատարում՝ չիմանալով, թե ո՞րն է սցենարով նախատեսված իրենց իսկ բուն դերակատարությունը: Պարզեցնեմ միտքս: Ի՞նչ, պատահականություն էր, որ Հայաստանի էներգետիկ անվտանգության խնդիրները՝ հիմքում ունենալով ատոմային էներգետիկայի զարգացումը, քննարկվում են հենց այս օրերին, երբ լրահոս եղավ, որ Ազգային անվտանգության հայեցակարգի առաջին տարբերակը ուղարկվելու է փորձագիտական քննության Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Ռուսաստանի Դաշնություն: Նման պատահականություններ չեն լինում, որովհետև տրամաբանությունը գալիս է հուշելու, որ հայեցակարգի մասին եզրակացությունները կստացվեին, որից հետո միայն այդ հարցը կդրվեր Ազգային ժողովի քննարկմանը ու համապատասխան օրենքի ընդունմանը:

Վերլուծենք, իսկ որո՞նք են մեր առջև ծառացած հեռահար խնդիրներն ու նպատակները: Ատոմակայանի և միջուկային էներգետիկայի զարգացման հարցերը Հայաստանից բացի շատ և շատ հետաքրքրում ու հուզում են Թուրքիային, ինչու չէ Ադրբեջանին: Այս ամենին որոշակի և շատ լուրջ նշանակություն արդեն կտրվի Իրանի հայտնի դեպքերի առնչությամբ: Հիշեցման համար ասեմ նաև այն, որ նույն Բուշերի ատոմային էլեկտրակայանը, որը կառուցվում է Ռուսաստանի Դաշնության անմիջական մասնակցությամբ և շահագործվելու է Իրանում այս տարվա վերջին, մի պայմանով է աշխատելու, որ ինչպես պահանջել է ՄԱԳԱՏԵ -ն, օգտագործված, կրկնում եմ, օգտագործված միջուկային վառելիքը հետ վերադարձվի մատակարարողին՝ Ռուսաստանին:

Ի դեպ, նշենք, որ ի սկզբանե Եվրամիությունը բացասական դիրքորոշում ուներ Հայաստանի Հանրապետությունում ատոմային էներգետիկայի զարգացման գործում, անգամ իսկ լուրջ կասկածներ էր հայտնել մեր երկրում գործող ատոմակայանի հետագա շահագործման վերաբերյալ: Ռուսաստանի Դաշնությունն առկա խնդիրների շուրջ առայժմ հստակ կարծիք չի հայտնել, որովհետև դրա անհրաժեշտությունը չի տեսնում

* Ելույթ Ազգային ժողովի՝ 2006թ. փետրվարի 28 -ի նիստում:

այն պարզ պատճառով, քանզի ատոմակայանը վստահելի կառավարման է հանձնված հենց իրեն, ավելին, Հրազդանի ՊԾԵԿ-ը և էներգետիկ այլ հզորությունների սեփականատերը նույն ինքը Ռուսաստանն է, էլ չասենք, որ դրանք աշխատում են ռուսական գազի և միջուկային վառելիքի օգտագործմամբ: Հեռանկարում ջերմա-էլեկտրակայանների շահագործման համար անհրաժեշտ այլընտրանքային վառելիքը լինելու է Իրանից ստացվող գազը:

Տարածաշրջանում տնտեսական խոշորածավալ ծրագրեր իրականացնելու պայմաններում, այն է՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան, Բաքու-Թբիլիսի-Էրզրում նավթատարի և գազատարի անխափան շահագործման հրամայականից ելնելով, Ամերիկայի Միացյալ Նահանգները խիստ շահագրգռված են, որ Հարավային Կովկասում հաստատվի տևական, կայուն իրավիճակ: Այստեղ ելույթ ունեցող հռետորներից Հրանտ Խաչատրյանը ճիշտ ասաց, որ տարածաշրջանում ատոմային էլեկտրակայան ունենալը փոքր-ինչ է, որ զիջում է միջուկային զենք ունենալուն: Համենայն դեպս, միջազգային հանրության և փորձագետների կողմից այդպես էլ ընկալվում և ընդունվում է այդ հանգամանքը այն պարզ պատճառով, որովհետև պայթյունավտանգ մեր տարածաշրջանում լուրջ փորձությունների առաջ կանգնած երկիրը հարկադրված է լինելու նույն խաղաղ օգտագործման էներգիա արտադրող ատոմակայանով ինքնապաշտպանվել:

Հիմա, այս իրավիճակում, Ազգային ժողովի քննարկմանն են բերել մի օրինագիծ, որի էությունը և հեռահար նպատակները չհասկանալով՝ քննարկումներ են անում՝ գործող և կառուցվելիք ատոմակայանները մասնավորին տան, թե որ գրող ու ցավին: Ակնհայտ է, որ այս քննարկումները ոչ այլ ինչ են, քան զավեշտ: Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը, այստեղ, ի դեպ, դրական գնահատեմ նրանց հնարամտությունը, սեփական իսկ գործերում մանևրելու հնարավորություններ են ստեղծում: Ակնհայտ է, որ այն լուծումները, որոնք պարտադրվում կամ առաջարկվում են Լեռնային Ղարաբաղի հետ կապված՝ անընդունելի են նաև Իրանի համար, երկիր, որի գործոնը թերագնահատելը, թերևս, սխալ կլիներ: Բա, լավ, մի բանով պետք է չէ՞, որ խաղաղեցնեն մեր հարավային հարևանին: Վարագույրի հետևում, հավանաբար, խոստանում են, որ «գյոզերով» Արաքսի վրայով օգտագործված միջուկային վառելիքը կուղարկեն Իրան, իրենք էլ իրենց հարցերը կլուծեն: Բայց այս ամենն արվում է բոլորիս թիկունքում, մեզ էլ փորձում են դնել խամաճիկի՝ կոճակ սեղմողի տեղ: Ահա հենց այս տեսանկյունից է, որ հարցերը պետք է քննարկվեն:

Մեկ հարցի շուրջ ևս արտահայտվեմ: Իմ կողմից հարգված Թաթուլ Մանասերյանի բերած օրինակ-համեմատությունը, կարծում եմ, թերևս, անհիմն էր: Հայաստանի խնդրո առարկա մոտեցումները դուք ինչպե՞ս եք փորձում համեմատել Չինաստանի և Հնդկաստանի հետ՝ առաջարկելով նույնատիպ մոտեցումներ: Համեմատությունը, գտնում եմ, կոռեկտ չէ: Հիշեցնեմ, որ ամերիկյան կոնգրեսին ուղղած հունվարի 31-ի իր ուղերձում Ջորջ Բուշը ուղղակիորեն նշեց. «Համաշխարհային էկոնոմիկան դինամիկ է և Ամերիկայի Միացյալ Նահանգների համար ի հայտ են եկել այնպիսի մրցակիցներ, ինչպիսիք են

Չինաստանը և Հնդկաստանը»:

Ի մի բերելով այս ամենը, ակնհայտ է դառնում, որ այս հարցն այսօր քննարկելը և օրենք ընդունելը մեր կողմից առնվազն ճակատագրական լուրջ սխալ է, որովհետև մեզ ստիպում և պարտադրում են եզրակացություններ, վերլուծություններ անել այն խնդիրների շուրջ, որոնց լուծումները, ավա՜ղ, Հայաստանում էլ չէ, որ գտնվելու են: Պարզից էլ պարզ է, որ դրանք ենթակա են կարգավորման Եվրամիության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ռուսաստանի Դաշնության և Իրանի միջև առկա հանգուցալուծումների արդյունքում: Այս պարագայում, կանգնել այստեղ, իրար համոզել, թե գործող կամ կառուցվելիք ատոմակայանը մասնավորին են տալու, թե պետական է լինելու, առնվազն անիմաստ և անհեռանկար զբաղմունք է: Այ մարդ, անհարմար է, մի՞թե դուք չեք հասկանում, որ բոլորիս են փորձում գործիք դարձնել, ինչ է, թե մի օր ավել մնան զավթած իրենց պաշտոններին: Գործիք են բոլորիս դարձրել, որ իրենց արտաքին քաղաքականության ձախողումները քողարկեն այսօրինակ օրինագծերի ընդունմամբ: Մոտեցում, որը շատ լավ փորձարկեցին սահմանադրական փոփոխությունների օրենքի նախագծի առաջին ընթերցումից հետո, երբ մեկ ամիս անց սկզբունքորեն նոր օրինագիծ բերեցին, ընդունեցին, դրանով իսկ շատ ծանր կացության մեջ դնելով կոալիցիային, որը մինչ այդ ջերմեռանդորեն քվեարկել էր հետագայում խոտանված օրինագծի օգտին: Կարելի էր շնորհավորել պարոններ Քոչարյանին և Սարգսյանին կոալիցիային հերթական անգամ անհեթեթ վիճակի մեջ գցելու համար: Սակայն զույգի հեռահար նպատակներ հետապնդող այս ճամարտակությունն արդեն իսկ բացահայտված է և հեղինակների կողմից սպասված դերը խաղալ չի կարող: Պարոնայք, ընդունեք, որ պարտվել եք:

«Իրավունք», 3.–9.III.2006:

Ես խնդիրներ չունեմ Արբակ Խաչատրյանի հետ

Օրերս ազատ է արձակվել Ռուսաստանի մարդու իրավունքների պաշտպանի նախկին խորհրդական Արբակ Խաչատրյանը, որին 2003-ին կալանավորելը ժամանակին պայմանավորեցին այն հանգամանքով, թե իբր նրա հանձնարարությամբ 150 հազար դոլար պիտի փոխանցվեր Երևան՝ որպես աջակցություն «Ազգային Միաբանության» ղեկավարի նախընտրական քարոզարշավին: Սակայն Արտաշես Գեղամյանը մեր զրույցի ընթացքում նշեց. «100 տոկոսանոց բլեֆ է գումարների վերաբերյալ այդ պատմությունը: Արբակ Խաչատրյանը ո՛չ մի առնչություն չի ունեցել այն առասպելի հետ, որն այն ժամանակ հրապարակ իջեցրեց իշխանական քարոզչամեքենան: Այնտեղ գործել է բացարձակապես այլ սցենար, որը կրկին պատվիրվել է Երևանում: Խնդիր էր առաջադրված, որ մոսկվաբնակ հայ ձեռներեցներին, հեղինակավոր մարդկանց ամեն կերպ հեռու պահեին Հայաստանի նախագահական ընտրություններից: Ի՞նչ եք կարծում, եթե իրոք նման բան լիներ՝ մի՞թե մեր իշխանությունը բաց կթողներ այդ հիանալի՛ հնարավորությունը քրեական ու դատական հետապնդումներ իրականացնելու համար... Իհարկե՛ բաց չէր թողնի: Արդեն իսկ հեղեղել էին մամուլը: Բայց նրանց գործը միայն շառ անելն է, որն, ինչպես ասում է ժողովուրդը, կպչում է միայն իրենց»: Մեր հարցին, թե այնուամենայնիվ՝ ի՞նչ մեղադրանք էր առաջադրվել Արբակ Խաչատրյանին՝ պրն Գեղամյանը պատասխանեց. «Նրա արդարացման հարցն օրախնդիր և օրակարգային հարց է: Նրան առաջադրված մեղադրանքը, այն է՝ չեխական գազ տեղափոխող ընկերության հետ տնտեսական գործարքներում իբր հակաօրինական գործողություններ թույլ տալը, համոզված եմ, որ կվերանայվի առաջիկայում և այդ դատվածությունն անպայմանորեն կհանվի»:

Սինչ Արբակ Խաչատրյանի ազատ արձակումը՝ քաղաքագետներից մեկը պնդում էր, թե նա շատ բացահայտումներ է անելու: Եղան նաև այլ մեկնաբանություններ, թե «Ազգային Միաբանությունը» մոռացության է մատնել այն մարդուն, որը ճաղերի ետևում էր հայտնվել իր պատճառով: Հարցին, թե մտավախություն չունի՞, որ Արբակ Խաչատրյանը կարող է իրոք ինչ-ինչ փաստեր հրապարակել՝ Արտաշես Գեղամյանն այսպես արձագանքեց. «Ցանկանում եմ ուրախացնել թե՛ քաղաքագետներին, թե՛ նրանց ետևում կանգնած անձանց. անցած 3 տարիների ընթացքում ամենասերտ կապերն եմ պահպանել թե՛ Արբակ Խաչատրյանի, թե՛ իր ընտանիքի՝ մասնավորապես, տիկնոջ՝ տիկին Լենայի

հետ»: Միջանկյալ նշենք, որ շուրջ 2 տարի է, ինչ «Ազգային Միաբանության» խմբակցության գլխավոր մասնագետը խորհրդարանում Արբակ Խաչատրյանի քրոջ դուստրն է՝ Քրիստինե Սարգսյանը, որն այս աշխատանքին է անցել Գեղամյանի առաջարկով: «Ինչ խոսք, Արբակի ազատ արձակումն ինձ շատ ու շատ է ուրախացրել և ոգևորել, քանի որ ով-ով, բայց Արբակը շատ լավ գիտի, թե գործող իշխանությունների ո՛ր խարդավանքների հետևանքով եղավ այն, որ փորձեցին անպայմանորեն մեկուսացնել այդ հայրենասեր հային ու հետ պահել քաղաքական այն գործընթացներից, որոնք ծավալվում էին Հայաստանում,- ասաց «Ազգային Միաբանության» ղեկավարը:- Եվ իշխանությունները ճիշտ են անում, որ այդքան զգուշանում են: Եթե Աստված մի արասցե՝ Արբակն ասի մանրամասները, ձեր համեստ ծառան, բնականաբար, կհայտնվի շատ պարկեշտ ու հերոսական դիրքերում, իսկ այս իշխանությունները իրենց հատուկ՝ բանսարկու և դավաղիրների տեղում:

Այլ հարց է, որ ես այստեղ տեսնում եմ շատ վտանգավոր միտում: Այն է՝ իրենք գիտակցում են, որ Արբակ Խաչատրյանը շատ հետևողական ու սկզբունքային անձնավորություն է և իրոք չի ներելու այդ բանսարկուներին: Ու տեսեք, թե ի՜նչ ճիզվիտական սցենար են իրականացնում. փորձում են հրապարակ իջեցնել այն թեզը, թե իբր՝ ե՛ս խնդիրներ ունեմ Արբակ Խաչատրյանի հետ, ինչն ի սկզբանե հերյուրանք է: Դրանից հետո նրանք կփորձեն ֆիզիկական հաշվեհարդար տեսնել իմ հանդեպ, որ այդ ամենը բարդեն Արբակ Խաչատրյանի վրա և կարողանան արդեն երկրորդ անգամ չեզոքացնել նրան: Ահա սա է սատանայական սցենարը, որը փորձում են իրականացնել մեր իշխանությունները: Ինչը չի՛ հաջողվելու, քանի որ այս ամենը, ինչի մասին ասում եմ այժմ հրապարակավ՝ վաղո՜ւց արդեն հայտնի է թե՛ Արբակ Խաչատրյանին և թե՛ մեր այն լավ ընկերներին, որոնք բավականին հետաքրքիր պաշտոններ են զբաղեցնում համապատասխան կազմակերպություններում: Այնպես որ՝ պետք է հերթական անգամ պրն Ռոբերտ Քոչարյանին հորդորեմ, որ իր շրջապատին զերծ պահի բանսարկություններից: Միևնույն է՝ չի՛ ստացվելու»:

Աննա Խսրայելյան

«Առավոտ», 8.III.2006:

Միջազգային հանրությունը կոլորի «քցող տղերքի» ականջները

– Վերլուծե՞լ եք, թե ինչու Քոչարյան-Ալիև երկարատև բանակցությունները որևէ արդյունք չտվեցին, և թե ինչո՞ւ Ռամբույեից հետո էլ ավելի սրվեց իրավիճակը: Նկատի ունեմ՝ Ադրբեջանի նախագահի իրար հաջորդող ռազմատենչ հայտարարություններն ու Ռ. Քոչարյանի պատասխան հարցազրույցը, որն Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռիչո Հարնիշի գնահատմամբ՝ էլ ավելի սրեց լարված իրավիճակը:

– Դեռ 2004թ. ապրիլին Պրահայում Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարները հանդիպել էին Մինսկի խմբի համանախագահողների հետ, ուր ձեռք էր բերվել սկզբունքային պայմանավորվածություն ԼՂՀ հիմնահարցի լուծման հայեցակարգի մասին, որը 2005թ. մայիսին Վարշավայում ամրագրվեց Եվրոպայի Անվտանգության և համագործակցության կազմակերպության գագաթաժողովում: Իսկ դրանով Հայաստանը պարտավորվում էր ազատագրված տարածքները վերադարձնել: Միաժամանակ բանակցող կողմերը պարտավորվելու էին ստեղծել համապատասխան պայմաններ թե ադրբեջանցի, թե հայ տեղահանվածների՝ իրենց մշտական բնակության վայրերը վերադարձն ապահովելու համար: Այնուհետև տարիներ անց պետք է անցկացվեր հանրաքվե՝ որոշելու ԼՂՀ կարգավիճակը: Ահա այն սկզբունքային հենքը, որի շուրջ ձեռք էր բերվել պայմանավորվածություն: Վերհիշենք հետագա զարգացումները: Ադրբեջանում 2005թ. նոյեմբերին տեղի ունեցան Միլի մեջլիսի ընտրություններ, որոնց հաջորդեցին հարյուր հազարավոր ընտրողների բողոքի ցույցեր: Նույն ամսին Հայաստանում անցկացվեց սահմանադրական փոփոխությունների հանրաքվե, որը նույնպես ուղեկցվեց խայտառակ կեղծիքներով: Միջազգային հանրությունն աչքերը փակեց թե՛ ադրբեջանական ընտրությունների, թե՛ ՀՀ-ում անցկացված հանրաքվեի ժամանակ կատարված զանգվածային կեղծիքների վրա: Երկու դեպքում էլ հանդուրժողականության դրսևորման պատճառը մեկն էր: Հայաստանի պարագայում Քոչարյանն ու Վարդան Օսկանյանը պատրանք էին ստեղծել, որ ԼՂՀ հարցն ի զորու է լուծել միայն ու միայն այս վարչակազմը, ուստիև պետք է նրան «գուրգուրել», պաշտպանել, եթե խնդիր է դրված, որ այս հարցն ընդհանրապես լուծում ստանա: Նույն շարժառիթներով էլ համարժեք գնահատական չտրվեց Ադրբեջանում անցկացված Միլի մեջլիսի ընտրություններին:

Պատահական չէր նաև այն, որ սահմանադրական փոփոխությունների մեջ տեղ էին գտել այնպիսի վտանգավոր հոդվածներ, համաձայն որոնց՝ ՀՀ Նախագահը ոչ միայն անձեռնմխելի է, այլև չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր

կարգավիճակից բխող գործողությունների համար: Մեկ այլ հոդվածով էլ՝ ԱԺ վավերացման ենթակայության շրջանակի մեջ են մտցվում սահմանների փոփոխության հարցերը: Այսինքն՝ արդեն իսկ իրավական հիմքեր էլ ստեղծվեցին ԼՂՀ հարցի նախապես պայմանավորված լուծումների համար: Հայաստանում հիշատակածս ժողովրդավարական կարևորագույն նորմերի խախտումները հանդուրժելուց հետո հանկարծ Ռամբույեում, փաստորեն, վիժեցվում են 2004թ. Պրահայում ձեռք բերված պայմանավորվածությունները, որոնք 2005թ. հավանության էին արժանացել երկու երկրների նախագահների կողմից: Բնականաբար, նման զարգացումներից հետո միջազգային կազմակերպությունները, Մինսկի խմբի համանախագահող երկրներն արդեն սկսեցին մտորել, որ բոլոր պայմանները, որոնք հնարավոր դարձրին Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին իրենց պաշտոնները պահպանելու համար, ըստ էության ապահովված էին, մինչդեռ, երբ եկավ «փոխհատուցման» ժամը, այն է՝ գալ համաձայնության ԼՂՀ հարցի հանգուցալուծման շուրջ (իսկ նախագահների համար գաղտնիք չէր, որ 2006թ. հենց հանգուցալուծման տարի է հայտարարվել), չգիտես ինչու, ետ կանգնեցին իրենց իսկ պարտավորվածություններից: Ինչ վերաբերում է ռազմատենչ հայտարարություններին, ապա Քոչարյանը դատապարտված է հանդես գալ նման հայտարարություններով այն պարզ պատճառով, որ 1998թ. հունվար-փետրվարին Հայաստանում իրականացված հեղաշրջման ներկայացվող դրդապատճառն ու բացատրությունն այն էր, որ նախորդ իշխանությունների առաջարկած լուծումները, իբր, դավաճանական երանգներ են պարունակում: Հանրությանն էլ համոզում էին, որ կա հարցի կարգավորման շատ ավելի լավ տարբերակ, որի ջատագովը և կյանքի կոչողը կլինի հենց նույն Ռ. Քոչարյանը՝ իր թիմակիցների հետ: Այսինքն՝ հիմա նա այդ խոստումների (որի շնորհիվ ժողովուրդն այսքան տարիներ նրան հանդուրժեց), իր իսկ քաղաքական ֆիասկոյի ականատեսն է: Ուստիև Քոչարյանն ընտրեց ժողովրդի ուշադրությունը շեղելու մարտավարություն՝ հրապարակ իջեցնելով պատերազմի վերսկսման հնարավոր վարկածը: Դիվանագիտական և քաղաքական առումով սրանք հուսահատված մարդու գործելակերպի դրսևորումներ են: Ես մարդկայնորեն կարող եմ իրեն հասկանալ. երկրի այն ղեկավարը, ով գիտակցում է, որ իր թիկունքին կանգնած չէ ժողովուրդը, ում իշխանավարության տարիների ընթացքում երբեմնի պասիոնար միաբանված ազգը հիմա դարձել է պառակտված, հիասթափված և իշխանատյաց մարդկանց զանգվածներ, բնականաբար, պետք է դիմեր այսպիսի հուսահատ, ժամանակ շահող քայլերի: Չունենալով մեր ժողովրդի սատարումը՝ նա միշտ ապավինել է դրսի «բարիդրացիական» վերաբերմունքին, որն էլ պայմանավորված էր ԼՂՀ հիմնախնդրի լուծման շուրջ նրա տված խոստումներով: Այժմ արդեն միջազգային կազմակերպություններն ու երկրները ևս հիասթափվեցին՝ գիտակցելով նրա խոստումների սնանկությունը, ու ինքը մնաց օդից կախված: Իսկ օդից կախված մարդը վտանգավոր է երկրի, պետության համար: Ահա թե ինչու ստեղծված իրավիճակում վատը չցանկանալով նաև պարոն Քոչարյանին, պետք է, այո, մենք՝ «Ազգային Միաբանությունը», նպաստենք երկրում անցնցում իշխանափոխությանը: Այս

իրավիճակում Քոչարյանի համար լավագույն ելքն օր առաջ հրաժարական տալն է, ինչպես նաև՝ ազատ, արդար ԱԺ և նախագահական ընտրությունների անցկացումն է:

Ավելին, Քոչարյանը, կարծում եմ, հասկանում է, որ ծանր կացության մեջ է ընկնում նաև հարևան Իրանի նկատմամբ ստանձնած պարտավորությունները չկատարելու առումով: Չէ՞ որ ԼՂՀ հարցի խաղաղ կարգավորման սկզբունքային պայմանավորվածությունների կարևորագույն մաս էր կազմում այն, որ ազատագրված տարածքներից հայկական զինված ուժերի հետքաշման հետ միաժամանակ այդտեղ խաղաղարար ուժեր պետք է մտնեն: Հենց միջազգային խաղաղարար ուժերի վրա էր դրվելու տարածաշրջանում տևական խաղաղություն ապահովելու գործը: Այսինքն՝ այդ ուժերը տեղակայվելու էին Արաքս գետի ողջ երկայնքով, որն այսօր վերահսկվում է ԼՂՀ ինքնապաշտպանության բանակի կողմից: Հասկանալի է, Իրանի շուրջ ստեղծված բարդ իրավիճակում վերջինս չէր կարող հանդուրժել նման զարգացումներ: Ինչ վերաբերում է Ռինո Հարնիշի հայտարարությանը, ապա պետք է նկատել հետևյալը: Ըստ էության, Ադրբեջանում ԱՄՆ դեսպանը խոստովանում է, որ համանախագահող երկրների մոտեցումը հակամարտող կողմերի ղեկավարների նկատմամբ, ինչը տարիներ շարունակ դրսևորվում էր հանդուրժողականությամբ հանդեպ անօրինականությունների, ժողովրդավարության ճնշման փաստերը, ցանկալի արդյունք չեն տվել: Մի՞թե իրենց համար պարզ չէր, որ ԼՂՀ հակամարտության նման ծանր հարցն ի զորու է լուծել միայն այն իշխանությունը, այն նախագահը, որը ժողովրդի վստահության քվե ունի: Հիմա իրենք ինչ ցանեցին, դրա դառը պտուղները ճաշակում են:

– Այս փուլում ԱՄՆ Պետքարտուղարության կողմից ՀՀ պաշտոնյաներին թմրաբիզնեսի մեջ անուղղակիորեն մեղադրելը ճնշման հերթական միջոց չէ՞:

– Յուրաքանչյուր իշխանություն, իսկ տվյալ պարագայում՝ հայրենյաց իշխանությունները, ճաշակում են սեփական արատավոր քաղաքականության արդյունքները: Չէր կարելի տարիներ շարունակ խաբեությամբ զբաղվել, հուսով անել գերպետություններին, թե Ղարաբաղի հարցն իրենք են լուծելու՝ ի սկզբանե շատ լավ գիտակցելով, որ չվայելելով ժողովրդի վստահությունը՝ չեն կարող դրսևորել քաղաքական այնպիսի կամք, որով հնարավոր կլինի հանգուցալուծել այդ հիմնահարցը, որը կընդունվի Հայաստանում և ԼՂՀ-ում: Դեռ ավելի լուրջ և վիրավորական մեղադրանքներ էլ կլինեն, ավա՜ղ, որոնց համար պարարտ հողը, ցավոք, ստեղծել են նույն այս իշխանությունները:

– Համաձա՞յն եք հնչող գնահատականների հետ, թե Ռոբերտ Քոչարյանն ինքն է «իր ոչ կառուցողական կեցվածքով» պատերազմը դարձնում անխուսափելի:

– Պարոն Քոչարյանը պարզապես ուզում է ստեղծել պատերազմական իրավիճակի իմիտացիա: Դա իր զինանոցում թերևս այն վերջին «փամփուշտն» էր, ինչը նա հրապարակ է իջեցնում՝ մտածելով, որ ընդհանուր վտանգի պայմաններում ժողովուրդը կհամախմբվի ղեկավարության շուրջ: Սինչդեռ նա չի ուզում ինքնախոստովանել, որ ժողովուրդը երբեք չի համախմբվի այն իշխանության շուրջ, որն ինքն է բոլոր չարիքների հետևում կանգնածը, եթե չասենք՝ բուն պատճառը: Իսկ հիմա համատարած լրատվական

հիստերիա է նկատվում թե՛ Ադրբեջանում, թե՛ Հայաստանում: Պատերազմի հող ստեղծողները հավասարաչափ Հայաստանի և Ադրբեջանի իշխանությունների պատվիրանը կատարողներն են: Թե ինչո՞ւ են դա անում Ադրբեջանի իշխանությունները՝ թողնենք իրենց վերլուծաբաններին: Իսկ մեր իշխանություններն այս համատարած կոռուպցիայի, ալան-թալանի, դավադրությունների հետքերը կոծկելու համար գտել են իրենց համար փրկարար, սակայն իրականում ամենավտանգավոր ուղին, ինչը երբեք ու երբեք իրականություն չի դառնա: Մեր ժողովուրդն այդ ժամանակ այս պատերազմի *կուսակցության* դեմ իսկապես կհամախմբվի: Կրկնեմ, ԼՂՀ հիմնահարցի արդարացի լուծումն ի զորու են կյանքի կոչել քաղաքական այն ուժերը, որոնք այսօրվա իշխանությունների նման ո՛չ պախարակված են, ո՛չ էլ վարկաբեկված: Եվ ամենակարևորը՝ նրանք, ովքեր իշխանության կգան ժողովրդավարական ընտրությունների արդյունքում:

– *Ռոբերտ Քոչարյանի հայտարարությունը, որ եթե Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաները շարունակեն իրենց ռազմատենչ հայտարարությունները՝ ապավինելով իրենց բանակի հզորությանը, ապա Հայաստանը կճանաչի ԼՂՀ անկախությունը, կարո՞ղ է պատասխան սպառնալիք դառնալ, և Ադրբեջանին հետ պահել «ցանկացած տարբերակ՝ ընդհուպ պատերազմի վերսկսումը, ընդունելի է» կարգախոսից: Ի՞նչ եք կարծում, դրանից վախեցա՞վ Ադրբեջանը:*

– Այս հարցին կարելի է մոտենալ երկու տեսանկյունից: Առաջին՝ եթե մենք ուզում ենք օր առաջ ձերբազատվել այս իշխանություններից, ապա մենք պետք է խրախուսենք Ռ. Քոչարյանի՝ նման ծանր հարցերին նման պարզունակ, գավառական պատասխանները, որովհետև դրանք արդեն իսկ ոչ միայն հասկանալի են դարձնում, որ այս մարդն իր տեղում չէ (մեր հասարակությունը դա վաղուց գիտի, խոսքը միջազգային հանրության մասին է): Միջազգային հանրությունը՝ ի դեմս կարգավորմանը ձեռնամուխ եղած երկրների, արդեն կգիտակցի, թե այսքան ժամանակ ինչպես են կուրորեն հետևել Քոչարյանի բոլոր քմահաճույքների կատարմանը, որոնք իրենց առջև որպես նախապայման դրել էր նա: Երկրորդ՝ ցավ ես ապրում, երբ երկիրը մինչ օրս չունի ազգային անվտանգության այնպիսի հայեցակարգ, որը հասկանալի և ընդունելի կլինի ոչ միայն հայերիս, այլև միջազգային հանրության համար, որից ելնելով բխեն երկրի նախագահի հայտարարությունները: Այսինքն՝ կողնորոշումները կորցրած, հուսահատ մարդու հայտարարություն էր դա: Այդ իսկ առումով կրկին արդիական է դառնում Քոչարյանի հրաժարականի հարցը: Հիմա ես Ձեզ հարցով դիմեմ: Կա՞ որևէ երկիր, որը հրապարակայնորեն սատարել է ՀՀ որդեգրած արտաքին քաղաքականությանը: Չկա՛ այդպիսի երկիր: Եթե հեղինակավոր ամբիոններից Հայաստանը գնահատում են որպես ագրեսոր երկիր և հայտարարում են, որ ճանաչում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, էլ ինչի՞ մասին կարող է խոսք լինել: Ադրբեջանում Ռուսաստանի տարվա առթիվ փետրվարի 22-ին, Բաքվում Վ. Պուտինն իր ասուլիսում հայտարարեց, որ եթե չլիներ ԼՂՀ հակամարտությունն, ապա Ադրբեջանի հետ ՌԴ ապրանքաշրջանառությունը (որը

վերջին երկու տարիներին կրկնապատկվել և հասել է 1 միլիարդ դոլարի) կկազմեր առնվազն 5 միլիարդ դոլար: Այսինքն՝ նա թափանցիկ ակնարկ արեց, որ հիմնահարցի չլուծված լինելու պատճառով մեծապես տուժում է նաև ռուսական բիզնեսը: Սա անուղղակիորեն խոսում է Հայաստանի դերի և կշռի զրոյական մակարդակի մասին: ՀՀ-ն դադարել է քաղաքական գործոն լինելուց, իսկ սա չափազանց վտանգավոր է: Դրա համար ենք ասում, որ այս իշխանություններն արդեն իսկ վտանգ են հայոց պետականության համար և իրենք պետք է հեռանան:

– Չե՞ք կարծում, որ ժամանակն է, որպեսզի ընդդիմությունը հնչ-որ քայլեր ձեռնարկի ու իշխանություններին հիշեցնի, որ իրենք իշխանության գալուց առաջ և դրանից հետո անընդհատ վստահեցնում էին, թե եկել են խաղաղ ճանապարհով հարցը կարգավորելու համար, և ոչ թե պատերազմն անխուսափելի դարձնելու:

– Այո, կարծում եմ, եկել է դրա ժամանակը, և պատահական չէ, որ մարտի 10-ին մենք կոնֆերանս ենք անցկացնելու, որտեղ այս բոլոր հարցերը մեկ անգամ ևս լրջորեն կքննարկվեն և «ԱՄ»-ն հանդես կգա համապատասխան դիրքորոշումներով:

– «Արդարություն» դաշինքը շարունակում է պնդել, որպեսզի Ռոբերտ Քոչարյանի ու Վարդան Օսկանյանի մասնակցությամբ ԱԺ լսումներ կազմակերպվեն ԼՂՀ հիմնահարցի վերաբերյալ, որից հետո իրենք կկողմնորոշվեն՝ ի՞նչ անել: Եթե այդ լսումները լինեն ու Ռ. Քոչարյանը հայտարարի, որ իրենց նախկին հայտարարությունները, թե բանակցությունները նորմալ են ընթանում, այդպես չէ, և հիմա պատերազմի վերսկսումը օրակարգային է, ի՞նչ է անելու ընդդիմությունը, և ո՞րն է լինելու «Ազգային Միաբանության» դիրքորոշումը:

– Ես զարմանում եմ մեր գործընկերների լավատեսության վրա: Ինչպե՞ս կարելի է պետական առողջ օրգանիզմը հիվանդացնողներից բուժում ակնկալել: Լավ, մի՞թե պարզ չէ՝ ինչպիսի լուծումներ են սպասվում: Իրենք պետք է հերթական անգամ գան և ԱԺ ամբիոնից թերուսների համար հայտարարեն, որ Ռամբույեն մեր բարոյական հերթական հաղթանակն էր, որ պարոն Քոչարյանը դուռը շրխկացրեց, պատերի ծեփերն էլ թափվեցին… Նրանց քննարկումների մակարդակը սա է, և ես կարծում եմ, որ եթե դուք մեկին կանչում, հաշիվ եք պահանջում, նշանակում է՝ դեռ հետը հույս եք կապում: Ես այս իշխանությունների հետ ԼՂՀ հիմնահարցի արդարացի լուծման առնչությամբ ոչ մի հույս չեմ կապում: Այս իշխանությունները միայն խոչընդոտ ու վտանգ են ԼՂՀ հարցի լուծման ճանապարհին: Այնպես որ՝ «ԱՄ»-ն աննպատակահարմար է գտնում հիշատակած պաշտոնյաների հրավերն ԱԺ: Այլ բան է, որ իշխանությունները շատ ու շատ կցանկանան, որ այդպիսի լսումներ լինեն: Այդ ժամանակ իրենք իսկ կհրահրեն, որ ԱԺ առանձին պատգամավորներ ամենառազմատենչ հայտարարություններով հանդես գան, որպեսզի Օսկանյանը Քոչարյանի հետ միասին միջազգային կառույցների հետ հանդիպելիս ասեն՝ այ, տեսեք մենք ինչ անելանելի վիճակում ենք հայտնվել, մի կողմից դուք եք մեզ ճնշում, խեղդում, մյուս կողմից՝ կոալիցիան ու ընդդիմությունը ձայն ձայնի տված պատերազմական կոչեր անում, մյուս կողմից էլ՝ ԼՂՀ-ն նույնպես ուզում է մեզնից երես թեքել: Դա մշակված

շատ նրբին քաղաքականություն է, բայց քանի որ այն մշակողները միշտ կրկնվում են իրենց գործողություններում, արդեն իսկ հասկանալի է, որ դա հրահրվում է նախագահականի կողմից՝ այդ տրագիկոմեդիան միջազգային հանրությանը հրամցնելու համար է:

– Արամ Զ. Սարգսյանը մեր թերթին տված հարցազրույցում հայտարարել էր, թե հանուն ԼՂՀ բնակիչների անվտանգության՝ ինքը պատրաստ է համագործակցել գործող իշխանությունների հետ: Դուք կհամագործակցե՞ք իշխանությունների հետ նման պարագայում:

– Հանուն ԼՂՀ բնակիչների անվտանգության ես պատրաստ եմ օր առաջ ձեռնարկել ամենը, որ այս իշխանությունները հրաժարական տան:

– Իսկ ի՞նչ կասեք այն գնահատականների առնչությամբ, թե Ռ. Քոչարյանը հող է նախապատրաստում, որպեսզի ՀՀ -ում հայտարարի ռազմական իրավիճակ, և հայտարարի, թե պետությանը պատերազմի վտանգ է սպառնում, և դրանով, որը թույլ է տալիս Սահմանադրությունը, անորոշ ժամանակով հետաձգի նախագահական ընտրությունները՝ այդպիսով երկարաձգելով իր պաշտոնավարությունը:

– Եթե չլիներ միջազգային հանրության լռակյաց հանդուրժողականությունը, 2003թ. խայտառակ ընտրություններից հետո Քոչարյանը կկարողանա՞ր պաշտոնավարել: Միարժեքորեն՝ ոչ: Կամ՝ 2004թ. ապրիլի 5-ի, 12-ի վայրագություններից հետո Քոչարյանը կմնա՞ր: Իհարկե՝ ոչ: Եթե այդ հանդուրժողականությունը չլիներ՝ հանրաքվեի խայտառակ անցկացումից հետո Քոչարյանը կմնա՞ր: Կրկին՝ ոչ: Հանդուրժել են զուտ այն նպատակով, որ Ռամբույեում գային վերջնական համաձայնության: Քոչարյանենց տերմինաբանությամբ՝ տղերքը «քցել» են միջազգային հանրությանը և վերջինս կսկսի ոլորել ոչ թե հայ ժողովրդի, այլ տղերքի ականջները: Կստեղծի բոլոր նախադրյալները, որպեսզի մեր ժողովրդի 7-8 տարիների փայփայած իղձերն ի կատար ածվեն, և այս հանցավոր իշխանությունները հեռանան:

– Ներքաղաքական ինչպիսի՞ զարգացումներ եք կանխատեսում: Հնարավո՞ր է՝ ԱԺ ընտրություններից առաջ «Ազգային Միաբանությունը» որևէ ուժի հետ դաշինք կազմի: Ի դեպ, խոսում են «Դաշինքի» հետ ձեր հնարավոր համագործակցության մասին՝ վկայակոչելով նախկին փորձը:

– «ԱՄ»-ն այսօրվա դրությամբ, կրկնում եմ, այսօրվա դրությամբ միայնակ է գնալու ընտրությունների, սակայն արդեն ԱԺ-ում չենք բացառում հնարավոր դաշինքների ստեղծումն այն կուսակցությունների հետ, ում ծրագրային հիմնադրույթները, այս իշխանություններին տրված գնահատականները համընկնում են մեր գնահատականներին:

– Վստա՞հ եք, որ դուք լինելու եք հաջորդ ԱԺ-ում: Իշխանություններն ունեն իրենց սցենարը և այն պատկերը, թե որ ուժերն են լինելու այնտեղ: Տեղյա՞կ եք՝ դուք կա՞ք դրանում:

– Ճիշտ եք, իշխանություններն ունեն իրենց սցենարը, թե որ ուժերին են աջակցելու,

որ ընտրակեղծիքների միջոցով հայտնվեն ԱԺ-ում: Ի պատիվ իրենց, ասեմ, որ այդ սցենարի մանրամասներն առանձին կաչաղակների միջոցով լայնորեն տարածում են՝ խնդիր ունենալով որոշակի զանգվածի թերահավատորեն տրամադրել «Ազգային Միաբանության» հեռանկարների նկատմամբ: Օգտագործելով առիթը՝ շնորհակալություն եմ հայտնում իշխանավորներին «սանիտարական զտումներ» անելու և «ԱՄ»-ն տատանվողներից հեռու պահելու համար: Բնականաբար, Ձեր հիշատակած սցենարում «ԱՄ»-ն լինել չէր կարող: Գոնե իրենք իրենց հոգու խորքում լավ գիտեն՝ ով է իրենց իրականում ընդդիմադիր: Ավելին՝ նրանք իրենց մերձավորների միջոցով տարածելով, որ «ԱՄ»-ն հույսը թող կտրի, որ ԱԺ-ում է լինելու, ասես խնդիր են հետապնդում, որ հիշեցնենք հայկական լավ ասացվածքը՝ իշտահներիդ քացախ: «ԱՄ»-ն շատ ավելի կազմակերպված ու հզոր է գնալու առաջիկա ընտրություններին, քան եղել է 2003թ.: Այսքան փորձություններից, այսքան ականներ մեր մեջ դնելուց հետո մենք ավելի հզորացանք: Դա են վկայում ոչ մեր կողմից անցկացրած ամենատարբեր հարցումների արդյունքները: Այնպես որ՝ այդ բախտախնդիր նկարիչներին հորդորում եմ զբաղվել իրենց հիմնական գործով, ոչ թե քաղաքական կանխատեսումներով: Վերջին հաշվով, չստացվի այնպես, որ բոլոր այն մականուններին, որոնք կպչում և բնութագրում են այս իշխանություններին, ավելանա ևս մեկը, թե նրանք այնքան ճարահատյալ վիճակում են, որ ակամայից ստանձնել են վհուկներին, ջադուներին հոգեհարազատ զբաղմունք՝ կանխագուշակումներ անելը: Թող հանգստանան, իրենց մայր գործով վաղուց ի վեր չզբաղվող պաշտոնյաները, ընտրակեղծիքների մասնագետները: «Ազգային Միաբանությունը» նորընտիր ԱԺ-ում նույնպես կլինի ներկայացված, այն էլ պատգամավորների շատ ավելի մեծ թվով: Հանգստացնեմ բախտագուշակ, բանսարկու իշխանավորներին, որ մենք իրենց նկատմամբ նենգ չենք լինի, ինչպես իրենք են մեր նկատմամբ: Հաղթողը միշտ մեծահոգի է լինում, իսկ մենք հաղթող կուսակցություն ենք:

Զրուցեց

Լիլիթ Սեյրանյանը

«168 ժամ», 9.–10.III.2006:

Հանուն պատվի ու պարտքի մենք կգանք հրապարակ…

Ես չեմ ապրում արդեն ու ես չեմ էլ մեռնում,
Եվ իմ չմեռնելը տևելու է երկար.
Ո՛ւր էլ լինեմ՝ տանը, դրսում, հեռաստանում,
Ես ձեր դատաստանին պիտի լինեմ ներկա…

Սիլվա Կապուտիկյան

«Ապստամբություն»
2003թ. դեկտեմբեր - 2004թ. ապրիլ

Սիրելի ընթերցող, մարտի 10-ին տեղի ունեցավ «Ազգային Միաբանություն կուսակցության» կոնֆերանսը: Լեփ-լեցուն դահլիճը, ինչպես նաև 300-ից ավելի ոտքի վրա կանգնած մարդիկ մեկուկես ժամ համակ ուշադրությամբ լսեցին Արտաշես Գեղամյանի զեկուցումն ու հնչած հարցերի պատասխանները: Իշխանությունները, փոխանակ լուրջ հետևություններ անեին ելույթում բարձրացված խիստ մտահոգիչ հարցադրումներից, սկսեցին սպառնալ Գեղամյանին պնակալեզ իրենց լրատվամիջոցներում Մարիա Ստյուարտի ճակատագիրը ունենալու հեռանկարով, երբ հենց իրենց է սպասվում Լյուդովիկոս XVI ճակատագիրը: Մարդկանց ուշադրությունը շեղելու նպատակով անպտուղ փորձեր են արվում Արտաշես Գեղամյանին կապել հանցավոր վարչակազմի հետ: Գավառական պարզունակ հաշվարկի նպատակը մեկն է. քաղաքական բեմահարթակում գործող կուսակցություններին իրար դեմ հանել, վարկաբեկելով նրանց: Միաժամանակ դրանով իսկ պարարտ հող է ստեղծվում նախագահականում ծնունդ առած կուսակցությունների հրապարակ գալու համար: Ավելին, ԼՂՀ հիմնահարցի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացի տապալումից հետո Քոչարյան-Սարգսյան զույգը փորձում է Հայաստանի Հանրապետությունում ստեղծել անհանդուրժողականության և փոխադարձ թշնամանքի մթնոլորտ: Հաշվարկը պարզ է. միջազգային կառույցներին համոզել, որ Հայաստանում կստեղծվի քաոսային իրավիճակ, եթե չլինեն նրանք՝ Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան զույգը:

Ստորև Ձեր դատին ենք ներկայացնում Արտաշես Գեղամյանի բանավոր խոսքի շարադրանքը: Կոնֆերանսում հնչած հարցերի պատասխանները կտպագրվեն առաջիկա համարներից մեկում:

Սիրելի քույրեր, եղբայրներ, բոլորս էլ ականատես ենք այն բարդ զարգացումներին, որոնք ընթանում են թե Հայաստանի ներսում, և թե, ինչու չէ, տարածաշրջանում: Այդ իսկ առումով մենք չէինք կարող Ձեզ հետ չհավաքվել, խելք խելքի չտալ, և, որն ամենակարևորն է, ելքերը չորոնել՝ երկիրը, ժողովրդին պայթյունավտանգ այս ծանր վիճակից դուրս բերելու համար: Այդ իսկ պատճառով որոշում կայացվեց անցկացնել «Ազգային Միաբանություն կուսակցության» կոնֆերանսը, որպեսզի Ձեզ հետ կարողանանք մեր երկրի առաջ ծառացած հարցերին ավելի մանրակրկիտ անդրադառնալ: «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահությունն առաջարկում է, որ կուսակցության մոտեցումները ես Ձեր դատին ներկայացնեմ, որից հետո փորձենք դրա շուրջ վերլուծություն անել, այն է՝ նախ և առաջ պատասխանենք Ձեզ հուզող բոլոր հարցերին: Եթե նման աշխատակարգի հետ համաձայն եք, ապա անցնենք գործի:

Սիրելի ժողովուրդ, ես հասկանում եմ Ձեր դժգոհությունը, որ օպերատորները տեսադաշտը ծածկել են, ոչինչ, ժողովուրդ ջան, հիմա ձայնս լսեք, երեկոյան հեռուստաալիքներն առանց ձայնի ցույց են տալու դեմքս, բնականաբար, աղավաղելով ասածս: Այնպես որ, դեմքս երեկոյան կտեսնեք: *(Ծափահարություններ, ծիծաղ):*

Բարեկամներ, չթաքցնեմ, երեկոյան քնելուց առաջ կամ ընթերցում եմ իշխանական թերթերը, որ լավ երազներ տեսնեմ, կամ էլ Հին Հունաստանի և Հին Հռոմի իմաստունների, փիլիսոփաների ասած-գրածները: Երեկ էլ վերընթերցեցի Պլուտարքոսին, որն ասում էր. ելույթ ունենալիս, խոսքդ պետք է կամ կարճ լինի, կամ պետք է հաճելի բաների մասին լինի: Դե, հիմա արի, այսօրվա Հայաստանի քաղաքական իրավիճակն իմանալու պայմաններում կամ կարճ խոսի, էլ չեմ ասում հաճելի բաների մասին: Դժվարին խնդիր դրեց իմ առջև Պլուտարքոսը: Բայց փորձեմ հաղթահարել: Նախ, խոսենք հաճելի բաների մասին:

Սրտանց շնորհավորում եմ դահլիճում գտնվող կանանց և այստեղ ներկա տղամարդկանց տներում սպասող կանանց անցած մարտի 8-ի առթիվ: *(Դահլիճից՝ շնորհակալություններ):* Կանանց, քույրերին, ովքեր անցած տարիների ընթացքում իրենց ուսերի վրա անտրտունջ տարան 90-ական թվականների բեռն ու լուծը, ցուրտ ու մութ գիշերներին դիմակայեցին, չկոտրվեցին գիշերային թաղումներից, երբեք չկորցրեցին կանացիությունը: Շնորհավորում եմ այն կանանց, հարազատներին կորցրած այն մայրերին, որոնք իրենց վիշտը սպանելով Եռաբլուրից գնում էին հեռուստատեսությամբ ելույթ ունենում և քաջալերում Ղարաբաղում կռվող ազատամարտիկներին: Ես ուզում եմ ամենաջերմ խոսքս ուղղել նաև այն կանանց, ովքեր այսօր էլ պաշտպանում են հայոց երկիրը, հայոց հողը: Չէ՞ որ սահմանամերձ շրջաններում մնացել են, ավա՜ղ, ծերերը և կանայք, որովհետև նրանց որդիները և ամուսինները հարկադրված են եղել գնալ արտագնա աշխատանքների, որ հանապազօրյա հացի վաստակն անեն և ուղարկեն այստեղ: Ես չեմ կարող չշնորհավորել և չողջունել լրագրող այն կանանց, մասնավորապես, մեր Աննա Իսրայելյանին, ովքեր 2004 թ. ապրիլի 5-ին և ապրիլի 12-ին մեզ հետ էին: Ես չեմ կարող չշնորհավորել այն կնոջը, որն ապրիլի 12-ին վիրավորված լինելով, այն էլ

ոտքից, անշարժ վիճակում բղավում էր, խնդրում էր (ոչ թե սեփական անձի անվտանգությունն էր աղերսում), որ ընդդիմության ղեկավարներին փրկեն, փախցնեն ջարդից: Ես շնորհավորում եմ նաև այնտեղ ծեծուջարդ կազմակերպած էդ լկտիների մայրերին, նույնպես, որովհետև նրանք, ավելի, քան որևէ կին, կարեկցանքի կարիք ունեն: Ձեզ հետ աղերսում եմ Տիրոջը, որ դարձի բերի նրանց որդիներին ու ամուսիններին: Ես նաև շնորհավորում եմ այսօրվա իշխանությունների մայրերին, քույրերին, կանանց, որոնք իրենց վարքագծով, լռակյաց վարքագծով, ըստ էության, հիշեցրեցին Եզոպոսի հայտնի թռչնորսի առակը: Երբ վերջինս ուզում էր վայրի աղունիկներ որսալ, դաշտում ցանց էր փռում և ընտանի աղունիկներին կապում էր դրան: Վայրի աղունիկները տեսնում էին իրենց ցեղակիցներին, իսկ ցեղակցից ոչ ոք վտանգ չէր սպասում, թռչում, գալիս էին ցանցերի մեջ էին ընկնում և դառնում որսի զոհը: Թակարդում հայտնված վայրի աղունիկները փորձում էին հասկանալ՝ ի՞նչն էր պատճառը, որ ցեղակիցները դավաճանեցին, վտանգի մասին չզգուշացրեցին իրենց: Ավա՛ղ, ընտանի աղունիկներն խոստովանում էին, որ «մեզ ավելի հեշտ էր ձեզ մատնել, քան մեր տիրոջ՝ թռչնորսի կշտամբանքը լսել»: Այնպես որ, 2004 թ. ապրիլին կոալիցիային, ընտանի աղունիկների օրինակով, ավելի հեշտ էր զոհաբերել իրենց ընդդիմադիր գործընկերներին, մի ամբողջ ազգի, միայն թե հանկարծ թռչնորսը՝ Ռոբերտ Քոչարյանը Սերժ Սարգսյանի հետ հանկարծ իրենց չկշտամբեին: Այսքանը, հաճելի մասով:

Անցնենք խնդրո առարկա հարցերին: Եվ, այսպես, ի՞նչ վիճակում է հիմա Հայաստանը: Հանրապետությունում ստեղծված իրավիճակը բնութագրելու համար Ձեզ հետ մտովի վերադառնանք 2001 թվականը: 2001 թ. ձմռանը ճիշտ այդ նույն Ռամբուեում տեղի ունեցավ հանդիպում Հեյդար Ալիևի և Ռոբերտ Քոչարյանի միջև: Դիվանագիտական նորագույն պատմության մեջ եզակի դեպք էր, երբ բանակցություններն անընդմեջ շարունակվել էին 8 ու կես ժամ՝ ժակ Շիրակ, Հեյդար Ալիև, Ռոբերտ Քոչարյան կազմով: Այդ ընթացքում հնարավոր էր եղել մշակել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման սկզբունքները: Երկու ամիս անց, երբ արդեն նոր էր պաշտոնավարման անցել Ջորջ Բուշ Կրտսերը, նախագահների այդ նույն երկյակն արդեն մեկնեց Ֆլորիդա՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Քի Վեսթ, որտեղ էլ տեղի ունեցավ հաջորդ հանդիպումը՝ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի և պետքարտուղար Քոլին Փաուելի նախաձեռնությամբ: ԱՄՆ-ում ամրագրվեցին մինչ այդ Փարիզում ձեռք բերված պայմանավորվածությունները: Սակայն դրանից հետո երկու նախագահներն էլ խնդրեցին դադար այդ գործընթացի մեջ՝ հիմնավորելով, որ առաջիկայում սպասվում են նախագահական ընտրություններ թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում: Պատճառաբանությունն էլ այն էր, որ ընդունված պայմանավորվածությունները անընդունելի կլինեն Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդների համար, ուստին իրենցից և ոչ ոք չի ընտրվի նախագահ, և բանակցային ողջ գործընթացը հարկադրված կլինեն սկսել զրոյից: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարներն անսացին նախագահների աղաչանքները: Այնուհետև տեղի ունեցան 2003 թ. նախագահական խայտառակ

ընտրությունները, երբ բոլորիս աչքի առաջ ամենաբիրտ կերպով կեղծվեցին դրա արդյունքները: Միջազգային հանրությունը լռեց: Տարակուսեցինք ձեզ հետ. ինչպե՞ս կարող էր ժողովրդավարության ջատագով և իրականում այդպիսին հանդիսացող ԱՄՆ-ն, ականատեսը լինելով բացահայտ օրինազանցություններին և լայնածավալ խախտումներին, սահմանափակվել միայն ու միայն կոշտ հայտարարությամբ՝ հաշվի չառնելով կեղծված ընտրությունների արդյունքները չընդունող և փողոց դուրս եկած հարյուր հազարավոր մարդկանց արդարացի բողոքը: Էլ չասենք, որ ԱՊՀ երկրների դիտորդական առաքելությունն էլ, ինչպես հիշում եք, հանդես էր եկել զեկուցագրով, որի համաձայն մինչ այդ աշխարհում նման արդար ընտրություն չէր եղել: «Ընտրության միջազգային դատավորները» պարզապես գիտակցում էին, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի շահագործումը յոթ սարի հետևում չէ, ուստի անհրաժեշտ է անպայմանորեն կարգավորել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Էս մարդիկ էլ արդեն խոսք էին տվել, որ ստորագրելու և կյանքի են կոչելու Քի Վեսթում ձեռք բերված պայմանավորվածությունները, և միջազգային հանրությունը լռեց: Սակայն հայ ժողովուրդը չհանգստացավ: 2004 թ. գարնանը, ապրիլ ամսին ավելի մեծ ընդվզում տեղի ունեցավ: Օրը ցերեկով ծեծուջարդի ենթարկեցին խաղաղ ցուցարարներին, մարսեցին, բռնարարքների կազմակերպիչներն ու իրականացնողներն էլ մնացին անպատիժ: Իսկ այդ օրվա «հերոսները», դրանից 8-9 ամիս անց «ՏԷՑ-ի կռուգում» արդեն մարդասպանություն կատարեցին, 2 ամիս նստեցին, և որպես «պատիժ» խրախուսվեցին՝ «Համմեր» մեքենա նվեր ստանալով: Եվ այս ամենը դարձյալ նույն միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցիչների աչքերի առաջ: Գիտակցելով սեփական անճների «կարևորությունը» ԼՂՀ հիմնահարցի կարգավորման գործում, հայաստանյան իշխանավորներն արդեն իսկ նոր պայմաններ դրեցին նույն այդ կազմակերպությունների առաջ: Եթե վերջիններս ուզում են լիարժեք լուծումներ տալ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին, ուրեմն պետք է համապատասխան երաշխավորություններ տրվեն Հանրապետության Նախագահին: Նա պետք է լինի անձեռնմխելի: Ռոբերտ Քոչարյանը հասկանում է՝ ի՞նչ է նշանակում ստեղծված իրավիճակում ժողովրդի վզով պարտադրել այն լուծումները, որոնք այսօր սեղանին են դրված իրենց իսկ պարտվողական արտաքին քաղաքականության արդյունքում: Իրեն ապահովագրելու առիթը պարոն Քոչարյանը բաց թողնել չէր կարող. սկսվեց սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի նախապատրաստական աշխատանքը: Դրա ընթացքում միջազգային կառույցների ամենաբարձր պաշտոնյաները եղան Հայաստանի Հանրապետությունում: Մասնավորապես, Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ռենե վան դեր Լինդենը, ԵԱՀԿ ԽՎ նախագահ Էլսի Հաստինգսը: Հայաստան էր ժամանել նաև Եվրոպայի և Եվրասիայի գծով ԱՄՆ-ի պետական քարտուղարի տեղակալ Դենիել Ֆրիդը: Հնարավորություն եմ ունեցել երեքի հետ էլ հանդիպել: Հանդիպումների ընթացքում հարցադրումներից է եղել նաև այն, որ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի նախօրեին ձեռնարկվեն այնպիսի

քայլեր, որ մարդիկ գոնե համոզված լինեն, որ այս իշխանությունները դարձի են գալիս: Որ, իրոք, Հայաստանի Հանրապետությունում էլ կխորանան ժողովրդավարական այն գործընթացները, որոնք անցած տարիների ընթացքում ճնշվել են: Բարձրաստիճան պաշտոնյաներն ասուլիսներում հստակ նշեցին իրենց այն պահանջը, համաձայն որի քաղաքական բոլոր ուժերը պարտադիր կարգով պետք է համապատասխան հեռուստաեթերով ժամեր ունենան: Դրա անհրաժեշտության մասին բազմիցս շեշտել էին նաև Եվրամիության անդամ երկրների Հայաստանում հավատարմագրված դեսպանները, նաև ԱՄՆ-ի դեսպանը: Արդյունքը բոլորդ գիտեք. անգամ իսկ մեկ րոպե եթերաժամանակ չտրվեց «Ազգային Միաբանություն կուսակցությանը»: Գեթ մեկ րոպե: Իսկ մեր մարդիկ, բնականաբար, տրամաբանել կարողանալով, մտածում էին. լավ, էս իշխանություններն առյուծի սի՞րտ են կերել, որ էսքան նախազգուշացումներից հետո էլ արհամարհում են թե՛ եվրոպացիների, թե՛ ամերիկացիների և թե՛ միջազգային կառույցների պահանջները:

Տեղի ունեցավ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն, որը, ինչպես բոլորս գիտենք, աննախադեպ, խայտառակ կամայականությունների դրսևորում էր: Այս պարագայում էլ միջազգային կազմակերպությունները կրկին ու կրկին լռեցին: Ինչո՞ւ, ի՞նչն էր պատճառը: Պատճառն այն էր, որ սահմանադրական փոփոխություններում ամրագրված էր 56-1 հոդվածը, ըստ որի «Հանրապետության նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար»: 81-րդ հոդվածով էլ Ազգային ժողովի իրավասությունների մեջ էր մտցվել միջազգային այն պայմանագրերի վավերացումը, որոնք նախատեսում են պետական սահմանի փոփոխություն: Ակնհայտ է, որ սահմանադրական կարևորագույն այս երկու դրույթները փրկօղակ կդառնային, եթե Ռամբուեում ստորագրվեր առաջարկվող պայմանագիրը: Իսկ ի՞նչ տեղի ունեցավ Ֆրանսիայում: Պարոն Քոչարյանն իրեն՝ վոյինին ներհատուկ կեցվածքով բանակցությունների սրահի դուռը շրխկացնում, պատի ծեփերը թափվում են, և նա, հերոսական կեցվածք ընդունելով, վերադառնում է Հայաստանի Հանրապետություն: «Հաղթարշավը» շարունակվում է. պարոն Քոչարյանը տալիս է իր հանրահայտ ասուլիսը 2 իշխանական և ղարաբաղյան հեռուստաալիքներին, ակնկալելով, որ ժողովուրդն էլ հրես կհիանա: Բայց մինչ այդ կազմակերպվել էր շատ մտահոգիչ մի հանրահավաք: Խոսքը փետրվարի 28-ին իշխանությունների կողմից անտաղանդ ու անշնորհք կերպով կազմակերպված այն բողոքի հանրահավաքի մասին է, որ տեղի ունեցավ Հանրապետության հրապարակում: Ի դեպ, դպրոցականներին, ուսանողներին դեռ մեկ շաբաթ առաջ ասել էին, որ այդ օրը դասեր չեն լինելու, այլ ձեզ բերելու են Հանրապետության հրապարակ ճառեր լսելու: Ճիշտ այն մարդկանց ճառերը, ովքեր պապանձվել էին, լռում էին ապրիլի 12-ի վայրագություններից հետո, ովքեր լռում էին, երբ զոհված ազատամարտիկների ծնողներին, հարազատներին հանում, տնից դուրս էին շպրտում, որովհետև նրանք ի վիճակի չէին եղել լույսի վարձը մուծելու: Արդյունքում իշխանություններն ինչքան էլ ձև անեն, որ ոչ մի բան չի պատահել, հասկացան, որ իրենց

կոչով, իրենց խոսքով, երբեք ու երբեք, ցավով եմ ասում, հիասթափված հայ մարդը չի գնա հրապարակ: Ականատեսը դարձանք, որ նա անգամ տեր չի կանգնի այնպիսի մի սուրբ օրվա հիշատակին, ինչպիսին Սումգայիթի զոհերի տարելիցը անմար պահելու օրն էր, քանի որ դա իշխանություններն էին կազմակերպել: Այսօր թերթերից մեկում կարդացի Արամ Զավենի Սարգսյանի այն շատ նրբին դիտարկումը, ըստ որի Վազգեն Սարգսյանի շիրիմին՝ իր ծննդյան օրը՝ մարտի 5-ին, թվով ավելի շատ ու շատ մարդ էր եկել, քան նախորդ տարիներին: Արամի արած հետևությունը, թերևս, կարելի է վիճարկել: Սակայն ակնհայտ է նաև այն, որ Վազգեն Սարգսյանի շիրիմին վաղուց Քոչարյանն այցի չի գնում, Սերժն էլ վախվորած է գնում: Այ, դրա համար էլ, մարդիկ այդ սուրբ տեղն անցյալում այդչափ շատ չէին այցելում, քանի դեռ իշխանություններն իրենք էին գնում: Ահա սա է մեր դիտարկումը, ահա սա է հետևությունը:

Եվ այս պարագայում, բնականաբար, մտածում ես՝ ի՞նչ անես, ո՞նց անես: Իսկ դրա համար, բացի ներքին իրավիճակի լուրջ վերլուծությունից, դու պարտավոր ես նաև հակառակորդիդ եղած-չեղածը, տնտեսությունը վերլուծես: Ուստի, չալարեցի և ուսումնասիրեցի Ադրբեջանի տնտեսական վիճակը բնութագրող համապատասխան վիճակագրական թվերը: Հիմա այդ թվերը, որ հրապարակեմ, վաղը, մյուս օրը բախտախնդիր մի լրագրող կարող է գրել՝ ազերիների գովքն է անում: Բայց ես ազերիների գովքը չեմ անում, ես տագնապի շեփոր եմ հնչեցնում, որ սրանց չորացած, կարծրացած ուղեղներին տեղ հասնի: Եվ ի՞նչ է փաստում վիճակագրությունը. վերջին 3 տարիների ընթացքում, ամեն տարվա կտրվածքով, Ադրբեջանի Հանրապետության բյուջեն աճել է 70 %-ով: Լեզվի սայթաքում չարեցի կոալիցիոն կոլեգաներիս նման, երբ պատերազմը խաղաղության հետ էին խառնել: 2006 թ. Ադրբեջանի բյուջեն կազմում է ոչ ավել, ոչ պակաս 4 միլիարդ դոլար: Ուրեմն, հայրենյաց կոալիցիան, այս տարվա մեր բյուջեի հաստատման ժամանակ, որ հեռուստաալիքը միացնում էիր, հրճվանքից աքլորականչ, ծուղրուղու էին անում. ժողովո՛ւրդ, ցնծա, 2006 թ. Հայաստանի բյուջեն հատել է 1 միլիարդ դոլարի սահմանը: Ազերիները լուռումունջ՝ 4 միլիարդ դոլարի հասցրեցին իրենց երկրի բյուջեն: Ադրբեջանի տնտեսության նման աճի տեմպերի պահպանման պարագայում 2007 թ. բյուջեն կհասնի արդեն 6 մլրդ 800 մլն դոլարի: Բա, լավ, մի՞թե սա մտահոգվելու հարց չէ: Լավ, այս թվերը, որ ես մեջբերում եմ, ի՞նչ է, դրանով դարձնելու եք ինձ թուրքի բարեկա՞մը: Ճիշտ հակառակը. ես հայ ժողովրդի ճակատագրի համար դարդ քաշող, մտածող մարդ եմ:

Խոսեմ մեկ այլ երևույթի մասին: Իշխանությունները ռազմավարական ընկերությունից, բարեկամությունից են բարբաջում: Առաջիկա 2-3 տարիների ընթացքում ռուսական ընդամենը մեկ ֆիրմա՝ ՌՈՒՍԱԼ-ը, Ադրբեջանում 1 մլրդ դոլարի ներդրումներ է անելու: Մեկ միլիարդ դոլարի: Ռուս-ադրբեջանական առևտրաշրջանառությունն անցյալ տարվա ընթացքում կրկնակի աճել է և կազմում է 1 մլրդ դոլար: Փետրվարի 22-ին Բաքվում Ռուսաստանի տարվա օրերի տոնակատարության ընթացքում պրեզիդենտ Պուտինն իր ելույթում շատ հետաքրքիր և ուշագրավ հայտարարություն կատարեց: Ասածն

այն էր, որ եթե չլիներ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի չլուծված լինելու հանգամանքը, ապա ռուս-ադրբեջանական առևտրաշրջանառությունը կկազմեր ոչ ավել, ոչ պակաս, քան 5 մլրդ դոլար: Դե լավ, հիմա մտածեք՝ ի՞նչ էր ուզում ասել մեր ռազմավարական դաշնակից երկրի և մեր երկրի բարեկամ պրեզիդենտը…

Այսքան ժամանակ, որ ԼՂՀ-ի հիմնահարցի կարգավորումը տեղից չի շարժվում և մեր երկրին էլ չեն նեղում, դա ոչ թե Քոչարյանի, Սերժ Սարգսյանի հնարամտությունների արդյունքն է, այլ այն, որ հայ ժողովրդին են աշխարհում ընդունում, հայ ժողովրդին են սիրում: Ահա սա է գաղտնիքը: Ճիշտ այն հայ ժողովրդին, որին ութ տարի շարունակ բռնաբարում է այս իշխանությունը: Անգամ իսկ այս օրերին փոխանակ մտածեն ազգը միաբանելու, ազգը կոնսոլիդացիայի ենթարկելու մասին, արածներն ի՞նչ է: Արածներն այն է, որ Րաֆֆի Հովհաննիսյանի կուսակցության գրասենյակն են փակում: Ի դեպ, առիթն օգտագործելով ուզում եմ նաև նրա տիկնոջ՝ Արմինե Հովհաննիսյանի մարտի 8-ն էլ շնորհավորել, որը նույնպես հալածանքի է ենթարկվում: «Հանցանքն» էլ ո՞րն է. շնորհք է ունեցել, դրսից գրանտներ է բերել, որ մեր դպրոցների հասարակագիտական առարկաներ դասավանդող բարձր դասարանի ուսուցիչների վերապատրաստման հարցը կարգավորեն: Տղերքը պարապ են մնացել, գործ են գտել: Էլ ի՞նչ են անում. Արամ Կարապետյանի ճամպրուկներն են դատարկում: Հա, լավ, ի՞նչ եք ման գալիս, կարո՞ղ է Փարաքարը փակելու բանալին եք փնտրում: *(Ծիծաղ դահլիճում, ծափահարություններ):* Արամը դա հո ի նկատի չուներ, նա ի նկատի ուներ, որ ժողովրդին հասցրել եք էն վիճակի, որ չեն թողնելու անգամ իսկ փախնեք: Իշխանություններն այդ զգուշացումից ճիշտ հետևություն են արել: Դրա համար էլ «Միկա Արմենիան» հիմա «Արմավիայում» մի երկու հերթապահ ինքնաթիռ է պահում: Այլ բան չես էլ մտածի. մի օր թռնում են, մի ամիս գովազդում են, որ կանանց համար տոմսերը 25%-ով էժանացնելու են: Սա էլ նոր հնարք է. գոյություն չունեցող չվերթների տոմսի էժանացնելը ի՞նչ մեղքս էր, ես չեմ հասկանում: *(Ծիծաղ, աշխուժություն դահլիճում):*

Փորձենք Ձեզ հետ խորհել, թե ի՞նչ է մեզ սպասում առաջիկայում: Այն, որ միջազգային կազմակերպությունները և դրանց հետևում կանգնած երկրները չեն ներելու իշխանությունների խաբեությունն, օրեցօր ակնհայտ է դառնում: Փաստ է, որ 2004 թ. գարնանը Պրահայում ձեռք բերված պայմանավորվածությունները, այն է՝ Մամեդյարովի և Օսկանյանի միջև, և պրահյան հայտնի սկզբունքները, որոնք ամրագրվել էին մեկ տարի հետո՝ 2005 թ. արդեն Վարշավայում ԵԱՀԿ երկրների գագաթնաժողովի ժամանակ Քոչարյան - Ալիև Կրտսերի կողմից, Ռամբուեում իրենց տրամաբանական ավարտին չհանգեցին: Իսկ ինչո՞ւ: Է, որովհետև Հայաստանն ամերիկացիներին մի բան է խոստացել, Ռուսաստանին՝ մեկ այլ բան, Եվրամիությանը՝ մեկ ուրիշ: Պարսկաստանին՝ մեր հարևան Իրանին էլ տրամագծորեն այլ բան է խոստացել: Եվ հիմա, ուզեն, թե չուզեն, այդ տրված խոստումների կատարումից խուսափել չեն կարող սեփական դեմքը փրկելու համար: Հետո էլ նաև լսեցնել են տալիս, որ երբ ԼՂՀ-ի շուրջ համաձայնագիրը ստորագրվի, միայն դրանից հետո խաղաղարար ուժերը կգան: Իսկ դրանք ու՞ր են գալու: Խաղաղարար ուժերը

գալու են տեղաբաշխվեն ճիշտ Արաքս գետի երկայնքով: Եվ լավ է, որ գալու են, թե չէ սրանց վրա հույս դնելու չէ: Այս իշխանությունների օրոք միայն խաղաղարար ուժերը կայուն անվտանգության երաշխիք կարող են հանդիսանալ: Իսկ Իրանին տված նրանց խոստումնե՞րը: Չէ՞ որ աշխարհաքաղաքական ստեղծված այս ծայրաստիճան բարդ իրավիճակում Իրանը գիտակցում է՝ ինչ է նշանակում, որ իր սահմանի երկայնքով տեղակայվեն խաղաղարար ուժեր: Բա, լավ, ինչպե՞ս կարելի էր արտաքին քաղաքականության ողրտը դարձնել «ղումար»: Ինչպե՞ս կարելի էր, ըստ էության, երկիրը դնելով «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» կարգավիճակում, մինչ օրս չունենալ ազգային անվտանգության հայեցակարգ: Եկեք տեսեք, որ հիմա, վերջերս, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշներն են հրապարակ իջեցրել, մեր հարգարժան Աննա Իսրայելյանն էլ, Նաիրա Զոհրաբյանի հետ «Առավոտ» և «Հայկական ժամանակ» թերթերում ծանոթացնում են, թե ինչ լավ բաներ են դրանում գրված: Է, հա, ես էլ կարդացի: Գրված է, որ պետք է պաշտպանվեն մարդու իրավունքներն ու ազատությունները: Է, պաշտպանեիք, դրա համար ի՞նչ անվտանգության ռազմավարություն էր պետք: Ի՞նչ, կարո՞ղ է մարդու իրավունք եք դուք պաշտպանելու: Պաշտպանող եք՝ գնայիք գոնե կանանց պաշտպանեիք: Սրտներս մղկտում էր, որ Բուզանդի փողոցի նախկին բնակիչ կանայք մարտի 8-ի օրով նստած էին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի առաջ: Ուզածներն էլ այն էր, որ իրենցից շորթած գումարները կարողանան հետ վերցնել: Պաշտպանեիք: Ի՞նչ, որ Ամերիկա ու Ռուսաստան եք ուղարկում այդ ուղենիշները փորձաքննության, դրանց պատասխանը պետք է ստանաք, որ նո՞ր պաշտպանեք: Գրում են նաև, որ կոռուպցիայի դեմ պայքարը ուժեղացվելու է, որովհետև դրա առկայությունը մեծապես թուլացնում է մեր երկրի ազգային անվտանգությունը: Մալադե՜ց: Ալիկ Կարապետյանը Ազգային ժողովի ամբիոնից մեկիկ-մեկիկ թվարկեց կոռուպցիայի աղբյուրները: Մասնավորապես, հիշատակեց Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի սեփականաշնորհման փաստը, երբ 132 միլիոնով սեփականաշնորհվել է այն ձեռնարկությունը, որը 110 միլիոնի չափով տարեկան եկամուտ ուներ: Հիմա էլ գլուխ են գովում, ասում են՝ առաջիկա 3-5 տարիների ընթացքում 152 միլիոնի ներդրում են անելու: Այ մարդ, ձե՞ռ եք առնում. կոմբինատի մաքուր եկամուտներից այդ ներդրումները հնարավոր էր 2 տարում էլ անել: Ո՞ւմ եք խաբում, ո՞ւմ աչքերին եք թոզ փչում: Բա, լավ, մի՞թե կարելի է այսքան խաբեբա լինել:

Դե, լավ, որ մի քիչ լիցքաթափվենք, պատմեմ Եզոպոսի հայտնի առակը: Առյուծն ու էշը գնում են որսի, այծի որսի: Պայմանավորվում են, որ այծերին քշեն քարանձավ, հետո էշը քարանձավում պետք է զռռար: Առյուծը մտածում էր, որ այծերը էշի զռռոցից լեղապատառ դուրս կպրծնեն, ինքն էլ կորսա: Այդպես էլ անում են: Էշն էլ ոգևորված, որ առյուծի հետ որսի է գնացել, քարանձավում մի զռռալ է զռռում, որ գնա, գալիս եմ: Այծերը սարսափահար փախչում են, առյուծն էլ դրսում բոլորին հանգիստ բռնում է: Էշը գալիս է, պարծենում. է, լավ որս արեցինք, չէ՞: Առյուծն էլ, դե թագավոր է, արդարասեր է, պատասխանում է. գիտե՞ս, հո չէիր զռռում, ես էլ կվախենայի, եթե չիմանայի, որ զռռացողը

էշ է: Հիմա սրանցն է, ինչ ուզում եք գրեք, քանի որ դուք եք հեղինակը, ձեզ հավատացող չկա, միևնույն է, սուտ է: *(Բուռն, երկարատև ծափահարություններ):*

Սիրելի ժողովուրդ, ինձ շատ և շատ մտահոգում է այն, որ անգամ իսկ այնպիսի լուրջ հարցի կապակցությամբ, ինչպիսին է պատերազմի և խաղաղության խնդիրը, այսօր տեսնում ենք վտանգավոր դրսևորումներ ու զարգացումներ: Որո՞նք են դրանք: Ռ. Քոչարյանի հայտնի հարցազրույցից հետո կոալիցիայի անդամ կուսակցությունների լիդերներից մեկն ասում է, որ, այո, դա համարժեք պատասխան էր ազերիներին, մյուսն էլ, թե դա պատերազմի մարտահրավեր էր: Եթե վերլուծենք, թե ի՞նչ է սա ցուցանում, ապա կեզրակացնենք, որ սա նշանակում է. անգամ իսկ փորձությունների այս վտանգավոր փուլում իշխանությունները չունեն մշակված ոչ մարտավարություն, ոչ էլ ռազմավարություն: Իսկ եթե դրանք չկան նման իրավիճակում, ապա երկիրը դատապարտված է պարտության: Եվ փոխանակ նստեն, այս բոլոր հարցերի մասին խորհեն, մտածեն, խորհրդակցեն և, որն ամենակարևորն է, համապատասխան լուծումներ առաջարկեն, յուրաքանչյուրը միայն մտածում է իր գովազդի մասին: Ընդդիմության առաջ էլ ինչպես փակ էին հեռուստալրատվամիջոցների դռները, այնպես էլ շարունակվում են փակ մնալ: Այդ տեսանկյունից, երբ փորձում եմ վերլուծել, թե ինչ տեղի ունեցավ, մասնավորապես իմ ելույթների ճակատագրի հետ, շատ ծանր եզրահանգման եմ գալիս: Անցած մեկուկես տարվա ընթացքում 6 անգամ հնարավորություն է ստեղծվել ելույթով հանդես գալ Ստրասբուրգում Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ամբիոնից, 3 անգամ էլ ելույթ եմ ունեցել ԵԱՀԿ ԽՎ ամբիոնից: Եվ, ի՞նչ եք կարծում, ամեն ելույթիցս հետո, երբ տեսնում էի թուրք կամ ազերիներին, մտածում էի, որ եթե սրանց ձեռը ճար լիներ, բառիս իսկական առումով, սիրտս կերել էին: Եվ, հանկարծ, 2 օր առաջ ստահակների թերթը հեգնելով գրում է, որ Գեղամյանը 2-3 րոպե էր խոսել ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստում… Հեգնանքի են ենթարկում Վիեննայում հնչեցրած խոսքս ճիշտ այն նույն ոճով, ինչպես թուրքական կամ ադրբեջանական լրատվամիջոցները: Մարդ ես, մտածում ես, այդ ինչպե՞ս է լինում, երբ այնտեղ կռիվ ես տալիս Արցախի համար, իսկ այստեղ ելույթներս անգամ արցախյան ոչ մի թերթում և Արցախի հեռուստատեսությամբ ոչ տպագրվում են և ոչ էլ հեռարձակվում: Լավ, ինչպե՞ս բացատրենք սա, ինչպե՞ս հասկանանք, որ ամենաանհեթեթ հրապարակումները լինում են բյուջեից և իշխանավորներից սնվող հայաստանյան թերթերում ու բյուջեից սնվող հեռուստաալիքում: Ինչպե՞ս հասկանանք դա: Անգամ իսկ անկուսակցական մարդիկ առաջարկում են, թե ասա՝ ի՞նչ անենք, թեկուզ ամենամեծ գումարը տանք, միայն ելույթներդ եթեր արձակվեն, որովհետև ժողովրդի ոգին կբարձրանա: Բայց ոչ, ելույթներիս վրա արգելք է դրված: Այո, արգելք են դրել, որովհետև իրենք Արցախի արդար, միամիտ ժողովրդին համոզել են, որ եթե Երևանում չլինեն Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը, «էրևանցիք կծախեն Արցախը»: Արցախն արդեն իսկ Ռոբերտն ու Սերժն են ծախել, երբ հանդուրժեցին, որ իրենց հարազատները Կալիֆոռնիայում շենքեր կառուցեն: Անտուն սևամորթների կամ մեքսիկների համար, եկեք տեսեք, որ տղերքը բարեգործություն են

անում, շենքեր են կառուցում, ինչի մասին թերթում էլ հարցազրույցներ են տալիս: *(Ծափահարություններ):*

Հիմա էլ նոր բան մոգոնեցին. մեր հարգելի Նաիրա Զոհրաբյանը հարցազրույց էր ունեցել Հանրային հեռուստատեսության խորհրդի նախագահ Ալեքսան Հարությունյանի հետ: Մեկ էլ հանկարծ վերջինս ասում է, որ Եվրոպական հեռարձակողների միությունը հանդես է եկել համապատասխան գրությամբ՝ իրենց իրավաբանական դեպարտամենտի ղեկավարի ստորագրությամբ: Ըստ այդմ, Հ1-ով 3 շաբաթը մեկ Ազգային ժողովում հնչած հայտարարությունների հեռարձակումը, պարզվում է, խոսքի ազատության ոտնահարում է: Ավելին էլ է ասում. ամեն կիրակի 45 րոպե Հ1-ով հեռարձակվող «Խորհրդարանական շաբաթը» նույնպես խոսքի ազատության ոտնահարում է: Է, լավ, խելքներիդ ճյուն գա, մի ձեզ հարց տվեք, էդ ԱԺ ասածը, անգամ ընտրակեղծիքների պարագայում, չէ՞ որ ոչ բարովխերով հայ ժողովրդի հավաքական ընտրանին է: Դա է, չէ՞: Ստացվում է, իշխանություններն անգամ 6 րոպե հեռուստաեթերից են սարսափում: Ինչո՞ւ եմ ասում՝ 6 րոպե. 3 րոպե «Արդարություն» դաշինքի գործընկերների հայտարարություններից, 3 րոպե էլ «Ազգային Միաբանության»: Բա, այ եվրոպացի հեռարձակողների միություն, էն որ 1 րոպե անգամ և ոչ մի հեռուստաալիք արդեն տարուց ավել է ուղիղ եթեր չի տրամադրել, մասնավորապես ինձ, բա էդ ինչի՞ եք լռում, ասես, էշի ականջին քնել եք: Ինչի՞ էիք էշի ականջին քնած մնացել, երբ սահմանադրական փոփոխությունների ընդունումից անմիջապես հետո կոպտորեն ոտնահարվեց նոր, փոփոխված Սահմանադրության մայր պահանջը: Չէ՞ որ Սահմանադրությունում պարզորոշ նշված է, որ որոշակի հարցերում ԱԺ-ն ունի ինքնուրույն գործելու իրավունք: Խոսքը, մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի ընտրության իրավունքի մասին է:

Մի երկու անգամ արդեն էշի անուն տվեցի: Հետևեմ Պլուտարքոսի խորհրդին, խոսեմ հաճելի բաների մասին: Եվ, այսպես, պատկերացրեք, որ էս կոալիցիան գնում է շուկայից ավանակ առնի: Գնում են ավանակին, բայց վաճառողի առաջ պայման են դնում, որ մի երկու օր փորձաշրջանում լինի էշը: Հետո նոր կասեն՝ առնո՞ւմ են, թե՞ չեն առնում: Վաճառողն էլ համաձայնում է, որովհետև շատ մեծ գին է պահանջած լինում էդ ավանակի համար: Էշին բերում, բաց են թողնում ախոռում: Էս ավանակն էլ գնում, ախոռում եղած 10-15 ավանակներից ամենաշատակերի ու ամենածույլի կողքն է կանգնում: Դա տեսնելով, գնորդն էլ մտածում է. այ մարդ, չէ, սրան տանեմ, հետ տամ, որովհետև նմանը զնմանին կծգե: Տանում, հետ է տալիս: Ո՞րն է էս առակի իմաստը: Ինչպես տարած ու հետ բերած էշը իր էությամբ ի սկզբանե դատապարտված էր ծույլ և շատակեր լինել, այնպես էլ այս իշխանությունների օրոք ցանկացած Սահմանադրություն դատապարտված է ոտնահարման: Ահա սրանք են սրանց բնութագրող գործերը:

Հիմա ես փորձեմ առակից անցնել Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելություններին առնչվող մի քանի հարցերի: Մասնավորապես, դիմում եմ Եվրախորհրդի գլխավոր քարտուղարի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ հարգելի Բոյանա Ուռումովային, դիմում եմ նաև ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի

տնօրեն Վլադիմիր Պրյախինին: Ես խնդրում եմ, որ դուք Եվրոպական հեռարձակողների միության ներկայացուցիչներին հուշեք, որ արդեն իսկ իրենց այդ վերը հիշատակված գրությունով նրանք հեղինակազրկում են այդ կառույցը: Հեղինակազրկում են այն պարզ պատճառով, որովհետև հայ հասարակությունը այդ միության գոյության մասին ոչ մի տեղեկություն չի ունեցել նույնիսկ այն ժամանակ, երբ ընդդիմությանն ընդհանրապես զրկել էին ձայնի իրավունքից: Մենք բացարձակապես չզգացինք, որ նման կազմակերպություն կա, երբ 2003 թ. մայիսի 23-ից հետո, մասնավորապես ես զրկված եմ եղել Հանրային հեռուստատեսությամբ ելույթ ունենալու հնարավորությունից: Լավ, բա ո՞ւր էր այդքան ժամանակ Եվրոպական հեռարձակողների միությունը: Հիմա նրանց միջոցով 6 րոպե եթերաժամանակից էլ են ուզում զրկել ընդդիմությանը: Տղերքը եվրոպաներում գործ են արել: Ես զարմանում եմ Ալեքսան Հարությունյանի վրա. Տաթևիկ ջան (Ա. Գեղամյանը դիմում է դահլիճում գտնվող «Հայլուրի» թղթակից Տաթևիկ Նալբանդյանին.- *խմբ.*), էս մասը, որ հիմա ասելու եմ, տեսագրի, առանց աղավաղելու իրեն փոխանցի: Ալիկը վտանգը զգացող մարդ է, բա չի՞ զգում, որ իշխանափոխություն է լինելու: Ինչո՞ւ է այդպես վարվում: Թող կանգնի ու տղամարդավարի ասի. «Չէ, Գեղամյանին ուղիղ եթեր եմ հրավիրելու, էլ չեմ լսելու՝ ինչ է ասում ինձ Արմեն Գևորգյանը, Սերժ Սարգսյանը, Ռոբերտ Քոչարյանը»: Էդ ժամանակ Ալիկը մեր գլխի վրա էլ տեղ կունենա, հանգիստ կքնի հին ու նոր իշխանությունների պարագայում: Էլ չեմ նշում, որ եվրոպացիներն էլ կասեն. «Մալադեց, Ալի՛կ, նոր համոզվեցինք, որ դու իրականում ժողովրդավար ես»: Այլապես, այսպես չի կարելի շարունակել:

Պլուտարքոսի պատգամը վերստին կատարեմ, հաճելի բաներից խոսեմ: Կարծիք կա, որ բորենիները տարին մեկ անգամ սեռը փոխելու հատկություն ունեն. մեկ որձ են լինում, մեկ՝ էգ: Ութ տարի է, ինչ մեր ժողովուրդը բռնաբարվում է այս «որձ իշխանությունների» կողմից: Բայց մեկ է, թող իմանան, որ բորենիների նման իրենց տեղն էլ է փոխվելու: Այդ ժամանակ պատկերացնո՞ւմ եք իշխանությունների վիճակը: *(Ծափահարություններ):*

Ելույթ ունենալուց առաջ ինձ գործընկերներս հուշեցին. «Չծավալվես, որ հարցերին ավելի շատ ժամանակ հատկացնելու հնարավորություն լինի»: Ավարտելով խոսքս՝ հիշեմ արդեն Էլեոնորա Ռուզվելտին կամ Մահատմա Գանդիին: Երկուսն էլ գրեթե նույն մտքերն են հայտնել դեռ անցյալ դարի 30-ական թվականների վերջին: Որոնք են դրանք. «Ոչ ոք չի կարող ձեզ ցավ պատճառել առանց ձեր համաձայնության» և «Մեզ հնարավոր չէ զրկել ինքնահարգանքից, եթե մենք՝ ինքներս, դա չթույլատրենք»:

Սիրելի ժողովուրդ, համոզված լինենք, որ մենք ենք այսքան ժամանակ հանդուրժել, այսքան ժամանակ թույլ տվել, որ ընդամենը երկու հոգի և իրենց «ընտանի աղունիկները» կարողանան մեր ազգին նվաստացնել, խոհեմ, աշխատասեր ժողովրդին թչնորսի ցանցերը գցել: Եվ, բնականաբար, մտածում ես, թե ստեղծված վիճակից դուրս գալու ելքեր կա՞ն: Իհարկե, կան, և խնդիրը միայն այն է, որ գիտակցենք. իշխանափոխություն ասածն իրապես հաղթական է, եթե անարյուն է լինում:

Վերջերս ընթերցեցի շատ հետաքրքիր մի գիրք, մի աշխատություն. դա ամերիկացի Սթիվեն Կովիի հանրահայտ բեստսելլերն էր՝ «Բարձր էֆեկտիվություն ունեցող մարդկանց 7 հմտությունները» վերնագրով: Ընդամենը 7 խորհուրդ, որոնց եթե հետևում ես, ապա պարտադիր հաղթանակում ես թե՛ անձնապես, և՛ թե հասարակությունն է հաղթում: Եվ աշխատության հիմքում առաջին հմտությունը, որ նշում է Սթիվեն Կովին, դա համակողմանի ակտիվություն հանդես բերելն է այն գիտակցումով, որ մեր ճակատագիրը մեր իսկ ձեռքերում է: Ասել կուզի, որ մենք մեր դժգոհությունները ոչ թե տանը, խոհանոցներում, բակերում հայտնենք, այլ հարկ եղած դեպքում դուրս գանք հրապարակ և մինչև վերջ կանգնենք: Որ մենք նաև հասկանանք. այո, այսօր Հայաստանը չի բռնկվում ներսից, այո, այսօր Հայաստանում հեղափոխություն չի լինում ոչ թե այն պատճառով, որ ժողովուրդը համակերպվել է իրավիճակին, ոչ թե նրա համար, որ մեզանում քաղաքական կամքն է պակասում: Պարզապես ճշմարտությունն այն է, որ մարդիկ հասկանում են՝ դրսից էլ վտանգ կա: Ահա հենց սրա վրա են խաղում արդեն 8 տարի շարունակ այս իշխանությունները՝ շանտաժի ենթարկելով մի ամբողջ ազգի: Ուստի, օգտագործելով ընձեռած հնարավորությունը, դիմելով միջազգային ներկայացուցչություններին՝ ուզում եմ վերստին նշել. այս իշխանությունների օրոք Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի արդարացի ու խաղաղ լուծում մի ակնկալեք և վերջ տվեք իշխանությունների անօրինականությունները չտեսնել տալուց: Մի ակնկալեք դրական լուծումներ ԼՂՀ-ի հարցում այն պարզ պատճառով, որովհետև դեռ 1998 թ. իրականացնելով հեղաշրջում՝ նրանք մեծ-մեծ խոստումներ էին տվել մեր ազգին, որ կա ավելի լավ լուծում, քան առաջարկվում էր, դա 7 սարերի հետևում չէ: Անցել է արդեն 8 տարի: Տարեցտարի զգում ենք, որ վիճակն էլ ավելի է վատթարանում, տարեցտարի ականատես ենք դառնում, որ եթե դրսից 1 միլիարդ 200 միլիոն դոլարի օգնություն չգա Հայաստան մեր բարեկամներից, մեր հարազատներից, ովքեր դեգերելով օտարության մեջ հանապազօրյա հացի փող են մեզ ուղարկում, ապա Հայաստանի բնակչությունը սովամահ կլինի:

Ըստ Սթիվեն Կովիի, երկրորդ և երրորդ հմտություններն են. սկսենք մեր պայքարը, երբ պատկերացնում ենք վերջնական նպատակը, և նախապես կատարենք այն քայլերը, որոնք առաջնային են: Ազգային հեռահար նպատակներին հասնելու միջոցը ազգային միաբանությունն է, խոսքը ոչ թե կուսակցության մասին է, այլ հայ ժողովրդի, հայ ազգի միաբան լինելու: Հիմա ես խոսքս ավելի շատ ուղղում եմ կոալիցիային և իշխանամետ խումբ-խմբակցություններին, որոնք իրենց լռակյաց համաձայնությամբ սատարում էին երկիրն անդունդի եզրը հասցրած Ռ.Քոչարյանին ու Ս.Սարգսյանին: Չէ՞ որ կոալիցիայի, իշխանամետների մեջ քիչ չեն մարդիկ, ովքեր կարող են արծիվ լինել, բայց, չգիտես ինչու, չեն հավատում իրենց սեփական ուժերին, գնացել են ու գող կաչաղակների կողքը կանգնել:

Սիրելի ժողովուրդ, կարծում եմ, որ այն, ինչ մեզ վերջին տարիներին խոչընդոտում էր, այլևս արգելք չի կարող լինել: Իսկ մեզ խոչընդոտում էր այն, որ միջազգային հանրությունը՝ լինի դա Մինսկի խմբի համանախագահողները, թե Եվրամիությունը, լինի

դա Ռուսաստանի Դաշնությունը, թե ԱՄՆ-ն, ասես թե հայտնվել էին մոլորության մեջ: Որովհետև եթե չլիներ նրանց լռակյաց համաձայնությունը, չէր լինի 2003 թ. նախագահական խայտառակ ընտրությունը, չէին լինի ԱԺ նույնպես կեղծված ընտրությունները, և երբեք ու երբեք անպատիժ չէին մնա 2004 թ. ապրիլի 5-ի, 12-ի ծեծուջարդերի կազմակերպիչները: Եվ, վերջապես, չէր լինի 2005 թ. նոյեմբերի 27-ի պղծված հանրաքվեն: Ու եթե մեր ժողովրդի աչքերը վաղուց էին բացվել, հիմա արդեն, հուսանք, միջազգային հանրության աչքերը նույնպես բացվել են, և նրանք, բացի Ռոբերտից ու Սերժից, կտեսնեն ողջ հայ ժողովրդին: *(Բուռն ծափահարություններ):*

«Իրավունք», 17-23.III.2006:

Մի ամբողջ ազգ չի ընդունում ձեզ, ճամուսով, պատվով հեռացեք

Դրսից՝ սիրելուց,
Ներսից՝ ատելուց,
Կամքերի վրա բիրտ բռնանալուց…
Դուք ինչպե՞ս պիտի, այդ ի՞նչ հրաշքով
Կերտեք ապագա արժանապատիվ…

Սիլվա Կապուտիկյան

«Ապագայամետ բարեկամներիս»
բանաստեղծությունից
13 դեկտեմբերի 2002 թ.

Սիրելի ընթերցող, ինչպես և խոստացել էինք, Ձեզ ենք ներկայացնում մարտի 10-ին «Ազգային Միաբանություն կուսակցության» կոնֆերանսում Արտաշես Գեղամյանի ելույթից հետո նրան ուղղված հարցերը և դրանց պատասխանները:

– Արտաշես Մամիկոնովիչ, այնուամենայնիվ, եթե Ադրբեջանի հետ պատերազմ սկսվի, ինչպիսի՞ն է լինելու մեր կուսակցության դիրքորոշումը:

– Հարցը շատ արդիական է և, իրոք, մտորելու տեղիք է տալիս: Պատերազմի սահմանումը, թերևս, շատ դիպուկ ձևակերպել է պրուսական բանակի գեներալ, ռազմական գիտությունների խոշոր տեսաբան Կարլ Կլաուզևիցը: Նա ասել է. «Պատերազմը քաղաքականության շարունակությունն է զենքի ուժով»: Աստված մի արասցե, եթե պատերազմ սկսվի, կնշանակի, որ դրա պատճառները ոչ թե հայ ժողովրդի ռազմատենչ լինելով են պայմանավորված, այլ այսօրվա իշխանությունների վարած արատավոր, պարտության դատապարտված քաղաքականության արդյունք են: Կարևորենք նաև այն, որ այս իշխանությունները հասկանում են, որ հատուցման պահն եկել է, որ ժողովուրդն այլևս չի հաշտվի իր ստրկական վիճակի հետ, ըստ որում, թե Հայաստանում և թե Արցախում կհամախմբվի և՛ սեփական երկիրն ու հողը պաշտպանելու, և՛ այս իշխանություններից ձերբազատվելու գաղափարի շուրջ: Այնուամենայնիվ, եթե պատերազմ լինի, ի՞նչ պետք է անենք. թուրք-ազերիներին պետք է հաղթենք, ռազմաճակատից վերադառնանք՝ սրանց էլ քշենք: Սա պետք է լինի մեր դիրքորոշումը:

– Իշխանությունները մեծ-մեծ խոսում են մեր երկրի անվտանգության, տարածաշրջանում ամենազորեղ բանակ ունենալու մասին: Այնինչ, սահմանամերձ գյուղերը գնալով դատարկվում են, երիտասարդները չեն ամուսնանում, որովհետև աշխատանք չունեն, տուն չունեն, պայմաններ չունեն: Շատ գյուղերում մահը գերազանցում է ծնունդը: Մի՞թե այս իշխանությունները չեն գիտակցում, որ իրենք սպիտակ եղեռն են իրականացնում մեր ժողովրդի նկատմամբ:

– Այս հարցին վերաբերող պատասխանները, բոլոր վերլուծություններն «Ազգային Միաբանությունը» ունի: Ես կարող եմ, այո, որոշ բաներ հիմա հրապարակել, բայց շատ բաներ հնչեցնելուց ձեռնպահ կմնամ, որովհետև դա մեծագույն նվեր կլինի ադրբեջանական և թուրքական հատուկ ծառայությունների համար: Բայց ցավն այն է, որ երբ որևէ լրատվամիջոց քաղաքացիական արիություն է իր մեջ գտնում և իր պարտքն է կատարում, այն է՝ հրապարակ է հանում երկրի պաշտպանության համար խոցելի տեղերը, բացերը, որոնց առկայությունը թուլացնում է ազգային անվտանգությունը, մի տեսեք՝ գլխներին ի՞նչ են բերում: Ասում են՝ ազերիների, թուրքերի հայալեզու թերթ է: Տնաշեններ, հիմա ազերիների թերթը ո՞րն է, էդ բացերի մասին նախազգուշացնողը, տագնապի շեփոր հնչեցնողը, թե այդ ամենը տեսնողն ու հիվանդությունը ներս քցողը, իրավիճակն էլ երկրում վարդագույն ներկայացնողը: Առաջին անգամ եմ լսում, որ դիագնոզ դնողին, հիվանդությունն ախտորոշողին են մեղադրում, փոխանակ հիվանդացնողին մեղադրեն: Եվ դա է պատճառներից մեկը, որ համոզված ասում ենք. այ մարդիկ, հասկացեք վերջապես, դուք ձեր տեղում չեք և վաղուց սպառել եք ձեզ: Ալան-թալանն արել եք, Կալիֆոռնիայում էլ շենքեր եք կառուցում: Ի՞նչն է ձեզ խանգարում, վերջին երկու հարկերի անուններն էլ «պենտհաուզ» դրեք, որ ձեզ լավ զգաք, գնացեք և այնտեղ էլ ապրեք: Գնացեք, էս մեր ժողովուրդն իր գլխի ճարը կտեսնի առանց ձեզ և կտեսնի փայլուն, փառահեղ ձևով: *(Ծափահարություններ):*

– Գարունը մտել է իր իրավունքների մեջ, սակայն գյուղացին պատրաստ չէ գարնան գյուղատնտեսական աշխատանքներին: Վառելանյութը գնալով թանկանում է, մարդիկ սերմացու չունեն, վարուցանի փող չունեն, պարարտանյութ չունեն: Օգտվելով մարդկանց անպաշտպանվածությունից ու չքավորությունից՝ ամեն գյուղում իշխանությունների դրածոներն են գերշահույթներ ստանում: Գյուղացու համար չկա պետություն, չկա գյուղնախարարություն: Եթե դրանք գյուղում հարց չեն լուծելու, ավելորդ չե՞ք համարում դրանց գոյությունը:

– Հարցը տեղին է, ցավոք սրտի, ճիշտ է ասված: Ականջիցս մտաբերում եմ հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարի թեժ տարիները: Անցյալ դարի 40-ական թվականներին Մահատմա Գանդիին մեղադրում էին, որ նա ռազմատենչ, հեղափոխական կոչերով հանդես չէր գալիս: Իսկ ի՞նչ էր անում նա. պարզապես տարվա 12 ամիսը շրջում էր Հնդկաստանով մեկ և հանդիպումներ ունենում գյուղացիների հետ՝ բրնձի դաշտերում: Եվ գյուղ առ գյուղ, նահանգ առ նահանգ հանդիպելով նրանց՝ Գանդին պայմանավորվում էր ընդամենը մի խնդրի շուրջ, այն է, որ երբ կգա օրը, իր կոչով 300 միլիոն հնդիկները

(այն ժամանակ 300 միլիոն էին, հիմա է, որ 1 միլիարդից անցել են) կհայտարարեն համազգային անհնազանդություն, որով էլ կաթվածահար կանեն գաղութատերերի գործունեությունը: Ժողովուրդը հավատաց նրան, անսաց նրա հորդորները, և առանց մի փամփուշտ արձակելու Հնդկաստանն ազատագրվեց բրիտանական գաղութատիրությունից: Այ, հիմա, մենք էլ անպայման գյուղ առ գյուղ պետք է գնանք, խոսենք մեր ժողովրդի հետ, խորհրդակցենք, բացատրենք, որ հայ գյուղացին հանկարծ չմտածի, որ իր փոխարեն Երևանում ինչ-որ խելոքներ պետք է հեղափոխություն անեն, և վիճակը բարելավեն: Չկարծեն, որ կյանքը լավացնելն այս կամ այն կուսակցության մենաշնորհն է, դա բոլորիս գործն ու սրբազան պարտքն է: Կկանգնե՞նք ազգովի մի մարդու նման, կկարողանա՞նք հնդիկների նման համախմբված, միաբանված ազգային անհնազանդության համազգային դրսևորում ցուցաբերել, այդ ժամանակ, իմացեք, կհաղթենք, համոզված եղեք, պարարտանյութն էլ կլինի, սերմացուն էլ, դիզելային վառելիքն էլ: *(Ծափահարություններ):*

– Երևանում, ամենուր հայերիս անհարիր՝ վատ, բացասական բարքերի ենք հանդիպում (մարմնավաճառություն, գողություն ու ավազակություն, մարդասպանություն, ինքնասպանություն և այլն): Ժողովուրդն արագացված տեմպերով բարոյալքվում է: Ի՞նչ է լինելու սրա վերջը:

– Արդեն ասացի, թե ինչ է լինելու վերջը. քշելու ենք սրանց: *(Ծիծաղ, ծափահարություններ):*

– Պարոն Գեղամյան, 2003 թ. նախագահական և Ազգային ժողովի ընտրությունները խայտառակ կեղծվեցին: Այն ժամանակ դուք մեզ դիմեցիք, որ հանուն Ղարաբաղի հարցի հայանպաստ լուծման երկրի կայունությունը չխաթարենք: Փաստորեն, այժմ ոչ Ղարաբաղի հարցը հայանպաստ լուծվեց, ոչ էլ այս իշխանություններն օրինապաշտ դարձան, մի բան էլ ավելի լկտիացան: Հույսեր ունենա՞նք, որ 2007 թ. Ազգային ժողովի ընտրություններն կկազմակերպվեն ազատ ու արդար:

– 2003 թ. տարածաշրջանում ստեղծված վիճակը, էլ չասեմ աշխարհաքաղաքական զգալի փոփոխությունների մասին, արմատապես տարբերվում է 2006, կարծում եմ, առավել ևս 2007 թվականներից: Արդեն իսկ կարելի է համարձակորեն ասել, որ միջազգային հանրությունը, մասնավորապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրները համոզվել են, որ այնպիսի մի բարդ հարց, ինչպիսին է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման խնդիրը, ի զորու են լուծելու միայն և միայն քաղաքական այն գործիչները, քաղաքական այն ուժերը, ովքեր կգան իշխանության արդար, ազատ ընտրությունների արդյունքում: Եվ վստահաբար կարող եմ ասել, որ գալիք ընտրությունները, որոնք կարող են և արտահերթ լինել, անտարակույս, դառնալու են այդպիսին: Եթե այդքան չկարևորենք էլ դրսի ուժերի միջամտությունն այդ հարցում, նկատենք, որ վերջերս «Ազգային Միաբանության» կողմից Ալեքսան Կարապետյանը գործնական առաջարկություններ է արել Ընտրական օրենսգրքի նախագծում, և դրանք կլինեն այն փորձաքարերը, որոնցով մենք իրապես կհամոզվենք՝ կոալիցիան, իրոք,

ուզո՞ւմ է ազատ, արդար ընտրություններ, թե ոչ: Ընտրությունների ողջ ընթացքը տեսագրվելու է, և այդ պայմաններում, համաձայնեք, միջազգային կառույցները, որոնք քանիցս շեշտել են, որ շահագրգռված են Հարավային Կովկասում, մասնավորապես Հայաստանում արդարացի ընտրությունների անցկացման գործում, կարծում եմ, կմիջամտեն համապատասխան սարք-սարքավորումների գնման հարցում: Ինչ վերաբերում է «Ազգային Միաբանություն կուսակցությանը», ապա միարժեք կարող եմ նշել հետևյալ իրողությունը. 2003 թ. մենք, ցավով եմ ասում, այսքան զորեղ չէինք դեռ, տարածքային այսքան կուռ կազմակերպություններ չունեինք, այսքան թրծված չէինք, փորձությունների բովով լեցուն ճանապարհով էլ դեռ չէինք անցել: Ճանապարհ, որը մեզ շատ ու շատ բան սովորեցրեց և, որ ամենակարևորն է, հուշեց, որ այս իշխանությունները միայն ու միայն հաշվի են նստում ուժի հետ: Մենք էլ մեր հող ու ջրի վրա ենք, մեր ուժն էլ ցույց կտանք բոլորիդ հետ համախմբված: *(Ծափահարություններ):*

– *Այդ ի՞նչ վերլուծության հիման վրա է հայտարարվում, որ հանրապետությունում աղքատության մակարդակը բնակչության 55%-ից իջել է 34%-ի …*

– Լավ, ընդունենք, որ իշխանությունները ճիշտ են (Աստված, մեղք չհամարես ասածս), և աղքատության մակարդակը իջել է ու կազմում է ազգաբնակչության 34%-ը: Չէի ուզում այդ թիվն հնչեցնել, բայց ասեմ. Ադրբեջանի Հանրապետությունում աղքատության մակարդակը մեկ տարում 49%-ից իջել է 29%: Ուրիշ թիվ էլ բերեմ. այսպես, ազերիները ռեգիոնների սոցիալ-տնտեսական զարգացման պետական ծրագիր են մշակել, որի իրականացման արդյունքում այդ երկրում առաջիկա 1-2 տարիների ընթացքում 340 հազար նոր աշխատատեղեր են բացվելու: Բա, լավ, ինչպե՞ս կարելի է գլուխ գովել, հպարտանալ, երբ ամեն երրորդը, թեկուզ իրենց տվյալներով, կիսաքաղցած կյանքով է ապրում: Էն որ 55%-ից իջել է 34%-ի, դա էլ հո իրենց հունարը չէ, իրենց շնորհքը չէ, մեր երկրի բյուջեի ծավալից 100-150 մլն դոլարից էլ ավել ազգաբնակչությունը դրսից օգնություն է ստանում… Ասեմ, որ միայն 1 միլիարդ 200 միլիոն դոլարի օգնություն պաշտոնապես առևտրային բանկերով է գրանցված: Կրկնեմ, դա միայն ֆիքսված օգնությունն է, եթե դա չլիներ, ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը սովամահ կլիներ: Բա, իմանալով երկրում տիրող իրական վիճակը, ինչպե՞ս կարելի է այս թվերով հպարտանալ, ինչպե՞ս կարելի է գետինը չմտնել: Այն, որ 98 թ. հեղաշրջում էիք անում, որ էդքան մեծ-մեծ փրթում էիք՝ էս ենք անելու, էն ենք անելու, մենք էլ սխալվեցինք, մի երկու ամիս հավատացինք, ի՞նչ եղավ, բա անեի՞ք, ո՞վ էր ձեզ խանգարում: Ասել եմ ու կասեմ. ի՞նչ, ընդդիմությո՞ւնն էր ձեռքներդ բռնել, ընդդիմությո՞ւնն էր ձեզ խանգարում: Տղերքն անզոր են վիճակը փրկելու, չեն կարող, որովհետև վերջնականապես խճճվել են: Իրենք, որ կերել էին, բոլորս գիտենք: Սեփական կաշիները փրկելու համար կեղծարարների հսկայական մի բանակ զինվորագրեցին, որ անօրեն ընտրություններով կարողանան պահել իշխանությունը: Պահեցին իշխանությունը, հիմա էլ ում ձեռքերով կեղծիքներն արել էին, գլուխ բարձրացրեցին, իրենք էլ իրենց հերթին սկսեցին փոքրաձավալ թալանի անցնել: Այս արատավոր իշխանությունները հլա թող փորձեն մեկի ձեռքը բռնել, է, կասեն՝

ձեզ ադաթ է, մեզ բեդաթ է: Այ, նման դեպքերի համար է, որ հանցավոր աշխարհում "круговая порука" կա. մեկին, որ ուզում են իրենցից պոկ չգա, ստիպում են, որ հանցագործություն կատարի: Հանցագործությունը կատարում է, չեն պատժում, բայց օրը գա՝ քթից բերում են: Ճիշտ այդպես քթներից բերեցին, երբ, կոպտորեն խախտելով սահմանադրական փոփոխություններով ընդունված նոր տարբերակը, պարտադրեցին կոալիցիային, որ ձայնը տա Մարդու իրավունքների քոչարյանական թեկնածուին, որն այսօր ընտրվել է: Անձի դեմ ես ոչ մի բան չունեմ, ես երևույթն եմ ներկայացնում: Երբ Ազգային ժողովի ամբիոնից հայտարարել էի, որ այս իշխանությունների պարագայում բացարձակապես նշանակություն չունի թե սահմանադրական ինչպիսի փոփոխություններ են ընդունելու, որովհետև, միևնույն է, խախտելու են, չէին հավատում: Տեսա՞ք ոնց պարոն Քոչարյանը եկավ, ԱԺ մեծամասնության ականջները հատիկ-հատիկ ոլորեց, իր նպատակին էլ հասավ: Հանձնվածների մեջներն էլ տղերք կան, որոնք տեղի- անտեղի իրենց «դուխով» լինելուց են խոսում, անցած ուղուց են խոսում, դեմները խաղ չլինելու մասին են հեքիաթներ պատմում: Չեմ հիշում, թե Քոչարյանը որտեղից էր, որ եկավ, Ռամբուեից երևի, եկավ «հերոս» տղերքի ականջները ներշնչանքով ոլորեց, նրանք էլ ոգևորվեցին, պիոների պես շարան-շարան գնացին, հլա անհրաժեշտից ավել 8 ձայն էլ բերեցին: Էս են սրանք: *(Ծափահարություններ):* Երբ այս ամենի մասին բարձրաձայն ասում ես, այ մարդ, մեկ էլ տեսար մյուս օրը շառուշուռեր են անում: Հիմա էլ նոր գործ գտան, իրենց թերթերով հարայ-հրոց գցեցին, թե Արբակ Խաչատրյանն ազատ է արձակվել, հետն էլ լսեցնել են տալիս, թե, իբր, Գեղամյանի գործը բուրդ է: Արբակ Խաչատրյանին 2003 թ. իշխանությունների «դանոս»-զրպարտանքների պատճառով բռնեցին: Ավելին, այստեղից էլ ամեն ինչ արեցին, որ տղային տանեն բերդ մտցնեն: Հիմա ազատվել է, իհարկե, շատ ավելի շուտ պետք է ազատվեր, հիմա ազատվել է, սրանց սիրտն էլ դող է ընկել, հալներովն էլ չեն մնում, մարդկանց ուշադրությունը շեղում են վրաս: Հանգստացեք, պարոնայք, Արբակին կխնդրեմ, հիմա էլ եմ հետը կապի մեջ, որ ձեզ ձեռք չտա: Ձեր հանցանքների համար ժողովուրդը պետք է դատի, ոչ թե առանձին անհատները, ում տարել, բերդերում փորձել եք փտացնել: Այ սա է իրական վիճակը:

Սիրելի ժողովուրդ, սրանք էլ բանուգործ չունեն, կերածս, խմածս, կներեք, դրանից հետո էլ վերարտադրածս խոշորացույցով նայում են: Գոնե իրականում տեսածները գրեն, թե չէ շառ են անում վրաս: Ես գնում եմ լողի, զանգ են տալիս ու անծանոթ ձայնով հարցնում. խաշը համո՞վ էր: Հա, համով էր: Եթե Կարմիր խաչի բասեինում լողանալիս հետն էլ խաշ եմ կերել, ուրեմն, տեսեք՝ ի՞նչ շնորհքով տղա եմ: Հաջորդ օրը, իրենց պնակալեզ մամուլով, չկերածս խաշի վրա մի անհամ, տափակ շառ պետք է անեն, հետո արված շառն էլ հեռուստաալիքներով մամուլի տեսության ժամանակ հնչեցնեն, չէ՞ որ իրենք պիտի զբաղմունք ունենան: Նպատակը մեկն է. շարան-շարան պետք է զրպարտեն, որ վաղը, մյուս օրը ժողովրդի մոտ կասկածանք առաջացնեն, որ մեր միամիտ մարդիկ էլ մտածեն. այ մարդ, որ այսքան գրում են, ուրեմն մի բան կա: Իսկ իրենք բանսարկությունների գործում անգերազանցելի են: Ի՞նչ են անում. կրկնում եմ, մի թերթում շառը

գրում են, հետո էլ երեկոյան մամուլի տեսության ժամանակ սիրունադեմ աղջիկը լուրջ-լուրջ դեմքով կարդում է. ինչպես գրում է այսինչ թերթը, Գեղամյանը՝ ըսենց, Գեղամյանը ընենց: Իրենց անհասկացողի տեղ են դնում. Գեղամյանն ինչպես որ կա, էս է, ձեր աչքի առաջ է: Չեռները մի փոքր հնար լիներ, վաղուց կախել էին, չկա այդ շանսը: *(Ծափահարություններ: Դահլիճից բացականչություններ՝ չի էլ լինի):* Իհարկե, չի լինի: Բայց սրանք ճարահատյալ են անում: Բա լավ, տղերք, սազո՞ւմ է, երկիրն այսքան հոգս ունի, այսքան խնդիր ունի, այսքան պրոբլեմ ունի, փոխանակ երկրի պաշտպանության և անվտանգության հարցերով զբաղվեք, ձեր յուրայինների կամ առանձին կաչաղակ լրագրողուհիների միջոցով գրում ու տարածում եք. «Ազգային Միաբանությունը» նոր ընտրվելիք ԱԺ-ում տեղ չի ունենա: Այ մարդ, հանգստացեք, դե չեղավ էլի: Եվ ասողներն էլ գիտենք ովքեր են, դրանց կենտրոնի հովանավորի ով լինելն էլ գիտենք: Միտքս եկավ երևանյան մի հայտնի ասացվածք. բոլորից շատ կույս են ձևանում քարթուացած այն կանայք, որոնք դեռ անչափահաս հասակում են սիրահոժար կուսությունը կորցրել: Այնպես էլ այս իշխանական քաղաքական գործիչները վրաներս գործ սարքելով՝ փորձում են հիշատակածս կանանց նման անմեղ ձևանալ: *(Ծափահարություններ):*

– Հանրապետությունում անտառային խտությունը 11,2-ից հասել է 3,4 խտության, առավել օրհասական է վիճակը մայրաքաղաքում՝ Երևանում և նրա շրջակայքում: Անխնա ոչնչացվել և շարունակում են ոչնչացվել Երևանի կանաչ տարածքները, շրջակա անտառները: Երևանի կենտրոնը բնութագրվում է որպես էկոլոգիապես աղետալի: Ի՞նչ հետևանքներ կարող է այս ամենը թողնել մայրաքաղաքի բնակիչների վրա:

– Այս հարցերն ինձ համար առավել ցավոտ են, որովհետև, ծնված լինելով Երևանում, մտովի վերադառնում եմ իմ մանկության տարիներին, երբ գնում էինք խաղալու Մոնումենտի փեշերի խիտ անտառում: Անտառով էր ծածկված նաև հին Նորքին հարող սարալանջերը: «Նաբերեժնին»՝ Հրազդան գետի կիրճը, ևս ամբողջությամբ անտառապատ էր: Է, հա, սրանք կծառահատեն, բա ի՞նչ կանեն: Եթե առանց անհարմար զգալու «Հաղթանակի» զբոսայգում, որը հիմնվել է Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին, ուր ամեն մի ծառ ու թուփ այրու կամ զավակ կորցրածի ձեռքով է տնկվել և նրանց արցունքով ջրվել, ձեռքները չի կոտրվում, ծառեր են հատում, սրանցից ի՞նչ սպասես: Բա կանգնում, ասում են՝ այստեղ աղբանոց էր, ամայի տարածություն էր… Չլինի՞, թե սպասում են, որ ազգովի շնորհակալություն հայտնենք, որ «Գոլդեն Փելես» են կառուցել: Դե եթե ամենաբարձր իշխանությունների հովանու ներքո անտառը հատեն, ծառը հատեն ու տեղը «Գոլդեն Փելես» կառուցեն, Երևանն էլ կհայտնվի այս վիճակում: Երևանն էլ կընկնի այն բարձիթողի վիճակում, որում հայտնվեց թեկուզ երեկ. մի թեթև քամի արեց, մեկ մետրի վրա արդեն մարդուն չէիր տեսնի, անասելի փոշի էր բարձրացել: Քաղաքը զրկվել է թոքերից: Է, դրանց համար ի՞նչ թոքեր. կան, չկան անտառներ, ծառեր, ի՞նչ հոգս սրանց համար: Ոչ էլ զգում են դրանց անհրաժեշտությունը: Մի մասը, ասում են, նարկոման են, քթով պառաշոկ են շնչում, «ջիպերից» էլ դուրս չեն գալիս:

Հիշում եմ, 1990 թվականն էր, երբ ուզում էինք օպերայամերձ խաչմերուկ-

հրապարակն անվանակոչել Անդրեյ Սախարովի անունով: Անվանի գիտնականը շատ հետաքրքիր մի հայտարարությամբ էր հանդես եկել, ուր ուղղակի ասել էր հետևյալը. Լեռնային Ղարաբաղի հարցն Ադրբեջանի համար ամբիցիան բավարարելու հարց է, ամբիցիայի խնդիր է: Լեռնային Ղարաբաղի հարցը բախտորոշ է Թուրքիայի նկրտումների համար: Հարց է ծագում, ինչո՞ւ էր ակադեմիկոսը կարևորում Թուրքիայի գործոնը: Անդրեյ Սախարովը, շարունակելով իր միտքը, պարզաբանում էր. Լեռնային Ղարաբաղի ինքնուրույն գոյության փաստն արգելք է պանթուրանիզմի առաջխաղացմանը դեպի Արևելք, դեպի Խաղաղ օվկիանոս: Անգամ աշխարհահռչակ գիտնականի հայանպաստ այս հայտարարությունից հետո էլ մեր ճարտարապետները, մեր մտավորականները հանդիմանեցին ինձ (այն ժամանակ Երևանի քաղաքապետն էի)՝ ասելով, որ չի կարելի այդ հրապարակը, որին հարում են այգիներ, ուր Կոմիտասի ու Սարյանի արձաններն են, ուր Թամանյանի նախագծած օպերայի թատրոնի վեհաշուք շենքն է, անվանակոչել շատ պատվավոր մարդու՝ Սախարովի անունով, որն աղերսներ չունի հայոց պատմության և մշակույթի հետ: Բերված փաստարկները քաղաքապետարանն ընդունեց, և ակադեմիկոս Անդրեյ Սախարովի անունով անվանակոչեց Մեշադի Ազիզբեկովի հրապարակը: Բա հիմա ո՞ւր են մեր մշակութային գործիչները, մտավորականները, ինչո՞ւ են լռում: Ինչո՞ւ չեն ուզում դասեր քաղել Էլեոնորա Ռուզվելտի խոսքերից, ինչո՞ւ չեն ուզում հիշել Մահատմա Գանդիի խոսքերը: Չէ՞ որ իրենց անօրեն գործերով իշխանությունները վիրավորում են նրանցից յուրաքանչյուրին: Չէ՞ որ իրենք էին հեղինակները նույն այն կոթողների, որոնք քանդում են հենց մեր օրերում: Ջավեշտ է, որ ճարտարապետական հետաքրքրական լուծումներ ունեցող կոթողը քանդելուց առաջ գտավ իր պիտանիությունը, այն է՝ սահմանադրական փոփոխությունների քարոզարշավի ժամանակ դրա ճակատին «Այո»-ն փակցրին. խոսքս Երիտասարդական պալատի մասին է:

Իշխանությունները բացարձակապես համեստության նշույլ անգամ չունեն: Իրենց լկտի գործելակերպով չեն էլ ուզում գիտակցել, որ եկել է հատուցման պահը: Հետո էլ, տեսնում եք, չէ՞, թե մամուլով ինչ խաղեր են տալիս: Լինելով նույն մարդը՝ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը քաղաքական ողջ դաշտն են իրար դեմ հանում, պատրանք ստեղծելով, թե իրենց մեջ խոր հակասություններ կան: Թերթերն էլ, այս կամ այն գործչին ներկայացնելով, տողատակով հասկացնում են, թե, իբր, մեկը Սերժի կողմնակիցն է, մյուսը՝ Ռոբերտի: Նրանցից առավել միամիտներն ու դյուրահավատներն էլ կուտը ուտում են, ինքնաբացահայտվում են, հետո երկուսն էլ, արդեն մեկ դառած, սկսում են շանտաժով նրանց վերացնել քաղաքական ասպարեզից: Կրկնեմ, համեստություն ասածը չունեն: Երկուսն էլ, ցավոք, հյուրի կարգավիճակով ինչպես եկան այստեղ, այնպես էլ մինչև վերջ անգամ հյուր չմնացին: Ավելին, դարձած մարդիկ, ով տան եղած-չեղածը տանում է դուրս, դիցուք, մեքսիկների, սևամորթների համար Կալիֆոռնիայում շենքեր են կառուցում: Էս է սրանց դիմանկարը: Սախարովի անունը տալով, հիշեցի Իեգուդի Մենուխինին, որը Ստրասբուրգում 70-ական թվականների սկզբին Սախարովի անվան հիմնադրամի բացման արարողության ժամանակ ասել էր. «Ես ատում եմ նավթը, ես ատում եմ,

որովհետև դրա համար մարդկային կյանքերի գին են վճարում»: Մտքիս եկավ ևս մի պատմություն: Պատմեմ, որ լիցքաթափվենք, Պլուտարքոսն էլ հանկարծ չնեղանա, որ իր խորհրդին՝ խոսել լավ բաների մասին կամ կարճ՝ չեմ հետևում: Աշխարհահռչակ երկու ջութակահար՝ Դավիդ Օյստրախն ու Իեգուդի Մենուհինը նույն համերգում ելույթ են ունենում: Երկուսն էլ իրենց կատարողական արվեստով իրար չէին զիջում, անգամ մեր հարգարժան Արամ Լվովիչը (խոսքը մասնագիտությամբ երաժշտագետ, «Առավոտ» թերթի խմբագիր Արամ Աբրահամյանի մասին է) կդժվարանա ասել՝ Մենուհինն էր ավելի կատարյալ ջութակահար, թե՝ Դավիդ Օյստրախը: Երկու ջութակահարներն էլ այդ համերգի ժամանակ երկրորդ ջութակի պարտիան են կատարում: Նրանցից յուրաքանչյուրը գիտակցում է մյուսի մեծատաղանդ լինելը և չի հանդգնում իրեն ավելի վեր դասել:

Այ մարդ, հայրենյաց իշխանություններն են, որ հարգանք ասածը չգիտեն ինչ է. անգամ իսկ իրար հրմշտելով, ամեն մեկը մի բան չարած, ուզում է ցույց տա, թե մեծ գործ է արել, երկրագունդն էլ իր անձի շուրջն է պտտվում, էլ չասենք՝ դեսպանները: Պատճառը մեկն է, որովհետև ոչ տաղանդ ունեն, կյանքում ոչ էլ գիրք են կարդացել, արածները շառուշուռ անելն է: Այստեղ կրկին խոստովանեմ. թող ոչ մեկը չփորձի հետները քայլ գցի, կատարյալ են: *(Ծափահարություններ):*

– Անմոթաբար հայտարարում են, թե աղետի գոտին դարձել է զարգացման գոտի: 4000-ից ավելի ընտանիքներ դեռևս անօթևան են, նրանց մի մասն էլ ստիպված լքել է Գյումրին: Ուր նայեք փողոցների վիճակին, թեկուզ շրջեք շուկայի շրջակայքում, ինքներդ կզգաք՝զարգացման գոտո՞ւմ եք հայտնվել, թե գավառական խղճուկ միջավայրում: Մինչև ե՞րբ է այս աղքատությունը շարունակվելու:

– Բերեմ վիճակը բնութագրող մի քանի թվեր և օրինակներ: Շինարարական այս «բումը», որ կա, մասնավորապես, Երևանի կենտրոնում, ընդամենը 24 ժամ է պետք, որ հօդս ցնդեցվի, բոլոր խախտումներն էլ ի հայտ բերվեն: Նույն «Գոլդեն Փելեսի» շինարարության ընթացքում թույլ տրված ահավոր չարաշահումների և օրինախախտումների մասին մեկ անգամ ասել եմ, դե թող բերված փաստերը ստուգեն և օրենքին տեր կանգնեն: Մի հատ նայեք, այդ շենքի շինարարները սոցիալական հիմնադրամին գոնե մի քոռ լումա մուծե՞լ են, թե՞ ոչ կամ էլ կենսաթոշակային ֆոնդին հատկացումներ արե՞լ են, թե՞ ոչ: Պարզեք, պատերը, որ շարել են, էդ շինանյութը, որ օգտագործել են, դրա ավելացած արժեքի հարկը մուծվե՞լ է, թե՞ ոչ: Եվ, այդպես, ցանկացած շենքի կառուցման ընթացքը, որ վերլուծես, ակնհայտ կդառնա, որ բյուջե տասնյակ, հարյուրավոր միլիոն դրամի հարկեր չեն մուտքագրվել: Այս պայմաններում էլ, առանց անհարմար զգալու, մարդկանց սոցիալական կարիքները հոգալու համար ասում են՝ փող չկա: Ո՞նց չկա, ինչքան ասես փող կա: Այլ բան է, որ իշխանությունների թողտվությամբ կողոպտվում է: Այդ հարցի մասին վերջերս ԱԺ-ում հնչած իր հայտարարության մեջ Կորյուն Առաքելյանն ուղղակի ասաց. միայն աղետի գոտում՝ Գյումրիում, կա 4000 անօթևան մարդ: Բա, լավ, պարոն Քոչարյանը խոստացել էր մինչև 2000 թ., էլ չասենք մինչև 2003 թ. նախագահական ընտրությունները «Աղետի գոտի» հասկացությունն իսպառ վերացնել: Դե, տեր կանգնեք

ձեր խոսքին: Ռուսական ցարական բանակում ամենամեծ արհամարհանքի էր արժանանում այն սպան, որն իր խոսքի տերը չէր լինում: Երբ սպան խոսքը չէր կատարում, էլ չէր սպասում, որ ուրիշն իրեն զենք տա, ինքնասպան էր լինում իր նամուսը, իր պատիվը փրկելու համար: Այ մարդ, ինքնասպան մի եղիր, թոռ ունես, Աստված իրեն երկար տարիների կյանք տա, բայց թասիբ, նամուս ունեցիր և Սերժ Սարգսյանի հետ ղարաբաղցու թասիբներդ էս հարցում օգտագործեք: Մի ամբողջ ազգ չի ընդունում ձեզ, նամուսով, պատվով հեռացեք: *(Բուռն ծափահարություններ):*

– Ի՞նչ կասեք Գիտությունների ազգային ակադեմիայի ճակատագրի մասին:

– Գիտեք, որ Ազգային ակադեմիան, Մատենադարանը, մեր երաժշտանոցը՝ Կոնսերվատորիան, Օպերային թատրոնը, թերևս, փարոս ասեմ, թե Հանրապետության այցեքարտ, անգնահատելի այն արժեքներն են, որ մեր ազգը քաղաքակիրթ աշխարհին արժանվույն կերպով են ներկայացնում: Ազգային ակադեմիայի հետ կապված խնդիրները բարձրացնելուց առաջ, մեկ էլ զարթնած իշխանություններին մի հատ հարց տանք. իշխանություններ, Հայաստանի հեռանկարային զարգացման հայեցակարգը ո՞րն է, ինչպիսի՞ն եք դուք ուզում տեսնել Հայաստանի Հանրապետությունը 2020 թ. և այդպիսին դառնալու համար Հայաստանի գիտության առաջ դուք ի՞նչ խնդիրներ եք դնում, ասեք՝ իմանանք: Ասես թե երկրի առաջ ծառացած հարաճուն բոլոր խնդիրները լուծել-պրծել են, հիմա էլ կախվել են Ակադեմիայից: Այ մարդ, երկիրը պատերազմական վիճակում է, ազգային անվտանգության հայեցակարգ անգամ չկա, դրա մասին մի լուրջ քննարկում չարեցին, մարդկանց ուշադրությունն այդ ամենից շեղելու համար մեկ էլ հանկարծ Ակադեմիայի ջանովն ընկան: Ի՞նչ խնդիր եք դրել Ազգային ակադեմիայի առջև: Կառավարության ո՞ր որոշմամբ, նախագահի ո՞ր հրամանագրով ի՞նչ լուծումներ եք Ակադեմիայից ակնկալել, ո՞ր չեն կատարել: Հրապարակեք, մարդիկ իմանան, որ կարողանան անաչառ գնահատական տալ: Ես մասնագիտորեն չեմ կարող վերլուծել՝ Ակադեմիայի գործունեությունն արդյունավետ է, թե՞ ոչ: Ես սկզբունքն ու մոտեցումն եմ ասում, թե ինչպիսին պետք է լինեն: Սովորաբար վատ են գնահատում այն աշխատանքը, որի հանձնարարությունը տվել ես, բայց չի կատարվել: Որո՞նք են ձեր տված հանձնարարությունները, թվարկեք հատիկ-հատիկ: Ասեք, որ հեռանկարային այս-այս հարցերը դրել էինք Ակադեմիայի առաջ, որ գիտությանը, կրթությանն օրենքով նախատեսված գումարը մինչև վերջին լուման տվել էինք, սակայն ակնկալվող արդյունքը չստացանք: Բացարձակապես չեն ասի այս ամենը երբեք, որովհետև կրկին մարդկանց ուշադրությունը շեղելու հարց են լուծում, հիմա էլ գիտնականներին իրար դեմ հանելու խնդիր ունեն: Սրանք լավ են գիտակցում, որ պառակտված գիտական հասարակությունը, որ կա Հայաստանում, երբեք ու երբեք արդեն ժամանակ չի ունենա երկրի արատների մասին խորհելու և արտահայտվելու համար: Իշխանություններն իրենց բանսարկություններով պարտադրել են մեր գիտնականներին, որ բանուգործները թողնեն, գիտական բանավեճերը վերածեն՝ Ֆադեյ Տաճատիչին աշխատանքից ազատում են, թե չեն հանում ասեկոսներով: Հարցերի հարցն էլ դարձնեն, թե նրա տեղն ո՞ւմ են իրենց գլխին բերելու:

Այ մարդ, հանգիստ թողեք մեր գիտնականներին, այդ մարդկանց նախ օգնեք, հետո էլ պահանջեք: Բա Ակադեմիայի հարցը բարձրացնողը չի՞ մտածում, որ օրինապաշտ հասարակարգում հենց իրեն կտանեին ու կնստեցնեին մեղադրյալի, ամբաստանյալի աթոռին: Հարցրեք՝ ինչո՞ւ, պատասխանեմ. քանի որ խախտել են օրենքը, թե 2004 թ., թե 2005 թ. տարեկան բյուջեներով չեն նախատեսել գիտությանը հատկացվելիք անհրաժեշտ գումարները: Ակադեմիայի ղեկավարությունը, ինստիտուտների տնօրեններն իրենց հին կապերով, իրենց շնորհքով կարողանում են գնալ և այստեղից-այնտեղից գրանտներ հայթայթել, բերել, որ գիտական այս կազմակերպությունները շնչեն: Ակադեմիայի խնդիրների շուրջ, կարծում եմ, ճիշտ կլինի մեր գիտնականներին հնարավորություն ընձեռվի, որ իրենք առանց կաշկանդվելու տարիների ընթացքում կուտակված հոգսի, ցավի մասին քննարկումներ անցկացնեն: Խոսեն այն մասին, թե ինչպես և ինչու են գիտական ինստիտուտները կազմալուծվում, ինչ է թե շենքերը գտնվում են կենտրոնում, որ հետո այս իշխանությունները և իրենց յուրայինները դրանք շահ մսի գնով սեփականաշնորհեն:

Սիրելի ժողովուրդ, պատահական չէր, որ թե իմ ելույթում, թե հարցերին պատասխանելիս հատուկ կարևորեցի միայն սեփական ուժերին ապավինելու հրատապ պահանջը: Դա է մեզ հուշում նաև Սթիվեն Կովին՝ իր յոթ հմտությունների մասին խոսելիս: Ես դրանցից 2-3-ին անդրադարձա: Կա ևս մի շատ հետաքրքիր հմտություն, որի մասին առանձնահատուկ է գրում Սթիվեն Կովին: Ո՞րն է դա. դա սիներգիայի մթնոլորտ ստեղծելու հմտությունն է: Այսինքն՝ եզակի մի իրավիճակի ստեղծում, երբ դրա բաղկացուցիչ հանգամանք-բնութագրականների համատեղ, փոխշաղկապված գործելու պայմաններում վերջնական արդյունքը շատ ավելի մեծ է, քան այն դեպքում, երբ վերջիններիս անգամ իսկ միաժամանակյա գործողություններն իրարից անջատ են: Ասածս այն է, որ եթե մեր ժողովուրդը համախմբվի՝ հաշվի չառնելով կուսակցական պատկանելություն, լինեն Հանրապետականի, ՀԺԿ-ի, ՍԻՄ-ի, Դաշնակցության, «Ազգային Միաբանության», թե «Օրինաց երկրի» ջատագովներ, մեր ժողովրդի հավաքական ուժը շատ ավելի զորեղ կլինի, քան դրանց թվաբանական գումարը, եթե գործեն անմիաբան: Կհասնե՞նք նման միաբանության, սիներգետիկ վիճակի, այդ դեպքում համոզված կարող եմ ասել, որ և ոչ մի ազերիի լեզուն չի պտտվի խոսել պատերազմի մասին, իսկ եթե խոսեց, ապա նույն օրը պարտության կմատնվի: Շնորհակալություն: *(Ծափահարություններ):*

Հարգելի գործընկերներ, խորին շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ: Այլ հարցեր ոնց որ չկային: (Նիստը նախագահող Ալեքսան Կարապետյանն ասում է, որ դեռ շուրջ 30 հարց կա, սակայն, կարծում ենք, այսքանով կարելի է մեր աշխատանքներն ավարտել: Եղած հարցերի պատասխանները, շարունակում է Ա.Կարապետյանը, մամուլի միջոցով ձեզ կգտնենք և անպայման կփորձենք Ձեզ իրազեկել մեր մոտեցումների մասին):

Ավարտելով խոսքս՝ սիրելի բարեկամներ, համոզված կարող եմ ասել մի բան: Հազարամյակների պատմություն ունեցող ժողովուրդ, ազգ, որը կարողացել է 21-րդ դար հասնել՝ այն էլ պատերազմում հաղթանակած, մի քանի ապիկարի, մի քանի բախտա-

խնդրի կառավարման արդյունքում չի վերանա աշխարհի քաղաքական քարտեզից: Յուրաքանչյուրդ՝ ձեր օջախում կլինի, ձեր բակում, ընկեր-բարեկամների միջավայրում կլինի, վստահաբար ասեք. կա ժողովրդի հավաքական կամք, և դա մեծապես կենտրոնացած է «Ազգային Միաբանություն կուսակցությունում»: Կուսակցություն, որը հաղթանակի կուսակցություն է: Շնորհակալություն: *(Բուռն, երկարատև ծափահարություններ):*

«Իրավունք», 24-30.III.2006:

Էս ո՞ւր եք հասցրել երկիրը, պարոնայք իշխանավորներ

Իշխանական լրատվամիջոցները, ամիսներ շարունակ ապակողմնորոշելով հանրությանը, փորձում էին տպավորություն ստեղծել, թե ընդդիմությունը խուսափում է բացահայտել կոռուպցիայի որջերը: «Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավարները և ԱԺ «Ազգային Միաբանություն» խմբակցության պատգամավորները հրապարակային բոլոր ելույթներում մատնանշել են կոռուպցիայի շնաճկներին, այն էլ Ազգային ժողովի ամբիոնից: Սակայն իշխանական լրատվամիջոցները, ասես թե պապանձվել են, անարձագանք թողնելով այդ բոլոր ելույթները:

Ստորև ներկայացնում ենք Ազգային ժողովի մարտի 21-ի նիստում «Ազգային Միաբանություն» խմբակցության ղեկավար Արտաշես Գեղամյանի ելույթը:

Հարգելի գործընկերներ, օրերս հրապարակվել է թմրանյութերի դեմ պայքարի միջազգային ռազմավարության մասին ԱՄՆ պետդեպարտամենտի ամենամյա զեկույցը: Զեկույցում, ըստ էության, Հայաստանի իշխանությունները, բացի կոռումպացված լինելուց, մեղադրվում են թմրաբիզնեսով զբաղվելու մեջ. «Հայ բարձրաստիճան պաշտոնյաները չեն մերկացվել թմրանյութերի ապօրինի իրացման գործում»: Զեկույցից բերված այս մեջբերումը շատ հետաքրքիր և նրբին դիտարկում է: Այն է, որ իշխանավորները ներգրավված են նարկոբիզնեսում, դա կասկածից վեր է, սակայն պարզապես դեռևս չեն բացահայտվել: Կարելի էր այս ամենը տարբեր տեսանկյուններից վերլուծել, բայց մտահոգիչ է այն, որ ճիշտ այս նույն հարցադրումն արդեն 8 տարի է շարունակ շահարկում են թե՛ ադրբեջանական մամուլը, թե՛ ադրբեջանական պաշտոնյաները Եվրախորհրդի և ԵԱՀԿ-ի ամբիոններից: Խիստ մտահոգիչ է այն, որ ադրբեջանցիների այս տեսակետն արդեն տեղ է գտել պաշտոնական Վաշինգտոնի ամենահեղինակավոր զեկույցներից մեկում: Մի՞թե սա չի մտահոգում իշխանություններին: Եթե իշխանություններն են մասնակից թմրաբիզնեսի մեջ, կնշանակի նման վարչակարգին վստահել այլևս չի կարելի: Իսկ ի՞նչ է նշանակում լինել մեղսակից: Նշանակում է Հայաստանի Հանրապետությունը դարձել է նարկոտրաֆիկի տարանցիկ տարածք: Վաղը այդ խնդրով այստեղ կգան խաղաղարար կամ ուրիշ ուժեր, որ վերջ դնեն դրան: Ո՞վ է սրա պատասխանը տալու: Էս ո՞ւր եք հասցրել երկիրը, պարոնայք իշխանավորներ:

Հաջորդ հարցը: Ճիշտ այդ օրերին մամուլում լրահոս եղավ, որ Հայաստան են բերվել 27 տեսաերիզ, որոնք ամենայն մանրամասներով ներկայացնում են բարձրաստիճան

պաշտոնյաների, մեղմ ասած, անբարո վարքագիծը՝ Եվրոպայում և ԱՄՆ-ում հանգստանալիս: Սա են հասկացնում իշխանություններին. ինչ ասենք՝ աշակերտի պես խելոք կգնաք ու կկատարեք, թե չէ գիտեք ձեր արածները… Իսկ ի՞նչ պետք է ասեն, ի՞նչ պետք է պարտադրեն: Այսօր մի հարց է օրակարգում՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Ես էլ չեմ ասում, որ վաղը, մյուս օրը բանակցային արդեն ցանկացած գործընթացի ժամանակ մեր ախոյանները կասեն. լավ, վերջին հաշվով մենք ո՞ւմ հետ ենք բանակցում. ղումարբազնե՞րի, թմրաբիզնեսով զբաղվողնե՞րի, թե՞ կոռուպցիայի մեջ թաղվածների հետ: Եվ նման պայմաններում մենք տանուլ կտանք Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Փոխանակ գան, խելացի կերպով ընդդիմությանը խնդրեն, թե եկեք, խելք խելքի տանք, անցնցում իշխանափոխություն անենք: Որովհետև այսօր երկրին պետք են ու կան ուժեր, որոնք իրենց նման խոցելի չեն: Դրա փոխարեն քաղաքական դաշտն իրար դեմ են հանում: Պատահական չէր, որ Ալեքսան Կարապետյանն ասաց՝ սրանք այնքան են արդեն խճճվել հարաբերություններ պարզելու գործում, որ փորձում են մեզ ներքաշել այդ ճղճիմության մեջ: Մեկը մյուսին մեզ պաս է տալիս, որ ես իրենց փոխարեն անընդունելի մարդուն խիստ քննադատության ենթարկեմ, թե չէ կասեն՝ հետը կապված է:

Պարոն Քոչարյան, մենք պատրաստ ենք համագործակցել ձեզ հետ և քննարկել ձեր հրաժարականի հարցերը՝ նպատակ ունենալով, որ այն անցնցում անցնի:

«Իրավունք», 24-30.III.2006:

Թմրաբիզնեսը և մեր «ազգային ջոջերը»

Ես ինչպե՞ս մնամ պաղ ու անտարբեր.
Ինչպե՞ս անցնեմ ու՝ չտեսնելու տամ
Կիսաքաղց ծերին, մուրացող մանկան.
Տեսնեմ վտանգը ու՝ չտագնապեմ,
Տեսնեմ աղետը ու՝ չսարսափեմ,
Տեսնեմ կեղծիքը ու՝ չծառանամ,
Տեսնեմ սադրանքը ու՝ չզայրանամ,
Կտրեմ կյանքի հետ կապերս բոլոր,
Ինչ է թե ապրեմ ավելի երկար…

Սիլվա Կապուտիկյան

10.12.04 թ., Երևան

Ա/թ մարտի 24-ին Ազգային ժողովում տեղի ունեցավ «Ազգային Միաբանություն» խմբակցության անդամներ Արտաշես Գեղամյանի և Աղասի Արշակյանի ճեպազրույցը: Դրան մասնակից շուրջ 10 հեռուստալրատվամիջոցներ այդպես էլ ոչ մի տեղեկատվություն ճեպազրույցում հնչած հարցերի պատասխաններից չհեռարձակեցին, իսկ Հանրային հեռուստատեսության ապատեղեկատվություն տարածող տխրահռչակ «Հայլուր» ծրագիրն ամբողջովին անգամ անգափոխեց Ա.Գեղամյանի խոսքը: Հաշվի առնելով ճեպազրույցում արծարծված հարցերի պատասխանների հրատապությունն ու արդիականությունը՝ստորև հրապարակում ենք դրանք:

– Սինչև ձեր հարցերին պատասխանելը, շատ կարճ անդրադառնամ իմ հայտարարությանը, որը հնչեց մարտի 21-ին Ազգային ժողովի նիստում: Խնդրում եմ հարցին առնչվող նրբություններին ուշադրություն դարձրեք: Այսպես, մարտի 7-ին հայաստանյան մի քանի լրատվամիջոցներ հիշատակեցին Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետքարտուղարության «Թմրաբիզնեսի դեմ պայքարի ռազմավարության մասին» զեկույցից՝ թմրաբիզնեսում Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաների դեռ չբացահայտված լինելու տեղեկատվությանը վերաբերող մի հատված: Մարտի 17-ին, անդրադառնալով այդ հարցին, իմ կողմից հարգված, պաշտպանության նախկին նախարար, գեներալ-լեյտենանտ Վաղարշակ Հարությունյանը «Իրավունք» թերթի

էջերում մեկ անգամ ևս հաստատեց այն ինֆորմացիայի հավաստիությունը, որ եղել էր այդ զեկույցում: Այս ընթացքում բացարձակապես քար լռություն էր տիրում հայաստանյան բոլոր լրատվամիջոցներում: Ոչ «Հայլուրը» արձագանքեց, ոչ նախագահի աշխատակազմի քաղաքական առանձին կինտոներ դրան անդրադարձան, ամենուր անդորր էր տիրում: Մարտի 21-ին ԱԺ ամբիոնից ճիշտ այդ նույն հարցերը հայտարարության մեջ հիշատակելով՝ ես ընդամենը շեշտադրում արեցի դրանից բխող վտանգավոր հետևանքների վրա: Հաջորդ օրը ազնիվ նախարար Վարդան Օսկանյանին հրավիրեցին Ազգային ժողով: Նպատակը, թերևս, մեկն էր. ԱՄՆ -ի Պետքարտուղարության զեկույցում Հայաստանին վերաբերող հարցերն ուղղել նրան, ինչը և արվեց: Նա իր մեկնաբանություններում ասաց, ըստ որում, շատ զուսպ, որ գրված է ճիշտ հակառակը, այն է՝ «… այդպիսի գործունեության մեջ ներգրավված կառավարական պաշտոնյաներ հայտնաբերված չեն»: Ցավոք, վերջինիս կողմից անտեսվեց Պետքարտուղարության հարցադրման խորքային իմաստը և շեշտը դրվեց թարգմանական նրբերանգների բացատրությանը: Մինչդեռ վտանգը, թեկուզ պարոն Օսկանյանի խմբագրությամբ թարգմանված մտքից, տրամաբանորեն եզակի հետևության մեջ է: Դա առավել ակնհայտ է դառնում զեկույցի «Ադրբեջան» բաժնում ուղղակիորեն մատնանշված թմրանյութերի տարանցման երթուղիների հիշատակմամբ, այն է՝ «Աֆղանստան-Իրան-Լեռնային Ղարաբաղ և Ադրբեջանի բռնազավթված տարածքներ-Հայաստան-Վրաստան-Արևմտյան Եվրոպա»: Անգամ իսկ այս ամենից հետո, թերևս, կարելի էր այս հարցին չանդրադառնալ, եթե չլիներ մեկ այլ հրապարակում «Վոենո պրոմիշլենի կուրիեր» պարբերականում, որից մարտի 23-ին «Հայկական ժամանակը» «Դեպի Թուրքիա թռչնամսի արտահանում» խորագրի ներքո հոդվածում բարեխղճորեն մեջբերում էր արել Հայաստանում Ռուսաստանի Դաշնության Դաշնային անվտանգության ծառայության վարչության պետ, գեներալ-լեյտենանտ Սերգեյ Բոնդարևի հոդվածից: Նա գրել է, թե ռուս սահմանապահներին հաջողվել է կանխել հայ-իրանական սահմանով թմրանյութերի տեղափոխման մի քանի փորձ: Ավելին, մեջբերեմ գեներալ-լեյտենանտի պնդումներից. «Ամենայն հավանականությամբ, թմրամաֆիան փորձում է տարանցման համար օգտագործել այս ճանապարհը»: Ուշադրություն դարձրեք, որ բարձրաստիճան սահմանապահը օգտագործում է «թմրամաֆիա» բառը, այսինքն՝ խոսքը չի գնում փոքր քանակությամբ թմրանյութերի տեղափոխման առանձին դեպքերի մասին, այլ խոսքը, ըստ էության, հնարավոր գործող թմրամաֆիայի մասին է:

Հիմա դուք, հարգելի լրագրողներ, հիշեք, արդյոք, անցյալ տարվա ընթացքում գեթ մեկ անգամ՝ լինի դա Ազգային անվտանգության ծառայությունը, լինի դա Մաքսային ծառայությունը, որևէ մի հրապարակում արե՞լ են այս երևույթի մասին, որի առնչությամբ հանդես է եկել գեներալ-լեյտենանտ Սերգեյ Բոնդարևը ռուսական պարբերականում: Չէ՞ որ նա խոսում է մի քանի բացահայտված դեպքերի մասին, այն էլ դեպքեր, որոնք հիմք են տվել գեներալին մտածել, որ գործ ունեն թմրամաֆիայի հետ: Ձեզ հետ միասին

վերահաստատենք, որ խնդրո առարկա հարցի շուրջ և ոչ մի հրապարակային խոսք չեղավ թե մամուլում ու ռադիոյում և թե հեռուստատեսությամբ: Մինչդեռ հանկարծ Բագրատաշենում կամ Մեղրիում մի կին փորձեր տեղափոխել նույն իրից 15-20 հատ, կգնային, տասը տեղից օպերատորները կնկարեին, հարայ-հրոց կգցեին: Հեռուստատեսությամբ էլ, «Հայլուրով» օրը տասն անգամ գլուխներս կտանեին՝ գովազդելով, թե տեսեք՝ ի՞նչ ազնիվ, անձնազոհ ու տաղանդավոր մաքսավորներ ունենք: Ասել կուզի, տղերքը քրտնաջան աշխատանքից հետո գիշերվա 3-ին ոչ միայն խանութ են բացել տվել ու 7 հազար դոլարանոց կոնյակ խմել, այլև քափուքրտինքի մեջ մաքսանենգության լուրջ փորձ են կանխել: Ավա՜ղ, դուք չեք հիշի որևէ հրապարակում կամ հեռուստահաղորդում, որ պատմեր թմրանյութերի մաքսանենգ ճանապարհով տեղափոխման բացահայտված գեթ մեկ դեպք: Իսկ եթե նման փաստերը (որոնց մասին հիշատակում է գեներալ-լեյտենանտը) լռեցվել են, տրամաբանությունը հուշում է, որ դրա մեջ ներքաշված են եղել հայաստանյան բարձրաստիճան պաշտոնյաներ, ովքեր էլ ի զորու են եղել այդ ամենը սառեցնելու, հրապարակ դուրս չբերելու: Ահա, ըստ էության, թե ինչ կարելի է եզրակացնել ԱՄՆ-ի Պետական քարտուղարության զեկույցից: Իսկ թե ովքեր են Հայաստանի Հանրապետությունում այն պաշտոնյաները, որոնք կարող էին անարձագանք և անհետևանք թողնել այս ամենը, ձեզ հետ, հարգելի լրագրողներ, բոլորս գիտենք: Ահա թե ինչու Ազգային ժողովում հնչեցրած իմ հայտարարությունից հետո մեկ էլ հանկարծ նախագահականից Գառնիկ Իսագուլյանի «հում ականջները» երևացին «Հայլուր»-ում, ահա թե ինչու այդ աստիճան խառնվեց ՊԱԿ-ի նախկին գործակալը, ով, եկեք տեսեք, ինչպես հայտնի առակում, լինելով «ուղտ», ուզում է «ցուլ» դառնալ: Ուզում է քաղաքականությամբ զբաղվել՝ մոռանալով այդ առակի իմաստը: Հիշենք դա. նախանձելով ցուլին՝ ուղտը գնում է Օլիմպոս՝ Զևսի մոտ, խնդրելով, որ իրեն էլ պոզեր պարգևի, այն էլ սուր, որ կարողանա գիշատիչներից պաշտպանվել: Զևսը ի՞նչ է անում. տեսնելով ուղտի՝ ոչնչով չարդարացված ագահի ախորժակը, ականջներն էլ է քոքահան անում: Այնպես որ, խնայեք «ձեր ականջները», թարգեք ձեր ճամարտակությունները, ձեր սուտը ճշմարտության տեղ անցկացնել, միևնույն է, չի հաջողվի: Հիրավի, ցավ ես ապրում, որ հայրենյաց իշխանությունները հրճվանք են ապրում, երբ իրենց ասում են, որ դեռ բացահայտված չեն թմրաբիզնեսում: Չեն էլ հասկանում, թե ինչ երկրի, բարոյական, մշակութային ինչ նկարագիր ունեցող ժողովրդի բարի անունն են ստվերում, վիրավորում հայ մարդու արժանապատվությունը:

Հիմա անցնենք ձեզ հետաքրքրող հարցերին, խնդրեմ:

Ներողություն, դիմելով հարգարժան Տաթևիկ Նալբանդյանին, այն է՝ «Հայլուր»-ին, ասվածին մի բան էլ ավելացնեմ, որ հասու դառնա Ռոբերտ Քոչարյանին. պարոն Քոչարյան, ձեր նազիր-վեզիրներին հուշեք, որ քթները չմտցնեն այն հարցերի մեջ, որոնցից բացարձակապես գաղափար չունեն: «Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավարների ցանկացած հայտարարություն փոխանակ սվիններով ընդունեք,

թուղթ ու մատիտը վերցրեք, սիրուն գրառումներ արեք, որտեղ կդժվարանաք, խելքներդ չկտրի, չկաշկանդվեք, ասեք, պատրաստ ենք օգնելու, որովհետև գիտակցում ենք, որ օրակարգում ձեր ճակատագրի հարցը չէ, որ դրված է, այլ Հայաստանի բախտն է որոշվում: Մենք պատրաստ ենք հանուն Հայաստանի Հանրապետության պատվի ձեզ զերծ պահել վտանգավոր գործողություններից:

Ի դեպ, վաղը բոլորիդ հրավիրում եմ «Ազդակ» ակումբ, ուր Ալեքսան Կարապետյանը ժամը 12-ին կբացահայտի աղաղակող թալանի այն դեպքերը, որոնք իրականացվել են Հայաստանի Հանրապետությունում այս իշխանությունների բարձր հովանու ներքո: Այս հարցը հրատապ ենք համարում, քանի որ երեկ իր հայտարարության մեջ Ա. Կարապետյանի կողմից բերված փաստերը կասկածանքի էր վերցրել «Միկա-Արմենիայի» տնօրեն Միքայել Բաղդասարովը: Իրոք, պարոն Կարապետյանն այդտեղ թույլ էր տվել փոքր վրիպում. բողոքարկողի կողմից ոչ թե 2,8 միլիոն դոլար է թալանվել, այլ 3,8: Դրա համար ես Ա.Կարապետյանին դիտողություն եմ արել: Ինչո՞ւ անդրադարձա այս հարցին ևս: Ուզում եմ այս իշխանություններին զգուշացնել. հասարակության ուշադրությունը շեղելու համար բավական է իրական հանցագործներին թողած փորձեք անմեղ մարդկանց նկատմամբ հետապնդում կազմակերպել: Թարգեք «Ինտերպոլով» հետապնդել ճիշտ այն նույն գործարարին, որից ձեր հովանու ներքո 17 միլիոն դոլարի կողոպուտ են արել: Խոսքս հայտնի հայրենասեր-ձեռներեց Լևոն Մարկոսի՝ Լևոն Գրիգորի Հովհաննիսյանի մասին է: Եթե դուք՝ իշխանավորներ, իրոք, ազնիվ ու անաչառ եք, օրենքի ողջ ուժով հետապնդեք ձեր յուրայիններին, որոնք, բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնելով, լուրջ կասկածներ են հարուցում թմրաբիզնեսում ներգրավված լինելու մեջ: Ինքներդ շատ լավ գիտեք թե՛ այդ երևույթի և թե՛ դրա հետևում թաքնված անձանց մասին: Մի հասցրեք գործն այնտեղ, որ վաղը, մյուս օրը օվկիանոսի այն կողմից լինեն անվանական հրապարակումներ:

– Պարոն Գեղամյան, Գալուստ Սահակյանը «Եվրատեսիլ»-ում ներկայացվող Անդրեի երգը որակեց թաթար-մոնղոլական մոտիվներ: Ձեր գնահատականը (Նաիրա Զոհրաբյան.- «Հայկական ժամանակ»):

– Ճիշտն ասած, ի տարբերություն Գ.Սահակյանի, թաթար-մոնղոլական երաժշտական արվեստին ես այդ աստիճան ծանոթ չեմ, որ այս կամ այն կատարում վերագրեմ դրան: Ինչ վերաբերում է «Եվրատեսիլ»-ին ներկայացված երգին, ապա բաժանում եմ Գ. Սահակյանի այն տեսակետը, որ, թերևս, կարելի էր ուրիշ երգ և միգուցե ուրիշ կատարողի երգով տեսահոլովակ այնտեղ ուղարկել: Եթե ես լինեի որոշողը, համոզված կառաջարկեի, որ այնտեղ ուղարկեին Շուշան Պետրոսյանի կատարմամբ որևէ տեսահոլովակ, քանի որ, ըստ իս, նրա երգերը թե՛ արցախահայության, թե՛ հայաստանցիներիս համար շատ ավելի հոգեհարազատ են, և մեր երաժշտական արվեստի ակունքների հետ խորքային մեծ աղերսներ ունեն:

– Մամուլում նաև կարծիքներ հնչեցին, որ այս երգը մեր բարձր իշխանավորների ճաշակով է (Նաիրա Զոհրաբյան):

– Ես ողջունում եմ Գալուստ Սահակյանի հրապարակային քննադատությունն՝ ուղղված հայ բարձրաստիճան պաշտոնյաներին, այն է, որ նրանց էսթետիկական ճաշակը համընկնում է թաթար-մոնղոլական երգարվեստը բնորոշող կատարումների հետ:

– *Այնուամենայնիվ, պարոն Գեղամյան …*

– Էլի այդ երգից եք կախվել, կարծես թե հայ ժողովուրդն այսօր ուրիշ ոչ հոգս ունի, ոչ էլ ցավ: Հասկացանք, ձեր Ալիկի սրտովն է, Տաթևիկ, Հարությունյան Ալիկի: Իմ սրտով չէ, դրանից ողբերգություն մի սարքեք: Խնդրեմ, հաջորդ հարցը, համեցեք:

– *Վերադառնամ ձեր նախորդ հայտարարությանը. Դուք մեջբերում արեցիք Պետքարտուղարության տեքստից թարգմանելո՞վ, թե Վաղարշակ Հարությունյանի հարցազրույցից (Տաթևիկ Նալբանդյան.- Հ1, «Հայլուր»):*

– Հարգելի Տաթևիկ… Նալբանդյան (տեղից լրագրողները դիմելով Ա.Գեղամյանին՝ հարցնում են. ինչո՞ւ «Հայլուրի» լրագրող Տաթևիկ Նալբանդյանին «ջան» ասելով չեք դիմում), տո, «ջան» էլ ասեմ, ի՞նչ է եղել, ես առանձնահատուկ քնքշանքով եմ վերաբերում թե՛ Տաթևիկին, թե՛ «Հայլուրին»: *(Ծիծաղ դահլիճում):* Կրկին կարդանք այսօրվա «Իրավունք» թերթը, թեև Վ.Օսկանյանի նման կարող է այդքան ներշնչված չկարդամ և շեշտադրումներն էլ նրա սրտով չանեմ: Ինչևէ, զեկույցում գրված է՝ «… no government officials have been found to engage in these activities», հետո թարգմանված է. «… այդպիսի գործունեության մեջ ներգրավված կառավարական պաշտոնյաներ հայտնաբերված չեն»: Դե դուք պատկերացնո՞ւմ եք, թե հանկարծ Լատվիայի նախագահին կամ Վրաստանի, կամ ցանկացած իրեն հարգող ազգի նախագահին, ղեկավարությանն ասեին, որ իրենց բարձրաստիճան պաշտոնյաները թմրաբիզնեսում դեռ հայտնաբերված չեն, բացահայտված չեն: Պատկերացնո՞ւմ եք, թե բողոքի ինչ ալիք կբարձրացնեին այդ երկրների մտավորականները, հասարակությունը: Նորից կրկնեմ. Հայաստանի Հանրապետությունն այն աստիճանի են հասցրել, որ հորթի հրճվանք են ապրում զեկույցի այն ձևակերպումից, ըստ որի երկրի բարձրաստիճան պաշտոնյաները դեռ բացահայտված չեն այդ հանցագործության մեջ: Վարդան Սինասիչը Ազգային ժողովում փոխանակ իր վրա վերցներ թարգմանչի պարտականություն, պետք է բողոքի նոտայով հանդես գար ուղղված ԱՄՆ-ի Պետական քարտուղարությանը, ասելով. զեկույցում հայաստանյան բարձրաստիճան պաշտոնյաների հիշատակումը նման մեկնաբանությամբ, այն էլ նման հարթության մեջ, համարում ենք ոչ կոռեկտ և մեր ազգային արժանապատվությունը վիրավորող ուժգին հարված: Այ, սա կլիներ ամենավառ ապացույցը, որ հայտարարությանս մեջ հնչած տագնապներն անհիմն են: Ավա՜ղ, լռում են, խուսափում գնահատական տալուց, ծավալում են թարգմանական գործունեություն, հիշեցնելով այն զավեշտը, թե ինչպես ժամանակներ առաջ «սամալյոտների» սանհանգույցների դռներին փակցված ցուցավահանակների վրա գրված բառերի առնչությամբ («օկուպայա»-ը, ի՞նչ է, «զբաղված» է, թե «օկուպացված») «լուրջ» բանավիճում էին պարոններ Քոչարյանը և Օսկանյանը: Ժողովրդին այնքան ժամանակ մոլորության մեջ գցեցին, մինչև Եվրախորհրդի Խորհրդարանական

վեհաժողովի և միջազգային հեղինակավոր այլ կազմակերպությունների պաշտոնական փաստաթղթերում ազատագրված տարածքները որակվեցին որպես Հայաստանի ագրեսիայի արդյունքում «օկուպացված» տարածքներ: Հիմա նույն խաղերն են տալիս. երկրի բարձրաստիճան պաշտոնյաներին կասկածում են թմրաբիզնեսում ներգրավված լինելու մեջ, իսկ սրանք նաղլ են պատմում ժողովրդին՝ նախադասության սկզբում «ոո»-ն ի՞նչ կցուցանե, վերջում՝ ի՞նչ: Ա՜յ քեզ հաջողություն...

Եվ այս պարագայում հիշեցնեմ. տարիներ շարունակ Եվրախորհրդի և ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովների լիագումար նիստերում ադրբեջանական պատվիրակներն իրենց ելույթներում (անկախ քննարկվող հարցերի հետ առնչվելու հանգամանքից) միջազգային հանրությանը լսեցնել էին տալիս, որ Հայաստանն ու հատկապես մեր կողմից «գրավյալ տարածքները» դարձել են նարկոտրաֆիկի տարանցիկ գոտի: Այդ կառույցներում, ի պատասխան դրանց, երբ ելույթներ էի ունենում, ազերիներն ու թուրքերը անում էին ամենը, որ ինձ խանգարեն: Հայաստանում էլ հայրենյաց իշխանություններն էին արգելքներ դնում ելույթներս հեռուստատեսութամբ ցուցադրելու: Իսկ այժմ վրդովմունք ու տագնապ է առաջացնում այն, որ ադրբեջանական քարոզչամեքենայի հայատյաց նման մեկնաբանությունները տեղ են գտնում պաշտոնական Վաշինգտոնի զեկույցում: Եվ սա տեղի է ունենում, կրկնեմ, Հանրապետության ոչ լեգիտիմ իշխանությունների լռակյաց և գլխիկոր պահվածքի պայմաններում:

Ակնհայտ է, տղերքը սպառել են իրենց և վտանգ են ներկայացնում մեր պետականության համար: Պատահական չէր, որ հայտարարությանս մեջ ասացի, վերստին կրկնում եմ. անցնցում իշխանափոխություն իրականացնելու համար պատրաստ ենք բանակցել պարոն Քոչարյանի հետ, ըստ որում, բաց եթերով: Կանչում եք Հ1 եթերասրահ ինձ, Ալեքսան Կարապետյանին, ինչու չէ, Աղասի Արշակյանին: Հիմնավորված այնքան փաստարկներ կան ի հաստատումն այս իշխանությունների հեռացման անհրաժեշտության, որ մենք կարող ենք թեկուզ այդ կազմով էլ հանդես գալ և մյուս կողմից, ակնկալում ենք, համապատասխանաբար, պարոն Քոչարյանին և Սերժ Սարգսյանին: Թերևս երկուսին: Բայց որ չստացվի, թե երկուսը երեքի հետ են բանավիճելու, ես կարող եմ դրան չմասնակցել:

– Պարոն Գեղամյան, ինչպե՞ս եք վերաբերում Մերզլյակովի չմասնակցությանը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ներկայացուցիչների և ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դենիել Ֆրիդի ստամբուլյան հանդիպմանը: Ինչպե՞ս եք գնահատում Արտաշես Թումանյանի հեռացումը և Վանո Սիրադեղյանի հայտնությունը: (Կարմեն Դավթյան.- «Ժամանակ», Լոս Անջելես):

– Իմ կարծիքով, այն տեղեկատվությունը, որ մամուլում հրապարակվեց, ըստ որի Յուրի Մերզլյակովն այդ օրերին հիվանդ է եղել, թերևս, իրավունք չունենք կասկածի տակ վերցնելու և այստեղ միտում փնտրելը,գտնում եմ անիմաստ: Եվ, ինչպես կասեր չինացի մեծ փիլիսոփան, պետք չէ մութ սենյակում սև կատու փնտրել, եթե նախապես հայտնի է, որ այնտեղ կատու չկա:

Ինչ վերաբերում է Վանո Սիրադեղյանին, ապա «հայտնություն» ձևակերպումը մերժում եմ: «Հայկական ժամանակ» թերթում Վանո Սիրադեղյանի հետ կայանալիք հարցազրույցին կանդրադառնամ, այն կարդալուց հետո:

Արտաշես Թումանյանի հետ կապված հարցերը... Գիտեք, ցավ ես ապրում, երբ մարդ, որը 1999 թ. հոկտեմբերի 28-ից սկսած քաջալերում էր Ռ.Քոչարյանին, նրա կողքն էր այն ժամանակ, երբ գրեթե բոլորը նրանից երես էին թեքել, հայտնվեց այս վիճակում: Խոսքս, այո, Արտաշես Թումանյանի մասին է, որը հետագայում շուրջ 6 տարի նրա աշխատակազմի ղեկավարն էր, և որը այսպես անհասկանալի պայմաններում հեռացվում է ոչ միայն պաշտոնից, այլև հարկադրաբար լքում է քաղաքական դաշտը: Ես, պարզապես, կարող եմ Ա.Թումանյանի հետ կատարվածի հետևում կանգնած մարդկանց հիշեցնել հայտնի ճշմարտությունը. ուրիշներին մի արա այն, ինչը չես ուզենա, որ քո նկատմամբ անեն: Առաջիկայում մենք ականատեսը կլինենք, որ համանման իրավիճակում կհայտնվեն ճիշտ այն նույն մարդիկ, ովքեր Արտաշես Թումանյանի հետ նման կերպ են վարվել: Իսկ եթե կային ուրիշ լուրջ պատճառներ, հասկանալի է, այդ պատճառները բնավ նոր չէ, որ ի հայտ են եկել, դրանք միշտ էլ եղել են: Այստեղ է, որ հաստատվում է այն միտքը, որը հնչեց նույնպես Ազգային ժողովում ելույթներիցս մեկում: Այն է, որ գործող իշխանությունները հնարավորություն են տալիս, և ոչ միայն հնարավորություն են տալիս, այլև իրենք են դրդում, որ այս կամ այն պաշտոնյան հակաօրինական գործողություն անի, որով էլ հետագայում շանտաժ են անում: Չէի ուզենա մտածել, որ Թումանյանի հետ կատարվածը տեղավորվում է այս տրամաբանության շրջանակներում:

– Պարոն Գեղամյան, դուք Լուկաշենկոյին համարո՞ւմ եք բռնակալ (Կարմեն Դավթյան):

– Լուկաշենկոյի բռնակալ լինել-չլինելու խնդիրը Հայաստանի համար այդչափ հրատապ կլիներ այն ժամանակ, երբ մեր հանրապետության նախագահը իր ժողովրդավարությամբ Չեխիայի առաջին ղեկավար Վացլավ Հավելը լիներ և ոչ թե Ռոբերտ Քոչարյանը: (*Ծիծաղ դահլիճում*): Ասեմ, որ Լուկաշենկոյի ընտրությունների մեջ առավել խորացել է Աղասի Արշակյանը, որն էլ կպատասխանի դրան առնչվող հարցերին:

– Ձեր կարծիքը «Խորհրդարանական շաբաթ» հաղորդման վերաբերյալ: Գալուստ Սահակյանն ասել է՝ «Խորհրդարանական շաբաթը» վեր է ածվել մոնոլոգի, ի նկատի ունենալով Արթուր Բաղդասարյանին (Տաթևիկ Նալբանդյան.-Հ1, «Հայլուր», Մարիետա Մակարյան.- «Ազգ»):

– Հետաքրքիր է, որ պարոն Սահակյանի ասածները այս լսարանը ընկալում է ասես մարգարեություն: Ինչևէ, Ձեր հարցը տխրեցրեց և մտահոգեց ինձ: Չլինի՞ թե կոալիցիայի մեջներովն էլի սև կատու է անցել, այ, այ, այ: Ըստ իս, «Խորհրդարանական շաբաթը» հեռարձակումից հնարավոր հանելու բուն պատճառը, թերևս, ոչ թե Արթուր Բաղդասարյանին հատկացված առյուծի բաժին տեսագրություններն են, այլ «Արդարություն» և «Ազգային Միաբանություն» խմբակցությունների երեք րոպեանոց հայտարարու-

թյունները չհեռարձակելը: Եվ, ինչու չէ, նաև խանդը «Օրինաց երկիր» կուսակցության հանդեպ կոալիցիայի գործընկերների կողմից: Հավանաբար, Գ. Սահակյանը նման պնդումներ անելուց առաջ խրոնոմետրաժ է արել և «բացահայտել», որ «Խորհրդարանական շաբաթի» 45 րոպեներից 47 րոպեն «Օրինաց երկրի» գործունեության մասին է: Շնորհակալություն:

***

Վերջաբանի փոխարեն.

Ջուր եք ինձ կարդում խրատ ու հորդոր,
Սիայն ապրելը քի՞չ է ինձ համար…

Սիլվա Կապուտիկյան

10.12.04 թ., Երևան

«Իրավունք», 31.III.-6.IV.2006:

... Предотвратить превращение региона Южного Кавказа в Новую Палестину

Выступления лидера партии "Национальное единение" Арташеса Гегамяна на Парламентских Ассамблеях Совета Европы и ОБСЕ построены, как правило, в едином ключе, позволяющем озвучить карабахский вопрос, отталкиваясь от актуальных проблем европейской и глобальной политики.

Не стал исключением и его нынешний доклад, прозвучавший на проходящей на этой неделе в Страсбурге сессии ПАСЕ. Предлагаем вниманию читателя текст этого выступления.

Уважаемые коллеги! В январе этого года движение ХАМАС одержало убедительную победу на парламентских выборах в Палестине. Примечательно, что за ХАМАС проголосовало и христианское население Палестины, которое составляет 10% от общего числа жителей автономии. В марте партия «Кадима» Ариэля Шарона–Эхуда Ольмерта на выборах в Кнессет (парламент) Израиля получила наибольшее число голосов избирателей (29 мандатов, партия «Авода» 19 мандатов).

Победа ХАМАС имеет особый смысл, а именно: народ Палестины предпочел национально-религиозную партию с ее идеей солидарности, равенства, заботой о ближнем и отвернулся от материалистической либеральной парадигмы.

Менее убедительная победа «Кадимы» свидетельствует о приверженности народа Израиля следовать реализации плана «Дорожной карты», суть которой – «Безопасность в обмен на территории».

Эхуд Ольмерт в своей победной речи заявил: «Я хочу обратиться к главе Палестинской автономии Махмуду Аббасу. Мы готовы отказаться от нашей мечты – овладеть единой и неделимой Землей Израиля. Я призываю палестинцев также отказаться от части своих желаний и мифов ради возможности жить в мире рядом с Израилем». В эти же дни политический лидер ХАМАС-а Халед Машааль подчеркнул, что ХАМАС никогда не будет торговать своими принципами и не поддастся на уговоры примириться с Израилем без выполнения

выдвинутых ими главных условий: освобождение всех палестинских территорий, включая Иерусалим, и возвращение на родину палестинских беженцев.

Где же выход из этой чреватой возобновлением насилия ситуации и есть ли он? Где же кроются исторические, мировоззренческие корни конфликта, который не прекращается со дня создания государства Израиль в 1948 году? Воистину, слишком уж сложен Иерусалим и неслучайно Господь послал трёх разных пророков в разные места.

Думается, что главное препятствие на пути к мирному завершению арабо-израильского конфликта заключается в прямо противоположном понимании обеими сторонами конечной цели процесса переговоров. Мир в регионе для израильтян представляется как нормальное состояние, когда снимаются взаимные претензии конфликтующих сторон, и их отношения обретают прочный правовой статус. Иными словами, в своих рассуждениях израильтяне опираются на понятия, характерные для либеральной демократии XX века. Арабы же, и в особенности палестинцы, рассматривают само появление Израиля как вторжение на священную арабскую землю. По мнению весьма авторитетных экспертов, они могут согласиться на территориальный компромисс просто за неимением иного выхода. Но к этому компромиссу они отнесутся примерно так же, как Франция, которая была вынуждена согласиться на аннексию Германией Эльзаса и Лотарингии в 1870 году. То есть усмотрят в этом вынужденную необходимость, сопряженную с решимостью дождаться момента и вернуть утраченное.

Как же действовать в сложившейся ситуации? Генри Киссинджер в своей монографии «Нужна ли Америке внешняя политика» вспоминает об одной из своих бесед с Ясиром Арафатом, в июле 1994 года в Париже на церемонии вручения ему, Ицхаку Рабину и Шимону Пересу Премии Мира имени Феликса Уфуэля Буани. Киссинджер спросил, почему израильтяне должны верить ему? «Потому что саудовцы от нас отказались, иорданцы стараются нас ослабить, а сирийцы – нами править», – ответил Ясир Арафат.

Это означает, что возможность компромисса в палестино - израильском конфликте в немалой степени зависит от позиции арабских государств. Какие перспективы заложены здесь? Исламский арабский мир далеко не однороден. В нем есть несколько влиятельных геополитических узлов, каждый из которых опирается на обособленные религиозные, исторические, культурные и цивилизационные традиции и проводит самостоятельную стратегическую линию как в глобальном, так и в локальном масштабах.

Так, Египет, уже добившийся восстановления своих национальных границ, обычно придерживается умеренного подхода. Однако, исходя из

внутренних причин у него мало оснований для того, чтобы пойти на такой огромный риск и выступить за такие программы переговоров, которые могут быть осуждены как радикальными арабскими режимами, так и радикалами в самом Египте. Напомним, что на последних более или менее демократических парламентских выборах в Египте около 20% голосов избирателей было отдано группировке «Братья мусульмане», от которой в 1987 году отпочковался ХАМАС. Что же касается королевства Саудовская Аравия, то оно управляет как племенами кочевников-фундаменталистов, так и городскими конгломератами, сравнимыми с западными. Никому не дано втянуть саудитов в какие-либо сомнительные переговоры, требующие взаимных уступок, – тем более, если учесть, что Саудовская Аравия не принимала участия ни в каких арабо-израильских войнах и наверняка будет способствовать любому окончательному результату, действуя из-за кулис.

Иордания всегда искренне способствовала арабо-израильским дипломатическим усилиям. Однако, положение хашемитского королевства Иордании, расположенного между Израилем, Сирией, Ираком и будущим палестинским государством, делает его исключительно чувствительным к давлению радикалов со всех сторон.

Вместе с тем на недавно завершившемся в Хартуме (Судан) ежегодном Саммите Лиги арабских государств (ЛАГ) генеральный секретарь этой организации Амр Муса, отвечая на вопрос относительно ситуации в палестино-израильском направлении, заявил, что ХАМАС проводит взвешенную политику.

Резюмируя, можно сделать вывод, что формула «Безопасность в обмен на территории» приведет к тому, что, когда территориальные уступки Израиля будут поставлены в зависимость от палестинских компромиссов относительно исламских священных мест, то это неизбежно расширит круг участников переговоров, превратит позицию одного из них в панарабскую, даже панисламистскую, что усилит влияние палестинского руководства, одновременно ограничится его гибкость в переговорном процессе.

Неоднозначно складывается ситуация и в самом Израиле. Накануне выборов в Кнессет в небольшом заштатном местечке Амон имело место «забрасывание камнями» израильских, родных по крови, солдат. Сложилось впечатление, что это происходило в арабском поселении, а не еврейском, и мы, словно, стали свидетелями акции возмездия после очередного террористического акта. Но камни летели из рук евреев, которые организовали здесь свою «интифаду», переняв опыт ведения боевых действий у палестинцев. Они защищали свои дома, свою землю так же, как это

делают палестинцы. После тысячелетних скитаний у евреев отношение к клочку земли, который можно назвать родным, особое. Именно этим можно объяснить ярость, с которой они защищали крохотный Амон от своих же соплеменников, действующих, в их представлении, в интересах врагов-палестинцев по плану «Дорожной карты». Двое полицейских были убиты, около 200 – серьезно ранены. В операции против жителей Амона были задействованы 2000 солдат и более 3000 полицейских. Им противостояли три тысячи еврейских радикалов, правых экстремистов, почти что террористов, если судить по кровавому итогу.

Примечательно, что в разгар бойни в Амоне именно либералы («Кадима») настояли на беспрецедентном решении о выплате компенсации 28 палестинцам в размере 100 тысяч долларов каждому за то, что те ни за что отсидели по году и больше в израильских тюрьмах.

Как же разрубить «гордиев узел» палестино-израильского конфликта, кровоточащий десятилетиями. Вспомним события десятилетней давности.

4 ноября 1995 года был убит Ицхак Рабин. Весь мир видел, а многие присутствовали на похоронах Рабина. Для короля Иордании Хусейна это был его первый официальный визит в Израиль, а для президента Египта Мубарака – вообще первое посещение еврейского государства. Скорбели и иудеи, и мусульмане, и христиане. Скорбели все, кому не чужды гуманизм и сострадание.

25 сентября 1996 года один из лидеров ХАМАС-а Халед Машааль подвергся нападению двух человек, когда он выходил из своей машины в Аммане, Иордании. Один из нападавших прижал к голове Машааля за ухом серебристый инструмент и впрыснул ему парализующий яд. Телохранители Машааля задержали напавших и передали их иорданской полиции, которая установила, что они являлись израильскими агентами. Король Иордании Хусейн, наверное, один из лучших друзей Израиля в арабском мире, был на грани разрыва дипломатических отношений с Израилем. Будучи тогда премьер-министром, Бениамин Нетаньяху лично отправился в Амман, дабы принести извинения, но король отказался его принять. Хусейн заявил, что если Машааль умрет, то израильские агенты предстанут перед судом на открытом процессе и будут повешены. В конце концов Нетаньяху выслал противоядие и жизнь нынешнего политического лидера ХАМАС была спасена. Израиль также согласился освободить семьдесят палестинцев, обвиняемых в терроризме. В их числе был духовный лидер ХАМАС, шейх Ахмед Ясин, который погиб в прошлом году в ходе израильского ракетного обстрела.

В том же 1996 году лишившийся рассудка иорданский солдат убил семерых израильских школьниц. Тогда, в отличие от других ближневосточных лидеров, король Иордании не стал искать никаких оправданий. Он лично отправился в Израиль, встретился с родителями погибших, коленопреклонно молился вместе с ними, покаялся от имени своей страны и выразил соболезнования. Этот жест доброй воли имел особый смысл, ибо демонстрировал заботу и уважение к любой человеческой жизни, неважно, арабской или израильской... Это был, всего лишь, один поступок, но в нем можно было усмотреть ключ к решению всего клубка роковых проблем, тяготеющих над Ближним Востоком. На церемонии подписания Уай-Риверского меморандума 1998 года между Палестиной и Израилем один из прямых потомков Пророка Мохаммада король Иордании Хусейн (во время своего последнего официального визита в Белый дом) выступил без заранее подготовленного текста, особо подчеркнув необходимость положить конец «культуре» смерти, разрушения и уничтожения и занять место в мире, «которое достойно нас самих, наших народов. Достойное место для потомков, детей Абрахама (Авраама), объединившихся палестинцев и израильтян».

Эти слова особенно актуальны и сегодня для всех нас. Думается, крайне важно, чтобы нынешнее азербайджанское руководство вняло советам потомка Пророка и отказалось от опасной, воинствующей, подстрекающей к насилию, риторики. А Парламентская Ассамблея Совета Европы внесла бы свою лепту в дело ускорения международно-правового признания Нагорного Карабаха, республики, которая вот уже 16 лет де-факто демократически самоопределилась и независима. Только этот путь может предотвратить превращение региона Южного Кавказа в Новую Палестину.

Выступая в Римском Сенате, Катон Старший, как правило, завершал свою речь словами: "Впрочем, Карфаген должен быть разрушен". Мечта Катона сбылась. Карфаген был разрушен. Вот и мы уверены, что Нагорный Карабах будет признан мировым сообществом, и начало признания Нагорного Карабаха будет положено Парламентской Ассамблеей Совета Европы.

Арташес Гегамян

Европейские народные партии/христианские демократы

Страсбург, 11 апреля 2006 г.

"Новое время", 13. IV. 2006.

Քննադատում է և՛ իշխանությանը, և՛ ընդդիմությանը

«Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի գնահատականները վերջին շրջանի մի քանի իրադարձությունների:

Արտաքին քաղաքական շփոթ

«Ազգային Միաբանության» առաջնորդն անդրադարձավ «Frankfurter Allgemeine Zeitung» թերթում Արթուր Բաղդասարյանի հարցազրույցին, ուր նա նախ նշել էր. «2007-ի խորհրդարանական և 2008-ի նախագահական ընտրությունները երկրի համար մեծ նշանակություն ունեն, դրանք պետք է ցույց տան, թե ուր ենք գնում՝ դեպի Եվրո՞պա, թե՞ հետ: Այն մարդիկ, ովքեր դեռ մտածում են, թե կարող են ընտրությունները կեղծել, պետք է հասկանան, որ այդ ժամանակները Հայաստանում արդեն անցել են: Եթե ևս մեկ անգամ այնպիսի կեղծիքներ լինեն, ինչպես նախորդ ընտրություններում, երկրում մեծ ցնցումներ տեղի կունենան», նաև հայտարարել. «Հայաստանի ապագան ԵՄ-ն և ՆԱՏՕ-ն են... Ռուսաստանը չպետք է կանգնի դեպի Եվրոպա մեր ճանապարհին»: Հիշատակելով Ռոբերտ Քոչարյանի կոշտ հակադարձումն այս հայտարարություններին՝ պրն Գեղամյանը նշեց. «Ինչո՞ւ այդ աստիճանի զայրացավ պրն Քոչարյանը: Պարզապես ԱԺ խոսնակը ժամանակից առաջ անցնելով՝ բացահայտել էր այն, ինչ վերին շրջանակներում արդեն իսկ որոշված հարց է: Սա պնդում եմ, քանի որ 2-3 ամիս առաջ հայտարարվեց, թե ազգային անվտանգության ռազմավարության նախագիծը, չգիտես ինչու, ուղարկվելու է մի կողմից՝ Ռուսաստան, մյուս կողմից՝ ԱՄՆ: Եթե Հայաստանի ղեկավարությունն իրոք անկեղծ է իր պնդումների մեջ, որ իր ապագան տեսնում է «Հավաքական անվտանգության պայմանագիր» կազմակերպության մեջ, ուրեմն ինչո՞ւ է հակադիր երկրներ ուղարկում իր ազգային անվտանգության հայեցակարգը: Սա անուղղակիորեն ապացուցում է, որ Արթուր Բաղդասարյանն ամենևին նորություն չի ասել իշխանությունների համար՝ հայտարարելով ՀՀ-ի կողմնորոշումը դեպի ՆԱՏՕ: Ես չեմ քննարկում՝ դա բացասակա՞ն կանդրադառնա երկրի անվտանգության վրա, թե՞ դրական: Բայց այն, որ ԱԺ խոսնակն իրոք նոր բան չէր ասել՝ ապացույց դարձավ նաև ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի ապրիլի 24-ի ուղերձը, որտեղ նա հայտարարեց. «Մենք ցանկանում ենք Հայաստանին օգնել՝ անվտանգությունը ավելի լավ ապահովելու և եվրաատլանտյան ընտանիքում ավելի խորը ներգրավվելու հարցում»: Ռուսաստանի

համար այսպիսով հասկանալի դարձավ, որ Հայաստանի բարձրաստիճան իշխանությունը երկակի խաղ է խաղում: Ու նաև ԱՄՆ-ի համար հասկանալի դարձավ, որ ՀՀ իշխանություններն իրենց հետ զրույցներում նույնպես անկեղծ չեն Հայաստանի հեռանկարային զարգացումների և դաշինքների մեջ մտնելու հարցում: Ահա թե ինչու այդ աստիճան զայրացավ պրն Քոչարյանը:

Սրա հետ մեկտեղ, տարակուսանք է առաջացնում այն, որ երկրի ի պաշտոնե 2-րդ դեմքը շուրջ մեկ շաբաթվա ընթացքում արտաքին քաղաքականության ոլորտին վերաբերող տրամագծորեն հակադիր և իրարամերժ հարցազրույցներ է տալիս՝ մեկ «Frankfurter Allgemeine Zeitung»-ին, մեկ էլ Սանկտ Պետերբուրգում՝ «Ինտերֆաքսին»: Սա ևս մեկ անգամ ապացուցում է «Ազգային Միաբանության» բազմիցս հրապարակած թեզը, որ հայաստանյան իշխանություններն ընտրել են գերտերությունների միջև եղած տարաձայնությունների վրա քաղաքական դումար խաղալու քաղաքականությունը: Եվ երբ նրանք հայտնվում են արևմտյան երկրների տիրույթում՝ խոսում են Հայաստանի արևմտամետ լինելու մասին, իսկ երբ հայտնվում են ՀԱՊԿ անդամ երկրներում ու հատկապես Ռուսաստանում՝ արդեն իսկ հանդես են գալիս տրամագծորեն այլ հարցադրումներով: Մեր իշխանությունները վարելով ջայլամային քաղաքականություն՝ երևի կարծում են, թե ամերիկացիները կույր են, չեն հետևում ԱՄՆ-ից դուրս իրենց հրապարակային ելույթներին, ինչպես նաև՝ կույր են ՌԴ-ում և չեն հետևում արևմտյան մամուլին տրված հարցազրույցներին»:

Անդրադարձավ նաև Ռոբերտ Քոչարյանի այն պնդմանը, թե ԱԺ խոսնակը իր մոտ է լինում յուրաքանչյուր շաբաթ, և «զարմանալի էր գերմանական թերթի էջերից իմանալ իր՝ նման տեսակետներ ունենալու մասին»: Ըստ պրն Գեղամյանի՝ «ակնարկը շատ թափանցիկ է: Այն է՝ խոսնակը շաբաթը մեկ հաշվետվության է գնում նախագահի մոտ, հրահանգներ ստանում նրանից և իր հայտարարությունը չէր տեղավորվել պրն Քոչարյանի տված հրահանգների շրջանակում: Ասել կուզի՝ անգամ իսկ սահմանադրական փոփոխություններով հստակ ձևակերպված ԱԺ-ի դերի բարձրացումն այս իշխանությունների պարագայում ոչ այլ ինչ է, քան խաբկանք»:

Սեփականաշնորհման խութերը

ԱԺ նախագահի քննադատության հասցեատերը, թե 2001-2003 թվականների սեփականաշնորհման գործընթացի ընթացքում տեղի են ունեցել չարաշահումներ, մասնավորեցվել են իրական արժեքից ցածր գնով՝ ըստ Արտաշես Գեղամյանի, անուղղակի մեղադրանք է Ռոբերտ Քոչարյանի հասցեին. «Քանի որ այդ բոլոր գործարքները կատարվել են կառավարության որոշումներով, իսկ դրանք ուժ են ստանում միայն երկրի ղեկավարի ստորագրությամբ»:

Մեր հարցին, թե արդյոք հարկ չէ՞, որ ընդդիմությունն այս հարցում աջակցի «Օրինաց երկրին», որը թիրախ է դարձել իր կոալիցիոն գործընկերների համար՝ «Ազգային

Միաբանության» նախագահը պատասխանեց. «Այս ալան-թալանը, որի փաստացի ապացույցներն արդեն դարձել են ժողովրդի սեփականությունը՝ նոր չէ իրականացվում: 2001-ին, 2002-ին, 2003-ին ճիշտ այս նույն իշխանությունների օրոք կատարվել են ճիշտ նույն ապօրինությունները: Սակայն ստացվում է, որ երբ տվյալ կուսակցությունն իշխանության մաս չէ՝ քննադատում է այդ անօրինականությունների համար: Իսկ երբ հայտնվում է այդ ալան-թալանն իրականացնողների շարքում՝ տևական ժամանակ սեփական քաղաքական վարքագիծը ենթարկում է ամնեզիայի, ասես՝ մոռացել է իր իսկ հայտարարությունները: Բայց երբ նորից ԱԺ ընտրությունների փուլ է՝ հանկարծ կրկին հիշողության պայծառացում է լինում և նույն կրքոտությամբ սկսում է քննադատել: Սա վկայում է այն մասին, որ ցանկացած քաղաքական ուժ, եթե ուզում է իրոք հեղինակություն վայելել ժողովրդական ամենալայն շրջանակներում՝ պետք է ի սկզբանե հստակ ձևակերպի վերաբերմունքը Ռոբերտ Քոչարյանի վարչակազմի հանդեպ: Եվ առնվազն անազնիվ է, եթե այդ գնահատականը չի տրվում, ու փոխարենը քննադատվում են նրա հենարանի այս կամ այն դրսևորումները: Քանի որ բոլորս շատ լավ հասկանում ենք, որ Անդրանիկ Մարգարյանը երբեք ու երբեք չի ունեցել այն չափով իշխանական լիազորություններ, որ կարողանար 2001-2003-ին օրենքի կոպիտ խախտումներով սեփականաշնորհված օբյեկտների ճակատագիրը միայնակ որոշել՝ առանց վերին պայծառություն Ռոբերտ Քոչարյանի «դաբրոյի»: Այնպես որ, այստեղ ԱԺ խոսնակը որդեգրել է «կուժ՝ քեզ եմ ասում, կուլա՝ դու հասկացիր» քաղաքականությունը: Եվ եթե նա իրոք դարձի է եկել, եթե վերադառնա Հայաստան ու հայտարարի՝ պրն Քոչարյան, այս ամենի ետևում Դո՛ւք եք կանգնած, անմիջականորեն Դո՛ւք եք հովանավորել այս ալան-թալանը և կառավարության հետ հավասարապես պետք է պատասխան տաք 2001-2003-ի այս ապօրինությունների համար՝ իհարկե, «Ազգային Միաբանությունը» կպաշտպանի այդ դիրքորոշումը»:

Չախողումների հետագիծը

«Հանրապետություն» կուսակցությունն օրերս հայտ էր ներկայացրել միայնակ, առանց այլևս որևէ քաղաքական ուժի հետ միավորումների մասին մտածելու՝ դառնալ առանցք, որի շուրջ կձևավորվի «նոր որակի ընդդիմություն»: «Ազգային Միաբանության» նախագահն այս կապակցությամբ ասաց. «Ինձ ոգևորում է, որ ընդդիմության այդ հատվածը ճիշտ դասեր է քաղել սեփական քաղաքականության մեջ տեղ գտած լուրջ բացթողումներից և իր մեջ ուժ է գտնում դառնալ առանցք: Ինչ խոսք, կան նման հնարավորություններ, որ «Հանրապետություն» կուսակցությունը դառնա «18+1+8» ձախողված ձևաչափի նոր առանցքը: Քանի որ եթե պատվախնդրությամբ առաջնորդվեն այդ կազմակերպությունները, ապա պետք է վերստին միավորվեն ու ժողովրդին կրկին ասեն, թե ամեն ինչ դեռ կորսված չէ: Ինչ վերաբերում է «Ազգային Միաբանությանը»՝ մենք հետևել ենք մեր իսկ ընդունած որոշումներին: Եվ, բարեբախտաբար, ամեն ինչ

ընթանում է ճիշտ այն ուղով, որը մենք կանխատեսել էինք դեռ 1 տարի առաջ»:

«Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Սուրեն Սուրենյանցը նաև նշել էր, թե ընդդիմության համար տեսանելի չեն իշխանափոխության հստակ մեխանիզմները: Սակայն Արտաշես Գեղամյանը շարունակում է պնդել, թե «օր առաջ հարկավոր է անցկացնել Ազգային ժողովի և նախագահական արտահերթ ընտրություններ: Սա եզակի փրկօղակ կարող է լինել այս ձախողված, անսկզբունքայնության, խաբեության մեջ բացահայտված ու վտանգավոր դարձած իշխանությունների համար»: Իսկ «տեսանելի՞ են արդյոք մեխանիզմները» մեր հարցին ի պատասխան՝ ասաց. «Քաղաքականության մեջ մաքսիմալիստ լինելը նույնն է, թե ձախողել այդ քաղաքականությունը: Եթե ընդդիմադիր դաշտի այս կամ այն թևի համար տեսանելի չեն իշխանափոխության հնարավոր ուղիները, ապա պետք չէ սեփական քաղաքական կուրսությունը վերագրել ընդդիմադիր ամբողջ դաշտին: Պարզապես ստեղծված իրավիճակում մենք պետք է պատրաստ լինելով ցանկացած պահի արմատական անակնկալների՝ պիտի պատրաստ լինենք վերցնել իշխանությունը մեր ձեռքը: Այս իշխանություններն արդեն իսկ գոյություն չունեն: Իրենց հանդուրժում են մի կողմից՝ ԱՄՆ-ն, մյուս կողմից՝ ՌԴ-ն, այն պարզ պատճառով, որ հանգուցալուծման է մոտեցել մայր հարցը՝ Լեռնային Ղարաբաղի և Հարավային Կովկասի հեռանկարային զարգացումներն ապահովող խնդիրների լուծումը, որը դոմինանտ էր նաև 2003-ի ընտրությունների ու նաև հանրաքվեի ժամանակ գործված ընտրակեղծիքների վրա աչքերը փակելու ժամանակ: Եվ այս իշխանություններն արդեն պետք է ճարահատյալ կյանքի կոչեն իրենց տված բազում խոստումները ԱՄՆ-ին, ՌԴ-ին և Եվրամիությանը: Իսկ այդ խոստումներն անհամատեղելի են՝ այն, ինչ խոստացել են ԱՄՆ-ին, անընդունելի է ՌԴ-ի համար, և հակառակը: Այս իրավիճակում արհեստականորեն երկրի ներսում ալիք բարձրացնելը նշանակում է ջուր լցնել Քոչարյանի և Սերժ Սարգսյանի ջրաղացին, քանի որ նրանց ներկայումս օդի պես անհրաժեշտ է երկրի ներսում ապակայունացումը, որի վրա և կփորձեն բարդել ԼՂ խնդրի լուծումից հրաժարվելը: Այս պարագայում չեմ բաժանում մեր գործընկերների հոռետեսությունը»:

Հ. Գ. Սպարտակ Եղիազարյանի հայտարարությունների, նաև ՌԴ-ում մեր հայրենակիցների վրա հարձակումներին ընդդիմության լռությամբ արձագանքելու վերաբերյալ պրն Գեղամյանի պարզաբանումները կներկայացնենք առաջիկայում:

Հետաքննությունը՝ փորձաքար

Արտաշես Գեղամյանը Հայաստանում չէր, երբ «Ազգային Միաբանության» ճեպազրույցում բացահայտումներով հանդես եկավ Օշական գյուղի ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահ Սպարտակ Եղիազարյանը:

Հետո նախագահի ընտրության և հանրաքվեի ընթացքում նաև իր կողմից կատարված

խախտումների մասին բացահայտումները Սպարտակ Եղիազարյանը փորձեց ներկայացնել այլ լույսի ներքո և մոգոնեց մի անհեթեթ պատրվակ՝ իբր փորձել է այդ միջոցով ուշադրություն հրավիրել Արագածոտնի դաշնակցական մարզպետ Գագիկ Գյոզալյանի ապօրինությունների վրա:

«Ձեր կարծիքով, նա տեղի տվեց իրավապահների ճնշումների՞ առջև, թե՞ իրականությանն առավել համապատասխանում է այն վարկածը, որ Սպարտակ Եղիազարյանն ուղղակի պարտքեր ուներ, և հենց այդ գումարը վճարեց Արագածոտնից ընտրված պատգամավորը՝ նա հրաժարվեց իր բացահայտումներից»,- մեր այս հարցին ի պատասխան՝ «Ազգային Միաբանության» նախագահն ասաց. «Եթե մենք իրոք պատասխանենք շրջանառվող այս հարցերին՝ կնշանակի, շեղվում ենք բուն խնդրից, որն է՝ իր ինքնախոստովանության ժամանակ Սպարտակ Եղիազարյանն, ըստ էության, բացահայտեց քաղաքական կոռուպցիայի Հայաստանում արմատացած դասական ձևը: Այն է՝ գյուղի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը երբեք ու երբեք չէր կարող անել նման օրինախախտումներ, եթե չիմանար գյուղապետը: Վերջինս երբե՛ք չէր հանդուրժի այդ օրինախախտումները, եթե չիմանար մարզպետը: Նա էլ իր հերթին աչքերը չէր փակի այդ ամենի վրա, եթե չիմանար քաղաքական այն ուժի վերնախավը, որը մարզպետին երաշխավորել է այդ պաշտոնում: Այս ամենը բնավ տեղի չէր ունենա, եթե մարզային ոստիկանությունը Սպարտակ Եղիազարյանին չտրամադրեր ընտրողների անձնագրային տվյալները: Մարզային ոստիկանապետն էլ դա երբեք չէր անի, եթե չիմանար ՀՀ ոստիկանապետը: Վերջինս չէր հրահանգի, եթե տեղյակ չլիներ իր ղեկավար Ռոբերտ Քոչարյանը: Եվ 2003-ի փետրվարի 19-ին դատախազական ամբողջ համակարգը դեռ ծանրաբեռնված չէր ծառատունկով, ուստի մարզային դատախազի աչքից էլ չէին վրիպի Օշական գյուղում տեղի ունեցած ապօրինությունները: Չէ՞ որ դատախազն «էշի ականջում քնած» անձնավորություն չէ և հաստա՛տ կտեսներ այդ ամենը: Սպարտակ Եզիազարյանի բացահայտած քաղաքական կոռուպցիայի այս դասական շղթայում ներգրավված են եղել Հայաստանի 14 հազար ընտրատեղամասային հանձնաժողովի այն անդամները, որոնց երաշխավորել են պրն Քոչարյանն ու կոալիցիան: Եվ խորքային այս խնդիրներից մարդկանց ուշադրությունը շեղելով՝ առաջադրում են ճիշտ այն հարցերը, որոնք տվեցիք, և որոնք իրոք տեղի են ունեցել իրականում: Միգուցե երկուսն էլ զուգահեռ՝ հա՛մ պարտքերն են փակել, հա՛մ էլ ճնշել են: Սակայն դրանից չի փոխվում Սպարտակ Եղիազարյանի բացահայտումների էությունը: Եվ փոխանակ այսօր լուրջ հետաքննություն անցկացվի այդ բացահայտումների շուրջ՝ չգիտես ինչու, մարդկանց ուշադրությունը շեղում են այլ ուղղությամբ: Նրա հայտարարությունները թերևս պետք է մտահոգեն ոչ միայն Հայաստանի հասարակությանը, այլ նախ և առաջ՝ ԱՄՆ-ի կառավարությանը, որը 2007-2008-ի ընտրությունների համար ամերիկացի հարկատուների գումարներից 7 մլն դոլար է տրամադրելու ՀՀ-ում ազատ, արդար ու ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար: Սպարտակ Եղիազարյանի հետ տեղի ունեցածն արդեն իսկ պետք է համոզի ամերիկացիներին, որ այդ 7 մլն դոլարի ճակատագիրը լինելու է ճիշտ նույնը,

ինչ եղել են նախորդ ընտրությունների համար տրամադրված գումարները:

Սա խոսուն վկայություն պետք է լինի նաև ԵԱՀԿ-ի, Եվրամիության և այն կառույցների համար, որոնք ցանկացած պատեհ առիթ օգտագործելով՝ հորդորում են հայաստանյան իշխանություններին առաջիկա ընտրություններն անցկացնել ժողովրդավարական չափանիշներին համապատասխան: Սա կլինի փորձաքար, թե իրականում հիշատակածս կառույցներն իրոք ցանկանո՞ւմ են ձեռնամուխ լինել Հայաստանում ազատ և արդար ընտրությունների կազմակերպմանը, թե՞ պարզապես առաջնորդվում են երկակի չափանիշներով»:

Աննա Իսրայելյան

Հ. Գ. Արտաշես Գեղամյանը մի խնդրի կապակցությամբ էլ անհրաժեշտ համարեց քննությունը. «Մամուլում բացահայտորեն գրում են, թե պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը «լավ գործ» ասելով՝ մտքում երևի նկատի է ունեցել բենզինի, Հայաստանի պետական գույքի վաճառքի, մաքսանենգ ճանապարհով ներկրված ապրանքների, մետաղի մենաշնորհային արտահանման, կենտրոնացված կերպով կաշառքների ստացման, մաքսային համակարգում ներդրված կոռուպցիոն մեխանիզմների, ապօրինի հարկահավաքման և այլ տիպի գործերը: Եվ փոխանակ իրավական լուրջ քննության առարկա դարձնեն այդ փաստերը՝ կրպակներից այդ թերթերն են հավաքում: Հրապարակվել է նաև հետևյալը, որ մի կողմից՝ երկրի վարչապետը, մյուս կողմից՝ ԱԺ խոսնակը, հարստություն են դիզել անաշխատ եկամուտներով: Սրան էլ չի հետևում և ոչ մի քննություն կամ ուսումնասիրություն, թե որքանով են այս տեղեկությունները համապատասխանում իրականությանը: Չէ՞ որ գործ ունենք երկրի առաջին դեմքերին վերաբերող տեղեկատվության հետ»:

«Առավոտ», 29.IV.2006, 2.V.2006:

Արտաշես Գեղամյանն ուր, այս իշխանություններն ուր...

Սիրելի ընթերցող, ապրիլի 20-ին «ԱԼՄ» հեռուստաընկերության՝ Տիգրան Կարապետյանի «Դիրքորոշում» հեղինակային հաղորդաշարի հյուրն էր «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանը: Հարցազրույցի ընթացքում ցուցադրված տեսանյութերը և արծարծված հարցերը հասարակության ամենալայն շրջաններում առաջացրել են մեծ հետաքրքրություն: Դրանց արդիականությունը գնալով ավելի ցայտուն է դառնում:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում հարցազրույցի տեքստը:

– Սրտանց շնորհակալություն եմ հայտնում «ԱԼՄ» հեռուստահոլդինգին, մասնավորապես, հարգարժան Տիգրան Կարապետյանին՝ ընձեռած հնարավորության համար: Այսօր մենք վերլուծելու ենք աշխարհաքաղաքական այն բարդ զարգացումները, որոնք կարող են ապակայունացնել իրավիճակը ոչ միայն Հայաստանում, այլև Հարավային Կովկասում:

– Անցած երեք ամիսների ընթացքում երկու անգամ ելույթով հանդես եք եկել Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստերում: Մենք դիտեցինք այդ տեսանյութերը: Ի՞նչ կարող եք ավելացնել:

– Եվրոպացիներին խիստ կարևոր էր հիշեցնել այն բարբարոսությունների մասին, որոնք իրականացվել են վերջերս ադրբեջանցիների կողմից: Երկիր, որը Եվրախորհրդի անդամ է: Եվ այդ բարբարոսությունները կատարվում են, անշուշտ, Թուրքիայի հովանավորությամբ և միջազգային հանրության լռակյաց դիրքորոշման պայմաններում: Իսկ ինչո՞ւ էր անհրաժեշտ այդ հարցը հենց այնտեղ վեր հանել: Դա հրատապ էր այնքանով, որ այսօր էլ նույն ուժերը փորձում են Լեռնային Ղարաբաղը բռնակցել Ադրբեջանին: Եթե ողջ աշխարհի առաջ անարգել մեր սրբություններն են պղծում, ապա արցախահայության անվտանգության ի՞նչ երաշխիքներ կարող է Եվրոպան առաջարկել: Վերջերս Լուվրում տեսա Հին Ջուղայից այնտեղ տեղափոխված տասներեքերորդ դարի խաչքարերից մեկը: Եվ ակամայից թանգարանի աշխատակցին հարց տվեցի. հանկարծ, եթե որևէ մեկը փորձի այս խաչքարը վնասել, ի՞նչ պատժի կենթարկվի: Ջրուցակիցս զարմանքով պատասխանեց. ֆրանսիական օրենսդրության համապատասխան նա կդատապարտվի: Բա լավ, ինչպե՞ս կարելի է 2700-ից ավել ճարտարապետական նման փոքր հուշարձաններ պղծվեն, և մեղավորները չկրեն որևէ պատասխանատվություն, իսկ

միջազգային հանրությունն էլ լռի: Ըստ որում, օգտվելով առիթից, շնորհակալություն եմ ուզում հայտնել լորդ Էնթոնի Լոյդին, որը նախագահում էր ԵԽ ԽՎ-ի այն նիստը, որի ժամանակ էլ հնչեցրի ազերիների բարբարոսությունների մասին: Նա համբերատար թույլ տվեց, որ ես գրեթե ամբողջությամբ ավարտեմ խոսքս, որը, ըստ էության, օրակարգից դուրս էր: Ավելին, հետագայում լորդը իր խոստման տերը եղավ. նա, երբ ընդհատեց ելույթս, ասաց, որ իմ կողմից բարձրացված հարցերը, թերևս, առանձին դեբատների, առանձին քննարկման առարկա պետք է դառնա: Եվ հենց այդպես էլ եղավ. երկու շաբաթ անց, արդեն Եվրոպառլամենտը, այլ ոչ թե Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովը, Եվրամիության 25 երկրների խորհրդարանը, քննության առարկա դարձրեց Հին Ջուղայի խաչքարերի զանգվածային ոչնչացման հարցը: Եվրոպառլամենտը քննարկումների արդյունքում ադրբեջանական բարբարոսությունները դատապարտող որոշում ընդունեց: Հասկանալի է, որ այդ որոշումն արդեն իսկ լուրջ կռվան է մեր արտաքին քաղաքականության, մեր դիվանագիտության համար: Թվում է, որ Ստրասբուրգում ունեցած իմ այս ելույթը եվրոպացիներին մեկ անգամ ևս համոզեց և ապացուցեց, որ մենք գործ ունենք քրիստոնեական, ինչու չէ, համամարդկային արժեքները բացարձակապես չընդունող ազերիների հետ, որոնք չեն ենթարկվում եվրոպական ընտանիքում ընդունված կանոններին, մերժում են համամարդկային արժեքները: Կարծում եմ, այստեղ՝ Հայաստանում, ելույթիս հարկ էր մոտենալ հենց այս տեսակետից՝ մոռանալով ելույթ ունեցողի անուն-ազգանունը, կուսակցական պատկանելությունը և հնարավորինս լայնորեն լուսաբանել այն՝ դարձնելով պետական քարոզչության համոզիչ ու զորեղ կռվան:

Երկու օր առաջ՝ ապրիլի 18-ին, Ազգային ժողովում տեղի ունեցավ Եվրամիություն-Հայաստան խորհրդարանական համագործակցության 8-րդ նիստը: Եվրոպառլամենտից Հայաստան էր ժամանել պատկառելի պատվիրակություն: Նիստի ժամանակ հանդես եկավ արտաքին գործերի նախարարը՝ Վ. Օսկանյանը, որին, ասեմ, շատ դրական եմ վերաբերվում. նա ազնիվ և հայրենասեր անձնավորություն է: Հիմա, ուշադրություն դարձրեք, թե ի՞նչ էր ասել հարգելի Վարդան Մինասիչը՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը. «Մենք այսօր պարզապես ասում ենք, եթե ադրբեջանական կողմը ընդունում է այն փաստը, որ Ղարաբաղի ժողովուրդը ունի ինքնորոշման իրավունք, եթե նույնիսկ ինքնորոշումը պետք է իրականացվի հետագայում, ապա հայկական կողմը պատրաստ է այսօր սկսել քննարկել կոնֆլիկտի հետևանքների վերացման խնդիրը, այն է՝ տարածքների, փախստականների և անվտանգության այլ խնդիրներ: Ես կարծում եմ, որ սա լուրջ փոխզիջում է հայկական կողմից»:

Սիրելի հեռուստադիտող, խորհենք, թե ի՞նչ աստիճանի են մեր դիրքերը թուլացած, որ Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը ոչ այլ ինչ է, եթե ոչ դեռ 1975 թ. Հելսինկիում եվրոպական 33 երկրների և Կանադայի ու Ամերիկայի կողմից ստորագրված, ԵԱՀԿ անդամ երկրների համար այսօր էլ պարտադիր կատարման սկզբունք: Նորագույն դիվանագիտության մեջ այն հայտնի է որպես «Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Հելսինկյան եզրափակիչ վավերագիր» փաստաթղթի 8-րդ սկզբունք

(զամբյուղ): Ինչո՞ւ ես կարդացի և ոչ թե շարադրեցի Վարդան Սինասիչի ելույթի այս դրվագը: Տառապանքս փորձ ունի, որ հանկարծ չասեն՝ թարգմանական ինչ-որ անճշտություններ են եղել: Ուրեմն, Հելսինկյան 8-րդ սկզբունքը, կրկնեմ, ուղղակի ասում է. ԵԱՀԿ անդամ ցանկացած երկիր պարտավոր է ստեղծել հնարավորություն, որն ընձեռում է ազատ կամարտահայտության պայմաններում ժողովուրդներին ինքնորոշվել, ինչն էլ նրա անքակտելի իրավունքն է: Հիշեցնեմ, որ թե՛ Ադրբեջանը և թե՛ Հայաստանը հանդիսանում են ԵԱՀԿ անդամ երկրներ, ինչպես նաև հարցի կարգավորմանը հետամուտ Մինսկի խմբի համանախագահող երկրները՝ ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Ռուսաստանը: Ես ընդդիմադիր գործիչ եմ, ոմանք կարող է մտածեն, թե ես պետք է ուրախանայի, չարախնդայի և ասեի՝ տեսեք, հայաստանյան իշխանություններն ի՞նչ ողորմելի վիճակի մեջ են ընկել: Սակայն ես ցավ եմ ապրում դրա համար, որովհետև արդյունքում դա ծանրանալու է մեր երկրի, մեր պետության վրա: Երբ բարձրաստիճան պաշտոնյան այդպես աղերսում է, միայն թե ճանաչեն այն իրավունքը, որը դեռ 31 տարի առաջ ամրագրված է եղել Հելսինկիում, դա, ավա՜ղ, խոսուն վկայությունն է այն մասին, որ Հայաստանը, իրոք, հայտնվել է վտանգավոր իրավիճակում՝ այն էլ արտաքին քաղաքականության ոլորտում: Եվ այս պարագայում պետք է անպայմանորեն մտածել ելքերը գտնելու մասին, որովհետև խոսքը ոչ թե անձերի, այլ Հայաստանի վաղվա օրվա մասին է:

– *Պարոն Գեղամյան, ձեզ չի՞ թվում, որ եթե մենք ձգտում ենք մեր դիրքը միշտ հստակ լինի, պետք է յուրաքանչյուր քայլը արձանագրենք: Եթե մենք այսօր արձանագրում ենք, որ Ադրբեջանի դրդմամբ Վրաստանի մաս կազմող Մառնեուլը ինքնորոշման հարցեր է բարձրացնում, ապա դա ինչո՞ւ չդարձնենք ազդակ Ջավախքի խնդիրը բարձրացնելու համար:*

– Որպես մոտեցում, թերևս, կարելի է դիտարկել նաև Ձեր ասածը: Հիշեցնեմ հետևյալը. երբ Վրաստանի և Ռուսաստանի հարաբերություններն առավել շիկացել էին, իր ասուլիսներից մեկում Ռուսաստանի Դաշնության նախագահը՝ Վլադիմիր Պուտինը, ուղղակիորեն ասաց հետևյալը. ինչո՞ւ կարելի է ճանաչել Կոսովոյի անկախությունը, որը Եվրոպայի՝ Բալկանների, սրտում է, և որը, թերևս, բալկանյան վերջին արյունահեղ պատերազմի պատճառն էր, և չի կարելի ճանաչել, ասենք, Աբխազիայի, Հարավային Օսիայի անկախությունը:

– *Ընդ որում և Արցախի:*

– Ցավոք, Վ. Պուտինն այդ ասուլիսում Արցախի անունը չի տվել, բայց դուք միանգամայն ճիշտ եք, սկզբունքը նույնն է: Ավելին էլ ասաց. այդ ինչպե՞ս է ստացվում, որ Եվրամիությունը, համաշխարհային հանրությունը հանդուրժել է այն փաստը, որ Թուրքիան ճանաչել է Հյուսիսային Կիպրոսի անկախությունը, անկախ պետականությունը: Հիմա նմանատիպ իրավիճակ է ստեղծվել Լեռնային Ղարաբաղի պարագայում: Եվ ահա թե ինչու եմ Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովում կարևորել ԼՂՀ-ի անկախությունը ճանաչելու խնդիրը: Ավելին, ԵԽ ԽՎ-ի վերջին նստաշրջանում՝

ապրիլի 11-ի նիստում այս հարցը սրելու նպատակով զուգահեռներ եմ անցկացրել իսրայելա-պաղեստինյան հակամարտության հետ: Հակամարտություն, որը տասնամյակներ շարունակ գտնվում է աշխարհի հզոր երկրների ուշադրության կենտրոնում: Եվ, ինչպես դուք տեսաք, ԵԽ ԽՎ-ի ամբիոնից նախազգուշացրի Եվրոպայի պատվիրակներին, որ ԼՂՀ-ի անկախության չճանաչումը Հարավային Կովկասը կվերածի արյունահեղության մի նոր օջախի:

– Շատ բարի, գուցե ոչ միայն քաղաքական և տնտեսական առումներով, այլև մշակութային առումով է անհրաժեշտ ողջ աշխարհին ներկայացնել Արցախը: Պետք է աշխարհը ճանաչի և սիրի Արցախը:

– Միանգամայն ճիշտ եք: Իսկ դուք ընդունո՞ւմ եք, որ Արցախի անկախության ճանաչման գործում չպետք է նայել, թե այդ խնդրի լուծման ճանապարհին ո՞վ է մի քայլ առաջ անցել՝ ընդդիմադիրը, թե՞ իշխանավորը:

– Այստեղ չկա դիմադիր և ընդդիմադիր, բոլորս մեր ազգի շահերի պաշտպանն ենք: Պարոն Գեղամյան, ինչո՞ւ եք Ստրասբուրգում Ձեր ելույթները անգլերեն լեզվով ունենում: Ինչո՞ւ անգլերեն, դուք ռուսերեն լավ էլ խոսում եք:

– Ստրասբուրգում առաջին 3 ելույթներս ռուսերեն լեզվով էին: Ի՞նչ թաքցնեմ, ռուսական կրթություն ունեմ, ռուսական դպրոց եմ ավարտել: Ինձ համար, իհարկե, ավելի դյուրին է ռուսերենով ելույթ ունենալ, սակայն շատ ավելի հոգեհարազատ կլիներ, եթե հնարավորություն ընձեռվեր հայերեն լեզվով ելույթներ ունենալ և Եվրախորհրդի այդ հեղինակավոր պալատի ամբիոնից հնչեցնել մեր գեղեցիկ լեզուն: Սինչդեռ, ԵԽ ԽՎ-ում աշխատանքային լեզուները վեցն են, այդ թվում՝ ռուսերենը: Հիմնական լեզուները անգլերենը և ֆրանսերենն են: Առաջին 3 ելույթներս, ինչպես ասացի, եղել են ռուսերեն և, բարեբախտաբար, դրանց տեսագրությունները կան: Փորձագետների գնահատականով՝ իմ կողմից բարձրացված հարցերը շատ ու շատ լուրջ և սուր են եղել: Ասեմ, որ դրանք տպագրվել են այստեղ՝ մամուլում: Բայց երբ ԵԽ ԽՎ-ի պաշտոնական արձանագրությունն էինք նիստից հետո ստանում, ավա՜ղ, փաստում էինք, որ այնտեղ ընդամենը 2-3 նախադասություն էր ելույթիցս մեջբերված: Պատճառը մեկն է. ԵԽ ԽՎ-ի կանոնակարգում պարզորոշ նշված է, որ անգլերենից և ֆրանսերենից զատ, աշխատանքային մյուս լեզուներով հնչած ճառերը տպագրվում են սեղմ և հակիրճ շարադրանքով՝ խմբագրական կոլեգիայի կողմից: Եվ, բնականաբար, այս պարագայում, կարծում եմ, ազերիներն ու թուրքերը ջանք ու եռանդ չէին խնայել, որ իմ ելույթներից արձանագրվեին ընդամենը 2-3 նախադասություն: Իսկ անգլերենով հնչած ելույթները, համաձայն Եվրախորհրդում գործող կանոնակարգի, տպագրվում են սահմանված առավելագույն ծավալով: Եվ պետք է ասեմ, որ անցյալ տարի Մեծ եղեռնի 90-ամյակի տարելիցի առթիվ ապրիլի 27-ին Ստրասբուրգում ունեցած ելույթս մտածված հնչեցրի անգլերեն լեզվով: Արդյունքում Եվրախորհրդի պատմության մեջ, թերևս, առաջին անգամ էր, որ հայ պատվիրակը կշտամբեց ԵԽ անդամ 45 երկրների պատգամավորներին: Նշվեց, որ վերջիններս խոսում են տարբեր վայրերում կատարվող հանցագործությունների, սպանությունների մասին,

որոնք, անշուշտ, դատապարտելի են, բայց, չգիտես ինչու, այս օրերին մոռացության է տրվում Եղեռնի 90-ամյա տարելիցը: Այս հանդիմանանք-կշտամբանքը տեղ գտավ անցյալ տարվա ԵԽ ԽՎ-ի ապրիլյան նստաշրջանի պաշտոնական փաստաթղթերում: Արձանագրվել է նաև այս տարվա ապրիլի 11-ին ունեցած ելույթս, ուր ասվել է, որ միջազգային հանրությունը պատասխանատվություն է կրելու Լեռնային Ղարաբաղի հարցի միջազգայնորեն ճանաչման ձգձգման համար: ԵԽ ԽՎ-ի պաշտոնական փաստաթղթում տեղ է գտել նաև այն պնդումը, որ մեր տարածաշրջանն այդ պարագայում կդառնա երկրորդ Պաղեստին: Արձանագրվել է նաև Նախիջևանի Հին Ջուղայի խաչքարերի բարբարոսական ոչնչացման փաստը: Ահա թե ինչու եմ Ստրասբուրգում ելույթներ ունենում անգլերեն լեզվով: Խնդրում եմ, դա մեծ մեղք չհամարեք:

– Պարոն Գեղամյան, չեք գտնո՞ւմ, որ պաղեստինյան խնդիրները մեր խնդիրներին շատ նման են. իրենք ունեն սկզբունքային պահանջներ, մենք էլ ունենք սկզբունքային պահանջներ, որոնցից չենք կարող հրաժարվել:

– Պաղեստինյան հարցի կապակցությամբ ելույթ ունենալս ամենևին պատահական չէր: Ասենք, որ Իսրայել պետության ստեղծման առաջին իսկ օրվանից (1948 թ.) սկսած այնտեղ միշտ արյունահեղություն է եղել: Ստրասբուրգում, երբ քննարկվում էր իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորմանը վերաբերող հարցը, աշխարհի ուշադրությունը կենտրոնացած էր ԵԽ ԽՎ-ի վրա: Նշեմ նաև, որ դրան նախորդող օրերին Եվրամիությունը որոշում էր կայացրել մուտքի վիզա չտրամադրել Պաղեստինում ժողովրդավարական պայմաններում պառլամենտական ընտրություններում հաղթանակած «ՀԱՄԱՍ» կուսակցության պատգամավորական պատվիրակությանը: Այդ պարագայում, Աստծո կամոք էր, որ հաջողվեց նաև ասել, որ եթե ձեզ այդքան հուզում է Պաղեստինի-Իսրայելի հակամարտության խնդիրը, իսկ դա մեզ էլ է, անշուշտ, հուզում, ապա, բարի լինենք, նոր պաղեստինների ծնունդը կանխենք, բացառենք: Երբ խորությամբ վերլուծում ենք Մերձավոր Արևելքում ընթացող զարգացումները, ապա համոզվում ենք, որ այնտեղ քաղաքակրթական բախման վտանգ կա, ինչպես և մեզ մոտ՝ Հարավային Կովկասում: Իսրայելցիների համար տարածաշրջանում խաղաղության հաստատումը ընկալվում է որպես նորմալ իրավիճակ, երբ վերացվում են հակամարտող կողմերի իրարամերժ հավակնությունները և առկա խնդիրները լուծվում են միջազգային իրավունքի ամուր հենքի վրա: Իսկ արաբները, հատկապես պաղեստինցիները, Իսրայելի արդեն իսկ գոյության փաստը համարում են որպես ներխուժում սրբազան արաբական հող, առավել ևս չեն հանդուրժում Արևելյան Երուսաղեմի պատկանելությունը Իսրայելին, քանզի այնտեղ են գտնվում մահմեդական աշխարհի առաձնահատուկ կարևորության հուշարձանները, սրբավայրերը:

– Ոչ միայն դա, պարոն Գեղամյան. տեսեք, այսօր Հայաստանը համարվում է փոքր երկիր, բայց չէ՞ որ մեր հողերը՝ Նախիջևանի, Ջավախքի, Արցախի, հարևան պետություններն են զավթել: Ժամանակին հենց այնպես մենք դրանք տվել ենք: Ուրեմն, Պաղեստինի պայքարն արդարացի է, որովհետև իրենց հողի համար են պայքարում:

– Տիգրան Կարապետովիչ, իմ կարծիքով, փայլուն լուծում և բանալի առաջարկել էր Մոհամմեդ մարգարեի՝ ժամանակի կտրվածքով հեռավոր, բայց արյունակից ժառանգներից մեկը՝ Հորդանանի թագավոր Հուսեյնը: Նա ընդամենը մի առաջարկ է արել, որի հիմքում այն ճշմարտությունն է, որ թե իսրայելցիները և թե պաղեստինցիները նույն ակունքից են սերում: Նրանք նույն մարդու՝ Աբրահամի որդիների՝ Իսմայիլի և Իսահակի ժառանգներն են, ուրեմն և թող բարի լինեն որպես նույն մարդու ժառանգներ իրար հետ միասնական, հաշտ ու խաղաղ ապրեն: Եկեք շատ չխորանանք այս հարցում:

– Ես համաձայն չեմ:

– Տվյալ դեպքում Դուք համաձայն չեք ոչ թե ինձ, այլ Հորդանանի նախկին թագավորի հետ. ես ընդամենը մեջբերում արեցի նրա խոսքից, ափսոս նա մահացել է, թե չէ կարող էիք բանավիճել այդ հարցի շուրջ թագավորի հետ: Ձեր հարցադրումները շատ սուր և տեղին են: Բայց դրանց շուրջ մենք միմյանց հետ չէ, որ պետք է բանավիճենք: Եվրոպայում, ԱՄՆ-ում, դրսում է, որ մենք մեր ճշմարտությունը պետք է տարածենք: Պետք չէ, որ իրար համոզենք մեր հարցադրումների ճշմարտացիության մեջ, որովհետև մենք դրանում համոզված ենք, մենք այդ գործում դաշնակիցներ ենք, մենք նույն բանակում ենք, նույն վտանգի առաջ ենք կանգնած և միևնույն վտանգը դիմակայողների թվում ենք:

– Այստեղ խնդիրը ո՞րն է. այսօր մեզ լսում են ԱԳՆ-ից, բարձր ատյանի չինովնիկներ, որոնք պետք է մեր հարցադրումները ճիշտ ներկայացնեն համաշխարհային հանրությանը: Պետք է ասվի, որ Հայաստանն այսօր, որ փոքր է, դա նրանից է, որ մեր հողերը զավթել են, բայց չէ՞ որ մենք քաղաքակիրթ ազգ ենք:

– Տիգրան Կարապետովիչ, Ձեր տրամաբանված այս հարցադրումներն Ադրբեջանը կարող է որպես զենք օգտագործել և ասեմ՝ ինչպես: Ադրբեջանական քարոզչական մեքենան այսօր փորձում է աշխարհին ապացուցել, որ ժամանակին, այսինքն՝ երկու դար առաջ, Ռուսական կայսրության և Պարսկական կայսրության պայմանավորվածության արդյունքում միասնական Ադրբեջանը մասնատվել է 2 հատվածի, մեկն անցել է Պարսկաստանին, մյուսը՝ Ռուսական կայսրությանը: Եվ այդ հարցն արդեն իսկ դարձրել են կռվան: Հյուսիսային Իրանը, որը ազերի պատմաբանները կոչում են Հարավային Ադրբեջան (մեր պատմական Ատրպատականը), այսօր համարում են իրենց միասնական մեծ Ադրբեջանի մի մասը: Այդ խնդիրը հրամցնում են միջազգային հանրությանը, մասնավորապես ԱՄՆ-ին, ակնկալելով հեռուն գնացող հայտնի նպատակներ:

– Ընդհակառակը, պարոն Գեղամյան, Միացյալ Նահանգներն են ցանկանում, որ այդպիսի իրավիճակ լինի, դրանով կթուլանա Իրանը: Բայց մեզ համար, մենք գիտենք, որ Ադրբեջանը չի եղել, մենք հո լավ գիտենք: Եվ այսօր ասել, որ իրենք մեծ են, իրենք հող ունեն, մենք չունենք, զավթիչ ձևով զավթել են, օգտագործելով ամեն ինչ, և, ինչու չէ, Լենին պապիկն էլ է բաժանել, Ստալին պապիկն էլ է բաժանել մեր հողերը:

– Տիգրան Կարապետովիչ, պապիկներին հանգիստ թողնենք, փաստը մնում է փաստ, փորձագիտական զանազան գնահատականներով Հյուսիսային Իրանում բնակվում է 12-ից 25 մլն էթնիկ ադրբեջանցի:

– Ի՞նչ ի նկատի ունեք էթնիկական ասելով, քոչվոր ցեղեր են:

– Մենք խնդիր չունենք ասելու, որ քոչվոր են կամ քոչվոր չեն, խնդիր ունենք գիտակցելու, որ երկիրն արդեն այն վիճակին են հասցրել, երբ անգամ իսկ, Ձեր ձևակերպմամբ, քոչվոր ցեղերը, այն էլ 21-րդ դարում ի զորու են վտանգել մեզ: Փորձենք այս հարցին պատասխան տալ: Նախ արձանագրենք, որ այսօր շատ և շատ վտանգավոր զարգացումների առաջ ենք կանգնած: Եվ դրանք պայմանավորված են նրանով, որ չի բացառվում, որ վաղը-մյուս օրը ադրբեջանական իշխանությունը, այն է՝ Իլհամ Ալիևը, որը մեկնելու է Վաշինգտոն, համաձայնություն տա, որ խաղաղարար ուժեր գան և տեղակայվեն ոչ թե ազատագրված տարածքների վրա, այլ Ադրբեջանի Ջալալաբադ-Աստարա կամ էլ Բեյլագան-Իմիշլի տարածքում: Եվ դա լրջորեն կփոխի աշխարհաքաղաքական իրավիճակը Հարավային Կովկասում: Ավելին, գաղտնիք չէ, որ այսօր բանակցություններ են գնում հայկական զորքերի հետքաշման մասին: Եվ այդ պարագայում, պետք չէ բացառել, որ Ջաբրայիլի, Ֆիզուլիի սահմանով Արաքս գետի ողջ երկարությամբ կարող են տեղակայվել խաղաղարար ուժեր: Իսկ ի՞նչ է լինելու հետո: Կարծում եմ, ամերիկացիները չեն գնա Իրանի մասնատմանը՝ գիտակցելով, որ դրան կտրուկ դեմ կլինեն Իրանի ներկայիս վարչակարգի թե երկրի ներսի և թե դրսի ընդդիմադիրները: Բայց կարող են ասել, որ խաղաղարար ուժերի տեղակայման դեպքում Իրանի տարածքային ամբողջականության պահպանման խնդիրը պայմանավորված կլինի նաև այդ ուժերով: Այնպես որ, եթե վաղը-մյուս օրը Հյուսիսային Իրանում անջատողական տրամադրությունները թափ առնեն, ապա պետք չէ բացառել, որ դրանց կրողները, ի դեմս խաղաղարար ուժերի, այս պարագայում կունենան իրենց պաշտպանը կամ էլ հակառակը: Եթե զարգացումները գնացին այդ հունով, ապա ադրբեջանական կողմի դիրքերը մեծապես կուժեղանան տարածաշրջանում: Ասվածը վերլուծաբանների կողմից համառորեն շրջանառվող տեսակետ է, ինչը և հուշում է, որ հայկական կողմը պետք է պատրաստ լինի դրան համարժեք մոտեցումներ հակադրելու: Այն է, հանդես գալ այնպիսի առաջարկով, որը չհակադրվի ռազմաքաղաքական դաշնակից Ռուսաստանի Դաշնությանը: Ավելին, չբշնամացնի Իրանի Իսլամական Հանրապետությանը, չստեղծի իրավիճակ, երբ քաղաքական աճուրդի հանվեն մեր տարածքները: Արդյունքում չստացվի այնպես, որ թուրքերն ու ազերիները հասնեն իրենց վաղեմի երազանքի կատարմանը, այն է՝ Սեղրիի փոխանակմանը համապատասխան տարածքների հետ: Այդ բոլոր հնարավոր զարգացումները մենք ձեզ հետ, առավել ևս այս հարցերով զբաղվող պետական պաշտոնատար այրերը պետք է աչքի առաջ ունենանք, որ ծանր հետևանքներ ունեցող անակնկալի չգանք:

– Այսօր Միացյալ Նահանգները շատ լավ գիտեն, որ իսլամական աշխարհը կարող է միշտ միավորվել: Եվ նրանք երբեք թույլ չեն տա, որ Իրանը Ադրբեջանի կամ Թուրքիայի հետ ռազմավարական դաշինք ստեղծի: Նրանք դրանում շահագրգռված էլ չեն: Դուք կարծում եք, որ Ադրբեջանը և Թուրքիան կարող են միանա՞լ:

– Թուրքիան և Ադրբեջանն արդեն վաղուց են հայտարարել, որ երկու պետություն

են՝ մեկ ազգ լինելու պարագայում: Մտավախություններս հիմնավորելու համար դիմեմ պատմությանը. դեռ 88 տարի առաջ Անդրկովկասյան սեյմի հետ բանակցությունների ժամանակ թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան՝ դիմելով հայերին, մոտավորապես այսպես էր ասել. դուք պետք է մեզ հասկանաք: Դուք տեսնում եք, որ ճակատագիրը հրում է մեզ Արևմուտքից Արևելք: Մենք հարկադրված էինք հեռանալ Բալկաններից, հեռանում ենք Աֆրիկայից: Մենք պետք է գնանք դեպի Արևելք՝ այնտեղ է մեր արյունը, մեր կրոնը, լեզուն: Եվ այդ ձգտումն ունի տարերային բնույթ: Մեզ անհրաժեշտ է, որ ճանապարհներն այդ ուղղությամբ բաց լինեն: Իսկ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր ճանապարհին: Դուք պետք է մի կողմ քաշվեք և տաք մեզ ճանապարհ: Ահա թե որտեղ է հիմնական վիճարկումը: Այսինքն՝ Վեհիբ փաշայի խոսքը Մեծ Թուրանի մասին էր, որին խոչընդոտ էին տեսնում, այժմ էլ համարում են հայկական սեպը՝ Մեղրին:

– Այդ դեպքում, պարոն Դեղամյան, եթե այդպես լինի, մենք, ընդհակառակը, կշահենք, որովհետև դա չի ուզում Պարսկաստանը: Պարսկաստանը միշտ հակամարտող է եղել Թուրքիային և եթե տեսնի, որ նա ունի նման հավակնություններ, մեր դաշնակիցը կլինի ամեն դեպքում: Եվ մեզ հետ ավելի կխորացնի հարաբերությունները:

– Հնարավոր նման լուրջ բախումների ժամանակ, երբ համեմատաբար հզոր երկրներ են բախվում (համեմատաբար եմ ասում, քանի որ 70 միլիոն մի երկրի բնակչությունն է, 75 միլիոն՝ մյուսինը), այն էլ նույն կրոնը՝ իսլամ դավանող, զարգացումները և դրա հետևանքները կարող են լինել անկանխատեսելի: Նշենք նաև, որ Իրանի ազգաբնակչության հիմնական մասը շիաներ են, մինչդեռ Թուրքիայում՝ սուննիներ: Պատմությունից հայտնի է, որ նման հակամարտությունների արդյունքում որպես կանոն տուժողները լինում են միշտ և միշտ փոքր պետությունները:

– Կամ հակառակ՝ շահողը: Որովհետև ես շատ կցանկանայի, որ թուրքը և քուրդը իրար բախվեին, որից մենք հաստատ կշահեինք:

– Աստված մի արասցե, եթե նման բախում լինի: Արարատի փեշերին, այն է՝ լեռան այս և այն կողմերից սկսած մինչև Դիարբեքիրին ու մեր պատմական Տիգրանակերտին հարող ողջ տարածքում տարբեր տվյալներով բնակվում է շուրջ 17 միլիոն քուրդ: Եվ պատկերացնո՞ւմ եք, եթե այնտեղ գործը հասնի արյունահեղության, և քրդերն իրենց ընտանիքներով՝ կանայք, երեխաներ, ծերեր, հարկադրված լինեն փախնել Արաքսի այս ափը, ճախ ափը գան, ի՞նչ, հայ և ռուս սահմանապահները չեն թողնելու, որ սահմանն անցնեն, ի՞նչ, կրակելո՞ւ են նրանց վրա: Ես էլ չեմ ասում, որ անթույլատրելի է ցանկացած արյունահեղություն:

– Որ ասում եք Արարատի այս ու այն կողմը, իսկ ի՞նչ է, իրենց մայրաքաղաքում հենց այդ ականը կա, չէ՞, քրդական: Հիմա էլ թող իրենք ճաշակեն դա. երբ հայը կար, իրենք երկուսով համագործակցում էին հայերի դեմ…

– Ես ելնում եմ այն տեսակետից, որ մեր հարևան երկրներին փոխել չենք կարող: Դարձյալ մեր հարևաններն են լինելու Թուրքիան, Վրաստանը, Ադրբեջանը, Իրանը: Ուստի մենք չպետք է առաջնորդվենք՝ «ինչքան իրենց մոտ վատ, այնքան մեզ համար

լավ»՝ խաբուսիկ տրամաբանությամբ: Ոչ, մեր տարածաշրջանը մի միասնական կենդանի օրգանիզմ է, յուրաքանչյուր ապակայունացում, այսպես թե այնպես, կարող է բացասաբար անդրադառնալ նաև Հայաստանի վրա: Պարզեցնեմ միտքս: Պատկերացնո՞ւմ եք, հանկարծ ու Ձեր ասած սցենարով զարգացումներ լինեն: Այսինքն՝ քրդերը հերթական անգամ ապստամբեն, ինչպես դա շարունակաբար լինում է, և այնտեղ վիճակը շիկանա: Դրան ի՞նչ կարող է հետևել: Այսօր Վրաստանը, Ադրբեջանը և Թուրքիան ոչ միայն տնտեսական սերտ համագործակցության մեջ են ձեզ հայտնի նավթատարով՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան, և գազատարով՝ Բաքու-Թբիլիսի-Էրզրում, այլ կան նախադրյալներ, որ մոտ ապագայում կդառնան նաև ռազմական դաշնակիցներ: Եվ պատկերացրեք, հանկարծ, Աստված մի արասցե, Վրաստանը Ադրբեջանի և Թուրքիայի ճնշման ներքո փակի Հայաստանի հետ սահմանը, պատճառաբանելով, որ նավթատարի և գազատարի անխափան շահագործման համար կարող են վտանգներ առաջանալ հենց նույն քրդերից: Եվ այդ պարագայում, երբ տեսնում ենք, թե Իրանում էլ վիճակը ինչպիսին է, չպետք է բացառենք, որ Իրանն էլ կարող է Հայաստանի հետ սահմանը նույնպես փակել: Ի՞նչ, մեր երկիր ուղղաթիռով ենք սնունդ՝ հացահատիկ, կենսական առաջին անհրաժեշտության ապրանքներ բերելու:

– Իսկ Դուք չե՞ք կարծում, եթե իրենք իրենց պետության մեջ պրոբլեմներ ունենան, մեզ հետ կջերմանան, որովհետև չեն ուզենա, որ այս կողմից էլ վտանգ ունենան: Ինչո՞ւ ավելացնեն պրոբլեմները:

– Տիգրան Կարապետովիչ, թերևս, դա տեսակետ է և այն կարելի է քննարկել: Ես երբեք ու երբեք չեմ մտածում, որ իմ ասածը անհերքելի վերին ճշմարտություն է: Ես կարծում եմ, որ ստեղծված իրավիճակը հրամայական է դարձնում, որ, այո, Հայաստանի Հանրապետությունը վերջապես ունենա ազգային անվտանգության հայեցակարգ: Դա էլ ներառի ոչ թե լոզունգային խոսքեր և ունենա լոզունգային հենք, այն է՝ պայքար մղել կոռուպցիայի և կաշառակերության դեմ և այլն, և այլն, այլ իր մեջ կրի հանրապետությանը վերահաս վտանգներից դիմակայելու առավել գործուն մեխանիզմներ, որոնք էլ իրենց հերթին կառաջարկվեն՝ վերլուծելով աշխարհաքաղաքական հիշատակածս հնարավոր զարգացումները: Այստեղ անհրաժեշտ է ժողովրդի հավաքական կարծիքն էլ լսել ու դրանից համապատասխան եզրահանգումներ անել: Թե չէ ստացվում է այնպես, որ երբ վարչակազմը նեղն է ընկնում, ավա՜ղ, միայն այդ ժամանակ է հիշում, որ բացի իրենցից կա նաև ժողովուրդ, բացի իշխանությունից կա նաև ընդդիմություն: Ավելին, շատ կարևոր է, որ վերահաս վտանգը զգալու պայմաններում խորհրդի նստեն մարդկանց հետ: Այսօր, եթե մեր տանը, մեր Հայաստան օջախում հրդեհ է, ես իրավունք չունեմ առաջնահերթ համարել այն հարցի պարզաբանումը, թե ո՞վ է հրդեհել մեր երկիրը: Ես պետք է նախ և առաջ հրդեհը հանգցնեմ, որից հետո նոր միայն անդրադառնամ դրա պատճառներին: Այ, հիմա, ուզում են հրդեհել մեր տունը, մեր հայրենիքը:

– Համաձայն եմ Ձեզ հետ, որ արտաքին յուրաքանչյուր գործոն պետք է մեզ բռունցքավորի: Եթե ուզում եք, Ձեր խոսքով ասեմ՝ միաբանի մեզ: Մի լուրջ հարց էլ է

անհանգստացնում մեր հեռուստադիտողներին. Ձեր կանխատեսումները՝ արդյոք Իրանի հետ պատերազմական գործողություններ կսկսվեն, թե՞ ոչ:

– Իրոք, շատ լուրջ և մտահոգիչ հարց է: Մեր հեռուստադիտողներին պարզապես հիշեցնեմ, որ երեկ ԱՄՆ -ի նախագահ Ջորջ Բուշն ասել էր, որ Իրանի միջուկային ծրագրերի առաջն առնելու համար իր սեղանին դրված են գործողությունների տարբեր առաջարկներ, այդ թվում նաև՝ ռազմական լուծում նախատեսող: Ավելի խիստ ու կոշտ հայտարարություն խնդրո առարկա հարցի շուրջ, այն էլ Ամերիկայի Միացյալ Նահանգների նման գերհզոր պետության կողմից, մինչ այս չէր հնչել: Դա, անշուշտ, տագնապալի է բոլորիս և, առաջին հերթին, հենց ամերիկացիների համար: Դրան երեկ երեկոյան հաջորդել էր Ռիչարդ Լուգարի (ԱՄՆ -ի սենատի միջազգային հարաբերությունների կոմիտեի նախագահ) հայտարարությունը. նա կտրուկ ասել էր, որ ամերիկացիները առկա խնդիրները լուծելու համար երբեք չպետք է գնան պատերազմի ճանապարհով, այլ պետք է հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկեն հարցը խաղաղ, դիվանագիտական ուղիով լուծելու համար: Ինչպես ամերիկյան փորձագետներն էին նշել, Ռ. Լուգարի այս հայտարարությունը սառը ցնցուղի դեր է կատարել Սպիտակ տան համար: Կրկնում եմ, ինչպես նշել էին ամերիկյան փորձագետները: Դա ամերիկյան հեղինակավոր սենատորի դիրքորոշումն էր:

Հիմա հարցին մոտենանք այլ տեսանկյունից: Դեռ ժամանակին պատերազմների հայտնի տեսաբան, գեներալ Ֆոն Կլաուզևիցն է ասել, որ յուրաքանչյուր պատերազմ տնտեսական և ներքին քաղաքականության շարունակությունն է զենքի միջոցով: Այսօր Պարսից ծոցից արտահանվում է նավթի համաշխարհային շուկայի պահանջարկի 25%-ը (առանձին փորձագետների վերլուծությունների համաձայն մինչև 40%-ը), ավելին՝ ԱՄՆ ներկրվող նավթի շուրջ 22%-ը բաժին է ընկնում Պարսից ծոցի երկրներին: Եվ, եթե հիշենք քարտեզը, այդ նավթը ծոցից արտահանվում է Օրմուզի նեղուցով: Իրանական այսօրվա հրթիռները՝ «Շեհաբ 3»-ը և «Շեհաբ 4»-ը, կարող են Իրանի տարածքից, ըստ որում խորքային շրջաններից, խոցել այդ նեղուցով անցնող նավթ տեղափոխող նավերը: Անկասկած, դա կառաջացնի շատ լուրջ և վտանգավոր զարգացումներ նավթի համաշխարհային շուկայում: Թերևս, նավթի գործոնը հիմա էլ շատ որոշիչ է աշխարհում: Պատմությունը վկայում է, որ նավթի համար սկսվում են պատերազմներ, ինչպես նաև մշտապես նավթ ունենալու համար հաստատվում է կայուն խաղաղություն: Հիմա այս երկու մոտեցումների կողմնակիցների միջև է, որ պայքար է գնում: Եվ պատահական չէր, որ նախագահ Բուշը ամերիկյան կոնգրեսին ուղղած իր 2006 թ. զեկույցում Միացյալ Նահանգների կառավարության համար որպես գերխնդիր է դրել մինչև 2025 թ., այո, ես չսխալվեցի, մինչև 2025 թ. ԱՄՆ-ի էկոնոմիկայի կախվածությունը Մերձավոր Արևելքի երկրներից ներկրվող նավթի գործոնից կրճատել 75%-ով: Այդ նպատակին հասնելու համար արդեն իսկ կազմված է «Առաջավոր էներգետիկա» ծրագիրը: Սինչդեռ Դենիել Յերգինը՝ նավթարդյունահանման և միջազգային, գլոբալ քաղաքականության փոխկախվածության աշխարհի թիվ մեկ փորձագետը, վերջերս կանխատեսել էր, որ մինչև

2020 թ. ԱՄՆ-ի կախվածությունը Պարսից ծոցի նավթից աճելու է մինչև 70% (ներկայիս 22%-ի դիմաց): Ահա, տեսեք, այստեղ էլ կան երկու տարբեր մոտեցումներ, որոնք էլ հրապարակ են հանում քաղաքական տարբեր լուծումներ:

– *Կարող է երրորդն էլ լինել:*

– Անշուշտ, կլինի, կարող է չորրորդն էլ լինել, սակայն այսօր հրապարակի վրա դրանք են: Ահա, այս մոտեցումների հետևում, անշուշտ, կանգնած են քաղաքական, ինչու չէ, նաև տնտեսական հզոր ուժեր: Եվ նրանք ունեն իրենց լոբբինգը ամերիկյան կոնգրեսում: Իսկ թե ինչպիսի՞ զարգացումներ կլինեն, դրա ականատեսը կլինենք առաջիկայում: Ես միայն մի քանի թիվ հիշատակեմ. ԱՄՆ-ի նավթահանող և նավթով զբաղվող ամենազորեղ ընկերությունը՝ «Էքսոն մոբիլը», 2005 թ. ստացել է շուրջ 36 մլրդ դոլարի մաքուր եկամուտ: 2005 թ. շեշտակի աճել են նավթային տրանսազգային այնպիսի ընկերությունների մաքուր եկամուտները, ինչպիսիք են բրիտանական «Բրիթիշ պետրոլիումը» (եկամուտները կազմել են 26,7 մլրդ դոլար), անգլո-հոլանդական «Ռոյալ Դատչը», ամերիկյան «Շևրոնը»: Նշենք, որ հիշատակված ընկերությունները աշխարհի խոշորագույններն են, որոնք զբաղվում են թե նավթահանման, թե վերամշակման, թե սպառման խնդիրներով: Այսինքն՝ Պարսից ծոցում առկա բարդ և պայթյունավտանգ իրավիճակում անգամ նավթային այս ընկերությունները գերշահույթներ են ստացել:

– *Պարոն Գեղամյան…*

– Վերջացնում եմ միտքս:

– *Չեք թողնում, որ մի երկու բառ էլ մենք ասենք, էլի ավտոպիլոտը միացնում եք:*

– Տիգրան Կարապետովիչ, մեր հեռուստաղիտողը օրը մեկ Ձեզ տեսնելով հագեցնում է իր ծարավը, իսկ ինձ տարին մեկ անգամ է տեսնում «ԱԼՄ» էկրանի վրա. դրա համար մի քիչ զիջող եղեք:

– *Խնդրեմ, զիջեցինք:*

– Շնորհակալություն, դե կայարանցիները զիջող են, ուժի նշան է:

– *Նաև հարգանքի:*

– Այո, հարգանքի: Ասեմ նաև հետևյալը: Չմոռանանք, ինչպես նշեցի, համաշխարհային շուկայի նավթի պահանջարկի 25-ից 40%-ը ընկնում է Պարսից ծոցից միջազգային շուկա արտահանվող նավթին: Միաժամանակ հիշեցնեմ, որ 2005 թ. մարտ ամսին, միգուցե մարտի 25-ին, Իրանի այն ժամանակվա նախագահ Մուհամմադ Խաթամիին, երբ պաշտոնական այցով Կարակասում էր, Վենեսուելայի պրեզիդենտ Ուգո Չավեսը հայտարարել էր, որ եթե հանկարծ Իրանի տարածքը ռմբակոծվի Միացյալ Նահանգների կողմից, ապա Վենեսուելան դա կդիտի որպես իր իսկ երկրին հայտարարված պատերազմ և կդադարեցնի նավթի արտահանումը Միացյալ Նահանգներ: Իսկ ԱՄՆ ներկրվող նավթի շուրջ 11%-ը ,փորձագետների գնահատմամբ, բաժին է ընկնում Վենեսուելային:

Ահա այս բոլոր հարցերի համադրումը և հաշվարկը, ինչպես նաև դրանցից բխող շատ ու շատ գործոնների առկայությունը պատասխան կտան Ձեր հարցին՝ արդյոք Իրանի դեմ պատերազմական գործողություններ կսկսվե՞ն, թե՞ ոչ: Այստեղ ես բերեմ

հիշատակման արժանի ևս մի փաստ: Պատերազմական գործողությունները, անտարակույս, կհանգեցնեն իսրայելա-իրանական զինված բախման: Այս հանգամանքը ևս ի նկատի ունենալով, նշեմ, որ Իսրայելում կա մի «աքսիոմ». նրանք ասում են՝ մենք երբեք առաջինը չենք լինի, որ Մերձավոր Արևելքում միջուկային զենք օգտագործենք, բայց երբեք չենք լինի նաև երկրորդը: Այսինքն՝ իրանական պատերազմը, Աստված մի արասցե, եթե դա սկսվի, հղի կլինի անկանխատեսելի վտանգներով: Հիմա սրան էլ գումարենք Իրաքի չլուծված խնդիրը: Դուք գիտեք, այնտեղ այսօր կառավարական լուրջ ճգնաժամ է, ես էլ չեմ խոսում պարբերաբար իրականացվող պայթյունների և դրանց զոհերի մասին: Կառավարական լուրջ ճգնաժամ է, որովհետև շիաները, որոնք պառլամենտական ընտրություններում մեծամասնություն են կազմել, այսօր հակամարտության, քաղաքական հակամարտության մեջ են սուննիների և քրդերի հետ: Նրանք խնդիր են դրել, որ Իրաքի վարչապետն անպայմանորեն լինի իրենց՝ շիաների ներկայացուցիչը: Սինչդեռ դրան դեմ են սուննիները և քրդերը: Նշանակում է՝ այնտեղ էլ է հղի քաղաքացիական պատերազմի սկսման վտանգը: Վտանգ, որի հավանականությունը կմեծանա՝ պայմանավորված նաև Իրանի դեմ պատերազմական գործողությունների ծավալման հետ: Արդյունքում ամբողջ Մերձավոր Արևելքը կդառնա պատերազմի թատերաբեմ, որի հետևանքը կլինի համաշխարհային էներգետիկ ճգնաժամը: Եվ եթե զարգացումների նման պայմաններում ԱՄՆ-ն դրա հետևանքով առաջացած անխուսափելի էներգետիկ ճգնաժամը կկարողանա հաղթահարել համեմատաբար առանց լուրջ ցնցումների, ապա եվրոպական երկրները դրա տակից դուրս գալ չեն կարողանա: Մեծ դժվարության առաջ կկանգնեն նաև արևելյան ու հարավարևելյան Ասիայի հսկաները: Խոսքս Չինաստանի, Հարավային Կորեայի, Ճապոնիայի, Թայլանդի, Թայվանի, Սինգապուրի և Մալայզիայի մասին է, որոնք իրենց նավթի հիմնական մասը ստանում են ճիշտ այդ նույն Պարսից ծոցից: Իսկ եթե այս երկրներին էլ պատեց ճգնաժամը, ապա դա կհանգեցնի համաշխարհային տնտեսության կաթվածահարությանը, որովհետև հիշատակածս երկրներն այսօր համաշխարհային շուկա են արտահանում ընդհանուր շրջանառվող ապրանքների 38-ից 40%-ը: Այսինքն՝ բառիս իսկական առումով աշխարհը դա կբերի ապոկալիպսիսի: Այս ամենը ի նկատի ունենալով, ես համոզված կարող եմ ասել, որ ամերիկացիները կգտնեն իրենց վեհ ժողովրդին արժանի համապատասխան որոշում: Եվ այդ որոշումը, կարծում եմ, կգոհացնի թե՛ ԱՄՆ-ին, թե՛ ասիական տնտեսական հսկաներին, թե՛ Եվրոպային, իսկ որ ամենակարևորն է, զերծ կպահի այս տարածաշրջանը հերթական արյունահեղությունից:

– Հարգելի հեռուստադիտողներ, ուղղակի ավելացնեմ, որ Միացյալ Նահանգները, ըստ իս, շատ խորամանկ դիվանագիտություն ունեն: Պարզ է, որ գերտերություն են և իրենց կարող են թույլ տալ նման էքսպերիմենտներ: Սպառնալով Իրանին, իսկ մինչ այդ սպառնալով Իրաքին՝ արհեստականորեն բարձրացնում են նավթի գինը: Ի՞նչ են հետապնդում: Առաջինը, եթե նավթի գինը շատ աճի, ուրեմն, փոքր պետությունները նավթ քիչ կսպառեն: Դա ձեռք կտա Միացյալ Նահանգներին: Երկրորդը. Ռուսաստանը, որն

այսօր էդ նավթային դոլարներով խնդիրներ է լուծում իր պետության մեջ, սոցիալական հարցեր, կյանքի մակարդակը բարձրացնում է, աճում է, օրերից մի օր կարող է անկում ապրել, եթե նավթի գինը կտրուկ ընկնի:

– Հետաքրքիր դիտարկում եք արել Տիգրան Կարապետովիչ: Եվ այդ դիտարկմանը, երևանյան բարբառով ասած, մի երկու նախշ ավելացնեմ: Դուք շատ ճիշտ նկատեցիք, որովհետև այսօր, մասնավորապես, Չինաստանի և ԱՄՆ-ի առևտրաշրջանառության սալդոն բացասական է ԱՄՆ-ի համար և այն 2005 թ. կազմել է 211 մլրդ դոլար: Նույնն է ԱՄՆ-ի առևտրի բացասական սալդոն Եվրամիության և հիշատակածս ասիական մյուս 6 պետությունների հետ: Այսինքն՝ դրա արդյունքում այսօր այդ երկրներում կուտակված է դոլարի հսկայական պաշար: Եվ նավթի գների բարձրացման հետևանքով այդ դոլարները, ըստ էության, հետ են վերադառնում: Հետ են վերադառնում այսպես, թե այնպես տրանսազգային նավթային այն ընկերություններին, որոնց տերերը հիմնականում Միացյալ Նահանգներն են, Մեծ Բրիտանիան, Հոլանդիան և զարգացած այլ երկրներ: Պատահական չէ, որ ես հիշատակեցի «Էքսոն մոբիլի», «Բրիթիշ պետրոլիումի» և մյուսների եկամուտների մասին:

– Եվ կախման մեջ են դնում Ռուսաստանին, որն ակամայից ձգտում է պահել նավթի բարձր գները, որովհետև եթե դրանք ընկնեն, ինքը ճգնաժամ կունենա:

– Դուք ճիշտ եք, Ռուսաստանի համար էներգակիրները երկրի արտարժույթի ավելի քան 55%-ն են ապահովում և բյուջետային մուտքերի 34-ից 36%-ը: Սակայն Ռուսաստանի գործոնը փոքր-ինչ այլ է, այն պարզ պատճառով, որովհետև նա այսօր ստաբիլիզացիոն ֆոնդում կուտակել է հսկայական գումարներ: Եվ այդ գումարները վերջերս ՌԴ կառավարության որոշմամբ ներդրվելու են միջազգային, առավելապես ամերիկյան խոշոր կազմակերպությունների արժեքավոր թղթերի, ակցիաների մեջ: Ու, հավանաբար, եթե մենք Ձեզ հետ նման մտահոգություն ունենք, ապա Ռուսաստանում առավել ևս խնդրո առարկայի շուրջ վերլուծություններ արած կլինեն: Դրա առհավատչյան այն է, որ այսօր Ռուսաստանը դիվերսիֆիկացիայի է ենթարկում իր նավթի և գազի արդյունահանման ու սպառման շուկաները: Ի՞նչ ի նկատի ունեմ: Ռուսաստանից արտահանվող նավթի և գազի առյուծի հիմնական բաժինը սպառվում է Եվրոպայում: Եվրամիության առանձին երկրներում կախվածությունը ռուսական գազից տատանվում էր 30-ից 60%: Այդ կախվածության ականատեսն էինք անցած ձմռանը, երբ Ուկրաինայի գազամատակարարման հետ կապված խնդիրների պատճառով եվրոպացիների մոտ լուրջ տագնապներ եղան: Խնդիր դրվեց դիվերսիֆիկացնել Եվրամիության երկրների գազամատակարարման, ինչու չէ, նաև նավթի մատակարարման հարցը՝ նպատակ ունենալով մեղմել դրանց կախվածությունը Ռուսաստանից: Ի պատասխան, Ռուսաստանն իր հերթին արդեն իսկ դիվերսիֆիկացնում է իր էներգետիկ շուկան: Այսպես, կառուցում է Արևելյան Սիբիր—Խաղաղ օվկիանոս 80 մլն տոննա տարեկան հզորությամբ նավթամուղ: Ըստ որում, դրանից շուրջ 30 մլն տոննա նավթը տարեկան կտրվածքով ուղղվելու է դեպի չինական սահմանը, իսկ 50 մլն տոննան՝ Ճապոնիա: Երբ մեկ ամիս առաջ նախագահ Պուտինը

գտնվում էր Պեկինում, հայտարարել էր, որ դեպի Չինաստան գազամուղ է կառուցվելու՝ 40 մլրդ խմ տարեկան հզորությամբ:

– Ավելի վատ, պարոն Գեղամյան, այսինքն՝ Ռուսաստանի ամբողջ տնտեսությունը կախման մեջ է ընկնում գազից ու նավթից:

– Կախվածության չափը մեծ է, Դուք ճիշտ եք, բայց դրա վտանգը, կարծում եմ, գիտակցում է Ռուսաստանը: Այդ իսկ առումով, կարծում եմ, ամենևին պատահական չէ, որ առաջիկայում՝ հունիս ամսին, Սանկտ Պետերբուրգում տեղի է ունենալու Մեծ ութնյակի գագաթաժողովը (հիշեցնեմ, որ հիմա Մեծ ութնյակը նախագահող երկիրը Ռուսաստանի Դաշնությունն է) և այնտեղ օրակարգային թիվ մեկ հարցը լինելու է համաշխարհային էներգետիկ անվտանգության խնդիրը: Եվ այդ հարցը, անկասկած, ամենայն մանրամասնությամբ քննարկվելու է: Դրա առանցքում էլ կլինի այն սկզբունքը, որ այսօր չի կարող էներգետիկ անվտանգություն ապահովվել առանձին վերցրած Ռուսաստանի համար և դա չերաշխավորվի Եվրոպայի, ԱՄՆ-ի, աշխարհի մյուս պետությունների համար:

– Հասկանալի է, շաղկապված են:

– Առաջիկայում, սիրելի ժողովուրդ, կխնդրեմ, որ կրկին առիթ ընձեռվի, որ այսօրվա մեր այս զրույցի բոլոր հարցերը հեռուստատեսությամբ կարողանամ վերլուծել՝ դրանք շաղկապելով ներքին տնտեսական քաղաքականության հետ: Այժմ ասեմ միայն հետևյալը. շատ ճիշտ էր նկատել Տիգրան Կարապետովիչը, որ անհրաժեշտ է պակասեցնել նավթի օգտագործումը: Մասնագետներն այս առումով հետաքրքիր հաշվարկներ են կատարել: Այսպես, Ռուսաստանում համախառն ներքին արդյունքի մեկ միավորի արտադրության համար 3-4 անգամ ավել էներգիա է ծախսվում, քան արևմտաեվրոպական զարգացած երկրներում, Միացյալ Նահանգներում և Ճապոնիայում: Նույնը կարելի է ասել նաև Հայաստանի մասին: Այսինքն՝ մեր տնտեսությունը, գրեթե ամբողջությամբ կախված լինելով դրսից ներկրվող էներգակիրներից, շռայլորեն է օգտագործում դրանք: Մինչդեռ այսօր հրատապ պահանջ է, որ մեր տնտեսական քաղաքականության մեջ գերակայություններ լինեն, մասնավորապես, խնդիր ունենանք շեշտակի կրճատելու համախառն ներքին արդյունքի էներգատարողունակությունը: Կան բազմաթիվ այլ հարցեր ևս, որոնք նույնպես արդիական նշանակություն ունեն: Հավատացնում եմ Ձեզ, այդ հարցերի լուծումից է կախված գյուղատնտեսության, արդյունաբերության, ինչու չէ, նաև զբոսաշրջության զարգացումը մեր երկրում:

Աշխարհն այսօր, կարող է թվալ, թե մեծ է, սակայն այն փոքր է ու շաղկապված: Եվ փոքր է դարձել գլոբալացման, համակարգչային ինֆորմացիոն տեխնոլոգիաների համատարած կիրառման պայմաններում: Ու մենք ականատեսն ենք, որ աշխարհի տարբեր մասերում տեղի ունեցող ցանկացած դեպք անհապաղ իր արձագանքն է գտնում ամենուր: Սա էլ նշանակում է, որ բոլորս պետք է պատրաստ լինենք գլոբալացումից բխող մարտահրավերներին: Ցավոք, Հայաստանում առ այսօր այս հարցերին պատշաճ ուշադրություն չի հատկացվում: Համենայն դեպս, երբ կարդում ես մեր մամուլը, առավել ևս, երբ ծանոթանում ես կառավարության որոշումների, ինչու չէ, Ազգային ժողովի

ընդունած օրենքների հետ, ապա համոզվում ես, որ մենք, ավա՜ղ, շարունակում ենք իներցիայով լուծել իրավիճակային խնդիրներ, որոնք երբեք ու երբեք մեր երկրին հեռանկար խոստանալ չեն կարող: Ահա այսօրվա մեր այս հարցերի քննարկումը թող լինի փոքր-ինչ ահազանգ իշխանավորներին, որ Հայաստանը չափազանց հետ է մնացել համաշխարհային զարգացումներից: Ավելին, մենք չունենք գլոբալ մարտահրավերներին դիմակայելու ճկուն համակարգ, որի հետևանքով հայտնվել ենք այն աստիճանի ստորացուցիչ վիճակում, երբ համաշխարհային հանրությունից հայցում ենք, որ հակամարտող Ադրբեջանն ընդունի Եվրոպայի Անվտանգության և համագործակցության կազմակերպության հիմնարար փաստաթղթում ամրագրված սկզբունքը:

– Պարոն Գեղամյան, Ուկրաինայում ստեղծված իրավիճակում Դուք ո՞ւմ եք նախապատվություն տալիս՝ Յանուկովիչին, Յուշչենկոյին, թե Տիմոշենկոյին: Դուք Ձեզ ո՞ր ուժի հետ եք պատկերացնում:

– Սիրելի ժողովուրդ, ուրեմն, Հայաստանում բոլոր հարցերը լուծեցինք, գնացինք հասանք Ուկրաինա: Էսպես պատասխանեմ, որ մի քիչ աշխուժություն մտնի, թե չէ կասեն՝ նավթով սկսեցին, պատերազմով պրծան: Շատ հետաքրքիր ուսումնասիրություն կա ուկրաինական ընտրությունների արդյունքների վերաբերյալ: Ո՞րն է դրանց առանցքը: Արևմտյան Ուկրաինան, Լվովի երկրամասը, Իվանո-Ֆրանկովսկը, Ուժգորոդը և այլն հիմնականում ձայները տվել է Յուշչենկոյի «Մեր Ուկրաինային», Տիմոշենկոյի բլոկին և նվազագույնը՝ Յանուկովիչի գլխավորած «Ուկրաինայի ռեգիոններին»: Կենտրոնական Ուկրաինայում առաջատար է եղել Տիմոշենկոյի բլոկը, ապա Յուշչենկոյի «Մեր Ուկրաինան» և Յանուկովիչի «Ուկրաինայի ռեգիոնները»: Սինչղեռ արևելյան մարզերում վերջինս ջախջախիչ հաղթանակ է տարել:

– Դուք հիմա ո՞ւմ հետ եք:

– Կարևորն այն է, թե ում հետ է ուկրաինական ժողովուրդը: Ես, այսօր, կարծում եմ, որ ազգ, որը տվել է Լեսյա Ուկրաինկային և Տարաս Շևչենկոյին, Դովժենկոյին է տվել, իրավունք չունի XXI դարում պառակտվել: Ես Ուկրաինայի հավաքական խելքն ու կամքը ներկայացնող, «Վերխովնայա Ռադա» ընտրված հինգ քաղաքական ուժերի հետ եմ:

– Բոլորի՞ հետ:

– Կարծում եմ, դա է այսօր հրամայականը: Որովհետև 32,58% հավաքել է «Ուկրաինայի ռեգիոնները»-ը, 23,5% հավաքել է Յուլյա Տիմոշենկոյի դաշինքը, 14 %-ից ավել հավաքել է Յուշչենկոյի «Մեր Ուկրաինան», 6%-ից ավել Մորոզի գլխավորած սոցիալիստները, 3,6%՝ Ուկրաինայի կոմունիստները: Այսինքն՝ հասարակությունն այնտեղ պառակտված է: Իսկ եթե հասարակությունը պառակտված է, և եթե դու խոհեմ պետական գործիչ ես, ապա պետք է քո առաջ խնդիր դնես, թեկուզ զոհաբերելով անձնական նկրտումներդ, որ այդ պառակտումը վերացնես:

– Այնուամենայնիվ, ո՞ւմ եք տալիս Ձեր նախապատվությունը, ո՞ւմ եք սիրում:

– Ես սիրում եմ հայ ժողովրդին, Տիգրան Կարապետովիչ: Ես ինձ իրավունք չեմ վերապահում որևէ մեկին նախապատվություն տալու, առավել ևս, երբ ուկրաինացի

ժողովուրդն ինքը միարժեքորեն չի կողմնորոշվել, թե ում գերապատվությունը, նախապատվությունը տա: Երկիրը հայտնվել է այնպիսի իրավիճակում, երբ հասարակությունը, բառի իսկական առումով, պառակտվել է, երբ, ի դեմս Ուկրաինայի, կա երկփեղկված հասարակություն: Ես կողմնակից կլինեմ ուկրաինական հավաքական այն ուժին, որը կկարողանա ազգը միավորել: Ես կուզեի, որ այսօր ուկրաինական մայր հողի արգանդից ծնվի ուկրաինացի Օտտո ֆոն Բիսմարկի նման առաջնորդ, որը նման իրավիճակում՝ 19-րդ դարի վերջում, կարողացավ համախմբել գերմանական մասնատված թագավորություն-դքսությունները: Ասեմ ավելին, այն, ինչ տեղի է ունենում Ուկրաինայում, իր մեջ պարունակում է վտանգավոր միտումներ: Միտումներ, որոնք, ի դեպ, ներհատուկ են նաև եվրոպական այլ երկրների: Տեսեք՝ ի՞նչ է կատարվում: Այսպես, Իտալիայում հասարակությունը, հանրությունը պառակտվեց. պառլամենտական ընտրություններում ընտրողների ձայները կիսվեցին, կեսը տրվեց Ռոմանո Պրոդիի գլխավորած դաշինքին, մյուս կեսը՝ Սիլվիո Բեռլուսկոնիի գլխավորած բլոկին: Անցած տարի հասարակությունը պառակտվել էր նաև Գերմանիայում: Այնտեղ ևս ազգաբնակչության կեսը իր քվեները տվել էր Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը, մյուս կեսը՝ քրիստոնյա-դեմոկրատների դաշինքին: Արդյունքում իրար հակադիր ուժերը ստիպված կոալիցիա կազմեցին: Արդյոք Եվրոպայում ընթացող նման զարգացումները մեզ մտածելու տեղիք չե՞ն տալիս, թե ի՞նչ է կատարվում հին աշխարհում: Եթե մեզ թվում է, որ կայացած, այն էլ զարգացած եվրոպական երկրներում առկա ազգերի երկփեղկվածությունը անդրադարձ չի ունենա մեր տարածաշրջանում խմորվող զարգացումների վրա, ապա սխալվում ենք: Այսօր Հայաստանի հասարակությունը, ցավոք, նույնպես պառակտված է: Դրանից ավելի կործանարար վտանգ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» վիճակում գտնվող, այն էլ փոքր երկրների համար, հավատացնում եմ Ձեզ, անհնար է պատկերացնել:

– Եթե իմ կարծիքը Ձեզ հետաքրքրում է, ապա ես Տիմոշենկոյի կողմից եմ, որովհետև հայի արյուն կա մեջը:

– Դե Դուք, Տիգրան Կարապետովիչ, կնամեծար անձնավորություն եք, ես դրան եմ վերագրում Ձեր այս նախապատվությունը:

– Պարոն Գեղամյան, մեր հաղորդումը մոտեցավ իր ավարտին՝ խնդրեմ Ձեր վերջաբանը:

– Սիրելի հայրենակիցներ, կուտակված շատ ու շատ հարցեր կան: Ես միտումնավոր չհիշատակեցի հայաստանյան իշխանության որևէ դեմքի, որովհետև, կրկնում եմ, երբ երկիրը, պետությունը վտանգված է, անհեռատեսություն կլինի, եթե վերահաս վտանգի առաջն առնելու փոխարեն մեղավոր փնտրես: Աստված մի արասցե, եթե Հայաստանը կորուստներ ունենա, ապա դրանք այս իշխանությունների կորուստները չեն լինելու, դրանք լինելու են մեր և մեզնից հետո եկող սերունդների կորուստները: Գիտեմ, իմ այս հարցազրույցից հետո կրկին հարձակումներ կլինեն, թե իմ և թե «Ազգային Միաբանություն կուսակցության» վրա, կասեն, տեսա՞ք, կես բառով չտվեց Քոչարյանի անունը, Սերժ Սարգսյանի անունն էլ չտվեց, հերթական անգամ ինձ կկապեն վերջինիս հետ: Հետո էլ

կասեն՝ Ռոբերտենք Գեղամյանին վախեցրել են: Չէ, էդպես չի: Երկիրը մեկն է, ես մեր երկրում անելիք ունեմ, ես մեր երկրում տեսնում եմ իմ երեխաների և թոռների ապագան: Իսկ քննադատությունն առաջիկայում Ազգային ժողովի հայտարարությունների ժամին, ինչու չէ, «Խորհրդարանական շաբաթի» մեջ մեզ հասանելիք երեք րոպեում ես անպայման կհնչեցնեմ: Իսկ այսօր, օգտվելով առիթից, կրկին ու կրկին կոչով դիմում եմ մեր ժողովրդին: Մենք, միևնույն է, XXI դարում գտնելու ենք մեր արժանի տեղը քաղաքակիրթ աշխարհում: Եվ դրա բանալին յուրաքանչյուրիս ձեռքում է, յուրաքանչյուրիս հոգում ու սրտում է: Դրա բանալին յուրաքանչյուրիս խելքում է: Ուրեմն, նախ, զոռ տանք մեր ուղեղներին, հետո նոր գործենք: Եթե մենք այդպես վարվենք, հավատացնում եմ Ձեզ, ոչ Աղրբեջանի վտանգը մեզ համար այդչափ մտահոգիչ կլինի, ոչ էլ նրա կողմից պարբերաբար հայտարարվող պատերազմ սկսելու սպառնալիքը: Մենք միշտ շահող դուրս կգանք, եթե լինենք հեռատես ու միաբան: Իսկ հեռատես լինելու համար, հարկ է լինենք հանդուրժող և ուսյալ: Հանդուրժող ոչ թե երկրում տիրող այս խայտառակությունների, ալան-թալանի, այլ մեկս մյուսի կարծիքի հանդեպ: Այ, հանդուրժողականության ամենավառ դրսևորումն այսօր ցուցադրեց Տիգրան Կարապետյանը՝ թողնելով, որ եթերում հիմնականում ես խոսեմ: Շնորհակալություն:

«Իրավունք», 12-18.V.2006:

«Պատժեք գեներալ Մանվելին»

Մայիսի 9-ին Երկրապահի օրվա կապակցությամբ հրավիրված հավաքի ժամանակ ԵԿՄ նախագահ, ՊՆ փոխնախարար Մանվել Գրիգորյանը բավականին կոշտ հայտարարություն էր արել, թե իրենք ոչ մի թիզ հող թշնամուն զիջելու պատրաստ չեն: Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպումից առաջ, երբ պետք է քննարկվի ԼՂՀ խնդիրը, հայտարարությունը, անշուշտ, ունի կարևորագույն նշանակություն: Այս կարծիքին է «Ազգային Միաբանության» նախագահ Արտաշես Գեղամյանը:

«Այն, որ գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանը համոզված էր ասում, և դա իր համոզմունքն է, որ արյամբ ձեռք բերված հողը երբեք չի զիջվի հակառակորդին, նա անշուշտ անկեղծ էր, բայց ակամայից «Երկրապահի» ողջ միջոցառումը տեղավորվեց պարոններ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի խաղի մեջ. այն է, նրանք հիմա, նախևառաջ, նույն Մինսկի խմբի համանախագահող երկրներին կապացուցեն, որ միայն իրենք են կարողանում այս ռազմատենչ երկրապահի առաջն առնել, իրենք են, որ վտանգելով իրենց թեկուզև ֆիզիկական գոյությունը, ասում են՝ այո, մենք պատրաստ ենք ազատագրված տարածքները զիջել: Այսինքն, նրանք իրենք իրենց կմատուցեն որպես ողջամիտ քաղաքական ուժ, որը հարկադրված է մի կողմից դիմակայել դրսի ճնշումներին, մյուս կողմից՝ ներսի ճնշումներին»: Արտաշես Գեղամյանը, սակայն, կարծում է, որ այդ խորամանկությունը նրանց մոտ չի ստացվի այն պարզ պատճառով, որ մարդիկ շատ լավ հասկանում են, թե ինչ է տեղի ունենում. «Արթուր Բաղդասարյանի հրապարակային հայտարարությունները դարձրեցին մի հրեշավոր, ազգակործան զարգացումների հնարավոր սցենար, և դրել ու պատժում են, ու ցույց են տալիս, թե ով է իրականում տանտերը, իսկ հարգելի Մանվել Գրիգորյանը, որ փոխնախարար է, և շատ ավելի կտրուկ, գործնական ու առարկայական պնդում է արել, նույն շտաբի պետի հետ նստած ծափահարում էին: Ես հարց եմ տալիս պարոն Քոչարյանին. «Հավատարիմ մնացեք ձեզ վերագրած եզակի տղամարդու, վոյինի տիտղոսին և փորձեք պատժել Մանվել Գրիգորյանին, չէ՞ որ նա ճիշտ հակառակն է ասել այն պնդումների, որ դուք արել եք միջազգային ատյաններում, և այն պնդումներին, որն արել է Սերժ Սարգսյանը՝ Մանվել Գրիգորյանի անմիջական ղեկավարը: Այն ժամանակ մենք կհավատանք ձեր անկեղծությանը»:

«Ազգային Միաբանության» ղեկավարը ցավում է՝ պատկերացնելով այն մարդկանց հիասթափությունը, որոնք սրտանց ծափահարում էին. «Պատկերացնո՞ւմ եք, ինչ մեծ

հիասթափություն կապրեն այդ մարդիկ, որ հասկանան, թե ինչ վարպետորեն, ճիզվիտորեն կազմակերպված քաղաքական PR ակցիայի են մասնակցել՝ ուղղված ոչ այնքան ներսի, որքան դրսի օգտագործմանը»:

Գ. Մ.

«Այբ–Ֆե», 12.–18.V.2006:

Արտաշես Գեղամյանը՝ Արթուր Բաղդասարյանին

«Ազգային Միաբանություն կուսակցության» ղեկավար Արտաշես Գեղամյանից փորձեցի ճշտել, թե ինչ տեսակետ ունի ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի հրաժարականի և ընդդիմադիր դառնալու հայտարարության մասին: Պրն Գեղամյանը լիաթոք ծիծաղեց ու ասաց. «Միանգամայն ողջունելի եմ համարում Արթուր Բաղդասարյանի վերադարձը ի շրջանս յուր: Աստվածաշնչում հայտնի պատմություն կա՝ մոլորված զավակի (ուզում է ասել՝ անառակ որդու – *խմբ.*) վերադարձը, որի առիթով ծնողը խնջույք է կազմակերպում ու երբ իր հավատարիմ զավակը տարակուսում է, թե՝ հայր, ես միշտ եղել եմ քո դավանակիրը, միշտ քո հանճնարարականը կատարողը, բայց դու երբեք նման պատվի չես արժանացրել, հայրը պատասխանում է. նա ինձ համար կորած մարդ էր, նա ինձ համար մահացած մարդ էր: Հիմա այդպես էլ ընդդիմադիր դաշտը Արթուրին պետք է ընդունի որպես մոլորյալ զավակի, որովհետև նա մեռած մարդ էր, Հմայակ Հովհաննիսյանի ասածով՝ «մումիա դառնալու վտանգ կրող մարդ էր»: Անշուշտ կա մեկ բայց... այդ բայցը այն էր, որ Արթուր Բաղդասարյանը ավելի համարձակ ներխուժի ընդդիմադիր դաշտ ու ասի, որ հանցագործություն է կատարել, երբ իմանալով, որ Ռոբերտ Քոչարյանը 2001-03 թթ. սեփականաշնորհման հովանավորն է եղել, վավերացնելով կառավարության որոշումները, և նա հանցագործն է եղել այդ ալան-թալանի, որովհետև դրանից հետո 2003-ի նախագահական ընտրությունների ժամանակ սատարել է Ռ. Քոչարյանին, ասեմ ավելին՝ ՕԵԿ-ի տեղամասային ընտրական հանձնաժողովների բոլոր անդամները աչքերը փակել են կամ անմիջական մասնակիցն են եղել զանգվածային ընտրակեղծիքների, և նույնը կրկնվել է 2003 թ. մայիսին՝ խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Եթե նա քավություն աղերսի, և այդ աղերսանքը լինի անկեղծ, անշուշտ, մենք դա դրական կհամարենք և Արթուր Բաղդասարյանի անկեղծության դրսևորում կնկատենք: Ավելին, եթե նա ասի, որ իր կուսակից Միհր Շահգելդյանը, որը սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի պետական կողմը ներկայացնող համակարգողն էր, ու եթե երկուստեք խոստովանեն, որ 250 հազար ձայները դարձրել են 1,5 միլիոն, կատարելով մեծագույն հանցանք ուղղված հայ ժողովրդին, արհամարհել են մեր ժողովրդի համընդհանուր ընտրական կարծիքը, այդ աղերսանքներից հետո, եթե ժողովուրդն ընդունի, բնականաբար, մենք ճիզվիտներ չենք, քրիստոնյաներ ենք և անպայման «մոլորված զավակներին» կընդգրկենք ոչ թե ընդդիմադիրների, այլ մոլորյալների դաշտը, և եթե այդ դաշտում

կարողանան համոզել, որ դարձի են եկել, ապա, անշուշտ, մենք սրտաբաց կընդունենք մեր «մոլորված զավակներին»:

Պրն Գեղամյանը մեր զրույցի ավարտին ավելացրեց. «ՕԵԿ-ը լրջագույն հանցագործությունների մեղսակիցն է, և ես հասկանում եմ, որ Արթուր Բաղդասարյանը գիտակցելով, որ ՀՀ գլխավոր դատախազը այսօր զբաղված է ծառատունկով, ինքը փորձում է ստանձնել գլխավոր դատախազի դերակատարում, մինչդեռ իր գործողությունների արդյունքում ինքն ավելի սազական կլիներ ամբաստանյալի աթոռին: Նա թող քավության ուղին ընտրի, թող իր մեղսակցությունն ընդունի, որից հետո, եթե իրավաբանորեն չհետապնդվի, նոր արդեն փորձի գնահատական տալ այն գործողություններին, որոնց անմիջական մասնակիցը եղել է ինքը և այսօր, ավա՜ղ, զղջում է. փոխանակ ուրիշի դեմ մեղադրանք հարուցելու, սեփական մեղքերի քավությունը աղերսել»:

Մարիետա Մակարյան

«Ազգ», 13.V.2006:

Վախի մթնոլորտի ծնունդն ու զոհը

Սիրելի ընթերցող, Հայաստանում միայն ծույլերը չգիտեն, որ 2001-2003 թթ. սեփականաշնորհման քողի ներքո տեղի էր ունեցել ազգային հարստության ալանթալան, կողոպուտ, որը շարունակվում է առ այսօր: Ակնհայտ է, որ դա չէր կարող իրականացվել առանց Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան զույգի բարձր հովանավորության: Սակայն զարմանք է առաջացնում այն, որ այս հարցերը միայն 3-5 տարի անց, այն է՝ 2007 թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին էր միայն հանկարծ «զայրացրել» ԱԺ խոսնակ Արթուր Բաղդասարյանին: Չմոռանանք հստակ նշել, որ «միլիոնավոր դոլարների այդ թալանը», որն իրականացվել էր երկյակի բացարձակ իշխանություն ունենալու պայմաններում, չէր խանգարել հարգելի Արթուր Բաղդասարյանին 2003 թ. նախագահական ընտրությունների ժամանակ գյուղից գյուղ, մարզից մարզ գնալով քարոզել իր շեֆի՝ նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանի օգտին: Սա էր թվացյալ թիվ մեկ «հակասությունը»՝ հրաժարականի դրդապատճառը:

Կոալիցիա- «Օրինաց երկիր» մեկ այլ «հակասության» մասին ևս հիշենք: Այն, որ Հայաստանի Հանրապետությունում կոպտորեն կեղծվել են 2003 թ. նախագահական և Ազգային ժողովի ընտրությունները, 2005 թ. անցկացված սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն, դա նույնպես միայն ծույլերի համար կարող է գաղտնիք լինել: Անվիճելի է, որ Ընտրական օրենսգրքի համատարած, անպատիժ մնացած խախտումները կարող էին տեղի ունենալ միայն «Օրինաց երկրի» ու նրա կոալիցիոն գործընկերների և Ռ.Քոչարյանի կողմից երաշխավորված շուրջ երկու հազար ընտրական տեղամասերում ընդգրկված ավելի քան 14 հազար հանձնաժողովի անդամների կողմից: Դրա մասին էլ մեր հասարակությունը քաջ տեղեկացված էր: Կասկածից վեր է, որ ընտրությունների և հանրաքվեի արդյունքների կեղծիքները չէին կարող իրականացվել առանց Ռ.Քոչարյան-Ս.Սարգսյան զույգի անմիջական հովանավորության: Սակայն դա էլ, չգիտես ինչու, ԱԺ խոսնակի «վրդովմունքն» առաջացրեց միայն այդ ամենից երեք տարի անց:

Եվ, վերջապես, բոլորի համար ակնհայտ է նաև այն, որ ճիշտ այդ զույգի անմիջական հրահանգով է, որ մի քանի օրվա ընթացքում թղթե տնակի նման փլուզվեց «Օրինաց երկիր» խմբակցությունը:

Տարակուսանք է առաջացնում այն, որ պարոն Բաղդասարյանն իր և ոչ մի հրապարակային ելույթում, առավել ևս մայիսի 12-ին տված ասուլիսում այդպես էլ խուսափեց հիշատակել պարոններ Քոչարյանի և Սարգսյանի անունները: Մարդիկ, ովքեր

երկրի ճակատագրի համար խիստ բացասական, անգամ իսկ կործանարար դերակատարում են ունեցել, որի մասին վերը նշվեց: Թերևս, ասուլիսում պարոն Բաղդասարյանի արտասանած բոցաշունչ ասք-խորաթաներից ճշմարիտ հնչեղություն ունեին միայն Հայաստանում արմատացած «վախի հասարակության» մասին պնդումները: «Վախի հասարակության» գոյության ամենավառ հաստատումն էլ ճիշտ նույն Ա.Բաղդասարյանի ասուլիսն էր, երբ նա այդպես էլ վախեցավ պարզ ասել անօրինականությունների, ալանթալանի, ըստ էության, հովանավորների, իր իսկ բարերարների՝ Քոչարյան-Սարգսյան զույգի անունները: «Օրինաց երկիր» խմբակցությունը լքածները շատ ավելի անկեղծ էին «վախի հասարակությունը» որպես հայաստանյան իրողություն գործնականորեն ընկալելու հարցում, քան իրենց շեֆը, որը, բոլորից շատ վախեցած լինելով, փորձում էր անգամ իսկ կտրիճ ձևանալ:

Եվ, վերջապես, երբեք ու երբեք պետք չէ մոտալուտ ժամանակ խորտակվող Քոչարյան-Սարգսյան նավից փախուստը հանրությանը փորձել ներկայացնել որպես հերոսություն: Աչքերում սարսափի, վախի զգացում ունեցող ասուլիս տվողին, ինչն էլ բացահայտ երևաց հեռուստաէկրանից, հակացուցված է հասարակությանը որպես հերոս ներկայանալ: Իհարկե, եթե այս դեպքում էլ նախապես ձեռք չի բերվել պայմանավորվածություն զույգի հետ՝ մեր ժողովրդի գլխին հիմա էլ խաղալ մի նոր տրագիկոմեդիա: Կարծում եմ, այս դեպքում էլ 40 օրը բավարար ժամկետ է ճշմարտությունն ակներև դարձնելու համար:

«Ազգային Միաբանություն կուսակցության» պատգամավորները, մասնավորապես ես՝ Արտաշես Գեղամյանս, այս ամենը և ուրիշ շատ ու շատ հանգամանքներ իմանալով է, որ բարեկամաբար խորհուրդ ենք տվել Ա.Բաղդասարյանին անցնել քավարանով: Ծիծաղ ու կարեկցանք է առաջացնում այն, որ ապակե տնակում ապրելով՝ Ռոբերտին ու Սերժին դուր գալու համար, չասենք՝ քաղաքական դաշտում նոր «ընդդիմադիր» դերակատարում ստանձնելու նպատակով, օեկականները «Ազգային Միաբանության» ուղղությամբ քար շպրտելով են սկսել զբաղվել: Անփառունակ վախճան ունեցող պարապ զբաղմունք է դա և անպտուղ մի փորձ՝ ուրիշի «հրթիռի» վրա նստած փորձել հերթական անգամ «դրախտ» ընկնել: Չմոռանանք, թե ինչ պայմաններում և ով էր ստեղծել ՕԵԿ-ը:

«Հայկական ժամանակ», 16.V.2006:

Միակ տղամարդու առեղծվածը

Ներքաղաքական իրավիճակի վերջին օրերի վայրիվերումների վերաբերյալ մեր թղթակցի հարցադրմանն ի պատասխան Արտաշես Գեղամյանը ներկայացրեց մայիսի 10 -ին և 12 -ին «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցը:

– Կարծիք կա, որ «Օրինաց երկրի» պատգամավորներին խմբակցությունից մեկ առ մեկ տանելով՝ նախագահ Ռոբերտ Քոչարյանը դեղին քարտ է ցույց տալիս Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանին: ԱԺ «Ազգային Միաբանություն» խմբակցության ղեկավար Արտաշես Գեղամյանի փոխանցմամբ, այս ամենը սպասելի էր՝ հաշվի առնելով «Օրինաց երկրի» ղեկավարի վերջին հայտարարությունները:

– Այն, որ Ազգային ժողովի ամբիոնից 2001-2003 թթ. սեփականաշնորհման արդյունքների վավերացման ժամանակ Արթուր Բաղդասարյանը հայտարարեց, որ այդ տարիներին մասնավորեցման քողի ներքո տեղի է ունեցել ազգային հարստության ալանթալան և միլիոնավոր դոլարների արժեք ունեցող գույքի ջրի գնով վաճառք, դա «Օրինաց երկրի» պատգամավորներն ընդունեցին հավուր պատշաճի: Դե, ինչ, իրականացված ալան-թալանը գաղտնիք չէր ոչ մեկի համար: Մեր ժողովուրդն այդ ամենի մասին գիտի, որովհետև բոլորիս աչքի առաջ է դա կատարվել: Այնուհետև, ինչպես հիշում եք, ԱԺ խոսնակի տված հարցազրույցում նշվել էր, որ 2003 թ. թե՛ նախագահական և թե՛ խորհրդարանական ընտրությունները կեղծվել են, կեղծվել են նաև 2005 թ. սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի արդյունքները: Դա էլ «Օրինաց երկրի» պատգամավորներն ընդունեցին հավուր պատշաճի, չէ՞ որ այս ամենի մասին էլ լավ գիտեն թե՛ մեր մարդիկ և թե՛ պատկան միջազգային կառույցները:

– Նկատի ունեք գերմանական թերթին տված Արթուր Բաղդասարյանի հարցազրո՞ւյցը:

– Միանգամայն ճիշտ եք, այո, ի նկատի ունեմ այդ թերթին տված նրա հարցազրույցը: Բայց «Օրինաց երկրի» խիստ «քաղաքականացված» հատվածի տղաների համբերության բաժակը լցվեց այն ժամանակ, երբ Արթուր Բաղդասարյանը հայտնեց, որ մենք ազգովի գնալու ենք ՆԱՏՕ, Հայաստանի ապագան ՆԱՏՕ-ն է: Դե, հիմա ես չէ, Դուք, խորհեք, ինչպե՞ս կարող էր "Ностальгия по СССР" անվանմամբ գինի արտադրող սեփականատերը դա հանդուրժել: Բա ՆԱՏՕ գնալու պայմաններում այդ գինին ո՞նց կխմվեր: Այնպես որ, պարոն Բաղդասարյանի «աշխարհացունց» այդ հարցազրույցը թե՛ խաղողագործների, թե՛ գինեգործների կողմից ընկալվեց որպես իրենց աշխարհայացքի դեմ ուղղված չափազանց լուրջ քաղաքական դեմարշ: Եվ, թերևս, պետք չէ գինեգործության համար

նման ճակատագրական նշանակություն ունեցող խնդրի հանգուցալուծմանը (այն է՝ ՕԵԿ-ից դուրս գալը) քննադատորեն մոտենալ: Այդ մարդկանց քաղաքական մոտեցումը և նրանց տեսակետը դա է:

– *Ի դեպ, նշենք, որ պարոն Գեղամյանի հիշատակած "Ностальгия по СССР" գիրքի արտադրողը «ՄԱՊ» ընկերության ղեկավար Ալեքսան Պետրոսյանն է, որն արդեն դուրս է եկել «Օրինաց երկրից»: Հարցին, թե արդյոք հնարավո՞ր է, որ «Օրինաց երկրից» պատգամավորների դուրս բերման գործընթացն ավելի լայն թափ ստանա, Արտաշես Գեղամյանը պատասխանեց, թե գումարելիների տեղափոխման հետևանքով արդյունքը նույնն է մնում՝ իրենց խմբակցությունում 10 պատգամավորով ավել կամ պակաս՝ Ազգային ժողովի որակը դրանից չի փոխվելու:*

– Սինևույն է, «Օրինաց երկրում» մնացած պատգամավորները, ինչպես նաև խմբակցությունից դուրս եկած պատգամավորներն այսուհետև էլ շարունակելու են անել այն, ինչ իրենց կթելադրի պարոն Ռոբերտ Քոչարյանը: Այնպես որ, այդ մարդիկ «Օրինաց երկրի» ներսում կլինեն, թե դրսում՝ վերջնական առումով և ոչ մի էական տարբերություն չկա:

– *Իսկ այդ դեպքում կուսակցության ղեկավարի քայլը ո՞րը պետք է լինի, երբ տեսնում է, որ իր խմբակցության պատգամավորները դուրս են գալիս ինչ-որ մեկի ցուցումով:*

– Դուք, ի՞նչ է, ուզում եք, որ ես ռադիոյով հուշեմ Արթուր Բաղդասարյանին իր հետագա գործողություններում գտնի ամենաճիշտ քա՞յլը: Նա չի դիմել ինձ նման խնդրանքով: Երբ դիմի, անտարակույս, ոչ թե ռադիոյի միջոցով, այլ անմիջական զրույցի ժամանակ կհուշեմ: Իսկ մինչ այդ նշեմ, որ պարոն Արթուր Բաղդասարյանի հարգանքը Ռոբերտ Քոչարյանի հանդեպ այն աստիճան մեծ է, որ եթե վերջինս հավեսով Արթուր Բաղդասարյանին ցանկացած բան հուշի, ապա, ես կարծում եմ, Բաղդասարյանը կհարգի նրա առաջարկը: Նրանց միջև, գաղտնիք չէ, որ շատ սերտ, ջերմ հարաբերություններ կան:

– *Իսկ թե արդյոք հնարավո՞ր է, որ այս ամենի արդյունքում «Օրինաց երկրում» մնացածներն ընդդիմություն դառնան, «Ազգային Միաբանության» ղեկավարն ասաց, որ եթե Արթուր Բաղդասարյանն ընտրի քավության ճանապարհը և հրապարակայնորեն խոստովանի, որ նաև իր կուսակցության լռակյաց համաձայնության պայմաններում են տեղի ունեցել 2001-2003 թթ. իրականացված ալան-թալանը, ավելին, քաջատեղյակ լինելով ազգային այդ կողոպուտի մասին, նա 2003 թ. նախագահական ընտրությունների ժամանակ կրծքով պաշտպանել է պարոն Քոչարյանի թեկնածությունը, խորհրդարանական կեղծված ընտրությունների արդյունքով ստանձնել ԱԺ խոսնակի պաշտոնը, ինչի համար էլ նա հիմա խորապես զղջում է, ապա այդ պարագայում գուցեև «Օրինաց երկիրը» ընդդիմադիր դաշտում տեղ գտնի:*

– Եթե նա անցնի այս քավարանով, սեփական մեղքերն ընդունի և եթե ժողովուրդն էլ ների, ապա չեմ բացառում, որ նման իրավիճակում «Ազգային Միաբանությունը» կճանաչի այդ քաղաքական կառույցին որպես իր համար ընդունելի ընդդիմադիր

քաղաքական ուժ:

– Եվ այդ դեպքում հնարավոր համարո՞ւմ եք, որպես արդեն ընդդիմադիր ուժ, «Օրինաց երկրի» և «Ազգային Միաբանության» համագործակցությունը:

– Ժամանակը ցույց կտա: Որքան արագացված լինի այդ քավարանով անցնելը, այդքան հեռանկարները մեծ կլինեն, որ «Օրինաց երկիրը» և «Ազգային Միաբանությունը» կկարողանան միասին պայքար մղել երկրում ժողովրդավարություն հաստատելու համար:

***

–Գաղափարական լուրջ տարաձայնությունների, թե՞ նախապես մշակված սցենարի արդյունք էր կոալիցիայից «Օրինաց երկրի» դուրս գալը: Ի՞նչ զարգացումներ կհետևեն այս քայլին՝ հարցերով դիմեցինք «Ազգային Միաբանություն կուսակցության» և ԱԺ համանուն խմբակցության ղեկավար Արտաշես Գեղամյանին:

– Ի՞նչ, Ձեզ թվում է, որ կարող է զարգացումներն այնպես ընթանան, երբ այս կամ այն օրինագծի ընդունման ժամանակ «Օրինաց երկիրը» դեմ լինի այն հրահանգներին, որ տրվեն նախագահական նստավայրի՞ց: Իհարկե, ոչ: Պարզապես իշխանական դաշտում հերթական անգամ խնդիր է առաջացել ապացուցելու, թե ո՞վ է իրականում «միակ տղամարդը»: Եվ «Օրինաց երկրի» ղեկավարի անգամ իսկ զգուշավոր նկրտումներն անմիջապես կանխվեցին, հեղինակն էլ՝ պատժվեց: Քաղաքական դաշտում մեծ հաշվով ոչ մի բան չի փոխվի, խնդիրները, որոնք կանգնած են Հայաստանի Հանրապետության առջև, դարձյալ կմնան անլուծելի: Այն է՝ կոռուպցիոներներն ավելի լավ կզգան, քանի որ իրենց աչքի առաջ անգամ իսկ ընդդիմադիր, թեկուզև պոպուլիստական փոքր դրսևորումը ճնշվեց տեղում, թալանչիներն ավելի արտոնյալ կզգան, որովհետև իրենք արդեն իսկ կհասկանան, որ 2001-2003 թթ. ալան-թալանը բարեհաջող մարսելու են, Հանրապետական կուսակցությունը և Դաշնակցությունը իրենց հերթին կզգուշանան՝ տեսնելով «Օրինաց երկրի» դառը փորձը: Չէ՞ որ, ըստ էության, անգամ իսկ թվացյալ այլախոհությունը խստագույնս պատժվեց: Այս ամենն այնքան տխուր չէր լինի, եթե չասենք՝ ողբերգական, եթե զավեշտական չլիներ: Ողբերգականն այս պատմության մեջ այն է, որ հերթական անգամ պարոններ Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը Հայաստանի հասարակայնությանը հասկացրին, որ իրենք են ծնում իշխանություն, իրենք էլ այդ նույն իշխանության մեջ ծնում են «ընդդիմություն» և եթե հանկարծ այդ «ընդդիմությունը» իրենց սահմանած չափից անգամ իսկ կես քայլ էլ շեղվի, կպատժեն, ականջներն էլ՝ կոլորեն: Զավեշտն էլ այն է, որ իշխանական կոալիցիայից «Օրինաց երկրի» դուրս գալը հանրապետության քաղաքական կյանքի վրա ամենևին և ոչ մի ազդեցություն ունենալ չի կարող: Ինչպես չի կարող ազդեցություն ունենալ նաև այն, որ եթե հանկարծ վաղը ՀՀԿ-ն դուրս գա կամ Դաշնակցությունը: Խնդիրն այն է, որ նրանք չունեն ամենակարևորը, ինչն էլ կարող է որոշիչ դերակատարում ունենալ Հայաստանի ներքաղաքական զարգացումների վրա. նրանք չունեն ժողովրդի աջակցությունը:

– Պարոն Գեղամյան, նաև մեկնաբանություններ կան, որ «Օրինաց երկիրը», Արթուր

Բաղդասարյանը կարող են հայտնվել ընդդիմադիր դաշտում: Արդյոք մտավախություն չունե՞ք այս առումով:

– Վերստին նշեմ: Առաջին, եթե Արթուր Բաղդասարյանը քաղաքական հեռատեսություն դրսևորի, խոստովանի, որ ինքը գիտենալով, որ 2001-2003 թթ. սեփականաշնորհման քողի ներքո տեղի է ունեցել ազգային հարստության կողոպուտ, երկրորդ, եթե հայտարարի, որ այդ ալան-թալանը հնարավոր է եղել պարոն Քոչարյանի ստորագրությամբ վավերացված կառավարության որոշումների արդյունքում (մի մարդու, որը նույն՝ Արթուր Բաղդասարյանի մեծ բարերարն է), երրորդ, եթե հետն էլ չմոռանա նշել, որ այդ կողոպուտը չէր կարող իրականացվել առանց Սերժ Սարգսյանի բարձր և անմիջական հովանավորության, ապա միայն այս ինքնախոստովանությունների դեպքում է, որ «Ազգային Միաբանությունը» պատրաստակամ կլինի քաջալերելու քավության ճանապարհ ընտրելու Ա.Բաղդասարյանի վճռականությունը: Այս պարագայում, կասկածից վեր է, որ մտահոգություն պետք է ունենա միայն ու միայն իշխանությունը:

– Պարոն Գեղամյան, նաև այսպիսի մի հարց: Ձեր կարծիքով արդյոք սա պարզագույն պատի՞ժ է Արթուր Բաղդասարյանին, թե, այնուամենայնիվ, լավ մտածված կոմբինացիա առաջիկա ընտրություններում ընդդիմության ձայների վրա ներազդելու համար:

– Սա բացարձակապես և ոչ մի կոմբինացիա լինել չի կարող, պատիժ լինել նույնպես չի կարող: Կրկնեմ, եթե պարոններ Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը փոքր-ինչ հորդորեն Արթուր Բաղդասարյանին, ապա, համոզված եղեք, որ Արթուր Բաղդասարյանը տղերքի խաթրից դուրս չի գա: Որովհետև, համաձայն լրատվամիջոցների չհերքված պնդումների, այդ կուսակցությունը ստեղծվել է Սերժ Սարգսյանի անմիջական մասնակցության պարագայում: Եվ եթե «Օրինաց երկիր» կուսակցության մեր գործընկերները պատվախնդիր մարդիկ են, ապա, ես համոզված եմ, որ իրենք, անտարակույս, անպայման կդիմեն դատարան, որ այդ լրջագույն պնդում-մեղադրանքը հանեն իրենց վրայից:

«Իրավունք», 16.V.2006:

Сотрудничество между Россией и Арменией разворачивается вокруг энергетики последней

Арташес Гегамян, депутат Национального Собрания Армении, член парламентской делегации ПАСЕ, руководитель фракции «Национальное Единение» Национального Собрания Армении, рассказывает о перспективах взаимоотношений России и Армении.

— *Каковы на сегодняшний день основные направления сотрудничества РФ и Армении?*

— На сегодняшний день основное сотрудничество между Россией и Арменией разворачивается вокруг энергетики Армении. Что касается других сфер, надо особо отметить сотрудничество в области обеспечения безопасности Армении. Армения и Россия являются членами организации Договора о коллективной безопасности, и в сегодняшних условиях это имеет исключительно важную роль для безопасного существования армянского независимого государства.

Ситуация с предприятиями, переданными Российской Федерации в рамках межправительственного соглашения «Имущество вместо долга», к сожалению, оставляет желать лучшего. Факт простоя указанных предприятий и связанных с этим сугубо экономических издержек, может сыграть отнюдь не положительную роль в перспективе армяно-российского и экономического, и военно-политического сотрудничества.

Хотелось бы сказать несколько слов о работе посольства Российской Федерации в Армении. Складывается впечатление, что после выступления Владимира Владимировича Путина на 1-м учредительном съезде Всемирного армянского конгресса, когда он очень тепло упомянул о вековых армяно-российских братских отношениях, имеющих корни в известном декрете Петра Первого, где он поручал особой заботой окружить армян, посольство РФ в Армении однобоко поняло этот призыв президента России, и окружило вниманием и заботой армянское руководство. Причем это делается настолько непрофессионально и неуклюже, что противники армяно-

российского стратегического партнерства незамедлительно воспользовались этим обстоятельством, и в армянских газетах появились сообщения, согласно которым посол Российской Федерации получает жалование у министра обороны Сержа Саркисяна. К сожалению, эти публикации были не в одной газете, а в нескольких, и, более того, российское посольство никак не отреагировало на эти публикации. Оно промолчало ровно так же, как промолчала Лига Наций, когда обсуждались животрепещущие вопросы, касающиеся судьбы Армении. Все это отрицательно сказывается на армяно-российские отношения. В подобных случаях, как минимум, нужна была нота протеста и привлечение к судебной ответственности в рамках Конституции Армении клеветников, если они были таковыми. Но увы. Теперь люди эти статьи трактуют каждый по-своему.

Что касается других аспектов деятельности российского посольства, то да, какие-то мероприятия проводятся. Организовываются концерты, проходят встречи с людьми, подконтрольными власти, а это еще более отдаляет широкие слои населения от российского посольства. А Армения привыкла подходить к оценке работы посла так, как Армения оценивает посла Российской империи Вазира-Мухтара Грибоедова, который во имя армяно-российского сближения и во имя в первую очередь Российской империи отдал свою жизнь. Так что исторические критерии говорят отнюдь не в пользу сегодняшнего российского посольства. Более того, надо было умудриться, чтобы, имея такие лестные для самолюбия армян оценки, высказанные президентом Путиным, довести население до того, что после президентских выборов в Армении впервые за всю новейшую историю прошел антироссийский митинг у стен российского посольства. Людей не надо было и организовывать, многих недовольных итогами выборов поразило заявление наблюдателей от СНГ, с подачи российского посольства, что это были идеальные выборы с незначительными нарушениями.

К сожалению, при молчаливом согласии российской стороны известные бизнесмены армянского происхождения, живущие в России, попросту были ограблены власть предержащими в Армении. В качестве примера можно говорить об объединении фирм «Левон-Маркос» или об инвестициях в Армению руководителя компании «Прометей», осуществившего многомиллионные инвестиции в свое предприятие на территории Армении, но, в конечном итоге, вынужденного свернуть свой бизнес.

— *Что Вы могли бы сказать по культурному сотрудничеству?*

— У меня складывается впечатление, что, к сожалению, сейчас это

стало лишь средством приобщения к российской жизни армянской элиты. По сравнению с предшествующими периодами ухудшились возможности для изучения русского языка. Работа в этом направлении часто сводится к показным мероприятиям. По самым скромным подсчетам до 70% выпускников школ абсолютно не владеют русским языком.

— *Какие наиболее проблемные зоны в рамках взаимоотношений между Россией и Арменией Вы могли бы отметить? Чем это чревато, к чему может привести?*

— В Армении издается три русскоязычные газеты. Одну вообще не читают — это «Республика Армения», а две более или менее имеют своих читателей — это «Новое Время» и «Голос Армении». Проблема лишь в том, что они провластные. Редакторские коллективы их вполне профессиональны, но цензура видна в каждой статье. Поэтому интерес к русскоязычной прессе постепенно угасает. Но «свято место пусто не бывает», и эта ниша заполняется оппозиционной печатью, то есть печатью прежних властей, а их упрекнуть в пророссийских настроениях невозможно. Это антироссийские издания. Более того, многие издания стараются строить свои отношения на известных расхождениях и подходах к определенным проблемам России и Соединенных Штатов Америки.

— *Какова расстановка политических сил в Армении, какие из политических сил, политических лидеров заинтересованы в сотрудничестве с Россией, какие нет?*

— Во внешнеторговом обороте на долю России приходится порядка 185 млн. долларов, это для Армении внушительная цифра. Но важен не только импорт из России в Армению, важны слагаемые этого импорта — это природный газ, это нефть. То есть не будь поставок из России, рухнет энергетика, а вследствие рухнет экономика Армении, и перестанет существовать сама Армения. Этим все сказано. А любой отдающий себе отчет политик должен в первую очередь руководствоваться интересами своего народа, независимо от своих личных симпатий и антипатий к соседним государствам.

Для Армении также важны армяно-европейские отношения. Я не случайно говорю: армяно-европейские, потому что 37% товарооборота приходится на государства ЕС.

Важно подчеркнуть, что после каждого приезда Владимира Путина в Армению, вся президентская пропаганда выставляет приезд как своего рода индульгенцию на проведение дальнейших беззаконий в республике, на дальнейшее преследование инакомыслящих, что, естественно,

подхватывается всеми теми, кто отнюдь не является поборником армяно-российского сближения. Это первое. Второе: было очень и очень желательно, чтобы от имени России интервью давали люди, которые пользуются популярностью в Армении. Потому что буквально сегодня в прессе появилась публикация, что в рамках готовящегося визита группа журналистов была в России по инициативе РИА «Новости» и они встретились с сенатором от Калмыкии Левоном Чахмахчяном, который поучает армянский народ, что, дескать, замены Роберту Кочаряну в Армении нет. И это воспринимается как мнение российского руководства. И такого рода выступления перед представителями СМИ имеют только негативные последствия.

Беседовала
Жанна Лабутина

“Кремль•org”, Политическая экспертная сеть, 24. III. 2005.

…Այլապես սերունդները մեզ չեն ների…

Սիրելի ընթերցող, ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ս/թ հունիսի 1-ին Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի բանավոր ելույթի ամբողջական տեքստը:

Հարգելի գործընկերներ, Ազգային ժողովի նախորդ նախագահի և տեղակալների թեկնածությունների քննարկմանը և նրանց ընտրությանը, ինչպես հիշում եք, «Ազգային Միաբանությունը» չի մասնակցել: Կարծիք կա այս անգամ նույնպես չմասնակցել, որովհետև նախօրոք կանխորոշված հարցերի ու դրանց պարտադրված լուծումների վավերացմանը, երբ մասնակցում ես, դրանով իսկ ասես թե լեգիտիմացնում ես դրանք: Սակայն այն տեղեկատվությունը, որին տիրապետում եմ ես և ոչ միայն ես, այլ, համոզված եմ, նաև Ազգային ժողովում ներկայացված քաղաքական կուսակցությունները, ստիպում և պարտադրում է այդ ամենի մասին Ձեզ հետ մտքեր փոխանակել: Եվ, այսպես, ս/թ ապրիլի 30-ից մայիսի 8-ը ԱՄՆ-ի Միջազգային հանրապետական ինստիտուտը հասարակական կարծիքի ուսումնասիրման աշխարհահռչակ «Գելլապ» կազմակերպության (ըստ որում, աշխարհում գործում է համընդհանուր վստահություն վայելող հասարակական կարծիքի ուսումնասիրման նմանատիպ երկու կենտրոն՝ «Գելլապի» և «Խարիսի»), ինչպես նաև «Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի», «Բալթիկ սերվիս» ՍՊԸ -ի հետ USAID-ի պատվերով և ֆինանսավորմամբ լայնածավալ ուսումնասիրություններ էին կատարել Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Այս կազմակերպությունների հետազոտությունների հիմքում դրված են այնպիսի մոտեցումներ, որոնց արդյունքները կասկած չեն հարուցում, և հնարավոր անճշտությունները չեն կարող գերազանցել 3%-ը՝ ավել կամ պակաս:

Եվ երբ տեղյակ ես այդ ուսումնասիրությունների արդյունքներին ու դրանից հետո ունկնդրում ես Ազգային ժողովի այս ամբիոնից հնչած ելույթները, ակամայից գալիս ես շատ տխուր եզրահանգման: Պարզապես ստացվում է այնպես, որ մենք չենք գիտակցում վերահաս այն վտանգների լրջությունը և սրությունը, որոնք ծառացած են հայոց պետականության, ժողովրդի և քաղաքական ուժերի առջև՝ լինի դա իշխանություն, թե ընդդիմություն: Համաձայն այդ ուսումնասիրությունների, ՀՀ բոլոր մարզերում 1200 հարցվածների 55%-ը համարում է, որ Հայաստանի Հանրապետությունն ընթանում է սխալ ուղիով: Այսինքն՝ մարդիկ գիտակցում են, որ երկիրը շարժվում է սխալ ճանապարհով: Ասենք, որ դա էլ հնարավոր դարձավ մարդկանց լռակյաց հանդուրժողականության պայմաններում, ինչը պայմանավորված է նաև օտարության մեջ գտնվող մեր

հայրենակիցների խոշորածավալ դրամական օգնությամբ՝ ուղղված հայրենիքում մնացած իրենց հարազատներին: Սրա հետ մեկտեղ այն հանգամանքը, որ հայությունը հարկադրված է մնալ երկրում և հաշտվել իր թշվառ գոյության հետ, փաստում է, որ հայ մարդը, կարծես թե, իր մեջ ուժ չի գտնում և վճռականություն չունի Հանրապետությունում վիճակը շտկելու համար: Դա է վկայում նաև այն, որ հարցվածների 74%-ը գտնում է, որ անցած մեկ տարվա ընթացքում, ավա՜ղ, երկրի վիճակը մնացել է կամ նույնը, կամ էլ էլ ավելի է վատթարացել: Վտանգավոր իրավիճակ է ստեղծվել երկրում բարոյաքաղաքական առումով: Մարդկանց 50%-ը չի վստահում և ոչ մի կուսակցության, 12 %-ն ընդհանրապես անտարբեր է կուսակցությունների հանդեպ ու պարզապես կարծիք չունի դրանց մասին: Հարցման մասնակիցների 70%-ի համոզմամբ Հայաստանում մեծ խնդիր է քաղաքական լիդերների և իշխանավորների կոռումպացված լինելու հանգամանքը: Իշխանությունները, իրենք իսկ մինչև ականջները թաղված լինելով կոռուպցիայի մեջ, ջանք ու եռանդ չեն խնայում գեբելսյան քարոզչությանը ներհատուկ միջոցներով ազգաբնակչության մեջ ձևավորել թյուր կարծիք, որ Հայաստանում բոլորն են կոռումպացված: Հեռու գնացող ճիզվիտական քաղաքականություն, որն ուղղված է ամեն գնով պառակտելու մարդկանց, խոչընդոտել ժողովրդի միաբանությանը քաղաքական կուսակցությունների շուրջ՝ չթույլատրելու հասարակության ամենալայն շրջաններում հավաքական կամքի ձևավորումը: Իշխանավորները քաջ գիտակցում են, որ միայն պառակտված հասարակությունը այսչափ երկար կհանդուրժեր իրենց աղաղակող անօրինականություններն ու հանցագործությունները:

Մտահոգիչ է իրավիճակը հասարակություն-իշխանություն հարաբերությունների ոլորտում: Այսպես, հարցվածների 67%-ը բացասական գնահատական է տվել բոլորիս. մեր ժողովուրդը չի վստահում պառլամենտին՝ Ազգային ժողովին, 64%-ը չի վստահում Հայաստանի Հանրապետության կառավարությանը, հարցվածների 60%-ն էլ չի վստահում նախագահական կառույցներին: Սեփական հայրենիքում մարդիկ իրենց անպաշտպան են զգում. արդյունքում հարցվածների 59%-ը չի վստահում ոստիկանությանը, 53%-ը՝ կրթական համակարգին: Այսինքն՝ մարդիկ գիտեն, որ իրենց երեխաները գնալով դպրոց կամ համալսարան՝ չեն ստանալու այն, ինչ անհրաժեշտ ու պահանջված է լինելու թե՛ մատաղ սերնդի, թե՛ երկրի և թե նրա ապագայի համար:

Սրանք երկրում ստեղծված ողբերգական իրավիճակը բնութագրող թվեր են, և գաղտնիք չեն: Ու եթե ես և Դուք դրանց տիրապետում ենք, համոզված եղեք, որ այդ բաց ուսումնասիրությունների արդյունքներին ծանոթ են նաև այն երկրները, որոնք Հայաստանին տարիներ շարունակ ցույց են տվել հումանիտար, նյութական և բարոյական աջակցություն: Ավելին, փորձել են առարկայորեն օգնել ժողովրդավարության խորացման գործում: Խոսքս, հատկապես, այն երկրների մասին է, որոնք Հայաստանում հավատարմագրված դեսպանություններ ունեն: Կասկածից վեր է և այն, որ ուսումնասիրությունների արդյունքներին տիրապետում են նաև այն երկրները, ում հետ մենք հակամարտության մեջ ենք և չլուծված խնդիրներ ունենք:

Մի կարևոր փաստի մասին ևս խոսեմ: Այսպես, հարցվածների 61%-ը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատշաճ աշխատանք չի կատարում, որ առաջիկա ԱԺ և նախագահական ընտրություններն անցնեն ազատ ու արդար: Թերևս, դա է պատճառը, որ մարդկանց 74% -ն էլ համարում է, որ գալիք ընտրությունների արդյունքները նույնպես կեղծվելու են: Հուսահատությունը, անվստահությունը վաղվա օրվա նկատմամբ այն աստիճանի է արմատացած մարդկանց գիտակցության մեջ, որ նրանց 79%-ը կարծում է, որ դեռ շատ ժամանակ կպահանջվի երկրում ստեղծված ծանր վիճակը բարելավելու համար: Եվ ցավն այն է, որ Հայաստանում համընդհանուր խոր ճգնաժամը բնութագրող այս թվերը իրականում էլ ավելի ծանր կլինեին՝ հաշվի առնելով այն, որ, համաձայն վերոհիշյալ ուսումնասիրությունների, ազգաբնակչության 79%-ը վախենում է արտահայտել իր կարծիքը և իր քաղաքական տեսակետները: Ահա այսպիսի հասարակություն է ստեղծվել պարոն Քոչարյանի և նրան սատարող քաղաքական ուժերի իշխանավարության օրոք: Ահա ունենք հասարակություն, որը խեղդվում է անօրինականությունների ճիրաններում, ապրում ենք մի երկրում, ուր չեն գործում օրենքն ու արդարադատությունը, ուր անգամ իսկ դատարանների կողմից ընդունված որոշումները երբեք ու երբեք չեն կատարվում: Ասածս մերկապարանոց չլինելու համար, բերեմ ընդամենը մեկ օրինակ: Անցած երեք տարիների ընթացքում ՀՀ դատարանների կողմից գանձման ենթակա չվերականգնված մնացորդ գումարը կազմել է 138 միլիարդ դրամ: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն, սոցիալական ապահովագրության հիմնադրամը այդպես էլ չստացան այդ գումարները:

Երբ համադրում ես բերված թվերն ու փաստերը, գալիս ես տխուր հետևության. մենք ունենք ծայրաստիճան հիվանդ հասարակություն և թուլացած պետականություն: Մենք ունենք ժողովուրդ, որը ոչ մեկին չի վստահում՝ լինի դա պատգամավոր, թե նախարար, նախագահ, թե ոստիկան, դատավոր, թե ուսուցիչ: Այն, որ մեզ՝ պատգամավորներիս չի վստահում, դա դեռ չարյաց փոքրագույնն է: Դժբախտություն է, որ ժողովուրդը իր իսկ ապագային չի վստահում, հետն էլ իր ապագան մեր երկրի հետ չէ, որ կապում է: Ունենալով նման իրավիճակում հայտնված հասարակություն, ակամայից հարց ես տալիս քեզ՝ մեր ժողովուրդն ինչպե՞ս պետք է լուծի հայրենիքի առաջ ծառացած առկա բարդ ու վտանգավոր խնդիրները: Պառակտված, հուսահատված, հուսալքված հասարակությանը մենք ի՞նչ ենք հրամցնում, առաջարկում. պարտադրված սկանդալներ, պարտադրված բանսարկություններ, որոնք ղեկավարվում են մի կենտրոնից և տեղավորվում են «բաժանիր, որ տիրես» կարգախոսի մեջ: Ահա սա է վիճակը:

Եվ, թերևս, կարծում եմ, որ այսօր ԱԺ նախագահի թեկնածուի հատկանիշները քննարկելիս ելույթ ունեցողներին, հատկապես տղամարդկանց պետք չէ իրար սեր բացատրել: Հարկ է խնդիրների մասին պարզորոշ ասել և սեփական պատասխանատվությունը դրանց կատարման մեջ տեսնել: Տագնապ հարուցող վերոհիշյալ իրողությունները ես մեծապես վերագրում եմ կոալիցիայի վատ աշխատանքին, սակայն դրա հետ մեկտեղ դա վերագրում եմ նաև մեզ, կոնկրետ «Ազգային Միաբանությանը»:

Խոստովանենք, որ մենք էլ մեր հերթին չենք կարողացել անել այն ամենը, որ կանխեինք ժողովրդավարության ուղուց երկրի տագնապահարույց հետընթացը:

Անդրադառնալով պարոն Տիգրան Թորոսյանի խոսքում բերված հարցադրումներին, ասեմ, որ ես նույնպես կարևորում եմ դրանք: Սակայն այդ խնդիրներն ածանցյալ են այն մայր հիմնահարցերից, որոնք արծարծված են, կրկնում եմ, ԱՄՆ -ի Միջազգային հանրապետական ինստիտուտի, «Գելլապի» կազմակերպության, «Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի», ինչպես նաև «Բալթիկ սերվիս» ՍՊԸ-ի ուսումնասիրություններում: Ահա այս հարցերի մասին է, որ պետք է խորհենք: Եվ ամենակարևորը, կարծում եմ, մենք պետք է ինքներս խոստովանենք, որ Ազգային ժողովի այս կազմը, ավա՞ղ, չի կարող լուծել երկրի առջև ծառացած այս հիմնարար խնդիրները: Մեր կողմից կլիներ ազնիվ, կլիներ, իրոք, մտահոգ քաղաքական ուժի դրսևորում, եթե մենք բոլորս այսօր հայցեինք ժողովրդի ներողամտությունը և վայր դնելով մեր պատգամավորական լիազորությունները հայտարարեինք Ազգային ժողովի ինքնալուծարման մասին: Կրկնում եմ, մեր երկիրը հայտնվել է կործանարար զարգացումների ծիրում: Գիտակցել դա և չառնել դրա առաջը՝ նշանակում է ինքներս մեզ դատապարտենք սերունդների արհամարհանքին և մոռացությանը:

«Իրավունք», 9.–15.VI.2006:

«Ազգային Միաբանություն կուսակցությունը» դատապարտում է...

Սիրելի ընթերցող, երբ խորհրդարանական ընդդիմությունը բոյկոտում էր Ազգային ժողովի աշխատանքները, իշխանական քարոզչամեքենան ջանք ու եռանդ չէր խնայում հասկացնելու հանրությանը, որ ժողովրդի քվեն ստացած ընդդիմադիր պատգամավորները, չմասնակցելով ԱԺ նիստերին, խույս են տալիս աջակցելու պրն Քոչարյանին, իբր, նրա կողմից սկսած կոռուպցիայի դեմ անողոք պայքարում: ԱԺ «Ազգային Միաբանություն» խմբակցության պատգամավորները օրերս իր աշխատանքներն ավարտած ԱԺ վերջին նստաշրջանի բոլոր նիստերում հանդես են եկել փաստարկված, առարկայական քննադատությամբ՝ մատնանշելով Հայաստանի Հանրապետությունը կործանման տանող կոռուպցիայի հետևում կանգնած մարդկանց, ինչպես նաև պաշտոնատար այն անձանց, ում անմիջական հովանավորության ներքո երկրում իրականացվում է համատարած ալան-թալան: Մենք, անտարակույս, հասկանում ենք, որ ճուկը գլխից է փտում, և երկիրը բնականոն զարգացման հուն բերելու եզակի ճանապարհը իշխանափոխությունն է:

Ստորև Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Ազգային ժողովի վերջին նստաշրջանում «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի ելույթները:

Նրանց համար Կոշի գաղութ անպայման «պերեդաչի» կտանեմ

(Ելույթ Հանրային հեռուստատեսությամբ՝ «Խորհրդարանական շաբաթ» հաղորդաշարով.11 հունիսի 2006 թ.)

Սիրելի ժողովուրդ, երբ պարոն Քոչարյանի կողմից հովանավորվող թերթերը սկսում են ինձ կրկին կապել Սերժ Սարգսյանի հետ, ապա ես հասկանում եմ, որ դարձյալ նրանց արանքով կատու է անցել: Այդպես էլ պետք է լիներ: Բուխարեստում Իլհամ Ալիևի հետ կայացած բանակցություններից պարոն Քոչարյանը եկավ գլուխը կախ, Սերժ Սարգսյանն էլ Թուրինի ձմեռային օլիմպիադայից վերադառնալուն պես օպերայի հրապարակում պար բռնեց: Ի՞նչ էր մնում նրանց անել, եթե ոչ Գեղամյանի հետ հերթական բախում հրահրել: Սինչդեռ նրանց գործողությունների հիմնական պատճառն այլ է: Խնդիր է դրված մարդկանց և իմ ուշադրությունը շեղել Հայաստանում իրականացվող մեծածավալ ալան-թալանից: Այսպես, միայն 2005 թ. մեր երկրում դոլարի 16,3% արհեստական

արժեզրկման արդյունքում, ըստ էության, կողոպուտի ենթարկվեց ժողովուրդը: Դրսից ստացվող առնվազն 1 մլրդ 200 մլն դոլար օգնությունը դոլարի արհեստական արժեզրկման հետևանքով հանգեցրեց նրան, որ մարդիկ կորցրին առնվազն 192 մլն դոլարի համարժեք գումար: Ավելին, իշխանությունների հովանու ներքո գործող օլիգարխները, որոնք մասնագիտացած են և մենաշնորհային դիրքեր ունեն Հայաստան կենսական կարևորության ապրանքների ներմուծման գործում, այդ նույն գործոնի շնորհիվ 180 մլն դոլարի չափով գերշահույթ ստացան: Այդքան էլ շահույթ ունեցան, երբ էժանացած գներով այստեղ դրամով դոլար էին գնում: Արդյունքում, ասենք, թալանել են Ձեզ, ժողովուրդ ջան, տարեկան կտրվածքով 460 մլն դոլարի չափով՝ նվազագույնն եմ ասում: Այս տարի նույն թալանը կրկնվում է: Եթե անցյալ տարի 16,3%-ով էին արժեզրկել դոլարը, ապա 2006 թ. հունվար-ապրիլի ընթացքում դոլարն արհեստականորեն արժեզրկել են շուրջ 8%-ով: Արդեն իսկ նույն մեքենայնությունների արդյունքում նրանք գերշահույթ են ստացել շուրջ 160 մլն դոլարի չափով, փաստորեն, կողոպտելով ձեզ, բոլորիս: Տղերքը ընտրությունների են պատրաստվում: Տո, կես տարում 160 մլն թալան անողները պարզ չի, որ կանանց մարտի 8-ն էլ հազարավոր ծաղիկներով կշնորհավորեն, վետերաններին տարին գեթ մեկ անգամ կուշտ կկերակրեն՝ ապուր կտան, նվերներ էլ կհանձնեն: Էլ չեմ ասում, որ օպերայի բակում էլ զուռնայի տրնգիի տակ պար կբռնեն: Բայց միևնույն է, սիրելի ժողովուրդ, հատուցման պահը մոտենում է: Եվ, համոզված եղեք, իրենք էլ են գիտակցում, որ մոտալուտ ժամանակներում դատվելու են: Ահա դրա համար է, որ իմ և ձեր ուշադրությունը շեղելու նպատակով ամեն կերպ ինձ փորձում են կապել իրենց հետ: Փորձում են անվանս շուրջ թերահավատության մթնոլորտ ստեղծել, որ այս ամենի մասին, երբ խոսեմ, դուք կասկածեք: Բայց յուրաքանչյուրդ ձեր օջախում եք այս թալանի հետևանքները տեսնում, յուրաքանչյուրդ ձեր ամենօրյա կյանքում եք դա զգում: Այսուհետ ես կասեն, թե Սերժի յուզգարն եմ, Ռոբերտի հետ էլ գիշեր-ցերեկ եմ անցկացնում, նպատակը մեկն է լինելու. թերահավատորեն մոտենաք ինձ և իմ խոսքին:

Սիրելի ժողովուրդ, շատ շուտով իշխանափոխություն կլինի, Ռ.Քոչարյանն ու Ս.Սարգսյանը՝ երկուսն էլ օրենքի ամենայն խստությամբ պատասխանատվության կենթարկվեն: Ես էլ որպես իրենց «մտերիմ»՝ հրապարակավ խոստանում եմ, որ նրանց համար Կոշի գաղութ անպայման «պերեդաչի» կտանեմ:

Թալան, որն իրականացվում է Ռ. Քոչարյանի - Ս. Սարգսյանի թողտվությամբ

Դիմում եմ Ազգային ժողովի մեծամասնությանը, որը, ինչպես այսօր պարզվեց, այնուամենայնիվ, գոյություն ունի, դիմում եմ՝ խնդրելով, որ նստաշրջանի օրակարգում անպայման ներառեն «2005-2006-ին դրամի չհիմնավորված արժևորման հետևանքով տեղական արտադրողներին և բնակչությանը պատճառված վնասները» ուսումնասիրող

ԱԺ ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին հարցը: Պարզեցնեմ միտքս. անցյալ տարի Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման շեշտակի աճի պայմաններում, որ հասել էր 1 մլրդ 768 մլն դոլարի, իսկ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը հասել էր 817 մլն դոլարի, արհեստականորեն դոլարն արժեզրկել էին 16,3%-ով: Մինչդեռ ֆինանսական շուկայում, խոսքս համաշխարհային ֆինանսական շուկայի մասին է, դոլարի փոխարժեքի նման շեշտակի արժեզրկում ամենևին էլ չէր արձանագրվել: ՀՀ իշխանությունների կողմից իրականացված ֆինանսական այս մեքենայությունների արդյունքում գերշահույթներ ստացան ապրանք ներմուծողները, այն է՝ Քոչարյան-Սերժ Սարգսյանական կլանը, 192 միլիոն դոլարի չափով: Էժանացած գներով ճեռք բերելով ներմուծման համար անհրաժեշտ քանակությամբ դոլարներ՝ սրանից էլ առնվազն 180 մլն դոլարի չափով այստեղից էլ գերշահույթներ ստացան: Դրա հետ մեկտեղ դրամի արհեստական արժևորումը անասելի վնաս էր հասցրել տեղական արտադրողին: Եվ այդ տենդեցը շարունակվում է այս տարի ևս: Ներմուծման աճի տեմպերն այս տարվա անցած 4 ամիսների ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել են 113,8%, մինչդեռ արտահանման աճի տեմպերը եղել են բացասական և կազմել են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ընդամենը 92,2%-ը: Արժեզրկված գներով դոլարի ճեռքբերման և դրանով ապրանքների գնման ու Հայաստան ներմուծման արդյունքում այդ գործում մենաշնորհային դիրք ունեցող օլիգարխները ս/թ հինգ ամիսների ընթացքում ստացել են առնվազն 120 մլն դոլարի չափով գերշահույթներ, որոնք, անտարակույս, չեն հարկվել: Հաշվի առնելով նաև այն, որ մեր մարդիկ իրենց հարազատ-բարեկամներից տարեկան կտրվածքով առնվազն 1 մլրդ 200 մլն դոլարի օգնություն են ստանում, իսկ դոլարն էլ Հայաստանում արհեստականորեն արժեզրկում են, ապա այս պարագայում էլ նույն ժամանակաշրջանում նրանք կողոպտվել են շուրջ 30 մլն դոլարի չափով:

Դիմում եմ ԱԺ մեծամասնությանը՝ խնդրելով. հաշվի առնելով, որ ազգաբնակչության զգալի տոկոսը իր գոյությունը պահպանում է շնորհիվ դրսից ստացված դոլարային տրանսֆերտների, որոնք էլ դոլարի արհեստական արժեզրկման արդյունքում մեծ կորուստներ են կրում, Ազգային ժողովում այս հարցը դարձնել հատուկ քննարկման առարկա: Այլապես մենք բոլորս գիտակցելով, որ ՀՀ-ի ֆինանսական շուկայում իրականացվում են հանցավոր մեքենայություններ, որի հետևանքով ազգաբնակչությունը և պետական բյուջեն կրում են հարյուրավոր միլիոն դոլարների հասնող վնասներ և չձեռնարկելով համարժեք միջոցներ դա կանխելու համար, դառնում ենք այդ թալանի մեղսակիցը: Թալան, որն իրականացվում է Ռ.Քոչարյան- Ս.Սարգսյանի թողտվությամբ և նրանց կամակատարների միջոցով:

12.06.2006 թ.

Դիմում եմ ՀՀ գլխավոր դատախազին...

Վերահաստատելով իմ նախորդ ելույթում բերված բոլոր թվերը և փաստերը՝ «Ազգային Միաբանություն» խմբակցության անունից դիմում եմ ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին: Ազգային ժողովում իմ ունեցած ելույթում բերված փաստերի հիման վրա խնդրում եմ հարուցել քրեական գործ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների հանցավոր թողտվության, եթե չասենք՝ հովանավորության ներքո իրականացված հարյուրավոր միլիոն դոլարների հասնող կողոպուտի փաստի հատկանիշներով: Հակառակ պարագայում թող գլխավոր դատախազությունը քրեական գործ հարուցի անձիս դեմ՝ պետական բարձրաստիճան պաշտոնյաներին զրպարտելու համար: Առավել ևս, անցած մեկ ամսվա ընթացքում իշխանական լրատվամիջոցները ջանք ու եռանդ չեն խնայել անվանս շուրջ նման կարծիք ձևավորելու համար: Այս տեսանկյունից էլ պատահական չեմ համարում այն, որ հունիսի 11-ին Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակման ենթակա «Խորհրդարանական ժամ»-ը, մասնավորապես, ԱԺ խումբ-խմբակցություններին հատկացվելիք երեքրոպեանոց հայտարարությունների հատվածը, ուր ես հնչեցրել էի խնդրո առարկա բերածս այդ նույն թվերը, միտումնավոր կերպով ոտնահարելով ԱԺ կանոնակարգի պահանջները, ցուցադրվեց գիշերվա ժամը 2-ին: Ի՞նչ, կարծում եք, դա պատահականություն էր: Իհարկե, ոչ: Ուշ գիշերով ցուցադրման հանգամանքը համոզում է, որ այդ հայտարարության մեջ բացահայտվել է կատարված հանցագործությունը: Եվ, իմ կարծիքով, ժամանակն է, որ Ազգային ժողովը, հատկապես նրա նորընտիր ղեկավարությունն այն կամայականությունը, որը դրսևորվում է «Խորհրդարանական ժամ» հաղորդման հեռարձակման նկատմամբ, ընդունի նաև որպես անձնական վիրավորանք: Այլապես, «Խորհրդարանական ժամ»-ը ժողովրդի կողմից այսուհետև կընկալվի որպես հաղորդում անքննությամբ տառապողների համար, որ հայտնի է ռադիոլսողներին՝ "Для тех, кто не спит" խորագրով:

12.06.2006 թ.

Մարդկանց խաբել այլևս ձեզ մոտ չի ստացվի

Հարգելի գործընկերներ, երբ Քոչարյանի հովանու ներքո գտնվող թերթերը ինձ կապում են Սերժ Սարգսյանի հետ, ասես թե հուշում են, որ երկուսի արանքով էլի կատու է անցել: Պատճառը մեկն է. ուզում են կրկին բախում առաջացնել մեր միջև: Գաղտնիք չէ, որ նրանք՝ Ռ.Քոչարյան-Ս.Սարգսյան զույգը, ինչքան էլ փորձեն քողարկել իրականությունը, ակնհայտ է, որ այնքան են մեկը մյուսից վախենում ու ատում իրար, որ տղամարդավարի հարաբերություններ պարզել չեն կարող: Իսկ երբ Սերժ Սարգսյանի կողմից հովանավորվող թերթերն էլ մեղադրում են ինձ ապատեղեկատվություն տարածելու մեջ կամ էլ ընդդիմադիրի համարում ունեցող թերթերում այդ նույն կապի մասին արդեն իսկ նրա թելադրանքով

հոդվածներ են տպագրվում, դա էլ իր բացատրությունն ունի: Ս.Սարգսյանը գիտակցում է, որ հազարավոր ձեռներեցներ, զինծառայողներ սպայական կազմից արդեն ուզում են թոթափել այս անօրեն իշխանությունների բեռը և գալ համալրելու ընդդիմության շարքերը: Ահա հենց սրա առաջն առնելուն են ուղղված անճիշ վերաբերող և իրականության հետ ոչ մի աղերս չունեցող պատվիրված նմանատիպ հրապարակումները: Ուզում են հասկացնել թե ձեռներեցներին, թե սպաներին, թե ժողովրդին, որ միևնույն է, բան չի ստացվի, իմացեք, որ նրանք էլ են մեզ հետ կապված և հույսներդ կտրեք, որ կկարողանաք հախներիցս գալ: Ստեղծված իրավիճակում սրանից զատ հետապնդում են ևս մեկ խնդիր լուծել: Հիմնական նպատակն այն է, որ շեղեն մարկանց ուշադրությունը երկրում իրականացվող խոշորածավալ ալան-թալանից, իսկ ընդդիմադիր գործիչներին էլ պարտադրեն անվերջ պարզաբանումներ անել, թե իրենք այս հանցավոր իշխանությունների հետ և ոչ մի առնչություն չունեն: Երեկ իմ ելույթում ասացի, այսօր էլ կրկնում եմ, որ դրամի արհեստական արժևորման պարագայում հանրապետություն ապրանքներ ներմուծող օլիգարխների միջոցով գերշահույթների տեսքով, ըստ էության, կողոպուտ է կատարվել ոչ ավել, ոչ պակաս, քան 460 մլն դոլարին համարժեք: 1 մլրդ 767 մլն դոլար ներմուծման պարագայում, երբ դոլարը տնտեսագիտորեն չհիմնավորված արժեզրկվել էր 16,3%-ով, անցած տարվա նրանց չհարկված գերշահույթները (միայն ներմուծումից) կազմել են նվազագույնը 180 մլն դոլար: Տարեկան կտրվածքով ազգաբնակչությունը 1 մլրդ 200 մլն տրանսֆերտներ ստանալու պարագայում, երբ կենսական նշանակություն ունեցող ապրանքների ու ծառայությունների գները առանձին դեպքերում մնացել են անփոփոխ, իսկ մեծիմասամբ աճ են արձանագրել, ըստ էության կրել է վնասներ 192 մլն դոլարի չափով: Վնասներն էլ պայմանավորված են դրամի 16,3% արհեստական արժևորմամբ:

Ասել եմ ու կրկնեմ. տղերքը պատրաստվում են ընտրությունների: Իսկ այդ ընտրությունները ակնհայտ է դառնում, որ կատաղի են լինելու: Պատահական չէր, որ պարոն Քոչարյանը Բուխարեստում Ալիևի հետ բանակցելուց հետո, երբ վերադարձավ, նրա ձայնը չլսվեց: Ասես թե, պարոն Քոչարյանի ջիգրու, Սերժ Սարգսյանն էլ Թուրինից գալով Կառավարության և Ազգային ժողովի ղեկավարության ծափողջույնների տակ օպերայի հրապարակում «Ուզունդարա» պարեց: Այ, սա է սրանց վիճակը: Ցավն այն է, որ երբ մեկը խորհրդավոր լռում է, իսկ մյուսը՝ պարում, մենք ձեզ հետ միասին այդ նույն ժամանակ երկիր ենք կորցնում: Մինչդեռ այս մարդկանց միակ մտածմունքն է, որ օր ավել մնան պաշտոններին, հետն էլ միլիոն ավել թալանեն: Դրան զուգահեռ, առանց անհարմար զգալու, պարկեշտ մարդկանց ներքաշելով սեփական խարդավանքների մեջ, նրանց միջոցով հազարավոր քաղցածների ճաշեր են մատուցում, կանանց և աղջիկներին էլ ծաղիկներ նվիրում:

Չեզ եմ դիմում, պարոնայք իշխանավորներ, մարդկանց հերթական անգամ խաբել այլևս ձեզ մոտ չի ստացվի: Դուք բացահայտված եք, պարոններ Քոչարյան, Սերժ Սարգսյան:

13.06.2006 թ.

«Կենտրոնական բանկի 2005 թ. տարեկան հաշվետվությունը» օրինագծի քննարկման ժամանակ ունեցած բանավոր ելույթի շարադրանքը

2006 թվականի անցած ամիսները Հայաստանի համար շատ արգասաբեր էին: Նախ, ի հայտ եկան բացահայտ տաղանդներ, ի դեմս շախմատի հավաքականի և Անդրեի: Ի հայտ եկան նաև թաքնված տաղանդներ, ի դեմս մեր բանկային ու տնտեսական գործիչների: Եվ, այսպես, ՀՀ Կենտրոնական բանկի հաշվետվությունը քննարկելիս խոսվում է ամեն ինչի մասին, բայց, չգիտես ինչու, ասվածը չի հիմնավորվում համապատասխան թվերով: Իսկ թվերի լեզուն ամենահամոզիչն է: Ըստ որում, թվերը, որ ես հնչեցնելու եմ, վերցված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության 2005 թ. հունվար-դեկտեմբեր տարեկան հաշվետվությունից, ինչպես նաև նույն ծառայության 2006 թ. հունվար-ապրիլ ամիսների հաշվետվությունից: Նշեմ, որ 2005 թ. դրամը, համաձայն այդ պաշտոնական տվյալների, արժևորվել է 16,3%-ով: Եվ զարմանալի մի բան. 2005 թ. դրամը արժևորվում է այն պայմաններում, երբ արձանագրվել է 128,5% ներմուծման աննախադեպ աճի տեմպ 2004 թ. համեմատ: Աննախադեպ աճի տեմպ է արձանագրվել նաև առևտրական բացասական հաշվեկշռում՝ այդ նույն ժամանակահատվածում կազմելով 130,2%: Արդյունքում երկրից անվերադարձ դուրս է բերվել 817 մլն դոլար: Հանրապետությունից նշված գումարի հանվելու պարագայում 2005 թ. դրամի բազան ավելացել է 66 մլրդ դրամով: Թվում է, թե դրամի բազայի աճի, ինչպես նաև կանխիկ դոլարների երկրից արտահոսքի պայմաններում հանրապետության ֆինանսական շուկայում, տնտեսագիտության օրենքներին համաձայն, պետք է, որ հակառակ գործընթաց գնար: Պետք է արժևորվեր ոչ թե դրամը, այլ դոլարը: Իսկ ինչո՞ւ դա տեղի չունեցավ: Փորձենք վերստին վերլուծել կատարվածը: Կրկնեմ, որ միայն 2005 թ. ՀՀ ապրանքների ներմուծման աճի տեմպը կազմել էր 128,5%, ներմուծված ապրանքների արժեքն էլ կազմել է 1 մլրդ 767 մլն դոլար: Այսինքն՝ Հայաստանում էժան գներով ձեռք բերված դոլարներով նշված գումարի ապրանքներ են ներկրվել, այդ ապրանքները, ըստ էության, միջազգային համապատասխան գներից առնվազն 10-12 % ավելի էժան է նստել: Դրամն արժևորվել էր, ինչպես գիտենք, 16,3%, բայց ես նշեցի 10-12%՝ հաշվի առնելով, որ համաշխարհային ֆինանսական շուկայում, այնուամենայնիվ, արձանագրվել էր ԱՄՆ դոլարի 4-6%-ի փոխարժեքի տատանում: Այսինքն, դոլար-դրամ փոխարժեքի մեքենայությունների հետևանքով, ի սկզբանե, իշխանությունների հովանու ներքո գործող օլիգարխ ներմուծողներն արդեն իսկ ՀՀ սահմանի վրա ունեցել են երաշխավորված գերշահույթ 10-12%-ի չափով: Հիմա նայենք, արդյոք այդ գերշահույթներից բյուջեն համապատասխան հավելյալ գումարներ ստացե՞լ է: Իհարկե, ոչ: Իսկ եթե ոչ, կնշանակի այդ գումարները պարզապես գրպանվել են: Կոռուպցիա՞ եք ուզում բացահայտել, խնդրեմ, ահա ձեզ փաստ: Միայն 2006 թ. հունվար-ապրիլ ամիսներին ներմուծվել է մոտավորապես 584,9 մլն դոլարի

ապրանք: Ներմուծման աճի տեմպերը կազմել են 113,8%: Ճիշտ այդ նույն ժամանակ երկրից ապրանքների արտահանման տեմպերը նվազել են և կազմել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընդամենը 92,2%: Այսինքն՝ տուժել է տեղական արտադրողը, և ստացվում է, որ նրա հերն էլ անիծած: Իսկ ի՞նչ է նշանակում տեղական արտադրողի արտադրանքի արտահանման առաջ պատնեշ դնել, այն էլ արհեստական: Նշանակում է մեր ժողովրդին զրկել աշխատատեղերից: Միայն այս տարվա 4 ամիսների ընթացքում մոտավորապես 7-8% արժևորվել է դրամը, ճիշտ այդ նույն ժամանակահատվածում Հայաստանից անվերադարձ դուրս է բերվել 330 մլն դոլար, որովհետև արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը կազմել է ճիշտ այդքան:

Հիմա հարցին մոտենանք մյուս տեսանկյունից: Ապրանքը, որ բերում են, բնականաբար, ունի իր սպառումը, ավելին, վերը նշված պատճառներով ներմուծողին ապահովում է գերշահույթ: Գերշահույթ ստանալու պայմաններում վերջիններս կրկին գնում են արհեստականորեն արժեզրկված այդ դոլարները և հենց միայն դրա արդյունքում դարձյալ ապահովելով հավելյալ շահույթ, որի չափը պայմանավորված է դոլարի արհեստական արժեզրկման տոկոսով: Հիմա սրան գումարելի դարձրեք այն մեքենայությունները, որոնց ենթարկվում են դրսից ստացվող և ֆիքսված 1 մլդ 200 մլն տրանսֆերտները (իսկ փաստացի դրանք հասնում են 1 մլրդ 400 մլն դոլարի): Մեզ համար ակնհայտ է, որ եթե չլինի այդ օգնությունը, ապա բառիս իսկական առումով, ցավոք, ժողովուրդը սովամահ կլինի: Այս պարագայում 16,3%-ով արժեզրկելով դոլարի փոխարժեքը՝ այդ գումարները ստացողները անցյալ տարի էն գլխից կորցրել են առնվազն 192 մլն դոլար: Այս տարի, եթե այդ հանցավոր գործընթացները շարունակվեն, ժողովուրդը նվազագույնը մի այդքան էլ կտուժի: Իսկ ո՞վ է շահում այս ամենից: Քնավ ոչ մեր ժողովուրդը: Շահողները ֆինանսական մախինատորներն ու ապրանքներ ներմուծող օլիգարխներն են: Սրանք ստեղծել են մի այնպիսի իրավիճակ, որ աշխարհահռչակ տնտեսագետ Ջոն Մեյնարդ Կեյնսը, եթե ողջ լիներ, կզարմանար, կասեր, որ սա տնտեսագիտության բնագավառում առնվազն Նոբելյան մրցանակի արժանի մարդկանց հուշար է: Վերև մի սրանց արած գյուտին նայեք. ուզում են մեզ համոզել, որ երբ ներմուծումն աճում է առաջընթաց տեմպերով, որոնք շատ ավելին են, քան համախառն ներքին արդյունքի աճի տեմպերը, ավելին, երկրից ապրանքների արտահանման աճի տեմպերի բացասական ցուցանիշ է արձանագրվում, մեկ էլ հանկարծ փորձում են հիմնավորել, որ արժևորվում է երկրի դրամը: Լավ, ինչքան կարելի է մարդկանց հիմարի տեղ դնել: Ես երբեք չեմ տա Կենտրոնական բանկի նախագահի՝ Տիգրան Սարգսյանի ազգանունը որպես գլխավոր գործող անձի այն պարզ պատճառով, որովհետև նա պարզապես ընդամենը կատարում է պարոն Քոչարյանի կամքը: Պարոն Քոչարյանն էլ, իր վարած քաղաքականությամբ ծայրաստիճան աղքատության գիրկը նետելով ժողովրդին, այս գլխից արդեն հող և ֆինանսական հիմքեր է ստեղծում, որ Ազգային ժողովում 2007 թ. ընտրությունների արդյունքում արհեստական մեծամասնություն ապահովի: Ինչն էլ նրան

հնարավորություն կտա 2008 թ. ոչ թե անփառունակ ավարտել իր նախագահական ժամկետը, այլև դեռ փայփայի նոր պաշտոններ ստանձնելու հավակնություններ: Ահա սա է երկրում ընթացող գործողությունների տրամաբանական թե շղթան, թե դրանց հանգուցալուծման բանալին:

Ձեզ հետ ականատեսն ենք, երբ մի կողմից աղքատացնում են հայ ժողովրդին, մյուս կողմից ճիշտ այդ նույն ժամանակ առնվազն 450 մլն դոլար անուղղակի կերպով ներկրողների միջոցով կողոպտում են ազգաբնակչությանը: Եվ այդ միտումը շարունակվում է: Է, բնականաբար, այս պարագայում ձրի կերակուր էլ կտան, նվերներ, ծաղիկներ էլ կբաժանեն: Ըստ որում, բարձրաստիճան իշխանավորների ճիզվիտությունը կայանում է նրանում, որ դա անում են այն մարդկանց ձեռքերով, ովքեր իրենց էությամբ, որպես կանոն, հայրենասեր մարդիկ են: Կարծում եմ, որ նրանք գիտակցում են այս ամենը, սակայն չանել չեն կարող: Ահա սա է իրականությունը: Եվ ամենևին էլ հարկ չկա փորձել դոլարի արհեստական արժեզրկումը պայմանավորել Հայաստանում իբր առկա տնտեսական աճով: Այո, հարգելի պարոն Մելիքյան, 2005 թ. ՀՀ համախառն ներքին արդյունքի աճը կազմել է 113,9%, ինչը գումարային առումով կազմում է ոչ ավել, ոչ պակաս 486 մլն դոլար: Բա լավ, արտաքին առևտրի բացասական հաշվեկշռից գոյացած 817 մլն դոլարի գումարները երկրից անվերադարձ դուրս են բերվում: Ի՞նչ, սրա դիմաց ՀՆԱ-ի 486 մլն դոլարի աճը էնքան թափով թիվ է, որ չեզոքացնում է 817 մլն դոլարը: Չեղավ, չէ՞:

Եվ պատահական չէր, որ այս ամենը իմանալով, ավելին, իմանալով տնտեսագիտորեն ապացուցվող նաև խորքային շատ ու շատ հանցավոր երևույթներ պարունակող հանգամանքներ, «Ազգային Միաբանություն» խմբակցությունը կոչով դիմեց Ազգային ժողովի մեծամասնությանը, խնդրելով, որ վերջիններս օգնեն, աջակցեն, նախևառաջ հենց ինքներն իրենց և ընդամենը ստեղծեն ԱԺ ժամանակավոր հանձնաժողով՝ խնդրո առարկա հարցերը լիարժեքորեն ուսումնասիրելու և պարզաբանելու ակնկալիքով: Այդ հանձնաժողովում կներգրավվեն մասնագետներ, ովքեր մասնագիտական և ոչ թե քաղաքական վերլուծություններ կներկայացնեն Ազգային ժողովի քննարկմանը: Այդ նախագիծը «Ազգային Միաբանությունը» արդեն շրջանառության մեջ է դրել: Այս պահի դրությամբ նախագծի տակ իրենց ստորագրությունը «Ազգային Միաբանությունից» բացի դրել են մի խումբ պատգամավորներ «Արդարություն» դաշինքից և Հմայակ Հովհաննիսյանը: Եթե, իրոք, շահագրգռված եք, եթե, իրոք, ուզում եք գեթ մեկ անգամ գիտակցենք և հասկանանք, թե զարգացումներն ուր են տանում, ապա անսացեք հորդորիս: Վերջապես, խնդրածներս ի՞նչ է, ընդամենը հանձնաժողով ստեղծել: Իսկ երբ այդ հանձնաժողովը ստեղծենք, ուսումնասիրություններ կատարենք, ապա կտեսնենք, որ գերշահույթներ, եթե չասենք կողոպուտ է տեղի ունենում նախևառաջ հանրապետություն էներգակիր ներկրողների կողմից: Իսկ թե ովքե՞ր են էներգակիր ներկրողները, բոլորս քաջատեղյակ ենք: Նրանք ճիշտ այն նույն մարդիկ են, որոնց մասին հենց այս ամբիոնից Ալեքսան Կարապետյանը, Կորյուն Առաքելյանը իրենց ելույթներում բազմիցս ասել են: Հանրահայտ միկաներն ու ֆլեշներն են, որոնք սպառնացին-սպառնացին մեզ դատի տալ, բայց այդպես

էլ մնացինք դրան սպասող:

Ահա սա է երկրում ստեղծված իրական վիճակը: Եվ այս իրավիճակի մասին թույլ չեն տալիս, որ հանրությանը տեղեկացվի: Դրա ամենավառ ապացույցն այն էր, որ «Խորհրդարանական ժամի» հայտարարությունների մասը, որի տևողությունն ընդամենը 12 րոպե էր, ցուցադրեցին գիշերվա ժամը 2-ին: Ինչո՞ւ, որովհետև այս հարցերի մասին այնտեղ ահազանգ էր հնչել: Եվ, վերջապես, իմ դիմումն ուղղված ՀՀ գլխավոր դատախազին մնում է ուժի մեջ: Կարծում եմ, իմ այս ելույթից ակներև դարձավ, որ արդեն ինձ չէ, որ պետք է դատի տալ: Արդեն ակնհայտ է, որ կատարվում է մեր հասարակության, մեր հանրության ամենալայն զանգվածների խոշորածավալ լկտի կողոպուտ: Եվ դա հովանավորվում է նախագահականից: Ահա սա է եզրակացությունը:

13.06.2006 թ.

«Իրավունք», 16-22.VI.2006:

… Հիշողությունը մեր մշտակրակ…

Սիրելի ընթերցող, հունիսի 28-ին Ստրասբուրգում Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստում «Ազգային Միաբանություն կուսակցության» նախագահ Արտաշես Գեղամյանի ելույթում արծարծվեցին խնդիրներ, որոնց լուծումները կարող են բախտորոշ նշանակություն ունենալ հայոց պետականության այս ճակատագրական ժամանակահատվածում: Ա.Գեղամյանի ելույթը մտածելու լուրջ առիթ տվեց նաև եվրոպացիներին: Ասված խոսքը տպավորիչ և համոզիչ էր հատկապես եվրոպական քաղաքական այն այրերի համար, ովքեր դեռ պատրանքներ ունեին, թե իրականություն կդառնան թուրքերի և ազերիների խոստումները՝ ապրել քաղաքակիրթ աշխարհի բարոյական նորմերով:

Հարգելի գործընկերներ, մենք ձեզ հետ ականատեսն ենք, երբեմն էլ մասնակիցները քրիստոնեական, մահմեդական և հրեական քաղաքակրթությունների գաղափարական հակադրությունների: Մարդկության ճակատագրի համար մեծագույն չարիք կլինի, եթե սառը պատերազմի տխրահռչակ ժամանակները հիշեցնող այդ հակադրությունների փոխարեն բախումներ սկսվեն կրոնական, ազգային և մշակութային տարբեր արժեքներ կրող հանրությունների միջև: Նման բախման վտանգը իրավացիորեն նկատել է Սեմյուել Հանտինգտոնը. «Մահմեդականներն ավելի հաճախակի ասում են, որ Արևմուտքը ոչ թե պարզապես հետևում է անկատար կեղծ կրոնին, որը, այնուամենայնիվ, հանդիսանում է «Սուրբ գրքի կրոն», այլ որ այն ընդհանրապես ոչ մի կրոն չի դավանում: Մահմեդականների աչքերում Արևմուտքում եկեղեցու անջատումը պետությունից, անհավատությունը, իսկ, հետևաբար, և անբարոյականությունն ավելի վատ չարիք են, քան դրանք ծնած արևմտյան քրիստոնեությունը»:

Արևմտաքրիստոնեական բարոյականության նման ընկալումը, որը տեղ է գտել մահմեդականություն դավանող երկրների ազգաբնակչության բավականին լայն շերտերում, ինչպես նաև այդ երկրներում կրոնական հիմունքների ու քաղաքականության անխզելիության անհերքելի փաստը բացառիկ արդիականություն են հաղորդում կրոնական համոզմունքների նկատմամբ հարգանքի անհրաժեշտությանը: Դա իր հերթին, ասես, հետին պլան է մղում խոսքի ազատության իրականացման համար հարկ եղած պայմանների ապահովումը, մինչդեռ դա ժողովրդավարության էական դրսևորումներից մեկն է:

Ահա թե ինչու ԵԽ ԽՎ-ում քննարկվող «Խոսքի ազատությունը և հարգանքը

կրոնական համոզմունքների նկատմամբ» հարցը պետք է դառնա բազմակողմանի վերլուծության առարկա ինչպես մահմեդականության, այնպես էլ ժողովրդավարական հասարակությունների դիրքերից: Ներկայիս քննարկումն իր նպատակին կհասնի, եթե միասնականորեն կարողանանք մշակել միջքաղաքակրթական երկխոսության և համաձայնության ուղիներ:

Խոսքի ազատության գործնական իրականացումը՝ զուգորդված կրոնական համոզմունքների նկատմամբ հարգանքով, գլոբալ մասշտաբով կարող է մեծ նշանակություն ունենալ հատկապես Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի համար: Այդ հարցերի հույժ կարևորությունը պայմանավորված է 301 թ. աշխարհի երկրներից առաջինը՝ Հայաստանի կողմից Քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման պատմական փաստով: Դա մեծապես պայմանավորված է նաև ներկայիս սահմաններում հայոց պետության ունեցած աշխարհագրական դիրքից, որը չնայած զբաղեցնում է մեր պատմական հայրենիքի տարածքի միայն տասներորդ մասը, սակայն, այնուամենայնիվ, այսօր էլ շարունակում է գտնվել քրիստոնեական և մահմեդական քաղաքակրթությունների ջրբաժան գծի վրա: Ստեղծված իրողությունների առանձնահատկությունը շատ բանով պայմանավորված է նաև հայկական բազմամիլիոնանոց սփյուռքով, որը պատմական ճակատագրի կամոք ձևավորվել է Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ. իրականացված հայոց ցեղասպանության հետևանքով: Հատկանշական է, որ հայկական սփյուռքի հիմնական օջախները մեր օրերում ևս կենտրոնացած են մահմեդական ու քրիստոնեական քաղաքակրթությունները ներկայացնող առաջատար երկրներում, ընդ որում աշխարհի բոլոր հինգ մայրցամաքներում:

Կրկին նշեմ, որ մենք բարձր ենք գնահատում նման հրատապ խնդիրների քննարկման փաստը ԵԽ ԽՎ-ում: Դա վկայում է, որ Եվրոպայի պատասխանատու քաղաքական գործիչներն արդեն այսօր մտածում են աշխարհում իրենց երկրների և իրենց ժողովուրդների տեղի մասին, անհանգստանում են միավորված Եվրոպայի և ողջ աշխարհի ճակատագրով, տագնապում են Երկիր մոլորակի վաղվա օրվա, ցանկալի ապագայի համար և ուղիներ որոնում, որոնք տանում են այնտեղ:

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից յուրաքանչյուրը կանգնած է ընտրության առջև. կամ պահպանել սեփական ազգային առանձնահատկությունը՝ ազգայնականության հենքի վրա, ազգը և պետությունը մեկուսացնող մեխանիզմների ստեղծման գնով, կամ էլ գնալ ուրիշ ճանապարհով. քանի դեռ ուշ չէ, համաշխարհային մասշտաբով ձևավորել հանդուրժողականության և բազմակարծության սկզբունքներ ու գլոբալիզացման, բազմաթիվ մշակույթների անխախտ համագործակցության դարաշրջանում անշեղորեն առաջնորդվել դրանցով: Ընդ որում, ավելորդ չէ նշել, որ հատկապես խոսքի ազատության իրականացման և կրոնական համոզմունքների նկատմամբ հարգանքի մեջ են փոքր պետությունները և ազգությունները տեսնում երաշխիք՝ իրենց ազգային յուրահատկությունները և ինքնուրույնությունը պահպանելու համար:

Իսկ ինչպիսի՞ն է իրավիճակը խոսքի ազատության և կրոնական համոզմունքների նկատմամբ հարգանքի առումով ժամանակակից աշխարհում և ինչպիսի՞ն են այդ համատեքստում մերօրյա քաղաքական ու հոգեբանական իրողությունները: Ի սկզբանե ասենք, որ դանիական թերթերում Մոհամմեդ մարգարեի վերաբերյալ տպագրված ծաղրանկարների շուրջ ծագած աղմկոտ վիճաբանությունն ամենևին վստահություն չավելացրեց մահմեդականների և քրիստոնյաների միջև: Վստահություն չավելացրին նաև այնպիսի իրադարձությունները, որոնցից են իրաքյան Աբու-Գրեյբ բանտում տեղի ունեցած արաբ կալանավորների խոշտանգումները, Կուբայում գտնվող ամերիկյան Գուանտանամո ռազմաբազայում բանտարկյալների նկատմամբ կիրառված բռնի գործողությունները:

Միջքաղաքակրթական օտարացման այդ մթնոլորտը էլ ավելի շիկացավ, երբ Ֆրանսիայում սկսվեցին խռովություններ, երբ արաբամահմեդական ծագմամբ հազարավոր երիտասարդներ դուրս եկան ֆրանսիական քաղաքների փողոցներ՝ բողոքելով սեփական կարգավիճակի դեմ, միևնույն ժամանակ ավերելով խանութներ, հրկիզելով ավտոմեքենաներ, հրահրելով անկարգություններ:

Հրապարակ եկած այս և բազմաթիվ նման իրադարձությունները իրենց ամբողջության մեջ մահմեդական շատ երկրներում մեկնաբանվեցին ոչ այլ կերպ, քան ահաբեկչության դեմ հայտարարված պայքարի նենգափոխում՝ ուղղված մահմեդականության, վերջին-ներիս կրոնական համոզմունքների դեմ:

Մյուս կողմից, այդ նույն ժամանակ ֆրանսիացիների հիշողության մեջ կատարվածը, կարծում եմ, կարթնացներ երկրի ոչ վաղ անցյալի իրադարձությունները, երբ XX դարի 50-60-ական թվականներին ֆրանսիական կառավարությունը փորձում էր թույլ չտալ ներգաղթողների անօրինական մուտքը Աֆրիկայից Մարսելի նավահանգիստ: Ասես թե նրանք մտովի տեղափոխվում էին այն նույն օրերը, երբ հարյուրավոր ֆրանսիացիներ հավաքվում էին նավահանգստի կառամատույցներում և ձեռքերով պահում էին ներգաղթողներով լի նավերն այնքան ժամանակ, մինչև վերջին փախստականը չէր իջնում նավից և ոտքը չէր դնում ֆրանսիական հողի վրա:

Կասկած չկա, որ ֆրանսիական հող ոտք դրած փախստականներն այդ օրերին մեծագույն երախտագիտության զգացմունքներ էին տածում ֆրանսիացիների և իրենց ապաստան տված Ֆրանսիայի հանդեպ: Բայց արդյոք նրանց որդիները չէի՞ն 2005 թ. նոյեմբերին հազարավոր ավտոմեքենաներ հրկիզում, խանութների ցուցափեղկեր ավերում, որոնք միգուցե և պատկանում էին հենց իրենց երբեմնի փրկարարների զավակներին:

Դրա համար էլ կարևոր է, որ քննարկելով այսպիսի հրատապ հարց՝ խոսքի ազատության և կրոնական համոզմունքների նկատմամբ հարգանքի մասին, ԵԽ ԽՎ-ն մշակի գործողությունների ծրագիր, որն ուղղված կլինի կրոնական տարբեր դավանանքներին և մշակույթներին պատկանող մարդկանց միջև վերջին տարիներին ծագած անվստահության ու օտարացման անջրպետի հաղթահարմանը: Համոզված եմ,

այդ գործում հաջողության հասնելու համար պետք է ելնել այն բանից, որ բոլորին հոգու խորքում միավորում է համընդհանուր վտանգի գիտակցումը, այն է՝ միջազգային ահաբեկչության առջև իրար օգնության գալու պատրաստակամությունը: Վտանգ, որը հետզհետե ավելի սպառնալից է դառնում մարդկության համար՝ լինի դա ուղղահավատ մահմեդական, հրեա, բուդդայական, թե քրիստոնյա: Մենք պետք է անենք ամեն ինչ, որպեսզի մեղմենք մարդկային կորուստներից և իրար հասցրած վիրավորանքներից առաջացած դառնությունն ու ցավը, որոնք վերջին տարիներին բաժին են ընկել մեր ժամանակակիցներին:

Այս առումով բարձր ենք գնահատում Քաթար պետության նախաձեռնությունը, որը եռանդուն կերպով նպաստում է քրիստոնյա, մահմեդական և հրեական կրոնների միջև երկխոսության զարգացմանը: Քաթարցիները ղեկավարվում են այն դրույթով, որ աբրահամական այդ կրոնների հետնորդները կազմում են մարդկության շուրջ կեսը և ունեն ընդհանուր շատ կանխադրույթներ՝ հավատը Միասնական Աստծո նկատմամբ, ընդհանուր արժեքներ, որոնք արտացոլված են Աստծո պատվիրաններում: Նրանք նաև միասնական են այն ըմբռնման մեջ, որ կրոնի կարևորագույն խնդիրն է ծառայել մարդուն՝ ապահովելով նրա ավելի լավ ապրելու իրավունքը, տարածել խաղաղություն, համերաշխություն և սեր:

Հայաստանի համար հատկապես կարևոր է և իսպանա-թուրքական նախաձեռնությունը՝ «Քաղաքակրթությունների ալյանսը», որն աճող աջակցություն է ստանում աշխարհում և խոստանում է առաջ քաշել նոր գաղափարներ՝ թե ինչպես հասնել միջքաղաքակրթական համաձայնության:

Խորապես խորհրդանշական եմ համարում, որ ալյանսի համահիմնադիր է հանդիսանում Իսպանիան: Երկիր, որտեղ դարերով խաղաղ գոյակցել են քրիստոնյաները, մահմեդականները, հրեաները, որտեղ մինչ օրս իրենց կուսական գեղեցկությունն են պահպանել մահմեդական, մավրիտանական ճարտարապետության մի քանի տասնյակ վեհասքանչ հուշարձաններ: Հատկանշական է, որ Թուրքիան նույնպես հանդիսանում է «Քաղաքակրթությունների ալյանսի» համահիմնադիր, և դա սկզբունքորեն կարևոր է Հայաստանի համար: Քանի որ, կարծում ենք, որ «Քաղաքակրթությունների ալյանսի» շրջանակներում Թուրքիան, որպես դրա համահիմնադիր երկիր, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ, կհետաքննի հայկական քրիստոնեական տաճարների, եկեղեցիների և գերեզմանատների զանգվածային ավերման պատճառները ժամանակակից թուրքական հանրապետության վարչական սահմաններում գտնվող Արևմտյան Հայաստանի տարածքում: Այսպես, 1974 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հրապարակած տվյալներով, առաջին համաշխարհային պատերազմից հետո այդտեղ կանգուն մնացած 913 եկեղեցական շինություններից 464-ը ամբողջովին ոչնչացվել են, 252 տաճարներ և եկեղեցիներ վերածվել են ավերակների, 197-ը վերականգնողական լուրջ աշխատանքների կարիք ունի:

Ցավ ու տագնապ է առաջացնում, որ ավերված եկեղեցիների և տաճարների թվում կան IV-XVII դդ. ճարտարապետական եզակի հուշարձաններ՝ Տեկորի եկեղեցի (V դար),

Վասպուրականի Սբ. Բարդուղիմեոսի եկեղեցի (IV դար), Սբ. Կարապետի եկեղեցի (IV դար) և այլն: Քրիստոնեական այդ սրբությունները Թուրքիայում անցկացվող զորավարժությունների ժամանակ թուրքական հրետանու համար դառնում էին թիրախ:

Ցավոք, 1997 թ. թալանի և ավերածության ենթարկվեց նաև Սբ. Մակարի հայկական եկեղեցին (VI դար), որը գտնվում է Նիկոսիայից 30 կմ հյուսիս-արևելք, այսպես կոչված, ինքնահռչակ Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության տարածքում: Վերջին 30 տարիներին հայկական եկեղեցիներ են ավերվել Ադրբեջանի Գեդաբեկի, Ջաբրաիլի, Դաշքեսանի, Շահումյանի շրջաններում, Գանձակ քաղաքում: Բարբարոսության բարձրակետը դարձավ 2005 թ. վերջին Ադրբեջանի Նախիջևանի ինքնավարության Հին Ջուղայի հայկական նեկրոպոլի IX-XVII դդ. 2000-ից ավելի խաչքարերի՝ փոքր ճարտարապետության հուշարձանների ավերումը: Բարբարոսական նման գործողությունները չդատապարտվեցին աշխարհի ոչ քրիստոնյաների, ոչ էլ մահմեդականների կողմից: Այն ժամանակ լռեցին ինչպես դանիական թերթերը, այնպես էլ լռեց ծաղրանկարային աղմկահարույց վիճաբանությունից հետո նրանց սատարած արևմտյան մամուլը… Ավա՜ղ, մեր օրերում էլ լռեցին Եվրախորհուրդը, ԵԱՀԿ-ն, Իսլամական Կոնֆերանս Կազմակերպությունը, երբ ս/թ հունիսի 21-ին Ստամբուլի օդանավակայանում թուրք ազգայնականները լկտի և անհարգալի վերաբերմունք դրսևորեցին Կոստանդնուպոլսի Հունաց և Հայոց պատրիարքների հրավերքով այնտեղ ժամանած Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի նկատմամբ: Հայ առաքելական եկեղեցու առաջնորդի նկատմամբ թուրք ազգայնամոլ խուժանի դրսևորած այս վրդովեցուցիչ փաստը լռության մատնեցին իրենց խոսքի ազատության ջատագով հորջորջող լրատվամիջոցները, լռեցին նաև վերջերս ի հայտ եկած կրոնական համոզմունքների հարգման բոլոր տեսակի պահապանները ու պաշտպանները:

Եվ, վերջապես, այս պարագայում ովքե՞ր, եթե ոչ «Քաղաքակրթությունների ալյանսի» հիմնադիր պետությունները պետք է հրապարակավ դատապարտեն վերոհիշյալ բոլոր վայրագությունների հեղինակներին: Դա կսառեցնի ավերածությունների կազմակերպիչների, ինչպես նաև այն մարդկանց խանդավառությունը, ովքեր մեր օրերում գրգռում են անհանդուրժողական մոտեցում ոչ մահմեդական կրոնական համոզմունքների և հատկապես քրիստոնեական սրբությունների հանդեպ:

Եվ, անշուշտ, դա եվրոպական հասարակությանը կհամոզի, որ ներկայիս Թուրքիայի ղեկավարությունը գործնականում վճռական է կարգավորել միջքաղաքակրթական երկխոսություն և առաջին հերթին էլ իր հարևանների հետ: Երկխոսություն, որի հիմքում պետք է ընկած լինի հարգալից վերաբերմունք նրա մասնակիցների կրոնական համոզմունքների նկատմամբ:

Մենք նաև հուսով ենք, որ աշխարհիկ Թուրքիան, որը ձգտում է ինտեգրվել Եվրամիությանը, առանց պատասխանների չի թողնի Թուրքիայի հայ սփյուռքին հուզող լուսավորչական բնույթի հասունացած հարցերը: Կարծում ենք, որ գործնականում խոսքի ազատության իրագործման լայն կոնտեքստում Թուրքիայի փոքրաթիվ հայկական

դպրոցներում կհանվի արգելքը հայ ժողովրդի պատմության, հայկական ազգային մշակույթի պատմության առարկաների դասավանդման վրայից: Եվրամիության լիարժեք անդամ դառնալու թեկնածու երկրի համար հարիր չէ հայ դպրոցականներին զրկել սեփական ժողովրդի պատմությունը և նրա մշակութային ժառանգությունն ուսումնասիրելու բնական իրավունքից: Ավելին, իմանալ ճշմարտությունը իրենց նախնիների ճակատագրի մասին, մանավանդ Օսմանյան կայսրության գոյության վերջին տարիներին: Իմանալ, օրինակ, այն մասին, որ Օսմանյան կայսրության արտակարգ ռազմական ատյանը՝ ստեղծված 1919 թ. մարտի 8-ին սուլթան Մուհամմեդ VI Վահիդեդդինի հրամանով, իր 1919 թ. մայիսի 26-ի որոշմամբ մահապատժի դատապարտեց երիտթուրքերի կառավարության պարագլուխներ Էնվերին, Ջեմալին, Թալեաթին, Նազըմին՝ «Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու և Արևելյան վիլայեթներում հայերի զանգվածային կոտորած, *կրկնում եմ, հայերի զանգվածային կոտորած* կազմակերպելու համար»: Եվ եթե այդ տարիների պատմական իրողությունների հրապարակային ընդունումից հետո կհետևի պաշտոնական Անկարայի ապաշխարությունը XX դարի սկզբին թուրքերի կողմից մարդկության հանդեպ իրականացված հանցագործությունների, այն է՝ մեկուկես միլիոն հայերի ցեղասպանության համար, այդժամ Թուրքիայում սովորող հազարավոր հայ դպրոցականներ միանգամայն այլ զգացմունքներ կտածեն թուրքերի հանդեպ, քան հիմա: Դիցուք, այդ ժամանակ, երբ հայ աշակերտը, մտնելով դպրոցական շենք, հարկադրված է տեսնել թուրքական հանրապետության հիմնադիր Աթաթուրքի խոսքը՝ «Ինչպիսի երջանկություն է ասել՝ ես թուրք եմ», հայկական դպրոցի շենքի վրա ծածանվող Թուրքիայի հանրապետության դրոշը, միգուցե՞ այդ ժամանակ սովորողների երիտասարդ հոգիները չեն լինի այլևս խռովքի և ալեկոծության մեջ, ու նրանք Իրանի, Լիբանանի, Սիրիայի, Եգիպտոսի և Հորդանանի հայկական սփյուռքի իրենց բազմաթիվ հասակակիցների նման հարգանքի զգացումով կլցվեն իրենց բնակության երկրի հանդեպ: Ցանկանում եմ հույս հայտնել, որ այս դահլիճում ներկա գտնվող Թուրքիայի վարչապետ պրն Էրդողանը անձնական վերահսկողության տակ կվերցնի այս ողջ գործընթացը և իր գործողություններով կօժանդակի թուրքական հանրապետության նոր ընկալմանը՝ որպես իրականում եվրոպական արժեքներին հավատարիմ երկրի: Մենք սպասում ենք, թե երբ Թուրքիան կվերացնի Հայաստանի շրջափակումը, թե երբ Թուրքիան առանց որևիցե նախապայմանի դիվանագիտական հարաբերություններ կհաստատի: Եվ վերջապես, թուրքական հանրապետությունը ուշադրությամբ կվերաբերվի և կվերահիմաստավորի Օսմանյան կայսրության արտակարգ ռազմական դատարանի 1919 թ. մայիսի 26-ի որոշումը, որով իրավաբանորեն ճանաչվեց հայերի ցեղասպանության փաստը՝ հենց սուլթանական ռազմական դատարանի կողմից: Հուսով ենք, որ «Քաղաքակրթությունների ալյանսի» համահիմնադիր Թուրքիան պաշտոնապես կճանաչի Օսմանյան կայսրությունում իրականացրած հայերի ցեղասպանությունը:

Հարգելի գործընկերներ, գաղտնիք չէ, որ խոսքի ազատությունը և կրոնական համոզմունքների նկատմամբ հարգանքն իրենց առանձնահատկություններն ունեն

քրիստոնեական և մահմեդական ընկալումներում: Մոհամմեդ մարգարեի հետևորդների գիտակցության մեջ կրոնը և աշխարհիկ կյանքն անբաժանելի են: Այդ իսկ պատճառով մահմեդականությունը ոչ միայն արտահայտում է սեփական իդեալները, այլև մշտապես միջոցներ է փնտրում դրանք կյանքի կոչելու համար: Ահա թե ինչու Մոհամմեդ մարգարեն հասարակության մեջ հաստատեց կառավարման մահմեդական ձևը: Եվ այսօր Իսլամն առաջարկում է աշխարհակառուցվածքի սեփական մոդելը: Այսպես, Պակիստանի նախագահ Պերվեզ Մուշարրաֆը վերջերս «Կոմերսանտ» թերթին տված իր հարցազրույցում նշել էր. «Մահմեդականությունը կենսակերպ է: Եվ մենք պետք է աշխարհին ցույց տանք, թե ինչպիսին պետք է լինի իրական Իսլամը: Մահմեդականությունը կարող է դառնալ երրորդ ճանապարհ, որը կտարբերվի և՛ արևմտյան ազատ շուկայից, և՛ սոցիալիզմից… Ազատ շուկայի պայմաններում հարուստներն ավելի են հարստանում, իսկ աղքատները՝ ավելի աղքատանում»:

Այսպիսով, Իսլամը իր երևելի հետևորդների շուրթերով, ըստ էության, առաջարկում է գլոբալացման սեփական տարբերակը, որը մահմեդական աշխարհի սահմաններում մրցակցում է նրա արևմտյան վարկածի հետ:

Հարգելի՛ գործընկերներ, արդեն ակնհայտ է, որ մարդկության մոտակա պատմությունը զարգանալու է աշխարհընկալման հակամարտող մոդելների հիմքի վրա, որոնք հիմնվում են արևմտյան՝ գլոբալիզացիոն և մահմեդական՝ կրոնական ավանդույթների վրա:

Գլոբալիզացվող աշխարհի պայմաններում միանգամայն պարզ է, որ գիտելիքները, տեղեկատվությունը դառնում են արտադրական գլխավոր ռեսուրսը: Դա առաջացնում է մարդկանց ինտելեկտուալ հնարավորությունների իրականացման նոր մոտեցումների համար օբյեկտիվ անհրաժեշտություն: Ինտելեկտուալ ներուժի վերածումը գլխավոր մարդկային արտադրական ռեսուրսի՝ իր հերթին արդիական է դարձնում անհատի և հասարակության հարաբերությունների ներդաշնակությունը: Դրա հետ մեկտեղ կասկածից վեր է և այն, որ խոսքի ազատությունը վերջին դերը չէ որ խաղում է անհատի կայացման գործում, իսկ հարգանքը կրոնական համոզմունքների նկատմամբ, անտարակույս, նպաստում է անձի և հասարակության արժեքային համակարգի բյուրեղացմանը: Դրանով իսկ, կարծում ենք, եվրոպական քաղաքակրթությունը տնտեսական և հոգևոր ծաղկունքի պտուղները կքաղի այնտեղ, որտեղ օպտիմալ կերպով կներդաշնակվեն ստեղծագործող անհատի ու հասարակության շահերը: Եվ առավել հուսալի է այն հասարակությունը, այն պետությունը, որը կենարար ուժեր է վերցնում հարյուրամյակների փորձությունների միջով անցած կրոնական համոզմունքներից:

Խոսքի ազատության հաստատումը, կրոնական համոզմունքների նկատմամբ հարգանքը, մեր կարծիքով, հանդիսանում են Արիահռնայի ուղեցույց թելը, որը թույլ կտա Եվրոպային արժանապատվորեն հաղթահարել ներկայիս երկպառակությունը և գլոբալիզացիայի մարտահրավերները:

«Իրավունք», 30.VI. - 6.VII. 2006:

Լիաթոք ուրախությամբ կպարենք մեր հաղթական «Քոչարին»

Հարգելի ընթերցող, այն, որ հայրենյաց անօրեն իշխանությունները երկու կիրակի անընդմեջ կոպտորեն խախտելով «ՀՀ ԱԺ Կանոնակարգ» օրենքի պահանջները «Խորհրդարանական ժամի» հայտարարությունների հատվածը ցուցադրում են գիշերվա ժամը 2-ին, սկզբից տխրեցրել էր մեզ: Սակայն յուրաքանչյուր տխրության մեջ «Ազգային Միաբանություն կուսակցությունը» տեսնում է նաև ուրախալին: Ի՞նչ աստիճանի են ազգային ջոջերը վախեցած Արտաշես Գեղամյանի երեքրոպեանոց հայտարարություններից, որ ամեն կերպ փորձում են ժողովրդի ամենալայն զանգվածներից թաքցնել ճշմարիտ խոսքը:

Ստորև Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Ա. Գեղամյանի ելույթը Հանրային հեռուստատեսությամբ՝ «Խորհրդարանական շաբաթ» հաղորդաշարով (18.06.2006 թ.)

Հարգելի հայրենակիցներ, ավարտվեց 2006 թ. Ազգային ժողովի գարնանային նստաշրջանը: «Ազգային Միաբանություն» խմբակցության պատգամավորներն անցած վեց ամիսների ընթացքում իրենց ելույթներում, հատկապես հայտարարություններում առարկայորեն մատնացույց էին արել մեր երկիրը արյունաքամ անողներին, կոռուպցիայի հովանավորներին: Ըստ որում, անհասցե չէր քննադատությունը: Կազմակերպությունների ճշգրիտ անուններն են տրվել, հրապարակվել են այն մարդկանց ազգանունները և նրանց հովանավորների, ում անօրեն գործողությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը հարյուրավոր միլիոն դոլարների վնասներ է կրել և կրում: Ավելին, Կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունը քննարկելու ժամանակ Ձեր խոնարհ ծառան բերեց փաստեր՝ թվերով ամրագրված. դրանց համաձայն 2005 թ. Հայաստանի Հանրապետության բյուջեն չի ստացել առնվազն 460 մլն դոլար: Այդ գումարները կողոպտվել են, կողոպտվել եք Դուք, սիրելի հայրենակիցներ: Օտարության մեջ դեգերող ձեր հարազատներից, բարեկամներից ստացված 1 մլրդ 200 մլն դոլարի օգնությունը վերածելով դրամի՝ դրա 16,3% արհեստական արժևորման արդյունքում Դուք կորցրել եք առնվազն 192 մլն դոլար: Իշխող տղերքը ընտրությունների են պատրաստվում: Տղերքը մտածում են, որ իրենց կհաջողվի 2007 թ. նույնպես կեղծել Ազգային ժողովի ընտրությունները, որ 2008 թ. կրկին պահեն իրենց անօրեն իշխանությունը: Մեզ էլ փորձում են բանսարկությունների դաշտ տեղափոխել, որովհետև ինտրիգներում սրանք անգնահատելի են: Ձուր են ձեր ջանքերը, պարոնայք

իշխանավորներ, միևնույն է, այս անգամ ձեզ մոտ ոչինչ չի ստացվելու: Մեր ուշադրությունն այլևս ձեր և ոչ մի հերյուրանքով շեղել չեք կարողանա: Մենք միշտ մի նպատակակետի ենք խփելու, այն է՝ շարունակելու ենք մատնացույց անել մարդկանց, ովքեր կողոպուտի են ենթարկում Հայաստանի Հանրապետությունը և նրա ազգաբնակչությանը: Մատնացույց ենք անելու պարոն Քոչարյանի, Սերժ Սարգսյանի հենարան հանդիսացողներին: Եվ թող հանկարծ իշխանական լրատվամիջոցներով չփորձեն «ինձ կարդալ խրատ ու հորդոր»՝ ասելով, թե ի՞նչու է Գեղամյանը միշտ միայն այդ երկուսի անունները տալիս: Բա ո՞ւմ անունները տամ: Տալիս եմ այն մարդկանց անունները, ովքեր քաղաքական դաշտ ասածը դարձրել են իրենց ստրուկը՝ առանձին բացառություններով: Ահա դրա համար է, որ ասել և կրկնելու եմ նրանց անունները:

Սիրելի ժողովուրդ, այս հանցավոր իշխանությունների օրերը հաշված են: Եվ, իրոք, հեռու չէ այն օրը, երբ մենք Ձեզ հետ միասին, ազգովի կպարենք հենց այն նույն պարը, որը շինծու ուրախությամբ պարում էին թե Արագած սարի շուրջ, թե օպերայի բակում: Իսկ մենք, ի տարբերություն նրանց, լիաթոք ուրախությամբ կպարենք մեր հաղթական «Քոչարին», երբ այս ապօրինի իշխանություններին բարով-խերով քշենք այստեղից:

«Իրավունք», 30.VI. - 6.VII. 2006:

...Слишком много крови пролито за нее

К содержанию дискуссий, развернувшихся в Брюсселе на проходившей с 3 по 7 июля ежегодной сессии Парламентской Ассамблеи ОБСЕ, "НВ" уже обращалась. Напомним, что в рамках одной из обсуждаемых на сессии резолюций– "Укрепление безопасности человека в регионе ОБСЕ" представители делегаций Турции, Азербайджана и Грузии предлагали внести достаточно циничную по отношению к Армении поправку. Согласно поправке, строительство трубопровода Баку–Тбилиси–Джейхан и Баку–Тбилиси–Эрзерум является "ярким примером инициатив, направленных на углубление региональной экономической интеграции".

В прениях, проходивших по данному вопросу, 5 июля на заседании Общего комитета по экономическим вопросам, науке, технологии и окружающей среде выступал представитель армянской делегации Арташес Гегамян, которому удалось развенчать дезинтеграционную суть предлагаемой поправки. Причем сделать это настолько убедительно, что "за" ее включение в резолюцию проголосовали лишь двое делегатов из Азербайджана и один делегат из Грузии. Более того, будучи соавторами, ее не поддержали даже представители Турции. Острые дебаты продолжились и на следующий день на пленарном заседании Ассамблеи, на котором вновь выступал Арташес Гегамян.

